

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ  
ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
XVIII-XIX ԴԱՐԵՐ

1



ՀԱԹԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

A 98166

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
XVIII - XIX ԴԱՐԵՐ

Հատոր 1



ԳԱՅԻՐԷ  
2006

*NATIONAL ACADEMY OF SCIENCES OF  
THE REPUBLIC OF ARMENIA*

**INSTITUTE OF HISTORY**

*THE HISTORY OF*  
**THE ARMENIAN PERIODICAL PRESS**

**VOL.I**

*CAIRO 2006*

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագրական կոլեգիա՝

պատմական գիտությունների դոկտոր Ա. Ա. Խառատյան,  
բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Յ. Մխիթարյան  
պատմական գիտությունների դոկտոր Լ. Ս. Գևորգյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական  
գիտությունների դոկտոր Խ. Յ. Բարսեղյանը,  
պատմական գիտությունների թեկնածու Ղ. Ա. Մուրադյանը

Գիրքն ընդգրկում է XVIII - XIX դ. հայ պարբերական մամուլի պատմու-  
թյունը. բնութագրված են հայ լրագրության մեջ առավել աչքի ընկնող պարբերա-  
կանները, բացահայտված նրանց տեղն ու դերը ժամանակի հայ հասարակական  
մտքի պատմության մեջ:

Նախատեսվում է պատմաբանների, հայ պարբերական մամուլի պատ-  
մությամբ հետաքրքրվողների և ուսանողների համար:



## ԱՌԱՋԱԲԱՆ

1994 թ. Հոկտեմբերին լրացավ Հայ պարբերական մամուլի սկզբնավորման 200-ամյակը: Այդ ժամանակամիջոցում Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են շուրջ երեք և կես հազար պարբերականներ, որոնք անգնահատելի նպաստ են բերել Հայ ժողովրդի բարոյական դաստիարակությանը, ուղղութիւն տվել Հայ հասարակական և քաղաքական կյանքին: Մեր մամուլի երկդարյա պատմության տարբեր շրջափուլերում Հայ հրատարակատեսակները և լրագրողները մեծագույն նվիրվածությամբ ծառայել են իրենց ժողովրդի կյանքի բարվոքման, ազգային մշակույթի անխափան զարգացման գործին, անդուլ պայքարել Հանուն դաղթօջախներում ազգապահպանության կենսական խնդրի իրականացման:

Բնականաբար Հայ ժողովրդի պատմական ճակատագիրն իր կնիքն է դրել նաև նրա լրագրության բնույթի վրա: Պատմական Հայաստանի բռնի բաժանումը երկու Հատվածների, գաղթօջախների առաջացումը տարբեր պայմաններ են ստեղծել այդ Հատվածների և գաղթօջախների Հայության տնտեսական ու քաղաքական կյանքի, մշակութային արժեքների ստեղծման համար: Ահա թե ինչու բոլորովին էլ զարմանալի չէ, որ առաջին Հայ պարբերաթերթը «Ազգարարը», հիմնադրվել է Հայաստանի սահմաններից հեռու, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, որտեղ XVIII դարի վերջին քառորդում անհրաժեշտ նախապայմաններ էին ստեղծված լրագրության գործի սկզբնավորման համար:

«Ազգարարը» հրատարակվել է 1794-1796 թթ. ժամանակի նշանավոր լուսավորիչ և հրատարակիչ Հարություն քահանա Ծամալոնյանի խմբագրությամբ: Չնայած ամառգրի կարճատև կյանքին, Ծամալոնյանին Հաղողվել է ձևավորել գաղթօջախի հասարակական կյանքի լուսավորության մի լուրջ ծրագիր, որն իր մեծ հետաքրքրությունը պահպանում է նաև այսօր: Հայ առաջին պարբերաթերթի հիմնադրումով Ծամալոնյանն ազգարարեց եվրոպական չափանիշներով Հայ ժողովրդի քաղաքակրթական վիճակի մի նոր, բարձր աստիճանի լինելության իրողությունը:

«Ազդարարի» դադարից մի քանի տարի անց, Մխիթարյան միաբանության գիտնականները Վենետիկում արևմտահայ աշխարհաբարով տպագրել են «Տարեգրություն» (1800-1802) և «Եղանակ Բյուզանդյան» (1803-1820) պարբերականները Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ: 1812-1816 թթ. դարձյալ Վենետիկում հրատարակվել է «Դիտակ Բյուզանդյան» ծանրակշիռ երկշարաթաթերթը: 1847-1863 թթ. Վիեննայում հրատարակված «Եվրոպա» քաղաքական լրագիրը հարուստ լրատվություն էր հրատարակում ժամանակի եվրոպական երկրների, Ռուսաստանի և Անդրկովկասի քաղաքական կյանքի ու պատերազմական իրադարձությունների մասին, լուսաբանում ազգային մշակույթի հետ կապված բազմապիսի հարցեր:

Մխիթարյանների պարբերականներից ուշագրավ է «Բազմապիսի» հանդեսը, որը հայկական հնագույն պարբերաթերթն է և հրատարակվում է 1843-ից առայսօր: Իր հնությամբ կարող է պարծենալ նաև 1887-ից Վիեննայում տպագրվող «Հանդես ամսօրյան», որը նույնպես շարունակում է հրատարակվել: Այդ ամսագրերը հայ մշակույթի պատմության մեջ Հսկայական դեր են կատարել Հայագիտությունը զարգացնելու և դրա արդասիքը ոչ միայն եվրոպական գիտական հասարակայնությանը ներկայացնելու, այլև եվրոպական գիտական մտքի նորույթները թարգմանաբար հայ հասարակայնությանը մատուցելու գործում: Մխիթարյան միաբանությունը, գիտական, մշակութային գործունեության հետ մեկտեղ, ստանձնելով նաև հայ լրագրության զարգացումը խթանելու պատվաբեր առաքելությունը, ժամանակին դարձել է հայ մամուլի ստեղծման և կայունացման երկրորդ հեղինակավոր օջախը:

Օսմանյան կայսրության տարածքում հայ պարբերական մամուլն սկզբնավորվել է Կ. Պոլսում և Ջմյուռնիայում: Թուրքիայում հրատարակվող հայ մամուլի ձևավորմանն ու լուսավորական նախասիրություններին մի հայտնի չափով նպաստել են Մխիթարյանների «Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդյան» և «Դիտակ Բյուզանդյան» պարբերաթերթերը, որոնք արևմտահայերին հետաքրքրող ազգային, պատմական ու բանասիրական ընդարձակ լրատվություն էին պարունակում: Արևմտահայ լրագրության համար ուսումնառության դպրոց էին նաև Կ. Պոլսում և Ջմյուռնիայում տպագրվող եվրոպական պարբերականները, որոնք ժանրային տեսակետից գրավում էին ձևավորվող լրագրության ուշագրությունը: Հենց այս քաղաքներում էլ հրատարակվեցին առաջին հայերեն պարբերականները, որ բացատրվում է



տեղի հայ համայնքների Թուրքիայում ունեցած տնտեսական ազդեցիկ դե-  
րով, ազգային մշակույթի պահպանության և զարգացման դարավոր ավան-  
դույթներով:

1830-ական թթ. առաջին պարբերականները սակավ բացառությամբ դեռևս  
ազգային նկարագիր չունենին: Դրանցից առաջինը Կ. Պոլսում հրատարակված  
«Լրո գիրն» է (1832-1850) թուրքական «Թագլիմի վազայի» («Օրացույց  
գեպրեբրի») պաշտոնաթերթի հայերեն տարբերակը: Հաջորդը, որ Զմյուռնի-  
այում հրատարակել են ամերիկացի բողոքականները, «Շտեմարան պիտանի  
գիտելյաց» ամսաթերթն է (1839-1842, 1844-1846, 1854): Այն նույնպես իր  
նպատակների բերումով զուրկ էր ազգային-հասարակական բովանդակու-  
թյունից և հայ մամուլի պատմության մեջ հետաքրքրություն է ներկայաց-  
նում միայն՝ գրական լեզվի և լրագրային ժանրերի բազմազանության տեսա-  
կետից:

1840-1850-ական թթ. արևմտահայ մամուլի զարգացման տասնամյակներն  
են, երբ Կ. Պոլսում և Զմյուռնիայում լույս տեսնող պարբերականների մեջ  
նկատելիորեն ընդգծվում է մեկ ընդհանուր՝ ազգային լուսավորական բովան-  
դակություն: «Արշալույս Արարատյան», «Ազդարար Բյուզանդյան», «Հայ-  
րենասեր», «Հայաստան», «Մասիս», «Նոյյան աղավնի», «Արփի Արա-  
րատյան», «Մեղու» և այլ պարբերականներում առաջադրվում են ազգային  
լուսավորության ու կրթության, կրոնական միասնության ու դավանական  
տարբերություններից վեր դասվող ազգային համագործակցության գաղա-  
փարները: Պարզ երևում է մշակույթի ու լուսավորության իրրև արև-  
մտահայության տնտեսական ու հասարակական զարգացման ամենակարևոր  
գործոնի, ըմբռնումը հանրային մտայնության մեջ: Լրագրական ժանրերը  
դեռևս գտնվում են լինելության գործընթացում, իսկ վերացականությունից  
դեռևս չազատագրված հրապարակախոսության մեջ զգացնել է տալիս  
բարոյախոսության նախապատվությունը:

Արևելահայ առաջին պարբերաթերթը՝ «Արևելյան ծանուցմունքը», լույս է  
տեսել 1816 թ. Աստրախանում: Այն հրատարակվել է ընդամենը ութ ամիս և  
նշանավորել թերևս միայն արևելահայ մամուլի ծնունդը: Ազգային լիարժեք  
լրագրությունը, սակայն, Կովկասում սկզբնավորվել է անցյալ դարի 40- ական  
թվականներին, երբ ռուսական «Кавказ» լրագրին զուգահեռ թիֆլիսում  
հիմնադրվում է նաև հայկական «Կովկաս» շաբաթաթերթը (1846-1847): Թե՛  
«Կովկասը» և թե՛ «Արարատ» շաբաթաթերթը, որը նույնպես հրատարակվել

է Թիֆլիսում 1850-1851թթ. Գաբրիել քահանա Պատկանյանի խմբագրու-  
թյամբ, առաջադիմական նկատելի դեր են կատարել ազգային լուսավորա-  
կանության դաշտափարնների արծարծման առումով: Դրա ցայտուն ար-  
տահայտությունն այն իրողությունն էր, որ «Արարատը» հրատարակվում էր  
աշխարհաբար: Այս շրջանում իրենց գիտամանկավարժական գործունեու-  
թյունն էին ծավալում դորպատյան Համալսարանի շրջանավարտներ Խա-  
չատուր Աբովյանը և Ստեփանոս Նազարյանը: Նրանք ծրագրել էին Համատեղ  
մի թերթ հրատարակել, բայց Նազարյանի դիմումները թերթ հրատարակելու  
իրավունք ստանալու վերաբերյալ մերժվում են: Այդուհանդերձ, Աբովյանը,  
իր մանկավարժական աշխատությունները և գրական-գեղարվեստական գոր-  
ծերը զրեւով աշխարհաբար, փաստորեն հրաժարվեց գրաբարից և Հաստատեց  
գրական աշխարհաբարի քաղաքացիական իրավունքները: Դրանով նա սկիզբ  
դրեց հետագայի Հայ մամուլի օրգանների միջև ծավալված բուռն բանավեճե-  
րին գրապայքարին:

Ստեփանոս Նազարյանը 1858 թ. ստանում է «Հյուսիսսփայլ» ամսագրի  
հրատարակության իրավունքը: Դրան հաջորդում է արեւելահայ լրագրության  
օրինահափ գարգացումն ու վերելքը, որը պայմանավորված էր ոչ միայն Ռու-  
սաստանում կատարվող քաղաքական վերափոխումներով, այլև Հայ լուսավո-  
րիչների մշակած Համազգային լուսավորական ծրագրերի կենսունակությամբ  
ու արդիականությամբ:

1860-ական թվականները արեւելահայ իրականության մեջ նշանավորվում  
են Հայ խոշոր լուսավորիչ-հրապարակախոսներ Ստեփանոս Նազարյանի և  
Միքայել Նալբանդյանի արգասավոր գործունեությամբ: Նրանց հրատարա-  
կած «Հյուսիսսփայլ» ամսագիրը բացառիկ դեր է կատարում Հայ Հասարա-  
կական կյանքի բարեփոխումների մարզում: Ամսագրի հրատարակության  
տարիներին (1858-1864 թթ.) ծավալված բանավեճերի բովում Հաստատվում է  
գրական աշխարհաբարի քաղաքացիական իրավունքների ճանաչումը ժամա-  
նակի ամենամեծ ձեռքբերումը արեւելահայ Հասարակական կյանքում:  
Անգնահատելի է «Հյուսիսսփայլի» դերը երիտասարդ գրական ուժերի դաս-  
տիարակության, Հայ նոր գրականության զարգացման, ազգային մշակույթի  
հարստացման ու նորացման ուղղությամբ: «Հյուսիսսփայլի» խմբագիրների  
մեծադույն նվաճումը դասականի մակարդակի լուսավորական-գեմոկրատա-  
կան հրապարակախոսության մշակումն էր, որը երկար տարիներ մնաց չզե-  
րազանցված և այսօր իսկ զարմացնում է հարցադրումների հրատապությամբ

ու համարձակութեամբ, գրական ժանրերի բազմազանութեամբ ու մշակ-  
վածութեամբ:

«Հյուսիսսփայլի» հրատարակության օրերին են գործել նաև կղերական-  
պանոզական հոսանքի գործիչներ Ստեփանոս քահանա Մանդինյանը, Մսեր և  
Զարմայր Մսերյանները, Գարրիել Այվադովսկին, որոնք նույնպես հանդես  
էին գալիս ազգի լուսավորության և առաջընթացի, ազգի անդամների  
բարոյական կատարելագործման յուրատեսակ ծրագրերով: Նրանց պարբերա-  
կանները, սակայն, «Մեղու Հայաստանին» (1858-1862), «Ծոռաքաղը»  
(1858-1862) և «Մասյաց աղավինին» (1855-1865) հատկապես 1858-1862 թթ.  
հետևողական պայքար էին ծավալում «Հյուսիսսփայլի» խմբագիրների առա-  
ջադիմական, լուսավորական-դեմոկրատական գաղափարախոսության և հայ  
կյանքի վերափոխման ծրագրերի դեմ: Հնի և նորի, միջնադարից եկող կրոնա-  
կան դոգմաների պահպանման և բուրժուական լուսավորականության պար-  
տադրած անցիջումն ու ֆորմաների բախումն էր այդ միանգամայն օրինաչափ և  
պատմականորեն տրամաբանված: Սակայն որքան էլ ծանր էր «Հյուսի-  
սսփայլի» խմբագրության վարած դոտեմարտը համախուժաբ ընդդիմախոս-  
ների դեմ, նազարյանի արտահայտությունները, «առաջադարձ ժամանակը» կա-  
տարում է իր պատմական գործը, և հայ Հասարակական կյանքի վերածնու-  
թյունը մտնում է իր իրավունքների մեջ: Ինչ վերաբերում է հետահայաց  
հրատարակախոսներին, ապա լրագրության պատմարանն իրավունք չունի իր  
տեսադաշտից դուրս թողնելու նրանց պարբերաթերթերի պատմությունը և  
թերապանահատելու նրանց ազգասիրական գործունեությունը, որը թեկուզ և  
փոքր չափով, բայց նույնպես միտված էր հայ Հասարակության կյանքի բար-  
վորման նպատակին:

Նոր ձևավորվող ազգային-պահպանողական հոսանքի օրդան «կռուճկ  
հայոց աշխարհին» ամսագիրը (1860-1863) խմբագրում էր արևմտահայ Հա-  
սարակական գործիչ Մարկոս Աղաբեկյանը: Ամսագիրը նշանակալից  
ներդրում ունի նոր գրականության, գրական քննադատության, ազգային  
պատմական վավերագրերի հրատարակման և բանահյուսության զարգացման  
մեջ: Հայ մշակույթը եվրոպայում պրոպագանդելու, ժամանակի զիտության  
նվաճումների մասսայականացման հարցում մեծ է Գարրիել Այվադովսկու-  
«Մասյաց աղավինի» պարբերաթերթի ծառայությունը:

1860-ական թթ. թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ մամուլը դառնում է  
հայ Հասարակական կյանքի անբաժան ուղեկիցը, որը ոչ միայն արձագան-

քում էր օրվա բոլոր նշանակալից խնդիրներին, բանավեճ վարում կենսական հարցերի շուրջ, այլև կազմակերպում և ղեկավարում դեմոկրատական ուժերի գործողութիւնները երկրի հասարակական ու տնտեսական կյանքում նորի և առաջադիմականի ներդրման համար:

1860-ից մինչև 1870-ական թթ. վերջերը որակապես նոր և առանձնահատուկ շրջան է արեւմտահայ մամուլի պատմութեան մեջ: Լուսավորական գաղափարախոսութեան ընդհանուր հենքի վրա առաջանում են հասարակական որոշակի և տարբեր ըմբռնումներ: Հիմնականում ազգային ուղղվածութիւն ունենալով՝ դրանք ստանում են սոցիալ-հասարակական կոնկրետ բովանդակութիւն և ներկայացնում արեւմտահայերի հասարակական կացութեան ու զարգացման ուղիների վերաբերյալ պատկերացումների ամբողջութիւնը: Մամուլն արտացոլում է մտքերի ու գաղափարական նախասիրութիւնների շարժումը, հասունացումն ու ընթացքը, որի ընդերքում պետք է նշմարվեն մտավոր ծրագրերը իրենց բազմազանութեամբ: 1860-ական թթ. հասարակական մտայնութեան համար առանցքային նշանակութիւն է ստանում ներհամայնքային վարչական վերափոխումների և դրանից բխող ազգային լուսավորութեան գործնական կազմակերպման իրավական կարգավորման հիմնախնդիրը: Առաջնակարգ նշանակութիւն է ստանում եկեղեցու տեղի և նշանակութեան վերաարժեքավորման գաղափարը, որը հուզում էր ազգային և տնտեսական լուրջ փոփոխութիւններ ակնկալող ժողովրդական բոլոր խավերին: Ազգային վարչութեան վերակազմակերպման հիմնահարցը վերածում է «Ազգային սահմանադրութեան» շուրջ բեկուցող հասարակական ուղղութիւնների աննախընթաց լարման: Ազգային այդ կանոնադրութեան շուրջ բախումները, եկեղեցու, նրա ազգապահպան նշանակութեան և կրոնական ու քաղաքացիական իրավասութիւնների, աշխարհիկ-վարչական կառույցների հետ նրա փոխհարաբերութիւնների, կենտրոնի և գավառի առնչութիւնների վերաբերյալ տարակարծութիւնների ու համեմատութիւնների ամբողջ ալլազան պատկերը կազմում է 1860-ական թթ. արեւմտահայ մամուլի հասարակական բովանդակութիւնը: Հ. Արվաճյանի «Մեղուն», Կ. Փանոսյանի «Մյուսնատիի էրճիասը», Կ. Ություճյանի «Մասիսը», «Միութիւնը», Գր. Զիլինկիրյանի «Ծաղիկը» և այլ պարբերականներ առաջադրում են հայ համայնքի վարչութեան ժողովրդավարացման, դպրոցական գործի և մշակույթի արդիականացման նոր գաղափարներ: Ծայր է առնում նրանց սկզբունքային ու համարձակ ընդդիմութիւնը հին, իրենց հասար-

րակահանորեն սպառած վարչական ու մշակութային կառույցների, դրանք մարմնավորող ու պաշտպանող աշխարհիկ և հոգևոր վերնախավի նկատմամբ: Դրանով էլ պայմանավորված է Ն. Սըվաճյանի, Կ. Փանոսյանի, Գր. Ջիրինկիրյանի, Մ. Մամուրյանի և 60-ական թթ. մյուս առաջադիմական հրապարակախոսների քննադատական լիցքն ու պաթոսը 1850-ականի հիմնականում մեղմ և հեղաբարո մամուլի նկատմամբ: Ազգային սահմանադրութայն շուրջ տեական բանավեճ է սկսվում նրանց պարբերականների և պահպանողական հրատարակությունների «Երեակի», «Արևելյան դարի», «Ժամանակի» և այլ թերթերի միջև:

1860-ականի վերջերին և 1870-ականի սկզբներին մամուլն առաջադրեց սոցիալական կեղեքումների ու հարստահարությունների հիմնահարցը: Սահմանադրական արդեն անստույգ դարձող վեճերից ուշաբերված՝ հասարակական միտքը ուշադրությունը բեռուում է հասարակության ավանդական սոցիալական կառուցվածքի, սեփականատիրական անարդարացի հարաբերությունների ու ազգային ճնշումների հիմնահարցին, որի արժեքավորման պահից իսկ մամուլը ստանում է շեշտված սոցիալական ու ազգային բովանդակավորում: Ազգային կեղեքիչների կտրուկ քննադատությունը զուգորդվեց թուրքական տեղական իշխանությունների անբանություն, բռնատիրություն ու վայրագ հարստահարությունների բացահայտ մերկացումներով: Մամուլի էջերում քննարկվում են նաև օսմանյան բռնատիրական կարգերի փոփոխություն, երկրում սահմանադրության կիրառման հնարավորությունների հարցերը: Քննադատական հիմնավոր վերաբերմունքը ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր կացության հանդեպ, դրա պատճառների իրատես վերլուծությունն ու բմբռնումը արևմտահայ առաջավոր մամուլի մեջ սենց ու զորացրեց բռնակալությանը ազգայնության իրավունքները հակադրելու, ազգային ինքնորոշման տրամադրությունները:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը մի հայտնի չափով քաղաքական լիցք հաղորդեց արևմտահայ մամուլին, իսկ Հայկական հարցի միջազգայնացումն այն համակեց քաղաքական ակտիվություն: Հայություն կացությունը, Օսմանյան Թուրքիայի համակարգում նրա իրավունքների և իրավիճակի վերաբերյալ Սան Ստեֆանոյի դաշնագրի, ապա Բեռլինի կոնգրեսի համապատասխան հոդվածները խթանեցին ազգային-ազատագրական շարժման և նրա գաղափարախոսության վերելքը հայ առաջադեմ դործիչների ու հասարակական հոսանքների հայեցողության մեջ ուղղագծելով մո-

տալուտ ազգային ինքնավարության գաղափարը: Այս պատճառով էլ 1870-ական թթ. 2-րդ կեսի և 1880-ականի սկզբի արևմտահայ պարբերականներն աննախընթաց չափերով Հագեցած են ազգային-քաղաքական որակներով («Մասիս», «Թատրոն», «Օրագիր», «Մանզումեի էֆքբյար», «Լրագիր», «Արևելյան մամուլ», «Մեծմուշակ Հավատիս», «Արարատ», «Մետեորա» և այլն):

Ռուսաստանի քաղաքական կյանքում սկսված նոր ունակցիայի Հետևանքով ինչպես ռուս, այնպես էլ Հայ իրականության մեջ 1860-ական թթ. լրագրության վերելքին Հաջորդում է մի Հարկադիր լուծիթյուն: Դժվարանում է նոր թերթերի Հրատարակության իրավունքի ձեռքբերումը, նեղանում է դեռևս շարունակվող պարբերականների ընդգրկած Հարցերի շրջանակը («Մեղու Հայաստանի», «Հայկական աշխարհ»): Դրանց միջև տարվող բանավեճն իսկ պտտվում էր առաջին մանրիկ ու դորշ խնդիրների ոլորտներում: Սակայն 1870-ական թվականներից, երբ Ռուսաստանում սկսվում են տնտեսական զարգացման նոր ժամանակներ, Հաստատվում են բուրժուական Հասարակարգին Հատուկ Հարաբերություններ, կրկին կյանք է առնում պարբերական մամուլը, և Հասարակական կյանքում տիրաբար Հնչում է մեծ վաթսուենականների Հրապարակախոսական ձայնը: Օրինաչափ կերպով վրա է Հասնում նաև Հայ պարբերական մամուլի վերելքի երկրորդ փուլը՝ 70-ական թթ., որի առաջին և նշանավոր ներկայացուցիչն էր Գրիգոր Արծրունին իր «Մշակ» լրագրով (1872-1921): Այն անցած ժամանակաշրջանի Հայ մամուլի լավագույն ավանդույթների յուրատեսակ սինթեզումն էր, որի Հիմքի վրա մեղանում ստեղծվում է նոր, և՛լրոպական տիպի լրագրություն՝ շնչավորված Արծրունու մեծատաղանդ Հրապարակախոսությամբ: «Մշակը» նոր ծնունդ առած բուրժուական Հարաբերությունների զարգացման, ազգային-մշակութային կյանքի բազմազան երևույթների և արևմտահայ իրականության կարևոր իրադարձությունների արտացոլման Հայելին էր, ազդեցիկ և քննարկող: Կարճ ժամանակում թերթը մեծ ժողովրդականություն է ձեռք բերում ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Արևմտահայաստանում: Սակայն «Մշակը» մենակ չէր: Անցյալ դարի վերջին քառորդում մեծ ճանաչում են գտնում նաև Հրապարակախոսներ Արզար Հովհաննիսյանի «Փորձ» (1876-1881) և «Արձագանք» (1882-1898) պարբերականները, Սպանդար Սպանդարյանի «Նոր-Դար» (1884-1916) լրագիրը: Դարավերջին Հայ իրականությունը թեև Հարուստ էր և այլ պարբերականներով, որոնցից որոշ

օրգաններ արդէն մասնագիտական ուղղվածութիւն ունենին, սակայն վերո-  
հիշյալ թերթերն անառարկելի հեղինակութիւն էին նվաճել Հրատարակչա-  
կան գործի կազմակերպմամբ, Հրատարակատեսական Հոգվածները արդիական  
չնչոյ և դրական մշակվածութիւնով, լրագրային աշխատանքին Հրատարակա-  
խոսների անձնուրաց նվիրվածութիւնով:

Դարավերջի արեւելահայ մամուլն աչքի է ընկել նաև բանավեճերով, ու-  
րոնք ծավալվել են Հատկապես Հայկական լիբերալիզմի տեսաբան Արծրունու  
և ազգային պահպանողականներ Սպանդար Սպանդարյանի, Արզար Հովհան-  
նիսյանի և Պետրոս Սիմեոնյանի միջև: Այդ բանավեճերի բովո՞ւմ ի Հայտ էին  
գալիս Հայ խմբագիրների դիրքորոշումները ոչ միայն ազգային-մշակու-  
թային, եկեղեցական և առտնին այլևայլ Հարցերում, այլև երկրամասի տնտե-  
սական դարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերում: Ամենա-  
կարևոր խնդիրը, սակայն, որը բոլորանվեր զբաղեցրել է դարավերջի երկու  
Հատվածների Հայ Հասարակութայնն ու մամուլի գործիչներին, 1877-1878 թթ.  
ուս-թուրքական պատերազմի ընթացքն ու Հայկական Հարցի ծնունդն էր,  
արևմտահայ Հատվածի ինքնավարութայն ձեռք բերման և դրա նկատմամբ  
տարբեր մտացումների քննութիւնը: Ավելի ուշ մամուլի օրվա Հրատապ  
Հարցերն են դառնում սուլթանական կառավարութայն սկսած Հալա-  
ծանքները, 1894-1896 թթ. Հայկական կոտորածները, արևմտահայ Հատվածի  
ճակատագիրը, գաղթականութայնն օգնութիւն Հասցնելը:

1880-ական թթ. սկզբներին, օգտվելով տերութիւնների աշխարհաքաղա-  
քական նոր կազմորոշումներից և դրանից բխող նրանց միջև Հակամարտու-  
թիւնների խորացումից, Թուրքիան որոշ չափով կայունացրեց իր արտաքին  
քաղաքական իրավիճակը: Դա օսմանյան վերնախավին Հնարավորութիւն  
ավելց դիվանագիտական գրադրութիւնների մեջ թաղել երկրի բարենո-  
րոգումների (այդ թվում և Արևմտահայաստանի) իրականացումը, որ նա  
ստանձնել էր Բեուլինի դաշնագրով: Հայերի ինքնորոշման ձգտում-  
ներին սուլթան Արդուլ Համիդը Հակադրեց տնտեսական կեղեքումների ու  
Հարստահարութիւնների նպատակամետ քաղաքականութիւնը: Հենց  
1880-ական թթ. սկզբներից էլ ուրվագծվում է արևմտահայութայն  
ընաշնջման օսմանյան պետական քաղաքականութիւնը: Գրեթէ միաժամա-  
նակ բռնութիւնների ու ոչնչացման քաղաքականութիւնը տարածվեց արև-  
մտահայութայն մշակութային ինքնութայն վրա: Հալածանքների ենթարկվե-  
լին ազատ խոսքը, կարծիքներն ու գաղափարները, որ նախորդ տարիներին

ամենից ավելի անմիջականորեն ու ձևակերպված արտահայտվում էին պարբերական հրատարակություններում: Իր անսահման իրավունքների մեջ մտավ Համիդյան վայրագ զբաքննությունը, որը ձգտում էր խեղդելու մամուլում ազատ խոսքի ամեն մի դրսևորում: Իրենց քննադատական խոսքը հարկադրված էին մեղմել կամ այլաբանական միջոցներով արտահայտել «Արևելյան մամուլը», «Խիկարը», «Միծաղը», «Թերեմանը էֆֆայրը», «Արևելքը», «Մասիսը» և այլն:

Ոստիկանական զբաքննության սաստկացման ժամանակաշրջանում (1883-ից հետո) նոր խնդիրներ դրվեցին մամուլի առջև, որը և բավական հաջողություններ իրագործվեց Կ. Պոլսի «Արևելք» թերթի Հայտնությունը: Խոսափելով ազգային-քաղաքական որևէ հարցադրումից, «Արևելքը», իսկ 1887-1889թթ. նաև «Մասիսը» հետևողականորեն անդրադառնում էին Կ. Պոլսի և Արևմտահայաստանի տնտեսական, մշակութային ու կրոնական կյանքի լուրջ խնդիրներին, հասարակության ուշադրությունը բեռնում դրանց արատավոր կողմերի և թերությունների վրա: «Արևելքի» ժողովրդավար հրապարակախոսները, որոնց ուժերով հրատարակվում էր նաև Ա. Արփիարյանի «Մասիսը», չնայած արգելքներին, իրենց քննադատությունը տարածում էին ազգային իշխանավորների գործունեության վրա, առաջադրում գավառի տնտեսական քայքայումը կանխելու, գավառացու ծանր դրությունը մեղմելու միջոցներ: Այստեղ, ինչպես և «Հայրենիք» (1891-1896) առաջադիմական թերթում, մշտապես ուշադրության կենտրոնում էր ազգային մարմինների գործունեությունը, ազդեցիկ միջամտությունը Հանրային կյանքին: Այս պարբերականները 1880-1890-ական թթ. հեղաբեկումներ մտցրեցին ազգային կյանքի բարելավման վերաբերյալ հասարակական կարծիքի մեջ՝ այն սնելով Արևմտահայաստանի մասին թարմ ու մշտական լրատվությունը և Հայ գավառի կացությունը արժեքավորելով ազգային աշխարհիկ ու հոգևոր մարմինների գործունեությունը: Նշված պարբերականներում սկիզբ առան ու զարգացում ապրեցին Հայ ռեսլիստական գրականությունը, գեղագիտությունն ու գրաքննադատությունը: Եվ վերջապես, 1880-1890-ական թթ. առաջադիմական մամուլում առավել խոր և համակողմանի դարձան մշակութային ու գաղափարական շփումները արևելահայ Հատվածի հետ, որ Հաստատուն Հարաբերությունների տեսք էին ստացել դեռևս 1860-ականի հրատարակություններում: Այս կապերի խորացմանը զուգընթաց՝ արևմտահայ հրապարակախոսներն ու մշակութային գործիչները լուրջ հե-



ասարբրուիցուն են Հանդես բերում ուսսական մշակույթի, Ռուսաստանի Հասարակական ու քաղաքական իրականությունների նկատմամբ:

Արևմտահայ թերթերի և ամսագրերի նկատմամբ համիդյան գրաքննությունը է՛լ ավելի անհանդուրժող դարձավ 1894-1896 թթ. Հայկական կոտորածների շրջանում և դրանից Հետո, մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը: Այս պայմաններում իսկ մամուլը կարողացավ պահպանել իր Հասարակական ու Հոգևոր ազդեցությունը խթանելով մշակույթի և առհասարակ Հոգևոր արժեքների զարգացման կարևորագույն գործը:

Այս նդնաժամային օրերին է, որ Հայ լրագրությունը ստանձնում է ազգային կյանքի ղեկավարի, պետականությունից զրկված Հայություն ոչ միայն բարոյական պաշտպանի, այլև քաղաքական առաջնորդի դերը: Այս առումով նշանակալից երևույթ է, որ դարավերջի Հայ ժողովրդի ազատագրական շարժումների վերելքի պայմաններում Հասարակական Հոսանքներին փոխարինելու են գալիս ազգային քաղաքական կուսակցությունները, որոնք ստեղծում են Հայ լրագրության մի նոր ճյուղ՝ կուսակցական մամուլը: Այդ թերթերից նշանավորները երեքն էին. «Արմենիա» լրագիրը (1885-1923), որի արտահայտած գաղափարներով ղեկավարվում էր արմենականների կազմակերպությունը, Հնչակյան կուսակցության օրգան «Հնչակը» (1887-1915, 1935-1940) և Հայ Հեղափոխական դաշնակցության Հիմնադրած «Դրոշակը» (1891-1914, 1925-1934):

Մկրտիչ Փորթուզալյանի Հիմնադրած «Արմենիան» ժամանակին Հսկայական գործ է կատարել ազգային ազատագրական պայքարի նախապատրաստման և դրա ծրագրերի մշակման ուղղությամբ: Փորթուզալյանի Հրապարակախոսական մարտական ոգին էլ կյանքի է կոչել «Արմենիա» թերթը: Հնչակյան կուսակցության Հիմնադիր Ավետիս Նազարբեկյանի «Հնչակը» Հեռեդրականորեն պրոպագանդել է կուսակցության մշակած Հեղափոխական ծրագրերը, բնթերցողներին ծանոթացրել կուսակցության գործողությունների տակտիկային և սարատեղիային:

Ժամանակակիցների մեջ մեծ հեղինակություն էր ձեռք բերել Ստեփան Զորյանի, Հովնան Դավթյանի և Քրիստափոր Միքայելյանի խմբագրած «Դրոշակ» թերթը: Այն նույնպես անխոնջ աշխատանք է ծավալել ազգային կենսական Հարցերի քննության, Արևմտյան Հայաստանի ազատագրման հեղափոխական ուղիների մշակման գործում:

Վերոհիշյալ պարբերականների էջերում հրատարակված գաղափարական-քաղաքական ըմբռնումները օրինաչափ և անհրաժեշտ փուլ էին հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման գործընթացում: Սույն հատորի խնդիրներն ու ծավալը, բնականաբար, հնարավորություն են տվել ներկայացնելու ազգային կուսակցությունների մամուլի սկզբնավորման միայն ընդհանուր հիմնական միտումները: Նույն տրամաբանությունով գաղթօջախների մամուլը թեև առանձին երկրներում սկզբնավորվել է XIX դ. բայց իբրև համապատասխան գաղթօջախի մամուլ, քանի որ իրեն դրսևորել և ճանաչում է գտել մի փոքր ավելի ուշ, քննարկման առարկա կդառնա հայ լրագրությունյան պատմության հաջորդ հատորներում:

Դարավերջի հայ լրագրությունը քաղաքական և հասարակական կյանքի օրվա հարցերին զուգընթաց մեծ չափով լուսարանել է նաև հայ կյանքի մշակութային խնդիրները, մեծ տեղ հատկացրել գեղարվեստական գրականությանը: Մամուլի օրգանները դարավերջին հայ գրողների երկերի տպագրության գրեթե միակ հնարավորությունն էին և մեծապես նպաստել են ոչ միայն գրական ստեղծագործությունների հրատարակությանը, այլև դրանց քննարկմանը, հասարակական կարծիքի ստեղծմանը, գնահատանքին: Սակայն, չնայած հայ հասարակական-քաղաքական կյանքին բերած վիթխարի նպաստին և իր երկդարյա պատկառելի պատմությանը, հայ լրագրության ամբողջական պատմությունը դեռևս չի ստեղծվել:

Հայ մամուլի պատմագրության ստեղծման առաջին փորձը կատարել է լրագրող Հարոն (Նիկ. Տեր-Հարությունյան), որի աշխատությունն ընդգրկում էր միայն արևելահայ մամուլի պատմությունը «Կովկաս» թերթից մինչև 1870-ական թթ. («Հայ մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ», 1878 թ., Թիֆլիս): Հարոն, սեղմ ու էմպիրիկ ռճով խոսելով վաղ շրջանի պարբերականների մասին, հիմնականում ներկայացրել է իր օրերի թերթերի պատմությունը:


1893 թ. հայ լրագրության սկզբնավորման 100-ամյակի օրերին տպագրվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, ճանաչված բանասեր Գրիգորիս Գալեմբյարյանի «Պատմություն հայ լրագրության ի սկզբանե մինչև մեր ժամանակը» գրքի Ա հատորը, որն ընդգրկում է 1794-1860-ական թթ. հայ մամուլի ամբողջական պատմությունը: Գալեմբյարյանը՝ հետագայում տպագրության է հանձնել այդ գրքի շարունակությունը՝ «Պատմություն հայ լրագրության 1860-են մինչև մեր օրերը» խորագրով (տես՝ «Հանդես ամսօրյա», 1897, № 2, 4, 9): Հայ մամուլի բազմաճմուռ պատմա-

բանի աշխատութիւնը, որը դեռևս չի ստացել իր արժանի դնահատականը, գրված է փաստական հարուստ նյութի հիմքի վրա և աչքի է ընկնում ուսումնասիրվող թերթերի նկատմամբ քննական, օբյեկտիվ մոտեցումով ու տեսական արժեքավոր եզրահանգումներով: Գալեմբյարյանի գրքի շարունակութիւնը կարելի է նկատել Վենետիկի Մխիթարյան միաբանութեան անդամ, հայագետ Մկրտիչ Պոտուրյանի «Հայ մամուլը տասնհինգ տարվան մեջ (1894-1909)» աշխատութիւնը (Վենետիկ, 1909):

Հետագա տասնամյակներում թե՛ արտասահմանյան երկրներում, թե՛ մեզ մոտ ստեղծվել են բազմաթիվ մենագրութիւններ, ուսումնասիրութիւններ և արժեքավոր Հոդվածներ նվիրված երկու հատվածների և գաղթօջախների հայ մամուլի առանձին օրգանների պատմութիւնը, Հայ Հրապարակախոսներին, մամուլի ճյուղային հրատարակութիւններին, որոնցից Հիշատակութեան արժանի են Հայ խոշոր պատմաբան և զբաղմունքաբան Լեոյի մենագրութիւնները նվիրված Հայ Հրապարակախոս-լրագրողներ Ստեփանոս Նազարյանին և Գրիգոր Արծրունուն<sup>1</sup>: Լեոն իր ուսումնասիրութիւնները կատարել է XIX դարի 60-90-ական թթ. Հայ Հասարակական մտքի վերելքի, տնտեսական և մշակութային կյանքի վերափոխումների ժամանակաշրջանի ընդհանուր ֆոնի վրա մեծապես օգտագործելով մամուլից և պատմագիտական այլևայլ աղբյուրներից բազմապիսի փաստական նյութեր: Թեև Լեոյի մի շարք եզրակացութիւններն ու դնահատականներն այսօր չի կարելի ընդունել առանց վերապահութեան, բայց այն հանգամանքը, որ մեր իրականութեան մեջ առաջին անգամ Հայ Հրապարակախոսութիւնը դառնում էր զիտական ուսումնասիրութեան առարկա, իսկ այդ մենագրութիւններն անուղղակիորեն հավաստում էին մամուլի պատմութեան ստեղծման կարևորութիւնը, առանձնահատուկ կշիռ է հազորդում պատմաբանի աշխատութիւններին:

1960 թվականը հիշարժան եղավ Հայ մամուլի պատմութեան ուսումնասիրութիւնը գիտական հիմքերի վրա դնելու առումով: Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայում այդ թվականին ակադեմիկոս Արտաշես Կարինյանի նախաձեռնութեամբ հիմնադրվեց Հայ մամուլի պատմութեան բաժինը: Նորաստեղծ բաժնի հեռանկարային պլաններում առաջին հերթին ծրագրվեց կազմել մամուլի մատենադիտական համահավաք նոր ցուցակ, որ-

<sup>1</sup> Լեո, Ստեփանոս Նազարյանց, հ. 1-2, 1902, Թիֆլիս: Գրիգոր Արծրունի, հ. 1-3, 1902-1905, Թիֆլիս:



պես առաջին քայլ մամուլի պատմութեան ստեղծման ճանապարհին. պլանավորվեցին նաև առանձին մենագրություններ, որոնք ինչ-որ չափով պետք է լրացնեին լրագրութեան պատմութեան «բաց» էջերը: Անցան բաժնի ստեղծագործական աշխատանքի առաջին տասնամյակները, տպագրվեցին մի շարք մենագրություններ: Այդ տարիներին հրատարակվեց Ա. Կարինյանի ստեղծագործական կյանքի նշանակալից արգասիքը «Ակնարկներ Հայ պարբերական մամուլի պատմութեան» մեծարժեք մենագրութեան երկհատորյակը (հ. 1-2, 1956, 1960, Ե.): Աշխատութեան առաջին հատորն ամբողջովին նվիրված է Հնդկաստանի Հայ գաղթօջախի մամուլի պատմութեանը, իսկ երկրորդը Եվրոպայի Հայ պարբերական մամուլին: Դրանով մեզանում դրվեց Հայ լրագրութեան պատմագրութեան գիտական հիմքը: Գրեթե նույն տարիներին (1955-1956 թթ.) տպագրվեց Հայ խոշոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» երկհատոր կոթողային մենագրությունը: Այն XIX դարի 40-70-ական թթ. Հայ Հասարակական մտքի քննական պատմությունն է, որում, ի թիվս այլ հիմնահարցերի, լուսաբանված են 60-ական թթ. Հայ լրագրութեան և հրատարակախոսական մտքի հետ կապված գրեթե բոլոր հարցերը: «Նալբանդյանը և նրա ժամանակը» գիրքը անգնահատելի գիտական ուղեցույց է անցյալ դարի 60-ական թթ. լրագրութեան պատմությունն ուսումնասիրողներին համար:

Հանրահայտ է, որ պարբերական մամուլի պատմութեան ստեղծումը գրեթե անհնար է առանց ճշգրիտ մատենագիտական ցուցակների, իսկ դրանց կազմումը կապված է մեծամեծ ղժվարությունների հետ: Այս տեսակետից բանասեր Գարեգին Լևոնյանի կազմած Հայ պարբերական մամուլի առաջին ցուցակի տպագրությունը, հիրավի, գիտական սխրանքի էր հավասար<sup>2</sup>: Այն գրվել է Հայ լրագրութեան հիմնադրման 100-ամյակի առիթով և 1894 թ. Կ. Պոլսում արժանացել Սահակ-Մեսրոպյան մրցանակին: Իր ինքնատիպ կառուցվածքով այդ ցուցակը Հայ լրագրութեան հարյուրամյա պատմութեան մի համառոտ փաստական տեղեկատու էր: Այնուհետև Լևոնյանը, տասնամյակներ շարունակ աշխատելով մամուլի մատենագիտական նոր ցուցակի վրա, 1934 թ. Հայ լրագրութեան 140-ամյա տարեդարձի օրերին հրատարակեց Հայ պարբերական մամուլի լիակատար ցուցակը<sup>3</sup>: Հետագայում թե՛

<sup>2</sup> Լևոնյան Գարեգին, Հայոց պարբերական մամուլը, պատմական տեսություն և սկզբից մինչև մեր օրերը (1794-1894), Ալ-պոլ, 1895:

<sup>3</sup> Լևոնյան Գարեգին, Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794-1934), Ե., 1934:

Հայաստանում, թե՛ սփյուռքում մամուլի Հայ օրգանների սրընթաց աճն ինքնին պարտադրեց ստեղծել մատենագիտական նոր ցուցակներ, որոնցից Հիշատակության արժանի են Հովհաննես Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիրյիտգրաֆիա» եռաշատոր ցուցակները (1954, 1956, 1957, Ե.) և Ամայյա Կիրակոսյանի «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» ցուցակը (1794-1967), 1970, Ե.:

Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի ստեղծագործական աշխատանքներում կարևոր ձեռքբերում էր բաժնի ավագ գիտական աշխատող Մանվել Բարլոյանի կազմած «Հայ պարբերական մամուլը» մատենագիտական համահավաք ցուցակը (1794-1980), 1986, Ե.: Գիտական մեծ բարեխղճությամբ կազմված այս ցուցակում կատարված են նախորդ ցուցակներում տեղ զտած վրիպումների բազմաթիվ ճշգրտումներ և անհրաժեշտ լրացումներ, որոնք խոսում են կատարված աշխատանքի բարձր մակարդակի մասին:

*Ա. Խառատյան*

*Լ. Գևորգյան*

## Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՍԿՁԲԵԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ  
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ

## Գ Լ ՈՒՆ Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՀՆԴԿԱՅԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

«Ա Չ Դ Ա Ր Ա Ր» (1794-1796)

Հայ պարբերական մամուլն սկզբնավորվել է Հնդկաստանի Մադրաս քաղաքում, 1794 թվականին: Պատմական և մշակութային այդ խոշոր իրադարձությունը պայմանավորված էր տեղի Հայ գաղթօջախի Հանրային կյանքի զարգացման բարձր աստիճանով, Հնդկահայ խոշոր լուսավորիչների մշակած ազատագրական շարժման գաղափարախոսությունից անմիջական ներգործություններ:

Առաջին Հայերը Հնդկաստանում գաղթօջախներ են հաստատել XVI դարում: Մադրասում Հայկական եկեղեցի է կառուցվել դեռևս 1547թ.: Հայ գաղթօջախները երկրում աչքի ընկնող դեր էին կատարում Մադրասում, Լահորում, Ագրայում: Երբ 1722 թ. աֆղանները նվաճում են Սպահանը և Նոր Զուղան, մեծաթիվ Հայեր Հիմնովին գաղթում են Հնդկաստան և երկրի կենտրոնական քաղաքներում ստեղծում բազմամարդ ու կուռ Հայկական գաղթօջախներ: Պատմական զրականությունից մեջ Հիշատակվում են առանձին մեծահարուստ Հայերի անուններ, որոնք քաղաքաշինությունից ասպարեզում բարի Հիշատակ են թողել Մադրասում և այլուր: Հնդկահայ վաճառականներն աչքի են ընկել նաև իբրև խիզախ ծովազնացներ, որոնց Հայանուն նալները («Հայկ», «Արամ», «Տիգրան») հասնում էին մինչև Իսպանիա, Պորտուգալիա, Ֆիլիպիններ, Չինաստան:

Հայ առևտրականների վիճակը, սակայն, աստիճանաբար վատանում է, երբ երկիր են մուտք գործում Հոլանդացիներն ու Ֆրանսիացիները (պորտուգալացի առևտրականները Հնդկաստան էին մտել դեռևս XVI դարում): Հայերի առևտուրն անկում է ապրում հատկապես այն բանից հետո, երբ XVIII

դարում անդլիացիները մեկը մյուսի հետևից զավթում են Հնդկաստանի առանձին երկրամասերը: 1756-1763 թթ. Հնդկահայերը մասնակցում են Հնդիկ ժողովրդի հակազաղութային, ազատագրական պայքարին: Ապստամբությունը ճնշվում է, և Անգլիայի համայնքների պալատի որոշմամբ լուծարվում է «Արևելա-Հնդկական ընկերության» դաշինքը հայ առևտրականների հետ: Հայերը կորցնում են իրենց կշիռն ու նախկին դիրքը միջազգային շուկայում:

Չնայած դրան հայ հասարակական կյանքը դաղթօջախում շարունակում էր ընթանալ նախկին հունով: Այն առանձնապես աշխուժանում է XVIII դարի երկրորդ կեսին, երբ Մադրասում իրենց լուսավորական գործունեությունն են ծավալում Հովսեփ Էմինի մերձավոր բարեկամ, գաղափարակից Մովսես Բաղրամյանը և նորջուղայեցի մեծահարուստ վաճառական Ծահամիր Ծահամիրյանը: Վերջինս 1771 թ. Մադրասում հայկական տպարան է հիմնադրում, որտեղ 1772-ին տպագրվում է Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքը, որով հայ իրականության մեջ դրվում էր քաղաքական հրապարակախոսության հիմքը:

Բաղրամյանի աշխատությունն ամբողջովին տողորված էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը կազմակերպելու պաթոսով և գործնական հրահանգներ էր պարունակում այդ շարժումը նախապատրաստելու և օտար նվաճողներից Հայաստանի ազատագրումն իրականացնելու ուղղությունով: Իր գրքում հեղինակը պարզաբանում էր երիտասարդության, հայ ծնողների և հոգևորականության անելիքները, պրոպագանդում ժողովրդի լուսավորության և նրա միավորման անհրաժեշտությունը, մատնանշում Հայաստանում ստեղծվելիք ապագա հանրապետական համակարգի կառուցվածքը: Հայ իրականության համար բացառիկ այս աշխատությանը հետևում է Մադրասի հայ համայնքի ինքնավարության օրենսգրքի ստեղծումը կազմված Ծահամիր Ծահամիրյանի ձեռքով («Տետրակ, որ կոչի Նշաւակ, վասն կառաւարելոյ ինչս Որոցց և առանց կտակ Ննջեցելոց», 1783 թ.): Այդ կանոնադրությունը, որ նախատեսված էր նպաստելու դաղթօջախի կենսունակության ամրապնդմանը, իրրև գործող օրենք կիրառության մեջ է մտել 1784-ին և գործադրվել մի քանի տասնամյակ: Այստեղ որոշակիորեն նշված էին պետության և եկեղեցու անջատման կարևորությունը, ինքնավարության բարձրագույն ատյանի Մադրասի հասարակաց ժողովի ժողովրդական

ընտրութեան սկզբունքները և այլն: Ուշադրութեան արժանի է նաև Հայաստանի ազատագրութեան ծրագիրը Ինուսաստանի օգնութեամբ:

Հայ ազատագրական շարժման երրորդ փաստաթուղթը Ծահամիր Ծահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատութիւնն է՝ ապագա Հայաստանի Սահմանադրութեան նախագիծը: Այն տպագրվել է 1788-1789 թթ.: Առաջին բաժնում Ծահամիրյանը, քննութեան առնելով ազատագրված Հայաստանում ստեղծվելիք պետականութեան բնույթը, նախապատվութիւնը տալիս է հանրապետական համակարգին: Երկրորդ բաժինը, որ բաղկացած է 521 հոդովածից, սահմանում է Հայաստանի պետական բարձրագույն մարմնի նախարարութեան ընտրութիւնների կարգը: Այստեղ բազմապիսի խնդիրների հետ մեկտեղ բարձրացվում են խոսքի, գործի և մտքի ազատութեան, եկեղեցին պետութիւննից և դպրոցը եկեղեցուց բաժանելու հարցադրումները: «Որոգայթ փառացը» դիտելով որպէս «Հայաստանի ապագա կազմակերպութեան վերաբերյալ մեծակերտ ուտոպիա»՝ հնդկահայ գաղթօջախի լուսավորական շարժման պատմութեան լավագույն հետազոտող Թադևոս Ավդալբեկյանը Ծահամիրյանին համարում է «Ֆրանսիական մեծ հեղափոխութեան գործիչների արժանավոր զինակիցը քնած Արևելքում»<sup>4</sup>:

Այս ամենը նպաստավոր հող էր ստեղծում գաղթօջախի մտավոր կյանքի աշխուժացման համար: Եկեղեցիներին կից գործում էին դպրոցներ, հայ մանկավարժներից և կրթված վաճառականներից ոմանք թարգմանութիւններ էին կատարում եվրոպական գրականութիւննից, Մադրասում վաճառվում էին Նոր Նախիջևանի նորաստեղծ տպարանի հրատարակութիւնները, տարածվում էին Վենետիկում Մխիթարյանների տպագրած գիտահանրամատչելի գրքերը: Հայ վաճառականները շփվում էին եվրոպական առևտրականների հետ, կարողում օտարալեզու թերթեր և գրականութիւն: Ահա հնդկահայ գաղութի ազգային կյանքի վերելքի այս պահին է Հարութիւնը քահանա Ծամպոնյանը ծավալում իր լուսավորական-հրատարակչական գործունեութիւնը:

Հարութիւնը Ծամպոնյանը (1750-1824) Պարսկաստանի Շիրազ քաղաքից էր, ժամանակի կրթված մտավորականներից մեկը: Նա ոչ միայն քաջատեղյակ էր հայ հին և միջնադարյան մշակույթի պատմութեանը, այլև գիտեր պարսկերեն և անգլերեն, ծանոթ էր պարսից դասական գրականութեանը:

<sup>4</sup> Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 272 («Շահամիր Ծահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնավարությունը XVIII դարում» հոդվածը):



Իրերի դժբախտ բերումով կորցնելով մանկահասակ երկու դավակներին Ծմավոնյանը թողնում է աշխարհիկ կյանքը և անձը նվիրում ճգնափեցություն Շիրազին մոտ գանվոդ Բարաքուհ սարի մենաստանում ամբողջ յոթ տարի անցկացնելով պարսիկ ճգնավոր դերվիշների ընկերակցությամբ: Այստեղ նա դրադվում է փիլիսոփայության և աստվածաբանության ուսումնասիրության, բանավիճում է իր բախտակիցների հետ, փորձում խորամուխ լինել բնության զազանիքների մեջ:

1784թ. Մադրասի ուսումնասեր հայերը դիմում են Նոր Զուղայի հոգևոր առաջնորդին և նրանից խնդրում մի գիտնական քահանա ուղարկել Մադրաս: Մկրտիչ արքեպիսկոպոսը մենաստանից հետ է կանչում Ծմավոնյանին և ուղարկում Հնդկաստան: Նույն թվականից Ծմավոնյանն ստանձնում է Մադրասի ս. Աստվածածին եկեղեցու ավագ քահանայի պաշտոնը և կարճ ժամանակից հռչակվում իր գիտելիքներով, աշխատասիրությամբ և առաքինի վարքով:

Չ. Ծմավոնյանը 1789-ին ձեռք է բերում Ծահամիրյանի տպարանը, որի համար անձամբ նոր տառեր ձուլելով դրադվում է նաև հրատարակչական գործունեություն: Անկախարկելով իր օրերի լուսավորական շարժման խնդիրներով տպագրում է այնպիսի գրքեր, որոնք օգտագործվում էին տեղի դպրոցներում: Այսպես, իր հրատարակչական գործունեության առաջին տարիներին նա տպագրել է Պաղտասար Դավիթի «Գիրք քերականության», Ներսես Ծնորհալու «Յիսուս օրգի», Թադեոս Սոգինյանցի «Տեսրակ, որ կոչի ողբ Հայաստանեայց» գրքերը, Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղությանի կոնդակները ուղղված Հնդկահայերին և այլն:

Ծմավոնյանի հրատարակչական գործունեության սկզբնական փուլում արդեն նրան մեծ նվիրվածությամբ օգնում էր գաղթօջախում ձևավորված լուսավորական գործիչների երկրորդ սերունդը, որը շարունակում էր «Մադրասի խմբակի» ստեղծած լուսավորական շարժման ազնիվ ավանդույթը: Նրանց անմիջական օգնությամբ էր նաև, որ Ծմավոնյանն իրականացնում է Հայ լրագրության ստեղծման իր խիզախ մտահղացումը: Այդ գործիչներից աչքի էին ընկնում Մադրասում մեծ հեղինակություն վայելող Տեր-Թադեոս Տեր-Անդրեասյան Սոգինյանցը, առևտրական և արձակագիր Հակոբ Այուբյանցը, երիտասարդ բանաստեղծ Սեթ Սամյանը, տպարանային աշխա-

տող և Թարգմանիչ Մկրտում Աիմեոնյանցը, Շ. Շահամիրյանի թոռը, նրա վաղամեռիկ Հակոբ որդու տղան՝ Նազարը:

Շմավոնյանի Հրատարակությունների մեջ բացառիկ երևույթ էր 1791թ. տպագրված Թ. Սոգինյանցի «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեայց» պոեմը: Գրքուկի գաղափարական հստակ ուղղվածությունը, Հայ ժողովրդի վիճակի և նրա ապագայի շուրջ հեղինակի խորհրդածությունները, Մայր Հայաստանի բանաստեղծական կերպարի ստեղծումը, ինչպես նաև խորագիրը, որը հիշեցնում է «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքը, վկայում են նախորդ սերնդի հնդկահայ Հրապարակախոսական մտքի հետ Սոգինյանցի Հայացքների ուղղակի կապի մասին:

Քաղաքական հասկանալի նկատառումներով Շմավոնյանը 1792 թ. առանձին գրքույքով, իսկ հետագայում նաև «Աղաբարարի» էջերում տպագրում է Ռուսաստանի Հայոց առաջնորդ Հովսեփ Արղունթյանի հնդկահայերին ուղղած կոնդակները: Դրանցում Արղունթյանը պատմում էր Նոր-Նախիջևան և Գրիգորուպոլիս քաղաքների հիմնադրման և եկատերինա Երկրորդի կողմից Հայ ազգաբնակչությանը տրված առանձնաշնորհումների մասին: Շմավոնյանն արտատպում է նաև այդ առիթով Հայերին ուղղված արքայական Հրովարտակը, որը մեծամեծ հույսեր էր ներշնչում հնդկահայերին՝ Ռուսական կայսրության օգնությամբ Հայաստանի ազատագրման վերաբերյալ:

Հնդկահայ գաղթօջախի աշխույժ մթնոլորտը, Հայաստանի մոտալուռ ազատագրության հեռանկարը և այդ կապակցությամբ ազգը ինքնաճանաչության հասցնելու անհրաժեշտությունը Շմավոնյանին թելադրում են ամսաթերթ Հրատարակելու միտքը: 1794 թ. օգոստոսին նա մի ծանուցում է տարածում, ուղղված Մադրասի «Բարեսպաշտ պարոնաց և մաքրակենցաղ տիկնաց», որում Հայտնում էր առաջիկայում «Աղաբարար» անվանումով ամսաթերթ Հրատարակելու իր վճիռը և խնդրում բաժանորդագրվել դրան:

1794 թ. հոկտեմբերի 16-ին լույս է տեսնում «Աղաբարարի» առաջին համարը<sup>5</sup>: «Առաջաբանութիւն» կոչված մուտքի խոսքում «Ազգին շնորհապարտ» և նրա «ամենախոնարհ քահանա» Շմավոնյանը Հայտնում էր, որ

<sup>5</sup> Ըստ երկրների՝ առաջին պարբերաբերթը հրատարակվել է Գերմանիայում՝ 1583 թվականին, այնուհետև Ֆրանսիայում՝ 1609 թ., Անգլիայում՝ 1622 թ., Ռուսաստանում՝ 1702 թ.: «Գազետա» տերմինը առաջինն օգտագործել է Թեոֆրաստ Ռենդոն, որը 1631-ին հիմնադրել է «La gazette» օրերը (1762-ից՝ «Gazette de France»):

Ճեռնարկելով Հայ պարբերաթերթի Հրատարակությունը, երկու նպատակ է հետապնդում. նախ, հնարավորություն ստեղծել Հայ մտավորականների համար տպագրելու իրենց գրքերն ու հոդվածները և ապա ընթերցանություն հայտնի տալ Հասարակությանն ու ազգի մանուկներին: Ինչ վերաբերում է ամսագրի կառուցվածքին, ապա խմբագիրը հայտնում է, որ առաջին բաժինը Հատկացվելու է դեղարվեստական գրականության և Հայ մատենագիրների գործերի տպագրությանը, իսկ երկրորդ բաժինը արտասահմանյան երկրներից և Անդրիովկասից ստացվելիք քաղաքական լուրերին: Հիմնական այդ բաժիններից բացի եվրոպական թերթերի և մասնավորապես այդ օրերին Մադրասում Հիմնադրված անգլիական քաղաքային մի օրգանի օրինակով Ծամպոնյանը ծրագրում էր հրատարակել առևտրական լուրեր, ապրանքների շուկայական գները, ազգային և կրոնական տոների և լուսնի փուլերի օրացույցները, նավագնացության չվացուցակը և այլն:

Ամսագրի հրատարակված 18 համարներում այս ծրագիրը առավելագույնս իրականացվում է: Այն դադարել է 1796 թ. նյութական դժվարությունների պատճառով<sup>6</sup>:

Սկսելով իր լրագրական գործունեությունը, Հայ առաջին խմբագիրը իր շուրջն է համախմբում մի քանի խանդավառ երիտասարդների, որոնց կոչում էր վերակացուներ և կազմակերպում է մեր լրագրության պատմության մեջ առաջին խմբագրական մարմինը: Սահմանված կարգի համաձայն, տպագրվելիք նյութերը նախապես պետք է ստանային խմբագրության հավանությունը:

Ծամպոնյանը թղթակցություններ էր ստանում Մադրասից, Կալկաթայից, Բասրայից, Ջինաստանից, Ֆիլիպիններից, լուրեր էր տպագրում Երևանից և Եուզիից: Քաղաքական և պատերազմական լուրերը նա քաղում էր եվրոպական թերթերից, նյութերի ընտրության գործում հանդես բերելով պատշաճ քննական մոտեցում: «Ազգարարի» թղթակիցներից շատերը առևտրականներ էին, որոնք իրենց ճանապարհորդությունների ընթացքում ականատես լինելով բազմաթիվ դեպքերի, ինչպես և երբեմն ենթարկվելով արկածների ու աղետների, դրանց մասին պատմում էին Ծամպոնյանին ուղարկած նամակ-

<sup>6</sup> 1794-ին լույս տեսել «Ազգարարի» 4 համար, 1795-ին՝ 12 համար, իսկ 1796-ին՝ 2 համար: Յուրաքանչյուր համարի գինն էր 1 հուն (ոսական 2 1/2 օուրլի):

ներում: «Ազդարարին» թղթակցում էին նաև Հոգևորականները, պաշտոնատար անձինք, հետաքրքրասեր քաղաքացիներ:

Ամսագրի լեզուն հիմնականում պարզեցված գրաբարն էր. շատերը գրում էին ջուղայաճայ բարբառով կամ գրաբարի և բարբառի մի աններդաշնակ խառնուրդով: Խմբագիրն այդ նյութերը տպագրում էր ինչպես գրանք կային, յուրատեսակ կենդանություն և տեղի գաղթօջախի լեզվային երանգը հաղորդելով ամսագրին:

Հայկական առաջին պարբերաթերթը մեծ տպավորություն է գործում Մադրասի և Կալկաթայի հայություն վրա: Թղթակիցները խոստովանում են, որ Շմավոնյան քահանան է՛լ ավելի է ոգևորում երիտասարդությունը, նրան մղում ընթերցանության և գրական-ստեղծագործական աշխատանքի: Հիւրավի, մթնոլորտը գաղթօջախում վերափոխվում է: Սկսվում է մի շրջան, երբ հայրենասիրության, ազգային ինքնաճանաչության և քաղաքացիական առաքինությունների խնդիրները ընտրյալներից բացի զբաղեցնում են նաև հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներին: Հետաքրքրական երևույթ է անշուշտ, որ եթե եվրոպական երկրներում հրատարակված առաջին պարբերականները խոշոր քաղաքների առևտրական լրատուի դեր են կատարել, ապա «Ազդարարն» իր հրատարակած նյութերի բնույթով գիտամասնայական և գրական-հասարակական պարբերաթերթի նախատիպն է դարձել Հայ լրագրության պատմության մեջ: Այն հիմնականում ոգեկոչում էր հայրենիքի ազատագրման երազանքը, քննության առնում ազգի տունը Հայաստանում բարեշինելու գործնական ծրագիրը:

«Ազդարարի» հրատարակության տարիներին ռազմական գործողություններ էին ծավալվել Անգլիայի և Ֆրանսիայի միջև. առևտրական ճանապարհները փակված էին կամ վտանգներով լի: Ամսագրի թղթակիցները դանդատվում էին օտարերկրյա շուկաներում հայ վաճառականների անհաջողություններից, ալրանքների գների անկումից և այլ դժվարություններից: Գաղթօջախի քաղաքական և տնտեսական անկայուն վիճակից դուրս գալու ելքը և հնդկահայության ապագայի, սեփական հայրենիքում բարվոք կյանք ստեղծելու հեռանկարների հետ կապված խնդիրներն էլ դառնում են առաջին լրագրողների քննարկման առարկան:

Ազդարարի հրապարակախոսները հիմնականում չորսն էին, որոնցից իր անունով հոգվածներն ստորագրել է միայն Թադեոս քահանա Սոգինյանցը: «Բարեկամ» և միաժամանակ «Ուրախակից» ծածկանունով ստորագրել է

տաղանդավոր Հրապարակախոս և բանաստեղծ Սեթ Սամյանը<sup>7</sup>: «Հայրդղի Հայ» և «Ազգակից» ծածկանունները դեռևս վերծանված չեն, թեև կարծիքներ են Հայտնվել, թե այդ ծածկանուններով ստորագրել է Շամվոնյանը, ինչպես և սովել է, թե «Հայրդղի Հայը» Բաղրամյանի, իսկ «Ազգակիցը» Շահամիրյանի կեղծանուններն են եղել:

Թ. Սոգինյանցը «Ազգարարի» երկրորդ Համարում շնորհավորելով Հայ լրագրության ծնունդը, «Ազգարարը» Համեմատում է աստվածաշնչյան ազգայնու Հեռ, որը Հայությանն ավետում էր ազգի բարոյական նորոգման լուրը: Նա միաժամանակ Հովսեփ Արղությանի կոնդակների տպավորության տակ մեծ ոգևորությամբ Հաղորդում է, որ Աստված քաղցրացրել է ուսաց կայսրուհու աչքը Հայերի վրա, որոնց Համար արևմուտքից լույս է ճառագել: Իր մեկ այլ նյութում նա շարունակելով «Ողբ Հայաստանեայց» պոեմի Հիմնական գաղափարը, Հայ ազգը Համեմատում է ցրված, անտերունջ Հոտի Հեռ և խնդրում Ամենաբարձյալից իր անօգնական ազգին ժողովել ի մի և նրան դուրս բերել ստեղծված նսեմ կացությունից:

«Ազգարարի» Հրապարակախոսներից բանաստեղծական իր տաղանդով և մամուլի գործերի լավատեղյակությամբ աչքի էր ընկնում Սեթ Սամյանը<sup>8</sup>: Ազգային կյանքի առաջընթացի շահագրգռությամբ գրված «Ուրախակից բարեկամի» չափածո 7 հոդվածները յուրատեսակ քարոզներ ու ծրագրեր էին, գրված ընթերցողներին մատչելի Հայերենով: Հայ լրագրության պատմության առաջին լրագրողը ամսագրի առաջին Համարում շնորհավորում է «Ազգարարի» բանական ծնունդը և բարեմաղթում, որ այն լինի երկարակյաց և արժանանա Հայերենիբում շարունակվելու բախտին: «Սեփական տան», Մայր Հայերենիբի ազատագրության գաղափարը շարունակաբար արտացոլվել է «Բարեկամի» նաև Հետագա հոդվածներում, որոնք ամենայն իրավամբ Համազգային ակնկալիքներին Համապատասխան Հնչեղություն ունեին: Իր հոդվածներում նա Հաստատում էր, որ իսկպես Հայ վաճառականները ձախողվում են Զինաստանում, Ֆիլիպիններում, Բատավիայում և այլուր:

<sup>7</sup> Թ. Սոգինյանցի և Ս. Սամյանի հրապարակախոսական ելույթները գրված են չափածո:

<sup>8</sup> Սեթ Սամյանը (1771-1848) ծագումով Լոր Ջուղայեցի էր: Նա կյանքի 60 տարիներն անց էր կացրել Մաղրատում, աչքի ընկնելով իր հասարակական եռանդուն գործունեությամբ: Նրա մեակված կապակցությամբ Սեսրոթ Թաղիադյանը 1848 թ. իր «Ազգատիրաբարտեան» հանդեսի Ա հատորի առաջին համարում տպագրում է Սամյանի մասին խոսականը և նրան նվիրված իր երկու բանաստեղծությունները: «Ի Սեթ Սամ» բանաստեղծության մեջ Թաղիադյանը նրան մեծարում է «Գրիչ հզոր և գրոց հայր, գիտուն, գիտնոց քարերար» խոսքերով:

Հայերի ունեցվածքը ջուրն է նետվում, մինչդեռ նրանց ավանդական հայրենիքում տնօրինում են օտար նվաճողները: «Ուրախակից բարեկամը» Հայերին խորհուրդ է տալիս վերցնել իրենց գանձերը և գնալ «Աշխարհն Հայաստան»: Հայրենիքում նրանք կկարողանան զարգացնել երկրի տնտեսությունը, արդյունագործությունը, դպրոցական գործը: Հայրենիքի ազատագրման հույսը «Ազգաբարի» հրապարակախոսը կապում է քրիստոնյա պետությունների Ռուսաստանի և Վրաստանի թագավորների հետ:

Քանի որ «Ուրախակից բարեկամի» համոզմունքով Հայրենիքի ազատագրություն գաղափարը ենթադրում էր ժողովրդի ազգային ինքնաճանաչություն որոշակի աստիճան, նա խորհուրդ է տալիս «Ազգաբարին» ընթերցողներին դաստիարակել ուսումնատենչության ոգով: Հայերի նախնիները սիրել են ուսումն ու գիտությունը, նրանք ունեցել են իրենց գիտնականներն ու փիլիսոփաները, որոնց օրինակին պետք է հետևեն ժամանակակիցները: Հայոց պարբերաթերթին հրապարակախոսը հանձնարարում է.

«Ազդ առնել պարտիս դու որդւոց հայոց,  
Ներկայ աւերումն եւ փառք անցելոց.  
Եւ միշտ յորդորել անցայ արթընույ,  
Զվարս անխնեաց յանձին զգնույ»:

(«Ազդ.», 1794, № 3, էջ 116)

Հայերին ազգային և քաղաքական ինքնաճանաչության հասցնելու ուրույն ճանապարհ է նշում «Հայորդի Հայը»: Նա քննադատում է Հայերի կենցաղի մեջ մտած այն դատապարտելի սովորույթը, երբ նրանք լուկ խոսում են իրենց տառապանքների, ազգի դժբախտության մասին, հառաչում են, ողբում և աղոթում, որ Աստված փրկի իրենց: Սակայն մի՞թե աղոթքով կարելի է լուծել մի ամբողջ ազգի ճակատագրի հարցը: Մի քանի օրինակով նա հաստատում է այն ճշմարտությունը, թե ազգային հարցերը լուծվում են միայն վճռական գործողություններով:

«Հայորդի Հայի» հարցադրումը միակողմանի գտնելով, նրա հետ բանավեճի է մտնում «Ազգակից» ծածկանունը կրող հրապարակախոսը: Նա գտնում է, որ Հայերն իրենց ամբողջ ուշադրությունը պետք է կենտրոնացնեն ուսման վրա: Հնդկաստանի Հայերը վաստակում են այնքան, որ նրանց ունեցվածքի մեկ քառորդով կարելի կլինի մի ազգ բարձրացնել... Ի՞նչն է, ուրմն, նրանց պակասությունը, եթե ոչ ուսումը: Իր ընդդիմախոսի զեմ պա-

տասխան հողվածով կրկին հանդես է գալիս «Հայորդի հայր», որը պաշտպանելով իր գրույթները, միաժամանակ նշում է, որ իրենց կարծիքները հիմնականում նույն նպատակն են հետապնդում, և որ ինքը ձգտել է ցույց տալ, թե «ուսումն աշխարհի վրա է, և ոչ երկնքում, որտեղ որոնում են այն անհիմն աղոթքների միջոցով»:

Հնդկահայ լուսավորիչները իրենց հողվածներում ազգի առաջադիմութեան հարցում մեծ նշանակություն էին տալիս նաև ժամանակի քաղաքակրթության նվաճումների յուրացմանը: Այս միտքն էր խրախուսում Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Արղությանը, Շմավոնյանին ուղղված մի նամակում: Նա գրում էր, թե հայերը պետք է կարողանան ուսումնասիրել եվրոպական ազգերի լեզուն, գրականությունն ու գիտությունը, փորձեն ընդօրինակել նրանց, որով կհազեցվի ազգի ծարավը և կկատարվեն հայերի բաղձանքները: «Թերևս այդ միջոցով էլ փրկության առիթ կամ օգնություն լինի մեր քաղցր հայրենիքին», - ավելացնում է նա:

«Ազգնորարի» խմբագիրը ոչ միայն իր հողվածներով լրացնում և հաստատում էր ամսագրի հրատարակատեսների հարցադրումները, այլև մեծ սիրով առաջնորդվում էր Հովսեփ Արղությանի խորհուրդներով: Զարգացնելով լուսավորական իր ծրագիրը, նա ընթերցողներին հաղորդում էր ջանալ գիտություն և իմաստություն ձեռք բերել և չընկնել հարստության հետեից: Հարուստները ոչինչ են իմաստունների համեմատությամբ, գրում է Շմավոնյանը, էջ՝ որ Արիստոտելի և Պլատոնի ժամանակ նույնպես հարուստներ են եղել, բայց ովքե՞ր են եղել նրանք և ո՞րն է նրանց կատարած գործը: Նրանց անունները ջնջվել են, այնինչ պատմությունը անմահների գրքում է գրել Պլատոնի և Արիստոտելի անունները:

Երկու տարի անց, իր տպագրած գրքերից մեկի վերջաբանում նա Բաղրամյանի ոգով շարունակում է խորհրդածել հայերի լուսավորության հարցի շուրջ: Հայ մանուկները պետք է ճանաչեն իրենց հայրենի երկիրը, սիրեն այն, սիրեն մայրենի լեզուն: «Աղաչեմ զձեզ եղբայրք, - գրում է Շմավոնյանը, - անկեղծ սիրով սիրեցեք յազգ և յաշխարհն ձեր»: Միաբան եղեք, կոչ է անում նա, ամբողջ գորությունը հուսացեք ձեր ազգը և «մանուշակաբոյս երկիրն ձեր»: Հիշեցեք շարունակ, որ «զպտուղն աշխարհին մերոյ կթեն ձե-

ուամբ և աշխատանօք մերոյ և վայելեն բռնաւորքն մեր»<sup>9</sup>: Իրրև այս թշվառութիւնը դարմանելու միջոց նա առաջարկում է սիրել ընթերցանութիւնը հայկական տառով ու բառով, անաղարտ պահել մայրենի լեզուն ու խորանալ ուսման ու գիտութեան մեջ:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «Ազդարարի» գրական բաժինը: Ամսագրում տպագրված առակներն իրենց ակունքներով կապվում են միջնադարի հայ ձեռագրերի և միջնադարում լայն տարածում գտած թափառող սյուսթենների հետ: Այդ առակներում ջատագովվում են ընկերասիրութեան և ճշմարտասիրութեան գաղափարները, քննադատվում են պալատական բարքերը: Տպագրվել է նաև մի քանի մանրապատում, որոնց մեջ նշավակված են ծուլութիւնը, թագավորների ամբարտապանութիւնն ու դատանութիւնը և այլն:

«Ազդարարի» գրական բաժնում տպագրվել են Թադեոս Սոգինյանցի, Սամուէլ քահանա Ղայթմազյանցի բանաստեղծութիւնները, Պարաբազցի Պետրոս քահանայի «Վասն զղջացեալ մարդոյ» տաղը, ինչպես և մի քանի բանաստեղծութիւններ, որոնց հեղինակները կամ չեն ստորագրել, կամ հանդես են եկել ծածկանուններով («Սատանի Չարխ», «Կաղ անուն դիվական»):

Ամսագրի գրական բաժնի ամենամեծ նվաճումն է նորջուղայեցի վաճառական, Մադրասի հայ համայնքի մտավորական Հակոբ Սիմեոնյան Այուբյանցի «Հեյդարալի խանի պատմութիւնը» վեպի տպագրութիւնը<sup>10</sup>: Հեղինակն այդ վեպում հանդամանորեն ներկայացրել է Սրբնդաթան քաղաքի նաբոբ և սպարապետ Հեյդարալի խանի սիրալից կյանքի պատմութիւնը (1717-1782), հիմնականում նրա վարած ազատագրական կռիվները օտար նվաճողների անգլիացիների դեմ: Գրքի առաջաբանում Այուբյանցը, ակնածանքով հիշատակելով հայ պատմիչների վաստակը, հայտնում է, որ ինքը ևս վճռել է գրել հօգուտ հայ նորաբողոք երիտասարդների, որպեսզի նրանք իմանան, թե ինչպես պետք է համեստաբար և իմաստութեամբ ապրեն հնդկական տերութեան սահմաններում և օրինակ ծառայեն իրենց հաջորդների ու ապագայի համար:

<sup>9</sup> «Գիրք անուանեալ դեկաւար մանկանց», Մադրաս, 1797 թ. . «Վերջաբանութիւն գրորյա առ սիրելի մանկունս հայոց», էջ 285:

<sup>10</sup> «Գիրք զքօսանաց եւ թուղթք քաղցրալուրք, յորս ընթեռնանին վարք, արարմունք և բարքն ճարտարագունեղ բանաստեղծի, Նաւաբ Դիլորալի խանի, և մեծ Սպարապետի Գնդկաց Սրնգաբան քաղաքի» (1795-1796 թթ. ., № 8-18):



«Հեյդարալի խանի պատմությունը» վեպը, որքան էլ ժանրային և լեզվական առումով անկատար, աչքի է ընկնում իր ճանաչողական արժեքով և Հստակ պատկերացում է տալիս Հնդկաստանի ժողովուրդների կյանքի, պատերազմներից ու սովից ավերվող ֆեոդալական այդ պետության առօրյայի, երկրում օտար նվաճողների ունեցած իշխանության մասին:

Ամսադրի Հրատարակության կարճատև ժամանակամիջոցում Շմավոնյանը կարողացել է տպագրել նաև թարգմանական մի քանի գործ: Մանրապատումներից բացի, որոնց մի մասը եվրոպական ծագում ունի, «Ազդարարի» խմբագիրը տպագրել է անգլիացի մանկագիր Թոմաս Դեյի (1748-1789թթ.) «Փոքրիկ Ջեկի պատմությունը» վիպակը արկածային ժանրին պատկանող մի գեղեցիկ պատմություն, որը մանուկ սերնդին պետք է ուսուցաներ սիրել աշխատանքը, ապրել առաքինի վարքով և ձգտել բարի գործերի: Քանի որ Թոմաս Դեյը կրում էր ժան ժակ Ռուսոյի մանկավարժական-լուսավորական Հայացքների ազդեցությունը և այդ Հայացքների ժողովրդականացնողն էր Անգլիայում, այդ հիմք է տվել գրականագետ Մարգո Ասլանյանին Հանգելու այն եզրակացություն, որ «Ջեկի պատմության» տպագրությամբ «Ազդարարը» Հայության մեջ ժան ժակ Ռուսոյի մանկավարժական Հայացքների առաջին տարածողը եղավ»<sup>11</sup>:

Մ. Ասլանյանը ճշտել է թարգմանական ևս երկու գործերի Հեղինակների ինքնությունը: Դրանք են Ադիսոնի «Միրզայի տեսիլքը» և Ստիլի «Սանտոն Բարսիսայի» պատմությունը:

«Ազդարարի» արձակը ինքնուրույն թե թարգմանական, աչքի է ընկնում բարոյագաստիարակչական նպատակաուղղվածությամբ, խտացնում է ժողովրդական մտածողությանը բնորոշ իմաստնության և լավատեսության Հատկանիշները: Այստեղ, անկասկած, մեծ է Շմավոնյանի վաստակը: Անկախ այն բանից, որ նա ինքն էլ Հեղինակ էր բաղմամբիվ թարգմանական գործերի և գրական մշակման ենթարկված նյութերի, որոնց տակ սովորություն չունեն ստորագրել, «Ազդարարի» խմբագիրը մեծ ուշադրություն էր դարձնում, որ ընտրված նյութերը Համապատասխանեին ամսագրի ընդհանուր ոգուն: Այդ է Հաստատում նաև նրա մի խոստովանությունը. անդրադառնալով արտասահմանյան պարբերականների գրական նյութերին՝ նա գրում է, թե ինքը չէր

<sup>11</sup> Տե՛ս Մ. Ասլանյան, Ռուսոյի անգլիացի հետևորդ «Ազդարարի» էջերում, «Պատմաբանասիրական հանդես», 1982, N 3, էջ 102:

կարող անքննադատ կերպով օգտվել դրանցից, որովհետև այդ գործերն «ավելի առասպելաբանություններ, քան բարոյական զրույցներ են»:

Հարություն Ծմավոնյանի վաստակը, սակայն, չի սպառվում գեղարվեստական գործերի կամ Հրապարակախոսական հոգվածների տպագրությամբ:

Իբրև ճշմարիտ բանասեր, որը հիանալի գիտեր Հայ գրչության դարավոր ժառանգության առանձնահատկություններն ու արժեքը, նա տպագրել և սերունդների սեփականությունն է դարձրել «Պատմութիւն պարսից» աշխատությունը: Զեռագրի հեղինակն էր Նոր Զուղայի Ամենափրկչյան վանքի միաբան Խաչատուր աբեղա Զուղայեցին, որը նորջուղայեցի Հարություն Սահակյանի Հանձնարարությամբ գրել է Պարսկաստանի ընդարձակ պատմությունը: 1790-ական թթ. սկզբներին պատմագիրը իբրև նվիրակ ուղևորվում է Հնդկաստան, որտեղ նպատակ ուներ տպագրել տալ իր գիրքը, բայց դեռ չհասած նպատակատեղին, վախճանվում է Բասրայում: Նրա ձեռագիրը հասցվում է Մադրաս: Մեծ ծախսերի պատճառով հնարավորություն չունենալով «Պատմութիւնը» տպագրել առանձին գրքով Ծմավոնյանը «Ազգարարի» 12 համարներում (№ 5-16) հաջորդաբար տպագրում և ավարտի է հասցնում այն: Խորապես հասկանալով Խաչատուր Զուղայեցու գործի արժեքը Ծմավոնյանն այդ գործի տպագրությունից հետո ձեռագիրն ուղարկում է Էջմիածին, որտեղ և 1905 թվականին «Պատմութիւն պարսից» գիրքը տպագրվում է առաջին անգամ:

«Ազգարարի» էջերում հաղորդագրություններ են տպագրվել եվրոպական երկրներում տեղի ունեցող քաղաքական անցքերի, Կովկասի իրադարձությունների և, մասնավորապես, Աղա Մահմադ խանի արշավանքների մասին: Մեծապես լուսաբանվել է մադրասահայության առօրյան (ժողովներ, վիճակահանություններ, դատական նիստեր, առևտուր, առանձին տոնախմբություններ և այլն): Այդուհանդերձ, ամսագրում ծանրակշիռ տեղ էին զբաղում հրապարակախոսական և գիտամասնական հոգվածները: Դրանց միջոցով Հ. Ծմավոնյանը ձգտում էր օժանդակել ժողովրդի ընդհանուր լուսավորությանը, նրա հետաքրքրասիրությունների շրջանակի լայնացմանը: Այդ նպատակով է, որ նա, ի թիվս այլ հոգվածների, արտատպել է Մխիթարյան միաբանության անդամ Հայր Էնտաղյանի գիտահանրամատչելի մի գրքույկը՝ նվիրված օղապարիկի առաջին թուիչքների պատմությանը. խմբագիրը վերահիշյալ հոգվածին կցել է մի գեղեցիկ գծանկար, որը պատկերում էր

օղապարիկի 1787 թ. Թոբիչքը Համապատասխան քարտեզով: Շմափոնյանը Հիշեցնում է, որ այդ աշխատանքը, որը ոչնչով էի դիջում եվրոպական թերթերի նմանօրինակ գործերին, կատարել է Հաշտարխանցի նկարիչ և փորագրող Կոստանդ Թաթյանը (1796, № 18): Առհասարակ իր Հրատարակած գրեթե բոլոր գրքերի Հիշատակարաններում Շմափոնյանը բարի խոսքով է հիշում իր գործակիցներին տպարանի աշխատակիցներին: Այդ կերպ ահա մեր սերունդներին են հասել XVIII դարի վերջին քառորդի Հայ լուսավորական շարժման գործիչներից շատերի անունները: Դրանցից էր առաջին պոլիգրաֆիստ, «գլխատակակիցը յամայն գործոց տպարանի» Խաչիկ Մատուրյան Զարիֆյանը: Նախ Կալիվաթայից թղթակցում, ապա Մադրաս է փոխադրվում Մհրտում Սիմեոնյան Մմրիկյանցը, որը հետագայում դառնում է Շմափոնյանի տպարանի վերակացուն և Հրատարակում է անգլերեն-հայերեն «Փոքրիկ բառագիրքը»: Հայ առաջին պոլիգրաֆիստներից էին նաև Բաղդասար Հաֆթյանը, Թորոս Թանալյանը, Թիֆլիսեցի Գևորգ Աղաջանյանը և շատ-շատերը: Նրանք Հիմնականում զբաղվում էին առևտրով և, ինչպես Սոգինյանցը և Այուբյանցը, ծագումով նորջուղայեցիներ էին, որտեղից բերել էին ս. Ամենափրկչյան վանքի լուսավորական ավանդույթները: Աշխատանքը տպարանում (որ կատարում էին գրեթե ձրի) նրանց Համար գաղափարական գործ էր, Համասարագոր ազգի փրկության Համար պայքարելուն:

«Ազգարարը», որ խմբագրի ղեկուկ բնութագրությամբ «նորոգ ոգուածք» էր և իր դարում «ամենեկին նոր» երևույթ, խմբագրական Հմուտ աշխատանքի շնորհիվ դարձել է իր ժամանակի Հայ Հասարակական կյանքի տարեգրությունը: Ամսագիրը Համակողմանիորեն ներկայացնում է գաղութահայության կյանքը, նրա մտահոգություններն ու առօրյան, արտահայտում նրա ազատատենչ ոգու տվյալանքներն ու Հույսերը կապված սեփական Հայրենիքի ազատագրության հետ: Այն ոչ միայն ճանաչողական հսկայական նշանակություն ունի, այլև իրավամբ նշանավորում է Հայ լրագրության փառավոր ծնունդը, Հայ ժողովրդի քաղաքակրթական մի նոր, բարձր աստիճանի լինելության իրողությունը:

### «ՇՏԵՍԱՐԱՆ» (1821-1823)

1821 թ. Կալիվաթայում Հրատարակվեցին «Շտեմբան» կոչված տետրակները: Նոր պարբերականի խմբագիրն էր կալիվաթահայերի շրջանում Հայտնի գլխի Մարտիրոս Մհրտչյանը: Նրա մասին կենսագրական տեղեկություն-

ները սուղ են: Դատելով տետրակների նյութերից նա Հնդկաստան է եկել Շիրազից, տիրապետել է բացի Հայերենից նաև անգլերենին և պարսկերենին, ջուղաճայ բարբառով կատակերգություն է գրել թատերասերների համար:

Մկրտչյանի «Շտեմարանը» աշխարհաբար հրատարակված առաջին պարբերականներից է: Շիրազահայ խոսակցական լեզուն խմբագրին միջոց է տալիս քննարկելու առօրյա հրատապ թեմաներ՝ ընթերցողին հասկանալի մտերմիկ ոճով, իսկ պարբերականի յուրաքանչյուր տետրակը բացվում է «Հետևումն հորդորացն» ընդհանուր վերնագրով գրաբարով գրված բարոյախոսական խրատներով: «Շտեմարանի» հիմնական հեղինակը խմբագիրն է, որ հանդես է գալիս հորվածներով, բանաստեղծություններով, առակներով, խրատներով և այլ նյութերով, տպագրում է նաև աշուղական երգեր, արևելյան պոետների ստեղծագործություններից հատվածներ, առակներ և ասուլթներ, որոնք բարություն սերմանելու և մարդկային արատները հալածելու խնդիր ունենին: Տետրակներում նա բանակռիվ է մղում կալկաթահայ հոգևորական տեր Հովսեփի և նրա կողմնակիցների դեմ: Այդ նյութերից երևում է, որ հայ համայնքը երկփեղկված էր: Մկրտչյանը հանդես է գալիս ազատ քաղաքացու իրավունքների պաշտպանությունամբ, որոնք ոտնահարված է գտնում «հակառակորդ» պահպանողական բանակի կողմից: Ուշագրավ է, որ բանավեճի ընթացքում, իր հակառակորդներին ընկճելու դիտավորությունամբ, Մկրտչյանը դիմում է Եեքսպիրի իր բնութագրամբ մարդկային բնության մեծ դատավորի ասուլթներին:

Իրեն հայտարարելով ճշմարտության ջատագով, Մկրտչյանը շուտով արժանանում է ընթերցողների համակրանքին: Այդ մասին են վկայում հանուն «Հառաջագիմություն և բարություն» սկսած նրա պայքարը ողջունող նամակները, որոնք մտահոգություն են պարունակում համայնքի կյանքը քայքայող «աշխարհական կովի» առթիվ: Ի վերջո հաղթում է միասնության ձգտումը, և բանակռիվը, կամաց-կամաց մարելով, ավարտվում է հաշտությունամբ:

«Շտեմարանի» քաղաքական դիմագիծը ցայտուն ու միանշանակ չէ: Նրա էջերում թեև նկատվում են բուրժուական զարթոնքի բողբոջներ, ազգային-ազատագրական գաղափարախոսությունյան դրսևորումներ, սակայն կրոնաավատական ըմբռնումները ոչ միայն հաղթահարված չեն, այլև, ի վերջո, դերիշխում են:

«Շանձարանի» գաղափարխոսութունը որոշակիանում է Հատկապես արևելյան և արևմտյան երկրների Հարաբերությունների վերաբերյալ նյութերում: Դրանց մեջ թերևս ամենից խոսունը Հույն ժողովրդի ապստամբությանը նվիրված նյութերն են: Խմբագիրը ներքո է ձեռնում Հույն ապստամբներին, որովհետև Օսմանյան պետության դեմ ուղղված ազատագրական պայքարի հետ է կապում նաև Հարազատ ժողովրդի փրկության Հույսը: Հատուկ դիտավորությամբ պատմում է Հույն ժողովրդի Հաղթությունների մասին Հայ ընթերցողներին խրախուսելու Համար, դրվատում է Հույներին օգնելու Ռուսաստանի պատրաստակամությունը և, ընդհակառակը, պարսավում Անգլիայի բռնած դիրքը: Ուշագրավ է, որ անգլիական գաղութում ապրող Հայ գործիչը Հանդես է գալիս ռուսական կողմնորոշման պաշտպանի դերում:

Հայաստանի ազատագրության գաղափարը, սակայն, Մկրտչյանն անց է կացնում իր քաղաքական նախասիրությունների ոսպնյակով մերժելով սահմանադրական պառլամենտարիզմի ծրագրերը, որոնք պաշտպանում էին ազատագրական շարժման Հնդկահայ գաղափարխոսները Շահամիրյանը, Բաղրամյանը և Շմավոնյանը: Նա դեմ է Հայաստանի ազատությանը, բայց անիմաստ ու անտեղի է Համարում պառլամենտարիզմի «բողոքազ», այսինքն ուտոպիական ծրագրերով ոգևորվելը: Նկարագրելով Հայերի անլուր տառապանքները օսմանյան լծի տակ Մկրտչյանն արթնանալու և Համախմբվելու կոչերը էի ուղեկցում պայքարի գործնական ծրագրերի առաջադրմամբ: Դրվատում է Հույների միասնությունը, Հավատարմությունը նախնի ծեսերին ու սովորույթներին և, մանավանդ, Հայրենի Հողը օտար տիրակալներին չզիջելու անկոտրում կամքը, կյանքը Հայրենիքի ազատությանը նվիրաբերելու պատրաստակամությունը, մի խոսքով այն Հատկությունները, որոնք ամեն մի ազգի գոյության և Հարատևության երաշխիքն է դիտում: Ուզում է այդպիսին տեսնել նաև Հայերին փայփայելով Հայոց թագավորությունը վերականգնելու Հույսը: Այս գործում վճռական դերը վերապահում է Հոգևորականությանը: «Հայրապետն նմանի թագավորի», - գրում է Մկրտչյանը իր Հողվածներից մեկում (էջ 56). պետականությունը կորցրած ժողովրդի Համար Հոգևորականությունը ոչ միայն բարոյական ու Հոգևոր, այլև քաղաքական իշխանության կրողն է: Համայնքի ուժը տեսնում է կրոնական միասնության մեջ և իր վերջին տետրակներում Հաշտության ձևաք մեկնում Հակառակորդներին: Մկրտչյանը Հատվածներ է Հրապարակում ճա-

նապարհորդ-վաճառական Թոմաս Խոջամալյանի «Պատմութիւննից», որտեղ իր կարծիքով ավելի ճիշտ է ներկայացված հնդկահայերի կյանքը, հակառակ իրօրյա անգլիական հրատարակութիւններին: Հնդկահայերի հնօրյա փառքը, հայազգի Գորգին խանի հերոսական գործերը «Շտեմարանի» հասարակական իդեալն են մատնանշում: Ազգի համախմբումը, լուսավորութիւն միջոցով տնտեսական և քաղաքական առաջադիմութիւն հասնելը՝ հնօրյա ավանդներին հավատարմութիւնը հանդերձ, այս պարբերականի դիմագծի բաղադրիչներն են:

### «ԱԶԳԱՍԵՐ» (1845-1848) ԵՎ «ԱԶԳԱՍԵՐ ԱՐԱՐԱՏՅԱՆ» (1848-1852)

Հնդկահայ պարբերական մամուլի պատմութիւն մեջ Մեսրոպ Թաղիադյանի «Ազգասեր», «Ազգասեր Արարատյան» պարբերականները եզակի տեղ են գրավում: Նրանք ոչ միայն ժառանգեցին «Ազդարարի» ավանդները, այլև մեծապես զարգացրին դրանք, վերհանելով այն խնդիրները, որոնք առաջադրում էր հնդկահայ հասարակական-քաղաքական կյանքը XIX դարի կեսերին: Բուրժուական լուսավորութիւն և ազգային-ազատագրութիւն գաղափարախոսութիւնը կազմում է այդ պարբերականների հիմնական բովանդակութիւնը:

Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է Երևանում 1803 թ., սովորել է էջմիածնի վանական դպրոցում: Կրթութիւնը նա լրացնում է կյանքի դպրոցով, շրջագայելով Հայաստանի տարբեր շրջանները և մոտիկից ճանաչելով ժողովրդի կյանքը գրի է առնում տեսած ու լսած պատմութիւնները, ժողովրդական երգեր, զրուցյներ, առակներ և ասացվածքներ, ծեսերի ու սովորութիւնների նկարագրութիւններ: Հետագայում իր սպավորութիւններն ամփոփում է «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատութիւն մեջ (1847):

Շուտով Թաղիադյանի կյանքի ուղին անսպասելիորեն փոխվում է. 1823 թ. նա մեկնում է Իրան, իսկ 1824 թ. այնտեղից՝ Հնդկաստան: Սկզբում Հաստատվում է Դաքա քաղաքում, հետո դառնում է Հայոց լեզվի ուսուցիչ Կալիաթայի մարդասիրական ճեմարանում: Բարձրագույն կրթութիւն է ստանում անգլիական եպիսկոպոսական ճեմարանում հմտանալով ինչպես հասարակական գիտութիւնների, այնպես էլ լեզուների մեջ: Այստեղ էլ նա լուր է առնում Երևանի ազատագրման մասին: Հայտնի է 1828 թ. գրած նրա

նամակը երեանցիներին, որտեղ նա ողջունում է Արեւելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից և միացումը Ռուսաստանին: Նամակը ամփոփում է Հայրենիք վերադառնալու և ազգին օգտակար լինելու ցանկությամբ: Սակայն երեանից պատասխան չստանալով նա ստիպված է լինում մնալ Կալիֆայում: Այստեղ Հրատարակում է Հայկական դիցաբանությանը նվիրված գիրք, իբրև «Նախաշափղ» ձեռնարկ դպրոցական ուսուցման համար: Այս աշխատությունը նախանշում է ապագա Հրապարակախոսի մտահայեցության հիմնական գիծը լուսավորություն և աշխարհականացում, Հին ավանդները պահպանելով հանդերձ: Նա մեկնում է Նոր Զուղա, Հիմնում դպրոց, սակայն Հալածվելով հեռանում է և 1831-ին ուղևորվում է Զմիածին: Այստեղ էլ ընդհարվում է տեղի կղերականության հետ: Թաղիադյանն իր լուսավորական գործունեության համար տեղ չի գտնում: Նորից Զուղա, Թավրիզ, էջմիածին և ապա Կ. Պոլիս, որտեղ ձերբակալվում է, սակայն կարողանում է ազատվել և վերադառնալ Հնդկաստան (1839): Կապվելով Հնդկահայ ազատախոս գործիչների, հատկապես Մանուկ Զորաբյանի հետ, նա ստատարում է ընկերություն ստեղծելու նրանց ջանքերը: Այդ ջանքերը պսակվում են «Արարատյան ընկերության» ստեղծումով (1845): Իր առջև մշակութային գործունեության ծրագիր դրած ընկերությունը շուտով վերանում է Հնդկահայերի Հասարակական-քաղաքական և ազգային-ազատագրական ձգտումներին աջակցող ու գլխավորող կազմակերպություն:

Երազանքը Արարատյան անկախ Հայրենիքի մասին Հնդկահայ Հայրենասերների սեկուուն գաղափարն էր, իսկ ազդ գաղափարին ծառայելը Թաղիադյանի համար արդեն վաղուց կյանքի նպատակ էր: Նրան լավագույն առիթ է ներկայանում իրադործելու իր ծրագրերն ու նպատակները, երբ ընկերությունը ստեղծում է իր տպարանը: Տպարանի ստեղծումը բացում է ապագիր օրգանի Հրատարակության Հնարավորություն:

1845 թ. օգոստոսի 16-ին Թաղիադյանի խմբագրությունում լույս է տեսնում «Ազգասեր» անունով փոքրիկ քառածալ թերթը, որը փաստորեն «Արարատյան ընկերության» պաշտոնաթերթն էր: Այն խոստանում էր «դուրահասկանալի ոճով» և «ազգասիրական ոգով» արծարծել Հնդկահայերին չուզող խնդիրները և օժանդակել ազգային «միաբանությունը» (1845, N 1, էջ 1-2):

Թերթի նշանաբանն էր «Ուսումն առնէ զմարդ երջանիկ»:

Տիրող սահմանները հռչակում էր «Ազգասերը» որպես «Օրագիր Արարատյան ընկերութեան քաղաքական, տնտեսական, բնական և բարոյական գիտելյաց»։ Թերթի վերնագրի տակ Արարատի, Նոյյան տապանի և լեռան ստորոտին դրված գրքի զծանկարը խորհրդանշում էր պարբերականի լուսավորական ուղղութիւնը կրօնահայրենասիրական մտայնութեամբ հանդերձ։

1848 թ. հունիսին Կալիպթայի «Արարատյան ընկերութիւնը» լուծարվում է, և Թաղիադեյանը ստիպված է լինում ընդհատել իր պարբերականի հրատարակութիւնը։ Հովանավորներն ու զինակիցները համախմբվելով նրան նվիրում են մի տպարան և նյութապես աջակցելով, հնարավորութիւն են տալիս վերականգնել ընդհատված հրատարակութիւնը։ Այս անգամ Թաղիադեյանն ընտրում է նոր վերնագիր։ «Ազգասերը» դառնում է «Ազգասեր Արարատյան» (1848 թ. սեպտեմբերի 16-ից) և հրատարակվում որպես հանրապատում տասնօրագիր։ Նոր էր նաև նշանաբանը՝ «Մաքուր խղճմտանք առնէ գմարդ երջանիկ»։ 1849 թ. հունվարին Թաղիադեյանը վերնագրի նախկին նկարի շուրջը ավելացնում է փողեր, նիզակներ, տեղեր և դրոշակներ։ Նպատակադրումը այս է՝ նախնայաց փառքով վառել երիտասարդների հայրենասիրութիւնը. «Վառեցար՝ էք պատանիք, և եռացի արիւն ընդ երակս ձեր. զի այս ամենայն ձեր է, եթէ միայն ունեւն յօժարիցիք» (1849, հ. Ա, № 12, էջ 89)։ Հատկանշական է սակայն, որ 1849 թ. սեպտեմբերի 15-ից պարբերականը սկսում է հրատարակվել առանց վերոհիշյալ նկարների, մնում են նորից Արարատն ու Նոյյան տապանը, և ընտրվում է նոր նշանաբան. «Աստուած և աշխատութիւն»։ Սրանք պատահական իրողութիւններ չեն։ Թաղիադեյանին վիճակված էր ծանր պայքար կղերական իշխանութեան դեմ, որի կենտրոնը Նոր Զուղայի առաջնորդարանն էր։ Թաղիադեյանը պաշտպանում է դաժան առաջնորդի դեմ սկսված ժողովրդական շարժումը և արժանանում մոլեռանդ կղերի հալածանքներին։ Պարբերականի գոյութիւնը պահպանելու նպատակով նա ստիպված էր նշանաբանը փոխել, սակայն անփոփոխ է թողնում պարբերականի ոգին։

«Ազգասերը» սկզբում ուներ 60 բաժանորդ, սակայն դրանց թիվը զնալով նվազում է, հասնելով ընդամենը երկու տասնյակի։ Նվազում էր նաև թերթին աշխատակցողների ու թղթակցողների թիվը, և վերջին երեք տարիներին հրատարակված համարներում ամփոփված բոլոր նյութերը (բացի պատահական թղթակցութիւններից և նամակներից) կազմում էր ինքը՝ Թաղիադեյանը։



Նա հրապարակախոսական մեծ տաղանդ է դրսևորում և հետևողականորեն իրականացնում լուսավորական դադափարախոսությունն միտված ազգային ինքնաճանաչության, քաղաքիական ինքնագիտակցության զարգացմանը:

Սկզբում Թաղիադյանը մեծ հույսեր էր կապում հնդկահայ «լուսավորյալ» մեծատունների հետ նրանց աջակցությամբ առաջ տանելու ազգի կրթական-լուսավորական հաստատությունների զարգացման գործը: Սակայն շուտով հրասթափվելով ստիպված է լինում հույսը դնել «ընդհանրության վրա»: Սոցիալական տարրեր ուժերի «միաբանություն» և «խաղաղ» զարգացման կոչը դառնում է թերթի նշանաբանը ցուցադրելով խմբագրի լուսավորական-հումանիտարական հայեցողությունը: Ռոմանտիկ ծրագրերի հաջորդափոխումը ակնկալիքների իրականացում էր բերում: Մեծատունները նրան սատար չեն լինում, և Թաղիադյանը ստիպված է լինում քանդել իր նախկին դադափարական հանգրվանը: Նա մնում է միայնակ:

1852 թ. տեղափոխվում է Չիչրա, սակայն այստեղ էլ կարողանում երկար շարունակել իր սիրելի պարբերականի հրատարակությունը, որը շուտով դադարում է: Անհուսություն ու մոռացման դատապարտված հրապարակախոսը որոշում է թողնել Հնդկաստանը և վերադառնալ Հայրենիք: Սակայն ճանապարհահին, Պարսկաստանի Երրազ քաղաքում 1858 թ. կնքում է իր մահկանացուն: «Ազգասերը» և «Ազգասեր Արարատյանը» մնում են մեր ժողովրդի պատմության մեջ իրրև լուսավորիչ-հրապարակախոսի գործունեության վառ հուշարձան:

Իր պարբերականները Թաղիադյանը դարձնում է հարուստ և բազմազան, սպաղորում է հրապարակախոսական ակնարկներ, պատմական և աշխարհագրական տեսություններ, բանասիրական ուսումնասիրություններ, տեղեկատու լուրեր, բարոյախոսական առակներ, կրոնական և հայրենասիրական բանաստեղծություններ, իմաստալից ասույթներ:

Թաղիադյանի սեևուն դադափարը անկախ Արարատյան Հայաստանն էր, Ռուսաստանի շնորհիվ ազատագրված Հայ բնաշխարհը սփռված Արարատի շուրջ: Նա հույս ուներ լուսավորության միջոցով ստեղծել նոր կրթված սերունդ, որը կդառնար հայրենի մշակույթի զարգացմանը և նրա ազատությանը օժանդակող կարևոր ուժ: Լուսավորությունը կրբերբ ազգային ինքնաճանաչում և հոգևոր վերելք: «Ծաղկեսցի թող խաղաղութիւն յաշխարհի մերում, - գրում է նա, - և յայնժամ Ազգն ինքնին բարգավաճեալ ուն-

ճանայ ամեներկեան ծաղկօք ուսմանց և առաքինութեանց միանգամայն որ է ցանկութիւն եռանդազին սրտի մերոյ» (1846, Տ. Բ, № 25, էջ 34): Լուսավորութեան վերջնական արգասիքը մարդկանց համար պետք է լինի ազատութիւնը. «Եւ թէ ազատ օրէնք և ազատ կեանք չիցեն նոցա, այդպիսիք ուրեմն համարին ծնեալք ի բանդ և մեռանելիք ի բանդի» (1847, Տ. Դ, № 92, էջ 153):

Գաղութահայութեան և հայրենիքի միասնական զարթոնքը խթանելու մեջ էր տեսնում Թաղիադյանը իր պարբերականի կարևոր կոչումներից մեկը և ջանք չէր խնայում այն դարձնելու յուրատեսակ գաղափարական կամուրջ: Նա յուրաքանչյուր հայի երջանկութիւն պայմանավորում էր հայրենիքի երջանկութեամբ: Եվ մեկ անգամ չէ, որ կրկնում է, թե Լնդկաստանում հայր մատական ծառ չէ, արմատը միայն հայրենիքն է: Թաղիադյանը հիացմունքով է արտատպում պոլսահայ մամուլի էջերում ցրված լուրերը, խանդաղատանքով պատմում Պոլսի և Չմյուռնիայի կրթական հաստատութիւնների մասին, ակնածանքով նշում Մխիթարյանների գործունեութիւնը: Նա արտատպում է Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» հայրենասիրական բանաստեղծութիւնը, կապ է հաստատում Չմյուռնիայի «Արշալույս Արարտայան» թերթի խմբագիր Ղուկաս Պալազարյանի հետ, համակրանքով արտահայտվում Մ. Աղաթոնի «Հայաստան» թերթի նոր ուղղութեան մասին:

Լնդկահայ թերթի խմբագիրն իր ընթերցողներին առանձին ուշադրութեամբ է ներկայացնում նորութիւնները հայրենի վայրերից քաղված «Կովկաս» պարբերականի էջերից, ներսիսյան դպրոցի գործունեութիւնը, ուսսահայ իրականութեան մեջ սկսված լուսավորական շարժումը: Սրանով նա ճիգ է անում արթնացնել Լնդկահայերի ազգային կորովը, նրանց հետ պահել ուժացման, անգլիականացման վտանգից:

Ազգակիցների դաստիարակութեան գործում Թաղիադյանը մեծ տեղ էր տալիս լեզվին, նրանով պայմանավորում ազգի գոյութիւնը. «Ազգասերի» էջերում նա գրում է. «Հայոց լեզուն հարկավոր աս վասն ազգի պահպանութեան... իրաւապէս և ճշմարտապէս մին ազգի ազգութեան նշանն իւր լեզուն է» (1845, Տ. Ա, № 14, էջ 110):

Լեզվի պահպանումն ու միասնութիւնը զիտվում է ազգային ինքնավարութեան պայման, իսկ այդ լեզվով կերպավորված ազգային ավանդապատմանները, անցյալի հերոսական զրվագները դառնում են ազգային ինքնաճանաչման, ազգապահպանման միջոցներ: Թաղիադյանի հայացքը միտված է ազգի ազատ ապագային նվաճված ազգային-ազատագրական

պայքարով ու լուսավորությամբ, սակայն նա մոռացության չի տալիս անցյալից դեպի ապագան տանելիք ազգային Հարստությունը, որը սրբագործված էր ժողովրդի Հավատով, ավանդույթներով ու սովորույթներով: Նախապատմությունն չտալով բարբառներից որևէ մեկին, Թաղիադյանը կանգ է առնում գրաբարը աշխարհաբարի միջոցով դուրբմբռնելի դարձնելու որոշման վրա և իր պարբերականի Համար ստեղծում մի յուրօրինակ լեզու. ուսմ-կախառն գրաբար:

Թաղիադյանը մեծագույն ուշադրությամբ հետևում էր դիտական և գրական նորություններին: Բենգալական Հանրագիտարանի Հրատարակության վերաբերյալ նորույթն ուղեկցվում է ուշագրավ առաջարկով՝ ստեղծել « մի նոր և ճոխ ընկերություն» և ձեռնամուխ լինել Հայկական Հանրագիտարանի ստեղծմանը: Խմբագիրը դիմում է ընթերցողներին՝ նյութեր ուղարկել և օգնել Հայերեն արմատական բառարան կազմելու գործին:

Թաղիադյանն իր պարբերականի էջերում մեծ տեղ է տալիս բանաստեղծություններին, որոնք գերազանցապես Հայրենասիրական բովանդակությու-ն ունեն: Պատմական Հայաստանի հերոսների փառաբանությունը նպատակ ունի քաղաքացիություն և Հայրենասիրություն դաստիարակել բնաշխարհից արտագաղթած Հայերի մեջ, նրանց հոգում արթուն պահել Հայրենիքի գաղափարը: Խմբագիրը Հանդես է գալիս երգիծական ոտանավորներով, որոնցից մեկում, օրինակ, ծագում էր իր դեմ բանակոխվ սկսած «Ուսումնասեր» լրագրի չափը կորցրած «Ան ազոպ» խմբագրին, որ փորձում է կաքավ ձևանալ (1850, Հ. Բ, էջ 436):

Երգիծական բանաստեղծություններն իրենց ոլորտի մեջ են առնում Հայ ազգագավ մեծատուններին, նրանց օտարամոլ զավակներին: Աշուղական երգերի և ժողովրդական բանահյուսության նմուշների Հրատարակումը վկայում է ժողովրդական տաղանդների նկատմամբ Թաղիադյանի մեծ հոգածությունը: Թաղիադյանը կոչ էր անում ընթերցողներին լսել ամենից առաջ ժողովրդի ձայնը. պոեզիան նրա Համար ոչ միայն արվեստ էր, այլև բարի և իմաստուն խոսքի քարոզ: Նա ընթերցողին է ներկայացնում իր գնահատելի ընդհանրացումը, թե բանաստեղծներն իրենց քնարով ավելին արեցին, քան թե աշխարհակալները իրենց զենք ու ազեղով: Առհասարակ «Ազգասերի» էջերում սփռված են առակներ, թեամբո խոսքեր, իմաստալից ասույթներ:

Թարգմանական գրականությանը ևս Թաղիադյանը մոտենում է ազգի բարոյական դաստիարակության իրօրյա պահանջներից: Նա տպագրում է

Հատված Ֆիրդուսու «Շահնամեից», Սաադիի բանաստեղծութուններից: Բայրոնը և Դիկկենսը դառնում են եվրոպական հեղինակներից ամենասիրելիները և ամենից շատ հոլովվող անունները: Պարբերականի էջերում ակնածանքով ու սիրով են հիշատակվում նաև Հոմերոսի, Միլտոնի, Շեքսպիրի, Սերվանտեսի, Տասսոյի, Դեֆոյի, Սկոտի, Բերնսի, Լոնգֆելլոյի, Լեսսոսի և այլոց անունները: Լեսսոսի «Ժիլ Բլազ» վեպը թարգմանել էր Թաղիադյանի ամենամոտ զինակից Ավետուժյանը:

Հասարակական բացասական երևույթների սուր քննադատություն պարունակող վեպի առանձին հատվածների տպագրումը հայ պարբերականի մեջ այդ քննադատության սլաքը փաստորեն ուղղում է նաև հայ համայնքի ներքին կյանքի թերությունների դեմ: Այդպես է մոտենում Թաղիադյանը գրեթե բոլոր արևմտյան գրողներին: Շոտլանդական ժողովրդի հերոսական մեծ երգիչ Բերնսի բանաստեղծությունը հայերեն հնչում է իբրև ազգակիցներին ուղղված պայքարի կոչ ընդդեմ բռնության: Լոնգֆելլոյի ստեղծագործություններից տպագրվում է «Տրտունջ խափշիկի» բանաստեղծությունը նվիրված նեգրերի ազատագրության համար մարտնչող Չանինգին: Հատկանշական է, որ այս թարգմանությունից հետո զետեղված է «Տեր, կեցո դու գհայս» բանաստեղծությունը, որն այնքան սիրված էր ու տարածված հնդկահայերի շրջանում:

Անգլիական ժողովրդի մեծ պոետ Բայրոնը ճնշված ժողովուրդների ազատագրական դատի մեծ պաշտպան է նաև և հենց դրա համար է տեղ գրավել հայրենիքից հալածված մի ժողովրդի պարբերականում: Թաղիադյանն իր բնթերցողներին ներկայացրել է հենց բռնության դեմ ծառս եղող պոետին՝ իտալական կարբոնարները և հույն ապստամբների մեծ բարեկամին: Հույն ժողովրդին պայքարի կոչող Բայրոնի բանաստեղծությունը կարող էր հասցեագրվել նաև հայերին: «Բարեկամ» ստորագրող թղթակիցը, խրախուսելով եվրոպական քաղաքակրթությունը պրոպագանդելու խմբագրի ջանքերը, խորհուրդ է տալիս յուրացնել արևմտյան մշակույթի դրական արժեքները: Եվրոպական մշակույթի ներկայանալի մեծությունների մեջ նա թվարկում է Բայրոնին, Վալտեր Սկոտին: Երկխոսելով «Բարեկամի» հետ՝ Թաղիադյանը շեշտում է իր կողմնորոշումը. «Զոր ինչ Բայրն ոմն և Սր Վալտր Սկատ ոմն կարեն ազգել Հայոց, նույն Հափ գոնէ՛ կարեն ազգել Սահակ Պարթև և Մեսրոպ: Թէպէտ և բարին ամենայն ուրեք համբուրելի համարիմք: Զբարին առնելն է գործ: Աբրա՛, թէ սմա՛ և թէ նմա՛ հեռեւելով» (1847, Հ. Դ, № 112, էջ 319):

Ուրեմն Համալսարհային մշակույթի նվաճումների և ազգային արժեքների գույզորդումը դիտվում է որպես զարգացման նախընտրելի ուղի:

Թաղիադյանը Հանդես է գալիս որպես աշխարհական նոր, ինքնուրույն գրականություն պաշտպան և Հենց այդ հիմնականից ելնելով գրում իր գեղարվեստական երկերը: Յավոթ, դրանց միայն մի մասն է գետեղում ամսագրում: Նրա բազում թշնամիները, ըստ երևույթին, կարողանում են ներազդել անդլիտական գրաքննություն աշխատակիցների վրա և խափանել տալ նրա և՛ գեղարվեստական գործերի, և՛ որոշ հոդվածների տպագրումը: Թաղիադյանն ուղղակիորեն մատնանշում է «բանադրություն» հետեանքով «Վեպ Վարսենկան» ստեղծագործության ամբողջական տպագրության խափանումը «Ազգասերի» մեջ: Այնիվ աշխատանքով ու արհեստով ձեռք բերվող երջանկությունը դրվատող վեպը Հազիվ թե մեծահարուստների ճաշակով լիներ. վեպի գլխավոր հերոսուհին աշխատասեր, հնարամիտ Վարսենիկը, հրաժարվում է հոր Վաչագան թագավորի հարստությունից՝ գերադասելով դառնալ աղքատ Գուրգենի կինը և սեփական ձեռքերով վաստակել իր ապրուստը: Գրաքննության միջամտության հետեանքով Թաղիադյանի հուշագրությունները տպագրվում են անգամահատված թողնելով անավարտ հատվածների տպագրություն:

Արդեն ասվեց, որ Հանուն ժողովրդի կրթության և գրականության աշխարհականացման Թաղիադյանի սկսած պայքարը նրա դեմ Հանեց կղերական սեպկցիայի ողջ բանակը: Հնդկահայ կրթական և մշակութային Հաստատությունները պարտավոր էին ենթարկվել առաջնորդի հրահանգներին, ընդունել այդ յուրօրինակ «մտորպոլիայի» գերիշխանությունը: Երբ Թաղիադյանը և նրա Համախոհ աշխարհական գործիչները ստեղծում են «Արարատյան ընկերությունը» և շուտով նաև նրա խոսաբերան օրգանը, և վերջապես, հիմնվում է Սանդխտյան դպրոցը (1846), փաստորեն Հնդկահայ Համայնքում ստեղծվում է մի նոր, աշխարհիկ մշակույթի ինքնուրույն կենտրոն, որը ձգտելու էր տապալել կղերականության բացարձակ գերիշխանությունը և ստեղծել Հասարակական նոր շարժում: Աշխարհիկ մշակույթի ակտիվ պրոպագանդիստ Թաղիադյանն իր շուրջն է Համախմբում ավատական եկեղեցու պատգամների և դոգմատիկ մտածողության դեմ ծառայող աշխարհական գործիչներին և մերկացնում ու ծաղրում կղերականներին: Նոր Զուգայի առաջնորդի դեմ ուղղված քննադատական ելույթները նկատելի տեղ են գրավում «Ազգասերի» էջերում: Համայնքի տարբեր շերտեր

տարբեր կերպ են վարժեցրվում այս իրողությանը: Օրինակ, մեծահարուստ Սամյանները Մադրասից նամակ են ուղարկում Թաղիադյանին խնդրելով իրենց հասցեով այլևս «Ազգասեր» չուղարկել: Նույն բովանդակությամբ նամակներ են ստացվում նաև այլ վայրերից:

Թաղիադյանի ակտիվ գիտնակիցներից Մանուկ Զորաբյանը հանդես է գալիս «Ազգասեր Արարատյանի» էջերում նոր կանոնների հրատարակումով, ըստ որի Նոր Զուղայի առաջնորդը պարտավոր էր ենթարկվել հնդկահայ հասարակության կողմից ընտրված խորհրդի ցուցումներին, բոլոր խնդիրները (նույնիսկ քահանաների ձեռնադրությունը, թեմատվությունը) կարգադրել խորհրդի հատուկ որոշումների համաձայն, բյուջեի և եկամուտների մասին հաշվետու լինել նրան, նրա դիտությունները կատարել ծախսումները: Այսինքն՝ Կալկաթայի «ընդհանրական ժողովին» էր վերապահվում վերադաս հսկիչի դեր առաջնորդարանի նկատմամբ: Մեկ այլ կանոնադրությամբ սահմանվում են վանքերի միաբանների պարտականությունները, ըստ որի վանականները պարտավոր են հպատակվել ոչ միայն առաջնորդին, այլև հասարակության ներկայացուցիչներին (1849, Հ. Ա, № 18, էջ 142-149): Սրանք շատ ուշագրավ փաստաթղթեր են, որոնք վկայում են, թե XIX դարի կեսերին որքան ուժգին թափ էր ստացել Հայ համայնքների աշխարհականացման համար մղվող պայքարը: Կալկաթահայերի «ընդհանրական ժողովները» ջերմ պաշտպանություն են գտնում Թաղիադյանի հրապարակախոսական ելույթներում իմաստավորելով և արժեքավորելով դրանք:

Թաղիադյանի հրապարակախոսության մեջ պատկառելի բաժին են կազմում դպրոցի և մանկավարժության հարցերը: Եվ դա հասկանալի է: Նա ուներ երկու հոգեզավակ «Ազգասերը» և իր հիմնադրած Սանդխտյան երկսեռ դպրոցը: Դրանք այն երկու թևերն էին, որոնց միջոցով Թաղիադյանն առաջ էր տանում Կալկաթայի Հայ համայնքի մշակութային-լուսավորական կյանքի զարգացումը, այն մղելով առաջադիմական հուն: Նա գտնում էր, որ անցյալում գերազնահատվել է կրոնական տաճարների նշանակությունը, Նոր Զուղայում, օրինակ, Հայերը կառուցել են 24 եկեղեցի, բայց չեն հիմնել մի կանոնավոր ուսումնարան: Դա հին հիվանդություն է. «Հայեաց ի 1001 եկեղեցիս Անևոյ, - գրում է նա, - համաձայնիս մեզ յասելս թէ երանի թէ կիսով չափ ի նոցանէ ուսումնարանք լեալ էին» (1850, № 42, էջ 333): Թաղիադյանը գտնում է, որ նոր ժամանակներում Հայ ժողովրդի առաջնահերթ մտահոգության առարկան պետք է լինի դպրոցաշինությունը, ընդամին

այն հաշիվով, որ դպրոց ունենա ոչ միայն ամեն մի քաղաք, այլև ավան ու շեն:

Թեև ինչ էջերում ծավալելով մարդասիրական նեմարանի քննադատությունը, նեմարան, որն իր անգլիամետ ուղղութիւնով ալլա չէր կարող բավարարել ազգային դարձոնք արող համայնքի պահանջները, Թաղիադյանը հրապարակում և պաշտպանում է իր հիմնադրած Սանդիստյան դպրոցի սկզբունքները, որոնք մերժում են և՛ օտարամուլ, և՛ սխոլաստիկ կրթութիւնը ի շահ դպրոցի դեմոկրատացման և ազգային դիմագծի ամրապնդման: Աշխարհական կրթութիւնի համակարգում Թաղիադյանը մեծ տեղ է տալիս արհեստների ուսուցմանը, ընդառաջ գնալով հայ իրականութիւնի հասունացած պահանջներին: Սանդիստյան դպրոցի կանոնադրութիւնն ու ծրագիրը, ուսումնառութիւնի ընթացքը, տարեվերջյան քննութիւնների արդյունքների ամփոփումները և այլ նյութերի հրապարակումները հաստատագրում են Սանդիստյան դպրոցի պատմութիւնը և նրա հիմնադրի մանկավարժական հայացքների առաջադիմական համակարգը: Թաղիադյանն առաջիններից մեկն էր հայ իրականութիւնի մեջ, որ առաջադրեց իգական կրթութիւնի անհրաժեշտութիւնը խնդիրը: Ազատ քաղաքացիների նոր սերնդի դաստիարակութիւնը կարող էր իրականացվել միայն կրթված ծնողի, մասնավորապես մոր ջանքերով: Այդպիսով, աղջիկների կրթութիւնը հասարակական զարգացմանը նպաստող գործոնի նշանակութիւն էր ստանում: Թաղիադյանը գրում է «Ճառ դաստիարակութեան օրինորդաց» աշխատութիւնը, որը հատվածաբար տպագրվում է «Ազգասերում», իսկ 1847 թ. լույս է տեսնում առանձին գրքով: Ի՞նչ էր պատգամում հրապարակախօսը. կրթված հայ աղջիկը կդառնա հասարակութիւնի պիտանի անդամ և ի վիճակի կլինի դաստիարակել հայրենիքի անկախութիւնի համար մարտնչող քաղաքացիներ:

Թաղիադյանն իր պարբերականի էջերում կոչ է անում յուրացնել արեւմտյան մշակութի արժեքները, հողվածներ տպագրում գիտութիւնի գործնական նշանակութիւնի վերաբերյալ: Նա հորդորում է հայ վաճառականներին շրջվել դեպի արդունարերական կապիտալը: Իր գիտակից ինչիկ Ավետումյանի հետ Թաղիադյանը քանդում է հայ վաճառականութիւնի դերի հնօրյա պատկերացումները, ջանում նրան մտցնել նոր դերի մեջ, լծել արդունարերութիւնի զարգացման գործին, որին պատկանում էր ապագան: Ավետումյանը «Արամայիս» վեպում, խորհելով ազգի զարգացման հեռանկարների մասին և գրվատելով եվրոպական «զանազան գործատուներին» ա-

աջացրած հեղաշրջումը, հորդորում է. «Այսպիսի գործատունք են... որ զԵ-  
րոպացւոց Ազգերն լուսաւորեալ են և յառաջուցեալ: Որքա՛ն հարկաւոր է մեզ  
միտ դնել այսմ, և մեր պատանեաց մասն այսպիսի արհեստից յաշակերտու-  
թիւն տալով յառաջացուցանել, որով մեծ օգուտ և ճշմարիտ լուսաւորութիւն  
կծագի մեր միջում» (1846, № 46, Հ. Գ, էջ 22): Թաղիադյանը խնդիր է դնում,  
օրինակ, Հայաստանում ստեղծել հանքերի շահագործման ընկերութիւն, որը  
մեծ օգուտ կբերեր Հայրենի երկրի զարգացմանը: Եթե հնդկահայերը, դատում  
է Թաղիադյանը, կարողացել են այդքան խոշոր դեր կատարել անցյալում, որ-  
քան ավելի մեծ դեր կարող են խաղալ նրանց հետնորդները, եթե կարողանան  
համախմբվել, զինվել նորագույն գիտութիւն և տեխնիկայի զենքերով: Վա-  
ճառականական ընկերութիւնների մեջ միավորվելով միայն նրանք կկարո-  
ղանան դիմագրավել անգլիական կապիտալի խորտակիչ ուժին և մրցակցու-  
թիւնը: Միասնաբար զորանալով կկարողանան նպաստել ոչ միայն գաղթօ-  
ջախի բարգաւաճմանը, այլև Հայրենիքի տնտեսական վերաշինութիւնը: Հա-  
կաֆեռոյալական ուղղվածութիւնը Թաղիադյանի պարբերականի գնահատելի  
ձեռքբերումն է: Եթե նրանում կա որոշ անհետևողականութիւն, ապա դա  
լուսավորական շարժման տվյալ փուլի հակասականութիւն արգասիքն է, որը  
զորու չէր միանգամից թոթափել ավատական մտածողութիւնի դարերով  
կարծրացած կապանքները: Կարևորն այն է, որ Թաղիադյանը բուն էր ժամա-  
նակի զարկերակը և չուշանալու ահազանգ էր հնչեցնում ազգին. «Մեծե՛ս  
զերկաթ մինչ ջերմ է: Արի միայն շարժե՛ս Ազգ, սթափի՛ր և զգեցի՛ր զա-  
զատութիւն» (1849, Հ. Բ, էջ 305):

Թաղիադյանի հրապարակախոսութիւնը, քողարկված թե բացահայտ, ու-  
ներ հնդկամետ ուղղութիւն, դա երևում է նրա գեղարվեստական գործերում  
(«Սոս և Սոնդիպի» վեպ-պոեմում) և առավել ևս հրապարակախոսական  
ելույթներում: Նա հանդես է գալիս հնդիկ ժողովրդի ազատագրական պայ-  
քարը պաշտպանողի և անգլիական գաղութարարներին դատապարտողի  
դերում, բազմաթիւ դրվատական էջեր նվիրելով Փենջաբի ապստամբներին և  
կծու խոսքեր ապստամբութիւնը ճնշողներին: Նա ապավինում է նոր ժամա-  
նակների ոգուն: Այն վաղ էր, երբ ժողովուրդները զարհուրում և ահաբեկվում  
էին թնդանոթների որոտից, այժմ Հնդկաստանն ինքը կարող է թնդանոթ և  
վառող արտադրել: Դատապարտում է անգլիական գաղութարարների փա-  
րիսեցիութիւնը, միաժամանակ նշավակում նրանց հնդկահայ սպասավորնե-  
րին: Թաղիադյանը կոչ է անում լինել մարգասեր և բնավ օտարասեր: Ոչ



միայն արդարացնում է Հնդկիկների ընդդիմությունը անդլիական մեծապետական քաղաքականությունը, այլև նյութեր է հրատարակում իռլանդացիներին, ինչպես նաև շոտլանդացիների ծանր կացություն մասին և Հանդես գալիս իռլանդական Հայրենասերների բարեկամի դերում, մեծ մասամբ, իհարկե, իր վերաբերմունքը թաքցնելով տողերի արանքում, անդլիական գրաքննիչներին աչքերին անահասանելի, սակայն ըմբռնելի եզովպոստյան լեզվին վարժված ընթերցողին:

«Ազգասերում» տպագրված Իսահակ վարդապետի Հուշազրույթյունները (1846, Հ. Բ) դատապարտում են անդլիական գաղութարարների տմարդի վերաբերմունքը տեղաբնիկների նկատմամբ: Պարբերականը մտահոգված է նաև Հնդկական Հինավուրց մշակույթի Հուշարձանները պահպանելու, գրական Հնագույն երկերը հրատարակելու խնդրով: Գաղութատիրություն քննադատությունը գնալով ուժեղանում է և ստանում բացահայտ դատապարտություն կերպարանք: Անդլիական «սնապարծ տերություն» ծայրագույն աստիճանի հասնող «բռնաբարությունը», որը տասնյակ միլիոններ է դուրսում Հնդկիկներից իբրև հարկ և մեկ միլիոն իսկ չի ծախսում տգիտություն և ազրատություն մեջ հեծող բազմամիլիոն ժողովրդի կրթության համար, Թադիադյանը համեմատում է Ռուսաստանի ճորտատիրական և Պարսկաստանի բռնատիրական հետամնաց կարգերի հետ (1849, Հ. Ա, № 27, էջ 217): Թադիադյանը Հնդկիկ ժողովրդի ազատագրական պայքարի ջերմ պաշտպանն է, պաշտպանը ընդհանրապես ազատագրական պայքարի, աշխարհի որ մասում էլ այն ծագի: Օրինակ, նա պաշտպանում է Հուշագրական հեղափոխությունը, դատապարտում ևեակցիոն պետությունների միասնական ազդակույ քաղաքականությունը բանաձևելով «կենսագործ նորոգությունն պետ ունի աշխարհն գրեթե՛ յամենայն ուրեք» (1850, Հ. Բ, էջ 424): Ապստամբ ալժիրցիներին քարայրում այրելու կապակցությամբ Ֆրանսիական կռուվարությունը անարգանքի սյունին է դամում գերագասնելի համարելով նրա համար ամբողջ Ալժիրը տանուլ տալ, քան թե լուսավորյալ դարում դադանային անդլությունամբ նման «վատահամբավության» արժանանալ (1845, № 5, էջ 36): Թադիադյանը բացահայտում է նաև գաղութատիրական քաղաքականության մեջ միսիոններների խաղացած ոչ երկրորդական դերը քոզարկված կրոնական ծածկույթով: Մերկացնելով միսիոններների երեսպաշտությունը մատնացույց է անում նրանց կապը քաղաքական ուժերի հետ:

«Ազգասեր Արարատյանի» վերջին համարներում ուշադրություն են գրավում Ռուսաստանի նշանակությունը նվիրված մի շարք հոդվածներ: Թաղիադյանն իր որոշակի ռուսասիրությունը, որ գալիս էր հայրենի բնաշխարհում ապրած տարիներից, միշտ էլ, որ կարողանում էր ազատություն տալ ապրելով անգլիական գաղութում: Նա հրապարակում է ներսես կաթողիկոսի կոնդակները, որպես կարևոր փաստաթղթեր հայ-ռուսական հարաբերությունների զարգացման գործում: Զուգայեցի թղթակցի՝ ժողովրդական բարբառով գրած նամակները հավաստում են պարսկահայերի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Հարկ է նշել, սակայն, որ Թաղիադյանը այս հարցում ուներ քաղաքական զգաստ ըմբռնում: Նա ցարական կարգերի, ճորտատիրությունից թշնամի էր և դա էլ էր թաքցնում: Այս է պատճառը, որ նրա պարբերականի, ինչպես նաև «Արարատյան ընկերություն» մյուս հրատարակությունների մոտաքը ռուսական կայսրության սահմաններից ներս արգելված էր, մի բան, որ խմբագրին մեծ դառնություն էր պատճառում, քանի որ իր պարբերականը համայն հայության համար էր նախատեսել:

Հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, որին բախտ վիճակվեց մոտիկից ճանաչելու հնդկահայ գաղութը, իր «Մեռելահարցուկ» վեպում բարձր է գնահատում Մեսրոպ Թաղիադյանին. անդրադառնալով «Տե՛ր, կեցո դու զհայս» երգին՝ գրում է. «Այս երգը առաջին անգամ երևեցավ Կալկաթայի Ազգասեր անունով օրագրի մեջ, որ հրատարակում էր հավիտենական հիշատակի արժանավոր Մեսրոպ Դավթյան Թաղիադյանց ուսումնական ազգասերը: Այս երգը թե՛ բովանդակության, թե՛ յուր բանաստեղծական վառվռուն հորինվածքի և թե՛ հայոց ներկա վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և դորա բարձրելու համար հարկավոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մասնավոր ուշադրությանը: Եթե հնար ունենայի ես, ամենասուրբ պարտականություն կը դնեի ամեն մի հայի վերա անդիր ուսանել այս երգը: Մինչև այսօր իմ կյանքի մեջ էնմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ: Խե՛ղճ Թաղիադյանց. խաղաղություն քո հոգուն, չարչարվեցար, չարչարվեցար ազգի լուսավորության համար, բայց չհաջողեցավ քեզ, որպես և շատերին, տեսանել քո մարգարեական աղ-դու քարոզության պողաբերությունը մեր ազգի մեջ» (ՆԼԺ, հ. 1, 1979, էջ 295): Նալբանդյանը խոսուհի դուրսհեռ է հայտնաբերում Թաղիադյանի կյանքը նմանեցնելով Արփյանի կյանքին, քանի որ կրթվելով օտար աշ-

խարհներում, նրանք այրվեցին նույն ցանկութեամբ ազգային դպրոց հիմնարկելու և ստացած լույսը ազգի մեջ տարածելու համար:

## «ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ» (1849-1853)

«Քաղաքական, դրադիտական և առևտրական» տիտղոսաթերթով Սինդատուր նախահանդատային քաղաքում, դարակեսին, Գրիգոր Գալստանյանի խմբագրությամբ, սկսեց լույս տեսնել «Ուսումնասեր» վիմատիպ երկշաբաթաթերթը: Սկզբնական շրջանում պարբերականը տպագրվում էր Աբգար Աթիի «Արփի» վիմագրարնում, իսկ հետագայում խմբագիրը հիմնադրում է «Մասին» սեփական վիմագրարնը: Իր պարբերականը խմբագիրը համարում է «ազգային առաջադիմության» օրգան, թեև հենց առաջին համարներից հայտնի է դառնում նրա կղերապաշտանողական միտվածությունը:

Թերթը տեղեկություններ է տպագրում առևտրական շրջանառության, սպորանքների գների և տեսականու, դրամական արժույթի և հայ առևտրականներին հետաքրքրող այլ հարցերի վերաբերյալ:

«Ուսումնասերի» ուղղությունը պարզելուն օգնում է նրա մղած բանավեճեր Թադիադյանի «Ազգասերի» դեմ: Երկու պարբերականների ուղղությունը տարամետ էր: Հավաստելով հանդերձ իր հարգանքը «Ազգասերի» խմբագրի և ակնածանքը նրա «հզոր գրչի» նկատմամբ՝ Գալստանյանը չի ընդունում, սակայն, Թադիադյանի քննադատության ծայրահեղությունները և նրան խորհուրդ է տալիս «սանձել զանգուսպ գրիչ իւր ի սրընթաց արշաւանս և թողուլ գրարեպաշտ քրիստոնեայն խաղամիտ ընթանալ...» (1850, Հ. Բ, № 24, էջ 94): Կյանքի նորոգման և աշխարհականացման «Ազգասերի» պահանջները «Ուսումնասերի» կղերապաշտանողական ուղղությունը՝ հակացուցված էին: Հողվածները աստիճանաբար վերածում են սազրանքի և վարկարեկիչ ելույթների նպատակ ունենալով գրկել նորարար խմբագրին ու մանկավարժին և՛ իր ամբիոնից, և՛ իր հիմնադրած ուսումնարանից: «Ազգասերի» հրատարակության ընդհատումը միայն դառնում է Գալստանյանի կիրքը մեղմելու պատճառ: Նա ուշացած կարեկցանքի խոսքեր է ասում «Ազգասերի» մասին, թե «ողբամք սակս մահուան «Ազգասէր»-ի և ո՛չ ընդունայն օղբամք, քանզի նովաւ կորուսաք զառիթս յառաջադիմութեան ազգիս» (1851, Հ. 3, № 43, էջ 169): Նա վախենում է, որ իր պարբերականը ևս կարժանանա նույն բախտին:

Երբ Թաղիադյանը հիմնադրում է «Ազգասեր Արարատյանը», «Ուսումնասերը» վերսկսում է իր բանավեճը, սակայն ավելի զգույշ: Զայնակցելով Հայ վաճառականներին հղված միավորվելու նրա կոչերին, Գալստանյանն իր հերթին հորդորում է ազգակիցներին՝ ձեռնամուխ լինել «ընկերական վաճառականության», գործատուներ բանալ: Սակայն նա հետև էր նոր ժամանակի ոգին ըմբռնելու կարողությունից և շարունակում է վաճառականությունը կոչանել զարկ տալ առևտրին, հետ բերել անցյալ փառքը: «Ուսումնասերի» խմբագիրը հավակնում էր չափավոր հունով ընթացող Հայրենասիրությունը ներկայացնել որպես միակ ճշմարիտ ուղի, հակադրվելով Կալկաթայում ծնունդ առած կրթական-լուսավորական հաստատություններին, որոնք ձգտում էին ստեղծել անկախ կրթական շարժում և զարկ տալ աշխարհական մշակույթի զարգացմանը: Նրանք մերժում էին Ջուղայի հոգևոր առաջնորդի միահեծան իշխանության նկրտումները: Գալստանյանը դատափետում է կրոնական համայնքի վաղեմի «միությունը» քայքայող աշխարհական գործիչներին, պաշտպանում եկեղեցու շուրջը համախմբված և եկեղեցու պետին անվերապահորեն հպատակվող հավատացյալների «միաբանություն» գաղափարը, որին հակադրվողը անպայման վաստակում է «խռովարար» կամ «ազգադավ» պիտակը: Անախրոնիզմը «Ուսումնասերի» գաղափարաբանության հանգրվանն էր, ուստի և նրա ջանքերի ապարդյունությունը՝ կանխորոշված: Դառնալով Հայ վաճառականության և համայքի կրոնական միաբանության անկման վկան, Գալստանյանը փրկություն այլ խարխախ չի գտնում, քան հորդորել իր Հայրենակիցներին՝ գնալ Ավստրալիա, փնտրել նոր ոսկե ափ: Թաղիադյանի «անխոհեմ երիտասարդներին» գործունեության քննադատությունը խարխուլում է «Ուսումնասերի» հեղինակությունը, և խմբագիրը ստիպված է լինում դադարեցնել թերթի հրատարակությունը: Նա գնում է Ավստրալիա հարստանալուց հետո նորից հետ գալու և գործը շարունակելու խոստումով: Սակայն «Ուսումնասերը» մեկընդմիջտ անցնում է անցյալի գիրկը՝ Հայ հասարակական մաքի պատմության մեջ իր համար սեղ ապահովելով կղերապահպանողական հոսանքի բանակում:

### «ԵՂԱՍԵՐԱՍԵՐ» (1862-1863)

Այս լրագիրը հնդկահայ վերջին պարբերականներից է, որը վիճատիպ հրատարակված լույս էր տեսնում Կալկաթայում: Խմբագիրը Եղիազար

Տեր-Հարությունյանը, այսպես է բնութագրել իր թերթի դիմագիծը. «Տասնորեայ լրագիր քաղաքական, բանասիրական և զանազան զիտելիաց»։ Թերթի ուղղութիւնը ներկայացնող առաջին համարի առաջնորդող խնդիր է գնում խթանել հնդկահայ համայնքի ազգային կյանքի աշխուժացումը, դուրս բերել նրան «Լուսավորչալ դարին» անհարիր պատիվութիւննից։ Նա վկայակոչում է Կ. Պոլսում, Ձմյուննիայում և Ռուսաստանում հրատարակվող պարբերականների բերած նպաստը ազգային զարթոնքին, հիմնավորում իր պարբերականի հրատարակութան անհրաժեշտութիւնը և գաղափարական ուղղութիւնը։ Նա բնդգծում է, որ «Եղբայրասերը» ջանալու է համախմբել բոլոր խավերին, ուժ տալ ազգային շարքերի «եղբայրասիրական» միաձուլմանը և չարձագանքել «վայրապար վիճարանութիւններին»։ «Եղբայրասիրութեան» և լիրերալ առաջադիմութիւն քարոզը դառնում է պարբերականի հիմնական բովանդակութիւնը։

«Եղբայրասերը» բաժական մանրամասնութեամբ ընթերցողին է ներկայացնում Նոր Զուգան և ջուղայեցիների կյանքը, առանձին ուշադրութեամբ հետևում Թուրքիայում կատարվող դեպքերին։ Հայ-տաճկական հարաբերութիւնների մասին գետեզված նյութերը ցուցադրում են «Եղբայրասերի» ուրույն մտակցումը։ Արտատպելով անգլիական կամ արևմտահայ թերթերից քաղաքական տեսութիւններ, Տեր-Հարությունյանը համակրանքով է արձագանքում Վանի և Ձեյթունի ազատագրական շարժումներին, տպագրում է Հայրենասիրական բանաստեղծութիւններ, որոնք կոչ են անում կովի ելնել ազգի թշնամիների դեմ։ Նա առաջարկում է Հանդանակութիւն կազմակերպել և օգնել ապստամբ գեյթունցիներին։ Խմբագրի Հայեցութեամբ Հայրենիքը ապագա քաղաքականապես ազատ Հայաստանն էր, որը պիտի կործաներ ստրկութեան շղթաները թե՛ հայ ժողովրդի և թե՛ մանավանդ, Հայերին «Հովանավորող» եմբողական քրիստոնեական պետութիւնների ջանքերով։ Բացարկելով հայ ժողովրդի ուսասիրական գործոնների արմատները խմբագիրը միաժամանակ դրականորեն է արտահայտվում Անգլիայի մասին վկայակոչելով Իտալիայի և Հունաստանի նկատմամբ նրա «Հովանավորող» դերը։

Հաշտարար դիրք գրավելով հնդկահայ համայնքը երկպառակող ուժերի միջև, մերկացնելով Նոր Զուղայի առաջնորդի միահեծան քաղաքականութիւնը «Եղբայրասերը» իր կոչումին հարազատ եղբայրասիրութեան ու մարդասիրութեան կոչեր է անում, հորդորում հոգալ ազատների մասին։ Նա

անդադար հորդորում է անգլիացող հնդկահայերին՝ հոգ տանել իրենց զավակներին ազգային դաստիարակության մասին, պահպանել ազգասեր հայերի ավանդները: «Ապրուստի համար շահ չկա հայերենից», - հայտարարում են «անգլիացեալ» ծնողները (1862, № 17, էջ 132) և, արհամարհելով մայրենի լեզուն, ուժ տալիս օրըստօրե սաստկացող ուժացմանը: Հակառակ «Ուսումնասերի» խմբագրի, Տեր-Հարությունյանը դատապարտում է Ավստրալիա մեկնելու նորահայտ տենդը: Նրա իդեալը հեռավոր Հայաստանն է, որի ազատության համար մարտնչող վանեցիներին ու զեյթունցիներին, արևմտահայ ազգասերներին ներբողներ է ձոնում: Թերթին աշխատակցող վաճառական Սեթ Սամյանի հետ կոչ է անում գնալ Հայաստան և հայրենիքում ստեղծել նոր կյանք: Նա արտատպություններ է անում «Ազգարարից» կամենալով շեշտել, թե պաշտպանում է նրա ազգասիրական պատգամները, հրապարակում է Նաղաշ Հովնաթանի երգերից՝ նրան համարելով «հաջող բանաստեղծ»:

«Եղբայրասեր» թերթի ամենաուշագրավ էջերը պետք է համարել Միքայել Նալբանդյանին նվիրված նյութերը: Մուրադյանի «Փարիզ» թերթից առնելով Մ. Նալբանդյանին Սիբիր աքսորելու լուրը, նա խորին ցավ է արտահայտում հնդկահայերին քաջ ծանոթ «ուսումնասէր, լեզուագէտ, ազգասէր և գործունեայ» գործչի ազատազրկման առթիվ (1862, № 26, էջ 208):

Խմբագիրը նշում է, որ հնդկահայերի կսկիծը ավելի մեծ է, քանի որ նրանք առիթ ունեցան մոտիկից շփվելու նրա հետ Հնդկաստան կատարած այցի ժամանակ, տեսնելու նրա տաղանդի չափն ու ազգասիրական եռանդը և հիմա աղոթում են հայրենասեր դյուցազնի, անպարտելի արծվի ազատության համար (1863, № 33, էջ 266): Տեր-Հարությունյանը ուշագրավ դատողություններ է անում հայ ժողովրդի ուսսական կողմնորոշման առթիվ, որը ի դեմս Ռուսաստանի տեսել է իր ազատարարին ու հովանավորին, սակայն միաժամանակ քննադատում է ցարական բռնակալական ուժերը, որը հալածում է հպատակ փոքր ազգություններին, նրա ազատասեր գործիչներին: Նա արգահատանքով է խոսում հայ «խավարյալների» մասին, որոնց դեմ պայքարում էր Նալբանդյանը և որոնց խարդավանքին զոհ գնաց: Հնդկահայ խմբագիրը Նալբանդյանին համեմատում է դյուցազն Վարդանի հետ, նրան համարում ազատության ջահակիր, ուրեմն և անցանկալի մարդ ոչ միայն կառավարության, այլև հետագան հոգևորականության համար: Սակայն նա սիրելի ու թանկ է բոլոր իսկական հայրենասերների համար, ո՛չ ժամանակը, ո՛չ

մահը չեն կարող ջնջել նրա հիշատակը, մինչդեռ նրա թշնամիները դատապարտված են անդարձ մոռացության (նույն տեղում, էջ 292):

Տեր-Հարությունյանը չի սահմանափակվում Նալբանդյանի մասին հոգիածների տպագրությամբ, հատվածներ է արտատպում նրա աշխատություններից, հատկապես «Երկու տողից»: Լույս է տեսնում նաև «Ազատություն» հանրահայտ բանաստեղծությունը: Պետք է ասել, որ Նալբանդյանի մասին նյութերը նոր շեշտեր են հաղորդում թերթին: Աղքատ դասակարգի շահերը պաշտպանող, նոր Զուղայի առաջնորդի և վանական բռնակալների տմարդի գործերը մերկացնող տողերը Նալբանդյանի մարտաշունչ հրապարակախոսության յուրատեսակ արձագանքն են: Ցավոք, Նալբանդյանի դատը պաշտպանող նյութերը դարձան «Եղբայրասերի» կարապի երգը:

## Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ

### ՍԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդամենը ինը հոգուց էր բաղկացած հայազգի հոգևորականների այն խումբը, որը իրենց առաջնորդի՝ Մխիթար վարդապետ Սերաստացու (1676-1719), գլխավորութեամբ 1717 թ. սեպտեմբերի 8-ին ոտք դրեց Իտալիայի Վենետիկ քաղաքից հարավ գտնվող «Սուրբ Ղազար» անունը կրող կղզին՝ «հավատավոր և ազգանպաստ» գործունեություն սկսելու համար: Կղզին կատարելապես անտեր էր ու անբնակ, ուներ մեկ ջրհոր, մեկ կիսաքանդ աղոթատուն և նախորդ շուրջ երեք դարերի ընթացքում եղել էր «մարդկությունյան ամենեն ավելի թշվառներուն՝ բորոտներուն, հիվանդներուն և մուրացիկ աղքատներուն» կացարան: Եվ եթե հավելենք, որ հիշատակված ինը վարդապետների իրավաբանական կարգավիճակը բնութագրված էր «ըստ կամս եւ ցանկութեան իւրեանց», այսինքն՝ ոչ ոք հովանավոր և պաշտպան չէր նրանց այս հասկացություն թե՛ Փինանսական, թե՛ հոգևոր և թե՛ պետական-օրենսդրական առումով, ապա մեր ասելիքը կամբողջանա:

Այսպիսի աննախանձելի սկիզբը, սակայն, ապագայի աշխատանքային գործունեություն անորոշություն կամ անելիքների թերագիտակցում չէր. նեթադրում: Մխիթարը դեռ վաղուց արդեն մշակել էր հետագա իր գործունեություն ծրագիրը, որի հետևողական իրականացմանն էլ ձեռնամուխ եղավ Սուրբ Ղազար մտնելուն պես: Այն է՝ ստեղծել հոգևորական թեքում ունեցող հայազգիտական-մշակութային մի կազմակերպություն, որն իր հնարավորություններին ու կարողություններին սահմաններում նախ պետք է գրազվեր կաթոլիկ հավատի հիմնահարցերի քննությունը և այդ բնույթի համապատասխան ուսումնասիրություններ հրատարակեր (հռոմեակազավան աշխարհի և նրա միջնաբերդի՝ Վատիկանի համակրանքն ու հովանավորությունը ձեռք բերելու համար): Ստեղծվելիք կազմակերպությունը միաժամանակ պետք է բանիրուն գործունեություն ծավալեր հայազգիտության բնագավառում՝ իրեն ծնող ու սնող հայ ժողովրդին մտավոր սնունդ մատակարարելու ու, ուրեմն, այստեղ էլ նրա հարգանքին ու պաշտպանությունը արժանանալու համար:



Ինչ եղավ Մխիթարի մշակած և նրա Հաջորդների կողմից մեր ազգային-հասարակական կյանքում հետևողականորեն իրականացված այս ծրագրի հետևանքն ու արդյունքը, որն, ի դեպ, շարունակվում է առ այսօր, հանրահայտ է և համապատասխան մեկնաբանություններով ներկայացվելու կարիք չունի: Մշտապես ավելացավ «Մխիթարա տան» անըստզուտ անունն ու դիտական անրեկանելի նանաչումը:

Մխիթար Սերաստացու մոտ, ի թիվս ամենատարբեր բնույթի աստվածաբանական-հայադիտական գրականությունների ստեղծման, շուտով հղացավ նաև սեփական պարբերական ունենալու միտք-նախագաղափարը, որը պետք է լիներ գրարար լեզվով, ունենար կրոնաստվածաբանական և հայադիտական թեքում: Այն նույնիսկ արդեն ուներ իր սեփական անունը՝ «Փող Հաւատոյ»: Խույ սեղեկություններ ունենք այն մասին, որ գործընթացը կազմակերպվելու համար ստեղծված է եղել «կարգադրիչ մարմին» իր Մխիթար Սերաստացու գլխավորությամբ, և որ այդ «մարմինը» կարողացել է որոշակի քանակով նյութեր հավաքել հրատարակվելիք պարբերականի համար և նախնական բանակցություններ վարել Վենետիկի հրատարակչական տների հետ: Մեզ անհայտ պատճառներով լայն նախապատրաստություններ սկսված այդ գործը նյութական կերպարանք չի ստացել: Սակայն ուժի մեջ էր մնում հիմնական գաղափարը, և Մխիթարյան միաբանությունից ավանդապահ դեկավարությունը տարիների ընթացքում կարողացավ այն իրականացնել:

### «ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ» (1799-1802)

Հայ առաջին պարբերականի «Ազգարարի» փակվելուց երեք տարի անց, 1799 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանությունից անդամ Ղուկաս Ինճիճյանը լույս է բնծայում «Տարեգրություն» վերնագրով պարբերականը, որպես, ինչպես ենթավերնագրում է գրված, «Հիշատակարան քաղաքական, պատերազմական, եկեղեցական և բանասիրական անցից և դիպուածոց աշխարհի»:

Ղուկաս Ինճիճյանը ծնվել է 1758 թ., Կ. Պոլսում: Կրթությունը ստացել է Վենետիկի Մխիթարյանների ս. Ղազար վանքում: Նա ծավալել է բանասիրական, պատմադիտական, հնագիտական գործունեություն, գրել և հրատարակել է դիտական մի շարք ուշագրավ աշխատություններ հին Հայաստանի պատմության, աշխարհագրության, աշխարհի տարբեր երկրների քաղաքական ու անասական կյանքի մասին: Առանձին հետաքրքրություն են ներ-

կայացնում նրա «Ստորագրութիւն հին Հայաստանեայց», «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի», «Դարապատում» և այլ գիտական ուսումնասիրութիւններ: Դրանք բոլորը գրված են աշխարհաբար դժուրճբունելի լեզվով: Իսկ նրա գործերից մի քանիսը թարգմանվել են իտալերեն, ֆրանսերեն:

Ղուկաս Ինճիճյանը մահացել է 1833 թվականին:

«Տարեգրութիւնը» լույս է տեսել տարին մեկ անգամ, առանձին հատորներով: Յուրաքանչյուր հատորում տեղեկութիւններ են հաղորդվում նախորդ տարվա ընթացքում աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցած քաղաքական անցքերի, մշակութային կյանքում եղած նորութիւնների, առևտրական կապերի, վաճառականության և այլնի մասին:

«Տարեգրության» յուրաքանչյուր հատոր բաղկացած է 884 էջից: Բոլոր նյութերը շարադրված են արևմտահայ աշխարհաբար լեզվով: Այն թեև չունի պարբերականին հատուկ ընդգծված առանձին բաժիններ, այնուհանդերձ հոդվածները ըստ բնույթի տեղաբաշխված են հետևյալ հատվածներում. «Վաճառականութիւն», «Գիտութիւն», «Գյուտք», «Դիպվածք», «Աշխարհագրութիւն», «Արվեստ» և այլն: Պարբերականում տպագրված հոդվածներին մեծ մասը պատկանում է խմբագրի գրչին:

Ներքին և արտաքին առևտրի ու վաճառականության մասին գրված հոդվածները պատմում են տարբեր երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Իտալիա և այլն) միջև առևտրական գործերում եղած հաջողութիւնների ու անհաջողութիւնների մասին, ինչպես նաև լուրեր են հաղորդում ապրանքների ներմուծման ու արտահանման, միջպետական տնտեսական բախումների և այլնի մասին: Հայ առևտրականներին օգնելու նպատակով տպագրվում էին առևտրական ուղիների, կայանների, կենտրոնների, ապրանքների գների ցուցակները: Ընդհանրապես երկրի տնտեսական ու մշակութային կյանքի առաջընթաց զարգացման գործում կարևորութիւնը արվում էր առևտրի աշխուժացմանը:

Կաթուղիցիզմի գաղափարներին հավատարիմ խմբագիրը երբեմն էլ անդրադառնում էր նոր զարգացող արևմուտքի երկրներում տիրող սոցիալական ներհակութիւններին, քննադատում վերնախավի բռնութիւններն ու անարգարացի վերաբերմունքը աշխատավորության նկատմամբ: Եվ չափազանց թուուցիկ ակնարկներով էր նշում այս կամ այն երկրում իշխանութիւնների դեմ բռնկված ժողովրդական հուզումների, դժգոհութիւնների մասին:

Այսպես, պարբերականում Հաղորդումներ են տպագրված Միլան քաղաքում Հացի սակավությունից աշխատավորության մեջ առաջացած դժգոհության, Ամերիկայում տեղի ունեցած ստրուկների ապստամբության և այլնի մասին: Խմբագրի կարծիքով, եթե բոլոր ունեորները, Հետեևելով քրիստոնեական դա-  
դափաններին, լինեին բարեհոգի ու վեհանձն, իսկ աշխատավոր ու չքավոր խավը Համբերատար ու Հպատակ, ապա կվերացվեր սոցիալական չարիքը: Հասարակական Հավասարակշռության նման Հայացքներով էին ներծծված պարբերականի Հրատարակախոսական գրեթե բոլոր հոդվածները:

«Տարեգրությունում» կարեորություն էր տրվում բնական գիտությունների դարդացմանը: «Գիտությունք» բաժնում տպագրվում էին Հաղորդումներ նորագույն գյուտերի, խոշոր Հայտնագործությունների, Հսկա կառույցների, ճանապարհաշինարարության, Համալսարանների, ակադեմիաների գործունեության մասին: Ուշագրավ են տպագրության, արագագործության, փորագրության և այլնի վերաբերյալ նյութերը: Պարբերականը ծանոթացնում էր նաև բժշկության, առողջապահության բնագավառում եղած նորություններին, այս կամ այն Հիվանդության բուժման դեղամիջոցներին:

«Մեանորականք» բաժնի նյութերը ներկայացնում են եղանակի տեսու-  
թյուններ և պատմում են բնական պատահարների (երկրաշարժ, ջրհեղեղ և այլն) մասին: Եվ կարևորն այն է, որ այդ արհավիրքների առջևն առնելու ելքը փնտրվում է ոչ թե Աստուծան ապավինելու, այլ բնական երևույթները գիտա-  
կանորեն ուսումնասիրելու և ժամանակին կանխելու մեջ:

«Տարեգրությունք» անդրադառնում է նաև պետական գործիչների, թագավորների կյանքի և գործունեության գնահատմանը, արևմտաեվրոպական երկրների իշխանությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականու-  
թյանը: Հիշատակվում են սելջուկ առաջին տիրակալների անունները, նրանց աշխարհակալական ձեռնարկումները և ռազմական Հաղթանակները: Հատկապես ներկայացվում է Օսմանյան պետության Հզորությունը, ինչպես բացատրում է խմբագիրը, այդ պետության դերն ու Հեղինակությունը այլ երկրներում բարձրացնելու նպատակով: Պարբերականում զրվատանքի խոսք է ասվում նաև ռուսական Պավել Ա թագավորի մասին: Մանրամասն նկարագրված են թագավորի Իտալիա կատարած այցելության Հետ կապված արարողությունները:

Ղ. Ինճիճյանի «Տարեգրությունում» տեղ են գրավում ինչպես օտար, այնպես էլ Հայ պատմական դեմքերի ու դեպքերի վերաբերյալ գրված հոդ-

վածները: Ընդարձակ հոդված է տպագրված Հայ Հասարակական-քաղաքական գործիչ, մեկեանա Նովհաննես Լազարյանի մահվան առիթով:

Պարբերականը գոյատևել է ընդամենը չորս տարի, մինչև 1802 թվականը:

### «ԵՂԱՆԱԿ ԲՅՈՒՉԱՆՂՅԱՆ» (1803-1820)

Վենետիկում հրատարակված մյուս Հայ պարբերականը «Եղանակ Բյուզանդյան» ամսաթերթն է, որը լույս էր տեսնում Մխիթարյան միաբանության հանձնարարություններ և կ. Պոլսի «Արշարունյաց ընկերության» շուրջ համախմբված արևմտահայ գործիչների նյութական աջակցությամբ: Այն խմբագրում էր Ղուկաս Ինճիճյանը: Ինչպես Ինճիճյանի նախորդ «Տարեգրություն» պարբերականի, այնպես էլ այս պարբերականի նյութերը շարադրված են աշխարհաբար դյուրամատչելի լեզվով: Յուրաքանչյուր հատոր բաղկացած էր 288-300 էջից: Չափերն առաջինի համեմատությամբ մեծ են, հատորներն ունեն պարբերականին բնորոշ առաջնորդող ու հրապարակախոսական հոդվածներ: Յուրաքանչյուր տարվա ամսատետրերը ժողովված են մեկ հատորի մեջ, և ամեն մի հատոր սկսվում է «Նոր տարի, նոր գիտելիք» խորագիրը կրող առաջնորդողով: Էջերը զարդարված են մանրանկարներով, որոնք ներկայացնում են բնանկարներ, ճարտարապետական կոթողներ, անվանի մարդկանց դիմանկարներ և այլն: Նախորդ պարբերականի բաժիններին այստեղ ավելանում է «Բանասիրական» բաժինը:

«Եղանակ Բյուզանդյան» պարբերականում որոշակի նկատառումներով ավելի մեծ տեղ է հատկացվում Հայ ժողովրդի անցյալի պատմության հարցերին, հերոսական դրվագների նկարագրությանը, պատմական դեմքերի գործունեությանը: Այսպես, պարբերականում արատապված է Վարդան Մամիկոնյանի վերաբերյալ պատմական վավերագրում եղած պոեմից մի հատված, որը Հայրենասիրության զգացումներով ու կրոնասիրությամբ է համակում Հայ ընթերցողներին: Պատմության հարցերին նվիրված մի շարք հոդվածներ այսօր էլ դիտական մեծ արժեք են ներկայացնում: Օրինակ, «Ստուգարանական-լեզվագիտական տեսություն» հոդվածը պարունակում է ուշագրավ փաստեր պոլսահայ գաղութի պատմության և պոլսահայ ազգաբնակչության վիճակագրության վերաբերյալ:

Իր պարբերականը հրատարակելով աշխարհաբար, խմբագիրը հորդորում է ընթերցողներին սովորել և ուսումնասիրել զբարբար, կարգալ Հայ Հին գրականությունը, անցյալի պատմիչներին:

Պարբերականում միանգամայն արդարացիորեն արծարծվում էր այն միտքը, որ դիրն ու գրականությունը զարգացնելու գործում կարևոր դեր ունի աշխարհաբարբ, սակայն դրաբարի նշանակությունը երբեք չպետք է թերահանահատել: Այս կարևորություն էր արվում նաև մի քանի լեզուների իմաստությունը և կոչ էր արվում սովորել օտար լեզուներ, կարդալ համաշխարհային մշակույթի մեծերի բանաստեղծական ու իմաստասիրական երկերը: Միաժամանակ պարբերականը հորդորում էր իր ընթերցողներին, արևմտյան մշակույթի արժեքները յուրացնելու հետ մեկտեղ, չչնդվել կրոնի և եկեղեցու հիմնական դրույթներին:

Հրապարակախոսական հոդվածներում խմբագիրն անդրադառնում է նաև արևմտյան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքին: Նա քննադատում է «ոսկու» ու «չափ» մոլուցքով տարված կապիտալի աշխարհի տերերին: Գիտակցելով, որ Արևմուտքում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը ճգնաժամային իրավիճակ է ստեղծում նախակապիտալիստական կարգերում ապրող Արևելքի համար, փորձում է իրավիճակը բարելավող միջոցներ առաջադրել: Եվ ելքը տեսնում է նահապետական անցյալի վերականգնման մեջ:

«Եզանակ Բյուզանդյան» պարբերականում կարևոր խնդիրներից մեկն է համարվում բնական դիտությունների տարածումը: Թե՛ առանձին հոդվածներով և թե՛ նկարներով խմբագիրը իր ընթերցողներին ծանոթացնում է բնական գիտությունների (հանքաբանություն, երկրագործություն, բժշկություն, դեղագործություն և այլն) բնագավառներում եղած նորություններին: Մեկ առ մեկ բացատրվում են թղթի դյուախ, արյան փոխներարկման, էլեկտրականություն ստացման, շոգեմեքենաների և այլ դյուախների օգտակարությունն ու արժեքը գործնական կյանքում:

«Եզանակ Բյուզանդյանում» առանձին ուշադրության են արժանի «օրացույցները», սրոնք տեղեկություններ են հաղորդում եզանակի տեսություն, բնության երևույթների, ստացված բերքի, բժշկության բնագավառում եղած նորությունների, պատմական գործիչների և այլնի մասին:

Ղուկաս Ինճիճյանի այս երկրորդ պարբերականում լայնորեն օգտագործվում է բարոյախրատական խոսքը: Տպագրվում են առակներ և մանրավակեր (թարգմանական), որոնցում զովաբանվում են մարդկային լավագույն հատկանիշները (աշխատասիրություն, ազնվություն, համեստություն, անկեղծություն, բնկերասիրություն և այլն) և, ընդհակառակը, նշավակվում են

վատ հատկանիշները (շողոթորթութուն, ապերախտութուն, հանդգնութուն և այլն):

Պարբերականը գոյատևել է մինչև 1820 թվականը, շուրջ 17 տարի և նույնպես որոշակի արժեք է ներկայացնում հայ մամուլի և համաշխարհային պատմութունն ուսումնասիրողների համար:

## «ԴԻՏԱԿ ԲՅՈՒՉԱՆԴՅԱՆ» (1812-1816)

Մխիթարյան միաբանութան երրորդ պարբերականը «Դիտակ Բյուզանդյան» երկշաբաթաթերթը, լույս է տեսել 1812 թ. , Վենետիկում, դարասկզբին Կոստանդնուպոլսում հիմնադրված «Արշարունյաց ընկերության» նախաձեռնությամբ, աշխարհաբար լեզվով: Պարբերականի առաջին խմբագիրն է եղել Գրիգոր վարդ. Գապարաճյանը: Այնուհետև պարբերականը խմբագրել են Մադաթիա Ֆյուսկյուլճյանը և Մանվել Ջախջախյանը: Թերթին աշխատակցել են Խ. Սյուրմեկյանը, Հ. Ավգերյանը և ուրիշներ:

Գրիգոր Գապարաճյանը ծնվել է 1779 թ. , Կոստանդնուպոլսում: Սովորել է Վենետիկի ս. Ղազար վանքում: Տարիներ անց նա հրաժարվել է միաբանութունից և զբաղվել թարգմանչական, հրատարակչական գործունեությամբ: 1844 թ. Ֆրանսերեն է թարգմանել և Փարիզում լույս ընծայել Եղիշեի «Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին» գիրքը:

«Դիտակ Բյուզանդյանը» թեև ուներ մասագրին հատուկ ծավալ, բայց բովանդակությամբ լրագիր էր, քանի որ տեղեկություններ և լուրեր էր հաղորդում օրվա նորությունների, կատարված դեպքերի, «քաղաքական ու պատերազմական, բանասիրական ու եկեղեցական դիպվածների» վերաբերյալ:

Պարբերականի գաղափարական ու քաղաքական բովանդակությունը վերահսկում էր Մխիթարյան միաբանության ղեկավարությունը: Նյութերի ընտրությունն էլ կատարվում էր նրա ցանկությամբ:

«Դիտակ Բյուզանդյանի» ծրագրի և նպատակների մասին ընթերցողը մտավոր ծանոթություն է կազմում 1813 թ. առաջին տետրակում առաջարանի փոխարեն տպագրված երկու ակնարկներից, որոնք վերաբերում են «Արշարունյաց ընկերության» կազմավորմանն ու նպատակների պարզաբանմանը: Ի դեպ, այդ ակնարկները կարևոր պատմական վավերագրեր են, որոնք լուստարանում են նաև «Արշարունյաց ընկերության» դավանած Հայացքները, նախագծած ծրագրերը, որոնք կոչնակում են Հայրենասիրություն, ազգա-

սիրութիւն և ազատասիրութիւն: Այդ Հանդամանքն իսկ ենթադրել է տալիս, որ երկշարաթաթեթր Նույնպէս պետք է կանգնած լիներ Նույն գաղափարները պաշտպանութեան դիրքերում: Սակայն լուսավորիչ-մտածողների Հայացքների առաջադրման Հայտով ասպարեզ մտած պարբերականը իրականում էջը շեղվում էր խիթարյան միաբանութեան պատգամներից:

Պարբերականը, անդրադառնալով ժամանակի, ինչպէս և անցյալի պատմական իրադարձութիւններին, չափազանց զգուշավոր մտեցում էր ցուցաբերում ժողովրդական ելույթների, Հեղափոխական խռովութիւնների նկատմամբ:

Թերթը պատմական դեպքերը, թագավորների ու զորավարների գործողութիւնները ձգտել է մեկնարանել ճշմարտացիորեն: Այսպէս, մի քանի Համարներում շարունակաբար անդրադառնալով Նապոլեոնի արշավանքներին ու նրա կրած պարտութիւններին, թերթը մեղադրական խոսք է ասում Ֆրանսիական մամուլի Հասցեին նշելով, որ այնտեղ զրաքննիչների թելադրանքով ճշմարիտ լուրեր չեն Հազորդվում Նապոլեոնի ռազմական գործողութիւնների մասին: Նապոլեոնի արշավանքների պարտութիւնները վերագրվում էին այլ գործարներին:

«Դիտակ Բյուզանդյանը» ունեցել է Հատուկ աշխատակիցներ, որոնք պարզ ու Հասկանալի լեզվով Հողվածներ են գրել գիտական աշխարհի նորութիւնների մասին: Նման նյութերը տպագրվել են «Բանասիրական» խորագրի տակ: Իրանք վերաբերում են անվանի գիտնականների կյանքին ու գործունեութեանը, նորագույն գյուտերին, Հնագիտական պեղումներին, անցյալի պատմական կոթողներին, Հնագույն ժողովուրդների վարք ու բարքին: Իսկ «Մետեորականք, բնագնահանք, բժշկականք», «Ջանազան գիտելիք», «Արհեստք և գյուտք» բաժիններում ավելի մանրամասն տեղեկութիւններ են Հազորդվում բնական գիտութիւնների և բժշկութեան բնագավառներում ձեռք բերված նվաճումների մասին:

Թերթն ուներ նաև առևտրականներին նվիրված Հատուկ բաժին, որը կրում էր «Վաճառականութիւն» անունը: Այս բաժնի նյութերում նկատի էին առնվում Հայ վաճառականների պահանջները: Հիմնականում լուրեր ու տեղեկութիւններ էին Հազորդվում եվրոպական մաքսատների, մաքսագների, Ռուսաստան և այլ երկրներ արարանքներ փոխադրելու թույլտվութեան և այլնի մասին:

Հայտնի է, որ Մխիթարյան միաբանության գործիչները եղել են արվեստի և գրականության սիրահարներ: Հասարակ ընթերցողի համար երկչաբաթաթերթի էջերում տպագրվել են ոչ այնքան բարձրարվեստ արձակ և չափածո գործեր բարոյախոսական ընդգծված միտումով: Իսկ խմբագրի հանձնարարականով գրված թագավորներին ու զորավարներին նվիրված ձոները և ներբողները տպագրվել են զրաբար: Յուրաքանչյուր ներբողին կամ բանաստեղծությանը կցված է ռամկախառն աշխարհաբարով գրված հատուկ մեկնաբանություն: Նման բանաստեղծությունների, ինչպես նաև չափածո երկխոսությունների թիվը մեծ է:

### «ԲԱՉՄԱՎԵՊ» (1843 -ից)

«Բազմավեպ» օրագիրը բնական, տնտեսական և բանասիրական գիտելյաց, աշխատասիրություն Մխիթարյան միաբանից» վերտառությամբ 1843 թվականի կեսերին հայագրի ընթերցող ու գիտական հասարակայնությանը ներկայացավ Վենետիկի Մխիթարյան միաբանության հերթական պարբերականը: Անվանումը թեև նոր էր, բայց անսովոր էր: «Մանուցումով» պարբերականը ընթերցողների համար մեկնաբանեց իր իսկ «Բազմավեպ» անունը, այսինքն բազում բաներ վիպող, բազմապիսի բաներ պատմող:

Ժամանակին մտորումների տեղիք է տվել Հարցերի ընդգրկման այն շրջանակը, որին որոշել էր անդրադառնալ պարբերականը: Մրադրված էր քննության առարկա դարձնել «բնական», այսինքն հասարակության, նրա զարգացման ու ներքին օրինաչափությունների բացահայտման հետ կապվող Հիմնահարցերը, ինչպես և քննել տնտեսական խնդիրները, որոնք պետք է ներառեն ազգային-տնտեսական կացութաձևն իր օրինաչափություններով: Բնականաբար, շատ անհրաժեշտ էր դրանց հետ միաժամանակ քննության առարկա դարձնել «բանասիրական» և մանավանդ հայ բանասիրության բնագավառի բազմակնճիռ խնդիրները, այսինքն՝ բնագրերի քննական հրատարակություններ, անտիկ և նոր շրջանի դասականների՝ այլևայլ լեզուներից կատարվող չափածո և արձակ թարգմանություններ, տեսական-գրականագիտական խնդիրներին առնչվող «դատումներ» և այլն: Նման լայնանիստ ընդգրկումը հիմք էր տալիս պնդելու, որ այդպիսի իրար բացառող խնդիրները մի պարբերականում մեկտեղելը էլք կարող խելացի ու խոհմե քայլ համարվել: Նվ գարմանալի էր, որ «Բազմավեպի» ծնունդը ողջունող մեր մյուս



պարբերականը Զմյուռնիայի «Արշալույս Արարատյանը», ուրախությամբ արձանագրելով Հանդերձ «գրականական իր կրտսեր եղբոր» աշխարհ գալու Հանելի փաստը, մտավախություն էր Հայտնում, որ «խնդիրներուն ընդգրկու-մին մեծկտկությունը ապահովարար, անոր կործանումին պատճառը կրնա ըլլալ»:

Այս էր սովորեցնում Հայկական պարբերական հրատարակութեան ոչ այն-բան երկարատե փորձը, սակայն իր «Բազմավեպի» նկատմամբ բոլորովին էլ այդ կարծիքը չունէր նրա առաջին խմբագիրը, գործունյա ու աշխատասեր Գարրիել Այվազովսկին, որն իր գիտական-մշակութային ու հասարակական գործունեութեան ամենածաղկուն տարիքում երեսունմեկ տարեկանում ստանձնել էր խմբագրապետի պարտականութիւնները և այդ պատասխա-նատու գործը կատարում է շուրջ վեց տարի (խմբագրական մարմնի անդամ-ներն էին Ղեկնդ Ալիշանը և Հովհաննես Սորիուճյանը):

Հարցն այստեղ սոսկ և միայն Ֆինանսական օժանդակութիւնը էջը, որով «Բազմավեպն», ի դեպ, երբեք էլ առանձնապես ապահովված չեղաւ, չնայած նրան սիրով Ֆինանսավորում էր Հովհաննես ամիրա Տատյանը: Խոսքն այս-տեղ վերաբերում էր ճակատագրականորեն կարեւոր երկու այն Հիմնահարցե-րին, որոնք դամոկլյան սրի նման մշտապես և սպառնալիտորեն կախված են ե-ղել Հայկական, առանց բացառութեան, բոլոր պարբերականների զլխին և ո-րոնք առաջնահերթորեն լուծել չկարողանալու դեպքում նրանց խմբագիրնե-րին մնում էր իրենց «ուղեղին, միտքին, հոգիին և ջիղերուն արդասիքին» (Հ. Պարոնյան) «մահվան» անփառունակ հուղարկվորը դառնալ:

Այդ խնդիր-հիմնահարցերից առաջինի, այսինքն Հնարավորին չափ բարձր գիտական մակարդակ ունեցող Հողվածագիրներին ու թղթակիցների մշտական ու հաստատուն քանակակազմով ապահովվելու հոգս ու ցավից պարբերականի խմբագրական մարմինն ու նրա խմբագիրը հիմնականում եր-կյուղ չունեին: Մեզ Հետաքրքրող ժամանակաշրջանում միաբանութիւնն ըստ ամենայնի արդեն երեւակել էր իրեն և աշխարհին էր ներկայանում Հայագրի վարդապետ-մտավորականների այնպիսի մի պատկառելի Համախումբով, որոնց մեծ անունն ու անկապտելի Համբավը լայնորեն տա-րածված էր ամենուրեք: 1840-ական թվականներին իրենց գրական-Հայագր-տական փառքի զենիթում էին Արսեն Բազրատունին, սկզբնական շրջանում Առան Սիսակյանը, Գարրիել Ավետիքյանը, Վրույր Որմզդանը էդուարդ Հյուրմյուղյանը, Վահրամ Ռուրինյան անվամբ «պաճուճյալ» Մանվել Զախ-

ջախյանն ու «Անտիդիոս Միրիացի» կեղծանունով հայտնի եղիա Թովմաճյանը: Միաբանության մտավոր-գիտական կյանքում արդեն ճանաչում ու անուն էին ստացել Գաբրիել Այվազովսկին, Պետրոս Մինասյանը, Օգեսնտինիոս Գուրգենյանը, Գրիգորիս Ծելալյանը, Հակոբոս Իսավերտենցը: Վերջապես իրենց աշխատանքներով սկսել էին երևալ ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ՝ Գարեգին Զարհանալյանն ու Հարություն Թերզոնցը (նաև Հարություն Գազեզյան), հետագայի հուշակավոր նորայր Բյուզանդացին, Ղևոնդ Մարգարյանը, 1860 թվականներից՝ Ղևոնդ Ալիշանը, Համազասպ Թերջիմանյանը, Մանվել Քաջունին և էլի ուրիշներ: Այս ամենը դալիս է հավաստելու այն կարևոր փաստը, որ «Բազմավեպ» պարբերականի թիկունքին, սկսած նրա առաջին իսկ համարից, կանգնած էր հայ մտավորականների այնպիսի մի պատկառելի համաստեղութուն, որից ավելի լավը դժվար կլինեին երևակայել և որպիսին անգո բաղձանք ու երազանք մնաց հայկական հին ու նոր ժամանակների՝ առանց բացառության բոլոր պարբերականների ու նրանց խմբագիրների համար: Այս էր ահա այն առաջին հիմնական պատճառը, որ «Բազմավեպը» սկզբից իսկ կարողացավ հայազիտական - բանասիրական - թարգմանական - պատմահասարակական այնպիսի բարձրագույն մակարդակ ապահովել և, հենարան ունենալով գերազանցապես իր երիտասարդ ու տաղանդավոր վարդապետ-թղթակիցներին, մեր մշակույթի հիշատակված բնագավառներում այնպիսի աննախագեպ աստիճանի հասնել, որ միանգամից հեղինակութուն ապահովեց իր համար: Եթե արձանագրենք միայն, որ տարիների ընթացքում «Բազմավեպում» տպագրված նյութերի անվիճելիորեն գերակշիռ մասը հաջողությամբ դիմացավ ժամանակի խստաշունչ քննությանը և իր գիտական-մասնագիտական արժեքը պահպանեց նույնիսկ այսօր ու մեր օրերում, ապա մեր ասելիքը կամբողջանա:

Պակաս ճշտորեն և պարբերականի մշտական գոյությունն ապահովելու տեսակետից հարկավոր հասարակահայեցությամբ ու գիտակցությամբ չլուծվեց նաև մյուս հարցը, այսօրվա ձևակերպումով ասած՝ «Բազմավեպ» - ընթերցող հասարակութուն» փոխհարաբերության հարցը: Արտահայտելով, անուշտ, ամբողջ միաբանության դիրքորոշումը՝ Այվազովսկին ճշտորեն նպատակաուղղեց ամսագիրը այն գաղափարական միտվածությանը, որ նրան տալ խոտիվ կրոնաստովածաբանական, եկեղեցական թեքում, որոշակիորեն կնշանակեր դարգացման անհեռանկար հորիզոններ բանալ նրա համար և նոր-նոր սկսած գործը գեռ խանձարուրում կործանման դատապարտել: Այս էր

պատճառը, որ «Բազմավեպը» ոչ միայն Հիմնականում չզբաղվեց այդ թեքումն ունեցող Հարցերի նեղ - մասնագիտական քննությունը, այլև ո՛չ սկզբում և ո՛չ էլ հետագայում իր նախատին չունեցավ «կրոնական» կամ «կրոնաստիճարանական» կամ նման բնույթի որևէ այլ ենթախորագիր, ինչ որ առաջին Հայացքից ավելի տրամաբանական պիտի լիներ նրա Համար, քանի որ այն հոգեկորական-կաթոլիկական միաբանությունից պարբերական էր: Իհարկև, ժամանակի և Հասարակական-քաղաքական այլևայլ պայմանների բերումով, տարբեր տարիների ընթացքում Հրատարակվեցին ոչ քիչ թվով հոդվածներ, որտեղ դրվառվեց «Հոովմեական ուղղափառ կաթոլիկե Հավասար», մեկից ավելի գեղարվեստական ստեղծագործություններ, որոնց հերոսները Հոլարտանում էին իրենց «Հոովմեադավան ըլլալով», որոնք պայթարում կամ նույնիսկ դոհվում էին այդ Հավատի Համար, խիստ բացասական հոդված Հրատարակվեց «Էվմեն Սյու գաղղիացի մատենագրի» մասին, իսկ նրա «Թափառական Հրեան» բնութագրվեց որպես «վնասակար գիրք, որ լի է ամբարշտական և աղտեղի տեսարաններով» (1846, № 7), դրվեց վերջապես, առանձին հոդված, որտեղ «տեսություն» զարգացվեց այն մասին, որ «Էվմեն Սյուի «Փարիզին գաղտնիքները», Շիլլերի «Վիպասանական ողբերգությունը», Գյոթեի «Վերթեր» վիպասանությունը, Ալ. Դյումայի «Մոնտե-Քրիստոս», Վիկտոր Հյուգոյի «Թշվառները»... քողարկյալ ունին իրենց մեջ և իրենց թույնը և ապականությունը և մեր ազգին Համար վաղաժաման են և տարածամ» (1868, № 7) և այլն, բայց նույնիսկ այս պարագայում «Բազմավեպի» Համար կրոնադավանարանական կնճռոտ սխալաստիկան կամ Հավատաքննական Հարցերի մերկապարանոց արծարծումն առանցքային Հարց ու նշանաճողային նպատակ չեղավ: Դիրքորոշման այսպիսի հեռատես «ընթացքով» պարբերականի խմբագրությունը միանագամից կարողացավ երկու նպատակի հասնել: Նախ ոչ կաթոլիկ Հայությունը, որն, ինչպես Հայտնի է, կազմում էր Հայ ժողովրդի անվիճելիորեն գերակշիռ Հատվածը, ոչ միայն թշնամանքով ու ատելությունը չլցվեց «Բազմավեպի» աստիճանաբար Հրատարակվող պրակների դեմ, այլև, որ շատ կարևոր էր, անՀապաղ դարձավ նրա մշտական ընթերցողն ու բաժանորդագիրը: Եվ ապա կաթոլիկ Հայություն էլ նկատելով, որ «Բազմավեպը» պատեհառիթ դեպքերով ու անՀրամեշտություն թեկադրությունը է միայն անդրադառնում Հոովմեադավանությունից Հարցերին և, որ առանձնապես ընդգծելի էր, այդ ամենն արվում էր

Համապատասխան հրապարակախոսական տակտի պահպանումով, այդ հավատը գիտահանրամատչելի մակարդակով ժողովրդին բացատրելով ու մեկնաբանելով և ոչ թե այն ուղղագծորեն պարտադրելով ու հարկադրելով, նույնպես օգնություն ու պաշտպանություն ձեռք մեկնեց նրան: Դժվար չէ նկատել, որ սա այն խորիմաստ քաղաքականությունն էր, որն իր գործունեություն արշալույսին այնպես հանդամանորեն ու դիվանագիտական շրջահայեցություններ մշակել էր միաբանություն հիմնադիրը Մխիթար Սեբաստացին:

Կար նաև «Բազմավեպ» - ընթերցող Հասարակություն» փոխհարաբերություն մի ուրիշ կարևոր կողմը ևս, որը պարբերականի խմբագրությունը, հավանորեն ներքին երկարատև մտաբախումներից հետո, դարձյալ կարողացել էր հեռանկարային առումով ճիշտ լուծել: Պարբերականի խմբագրությունն ու խմբագիրը, Հանդիսանալով, անշուշտ, ամբողջ միաբանության գաղափարական ձայնափողը, Հիանալի գիտեին, որ հայ ժողովուրդը բաղկացած էր սոսկ բանասեր-տեքստաբաններից կամ գրականագետ-գրադատներից կամ Լամարթինի, Շատոբրիանի, Ռուսսոյի, Լոնգֆելլոյի, Լամբենի գեղարվեստական ստեղծագործությունները որպես հոգևոր հանապազօրյա սնունդ ընդունելու մակարդակին հասած ընթերցողներից, որոնք, ինչ խոսք, XIX դարի սկզբնական ժամանակահատվածում բացարձակ փոքրամասնություն էին կազմում: Կար նաև հողի աշխատավորը իր բազում հոգս ու ցավերով, կար «տնայագործ-ընտանեկանը», որը նույնպես իր բազմաբնույթ անլիքներն ուներ ընտանիքի հետ կապված ոչ քիչ թվով հարցերում, կային «գործի մարդիկ», որոնց գործունեություն ոլորտը առևտուրն էր, ֆինանսական շրջապտույտն ու «գրամական արժեքին կրկնապատիկը ստանալը», կային վերջապես, «սովորական» ընթերցողներ, որոնց համար հաճելի ու ցանկալի էր զանազան բնույթի առտին տեղեկություններ իմանալ աշխարհի չորս ծագերում տեղի ունեցած հետաքրքրաշարժ իրադարձությունների մասին կամ իմանալ երգի-ծախառն միջադեպեր համաշխարհային անուն ու ճանաչում ունեցող մարդկանց կյանքից և այլն: Եվ պարբերականի նաև այս կապակցություններ մշակած աշխատանքային գործելանշանակը ավելին ցանկանալու հիմք էի տալիս, այն է՝ գիտական-հասարակական, բանասիրական, թարգմանական, կրոնաստիճաբանական բնույթի մեծարժեք ու ծանրակշիռ աշխատություններից զատ ըստ հնարավորին անդրադառնալ ամեն տիպի ու բովանդակություն հարցերի, որոնք, համապատասխան մակարդակն ունենալով հանդերձ, վերաբերեին ժամանակի հասարակական կյանքի գրեթե բոլոր ո-

յորաներին: «Բազմավեպի» Հենց առաջին 1843 թ. № 1-ում, օրինակ, գետեղ-  
ված է Ա. Լամարթիինի «Աղօթք մանկան զարթուցելոյ» բանաստեղծության  
ֆրանսերեն բնագրից կատարված զրաբար չափածո թարգմանությունը, և  
նույն Համարում կա Հոգված «Շերամ սնուցանելու կերպը» խորագրով:  
Նույն թվականին № 16-ում Ղևոնդ Մարգարյանը, այսինքն Ալիշանը, «Հայոց  
ազգին պարծանքները» խորագիրը կրող Հոգվածում գիտաբանասիրական  
տեղեկություններ է Հաղորդում Հայկ Նահապետի մասին, բայց և նույն Հա-  
մարում Մանվել Սոֆյայայանը Հոգված ունի «Ակոռայի ցավին այլևայլ դեղեր»  
խորագրով: «Բազմավեպը» 1844 թ. № 19-ում Հրատարակում է Էդուարդ  
Հյուբյուշյանի պոեզիայի դերին ու նշանակությունը նվիրված տեսա-  
կան-փերյուծական Հոգվածը և նրա «Հովիվ և Հովվուհի» գեղոնը, և դրանից  
անմիջապես Հետո Հոգվածներ օգապարիկի թոխիքի, շների տարբեր տեսակ-  
ների ու նրանց խնամելու մասին: 1847 թ. № 12-ում «Բազմավեպը» Հրատա-  
րակում է Ղևոնդ Ալիշան-Նահապետի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծու-  
թյունը, որի գրապատմական մեծ դերի մասին այստեղ խոսելն ավելորդ է, և  
դրանից Հետո տեղեկություններ ընձուղտի, երկաթի ստացման եղանակի մա-  
սին և այլն: Հայ Հանրության առանց բացառություն թուր խավերին ըստ իր  
Հնարավորությունների ու կարողությունների «սպասավորիչ ըլլալու» աշ-  
խատանքային այս գործընկերանակը «Բազմավեպը» շարունակեց ամբողջ  
XIX դարի ընթացքում: Եվ այս առիթով խմբագրություն պնդումը, որ «Բազ-  
մավեպը» իր ծննդյան օրեն իսկ նպատակ ունեցած է է երբեք մեկ տեսակետ և  
կամ մեկ դասակարգ ընթերցողներու, այլ ժողովուրդը», առավել քան ճշմար-  
տացի էր և բնութագրական:

Իր ժողովրդին ծառայելու նպատակադիր զազափարով առաջնորդող  
պարբերականը, բնականաբար, պետք է որ լուծեր նրա Հետ ըստ Հնարավորին  
ճիշտ Հաղորդակցվելու, նրան Հասկանալի ու ըմբռնելի լինելու, այսինքն  
Հայոց լեզվի որպես «աշխատանքային» գործամիջոցի խնդրում ճիշտ կողմնո-  
րոշվելու ամենևին էլ ոչ գյուրընկալ խնդիրը: Գաղտնիք է է, որ դեռ դա-  
րասկզբից ծայր առած դրաբար-աշխարհաբար Հակամարտությունը իր Հա-  
րաճուն տեսականությամբ շարունակվում էր Հենց «Բազմավեպի» Հրատա-  
րակություն առաջին իսկ տարիներին և դրանից շատ Հետո էլ, և որ մի շարք  
անուն ու կշիռ ունեցող մեծություններ Հորդորում, Համոզում էին Հայրենա-  
կից Հայագիտներին գրել միմիայն գրաբարով, քանզի աշխարհաբարը ընդա-

մենը բամկական լեզու էր: Գրաբարի այսպիսի կրքոտ պաշտպաններն ու ջատագովները քիչ չէին հենց Մխիթարյան միաբանության ներսում: Եվ այս պայմաններում «Բազմավեպը» կարողացավ հիմնավորապես դիմադարձ լինել գրաբարից և իր ընթերցողների հետ հաղորդակցվելու համար ընտրեց արևմտահայերենը: Համարձակ մի քայլ էր այս, որը թեև առատ նյութ ու հիմք տվեց ընդդիմադիր մտայնության ներկայացուցիչներին, որոնք բազմիցս հանդես եկան լեզվի հարցում «Բազմավեպի» մշակած ընթացքի դեմ, բայց ի վերջո հաղթութունը վիճակված էր պատմականորեն նորին ու առաջավորին արևմտահայերենին: Գրական արևմտահայերենը աստիճանաբար դարձավ պարբերականի, եթե կարելի է այսպես ասել, «սեփական» լեզուն, անընդհատ գործածվելու և, հետևաբար, կատարելագործվելու հետևանքով ըստ ամենայնի մաքրվեց անհարկի փոխառված բառերից, ոճերից ու դարձվածքներից դառնալով ավելի ողորկ ու կոկիկ, և այդպես էլ շարունակեց իր կյանքը ընդհուպ մինչև մերօրյա «Բազմավեպը»:

Սկսելով իր գործընթացը այսպիսի լայն նախապատրաստություններ և աշխատանքային մեծապես ճշգրտված ներքին քաղաքականություններով «Բազմավեպը» XIX դարի 60-70 թվականներից վճռականորեն արեց նաև մյուս համարձակ քայլը, Գաբրիել Այվազովսկուն հաջորդած մյուս խմբագիրների Ղևոնդ Ալիշանի, Հմայակ Պապիկյանի, Աթազինես Ղափթանյանի և մանավանդ Հակոբոս Իսավերտեսցի տարիներից սկսած, նա «Նյուրասիրաբար» սկսեց իր էջերում տեղ տալ հայ մտավորականության ամենատարբեր բնագավառի ներկայացուցիչներին, որոնք ոչ միայն Մխիթարյան միաբանության անդամ չէին, այլ նույնիսկ հոգևորական չէին և, դեռ ավելին, անդամ էին հակընդդեմ որևէ այլ կրոնական կազմակերպության: Այս էլ էր առավել քան զարմանալի նորություն կրոնական միաբանության խոսափող պարբերականի համար: 1850-ական թվականներից սկսած, նրա էջերում, «Աղգային կամ Հայախոս առածք» ընդհանուր խորագրի ներքո, պարբերաբար սկսում է հանդես գալ էջմիածնի, այսինքն կաթողիկոսների նկատմամբ հակընդդեմ միաբանության անդամ Աբել Մխիթարյանը: Նույն թվականներին ապրանքի գնողունակ արժեքը որոշելու, «ստակին շահը ճշտիվ օգտագործելու» վերաբերյալ հոգվածներով հանդես է գալիս պոլսահայ տնտեսագետ Նիկողայոս Զորայանը: 1851 թ. նոյեմբերից «Բազմավեպը» սկսեց հրատարակել Ա. Լամարթինի «Լոնտրայի մեջ առավոտ մը, կամ պահպանողական ու աշխարհակործան ընկերականություն» հոդվածը, որը ֆրանսերեն բնագրից արև-

մտահայերեն էր թարգմանել Փարիզի առևտրական բարձրագույն վարժա-  
րանի ուսանող Կարապետ Ությունյանը, որն, ի դեպ, 1848 թվականի  
փետրվարյան Հեղափոխության ժամանակ, մի քանի անգամ խոսել էր թե՛ կա-  
թոլիկ Հավատի և թե՛ նրա գաղափարախոսների դեմ: 1854 թ. Հունվարին  
«Բազմավեպը» Հրատարակում է Երզնկայի քահանա տեր Ստեփանի «Անի  
կամ Գամախ ամբոց» տեղադրական Հոդվածը, որը խմբագրությունն էր առա-  
քել Սերոբբե Պետրոսյան-Պատկանյանը, իսկ երկու տարի անց Ֆրանսերենից  
կատարված արևմտահայերեն թարգմանություններով պարբերականում  
սկսում է Հանդես գալ Կ. Պոլսում իր գերասանական գործունեությունն արդեն  
սկսած Սրապիոն Թղլյանը: 1861 թ. մարտին «Բազմավեպը» Հրատարակեց եր-  
կարաշունչ գրաբար մի բանաստեղծություն, որի Հեղինակը կին էր Սրբուհի  
Աստվածատուրյան: Մի երևույթ, որը եզակի էր ու բացառիկ, եթե միտ առ-  
նենք մանավանդ, թե ինչպիսի միաբանություն ձայնափողն էր «Բազ-  
մավեպը», և ովքեր էին տեղ գտնում նրա էջերում: Եվ 1864 թվականի օգոս-  
տոսին «Պոլսեցի օրիորդ մը» ստորագրությամբ տպագրված «Գարուն»  
գողարկի բանաստեղծությունը եկավ ազդարարելու Հայ գեղարվեստական  
գրականության անդամատնում մի նոր դասականի Սրբուհի Տյուսաբի Հայտո-  
նություն փաստը: Աշխատանքային այս կարգաճեց աստիճանաբար և Հիմնա-  
դրապես ամրապնդվեց «Բազմավեպի» Հետագա տարիների գործունեության  
մեջ, և այդ էր պատճառը, որ նրա էջերում Հանդես էին գալիս Թովմաս Թեր-  
զյանը, Մկրտիչ Աճեմյանը, Էմմանուել Եսայանը, Թիֆլիսարնակ բանասեր  
Գալուստ Ծերմազանյանը (սկզբնական շրջանում Ծերմազանյան-Վար-  
դանյան), Նորայր Բյուզանդացին, պոլսահայ մտավորականներ Կարապետ  
Բեիզյանն ու Հովակիմ Երամյանը և ուրիշներ: Երևույթի բնականոն  
Հետևանքն այն եղավ, որ «Բազմավեպը» տարիների ընթացքում կարողացավ  
Հաստատուն ու Հիմնավոր մուտք ունենալ աշխարհի տարբեր ծայրերում  
բնակվող բոլոր Հայազգի ընթերցողների կացարանները, դարձավ նրանց սե-  
զանի պարբերականն ու սպասվելիք Հոգևոր սնունդը, դարձավ և, սա թերևս  
ամենակարևորն էր, նրանց մտավոր-գիտական ոգորումները կազմակերպող,  
ընթացք և ուղղություն տվող առաջագիծ ամսագրերից մեկը: Ուստի Հաս-  
կանայի է «խմբագրական մարմնի» չթաքցված ոգևորությունը, երբ 1870-ա-  
կան թվականներին իր ընթերցողներին Հպարտությունամբ տեղեկացնում էր, որ  
«Բազմավեպը» տարածվում է մինչև Կ. Պոլիս, Ջմյունիս, Կալիաթա, Բազ-

դառ, Կարին, Եգիպտոս, Փարիզ, Լոնդոն, Մոսկվա, Թիֆլիս, Բաքու «և մեկալ  
Հայաշատ վայրք»:

Այսօր էլ, Հարյուր վաթսուև տարիների պատկառելի վաստակով ծանրա-  
բեռ, շարունակում է իր ընթացքը Վենետիկի Մխիթարյան միաբանության  
«Բազմավեպ» Հայագիտական, բանասիրական, գրական Հանդեսը՝ արդա-  
րացիորեն վայելելով Հայ ժողովրդի երիցագույն պարբերականը լինելու  
բարձր փառքն ու պատիվը: Ժամանակներն ու Հասարակական-քաղաքական  
փոթորակահույզ իրադարձությունները, ինչպես այդ սպասելի էր ու բնական,  
իրենց անբեկանելի կնիքը դրեցին նրա «գոյապահպանման ընթացքին» վրա,  
որի Հետևանքով էլ, սկսելով իր արդյունաշատ գործունեությունը որպես  
երկչաբաթաթերթ, այն տարիներ Հետո «վերածնվեց» որպես ամսագիր, ապա  
«Նոր շարք» ընդհանուր խորագրի ներքո դարձավ եռամսյա Հանդես: Մի  
Հայտնի ժամանակ անց Հաջորդեց վերադարձը դեպի ամսագրային  
պարբերացումը, ապա դարավերջի և դարասկզբի անագորույն դեպքերի  
Հարկադրական ճնշման ներքո «Բազմավեպը» դարձավ տարեգիրք: Արդեն  
մեր օրերում, այսինքն՝ քսաներորդ դարի քառասնական թվականներից  
սկսած, պարբերականը ստացավ «Հայագիտական, բանասիրական, գրական  
Հանդես» հորջորջումը, որը և պահպանում է առ այսօր: Պարբերականություն  
բնագավառում եղած այս մեծ ու փոքր փոփոխությունները, սակայն, գի-  
տական-Հայագիտական բնույթի որակական վերվարումների խոստելի  
երևույթը չունեն իրենց մեջ: Հարյուր վաթսուև մեծ ու փոքր Հատորների մի  
ամբողջ գրադարանով Հայ ժողովրդին ներկայացող «Բազմավեպը» միշտ էլ  
կարողացել է պահպանել գիտական բարձր մակարդակը և այդ բնագավառի  
առաջատարներից մեկը լինելու անկապտելի իրավունքը: Այսօր Հանդեսը  
պաշտոնապես գիտվում է որպես սուրբ Ղազարի «Հայկական Ճեմարանի»  
(«Academia Armena») անդամների գաղափարական ու գիտական խոսնակը,  
«Հայկական Ճեմարանի», որի Հիմնադրումը դարձյալ գալիս էր XIX դարի  
40-50-ական թվականներից, և որը, մշտապես համալրվելով Հայ և օտարազգի  
Հայագետների պատկառազողու փաղանդով, հարատևում է առ այսօր: Հան-  
դեսի խմբագրությունը շարունակում է գրական-աշխատանքային այն  
սկզբունքները, որ ժառանգել էր դեռ Գարբիել Այվազովսկու ժամանակնե-  
րից: Այն է՝ միաբանության անդամ տվյալ հեղինակի՝ արդեն ավարտված աշ-  
խատությունը նախ հատվածաբար հրատարակել պարբերականի էջերում,



Հանախ մի քանի տարի շարունակ, և ապա, ընթերցողների այլևայլ բնույթի կարծիքները Հաշվի առնելուց հետո, այն վերահրատարակել առանձին գրքով: Եվ Հանդեսի ջանքերով այսօր ստեղծվել է Հայագիտական-բանասիրական գրականությունից մի ամբողջ շարք «Հայագիտական մատենաշար Բազմավեպի» ընդհանուր վերատառուծյամբ, որի ներքո առանձին գրքույկներով Հանդես եկած թե՛ Հայագրի և թե՛ օտարալեզու հեղինակների մեծ ու փոքր աշխատություններն այժմիսն բաղձալու Համար Հիմք Հեն տալիս: Դրանցից են՝ Վենետիկում տպագրված Պողոս Անանյանի «Սերբոսի պատմության գրքի մասին քանի մը լուսարանություններ» (1973), Մեսրոպ Ծանաշյանի «Պետրոս Գուրյան, դար մը ետք» (1974), Լևոն Զեքիյանի «Հայ թատրոնի սկզբնաբայլերը և Հայ Վերածնունդի շարժումը (Համադրական Հայացք)» (1975), Տաճատ Յարգրմյանի «Քեսուռի Կարմիր վանքը» (1976) աշխատությունները, ոչ Մխիթարյան հեղինակներից Մարտիրոս Մինասյանի «Նախդիրների օգտագործումը դասական Հայերենում» (Ֆրանսերեն, 1981), Գրիգոր Պլլտյանի «Գրիգոր Նարեկացիի լեզվի սահմաններուն մեջ» (1985) և այլն, որոնք մնայուն արժեքներ են մեր դասական Հայագիտության անդամատանում:

Այսպիսին է «Բազմավեպի» Վենետիկի Մխիթարյան միաբանությունից ճանաչված Հայագիտական Հանդեսի և Հայկական իրականության ամենաերկարակյաց պարերականի ծավալած Հայագիտական-բանասիրական ընթացքի Համատար բնութագիրը և հետևաբար Մխիթարյան միաբանության դիտաաշխատանքային և ազգային-հասարակական գործունեությունից ևս մի կողմի բացահայտումը: Այսօր էլ Հանդեսը շարունակում է իր այդ մեծ գործունեությունը յուրօրսանն մշակելով մեր «Հայկարանական դիտությունց» այն ճյուղը, որի նախակարապետն ու առաջատարն է եղել այժմիս քան մեկ ու կես դար:

### «ԵՎՐՈՊԱ» (1847-1863)

«Եվրոպա» շարաթաթերթը (հետագայում կիսամսյա) հրատարակել է Վիեննայի Մխիթարյան միաբանությունը: Այն խմբագրում էր միաբանների մի խումբ, իսկ 1863 թ. պատասխանատու խմբագիր նշանակված Վարդան Ըստկարյանը: Շարաթաթերթի հրատարակությունը լուրջ մասնակցություն են բերել միաբանության անդամներ, լեզվաբան Ղևոնդ Հովնանյանը և պատմաբան Եփրեմ Զազրճյանը, որոնք աշխատանքի բերումով ևս կապված էին հրատարակչական գործի հետ: Հովնանյանը միաբանությունից տպարանի

տնօրենն էր 1846-1854 թթ. , իսկ Չազըճյանը՝ 1856-ից հետո: 1847-1857 թթ. թերթը քաղաքական և ուսումնական ուղղվածություն ունեւր, բայց 1858 թվականից եվրոպական երկրների քաղաքական իրադարձությունների մեղմացման կապակցութամբ փոխոււմ է բնույթը և ընդունոււմ ըմտանկան օրագիր նոր անվանոււմը: Ամենօրյա քաղաքական հարուստ լրատվությունից անցնելով ուսումնադաստիարակչական խնդիրների լուսաբանության խմբագրությունը մեծ տեղ է հատկացնոււմ գիտական բազմաբնույթ հոդվածներին, բանասիրական ուսումնասիրություններին և գրական ստեղծագործություններին: Քաղաքական լրատվության բաժինը պահպանվոււմ է, բայց համեստ չափերով:

1850 թ. շաբաթաթերթի գործուն աշխատակիցներից մեկը՝ բառարանագիր և հայ մամուլի առաջին պատմաբան Փիլիպոս վարդապետ Ճամճյանը, խոսելով «Եվրոպայի» հիմնադրման շարժառիթների մասին, նշոււմ է, որ դեռևս 1843 թ. մեծահարուստ ազգասեր Հակոբ Չելեպի Տյուզյանը միաբանությունը խորհուրդ է տվել հիմնադրել եվրոպական տիպի մի պարբերաթերթ, որոււմ բանասիրական բաժին նյութերից բացի նկարագրվելին եվրոպական երկրների պառլամենտներոււմ տեղի ունեցող անցուղարձեքը, հաղորդվեր բանավեճերի և ելույթների բովանդակությունը, ինչպես և տրվեր վստահելի աղբյուրներից քաղված դեպքերի տեսությունը: Ճամճյանի խոստովանութամբ այդ օրերին իրենք չեն համարձակվոււմ ձեռնարկել պատասխանատու այդ գործը, բայց երբ Տյուզյանն այդ առաջարկը կրկնոււմ է 1847 թ., նույն թվականի հուլիսից միաբանությունն սկոււմ է «Եվրոպա» շաբաթաթերթի հրատարակությունը նշանաբան ընտրելով Աստված, Հայրենիք և Գիտություն խորհրդանշական բառերը:

«Եվրոպա» շաբաթաթերթի հրատարակության առաջին տարիները համընկնոււմ էին Ֆրանսիական հեղափոխության և մի շարք երկրներոււմ սկսված ազգային-ազատագրական շարժումներին, և խմբագրությունն ամենից առաջ ջանոււմ էր ընթերցողներին ստույգ լուրեր հաղորդել մեկնաբանված անկանխակալ դիրքերից, մի բան, որ, ի պատիվ խմբագրության, զարմանալի հետևողականութամբ պահպանվոււմ է թերթի հրատարակության տարիներին: Այս առումով միանգամայն իրավացի էին Մխիթարյան լրագրողները, երբ 1849-ի վերջին տրված հայտարարության մեջ նշոււմ էին, թե «Եվրոպայի երևելի ազգերուն գրածներն իրարու հետ բաղդատելով և անաչառ ու ազատ դատաստան ընելով ճշմարիտ ու հաստատոււմ տեսած լուրերնիս մեր

հարզի ընթերցողներուն անշնչ իրրև ստույգ դրոճը» («Եվրոպա», 1849, № 24, էջ 93, բնագծ. մերն է - Մ. Մ.):

Մխիթարյանները, որ գտնվում էին եվրոպական Հեղափոխությունների օջախում՝ Վիեննայում, խորությամբ էին ընկալում պատմական ժամանակաշրջանի ոգին: 1847-1849 թթ. իրադարձություններն իրենց բարոյա-քաղաքական նշանակությամբ Հավասարագոր էին մեկ դարի պատմական դեպքերի: Հիրավի, Եվրոպայի որոշ երկրներում ընդունված սահմանադրությունները, այլ երկրներում Հաստատված Հանրապետական կարգերը կամ դրանք մտցնելու ջանքերը, ազգային-ազատագրական բուռն շարժումները, գաղափարական ու դեմքի կոնֆլիկտները - այսպիսին էր իրավիճակը երկրում, և այդ բարդ անցուդարձը ներկայացնում էր «Եվրոպա» շաբաթաթերթը:

Հայ ժողովուրդը, որ ապրում էր այդ երկրներում, չէր կարող մնալ սոսկ զիտոցի դերում: Նրա ապրած Հոգևոր վերելքի և քաղաքական դարձնիքի մասին խմբագրությունը գրում է. «Ասանկ այնկո՞ծ ժամանակի մեջ ինչպես ուրիշ շատ ազգերուն, նույնպես մեր ազգին ալ քաղաքական ոգին նոր արթնացավ, ու Հառաջագույն միտ չդրած բաներուն Հիմա սկսավ միտ դնել: ... Մեր ազգն ալ Եվրոպայի այնկոծությանց Հետ մեկտեղ սկսավ մտքով ելլել իջնալ ու քաղաքական կարծիքներու նկատմամբ այլևայլ կողմնակցություններու բաժնիլ» (1849, № 24, էջ 93):

Նկատի ունենալով Հայերի մեջ սկսված այդ խմորումները, խմբագրությունը խորհուրդ է տալիս լինել շրջահայաց և, ապավինելով «Ճշմարիտ ազատության» գաղափարին, առաջ գնալ «խաղաղությամբ, զգուշությամբ և օրինավոր ճամբով»: «Ճշմարիտ և սուտ ազատություն» Հոգվածում «Եվրոպայի» տեսարանը այն միտքն էր Հայտնում, թե ազատություն ձեռք բերած ժողովուրդները այն պիտի պահպանեն իրրև թանկագին գանձ, իսկ ովքեր դեռևս ազատություն չեն ստացել, պետք է ձգտեն դրան, նույնիսկ ընկնեն Հետևից, «միայն թե օրինավոր միջոցներով, զորոնք ուղիղ կրոնը մեզի կտրվեցնեն, զորօրինակ տերություն առջև սիրելի ըլլալով, Հավատարմություն ու մեծ արդյունք ցուցնելով, խնդրելով, Համոզելով և այլն» (1849, № 31, էջ 132): Ահա թե ինչու նրանք դատապարտում էին Հեղափոխական շարժումները Ֆրանսիայում, Հանրապետական կարգերի Հաստատումն այնտեղ, այն խորին Համոզմունքն ունենալով, որ այն չի արդարացրել իրեն անցյալում, չի կարող արդարացնել և այդ օրերին: Այս կապակցությամբ անդրադառնալով 1848-1849 թթ. Եվրոպայում տարածված Հասարակական և

ընկերական աղանդավորների (կոմունիստական գաղափարախոսների) գրքերին և նրանց բանավոր խոսքերին, գտնում են, թե նրանք թեև խոսում են ազատության անուկից, բայց ոչ թե ազատության են ձգտում, այլ կամենում են ամուսնական կապերը խախտել, հափշտակել քաղաքացիների ունեցվածքը, կոտորել խաղաղ բնակիչներին: Նրանց քարոզած երջանկությունն աղետաբեր է. եթե այդպես չլիներ, գրում է տեսաբանը, Ֆրանսիայում հանրապետություն հաստատողները կզոհանային դրանով, այնինչ՝ «ասոր հակառակ դեռ գոհ չեն, ու ան ալ կործանել և տեղը հասարակականություն (կոմյունիզմ) կանգնել կուզեն, որն որ հաջողելու ըլլա նե՝ դաղղիացվոց և գուցե աշխարհիս մեծ մասին սաստիկ ու մահացու հարված մը կըլլա» (1849, № 24, էջ 94):

Եթե սոցիալական հեղափոխություն վերաբերյալ Մխիթարյանները որոշակի բացասական կարծիք ունեին, ապա բոլորովին այլ վերաբերմունք են արտահայտել ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Այս իմաստով մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Հայրենասիրություն» հոդվածը, որը տպագրվել է 1848 թ. 5 համարներում (№ 48-52): Իր հարցադրումներով և եզրահանգումներով բավականին հակասական այս հոդվածը հրատարակվել է եվրոպական հեղափոխությունների ամենաթեժ պահին, երբ ավստրիական թագավորական տունը խոր տաղանայների մեջ էր, իսկ փողոցներում բարիկադներ էին բարձրանում: Խմբագրությունը մի կողմից զգաստացնում էր Հայերին, որպեսզի նրանք, խուսափելով «չինձու և վնասակար» Հայրենակիցներից, հավատարիմ լինեին իրենց կառավարությունը, մյուս կողմից ընթերցողներին ծանոթացնելով ազնիվ Հայրենասիրության գաղափարի հետ, կոչ էր անում լինել իրենց ազգային հանրության, Հայրենիքի ազնիվ զավակները:

Չունգարական հեղափոխության օրերին տպագրված այս հոդվածում զարմանալիորեն չեն դատապարտվում հեղափոխության առաջնորդները, և չի նշավակվում նրանց գործը: Շատ պերճախոս է հոդվածագրի զեղումը Հայրենասիրության մասին. «Ո՛հ զեղեցիկ առաքինություն, ազնվական հուր, սքանչելի՛ սեր. երանի՛ ազգին՝ որուն անդամները աս զեղեցիկ կապով իրարու հետ կապված են, երանի՛ ժողովրդյան՝ որուն որդիոցը սրտին մեջ աս ազնվական հուրը վառված է, երանի՛ աշխարհին՝ որուն բնակիչներուն մեջ աս չքնաղ առաքինությունը կտիրե» (1848, № 48, էջ 200): Հայրենիքին անշահախնդիր նվիրվածություն այս ներբողը չէր կարող ինքնանպատակ լինել:

կարծում ենք խմբագրությունը փորձում էր իմաստավորել Հունգարական շարժումը ի տես ազգային զարթոնք ապրող Հայության:

Հանգամանորեն լուսարանելով Հունգարական ազգային-ազատագրական կռիվները, գրաքննություն ազատության օրերին Մխիթարյան լրագրողները Հիմնականում ակնածանքով են արտահայտվել և՛ բարիկաղնեերում կռվող ուսանողության, և՛ Հունգարացիների ավանդական Հայրենասիրություն ու խիզախության մասին: Նրանք ընդգծված Համալիրանքով են արտահայտվել նաև սպանական նախարար, Հայազգի էռնեստոս Գիշի և այլ Հայ զորականների մասին: Իսկ որքա՞ն Հաճախ են ընդգծել Հունգարացիների պայքարի նպատակը Հայրենիք, անկախություն, Հայրենասիրություն...

Բազմակողմանիորեն հրատարակելով 1848-1849 թթ. հեղափոխություններին նվիրված լուրերը, պատմական վավերագրերն ու հետագա տարիների իրադարձությունները լուսարանող նյութերը, «Եվրոպան» դարձել է պատմական ժամանակաշրջանի կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը: Այն, «Բազմավեպի» Հեռ մեկտեղ, 1840-1850-ական թթ. Եվրոպայում հրատարակվող Հայկական փնտրված թերթն էր, որը տարածվում էր երկու Հատվածների Հայության շրջանակներում, և որից իրենց նյութերը քաղում էին Հայ պարբերականները:

«Եվրոպայի» խմբագրությունը, բացառիկ կարևորություն տալով մամուլի գործունեությանը, ապագրել է մի շարք հողվածներ նվիրված այդ Հարցին: Խմբագրությունը մեր մամուլի պատմության մեջ առաջինն է լուսարանել Հայ լրագրության զարգացման Հեռ կապված գործնական և տեսական Հարցերը, ինչպես և փորձել է ստեղծել Հայ մամուլի պատմության ակնարկներ: Լրագրողի մասնագիտության և պարտականությունների պարզաբանմանը նվիրված այդ Հանձնարարականները այսօր իսկ պահպանում են իրենց թարմությունը:

Ինչ վերաբերում է Մխիթարյան լրագրողների սկզբունքներին, ապա նրանք Հայտարարում են, որ քաղաքական ամենաբուռն իրադարձությունների ժամանակ իրրե պատմարան Հավատարիմ են մնացել պատմական ժամանակաշրջանի ոգուն և կենդանի փաստերին, իսկ իրրե Հայ առաջնորդվել են Հայ ազգի շահերով և օտարազգի մամուլի էջերից «մեղվի պես միայն աղեկը քաղել»:

Մխիթարյանները լայն կապեր էին պահպանում երկու Հատվածների և Հայ գաղթօջախների մտավորականության Հետ: Նրանք խրախուսել են Մ.

Թաղիադայանի ազգասիրական-լուսավորական գործունեությունը, բարձր գնահատել «Ազգասեր Արարատյան» երկչաբաթաթերթի արժանիքները: Ամենադրական կողմերով ներկայացնելով Գաբրիել Պատկանյանի «Արարատ» ամսագիրը «Եվրոպայի» խմբագրությունը այդ հանդեսի նյութերի հիման վրա նկարագրել է արևելահայերի բարեկեցիկ կյանքը, կրթական գործում նրանց ունեցած հաջողությունները, ինչպես և գրական աշխարհաբարի կատարելագործման ուղղությունը արևելահայ մտավորականության ձեռքբերումները:

«Եվրոպայի» էջերում հրատարակվել են ամենաբազմազան նյութեր՝ նվիրված մշակույթի, բանասիրության, պատմության, աշխարհագրության, բնագիտության հարցերին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնավորապես հայ ժողովրդի պատմությունը, բանասիրությանն ու մշակույթին նվիրված հոդվածները, ծավալուն ուսումնասիրությունները և գիտական լրատվությունները: Դրանցից հիշատակության արժանի են հին հայկական ձեռագրերի ուսումնասիրությանը նվիրված հոդվածը, Ե. Չաղրճյանի «Հայոց պատմության» բազմաթիվ հատվածները, «Հայերենի վիճակը ԺԴ-ԺԸ դարերում», «Վանի սեպագիր արձանագրությունները» հոդվածները: Տպագրվել են հոդվածներ՝ նվիրված հայագետներ Էդ. Դյուլոբիեի և Լանգլուսյի հետազոտական աշխատանքներին, «Մեծին Պետրոսի վարքը» քաղված Մեսրոպ Մաղիկյանի «Պետրոս Մեծ և իր նորոգությունները» գրքից: Ետունակարար տպագրվել է «Գաղթականություն առ Հայս» ուսումնասիրությունը և այլն:

Պարբերաթերթում տպագրված ազգային-մշակութային խնդիրների շարքում լուրջ քննության առարկա է դարձել ժամանակի համար հրատապ՝ մայրենի լեզվի զարգացման հեռանկարների հարցը: Այսպես, 1849 թ. տպագրված «Ազգային լեզու» մեծարժեք հոդվածի հեղինակը, հավանաբար լեզվաբան Ղևոնդ Լույնանյանը, վեր է հանել Հայոց լեզվի նշանակության հարցը ազգայնության պահպանման գործում, ինչպես և մատնանշել լեզվի զարգացմանն անհրաժեշտ նախապայմանները: Այդ հոդվածի տրամաբանական շարունակությունն է երեք տարի անց տպագրված «Սորհրդածությունը ազգային լեզվի վրա» հոդվածը, որում թվարկված են մայրենի լեզվի մշակման ու հարստացման միջոցները:

«Եվրոպայի» էջերում տպագրվել են նաև հիմնականում թարգմանական գեղարվեստական գործեր (պատմվածքներ, վիպակներ, հատվածաբար՝ վե-

պեր): Դրանցից են Կ. Միպիրյանի «Տրդատա առանձնանալն ու մահը» գրույցը, «Մուրացիկ մը», «Վրեժխնդրություն», «Մայրական սեր կամ ձմեռփան գժրախա գիշեր մը», «Հեղինե», «Լյուդիա», «Ֆերդինանդոս կամ խղճմտանքի զորություններ» ստեղծագործությունները և այլն: Դրանք գրեթե բոլորը բարեպաշտական ենթատեքստ ունեն. բարին, բարեքը, առաքինի գործերը Հաղթանակում են, չար գործերի Հեղինակները՝ պատժվում: Տպագրվել են նաև Լաֆոնտենի բազմաթիվ առակները և որոշ թարգմանական բանաստեղծություններ:

«Եվրոպա» շաբաթաթերթը Հայ մամուլի պատմության մեջ իր Հաստատուն տեղն է նվաճել ոչ միայն իրրև 1848-1850-ական թթ. պատմական ժամանակաշրջանի քաղաքական լրատվության ճշմարտացի սկզբնաղբյուր, այլև ազգային մշակույթի Հզորացման անհրաժեշտ նոր միջոցների և ուղիների Հայտնագործող ու պրոպագանդող: Այդ պարբերականի էջերում ապագրված ծանրակշիռ Հոդվածները, գիտահետազոտական ուսումնասիրությունները, գիտական մենագրությունների Հատվածաբար տպագրության ամփոփումը մշակեցին լրագրության այն նոր տիպը, որը 1887-ին Հնարավոր դարձրեց մեր Հայագիտական լավագույն Հանդեսներից մեկի՝ «Հանդես ամսօրյայի» Հրատարակությունը, դարձյալ Վրեննայում:

## «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱ» (1887-ԻԹ)

Հայագիտական մեծարժեք ամսագիր է «Հանդես ամսօրյան», որը Հրատարակվում է առ այսօր Վրեննայի միաբանություն կողմից: Այնպես, ինչպես Եվրոպացի գիտնականները Վենետիկը կոչել են «Հայկական կղզի Արեմուտքում», Ալյուրիայի մայրաքաղաքն իր Հերթին պատշաճն է Հատուցել իր Հոդում Հանգրվանած Հայ գիտնականներին նրանց բնակեցրած փողոցն անվանակոչելով «Միսիթարյանների փողոց»: Այստեղ էլ, թիվ 4 շենքում, 1887 թ. կյանքի է կոչվել «Հանդես ամսօրյայի» անդրանիկ Համարը:

Հիմնադիր Հասորում Հրապարակված չափածո ուղերձում Հայտնվում է, որ Հանդեսը մեկուսի չի գործելու, «ազգի գիտնական շղթան» Հյուսվելու է աշխարհի տարբեր երկրներում ապրող Հայերի ջանքերով: Հանդեսը գիտնականներին կապող օղակ է:

Հայաստանի, լուր գալիս հրաւեր...  
Խրախուսանաց ես արդ կամ:  
Դուք, ո՞ր գիտունք, որ ազգիս  
Հիւսնք շղթայն գիտնական,  
Իցիւ՞, սիրով զատաջին  
փութայիք տալ արձագանք...

Արձագանքը չհապաղեց: Հանդեսն ստացավ ու հրապարակեց նյութեր ոչ միայն Վիեննայի միաբանությունից, այլև բազմաթիվ վայրերից: Պարբերականի գործունեությունը ծավալվում է երեք գլխավոր ուղղություններով՝ բարոյագիտական, կրթական, արվեստագիտական: Բարոյագիտական ընդգրկում է նաև մանկավարժական, դպրոցական խնդիրներ: Կրթականի նպատակն է կրթել ազգին գիտական աշխարհում կատարվող հայտնագործությունների մասին տեղեկություններ հրապարակելով: Հանդեսի էջերում ընդգրկվում են գիտություն բոլոր բնագավառները՝ ճշգրիտ գիտություններ, հասարակագիտական առարկաներ, արվեստ, գրականություն, պատմություն, ճարտարապետություն, երաժշտություն, թատրոն, բանասիրություն: Անբաժնող չի արվում նաև քաղաքականությունը: Տրվում է ամսվա ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների տեսությունը:

«Հանդես ամսօրյաի» սկզբնական շրջանի գործունեության մասին պատկերացում կազմելու համար ծանոթանանք անդրանիկ համարի համառոտ բովանդակությանը: Լուրեր լույսի և ջերմության, Պերսեպոլիսի սեպագիր արձանագրությունների, Հինգերորդ դարի հայ պատմագրության, աստղախույզ հեռագիտակների, մոլորակների, նույնիսկ խնձորի օգտակարության մասին: Շարադրվում է Բուլղարիայում անցուղարձի համառոտագրությունը: Զետեղված է Վիեննայի Մխիթարյան տպարանում տպագրված գրքերի ցանկը: Այստեղ թվարկված գրքերից բացի, հանձնարարվում է ունենալ նաև նամակագրություն վարելու ձեռնարկ (հայերեն և ֆրանսերեն լեզվով նամակներ գրելու համար): Առաջարկվում է օգտագործել միաբանության հրատարակած բազմալեզու բառարանները, սովորել «խոսք հայերենասիրության»:

Այսպես է սկսվում ու ընթանում «Հանդես ամսօրյաի» գործունեությունն առաջին տարիներին: Պարբերականի հեղինակությունը դնալով աճում էր: Սակայն խմբագրության դրամական հնարավորությունները, միշտ էլ սահմանափակ լինելով, խոչընդոտում են նպատակի իրագործմանը: Հանդեսը պար-



րերարար դիմում է Հարուստներին և բաժանորդներին դրամական աջակցության խնդրանքով: 1906 թ. Վիեննայի տպարանների բանվորները գործադուլի միջոցով կրկնապատկում են իրենց աշխատավարձը: Այս պայմաններում Հայկական Հանդեսը բավարարվում է պարբերականի գինը բարձրացնելով, որպեսզի հնարավոր լինի շարունակել Հրատարակությունը նախկին ծավալով ու որակով: Դրությունը ծանրանում է Հատկապես Առաջին համաշխարհային ժամանակ: Պակասում են ինչպես Հրատարակչական հնարավորությունները, այնպես էլ թղթակցությունները: Ամենամսյա պարբերականը մերթրեղմերթ Հրատարակվում է միացյալ համարներով: 1911-1930 թթ. րնթացքում հանդեսը հոլանդախոս է և Հոլհանդես Պալյանը, Բարեկեն Կյուլխերյանը, Պոլոս Նուբար փաշան, Գալուստ Կյուլպենկյանը: «Հանդես ամսօրյան» կարողացավ հաղթահարել դժվարությունները և Հարատեւել մինչև որս:

Ավելի քան հարյուր տարվա հրատարակչական գործի ծանրությունն իրենց ուսերին կրել են Ղ. Հովնանյանը (1887-1889), Ղ. Տաշյանը (1890-1895), Գ. Գալեմբյարյանը (1895-1898), Վ. Մելքիսեղեկյանը (1898-1901), Թ. Կետիկյանը (1901-1906), Ղ. Համբարյանը (1906-1909), Ն. Ակիւնյանը (1909-1913, 1920-24, 1931-37, 1946-1963), Ա. Մատիկյանը (1913-1920), Ղ. Ոսկյանը և Ս. Վարդանյանը (1924-1930), Ղ. Ոսկյանը (1938, 1964), Գ. Տեր-Պողոսյանը (1968-1981), Ա. Սերուլյանը (1981-83), Մ. Թոփալյանը (սկսած 1984-ից): (Հանդեսին անդրադարձած տարբեր հեղինակներ սույն ցանկը ներկայացնում են աննշան փոփոխություններով): Պարբերականը հիմնադրվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության արբաժայր Աբուն Այաղնյանի հոլանդախոսությամբ: Հիմնադրմանը եռանդուն մասնակցել են նաև Ռափայել Բարոնչը (լեհահայ), Ղ. Թումայանը, Գ. Մենեխյանը և ուրիշներ:

Ամսագրի խմբագիր Մ. Թոփալյանը հանրազուժարի է բերել և 100-ամյակին նվիրված Հուշամատյանում ներկայացրել ամսագրի հատորներից բացի պարբերականի հրատարակչությունը լույս տեսած մյուս երկերը. «Ազգային Մատենագրարանի 228 երկերը... Նախնայաց Մատենագրություն 7 քննական հրատարակությունները», «Շտուդիեն ցուր արմենիչեն դեչիխտե» մատենաշարին 15 գիրքերը: Հայերեն ձեռագրերուն 20 ցուցակները, բազմաթիվ հոդվածներ ու զբախտականներ... 250-ե ավելի ուսումնասիրություններ... Վեց մեծագիր հուշամատյաններ (1911, 1927, 1949, 1961, 1976, 1987)»:

Հրատարակվելով Եվրոպայում՝ Հանդեսը պետք է կարողանար բարձր պահել Հայ մտքի հեղինակությունն օտար միջավայրում: Այս առաքելությունը «Հանդես ամսօրյան» դուրս է եկել միջազգային ասպարեզ, թափանցել աշխարհի նշանավոր գրադարանները, գրախոսվել ու բարձր գնահատվել նաև օտարազգի գիտնականների կողմից: Կարելի է առանց չափազանցություն ասել, որ տպագրական արվեստով, տառատեսակների բազմազանությունը, գրադարատի ձևավորմամբ Հայերեն ամսագիրը Եվրոպայում գրեթե մրցակից չուներ:

Տարիների ընթացքում Հանդեսն աստիճանաբար փոխել է իր նախնական բնույթը և դարձել զուտ գիտական ամսագիր: Տիտղոսաթերթին դրոշմվում է խորագիրը. «Հայագիտական ուսումնաթերթ»: Հայագիտությունն ընկալվում է ամենալայն առումով: Չեն մոռացվում նաև ամենահեռավոր Հայկական գաղթավայրերը: Տպագրվում են նմուշներ հնդկահայ բանահյուսությունից և նյութեր Հայկական այլ գավառներից: Ղարաբաղի բարբառով հրատարակվում են առակներ, հանելուկներ, շարադրվում է բարբառի Համառոտ նկարագիրը:

«Հանդես ամսօրյայի» գործունեությունը գնահատման դեպքում պետք է անպայման նշել բարձր գիտականությանն ուղեկցող զուսպ, հավասարակշռված, խաղաղ ոճը: Թվում է, թե վարդապետների հիմնած պարբերականը հազեցված էր լինելու դավանաբանական վեճերով, կողմնապահ քարոզչությունը: Իրականում, սակայն, առաջնորդողը եղել է լայնախոհությունը, համահայկական շահը:

1911-ին հրատարակվեց Վիեննայի Մխիթարյան միաբանության 100-ամյակին և Հանդեսի 25-ամյակին նվիրված մի ժողովածու, որի առաջաբանում խմբագիրը (Ն. Ակինյան) նշում է ամսագրի ձևաքերթած լուրջ հաջողությունները: «Հուշարձան» կոչվող այդ Հատորը պարունակում է քառասուն Հայագիտական ուսումնասիրություն, որոնց հեղինակների զգալի մասը օտարազգիներ են: «Մենք փորձեցինք, գրում է խմբագիրը, հրավիրել եվրոպացի բոլոր ծանոթ Հայերենագետները...: Ուրախությամբ կիսոստովանենք, որ մեր հույսը բոլորովին ի դերև չելավ: ... Մենք անչափ ուրախ ենք, որ կարողացանք Հուշարձանին մեջ ի մի ժողով հավաքել Հայ թե օտար բազմաթիվ ականավոր դեմքեր...: Յայտը Հայ դպրությունը հաճույքը էր ունեցած այսպես ի մի վայր խմբված տեսնել յուր կորովի մշակները»: Սույն առաջաբանը տպագրված է նաև գերմաներեն: Առհասարակ հանդեսը հաճախ է իր

Հողվածները կամ նրանց ամփոփագրերը տպագրել նաև օտար լեզուներով, Հատկապես գերմաներեն, որն Ավստրիայի պետական լեզուն է:

«Հուշարձանի» Հրատարակությունը բնութագրական է «Հանդես ամսօրյայի» գործունեությունից վերելքի տարիների համար, ուստի փոքր-ինչ Հանդամանորեն ներկայացնենք նրա բովանդակությունը: Բազմալեզու ուսումնասիրությունները գրված են հայերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն: Բելգիացի գիտնական Պետերսի ուսումնասիրությունը նվիրված է ս. Սարգիս Զորավարի վկայությանը: Անգլիացի հայագետ Կոնիբրոն ուսումնասիրել է Հույն մատենագիր Իրինեոսի այժմ կորած հունարեն բնագրից կատարված հայերեն թարգմանությունը: Գերմանացի բժշկապետ Ջայգելը հրատարակել է Կոստանդնուպոլսում ձեռք բերված հայկական հնատիպ մի աղթարական ժողովածուի վերաբերյալ գիտական խորհրդածություններ: Նրա հայերենակից հնագետ Լեհման-Հաուպտի ուսումնասիրությունը վերաբերում է սեպագիր մի արձանագրության: Մարկվարտը ներկայացրել է Խորասանի գավառների ցանկը: Ենսենը որոնել է Հեթիթերենի և հայերենի ընդհանրությունները: Սարժիգոփսին արվեստագիտական վերլուծության է ենթարկել հայերեն պատկերազարդ մի ձեռագիր: Բիտները բացահայտել է ուշագրավ գծեր Հունգարահայերի և լեհահայերի բարբառների միջև: Կարստին հայերը հետաքրքրել են ազգագրական տեսակետից: Ժողովածուում ուսումնասիրություններ են Հրապարակել նաև օտարազգի այլ գիտնականներ: Հայերից արժեքավոր են Մալխասյանցի, Աճառյանի, Ազոնցի և Հատկապես Գալեմբյարյանի Հրապարակումները: Հանդեսի հրատարակած մնայուն կոթողներից է Գալեմբյարյանի տպագրած Ազաթանգեղոսի երկի կրկնագիրը, որը մեծ ծառայություն է մատուցելու այդ երկի տպագա քննական հրատարակությունը:

«Հուշարձանին» հաջորդեցին տարբեր ժամանակներում տպագրված նաև այլ ժողովածուներ: Այբբենական կարգով թվարկենք «Հանդես ամսօրյայի» թղթակիցներին, որոնց անուններն իսկ վկայում են, թե ինչքան բազմազան են եղել հանդեսի հետաքրքրությունները, և թե որքան հեղինակավոր գասականներ են տպահանգել արևմտյան գիտական պարբերականներին չզիջող ամսագրի բարձր մակարդակը՝ Արեղյան, Ազոնց, Ակինյան, Աղբալյան, Աճառյան, Ավգերյան, Բասմաջյան, Նորայր Բյուզանդացի, Գալեմբյարյան, Գոփրիկյան, Էսապալյան, Թորոգոմյան, Ինգլիզյան, Խալաթյան, Կյուլեսերյան, Կոզյան, Հապոզյան, Հովնանյան, Գարեգին Հովսեփյան, Մանանդյան, Մա-

տիկյան, Մենելիշյան, Ոսկյան, Չորանյան, Պողոսյան, Ջնտոյան, Վարդանյան, Տաշյան, Տեր-Մկրտչյան, Տեր-Պողոսյան, Օրմանյան: Բազմաթիվ են նաև օտարազգիները՝ Բաղմշտարկ, Բենվենիստ, Գարիտ, Գելցեր, Դյումենզիլ, Լեհման-Հառուպտ, Կարիեր, Կարստ, Կոնիբիր, Լյուբլման, Մակլեր, Մառ, Մարկվարտ, Մեյե, Մյուլլեր, Պեդերսեն, Պետերս, Ստրիգովսկի, Շյուտց, Ուգենտիյն, Ֆեյդի, Ֆետտեր:

Պարբերականի նպատակն է եղել մեր երկրի ու ժողովրդի վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունն ու հրատարակումը: Տպագրվել են հոդվածներ աշխարհագրության, թագավորական տների, արքայական դրամների, բռնշխությունների, հայ-հռոմեական-բյուզանդական-ասորական և այլ փոխհարաբերությունների մասին: Մեծ տեղ է հատկացվել ուղեգրություններին՝ Բենդորֆ, Բոյե, Բուտնաքի, Բրունհոֆեր, Դելինչ, Լանքորանսկի, Տիմմերեր, Շպլիման: Ներկայացվել են հայկական գաղթավայրերի (Մուլդոպ, Ռուսինիա, Հունգարիա, Լեհաստան, Լոլանդիա, Թուրքիա) պատմության այլևայլ դրվագներ: Հնագիտական ուսումնասիրություններում արտացոլվել է պեղումների ժամանակ հայտնաբերված նյութերի, վիմագիր արձանագրությունների, տապանաքարերի, սեպագրերի հիման վրա ուսումնասիրված հայկական իրականությունը: Բանահյուսական աղբյուրների միջոցով բացահայտվել են հայ և մյուս ժողովուրդների դիցաբանությունները, ինչպես նաև հայկական պարականոն գրույցների կապերը համաքրիստոնեական «անկանոն գրականության» հուշարձանների հետ: Իրավաբանական, ազգադրական, բժշկագիտական, տիեզերագիտական-տոմարական և այլ նյութերի օգտագործմամբ ուսումնասիրվել է հայ մտքի, հայոց վարք ու բարքի, կրոնական կյանքի պատմությունը: Հին ձեռագրերում պահպանված մանրանկարները, ճարտարապետական հուշարձանները, գորգագործությունը և արվեստի այլ բնագավառներ ներկայացնող աուրիաները դասվել են «Հանդես ամսօրյաի» ուշագրության շրջանակներում:

Օտար լեզուներից հայերեն են թարգմանվել և հանդեսում հրատարակվել հայագիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր, կազմվել է օտարալեզու գրականության մատենագիտություն, որը մեծապես օգնել է հայ ընթերցողին օտար աղբյուրներում որոնելու և գտնելու անհրաժեշտ տվյալներ մեր ժողովրդի մասին: Հրատարակվել են տարբեր երկրներում պահվող հայկական հին ձեռագրերի ցուցակներ, հայ տպագրության և մամուլի պատմությունն արտացոլող հոդվածներ: Հայթայթվել և հրատարակվել են հան-

զուցյալ գիտնականների աշխատություններ: Համառոտակի ամփոփագրերով կամ պրախոսականներով ներկայացվել են օտարալեզու հայագիտական հանդեսներ: Կենսագրականներ և մահախոսականներ են տպվել հայ և օտար գործիչների մասին: Նշանավոր գիտնականներից ոմանց լուսանկարները հայտնի են միայն «Հանդես ամսօրյայի» հրատարակումներից:

Հանդեսն ունի նաև գրական բաժին, որն ընթերցողին ծանոթացնում է հայ գրողներից բացի, նաև օտարազգի հեղինակների ստեղծագործություններին:

Հայոց լեզվին նվիրված ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են գրարարի բերականությանը, հնդեվրոպական լեզուների հետ հայերենի առնչություններին, մեռած լեզուների (հին հունարեն, լատիներեն, իսթիերեն, հին հայերեն) փոխհարաբերություններին: Մատենագրական հուշարձաններից ուսումնասիրվել են Եղնիկ Կողբացու, Ագաթանգեղոսի, Փայսաոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Դավիթ Անհաղթի երկերը: Հայ թարգմանական գրականության հուշարձաններից ուշադրության են արժանացել Փիլոնի, Իրինեոսի, Սոկրատ Աբուսադիկոսի, Պլատոնի գրվածքները, Ալեքսանդր Մակեդոնացու, Խիկար իմաստունի պատմությունները:

Իր հայագիտական գործունեությունը «Հանդես ամսօրյան» շարունակել է նաև XX դարում, նույն խորություններ և հետևողականություններ:

## Գ Լ ՈՒՆ Ե Ր Ր Ո Ր Դ

### ԱՐԵՎԵԼԱՅԱՅ ՄԱՍՈՒՆԻ ՍԿԶԵԼԱՎՈՐՈՒՄԸ

#### «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱՆՈՒՑՍՈՒՆԸ» (1816)

Հայ լրագրութեան հիմնադրումից 22 տարի անց, 1816 թվականին Աստրախանում հրատարակվեց արևելահայ առաջին թերթը՝ «Արևելյան ծանուցմունքը»: Դա ազգային մամուլի օրգաններից տարբեր, նորօրինակ մի երևույթ էր այն իմաստով, որ լույս էր տեսնում իբրև «Վոստոչնիե իզվեստիա» ռուսական թերթի հայերեն թարգմանություն: Այն շաբաթաթերթ էր, հրատարակվում էր երկու սյունակով, որոնցից առաջինը հատկացված էր ռուսական բնագրին, իսկ զուգահեռ սյունակը՝ հայերեն թարգմանությանը:

«Վոստոչնիե իզվեստիան» հիմնադրել է Աստրախանի գիմնազիայի գերմաներենի ուսուցիչ Իոսիֆ Ֆոն Վայսբհոպֆենը, 1813 թվականին: Վերջինս ավարտել էր Վիեննայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և 1806-ին փոխադրվել Ռուսաստան, 1811 թվականից աշխատում էր Աստրախանի գիմնազիայում: Նույն թվականին Վայսբհոպֆենը դիմում է Կազանի համալսարանի գիտական խորհրդին՝ Աստրախանում տպարան հիմնադրելու և ռուսերեն թերթ հրատարակելու խնդրանքով: Թույլտվություն ստանալուց հետո 1812 թ., նա իր գործակից Բ. Լիսկեի հետ տպարան է հիմնադրում և 1813-ից հրատարակում «Վոստոչնիե իզվեստիա» շաբաթաթերթը:

Հետագայում հաշվի առնելով տեղի ազգաբնակչության կազմում հայության մեծ թիվը և կշիռը քաղաքի հասարակական-տնտեսական կյանքում, Վայսբհոպֆենը, թերթի գոյությունն ապահովելու նպատակով, վճռում է այն հրատարակել միաժամանակ հայերեն թարգմանությամբ: Նրան հաջողվում է հայկական տառամայրեր պատրաստել տալ և թույլտվություն ստանալ թերթը հրատարակելու նաև հայերեն:

Սկսած 1815 թ. դեկտեմբերի 20-ից «Վոստոչնիե իզվեստիա» թերթի 42-49 համարներում երկու լեզվով տպագրվում է հրատարակչի հայտարարությունն այն մասին, որ եռամսյա ջանքերի զեղծ իրեն հաջողվել է թույլտվու-

թյուն ստանալ 1816 թվականից թերթին կից տպագրելու նաև Հայերեն թարգմանությունը: Հայտարարություն մեջ նշված էր նաև, որ Հայկական նյութերի խմբագրման նպատակով գործակցություն է հրավիրված Աստրախանի կաթողիկոսական ուսումնարանի վերատեսուչ Կղեմես Շահվերդյանը: Միաժամանակ թերթի 1815 թ. վերջին երեք համարներում, դարձյալ երկու լիզուներով, առանձին Հայտարարությամբ ծանուցվում էր, որ «Վոստոչնիե իզվեստիա» շաբաթաթերթի գրասենյակը 1816 թվականից տեղափոխվում է Շահվերդյանի ուսումնարանը:

1816 թ. Հունվարից «Վոստոչնիե իզվեստիան» լույս է տեսնում նաև Հայերեն, փոքրիկ բարեփոխումներով: Եթե 1813-1815 թթ. թերթի էջերի քանակը Հիմնականում 8 էր, երբևէն Հավելվածների շնորհիվ նաև 10-14, 1816 թ. այն հրատարակվում էր նախկին 21X17 սմ-ի փոխարեն 31X21 սմ Փորմատով և չորս կայուն էջերով: Եարաթաթերթի հրատարակությունը դադարում է 1816-ի Հուլիսի 5-ին Վայսբոլգֆենի Հանկարծական մահվան պատճառով («Որովհետև հեղինակն «Արևելյան ծանուցմանց» վախճանեցաւ, վասն որոյ այսուհետև ոչ ևս լինին ի յոյս տեսալք» ազդարարված է 27-րդ համարում):

Ինչպիսի բովանդակություն և պատմական ինչ կշիռ ունի «Արևելյան ծանուցմունքը»: Թերթի բաժինները սահմանափակ են, բայց կայուն. առաջին երկու էջերում գեաեղվել են ծավալուն հոդվածներ, նվիրված ամենատարբեր պատմական և բնագիտական նյութերի: Գրեթե բոլոր համարներում գետեղվել են անկղոտ կոչված մանրագատումներ, որոնք Հայերեն թարգմանությամբ ստացել են պատմվածք անվանումը: Եարաթաթերթում գետեղվել են նաև բանաստեղծություններ գրված բացառապես որևէ առիթով: Թերթի վերջին էջում գետեղվել են առանձին Հայտարարություններ և օղերևութաբանական մշտական տեղեկություններ:

«Արևելյան ծանուցմունքի» էջերում գետեղված նյութերը և դրանց բաժանումների սկզբունքը ցույց են տալիս, որ խմբագիրն ազոտ պատկերացում ուներ մամուլի խնդիրների և դերի մասին: Նրան, Հավանաբար, զբաղեցրել է ոչ այնքան նյութերի բնարություն նպատակահարմարության խնդիրը, որքան այն, որ թերթը լույս տեսնի ժամանակին: Այլապես ինչո՞վ բացատրել առաջին, ամենամեծ բաժնում գետեղված նյութերի վերացականությունը և օրվա, թեկուզ և կենցաղային, հարցերից դրանց կտրվածությունը:

Առաջին ութ համարներում անընդմեջ տպագրվել են «Յաղագս սիրելի կենդանեաց» շաբթի գրույցները, որոնցում խոսվում է շների, կատուների,

կապիկներին, դեղձանիկներին և տնային այլ կենդանիների մասին: Այդ գրույցներին չեն հետևում հեղինակային խոսքը և ընթերցողին հասցեագրված նյութի բարոյադաստիարակչական նպատակադրումը: Պարզ է, որ խմբագիրն ըստ երևույթին արտասահմանյան որևէ ամսագրից կամ ձեռնարկից ուսուերենի է թարգմանել այդ նյութերը՝ առանց մտահոգվելու խմբագրական մշակման մասին:

Առավել հետաքրքրական են «Յաղագս իմաստնոցն հունաց» շարքի ակնարկները՝ նվիրված Թալես Մելիտացուն, Սոլոնին, Քիլոն Լակեդեմոնացուն և այլ փիլիսոփաների ու գործիչներին (թ. 17-18): Այս ակնարկներն, անշուշտ, գիտաճանաչողական նշանակություն կարող էին ունենալ, ընդ որում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում թե՛ անտիկ աշխարհի փիլիսոփաների կենսագրությունը, թե՛ նրանց ուսմունքի շարադրանքը և թե՛ բերված բարոյախրատական ասույթները: Լիչենք դրանցից մի քանիսը.

Մանաչե՛ա զքեզ իմքեանդ:

Խաղաղութիւնն է բարեգոյմ իմն:

Նախ մտածե՛ա և ապա խօսե՛աց:

Ջանա՛յ լիմիլ յաղթահարիչ կրիցն քոյն:

Առաջին բաժնում զետեղված են նաև գիտահանրամատչելի ճանաչողական հոդվածներ, նվիրված Արևելքի և Անդրկովկասի մի շարք ժողովուրդների պատմությունը, բարքերին և սովորույթներին: Դրանք են՝ «Գրույթիւն յաղագս ճապոնացւոց» (թ. 10), «Յաղագս Ջինգիզ խանի և կարողութեան նորին» (թ. 20, 21), «Յաղագս բնակչացն Կովկազու» (լեզգիներ, թուրքմեններ, օսեթներ, ավարացիք, չերքեզներ, չեչեններ և այլն, թ. 23-25): Այս շարքի վերջին ակնարկը, որը մնացել է կիսատ, ներկայացնում է մոնղոլներին («Յաղագս գործառութեանց, բարուց և վարուց մոնղոլաց», թ. 26-27):

Վերոհիշյալ պատմությունները հեռու են տվյալ ազգություն կյանքը կամ հարեան ժողովուրդների հետ նրանց փոխհարաբերությունների պատկերը ներկայացնելուց: Դրանք սուսկ քրեստոմատիկ գրույցներ են այդ ազգերի և ցեղերի պատմական անցյալի կամ բարքերի ու ազգագրական հատկանիշների մասին:

Առաջին բաժնի նյութերի մեջ քաղաքական հստակ ուղղվածությունը և հրապարակախոսական շնչով աչքի է ընկնում ուսուական կյանքին նվիրված անստորագիր մի հոդվածաչար, որը կրում է «Զբոսանք յոթներորդ» խորագիրը (թ. 8-14): Մավալուն այս հոդվածի հեղինակն ըստ ամենայնի հիացած է



Նորաստիճանի Ռուսաստանի կարգերով, ոգևորութամբ է խոսում ազնվականության կյանքի, շքեղ կենցաղի ու նորաստեղծների մարդասիրության մասին, ամեն առիթով ընդգծում տերերի ու նորտերի համերաշխ համակեցության հանդամանքը:

Ձրոսանքը նվիրված է երկու երիտասարդների ճանապարհորդության նկարագրությանը: Ռուսական հարուստ բնապատկերի ֆոնի վրա ճանապարհորդները խորհրդածում են կյանքի, արվեստի, անտիկ փիլիսոփաների, պատմական Հուշարձանների, բնության անանց գեղեցկության շուրջը:

Այնուհետև նրանց զրաղեցնում է ռուսական գյուղերը լուսավորելու հարցը: Թոսելով այն մասին, որ նոր կտակարանը տպագրվում է տեղական ժողովուրդների լեզուներով, երիտասարդները Հույս են հայտնում, որ Աստվածաշնչի օգնությամբ խրճիթներում ևս լույս կծագի («Ընթերցումն Սուրբ Գրոց զմարդն բարձրացուցանէ, ազնվացուցանէ և լուսավորէ»):

«Վոստոչնիե իրվեստիան» հրատարակվում էր Ռուսաստանում 1812 թ. Հայրենական պատերազմին հաջորդած Հասարակական կյանքի խանդավառության օրերին և ըստ պատշաճին արձագանքում ընդհանուր ոգևորության արամագրություններին: «Արեւելյան ծանուցմունքի» հրատարակությունը նույնպես համընկնում է Ալեքսանդր I-ի անվանն ուղղված ներբողների ժամանակներին: Թերթի առաջին համարը բացվում է «Մտածողութիւնք» («Ի վերայ առաջնոյ աւուր ներկայիս ամն 1816») չափածո առաջնորդողով, որտեղ խոսվում էր ռուսական գորբի պատմական հաղթանակների մասին և բարեմաղթություններ էին ուղղվում ամենաբարձրային:

Այդ թեմային են նվիրված այլ բանաստեղծություններ, որոնց Հեղինակների անունները այսօր դժվար է վերծանել: Ինչպես նշում են ռուսական պարբերական մամուլի «Տեղեկատուի» Հեղինակները, «Վոստոչնիե իրվեստիայի» էջերում տպագրված բանաստեղծությունները պատկանում էին «տեղական Հեղինակների գրչին»<sup>12</sup>

Թերթի բանաստեղծություններից առավել հետաքրքրություն է ներկայացնում մի ծավալուն ակրոստիքոս: Այն նվիրված է «Մարդկութեան բարեկամ» Պոսիլինին («Հագներգութիւն առ ընտանին մարդկութեանս»): Ակրոստիքոսից պարզվում են անունները՝ «բարեգործիդ մուգայից և ի մարդկան Յակովբ Յովհաննէսի Պոսիլինիդ նուէր ի Բելոսուսովես»(№ 14): Բանաստեղծության հետաքրքրությունն այն է, որ ռուսական բնագրի ակ-

<sup>12</sup> Տե՛ս «Русская периодическая печать», (1702-1894), Справочник, М., 1959, стр. 145.

ըստտիրքոսը «անվթար» պահպանված է Հայերեն թարգմանություն մեջ: Գրաբարյան ճոխ ու վսեմ ոճով Հայ թարգմանիչը կարողացել է հետևել և՛ ակրոստիքոսի ձևական պայմանականություններին, և՛ ձոնի հանդիսավորությունը: Հավանաբար Հաշվի առնելով բանաստեղծության բարդությունը, խմբագրությունը նշել է Հայ թարգմանչի անունը. «Թարգմանեալ ի Հայոց Աղաբաբեանց ուսումնարանի առաջին կլասսի ուսուցչէ՛ ի Մկրտչէ Բերոյեանց» (1816, № 14, էջ 53):

Այս նշումը սերունդներին հնարավորություն է տալիս ծանոթանալ արևելահայ առաջին թերթի աշխատակցին, որը հետագային պետք է դառնար XIX դարի 60-ական թթ. աչքի ընկնող Հայագետներից և Հասարակական գործիչներից մեկը:

Մկրտիչ Բերոյանը (1795-1872) ծնվել է Աստրախանում: Կրթությունն ստացել է տեղի Աղաբաբյան դպրոցում, հետագայում նշանավոր Հայ մտավորականներ Գ. Պատկանյանի և Հ. Ալամդարյանի հետ նրանք աշակերտել են ճմուռ Հայագետ Սերովբե Պատկանյանին: Դպրոցն ավարտելուց հետո Բերոյանը նշանակվում է նույն դպրոցի Հայոց լեզվի ուսուցիչ: Նա 1817-ին մեկնում է Պետերբուրգ, ստանում բարձրագույն կրթություն և անցնում դիվանագիտական աշխատանքի: 1844-ից թողնելով ծառայությունը, սկսում է աշխատել Պետերբուրգի Համալսարանում: Այստեղ, երբ 1845-ին հիմնադրվում է Հայագիտական ամբիոնը, Բերոյանը ամբիոնի առաջին Հայագետը և ապա պրոֆեսորն էր: 1845 թ. Բերոյանը միաժամանակ ստանձնում է Հայ դրականության, իսկ 1858-ից՝ նաև Մոսկվայի Հայ պարբերականների գրաքննիչի պաշտոնը, որը վարում է մինչև կյանքի վերջը:

1816 թ. Կղեմես Շահվերդյանը Հավանաբար Բերոյանին ներգրավել է թերթի աշխատանքների մեջ, նրան հանձնարարելով բանաստեղծությունների թարգմանությունը: Բացառված չէ, որ թերթում գետեղված այլևայլ նյութեր ևս թարգմանված լինեն նրա կողմից: Դժվար չէ կոհակել, որ Աղաբաբյան դպրոցի երիտասարդ ուսուցիչը սիրով է կատարել այդ աշխատանքը, որի ընթացքում դրսևորվում էին նաև նրա բանաստեղծական շնորհները:

«Արևելյան ծանուցմունքը» տեղի Հայ ընթերցողների հետ կարող էր կապվել գերազանցապես արձակի բաժնում գետեղված նյութերով, որոնցից շատերը բարոյադաստիարակչական նպատակաուղղվածություն ունեին: Շաբաթաթերթի գրական նյութերը թարգմանություններ էին դանդան պարբերականներից կամ ուսումնական ձեռնարկներից. դրանց հեղինակները և ազ-

բյուրները չէին նշում: Համենայն դեպս դրանք չեն կապվում ուսւս իրականութեան, ուսական կյանքի, առավել ևս Աստրախանի Հայութեան կյանքի հետ: Այստեղ գետեղվել են զրույցներ և մանրապատումներ, որոնք թագափորների դաժանութեան և ազաՀութեան մասին են կամ կենցաղային անեկոտներ: Մանրապատումների մեծ մասը, սակայն, նվիրված է պարտքի և պատասխանատվութեան, Հայրենասիրութեան, առանձին անհատների խիղճութեան և քաղաքացիական արիութեան ջատագովմանը:

«Արեւելյան ծանուցումներ» Հայկական թարգմանութեանների լեզուն Հիմնականում զբարբարն է, բայց քիչ չեն և նյութերը, հատկապես մանրապատումների շարքում, որոնց լեզուն բավականաչափ պարզեցված է: Բանաստեղծութեաններն ավելի խրթին զբարբարով են թարգմանված, թեև այստեղ նույնպես կան բացառութեաններ (օրինակ, փոքրիկ Հովվի երգը «Յոթներորդ զրոտանքից»):

«Արեւելյան ծանուցումներ» խմբագիր ՎայսբՀոպֆենը թեև իր գրութեաններից մեկում Հայտնում է այն միտքը, թե իր ձգտումն է եղել նպաստել «այս Հեռավոր և խուլ երկրում» Հայերի մեջ լուսավորութեան տարածմանը, բայց Հայ ժողովրդի պատմութեան նոր շրջանի ուսումնասիրողը ապարդյուն ջանքեր պիտի թափի շարթաթերթի էջերում գտնելու գեթ մեկ թղթակցութեան, որն առնչվի Աստրախանի Հայ Հասարակութեան կյանքին:

Շարթաթերթի էջերը սպրդած երկու անուղղակի արտահայտութեան, սակայն, մեղ Հնարավորութեան է տալիս նշմարելու Աստրախանի Հայ մշակութային կյանքի մի քանի լուսավոր փայլատակումները: Դրանցից առաջինը կապված է թերթի Հայկական տառածայրերը ձուլող Կոստանդին Սերբերյայանի անվան հետ: «Վաստոճնիս իզվեստիա» թերթի 1815 թ. Հավելվածներից մեկում հրատարակվել է Կղեմես Շահվերդյանի առաջին երկկեղվյան Հայտարարութեանը ուղղված Աստրախանի Հայ Հասարակութեանը («Ով արժանաւոր շառաւիղք մեծին Հայկայ»): Այստեղ Շահվերդյանը Հայտնում էր Հայկական նոր տպարանի Հիմնադրման մասին, որի տառերն ստեղծել էր աստրախանցի «քաջ արՀեստավոր (СЛАВНЫИ ХУДОЖНИК) Կոստանդին Թաթուսովիչ Արեբրեակովը»<sup>13</sup>:

Այսօր, ԻՀարիե, դժվար է վերականգնել Աստրախանի Հայկական տպարանի ստեղծողի կենսագրութեանը, բայց կուզենայինք հիշեցնել, որ Կոս-

<sup>13</sup> "Восточные известия", 1815, N 20:

տանդին Սերեբրյակյանը նոր անուն չէ հայ մամուլի պատմութեան մեջ: Հայտնի չէ ինչ նպատակով, XVIII դարի վերջին այդ անխոնջ գործիչը հասել է Հնդկաստանի Մադրաս քաղաքը և իր ծառայութեամբ օգնել առաջին հայ պարբերաթերթի տպագրութեան գործին: «Ազդարարի» վերջին համարում տպագրված օճապարիկի գծանկարը կատարել էր հաշտարխանցի նկարիչ և փորագրող Կոստանդ Թաթյանը: Ծմավոնյանը նրա մասին հետևյալ ծանոթութիւնն է տվել. «Պարոն Կոստանդ Թաթեան Յաշտարխանցի փորագրեաց զայն ի վերայ պղնձոյ որպէս և յառաջ քան զայս բազում զանազան պատկերս ի լուս հած և զոր միշտ աշխատի ի նոյն արհեստ և տայ մեզ տեղի յուսալոյ, զի իննելոց է կատարեալ յետ փոքր ժամանակի» (1796, № 18, էջ 715):

Այսպիսով, պարզվում է, որ Կոստանդին Սերեբրյակյանը ոչ միայն հեղինակն է օճապարիկի փորագրանկարի, այլև կատարել է թերթի ձևավորումները: «Ազդարարում» զետեղված օճապարիկի մեծադիր նկար-քարտեզից բացի, որի հեղինակի ինքնութիւնը ստույգ է, ամսագրի համար պատրաստվել են և մի շարք կլիշեներ, որոնք նույնպես, ինչպես հավաստում է խմբագիրը, նույն նկարչի ձեռքի գործն են:

Հայ առաջին պարբերաթերթին աշխատակցելուց հետո Կոստանդին Սերեբրյակյանը, վերադառնալով հայրենիք, ճակատագրի բերումով տարիներ անց անմիջական մասնակցութիւն է ունենում նաև արևելահայ առաջին թերթի հրատարակութեանը: Նա միանգամայն արդարացնում է Ծմավոնյանի կանխատեսութիւնը և իր արվեստը կատարելագործում այնքան, որ ձուլում է հայրենի քաղաքի առաջին թերթի համար հիմնադրվող տպարանի տառամայրերը:

Իսկ Աղաբաբյան դպրոցի ուսուցիչ Մկրտիչ Բերոյանի մասնակցութիւնը գործին վկայում է տեղի գաղթօջախի հայ մտավորականութեան քաղաքացիական առաքինութիւնների և ազգի լուսավորութեան գաղափարին նրանց նվիրվածութեան մասին: Ի վերջո պետք է արժանին հատուցել նաև հոգևորական գործիչ, մանկավարժ Կղեմես Ծափերդյանին, որը սիրով հանձն է առնում արևելահայ առաջին պարբերականի խմբագրման թեև ոչ այնքան դյուրին, բայց մեծապես ազգօգուտ գործը:

Այսպիսով, Ծմավոնյան-Սերեբրյակյան-Բերոյան գործիչների ստեղծագործական առնչակցութիւնը խորհրդանշում է մեր ժողովրդի տարբեր հատվածներում ստեղծված մշակութիւնների արյունակցական կապի իրողութիւնը:

Հիրափի, «Ազդարարից» մինչև «Արևելյան ծանուցմունք» և դրանցից մինչև 1860-ական թվականների Հայ պարբերական մամուլի ժամանակները, երբ Բերոյանը «Հյուսիսօրիայի» և առհասարակ մայրաքաղաքների Հայ թերթների գրաքննիչն էր, Հարատեկ է Հայ լուսավորական շարժման կուռ շղթան, որը զոգված էր ժամանակի առաջավոր գործիչների ազնիվ տքնանքով:

«Արևելյան ծանուցմունք» շարաթափերից թեև չի արտացոլել Աստրախանի Հայության կյանքը, բայց օրյեկտիվորեն դրական դեր է կատարել զադթօջափի Հայությանը կապելով լրագրության աշխարհի Հետ: Թերթը Հայերին բնթերցանության մատչելի նյութ է տվել, որը որոշակի բարոյադաստիարակչական և ճանաչողական ուղղվածություն ուներ: Ի վերջո, «Արևելյան ծանուցմունք» նշանավորել է Հայ լրագրության սկզբնավորումը Թուսաստանի տարածքում:

### «Կ Ո Վ Կ Ա Ս» (1846-1847)

«Արևելյան ծանուցմունքի» Հրատարակությունը մնաց իր բնական լույսի մեջ իրականություն մեջ, որով վավերացվեց արևելահայ լրագրության ծնունդը: Այն, սակայն, ի վիճակի չէր զավ որևէ չափով նպաստելու այդ իրականության վերափոխմանը լուսավորականության ուղիով: Այնինչ Անդրկովկասի Հայության վիճակը կարող էր անհետաձգելի բարելավումների: Երկրամասում չկային զպրոցներ, տպարաններ, մտավորական սերունդ, որն ստանձներ ժողովրդի լուսավորության գործը և այն տաներ ժամանակի պահանջներին Համբախց որոշակի ծրագրով: Իրագրությունը փոխվում է 1820-1830-ական թթ., երբ Մոսկվայում և Թիֆլիսում սկսում են գործել Լազարյան ճեմարանը և Ներսիսյան դպրոցը: Արևելահայ իրականության այդ նշանավոր կրթօջախների շնորհիվ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում Հայ ժողովրդի ազգային դարձմունքի, նրա մշակույթի զարգացման, երիտասարդ սերնդի գիտական ու բարոյական դաստիարակության կենսական խնդիրների իրականացման Համար: Այնուհետև Հիմնադրվում են նաև գաղափարական և թեմական դպրոցներ, մասնավոր պանսիոններ, որոնք նույնպես զգալի նպաստ են բերում արևելահայ Հատվածի զարգացման-կրթական գործի և Հասարակական կյանքի աշխուժացմանը: Ներսիսյան դպրոցի և Լազարյան ճեմարանի տպարաններում Հրատարակվում են մի շարք գաստպրեր, քերականության ձեռնարկներ, բառարաններ և այլն: Սակայն,

չնայած Հայ մտավորականների ջանքերին, նրանց դեռևս չէր հաջողվում ստեղծել իրենց պարբերական մամուլը:

1816 թ. Վրաստանի զինվորական կորպուսի հրամանատար է նշանակվում գեներալ-լեյտենանտ Ա. Երմոլովը, որը Թիֆլիսում ծավալում է քաղաքաշինական մշակութային-լուսավորական մի շարք ձեռնարկումներ: Նրա նախաձեռնությամբ հիմնադրվում է նաև Անդրկովկասի առաջին պարբերականը «Քարթուլի գագեթին» (1819-1822):

1827 թ. Կովկասի կառավարչապետ նշանակված Ի. Պասկևիչը, ռուս-թուրքական պատերազմական գործողությունները լուսաբանելու նպատակով, 1828 թ. հիմնադրում է «Տիֆլիսսկիե վեդոմոստի» պաշտոնական լրագիրը: Թերթն ուներ հավելվածներ վրացերեն և Փարսի լեզուներով: Ենթադրվում էր հրատարակել նաև դրա հայկական հավելվածը, բայց այդ ծրագիրը չի իրականանում: Ի թիվս պատերազմական իրադարձությունների, երկրամասի տնտեսական զարգացման, լուսավորության, մշակույթի և այլ հարցերի, «Տիֆլիսսկիե վեդոմոստի» շաբաթաթերթի էջերում լուսաբանվել են նաև Հայ ժողովրդի պատմության, մշակույթի և առօրյա կյանքի հետ կապված մի շարք խնդիրներ: Արժեքավոր այդ թերթը դադարել է 1833 թ.:

Այն բանից հետո, երբ 1838 թ. թագավորի հրամանով Ռուսաստանի նահանգական քաղաքներում հիմնադրվում են պաշտոնական նահանգական տեղեկագրեր, Թիֆլիսում ևս սկսում է լույս տեսնել «Ջակավկագսիյ վեստնիկ» պարբերաթերթը (1838-1864):

Այսպիսով, 1840-ական թթ. Անդրկովկասի մտավորականության շրջաններում արդեն որոշակի ճաշակ էր մշակվել լրագրական գործի նկատմամբ, և մի շարք գործիչներ, այդ թվում և հայեր, պատրաստ էին նվիրվելու ժամանակին մեծ կշիռ ձեռք բերած լրագրության նոր վերելքին: Այդ պահանջին է ահա ընդառաջում Կովկասի փոխարքա, գեներալ-ադյուտանտ Մ. Վորոնցովը, որը 1846 թ. հիմնադրում է «Կավկազ» ոչ պաշտոնական շաբաթաթերթը և դրան գուգահեռ՝ հայկական «Կովկասը»: Այդ թերթերի խմբագիր է նշանակվում փոխարքայության ղեկնատան պաշտոնյա Իոսիֆ Կոնստանտինովը: Վերջինս հայկական թերթի խմբագրական աշխատանքների ղեկավարման համար հրավիրում է Հայ մանկավարժ Հակոբ Արզանյանին, որն էլ իր հերթին առաջարկում է գործի մեջ ներգրավել Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Հակոբ Կարենյանին: Թերթի գրաքննիչ է հաստատվում Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ քահանա Օրբելին: Առաջին տարում, երբ «Կով-

կասի» բաժանորդների թիվը հասնում է միայն 138-ի և բաժանորդագրական գումարը հազիվ է ծածկում տպարանի ծախսերը, Կոնստանտինովը մտադրվում 1847-ին դադարեցնել թերթի հրատարակությունը: Հայ խմբագիրները խնդրում են պաշտպանել թերթը, խոստանալով բոլոր ծախսերն առնել իրենց վրա: 1846-ի վերջին երկու Հայ խմբագիրներին է միանում Գաբրիել քահանա Պատկանյանը, և «Կովկասը» 1847-ին հրատարակվում է նոր խմբագրական մարմնի կողմից: Կոնստանտինովը թեև մնում էր իբրև պաշտոնական խմբագիր, բայց չէր խառնվում նյութերի ընտրությունը և դրամական հաշիվներին:

«Կովկասը» ձեռնարկած էր «Կովկաս» շաբաթաթերթի օրինակով. հայկական թերթում պաշտպանվում էին «Կովկասի» անվանումը, ենթավերնագիրը («Կովկաս քաղաքական և բանասիրական»), այլև ծանոթությունները կապված պարբերականի լույս ընծայման ժամանակի, արժեքի հետ և այլն: Բաժինները նույնպես համապատասխանում էին ռուսական թերթի կառուցվածքին. գրանք էին կառավարական հրամաններ, ներքին լուրեր, պատմական, աշխարհագրական և բարոյական նյութեր, գրական-բանասիրական բաժիններ:

Թեև մեր բանասիրություն մեջ այն միտքն է հայտնվել, որ «Կովկասը» «Կովկաս» լրագրի հայկական թարգմանությունն էր, բայց իրականում այն սեփական ծրագրով ինքնուրույն թերթ էր: «Կովկասից» թարգմանաբար տպագրվում էին պաշտոնական լուրերը, Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող պատերազմական անցուղարձք լուսարանող հաղորդումները, երկրամասին վերաբերող գանձան կանոնադրություններ ու հայտարարություններ: Հրատարակության առաջին շրջանում արտասույվել են և որոշ պատմաբանասիրական նյութեր: «Կովկասից» խմբագրությունն իր հերթին մի շարք նյութեր է արտասույվել «Կովկասից»: Այս ամենով հանդերձ հայկական թերթն ուներ հետաքրքրությունների իր շրջանակը՝ ազգայինը, որը թեև անվանապես արտացոլված չէր նրա ծրագրում, բայց մնում էր «Կովկասի» ամենահիմնական խնդիրը: Այս խմաստով իր փաստական բովանդակությամբ «Կովկասը» պետք է գնահատել ոչ միայն իբրև քաղաքական և բանասիրական, այլ նաև իբրև ազգային օրգան:

«Կովկասի» խմբագիրները XIX դարի կեսի աչքի ընկնող Հայ մշակութային գործիչներ էին: Հակոբ Արզանյանը մեր բանասիրություն պատմության մեջ հիշատակվում է երրորդ Դավիթ Արզանյանի հետ մեկ կապակցու-

թյան մեջ: Նրանք աստրախանցիներ էին, ավարտել էին Լազարյան ճեմարանը, այնուհետև թեկնածուի աստիճանով Մոսկվայի Համալսարանը: 1830 թ. Նրանք Ղզլարում բացում են գիշերօթիկ դպրոց, ապա տեղափոխվում են Թիֆլիս, որտեղ նույնպես գիշերօթիկ դպրոց և տպարան են հիմնադրում: Արզանյան եղբայրները մշտապես զբաղվել են մանկավարժական աշխատանքով:

Հակոբ Կարենյանը Կարին քաղաքից էր, ավարտել էր տեղի Կարապետյան դպրոցը, ապա 1830-ին գաղթել Ախալցխա, իսկ հետագայում բնակություն հաստատել Թիֆլիսում: Եղել է առաջնորդարանի կոնսիստորիայի քարտուղար, երկար տարիներ մանկավարժական աշխատանք է կատարել Ներսիսյան դպրոցում, զբաղվել է նաև գրական աշխատանքով:

Գարրիել Պատկանյանը դարասկզբի հայտնի մանկավարժ, հայագետ և բանաստեղծ Սերովբե Պատկանյանի որդին էր: Ավարտել է Աղաբաբյան դպրոցը, վաղ հասակից զբաղվել է մանկավարժական աշխատանքով Աստրախանում, Նոր Նախիջևանում, հետագայում և Թիֆլիսում: 1832-ին ձեռնադրվում է քահանա, Նոր Նախիջևանում վարում մայր եկեղեցու քահանայի և հոգևոր կառավարուԹյան քարտուղարի պաշտոնները: «Կովկաս» թերթում լիովին ղրսկերվում են նրա հրապարակախոսական ունակութունները: Հետագայում աչքի է ընկնում իբրև «Արարատ» շաբաթաթերթի խմբագիր:

«Կովկասի» առաջին և միակ հետազոտող Ալեքսանդր Երիցյանը կարողացել է վերականգնել թերթի աշխատակիցների թիվը: Ըստ նրա հաշվարկների «Կովկասին» աշխատակցել կամ թղթակցել են 45 հոգի, այդ թվում հոգևորականներ, մանկավարժներ, բժիշկներ, Լազարյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի աշակերտներ և այլք: Թերթն իր գործակալներն ուներ ինչպես Ռուսաստանի մայրաքաղաքներում և Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում, այնպես էլ Կ. Պոլսում, Կարինում, Թավրիզում:

Չնայած իր կարճատև գոյությանը, թերթը հիմնական գծերով պատկերել է դարի 40-ական թթ. Անդրկովկասի հասարակական և տնտեսական կյանքում կատարված դրական տեղաշարժերը: Դարասկզբին երկրամասի միացումը քաղաքակրթությամբ շատ ավելի բարձր կանգնած Ռուսաստանի հետ մեծապես նպաստում է Կովկասի տնտեսական և մշակութային կյանքի աշխուժացմանը: 1804-ին Թիֆլիսում բացվում է ազնվականների ճեմարանը, 1829-ին դրա հիմքի վրա ստեղծվում է քաղաքային գիմնազիան: 1830-ական թթ. բացվում են գաղառական գիմնազիաները: Աստիճանաբար փոխվում է և



երկրամասի տնտեսական կյանքը: Ինչպես երևում է «Կովկասի» նյութերից, Թիֆլիսում կազմակերպվում են միջազգային տոնավաճառներ, բացվում են ուսուսական առևտրական ընկերություններ և դրասենյակներ և վաճառատներ: Անդրկովկասը վերածվում է ուսական և եվրոպական ապրանքների վաճառքի շուկայի և միաժամանակ դառնում տեղի բնական հումքերի մատակարարը:

Որոշ մոնոպոլիստություններ են կատարվում Երևանի նահանգում, այստեղ կառուցվում են ջրանցքներ, ուսումնասիրվում է Աևանի շրջակայքը, Հևտագոսում են Հանքավայրերը, քննարկվում ճարտարապետական հուշարձանների պաշտպանության և ուսումնասիրության խնդիրները:

«Կովկասի» նյութերը ցույց են տալիս Անդրկովկասում նոր ձևավորվող առևտրական բուրժուազիայի զարգացման, նրա կողմից առևտրական նոր ուղղությունների Հևտագոսական կապեր ստեղծելու գործընթացը: Այս իմաստով որոշակի Հևտաբերություն են ներկայացնում Նուխի, Բաբու, Թիֆլիս, Ախալցխա քաղաքներին նվիրված տեղագրություն-ակնարկները: Ուշադրով են Թիֆլիսին նվիրված բազմապիսի նյութերը, որոնք վեր են Հանում քաղաքի բնակիչներին առօրյան, կենցաղն ու սովորույթները: Այդ Հողվածներն օգնում են սերունդներին Թիֆլիսը տեսնելու այնպես, ինչպիսին կար քաղաքային կյանքի իր ինքնատիպ ու անկրկնելի Հմայքով, տարբեր ազգությունների խնամակալի իր ազնիվ պահվածքով:

Ասիայն, տնտեսական և առօրեական Հարցերից առավել «Կովկասի» էջերում լուսարանվել են ազգային-լուսավորական առաջնահերթ խնդիրները: Դրանք էին մատաղ սերնդի կրթության բարելավման, օրիորդաց դպրոցներ բացելու, մայրենի լեզվի Հարցը բարձրացնելու, Հայություն մեջ բարեկրթություն և ազգաշինական ոգին ամրապնդելու Հարցերը: Այսպես, «Ուսումնարանք Տիֆլիսայ» անստորագիր Հողվածում ներկայացված է Թիֆլիսի բոլոր դպրոցների վիճակագրական Հաշվետուությունը, որից, ի դեպ, պարզվում է, որ քաղաքի 1301 աշակերտներից 497-ը Հայեր էին:

Ուշագրություն արժանի է մեկ այլ ծավալուն Հողված, որի Հեղինակն էր մանկավարժ Կ. Բևախյանցը: Հիմնավորելով կանանց կրթության անհրաժեշտությունը, նա գրանով է պայմանավորում ազգային լեզվի պահպանման, գրա Հեղինակությունը բարձրացնելու և Հևտագա զարգացման Հույժ կարևոր գործը:

Բնեւության առնելով մասնավորապէս Թիֆլիսի վրացախոս հայութեան առօրյան, Բելախյանցն ընդգծում է այն մտահոգիչ իրողութիւնը, որ չնայած ազգային դպրոցների գոյութեանը, հայ երեխաներն իրենց ընտանիքներում չեն ճաշակում մայրենի լեզվի քաղցրութիւնը: Ժամանակը, սակայն, առաջադրում էր իր պահանջները: Բելախյանցը գտնում էր, որ ինչպէս ամեն մի քաղաքակիրթ ժողովուրդ, հայ ազգի անդամները պարտավոր են խոսել մայրենի լեզվով:

Սկսելով այնտեղից, ուր վերջացնում էր Բելախյանցը, տաղանդավոր հրապարակախոս Գալուստ Օնրմազանյանը շարունակում է այս հարցի քննութիւնը և մշակում առաջարկների ավելի հարուստ մի համակարգ: Շերմազանյանը 1846 թ. «Կովկասի» էջերում հրապարակել է հոդվածների երկու շարք, որոնցից առաջինը նվիրված էր երեխաների ընտանեկան և դպրոցական դաստիարակութեան հարցին, իսկ երկրորդը՝ հայութեանը ազգային ինքնաճանաչութեան հասցնելու ուղիներին: Խոսքն ընթերցողին հասցնելու նպատակով նա իր հոդվածների համար ընտրել է երկխոսութեան միջոցը, ժողովրդի խոսակցական լեզվով: Հեղինակային այս մտահոգումը գործնականում ապահովում էր «Կովկասի» հարցադրումների ընկալումը անհամեմատ լայն շրջանակի ընթերցողների կողմից:

Գալուստ Շերմազանյանի հրապարակախոսական հոդվածներն ապացուցում են, որ Թիֆլիսի մտավորականները կապված էին արևմտահայ գործիչների հետ և լավատեղյակ Կ.Պոլսի և Ջմյուռնիայի մշակութային կյանքին: Մյուս կողմից նրանք շփվում էին ռուս գրականութեան ու մամուլին և, տեսնելով ռուսական ազգային կյանքի և մշակույթի սրբնթաց վերելքը, 1840-ական թթ. մշակում են լուսավորական իրենց ծրագիրը: Այն նախատեսում էր կազմակերպել մշակութային միութիւններ, ստեղծել տպարան, հիմնադրել արական և օրիորդաց դպրոցներ, ապահովել երեխաների ընտանեկան դաստիարակութիւնը՝ ազգային ոգով, գրազվել նվիրատւութիւնների կազմակերպումով: Այս հարցերի լուծմանը մեծապէս կարող էր օգնել ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվի քաղաքացիական իրավունքների ապահովումը մամուլի և գրականութեան մեջ: Սակայն այդ դժվարին գործը դեռևս դուրս էր 40-ական թթ. գործիչների ծրագրից և գրված էր դիտական հիմքերի վրա:

«Կովկաս» շաբաթաթերթի լեզուն գրաբարն էր: Ինչ վերաբերում է Շերմազանյանին և մի քանի մտավորականների, նրանք գրում էին «Կովկասի»

ընթերցողներին մատչելի աշխարհագրորդ, որը դեպի լուսավորականության Հաղթանակը տանող առաջին համարձակ քայլերից էր: Նրանց լեզվական նորմուծությունները ներողամտությամբ էին ընդունվում խմբագրության կողմից, քանի որ այդ Հեղինակները նպատակային պայքար չէին մղում գրարարի դեմ և չէին վիճարկում նրա ավանդական իրավունքները: Մյուս կողմից նրանց Հողմածները նպաստում էին թերթի Հաջողությանը, ընթերցողներին մատչելի լեզվով ծանոթացնում Հայ Հասարակական կյանքում տեղի ունեցող անցյուղարձին: Ավելի որոշակիորեն թերթի լեզվական քաղաքականությունը Գ. Պատկանյանը բնութագրել է Հետևյալ կերպ. խմբագրությունը «Հատուկ խորհրդով» ուսյալների համար գրում է գրաբար, իսկ մյուս ընթերցողներին սովածի խմատը Հասկանալի դարձնելու նպատակով խոսակցական լեզվով:

«Կովկասի» խմբագիրները, քաջ գիտակցելով գրականության դաստիարակչական նշանակությունը, առաջին իսկ քայլերից փորձում են թերթին ապահովել գրական նյութերով: Այդ նպատակով նրանք կապեր են հաստատում Լադարյան Եմմարանի և Ներսիսյան դպրոցի շնորհալի աշակերտների հետ և նրանց գրական առաջին փորձերն ու թարգմանությունները տպագրում շարժաթերթի էջերում: Տպագրվող գործերը Հիմնականում պատկանում էին պեղելայի ժանրին, քանի որ այն ավելի մատչելի էր երիտասարդների համեստ կարողություններին և Հարագատ նրանց ուսմանտիկ խառնվածքին: Արձակի ավելի գծվարին բաժինը լրացվում էր թարգմանություններով:

«Կովկասի» պեղելայի բաժինը ինչ-որ չափով թարմություն էր մտցնում Հայ գրականության և լրագրության աշխարհը: 1830-ական թթ. ավանդական ներբողյաններին և աստվածաշնչյան թեմաներով գրված գրաբարայեզու խրթին բանաստեղծություններին փոխարինելու էին գալիս քնարական շնչով գրված խոհական, սիրային, Հայրենասիրական երգեր, Հայ կյանքի առօրեական անցքերի թեև պարզունակ, բայց կենդանի, բանաստեղծական պատկերներ: Ընդհատ է, գրաբարը պահպանում էր տիրակալի իր Հեղինակությունը, բայց շարժաթերթում տպագրված գրական գործերի, մանավանդ թարգմանական արձակի լեզուն արդեն ստացել էր աշխարհականացող գրաբարի նոր որակը:

«Կովկասի» երիտասարդ բանաստեղծներից բոլորը չէ, որ Հետագայում մուտք գործեցին Հայ գրականության անդաստանը. նրանք տպագրում Հա-

մալրեցին Հայ մտավորականների մանկավարժների, բանասերների, կրոնական գործիչների շարքերը: Երկուսը, սակայն, Գալուստ Ծերմազանյանը և Մովսես Զոհրապյանը պրոֆեսիոնալ բանաստեղծներ չդառնալով Հանդերձ, Հետագայում նույնպես ստեղծագործում և շարունակում են տպագրվել Հայ մամուլի էջերում:

Լազարյան ճեմարանի նախկին շրջանավարտ, Հասարակական գործիչ Գալուստ Ծերմազանյանը «Կովկասի» էջերում տպագրել է աշխարհաբարով գրված մի քանի չափածո առակ և հրապարակել «Ռոստոմ բեկ» ազգային երգը: Ռոստոմ բեկը ռուսական բանակի շարքերում 1804 թ. մասնակցել էր Երևանի բերդի պաշարմանը, գերի ընկել պարսիկների ձեռքը և զոհվել: Ազգասիրական այս երգը, որ ժամանակին տարածված է եղել Պարսկաստանում, Ծերմազանյանի շնորհիվ փրկվել է կորստից և տպագրվելով Հայրենասիրական ոգով դաստիարակել Հայ երիտասարդությունը:

Ծերմազանյանը 1840-ական թթ. տպագրվում էր նաև «Բազմավեպում», իսկ 1860-ական թթ. «Կոռունկ Հայոց աշխարհին» ամսագրի հիմնական աշխատակիցներից էր: Այդ Հանդեսի էջերում նա տպագրել է նաև մի քանի դրամատիկական ստեղծագործություն:

«Կովկասի» հիմնական բանաստեղծներից էր Մովսես Զոհրապյան Արցախեցին: Նա ավարտել էր Շուշիի դավառական դպրոցը և վարչական աշխատանք էր կատարում Անդրկովկասի զանազան քաղաքներում: «Կովկասի» հրատարակչության տարիներին աշխատում էր Շամախիի նահանգական վարչությունում: Այստեղ նա նույնիսկ տպարան էր հիմնադրել, որտեղ տպագրվել են նրա մի քանի գրքերը և թարգմանական գործերը: Նա շարունակել է ստեղծագործել և տպագրվել նաև 1860-ական թվականների պարբերականներում: «Կովկաս», ինչպես և «Արարատ» պարբերաթերթերում տպագրված Զոհրապյանի խոհական, Հայրենասիրական և սիրային բանաստեղծությունները գրված են մեծ մասամբ գրաբար:

«Կովկասի» էջերում տպագրվել են նաև Հայ մտավորականներ Է. Էնֆիաճյանի, Ստ. Բաստամյանցի, Ս. Սահառունու, Ռ. Երզնկյանի և այլոց բանաստեղծություններն ու առակները: Խմբագրությունը մեծ տեղ է Հատկացրել թարգմանություններին, որոնցից նշանակալից երևույթ էր Կոխլովի յոթ առակների տպագրությունը: Դրանք մեծ առակախոսի Հայրեն առաջին թարգմանություններն էին «Բազմավեպից» Հետո, որի էջերում 1843 և 1844 թթ. տպագրվել էին նրա մեկական առակները: Կոխլովի առակների թարգմա-

նիշներն էին Գ. Շերմազանյանը, Լ. Էնֆիաճյանը, Գ. Տերտերյանցը, Գ. Խատրյանցը:

Մովսես Ջոհրայանի թարգմանությունը տպագրվել են Վ. Կապիտաի, Շաարովի, Ն. Կարամիրի, Ի. Բոգդանովիչի բանաստեղծությունները, Ստ. Մանդինյանի թարգմանությունը Ի. Դմիտրևի «Երմակ» դրամատիկական պոեմը: Ետբաժաթերի էջերում տպագրվել են նաև թարգմանական արձակ գործեր թե՛ ուսուսական և թե՛ կիրառական գրականությունից: Դրանցից են Վ. Փուկովսկու երկու պատմվածքները, գերմաներենից և անգլերենից թարգմանված բարոյախրատական մի քանի պատմվածք, մանրապատումներ թարգմանված ուսական մամուլից:

«Կովկաս» խմբագրությունը Հետեղականորեն ուշադրության կենտրոնում է պահել գրական բաժինը, դրանով իսկ մեծապես նպաստել ոչ միայն բնիկերիցների բարոյական դաստիարակության, այլ նաև երիտասարդ գրական կադրերի պատրաստման գործին: Ետբաժաթերում տպագրված ստեղծագործությունները գեղագիտական չափանիշների առումով որքան էլ անկատար, այնուամենայնիվ թե՛ ձևերի բազմազանություն և թե՛ բարձրացրած Հարցերի կարեորություն տեսակետից զգալի դեր են կատարել Հայ նոր գրականության զարգացման սկզբնական փուլի առաջխաղացումն արագացնելու խնդրում:

«Կովկաս» թերթի աշխատակիցներից բացառիկ ընդուն էր Գարրիել Պատկանյանի գրիչը: Նա գրել է բազմաթիվ ակնարկներ, պատմաբանասիրական ուսումնասիրություններ և բանավիճախի Հոդվածներ: Ուշադրության արժանի է նրա «Նոր տարի» ծրագրային բանաստեղծությունը, գրված 1847 թ. սեպտեմբերի տոթիով: Մեծ Հետաքրքրություն է ներկայացնում Պատկանյանի մի ուսումնասիրությունը նվիրված Աստրախան քաղաքի պատմությանը: «Մէսր և առածք Հայոց Տիխիսայ» Հոդվածում Պատկանյանը ոչ միայն նկարագրում է Թիֆլիսահայության բարբերը, ազգային ծեսերն ու առածները, այլև գործի ասպարեկ է Հրավիրում իր ժամանակի մտավորականներին, կոչ անելով լրջորեն ուսումնասիրել ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշները, ազգային ծեսերն ու սովորույթները, որոնք Հնարավորություն են տալիս խորամուխ լինելու Հայության պատմական անցյալի, նրա վաղնջական կյանքի Հանգամանքների մեջ:

«Կովկաս» պատմության Համար մեծ կարեորություն ունեն Պատկանյան լրագրողի երկու բանավիճախի Հոդվածները: Դրանցից առաջինը պատաս-

խան էր «Մոսկովսկիյ գորոդսկոյ լիստոկ» թերթում տպագրված մի գրա-խոսուկոթյան, որի հեղինակը Նովսեփ Չերքեզյանը, թաքնված Չ տառի տակ, մեղադրում էր խմբագրուկոթյանը՝ Մկրտիչ Էմինին և Ալեքսանդր Խուդաբաշյանին անհարկի մեծարելու համար: Պատասխան այդ հոդվածը Պատկանյանի բանավիճային տաղանդի ստույգ վկայուկոթյունն է, որն առավել ցայտունուկոթյամբ դրսևորվել է նրա երկրորդ հոդվածում, ուղղված ուս քահանա և լրագրող Բոգոմոլովի «Դրեվնյայա Ազիատսկայա Սարմատիյա» հոդվածի դեմ: Բոգոմոլովն իր հնագիտական լեզվաբանական ուսումնասիրուկոթյան մեջ բացահայտ թշնամական ակնարկներով և մի շարք բառերի շարամիտ ու շինծու ստուգաբանուկոթյամբ վիրավորել էր և՛ Պատկանյանին, և՛ հայ ազգուկոթյանը: Պատկանյանը հերքում է հոդվածագրի մի շարք տեսակետները, և առանց երկնչելու նրա դիրքից, ծաղրում է լրագրողի՝ նրա անբարեխղճուկոթյունը, նրա վիրավորական արտահայտուկոթյուններին պատասխանում նույնքան կռպիտ ոճով: Ինչպես հաստատում է Ալ. Երիցյանը, Բոգոմոլովն օգտագործելով Պետերբուրգի վարչական բարձր ոլորտներում ունեցած իր կապերը, կարողանում է դադարեցնել տալ «Կովկաս» լրագիրը:

«Կովկաս» շաբաթաթերթի բռնի վախճանը ինքնին խոսում է հայ լրագրողների իրավիճակի մասին: Նրանք ոչ միայն գրկված էին նյութական միջոցներից, այլև մշտապես ենթակա էին ցարական վարչական մարմինների կամայականուկոթյուններին:

### «Ա Ր Ա Ր Ա Տ» (1850-1851)

«Կովկասի» դադարեցումից հետո Գարրիել Պատկանյանը Թիֆլիսում հիմնադրում է իր տպարանը, որի անհրաժեշտ սարքավորումները ձեռք էր բերել տարիների ընթացքում: Այդ տպարանում 1850 թ. նա սկսում է հրատարակել «Արարատ» շաբաթաթերթը: Պատկանյանն իրեն համարում էր այն գործիչներից, որոնք պարտավոր էին իրենց ուժերը նվիրաբերել սկսվող ազգային զարթոնքի վերելքին, սակայն նա իրատեսորեն էր ըմբռնում ազգի լուսավորուկոթյան իրականացումը և համարձակորեն հակադրվում այդ հասկացուկոթյան իր դարն ապրած ավանդական սկզբունքներին: Պատկանյանի համար մեկընդմիջտ մեծված էր՝ ազգի լուսավորուկոթյան գործը հնարավոր էր առաջ շարժել միմիայն նրան հասկանալի լեզվով, քանի որ գրաբարը ոչ միայն դժվարացնում էր գիտելիքների յուրացումը, այլև արգելակում ժո-

դովորելին լուսավորելու բնդհանուր գործը: Այս համոզմունքով էլ նա, առաջինը արևելյահայ իրականության մեջ, իր պարբերականը հրատարակում է աշխարհաբարով:

Շարաթաթերթի ծրագիրը ներդաշնակում էր 1850-ական թթ. լուսավորականության գաղափարների ոգուն: Պատկանյանը հայտնում էր իր ընթերցողներին, որ թերթում պետք է տպագրվեն բարոյադաստիարակչական բնույթի այնպիսի նյութեր, բնագիտական հանրամատչելի գրույցներ ու գրական գործեր, որոնք ախորժելի և միաժամանակ հասկանալի լինեն ընթերցողին: Նկատի ունենալով հայ հասարակության տարրեր խավերի կրթական անհասարմակարգակր, Պատկանյանն իր խնդիրն էր համարում նախ և առաջ օգնել նրանց, ովքեր «սաստիկ անգրագիտության մեջ էին»: Եվ քանի որ խմբագրի նպատակն այն էր, որ «ազգը կարդա», «Արարատը» խմբագրվում էր ոչ որպես հրատարակախոսական օրգան, այլ բանասիրական նյութերի և բնական գիտությունների պրոպագանդանը նվիրված ուսումնական հանրամատչելի ձևերով: Այս իմաստով Պատկանյանի շարաթաթերթն իր բնույթով ավելի շուտ մտնկավարժական-բանասիրական օրգան էր, քան քաղաքական-առևտրական և բանասիրական, ինչպես ազգաբարբուս էր ենթադրենագիրը:

«Արարատը» հրատարակվել է 1850 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1851-ի ապրիլի վերջը: Լույս է տեսել շարաթաթերթի 33 համար: Իբրև պարբերաթերթ, կառույցվածքային առումով այն անկատար էր: Հրատարակության առաջին ամիսներին թերթը չուներ կայուն բաժիններ և միայն 14-րդ համարից են երևում ազգային, բանասիրական, պատմական, կրոնական, բնական գիտությունների բաժինները: Սրանք նույնպես անկայուն էին և հաճախ կազմվում էին առանց նյութերի տարբերակման հստակ սկզբունքի: Թերթի 25-րդ համարից խմբագիրն սկսել է արտասպություններ կատարել ուսական պարբերականներից: Այդ համարից սկսած երևում են նաև արտաքին և ներքին լուրերի բաժինները, ինչպես և հաղորդագրություններ են տպագրվում Կովկասի լուսնականների դեմ մղված պատերազմական գործողությունների մասին:

Պատկանյան խմբագիրն ամենից առաջ մանկավարժ էր, որը ձգտում էր թերթի միջոցով նույնպես հայ հասարակության ուշադրությունը հրավիրել դպրոցական գործի բարելավման, մանկավարժական կադրերի պատրաստման, մանուկների դաստիարակության կարևորության վրա: Նա գրել է մի շարք

մանկավարժական հողվածներ, որոնցից մեծ արժեք են ներկայացնում Հատկապես «Դաստիարակութուն մանկանց» և «Ընթերցասիրութուն» հողվածները: Աշխարհում ամենադժվար մասնագիտութունները բժշկութունը և մանկավարժութունն են, գրում է Պատկանյանը, ուստի չպետք է թույլ տալ, որ պատահական մարդիկ զբաղվեն այդ գործով: «Վատ դաստիարակութունը, շարունակում է նա, կարող է մեկ բովանդակ Հասարակութուն ապականել, որ եթե լավ մտածելու լինինք, քան զամեն քրեական Հանցանս մեծ է և աններելի»: Պատկանյանն ուսուցիչներին հաղորդել է մանկավարժական աշխատանքի երկարամյա իր փորձը և մի շարք մեթոդական ցուցումներով օգնել նրանց: Նա կոչ էր անում երեխաներին սովորեցնել այնպես, որ նրանք հասկանան, «թե գիտութունն աստժո պարգևն է» և սիրահարվեն ուսմանը: «Արարատի» էջերում Պատկանյանն անդրադարձել է նաև Լազարյան ճեմարանի, Ներսիսյան դպրոցի, Կ. Պոլսի դպրոցների հետ կապված որոշ հարցերի:

Իրենց հողվածներում Գաբրիել և Ռաֆայել Պատկանյանները քննարկել են Հայոց գրական լեզվի աշխարհականացման խնդիրը, գիտականորեն Հիմնավորել աշխարհաբարին անցնելու անհրաժեշտութունը, նշել այն ուղիները, որոնք կդյուրացնեին աշխարհաբարի յուրացումը:

«Արարատի» խմբագիրն ընթերցողներին ծանոթացրել է բնական գիտութունների այլևայլ ճյուղերին, մասնավորապես աստղաբաշխությանը: Նա ուսուսական թերթերից բազմաթիվ լուրեր է հրատարակել ժամանակի գիտական Հայտնագործութունների մասին: Եարթաթափերթում տպագրվել են և մի շարք կրոնական հողվածներ, մեծ մասամբ կապված կրոնական տոների ու ծեսերի և դրանց մեկնաբանութունների հետ: Թե՛ կրոնական այդ հողվածները, որոնք շատ հեռու են մոլեռանդության միտումից և թե՛ գիտական-ուսուցողական նյութերը ներկայացնում են 1850-ական թթ. սկզբի կովկասահայ Հասարակության մտավոր մակարդակը և այն բարձրացնելու խմբագրի ջանքերը:

«Արարատին» թղթակցել են Հայ մտավորականներ Ստ. Բաստամյանը, Գ. Փիթոյանը, Հ. Մամիկոնյանը և ուրիշներ: Ժամանակի ընթերցողները բարձր են գնահատել շարթաթափերթի դերը և նրա նշանակութունը ժողովրդի կյանքում: Մխիթարյանների «Եվրոպա» հանդեսի խմբագրութունն այն անվանել է Հայության «մեկ մեծ մասի մտավոր ազնվության գործիքը», որը ոչ միայն լուսաբանում է տեղի Հայերի կյանքը, այլև աշխարհաբարի ոճերն ու ասաց-



վածքներն օգտագործելով ավելացնում է Հայոց լեզվի զարդն ու Հարստու-  
թյունը<sup>14</sup> :

Գ. Պատկանյանը հրատարակել է շարաթաթերթի նպատակային երեք հա-  
մար, որնք մեծ Հեռաբրբրություն են ներկայացնում իբրև նորույթ մեր  
լրագրության պատմության մեջ: Դրանք նվիրվել են առանձին հարցերի, ո-  
րոնցից յուրաքանչյուրը բացահայտում է Պատկանյանի համակրանքների ո-  
րոշակի ուղղությունը: Հատուկ համարներից մեկի ստեղծման առիթը 1850 թ.  
աշնանը թագաժառանգ Ալեքսանդրի այցելությունն էր Վրաստանի մայրա-  
քաղաք: Այդ երևույթն ինքնըստինքյան բացառիկ չէր կայսերական տան ան-  
դամների համար, բայց Թիֆլիսի պարագան ճանաչողական մեծ նշանակու-  
թյուն է հաղորդում համարին: Այդ համարը զարմանալի կենդանությունը  
ներկայացնում է Թիֆլիսի ինքնատիպ առօրյան, տոնական օրերին քաղաքա-  
ցիների համախմբվածության և համընդհանուր խանդավառությունն անկրկ-  
նելի միջնորդը, ինչպես և Հայություն ունեցած անվերապահ կշիռը Վրաս-  
տանի մայրաքաղաքում (№ 10): Այս համարում միաժամանակ ցայտուն գծե-  
րով բացահայտված է Գ. Պատկանյանի ուստական կողմնորոշումը:

«Աբարատի» 16-րդ համարն ամբողջությամբ նվիրված է խաչատուր Լա-  
զարյանի յոթնամյա որդու Հովհաննեսի հիշատակին, որի մահով վերջանում  
էր Լազարյանների նշանավոր տոհմը: Այդ համարն ուշադրավ է և այն տեսա-  
կետից, որ ամբողջովին պատրաստվել է Ռ. Պատկանյանի ձեռքով: Վերջինս,  
ավարտելով Լազարյան ճամբարը, 1850 թ. փոխադրվել էր Թիֆլիս և օգնում  
էր հոր լրագրական, հրատարակչական գործերին: Նա գրել է մի քանի հոդված  
և մեծ խնամքով, հմտությամբ ու ճաշակով ստեղծել նպատակային այս հա-  
մարի բացառիկ հաջողված օրինակը:

«Աբարատի» երրորդ նպատակային համարը նվիրված է Հոմերոսին և նրա  
Հաննարեզ ստեղծագործությանը (№ 11): Այստեղ խոսվում է արոյական պա-  
տերազմի և Հայոց նահապետ Զարմայրի մասնակցության մասին: Հե-  
տագայում նույնպես Պատկանյանն անդրադարձել է Հոմերոսի թեմային, իր  
Հեռաբրբրությունը բացատրել նրանով, որ Հին դարերի պատմության բազ-  
մաթիվ երևույթներն ըմբռնելու համար սերունդները պետք է քաջածանոթ  
լինեն «Իլիականին» և «Ոդիսականին»: Իր պարբերաթերթի միջոցով Պատ-  
կանյանը ձգտել է դաստիարակել զարգացած ու Հայրենասեր քաղաքացիներին,

<sup>14</sup> Տե՛ս «Եվրոպա», 1851, N 9, էջ 35:

որոնք ծանոթ չի են նշ միայն իրենց ժողովրդի պատմութիւնը, այլ և անտիկ աշխարհի պատմութիւնն ու մեծ մշակութիւն:

Հարուստ է «Արարատի» գրական բաժինը: Այստեղ գետեղվել են մի շարք պատմվածքներ, գրույցներ, մանրապատումներ, բանաստեղծութիւններ: Արձակի ուշագրավ նմուշներէն է «Ոչ ոք չէ կարող նախախնամութիւն կարգը փոխել» վիպակը, նվիրված Կիլիկիայի Հայոց թագավորութիւնի պատմութիւնի ծանր ժամանակներին: Դարձյալ պատմական հենքի վրա են ստեղծված «Արդար դատաստան Աշոտոյ Հայոց թագավորի» և «Հնարագիտութիւն Սմբատ Հայոց թագավորի կնոջ Մարիամ թագուհու» գրույցները: Այս ստեղծագործութիւնների հեղինակները չեն նշվել: Միանգամայն հավանական է, որ դրանց հեղինակը Գ. Պատկանյանն է, որը «Կովկասում» տպագրված հոդվածները ևս էլ որ ստորագրում:

«Արարատում» տպագրված գրույցներն աչքի են ընկնում մի առանձնահատկութիւնով. չնայած սյուսեցեային դժի լարվածութիւնը և արկածային Հարուստ տարրերին, դրանց բնորոշ է բարեհաջող ավարտը: Գրականապես Սարինյանն այս առիթով նշում է, որ այդ արձակում «ոչ թե արտացոլվում է կյանքի իրական պատկերը, ոչ թե տրվում են կոնկրետ սոցիալական իրադրութիւններ, այլ ջատագովում են ընդհանուր բարոյագիտական սկզբունքներ, մարդը ներկայացվում է ընդհանուր բարոյական հատկանիշների տեսակետից»<sup>15</sup>: Մանրապատումները նույնպես բարոյախրատական բնույթ ունեն և, ինչպես գրում է Սարինյանը, թեև մնայուն արժեքներ չեն, բայց 1850-60-ական թթ. գեղարվեստական արձակի գրական նախադրյալներն են դարձել:

Շարաթաթերթի չափածոյի բաժնում տպագրվել են ժամանակի աչքի ընկնող բանաստեղծներ Մովսես Զոհրապյանի, Մսեր Մսերյանի, Սեյադի (Պետրոս Մազաթիան), ինչպես և Ներսիսյան դպրոցի աշակերտ Երևմա Իսահակյանի, վաղամեծիկ շնորհալի բանաստեղծ, Դորպատի համալսարանի ուսանող Վահան Ասկերյանի, Հ. Սայաթնովյանցի, աշուղներ Թուրինջի և Շիրինի բանաստեղծութիւնները: Շատ հետաքրքրական է, որ «Արարատի» էջերում տպագրվել են և երկու կին բանաստեղծների ստեղծագործութիւնները: Առաջին բանաստեղծութիւնը տպագրութիւնը կապվում է

<sup>15</sup> Ս. Սարինյան, XIX դարի 50-60-ական թթ. գեղարվեստական արձակը (տե՛ս «Յայ ցոր գրականութիւն» պատմութիւն», հ. 2, 1962, էջ 426):

Հայ մտավորական Իսահակ Տեր-Գրիգորյանի հետ, որը ծառայութեան բերու-  
մով Կախեթում գտնված ժամանակ այգիներում լսել էր մի գեղանի վրացուհու  
երգը և, դրանով Հափշտակված, այն թարգմանել և հանձնել էր «Արարատի»  
խմբագրին («երգ», 1850, № 12, էջ 87-88): Երկրորդը Արմավիրի Հայոց եկե-  
ղեցու Հրկիզման առիթով տեղի բնակչուհի Խասպիքի գրած «Ողբն» էր  
(1851, № 26, էջ 407): Երկու բանաստեղծուհիների գործերը խոսում են ոչ  
միայն հեղինակների ստեղծագործական կարողութունների, այլև «Արա-  
րատի» լայնահայաց խմբագրի ժուռնալիստական նրբատեսութեան մասին:

Գ. Պատկանյանի շնորհիվ առաջին անգամ Հայ մամուլի էջերում  
տպագրվել են նրա նախընկանյան դպրոցի սաներ Ռ. Պատկանյանի, Մ. Նալ-  
բանդյանի և Ա. Խաղեղյանի առաջին բանաստեղծութունները: Խաղեղյանի  
խոհական բանաստեղծութունները գրված էին դրաբար և աչքի էին ընկնում  
Հուզականութեամբ, անկեղծութեամբ, տաղաչափական կանոնների ջանադիր  
պահպանումով:

«Արարատի» գրական բաժնին նոր որակ են Հաղորդել Ռ. Պատկանյանի և  
Մ. Նալբանդյանի բանաստեղծութունները: «Պանդուխտ Հայ ՚ի Փարեզ ի գե-  
րեղմանի Լեռնի վերջին թագավորի Հայոց» Հայրենասիրական բանաստեղ-  
ծութեամբ Ռ. Պատկանյանը Հայտ էր ներկայացնում ծառայելու իր անազատ,  
թշվառ Հայրենիքին: Ենչափորելով պատմական թեմատիկան, նա կյանքի է  
կոչում հերոսի, որը կարող էր հուսադրել և «մխիթարել արամյանց»: Նույն  
նպատակն էր հետապնդում երիտասարդ բանաստեղծը «Ջարմայր նահապետի  
մահը» բանաստեղծութեամբ, որում գովերգում է հեռավոր անցյալի Հայ ազ-  
գային հերոսի սիրալից կյանքը: Ռ. Պատկանյանի «Առավոտյան երգ շինա-  
կանաց» և «Երեկոյան երգ շինականաց» բանաստեղծութունները բոլորովին  
նոր մի աշխարհ էին բացում Հայ ընթերցողի առջև՝ դուռի աշխատավորի և  
գեղջիկուհու Հոգևրանութեան, առօրյայի, աշխատանքի ու վայելքի, հոգսերի  
ու Հանգստի մի փոքր բանաստեղծականացված աշխարհը:

Մերայի Նալբանդյանի չորս բանաստեղծութուններից մեկը «Յիմարաց  
ուսման վերա ունեցած կարծիքը» գրված է աշխարհաբար: «Ժամանակ» և  
«Մի այլ յաստեղս լուսածաճանչս Ուրանիա սիգասցի» խոհական-  
փիլիսոփայական բանաստեղծութունները Նալբանդյանը գրել է իր ուսուցչի

«Նոր տարի» բանաստեղծութիւնի ազդեցութեամբ, որը տպագրվել էր «Կովկաս» թերթի 1847 թ. առաջին համարում: Ինչ վերաբերում է «Յիմարաց ուսման վերա ունեցած կարծիքը» և «Լեռքումն յիմարական կարծեաց, զոր անմիտք ունին ի վերայ ուսման» բանաստեղծութիւններին, ապա դրանք անմիջականորեն կապված էին Հայ իրականութիւնի օրվա կենսական խնդրի լուսավորութիւնի հետ և բարձրացնում էին կրթութիւնի ու ժամանակի գիտութիւնի նվաճումներին տիրապետելու անհրաժեշտութիւնի խնդիրը:

Տպագրելով Ռ. Պատկանյանի և Մ. Նալբանդյանի բանաստեղծութիւնները, «Արարատի» խմբագիրը վավերացնում էր Հայ գրականութիւնի դարգացման միակ տրամաբանական ուղին անցումը գրաբարից աշխարհաբարին: Գաբրիել Պատկանյանի թարգմանութեամբ տպագրվել են Կ. Բատյուշկովի «Թռչնակը» և Մ. Լերմոնտովի «Համակերպութիւն Լորաց» բանաստեղծութիւնները: Շատ խորհրդանշական է, որ Գ. Պատկանյանն առաջինն է մեր իրականութիւնի մեջ Հայ ընթերցողներին ծանոթացրել Սայաթ-Նովայի անվան և վաստակի հետ, Հայտնել նրա երգերի մոտակա հրատարակութիւնի լուրը Գ. Ախվերդյանի կողմից:

«Արարատի» գրական նյութերը, անցման շրջանի անհամարձակ քայլերը լինելով, դեռևս աչքի չէին ընկնում բանաստեղծների գրական վարպետութիւնի աստիճանով և լեզվի մշակվածութեամբ: Բայց, չնայած դրան, Գ. Պատկանյանը մեծ ծառայութիւն է մատուցել 1850-ական թթ. նոր կազմավորվող արևելահայ գրականութիւնը, թերթի շուրջը համախմբելով իր ժամանակի թե՛ գրասեր երիտասարդութիւնը և թե՛ գրական ձիրքով օժտված երիտասարդ բանաստեղծներին: Շաբաթաթերթը կենդանի կամրջի դեր է կատարել 1850-ական թթ. գրական համեստ ձեռքբերումները կապելով 1860-ական թթ. իր վերելքի փուլը մտնող Հայ նոր գրականութիւնի մեծ աշխարհի հետ:

1851 թ. ապրիլի 23-ին Պատկանյանը լույս է ընծայում «Արարատի» վերջին, 33-րդ համարը և առանց որևէ Հայտարարութիւնի մեկնում նոր Նախիջևան: Ինչպես երևում է, կաթողիկոսը դժգոհ էր Գ. Պատկանյանից, որը Ներսիսյան դպրոցի տեսչական Հիմնական աշխատանքին զուգահեռ պրագմում էր լրագրական գործունեութեամբ: Եվ այսպես, ինչպես մի քանի տարի առաջ Ներսեսը որոշակի նկատառումներով անհնազանդ այդ գործչին հեռացրել էր Նոր Նախիջևանից, այնպես էլ այժմ հեռացնում էր Թիֆլիսից: «Արարատի» խմբագիրը Հայրենի քաղաքն է հասնում եկեղեցական դուժարների

չուրջ բորբոքված կոիւնների ամենաթեթ պաշին և իրեն հատուկ եռանդով նետովում պայքարի մեջ:

Հայրապետյան կուսակցութեան ուժեղացումը դրդում է Խալիբյանին լուրջ միջոցներ ձեռնարկել, և նա 1853 թ. ամռանը, իր կյանքի դեմ մահափորձ կազմակերպելու կեղծ մեղադրանքով, ձերբակալել է տալիս Պատկանյանին: Ամբողջ յոթ տարի Պատկանյանն անցկացնում է Ռոստովի բանտում, այնուհետև մի կարև միջոց հսկողութեան տակ ապրում Նախիջևանում, բայց Հ. Խալիբյան - Գ. Այվազովսկի խմբակցութեանը հաջողվում է նրան վտարել տալ քաղաքից: 1863 թ. ադաովելով աքսորից, Պատկանյանը բնակութուն է հաստատում որդիների մոտ, Պետերբուրգում, ուր անց է կացնում կյանքի 26 տարիները: Սակայն 1853 թ. ավարտվում է նրա հասարակական-լուսավորական արդասավոր գործունեությունը:

Անդրկովկասի առաջին Հայ պարբերաթերթը «Կովկասը», դադարեց ցարական վարչական մեքենայի կամայականութեան հետևանքով: «Արարատի» դադարեցումը կապված էր Հայկական «Հանդամանքների» հետ: Գարբիել Պատկանյանը բազմակողմանիորեն զարգացած, լուսամիտ և հմուտ խմբագիրը, մենակ էր և անզոր երկու ճակատի դեմ տարվող պայքարը շահել կարողանալու համար: Նոր ժամանակներում գործելու և Հաղթելու համար անհրաժեշտ էին նոր տիպի գործիչներ, որոնք, ձերբազատված անցյալի կղերապաշտական աշխարհայացքի պարտադրող պայմանականություններից, ունենային եվրոպական չափանիշների գիտական մակարդակ և պայքարող մարտիկին բնորոշ կոփածք: Այդ Հատկանիշներով էին օժտված 1850-ական թթ. Հայ լուսավորիչները, որոնք պետք է փոխարինեին Գարբիել Պատկանյանին:

# Գ Լ ՈՒ Խ Չ ՈՐՐ ՈՐ Դ

## ՊՈԼՍԱՅԱՅ ՄԱՍՈՒԸ

Արևմտահայ մամուլի սկզբնավորումն ու զարգացումը սերտորեն կապված են այն փոփոխությունների հետ, որոնք տեղի էին ունենում Օսմանյան կայսրության ներքին կառուցվածքում և որոշակի արտահայտություն էին ստանում հատկապես XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին պետության ձեռնարկած միջոցառումներում: Նշված ժամանակաշրջանում Թուրքիան վաղուց հրաժեշտ էր տվել նվաճողական-զավթողական քաղաքականությանը և ոչ միայն այլևս չէր սպառնում Եվրոպային, այլև աստիճանաբար դառնում էր նրան կցորդված գաղութացվող մի երկիր, որի և՛ տնտեսական և՛, որ ամենակարևորն է, քաղաքական գոյությունն այսուհետև կախված էր լինելու մեծ տերությունների դիվանագիտական մտադրություններից, Եվրոպայի ու Ռուսաստանի միջև Արևելյան Հարցում գոյություն ունեցող հակասություններից և դրանց լուծման ուղիներից:

Անշուշտ, Թուրքական պետությունը փորձում էր ելք գտնել ստեղծված իրադրությունից, և որովհետև կառավարական շրջաններում պարզ գիտակցվում էր կայսրության նախկին սահմանների վերականգնման անհնարինությունը, ապա եղածը պահպանելու ձգտում էր նկատվում: Այս առումով կարևոր պատմական նշանակություն ունեցան Սելիմ III-ի (1798-1807) և նրա հաջորդի Մահմուդ II-ի (1808-1839) նախաձեռնումները, որոնք հայտնի են Թանզիմաթի-խայրիև կամ բարենորոգումներ անունով և որոնք իրենց հետագա զարգացումը, գուցե և սխալ չի լինի ասել, կրկնությունը գտան 1856-1875 թթ. հռչակված օրենքներում, մինչև և՛ այդ օրենքները, և՛ դրանց նախաձեռնողները 1876 թ. հռչակված սահմանադրության հետ միասին մոռացության մատնվեցին Արդուլ Համիդ II-ի գահ բարձրանալու առաջին իսկ տարիներին:

Թուրքական բարենորոգումները մեզ հետաքրքրում են ոչ այնքան որպես Փոքր Ասիայում գերիշխող Թուրք ժողովրդի քաղաքական կյանքին անմիջապես առնչվող երևույթ, որքան որպես պատմական մի գործընթաց, որը ավելի համապատասխանում էր ենթակա զարգացած և առաջադեմ ազգերի գաղա-

փարակհան և ազգային-ազատագրական պայքարի Հասունացած ձգտումներին: Այդ է վիպյում թեկուզև այն Հանդամանքը, որ թուրք ժողովուրդը, հիմնականում անմասն Հասարակական կյանքին, լավագույն դեպքում անտարբեր, իսկ իրականում թշնամաբար վերաբերվեց թանգիմաթի Հռչակած գրույթներին (անձի ազատութուն, գույքի անձեռնմխելիութուն, օրենքի առաջ կրոնի Հավասարութուն և այլն), այնինչ կայսրության առաջադեմ ժողովուրդները և, անշուշտ, նաև արևմտահայերը, թվում է, ահազանգի էին սպասում Հասարակական կյանքում արդեն մարմնավորված գաղափարները Հրապարակ հանելու Համար:

Առայժմ էր այնպես, որ վերևից պարտադրված օրենքները եթե տիրապետող թուրք ժողովրդի Համար դեռևս անպատրաստ դեմոկրատական շարժումների, մնում էին որպես մեռած տառ, ապա ամբողջ XIX դարի ընթացքում Օսմանյան կայսրության մեջ տեղի ունեցող ազատագրական գործընթացների ակտիվ բաժինն իրենց վրա վերցրած մյուս ժողովուրդների Համար բուրժուական-առաջադիմական Հիշյալ Հռչակումները ստանում են իրենց նպատակագրումներին Հասնելու բովանդակութուն:

Հետաքրքիր է այս տեսակետից Հիշել, որ Սելիմ III -ի կանխամտածված բարեփոխումներին իրենց առաջարկութուններով անմիջական մասնակցութուն են ունեցել քրիստոնյա ազգերի ներկայացուցիչները, այդ թվում նաև ազգությամբ Հայ, Փարսիում Ֆրանսերեն լույս տեսած Թուրքիայի հիմնարար պատմութուններից մեկի Հեղինակ Մուրաջա՛ Օսոնը: Իսկ Թուրքիայի XIX դարի ամենանշանակալից իրադարձութուններից մեկի՝ «Ռուշչուկի բարեկամներ» խմբի նախաձեռնած պայտատական զինված Հեղաշրջման գլխավոր գաղափարական կազմակերպիչը, գրամամատակարարը և ամենագործուն ու Հետևողական մասնակիցը եղել է Դանուբյան երկրների և Կոստանդնուպոլսի մեծահարուստների գործակիցը, փաստորեն նրանց գործառնութուններն իր ձեռքում կենտրոնացնող, նշանավոր քաղաքական գործիչ և զիլանագետ Մանուկ Միրզայանը: Նա էր ձգտում Թուրքիան կանգնեցնել առաջադիմության ուղու վրա, անշուշտ առաջին Հերթին Հեամուտ լինելով իր ազգային շահերին, Թուրքիայի առաջադիմության Հեռանկարները տեսնելով ոչ թե Եվրոպայի, այլ Ռուսաստանի Հեա Համագործակցելու մեջ, թեև, չմոռանաք ընդգծել, որ Կոստանդնուպոլսում կազմակերպած պայտատական զինված խռովության պարտությունից Հետո արդեն Մանուկ Միրզայանն այն Համոզմունքներն էր, որ Թուրքիայի նման անփասահելի երկրի Հեա որևէ Հաս-

տատուն հույսեր կապել չարժե և վերջնականապես կողմնորոշվեց միայն դեպի Ռուսաստան:

Այն, որ XIX դարի առաջին տասնամյակների արևմտահայ միտքը և լուսավորական շարժումը սնվում էին Օսմանյան կայսրության ներսում կատարվող տեղաշարժերից և աստիճանաբար իշխանություն մեջ տիրապետություն ձգտող սոցիալական նոր ուժերի արթնացումից, վկայում են նույն դարի 20-ական թվականներից հաճախակի դարձած դեմոկրատական գանգվածների երբեմն մի քանի հազարի հասնող ցույցերը, հատկապես արևմտահայ կյանքի կենտրոնում Կոստանդնուպոլսում, որոնք բեռուցնում էին ազգի դեմոկրատական կառավարման և լուսավորության միջոցով նրա կյանքի բարելավման հիմնադրությունները:

Փոփոխվող իրադրությունից թելադրված և հաճախ կյանքում իրագործում չգտնելու պատճառով կրկնվող թանզիմաթի օրենքներն ընդգրկում էին հասարակական-քաղաքական, մասամբ նաև սոցիալական և մշակութային կյանքի ոլորտները, որի արտահայտություններից մեկն էր 1831 թ. Կոստանդնուպոլսում թուրքերեն առաջին թերթի «Թագվիմ-ի վագայիի» («Շար դեպքերի») հիմնումը, որից անմիջապես օգտվեցին վաղուց նման առիթի սպասող հայերը և հույները, սուլթանի թույլտվությամբ կայսրության մայրաքաղաքում հրատարակելով հիշյալ թերթի թարգմանված տարբերակները, որի հայերեն տարբերակը կոչվեց «Լրո գիր մեծի տերութեանն օսմանեան»:

### «ԼՐՈ ԳԻՐ» (1832-1850)

Արևմտահայերը և հատկապես նրա սերուցքը կազմող հարյուր հազարավոր պոլսահայերը կարիք ունեին պարբերական մամուլի միջոցով արտաքին աշխարհին հաղորդակցվելու, միայն թե բուն Կոստանդնուպոլսում սեփական պարբերական հրատարակելու ցանկությունը հետաձգվում էր պարբերական մամուլի նկատմամբ թուրքիայում և նրա մայրաքաղաքում եղած կասկածամիտ վերաբերմունքի պատճառով, երբ թերթը դիտվում էր շարիաթի տիրապետող ըմբռնումների հակառակ մի բան: Հիշենք, որ թուրքական առաջնեկ «Թագվիմ-ի վագայիի» իրական ընթերցողները, բացի մի քանի թուրք պաշտոնյաներից, հայերն ու հույներն էին: Վերջիններիս պատրիարքների՝ Ստեփանոսի և Կոստանդիոսի առջև Մահմուդ II-ը պայման էր դրել իր թերթից 500-ական օրինակ տարածել հայ և հույն ընթերցողների շրջանում «Թագ-



Վիմ-ի վազայի» հայերեն և հունարեն տարբերակները հրատարակելու իրավունք ստանալու համար:

«ԹագՎիմ-ի վազային» տպվում էր Հայ ժառանգական տպագրիչ Պողոս Արապյանի Զանգերով կարգավորված արքունական տպարանում, որի տեսուչըն էր նա դեռևս 1816 թվականից: Հետագայում թուրքերեն թերթի և նրա հայերեն տարբերակի հրատարակման գործում մեծ դեր խաղաց որդին Գալուստ Արապյանը:

Գ. Արապյանը, որի կոստանդնուպոլսում հիմնած տպարանում, ի թիվս բազմաթիվ այլ հրատարակությունների, տպագրվում էր նաև պոլսահայ երկրորդ «Ազգարար Բյուզանդյան» թերթը, ի վերջո ստանձնեց «Լրո գրի» խմբագրի պարտականությունները, մի բան, որ երևում է «Լրո գրի» հրատարակման մասին թերթում արած նրա հայտարարությունից (1846, № 1):

Ստանձնելով հրատարակիչ-խմբագրի պարտականությունները, Գ. Արապյանն արդեն չէր բավարարվում թերթի թուրքական տարբերակը լինելու վիճակով և միջոցներ էր որոնում այն ավելի հետաքրքիր դարձնելու, արդիական մակերդակի վրա դնելու և անշուշտ նաև ազգային կյանքին ու Հայ հասարակությունը հուզող խնդիրներին մոտեցնելու համար: Նա բարձրացնում է թերթի բաժանորդագրության գինը՝ աշխատակցողներին ու լրագրողներին վճարելու նպատակով: Խմբագիրն ուզում էր «ամսական հատուցանելով» շահագրգռել «բանի ինչ հարգելի անձանց», որոնք «գեղեցիկ և զվարճալի բանասիրական նաև հասարակության բոլորին ալ օգտակար բաներ» կարող էին գրել «լեզվապես ու գիտական գրչով»:

Պարզ է, որ Արապյանի խմբագրած թերթի օտարումը թուրքաոզի բնագրից առաջադիմական նշանակալից քայլ էր ազգային պարբերական մամուլի պատմության մեջ, բանի որ այդպիսով նա համերաշխվում էր արդեն 1840-ից կոստանդնուպոլսում և նրա սահմաններից դուրս լույս տեսնող Հայկական մյուս պարբերականների բունած լրագրային ընթացքին և նպատակադրումներին:

Եթե Գալուստ Արապյանը «Լրո գրի» անդրանիկ խմբագիրն էր, ապա, ըստ երևույթին, տիրացու Հուսիկը և Գեորգ Գրիգորյանը (հայերենին և թուրքերենին կատարելապես տիրապետող մի երկտասարդ, որը 1843 թ. ստանձնում է Հայոց պատրիարքարանի օսմաներեն գրությունների քարտուղարի պարտականությունը, այդ պաշտոնում մնալով 27 տարի) պոլսահայ առաջին լրագրող-խմբագմանիչներն էին, որոնք ստեղծել են «ԹագՎիմ-ի վազայի» հայե-

րեն տարբերակը: Այսպես թե այնպես, թե՛ տիրացու Հուսիկը, թե՛ Գ. Գրիգորյանը առանձին ջանք չեն թափել պոլսահայ անդրանիկ թերթին ազգային նկարագիր տալու ուղղութիւնով, մի բան, որ հաջողվել է Գալուստ Արապյանին:

Լինելով պալատական անցուղարձի, մանր և խոշոր որոշումների ու հրամաններին լրատու, ինչպես նաև թուլատրելիութիւն սահմաններում կայսրութիւնի ներսում և եվրոպական երկրներում կատարվող իրադարձութիւնների մեկնաբանող ու յուրովի գնահատող, «Թագվիմ-ի վագայիի» Հայերեն կրկնօրինակն այսօր պատմագիտական սկզբնաղբյուրի անգնահատելի նշանակութիւն ունի, եթե Հաշվի առնենք մանավանդ այն հանգամանքը, որ Հիմնականում պահպանվել է նրա Հայկական կրկնօրինակը, իսկ թուրքական ոչ լրիվ Հավաքածուն կա միայն եվրոպայում:

Անշուշտ, թուրքական «Թագվիմ-ի վագայիում», հետևաբար նաև «Լրո գրում» տեղ էին գտնում միայն տերութիւնի կողմից երաշխավորված նյութեր և հաղորդումներ: Արգելվում էին այն նյութերը, որոնք կարող էին ճշմարիտ լույս սփռել Օսմանյան կայսրութիւնի և եվրոպական պետութիւնների հարաբերութիւնների վրա, արտացոլել պալատի անհեթեթ բարքերը, կայսրութիւնի տարածքներում, բայց իրենց դարավոր Հայրենիքներում վայրագ Հալածանքների ենթարկվող, տարբեր ազգութիւնների ծանր վիճակը և այլն, սակայն առկա նյութերն իսկ իրենց Հավաստիութիւնով վերարտագրում են մի պատկեր, որից հրաժարվել չի կարող թերթը հրատարակող երկիրը:

Զարմանք է պատճառում ամենից առաջ օրենքի բացարձակ բացակայութիւնը և դրանից բխող բոլոր բացասական երևույթները կամայականութիւն, կաշառակերութիւն, ազգային ու կրօնական Հալածանքների, Համընդհանուր անհեռանկարայնութիւնի ճնշող մթնոլորտը:

XIX դարի երկրորդ կեսերին, չնայած թանգրիմաթի հրատարակած օրենքներին, իշխանութիւնի ամենաբարձր ոլորտներում անգամ իրավական կատեգորիան փոխարինված էր տնավարական, անձնական փոխհարաբերութիւնների և շահավետութիւնի սկզբունքով:

Զկար իրավադատութիւն այդ բառի ամենատարրական իմաստով: Թուրքիայում նույնիսկ մարդասպանը կարող էր դատվել կամ չդատվել, քանի որ գործում էր ոչ թե օրենսդրութիւնը, որպիսին չկար, այլ արյան վրիժառութիւնի օրենքը և Գերագույն ատյանի կամ սուլթանի վճիռները: Տվյալ դեպքում ելնում էին այն բանից, թե ինչ կարծիքի են այդ մասին սպանվածի Հա-

բազմատները: Եթե տուժած կողմը պատրաստ էր բավարարվել փրկագնով, ապա սուլթանի հրամանով գործը փակվում էր, և արդարությունը համարվում էր վերականգնված (1841, № 28, 1846, № 13-14 և այլն):

Քանի որ շարիաթը բրեհական օրենսդիրք էր, այլ ընդամենը կանոնադիրք, ապա ծանրագույն պատիժներից նույն ձևով ազատվում էին նաև մյուս հանցագործները, և իհարկե առաջին հերթին բարձրատիճան: Եվ այս տեսակետից հետաքրքիր է, որ «Լրո գիրք» մեզ ականատես է դարձնում իրականում օրինապահության հետ առնչություն հունեցող դատավարական մի պրոցեսի բարձրագույն իրավական առյանում, ուր պատասխանողները դերում են մեծ վեզիր (կարբոս) նշանավոր Խուսրե փաշան, սուլթանի փեսան (Դամադ փաշան), բանակի հրամանատար, սերասքեր Խալիլ փաշան, Գոճա-Իլի մյուղիր Աքրիֆ փաշան և այլք: Իր նախադեպը չունեցող նման դատավարությունը, մանավանդ որ այն հրապարակվում էր պաշտոնաթերթում, արդյունք էր այն հաջողության, որ իր բարենորոգչական գործունեությունը ավյալ պահին հասել էր թանդիմաթի գլխավոր նախաձեռնողներից մեկը՝ Մուստաֆա Իեչլիդ փաշան (1800-1858), ժամանակ առ ժամանակ արտաքին գործոց նախարար կամ մեծ վեզիր, որի բարենորոգչական ծրագրերը կատարի թշնամությունը էին ընդունվում թուրքական հետադիմություն և նրանց ազդեցիկ ներկայացուցիչների վերոհիշյալ բարձրատիճան պաշտոնյաների կողմից: Անուշտ հաղթանակը ժամանակավոր էր և սպասվելիք պատիժն էլ, ինչպես կերևա, աննշան: Բայց կարևորն այստեղ փաստն է և թերթի միջոցով տիրող բարբերին առնչվելը, մի բան, որ արվում էր ամենայն հարազատությունը: Աքրիֆ փաշան, որը թերթի իսկ սրահումով «ճշմարտության և արդարության կանոնին» դեմ գործող և «գուլումներ» անող անձն էր և իր անօրինական արարքներով հազարավոր ընչազուրկների ստիպել էր ողբով ու լացով Պուլիս թափվել փաշայի արարքների դեմ բողոքելու, Առյանի կողմից արդարացվում է, գրկվում է միայն վեզիրության աստիճանից և «աքսորվում է» Ագրիանուպուլիս (1840, № 8):

Վերոհիշյալ ազմուկ հանած դատական գործընթացը վարող առնականների ընդհանուր մակարդակի մասին պատկերավոր կարծիք են ստեղծում հանցանքի մեծություն ու փոքրություն մասին արված նրանց դատողությունները: Պարզվում է, որ «Նաֆիդ էֆենդիի համեմատությունը» Աքրիֆ փաշան նույնիսկ «փոքր հանցագործ է» և ահա թե ինչու. «Հիշյալ մեծություն մեջը կողոնկերուն այսպես հարցվեցավ, թե այս փաշան իր հանցանքին գյորև

ի՞նչ պատժո արժանի է: Անոնք ալ միաբերան պատասխանեցին, թե այս փաշային ասկեց առաջ պազի բարակ գործքերու մեջ ըրած անվայել շարժողութիւնները, և մանավանդ իր պատիվը և փառքը պահպանելու մտքը ըրած մարդասպանութիւնն պես հանցանքները, որ մտնուն ալ հայտնի է, հիմա անոնք հիշել պետք է, այլ իրեն հիմակվան հանցանքները եթե նաֆիզ էֆենտիին ասկեց առաջ ըրած հանցանքին հետ բաղդատելու ըլլամք, անոր հանցանքեն քիչ մը թեթև եղած կըլլա ասոր հանցանքը» և ահա թե ինչու պարզվում է, որ բարձրաստիճան շարագործի «ըրածը խոտովութիւն ձգելու պես հանցանք» էր, որն, ըստ երևույթին, քիչ թե շատ աններելի էր, և որի պատճառով նաֆիզ էֆենտիին ավելի անբարենպաստ վիճակում էր, այնինչ Աքիֆ փաշայի գործած մարդասպանութիւնները «իրեն տգիտութիւն» հետևանք էին, այսինքն մեղմացուցիչ դեպք հանցանաց էին (1840, № 23): Զպետք է մոռանալ, որ հենց իրենք՝ դատավճիռ կայացնողները, տառապում էին նման «մեղմ» արատներով:

Թերթի էջերը զբաղեցնում է Մուստաֆա Ռեշիդի կատաղի հակառակորդ խուսրե փաշայի դատավարութիւնը, որը վերնադրված է «նախկին սադրազամ խուսրե փաշայի հանցանքները»: Խոսքը վերաբերում է մեծ չափերի կաշառակերութիւն, թեև ավելի հետաքրքիր է ընդունված դատավճիռը: Հարկ է նշել, որ եթե թուրքական ատյանը մեղադրական ակտ էր ներկայացնում քրիստոնյա ազգերի ներկայացուցիչներին, ապա դատավորների բարեհոգութիւնը միանգամայն հակառակ բեկումն էր մտնունում: Մոռացվում էին բոլոր օրյակտիվ հանգամանքները, ասպարեզ էին գալիս երախտամոռութիւնը, չարամտութիւնը, «բարեխնամ կառավարութիւն» նկատմամբ մտահոգացված դավադրութիւնը և նման այլ կարգի ծանրադույն մեղադրանքներ, ոչ մեկն էլ չամրապնդված որեէ փաստական հիմքով:

Թերթում նկարագրվում է նման «աններելի» մի հանցանք, երբ կեղեքված և հուսահատութիւնից տանջահար թոխաթի բնակիչները, այլ ելք չտեսնելով, մտել են պետական հարկահավաքի տուն և նրան սպանել: Թերթի կարծիքով, թոխաթցիների արարքը «բացե ի բաց ապստամբութիւն էր, ուստի այս խոտվարար մարդիկը պատժել պետք եղավ» (1840, № 15):

Քրիստոնյաների նկատմամբ գործադրված դատանութիւնը վիպում է, որ 1839 թ. Գուլհանեի հաթիթ-շերիֆով ազգերի իրապահատասարութիւն սկզբունքը նույնպես, մյուս շատ օրենքների նման, մնում էր թղթի վրա, որ առաջվա պես իշխող արտոնյալ վիճակը իսլամ դավանողների կողմն էր: Այդ

Հանգամանքը Հաստատող բազմաթիվ նյութերի կարելի է Հանդիպել նաև թերթի 40-ական թվականների վերջերն արտացոլող Համարներում, երբ թան-դիմաթիւ Հռչակելուց անցել էր գրեթէ տասը տարի, և թվում էր, թէ քրիստոնյաների կյանքում պետք է ինչ-որ բարելավումներ տեղի ունեցած լինեին:

Թերթում տպագրված այս բնույթի նյութերը Հաստատում են այն իրողու-թյունը, որ քրիստոնյաները և մասնավորապես Հայերը ազգային և սոցիալա-կան ծանրագույն Հայածանքների պատճառով է միայն, որ, թողնելով Հայրե-նիքը, ստիպված ձեռներն են առել պանդխտության ցուպը (1832, № 13):

Եվրոպական իրադարձություններին վերաբերող հաղորդումները «Լրո գրի» քաղում էր «Թագվիմ-ի վագախից», Հետևաբար և պահպանում էր այն բացարձակ անհանդուրժողական վերաբերմունքը, որը վաղուց ի վեր և մեկընդմիջ ադրեկրել էր թուրքական պաշտոնեությունը այլ ժողովուրդների ինքնորոշման իրավունքների նկատմամբ: Բնական է, որ այս խնդրում էլ կարելի արդարացնել «Լրո գրի» Հրատարակչին, քանի որ 40-ական թվականների վերջում թերթը գրեթէ ձերբազատվել էր իր նախորդի կրկնօրինակը լինելու Հանգամանքից և շատ նյութերի ընտրության հարցում վարում էր ինքնուրույն ազգային դիմ: Հետևաբար մնում է արձանագրել, որ Հիշյալ պարագայում, Հավատարմագրվելով «Թագվիմ-ի վագախի» ուղեգծին, այն փաստորեն Համերայնություն էր պետություն բռնած ընթացքին և չէր օգնում արևմտահայ ազգային-ազատագրական գաղափարախոսությունն ամրապնդմանը: Թերևս այս, այլ պատճառների Հետ միասին, կարելի է Համարել 1850 թ. «Լրո գրի» դադարման կարևոր Հանգամանքներից մեկը:

Որ թերթն ուներ պահպանողական ուղղություն, վկայում են նաև այլ նյութեր: XIX դարի 40-ական թվականներին, երբ ձեռվորվում էր արևմտահայ լիբերալ-ուսավորական գաղափարախոսությունը խարսխված սոցիալ-անասական այն փոփոխությունների վրա, որ ընդհանուր առմամբ տեղ էին գտնում կայսրության սահմաններում, իրենց յուրօրինակ արտացումն էին գտնում «Լրո գրում», Հանգամանք, որն անշուշտ Հիմնավորում է թերթի պատմական արժեքը: Խոսքը վերաբերում է XIX դարի 40-ական թվականների սկզբին ամիրայական դասի և ակտիվացող արհեստավորական միավորումների միջև ծայր առած պայքարին՝ ազգային գործերին միջամակու խնդրում և գրա նկատմամբ թերթի ունեցած դիրքորոշմանը:

Քաղաքական կյանքում գրությունները Հարուստ և ազդեցիկ ամիրայ-ները, միայնակ էին անօրինում Հայ ժողովրդի կառավարման, պարիարքա-

րանի և պատրիարքի ընտրության, ազգային եկամուտների, դպրոցների և հիվանդանոցների հոգաբարձության հարցերը հաշվի չենտեղիվ արհեստավորական դեմոկրատիայի և աշխատավորական մյուս խավերի նոր ցանկությունների հետ, որոնք գնալով ավելի հետևողական և պահանջկոտ բնույթ էին ստանում:

Հին ամիրայության, առևտրավաշխառուական վերնախավի և արհեստավորության բախման առիթը Սկյութարի ճեմարանի հոգաբարձության խնդիրն էր և վերջիններիս այդ գործում մասնակցելու և շմասնակցելու հարցը, որն ստացել էր ինքնահաստատման, սոցիալական իրավունքներ ձեռք բերելու բովանդակություն:

1836 թվականին որոշվեց նորոգել Երուսաղեմի վանքին պատկանող հոգետունը և այնտեղ հիմնել բարձրագույն գիշերօթիկ դպրոց, ուր պետք է մուտք ունենային ինչպես հարուստների, այնպես և աղքատների երեխաները: Վերջիններիս համար նույնիսկ սահմանվում էր ձրի ուսուցում: Հիվանդանոցը նորոգվեց ճարտարապետներ Կարապետ Պալյանի և Հովհաննես Սերվերյանի ջանքերով: Երուսաղեմի ս. Հակոբի վանքը պարտավորվեց ճեմարանի պահպանմանը տրամադրել 120.000 դուռու: Մնացած ծախսերը պետք է հոգային Պոլսի հայ ամիրաները: 1838 թվականին բացվեց այդ նշանավոր ուսումնարանը՝ 50 աշակերտով, որոնցից երկուսի ուսման վարձը վճարում էր Հակոբոս պատրիարքը: Սակայն շուտով պարզվեց, որ ուսումնարանին տրամադրված գումարները չեն ծածկում ընդհանուր ծախսերը, հետևապես անհրաժեշտ է լրացուցիչ հոգաբարձություն: Եվ այստեղ, օգտվելով ընդհանուր տրամադրություններից ու, որոշելով տուրք տալ արհեստավորության ցանկությանը, պատրիարքը համար գտավ նրանց մասնակցությունը ազգօգուտ այս գործին: Կազմվեց արհեստավորական 24 ընկերակցությունների (էսնաֆությունների) ներկայացուցիչներից բաղկացած մի խորհուրդ, հանգամանք, որը մեծ ահաճությամբ ընդունվեց ամիրայության կողմից: Նրանք արժանապատվությունից ցածր համարեցին խորհրդի նստել ստորին դասի հետ և ընդունել վերջինիս օգնությունը: Ելքը գտան ճեմարանի հովանավորման գործից իսպառ հրաժարվելու մեջ, մտածելով, որ արհեստավորների ուժերից վեր կլինի այն միայնակ առաջ տանելը: Բայց շուտով համոզվելով ձեռնարկածի անարդյունավետության մեջ, ամիրաները որոշեցին հրաժարեցնել արդեն անցանկալի պատրիարքին, նրա փոխարեն

վերընտրելով Ստեփանոս Աղապնուն, որի խնդիրը պետք է լիներ ամիրայու-  
թյան նախկին ինքնիշխանության վերականգնումը:

Այս կարուկ միջոցառումները, որոնք սպառնում էին փակել ճեմարանը, դիմադրության ալիք բարձրացրին արհեստավորների ու ճեմարանի աշա-  
կերտների շարքերում: 1840 թ. սուլթանին ուղղած Հատուկ դիմումում նրանք  
առաջարկում էին ամբողջովին արհեստավորությանը Հանձնել ճեմարանի  
կառավարման գործը: Սակայն սուլթան Մեջլիզը ոչ միայն մերժեց այս  
խնդիրը, այլև կարգադրեց բանտարկել 24-ի խորհուրդը: Վերջին Հանգա-  
մանքը Համբերությունից Հանեց առանց այն էլ լարվածությամբ իրադարձու-  
թյունների վախճանին սպասող Կ. Պոլսի Հայ արհեստավորությանը: Փակելով  
խանութները և դիմվելով ով ինչով կարող է, նրանք գոչյուններով ու աղա-  
ղակով դիմեցին նախ պատրիարքարան, ապա խոնվեցին Բարձր դռան առաջ,  
պահանջելով ազատ արձակել իրենց բանտարկյալ ընկերներին: Էսնաֆների  
երևք Հազարանոց այդ ցույցը ականատեսների վկայությամբ ներշնչող պատ-  
կեր էր ներկայացնում:

Դեպքերի Հետագա սրումը կանխելու Համար սուլթանն ազատեց ձերբա-  
կալվածներին չհատազելով, սակայն, մի քանի օր Հետո նորից բանտարկել ու  
այս անգամ Կ. Պոլսից արտրել շարժման պարագլուխներին: Նա միաժամա-  
նակ Հարմար գտավ դարձյալ փոխել պատրիարքին, բնավորութամբ ոչ վճռա-  
կան Ստեփանոսի տեղը 1841 թ. պատրիարք կարգելով Աստվածատուրին:

1840 թվականի այս իրադարձությունները չափազանց ակնառու էին Արև-  
մտահայաստանի քաղաքական կյանքում: Դրանց կողքով լուսթյամբ չանցավ  
նաև «Լրո գիրք», որը, բռնելով ամիրաների ու Բարձր դռան կողմը, իր Հա-  
մարներից մեկում խիստ պախարակեց արհեստավորների «աննպատչան վար-  
քագիրը» (1841, № 43): Նշելով, որ Հանցագործները «տերության Հրամանով  
մեկ-մեկ տեղ արտրվեցան», թերթը միանգամայն արդարացի է Համարում  
այդ պատիժը:

Սակայն ամիրաների Հազմանակից Հետո էլ պայքարը շարունակվեց: Որ-  
քան էլ փոփոխվեցին պատրիարքները, փակվեց ճեմարանը, արտրվեցին նրա  
Հոգարարձու Էսնաֆները և սուլթանի ու պատրիարքի ձայնափող «Լրո գիրք»  
գատապարանց Էսնաֆների «լպիրչ» արարքները, այնուհանդերձ վերջիննե-  
րիս ակտիվ մուտքը գեպի Հասարակական կյանք ավելի ու ավելի Հրա-  
մայական դարձավ: Դեպքերի Հետագա ընթացքը միանգամայն այլ զար-  
գացում ապրեց: Սկյութարի ճեմարանի փակումից ըմբոստացած արհեստա-

վորական դասը զգալով, որ այդ ձևով փակում են նաև ազգային գործերի կառավարման մեջ իրենց մասնակցութեան ցանկալի ուղիները, ավելի միավորվեց ընդդեմ ամիրայութեան, որոնք, վախեցած ժողովրդի ուժից, ստիպված եղան տեղի տալու և դիմեցին Բարձր դռանը՝ կազմելու ազգային միացյալ մի վարչութիւն:

1847 թ. ստեղծվեց Ազգային ժողովը՝ բաղկացած աշխարհիկ և հոգևոր ժողովներից: Վերջինում ընտրվում էին 14 հոգևորականներ, իսկ քաղաքական ժողովի ներկայացուցիչներն էին 20 աշխարհականներ, ի թիվս որոնց նաև հասֆութիւնների ներկայացուցիչներ:

Ազգային ժողովի հիմնադրումն արդեն վկայում է, որ չնայած թափած բուրդը ջանքերին, ամիրաներն այլևս ի վիճակի չէին վերագտնելու նախկին հեղինակութիւնը: Արդյունքն այն եղավ, որ սահմանափակվեցին պատրիարքի իրավունքները, քանի որ վերջինս այլևս չէր կարող առանց երկու ժողովների գիտութեան Բ. դռան հետ ինքնուրույն վճիռներ կայացնել, իսկ ամիրաներն էլ ստիպված էին հաշվի նստել ժողովի հետ ունկնդրելու մինչ այդ արհամարհված արհեստավորների խոսքը:

Այսպիսով, Ազգային ժողովի հիմնադրումը կարևոր քայլ էր XIX դարի 40-ական թվականների արևմտահայութեան հասարակական կյանքում: Ընդհանուրի մասնակցութիւնը ազգային կյանքի կառավարմանը սկզբունքորեն չեզոքացնում էր մեկ կամ մյուս դասի բացարձակ իշխանութիւնը:

«Լրո գիրը», համենայն դեպս մեր թերթած համարներում, չի անդրադառնում Ազգային ժողովի գործունեութեանը: Պատճառը պետք է որոնել նախ և առաջ արևմտահայ հասարակական կյանքի համար կարևոր այդ երևույթի նկատմամբ թերթի ունեցած բացասական վերաբերմունքի մեջ: Բայց այսօր մեզ համար կարևորը ոչ այնքան այդ վերաբերմունքն է, որքան կատարված իրադարձութիւններին մասուլի արձագանքը, որն ինքնըստինքյան բնութագրում է նաև իրարամերժ հոսանքների առկայութիւնը:

«Լրո գիր» համարներում տեղ են գտել ազգային կյանքին վերաբերող այլ նյութեր, որոնցում արտացոլվում են հայ երևելիների մատուցած ծառայութիւնները Օսմանյան կայսրութեանը, նրանց ունեցած դերն ու կշիռը կայսրութեան տնտեսական կյանքում, որով և բնորոշվում էր այն տեղն ու դիրքը, որ գրավում էին հայրենիքի ինքնուրույնութիւնը կորցրած արևմտահայերը եկվոր ժողովրդի մայրաքաղաքում: Հետաքրքրվողը թերթում կգտնի նաև բազմաթիվ հաղորդումներ Արևելյան Հայաստանի մշակութային կյանքի վե-



բարերայալ: Այս բանն անշուշտ Հատկանշում էր երկու Հատվածների ազգային-քաղաքական մերձեցման ձգտումներն ու անհրաժեշտությունը:

Սակայն, այս Հետաքրքիր նյութերի առկայությունը Հանդերձ, դեռևս XIX դարի 40-ական թվականների սկզբից «Արտ գիրք» ոչ միայն իր տպագրած նյութերի ամբողջական որակով և նկարագրով, այլև լեզվական, հրատարակչական, տպագրական կուլտուրայով զգալիորեն ետ էր մնում Չմուռնիայում և նույն Կոստանդնուպոլսում լույս տեսնող Հայերեն մյուս թերթերից, ավելի որոշակի դեռևս 1840 թ. օգոստոսի 10-ից Չմուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյանից» և նույն թվականի նոյեմբերի 30-ից Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ազգաբար Բյուզանդյանից», որը ոչ միայն վերը նշված Հատկանիշներով, այլև իր քաղաքական ուղղվածությամբ ու արծարծվող մտքերի թարմությամբ արդեն մի բոլորովին նոր որակ էր արևմտահայ մամուլի անդատանում և վկայում էր արևմտահայ Հանրություն կյանքում ծայր առած ներքին փոփոխությունները: Ավելին, այդ այն թերթն էր, որն ազդարարում էր արևմտահայ լիբերալ-լուսավորական շարժման ձևավորման մասին, և որի առաջին կազմակերպված կրոնը եղավ նրա խմբագիրը Խաչատուր Օսկանյանը:

### «ԱՉՂԱՐԱՐ ԲՅՈՒԶԱՆԴՅԱՆ» (1840-1843)

Մինչև այսօր շատ սուղ տեղեկություններ և առավել ևս հրապարակի վրա եղած քիչ ուսումնասիրություններ ունենք Խաչատուր Օսկանյան հրապարակախոսի, հրատարակչի, թարգմանչի և գրական նշանակալից վաստակ ունեցող անձնավորության մասին, որը խոշոր երևույթ էր ոչ միայն XIX դարի արևմտահայ Հատարակական մտքի պատմության մեջ, այլև խորհրդանշում էր Հայ առաջակամ մտածողության բարձր մակարդակը միջազգային չափանիշով: Բավական է ասել, որ դործունեության ամերիկյան շրջանում նա Նյու Յորքի բնիկերցոյ լայն շրջաններում այնպիսի ժողովրդականություն ուներ, որ նրան ճանաչում էին առօրյա կյանքում, նրա մասին գրում էին ամերիկյան և ֆրանսիական թերթերում:

Խ. Օսկանյանը սկանյանը ծնվել է 1818 թ. Կոստանդնուպոլսում. կենսագրի վկայությամբ 1834-ին 16 տարեկանում մեկնել է Նյու Յորք դառնալով այս աշխարհամասը ոտք դնող առաջին Հայերից մեկը: Վեց տարի միսիոներենի Հովանավորությամբ ու Հսկողությամբ սովորելով Նյու Յորքի Համալսա-

րանում, նա ձեռք է բերում լայն գիտելիքներ, տիրապետում է մի շարք օտար լեզուներին: 1840 թվականին վերադառնում է Կոստանդնուպոլիս, որտեղ ծավալած գործունեության քիչ թիվ չատ հայտնի մանրամասներին մնում է ավելացնել «Ազդարար Բյուզանդյանի» փակման կապակցությամբ Մուշեղ եպիսկոպոսի ասածը. «Ազդարարում», - գրում է Օսկանյանի կենսագիրը, - կհարձակի ամիրաներուն վրա մասնավորապես Փափազյան Ճանիկ ամիրայի դեմ, որուն ազդեցությունը թերթը կխափանվի»:

Ճանիկ ամիրան, ըստ երևույթին, միայն հավելումն է այն բանակի, որը «Արշալույս Արարատյանը» գեներալ-մայոր ծառայել էր «Ազդարար Բյուզանդյանի» դեմ:

1854 թ. Օսկանյանը նորից բռնում է նոր Աշխարհ տանող ճանապարհը և հենց նավի մեջ էլ ծանոթանում հետագայում իր ողջ կյանքում խոշոր դեր խաղացած մի մարդու. «Նյու Յորք Հերալդ» թերթի խմբագիր Ջեյմս Գորդոն Բենեթի հետ: Օսկանյանը Բենեթին դուր է գալիս բնավորության ընդհանրությունները, ամերիկյան վարվելաձևով, լրագրողի իր անցյալով և «դյուրություններ քանի մը եվրոպական լեզուներ խոսելու» կարողությունները:

Թե որքան համբավավոր լրագրող էր Օսկանյանն Ամերիկայում, վկայում է նրա մասին Նյու Յորքի թերթերից մեկում լույս տեսած մի հոդված, որն «Արշալույս Արարատյանից» արտատպել է «Մասիսը»: Թերթի 1856 թ. № 140-ում կարդում ենք. «Այսօրվա օրս Թուրքաստանի վրայոք հրապարակավ խոսող կամ ատենաբանություն ընդունեցին երեկին Կոստանդնուպոլսեցի պ. Օսկանյանն է... Եվ այս առաջին թուրքաստանցին կհամարվի, որ զրականություն վերաբերյալ պաշտոնի մը Ամերիկայի ժողովրդյան առջև կերևնա: Այո, զանազան տեսակի գրքեր և թղթակցություններ ունեցել ենք Թուրքաստանի վրայոք, և այդ երկիրը ճամբորդություն ընող շատ ատենախոսներ մտիկ ըրած ենք, բայց ասոնց ամենքն ալ շատ նեղ ու կարճ ճամբով կխոսեին, և ասոնցմե և ոչ մեկը չկրցավ պարզ և լուսավոր գաղափար մը տալ Թուրքաստանու և թուրքերու վրայոք»:

Ամերիկայում Օսկանյանը աշխատել է նաև մաքսատանը որպես գրագիր, եղել է Կոլումբիա քոլեջի իրավաբանության ճյուղի գրքապահ, որոշ ժամանակ նախագահել է Նյու Յորքի «Մամուլի ակումբում», «Սուլթանը և իր ժողովուրդը» վերնագրով նկարագրող գիրք է հրատարակել անգլերեն և այլն:

Ս. Օսկանյանի լրագրական գործունեությունը հայ հրապարակախոսական մտքի պատմության մեջ նշանակալից է նաև «Նյու Յորք Հերալդի» թղթակցից

դատնայու շրջանում: Այստեղ Օսկանյանը Հողվածներ է տպագրում Հայերի անցյալի ու ներկայի մասին այդ ձևով ամերիկացիներին ներկայացնելով Հնագույն քաղաքակրթութուն և մշակույթ ունեցող մի ժողովրդի:

Իր Հողվածներով Օսկանյանն ամերիկյան մամուլի էջերից պայքարում էր անդրովիանոսյան միտոններենի կործանիչ քաղաքականության դեմ, որոնք, Թուրքիայում ներկայանալով որպես Հայերի փրկիչներ, անփական Հայրենիքում ամբաստանում էին նրանց, Հայտարարում կիսավայրենիներ, որոնց յուսավորելու, բարեկրթելու ծանր առաքելութունն, իբր, ընկած է ամերիկացիների վրա:

Ազգային նպատակամղված պայքարի ծրագրում պակաս կարևոր չէին և՛ Օսկանյանի Հրապարակած Հողվածները «Մասիսում», որոնցում նա դավանարանական լրայնախոհության և արևմտահայությանը տվյալ փուլում խիստ Հուզող ազգամիտօրման պաշտպանի դերում էր:

Դեռ 1863 թ., «Նյու. Եորք Հերալդում» ունիթորների դեմ տպագրած իր Հողվածն ուղարկելով «Մասիսին», Օսկանյանն ուզում էր Հայրենակիցներին Հափաստիացնել, որ կրոնական դավանանքը չպետք է որևէ դեր խաղա ազգի միասնության գործում ու պառակտում մտցնի նրա օրգանիզմի մեջ: Ընդհակառակը, այս կամ այն դավանանքին պատկանելու խնդիրը Համարելով յուրաքանչյուր անձնավորության խզճի ու Համոզմունքների Հարց, նա գտնում էր, որ ազգամիտօրման ձգտման մեջ դավանանքը պետք է լինի միայն կրկրորդ տեղում:

Նյու. Եորքից «Մասիսին» և արևմտահայ մյուս պարբերականներին ուղարկված նյութերից կարևոր են նաև բուն ամերիկյան կյանքին վերաբերող Հողվածները, որոնցում ընդհանուր առմամբ դեմոկրատական այդ երկրի կարգերը Համակրող Հրապարակախոսը միաժամանակ աչք չի փակում երկրի ընդհանուր դիմադիժն ազավազող երևույթների առջև: Դա ամենից առաջ վերաբերում է մամուլի բարբերին, որի անսահմանափակ ազատությունը Հնարավորութուն է տալիս գործարար շրջանների մարդկանց երբեմն ի չարը գործադրել այն և, գնելով աղստ մամուլի խիղճը, օգտագործել այն իրենց շուրջը կղանակ ստեղծելու, երկրի գատը և իրավապահական մարմիններն իրենց ենթարկելու Համար («Մասիս», 1884, № 3642-3644, 1884, № 3504 և Հետո):

Սակայն որքան էլ բեղուն, նշանակալից և Հասուն է և՛ Օսկանյանի ամերիկյան շրջանի Հրապարակախոսութունը, Հատկապես 1890-1892 թթ. իր

Հրատարակած «Ազատություն» պարբերականում, ուր արդեն ծրագրված լիբերալ, ազգային-ազատագրական դիրքերից է քննարկում Հայ ժողովրդի փրկության Հարցը թերթի Համար նշանաբան դարձնելով «Ազատության գինը արյուն է միայն» կարգախոսը, այսուհանդերձ 1840-1854 թթ. ժամանակահատվածը չափազանց կարևոր է արևմտահայ Հանրության մեջ նոր դադափարախոսության ձևավորման գործում Խ. Օսկանյանի մատուցած ծառայությունների գնահատման տեսակետից:

Խ. Օսկանյանի 40-50-ական թվականների գործունեությունը կոստանդնուպոլսում ամբողջանում է Հիմնականում «Ազդարար Բյուզանդյանի» Հայերեն (չորս Համար) և Հայատառ թուրքերեն (մինչև 1843 թ.) Հրատարակությամբ, այնուհետև, մեր ենթադրություններով, թուրքերեն երկրորդ՝ «Ճերիտէ-ի Համատիս» («Նորությունների բանբեր») թերթի խմբագրությամբ, որը նա առևտրական լրատվական թերթիկից Հասցրեց մինչև իր ժամանակի եվրոպական լրատվական կուլտուրա ունեցող պաշտոնաթերթի մակարդակի, Հայկական ու եվրոպական թերթերում ունեցած հրապարակախոսական փայլուն ելույթներով, որոնցում պաշտպանում էր այն ժամանակ արդեն եվրոպական ոչ օբյեկտիվ պարբերականներում դատափետվող Հայի ազգային արմատապատմությունը և Հրատարակչական-թարգմանչական գործունեությամբ, որտեղ աչքի էր զարնում նրա անհաշտ պայքարը լուսավորական գաղափարախոսության առաջընթացը և մարդու մտքի թուխչքը կաշկանդող կղերական նեղմտություն դեմ:

«Ազդարար Բյուզանդյանի» բնաբանը «Ազգի մը լուսավորությունը գիտութենեն ու կրթութենեն առաջ կուգա» տողերն են, որոնք տպվում էին թերթի ճակատին: Ընթերցողներին թերթի ներկայացման ձևն անմիջապես մատնում է ամերիկյան ազատ գրեխոսի ծանոթ, մտածելակերպի կաշկանդումներից զերծ, դյուրահաղորդ և հումորի մեծ զգացում ունեցող լրագրողին:

Գիտակցելով գրականության և Հատկապես եվրոպական առաջադեմ գրականության դերը ազգի լուսավորության գործում Օսկանյանը նաև շահագրգռում է ընթերցողներին՝ Հայտնելով, որ տպագրածը Հասարակությանը ավելի պիտանի դարձնելու նպատակով «պիտուական ու չի գտնված գրքերն թարգմանություն ընել կուտանք՝ որ տարի գլուխ կազեթանիս տետր շինելով, մեկ անգին գիրք մը ըլլա ունեցողին ձեռքը»: Մշտապես Հաղորդակցվելով ընթերցողների հետ Խ. Օսկանյանը չի բավարարվում նրանց պատիվ գերով,

այլ խնդրում է բաժանորդներին և թերթը կարդացող «այլ անձանց» Հե-  
տաքրքիր թվացող նյութեր ուղարկել խմբագրատուն, միայն թե, երգիծանքով  
ավելացնում է նա, դրանք «դեմ չլինեն» Օսմանյան կայսրութիւնը և կրոնա-  
կան վեճեր չհարուցեն, որն ինքնըստինքյան դեմ էր նրա քաղաքական դիր-  
քորոշմանը:

«Քաղաքական լուրեր» վերնագրի տակ «Ազգաբար Բյուզանդյանն»  
անդրադառնում է եզրպատկան դեպքերին և, ընտրելով ժամանակի լրագրու-  
թիւնը գեոեւ անծանոթ մի ձե, նյութը տպագրում է «բարեկամի» անունից,  
ըստ որում գիմնելով թերթի խմբագրին «բարեկամը» պատմում է «Մարի»  
երկրում տեղի ունեցած իրադարձութիւնները մասնավորապէս, 1840 թվա-  
կանին եզրպատում ստեղծված ծանր իրադրութիւն մասին, երբ Անգլիայի,  
Ավստրիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ուժերով ծնկի էր բերվում Օս-  
մանյան գահի իրական Հավակնորդ, փաստորեն Թուրքիայի ձեական վասալ,  
եզրպատուի տիրակալ Մուհամմեդ Ալի փաշան: Մեծ Բրիտանիան, իրականում  
ավելի խորացնելով Թուրքիայի գաղութացումը, մտեցնում էր եզրպատու ի-  
րեն ենթարկելու Հեռանկարը վերջինիս զրկելով Ֆրանսիական Հովանա-  
վորութիւնից:

«Ազգաբար Բյուզանդյանը» խոստանում է ժամանակ առ ժամանակ  
անդրադառնալ աշխարհագրութիւնն ու պատմութիւնը, մանավանդ որ  
դրանց միջոցով ընթերցողը ոչ միայն ծանոթանում է տարբեր ժողովուրդների  
կենցաղի ուսանելի կամ զվարճալի կողմերին ու սովորութիւններին, այլև  
սովորում է բարեկարգ ապրուստի Հասնելու նրանց գործադրած ձեւերը, ա-  
ռեարի, ճարտարվեստի կատարելութիւնները:

Օսկանյանը գտնում է, որ մարդու իմացածը մակերեսային ու թեթեւ չպետք  
է լինի, այլ մարդը պարտավոր է զիտութիւնն ուսումնասիրել խորութիւնով ու  
մասնագիտորեն: Նա պարզաբանում է իր միտքը այսպէս. «Աշխարհս երեք  
տեսակ տգիտութիւն կա: Մեյ մը բնավ բան մը չի գիտնալն է, երկրորդ գիտ-  
ցած բանդ ազեկ չի գիտնալ, ու երրորդն ալ Հարկ եղած բանը չի գիտնալ ու  
Հարկ չեղածը գիտնալ»:

Առեարական լուրերի միջազգային գնբրին վերաբերող Հաղորդումները  
կողքին, որոնք անշուշտ քաղվում էին եվրոպական թերթերից, «Ազգաբար  
Բյուզանդյանը» չի մոռանում ընթերցողներին մատչելի կերպով Հաղորդակ-  
ցել զիտութիւն Հետաքրքրաշարժ երեւոյթներին ու գանազան գործնական  
«արվեստները» գաղտնիքներին, սրպիսին, օրինակ, երկաթի սեղեգածման ե-

դանակն էր: Վերջապես ծանուցումների, երթևեկության նոր ուղիների ու նրանց չվացուցակի, առևտրական նոր բացված խանութների և այլ հայտարարությունների կողքին չորրորդ էջում կարդում ենք խոստացված «զբոսական» նյութը, որը Լեսսոփի «Ժիլ-Բլասի» ֆրանսերենից կատարված թարգմանությունն էր և տպագրվում էր հատվածաբար՝ հետագայում, խոստման համաձայն, «մի տետրում» ամփոփելու և ընթերցողներին որպես թանկարժեք նվեր բաժանելու համար:

Այս վեպի ընտրությունը և այն մաս-մաս իր բաժանորդներին մատուցելու ցանկությունն արդեն խոսում է Խ. Օսկանյանի առաջավոր ըմբռնումների մասին: Վեպի տպագրման նպատակն էր արմատավորել XVII դարի ֆրանսիական լուսավորական շարժման սկզբունքները արևմտահայ գրասեր ընթերցողի գիտակցության մեջ:

Ժողովրդին լուսավորելու ազնիվ մղումով հայերեն թերթ հիմնած հրապարակախոսը հազիվ թե, քիչ բաժանորդներ ունենալու պատճառով, դադարեցներ իր ձեռնարկած գործը, ելնելով թեկուզև այն բանից, որ մեզ ծանոթ համարներում այդ կապակցությամբ տրտունջ չկա: Իսկ եթե հայատառ թուրքերեն «Ազդարար Բյուզանդյանի» լույս ընծայումով նա ավելի շատ բաժանորդներ հավաքեց, ինչպես պնդում են մեր մատենագետները, ապա այս պարագայում հասկանալի է, թե ինչու նա թողեց նաև այդ թերթը և ստանձնեց «Ճերիտէ-ի հավատիս» թուրքերեն երկրորդ թերթի խմբագրությունը:

Սակայն, այսպես թե այնպես հանցանք չտեսնելով լրագրողի նման վարքագծի մեջ, քանի որ հայատառ թուրքերենը նույնպես հասցեագրված էր նույն հայ ընթերցողին, կարծում ենք, որ Խ. Օսկանյանը պարզապես խուսանավեց ավելի հզոր լուսավորչական ամիրաների և նրանց ձայնափող «Արշալույս Արարատյանի» հարձակումներից, որոնք նույնիսկ այս պարագայում նրան հանգիստ չտվին, որը և գուցե ստիպեց զգացմունքներով ղեկավարվող խմբագրին ընդհանրապես հրաժարվել Կոստանդնուպոլսում հայերին հասցեագրված թերթ հրատարակելու մտքից, թեև «Ճերիտէ-ի հավատիսից» հետո նա այլևս չանդրադարձավ ո՛չ հայատառ թուրքերենին, ո՛չ էլ մանավանդ թուրքերենին:

Խ. Օսկանյանի կոստանդնուպոլսյան շրջանի հրապարակախոսական գործունեությունը չի սահմանափակվում միայն տեղական մամուլում ունեցած ելույթներով: 1847 թ. № 73-ում «Հայաստան» թերթը անգլիական «Մարթա

մեյլ»-ից թարգմանաբար արտատպում է մի Հոդված ստորագրված «Հայ մը», որը Խ. Օսկանյանի կեղծանունն էր (ԻհՀարկե, ավելի ճիշտ կլինե՞ր թարգմանել «Հայու տղաս»)։ «Հայաստանի» նպատակն այլ էր և, արտատպելով Էվրոպական նշանավոր թերթերից մեկի սույն ամբաստանությունը ամբողջ Հայ ժողովրդի Հասցեին, թերթի խմբագիր Հ. Չամբուռյանը ջանում էր Հաստատել իր այն տեսակետը, որ Հայերը ոչ մի լավ ակնկալիք «ապականված» Եվրոպայից չպետք է ունենան, ուստի պետք չէ, որ նրանք այդ երկրները ուսման ուղարկեն իրենց որդիներին։ Սակայն «Մարթա մեյլի» Հոդվածն, անշուշտ, և՛ իր ժամանակի, և՛ այսօրվա ընթերցողի Համար այլ նշանակություն ունի։ Արևմտահայ իրականության մեջ Հասունանում էր մի Հրապարակախոսություն, որը Հենց եվրոպական թերթերի միջոցով կարող էր Հանդես գալ ազգային և ժողովրդական դատը պաշտպանողի դերում ձեռնոց նետելով անազնիվ ճանապարհով, ճշմարտությունը կեղծելով դրամ վաստակող լրատվությունը։

Խ. Օսկանյանը խորապանում է բեկդիացի թղթակցի մանրախնդրությունը, որը, իր վերափորված ինքնասիրությունը Հագուրդ տալու Համար, գրիչ է վերցնում և «Մորնինդ փոստի» նման պատկառելի մի թերթում լուստանքներ է թափում ամբողջ Հայ ժողովրդի Հասցեին, նրան կոչելով կայսրություն կցորդ, նրա Հաշվին ապրող, նրա բարիքներից օգտվող, անշնորհակալ և այլն, և այլն։ Հոդվածի երևան գալու իսկական զրդապատճառը ի դերև Հանելով Օսկանյանը միաժամանակ Հարցը խորացնում և ծավալում է ենթակա ժողովուրդների նկատմամբ Թուրքիայում աիրող անտանելի խարականության և եվրոպական տերությունների Հոգանավորչական վարքագծի շուրջը։

Հոդվածի փայլուն ոճը և սրամիտ լեզուն, ջախջախիչ տրամաբանությունն անմիջապես Հիշեցնում են «Ազգարար Բյուզանդյանի» խմբագրին, էժեն Սյուի «Թափառական Հրեայի» առաջարանի Հեղինակին, որոնց ոչ միայն Հրատարակախոսական մակարդակը, այլև Հարցադրումների մասշտաբայնությունը միանգամայն նոր որակ էին արևմտահայ լրագրության Համար։ Նշեցինք, որ մեր մատենագիտություն մեջ բազմիցս Հոդվում է այն Հարցը, որ Խ. Օսկանյանը, թողնելով «Ազգարար Բյուզանդյանի» Հրատարակությունը, 1843-ից սկսեց լույս բնծայել Հայաստա թուրքերեն «Ճերիտէ-ի Հավատիս» թերթը։ Բազդատելով բազմաթիվ փաստեր գալիս ենք այն եզրակացություն, որ Խ. Օսկանյանը ոչ թե Հայաստա թուրքերեն նոր թերթ է Հիմնել, այլ պարզապես անցել է Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Ճերիտէ-ի Հավատիս»

Թուրքերեն թերթի խմբագրութիւնն հավանաբար ստանձնելով առևտրական այդ տեղեկագրից ժամանակի եվրոպական մակարդակի պարբերաթերթ ստեղծելու պարտականութիւնը:

Ազգբնապէս տեղեկագիրը լույս էր տեսնում առևտրական նպատակներով Թուրքիա ժամանած ոմն Ուիլյամ Չերչիլի տնօրինութեամբ, որը սակայն որոշեց ընդլայնել իր հրատարակութիւնը և ընդգրկել բանիմաց լրագրողներին, որպիսին իր ժամանակ կարող էր լինել Խ. Օսկանյանը:

Անցնելով Թուրքական լրագրութեան ասպարեզ Խ. Օսկանյանը շղաղարեց զբաղվել իր ժողովրդին հուզող հարցերով և, արևմտահայ լրագրութիւնը հասցնելով մի նոր մակարդակի, դրանով ճանապարհ հարթեց այնպիսի պարբերականների համար, ինչպէս պատրիարքարանի արտոնութեամբ լույս տեսնող, բայց իրականում ինքնուրույնութեան եզրով ընթացող «Հայաստանն» էր, քաղաքական հավատամքով ազատ «Մեղուն» կամ մասնավոր «Մասիսը»:

### «ՀԱՅԱՍՏԱՆ» (1846-1852)

XIX դարի 40-50-ական թվականներին արևմտահայ հասարակական կյանքն առաջընթաց էր ապրում, իսկ այդ կյանքը հուզող խնդիրների նկատմամբ նոր մոտեցումներն ասպարեզ էին հանում նորանոր նշանավոր դեմքեր պետական կառավարման, հասարակական և տնտեսական հարաբերութիւնների վերակառուցման այնպիսի ծրագրերով, որոնք անմիջական ազդեցությունն էին եվրոպական երկրներում տիրապետող իրավակարգերի հետ:

Փարիզում կրթութիւն ստացած, եվրոպական բուռն հասարակական կյանքի իրադարձութիւններով լեցուն առօրյան ճաշակած և իրենց հայրենիքը վերափոխելու ազնիվ մղումներով արևմտահայ կյանքի կենտրոններ կոստանդնուպոլիս ու Ջմյուռնիա վերադարձած երիտասարդներն արդեն 40-ական թվականների վերջերին ոչ թե առանձին եզակի անհատներ էին, այլ ամբողջ խմբեր:

Բնական է, որ նրանք իրենց համար գործունեութեան ասպարեզ ընտրեցին այն մամուլը, որը պատրաստ էր նրանց տրամադրելու իր էջերը դադարաւական ուժեղ պայքարի ասպարեզ դառնալով ընդդէմ հնապաշտութեան և հանուն նորի ու առաջադիմութեան:



Այս տեսակետից չափազանց հետաքրքիր նյութ է մատուցում 1846 թ. Կոստանդնուպոլսում հիմնված «Հայաստան» թերթը, որի ստեղծման պատճառների մեջ գործուն դեր կատարեց Հայոց պատրիարքարանը՝ ջանալով ՀայթիաՀարկի թուրք պաշտոնեության դիմադրությունը: Ի վերջո Հաջողվեց ստանալ թերթի հրատարակման թույլտվությունը, որով դրվեց Կոստանդնուպոլսի ազգային մամուլի բազմամյա գործունեությունից սկիզբը:

«Հայաստանն» իր լավ տպագրությունը պարտական էր ժամանակի հրատարակչական գործի հմուտ մասնագետ Հ. Մյուհենտիսյանին: Վերջինս նաև Հայկական և թուրքական տարբեր մայր տառատեսակների հեղինակ էր, որոնք և՛ հարմար էին, և՛ գեղեցիկ:

«Հայաստանը» լույս էր տեսնում մեծադիր, երկթերթ, բաժանորդագրության տարեկան գինն էր 100 դուռուշ: Թերթի խմբագիրներն էին Հովհաննես Չամուռեյանը և Մկրտիչ Աղաթունը՝ անշուշտ ոչ հավասար իրավունքներով, քանի որ Չամուռեյանը կողմ էր իրերի ներկա վիճակի պահպանմանը կայսրության մեջ պատրաստ կովելու հակադիր ուժերի դեմ: Հետևաբար, որպես առաջին խմբագիր, չարաշահում էր իր իրավունքները:

Չարգացող նոր ուժերի դեմ ծավալած մղի պայքարը և ներքին հակասություններն էին պատճառը, որ 1848 թ. վերջին Չամուռեյանը հեռացավ խմբագրությունից այն թողնելով Մ. Աղաթունին: Սակայն մինչև «Հայաստանից» վերջնականապես հեռանալը, Հ. Չամուռեյանը մեկ անգամ ևս պետք է այնտեղ գրեթե իր արդեն մեծամասնությունից համար անընդունելի ծայրահեղականությունը: 1850 թ. փետրվարի 6-ին նա դարձյալ ստորագրում է թերթը, մինչև որ պատրիարքարանի առաջարկությամբ 1852 թ. հունվարի 21-ին հեռանում է «Հայաստանից», որից հետո «Հայաստանը» շարունակվում է մի նոր որակով «Մասիս» անվամբ:

Հասարակության մտայնությունից մեջ կատարվող տեղաշարժերը պատկերացնելու տեսակետից անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել «Հայաստանի» չամուռեյանական շրջանի գործունեությունից վրա, երբ, հենվելով իր նախկին բացարձակ իշխանությունը պահպանելու ձգտող ամիրայական հին դասին, թերթը ձգտում էր գաղափարական նեցուկ լինել նրան:

«Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր Հովհաննես Չամուռեյանը (Տեր-Կարապետյան Տերոյենցը) ծնվել է 1801 թ., Պրուսայում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղում, ապա Արմաշի վանքում, ուսման ընթացքում, իր կենսագիր Հ. Մրմրբյանի վկայությամբ, տիրապետելով 10 լեզվի:

1828 թ. նա գալիս է Կոստանդնուպոլիս, որտեղ Պալյան ամիրանների միջնորդությամբ որպես Ֆրանսերենի մասնագետ ներկայանում է Մահմուդ II-ի խորհրդական Մեհմեդ փաշային և, արժանանալով վերջինիս համակրանքին, կարգվում է պալատական թարգմանիչ: 1838 թ. նա նշանակվում է Սկյուլթարի նոր հիմնված ճեմարանի տեսուչ, որտեղ մինչև հեռանալը (1841 թ.) տեղական բախումանների ու վեհերի մեջ էր դպրոցի դասատուները և Միսաքյանի, Խ. Պարտիզպանյանի հետ, որոնք էլ Չամուռոճյանի մարտնչող պահպանողականության զոհերը դարձան և ի ցավ աշակերտների՝ շուտով ստիպված եղան թողնել ճեմարանը:

1846 թ. արդեն «Հայաստան» թերթի խմբագիր Չամուռոճյանը բարձրագույն դասատուի արտոնություններով դասավանդում է նույն թվականին կրկին բացված Սկյուլթարի ճեմարանում, իսկ 1849 թ. հրաժարվում կամ հրաժարեցվում է իր այդ պարտականությունից: 1850 թ. փետրվարի 6-ից նա դարձյալ «Հայաստան» թերթի խմբագիրն էր: Սակայն չհրաժարվելով հրապարակախոսական ասպարեզից՝ 1855 թ. կեսերին, օգտվելով իր հայացքներին համակիր ամիրանների հովանավորությունից, հիմնում է հայատառ թուրքերեն «Ձոհալ» («Երեւակ») թերթը, որը պատրիարքի բանադրումից հետո փակելով, սկսում է հրատարակել հայերեն «Երեւակը» (1857, ընդհատումներով մինչև 1866 թ.):

Տերոյենցը իր երկարատև կյանքի ընթացքում ժառանգություն է թողել անտիպ հատորներ, որոնք վերաբերում են պատմությանը, փիլիսոփայությանն ու կրոնին, կամ բնագրից կատարված թարգմանություններ են: Դրանց արժեզրկման պատճառը հեղինակն է, քանի որ ոչ գիտական, միտումնավոր ծանոթագրություններով նա արդեն անընդունելի էր դարձնում դրանք ժամանակակիցների համար:

Որպես խմբագիր Չամուռոճյանը չէր կարող իր որոշակի կնիքը չդնել հայ ազգային թերթի ընդհանուր ուղղության վրա: Եվ այսուհանդերձ, «Հայաստանի» անգամ առաջին շրջանի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացություն, որ թերթին ամբողջովին նրա կամքին ենթարկված չէր և ժամանակ առ ժամանակ հրապարակում էր նյութեր, որոնք վերաբերում էին արևմտահայ կյանքում տեղի ունեցող խմորումներին, իսկ 1849 թ. ընդհանրապես մարում է թերթի ծայրահեղ պահպանողականությունը՝ տեղի տալով սահմանադրական միապետության կողմնակից Մ. Ազաթոնի չափավոր դիրքերին: Մերժելով դեմոկրատական հեղափոխությունների արմատական, ժողովրդա-

պետական բնույթը թերթն այս շրջանում միաժամանակ որոշակի համակրանք է արտահայտում այդ հեղափոխությունների ընթացքում մարմին ստացած ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ:

«Հայաստանն», անուշտ, կոչված էր այս կամ այն կերպ արտացոլելու կայսրության ստորյան, պոլսահայ համայնքի և բուն հայրենիքի կյանքը: Թերթի տպագրած նյութերից կարելի է պատկերացում կազմել մշակութային կյանքի վերելքի մասին ինչպես Արևմտահայաստանում, այնպես էլ Արևելահայաստանում (նոր գրքերի ու բառագրքերի հրատարակում, գրադարանների հիմնում, թատերական կյանքի աշխուժացման արտացոլում), կարելի է դուշակել այն դերը, որ խաղացել են հայ երեկիները Օսմանյան կայսրության տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում: Կարևոր են նաև այն հաղորդումները, որոնք «Ազգային» վերնագրի տակ ընթերցողի համար այսօր հասկանալի են դարձնում, թե ինչպիսի ամենօրյա վերահսկողություն տակ էին արևմտահայ վարչական մարմինները, կոնկրետ Ազգային ժողովը, թուրքական պետության կողմից:

XIX դարի առաջին տասնամյակներից Օսմանյան կայսրությունը դիմում էր բարենորոգումների իր կարգավիճակը եվրոպական խոշոր երկրների հովանավորող և միաժամանակ ներգործող ուժի հանդեպ պահպանելու և ենթակա ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելու ու սառեցնելու նպատակով: Թե ինչպիսի խոր անդունդ կար այս խնդրի զնահատման հարցում իշխող ժողովրդի և քրիստոնյա ժողովուրդների միջև, ցույց են տալիս «Հայաստանի» բազմամիլիոն հրապարակումները: Վերցնենք թեկուզև Հայաստանների անձի և գույքի ապահովության մասին հրովարտակը, որը մեծ դայրությունով էր ընդունվում ոչ միայն կրոնական ու պաշտոնական վերնախափի, այլև նրանց կողմից հրահրված հասարակ ժողովրդի կողմից: Ամենուրեք այդ օրենքի կոպիտ ստորագրումն էր պատճառը, որ, ինչպես նշում է թերթը, հաճախ մեծ վեղբրի ստորագրությանը հատուկ «պայքություններ» էին հղվում գավառներ չափն ու սահմանը կորցրած փաշաների ու նրանց կամակատարների անօրինությունները գտպելու համար: Այդպիսի մի շրջաբերական, որ սովորած է «Հայաստանի» 1847 թ. № 76-ում, այսինքն Գյուլհանում հրապարակած հաթի-ի շերիֆից ութ տարի անց, ծանուցում է, որ պետության բարձրագույն հրամանով թանգրիմաթը հաստատելուց ի վեր «առատագույթ» ինքնակալը ցանկանում է քրիստոնյա հպատակների երջանկությունը և հաջողությունը, ուստի արգելում է «նախարարներին» նեղել քրիս-

տոնյա հպատակներին խարաճից ու յոշիւրից բացի այլ հարկեր ևս նրանցից պահանջելով և «...կերպ-կերպ անիրավ տուգանքներ ձգելով վրանին, վերջապես որևիցէ կերպով անոնց վայելած հանգստութիւնը» խռովելով:

Թե ինչ աստիճանի պիտի հասնեին վայրագութիւններն ու անիրավութիւնները թուրք բարձրաստիճան պաշտոնյային նման, անշուշտ անհետեանք, նախազգուշացման դիմելու համար, ինքնին պարզ է, մանավանդ որ պետութեան կողմից ընդունված բոլոր օրենքներն էին մնում թղթի վրա, իսկ քրիստոնյաներին վերաբերող օրենքները պարզապես նոր գրգիռների առիթ էին տալիս և ուրիշ ոչինչ:

Թուրք պաշտոնյաների սադրանքներով ու թողտվութեամբ սահման չճանաչող անօրինութիւններ էին կատարում նաև քուրդ ցեղապետերը, իրենց ենթակա զինված ուժերով: Այդ մասին է տեղեկացնում «Հայաստանի» 1848 թ. № 129-ում տպված հաղորդումը, ուր ի դեպ նշվում է, թե չնայած «վեհափառ սուլթանն» աշխատում է բարեկարգութեան կանոնները հավատարմութեամբ գործադրել իր երկրի բոլոր մասերում, բայց կան տակալին «անանկ երկիրներ, որոնց բնակիչները մինչև այսօր անսանձ մնալով դժուրութեամբ չեն հնազանդիր: Չի սերմանած տեղերուն հնձելու սորվելով, արորը իրենց աչքին գերութեան լուծ մը կերևա, իրավունք չունեցած տեղերնին իրավունքի տեր ըլլալու սորվելով դատաստանը արդարութիւնը իրենց աչքին բռնութիւն մը կերևա, իրենց ազատ ուրիշները իրենց ծառա ճանչնալով, հավասարութիւն, եղբայրութիւն քարոզը իրենց ինքնիշխան կարողութեանը դեմ ապստամբութեան գրգռող ձայն մը կհամարեն»:

Հողմածի հեղինակը անհրաժեշտ զգուշութեամբ, իր պատմութիւնն սկսում է այն վերապահումով, թե ինչպես ամեն ազգերի, այնպես էլ ոչ լուսավորյալ թուրքերի մեջ, կրոնամոլ մարդիկ պակաս չեն, ուստի բնական է, որ թանգիմաթի կիրառումը տեղ-տեղ պիտի ընդունվեր խռովութիւններով և բարեկարգութիւններին համակրանքով նայող մարդկանց «սպանութիւններով» (1849, № 165): Այս բացատրութիւնից հետո թերթի № 168-ում նկարագրված է Ադանայում թանգիմաթի դեմ ըմբոստացած թուրք բնակիչներին կատաղի կռիւլը: Նրանք մեծ խմբով հետապնդում են անխտիր բոլոր քրիստոնյաներին, ընդհուպ մինչև եվրոպական դիվանագիտութեան ներկայացուցիչները սպառնալով սպանել, եթե կողմ լինեն թանգիմաթին: Ահաբեկված քրիստոնյա բնակչութիւնը դիմում է դեպի հայկական եկեղեցի:

Արեմտահայ լուսավորական շարժման ջատագովները 1846 թ. Հիմնեցին «Համազգայաց ընկերությունը», որի քաղաքական նպատակադրումը ազգի Համախմբումն ու միավորումն էր դասանանքից անկախ:

Նկատի ունենալով Չամուռնյանի թերթի գլխավոր խմբագրի ընդհանուր մտաեցումը առաջադիմական շարժումների նկատմամբ, կարելի է գուշակել նաև նրա բացասական վերաբերմունքի մասին դեպի «Համազգայացը»: Այդ Հաստատում է «Արշալույս Արարատյանում» տպագրված մի թղթակցություն, որտեղ գմյուռնացի խմբագիրը Հանդիմանում է Կ. Պոլսի ազգային թերթին դեպի «Համազգայացը» ցուցաբերած անտարբեր վերաբերմունքի Համար: Կաղմակերպություն Համար շենք են կառուցում, ընկերություն անդամների թիվը անցնում է 600-ից, որի մասին Հայտնում է նաև Հիշյալ թղթակցությունը, այնինչ մայրաքաղաքի թերթը այդ մասին ոչինչ չի գրում: «Հայաստանը», դժկամութամբ պատասխանելով իր Հասցեին արված կշտամբանքին, Հայտնում է, որ տեղյակ չեն եղել, թե ինչ նպատակով է կառուցվում շենքը, և չի Հապաղում նաև ավելացնել, որ «գիտնամք ալ նէ, - միայն Հիմնարկությունը տեսնելով գրեթե անխոհեմություն սեպելով լմենալուն և ի գործ գրվելուն կապասեմք»:

«Համազգայացի» նկատմամբ ակնհայտ Հակակրանք էին տածում ոչ միայն լուսավորչական ամիրաները, որոնց տրամադրությունները տեղ էին գտնում «Հայաստանում», այլև կաթոլիկ ամիրաները: Այնպես որ թողնելով իրենց այլ Հակամարտությունները, այստեղ նրանք միացան լուսավորչական և կաթոլիկ երիտասարդների անդրանիկ միությունը ցրելու Համար:

Անշուշտ երիտասարդ լուսավորիչները Հեշտությամբ չէին ուզում զիջել զիրքերը: «Հայաստանում» տպված Հողվածներից մեկի տակ ընկերություն «Մտերիմ բարեկամ Հայ ոմն» ստորագրող Հեղինակը խնդրանքով դիմում է ազգի ազդեցիկ ներկայացուցիչներին նորից և նորից բացատրելով, որ իրենց միությունը ոչինչ զեմ չունի սուլթանի պետությունը, չի սպառնում նրա գոյությունը, այն «անկարգություններ» քարոզող ընկերություն չէ, ինչպես փորձում են նրան ներկայացնել Հին Հակառակորդներին ձայնակցելու եկած նորերը կաթոլիկ մեծերը: Փոխանակ օգնելու, խնդրում է Հողվածագիրը, որ ընկերությունն ինքը վերացնի ժամանակի կարոտ «սխալմունքները», անձնական կրքերով բորբոքված նրա թշնամիները ջանում են այնպիսի փոփոխություններ մտցնել նրա կանոնադրության մեջ, որ ընկերության ան-

դամներին ամբողջովին խորշելի են և ինքնին մղում են դեպի իրենց իսկ հիմնած գործի կործանումը:

«Համազգայացի» ներկայացված հայտերից մեկն այն էր, որ ընկերությունը պետք է իր կազմի մեջ ընդգրկի նաև հոգևորականները: Սակայն հոգևածագիր-ընդդիմախոսը նման մեղադրանքի դեմ ունի իր ծանրակշիռ փաստարկումը: Ընկերությունն ի սկզբանե աշխարհական լինելով՝ բացառել է հոգևորականների ներկայությունը, ճիշտ այնպես, ինչպես բացառվում է աշխարհականների ներկայությունը հոգևոր ժողովներում (1848, № 93): Սակայն նման արդարացումները չէ, որ պիտի հետ կանգնեցնեին սկզբունքորեն ընկերության գոյությունը դեմ պահպանողականությունը: Հոռոմի կաթոլիկ եկեղեցու անմիջական հովանավորությունից օգտվող Ա. Հասունյանը «Համազգայացի» ծրագիրը հայտարարում է «հերետիկոսական» և Հոռոմի պապի ու «Պրոպականդի» հեղինակությունը վարկաբեկող: Նա նույնիսկ սուլթանի առջև հարց է դնում բանտարկել և աքսորել ընկերության առավել աչքի ընկնող 25 անդամներին: Հասկանալի է, որ լինելով կաթոլիկ եկեղեցու հենարանը Արևմտահայաստանում Ա. Հասունյանը նախ և առաջ պաշտպանում էր նրա պառակտիչ քաղաքական գիծը, այնինչ կաթոլիկ և լուսավորչական հավատքի պատկանող երիտասարդները միությունը հարվածում էր հենց այդ կետին, քարոզելով ազգային միություն անկախ հավատքից:

Ա. Հասունյանի ջանքերով սուլթանը, որին բնականաբար նույնպես անհանգստացնում էին պառակտված ազգի միասնության փորձերը, հատուկ պաշտոնատար նշանակեց «Համազգայացի» ղեկավարների և Ա. Հասունյանի հինգ կողմնակիցների մասնակցությամբ քննելու այդ ընկերության կանոնադրությունը («Արշալույս Արարատյան», 1850, № 377): Ա. Հասունյանը պահանջեց նաև ընկերությունից հանել լուսավորչական դավանանքին պատկանող երիտասարդներին: Հոռոմ ուղարկված ամբաստանազրկերից մեկում նա պարզ ակնարկեց, թե «Համազգայացի» գոյությունը կարող է վտանգել պապի հեղինակությունը արևմտահայերի շրջանում, ուստի անհրաժեշտ է, որ Հոռոմը միջամտի այս գործին: Միջամտությունն, անշուշտ, չհասպաղեց: Դարձյալ «Արշալույս Արարատյանի» 1850 թ. № 377-ում կարդում ենք այն ընդարձակ ուղերձը, որ հղել է Հոռոմի «Հավատո տարածման» Սուրբ ժողովի կարգինայը Կ. Պոլսի կաթոլիկ հայերի պարագլուխ Ա.

Հասունյանին, ուր ի թիվս այլ ցուցումների, արգելվում է «Հիշված ընկերության որևիցէ եղանակով կողմ բռնել»:

Ձյրիմանայով բազմակողմ հարձակումներին «Համազգայաց ընկերությունն» ի վերջո ցրվում է, որի մասին ցավով է ազդարարում 1852 թ. 4. Պոլսում լույս տեսնող մամուլը:

40-ական թվականներին հրատարակվող ազգային թերթը ներքին ցնցումներ էր ապրում: Սոցիալական խմորվող պրոցեսների գաղափարական ներկայացուցիչները արեմտաճայ լուսավորիչները, թերթի էջերում գրոհ էին սկսել նրա ուղղության դեմ: «Հայաստանի» ներսում ծայր առած պայքարը ժամանակավոր ավարտին հասավ 1848 թվականի վերջին, երբ նրա երկրորդ խմբագրի Մկրտիչ Աղաթոնի շուրջը խմբիկցին եվրոպայում կրթված և Կ. Պոլիս վերադարձած ադատամիտ երիտասարդները: Նրանք իրենց պատրաստակամությունը հայտնեցին «ձրիարար» աշխատակցելու թերթին, որը և սիրով ընդունվեց խմբագրի կողմից:

«Հայաստանի» 1849 թ. № 132-ի խմբագրական հոդվածում Մ. Աղաթոնը հայտնում է «Հայաստանի» իսկական աշատակիցների անունները՝ Հակոբ Կրեհիկյան, Աերտվրե Վիչենյան (Աերվիչեն), Հակոբ Մելիքյան, Մկրտիչ Մոմճյան, Նիկողայոս Զորայան, Հարություն Մոմճյան, Գրիգոր Աղաթոն, Գևորգ Աթիմարեճյան, Պողոս Նիկողոսյան, Միքայել Աղաթոն: Անհայտ անուններ չէին սրանք արեմտաճայ հասարակական-հրապարակախոսական կյանքում: Նրանցից շատերն արդեն իրենց ինքնուրույն, հետևողական և ծրագրված մտքերն էին թևակոխում ձևավորվող հասարակական կարծիքին: Հենց խմբագրի Մկրտիչ Աղաթոնի գործունեությունը «Հայաստանում», սկսած 1846 թ., որոշակի ազդեցություն ուներ նրա ուղղության վրա այն տեսակետից, որ հաճախ Չամուռեճյանի ծայրահեղ հետադիմություն կողքին հնչում էին նոր երանդներ, նոր մտածելակերպի դրսևորումներ:

Փամանակի ամենակրթված մարդկանցից մեկն էր Մ. Աղաթոնը, սաճմանագրական շարժման գործունյա մասնակից: Նա հետագայում, Գրիգոր Աղաթոնի մահվանից հետո, դարձավ «Համազգային բարեգործական ընկերության» երկրորդ նախագահը:

Մ. Աղաթոնը (ծնվ. 1818) արեմտաճայ լիբերալ մտավորականների այն առաջնեկներից էր, որ եվրոպական կրթություն ստանալով, Կ. Պոլիս էր եկել արեմտաճայ կյանքի կապիտալիստական զարգացման գործընթացին օգնելու մղումով:

Երբ 4. Պոլսում փակվում է Մ. Ճեզգայիրլյանի հիմնած դպրոցը, ամբաստանվելով որպես «Հերետիկոսական», Մ. Աղաթոնը՝ այդ դպրոցի լավագույն սաներից մեկը, նույն ամիրայի Հովանավորությամբ, կրթությունը շարունակելու է մեկնում Իտալիա վաղորոք ուսումնասիրելով իտալերենը: Այնուհետև Յուրենցիայի մասնագիտական վարժարանում նա տիրապետում է ֆրանսերենին, հմտանում է վաճառականական և շերամաբուժական գիտելիքների մեջ և, վերադառնալով 4. Պոլիս, խմբագրական-հրատարակչական գործունեությունից բացի, զբաղվում է շերամաբուժություն: Պոլսայում հիմնած իր ձեռնարկութուններում արտադրում է մետաքս, որը երկար ժամանակ մեծ հռչակ էր վայելում Թուրքիայում: Մ. Աղաթոնը բացում է նաև կոմիսիոն առևտրի միավորումներ, որոնք հայտնի էին «Փեշտիմալճյան և Աղաթոն եղբայրք ընկերություն» անունով:

Արևմտահայ Հասարակական կյանքի շրջապտույտում շուտով գրավելով առաջնակարգ դիրք, Մ. Աղաթոնն իր ազատամտությամբ հակադրվում է տիրող պահպանողականությանը: 1846 թ. նորից բացված Սկյութարի ճեմարանում նա ստանձնում է հսնաֆների ու ամիրաների միջև մշտապես ծագող վեճերը Հարթող ընկերության ատենադպիրի պաշտոնը: 1855 թ. Մ. Աղաթոնը սահմանադրությունը կազմող Հանձնաժողովի ատենադպիրն էր, իսկ 1859-ից նրա անդամը: Երբ հրապարակվեց արևմտահայությունը երազած սահմանադրությունը, Մ. Աղաթոնն էր, որ որպես քաղաքական ժողովի ատենապետ, բացեց 1860 թվականի օգոստոսի 25-ի ազգային ընդհանուր ժողովի անդրանիկ նիստը:

Սակայն նա ևս, արևմտահայ մյուս լիբերալ գործիչների նման, նահանջեց նախկին արմատական դիրքերից: 1863 թ., երբ պիտի հրապարակվեր վերաքննված սահմանադրությունը, Մ. Աղաթոնը նախկին, դեմոկրատական լուրջ սկզբունքներ պարունակող սահմանադրությունը վերաքննող Հանձնաժողովի անդամներից էր: Մ. Աղաթոնը մահացել է 1890 թ.:

Այն Հանգամանքը, որ «Հայաստանը» սեփականացնելու տարում 1849 թ., նա թերթը դարձրեց արևմտահայ առաջադեմ լուսավորիչների հանգրվանը, արդեն նրա համար ապահովում է պատմական կարևոր գործչի դեր: Այդ լուսավորիչներից ամենանշանավորը արևմտահայ իրականության մեջ ճանաչում գտած Նիկողայոս Զորայանն էր, որը, դեռևս Փարիզում եղած ժամանակ թղթակցելով «Բազմավեպին», գրավել էր ընդհանուրի ուշադրությունը:



Կրթված անհատներից բաղկացած Հասարակարգը կարող է Հասնել ընդհանուր բարեկեցության ազգային միասնություն և ընդհանուր միասնության Հիմքի վրա: Այս Հիմնադրությունով է ն. Զորայանը մտնում քաղաքական դործունեության ասպարեզ, իր առանձին ուսումնասիրություններով և թերթերում տպագրած Հոդվածներով արեւմտահայ միտքը ուղղելով դեպի գեմոկրատական ազատություններ և ժամանակակից առաջադիմություն Հեռուները:

Ելակետ ունենալով բարեկեցության Հասնելու լիբերալ-լուսավորական մեթոդները, ն. Զորայանը քաղաքական Հեղաշրջման որևէ կոնկրետ ծրագիր չի առաջարկում, թեև ազգը լուսավորելու միջոցով առաջադիմության Հասնելու նրա բոլոր սկզբունքներն ի վերջո արեւմտահայ իրականության Համար նորություն էին և Հեղաշրջիչ բովանդակություն ունեին:

Իր Հոդվածներում նա արծարծում էր այն միտքը, թե ազգը կամ ժողովուրդը պետք է Հենվի մեծահարուստների վրա և նրանց բարեկեցության մեջ տեսնի նաև մնացած մասի ապահովության երաշխիքը: Այս սկզբունքը Հիմք ընդունելով նա արեւմտահայության ազագան պատկերացնում էր մի այնպիսի Հանրության մեջ, որը գեկավարում էին ազդեցիկ և մեծահարուստ մարդկանց միությունները: Նրանք, իրենց ունեցվածքի մի մասը նվիրաբերելով բարեգործական նպատակներին կուտակում են Հսկայական գումարներ սակզծելով անտեսական այն բազան, որը կարիքի մեջ գտնվող ժողովրդին կարող էր գեպի ապահով ապագա առաջնորդել:

Տեսեսական այս կառուցվածքի շուրջն էլ Հետագայում պիտի դարգանար լուսավորված Հասարակարգը, որի նորոգման ասպարեզում ներդրված գաղափարները մինչև օրս դարմացնում են իրենց թարմությունը, առաջադիմությունը և օսմանյան Հեղձուկ միջավայրից մեծ թոփշքով պոկվելու Համարձակությունը:

Ն. Զորայանն իր ժողովրդին քարոզում էր քաղաքական ակտիվություն, աշխարհում կատարվող իրադարձություններին իրազեկություն, մտքերի կենդանի փոխանակություն ազատ միտինդներում, խոսքի և մտքի բացախսություն: Թմրության մեջ գտնվող ազգը, գրում էր նա, չի կարող Հասնել նվաճումներին, վագոզ ջուրը թափվում է ծովը, կանգնած ժամացույցը պիտանի չէ մարդուն, մարդը ծնվել է կյանքը վայելելու այնպես, ինչպես այն թելադրվում է այսօր, ծիծաղելի է, գրում էր նա, այն Հարուստը, որը սպասա-

վորներ չի պահում, խնդիրն այն է, որ բոլորը ձգտեն լավ ապրելու և հարստանալու:

Այս քարոզները, որոնք սփռված են Ն. Զորայանի ուսումնասիրություններում և բազմաթիվ հոդվածներում՝ տպված և՛ «Հայաստանում», և՛ 1852 թ. հիմնված «Մասիսում», փաստորեն մարդու մեջ կուտակված հնարավորությունները վեր հանելու, կյանքը վայելելու և նրան կոնկրետ գործունեություն կոչելու փորձեր էին, այնքան տիպական բուրժուական լուսավորականության համար:

Բնական է, որ նա ազգը կրթելու և լուսավորելու վերաբերյալ իր դրույթները հիմնավորում էր կոնկրետ առաջարկներով ու պլաններով՝ կապված մանուկների, պատանիների, աղջիկների - ապագա մայրերի դաստիարակության հետ: Նա դնում էր մանկավարժի ընտրության կարևորության, նրա դերի անփոխարինելիության հարցը ազգի ապագայի համար, հետևաբար բարձրացնում էր նրա վիճակի կարգավորման խնդիրը: Առաջնակարգ էր համարում դպրոցական նորատիպ շենքերի հիմնումը, որի դեպքում պետք է հաշվի առնվեին մանկան հոգեբանությունը, նրա սերը դեպի լույսն ու գեղեցիկը, հարմարավետությունը, առաջարկում էր օրինակ վերցնել եվրոպական դպրոցաշինարարությունից, որի համար հատուկ նախագծող ինստիտուտներ էին հիմնվում:

Զորայանը հսկայական պլաններ էր առաջարկում պատանիներին հանրակրթական դիտելիքներ տալուց հետո արհեստներ սովորեցնելու՝ ազգին անհրաժեշտ նյութական արտադրանքն ապահովելու համար, դտնում էր, որ նրանցից ընդունակներին և մանավանդ ապահովվածներին պետք է ուղարկել եվրոպա ուսման, որպեսզի այնտեղից՝ վերադառնալով՝ նրանք հնարավորություն ունենան ձեռք բերածը սեփական ժողովրդի կյանքում ներդնել, նրան եվրոպական առաջադիմության մակարդակին հասցնել:

Երկրի ներքին կառավարման հարցում Ն. Զորայանն անում էր դիտողություններ, որոնք բացահայտում էին կառավարության վարած քաղաքականության նկատմամբ արևմտահայ մտավորականության անբավականությունը: Ն. Զորայանը դնում էր շահավետ առևտուր վարելու անհրաժեշտությունը, որի բացակայությունը առաջին հերթին վնասում էր հիմնականում առևտրով զբաղվող քրիստոնյա ժողովուրդների, հետևապես նաև արևմտահայերի շահերին: Մեծ և չպատճառարանված առավելություններ տալով եվրոպացի առևտրականներին (ցածր մաքսեր և այլն), պետությունը վնասում

էր իր երկրի գործարար մարդկանց նրանց դարձնելով օտար մեծա-  
հարուստների կամակատարները, որի հետեւանքով էլ, ի դեպ XIX դարի 60-ա-  
կան թվականներից նկատելի աճ ապրեցին եվրոպական խոշոր քաղաքներում  
առևտրական տներ հիմնող միջնորդ (կոմպրադորական) բուրժուազիայի ներ-  
կայացուցիչները: Ն. Ջորայանը դնում էր նաև յուրաքանչյուր երկրի  
ինքնուրույնութան համար խիստ կարևոր սեփական ռազմական արդյունա-  
բերութիւն ունենալու անհրաժեշտութեան, ազատ տնտեսավարութեան հա-  
մար առաջնակարգ պայմանի անձի և գույքի ապահովութեան հարցը:

Ն. Ջորայանը մենակ չէր լուսավորական իր քարոզներում, և «Հայաս-  
տան» թերթի 1849 թ. համարները առաա նյութ են տալիս եզրակացնելու, որ  
անցյալ դարի կեսերին Արևմտահայաստանում ծայր էր առել մի շարժում, որն  
ըստ էութեան հղի էր հասարակարգը վերափոխելու լուրջ ծրագրերով, եթե հե-  
տամնաց կայսրութեան կաշկանդող կարգերը չստեղծեին նրանց եռանդը և  
չփոխեին պատմական զարգացման բնականոն ընթացքը: Այդ գործիչների  
թվում էին Գ. Ազաթնը, Ս. Վրչենյանը, Գ. Սթիմարաճյանը, Հ. Զրասունյանը  
և ուրիշներ, որոնց ելույթները «Հայաստանում» վկայում են լուսավորական  
զազափարախոսութեան լայնահուն ընթացքը արևմտահայ իրականութեան  
մեջ:

Գ. Ազաթնը, որ երկրագործական բարձրագույն կրթութիւն էր ստացել  
Եվրոպայում (Փարիզ, Գրինյոնի վարժարան) զարգացնում էր նոր հասարա-  
կական հարաբերութիւններին անցնելու միտքը, քանի որ քաղաքակիրթ Եվ-  
րոպային հասնելու այլ էլք, քան մտավոր և տեխնիկական առաջադիմու-  
թիւնն էր, նա չէր տեսնում: Սակայն նրա ծրագրերն, ի տարբերութիւն Ն.  
Ջորայանի, ավելի վերաբերում էին հասարակութեան գործնական վերելքին,  
ըստ որում նա դանդաղ էր, որ չի կարող առաջադիմել այն երկիրը, որը չունի  
զարգացած, մեքենայացված գյուղատնտեսութիւն: Գյուղատնտեսութիւնն  
է, գրում էր նա, յուրաքանչյուր հասարակութեան կերակրող սկուռքը, որի  
վրա միայն կարող է բարձրանալ «ինդուստրիայ», այսինքն ժամանակակից  
արդյունարեւութեան շենքը:

Այսօրվա դիտակեանք անգամ իրենց թարմութիւնը չեն կորցրել նաև  
40-50-ական թվականների մյուս լուսավորիչների հարցադրումները, որոնցից  
Սերգիէնն, օրինակ, ցանկալի առաջադիմութեանը հասնելու համար առաջին  
հերթին անհրաժեշտ էր համարում ազգային միասնութիւնը: Այն վերա-  
կանցնելու համար նա կարևոր նախապայման էր դիտում ժողովրդի հիշողու-

Թյան մեջ անցյալի կարևոր իրադարձությունների վերականգնումը, հայրենիքի նախկին մեծությանը հասնելու ձգտումը վառ պահելը, կնոջ դերը ընտանիքում և հասարակական կյանքում բարձրացնելը և այլն:

Արևմտահայ լուսավորիչների առաջադրած գաղափարներն այն հիմքն էին, որոնց վրա պետք է խարսխվեր 1860 թ. մայիսի 24-ին հռչակված սահմանադրութունը: Այդ գաղափարախոսության դարբնումը հենված նոր սոցիալական ուժերի և նրանց պայքարի վրա, արտացոլվում էր ժամանակի առաջադիմական մամուլում:

XIX դարի 50-ական թվականների արեւմտահայ մամուլի պատմութեան մեջ իր տեղն ունի նաև «Նոյյան աղավնի» քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրական շաբաթաթերթը, որի խմբագիրներն էին պետութեան օտարալեզու թղթակցութեանների բյուրոյի թարգմանիչներ Գրիգոր Մարկոսյանը և Սահակ Ապրոյանը: Գ. Մարկոսյանը 1860 թ. օգոստոսին առաջին անգամ հրատարակած Ազգային ժողովում ընտրվեց քաղաքական ժողովի ատենապետ: Նա հեղինակ էր Ֆրանսերեն-թուրքերեն քերականութեան դասագրքի, արքունի բժշկական ուսումնարանում դասավանդում էր ֆրանսերեն:

Թերթի խմբագիրները պարբերականի հրատարակման համար երեք տարի ժամկետ էին նախատեսել, սակայն թերթը գոյատևեց ընդամենը մեկ ու կես տարի (1852 թ. փետրվարի 23-1853 թ. օգոստոս):

Թերթի հավաքածուն ուսումնասիրողի համար ակնառու են հրատարակչների դժվարությունները և այն ջանքերը, որոնցով նրանք փորձել են պահպանել իրենց պարբերականը: Տպագրութեւնը սկսելով Հ. Մյուհենտիսյանի տպարանում, որի հրատարակչական բարձր կուլտուրան ավելի հետին պլան էր մղել Արապյաններին, արտոնատերերն, այնուհետև չկարողանալով ծածկել ծախսերը, փորձում են թերթը լույս ընծայել սեփական տպարանում, և № 27-ից «Նոյյան աղավնին» դառնում է անհրապույր, դժվարընթեռնելի: Հայտարարութեան մեջ հրատարակիչները բացատրում են, որ այդ ձևով նպատակ ունեն էժանացնել թերթը, ասել առևտրի լրատուներ, «մեր ազգայինների նյութերը»:

Բայց սեփական տպարանին դիմելը մեծ դժգոհութուն է առաջացնում բաժանորդների մեջ, որի համար «Նոյյան աղավնին» ներողութուն է խնդրում ընթերցողներից (№ 52) և № 53-ից սկսում է տպագրվել միանգամայն բարելաված վիճակում:

«Մասիւր», որն ըստ էութեան «Նոյյան աղավնու» կործանման անուղղակի պատճառն էր, ցավով է նշում մի շարք թերթերի, այդ թվում նաև «Նոյյան աղավնու» դադարման փաստը, մեղադրելով հայերին ընթերցասիրութեան հարցում առաջադեմ ժողովուրդներից, հետ մնալու մեջ, որոնց հրատարակած թերթերը «50-60.000 հոգի կկարդա ամեն օր», այնինչ չորս միլիոն մեր ժողովրդի մեջ «գոնև չորս հարյուր ընթերցող չես կրնար ցուցնել, այսինքն 10.000 հոգիին մեջ մեկ հոգի չի կա, որ լրագիր կարդա...» («Մասիւ»,

1853, № 90): Անշուշտ արևմտահայ նշանավոր թերթի անբավականությունը գալիս էր նաև իր վիճակից, թեև ինքն ունեւր 500 բաժանորդ:

Քաղաքական անհաստակությունը բնութագրական է այս թերթի ուղեգծին: Երբ արդեն ձևավորվում էր այն մտայնությունը, թե թանգրիմաթը դատարկ տառ է և համենայն դեպս առանց եվրոպական տերությունների միջամտություն թուրքական պետությունը կարևոր զիջումներ չէր անելու նվաճված ժողովուրդներին, «Նոյյան աղավնին» լուրջ ակնկալություններ ուներ «առատագութ կայսեր» «Երևելի» շնորհումների հանդեպ: Այս ժամանակավրեպ դիրքորոշումը, թերևս, պիտի համարել «Նոյյան աղավնու» անհաջողություն բազում պատճառներից մեկը:

Անբարեհավատ փերաբերմունք առաջացրեց նաև ամիսներ շարունակ «Մասիսի» դեմ ծավալած բանավեճը, որի առիթը 1852 թ. գարնանը Կ. Պոլսի հունական տպարանում իտալերեն լույս տեսած «Մխիթարյանք Սրբույն Ղազարու» պարսավազիրն էր, որի չհայտարարված հեղինակը, ինչպես հետո խոստովանում են թերթերը, Անտոն Հասունյանն էր, իսկ դրածո հեղինակը ոմն լատինացի քահանա դոն Գասպարոն:

Հասունյանի հերթական սադրանքը դարձյալ կաթոլիկ և լուսավորչական հայերի միացման միտումները խափանելն էր՝ թեև դրված Հռոմի կողմից, որը սխալ ընկալեց «Նոյյան աղավնին» և հավատարմով Հռոմի անկեղծությունը, ամենախիստ արտահայտություններով հարձակվեց Մխիթարյանների վրա, որոնք գրքում որակվում էին որպես դավաճաններ, Հռոմի պապին ուրացողներ, հերետիկոսներ և այլն: Այնինչ 1852 թ. № 20-ում, պաշտպանության տակ առնելով «Հայագգի մշակույթին մեծապես նպաստած» Մխիթարյան երևելի գործիչներին վաստակը, «Մասիսը» նշում է, որ «իտալերեն լեզվով հրատարակված ամբարիշտ գրվածք», որն ուղղված է Հայագգի բոլոր անդամներին միաձուլման դեմ՝ «Հասարակության սիրտը դառնապես վշտացուց»:

Այսուհանդերձ, թարմություն ու նորություն են բերում այն նյութերը, որոնք վերաբերում են ազգային կյանքին, շոշափում են կաթողիկոսի, պատրիարքի, բարեգործական ընկերությունների, հայ ամիրաների գործունեությունը լուսարանող հարցեր: Բարեկեցության, լուսավորության, առաջադիմության խնդիրները քննարկվում են ոչ թե քաղաքական փերափոխումների, այլ հասարակության հնարավորությունները օգտագործելու տեսակետից: Այդ հնարավորություններից առաջինը և կարևորը, թերթի կարծիքով,

փայտափրական և բարեգործական ընկերությունների հիմնումն է, որոնք միայն, անհրաժեշտ դուժարներ ունենալով իրենց տրամադրություն տակ, կարող են ապահովել թե՛ կրթությունը և թե՛ ժողովրդի կենցաղը: Համարից համար նյութեր նվիրելով այս թեմաներին թերթն ուրախությունը նշում է, օրինակ Կ. Պոլսի նեղուցում նավարկություն կազմակերպելու համար հիմնված փայտափրական ընկերության մասին, որի նախագահն էր Մկրտիչ Պիլեզիկ-Շյան ամիրան: № 25-ում թերթը մեծ հիացմունքով պատմում է Բեռլինում հիմնված մի ընկերության գործունեության մասին, որը մեկ տարում վաստակած գումարով կարողացել է բնակարաններ կառուցել ու հանձնել աղքատներին: Լավ չէ՞ր լինի, հարցնում է «Նոյյան աղավին», որ մեր ազգայիններն էլ ժամանակին մտածեին այդ մասին և հիմա մի գումար տրամադրեին Սամախյայի թաղամասի Հրեհհներից տուժած հայ բնակիչներին:

Թերթը զովարանում է այն ջանքերը, որ մայր եկեղեցու և նրա շրջակա երեք ուսումնարանների գործերը կարգավորելու համար թափում են ազգասեր երեկիները, բայց նրանց ունեցած գումարը բավարար չէ լրիվ նպատակին հասնելու համար, ուստի լավ կլինեի, որ Ազգային ժողովը կազմակերպեր «օժանդակ ընկերություն», որ ընդգրկվեին ավելի շատ անդամներ, և ավելի մեծ բնթացք արվեր գործին: Նույն պատճառով թերթը քննադատում է Երուսաղեմի Հայ միաբանությանը, որն իր տրամադրության տակ հսկայական միջոցներ ունենալով, աննշան օգնություն է ցույց տալիս Հայաշատ վայրերին:

Ներսես Աշտարակեցուն վերաբերող նյութերը (№ 1, 2, 4, 8, 14, 15, 46) խոսում են այն մասին, որ «Նոյյան աղավին» ժողովրդի առաջադիմության, լուսավորության հետ աննշվող բոլոր հարցերը կապում էր հոգևոր զեկավարների գործունեության հետ և, այդ տեսակետից օրինակելի համարելով կաթողիկոսի վարքը, ընդհակառակն, ուղղակի կամ անուղղակի իր անբավականությունն էր հայտնում Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքներից, որոնք, հակառակ Աշտարակեցու, հասարակության «չողեշարժիչ» ուժը չէին:

«Ազգային կյանք» բաժնում հաճախակալ են այն նյութերը, որոնք արձարծում են լուսավորությանը, կրթությանը, մանուկների դաստիարակությանը վերաբերող խնդիրներ: Թեև այստեղ ևս, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, թերթը արձատական վերափոխումներ չի առաջարկում, բայց այն փորձերը, որ անում էր «Նոյյան աղավին» ուսման պրոցեսի բարելավման համար, արդեն հաստատում են հին կրթական համակարգի անպիտանությունը և նոր միջոցներ ձևանարկելու անհրաժեշտությունը:

«Նոյյան աղավնին» աչքի է ընկնում հրապարակած գեղարվեստական նյութերի առատությամբ: Իր մի հայտարարության մեջ, որ վերաբերում է հատկապես եվրոպական գրականությունից ընթերցանության համար օգտակար գրքեր թարգմանելուն, թերթը գտնում է, որ լրագիրների և գրքերի հրատարակմամբ և ընթերցմամբ է որոշվում յուրաքանչյուր ազգի լուսավորության աստիճանը, որն իր հերթին, լինելով «մարդկային երջանկության աղբյուր», խիստ կարիք ունի զարգացման և ընդարձակման (տե՛ս № 8, 40, 41, 48 և այլն):

Թերթի տպագրած թարգմանական ծավալուն նյութերից է Շատոբրիանի «Ասորեստանի ճանապարհորդությունը», որից վերցրած հատվածները վերաբերում են Երուսաղեմի պատմությանը: Նախաբանում, որ տպված է № 59-ի «Ազգայինում», պատմվում է, թե ինչպես մի հայ երիտասարդ, ճանապարհորդության մեկնելով Երուսաղեմ, իր հետ վերցնում է Շատոբրիանի գիրքը և այն ուղեցույց դարձնելով նշումներ, ճշտումներ և ուղղումներ է անում այնտեղ, որից հետո որոշում է գիրքը թարգմանել և տպագրության հանձնել «Նոյյան աղավնուն», մի բան, որ թերթը կատարում է սիրով: Շատոբրիանի գրքի տպագրումն ունեւր քրիստոնեական կրոնի սկզբունքներին ծանոթացնելու միտում:

Բազմաթիվ ծիծաղաշարժ կամ ֆոլկլորային նյութերի թարգմանություններ կան եվրոպական մեծ մտածողների ու գրողների (Վոլտեր, Սվիֆտ և այլք) կյանքից (№ 4, 58), Ֆենելոնի, Ռասինի գործերից, մի բան, որ վկայում է «Նոյյան աղավնու» գրական ավելի մեծ հետաքրքրությունների ու ընդգրկումների մասին, քան այդ տեսնում ենք «Հայաստանում»: Թերթը որոշակի հետաքրքրություն է ցուցաբերում դեպի հայ բանասիրությունը: Գրաբար թե աշխարհաբար այստեղ լույս են տեսել բազմաթիվ չափածո գործեր, որոնցից թերևս պատմական փաստի արժեք ունի Հարություն Ալամդարյանի «Խորհրդածությունը գԱնի քաղաքէ» պոեմը (№ 45):

Թերթի մշտական թղթակից-թարգմանիչներն են ժամանակի լրագրողներ Տիգրան Տեսեյանը, Հայկ Կոստանդյանը, Մսեր Զմյուռնացին (Մսերյան), Լ. Պեյլերյանը, Արամ Հակոբյանը և ուրիշներ:

Թերթը հատուկ ուշադրություն է նվիրում Ա. Հասունյանի մշտական հալածանքներին ենթարկվող Հովսեփ Վարդանյանին: Վերջինիս յուրաքանչյուր քայլը արեւմտահայ արձակում արժանանում է «Նոյյան աղավնու» գովասան-



քին: Պիտի ասել, որ այս թերթը այն սկզբնաղբյուրն է, որը հաստատում է Հ. Վարդանյանի «Ադապի» վեպի հեղինակը լինելու հանդամանքը:

## «ԲԱՆԱՍԵՐ» (1851-1852)

Հասարակական մտքի համընդհանուր վերելքի արտահայտություն էր նաև մասնագիտացված պարբերականների հանդես գալը 1850-ական թվականներին Կոստանդնուպոլսում: Այդ երևույթը ոչ միայն տարբերանշում էր պարբերականների, նրանց հրատարակիչ-խմբագիրների և թղթակիցների բազմաճյուղ հետաքրքրությունները, այլև խորհրդանշում էր իր զարգացման պրոցեսն ապրող հասարակական նոր հարաբերությունների հանդեպ նրանց տարբեր դիրքորոշումները, այսօրվա մեր ըմբռնումով այլախոհությունը:

Այս տեսակետից բնութագրական է գրական-բանասիրական «Բանասեր» հանդեսը, որի տնօրեն-խմբագիրն էր ժամանակի զարգացած երիտասարդներից մեկը Հովհաննես Հիսարյանը (1827-1910): Նա գիտեր բազմաթիվ օտար լեզուներ, կատարելագուս արիստակտում էր ֆրանսերենին, լավ ծանոթ էր եվրոպական դրամատիկանն ու կրոնների պատմությունը: Հիսարյանն ուսանել է Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, որն ավարտելուց հետո 1847 թ. վերադարձել է Կ. Պոլիս, երկար ժամանակ ուսուցչություն արել մայրաքաղաքի դպրոցներում, միաժամանակ տարվել լրագրական գործունեությունը: Դեռևս շատ երիտասարդ հասակից նա Կ. Պոլսի «Հայաստան», Զմյուռնիայի «Արշալույս Արարատյան» թերթերում հաղորդումներ է գետեղել նոր լույս տեսած գրքերի, թատրոնի, արվեստի, ժողովրդական կենցաղի և պատմության թեմաներով: 1851 թ. հիմնադրած «Բանասերում» տպագրած նյութերն ամբողջական պատկերացում են տալիս հրատարակչի աշխարհայացքի, դավանած գրական ու գյուղական, զեպի իրականությունն ունեցած վերաբերմունքի մասին: «Բանասերը» կանոնավոր լույս տեսավ մեկ տարի, որի 12 համարներում Հիսարյանը տպագրեց արևմտահայ անդրանիկ աշխարհաբար վեպը իր «Խոսքով և Մարբուհին», Բերնարդեն դը Սեն Պիերի «Հնդկական տնակը», բազմաթիվ աստիական, հրապարակախոսական հոդվածներ, բանաստեղծություններ, բանասիրականներ: Ամսագրի էջերում իրենց գրական փորձերն են արել Մ. Պեշիկթաշյանը, Գ. Օռյանը, Ա. Հեքիմյանը և ուրիշներ:

1852 թ. Ն. Հիսարյանը Ֆրանսիացի հրատարակիչ Գալոլի հրավերով, որի տպարանում էր տպագրվում նաև «Բանասերը», աշխատանքի անցավ նրա հիմնած «Ասիական օրագիր կոստանդնուպոլսո» բազմալեզու հանդեսում, որտեղ խմբագրում էր Հայաստանին վերաբերող բաժինը: 1859-ին Ն. Հիսարյանը փորձեց վերականգնել իր նախկին ամսագիրը, բայց նրան հաջողվեց լույս ընծայել «Բանասերի» միայն մեկ համար, որից հետո այն ընդմիջտ լուեց:

1867 թ. հրատարակվեց Ն. Հիսարյանի երկրորդ վեպը «Նեոն կամ կատարած աշխարհի»: 1871 թ. Ն. Մյուհենտիսյանի տպարանում հրատարակվեց նրա կազմած երգարանը՝ «Դիւան որ է տաղարան»: Այն զբաբար շարականների և աշխարհիկ երգերի հավաքածու էր: Տաղարանի նախարանում Հիսարյանը բնութագրում է նոր շրջանի աշուղներին, որոնք ընդօրինակում են օտար, հատկապես պարսկերեն բառեր՝ պատճառաբանելով, որ «գոեհիկ աշխարհաբան» ընդունակ չէ արտահայտելու բուռն և վսեմ զգացմունքներ: Կառչելով այս տեսակետից Հիսարյանը վերջնականապես ժխտում է աշխարհաբարը, որի գրական լեզու դառնալու մտքին համակերպվում էր հիսունական թվականներին՝ այն ժամանակ էլ անպայման շեշտելով, որ դա հնարավոր է միայն զբաբարը մշտապես որպես լեզվական դանձարան օգտագործելու դեպքում:

Ամսագրի յուրաքանչյուր համարում Հիսարյանը տպագրում էր քաղաքական տեսություններ, որոնցում ամփոփում էր անցյալ մեկ ամսվա ընթացքում եվրոպայում և Թուրքիայում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները: Այդ տեսություններից առաջինը մի փոքր պատմական էքսկուրս է և բնութագրում է Նապոլեոն Մեծի բարեփոխություններից առաջացած դրական հետևանքները, որին Հիսարյանը տալիս էր արտակարգ մեծ նշանակություն: Նա դեմ չէր նաև 1850 թվականից հետո հաստատված հասարակական կարգին, այսինքն՝ Լուի Բոնապարտի հեղաշրջումներին, որոնք Ֆրանսիայում սկզբնավորեցին այսպես կոչված երկրորդ կայսրությունը: Այդ մասին նա որոշակիորեն խոսում է վերջին տեսության մեջ, որտեղ և բացահայտորեն դրսևորում է իր համակրանքը դեպի միապետությունը:

Դեմ լինելով «Հասարակապետությունը» Հիսարյանն այս տեսության մեջ գոհունակությամբ նշում է 1848 թ. Սարդինիայի և Վենետիկի հանրապետությունների կործանումը, դրանք համարում է չարագուշակ ստվեր, որոնք «խտալիտ վրային անցնելով անհետ եղան»:

Հիսարյանի աշխարհայացքում Հատուկ տեղ է զբաղում ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: Հունգարների պայքարին անդրադառնալով նա հանույթով նշում է նրանց հերոսությունը, այն, որ նրանք Ավստրիայի և Ռուսաստանի հարվածներին «քաջությունք ընդդիմանալե հոտե» միայն ստիպվեցին խոնարհվել: Մնացած բոլոր քաղաքական հոսանքներն ու դավանանքները, որոնք համընթաց չեն քրիստոնեական միապետության սկզբունքներին, չեն քաջալերվում Հիսարյանի կողմից: Նա, օրինակ, Համամիտ է պատմարան Միշլիին պաշտոնից հեռացնելու հանգամանքին և գրում է, որ դրա պատճառը «Հոչակափոր պատմագրին քաղաքական մասնավոր գաղափարներն են, որոնք դեմ են կառավարության բռնած ընթացքին» (էջ 49):

Հեատրբբիր է նրա վերաբերմունքը դեպի Օսմանյան կայսրությունը: Անկախությունը օտարերկրյա ազդեցություններից Հիսարյանը համարում է, և պետք է ենթադրել ընդհանրապես յուրաքանչյուր պետության հզորության նախապայմաններից մեկը, այդ պատճառով նա մեծ գովեստով է խոսում «տերության խելամիտ քայլի մասին», որը արգելել է իր հպատակ եզիպտոսին կոնցեսիաներ արձանագրելու Անգլիային, որպեսզի վերջինս Սուեզի նեղուցով երկաթգիծ անցկացնի դեպի Ալեքսանդրիա: Նա գրում է, թե եզիպտոսը կայսրության հպատակն է և «օտար տերություն մը իրավունք չունի անոր ներքին գործերուն ձեռք գարնելու և թե Ապպաս փաշան կրնա շինել երկաթուղին իր երկրին եկամտից թույլտվությամբ» (էջ 483):

«Բանասերը» Հասկանալիորեն Հատուկ տեղ է Հատկացնում գրականություն և արվեստի Հարցերին լուսարանելով պատմական անցյալին նվիրված գրքերը (քննադատություն, Հնախոսություն), սպելով դուռ գրական բանասիրական նյութեր (վեպեր, բանաստեղծություններ, երգիծական հոդվածներ): Չի կարելի ասել, թե այնտեղ գեատեղված բանաստեղծությունները գեղարվեստական լուրջ արժեք ունեն: Դրանք ավելի շուտ բարոյախոսական գործեր են գրված միտումներով, և կամ նմանողություններ ու գրական անվարժ փորձեր են: Այդպես է օրինակ № 1-ում «Երկու քույրեր» բանաստեղծությունը (հեղ. Հ. Հիսարյան), որից ընթերցողը պարտավոր է մի հեռուություն անել, թե այս աշխարհում չպետք է ընկնել չափազանցությունների մեջ, պետք է ժուժկալ լինել, չպետք է ամբողջովին տարվել աշխարհիկ կյանքով և կամ ամբողջովին մերժել այն, քանի որ և՛ մեկը, և՛ մյուսը հավասարապես կործանարար են:

Որպես պաշպանողական բռնատիկ, Հիսարյանը փորձում է վերականգնել Հայ հին դրական գոհարները, տպում է գողթան և ռամկական երգերի նմուշներ ի Հայտ բերելով լուրջ գիտելիքներ Հայ անցյալ գրականության և եվրոպական, անտիկ ու Արևելքի ժողովուրդների պոեզիայի տաղաչափական ձևերի մասին (№ 4, 5, 6): Եվրոպական թատրոնի պատմությանն է նվիրված № 4-ում տպված «Յաղագս սկզբնաւորութեան թատերական արուեստին յայլ և այլ աղգս» վերնագրով հոդվածը, ուր վերլուծության է ենթարկում թատերական արվեստի ծագման ու զարգացման պատմությունը, թատերական խաղերի նախատիպերը:

Հիսարյանը հատուկ տեղ է հատկացրել կնոջը՝ և՛ ընտանիքում, և՛ հասարակական կյանքում: Ամսագրի հենց առաջին համարում նա անդրադառնում է այս խնդրին և զարմանք հայտնում, թե ինչպես որոշ մարդիկ կարող են արհամարհել կնոջ ունակությունները, այն դեպքում, երբ «կանանց ձեռքին է» մարդկության ապագան և ղեկը: «Օր մը,- գրում է նա,- Նաբոլեոն դժգոհելով կրթության հին ոճին վրա, հարցուց մատամ Բանթանին թե ինչ կպակսեր մարդկանց կրթությանը,- մայրեր, պատասխանեց: - Ահա կրթության կատարյալ դրուժյուն մը- կրկնեց Նաբոլեոն, պետք է մայրեր ունենալ, որոնք կարենան տղաքը կրթել»:

Հիսարյանը Հայ բռնատիկական դրական ուղղության պաշպանողական թևի ներկայացուցիչներից է: Լինելով անցած և անցնող հարաբերությունների պաշտպան նա արգահատանքով է նայում «արծաթի երկրպագուներին», անձկությամբ երազելով Կիլիկյան թագավորության վերականգնումը: Բայց Հիսարյանը ներկայի նոր բեռով է երազում վերականգնված տեսնել անցյալը: Նրա երազած միապետությունը պետք է հիմնված լինի կրոնի և թագավորի դաշինքի վրա, ուր հասարակության բարոյական մաքրագործման դերը վերապահվում է Հեթանոսության մնացուկներից ազատված քրիստոնեությունը: Կրոնի այս առաքելության հարցում նա համերաշխվում էր Ֆրանսիական 1830 թ. հուլիսյան հեղափոխությունից հիսթամիված մտավորականության պաշպանողական թևի հետ, որի ներկայացուցիչն էր նոր կաթողիցիդի տեսարան Ֆելիսիտե Ռոբեր դե Լամենեն: Սակայն Լամենեն նա ընդունում էր իր խմբագրումներով: Հիսարյանը հավատարիմ մնաց քրիստոնեական միապետականության սկզբունքին, բայց հակառակ Լամենեի, գտնում էր, որ Նապոլեոն 1-ը իդեալական իշխող և միաժամանակ քրիստոնեական պատգամների իրագործողն էր, այսինքն նա գերապատվությունը

տալիս էր բրիտանական առաքինություններով օժտված կայսեր աշխարհիկ իշխանությունը, բայց ոչ կաթոլիկական կրոնի բացարձակ իշխանությունը, ինչպես անուժ էր Լամենեն, որի ծայրահեղությունները մերժում էր անգամ Լոսոնի պապը:

«Բանասեր» ամսագրում «Վեցհազարյակ Հայաստան կամ տեսություն սոցիալական սնապաշտություն» հոդվածաշարում նա պարզաբանում է նոր բրիտանություն վերաբերյալ իր տեսությունը: Այն ամբողջովին ուղղված էր ժամանակակից մատերիալիստական աշխարհայեցողության և բուրժուական գործնականության դեմ:

Հոդվածաշարի «Զուգակշիռ Հեթանոսության և բրիտանություն, բարոյական սկզբանաց և գիտություն վիճակին» հոդվածը փայլաշուք է այն Հույսերը, որ նա կապում էր իր դավանած կրոնական սոցիալիզմի հետ: Այն Հավատի ուժով սողորված և մաքրագործված Հավասար ազգերի մի միասնություն է, ուր յուրաքանչյուր անհատ, պահպանելով իր ազգային նկարագիրը, պարտավոր է կրթված ու լուսավորյալ լինել: Կրթված և բազմակողմանի գիտելիքների տեր այդ Հասարակության անդամը ճանաչում է իր շրջապատը, բնությունը, բնախույզ է և գործիմաց, այսինքն՝ նա «գանազանում է գործի պատճառը» և կարողանում է «պատճառէ գործը մակարերել»: Եթե մարդը բարոյապես կատարելագործվի, գրում էր Հիսարյանը, իսկ նրան այդ բանում կօգնի Համամարդկային բրիտանական կրոնը, և կրթվի ներդաշնակորեն, ապա Համագլխային բնդհանուր Համերաշխությունից զատ կատեղծվի նաև Համամարդկային բնդհանուր Համերաշխություն, որին միայն պարտավոր է ձգտել մարդկությունը:

Ելակետ ունենալով այս սկզբունքները, Հ. Հիսարյանը բազմիցս անդրադառնում է մարդու վերագաստիարակության խնդիրներին նաև իր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ: Նա զարգացնում է այն միտքը, թե ազգի դաստիարակությունը պետք է գրվի նախ և առաջ հոգեկան և բարոյական ճիշտ հիմունքների վրա:

Ընդունելով, որ վերջին տասնամյակներում ազգի կրթական բնդհանուր մակարդակի մեջ որոշ բարեփոխումներ են տեղի ունեցել, Հիսարյանը դրանց, այնուհանդերձ, կական նշանակություն չի տալիս, որովհետև «Նարեկ» սերտելով», «Հեղելով» և օտար լեզու սովորելով չէ, որ մարդը դրազեա է դառնում: Կրթվածություն տեսլով չպետք է Հասկանալ իմաստակների բազմություն: Ազգի կրթությունը պետք է լինի բնդհանուր և տարվի երկու ուղղու-

Թյամբ «հոգվո կրթուլթյուն և մտաց կրթուլթյուն»: Հոգվո կրթուլթյունը Հիսարյանը տեսնում էր Քրիստոսի ուսմունքի խոր ընկալման մեջ և զգուշացնում, որ ինքը նկատի չունի «քանի մը քրիստոնեություն անվայել սնտրիապաշտական պարտքեր տալավորելու տղուն մտքին մեջ և ոչ մարդկուլթյան արժանապատվուլթյունը խոնարհեցնող սկզբունքներու և մահացուցմանց նախանձահուզաբար հետևողուլթյունը» (էջ 70), այլ նկատի ունի այն ուսմունքը, որը մարդուս գերազանց միրքերն է սրում, մարդասիրուլթյունը, աստվածասիրուլթյունն է կատարելագործում, Աստու և ընկերների հանդեպ ունեցած իր պարտքերն է ճանաչել տալիս, հասկացնում է, թե որն է իր գոյության պատճառը և ինչն է իր վախճանը:

Գրականության և գրական երկերի ընթերցանության միջոցով ճաշակը կրթելու վերաբերյալ իր տեսակետներում ևս Հիսարյանը հետևողական է և հայտնում է հետաքրքիր կարծիքներ: Լուսավորվելու միջոց համարելով ընթերցելը նա գտնում է, որ դրա համար էլ անհրաժեշտ է համապատասխան գրականություն: Նա մերժում է Պոլ դե Կոկի և Աբբա Պրեոյի «պիղծ և անուակ» գրուլթյունները, Դյունայի և Վալտեր Սկոտի «կեղծ ու շինծու վիպասանությունը», պաշտպանում է այն վեպը, որ արցունք կարող է քամել ընթերցողի աչքերից և հենց դրանով սրբազործել նրան: Այս տեսակետից բնորոշ է հանդեսի թարգմանական գրականության ընտրուլթյունը: Հիսարյանին գրավում էր Բերնարդեն դը Սեն Պիերի «Հնդկական տնակը» վեպը պաշտոնական կրոնից հեռու համընդհանուր հավատի և անտրոպոցենտրիզմի իր գաղափարախոսությամբ: Հատկապես «Պողոս և Վիրգինիա» և «Հնդկական տնակը» փիլիսոփայական վեպերը որոշ իմաստով համահունչ էին մարդկային բարոյականության կատարելագործման, ընդհանուր համակեցության նրա պատկերացումներին: «Հնդկական տնակի» առանցքը մարդն է և նրա պարզ ապրելակերպի փառաբանումը:

Սակայն Հիսարյանի դավանած համամարդկային կրոնի և երջանկության գաղափարախոսությունը հեռու է Սեն Պիերի ուսսոյական վերադարձից դեպի բնությունը: Հիսարյանի վիպական հերոսի դժգոհությունը հասարակությունից ավելի որոշակի սոցիալական գունավորում ունի: Դժգոհ իրականությունից և իրենց պարտադրվող մարդկային հարաբերություններից նրանք մերժում են այդ հարաբերությունները, դատապարտվում ողբերգական վախճանի մատնվելով մենության և նմանվելով գերմարդկանց:

«Եռսրով և Մաքրուհի» վեպի հերոսների ըմբոստությունը չընկալատող իրականությունից դեմ գեղարվեստորեն վերածվում է նահատակների ողբերգությունից, գրական մի ու, որ ՄՄ դարի վերջին տարածվեց հատկապես Գերմանիայում: Հերոսների բախտը կանխորոշված է, նրանք անզոր են կռվելու նախախնամությունից դեմ և զոհ են դնում դրան: Վեպի բոլոր հերոսներն ի վերջո կործանվում են տեղ չգտնելով իրենց չընկալատող կյանքում, մեռնում են դժգոհ այդ կյանքը մարմնավորող նահատակից: «Եռսրով և Մաքրուհի» վեպը նահանջ էր արևմտահայ սկզբնավորվող բեախուստական արձակից («Աղապար», 1851) և կյանքի գեղարվեստական նոր ըմբռնումներից: Հիսարյանի դժգոհությունը ձևավորվող նոր իրականությունից, քաղաքական միտումները ցանկալի հասարակական կառուցվածքի և բարոյական չափանիշների մասին ավելի ընդգծված արտահայտվում են հաջորդ «Նեոն կամ կատարած աշխարհի» վեպում, որը մտահղացման և գեղարվեստական մարմնավորման տեսակետից նույնքան մտացածին է, որքան «Եռսրով և Մաքրուհին»:

Վեպի կենտրոնական հերոսներից յուրաքանչյուրը որոշակի գաղափարի մարմնացում է: Հեթումը Լուսինյան թագավորական տան վերջին շառավիղն է, Լեոնը նույն ինքը նեոն: Արծաթի երկրպագուների առջև անզոր է նրա իրակալ և ժամանակակից կրթներից հեռու հերոսը Հեթումը: Նիհիլիզմը Հիսարյանին խանգարում է տեսնել առաջադիմականի անկանխելիությունը:

Մոսյլ գույներով է ներկայացված Լեոնի կերպարը: Հեթումի հետ ունեցած մտերմական գրույցներից մեկում նա փիլիսոփայում է աշխարհի գոյությունից անհավանականության և նրա կործանման անհրաժեշտությունից մասին և նույնիսկ կատարում ասոկալիպտիկ հաշվումներ: Ըստ Լեոնի աշխարհակործան հայացքի, արժեզուրկ են բոլոր երկրներն ու արդի քաղաքակրթությունը:

Այս ամենից փոխհելու համար անհրաժեշտ է վերականգնել անցյալը: Վեպում ի վերջո բարոյապես մերկանում է չարը, Նեոն հեռանում վեպի ասպարեպից տեղը դիջելով բարուն: Հիսարյանը վերջարանում Հեթումի խոսքերով հայտնում է աշխարհին, որ ճշմարտությունը քրիստոնեական սիրտ, անձնագոհությունից և բարոյական մաքրությունից մեջ է: Այսինքն արձակում նա փորձում է գեղարվեստորեն հաստատել իր աշխարհայացքի հիմնական միտումները:

## «ԱՆՏԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԵՐ» (1854-1855)

XIX դարի 50-ական թվականներին Արևմտահայաստանում ծավալված լուսավորական շարժման կարևոր դրսևորումներից մեկը 1854 թ. Կ. Պոլսում հիմնված «Ընտանի իմաստասեր» անվանումով կանանց անդրանիկ պարբերականն էր, որը թեև կարծատև փայլատակում ունեցավ (փակվել է 1855 թ.), բայց մի հայտնի չափով ամբողջացրեց ձևավորվող նոր գաղափարախոսութայան կյանքի կոշող սկզբունքները:

Կնոջ դերը ընտանիքում և հասարակական կյանքում ավելի արդյունավետ դարձնելու և նրա ուժերն ավելի նպատակասլաց օգտագործելու վերաբերյալ հարցադրումները, որ արժարժվում էին դեռևս 40-ական թթ. մամուլում, մասնավորապես, Ն. Զորայանի և Սերվիլիենի ելույթներում, անշուշտ հող էին նախապատրաստել նման պարբերականի հրապարակ գալու համար: Հրատարակիչների հիմնական նպատակն էր ներշնչել կնոջը և դեռահաս աղջիկներին լիարժեքութայան, ազգային արժանապատվութայան, հասարակութայան գործերում իրենց կարևորութայան զգացում, վանել նրանցից տղամարդու կցորդը և ընտանիքում ու կյանքում երկրորդական դեմք լինելու վտանգավոր և ստորացուցիչ մտայնությունը:

Պարբերականը հրատարակվում էր Ազգասիրական ընկերութայան կողմից, հրատարակիչն էր Վ. Սոֆյալյանը, լույս էր տեսնում նախ երկու շաբաթը, ապա ամիսը մեկ անգամ, ուներ բարվոք տպագրություն:

Ինչպես և բնականաբար պետք է ենթադրել, ամսագրում տպագրված նյութերը շոշափում են սիրո, ընտանիքի, բարոյականութայան, մանուկների, հատկապես օրիորդների կրթութայան ու դաստիարակութայանը, կենցաղին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Հանդեսի երկրորդ համարում տպված «Բարոյական իմաստասիրություն» հոդվածի բնաբանն է Օվիդիոսի «Մենք երկուքնիս բազմություն մըն ենք» արտահայտությունը: Գովերգվում է բնական և անկաշկանդ սերը, որը մարդուն տրված ամենամեծ պարգևն է և պետք է պահպանվի աչքի լույսի պես: Փորձելով դուրս գալ սիրո և հավատարմութայան վերաբերյալ սխեմատիկ պատկերացումների շրջանակներից, ամսագիրը երկու հոգիների կապի նախապայմանը համարում է լիակատար փոխըմբռնումը, որը հնարավոր է նույնիսկ բնավորությամբ միմյանցից տարբեր անձնավորությունների միջև, քանի որ երբեմն Հենց հակասություններն են կազմում անբախտելի ներ-



դաշնակցութուն: Սիրո մեջ պետք է իշխի անձնազոհութունը և մտերիմի շահը անձնականից վեր դասելու կարողութունը:

Մեր համարելով բնտանիքի կայունության հիմքը, հողվածագիրը դիմում է ժորժ Սանդին, որը սիրելու կարողութունն է համարում մարդու լավագույն հատկություններից մեկը: Բարբերի անարատության ու վեհ զգացմունքների պաշտպանման հարցերին նվիրված հողվածներում ամսագիրը միշտ անկեղծ ու ջերմ խոսքեր է գտնում իր բնթերցողուհիներին շահելու համար:

Որպես գեղեցիկ սիրո օրինակ, «Ընտանի իմաստասերը» իր համարներում տպագրում է ընդարձակ հատվածներ Ենքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունից, կցելով այսպիսի խմբագրական. «Մեր ազգին կարդացողներն ալ իր հանճարը մեր գրուցելիքեն աղեկ աս խաղիս մեջ պիտի հասկնան, որ իրեն վսեմ գրվածք չենե, գոնե էն անուշը ու էն խեղճն է, և մեր սրտին էն մոտ զգացումներուն վրա գրված»:

Հանդեսը հաճախ է դիմում եվրոպական երկրների պատմությանն ու գրականությանը, հատուկ տեղ է հատկացնում այդ երկրների նշանավոր կանանց կյանքի՝ նկարագրությանը: «Ահա Մարիամ Ստյուարտ, թագուհի Սկոտլանդ» ծափալուծն նյութը, որտեղ հատուկ համակրանքով է խոսվում հռչակված այդ կնոջ՝ դրամատիկական կյանքի և վախճանի մասին: Առանձին շեշտով են գրված հատկապես այն հատվածները, ուր նկարագրվում են մահվան գնացող թագուհու վեհ կեցվածքը, հպարտությունն ու արժանապատվությունը, ամեն կերպ շեշտվում է նրա կանացի մեծ ուժը:

Նորի բմբուռման գիտակցությունը են գրված դաստիարակությունը վերաբերող հողվածները: Ընտանիքում անպայման պետք է իշխի մտերմությունը, ժտահությունը, հարազատությունը: Որդին մոր հետ պետք է կիսի իր բոլոր թաքուն մտքերն ու զաղանիքները, մորն իրրե սրտակից խորհրդատու գիտելով, նա չի կատարի այնպիսի սխալներ, որոնց համար հետագայում կարող է չարաչար զգջալ: Հանդեսը Հայ կնոջը խորհուրդ է տալիս կուրորեն չհետևել եվրոպացի կնոջը, հատկապես ֆրանսուհուն, որն անում է այն, ինչ թելադրում է ազգային պատկանելությունը, և երբեք չի կորցնում սեփական դիմքը: Հայ կինը, նույնպես ունենալով իր ազգային նկարագիրը, պետք է աշխատի պաշտպանել ու ավելի գեղեցկացնել այն: Այս հարցադրումներն արժարժվում են շարունակարար տպից «Սոֆիա» հողվածում, որի հերոսուհին չափի զգացումով, ոչ շոտյլ, բայց ճաշակով հաղնվող, շնորհալի, մարդասեր ու սիրող հայուհին է:

Սրամիտ երկխոսուեթյունների միջոցով Հանդեսը կանանց, ինչպես և տղամարդկանց, խորհուրդ է տալիս հանուն բարեկրթության գուսպ լինել, շշտախոսել և չզբաղվել մանր բամբասանքներով:

Չափազանց ուշադիր և խնամքով են գրված այն նյութերը, որոնք վերաբերում են մանուկների ընտանեկան դաստիարակությանը: Վախի միջոցով երեխային սաստելը համարվում է խիստ վնասակար, այն կտրում է նրա ինքնավստահությունը, նրան դարձնում է փոքրզի, անհարգալից: Այս հարցերը շարադրելիս պարբերականը հենվում է Ժան-Ժակ Ռուսոյի դաստիարակչական մեթոդի վրա:

Ամսագրում տպված բազմաթիվ օգտակար խորհուրդները, գիտությունները բարերյալ նորույթները նպատակ են ունեցել օգնելու հայ կանանց ընդհանուր գիտելիքների հարստացմանը:

Բարոյականության, ընտանիքի, կրթության ու դաստիարակության հարցերում ուղեցույց ունենալով եվրոպական առաջադեմ մտածողների ու գործիչների տեսակետները, «Ընտանի իմաստասերը» միաժամանակ ձգտում էր գուտ ազգային, հայկական հողի վրա դնել կնոջ դերի մեծացման և նրա անհատականության զարգացման վերաբերյալ իր սկզբունքները, օգնելով ազգային առաջադիմության ընդհանուր գործընթացին:

### «ՄՈՒՍԱՅԵ ՄԱՅԱՅ» (1857-1858)

XIX դարի 50-ական թվականներին արևմտահայ մասնագիտացված պարբերականներից է «Մուսայք մասյաց» թատերագիտական հանդեսը, որի հրատարակիչն էր դեմոկրատ հրատարակախոս-թատերագիր Արմենակ Հայկունին (Համբարձում Ճիզմեճյան): Ծնվել է 1835 թ. Կոստանդնուպոլսում: Վաղ հասակից զրկվելով մորից, նա 1847 թ. ապրել է Ս. Փրկչի որբանոցում: 1861 թ. մեկնում է Ջմյուռնիա, որտեղ Գ. Ջիլինկիրյանի հետ միասին հիմնում է «Ծաղիկ» պարբերականը, այնտեղ հանդես գալով բանաստեղծություններով, օրվա հրատապ հարցերին վերաբերող հոդվածներով, քաղքենիություն, ձեռագրություն, եվրոպային կուրորեն ընդօրինակելու սովորույթի գեմ ուղղված սրամիտ ելույթներով: 1863 թ. Հայկունին նորից վերադառնում է Կոստանդնուպոլիս, այստեղ մնալով մինչև իր կարճատև կյանքի վերջը (մահացել է 1866 թ.), մշտապես գտնվելով արևմտահայ հասարակական կյանքի հորձանուտում: Կոստանդնուպոլսում նա գրեց իր «Էլիզա» հոգեբանական-ազգասիրական վեպը՝ ընդհանուր առմամբ ուշադրավ մի

երևույթ հայ արձակի պատմության մեջ: «Մուսայր մասյացից» հետո Հայկունին սկսեց հանդես գալ Գրիգոր Ալեաթեանի «Թռչնիկ պեղասյանում» (1863-1866), որին զուգահեռ հրատարակվում էր նաև «Զայն բնիկերականը»:

Հայ դեմոկրատական հրապարակախոսության պատմության մեջ նշանակալից հետք են թողել Ա. Հայկունու պամֆլետները և երգիծական ստեղծագործությունները, որոնցում ծաղրել է անդրօվկիանոսյան միսիոներներին («Թուրքանիթա տիկիրը և իր գաղափարը ամերիկացի էրիցական քարոզչաց վրայոք», Կոստանդնուպոլիս, 1860), քննադատել է ժողովրդի գիտակցությունը կաշկանդել ձգտող հոգևորականներին: Մարդը, գրում էր Հայկունին, պետք է վայելի կյանքի հոգևոր և մարմնական հանույքները ալստեղ երկրում, նա պետք է հասկանա իր ծագման կենսաբանությունն ու ֆիզիոլոգիան, ճիշտ ըմբռնի բնության օրենքները: Իր հրապարակումներում նա օգտագործում է նաև մարդու անատոմիային վերաբերող նկարներ, զբանով իր դեմ գրգռելով պահպանողականությունը, մասնավորապես, «ժամանակ» պարբերականի (1863-1868, Կ. Պոլիս) խմբագիր Ատեփան Փափազյանին: Վերջինին անհարկի մեղադրանքների դեմ Ա. Հայկունին հանդես եկավ իր լսվագույն պամֆլետներից մեկով «Շերմակ կամ պարոն Փափազյան և իր «ժամանակը» (1863), ինչպես նաև հրապարակեց «Գաղտնիք հոգևորականության կամ արյունոտ վիհերուն վրա» (1864) տեսությունը:

«Մուսայր մասյաց» թատերադրական հանդեսը Հայկունու այդ հետաքրքիր նկարագրի տեք մարդու և բեզմնավոր հրապարակախոսի ու գրողի, կյանքում գրավում է նշանակալից տեղ, քանի որ հանդեսի փակումից հետո էլ նա նույն վերնագրով շարունակում էր հրատարակել թատերադրություններ, բայց որում իրենց գեղարվեստական արժանիքներով շատ ավելի նշանակալից, քան «Մուսայր մասյացում» տպված առաջին «Հերսիլիա» պիեսն էր: Ե՛վ պարբերականի հանդես գալը, և՛ արևմտահայ դրամատուրգիայի հրապարակային հայտը նշանավորում էին մշակութային-լուսավորական կյանքի խոր արժատափորում: Հասարակության պահանջն էր որոշում նորատիպ մամուլի նման ճյուղավորում:

«Հերսիլիան» ո՛չ միայն գեղարվեստական արժանիքներով էր գիջում հեղինակի հաջորդ տարիներին գրած պիեսներին: Եվրոպական սենսիվենտալ դրամաներից փոխառված սյուժեն սչինչ ընդհանուր չունեք հայ իրականության հետ և այնքանով էր կարևոր, որ առաջին անգամ պարբերական

մամուլում լույս էր տեսնում դրամատիկական ստեղծագործություն: Հայկունու հետագա տարիներին թատերգությունները լրացնում էին «Հերսիլիայի» թերուլությունները նաև այս տեսակետից: Նրանցում հիմնականում ծաղրվում էին հայ ունևոր խավի եվրոպասիրությունը, քաղքենիական նիստ ու կացը («Չարլսթոն, կամ սամաթիացի Աբիգ աղա» և այլն), բարձրացվում էին դաստիարակության հարցեր: Հայկունու «Արա Գեղեցիկ» հայրենասիրական պիեսը չէր իջնում 60-ական թվականների հայ թատրոնի բեմերից:

Դիմելով թատերգության ժանրին և հրապարակելով թատերագիտական ամսագիր Ա. Հայկունին օգնում էր ժողովրդի գեղագիտական ճաշակի և թատերագիտական մտքի ձևավորմանը, արվեստին նվիրված հոդվածներում մշտապես շեշտելով այն դերը, որ բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների կյանքում և նրանց լուսավորության գործում կատարել է արվեստը, այդ թվում և թատրոնը:

# Գ Լ ՈՒ Խ Յ Ի Ե Գ Ե Ր ՈՐ Ղ

## ՉՍՅՈՒՌԱԳԱՅ ՄԱՍՈՒԸ

Զմյուռնիայում (Թուրքական անվամբ Իզմիր) հայկական գաղութի հիմնումը գլխավորապես կապվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման (1375), ապա և Շահ-Աբասի արշավանքների (1603-1639) հետևանքով տեղի ունեցած հայերի գաղթի հետ: Հաջորդ հարյուրամյակում, մասնավորապես Դավիթ-Բեկի գլխավորած ազատագրական շարժման պարտությունից հետո, զմյուռնահայ գաղութն ավելի է սավարացել Այուդիբից, Աբարատյան գաշտից, Նոր Զուգայից, Կապանից և այլ վայրերից գաղթած հայ զանգվածների հաշվին: 1630-1870 թթ. հայերի թիվը Զմյուռնիայում տատանվում էր 6-10-12 հազարի միջև: Մովսիսյա վանառաչահ քաղաքում տնտեսական կայուն վիճակ ստեղծելու համար հայերը միջին դարերից սկսած լայն առևտուր են ծավալել ոչ միայն Փոքր Ասիայում, այլև արևմտյան մի շարք երկրներում, մասնավորապես Հոլանդիայում, ապա նաև Տրինիստում, Վենեստիկում, Մանչեստրում և այլուր:

Կաթթօջախը նշանավոր էր հատկապես իր մշակութային հաստատություններով: 1759-ին Մահաեսի Մարկոսն այստեղ հիմնել է գաղութի առաջին տպարանը, որը դործել է մինչև 1763 թ.:

XVIII-XIX դարանկրին գպրոցական գործը կայուն հունի մեջ մտավ, և նշանավոր Մեսրոպյան վարժարանում հասունացան սերունդներ, որոնց շնորհիվ հաջորդ տասնամյակներում գաղթօջախում նշանավորվեց հայ մշակույթի փայլուն առաջընթաց: Մեսրոպյանը գոյատևել է շուրջ 125 տարի:

Զմյուռնիայի առաջին և երախտաշատ մանկավարժը եղել է Հովհան Վանանդեկցին (1772-1840), որը մոտ չորս տասնամյակ կրթել ու դաստիարակել է զմյուռնահայությունը: Հովհ. Վանանդեկցուն փոխարինելու եկավ Անդրեաս Փափազյանը (1806-1857), որ քսանվեց տարի դասավանդել է գաղթօջախի գպրոցում և վարել վարժարանի առաջին տեսչի պաշտոնը: Իտալիայում կրթություն ստացած և ժամանակի առաջադեմ գաղափարներով սոցոթված մանկավարժը դարձավ գաղթօջախի մեծ լուսավորիչը, գպրոցում մացրեց օտար լեզուների դասավանդում:

Զմյուռնահայ գաղութի մշակութային պատմության մեջ խոր հետք են թողել զանազան ընկերություններ ու հաստատություններ: 1841 թ. Ա. Փափազյանի հորդորներով նրա նախկին սաները ստեղծեցին «Սյունյաց ընկերությունը», որը ծավալել է բացառիկ լայն գործունեություն: Ստանձնելով Մեսրոպյան վարժարանի հովանավորությունը՝ այն նպաստել է կրթության զարգացմանը և միաժամանակ դպրոցներ բացել շրջակա հայկական գյուղերում: Ընկերությունն ունեցել է իր խորհուրդը, մեծ թվով բաժանորդ-անդամներ զանազան երկրներում՝ Թուրքիայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Անգլիայում և այլուր:

Իր հետապնդած նպատակներով մշակութային ուրույն մի հաստատություն էր «Արագածունյաց ընկերությունը», որը գործել է 1843-1846 թթ.: Նա իր առջև խնդիր էր դրել հրատարակել օգտակար գրքեր և հիմնել էր իր տպարանն ու պարբերականը՝ «Հայրենասեր»: Կարճ, բայց արգասավոր է եղել «Հաշտենից միություն» ընկերության և նրա տպագիր օրգանի՝ «Միություն» թերթի գործունեությունը:

## «ՇՏԵՍԱՐԱՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼՅԱՑ»

(1839-1842, 1844-1846, 1854)

Զմուռնիայում ուսման-կրթության, դեպի մշակութային կյանքը եղած հակումները ծնունդ տվեցին գաղթօջախի հայերեն ամենամսյա «Շտեմարան պիտանի գիտելյաց» կրոնական հանդեսին, որը ժամանակագրական կարգով առաջինն էր: Հանդեսը սկսել է հրատարակվել 1839 թ. հունվարի 1-ից և շարունակվել է մինչև 1842 թ. վերջը: Հաջորդ տասնամյակում այն լույս է տեսել միայն երկու տարի և երկարատև դադարից հետո՝ 1854 թ. հրատարակվել է Կ. Պոլսում: Մի տարի անց փոփոխվել են թե՛ հանդեսի ծավալը, թե՛ բովանդակությունը, և թե՛ անվանումը՝ «Ափետարեր և Շտեմարան պիտանի գիտելյաց»: Վեց տարվա կանոնավոր հրատարակության ընթացքում (1839-1842 և 1844-1846) լույս է տեսել 72 համար: Հաղեսն իր ընդհանուր գիմնադրով նորություն էր հայ մամուլի պատմության մեջ: Միսիոներական հանդեսը նյութերի դասավորությամբ, մատուցման ձևերով, վերնադրերով, շարվածքով, համարների ձևավորմամբ, առավել ևս նկարագրադրումով լույս էր տեսնում կատարյալ «Բազմավեպ» ամսագրի տեսքով: Փաստորեն հայ իրականություն էր մուտք գործում պարբերական ստեղծելու մեծ փորձ ու

վարպետութիւն, որը դուռ մամուլի գործի դրվածքի տեսակետից պետք է օգտակար համարել:

Հանդեսի անդրանիկ համարի ենթատիտղոսը քաղված է Աստվածաշնչից. «Տուր ի խրատ զսիրտ քո և զյանլիս քո պատրաստեա բանից իմաստութեան»: Դիպուկ քաղված բնարանը ընթերցողին նախապատրաստում է գիտելիքներ յուրացնելուն: Հանդեսն աչքի է ընկնում հարուստ նորամուծութիւններով: Ուշադրութեան է արժանի հանդեսի լեզուն, որ հասկանալի է հասարակ ընթերցողին, բավարարում է ժամանակի պահանջները. միսիոներներն ի սկզբանէ կողմնորոշվել են դեպի աշխարհաբարը:

Հանդեսն ամենից առաջ աչքի է ընկնում բնագիտական նյութերով և այդ նյութերն ուղեկցող հարուստ գծանկարներով: Այդ նյութերի շարքում նկատելի տեղ են դրավում բուսաբանական հոդվածները: Նույնքան հարուստ ու բազմազան են հանդեսի աշխարհագրական նյութերը և գիտական նյութերը, որոնք նվիրված են առհասարակ գիտութեանը և առանձին գիտնականներին: Դրանց մի մասը կրոնական շղարշ է կրում, բայց դա չի խանգարում, որպեսզի ընկալվեն իրրե տեղեկատվութիւն:

Աստղագիտութեան զարգացումը և նրա նկատմամբ ստեղծված ընդհանուր Հետաքրքրութիւնը խթանել են, որպեսզի հանդեսն 84 համարում հրատարակի 50 աստղագիտական հոդված: Այդքան հոդված չի տպագրել հայերեն ուրիշ որեէ հանդես: Ըստ որում, ժամանակագրական կարգով առաջինը լինելով, նա նաև առաջինն էր մշակում անհրաժեշտ տերմինները, հաղթահարում լեզվական դժվարութիւնները:

Եթէ համաձայններ թեողիկի այն կարծիքին, թէ «ինչ որ ալ ըսվի, անուրանալի է, որ Իզմիրի հայոց մտափոր զարգացման գրական ազդակ մը հանդիսացած է բողոքականաց Օտոմանական պատկերազարդ աշխարհաբար ամսաթերթը», ապա այդ ազդակը պետք է գլխավորաբար պայմանավորել հենց նրա գիտահանրամատչելի նյութերով: Հանդեսում քիչ է են նաև Հետաքրքրաշարժ նյութերը, բարոյագաստիարակչական հարցերին ու խնդիրներին նվիրված հոդվածները: Հանդեսը հաճախ է անդրադարձել կանանց կրթութեան ու գաստիարակութեան հարցերին, որը ինքնին, անկախ կրոնական շղարշից, նշանակալի երևույթ է:

Հանդեսը հայկական կյանքի ու մտածողութեան արդյունք էր, թեև հայ միջավայրում էր ստեղծվում, հայերեն էր հրատարակվում և հայոց մեջ էր տարածվում:

Ընդհանուր առմամբ այն դրական ներգործություն է ունեցել ընթերցող-ներին վրա նպաստելով նրանց մակարդակի բարձրացմանը: Իբրև բազմակողմանի, բովանդակությունը հարուստ, նյութերը դյուրամատչելի ձևով մատուցող և, որ առավել նշանակալի է, պարզ արևմտահայերեն հրատարակվող հանդես, այն նորություն էր հայ մամուլի պատմության մեջ և այդքանով էլ խթանել է հայ հրապարակագրությունը:

## «ԱՐՇԱԼՈՒՅԱ ԱՐԱՐԱՏՅԱԼ» (1840-1884)

Դարի առաջընթացից, մասնավորապես դրկից ֆրանսիական ու հունական գաղթօջախներից հետ շմնալու ձգտումը, հատկապես աղգային համախմբմանն ու վերածննդին նպաստելու փափազը բնականաբար հարուցում էին նաև զմյուռնահայ գաղթօջախը աղգային ստեղծարար գործունեության օջախ դարձնելու պահանջը: 1840 թ. բարեբախտ եղավ զմյուռնահայության համար: Նրան վիճակվեց ծնունդ տալ առաջին աղգային թերթին՝ «Արշալույս Արարատյանին»: Աղգային դիմագծով պարբերական հիմնելը պայմանավորված էր գաղթօջախում հասարակական առաջընթացով՝ մասնավորապես ուսումնականության գործի բավարար դրվածքի և մտավոր կյանքի աշխուժացման շնորհիվ:

Արդեն գործող հայկական տպարանում օգոստոսի 10-ից սկսեց լույս տեսնել թերթը: Նույն տպարանում էլ հիմնվեց Մեսրոպյան վարժարանի տպարանը, և ստեղծվեց Սյունյաց մշակութային ընկերությունը, որ լայնածավալ ընդգրկում ունեցավ: Գաղթօջախի անդրանիկ պարբերականը ստեղծելու, խմբագրելու ու հրատարակելու պատիվը վիճակվել է Մեսրոպյանի սաներից մեկին՝ Ղուկաս Պալղաղարյանին:

Խմբագրական աշխատանքի ու հրապարակագրության ասպարեզ մտնելով, Պալղաղարյանը (1810-1878) միաժամանակ լայն գործունեություն է ծավալել: Երեսուներեք տարի՝ 1840-1878 թթ. նա խմբագրել ու տնօրինել է թերթը՝ միայնակ կրելով հրատարակության ու տարածման ողջ ծանրությունը:

Որպես հասարակական գործիչ, Պալղաղարյանը գործնական դեր է խաղացել զմյուռնահայ մշակութային կյանքում. երկար տարիներ նա եղել է գաղթօջախի Մեսրոպյան և Սարգսյան (ապա՝ Հռիփսիմյան) վարժարանների հոգաբարձուն, որի տնօրինությունը զուգադիպում է ուսումնական այդ հաստատությունների առավել ծաղկման ժամանակաշրջանին: Պալղաղարյանի



նախաձեռնությունք մը է ստեղծվել ու նրա ատենապետությունք մը գործել տեղի է համարվալոք Այուսյաց ընկերությունը:

Լայն շփումների շնորհիվ Պաղպարյանը որոշ ներգործություն է ունեցել Հասարակության մեջ, այս կամ այն չափով նպաստել մի շարք ազգագրա-ձեռնարկումներին, բարեգործական քայլերին է մղել մեծահարուստներին: Նույնքան լայն էին նաև նրա կապերն օտարերկրյա գործիչներին, մասնավորապես Զմյուռնիայում Անգլիայի դեսպան լորդ Ստ. Փաննինգի հետ: Նա փորձում էր օգտագործել մեծ տերությունների դեսպանների զգալի ազդեցությունը սուլթանի և պալատական շրջանների վրա:

Մեր բանասիրությունն ու պատմագիտությունը քիչ չեն անդրադարձել Պաղպարյանի և նրա թերթի գործունեությանը: Թե՛ նրանց ժամանակակիցները և թե՛ Հետագա ուսումնասիրողները հակոտնյա կարծիքներ են հայտնել: «Ի ծագել Արշալույս Արարատյան՝ նոր կյանք կսկսե՞ս բնութագրությունից թերթին արված որակավորումը հասել է մինչև «ռեակցիոն օրգան» պիտակը: Մերժելով երկու ծայրահեղությունները, տեղին է վերհիշել այն կարծիքը, որ հայտնել է Ղ. Պաղպարյանին ու նրա թերթին առավել մոտիկից ծանոթ, ըստ որում, նրանց Հեռ նաև յուրը բանավեճ մղած ականավոր գործիչ, խմբագիր, գրող Մ. Մամուրյանը: Նա բավական դիպուկ է բնութագրել «բազմադյուն» խմբագրին «Իրբև խմբագիր Հայ օրագրության մեջ եզակի պատկեր մ'էր, և պիտի մնա միշտ իր գաղափարներովն ու իրեն հատուկ արժանիքով: Նա 1840-ին ավետեց Արարատայ արշալույսը և 38 տարի կռվեցավ իր գրչով այդ արշալույսը փայլեցնելու Արարատս վրա... ամեն արգելքներ տապալելով կարող եղավ հայությունը, մամուլով մ'օժտել և հայոց մեջ նոր շավիղ մը բանալ հառաջդիմության, որու մեջ վերջերն ուրիշներ ալ մտան: Բայց Թուրքիո մեջ միայն Ղ. Գ. Պաղպարյանի կպատկանի Հայ օրագրության ռահա-հորդ լինելու փափաքը... Երբ Արշալույսն երեցավ, նոր թվական մը բացվեցավ անուշտ հայոց համար: Նա գրգիռ եղավ նոր նոր ընկերությունց հաստատության, նա ջանաց ուսումնասիրությունը տարածել հայոց մեջ, նա պարտցները պաշտպանեց և հայոց իրավունքը իր խմացած կերպովը: Նա կերպով մ'առիթ եղավ մտավորական Հարաբերություն հաստատելու այլ և այլ հայարնակ երկիրներու մեջ և հայոց աչքը դեպի էջմիածին ու Հայաստան դարձնել, որու վերաշինության իր Հարմար դատած միջոցներով աջակցելու փուլի տարավ» («Արևելյան մամուլ», 1878, հունիս, էջ 65-66):

Մեր անդրանիկ ազգային թերթը, միջամուխ լինելով Հայոց կյանքի առանցքային խնդիրներին, պարբերաբար բանավիճել է այլևայլ Հանդեսների ու թերթերի հետ ամեն անգամ ենթարկվելով երբեմն լուրջ, իսկ ավելի հաճախ կողմնակալ քննադատության: Ղ. Պալազարյանը բավականաչափ հետևողական ու իր դավանանքում համարյա թե անկոտրում խմբագիր էր: Նրան կարելի է բնութագրել որպես մի գործչի, որը ի սկզբանե ձգտել է օբյեկտիվ դիրք զրավել այն ամենի նկատմամբ, ինչ տեղի էր ունենում և պետք է արտացոլվեր իր թերթում:

Մշտապես ակտիվ դերում գտնվելով նա օր օրի հետևում էր ոչ միայն ազգային ներքին կյանքին, այլ նաև միջազգային իրադարձություններին, որոնց մասին Հաղորդումները օտարերկրյա մամուլից քաղում ու զետեղում էր իր թերթում, երբեմն հատուկ հավելվածներում գերազանցապես Հանդես գալով որպես լրագրող, բայց և հաճախ էլ շփոխտակ Հաղորդելով իր կարծիքը: Թուրքիայի սահմաններից դուրս լույս տեսնող մամուլը, ինչպես և Կ. Պոլսում հրատարակվող Հայերեն և օտար պարբերականները, Պալազարյան-խմբագրի գլխավոր աղբյուրն էին: Գաղթօջախների ընթերցողները կարոտ էին այդ լուրերին: Այդ նյութերը որոշակիորեն ընդլայնել են գաղութահայության հասարակական-քաղաքական հետաքրքրությունների շրջանակը:

Հատկանշական է Պալազարյանի վերաբերմունքը Զ. Գարիբալդիի ու նրա գլխավորած Իտալիան «ցածից» ազատագրելու շարժմանը: Տարեվերջից նրա թերթը սկսեց պարբերաբար լուսաբանել Նեապոլում, Սիցիլիայում և այլուր տեղի ունեցող «մեծամեծ անկարգությունները»: Հետագայում, արդեն իտալական ազատագրական պատերազմի ժամանակ, թերթը, ավելի մանրամասն տեղեկություններ հաղորդելով Գարիբալդիի գործողությունների մասին, արձանագրեց, որ նա «դուրսգաղնարար կաշխատի ձեռք բերել» Սիցիլիայի անկախությունը, «Կարիպալտի քաջ զորավետը զանազան հաղթությունների» է հասել, «մեծահամբավ Կարիպալտի քաջ և իմաստուն զորավետը» և նրա զորքը օգնության են շտապում «ազատասեր ժողովրդին», «Կերևի թե աստուծո մատը իտալական գործոց վրա է, քանզի զարմանալի հաջողությամբ կհառաջանան մեծահամբավ Կարիպալտի զորավետին առաջնորդությամբ: ... Չայն բազմաց, ձայն աստուծո. ուստի տարակույս չունիմք, թե Իտալիան յուր կատարյալ ազատությունը, անկախությունը պիտի

ստանա, եթե խոհեմությունը միշտ առաջնորդ ըլլա Կարիպալտիին հաջողու-  
թյանցը» (NՁ 631):

Անսրող Համակրանք արտահայտելով ազատագրական պայքարում Գարի-  
բալդիի ձեռք բերած «քաջագործական հաղթությունների» նկատմամբ, Ղ.  
Պալպազարյանը պատերազմական գործողությունների դադարումից հետո էլ  
հետևում էր «Հռչակավոր գորպպետի» գործունեությունը: Նա իր թերթի 1861  
թ. հունվարի 28-ի համարում զետեղել է Գարիբալդիի նամակը, Համակրան-  
քով արտացոլել Իտալիայում տեղի ունեցող քաղաքական իրադարձություն-  
ները, ձայնակցել այն առաջարկին, որ «Վասն դյուցազնական պանծալի գոր-  
ծոց հիշյալ հայրենասեր գորպպետին... Իտալիո առաջին քաղաքացի փառա-  
վոր տիպոսը արվի» (NՁ 646): Մայիսին հրատարակել է նրա հանրահայտ  
գրույցը իտալական «գործավորաց» ընկերությունների պատգամավորների  
հետ, ապա և կոչ-նամակը նույն ընկերությունը, բացահայտելով նրա հակա-  
պետական շեշտվածությունը (NՁ 650):

Գարիբալդիական նյութերը «Արշալույս Արարատյանի» արտաքին լու-  
րերի տնտությունների լուսավոր էջերն են: Դրանցից կարելի է հետևցնել, թե  
թերթը Համակրանքով է վերաբերվում ազգային-ազատագրական շարժմանը:

Այսպիսով, «Արշալույս Արարատյանը» միջին դժից այն կողմ է չի անցել, և  
ներանում տեղ գտած նյութերը Գարիբալդիի ու նրա շարժման շուրջը արև-  
մտահայ զեմոկրատական պարբերականների, մասնավորապես «Արևմուտքի»  
ու «Անգուի» հրատարակած նյութերի ու հատուկ հոդվածների համեմատ  
սոսկ փչրանքներ էին, բայց շատ էական թերթի աշխարհասփյուռ ընթերցող-  
ների համար և իրենց արժեքն ունեն հետագեմ Հայ մամուլի այդ թեմային  
նվիրված նյութերի հակահռույթում:

Պետք է նկատել, որ արտաքին իրադարձություններին նվիրված նյութերը  
սոսկ Հայեցողական բնույթ ունեն: Դա վերաբերում է նաև 1848 թ. հեղա-  
փոխություն արձագանքներին (NՁ 310), Ֆրանսիական Հասարակապետու-  
թյանը, Փարիզյան կոմունային (NՁ 906), ինչպես և միջազգային կյանքի ի-  
րադարձություններին նվիրված մեծաթիվ ու մեծածավալ մյուս նյութերին,  
չարտասանների (NՁ 309, 314), Պուլգոնի (NՁ 319), Կոշուտի (NՁ 322, 599, 661)  
մասին հիշատակություններին ու հազորդումներին: Դրանք տեղեկատվական  
են փաստերի էմպիրիկ շարադրանքով:

Հասարակական կյանքի զարգացումը, սակայն, ընթանում էր կայուն օրինաչափությամբ, և նրա ազդեցություններից զերծ չմնաց «Արշալույս Արարատյանը» նույնիսկ ազգային-ազատագրական երազանքներում: Նրա էջերում զգալի են ազգային զարթոնքի զարկերակի բաբախումները: 1861 թ. Հունիսի 3-ի Համալուծ, օրինակ, գետեղված է Գ. Կոստանդյանի ուրույն պատգամը «Առ Հայս» խորագրով (№ 650): Հետաքրքրական են նաև «Ոգին Հայաստանեայց»(№ 1074), «Երազ»(№ 1020), «Ի՞նչ են վշտերդ, Հայաստան»(№ 1053) վերնագրերով խորհրդածությունները ազգի պահպանություն և մայր Հայրենիքի վերածննդի վերաբերյալ:

«Արշալույս Արարատյանի» կշիռը գաղթօջախի և գաղութահունի կյանքի լուսաբանության մեջ է, որով և նա ստացել է սկզբնաղբյուրի արժեք, դարձել տարեգրությունն այն ամենի, ինչ տեղի է ունեցել Զմյուռնիայի, Հայտնի չափով նաև աշխարհի տարբեր ծագերում Հաստատված Հայ զանգվածների Հասարակական զարգացման ընթացքում: Այդ իմաստով թերթը մի ամբողջ շտեմարան է, որից նյութ կարող է քաղել Հայ Հասարակական կյանքի ցանկացած բնագավառի Հետազոտողը: Այն իր ժամանակի Համար բացառիկ տարածում էր գտել և ուներ թղթակիցների լայն շրջանակ. Հնդկաստան, Ավստրալիա, Պարսկաստան, Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Եգիպտոս, Լիբանան, Թուրքիա: Թերթն իրօք դարձել էր աշխարհով մեկ սփռված Հայ զանգվածներին իրար կապող, իրար ներկայացնող ուրույն միջոց, նաև Հայ կյանքը գաղթօջախներում աշխուժացնելու, մշակույթը զարգացնելու խթանիչ:

Թերթը Հնդկահայության Հետ սերտ ու մշակութային կապեր է պահպանել, նրա շնորհիվ Հնարավոր է դառնում քիչ թե շատ ամբողջական գաղափար կազմել Հնդկահայ խոշոր գաղթօջախների այդ շրջանի կյանքի մասին: Բավականաչափ շատ են Ռուսիայի, Բաքվի, Շուշիի, Եգիպտոսի, Իրանի և այլ երկրների ու քաղաքների Հայկական օջախների մասին նյութերը: Հատուկ ուշադրության են արժանի թերթի կապերը Յուրբիխի Հայ ուսանողների, Նոր Զուղայի, Կովկասի, Ռուսաստանի, Մեկլբուրնի Հայության Հետ:

Մեծ է «Արշալույս Արարատյանի» և նրա խմբագրի ծառայությունը արևմտահայ գրական լեզվի Հաստատման ու մշակման-Հարստացման, առավել ևս ժողովրդականացման գործում: Պալղազարյանը տիրապետել է ոչ միայն մի շարք օտար լեզուների, այլև եղել է աշխարհաբարի առաջին կողմնակիցներից մեկը: Նա իր թերթն ի սկզբանե Հրատարակել է գրական արևմտահայերեն,

որը տասնամյակներ շարունակ այդ պարբերականի էջերում մշակվել-հղկվել է: Ըստ որում, թե՛ Ղ. Պալղազարյանը և թե՛ նրա թերթին աշխատակցող շատ մտավորականներ, Հեռեդակահորեն առաջ էին տանում գրաբարը ևս ուսուցանելու գաղափարը: «Արշալույս Արարատյանը» և նրա խմբագիրը սատարում էին ազգի առաջադիմությունն ու գոյությունը, ընթերցողների հայրենասիրությունը թուրքական հայահալած իրականության մեջ, ուղի էին հարթում եվրոպական լուսավորության ներթափանցման համար: Ըմբռնելով ազգային միասնության պահպանության կենսական կարևորությունը նա այդ ելակետից էլ դեմ էր ու հակառակորդ ազգության ներսում տեղի ունեցող ամեն մի պայքարի և մշտապես կոչ էր անում խաղաղվել, միաբանվել, շրջահայաց ու խոհական ընթացք վարել: Ավելի որոշակի և ոչ պակաս անկեղծություն արքայի հակա խնդրի շուրջը Պալղազարյանն արտահայտվել է 1860 թ. Հունիսին, երբ առաջին անգամ ստացավ ու ծանոթացավ «Հյուսիսսիբիրի»-ն, նրա այդ թվականի առաջին հինգ համարներին: Նա սկիզբադրեցին գոչ է Ա. Նազարյանի հանդեսից, որովհետև «ճշմարտությունը մերկ և առանց ակնառություն յուր ընթերցողաց առջև կդնեն ու մոլությունը կզախարակեն անաչտությունը, թեև մեծամեծ ու բարձրաստիճան անձանց վրա տեսնելու բլլա: Ազգային նոր ու հին պակասությունները ըստ մեր կարծյաց, հրապարակավ ծանուցանելով միայն կրնան կարգադրվիլ, իսկ զանոնք միշտ ծածկելը ախար հինցնել ու անդարմանելի կացություն մը հասցնել ըսել է» (№ 626):

«Արշալույս Արարատյանը» և նրա խմբագիրը, սակայն, գործնականում չզննացին այդ ուղիով, նույնիսկ հակադրվեցին մարտական ոգի դրսևորող հայ պարբերականներին, հատկապես «Մեղուին»: Չնկատելով հայ հասարակական մտքի զարգացման բուն էությունը և գաղափարական պայքարի անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը նա այնքան Հեռու գնաց, որ ոչ միայն քննադատությունը «քաղցրություն ու սիրով», «զգուշավոր գրվածքով» ծավալելու կոչ արեց, այլև Չմյուռնիայից համերաշխվեց Կ. Պոլսի առաջադիմական-դեմոկրատական հայ մամուլի և խմբագիրների դեմ ձեռնարկվող բայելիքին, ձայնակցեց ազգային վարչության ու պատրիարքական սպասնալիքներին, հակադրվեց «Մեղուին» ու Հ. Սրվաճյանին (№ 640, 650, 678, 684, 685, 695, 696, 767 և Հետո): Այս գեպքում իրավացի էր «Մեղուն», երբ գրում էր իրոք իր թերթը հասցրեց «վերջալույսի» աստիճանին: Մինչդեռ, ոչ շատ ժամանակ առաջ «Արշալույս Արարատյանն» իր էջերից

«Մեղուն» երաշխավորում էր որպես «քաջալերության արժանի» պարբերական «յուր ազգօգուտ հոգւածոցը, բարոյական խրատուցը և ազատ խորհրդածուլթյանցը համար», երբեմն համերաշխվում էր նրա հետ, նույնիսկ նպաստում նրա տարածմանը (№ 575):

Կա ականառու մի երկդիմուլթյուն այն նյութերում, որոնք հրատարակվել են «Արշալույս Արարատյանում» ընդդեմ հայ առանձին պարբերականների: Դրանք ստվեր են ձգում թե՛ «Արշալույս Արարատյանի» և թե՛ նրա խմբագրի վրա. քանի որ օբյեկտիվորեն նպաստ էին բերում առաջադիմական մամուլի դեմ մղվող պայքարին, մասնավորապես Ն. Սըվաճյանի և Մ. Նալբանդյանի հակառակորդների ջանքերին: Նալբանդյանի մասին թերթը 1867 թ. նոյեմբերի 25-ին գրել է, թե «ոմանք անոր գործքերը, զորս հայրենասիրական կանվանեն, մինչև երկինք կբարձրացնեն, ուրիշները կըսեն, թե չարագործ և խռովահույզ անձ մըն էր նա... յուր մահվանեն հետև նույնպես» (№ 819): Այդ տարակուսանքն իր թերթում հրապարակ հանելուց առաջ, 1864 թ. հուլիսի 8-ին, Ղ. Պալղազարյանը հարցում էր արել Մոսկվա՝ Մ. Մսերյանին, խնդրելով նրա կարծիքը Նալբանդյանի մասին: Պատասխանը չի ուշացել, և, «արժանահավատ» մարդու նամակից Նալբանդյանին դատապարտող հատվածը մեջ բերելով, Պալղազարյանը նկատել է, թե նյութերը հրապարակում է առանց իր «կողմանն դատողություն մի հավելցնելու... մեր դատողությունը կընա սխալաց ըլլար» (№ 819): Սա Ղ. Պալղազարյանի վերջին ինքնուրույն խոսքն էր Մ. Նալբանդյանի մասին: Առանց վերապահման արտասուելով «Վաճառական» հանդեսի 1866 թ. 7-րդ համարի մահախոսականը, «Արշալույս Արարատյանը» (№ 784) համերաշխվում էր Նալբանդյանին տրված գնահատությանը՝ էական ծառայություն մատուցելով նրան. «Շատ քիչ են մեզանում առհասարակ նրա պես երիտասարդներ, որոնք իրենց գրչով շուռ ու մուռ լինեն տված հայութեանին վերաբերած հարկավոր խնդիրները»:

Ղ. Պալղազարյանը 1865 թ. վերջերին դիմել է իր «Թղթերի մեջ հանկարծ գտած» հանդեսի 1864 թ. երրորդ ամսատետրակին, որտեղից և նոյեմբեր-դեկտեմբերին արտատպել է «Ազգային թշվառությունը» հապավելով միայն 16 տողանոց մի հատված (№ 767-769): Իր վերահրատարակությամբ մեծաթիվ ընթերցողներին է հասցրել հայ իրականության խոցերը և ազգային երևելիների ստորություններն ամենայն սրությամբ բացահայտող պամֆլետը՝ բնավ չենթադրելով, թե նրա հեղինակը Նալբանդյանն է և ոչ թե Նազարյանը,

ինչպես ստորագրված էր «Ազգային թշվառութեան» տակ: Դա նշանավոր երկի միակ արտաստությունն է այնօրյա մամուլում, առհասարակ մինչև Ս. Նազարյանի, ապա և Մ. Նալբանդյանի երկերի հրատարակությունում տեղ գտնելը: Քիչ չեն հատկանշող այն հարցեր-խնդիրները, որոնց նկատմամբ թերթի դիրքը դրական պետք է գնահատել: Նրա թերթում ոչ հազվադեպ հանդես են եկել հրապարակագիրներ ու ազգային գործիչներ, որոնց զաղափարներն անհարիր էին իր խմբագրի մտահայեցությունը՝ ելնելով չզրված այն կանոնից, որ ստորագրությունը հրատարակված նյութերի համար նախ պատասխանատու են հեղինակները: Ահա թե ինչու թերթում հաճախ տարբեր Հեղինակների, երբևէ էլ խմբագրի նյութերում արծարծվում են առաջադիմական գաղափարներ, որոնք դուրս են գալիս պահպանողական օրգանի կաղափարից, նույնիսկ հարուցում հակառակորդների զարմանքը («Մեղու», 1862, № 164, էջ 134):

Թերթը կույր հավատով ու անքնին է լուսարանել նաև արևմտահայ գաղափարում բարենորոգումներ կատարելու, ինչպես և մեծ տերությունների արևելյան քաղաքականությունից հարցերը: Ըստ որում, առանձնահատուկ վերաբերմունք էր դրսևորում Ռուսաստանի «մարդասեր տերություն» նկատմամբ: Հակադրվելով Ռուսաստանի դեմ առանձին պարբերականների ու գործիչների հարձակումներին, թերթը մասնավորապես էջմիածնից առաքված նյութերում քննադատում էր, որ սուսական տերությունը «փրկեց մեր Հայրենիքը արյամբ պատերազմի և բյուրավոր գոյաթափ եղած Հայոց խղճալի գերդաստանների ազատեց բռնավոր իշխանությունից: Հայոց բազմաժամանակյա գերություն երեսն անմարդարնակ եղած Արարատը վերստին Հայ գաղթականով բարգավաճեց» (№ 779-781): Այդ գաղափարը հաստատելու համար նա նույնիսկ հարկ էր համարում վերատպել հարյուրամյա վավերագրերը:

Առհասարակ «Արշալույս Արարատյանի» և նրա խմբագրի դիրքորոշումը Ռուսաստանի հանդեպ արժանի է հատուկ ուշադրություն: Որքան էլ արտաքին քաղաքականությունից հարցերում նրանք չէին կարող դուրս գալ պաշտոնական դիրքորոշման օղակից, այսուամենայնիվ, նրանց հայացքը թաքուն կամ ակնառու, դիմաշրջվելով Անգլիայից, ուղղվեց Ռուսաստան, իրրև ճնշվող ժողովուրդների հնարավոր աջակցի ու պաշտպանի: Դա այն եզրահանգումն էր, որին թերթը հասել է երկարատև գաղափարական երկուերով և, անպայման, պատմաշրջանի առաջընթացի անխտոր թելադրանքով, որիցսուն ազդարարը եղան սուս-թուրքական պատերազմը՝ 1877-1878 թթ. և մի

շարք ժողովուրդների ինքնուրույնության հաստատումն «ի շնորհս մեծագոր տերության ուսաց» (№ 1116):

Ղ. Պալազարյանն արեց ամեն ինչ թերթի գոյությունն ապահովելու և նրան ելակետային դիրքերում պահելու համար: Անկախ նրա ֆանքերից, թերթը, հաճախ է շեղվել պահպանողական ուղեգծից, իսկ 1878 թ. հունիսից մինչև դեկտեմբեր շուրջ յոթ տարի, ընթացավ բոլորովին այլ շափողով, մի շարք խնդիրներում ցուցաբերեց մարտական դիմադիծ, արծարծեց հրատապ հարցեր, կարելի է ասել, ի վերջո փորձեց հանդես գալ առաջադիմական-դեմոկրատական դիրքերից: «Արշալույս Արարատյանը» դատապարտվեց խափանման և վերջնականապես դադարեց սուլթանական Հալածանքների հետևանքով: Նրա վերջին խմբագիր Հ. Կ. Սըլվանյանը նույնիսկ բանտ նետվեց:

### «ՉԱՅՐԵՆԱՍԵՐ» (1843-1846)

«Արշալույս Արարատյանի» հիմնադրումից հետո, դարձյալ Ջմյուռնիայում 1843 թ. մայիսին սկսեց հրատարակվել հաջորդ ազգային թերթը՝ «Հայրենասերը» իր ժամանակի առավել արժեքավոր հանդեսներից մեկը:

Ջմյուռնիայի գաղթօջախում 1840-ական թթ. սկզբներից ազգային զարթոնքի արդյունքը եղավ Արագածունյաց ընկերության հիմնադրումը: Իր նպատակներով այս ընկերությունը որոշակիորեն լրացնելու էր գաղթօջախի Սյունյաց ընկերությանը կրթական գործի զարգացմանը նպաստելու ծրագրին ավելացնելով գրատպության ու պարբերական մամուլ հրատարակելու խնդիրը: Ժամանակի մամուլը մեզ շատ բան չի հաղորդում Արագածունյացի մասին, բացի «Հայրենասերի» 5-րդ համարում տպագրված ծանուցումից, որը նաև ընկերության դիրքորոշման վավերագիրն է: Տարբեր վայրերում բնակվող համազգայիններին մամուլի միջոցով իրար կապելու խնդրի գիտակցումը և ուշադրությունը մայր Հայրենիքի նկատմամբ կարևոր ելակետ էր ընկերության օրգանի համար: Մամուլի անհրաժեշտությունը և օգտակարությունը ընկերությունն անդրադարձել էր իր օրգանի անդրանիկ համարում հրատարակած «Հայտարարությունում»:

Այսպիսով, Արագածունյաց ընկերության արգասիքը եղավ «Հայրենասեր» թերթը, որի տնօրենի, վերատեսչի պաշտոնը երկու տարով ստանձնել էր Արագածունյացի ղեկավար Խաչատուր Մելիքսեղումյանցը: Նա էլ սահմանել



է թերթի դիմագիծը, որոշել տարածման վայրերը, ընտրել գործակալներ ու թղթակիցներ, կապ հաստատել նրանց հետ աջակից ունենալով Արագածունցայի ուսումնասեր անդամներին, որոնցից ակտիվ դերում էր հատկապես Խ. Էփրզյանը: Ըստ խմբագրական «Ծանոթութեան», թերթը հրատարակվելու էր «պարզ աշխարհաբար ոճով... բայց երբեմն կարճատև բան մըն ալ գրաբար լեզվով», որպեսզի վերջինիս վայելչությունը չմոռացվի, և նոր սովորողները խրախուսվեն:

«Հայրենասերի» էջերում հրատարակված շատ նյութեր վավերագրեր են անցած դարի 40-ական թթ. հայ գաղթօջախների, նաև Հայոց բնաշխարհի ազդային կյանքի վերաբերյալ: Այդ իմաստով «Հայրենասերը» նույնպես անփոխարինելի շտեմարան է հետազոտողների համար:

Ըույս տեսնելով շարաթական պարբերականութեամբ «Հայրենասերը» Համարից Համար արտացոլել է գաղթօջախի և մերձակա Հայ բնակավայրերի ներքին կյանքը ձգտելով չհրկնել նույն հաճախականութեամբ լույս տեսնող «Արշալույս Արարատյանին»: «Հայրենասերը» արտացոլել է հասարակական ստավիկ կարևոր իրադարձությունները՝ Մերսոպյան և Սարգսյան վարժարանների տարեվերջյան քննությունները, նոր հրատարակություններ, նշանավոր այցելություններ, խոշոր կառուցումներ, բնական երևույթներ, պատմական դատածոներ, տեղական մարմինների ընտրություններ, կարևորագույնների օգնություն և նպաստներ, նյութեր Ձմյունիսյի պատմական անցյալից, առաջնորդարանի միջոցառումները և այլն:

Հետաքրքրական են «Կարին» ընդհանուր վերնագրով հազորումները: Կրանք օգնում են ճիշտ գագափար կազմելու թուրքական իշխանությունների գափառում փարած քաղաքականության մասին: Սերտ կապի մեջ գտնվելով Կ. Պոլսի Հայ մտավորականների հետ թերթը հաճախ է անդրադարձել այդ գաղթօջախի ներքին կյանքին (№ 5, 26, 28, 45, 76, 90) և անմիջական կապ է հաստատել նաև Հայոց աշխարհի հետ:

Հինց առաջին համարում «Հայրենասերը» «Հայաստան», «Կյումրի» խորագրերով հոդվածներ է գեևեղել նշելով, որ Արարատյան աշխարհը 1828-ից խաղաղ գիճակում է: Զարգանում են առևտուրը և երկրագործությունը, պարսիկ և Հայ բնակիչները համերաշխ են միմյանց հետ, բարեկրթությունը մեծ ուշադրություն է դարձվում, արքեպիսկոպոս Ստ. Արղուիսյանը մեծ հոգատարություն է հետևում գաղափար (№ 6, 14, 23, 32, 41, 66, 71):

Հետաքրքրական են նաև Վրաստանից և նրա մայրաքաղաքից «Հայրենասերում» գետեղված թղթակցուկությունները (№ 84, 94, 101): Դրանցից առավելապես փաստառատ է և հետաքրքրական «Կովկասյան լեռները եղող ապստամբներուն վրայոք» և նրանց դեմ տարված «մեծ հաղթություն» մասին հաղորդումը, որ տպագրվել է թերթի 1845 թ. հոկտեմբերի 26-ի համարում: Նամակագրի պատմածով, տասժամյա ահեղ մարտով հաջողվել է դրավել «չատ անառիկ գուլդաքաղաքը», որտեղ ամրացել էր ապստամբների պարագլուխը շեյխ Շամիրը, և որտեղից, սակայն, նա կարողացավ փախչել: Նշվում է նաև, որ ապստամբների դեմ քաջարար մարտնչած և նոր աստիճանների արժանացած չորս հարյուր արժանավորների «մեծ մասը Տիխիսու և Ղարապաղու կտրին հայազգիներեն են եղել»:

«Հայրենասերը» կայուն կապ ունենր էջմիածնի Հետ, որտեղից նրան լուրեր էր հաղորդում և աշխատակցում Աբել Մ. (Մխիթարյան) Արարատյանը, որը և ստանձնել էր թերթի գործակալությունը և հատուկ նամակով ծանուցել իր մասին, քաջալերել ու գովաբանել Արադածունյաց ընկերության ու «Հայրենասերի» գործունեությունը (№ 25): Էջմիածնի Հետ կապ ունենալը «Հայրենասերի» համար հատուկ արժեք ուներ: Դա էջմիածնական կողմնորոշումից բացի, նաև կապ էր Հայրենիքի Հետ: Թերթն անդրադարձել է Ռուսաստանի Հետ Հայաստանի միացման պատմական իրադարձությունը, հրատարակել Մ. Թաղիադյանի օրագրությունն այն հատվածը, որ նվիրված է ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Օչականի ճակատամարտում զոհված ռուս զինվորականների պատվին հուշարձան հիմնելու հանդեսավոր արարողությունը 1833 թ. մայիսի 9-ին (№ 13): Առաջին անգամ այդ հատվածը ներկայացնելով իր ընթերցողներին «Հայրենասերը» ծանոթացնում էր ոչ միայն Թաղիադյանին, այլ նաև հաղորդակից էր դարձնում նրա հույզերին ու գազափարներին: Պարսկական զորքի դեմ ռուսական զենքի տարած հաղթանակի ողբերունչ նկարագրությունը, ընկած հերոսների պատվին հուշարձան հիմնելու արարողության վերապատմումը վկայում են Ռուսաստանի ազատագրական առաքելության նկատմամբ թերթի համակրանքը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ ազատագրելու և ռուսական կողմնորոշումը դարձնելու գործում քաղաքական հեռատեսությունը աչքի է ընկել Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը: «Համառոտությունն ազգասիրական սիրագործությանց տեսան ներսխի նորընտիր Հայրապետի ամենայն հայոց ի. Ս. Կաթողիկեն էջմիածին...» խորագրով վավերագիրը, որ

դեանդեղեկ է «Հայրենասերը», կենդանագրում էր նորընտիր կաթողիկոսի դիմագիրը (№ 17, 18):

Արեւմտահայ մի շարք գործիչներ և երիտասարդ մտավորականներ նույնպես իրենց առաջին հրապարակագրական նախափորձերը կատարել են «Հայրենասերի» էջերում: Գրանցից էր Ն. Զորայանը, որը լիովին պաշտպանում էր «Հայրենասերի» ուղեգիրը:

Ակտիվ ու գործնական էր Մ. Աղաթոնյանի մասնակցութունը «Հայրենասերին»: Նա թերթի Կ. Պոլսի գործակալն էր և ակտիվ թղթակից-աշխատակցորդը նրա հրատարակութան բոլոր տարիներին: Ազգային ապագա գործիչը և Ազգային սահմանագրութան երախտաշատ պաշտպանն իր գործունեութունը սկսեց թերթից, հրապարակագրութունից, որին նա նախապատրաստվել էր աշխատակցելով «Հայրենասերին»:

Կ. Պոլսից «Հայրենասերին» առավել մեծ ակտիվութամբ էր աշխատակցում Հ. Զամուռեյանը: Հրապարակագրութան մեջ նրան հիմնականում հետաքրքրում են դատարակչական-կրթական հարցերը (№ 33, 36, 37, 76): Նա ֆրանսիական մամուլից քաղել և թարգմանաբար «Հայրենասերին» է ուղարկել բնագրատական մի շարք ուշագրավ նյութեր (№ 42, 43):

«Հայրենասերը», լինելով հայ կյանքի մի սկզբնաղբյուր, իր հերթին արտաքին տեղեկատվութան կարևոր լրատու էր (№ 94): Թերթում տեղ գտած հազորումները գաղափար էին սալիս ճնշված ժողովուրդների ծավալած ազգային-ազատագրական շարժումների մասին:

Իր հիմնական նպատակներով ենթարկված լինելով Արագածունյաց բնիկերութան խնդիրներին «Հայրենասերը» լույս էր բնծայվում այն որոշակի պայմանով, որ «զգույշ ըլլալու է տերությանց վերաբերյալ վեճերեն և հեռի պիտի ըլլա համարի վրա առարկաներեն» (№ 1): Առաջին իսկ համարում «Հայրենասերը» առաջ է քաշել առևտրի և վաճառականութան շահավետութան հարցը, շեշտել երկրագործութան բնդհանուր օգտակարութունը ազգի համար:

Գլխավոր այդ հարցերը հիմնականում առաջ էր քաշում Խաչատուր Էրիզյանը, որը Արագածունյացի և թերթի հիմնադիրներից մեկն էր: 1843 թ. Հուլիսի 16-ի համարում լույս տեսած իր շատ արժեքավոր հոդվածով «Հայոց լեզվին վրա», նա արձագանքելով «Արշալույս Արարատյանի» (№ 130, 131) նույն վերնագրով հոդվածի հեղինակ Գրիգոր Կոստանդյանին, պաշտպանում է հայերենը բարելավելու, ամենքին հասկանալի դարձնելու, համազգային

լեզու մշակելու առաջարկը, այլ խոսքով պահանջում էր քաղաքացիութուն տալ աշխարհաբարին: Դրանով և հենց աշխարհաբար լեզվով «Հայրենասերը» իր նպաստն էր բերում գրական արևմտահայերենին:

«Հայրենասերի» դիրքորոշումը ի սկզբանե մայր Հայաստանն էր, որին նվիրված նյութերին նա առանձին բաժին է հատկացրել հենց առաջին համարից, պարբերաբար լուրեր է տպագրել Երևանից, Ալեքսանդրապոլից, էրզրումից: Առանձնապես ուշագրավ է Սևանա կղզու պատմությունը նվիրված ուսումնասիրությունը (№ 1, 15, 29, 103, 105): Այդպիսով, «Հայրենասերը» իր ընթերցողներին ոչ միայն հաղորդակից էր դարձնում Հայաստանի կյանքին, այլև նրանց կողմնորոշում էր դեպի մայր Հայրենիք, կոչ անում «Հայրենայց կորուսյալ փառքը ուսման միջոցովը վերստին ձեռք բերել»: 1840-ական թթ. առաջին կեսին հրատարակված Հայերեն սակավաթիվ պարբերականների շարքում «Հայրենասերը» հատուկ տեղ ունի նախ և առաջ իր բարձրացրած ու քննարկած հարցերով: Դրանք ազգի ու գաղութահայության ընդհանրությունը վերաբերող հրատապ հարցեր էին, որոնց արծարծումը նպաստում էր ազգային զարթոնքին ու առաջադիմությունը:

### «ԱՐՓԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ» (1853-1856)

Տպագրական գործունեություն ծավալելու նախօրյակին Տեսեյան եղբայրները ձեռք են զարկել նաև հրատարակագրությունը: 1853-ի հուլիսից նրանք սկսել են հրատարակել «Արփի Արարատյան» հանդեսը՝ Ջմյունուխայի թվով չորրորդ պարբերականը: Այն առաջին իսկ համարից ունեցել է երկու բաժին՝ բուն պարբերականը և հավելված: Իր կառուցվածքով, ինչպես և բովանդակությամբ, «Արփի Արարատյանը» նորություն էր հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Առաջին անգամ պարբերական հրատարակությունն ուղեկցելով հավելվածներով՝ Տեսեյանները դրանով իսկ հանդեսի նկատմամբ մեծ հետաքրքրություն էին առաջացնում, նրա հետ կապում ընթերցողներին: Հենց այդ ձևով են Շեքսպիրի երկերը 1850-ականի առաջին կեսին ներկայացվել արևմտահայ ընթերցողներին, որով նշանավորվել է հայ շեքսպիրականի կարևոր փուլը: Հայ ընթերցողը մաս առ մաս ծանոթացել է Շեքսպիրի «Կատակերգություն սխալանաց» ողբերգությանը՝ Կ. Տեսեյանի բնագրից կատարված թարգմանությամբ, աշխարհաբար - խոսակցական լեզ-

վով: «Արփի Արարատյանի» մյուս Հավելվածներն էին «Հազար ու մեկ գիշեր-ների» տարբերակներից մեկը և «Օսմանյան պատմություն» պատկերազարդ շարքը:

Հանդեսի էջերում քննվում են ազգային դաստիարակության խնդիրները, դադթօջախի Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանների վիճակը: Այդ խնդիրների իրադործման ուղին մատնանշված է դադթօջախի դպրոցների երկարամյա տեսչի Ա. Փափազյանի ատենախոսությունում, որը հրատարակվել է պարբերաթերթում «Ազգային դաստիարակությունն է միայն ճշմարիտ միջոց ազգային դաստիարակություն» խորագրով: Բավական չէ ուսում առնել, լեզուների տիրապետել, շեշտում է բաղմամբով մանկավարժ-լուսավորիչը, այլ կենսականորեն անհրաժեշտ է ազգային կրթություն և դաստիարակություն ստանալը: Հեռատես էր ատենախոսը և որոշակի հիմք ուներ զգուշացնելու օտարին ազերսանքի ձեռք մեկնելու մեծ վտանգից (1855, № 1):

Հանդեսում մեծ տեղ են գրավում ընթերցողին լուսավորելու կամ պարզապես նրան գրադեցնելու նպատակով տպագրված բաղմազան նյութերը: Լուսավորել ազգը այս էր նրանց հրատարակագրություն նշանաբանը: Հանդեսի Հավաքածուն ցույց է տալիս, որ նրա հրատարակիչները նպատակ են ունեցել Հանդեսի միջոցով որքան կարելի է ուսուցողական շատ նյութեր հրատարակել:

«Արփի Արարատյանի» թարգմանական նյութերի շարքում հետաքրքրական է հիշատակել Ֆրանսիայի բոցաշունչ հեղափոխական երգը «Մարսելիեզ», որը հրատարակվել է Հանդեսի 1854 թ. 12-րդ հունիսյան համարում, «Երգ Հայրենի պատություն» վերնագրով: Դա առայժմ Հայտնի Հայրենի առաջին «Մարսելիեզն» է, որ Զմյուռնիայում գրաբար թարգմանություն հայտնվել է իր Հայրենիքում հնչելուց 62 տարի հետո: Զուտ փաստական իմաստով, ի պատիվ Տեաեյանների, «Մարսելիեզի» տպագրությունը պետք է դիտել որպես նշանակալից երևույթ:

«Արփի Արարատյանի» փետրվարի մեկի Համարը Հայտնի է, դրանից հետո Հանդեսը դադարել է հենց Տեաեյանների կամքով: Նրանք ամբողջությամբ նվիրվեցին գրատպության գործին:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ  
XIX ԴԱՐԻ 50-60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

#### ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Ռուսաստանում նախառեֆորմյան Հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման ժամանակներում, երբ ռուս առաջավոր Հրապարակախոսները պայքարում էին ճորտատիրական վարկաբեկիչ լուծք վերացնելու և ժողովրդի ազատության համար, Հայ լուսավորիչների գերագույն նպատակն է դառնում Համակողմանիորեն լուսավորել իրենց ժողովրդին և ազատագրել նրան «խավարի բաբելոնյան գերությունից»։ Եւ այդ նպատակի իրականացման ճանապարհին նրանք միաժամանակ օգտվում են ռուսական առաջադիմական մամուլի փորձից և նրա էջերում մեծ չափով ծավալվող Հրապարակայնության քաղաքականութունից։

Գրաքննության մեղմացումը և Հրապարակայնության Հնարավորությունը մամուլի էջերում, վախժուենական թվականներին նպաստավոր պայմաններ են ստեղծում նաև Հայ Հասարակական Հոսանքների կազմավորման համար։ Այդ օրերին Հայ իրականության մեջ ձևավորվում են լիբերալ, հեղափոխական-դեմոկրատական, կղերաֆեոդալական և ազգային-պաշտպանողական Հոսանքները։

Լիբերալ-բուրժուական կոչված ազատամտական Հոսանքը գլխավորում էր Հայ լուսավորիչ, տաղանդավոր Հրապարակախոս Ստեփանոս Նազարյանը։ Այդ Հոսանքը ընդգծված դեմոկրատական-լուսավորական ուղղվածություններ և հետևողականորեն պայքարում էր միջնադարյան սխոլաստիկայի և նախապաշարունակների, ժողովրդի հետամնացության դեմ, ձգտելով լուսավորել նրան և Հասցնել ազգային ինքնաճանաչության։ 1860-ական թթ. ժամանակներում, Նալբանդյանի որակումով, «ազգի սայլը» անշարժ ընկած էր ճա-

նապարհին և եսականությունը ապրող քաղաքացիների համար ազգը սոսկ վերացական հասկացություն էր: Լուսավորություն, բարձր գիտակցականություն, ազգային ոգի և միահամուռ ոգեչնչում էր պետք ժողովրդին, որպեսզի նա զնար լուսավորիչների մատնանշած փրկության նախապարհով, «այսինքն թողնելով վերջապես ասիական ատելի խավարը, ոտք կոխեր այն սահմանի վերա, ուր փայլում է եվրոպական լուսավորությունը» («Հյւ», 1858, № 4, էջ 334):

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը ձևավորվել է լուսավորական շարժման և «Հյուսիսափայլի» գործիչների վարած պայքարի բովում՝ Միրսայել Նալբանդյանի գաղափարական էվոլյուցիայի բերումով: 1859 թ., ապա 1861-1862 թթ. նախապարհորդելով եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա), Նալբանդյանը ծանոթացավ այդ երկրների քաղաքական կյանքի, ակնաւոր քաղաքական գործիչների և, մասնավորապես, ռուս Հեղափոխական մտարանդիների հետ: Խորապես մտահոգ ազգի ոչ միայն բարոյական, այլև սոցիալական նսեմ վիճակով, նա Հեղափոխական մղումներ ստացավ «Կոլոկոլի» շրջանակի գործիչներից և իրրև ազգային հարցի տեսարան, հանգեց ազգի սոցիալական ազատության գաղափարին, հայության ազատագրությունը կապելով Ռուսաստանում տեղի ունենալիք Հեղափոխական շարժումների հետևկարի հետ: Նալբանդյանի Հեղափոխական-դեմոկրատական գաղափարները ձևավորվելով նրա Հյուսիսափայլյան գործունեության վերջին փուլում, իրենց ավարտուն դրսևորումը գտան Փարիզում տպագրված «Երկու տող» և «Երկրագործությունը որպես ուղիղ նախապարհ» աշխատություններում, որոնք ազատասիրության և ժողովրդասիրության գաղափարներով տասնամյակներ շարունակ գատարակել են Հայ առաջավոր երիտասարդությանը:

Կերաֆեոզալական հոսանքի գործիչները ներկայացնում էին «Մեղու Հայաստանի», «Ճարքաղ» և «Մասյաց ազալին» պարբերաթերթերը: Նրանք լուսավորության, ազգային համերաշխության և միասնության իրենց քարոզներով փորձում էին տեղաշարժել «ազգային սայլը», պայմանով միայն, որ պահպանվեր Հայ լուսավորչական եկեղեցու գերիշխող դերը կյանքում և անձնանիսի դրարարի մենատիրական իրավունքը:

Վաթսունական թվականների արեւելահայ մամուլի ամենարեւորդ առանձնահատկությունը հոսանքների միջև ծավալված բանավեճն էր, որն ըստ

ամենայնի կարելի է «մեծ» անվանել<sup>16</sup>: Համառ և անզիջում այդ պայքարը հիմնականում կապված էր գրական աշխարհաբարի քաղաքացիական իրավունքների ճանաչման և վավերացման, ինչպես և Հայ Հասարակութայն մտավոր կյանքում հոգևորականութայն ունեցած անվերապահ դերի վերանայման հետ: Գրապայքարը Հայ իրականութայն մեջ սկզբնավորվել էր դեռևս ինչպես Լևոնտուր Աբովյանի գործունեութայն օրերին, երբ մեծ լուսավորչը ոչ միայն իր ամենօրյա մանկավարժական աշխատանքով, այլև գրական աշխատութայններով ջանում էր ազգի լուսավորութայն գործը դնել գիտական հիմքերի վրա: Աշխարհաբարով գրված և 1839 թ. տպագրված «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» գրքի, ինչպես և հետագայում գրած «Վերք Հայաստանի» և «Պարապ վախտի խաղալիք» գրքերի առաջաբաններում Աբովյանը, առաջինը մեղանում, գիտականորեն հիմնավորեց աշխարհաբարը գրականութայն լեզու դարձնելու անհրաժեշտութայնը:

Խ. Աբովյանից հետո գրապայքարի խնդրի լուծումն իր վրա է առնում Ստեփանոս Նազարյանը, որը դեռևս 1844 և 1845 թթ. Կազանի Համալսարանում տպագրած իր երկու ուսուերեն գրքույկներում քննութայն առնելով Հայ ժողովրդի պատմութայն առանձնահատկութայնները, բարձրացնում է ազգի վերածնութայն անհետաձգելիութայն հարցը, դրա հաջողութայնը պայմանավորելով միմիայն աշխարհաբարի գրական մշակումով և կիրարկումով: Այդ աշխատութայններում է, որ նա հրապարակավ Հայտարարում է, թե ավելի դյուրին է մեռածներին հանել գերեզմանից, քան թե հին լեզվի միջնորդութայնք փորձել լուսավորել ժողովրդին: Հետագա տասնամյակում Մոսկվայում տպագրված իր գիտամանկավարժական աշխատութայններում նույնպես Նազարյանը ուսուական և եվրոպական լեզուների զարգացման պատմութայն օրինակով ապացուցում է աշխարհաբարը գրական լեզու դարձնելու պատմական օրինահափութայնը և ներկայացնում նոր լեզվի գրական մշակման իր առաջարկները: Նրա տեսական հայացքները գործնական մարմնավորում են ստանում «Հանդես նոր Հայախոսութայն» երկհատոր ուսումնական ձեռնարկում (1857, 1858), որի հրատարակութայնն ինքնին կանխանչում էր նոր լեզվի հաղթանակի ստույգ հեռանկարները:

<sup>16</sup> Քանի որ այս բանավեճին մասնակցել են ժամանակի արևելահայ համարյա բոլոր պարբերականները, ուստի դրան համառոտակի կանոնադառնանք այս նախաբանում, նախքան մատուլի օրգաններն առանձին-առանձին բնութագրելը:



1858 թ. մարտին լույս է տեսնում «Հյուսիսափայլ» ամսագրի առաջին համարը, որը բացվում էր Նազարյանի «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածով: Ամսագրի լեզուն դարձնելով աշխարհաբարը, Նազարյանը կոչ է անում այն ընդունել իբրև ժամանակի պաշտոնական լեզու, որով միայն նա հնարավոր է գտնում հաղորդակցվել ժողովրդի հետ, ստեղծել ազգային գրականություն, իրադործել կրթական համակարգի հրատապ վերափոխումները: Հայ իրականության մեջ նա առաջինն է լեզվի ծագման մասին խոսում լեզվաբանական գիտություն կիրառական չափանիշներով և հայտարարում, թե երբ աշխարհաբարը կամրանա և կդառնա գիտություն ու գրականության լեզու, գրաբարը, որն իր հյուսիսը ավել է նոր լեզվին, կմեռնի, կենդանի մնալով իր մանուկի կենդանության մեջ: Հայ հասարակական կյանքի նորոգություն այս մանիֆեստը իր վեճական եզրահանգումով իրարանցում է առաջացնում մտավոր աշխարհում: Ակալում է դարի բանավեճը, որի հիմքում բնկած էր բուրժուազեմոկրատական լուսավորականության գաղափարախոսություն և ֆեոդալական ժամանակներից հարատևող և բավականաչափ կենսունակ աշխարհըմբռնումների օրինաչափ բախումը:

«Հյուսիսափայլի» հրատարակության հետ միաժամանակ տպագրվում են ներսիսյան դպրոցի հայոց լեզվի երկարամյա ուսուցիչ Առաքել Արարատյանի բանավեճային երկու գրքույկները, գրված «Հանդես նոր հայախոսություն» և «Վարդապետարան կրոնի» աշխատությունների առիթով: «Հանդես նոր հայախոսություն» գրքի լեզուն «սոսկայի» և «սփզայի» հռչակելով, Արարատյանը հայերին կոչ էր անում առաջիկայում ոչ միայն չօգնել Նազարյանի գրքերի տպագրությանը, «այլև ճարակ հրոյ տուեալ զամենայն մատենան նորա»:<sup>17</sup>

«Հյուսիսափայլի» հրատարակությունից անմիջապես հետո ծայր է առնում իսկական բանավեճը, որի ազդանշանը ապրիլ է «Մեզու Հայաստանի» թերթի խմբագիր Ստ. Մանգինյանը: «Մի բանի խոսք գերապատելի Ստեփանոս Տեր-Եսայան Նազարյանցի գրված մատյանների վերա» հոդվածում նա բարձրացնում է այն դիճահարույց հարցերը, որոնք արտահայտություն էին գտել Նազարյանի աշխատություններում և «Հյուսիսափայլի» առաջին համարի ծրագրային հոդվածում («Մեզու Հ.», 1858, № 16): Մանգինյանը

<sup>17</sup> Առաքել Արարատյան, Դիմագրաւ քնդղէմ ստտան յարուցելոց անճնապատուական ցախանայր մարութ լեզուիս հայոց, Տփսիս, 1858, էջ 22:

դատապարտում է գրաբարը մերժելու և աշխարհաբարը կյանքի կոչելու «Հյուսիսսփայլի» հանդուգն առաջարկը, «Հանդես նոր հայաստանի» գրքի լեզուն, Նազարյանի և Նալբանդյանի հոդվածների «անարգական ոճը»: «Վարդապետարան կրոնի» գիրքը «Մեղվի» խմբագիրը որակում է իբրև ոտնձգություն հայոց առաքելական եկեղեցու դավանության նկատմամբ:

«Մեղու Հայաստանի» և «Ճռաքաղ» պարբերականներում շուտով տպագրվում են նաև Մսեր Մսերյանի հոդվածները: Նա նույնպես վճռականորեն մերժում է Նազարյանի աշխարհաբար լեզվի տեսությունը, ինչպես և քննադատում նրա նախահյուսսփայլյան աշխատությունների հարցադրումներն ու լեզուն:

1860 թվականին բանավեճի «մրցասպարեզում» երևում է մոսկվարենակ մտավորական, Մոսկվայի Համալսարանի թեկնածու, պետական պաշտոնյա Հովսեփ Չերքեզյանը: «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. 13-րդ համարում տպագրված իր հոդվածում նա վարկաբեկում էր Նազարյանին իբրև քաղաքացու և գիտնականի, նշում, թե քանի որ նրա հոդվածներում բարոյականությունն նշույլ չկա, նա իրավունք չունի ուրիշներին բարոյականությունը քարոզել: Կարճ ժամանակից, դարձյալ նույն թերթի 1860 թ. 31-37 համարներում տպագրվում է Չերքեզյանի հոդվածաշարը՝ «Նազարյանց և նորա նշանակությունը հայոց գրականության մեջ» խորագրով: Հոդվածաշարի առաջին հոդվածում Նազարյանը մեղադրվում է գրաբարը թերազնահատելու, հայոց լեզվի հնությունը չընդունելու, Հայաստանն իբրև նախաստեղծ մարդու բնակավայր դրախտ չճանաչելու համար: Մնացած 6 հոդվածներում Չերքեզյանն անդամահատում է գրաբարով գրված Նազարյանի «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» գրքի լեզուն և իր հաշվումներով 248 սխալ լեզվաձևեր «հայտնաբերում» այնտեղ:

Դեռևս չէին մեղմացել «Հայկական լեզվի խորհուրդը» հոդվածի շուրջ ծավալված բանավիճալի կրքերը, երբ Նազարյանը, «Մենդելսոն, Լեսինգ և Լավատեր» թարգմանական հոդվածին կցած իր հավելվածով տեղիք է տալիս նոր հարձակումների («Հյ», 1860, № 10): Այս անգամ «Հյուսիսսփայլի» խմբագիրը քննության առարկա է դարձնում դավանափոխ հայերի բարոյախրավական վիճակը: Նազարյանը դատապարտում է դավանաբանական խտրականության երևույթները, քանի որ, նրա համոզմունքով, մարդիկ դավանությունը փոխելով դարձյալ «մնում են միշտ արենակից կղբարք, մի

ազգի որդիք, մի լեզվի կցորդք, մի ազգային պատմութեան ժառանգներ»։ Այս հոդվածում է, որ Նաղարջանն արձանագրելով կրոնական դաստիարակութեան անբավարար վիճակը ժողովրդի մեջ, այն, որ հոգևորականների ազդեցության պատճառով քրիստոնեական վարդապետութեան բուն մարդասիրական իմաստը չի հասնում ժողովրդին, պահանջում է եկեղեցու վերանորոգութիւնը։ Նա գրում է. «Հայոց եկեղեցին պիտո է մի ունֆորմ առնել ուսքից մինչև գլուխ, այսինքն մի ազգու վերանորոգութիւն Ավետարանի հաստատմա հիման վերա, իհարկև ներգործելով արմատից դեպի վեր, ժողովրդի և հոգևորների դաստիարակութեամբ և կրթութեամբ, մեր օրերի լուսավոր հոգու համեմատ» (էջ 312)։

Հայոց եկեղեցու ունֆորմի պահանջի ուղղագիծը ընկալումը մեծ անախորժութիւններ է պատրաստում «Հյուսիսափայլը» խմբագրի համար։ Նրա ընդգրկմանները նորեն աշխուժանում են և սկիզբ է առնում 60-ական թթ. «մեծ» բանավեճի երկրորդ ուժգին շրջապտույտը։ Առաջին հոդվածը գրում է Ջարմայր Մսերյանը «Մեղու Հայաստանի» թերթում։ Այն արտատպում է Գ. Ալվադովիկին «Մասյաց ազավնի» պարբերաթերթում, որին կցած իր վերջաբանում այն միտքն է հայտնում, որ «Հյուսիսափայլը» խռովութիւն է սերմանում ազգի մեջ, «Հյուսիսային լույս» ասելով լյութերական կրոնի վարդապետութիւնը տարածում։ «Ճոքագում» տպագրվում են Չերքեզյանի երկու հոդվածները, այնուհետև 1861 թ. «Մասյաց ազավնի» շաբաթաթերթի առաջին 5 համարներում (4, 5, 9-11) անխոնջ Չերքեզյանը մի ընդարձակ նամակ է ուղղում «Ոտրից մինչև գլուխ վերանորոգված վարդապետ Ստեփանոս Նաղարջանցին»։ Չրավարարվելով այս ամենով, նա մի գիտում է ուղարկում Մատթեոս կաթողիկոսին, որում ներկայացնելով «Ստեփանոս ոմն Նաղարջանցի» վերջին տարիների «ազգակործան» գործունեութիւնը, խնդրում է քննել նրա հոդվածները և արգելել ապլ «Հյուսիսափայլ» ամսագիրը։

Այս բանավեճին խառնվում է և «Կուռնկ Հայոց աշխարհին» ամսագիրը, որի գլխավոր աշխատակից Գարեգին Մուրադյանը մի ծավալուն հոդվածում վկայակոչելով հայ լուսավորչական եկեղեցու և նրա ծեսերի անձեռնմխելիութիւնը, անընդունելի է համարում եկեղեցու ունֆորմի Նաղարջանի առաջարկը։

Գրապայքարի և եկեղեցու ունֆորմի հարցերը շատ ավելի խոր ենթասերտ ունենին, որն անհանգստացնում էր հայ լուսավորիչների հակառա-

կորդններին: Բանն այն էր, որ Հյուսիսսփայլյան գործիչները օրակարգ էին մտցրել նաև մտավոր կյանքի ասպարեզից ավանդական ղեկավար ուժին հոգևորականներին, մեկուսացնելու խնդիրը և ժամանակի համար շատ կարևոր այդ հարցը նույնպես քննարկվում էր «Հյուսիսսփայլի» էջերում: Նրանք գտնում էին, որ հոգևորականները իրենց դարավոր պաշտոնը կատարել էին և, ինչպես ցույց էր տալիս կյանքը, այլևս ի վիճակի չէին ոչ բարոյապես և ոչ գործնականում դաստիարակել նոր սերնդին 19-րդ դարի հարածուն զարգացող գիտութայն և բարձր քաղաքակրթութայն պահանջների ոգով: Այսպես, Նազարյանն իր օրերի հայ եկեղեցին համարում էր ոչ թե քրիստոնեական դաստիարակութայն և ազգի լուսավորութայն դպրոց, ինչի համար այն կոչված էր, «այլ մի ամբողջ տգետ և անուսումն բարձիթողի արած պաշտոնյաների», որոնք միայն կատարում էին քրիստոնեական եկեղեցու ծեսերն ու արարողությունները: Ժողովրդի լուսավորութայն հարցը Հիմնավորապես վերլուծելով «Նկատողությունք» մեծարժեք հոդվածում, Նալբանդյանը վճռականորեն հայտարարում է, որ ոչ մի ազգ չի հասել լուսավորութայն վերին աստիճանին հոգևոր դաստիարակների ձեռքով: «Սխալ դատողություն է, - գրում է նա, - վաղուց արմատացած մեր ազգի մեջ, թե հայոց կաթողիկոսը կամ առաջնորդըը պիտո է լինեին լուսավորութայն տնտեսք և սպասավորք. ինքը ազգը յուր ձեռքով պարտական է սերմանել, եթե կամենում է մի օրհնյալ և սուրբ հունձ հնձել»:

Նալբանդյանը և Նազարյանը դպրոցական կրթութայն համակարգում միաժամանակ մեծ տեղ էին հատկացնում քրիստոնեական վարդապետութայն ուսուցմանը, այն համոզմունքն ունենալով, որ «առանց քրիստոնեական կրոնի ուսման անհիմն է ամենայն լուսավորություն»: Բայց քանի որ այդ ուսմունքը պետք է դասավանդեին քահանաները, Նալբանդյանը դիմելով բարձրաստիճան հոգևորականներին, այն միտքն է հայտնում, որ երաստապարտ կլինեն, եթե «օրինավոր, մեր ժամանակի կարոտանքը լուցանող» հոգևոր դպրոցներ լինեին և ազգի համար արժանավոր քահանաներ պատրաստեին: Բայց այդ դեռ բոլորը չէր: Ազգը բարոյապես ամբանալու համար պետք է մշտապես կարդար Սուրբ գիրքը, այնինչ այն մատչելի չէր նրան: Նալբանդյանը պահանջում է թարգմանել Սուրբ գիրքը «Ժողովրդական նոր և կենդանի հայաստանում», այլապես, գրում է նա, «առանց նոր Կտակարանի սուտ է ամենայն քրիստոնեություն» («Հյ.», 1858, № 10, էջ 310-311):

Վաթսուենական թվականների Հայ մամուլի օրգանների միջև ծավալված քանակները մեր ազգի մտավոր հասունացման և քաղաքական ինքնանա- նաչություն հասնելու վկայությունն էր: Հայ Հասարակական Հոսանքների միջև տեղի ունեցած ծանր պայքարի բովում է նաև, որ հասունանում և գործնական կիրառում էր դառնում Հայ լուսավորական շարժման ազգաշեն ծրագիրը: Աշխարհարարի գրական մշակումը և այն գրականություն լեզու դարձնելու դարակազմիկ իրողությունը, Հայ նոր գրականություն, հրապարակախոսություն և գրաքննադատական մտքի աննախընթաց զարգացումը, դպրոցական ցանցի ընդլայնումը, թատերական գործի սկզբնավորումը և դրա հետագա վերելքը, Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական աշխատությունների երևան գալը և, հիմնականում նրա ջանքերի շնորհիվ, կենդանի կապի ստեղծումը արևմտահայ առաջավոր գործիչների հետ, վաթսուենական թվականների ձևաբերումներն էին, որոնց Հուսուլի հիմքի վրա բարձրացան 1870-1880-ական թվականների Հայ մտավոր կյանքի և մշակույթի համատարուն կառույցները:

### «ՅՅՈՒՄԻՍԱՓՈՅԼ» (1858-1862, 1864)

1857 թ. մարտին ստանալով «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակության իրավունքը, Ստեփանոս Նազարյանը հունիսին տարածում է «Մանուցումն և Հայտարարություն» թերթիկը, որում հազորդվում էր, որ ամսագիրը օգտակար գիտելիքներ պետք է հրատարակի Հասարակության համար և «մշակագործի Հայկական կենդանի լեզուն»: 1858 թ. մարտին լույս է տեսնում ամսագրի առաջին համարը, այնուհետև 6 տարի շարունակ այն գտնվում է իր գարթոնքն ապրող Հայ Հասարակական կյանքի օրախնդիր հարցերի քննարկումների ոլորտում:

«Ընդհանուր ազգային լուսավորություն և դաստիարակության օրգան» «Հյուսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարյանը ծնվել է 1812 թ. Թիֆլիսում: Ավարակ է ներսիսյան դպրոցը և Դորպատի Համալսարանը: 1842-1849 թթ. իրրև դասախոս աշխատել է Կազանի Համալսարանում բացված Հայագիտական ամբիոնում, որտեղ և ստացել է բանասիրության թեկնածուի, ապա և դոկտորի գիտական աստիճանները: 1850-ից մինչև կյանքի վերջը, 1879 թ., աշխատել է Լազարյան ճեմարանում: Մանկավարժական աշ-

խատանքին զուգընթաց, սկսած 1844 թ., Նազարյանը հրատարակել է մի շարք աշխատություններ, որոնք նշանակալից դեր են կատարել 19-րդ դարի առաջին կեսի Հայ լուսավորական շարժման նախապատրաստման և առաջընթացի գործում:

Միքայել Նալբանդյանի անմիջական օգնությամբ սկսելով «Հյուսիս-սահայլի» հրատարակությունը, Նազարյանը իր շուրջն է համախմբում Լազարյան ճեմարանի և Մոսկվայի համալսարանի շնորհալի Հայ ուսանողներին, որոնք իրենց բնատուր տաղանդի բերումով և զարգացման բարձր աստիճանով մեծապես օգնում են ամսագրի հաջողությունը: Գործակցությունը Միքայել Նալբանդյանի հետ սկսվել էր դեռևս 1853 թ., երբ նա աշխատանքի է անցնում Լազարյան ճեմարանում: 1854 թ. նրանք ծրագրում են «Ռուսիա» անունով մի պարբերաթերթ հրատարակել, բայց դրա թույլտվության վերաբերյալ Նազարյանի ներկայացրած Հայքը մերժվում է: Նալբանդյանն այդ տարիներին իբրև ազատ ունկնդիր սովորում էր Մոսկվայի համալսարանում, միաժամանակ զբաղվում գրական-ստեղծագործական և թարգմանական աշխատանքներով: Ստանալով «Հյուսիսսահայլի» հրատարակության իրավունքը, բարեկամները գլխովին նվիրվում են խմբագրական աշխատանքներին:

Նազարյանն իր հրապարակախոսական գործունեությամբ ձգտում էր Հայ ժողովրդին օգնել հասնելու մի մակարդակի, որը նրան հնարավորություն էրնձեռներ հաղորդակցվելու ռուսական և եվրոպական մշակույթին ու գիտությունը, զարգացնելու սեփական ստեղծագործական ունակությունները և իր տեղը գտնելու եվրոպական քաղաքակրթության աշխարհում: Նա այդ առավել ևս ժամանակին և հնարավոր էր գտնում, քանի որ Ռուսաստանը Հայերին «ազատել էր մի անտանելի, անարգական ստրկությունից և բացել նոցա առաջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»: Հայերին մնում էր սովորել՝ «խոսալ, զգալ, հասկանալ և մտածել յուր մայրենի լեզվով» և Ռուսաստանի միջնորդությամբ ստանալ եվրոպական լուսավորության արգասիքը: «Եվրոպան բաց ու արձակ է Հայերի առաջև, - գրում է նա, - նոքա կարող են մասնակից լինել նորա կրթությունը և լուսավորությունը» (1859, № 1, էջ 93): Սակայն, մինչ այդ հարկ էր դեռևս ազգի գրել-կարգալ չիմացող անդամներից «բազմաշխատ հոգարարությունը» պատրաստել ընթերցող, մտածող ու հասկացող հասարակություն. մի գործ, որին ձեռնամուխ են լինում «Հյուսիսսահայլի»

խմբագիրը և նրա գլխավոր աշխատակիցը: Ամսագիրը Հրատարակվում է ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվով, որն արդեն մշակագործվել էր նազարյանի գրքերում, «Աբարատ» շաբաթաթերթի համարներում, «Գամառ Քաթիպայի» գրքույկներում: Գրական սահուն աշխարհաբարով էր թարգմանել Միրայել Նալբանդյանը՝ էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպի առաջին հատորը: Այդ լեզուն, որի շուրջ բանավիճային անզուսպ հողմածներ տղադրվեցին, հասկանալի էր ընթերցողին, դեբժժ բարբառային կոպիտ լեզվածեկերից և, որ գլխավորն է, ճկուն և ունակ արտահայտելու ամենաբազմազան մտքեր ու գաղափարներ: Վեց տարիների ընթացքում «Հյուսիսափայլի» էջերում տպագրված գեղարվեստական գործերի և Հրատարակախոսական հողմածներին միջոցով գրական աշխարհաբար հղկվելով, նազարյանի արտահայտությունները, դառնում է «մտածողության և գիտությունից ազնիվ անոթ»:

Ավելին, ժամանակի բոլոր խմբագիրները տեսականորեն վիճելով նազարյանի հետ, գործնականում հարկադրված էին հետևել նրա օրինակին, իրենց պարբերականները ևս հրատարակելով ժողովրդին հասկանալի աշխարհաբարով: Ահա Հիմնականում ա՛յն նկատի ունեւր նազարյանը, երբ 1876 թ. գրում էր. «Հյուսիսափայլ» պատերազմեց յուր պատերազմը, հաղթություն արձակենին ստացավ, և այդ հաղթության պատուգրք այժմուս վայելում է մատաղ սերունդը»<sup>18</sup>:

Կենդանի լեզվի մշակագործումից բացի, ինչպես արդեն ասվեց, ամսագրի ծրագրում նախատեսված էր օգտակար գիտելիքներ հաղորդել Հայ ընթերցողներին, նրանց դաստիարակել XIX լուսավոր դարի գաղափարներով: Իր հողմածներում քննարկելով ազգի լուսավորությունից ծրագիրը, նազարյանն այն իրականացնելու երկու Հիմնական ուղի է մատնանշում: Առաջինը գրանցից ազգային դպրոցն էր, երկրորդը մամուլը և գրականությունը: Ազգային կամ ժողովրդական դպրոցը նազարյանը համարում է «միակ հնարը վերանորոգության, բուն Հիմքից ու արմատից», ուստի և ամսագրի հրատարակությունը բոլոր տարիներին ուշադրության կենտրոնում է պահում ազգային դպրոցների Հիմնադրման և կատարելագործման խնդիրները: Այդ հարցը նա մասնավորապես համակողմանիորեն լուսարանել է 1864 թ. տպագրված «Ազ-

<sup>18</sup> «Ատեփանոս Նազարյանի երկերը», հ. 1, Թիֆլիս, 1913, էջ 391:

գային մտածությունք» հողվածուժ, որը մասնագիտական ծանրակշիռ հետազոտության օրինակ է<sup>19</sup> (1863, № 12, 1864, № 1-3, էջ 72):

Մանկավարժական մի շարք սեփական հողվածներից բացի Նազարյանն ամսագրում գետեղել է նաև այլ հեղինակների բարոյադաստիարակչական բնույթի բազմազան հողվածներ: Ինչ վերաբերում է մամուլի և գրականության կատարելիք դերին, ապա Նազարյանն այդ խնդիրը նույնպես լուծել է միանգամայն նպատակասլաց եղանակով: «Բնագիտություն», «Բնախոսականք» ընդհանուր վերնագրերի տակ նա տպագրել է եվրոպական երկրների հանրակրթական դպրոցների բնագիտության, կենդանաբանության, աստղաբաշխության, մարդակազմության, աշխարհագրության և այլ առարկաների բազմապիսի բաժինները լուսաբանող հեղինակային կամ թարգմանական հողվածներ, որոնցից շատերը պատկանում էին իր Նազարյանի և Նալբանդյանի գրչին: «Հյուսիսսփայլ» խմբագիրը մեծ տեղ է հատկացրել նաև պատմական հողվածներին և վարքագրություններին, որոնց նպատակը դարձյալ նույնն էր՝ նպաստել ընթերցողների ընդհանուր զարգացմանը: Դրանցից հիշատակության արժանի են Նազարյանի թարգմանությամբ տպագրված «Ֆրանսիական ռևոլյուցիայի պատճառքը», «Նապոլեոնի արշավանքը Ռուսաստանի վերա», «Գյոթեի և Շիլլերի արձանները Վայմարում», նաև լատիներենից իր թարգմանությամբ՝ Կիկերոնի ճառերը և այլն:

Մեծ է Ստեփանոս Նազարյանի ծառայությունը հայ նոր գրականության զարգացման և դրա աննախընթաց վերելքի գործում: «Հյուսիսսփայլ» էջերում են տպագրվել հայ նոր պոեզիայի այնպիսի գոհարներ, ինչպիսիք են Նալբանդյանի «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը», «Մանկության օրեր» բանաստեղծությունները: Նրա քաղաքացիական պոեզիայի ազդեցությունն են կրում Սմբատ Շահազիզի մի շարք բանաստեղծությունները («Ազգային վիճակ», «Ազատ մարդ» և այլն): Ամսագրում տպագրվել են Շահազիզի նաև բազմաթիվ քնարական երգերը, որոնք մի անօրինակ թարմություն էին բերում հայ պոեզիայի աշխարհը: Մի շարք բանաստեղծությունների հեղինակ էր Ստեփանոս Նազարյանը:

<sup>19</sup> 1863 թ. «Հյուսիսսփայլը» չի հրատարակվել: Հավանաբար հրատարակության իրավունքը չկորցնելու համար խմբագիրը 1864-ի առաջին համարը լույս է բնծայել իրրև 1863-ի 12-րդ ամսատետրակ: Տողատակի ծանոթության մեջ նա նշում էր, որ այդ «ուճի յուր առանձին խորհուրդը» («Հյ.», 1863, № 12, էջ 51):



«Հյուսիսսփայլի» պոեզիայի բաժնում տպագրվել են Հ. Քուչուբեկյանի, Գ. Բարխուդարյանի բազմաթիվ բանաստեղծությունները: Խորհրդանշական է, որ Հիացած «Հյուսիսսփայլի» ուղղությունը, երիտասարդ Հակոբ Մելիք Հակոբյանը (Մաֆի) ամսագրի խմբագրին է ուղարկում իր «Աղթամարա վանքը» ակնարկը, որին կցված էր «Ձայն տուր, ո՛վ ծովակ» բանաստեղծությունը (1860, № 11):

Հարուստ է նաև ամսագրի թարգմանական պոեզիան: Այստեղ տպագրվել են Մ. Նալբանդյանի, Ստ. Նաղարյանի, Գ. Բարխուդարյանի, Մ. Բուդաղյանի, Ե. Սահակյանի և այլոց թարգմանությունները, կատարված Լեմմոնտովի, Պուշկինի, Բերանժևի, Հայնեի, Շիլլերի, Շանդոր Պետեֆիի ստեղծագործություններից:

«Հյուսիսսփայլում» տպագրված բանաստեղծությունների պատկանելի ծավալը հնարավորություն է տվել ստեղծելու «Հյուսիսսփայլի» պոեզիան» մեծաթեք ժողովածուն, որը կազմել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել է բանասիրական գիտությունների դոկտոր Մերի Սաղյանը<sup>20</sup>:

«Հյուսիսսփայլի» արձակը նույնպես միանգամից իր վրա հրավիրեց Հայ մտավորականության ուշադրությունը: Այստեղ ևս առաջին արձակագրի գափնին Նալբանդյանին էր պատկանում: «Հիշատակարանի» հրատարակությունը զուգընթաց տպագրվել է նրա «Մեռելահարցուկ» վիպակը, Հայ ուսուցիտական գրականության առաջին նշանակալից երկը (1859, № 8-10): Ակազմիկոս Էդվարդ Զրբաշյանը, որ Համակողմանիորեն քննարկել է Նալբանդյանի գեղարվեստական և հրապարակախոսական երկերը և ձևակերպել Նալբանդյանի գեղագիտական Հայացքների կուռ Համակարգը, թերևս առաջինը մեր գրականության մեջ Հայտնելով Հանդերձ ընդունված այն տեսակետը, թե «Մեռելահարցուկը» քննադատական ուսուցիչի առաջին արտահայտությունն է մեր գրականության մեջ, միաժամանակ մի հետաքրքրական օրինաչափություն է ականում նրա արձակում: Նա գտնում է, որ Նալբանդյանը հեռու էր սեպիցմի նեղ, միակողմանի ըմբռնումից, իրրև սոսկ կյանքի բացասական երևույթները բացահայտող ուղղության: Գրականության քննադատական ուղղվածության հետ մեկտեղ Նալբանդյանը վճռական նշանակություն է տվել գրական կերպարների ստեղծմանը, «կյանքի խավարին Հակադրվող ուժերի» պատկերմանը, որոնց Հաղթանակին Հափատում էր ան-

<sup>20</sup> Տե՛ս «Հյուսիսսփայլի» պոեզիան», Երևան, 1956, էջ 447:

վարան: Ահա թե ինչու նրա «Մինին խոսք, մյուսին՝ հարսն» և «Մեռե-  
լահարցուկ» վիպակները «կառուցված են առաջավոր անհատի և հետադեմ  
չբնագրի ընդհարման սյուժետային հիմքի վրա», ընդ որում, Կոմս էմ-  
մանուելը, որ երևում է Նալբանդյանի մի շարք գործերում և հանդես գալիս  
իբրև բանաստեղծությունների հեղինակ, փաստորեն նրա կրկնակն է և նրա  
լավագույն իղձերի արտահայտիչը<sup>21</sup>:

«Մեռելահարցուկ» վիպակում Կոմս էմմանուելի դատողությունները հայ  
հասարակական կյանքի լուսավորության անհրաժեշտության, ազգային գրա-  
կանության զարգացման ուղիների և միջոցների շուրջ, անհաշտ պայքարը  
միջնադարյան սխոլաստիկայի նվիրյալների, վաշխառուական կապիտալի  
ներկայացուցիչների դեմ, միանգամայն նոր ու համարձակ երևույթ էր հայ  
մամուլի և գրականության մեջ:

Ժամանակին հայ ընթերցողների վրա մեծ տպավորություն է գործել նաև  
Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վեպը (1861, № 5, 8, 9, 12): Հե-  
ղինակը ավարտել էր Ներսիսյան դպրոցը և սովորում էր Մոսկվայի համալ-  
սարանում: Քննադատական ռեպլիզմի մեթոդով նա ստեղծել է գյուղական  
քահանայի մի կերպար, որի մտավոր աղքատությունը, հետաքրքրություն-  
ների սահմանափակությունը, անձուկ առօրյան, բայց և անզուսպ շահա-  
մոլությունը ամբողջական պատկերացում էին տալիս այդ դասի բարոյական  
նկարագրի մասին: Հետագայում Նալբանդյանն այդ գործը համեմատել է  
«Մեռած հոգիների» հետ, հեղինակին մեծարելով «Հայ Գողթլ» անունով:

«Հյուսիսափայլի» արձակի շարքին պետք է դասել նաև Մոսկվայի հա-  
մալսարանի ուսանող Անանիա Սուլթանյանի «Հայոց ազգի լուսավորիչքը»  
երգիծական պիեսը: Այն Ֆյոդորովի «Воспитатель» ստեղծագործության  
փոխադրությունն էր «Սովրեմեննիկ» ամսագրից: Սուլթանյանն իր պիեսում  
սուր քննադատության է ենթարկում Խալիբյան դպրոցի ուսուցման պարսա-  
վելի եղանակը, տեսուչ Այվազովսկուն, Խալիբյանին, դպրոցի ուսուցիչներին:  
Թեև պիեսի մերկապարանոց երգիծանքը հասնում է գրոտեսկի աստիճանին,  
բայց Լեոն նշելով հանդերձ գործի «պասկվիլային բնավորությունը»,  
վկայում է, որ Խալիբյան դպրոցը իսկապես «մի փակ, վանական դպրոց էր,  
որտեղ ամեն ինչ կարգազրկված էր այնպես, որ աշակերտները միայն այն սո-

<sup>21</sup> Տես եղ. Ջրբաշյան, Միքայել Տալալյանը և արդիակնությունը, Երևան, 1984, էջ  
103-105:

գորեն, ինչ Հարկավոր է կղերական տեսակետից»<sup>22</sup>: Բոլոր պարագաներում Սուլթանշահն այդ պիեսով, որը նվիրել էր «յուր պատվելի եղբորը» Մ. Նալբանդյանին, մասնակցում էր ժամանակի հոսանքների պայքարին:

Ստեփանոս Նազարյանը մեծ տեղ էր հատկացնում նաև թարգմանական գրականությանը, այն համոզմունքն ունենալով, որ ժողովրդի սիրտն ու հոգին կրթելու, ճաշակը ձևավորելու գործում չկա ավելի գորավոր միջոց, քան դեղարվեստական գրականությունն է: Նազարյանի թարգմանությունները տպագրվել են Շիրիբի երկու պիեսը, Պոնսարի և Ալֆրեդի պիեսները, Շատորիանի երեք, Դր. Ղոֆմանի չորս վիպակները: Նալբանդյանի թարգմանությունները տպագրվել են «Գրուհի դը Շելբրեոզ», «Թալիսմաններ» վիպակները, «Պրոպերցիա Ռոսսի» պատմվածքը: Բազմաթիվ թարգմանությունների հեղինակներ են նաև Գ. Բարխուդարյանը, Ռ. Պատկանյանը և ամսագրի մյուս աշխատակիցները:

Ռուս գրականությունից թարգմանվել են Կարամզինի «Թշվառ Եղիսարեթ» պատմվածքը և այլ հեղինակների մի քանի պատմվածքներ: Տաղանդավոր բանաստեղծ Մանուկ Սաղաթյանի թարգմանությունները 1864 թ. տպագրվել է Մ. Լեւոնտովի «Դեկր» պոեմը, որին կցված է Նազարյանի մուտքի խոսքը: Անդրադառնալով այն իրողությունը, որ «Հյուսիսափայլի» էջերում արժանիորեն չի ներկայացվել ուսու գրականությունը, Նազարյանը խոր ցավ է հայտնում դրա համար և խոստանում այդ «պակասորդը լրացնել ժամանակով»: Տարիներ անց նա աստուանքով է խոսում և այն մասին, որ ամսագրի հրատարակության տարիներին չի կարողացել ազդին ծանոթացնել Շեքսպիրի «Հնաշխարհիկ» գործերին: Ի դեպ, 1861 թ. Նազարյանը տպագրել է «Վենետիկի վաճառականը» պիեսի բովանդակության շարադրանքը, թարգմանված ուսերենից (№ 11):

«Հյուսիսափայլի» հաջողությունն անառարկելիորեն պայմանավորված էր Միքայել Նալբանդյանի գործակցությամբ: Ամսագրին աշխատակցելու երեք տարիներին տպագրվել են նրա հրատարակախոսական հոդվածները, գրեթե բոլոր աչքի ընկնող բանաստեղծությունները, «Մեռելահարցուկ» վիպակը: «Հյուսիսափայլի» 1858 թ. 4-րդ համարից սկսում է տպագրվել Նալբանդյանի «Հիշատակարանը» («Հիշատակարան Կոմս Էմանուելի օրագրա-

<sup>22</sup> Լեո, Ստեփանոս Նազարյան, հ.2, Թիֆլիս, 1902, էջ 270:

կան թերթերից»<sup>23</sup>, որը հեղինակի հրապարակախոսական գործունեության ակզբնական փուլի և նրա ստեղծագործական վերընթաց ճանապարհի յուրատեսակ հանրագումարն է: Գրական բազմազան ժանրերի հմուտ օգտագործումով Նալբանդյանը վեր է հանել իր ժամանակի հասարակական կյանքի բարդ իրադարձությունների պատկերը, գնահատել և կամ դատապարտել երևույթները, մարդկանց վարքագիծը: Նա կերտել է ընդդիմադիր կուսակցության ղեկավար գործիչների կերպարները, պատասխանել «Հյուսիսսփյառի» հասցեին գրված հոդվածներին: Իբրև հրապարակախոսական երկ, այն, բնականաբար, զգացմունքային է, տոգորված քննադատական անդիջում պաթոսով: Միաժամանակ աչքի է ընկնում ծաղրի ու պարսավանքի չափազանցված արտահայտություններով, թափանցիկ ակնարկների և անոգրամների օգնությամբ հակառակորդին հարվածելու աշառու միջոցներով: Սակայն, ժամանակի ընթացքում Կոմս Էմմանուելի դրիչը, ասեք, մի կախարդական ուժով առնականանում է ոչ թե տարիների, այլ ամիսների հաշվարկով: Նրա հետաքրքրությունների շրջանակը լայնանում է, և «Հիշատակարանում» տեղ են գտնում նաև արտասահմանյան հայ մտավորականության, նրանց մամուլի և կրթական-հրատարակչական գործերի շուրջ հեղինակի հետաքրքրական խորհրդածությունները, ինչպես և պատմագիտական այլևայլ հարցերի ծանրակշիռ քննարկումներ ու գրախոսություններ:

Նալբանդյանի հրապարակախոսությունը թե՛ ձևի, և թե՛ գաղափարական հագեցվածության առումով նոր երևույթ էր հայ իրականության մեջ: Այն աչքի էր ընկնում հրապարակախոսի հզոր տրամաբանություններ և քննադատական խոսքի անվրեպ ուժով, ազդի կյանքի բարեփոխություն համարձակ ծրագրերով և լուսավորականության հեղափոխիչ գաղափարներին նրա նվիրվածություններ: Մյուս կողմից այդ հրապարակախոսությունը հագեցված էր գեղարվեստական մտածողության հարուստ տարրերով, որոնք առանձին փայլ էին հաղորդում գործին: Ո՞րն էր «Հիշատակարանի» հաջողության գաղտնիքը, այն նորությունը, որ հրապարակախոսական երկը բերում էր հայ գրականության անդաստանը:

Ակադեմիկոս Էդվարդ Զրբաշյանը, քննության առնելով Նալբանդյանի գեղարվեստական և հրապարակախոսական արձակի առանձնահատկությունները, եկել է այն ուշադրով հզրակացության, որ «Նալբանդյանի գեղարվեստական

<sup>23</sup> «Հիշատակարանը» տպագրվել է «Հյուսիսսփյառի» 1858-1860 թթ. 14 համարներում:

տական և Հրապարակախոսական երկերն ունեն ակնհայտ ընդհանրություններ, ենթարկվում են որոշակի համակարգի»։ «Հիշատակարանը» նա համարում է մի ստեղծագործություն, «ուր Հրապարակախոսականի և գեղարվեստականի սահմանը դժվար է նշգրտորեն որոշել, իսկ ոճի տիրապետող հատկանիշը Հենց նրանց օրգանական համաձուլվածքն է»<sup>24</sup>։ Այսպիսով, եթե նայրանդյանի վիպակներն ունեն ինտելեկտուալ, Հրապարակախոսական բնույթ, ապա նրա Հրապարակախոսական դասական աշխատությունները գեղարվեստական Հրապարակախոսության նմուշներ են<sup>25</sup>։

«Հիշատակարանի» Հաջողությունն է պատճառը, որ ժամանակի Հայ պարբերականների որոշ գրական աշխատողներն ստեղծում են «իրենց» «Հիշատակարանը» և բնթացիկ հարցերը քննության առնում կոմս Էմմանուելի երկի ձևական նմանությունը։ Միանգամայն հասկանալի է, որ այդ փորձերը չեն պսակվում Հաջողությամբ և ստեղծված «սիրողական» «Հիշատակարանները» մոտացություն են մատնվել ինչպես ամեն մի շարքային լրատվություն։

Ինչպես «Հիշատակարանի» տարրեր հատվածներում, իր հոդվածներում ևս նայրանդյանը բարձրացրել է ազգային կյանքի կենսական խնդիրները, որոնք Հրատապ լուծում էին պահանջում։ Նոր Նախիջևանի եկեղեցական գումարների բազմակնճիտ հարցին նվիրված նրա ցամաքը խմբագրի՛մ, որում շոշափվում էին ներսես կաթողիկոսի, Գ. Այվազովսկու, Լ. Խալիբյանի և այլոց անունները, մեծ ազմուկ է առաջացնում (1858, № 11)։ Պաշտպանելու համար իր և մյուս գործիչների հեղինակությունն ու պատիվը, նոր Նախիջևանի և Բևառարիայի թեմի առաջնորդ Այվազովսկին բողոքագրեր է ներկայացնում Խաչատուր Լազարյանին և ներքին գործոց նախարար Ս. Լանսկոյին, խնդրելով զազարեցնել ապա «Հյուսիսափայլը», իսկ նայրանդյանին պատժել օրենքի ողջ խտությունը։ Երբ Խ. Լազարյանն այս կապակցությամբ բացատրություն է պահանջում նազարյանից, վերջինս 1858 թ. նոյեմբերի 26-ի թվակիր նամակով առանց երկնչելու Լազարյան ճեմարանի անմիջական տեր ու տնօրենի և պետական բարձրատիճան գործչի հեղինակությունից, Հայտարարում է, թե ղեկավարվել է նոր ժամանակների պահանջներով։ Այսպես, վիպակոչելով եփրոսական և ուստական մամուլի օրգանների գործելակերպը

<sup>24</sup> Էդ. Ջրբաշյան, Նշվ. աշխ., Երևան, 1984, էջ. 110:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 116:

նա գրում է. «Ինձ, որ քաղաքացին եմ լուսավոր Ռուսաստանի, իհարկե, ան-  
նեբելի է շոյել մեր հայրենակիցներին անհիմն անձնասիրությունը, և ծածկելով  
մեր ազգային կյանքի ցավալի վերքերը, նրանց բժշկական արգելք հանդիսա-  
նալ»<sup>26</sup>:

1860 թ. նույնպես, երբ Մատթեոս կաթողիկոսը հատուկ կոնդակով հանդի-  
մանում է Նաղարյանին պատկառելի քաղաքացիներին վշտացնելու և հոգևո-  
րական գործիչներին վիրավորելու համար, նա «Հյուսիսսփայլի» քննադա-  
տական ուղղվածությունն արդարացնում է ռուսական առաջավոր մամուլի  
որդեգրած Հրապարակայնության քաղաքականությամբ: Նաղարյանը բա-  
ցատրում է, որ հայության առաջընթացի և բարօրության համար հույժ  
կարևոր է բացահայտել նրա կյանքի արատավոր երևույթները, որպեսզի ազգը  
ճանաչելով իրեն, «միաբան զօրութեամբ» իր դրությունը բարելավելու մի-  
ջոցներ գտնի: Այս ճանապարհով են ընթացել Եվրոպայի լուսավորյալ  
ազգերը, ավարտում է նա խոսքը:

Ռուսական առաջադիմական հրապարակախոսության, մասնավորապես  
Դորբոյլուբովի հայացքների խոր ազդեցությունն է կրում Թյուլթյունջի Հա-  
կոբ Հարությունյան Սերոբյանց ծածկանունով գրված «Խոսակցություն...»  
երկխոսությունը, որն ամենայն հավանականությամբ պատկանում է Նա-  
ղարյանի գրչին: Անկասկած Նաղարյանը ծանոթ էր Դորբոյլուբովի «Խավա-  
րի թագավորությունը» ծրագրային հոդվածին, որը ճորտատիրական Ռու-  
սաստանի օրենքների ու բարքերի անողոք քննադատության մի բացառիկ օ-  
րինակ էր: Դորբոյլուբով-հրապարակախոսի հարուստ արտահայտչաձևերի  
միջոցով Նաղարյանը նկարագրել է խավարի մռայլ թագավորությունը նաև  
հայ իրականության մեջ: Այստեղ նույնպես «տգիտության խավարի մեջ»  
(կամ «խավարի բանտի մեջ») անհույս ու անհեռանկար ապրող հայությանը  
չէր հասնում լույսի ոչ մի շող: Ավելին, նրանց մեջ գտնվող խավարի  
նվիրյալները ոչնչացնում էին բանար լուսավորել փորձողներին: Նա-  
ղարյան-Սերոբյանցը շեշտում է Աստուծո կողմից իբրև բանական ու խոհա-  
կան էականեր ծնված իր հայրենակիցներին լուսավորության միջոցով ինքնա-  
ճանաչության հասցնելու կարևորությունը: «Եկեք բանանք մեր աչքերը, -  
ասում է գրույցի հեղինակը, - տեսնելու այն լուսատու ճրագը, որ եվրոպական  
գիտությունը հառաջ բերելով մեզ ցուցանում է ճանապարհը դեպի լույս

<sup>26</sup> Ստեփանոս Նաղարյան, Լամակահի, Երևան, 1969, էջ 200-201:

աշխարհ, շտապենք դուրս գալ մեր ազիտութիւն խափարից և մտանենք գիտութիւն լուսավոր աշխարհը» (1861, № 6, էջ 498):

«Այս մի կռիւի էր, - գրում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, - որ «Հյուսիսսփայլը», պարզօձ ղեկաւի «քաղաքակիրթ», «լուսավորված» եվրոպան և, առաջին հերթին, հարկավ, ղեկաւի «եվրոպական» Ռուսաստանը, հրահրում ու կազմակերպում էր գիմնականիւմ կղերաֆեոդալական միջնադարի մնացուկներին»<sup>27</sup>:

«Հյուսիսսփայլի» ժողովրդականութիւնը որքան մեծանում, այնքան անողոր էին դառնում հակառակորդների ելույթները: Նրանց թեև չի հաջողւում դադարեցնել տալ ամսագրի հրատարակութիւնը, բայց հասնում են այն բանին, որ դրաքննութիւնն արգելում է «Մեռելահարցուկ» և «Տեր Սարգիս» վեպերի, ինչպես և «Մխիթար և մխիթարյանք» հոդվածի շարունակութիւն տպագրութիւնը: Գրաքննութիւնը մերժում է նաև Ստ. Պալասանյանի հոդվածի դեմ գրված Նալբանդյանի, Աբել Մխիթարյանի և Հովհ. Սայաթնովյանցի պատասխան հոդվածները: Նազարյանը և Նալբանդյանը բանավիճային պայքարի նորանոր միջոցներ են մշակում, ստեղծում համատեղ բանավիճային հոդվածներ, դանդաղ ծածկանուններով: Գրանցից են Պողոս Դուկասյան և Սարգիս Տեր-Մխրայեղյան Վարչանյանց ստորագրութիւնները կրող հոդվածները, որոնց հեղինակների ինքնութիւնը պարզելու հարցով զբաղվել և զբաղվում են մեր բանասերները: Սակայն, որքան էլ զժգար է վերջնականապես բացահայտել ճշմարտութիւնը, այնուամենայնիւ միանգամայն հաջաստի պետք է համարել այն, որ վերահիշյալ հոդվածները երկու գործիչների համատեղ ստեղծագործական աշխատանքի արդյունք են, կազմված հակառակորդներին դիպուկ հարված հասցնելու նպատակամղումով:

«Հյուսիսսփայլը» հզոր էր Նազարյանի և Նալբանդյանի համագործակցութեամբ և անկաշառ բարեկամութեամբ, մի բան, որ բազմիցս խոստովանել են և՛ Նազարյանը, և՛ Նալբանդյանը: Երբ Զարմայր Մսերյանը նկատելով «Հիշատակարանի» հերթական հատվածի ուշացումը չարախնդում է, ասելով, թե Կոստ Էմմանուելը հրաժարվել է Նազարյանի հետ գործակցելուց, Նալբանդյանը պատասխանում է. «Մենք միշտ «Հյուսիսսփայլի» հետ ենք եղել և կմնանք. «Հյուսիսսփայլի» գաղանկութիւնը է՛ և մեր սրտի խոստովանու-

<sup>27</sup> Աշոտ Գովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Ե., 1955, գիրք առաջին, էջ 155:

թյունը: Եվ եթե պատահի մեզ, ո՛վ գիտե, ճանապարհորդությամբ կամ այլ զանազան մեզանից չկախված պատճառներով ավելի երկար լուռ մնալ, այնուամենայնիվ անբաժան ենք «Հյուսիսսփայլից» և «Հիշատակարանը» պիտի երևի նորա մեջ» (1860, № 6, էջ 485): Ապագան ցույց է տալիս այդ խոսքերի ճշմարտացիությունը: 1861 թ. ամռանը Կալկաթայում զբաղված լինելով Հնդկահայերի կտակների գործով, Նալբանդյանն իր բարեկամ Ա. Սուլթանշահին ուղղած նամակում զանգատվելով այն բանից, որ «ամենեին ձեռնհաս չէ» «Հյուսիսսփայլի» համար հոգված գրել, նրանից խնդրում է «գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանել»: «Նազարյանցը կարգազրե այն էնչին թերությունքը, որ պիտի լինին քո գրվածքում», - ավելեցնում է նա<sup>28</sup>:

1864 թ. երբ Նալբանդյանը փակված էր Պետրոպոլիսի ամրոցում, Նազարյանը «Հյուսիսսփայլի» Յրդ համարում տպագրում է նրա «Ազգային թշվառություն» հոգվածը իր ստորագրությամբ, իսկ Քրդ համարում Նալբանդյանի «Ուղեքն ան Մեչուխեչայն ի Կոստանդնուպոլիս» բանաստեղծությունը նվիրված Հ. Սըվաճյանին, Փառախոտ Տուլակյանց կեղծանունով:

Նալբանդյանի Հնդկաստանյան ճանապարհորդության ժամանակներում, 1861-1862 թթ., «Հյուսիսսփայլի» հրատարակչության գործում մեծ դժվարություններ են առաջանում: Նազարյանի ամենահամառ և վտանգավոր հակառակորդ Հովսեփ Չերքեզյանի դիմումը կաթողիկոսին պաշտոնական ընթացք է ստանում: 1861 թ. հունվարին Մատթեոս կաթողիկոսը Հանձնարարում է Սինոդին քննության առնել Չերքեզյանի դիմումը («բարենպատակ գրությունը»), որով առաջարկվում էր «հրոյ ճարակ տուեալ», «Վարդապետարան կրոնի» գիրքը, այլև «արգելուլ առ յապայն զտպագրութիւն «Հիւսիսսփայլ» օրագրի...»: Սինոդը քննության է առնում նաև Նազարյանի բացատրազիրը, «Հիւսիսսփայլի» 1860 թ. 10-րդ վիճահարույց համարը և 1861 թ. հունիսի 12-ի նիստի որոշումով հիմնավորված համարում Նազարյանին ներկայացված մեղադրանքները: Որոշվում է դիմել Կովկասի փոխարքային, որպեսզի նա ներքին գործերի նախարարի միջոցով «խստիւ արգելցէ նմին այժմէն իսկ զտպագրութիւն «Հիւսիսսփայլ» օրագրի» և որևէ դրքի, որում հայ եկեղեցուն վերաբերող խնդիրներ շոչափվեն: Հանձնարարվում է վիճակի առաջնորդներին քաղաքական իշխանությունների ձեռքով հավաքել «Հիւսիսսփայլի» 10-րդ համարի օրինակները և «Վարդապետարան կրոնի» դրքի

<sup>28</sup> Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 5, Ե., 1984, էջ 144:



տպաքանակը: Ի վերջո հանձնարարվում է հայ թերթերի խմբագիրներին հրապարակել այս որոշումը, որը և տպագրվում է «Մասյաց աղավնի» ամսագրի 1862 թ. № 16-ում («Պ. Ստեփաննոսի նազարյանց քանի մը մոլորական վարդապետութեանց դատապարտութիւնը»):

Մինոզի որոշումից հետո նազարյանն ստիպված էր հրապարակային մի նամակով դիմել Չերքեզյանին և ազդի անդամներին, որոնց նա դատավոր էր կարգում իր և Չերքեզյանի միջև: Հաշտարխանցի 17 հայ քաղաքացիներ «Հյուսիսափայլի» միջոցով բողոքում են Մինոզի վճռի դեմ, որոնց, դատախազի կեցվածքով, խելույն պատասխանում է Չերքեզյանը: 17 «Հայրապետամերձ պարոններին» նա մեղադրում է այն բանի համար, որ ընդունելով նազարյանի «Հավատաստան» մտքերը դրանով իսկ ընդունում են նրա քարոզած բողոքականությունը, իսկ մերժելով իր մեղադրանքները, փաստորեն մերժում են լուսավորչական կրոնը:

1861-ի օգոստոսին նազարյանը դիմում է Պետերբուրգի գրաքննական կոմիտեին և պատմում է ջմիրածնում տեղի ունեցածը: Կոմիտեն բացատրություն է պահանջում գրաքննիչից: Մ. Բերոյանն իր ղեկուցադրում զարմանք է հայտնում, թե էջմիրածնի Մինոզն ինչպես կարող էր գրաքննական գլխավոր վարչություն առկայության պայմաններում ինքնիշխան կերպով գործել և որ այնպիսի մի աննշան և մասնավոր մարդ, ինչպիսին է Չերքեզյանը, կարող էր հարկադրել Մինոզին «դուրս գալու հայ ժողովրդի մեջ գործող այս տաղանդավոր դիանականի դեմ»: «Շատ ափսոս, - գրում է նա, - եթե փակվի նազարյանի գերազանց ամսագիրը և առավել ցավալի կլինի, եթե անմեղությունը ճշգիբ, առանց բարձրագույն իշխանություն պաշտպանություն»<sup>29</sup>:

Գրաքննության գլխավոր վարչության կարգադրությամբ Պետերբուրգի գրաքննական կոմիտեն զգուշացում է անում Բերոյանին և հիշեցում նազարյանին: «Հյուսիսափայլը» փրկվում է: Հետաքրքրական է, որ Մինոզի որոշումը բեկանվելուց հետո անգամ Չերքեզյանը 1861 թ. դեկտեմբերին կաթողիկոսին ուղղված մի նամակով նրան սովորեցնում է, թե ինչպիսի գրություններ և ում կարելի է ուղարկել, որպեսզի ի կատար անվի «գմբանգամ սկզբնաւորեալն առ ի ձեռք զպանծալի գործ խափանման «Հյուսիսափայլ» անուանեալ վնասարեւր և ազդակործան օրագրին» («Մասյաց աղավնի», 1862, № 16, էջ 188):

<sup>29</sup> Տե՛ս Մ. Մխիթարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Ե., 1958, էջ 222:

1861 թ. ճգնաժամային օրերն իրենց անխուսափելի հետքը թողեցին «Հյուսիսսահայի» և՛ հրատարակչական գործերի, և՛ բովանդակության վրա: Հաջորդ տարվա բաժանորդագրության գործը գրեթե ձախողված էր. հավանաբար երկարատև կռիվներից հոգնած ընթերցողներն այլևս հույս չունեին, թե «Հյուսիսսահայը» ոտքի կկանգնի, և բաժանորդագրությունը չէին նորոգում: Եվ, այնուամենայնիվ, մի քանի բարեգործ քաղաքացիների օժանդակությամբ 1862-ին «Հյուսիսսահայը» շարունակում է լույս տեսնել, բայց ավելի փոքր ծավալով: Խմբագիրը առաջին համարի առաջաբանում ընդհանուր գծերով ներկայացնում է 1861 թվականի անցքերը: Նա, թեև ոչ ուղղակի, բայց թափանցիկ ակնարկներով կշտամբում է կաթողիկոսին, գրելով, թե «... լույս ցերեկով հայհոյվեցավ ճշմարտությունը այն մարդու բերանով, որ ըստ յուր կոչման պիտի լիներ քարոզ և պաշտպան ճշմարտության. ո՛վ կարող է թագուցանել մի անթագուցանելի խայտառակություն» (1862, № 1, էջ 3): Չնայած այս ամենին, Նազարյանը պահպանում էր հոգու կորովը և իր առաջաբանը բացում է «Մի՛ վախեցիր, քաջ նավարկու, հառաջ խաղա» իր բանաստեղծությամբ, որն այլաբանորեն խորհրդանշում էր նրա պայքարի ուղին:

1862 թ. «Հյուսիսսահայի» հրատարակությունն իրոք հաղթանակ էր, բայց այն չէր ապահովագրում ամսագրի հետագա տարիների անխափան տպագրությունը: Նույն տարին իսկ, ունենալով ընդամենը 170 բաժանորդ, Նազարյանը մեծ դժվարությունների է հանդիպում և 1863 թ. ծանուցման մեջ հայտնում է «Հյուսիսսահայի» հրատարակությունը դադարեցնելու վճիռը: 1864-ին նա, այնուամենայնիվ, կարողանում է վերականգնել ամսագրի հրատարակության գործը, բայց՝ շատ թանկ գնով: Ամբողջ տարվա ամսաթերթի համարները գրեթե կազմվում էին խմբագրի պատրաստած նյութերով և Ֆրանց Հոֆմանի գեղարվեստական գործերի թարգմանություններով: Նա չուներ հիմնական «բանագետ աշխատակիցներ», չուներ թղթակիցներ այլ քաղաքներում, գրողներին չէր կարող գեթ չափավոր հոնորար վճարել: Այս մասին տեղյակ պահելով իր ընթերցողներին, Նազարյանը խնդրում էր օժանդակել իրեն, որպեսզի կարողանա աշխատել արժանապատվությամբ, իբրև ստեղծագործող մարդ և ոչ թե «կատարյալ մեքենա»: Բայց սպարդյուն: Նրան մնում էր դադարեցնել խմբագրական-հրատարակատեսական գործունեությունը և 1864-ին առանց զգայացուցից արտահայտությունների,

միայն Շիրլլերի «Կասանդրա» բանաստեղծութեան միջնորդութեամբ, Հայտնում է այդ վերքը:

Բանաստեղծութեանն իրրև ընդհանուր վերնազիր տրված «Վերջաբան «Հյուսիսափայլի» բառերը միայն պետք է ընթերցողներին հուշեին, թե իրենց ինչ է Հայտնում հրատարակխոսը: Այդ վերնազրին հաջորդում էին «Կասանդրա» և Շիրլլերի փոքրիկ բանաստեղծութիւններից) տողերը (1864, № 11, էջ 774): Բանաստեղծութեան մեջ նկարագրված են Գրիամոս թագավորի դուստր, Ապոլլոնի տաճարի քրմուհի, կանխատեսութեան շնորհով օժտված Կասանդրայի ծանր ապրումները՝ Տրոյայի կործանման նախօրյակին: Քաղաքում ուրախ տոնախմբություն էր, իսկ Կասանդրան ընդվզում էր ստովածների դեմ, որոնք նրան իր քաղաքին սպասվող աղետը գուշակելու շնորհն էին տվել: Նազարյանին հոգեհարազատ էին հերոսուհու խռովահույզ մտքերը, քանզի սե ամպերը որոտալով ազդարարում էին ո՛չ միայն Իլիոնի կործանումը... Կործանվում էր և իր կյանքի գործը: Սակայն որքան էլ շատ էին նազարյանի վշտանալու առիթները և ստացած վիրավորանքները, նա իմաստունի ծանրախոհութեամբ մեկ անգամ չէ, որ ազավիհնում է «գալոց ազգի արդարագատութեան դատաստանին»:

Ստեփանոս Նազարյանի գործունեությունը և «Հյուսիսափայլ» ամսագրի պատմությունը «գալոց ազգի» մասնագետների կողմից լուսաբանվել և ըստ արժանւոյն գնահատվել է գեղես XIX դարի վերջին, բացառութեամբ մի անպատեհ ելույթի: Նազարյանի մահվանից վեց ամիս անց, «Փորձ» Հանդեսում տպագրվում է Ալ. Երիցյանի ծավալուն հոդվածը «Ստեփանոս Նազարյանց և նորա գրականական գործունեությունը» վերտառութեամբ<sup>30</sup>: Այն գրված էր դարավերջի մեր պատմագիտական մտքի վերելքին անհարիր անձնականութեան սկզբունքով, հար և նման Ձերբեկցանի երբեմնի Հայհոյական հոդվածներին: Մեկ առ մեկ քննութեան առնելով Նազարյանի աշխատութեանները և Հյուսիսափայլյան հոդվածները, Երիցյանն ամբողջովին միտում է նրա լեզվական ունակութեանները, հրատարակախոսական տաղանդն ու կարողութեանները:

Երիցյանի հոդվածին շուտով պատասխանում է Նազարյանի տասնամյակների բարեկամ և գործընկեր, բանաստեղծ Ամբաս Շահազիրը, «Հրատարակա-

<sup>30</sup> «Փորձ», 1879, № 11, 1880, № 1: Տե՛ս նաև 1881, № 5-6:

խոս ձայն» աշխատութիւն տպագրութիւնմը<sup>31</sup>: Սրտի խորին ցավով, բայց Նազարյանի հիշատակին վայել արժանապատմութիւնմը Շահազիզն ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում է Նազարյանի ողջ ստեղծագործութիւն հետ և հանգիստ խղճով պատմութիւն դատին հանձնում ազգային կյանքը վերանորոգողի սխրանքը:

Նազարյանի գրական-հրապարակախոսական վաստակը մեծ բարեխղճութիւնմը ներկայացրել է պատմաբան Լեոն, որն ամբողջ երկու հատոր է նվիրել հրապարակախոսի գործունեութիւնը, մանրագնին քննութիւն ենթարկել «Հյուսիսափայլը», մատնանշելով նաև ամսագրում տեղ գտած թերութիւնները<sup>32</sup>:

Նազարյանի երկերի առաջին հրատարակիչ Նիկոլ Աղբալյանը գրքի մեծարժեք առաջաբանում նրան անվանում է «իբր ժամանակի մարգարեն», որ ժողովրդին ցույց է տալիս փրկութիւն ուղին: «Նազարյան՝ նշանակում է մի ամբողջ շրջան հայ մտքի զարգացման պատմութիւն մեջ և մի հեղաշրջում լեզվի և գրականութիւն»,<sup>33</sup> - գրում է նա:

Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը Նազարյանին համարում է ազգային լուսավորութիւն սկզբունքների ռահիբա, որի հրապարակախոսութիւնը ժամանակի մտավոր ամայութիւն մեջ նշանակալի մի երևույթ էր, որ գալիս էր շարժելու իրանա-թուրքական տիրապետութիւնների ժամանակներից ի վեր գոյացած հայ հասարակական-կուլտուրական կյանքի ճահիճը<sup>34</sup>:

Նազարյանին և «Հյուսիսափայլին» նվիրվել են բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրութիւններ և մենագրութիւններ, որոնց հեղինակները, ամենայն իրավամբ «Հյուսիսափայլը» դիտում են իբրև 19-րդ դարի 60-ական թվականների հայ հասարակական մտքի զարգացման մի նոր, բարձր փուլի արտահայտութիւնը: Սակայն «Հյուսիսափայլ» ամսագիրն առաջնակարգ էր ոչ միայն իբրև պատմական ժամանակաշրջանի լուսավորական-դեմոկրատական գաղափարախոսութիւն եզակի ամբիոն, այլ նաև իբրև գրական օրինակելի դպրոց, որը դաստիարակել է լրագրողների և գրողների մի ամբողջ սերունդ: Այդ ամսագրի էջերում են իրենց լրագրական-գրական ուսումնասիրութիւնը ստացել հետագայի ճանաչված գրողներից, հրապարակախոս-

<sup>31</sup> Ամբար Շահազիզ, «Յրապարակախոս ծայն», Մոսկվա, 1881:

<sup>32</sup> Լեո, Ստեփանոս Նազարյանց, հատոր 1-2, Թիֆլիս, 1902:

<sup>33</sup> Ստեփանոս Նազարյանի երկերը, Թիֆլիս, 1913, հատոր առաջին, էջ 61:

<sup>34</sup> Աշոտ Գովհաննիսյան, Եզվ աշխ., գիրք առաջին, էջ 211:

ներից ու լրագրողներից շատերը (Ս. Շահազիզ, Գ. Բարխուդարյան, Գ. Տեր-Հովհաննիսյան, Ա. Սուլթանշահ, Մ. Սադաթյան, Թ. Գատկանյան, Խ. Ստեփաննե, Բաֆֆի, Հ. Քուչուրեկյան, Մ. Միանսարյան, Թ. Հասան-Չալալյան, Հ. Սայաթնովյան և շատ ուրիշներ): Ահա թե ինչու, նույնիսկ տասնամյակներ անց, մի շարք հայ հրատարակախոսներ իրենց համար պատիվ էին համարում լինելու նազարյանի և Նալբանդյանի ստեղծած հրատարակախոսական դպրոցի ավանդույթների շարունակողը:

1868 թ. նազարյանը փորձում է նոր պարբերաթերթ հրատարակել և նույնիսկ տարածում է «Ասպտեր Հայաստանի» անունը կրող ամսագրի հրատարակության «Ազդարարությունը»: Սակայն, եթե 1861 թ. լրերբալ ազատությունների միջնորդում գրաքննության կոմիտեն և նրա գրաքննիչ Բերոյանը կարողացան պահպանել «Հյուսիսսփայլը», ապա վերահաս ռեակցիայի տարիներին ներքին գործոց նախարարությունը մերժում է նազարյանի հայցը:

### «ՄԵՂՈՒ ՅԱՅԱՍԱՆԻ» (1858-1862)

«Մեղու Հայաստանի» քաղաքական, բանասիրական և առևտրական շաբաթաթերթը հրատարակվել է Թիֆլիսում Ստեփանոս քահանա Մանդինյանի խմբագրությամբ: Հաշվի առնելով 1850-ական թթ. վերջին երկրում սկսած առաջադիմական շարժումները և մամուլի, գրականության ու կրթական գործի աշխուժացումը, Մանդինյանը հայ հասարակությանն իր ուժերի չափով ծառայելու մտադրությամբ ծրագրում է թերթի հրատարակել: Այդ խնդրանքով 1857 թ. նա դիմում է Կովկասի փոխարքա իշխան Ա. Բարյատինսկուն և շուտով ստանում համապատասխան թույլտվությունը, վավերացված Ալեքսանդր երկրորդի կողմից:

«Մեղու Հայաստանի»<sup>35</sup> շաբաթաթերթը սկսում է հրատարակվել 1858 թ. հունվարից, քաղաքական և ներքին լուրերի, ապա և գրական-բանասիրական երկու բաժիններով: Շաբաթաթերթին թղթակցում էին Թիֆլիսի, Մոսկովայի և հայրենակ այլ վայրերի մտավորականներ, Թիֆլիսի գիմնազիայի և Թուսաստանի համալսարանների հայ ուսանողներ: Այդ մտավորականները զգալի օգնություն էին ցույց տալիս Կովկասի միակ ազգային թերթի խմբագրին և Մանդինյան քահանայի համեստ կույթներն աշխուժացնում իրենց հրատարակ-

րակախոսական հոգևածներով, նամականերով ու գրական գործերով: Այս առումով, իբրև մասսայական օրգանի տիպ, «Մեղու Հայաստանին» նոր երևույթ էր:

Կղերաֆենոլալական հոսանքի գաղափարախոսներից էր Մանդինյանը, որի քաղաքական և ազգային հավատամքն արտահայտվել է «Մեղու Հայաստանին» թերթի առաջին իսկ համարում: «Տեղեկություն Հայաստանի վրա» հոդվածում նա սրբազործում է ազգային այն ավանդությունը, թե Հայաստանն ի սկզբանե օրհնված է եղել աստծո կողմից և այդ տեղն է աստված ընտրել դրախտը տնկելու և Ադամին բնակեցնելու համար: Այնուհետև աստված օրհնել է Նոյին և նրա երկիրը, որը ժառանգել է Հայկը: Նրա խորին համոզմունքով, հայերը եղել են «ճարտարամիտք, հանճարեղք, արհեստագետք, ուսումնասերք, աստվածասերք և հայրենասերք», իսկ ազգությունը ըստ նրա սրբազան և անմեքձենալի մի ամբողջություն էր, որի հասցեին ասված քննադատական ամեն մի խոսք նա հանցանք էր համարում: Ինչ վերաբերում էր առհասարակ 1860-ական թթ. պատմական ժամանակաշրջանի լուսավորական հարցադրումներին, ապա դրանք մասնակիորեն ընդունելով հանդերձ, Մանդինյանը մերժում էր ուսական և հայկական առաջադիմական մամուլի էջերում ծնունդ առած հրապարակայնության և հասարակական կյանքում նկատվող արատավոր երևույթները դատապարտելու քաղաքականությունը: Բարեբախտաբար նրա հոգևածներին զուգահեռ տպագրվում էին և առաջադեմ գործիչների հոգևածները, որոնց հեղինակները հայ հասարակական կյանքի և մշակութթի առաջադրած խնդիրները հիմնականում արժարծում էին ժամանակի լուսավորական մտքի շափանիչների ոգով:

Եվ այսպես, «Մեղու Հայաստանին» իր աշխատակիցների կազմով միատարր չէր: Եւրաթաթերթի ուժը երիտասարդությունն էր դաստիարակված ուսական համալսարաններում, Թիֆլիսի գիմնազիայում և Ներսիսյան դպրոցում ու Լազարյան ճեմարանում, թուլությունը Մանդինյանի աշխարհայացքային սահմանափակությունը: Չնայած դրան, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նրա մանկավարժական հոգևածները: «Դաստիարակություն» խորագիրը կրող նրա հոգևածաչարը նվիրված է մանուկ սերնդի դաստիարակության հարցերին: Նրա հրապարակախոսական հաջողված հոգևածներից է նաև «Ազգային հրավերը», որում քննադատվում

<sup>35</sup> Այստեղտե՛ս՝ Գևա «Մեղու»:

են խալիֆայական դպրոցները և առաջ է քաշվում դպրոցական ցանց Հիմնադրելու հետաքրքրական մի ծրագիր: Ուշագրավ են նրա առաջարկները տարեց քաղաքացիների համար կիրակնօրյա, աղքատ ընտանիքների աջօրհիների համար հատուկ ծրագրով դպրոցներ, իսկ համքարների մոտ արհեստ սովորող աշակերտների համար երեկոյան դպրոցներ հաստատելու վերաբերյալ:

«Աղգային պատմություն» խորագրի տակ Մանդինյանը հրատարակել է պատմարանասիրական ուսուցողական նյութերի մի շարք նվիրված Հայոց պատմության արժանահիշատակ դրվագներին: «Բարոյական ժանտախտներ» հոդվածում նա խոսում է հասարակական կյանքում երևան եկած այնպիսի չարիքների մասին, ինչպիսիք էին թղթախաղը, այլհոշը, մոռայամոլությունը, խարդախությունը և այլն: Այս և մի շարք այլ դեպքերում Ստեփանոս Մանդինյանը իրեն պարտաճանաչ քահանա և դաստիարակ-լրագրող իր գերում էր: «Մեղվի» էջերում նա զեռեղել է նաև կրոնական մի շարք հոդվածներ, քարոզներ, ճառեր, ինչպես և կրոնի դասերին օժանդակելու նպատակով կազմված ուսուցողական հատուկ դասեր:

Մանդինյանի Հայացքների պաշտպանությունը թերթին աշխատակցել են և մի շարք մտավորականներ, որոնք իրենց լրագրային հոդվածներով, նամակներով և լրատվություններով անուղղակիորեն փորձում էին նսեմացնել Նազարյան-նալբանդյանական հրատարակատնություն արդիական նշանակությունը: Այդ գործիչներից էր Մանդինյանի բարեկամ, բանաստեղծ ու մանկավարժ Առաքել Արարատյանը, որը թերթի հրատարակություն օրվանից աշխատակցում էր «Մեղվին»: Նա Հայ մտավորականությունն արդեն ծանոթ էր Ստ. Նազարյանի գրքերի գեմ 1858-ին տպագրված իր երկու գրքույկներով և երզնիժական բանաստեղծություններով, որոնք ուղղված էին «Հյուսիսափայլի» գեմ: Հետագայում սպառելով իր «գրական» եռանդը, Արարատյանը տպագրում է բարոյական գասեր, օգտակար առածներ և հոգեշահ խրատներ: Եթե նույնիսկ նա աչքի չի ընկել իրեն լրագրող, իրականում եղել է խմբագրության երկրորդ գեմը (մի բան, որ հաստատում են ժամանակակիցները) և Մանդինյանին օգնել իր արդեն գործնական խորհուրդներով, «Հյուսիսափայլի» գեմ նրա ծավալած պայքարում:

Ստեփանոս Մանդինյանի գաղափարական երկրորդ նեցուկը Հայր և որդի Մսերյաններն էին: Եթե Մսեր Մսերյանը պայքարի գաշտում գործում էր մարտիկին փայել համարձակությամբ, Զարմայր Մսերյանը «Ակայորդի» ստորագրությամբ «շարքային» լրատվություններ էր ուղարկում «Մեղվին»,

որոնցում, սկսած 1860 թ., հաղորդում էր Մոսկվայում տեղի ունեցած մշակութա-  
թային իրադարձությունները, ինչպես և «Հյուսիսսփայլի» խմբագրության  
ներքին գործերի լավատեղյակութամբ լուրեր այդ ամսագրի հրատարակչա-  
կան գործերի մասին:

Սկայորդու աշխատակցութունը «Մեղու Հայաստանի» թերթին, Նալբանդ-  
յանի դեմ պայքարի ընդհանուր ճակատ կազմելու Մսերյանների ծրագրի մի  
մասն էր:

Դեռևս պատանի, Թիֆլիսի գիմնազիայի ուսանող Ալեքսանդր Երիցյանն  
սկսում է աշխատակցել «Մեղու Հայաստանի» թերթին: 1859-1860 թթ. նա  
տպագրել է մի շարք թարգմանական մանրավեպեր, զվարճալի պատկերներ ու  
զրույցներ: 1861 թ. արդեն իրը և հիմնական աշխատակից նա տպագրել է հոդ-  
վածներ, ակնարկներ, մանկավարժական խորհրդածություններ և այլն:  
Հմտանալով գրական աշխատանքի մեջ, Ալ. Երիցյանը ստեղծում է «Օրագրաց  
բարեկամի հիշատակարանը» ակնարկաչափը «Օրագրաց բարեկամ Ա. Ե.»  
ստորագրությամբ (1861, № 5-7, 10 և 12-14): Այդ ակնարկները պարունակում  
են առտնին նյութեր ամանորի տոնախմբությունների, եկեղեցական տոների և  
հանդիսավոր արարողությունների, ինչպես և Թիֆլիսի գիմնազիայի հայ ու-  
սանողների թատերական ներկայացումների մասին:

Ընդօրինակելով Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» ձևը, Երիցյանն իր  
«Հիշատակարանի» շարադրանքում ևս ցուցադրաբար օգտագործում է Նալ-  
բանդյանի լեզվաոճական մի շարք արտահայտությունները: Այն, որ նա բա-  
ցասաբար էր տրամադրված Նալբանդյանի նկատմամբ, երիտասարդ լրագրողը  
չէր էլ փորձում թաքցնել և նույնիսկ թափանցիկ ակնարկներով ծաղրում էր  
ինչպես նրա, այնպես էլ հյուսիսսփայլյան գործիչների ծածկանունները և  
գրական վաստակը: Այսպես. Ալ. Երիցյանը Կոմս Էմմանուելի նմանությամբ է  
ընտրել իր «Հիշատակարանի» երկու նամակազիրների անունները՝ Հեթում  
Շահնշահ Ճվճվանցի և Մանվել Սիսակյան: Դժվար չէ նկատել, որ ստեղծելով  
այդ անունները, նա ծաղրում էր Նալբանդյանի Շահբեգ և Էմմանուել ծած-  
կանունները:

«Մեղու Հայաստանի» թերթի հրատարակության առաջին իսկ տարվանից  
դրա թղթակիցների մեջ մասնագետ լրագրողի իր հմտությամբ առանձնանում  
է Միքայել Պատկանյանը: Սկզբնական շրջանում նա տպագրում էր գրա-  
կան-թարգմանական գործեր, այնուհետև կազմում էր թերթի արտաքին  
լուրերի բաժնի նյութերը և քաղաքական տեսությունները: Ժամանակի



մշակութային կյանքի համար նշանակալից երևույթներ էին նրա թատերա-  
խոսություններն ու գրախոսությունները, թարգմանությունները ուստական  
առաջադիմական մամուլից և գրականությունից: Թերթի գլխավոր աշխատա-  
կից Պատկանյանին էր պարտական Ստեփանոս Մանդինյանը՝ 1861-1862 թթ.  
«Անդիլ» բարոյական նկարագրի անվերապահ բարելավման համար:

Որքան էլ Մ. Պատկանյանը պաշտոնապես հանդես էր գալիս իրրև  
թարգմանիչ և քաղաքական բաժնի պատասխանատու, այդուհանդերձ, մշտա-  
պես գրեկորում էր նաև հայ լուսավորչի և հրապարակախոսի քաղաքացիա-  
կան իր դիրքորոշումը: Նրա խոսքը դառնում էր զգացմունքային և ստանում  
հրատարակախոսական ազդու շեշտեր, երբ հրապարակում էր հարևան ժո-  
ղովորդների ազդային լուսավորության և հասարակության առաջընթացի  
հետ կապված լուրերը: Այսպես, թվարկելով Ռուսաստանի տարբեր վայրերում  
բացված դպրոցների շարքը, և այդ երևույթը պայմանավորելով պատմական  
մամանակաշրջանի առաջընթացի ոգով, Պատկանյանը դիմում է իր ազգակից-  
ներին. «Հայկազունք, հայկազունք, մի՞ թե էսքան օրինակները բավական չեն  
մեր սիրտը շարժելու, որ մենք էլ աշխատենք ետ չմնալ ուսուներից ազգային  
լուսավորության մեջ: ... Իր՞թե հիմիկանց դեն էլ պետք է շարունակենք մեր  
մտավոր թմրությունը: Չէ՛, չէ՛, իմ սիրելի հայք, զարթնենք քնիցը, հավաք-  
վե՛նք, բնկերանանք, համաձայնվի՛նք և սկսենք ամեն տեղ ուսումնարաններ  
բաց անել ինչպես տղերանց, էնպես էլ աղջկերանց և մանավանդ աղջկերանց  
համար (1861, № 21):

«Կավիկաց» թերթից թարգմանելով այն լրատվությունը, որում խոսվում էր  
Թիֆլիսի «Ջրավորներին օգնելու բնկերության» հիմնադրած օրիորդաց չորս  
դպրոցների մասին, Պատկանյանը խոսքն ուղղում է հայ ընթերցողներին. «Ա-  
ստցեք, ազա՛հե՛մ. էս բնչի՛ց է, որ մեր հայերը չեն կամենում օրինակ առնել էս-  
պիսի առաքինական գործերից... Ընչու՞» չեն կազմում էսպիսի բնկերություն և  
բնչի՞» համար չեն կամենում էսպիսի ազնիվ հնարքներով փող հավաքել ողոր-  
մելի չբավորներին օգնելու և նրանց անտերունջ գավակացը ուսումն տալու  
համար» (1862, № 8, էջ 64):

Մ. Պատկանյանը ուստական և եվրոպական մամուլի օրգաններից քաղված  
նյութերով ներկայացրել է ոչ միայն 1861-1862 թթ. քաղաքական շարժում-  
ների պատկերը Ռուսաստանում, այլև հանգամանալից լուրերով լուսարանել  
Ջեյթաուսի ապստամբությունը: Նա հրատարակել է Ազիզ փաշայի բարբա-

ըստություններէ հետ կապված փաստերը, Մարաշի հայերի Տեղեկագիրը՝ ուղարկված Բ. դռանը, տվյալներ՝ Զեյթունի վարչական վիճակի մասին:

«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթին թղթակցել է բանասեր, հրապարակախոս, փոխգնդապետ Միքայել Միանսարյանը, որի «Մի քանի մտքեր ազգային առաջադիմության համար» հոդվածը երևույթի նշանակութուն ունենը (1858, № 7-8): Ելնելով Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանում սկսված առաջադիմական շարժումների իրողությունից, նա հայությանը կոչ էր անում ընթանալ այնպիսի ճանապարհով, որը համապատասխաներ քաղաքական նոր իրադրույթյանը: Այդ նպատակով Միանսարյանն իր հայրենակիցներին առաջին հերթին հանձնարարում է ծանոթանալ նոր շրջանի ռուսական պարբերական մամուլի նյութերին, ինչպես և յուրացնել եվրոպական լեզուները և դրանց միջոցով ծանոթանալ ժամանակի գիտության նվաճումներին: Այնուհետև, նա առաջարկում է ամենուր հիմնադրել դպրոցներ, հրատարակչական ընկերություններ, թարգմանել և հրատարակել ժամանակի կարևորագույն գրքերը, տպագրել ազգային երգեր և կանոնադրել աշխարհաբար լեզվի օրենքներն ու քերականությունը: Այդ գործի հաջողության համար նա նպատակահարմար է գտնում ուսումնասիրել եվրոպական լեզվաբանների, մասնավորապես Գրիմմ եղբայրների և չեխ լեզվաբան Շաֆարեկի մշակած մեթոդները, որոնք կնպաստեին «մեր աշխարհաբար լեզվի կատարելագործությանը»:

Հոդվածագիրը մեծ կարևորություն է տալիս նաև արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հարցերին, առաջարկում մասնագետներ պատրաստել մայրաքաղաքներում և այդ կերպ խթանել առևտրի, արհեստների և գյուղատնտեսության զարգացմանը:

Մանդինյանի թերթի թղթակիցներից իր պատրաստվածությամբ աչքի է ընկել նաև Գրիգոր Տեր-Հարությունյան Կիրակոսյանց Այգեհատցին, որը հրապարակել է Լոռվա նահանգի հանելուկների և առածների իր կազմած հավաքածուները, տպագրել հոդվածներ, նվիրված Սանահինի հնություններին, Լոռվա բարբառով գրել «Վազու իգիհատցիք» գրույցը: Քաջածանոթ լեզվաբաններ Գրիմմ եղբայրների և Բուսլակի աշխատություններին՝ հայ հեղինակը դրանց հիման վրա կոչ է անում ազգային կյանքի մանրամասները վերականգնելու նպատակով հավաքել և հրապարակել հայկական ժողովրդական հեքիաթները, գրույցները, առածներն ու հանելուկները: Նա մեծ նշանակութուն է տվել և հայ բարբառներին, դանելով, որ դրանք մարմնա-

գորում են ազգի լեզուն և բնագորութիւնը, օգնում գրական աշխարհաբարի հարստացմանը: Այս սկզբունքով էլ «Վերք Հայաստանի» վեպի ակնհայտ ազդեցութեամբ նա գրել է մի գրույց նվիրված Հին իզիհատցիների կյանքին ու կենցաղին (1860, № 12-13):

«Մեզու Հայաստանի» թերթին օժանդակող գործիչների թվում Մանգինյանը հիշատակել է նաև Ռոստոմ-բեկ Երզնկյանցի անունը: Հետաքրքրութիւն է ներկայացնում «Հատուածք 'ի ճանապարհորդութեանց Ռոստոմ-բեկի Երզնկեանց Հաղրատեցոյ 'ի Դաղստան» ակնարկաշարը, որոնցում հեղինակը նկարագրում է պատերազմական իրադարձութիւնները, հիշատակում աչքի բնկած գործարներին սիրանքները, բնագծում հայազգի գեներալներ Վ. Բեհ-բուդյանի, Մովսես Արղության-Երկայնաբազուկի և այլ գորականների ռազմական հմտութիւնը:

Ուղարկ գործողութիւնների հետ մեկտեղ Ռ. Երզնկյանցը նկարագրել է նաև Դաղստանի երբեմնի հայ բնակավայրերը, հայկական Հին գերեզմանատները, խաչքարերը: «Մեզովի» 1861 թ. առաջին Հինգ համարներում Երզնկյանցը տպագրել է գեներալ-լեյտենանտ Արղության-Երկայնաբազուկի կենսագրութիւնը և գործարի հիշատակին նվիրված «Երգ ի դամբան Մովսիսի իշխանին Արղութեանց» բանաստեղծութիւնը: 1860-ին տպագրվել է Սանահինի վանքի հանգամանալից նկարագրութիւնը, իսկ 1861-ին «Նկարագրական տեղեկութիւն աշխարհահռչակ Սրբոյ Նշանի վանիցն Հաղրատայ» մեծածափալ ուսումնասիրութիւնը: Ի դեպ Հաղրատի վանքի նկարագրութեան առաջին տարբերակը Ռ. Երզնկյանցը տպագրել էր գեռես «Կովկաս» շաբաթաթերթում:

Մանգինյանի թերթի էջերում տպագրվել են նաև բազմաթիւ նամակներ ու թղթակցութիւններ, որոնք հիմնականում նվիրված են դպրոցներին և ուսումնական հարցերին, բայց գրանք էական որևէ նորութիւն չեն ավելացնում հիշված նյութերին:

Ստեփանոս Մանգինյանը հատուկ ուշադրութիւն է նվիրել գրական բանասիրական բաժնին: Նրա թերթի էջերում տպագրվել են ինչպես ժամանակին բանաստեղծի համբալ ունեցող Առաքել Աբարատյանի, Սեյազի, Մովսես Ջոհրայանի, Հովհաննես Սայաթնովյանցի, հենց իր՝ Ստեփանոս Մանգինյանի ստեղծագործութիւնները, այնպես էլ Թիֆլիսի և Անդրկովկասի գաղտնական քաղաքների մանկավարժների և մտադորականների բանաստեղծութիւնները և թարգմանական գործերը, Թիֆլիսի գիմնադրալի ուսա-

նողներին հոգւածները և կատարած թարգմանությունները՝ ուսերենից և Թրանսերենից:

Բանաստեղծների շարքում շահեկանորեն տարբերվում են Մովսես Զոհրայան Արցախեցին և աստրախանցիներ Հովհաննես Սայաթնովյանցը և Աբրահամ Գալուստյան Նազարյանցը:

«Մեղու Հայաստանի» թերթում տպագրվել են խմբագիր Ստեփանոս Մանդինյանի բանաստեղծությունները, առակները և պիեսները: Նրա չափածո գործերից աչքի է ընկել և առանձին գրքույկով տպագրվել «Զորս եղանակք տարուոյ յայտնօղք աստուածային գործոց և նախախնամութեան» գրական-կիսահրապարակախոսական գրույցը (1858, № 31-43):

Բանասիրական բաժնում տպագրվել են Մանդինյանի «Հայոց լեզուն» և մի քանի այլ պիեսներ:

Ընթերցողներին հայեցական ազգասիրությունից դեպի ազգային զարթոնքի թարմ իրողություններն է առաջնորդում Մոսկվայի համալսարանի ուսանող, ապագայի բանաստեղծ և լրագրող Ստեփան Ստեփանյանը (Խորեն Ստեփանե), որն իր «Թեատրոն Հայոց» հոգւածում և «Ժամ ուրախական, օր մեզ ցնծալի» բանաստեղծությամբ ավետում էր արեւելահայ նոր թատրոնի ստեղծման լուրը:

«Մեղու Հայաստանի» թերթում տպագրվել են նաև աշուղների, ուսանողների, հոգևորականների բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք թեև զուրկ գրական արժանիքներից, նշանակութուն են ստանում այնքանով, որքանով հաստատում են ժամանակի հայ մտավոր կյանքում ստեղծված հետաքրքրությունը գրականության նկատմամբ: Հիրավի, երկրամասում արդեն ստեղծվում էր այն մթնոլորտը, որում կարճ ժամանակից պետք է երևան գային գրական իրական արժեքները: Դրա վկայությունն է այն, որ «Մեղվի» էջերում տպագրվել են Հովհաննես Պոռ Աշտարակեցու (Պերճ Պոռչյան) «Առանձկալին Շուշան դուստր Վարդանայ» և Ղազարոս Աղայանի «Հարկավոր է օգնել չքավորներին» առաջին բանաստեղծությունները:

Ստեփանոս Մանդինյանը տպագրել է Հ. Ալամդարյանի «Սոխակ ի հոգեվարս» և «Վարդակորոյս» երգերը՝ գրանց կցելով հիշատակի Ջերմ խոսքեր: Մեսրոբ Թաղիադյանի մահվան կապակցությամբ խմբագրությունն արտասանքի, ցավի, սիրո և գնահատանքի խոսքերով է արտահայտվել ազգասեր գրողի և լուսավորչի, «ուսումնալատ գիտնականի» մասին:

«Մեղու Հայաստանի» թերթի կյանքում վճռական շրջադարձ է կատարվում 1862 թ. վերջին, երբ «Մեղվի» 6 Համարներում (47-52) տպագրվում է Միքայել Միանսարյանի Հավաքած ժողովրդական երգերի և Հայ բանաստեղծների գործերի բնարանին: 1868 թ. տպագրված «Քնար Հայկական» ժողովածուի լավագույն մասը կազմած այդ 67 բանաստեղծությունները Հայ բնթերթոյին էին ներկայացնում վերջին տասնամյակում Հայ նոր քնարերգություն ձևերում: Գրանք Խ. Պատկանյանի, Մ. Նալբանդյանի, Լ. Արվաճյանի, Սայաթ-Նովայի, Լ. Ալամդարյանի, Ղ. Ալիշանի, Շ. Պետեֆիի և այլ բանաստեղծների ստեղծագործություններն էին, որոնք հրատարակխոսի բնորոշումով մեծ և խորհրդավոր ներգործություն ունեն մայրենի լեզուն սովորելու և ազգի մեջ տարածելու համար, և «ազգություն ու Հայրենասիրություն ոչին արթնացնելու և զարգացնելու» (1862, № 47):

Միանսարյանի Հավաքածուի լավագույն երգերի հրատարակումը Հավաստում էր ոչ միայն Համազգային չափանիշներով Հայ նոր պոեզիայի զարգացման մակարդակը, այլև քաղաքական մտքի Հասունացման և ազգային-ազատագրական պայքարի դադափարախոսություն ձևավորման նոր աստիճանը:

Աղբատ է թերթի արձակը: Այստեղ մեծ մասամբ տպագրվել են մանրպատումներ, առակներ ու գրույցներ, երջանիկ Հանդուցալուծումով պարզունակ պատմություններ:

Շարաթաթերթի արձակի բաժինը լրացվել է ուսական և արտասահմանյան մամուլից կատարված թարգմանություններով: Ռուս գրականությունից թարգմանվել են Վ. Ժուկովսկու, Ա. Պուշկինի, Ի. Կոխլովի ստեղծագործություններից: Սա. Մանգինյանի փոխադրությամբ, առանց Հեղինակի անվան Հիշատակության, տպագրվել են Ն. Կարամզինի «Մելոդորը Ֆիլալետին և Ֆիլալետը Մելոդորին» հրատարակախոսական նամակներին: «Յագագա բախտի» ընդհանուր վերնագրի տակ (1858, № 45-46 և 1859, № 3-4): Փիլիսոփայական այս խորհրդածությունները բարոյական նորմերի, բախտի ու երջանկության գործոնների շուրջ, մարդուն Հանդեցնում էին բնությունը մոտ լինելու, բնության դեղեցկությունը վայելելու, բարության և աշխատասիրության դադափարին:

Մ. Պատկանյանը 1860-ական թթ. ուս Հեղափոխական-դեմոկրատական «Իսկրա» Հանդեսից թարգմանել է մի քանի մանրպատում և Գ. Յոնովիչինի «Ընդհանուր պալատական քերականությունը» երգիծական գործը, որը ժամանակին արվել էր գրաբնության կողմից և տարածվել ձեռագիր օրինակներով:

1858 թվականից մինչև ընդհուպ 1862-ի դեկտեմբերը Ստեփանոս Մանուչիյանը բազմաթիվ դիմումներով բաժանորդներից խնդրում էր մարել իրենց պարտքերը: 1862 թ. վերջին նրա վիճակն այնքան է ծանրանում, որ վճռում է դադարեցնել թերթի հրատարակությունը:

1863 թվականից «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակության իրավունքն անցնում է հրապարակախոս Պետրոս Միմեռնյանին, և Ստեփանոս Մանուչիյանն առժամանակ հեռանում է լրագրական գործի ասպարեզից: 1866 թ. նա սկսում է հրատարակել ազգային լուսավորության և դաստիարակության օրգան «Գարուն» ամսագիրը, որը հաջողություն չգտնելով, դադարում է մեկ տարին դեռ չբոլորած:

### «ՃՈՒՔԱՂ» (1858-1862)

1858 թ. Մոսկվայում սկսում է հրատարակվել «Ճոաքաղ» գրական ժողովածուն, Հազարյան ճեմարանի դասախոսներ Հայր և որդի Մսեր և Զարմայր Մսերյանների խմբագրությամբ: Այն կրում էր «յարձակ և ի չափածոյ բանից հին և նոր մատենագրաց» ենթավերնագիրը: Հատուկ «Զեկուցումով» ներկայացնելով Հանդես-ժողովածուի ծրագիրը, խմբագիրները Հայտնում էին, որ իրենց պարտքն են համարել առանձին տետրակների միջոցով հին և նոր մատենագիրների գործերից անտիպ հատվածներ տպագրել, հաշվի առնելով այն հետաքրքրությունն ու սերը, որ Հայ ընթերցողների մեջ առաջացել է գրականության նկատմամբ: Միաժամանակ նրանք տեղյակ էին պահում բաժանորդներին, որ պետք է հրապարակեն ոչ թե ամբողջական գործեր՝ «ողկոյզս մեծամեծս», այլ «մանր ճիւղեր»<sup>36</sup>:

Նոր հանդեսն ուներ երեք բաժին, որոնցից առաջին երկուսը նվիրված էին պատմական անցյալի և նոր ժամանակների մատենագիրներին: Այդ բաժինների լեզուն գրաբարն էր: Երրորդ բաժնում («Ի բանից նոր մատենագրաց յաշխարհիկ բարբառ») գետնդրվում էին տարբեր նյութերի նվիրված խառն հոդվածներ: «Ճոաքաղի» պարբերականությունը և բնույթը հաջորդ տարվանից փոխվում է: Եթե 1858 թ. այն հրատարակվել էր երկու գրքով իրրև գրական ժողովածու, ապա 1859 թ. «Ճոաքաղն» ստանում է ամսագիր բանասիրական ենթավերնագիրը և հրատարակվում կանոնավորապես, իրրև

<sup>36</sup> Պարբերաբերթի անունը վերցված է *Ճոաքաղ* բառից, որը նշանակում է այգեկուրից հետո մնացած ավելի քաղցր մասը ողկույզները (ճիւղերը) քաղել, հավաքել, ճոաքաղ անել:

երկշարժաթիվներթ (Հատոր Ա): 1860 թ. հունվարին կիսամսյա թերթի հրատարակումն ընդհատվում է, ապա այն վերսկսում է հրատարակվել հուլիսից և մինչև 1861-ի հունիսի վերջը լույս է տեսնում 24 համար, ստանալով Ամսազիր կրօնական, քանասիրական և ազգային գիտելիաց անվանումը (Հատոր Բ): 1861-1862-ին «Ճոռաբաղը» հրատարակվել է իրրև կրոնական և քանասիրական ամսագիր (Հատոր Գ): Այդ տարվա բոլոր 12 համարները ամփոփված են մեկ ժողովածուի մեջ և լույս են տեսել միաժամանակ միայն Մսեր Մսերյանի խմբագրութայամբ:

«Ճոռաբաղի» հավաքածուից լիարժեք են միայն 1859 թ. և 1860-1861 թթ. համարները, որոնք աչբի են ընկնում հոգվածների բազմազանութայամբ: Այդ տարիներին Մսերյանները տպագրել են հոգևոր գործիչների բազմաթիվ «Թղթեր», նստեր, պատմական վավերագրեր, հատվածներ Միքայել Չամչյանի, Ռիստանես կախկապուսի, Եվսերիոսի և այլ պատմիչների գործերից, սկնարկներ նվիրված հայ պատմիչների կյանքին և գործունեութայանը, միջնագարյան տաղեր, կրոնական տոների, ծեսերի մեկնաբանութայուններ, բազմաթիվ բաների ստուգարանութայուններ և այլն: Մսեր Մսերյանը նկատելի ուշադրութայուն է նվիրել Ռուսաստանի պատմութայանը և մի շարք հոգվածներ նվիրել ուսուց թագավորներին, Մոսկվայի և Պետերբուրգի հիշարժան վայրերին: Առանձին հոգվածով վեր է հանվել Արևելյան Հայաստանի ազատագրման պատմական նշանակութայունը ազգի կյանքում (1858, Հատոր Ա, էջ 18):

Թեև «Ճոռաբաղը» հրատարակվում էր Մոսկվայում, քաղաքական ազմկահույց տարիներին, այն չուներ հրատարակախոսական որոշակի մի ուղեղիծ, որը ներկայացներ ամսաթերթի քաղաքական հավատամբբ: Ծիշտ է, առաջին տարվա երկու ժողովածուները հավանութայուն չունեին ներկայանալու իրրև հրատարակախոսական օրգան, բայց հետագա տարիների «Ճոռաբաղի» նյութերից նույնպես Հնարավոր չէ գուշակել այն միջավայրի և ժամանակի ոգին, որակց և երբ հրատարակվում էր պարբերականը:

1860 թ. իրենց հանգեսի ծրագրում ավելացնելով կրոնական բաժինը, խմբագիրները դրա անհրաժեշտութայունը բացատրում են նրանով, որ հասարակութայան մեծ մասը զուրկ էր կրոնական ուսմունքի գիտելիքներից: Այնինչ, նրանց խորին համոզմունքով, «առաւել, բան գամենայն ինչ կրօնն է, որ բարուսբում է՝ որպէս գիւրաբանչիւր ստանձնական մարդոյ նոյնպէս և գամ-

բողջ ազգի կամ ժողովուրդի բարոյական վիճակը», (1860, Հատոր Ա, էջ 4): Խմբագիրները միաժամանակ շէին թաքցնում, որ կրոնական գիտելիքների ուսուցման հետ միաժամանակ պետք է պայքարեն լյութերականների և բողոքականների դեմ, որոնք անմեղ քաղաքացիներին փորձում են բաժանել նրանց եկեղեցուց: Ակնարկն ավելի քան թափանցիկ էր, որովհետև լյութերականի մեղադրանքն արդեն նրանց իսկ ձեռքով Հասցեագրված էր Ստ. Նազարյանին: Հոգևածները Հիմնականում Հանգում էին այն մտքին, որ Հայ գործիչներն իրավունք չունեն Հրապարակորեն խոսելու ազգի թերուժթյունների մասին:

1859 թ. Զ. Մսերյանը «Ճոաքաղում» ստեղծում է «Հայկազգյան տարեգիր» բաժինը, որտեղ երբեմնապես խոսում էր նաև Հայ Հասարակական կյանքի կենդանի երևույթների մասին (դպրոցական կրթություն, թատերական ներկայացումներ, գրական նորույթներ): Տարեգիրը կազմված էր Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» նմանողությամբ, և հեղինակն ազատորեն օգտվում էր Նալբանդյանի գրական հնարանքներից: «Ճոաքաղի» խմբագիրները Նազարյանի դեմ մարտական հոգևածներ էին տպագրում իրենց և այլ պարբերաթերթերում, բայց ինչպես երևում է նրանց անձնական նամակներից, նրանք միաժամանակ կազմակերպում էին և այլ հեղինակների ելույթները:

«Ճոաքաղի» խմբագիրները գրական բաժնում տպագրում էին առավելապես չափածո ստեղծագործութուններ: Մսերյանները ուշադրություն էին դարձնում Լազարյան ճեմարանի շնորհալի աշակերտների ստեղծագործական աշխատանքներին և տպագրում նրանց բանաստեղծութունները (Մ. Սադաթյան, Ս. Շահազիզ): Ժամանակի բանաստեղծներից տպագրվել են Առ. Արարատյանի, Սեյադի, Ե. Իսահակյանի և այլ հեղինակների գործերը: Զ. Մսերյանը թարգմանութուններ է կատարել ռուսերենից, գրաբարից, գրել է մի քանի մանկական բանաստեղծութուն:

«Ճոաքաղի» բազմազբաղ խմբագիրը ևս ժամանակ էր գտնում բանաստեղծութուններ գրելու համար: Նա հոգևածների հետ մեկտեղ մշտապես տպագրում էր նաև Հիմնականում կրոնական, գրաբարալեզու բանաստեղծութուններ, Սաղմոսի մեկնութուններ, առակներ:

«Ճոաքաղը» իր սահմանափակությամբ հանդերձ, հետաքրքրություն է ներկայացնում որպես մեր մամուլի պատմության 1860-ական թթ. ժամանակահատվածի ֆեոդալական աշխարհայեցության մնացուկների և միջնա-



դարյան զոդմաների պատմականորեն դատապարտվածության ստույգ վավերագիր: Այն, մյուս կողմից ապացուցում է Հայ Հասարակական կյանքում բարոյական արժեքների գնահատման նոր չափանիշների երևան գալը, որի հետ հարկադրված էին Հաշիի նստել նաև Մանրյանները: Ծիշու է, այդ բուրբո-վին չէ, որ Հաջողվում է Հայր Մանրյանին, որը 1860 թ. հուլիսից վերականգնվում էր հատուկ «Ճոթաքաղի» հրատարակությունը, բոլոր բաժինների լեզուն դարձնում է աշխարհաբար: Լեզվական տկար կարողությունների տեղ Մանրը իսկույն քննադատվում է Հյուսիսամայրյան գործիչների կողմից, որոնք «Ճոթաքաղի» լեզուն համարում են «ոչ գրաբար, ոչ աշխարհաբար, այլ մի ինքնահանար, անկանոն լեզու», ուստի գտնում են, թե «Ճոթաքաղը» պիտի համարվի ե՛ր գրաբարի, ե՛ր աշխարհաբարի ավերիչ»:

Մեծ դժվարություններ լույս ընծայելով «Ճոթաքաղի» վերջին, 1861-1862 թթ. Գ ժողովածուն, Մանր Մանրյանը դադարեցնում է պարբերաթերթի հրատարակությունը: Համալսարանական կրթության տեղ, ուսումնական ձեռնարկները հեղինակ Ձարմայրը, սակայն, ավելի վճռականորեն է ընթանում ինքնահատուկ ճանապարհով: Հեռանալով անհեռանկար «Ճոթաքաղից» նա 1861-1864 թթ. հրատարակում է «Համբավարեր Ռուսիո» երկշաբաթաթերթը, իսկ 1872-1876 թթ. «Փարոս» ամսագիրը: Իրեն պարբերական հրատարակություն ավելի կատարյալ էր նրա «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հանդեսը (1879-1881), որը 1880-ից նա հրատարակում էր կնոջ, Սոփիա Մանրյանի հետ համատեղ:

### «ՍՍՍՅԱՅ ԱՂԱՎՆԻ» (1855-1858, 1860-1865)

«Մասյաց ազգինի» ամսագիրը հիմնադրել է Գարբիել Այվազովսկին: 1855-1858 թթ. այն հրատարակվել է Փարիզում, այնուհետև 1860-1865 թթ. Թեոդոսիայում: Խմբագրական աշխատանքը Այվազովսկու բազմաբնույթ գործունեության անբաժան մասն էր, որը նա կատարել է մեծ նվիրվածությամբ:

Գ. Այվազովսկին ծնվել է Թեոդոսիայում 1812թ.: Նա ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրն էր: Կրթությունը ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրոցում, այնուհետև ձեռնագրվել է վարդապետ և գարձել միաբանության անդամ: 1842-1848 թթ. մանկավարժական աշխատանք է կատարել Վենետիկի Ռաֆայելյան վարժարանում, միաժամանակ

1843-ին հիմնադրել է «Բազմավեպ» ամսագիրը և այն խմբագրել մինչև 1848 թ.: 1848-ից 1854 թվականն աշխատել է Փարիզի Մուրադյան վարժարանում:

1852 թ. Մխիթարյանները երբ հրապարակում են «Նոր պարսավագիրքը», որն ուղղված էր Հայ լուսավորչական եկեղեցու դեմ, Մուրադյան դպրոցի վերատեսուչ Ս. Թեոդորյանը, ուսուցիչ Ամբրոսիոս Գալֆայանը և Գ. Այվազովսկին իրենց դժգոհությունն են հայտնում այդ ելույթի դեմ, իսկ Այվազովսկին նույնիսկ մամուլի էջերում հանդես է գալիս պատասխան խոսքով: Այդ նրան չի ներվում և միաբանության արահայր Գ. Հյուրմուշկյանը Այվազովսկուն վտարում է դպրոցից: Շուտով դպրոցից հեռացվում են և մյուս երկու մանկավարժները: 1855 թ. միաբանությունից հեռացած կրոնավորները հիմնադրում են «Մասյաց աղավնի» ամսագիրը, իսկ նույն թվականի ամռանը Հայկազյան վարժարանը, որն սկզբնապես ստանում էր Կ. Պոլսի հայերի նյութական օժանդակությունը:

Երկու տարի Հայկազյան վարժարանում աշխատելուց հետո 1857 թ. Գ. Այվազովսկին եղբոր խորհրդով մեկնում է Ռուսաստան, որտեղ Ալեքսանդր Երկրորդի կողմից նշանակվում է Նոր նախիջևևնի և Բեսարաբիայի թեմակալ առաջնորդ: Նա առաջնորդական նստավայրը Քիչնեից փոխադրում է Թեոդոսիա, որտեղ Հ. Խալիբյանի միջոցներով 1858 թ. հիմնադրում է Խալիբյան դպրոցը և ստանձնում այդ դպրոցի տեսչի պաշտոնը: Նրա բացակայության տարիներին «Մասյաց աղավնի» ամսագրի հրատարակությունից գործով զբաղվում էր Ամբրոսիոս Գալֆայանը, որին օգնում էին Սարգիս Թեոդորյանը և Խորեն Գալֆայանը:

1859-ին ամսագիրը Փարիզից Թեոդոսիա տեղափոխելու կապակցությամբ Այվազովսկին ընդհատում է դրա տպագրությունը: Այն կրկին սկսում է հրատարակվել 1860 թվականից: Այվազովսկու հրավերով Թեոդոսիա է փոխադրվում նաև Խորեն Գալֆայանը, որը սիրով զբաղվում է և՛ մանկավարժական աշխատանքով, և՛ ամսագրի խմբագրական գործերով:

«Մասյաց աղավնին» երկայուն հանդես էր, որի հայկական բաժնում տպագրվում էին եվրոպական քաղաքակրթությանը ծանոթացնող նյութեր, իսկ երկրորդ սյունակում Ֆրանսերեն լեզվով օտարազգիներին էին ներկայացվում հայերի ստեղծած մշակութային արժեքները, որպեսզի նրանք «ըստ այնքան մտադրությունն ընեն այս պատմական ազգին»: Լուսամիտ հոգևորականի հայեցական քարոզ է հիշեցնում Այվազովսկու ամսագրի առաջին համարի խմբագրականը: Այնտեղ ասվում էր. «Մեր միայն բազմաճյուղ

և հույսը այն է, որ գիտութեանց լուսավոր լուսավորվի հայոց ազգին միաբեր: Սիրտը կրթվի և զարգարվի ընկերական առաքինութեանն երով. ձևաբերը լցվին երկրագործութեան, նարտարապետութեան և վաճառականութեան բերքերով: Երեսը ավելի փայլի յուր հավատարմութեամբը այն տերութեանց ծառայութեանը մեջ, որ կպաշտպանն իրեն, սիրելի ըլլա միշտ այն ժողովրդոց, որոնց մեջ այս օրվան օրս ցրված է» (1855, № 1, էջ 4):

Եթե զազգիօջախնների թերթերը սովորաբար քննութեան էին առնում տեղի համայնքների ձևաբերումները, հոգսերն ու անելիքները, «Մասյաց ազգայնու» խմբագիրները խոսում էին ազգի բարօրութեան մասին, ինչպես հարկն է ծանոթ չլինելով բուն հայութեան առօրյային ու նպատակներին: Իրականում քանի որ ամսագիրը զավանարանական հակամարտութեան և պայքարի ծնունդ էր, խմբագիրները որքան էլ ձգտում էին դրան տալ լուսավորական ուղղվածություն, ներքին պայքարի հարցերը զգալի տեղ էին խլում ամսագրի էջերից:

«Մասյաց ազգայնին» հրատարակվում էր հինգ կայուն բաժիններով, որոնք նվիրված էին ազգի բարոյական և մտավոր առաջադիմութեանը նպաստող նյութերին, պատմական խոշոր գործիչների կյանքին ու գործունեությունը, հայոց պատմության հետաքրքրական էջերին, եվրոպական քաղաքների նկարագրությունը: Ամսագիրը պատկերազարդ էր. այնտեղ մշտապես գեանդվում էին գանազան քաղաքների տեսարժան վայրերը և հին հայկական քաղաքները պատկերող նկարներ, պատմական գործիչների լուսանկարներ և այլն: «Մասյաց ազգայնին» 1855-1858-ին և 1860-ին ամսագիր էր, 1861-1862-ին երկչարաթափերթ, 1863-ից դարձյալ ամսագիր: Թեոդոսիայում հրատարակվելու շրջանում ամսագրին կից հրատարակվում էր ինքնուրույն «Ραθηα» ամսագիրը, որը զադարում է 1863 թվականին:

«Մասյաց ազգայնին» հրատարակվում էր աշխարհաբար. «Լեզուն մեծավ մասամբ սամկորեն պիտի ըլլա առ այժմ, միայն ուսումնական նյութերը գրոց լեզվով», ասված է Հայտարարության մեջ (1855, № 1, էջ 6): Այդ ավանդույթը զալիս էր Մխիթարյանների պարբերաթերթերից, որոնք բոլորը հրատարակվում էին արևմտահայերենով: 1843 թ., երբ հիմնադրվում է «Բազմավեպը», Այվազովսկին իրեն խմբագիր այն սկսում է հրատարակել արևմտահայերեն, այդ առթիվ տալով հետևյալ բացատրությունը. «Թե որ կու-

զենք դյուրավ ծաղկեցնել մեր ազգին մեջ ամեն տեսակ գիտությունները, պետք է, որ իրան հասկըցած լեզվովը խոսինք հետը»<sup>37</sup> :

«Աշխարհաբար լեզուն մաքրելու և գեղեցկացնելու վրա» Հողվածում Այվազովսկին առաջարկում էր աշխարհաբարը մաքրել օտարամուտ բառերից, կոկեխայն և մոտեցնել գրաբարին, որպեսզի հայ ընթերցողը հետագայում կարողանա հասկանալ նաև գրաբարը (1855, № 3): «Աշխարհաբար լեզուն ծաղկեցնելու վրա» Հողվածում նա լուսաբանում է ժամանակի հայ լեզվաբանների մոտեցումները գրաբար-աշխարհաբարի հարաբերակցության հարցերին, ընդ որում աշխարհաբարի մասին Նազարյանի տեսակետը լուսաբանելու նպատակով Այվազովսկին «Վարդապետարան կրոնի» գրքի գրեթե ամբողջ առաջաբանը ներկայացնում է ընթերցողին (1856, № 3): Լետաքրքրական է, որ երբ 1856 թ. Խ. Լազարյանը նրան խորհուրդ է տալիս «Մասյաց աղավնին» հրատարակել գրաբար, Այվազովսկին իր պատասխան նամակում գրում է, թե իր արևմտահայ բաժանորդները գրաբար չգիտեն և խնդրում են ամսագիրը հրատարակել իրենց «խառնաձայն» ուսմիկ լեզվով: Ընդառաջելով նրանց թախանձանքին, ինքն ստիպված է «Մասյաց աղավնին» տպագրել «ռամկորեն»: Միաժամանակ ավելացնում է, եթե աշխարհաբար հրատարակելով հազիվ 200 բաժանորդ ունի, «զի՞նչ լինիցի, եթե բոլորովին ի գրոց բարբառ յորինիցեմ զգրուածն»<sup>38</sup> :

Ամսագրի հրատարակության բոլոր տարիներին Այվազովսկին բազմաթիվ Հողվածներ է նվիրել ազգի անդամների բարոյական դաստիարակության հարցերին: Կրթությունը համարելով մարդու երջանկության առաջին պատճառը, նա ազգի առաջադիմության երաշխիքը համարում էր բարեկարգ դպրոցները, կոչ անում ստեղծել նորերը և բարեկարգել արդեն եղածները: Այվազովսկին հետևողականորեն արտահայտվել է նաև հայ հասարակական կյանքում համերաշխություն և միաբանություն ստեղծելու անհրաժեշտության մասին: «Միաբանական հողվով միայն պիտի կարենանք դարձյալ ձեռք բերել ազգին բարոյական ու մտավորական երջանկությունը», գրում էր նա ամսագրի առաջին տարվա առաջին համարում: Տգիտությունն ու անմիաբանությունը, սուտ ազգասիրությունը «ուրիշ ամեն թշնամիներեն ավելի բանդեր են միշտ և կթանդեն մեր ազգը և ազգային աղեկությունները»,

<sup>37</sup> «Բազմավեպ», 1843, № 4, էջ 78-79:

<sup>38</sup> Տե՛ս Մատենադարան, Լազարյանների ֆոնդ, քոթ. 108, գործ 83, վավ. 6:

գրում է Այվազովսկին «Մասյաց աղավնու» հրատարակության վերջին տարում (1865, № 3, էջ 81-82):

Ազգը լուսավորելու ձգտումով էլ ամսագրի աշխատակիցները մի շարք հոդվածներ են տպագրել Հայ ժողովրդի պատմության հանդուցյալին հարցերի, զիտական նորությունների, եվրոպայի քաղաքական անցքերի ու գործիչների մասին: Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվել Հայազիտություն գարգացմանը եվրոպայում, մասնավորապես հայազետներ էլ: Դյուլորիեի և Վ. Լանդլուայի գործունեությունը և նրանց առանձին աշխատություններին:

Չնայած այս ամենին, Հայկական գաղթօջախների և բուն Հայաստանի կենդանի առօրյան դուրս է մնացել պարբերաթերթի էջերից և զրա առաջին շրջանին արվել է խմբագրությունը հետաքրքրող հարցերի միակողմանի ուղղվածություն, որով և նեղացվել է քննարկվելիք հարցերի շրջանակը: Այսպես, 1856-1858 թթ. տպագրվել են բազմաթիվ նույնատիպ հոդվածներ, նվիրված Հայկազյան վարժարանի ստեղծման պատմությանը, տարեկան հարցաքննություններին, ուսումնական այլևայլ խնդիրներին: Մեծ տեղ է հատկացվել արբաՀայր Հյուրմյուզյանի հետ ստեղծված թշնամական փոխհարաբերությունների հարցին և դավանաբանական նյութերին:

«Մասյաց աղավնի» ամսագրի կայուն բաժիններից է գրական բաժինը, որն առավելապես հետաքրքրություն է ներկայացնում թարգմանական գործերով: Հայ գրականությունը հիմնականում ներկայացրել է Խորեն Գալֆայանը Խորխոռուցի գրական ծածկանունով: Ակաժ 1858 թ., ամսագրի գրեթե բոլոր համարներում տպագրվել են նրա բանաստեղծությունները, «Արշակ երկրորդ» և «Ալաֆրանկա» պիեսները:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Պանդուխտ առ ծիծառնիկ» անստորագրի բանաստեղծությունը, որը, կարծում ենք, դարձյալ պատկանում է Խ. Գալֆայանի գրչին (1862, № 9): Այն գրված է «Կուռնկ» բանաստեղծության պինհայտ ազդեցությամբ. պանդուխտը գարնանը տեսնելով ծիծառնակի վերադարձը, խորհում է իր դառը ճակատագրի մասին. իսկ ինքը ե՞րբ կվերագանա իր Հայրենի օջախը... և երբ Հաջորդ գարնանը ծիծառնակը կրկին երևա այս կողմերում, արդյոք ո՞ղջ կլինի ինքը: Խորեն Գալֆայանի մի շարք քնարական բանաստեղծություններ միաժամանակ տպագրվել են նաև Ֆրանսերեն թարգմանությամբ:

Փամանակի բանաստեղծներից տպագրվել են Մ. Պեչիկթաշյանի մի քանի բանաստեղծությունները, Մկրտիչ Պալյանի բանաստեղծությունը և «Եր-

վանդ երկրորդ» ողբերգութիւնը, Խալիբյան դպրոցի շնորհալի աշակերտների ոտանավորները:

«Մասյաց աղավնու» էջերում տպագրվել են Լոմոնոսովի, Դերժավինի, Լերմոնտովի, Տյուտչևի, Բայրոնի բանաստեղծութիւնները, Լաֆոնտենի և Դմիտրիևի առակները: Ամսագրի հրատարակութեան տարիներին գրեթե բոլոր համարներում տպագրվել են Կոխլովի առակները՝ Գաբրիել Այվազովսկու թարգմանութեամբ: «Մասյաց աղավնի» պարբերաթերթում տպագրվել են նաև գրախոսութիւններ Թ. Պատկանյանի «Ազգային երգարան հայոց» ժողովածուի, Մսեր Մսերյանի նորատիպ մի աշխատութեան, Ոսկան Տեր-Հովհաննիսյանի մատենաշարի հերթական գրքի հրատարակութեան մասին: Այվազովսկին հատուկ հոդված է նվիրել Գ. Ախվերդյանի աշխատութեանը և գրեթե ամբողջութեամբ արևմտահայերենով հրատարակել նրա գրքի առաջաբանը: Միաժամանակ նա տպագրել է «Բամանչա» և «Արի՛ ինձ անգամ կալ, այ՛ դիվանա սիրտ» բանաստեղծութիւնները, ընդ որում առաջինը սրանցից՝ Փրանսերեն, լատիներեն, արևմտահայերեն թարգմանութեամբ (1855, № 8, 1856, № 2, 7): Փրանսերենով հանդերձ տպագրել է նաև Թ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» նրա ժողովածուի բանաստեղծութիւններից «ամենից գեղեցիկներից մեկը»:

«Մասյաց աղավնի» ամսագրի 1860-1865 թթ. երկրորդ շրջանն աչքի է ընկնում դարձյալ լուսավորական ուղղվածությամբ, հրապարակած նյութերի բազմազանութեամբ: Բայց Այվազովսկին այս շրջանում նույնպես զբաղված լինելով տեսչական-մանկավարժական աշխատանքով, պարբերաթերթում մեծ տեղ էր հատկացնում Խալիբյան դպրոցի առօրյային: Իրերի բերումով «Մասյաց աղավնին» հրատարակութեան երկրորդ շրջանում ևս դառնում է բանավիճային պայքարի ամբիոն, այս անգամ արդեն ուղղված «Լյուսիսափայլի» գործիչների դեմ: Առաջին բախումը Նազարյանի հետ կապված էր Նոր Նախիջևանի եկեղեցական գումարների հարցին նվիրված Նալբանդյանի հոդվածի հետ: Հերքելու նպատակով հոդվածում նշված մեղադրանքները, քանի որ 1859-ին «Մասյաց աղավնին» էջեր հրատարակվում, Այվազովսկին կազմակերպում է իր դպրոցի ուսուցիչ Ստ. Պալասանյանի պատասխան հոդվածը, որը տպագրվում է «Մեղու Հայաստանի» թերթում («Լյուսիսափայլ» օրագրին նամակներեն մեկը», 1859, № 10): Հետագայում, երբ Ստեփան Ոսկանն «Արևմուտք» երկչարաթաթերթում արտատպում է Նալբանդյանի հոդվածը, Այվազովսկին նույնպես «Մասյաց աղավնու» էջերում արտատպում է

Պայտանյանի հողվածը: Նա միաժամանակ դիմումներ է հղում ներքին գործոց նախարար Ա. Ախիբերսին և Խ. Լազարյանին, խնդրելով փակել տալ «Հյուսաստափայլ» ամսագիրը և պատժել Նալբանդյանին: Տասնամյակներ շարունակ մեր բանասերները այդ դիմումներն անվանել են լրտեսագրեր. Հայտնի է, սակայն, որ լրտեսագրերը հավաքված նյութերի հիմքի վրա կազմում և ի պաշտոնե ներկայացնում են ուր հարկն է հատուկ գործակալները, լրտեսները: Գարրիել Այվազովսկին լրտես չէր, թեև նրան առաջինը լրտես է անվանել Ա. Նալբանդյանը բանավիճային պայքարի ամենածանր օրերին, «Երկու տող» գրքույկում: Նա բազմաթիվ լեզուների գիտակ, մեծ էրուդիցիայի տեր Հոգևորական գործիչ էր, հայազեստ, լեզվաբան, թարգմանիչ, Ռուսաստանի և Օսմանյան պետության պատմությունների հեղինակ: Անշուշտ նրա դիմումները Չերքեզյանի հողվածների հետ մեկտեղ պատճառ դարձան, որ «Հյուսիսստափայլ» խմբագրին արգելվեց հետագայում կրոնի հարցերին նվիրված հողվածներ տպագրել, իսկ մի քանի զեղարվեստական գործերի և հրատարակատեսական հողվածների տպագրության շարունակությունն ընդհատվեց: Բայց շատ կարևոր է հիշել, որ Այվազովսկին իր հերթին իր առաջնորդության շրջանում հայածվում էր և՛ Մաթեոս կաթողիկոսի, և՛ Նոր Նախիջևանի իր հակառակորդների կողմից: Բարդ ճակատագրի տեր գործիչ էր Այվազովսկին, որի համերաշխության ու հաշտության կոչերը ոչ միայն ցանկալի արդյունքի չհասցրին, այլև նրան նույնպես դարձրին Խալիբյանին մեղսակից, քանի որ Խալիբյան դպրոցին հատկացված գումարները նա սրբագործել էր իրրև նվիրատվություն:

Ինչ վերաբերում է ներքին գործոց նախարարին ուղղած նրա դիմումներին, սպա դրանք ոչ թե քաղաքական մասնություններ էին, այլ թեմի առաջնորդի զանգատները «Հյուսիսստափայլ» ուղղության դեմ ա՛յն նախարարությունը, որի անօրինություն էին ենթարկվում մամուլի օրգանները: Գարրիել Այվազովսկին պարզապես կղերաֆեոդալական հոսանքի աչքի ընկնող գործիչներ էր, որն ուներ իր կայուն սկզբունքները և չէր զլանում գործի դեռև առաջնորդական իր իրավունքները, երբ այդ պահանջում էր իրազրությունը:

1865 թ. Այվազովսկու ամսաթերթը հրատարակվում է «Ծիածան» խորագրով: Այդ տարիս ծրագիրը բավականաչափ նեղանում է և ամսագիրը փաստորեն վեր է ածվում վիճակային առաջնորդարանի օրգանի՝ «Թեմական տեղեկությունը» ծավալուն բաժնով: Այստեղ տպագրվում էին Հոգևորական-

ների նշանակումների և էջմիածնի Աթոռից ստացված հրամանների հետ կապված հոգիվածներ, թեմի առաջնորդի գրուկթյունները, ճառերը և այլն:

Կաթողիկոսի անբարյացակամության և նախիջևանցիների հակառակորդ «փառթիայի» վճռական գործողուկթյունների շնորհիվ Այվազովսկին 1865 թ. հուլիսին արձակվում է պաշտոնից: Այդ օրերին վախճանվում է և Մատթեոս կաթողիկոսը: Նորընտիր Գևորգ կաթողիկոսը 1867 թ. Այվազովսկուն ձեռնադրում է եպիսկոպոս, ապա 1871-ին արքեպիսկոպոս, ընտրում Սինոդի անդամ, այնուհետև 1876 թ. Վրաստանի թեմի առաջնորդ: Այվազովսկին պաշտոնանկ լինելուց անմիջապես հետո թողնում է Խալիբյան դպրոցի տեսչի պաշտոնը և ապա դադարեցնում «Մասյաց աղավինի» ամսագրի հրատարակուկթյունը:

Իր տասնամյա գոյուկթյան ընթացքում «Մասյաց աղավինին» որոշակի դեր է կատարել իր և գիտամասնայական օրգան: Այն Ֆրանսերեն և ապա ռուսերեն հավելվածներով եվրոպական և ռուս ընթերցողներին ծանոթացրել է հայոց պատմուկթյան հիշարժան դրվագներին և հայ մշակույթի արժեքներին: «Մասյաց աղավինի» դարձել է ժամանակի ազգային երկու դպրոցների՝ Հայկազյան ուսումնարանի (1855-1860) և Խալիբյան դպրոցի (1858-1871) տարեգրուկթյունը: Վերջապես, որ շատ կարևոր է, այն ապագայի պատմաբաններին է հասցրել անցյալ դարի վաթսուևական թվականների հայ հոսանքների բուռն պայքարի պատկերը, կարևոր սկզբնադրյուր դառնալով հայ հասարակական մտքի պատմուկթյան համար:

### «ԿՈՒՆԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐԴԻՆ» (1860-1863)

«Կուունկ հայոց աշխարհին» բարոյական, բանասիրական, նկարագրական և փիճակագրական ամսագիրը, «նվիրյալ նախնի և արդի Հայաստանյայց»<sup>39</sup>, հրատարակվել է Թիֆլիսում, Մարկոս Աղաբեկյանի խմբագրուկթյամբ: Ամսագրի հրատարակիչը և տնօրենն էր Համբարձում էնֆիաճյանը:

Մ. Աղաբեկյանը ծնվել է 1830 թ. Զմյուռնիայում, ավարտել է Մխիթարյանների Մուրադյան վարժարանը Փարիզում, այնուհետև հայրենի քաղաքում նվիրվել մանկավարժական գործուևնուկթյան: Իր և նորընտիր Մատթեոս կաթողիկոսի անձնական քարտուղարը 1858 թ. նրան ուղևեցել է էջմիածին, ապա բնակուկթյուն հաստատել Թիֆլիսում: Այստեղ «Կուունկ հայոց աշ-

<sup>39</sup> 1863-ից՝ Գանդես ամսօրյա ազգային և բարոյական լուսավորուկթյան:



խորհին» ամսագիրը շորս տարի հրատարակելուց հետո նա մեկնել է Կ. Պոլիս, որտեղ 1866-1867 թթ. լույս է ընծայել «Ծիլն Ազգայր» հանդեսը: Հետագայում գրադվել է գրական-հասարակական գործունեությունը: Վախճանվել է 1908 թ.:

«Կոտուկ հայոց աշխարհին»<sup>40</sup> ամսագրի ուղղությունը իր արտահայտությունն է գտել նրա ենթամիտքներնազրույթում, այն է ազգային և բարոյական լուսավորություն հանդես: Իսկապես, ամսագրի հրատարակություն հենց առաջին քայլերից Աղաբեկյանը հետևողականորեն գրադվել է ազգի անդամներին կրթություն և լուսավորություն հարցերով, խորին համոզվածությամբ ծավալել եկեղեցասիրական-ազգասիրական իր քարոզչությունը: Ի տարբերություն «Անդու. Հայաստանի» թերթի, որը հրատարակվում էր Թիֆլիսում, «Կոտուկն» ուներ հստակ ձևակերպված սկզբունքներ, որոնց խմբագիրը հավատարիմ է մնում հանդեսի հրատարակություն բոլոր տարիներին:

Մարկոս Աղաբեկյանի մշակած լուսավորական ծրագրում քննարկված էին ոչ թե հայերի կրթություն խնդիրներն ընդհանրապես, այլ հստակորեն տարբերակված կրթական երկու համակարգի, միմյանց զուգահեռ երկու կառույցի իրականացման ուղիները: Նա առաջարկում էր ստեղծել կրթական մի սխտեմ, որի հիմքում գրվելին հոգևոր և ազգային ուսուցման ինքնուրույն ուղղությունները: Ղեկավարվելով այս սկզբունքով, նա իր բոլոր հոդվածներում մշտապես ուշադրություն է նվիրել բարոյական (կրոնական) և ազգային (աշխարհիկ) կրթության կազմակերպման գործնական խնդիրներին, կրթական ամբողջ սխտեմի ընդհանուր ղեկավարությունը հանձնարարելով բարձրաստիճան հոգևորականներին: Նշելով այն իրողությունը, որ տարբեր ազգություններ օտար ազդյուններից են քաղում իրենց ժողովրդի լուսավորություն նյութերը, Աղաբեկյանը հայերի ազգային և բարոյական լուսավորության ազդյունը համարում է Հայաստանյայց առաքելական եկեղեցին և հայերին կոչ անում պահպանել իրենց եկեղեցին, կրոնը, լեզուն և, եթե հարկը պահանջի գոհվել գրանց համար: Նկատի ունենալով 1860-ական թթ. ազգի անդամների միջև ստեղծված գաղափարական տարակարծությունները, Աղաբեկյանը հայերին համերաշխությամբ է կոչում: «Ազգություն և եկեղեցի, - գրում է նա, - մայր և զավակ, պետք է մեր մեջ մի արյուն, մի հոգի ունենան, մի զգաց-

<sup>40</sup> Այսուհետև՝ նաև «Կոտուկ»:

մունք, մի մտածմունք» զբաղեցնի նրանց և միմյանց ձեռք բռնած առաջ ընթանան:

Բանավիճային հենքի վրա գրված «Ազգային բարոյական հրահանգ» և «Մտածմունք մեր հայոցս ազգային և բարոյական զարգացման վրա» հոդվածներում նա եկեղեցական ազգասիրության ելակետից մերժում է հայոց եկեղեցու ռեֆորմի՝ Նազարյանի պահանջը: Եկեղեցին համարելով հայ ժողովրդի ազգայնության և բարոյականության զարգացման ամենամեծ տարերքը, նա Չամուռճյանի «աղմկարարությունը» և եվրոպական լուսավորության յուրացման Նազարյանի քարոզները նույնքան վտանգավոր է համարում, որքան հունական, կաթոլիկ և բողոքական եկեղեցիների վարդապետությունների տարածման ջանքերը: Ինչ վերաբերում էր եկեղեցու վերանորոգությանը, Աղաբեկյանը գտնում էր, որ պետք է ոչ թե եկեղեցական կանոնները և օրենքները փոփոխել, այլ այդ օրենքները վարդապետող անձանց փոխարինել լուսավորյալ գործիչներով:

«Կռունկի» ազգային և բարոյական գաղափարախոսությունը քննարկվել է և ամսագրի տեսաբան Գարեգին Մուրադյանի հոդվածներում: 1860-ական թթ. հայ հրապարակախոսական լավագույն ուժերից էր նա, որի հոդվածները ոչ միայն աչքի էին ընկնում հայոց առաքելական եկեղեցու պաշտամունքով, այլև խոսքի նրբազեղությամբ, ոգեչունչ արտահայտչաձևերի ինքնատիպությամբ:

Իր ծրագրային հոդվածներում Մուրադյանն այն միտքն է հայտնում, որ հայ ազգի լուսավորության խնդիրը պետք է կազմակերպվի երեք գործոնների հիման վրա: Նա գրում է. «Մեր ազգային շինության նվիրական տաճարի հաստատուն սյուների են՝ մեր կրոնի ծավալումը մեր սրտերի մեջ, մեր լեզվի ազգովին գործածությունը և ծավալումը դուրին եղանակով և հայրենասիրական զգացմանց զարթեցումը մեր բոլոր հայրենագուրկ և տարագիր եղած ազգակցած մեջ» (1860, № 9, էջ 748): Մուրադյանին նույնպես մտահոգում էին հայ հասարակական կյանքում առաջացած հոսանքները իրենց իրարամերձ ծրագրերով: Ընդունելով հանդերձ, որ հայ հոգևորականները 19-րդ դարում շատ են ետ մնացել իրենց նախորդներից, Մուրադյանն այնուամենայնիվ ազգաշինության գործն անվերապահօրեն հանձնարարում է հոգևորականությանը, ազգի հոգևոր վերածնության հուսալի հեռանկարները պայմանավորում «եկեղեցու արիաջան հովիվների» խելացի գործունեությամբ:

Այս Համոզմունքով էր առաջնորդվում Մուրադյանը, երբ Հերբում էր Հայոց եկեղեցու ռեֆորմի վերաբերյալ Նաղարյանի տեսակետը: Հայոց եկեղեցին ո՛չ մաշված է, ո՛չ Հնացած, և ո՛չ կարոտ է վերանորոգման: Այն կարոտ է միայն Հայրենասեր Հովիվների, որոնք քարոզելով քրիստոնեական ճշմարտությունները, անփոփոխ պահպանեն եկեղեցու ներքին և արտաքին հատկությունները:

«Կոունկի» եկեղեցասիրական-պահպանողական Հրապարակախոսությունը, որն սկիզբ էր առնում Ներսիսյան դպրոցի տեսուչ Պետրոս Շանչյանի քարոզչությունից և աչքի բնկնում իր Հայրենասիրական ուղղվածությամբ և պահպանողականության ընդգծված տարրերով, որդեգրվում է ազգային-պահպանողականների կողմից: Սակայն, «Կոունկի» հրապարակախոսությունը և ազգային-պահպանողական հոսանքի գաղափարախոսությունը բոլորովին չէ, որ նույնանում էին: Այսպես, ազգային-պահպանողականները Հեռանալով կոունկականների մշակած ազգային և բարոյական Հայեցական դաստիարակության խնդրից, որը կենդանի կյանքում շոշափելի արդյունքի չհասավ, լրջորեն պայքարում էին եկեղեցու գերիշխող դերն ապահովելու համար Հայ Հասարակական կյանքում: Նրանք Աթոռի իրավական փրճակը և նրա ինքնուրույնությունը Հնարավորին չափով օտնում էին պաշտպանել կառավարության ռանձգություններից, իսկ ազգային կյանքում արամադիր չէին սոսկ Համերաշխ եզրայրակիցների տեսնել և տեսական ու Համառ պայքար էին վարում լիբերալ հոսանքի դործիչների դեմ:

«Կոունկ Հայոց աշխարհին» ամսագրի խմբագրությունն իր խնդիրն է Համարել լուսարանել Համայն Հայության առօրյան, նրա հոգսերը և ապագայի ակնկալիքները: Արդեն իսկ ամսագրի անունն ընտրված էր այդ նշանարանով. Հայաստանը ավերվել է, Հայոց թագավորությունը կործանվել, Հայոց կոունկները ցրվել են աշխարհի տարբեր երկրները և տոչորվում են Հայրենիքի կարոտից: Նրանք փնտրում են միմյանց, կոչ անում ձայն տալ իրար և ապրել միարանություն: «Ուրեմն կոունկ եմ ես, կոունկ Հայոց աշխարհին», այսպես է ներկայացնում ամսաթիվեր իր կոչումը և ապա արձանագրում. այս է իմ պանդխտության գլխավոր խորհուրդը: Արդ, ինչպե՞ս էր իրականացնում ամսագրի «գլխավոր խորհուրդը» արևմտահայ Հրապարակախոսը Արեհյան Հայաստանում: Աղարեկյանը ձգտում էր մոտեցնել երկու թևի Հայերին, նրանց ծանոթացնել միմյանց մշակութային արժեքներին, գրականությանը, լեզվին: Արտատպություններ կատարելով արևմտահայ

Թերթերից, նա արևմտահայերենն անփոփոխ էր պահպանում, արևելահայ ընթերցողներին ընտելացնելու համար այդ լեզվին: Միաժամանակ Աղաբեկյանը հույս էր հայտնում, որ այդ կերպ կվարվեն նաև արևմտահայերը, որով կնպաստեն երկու երկրների բարբառների միավորմանը և ընդհանուր ազգի առաջընթացին:

Քանի որ «Կոռուկի» հրատարակութայն թույլտվությունը Անդրկովկասի փոխարքայութայն կողմից տրվել էր պայմանով, որ դրա էջերում չհրատարակվեն քաղաքական հոդվածներ և խորհրդածություններ, խմբագրությունը մեծ ուշադրություն է նվիրում լրատվութայն ապահովմանը: Այդ նպատակով ստեղծված «Հայոց աշխարհին կոնկան խապրիկները» բաժինը ինչ-որ չափով լրացնում էր քաղաքական լրատվութայն պակասը: Այս բաժնում մեծաքանակ հաղորդումներ են տպագրվել Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Այսպես, 1860 թ. 7-րդ համարում հաղորդում է տպագրվել Ազգային Սահմանադրութայն ընդունման մասին և հրապարակվել է Սահմանադրութայն բնագիրը: Հետագայում նույնպես պարբերաբար հաղորդումներ են տպագրվել կապված Սահմանադրութայն քննարկումների ընթացքի հետ: 1862 թ. հրապարակվել է Կ. Պոլսում հիմնադրված Բարեգործական ընկերութայն կանոնադրությունը և նշվել ընկերութայն գործունեութայն հեռանկարները: 1862-1863 թթ. տպագրվել են բազմաթիվ նյութեր նվիրված Զեյթունի իրադարձություններին: Կ. Պոլսից ուղարկված նամակի հեղինակը պատմելով Ալապաշ գյուղի ավերման և Ազիզ փաշայի զորքերի խժոժությունների մասին, ուստահայերի ուշադրությունը հրավիրում է նրանց «ազգակից և կրոնակից եղբարց դառն վիճակի վերա»: «Հրավեր Ռուսաստանի հայերուն» հոդվածի հեղինակը նյութական օգնություն է խնդրում Զեյթունի հայերի համար, խնդրելով միաժամանակ, որ քրիստոնյա տերութայն մեջ ապրող հայերը չմոռանան «խորը Տաճկաստանումը կրակի ու սրի տակ հալումաշ եղող իրանց եղբարցը»: Տպագրվել են նույն հարցին նվիրված այլևայլ նյութեր (Կ. Պոլսից եկած ճանապարհորդների պատմածները, Սրբուհի Երիցյանի նամակը Կ. Պոլսից, Ֆրանսիական «Նորդ» թերթից թարգմանված մի ծավալուն հոդված, նվիրված Զեյթունի պատմութայնն ու վերջին անցքերին): Բազմաթիվ «խապրիկներ» են տպագրվել երկու հատվածների հայութայն մշակութայն կյանքի նորությունների մասին (թատերական ներկայացումներ, դպրոցների հիմնադրումներ և այլն):

Մարկոս Աղաբեկյանը և Համբարձում էնֆիանյանը բարենպաստ պայմաններ են ստեղծել գրական կարող ուժերի ինքնաՀաստատման, Հայ նոր գրականությունից զարգացման Համար: Նրանք «Կոուենդը» դարձրել են Անդրկովկասի իր ժամանակի լավագույն գրական-բանասիրական Հանդեսը: Ամսագրի Հիմնադրման առաջին իսկ տարին այստեղ տպագրվել է Պերճ Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վեպը, Հետագա տարիներին Խ. Աբովյանի «Օփսաննա» պատմվածքը, Մ. Աղաբեկյանի «Գարեգին» ազգային ողբերգությունը, Մ. Մամուրյանի «Անգլիական նամականին», Գ. Պոռչյանի «Աղասի» ազգային ողբերգությունը, Գ. Շերմազանյանի պատմվածքները և այլն: Թարգմանական գրականությունից տպագրվել են Ժուլիոֆսու «Տասներկու բնած կույս աղջնակներ» Հեքիաթը, Ռուսթավելու «Ընձու մորթի Հագած մարդ» պեմից մի մեծ Հատված, Հաֆիզի, Պուշկինի, Բերանժեի բանաստեղծություններից: Բոլոր այդ ստեղծագործությունները գրված էին աշխարհաբարոյ և իրապես Հաստատում էին «Վերք Հայաստանի» վեպի անգնահատելի գերը ոչ միայն Հայ նոր գրականությունից սկզբնավորման և վերելքի, այլև գրական աշխարհաբարի կայունացման գործում:

«Աղասի» և «Գարեգին» ողբերգությունների Հեղինակները դիմելով Հայ ժողովրդի Հերոսական անցյալին, որտեղ Հայկական սիրտ ու Հոգի էին ուսնում, իրենց խոստովանությունը ձգտել են ներկայացնել նաև իրենց օրերի գրական լեզուն և միաժամանակ օգնել նորաստեղծ Հայ թատրոններին, որոնց թատերադիրներ էին պահասում: Իր օրերի Համար այդ նույնպես Հրատապ պահանջ էր, որովհետև Հայկական լուսավորականությունից Հաջողություն երաշխիքը գպրոցների և մամուլի Հետ մեկտեղ նրանք ամենայն իրավամբ թատրոնն էին Համարում:

Աղիլի թույլ էր քնարերգությունից բաժինը: Ամսագրում տպագրվել են ժամանակի բանաստեղծներ Խորեն Ստեփաննի (Ստեփան Ստեփանյան), Երեմիա Մահակյանի, Հ. Մայաթնովյանցի, Հ. Քուչուրեկյանի բանաստեղծությունները: «Կոուենդը» գրական բաժնի զարգը, սակայն, կազմում էին երիտասարդ, բայց արգեն ճանաչված Գամառ Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) բազմաթիվ բանաստեղծությունները, այդ թվում «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պեմը:

Հետաքրքրական են Գալուստ Շերմազանյանի գրական ստեղծագործությունները: Շերմազանյանը, որ դեռևս 1840-ական թթ. «Կովկաս» լրագրի էջերում տպագրված իր Հոգվածներում օգտվում էր Հայկական բարբառներից,

որոնք ավելի տպավորել էին դարձնում ասվածը, «Կռուկում» տպագրված գեղարվեստական գործերում նույնպես դիմել է բարբառների օգնութայանը: Այսպես, «Իմ նշանածը Արազն ա» կենցաղային պատկերը գրված է Հին Նախիջևանի բարբառով, «Ասրի բեգ և Գիքի» պատմական վիպասանութայան մեջ, որում նկարագրված են պարսկական տիրապետութայան ժամանակների ողբերգական իրադարձությունները, Շերմազանյանն օգտագործել է Ագուլիսի, Ղարաբաղի և Հին Նախիջևանի բարբառները: Նրա երրորդ ստեղծագործությունը բացառապես ազգագրական բնույթ ունի: «Ազգային Հարսանիք» կոչված այդ գրույցը նվիրված է Թավրիզի Հայ ընտանիքների Հարսանեկան արարողությունների նկարագրությանը և գրված է, անշուշտ, այդ գեղեցիկ ավանդույթը ապագա սերունդների Համար պահպանելու նպատակով: Նման ազգագրական բնույթն ունի նաև Ս. Արծրունու «Նոր Պայազիտու գաղթական մշնցվոց նշանդրեքն ու Հարսանիքը» պիեսը:

«Կռուկի» մշտական աշխատակիցներից էր Հայ բանասեր և Հմուտ լրագրող Գևորգ Տեր-Ալեքսանդրյանցը: Ամսագրի էջերում տպագրվել են նրա «Ուխտագնացություն ի Թելեխ» պատմվածքը, որում հեղինակը բարի Հուժժորով նկարագրում է Թիֆլիսի միջին խավի Հայ ընտանիքների կենցաղն ու բարքերը: Հեղինակի երգիծելու անուրանալի շնորհքը դրսևորվել է նաև նրա Հրապարակախոսական երեք ծանրակշիռ հոդվածներում, որոնք գրված են Թիֆլիսի բարբառով: Հոդվածներն ստորագրված են Ծաքար Մանուշակյանց, Քախկըցի վաճառական Գէօ Ավետիսով և Քախկըցի դարաղ Ղաղղ գրական կեղծանուններով: Մանուշակյանցի հոդվածում «Հայերի» և «որդիների» կռիվների ֆոնի վրա քննություն առարկա է դարձել ժամանակի լուսավորականության գաղափարների ողով ապրելու և գործելու անհրաժեշտության հարցը: Գէօ Ավետիսովն իր նամակում ուշադրություն է հրավիրում երիտասարդ գրողներին խրախուսելու, օրիորդաց դպրոց Հիմնադրելու, դպրոցական կրթության և գրականության նկատմամբ պատշաճ ուշադրություն դարձնելու հարցերի վրա: Դարաղ Ղաղղի մատչահարում Ալեքսանդրյանցն անխնայորեն խարազանում է քահանաների տգիտությունն ու անվայել ընթացքը հասարակական կյանքում:

Գ. Տեր-Ալեքսանդրյանցն արձագանքել է և Ստ. Նազարյանի Հայտարարությանը՝ «Մի ընդհանուր հայկական ընկերություն» ստեղծելու վերաբերյալ: Որքան էլ «Կռուկի» խմբագրությունն անհանդուրժող եղավ 1860 թ. եկեղեցու վերանորոգման նազարյանի պահանջի նկատմամբ, Տեր-Ալեք-

ասնդրյանցը երկու տարի անց ոչ միայն «Գեղեցիկ նպատակ և զովելի անա-  
ջարկություն» է անվանում Նազարյանի ծրագիրը, այլև գնահատանքի խոսք  
է ասում նրա արդասավոր գործունեության մասին: Նազարյանը մեծարվում է  
այն բանի համար, որ խթանելով հայ հասարակական կյանքի առաջընթացը,  
անհոգության քնից արթնացրել էր հայությանը, նրա առաջ բացելով «Նոր  
գործունեության ասպարեզ, ասպարեզ կենաց և երջանկության, որից զուրկ է  
հայն» (1862, № 11, էջ 841):

Մարկոս Աղաբեկյանի երախտիքը մեծ է մասնավորապես Խաչատուր Ա-  
րուժյանի վաստակի դիտական նշանակությունը վեր հանելու առումով: Այն  
գրերին, երբ հրատարակվում էր «Կուռնիք», արգեն հրապարակի վրա էին  
«Հյուսիսսփայլում» տպագրված Նազարյանի հանգամանալից ծանոթու-  
թյունները Արուժյանի կյանքի մասին (1858, № 2), տպագրվել էր Սեփան Ոս-  
կանյանի «Խաչատուր Արուժյան» հոդվածը «Արևմուտք» շաբաթաթերթում,  
ինչպես և «Մեռելահարցուկ» վիպակում Նալբանդյանի կողմից տրվել էր  
«Վերք Հայաստանի» վեպի ծանրակշիռ գնահատականը «Եվրոպական կա-  
նոնով»:

«Կուռնիք» էջերում տպագրված երկու ծրագրային հոդվածներում,  
սակայն, փաստորեն զրվում է արուժյանագիտության հիմքը: Առաջինը  
գրանցից խմբագրի հոդվածն էր «Պարոն Խաչատուր Արուժյանը և իր «Զան-  
դին» խորագրով, իսկ երկրորդը Մ. Տեր-Աղաբյանցի «Մեկ քանի խոսք Ա-  
րուժյանի վերա (քանի մի նյութ նրա կենսագրության համար)» հոդվածը: Այս  
հոդվածների հեղինակներն ընդգծելով Արուժյանի «նախախնամությունից  
մեզ ուղարկված տպերջանիկ հանճարի» կյանքի հետ կապված փաստերի  
հրատարակման կարևորությունը, ընթերցողներին ուշադրությունը հրավիրում  
են այդ հարցի վրա: Մ. Աղաբեկյանի հոդվածը նվիրված է Արուժյանի  
ստեղծագործության պատմական նշանակության խնդրին (1860, № 11): Մ.  
Տեր-Աղաբյանցը հրատարակել է Արուժյանի կենսագրությունը, ներկայացրել  
աշխատությունները, մեկնաբանել նրա հայացքը հայոց պատմության,  
գրարար և աշխարհարար լեզուների, հայոց լեզվի և լեզվաշինության մասին:  
Խորին երախտագիտությամբ գնահատելով Արուժյանի ծառայությունը  
ազգին, Տեր-Աղաբյանցը կանխատեսում է նրա անվան և փառքի հա-  
վերժացումը (1861, № 5): Արձագանքելով Մ. Տեր-Աղաբյանցի հոդվածին, Ե.  
Բաստամյանը թարգմանում և հրատարակում է Բարոն Օ. Հաքստհաուզենի

«Ծանապարհորդութիւն» գրքի Հայաստանին նվիրված գլուխը (1862, № 1, 2), իսկ Հ. Էնֆրիաճյանը հաղորդում է, որ արդեն ավարտել է Աբովյանի «Նախաշաւիղի ի պէտս նորավարժից» գրքի տպագրութիւնը:

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «Կուռնկ Հայոց աշխարհին» ամսագրի «Աղբյուր ազգային արդյան պատմութիւն» բաժինը, որտեղ տպագրվել են մի շարք արժեքավոր ձեռագրեր: Դրանցից են՝ Հովսեփ Փոնդոյանի երկու հրատարակումները (Պետրոս դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրութիւնը» և Հովսեփ կաթողիկոսի «Հիշատակարանը»), Աբել արքեպիսկոպոսի «Ծանապարհորդութիւն ի Դավրեժ» ուղեգրական գործը, Ս. Պալասանյանի թարգմանութեամբ Լանգլուայի «Ծանապարհորդութիւն ի Կիլիկիա» և Մովսես Խորենացի և Նրա «Պատմութիւնը» ուսումնասիրութիւնները: 1860-1862 թթ. 15 համարներում Մարկոս Աղաբեկյանի թարգմանութեամբ տպագրվել է Գիզոյի «Պատմութիւն քաղաքակրթութեան, որ ի եվրոպա» ուսումնասիրութիւնը:

«Կուռնկ Հայոց աշխարհին» Հանդեսը, որ «հաստ ամսագրի» լավագույն օրինակներէից է արեւելահայ մամուլի XIX դարի պատմութեան մեջ, գեղարվեստական գրականութեան տպագրութեան հետ մեկտեղ դարձել է նաև պատմաբանասիրական ամսագրի նախատիպը մեզանում: Դրանում մեծ էր Աղաբեկյանի դերը, որը ոչ միայն սիրով հրատարակում էր բանասիրական նյութերը, այլև ջանում էր դրանք ձեռք բերել ընտանեկան արխիվներից, կանխապես խոստանալով այդ նյութերը տպագրել «մեծ շնորհակալութեամբ»:

«Կուռնկ Հայոց աշխարհին» ամսագիրը հրատարակութեան առաջին տարին ուներ 440 բաժանորդ և տարածվում էր ոչ միայն Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում, այլև Կ. Պոլսում, Ջմյուռնիայում, Թավրիզում, Թեհրանում:

Չնայած «Կուռնկի» հրատարակութեան վերաբերյալ հրատարակված հայտարարութեանը, նյութական դժվարութիւնների պատճառով Մ. Աղաբեկյանը 1864-ից դադարեցնում է ամսագրի հրատարակութիւնը:

### «ՅԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ» (1864-1871, 1874-1879)

Արեւելահայ պարբերական մամուլի դասական փուլն ավարտվում է 1864 թ. վերջին, երբ դադարում է «Հյուսիսափայլ» ամսագիրը: Հայ մամուլի



պատմութեան դրան հաջորդած 1865-1871 թթ. ժամանակահատվածը կարելի է անվանել անցման մի առանձին շրջան, որը կամրջոււմ է 60-ականների ժամանակները Գրիգոր Արծրունու բնակի օրերին: Հարուստ չէր անցման շրջանի հայ հրատարակատեսական միտքը, մի բան, որ պայմանավորված էր Ռուսաստանում առաջացած քաղաքական եզնաժամի իրողութեամբ և, համապատասխանաբար, հայ իրականութեան մեջ ստեղծված գաղափարական անբարենպաստ պայմաններով: Այսպես, 1862 թ. ձերբակալվել և 1866-ին Կամիչինի արտորովայրում վախճանվել էր ակնավոր հրատարակատես Միքայել Նալբանդյանը, որի անունն անգամ անվտանգ չէր հիշատակել մամուլի էջերում: 1868 թ. գրաբնութեան գլխավոր վարչութեան կողմից մերժվել էր Ստեփանոս Նազարյանի գրիւմը հրատարակելու «Լապտեր Հայաստանի» ամսագիրը և հայ մեծ լուսավորիչը հարկադրված թողել էր հրատարակատեսութեան ասպարեկը: Գարրիկ Այվազովսկին և Մարկոս Ազարեկյանը իրերի բերումով Հեռացել էին առաջինը Թեոդոսիայից և երկրորդը Թիֆլիսից, 1866 և 1864 թթ. գաղտնիցներով «Մասյաց ազգայնի» և «Կուռնի Հայոց աշխարհին» պարբերականների հրատարակութեւնը: Արեւիահայ իրականութեան մեջ շարունակում էր հրատարակվել «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը Պետրոս Սիմեոնյանի խմբագրութեամբ: 1864 թ. նոյեմբերից նրան է միանում Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհը»:

Խորեն Ստեփանեի (Ստեփան Ստեփանյան) ծնվել է 1840 թ. Թիֆլիսում: Սովորել է նախ Ներսիսյան դպրոցում, ապա Լազարյան ճեմարանում, ավարտել է Մոսկովյաի համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետը գիտութեւնների թեկնածուի աստիճանով: Նա ուսանողական տարիներին բանաստեղծութեւններ է ստղագրել «Հյուսիսափայլում» Իշխան Բագրատունի գրական կեղծանունով: 1862 թ. Ստեփանեի վերագառնում է Թիֆլիս և նվիրվում մանկավարժական գործունեութեան: 1864 թ. ձեռք է բերում նոր միայն գաղարած «Կուռնի Հայոց աշխարհին» ամսագրի հրատարակութեան իրավունքը և «Հայկական աշխարհի կուռնի» խորագրով այն սկսում հրատարակել 1864 թ. նոյեմբերից («Օրագիր ուսումնական և գրականական»): Մեկ տարի անց Ստեփանեի հրատարակում է Էնֆիաճյանի հետ համագործակցելուց և նրան վերագարձնելով ամսագրի հրատարակութեան իրավունքը, 1866-ի հունվարից ինքնուրույն խմբագրում է Հանդեսը, այն վերանվանելով «Հայկական աշխարհ»: Բաժանորդների սակավութեան պատճա-

ուով նա միաժամանակ զբաղվում էր մանկավարժական աշխատանքով, մեծ եռանդ ներդնելով և այդ գործում:

1871 թ. Հուլիսի Ստեփանենն ժամանակավորապես ընդհատում է ամսագրի հրատարակությունը և հոգևոր կոչում ընդունելու նպատակով մեկնում է Էջմիածին: Ձեռնադրվելով վարդապետ, նա երկու տարի մանկավարժական աշխատանք է կատարում Վաղարշապատում և Երևանում: 1873 թ. Ստեփանենն մեկնում է Ծուշի և ստանձնում Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տեսչի պաշտոնը, իսկ 1877-ին հրավիրվում է Բաքու և հաստատվում տեղի երկսեռ դպրոցների վերատեսչի պաշտոնում: Այստեղ նա միաժամանակ լայն գործունեություն է ծավալում իբրև Բաքվի մարդասիրական ընկերության անդամ:

1874 թ. ապրիլին Ստեփանենն Ծուշիում վերականգնում է «Հայկական աշխարհ» հանդեսի հրատարակությունը՝ նոր ուղղությամբ: Այն այժմ հրատարակվում էր իբրև մանկավարժական և կրոնական օրագիր: Թեև Ստեփանենն աշխատում էր մեծ ոգևորությամբ, բայց հեռավորությունը Թիֆլիսում գտնվող դրաքննական կոմիտեից, ինչպես և թղթակիցների պակասը մեծ անհարմարություններ էին ստեղծում ամսաթերթը ժամանակին լույս ընծայելու գործում: Խմբագիրն ստիպված էր միացյալ համարներ տպագրել, մի բան, որ դառնում է սովորական երևույթ և անդրադառնում ամսագրի որակի վրա: 1878 թ. Ստեփանենն հրավիրվում է Էջմիածին, որտեղ երկու տարի դասախոսական աշխատանք է կատարում նոր Հիմնադրված հոգևոր ճեմարանում և խմբագրում է «Արարատը»: Որքան հաճախակի էին դառնում Ստեփանենի տեղափոխությունները, այնքան անկանոն էր հրատարակվում նրա ամսագիրը: 1876-ին այն հրատարակվել է Գանձակում, ապա Թիֆլիսում, 1877-1878-ին Բաքվում: Ամսագրի 1879 թ. միակ և վերջին համարը տպագրվել է Երևանում:

Մանկավարժական գիտությունների մեջ կատարելագործվելու նպատակով 1880 թ. Ստեփանենն Մայր Աթոռի կողմից գործուղվում է Եվրոպա: Վերադարձից հետո, նա մի քանի տարի մանկավարժական ու քարոզչական աշխատանք է կատարում զանազան քաղաքներում: 1884-1887 թթ. այդ զեզերումների տարիներին Ստեփանենն ծրագրում է ստեղծել մանկավարժական մի մասնագիտական ուսումնարան՝ մանկավարժանոց և իբրև այդ նպատակի իրականացման առաջին քայլ, հիմնադրում է «Մանկավարժանոց» ամսագիրը, որը լույս է տեսել Թիֆլիս, Ախալցխա, Պետերբուրգ քաղաքներում,

անկանոն պարբերականությունը: Նեղ մասնագիտական, փոքրածավալ այդ գրքույկները Ստեփանեն տպագրում և ձրի ուղարկում էր Հայկական դպրոցներին:

1887 թ. Ստեփանեն աքսորվում է Ղըրմի Սուրբ Էմաչ վանքը: Այստեղ, մենություն մեջ, փոքրիկ մի ընդմիջումով, նա անց է կացնում իր կյանքի 12 տարիները: Աքսորից նա ազատվում է 1900 թ. աշնանը, բայց չհասած էջմիածին, վախճանվում է Թիֆլիսում: Ինչպես երևում է, ռուսական և եվրոպական կենտրոններում կրթություն ստացած Հայ մանկավարժի բացառիկ եռանդը չէր համապատասխանում ներքին գործոց նախարարություն հեռաձար նպատակներին և Հայ ազգային դպրոցների նկատմամբ դարավերջին կիրառվող սեռորի տարիներին այդ անհանգիստ գործիչը մեկուսացվում է կենդանի կյանքից:

«Հայկական աշխարհ» ամսագրի համար բնութագրական էր լիբերալ-լուսավորական ուղեգիրը, որը չափավոր մի դիրքորոշում էր «Հյուսիսսփայլից» դեպի «Մեղու Հայաստանին»: Իրրե ժառանգություն Ստեփանեն «Հյուսիսսփայլից» վերցրել էր ժողովրդի կրթության և լուսավորության ծրագրերը, որը և ընկած էր նրա ամսագրի հիմքում: «Հյուսիսսփայլ» օրագիրը ապրում է մեր մեջ, - գրում է նա 1866 թ., - նա չէ կարող մեռնել: Մեծ և մշտապես է «Հյուսիսսփայլի» ոգին»: Չնայած անվերապահ այս համակրանքին, Ստեփանեն միաժամանակ հայտնում է, թե քանի որ նոր ժամանակները նոր պահանջներ են առաջադրում լրագրողներին, ինքը պետք է քայլի իր ուրույն ճանապարհով: Միշտ ջանալով ամսագիրը հեռու պահել ընդգծված կուսակցական ուղղությունից, նա այն միաքն էր հայտնում, որ «Հայկական աշխարհը» պետք է ծառայի միմիայն «ընդհանուր ազգային ինտերեսներին, Հայերի շահերին»: Ամսաթերթի հրատարակության առաջին տարիներին Ստեփանենին հաջողվում է լայնորեն լուսարանել Անդրկովկասի քաղաքների և դավառահայության հասարակական-մշակութային կյանքը: Այս կարգի նյութերը գետեղվում էին «Մեր ներքին գործեր» բաժնում, որը ժամանակին կարգացվում էր մեծ հետաքրքրությամբ: Այստեղ Ստեփանեն տպագրել է և հանդամանայից ակնարկներ նվիրված Կովկասի և Ռուսաստանի հայաբնակ քաղաքներին, ծանոթացրել Կ. Պոլսի, Չմյունխենի և արևմտահայ դավառների առօրյային: Բաժնում զգալի տեղ է հատկացվել նաև «Հայկական աշխարհ» և «Մեղու Հայաստանի» թերթերի միջև ծավալված երկարատև, միօրինակ ու սաղակալի բանավեճերին:

«Մեր ներքին գործեր» բաժինը Ստեփանեն թեև կազմում էր Կոմս Էմմանուելի «Հիշատակարանի» ակնհայտ նմանությունը, բայց այն չունեւր «Հիշատակարանի» խորությունը, հարցադրումների սրությունը և նրա գեղարվեստական արժանիքները: Այդ բաժնի տակ Ստեփանեն ստորագրում էր Հայաստանի Թիֆլիսեցի Ռայ գրական կեղծանուններով:

«Մեր ներքին գործեր» բաժնին թղթակցում էին Ռուսաստանի և Գերմանիայի համալսարանների մի քանի ուսանողներ, որոնք հայ ընթերցողներին հաղորդակից էին դարձնում ժամանակի ուսական և եվրոպական կյանքի առաջադեմական երևույթներին ու գիտական աշխարհի նորություններին: Այդ թղթակիցներն էին Գրիգոր Արծրունին, Ջաքարե Գրիգորյանը և Հարություն Մխրիմանյանը:

1867-1871 թթ. «Հայկական աշխարհի» էջերում տպագրվել են Գրիգոր Արծրունու ավելի քան 35 հոդվածներն ու թղթակցությունները: Նրա ուշադրությունյան առարկան են դարձել երիտասարդության համալսարանական կրթություն, հասարակական դասախոսությունների կայուն սխտամ ստեղծելու, գրականության զարգացման հետ կապված հարցերը: Իր հոդվածներում նա առանձնահատուկ տեղ է նվիրել ազգային կապիտալի ստեղծման, հայ վաճառականների ձեռներեցությունը խրախուսելու, Կովկասի բնական հարստությունները ուսումնասիրելու և դրանք շահագործելու խնդիրներին: Գր. Արծրունու աշխատակցությունը Ստեփաննի հանդեսին մի գլխով բարձրացրել է «Հայկական աշխարհը» ոչ միայն ժամանակի հայ պարբերականներից, այլև հենց իր Ստեփաննի ամսագրի միջին մակարդակից:

Պետերբուրգի համալսարանի ուսանող Զ. Գրիգորյանի հոդվածներում շոշափվում էին ժամանակի ուսական մանկավարժական գիտություն հետ կապված հարցերը: Ծատ բեղուն էր Ղզլարի թղթակից, գրող և հրատարակատու Հովհաննես Քուչուրեկյանի գրիչը:

«Հայկական աշխարհ» ամսագրի չորսամյա դադարից հետո, երբ այն սկսում է հրատարակվել Ծուչի քաղաքում, իրրև կրոնական օրգան, «Մեր ներքին գործեր» բաժինը երևում է «Մեր ձայնը» նոր խորագրի տակ: Հետագայում գրաքննության հետախույզության պատճառով անհնար է դառնում պահպանել կենդանի այդ բաժինը: Ավելին, ամսագրի հրատարակության վերջին տարիները թեև համընկնում էին ուս-թուրքական պատերազմի ժամանակներին, Ստեփաննի գրեթե չէր արձագանքում այդ իրադարձություններին: Աշխատանքի բերումով շրջագայելով Կովկասի դանդան քաղաք-

ներում և ծանրաբեռնված ամենօրյա հոգսերով, նա հնարավորություն հուներ բոս պատշաճին լուսարանել օրվա կենսական հարցերը: Առհասարակ հրատարակության երկրորդ շրջանում «Հայկական աշխարհ» փաստորեն կտրված էր հայ իրականությունից և իր նշանակությունը պահպանում էր իր բնական կարգով, կրոնական և ինչ-որ չափով միայն գրական օրգան:

«Հայկական աշխարհի» հրատարակության տարիները համընկնում են դպրոցական գործի աշխուժացման ու վերելքի ժամանակներին: Այդ տարիներին բաղմանում են Հայկական ծխական դպրոցները, բարելավվում են ներսիայան դպրոցի, Երևանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի թեմական դպրոցների աշխատանքները: Տասը տարվա ընթացքում, 1860-ից մինչև 1870 թվականը Ռուսաստանում հայ դպրոցների թիվը 40-ից հասնում է 138-ի, որոնցից 11-ը օրիորդաց դպրոցներ էին: Այդ դպրոցներում աշխատում էին 800-ից ավելի հայ մանկավարժներ<sup>41</sup>: Հայ իրականության պահանջներին ներդաշնակ ձևավորվում և զարգանում է ազգային մանկավարժական միտքը: Իրենց ընթացիկ աշխատանքներին զուգընթաց հայ մանկավարժները մամուլի էջերում քննարկում էին ուսման պրոցեսի հետ կապված բազմապիսի հարցեր: Այս պայմաններում Հասունանում է և մասնագիտական պարբերականներ ստեղծելու խնդիրը:

Խորեն Ստեփանեն անմիջական մասնակցություն ուներ ազգային-լուսավորական այս շարժմանը: Նրա ջանքերով Թիֆլիսում հիմնադրվել էին Մարիամյան ուսումնարանը և զրա մասնաճյուղը առաջին երկուսն էլ դպրոցը Հավրարբում: Նրան է պատկանում նաև արևելահայ առաջին գրական-մանկավարժական ամսագիր հիմնադրելու պատիվը:

Ստեփանեի ամսագիրը հարուստ լուրեր է հարպարակել գավառների և Թիֆլիսի հայ դպրոցների վիճակի, զրանց առօրյախի մասին, բազմաթիվ արժեքավոր տեսական, մեթոդական և թարգմանական հոդվածների միջոցով օգնել և ուղղություն ավելի հայ մանկավարժներին: «Հայկական աշխարհ» մանկավարժական հոդվածների մեծ մասը պատկանում է Ստեփանեի գրչին: Իր տեսական, դիդակտիկական և թարգմանական հոդվածներով նա բարձրացրել է Հայկական դպրոցների բարենորոգման հարցերը, հիմնավորել սոցիալական բոլոր խավերի համար կրթության հավասարությունն ապա-

<sup>41</sup> Տե՛ս Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970 թ.:

Հովելու անհրաժեշտությունը: Տարիների մանկավարժական հարուստ փորձի շնորհիվ նա քննութայն է առել ուսումնական պրոցեսի մի շարք կարևորագույն հարցեր, որոնցից էին աշակերտների մտավոր և ֆիզիկական դաստիարակութայն զուգակցումը, իբրև ուսումնական ծրագրերի կարևորագույն ճյուղեր՝ մարմնամարզութայն դասերի, խաղերի, էքսկուրսիաների պլանավորումը: Մատաղ սերնդի բնավորութայն կազմավորման գործում Ստեփանեն մեծ նշանակություն էր տալիս աշակերտների զեղազիտական դաստիարակութայնը, որի համար անփոխարինելի էր գտնում երգի ու երաժշտութայն ուսուցումը, թատերական ներկայացումների կազմակերպումը: Անձամբ ինքը, Ստեփանեն, մանուկների բարոյական դաստիարակութայնն օժանդակելու նպատակով փոխադրել և գրել է մի քանի մանկական պիեսներ, որոնք բնամարդիկ են նրա հիմնադրած Մարիամյան դպրոցում: «Հայկական աշխարհի» էջերում նա տպագրել է այդ պիեսները, ինչպես և Հատվածներ՝ Հայոց լեզվի և կրոնի իր կազմած դասագրքերից:

1874 թվականից, երբ ամառգիրք փոխում է իր բնույթը և Հրապարակվում իբրև մանկավարժական և կրոնական օրագիր, Ստեփանեն հարուստ բաժին է հատկացնում կոնկրետ ուսուցողական նյութերի: Այստեղ տպագրվում են կրոնական օրինակելի դասեր, բարոյական առածներ, բնագիտական հոդվածներ, թվարանական խաղեր, հետաքրքրաշարժ գրույցներ և այլն:

«Հայկական աշխարհի» էջերում մանկավարժական հոդվածներ են տպագրել նաև Գ. Արծրունին, Զ. Գրիգորյանը, Հ. Առաքելյանը, որոնք ժամանակի ուսանական և եվրոպական մանկավարժական գիտութայն ընձեռած հարուստ նյութերի հիման վրա քննարկում էին հայկական դպրոցների կատարելագործման ուղիները, մշտապես առաջնահերթ համարելով կանանց կրթութայն ասպարհովման խնդիրը: Մոսկվայի համալսարանի ուսանող Հ. Միրիմանյանի թարգմանութայնը ամսագրի էջերում տպագրվել են Ֆրանսիացի մանկավարժ Մասեի «Մի կտոր հացի պատմությունից» ժամանակին մեծ տարածում գտած աշխատությունը և Վ. Բելինսկու «Մանուկների կրթութայն և ծնողական սերի վերա առհասարակ» հոդվածը: Ուսանող Լ. Թյուսիկյանի թարգմանութայնը տպագրվել է Ն. Գորբոլյուբովի «Բանի մի խոսք դաստիարակութայն վերա» հոդվածը, իսկ Ի. Ա.-յանի թարգմանութայնը՝ Դ. Պրասերի «Ուսումնարան և կյանք» ծավալուն հոդվածաշարը:

Խորեն Ստեփաննին շատ է զբաղեցրել նաև Հոգևորականության դաստիարակության հարցը: Իր Հոգվածներով նա եկեղեցականներին ուսուցանում էր այն ճշմարտությունը, որ գիտությունը որքան էլ անհրաժեշտ է հայ մտավորականության համար, «ևս առավել կարևոր է սա Հոգևորական կոչումն արժանապես և պատվով կատարելու համար»: Ամսագրում Ստեփաննին գետեղել է կրոնական բնույթի մի շարք Հոգվածներ, ճառեր, քարոզներ, քննարկել է եկեղեցական առօրեական հարցեր, վերլուծել կրոնական տեսական խնդիրներ:

Ուսումնական և զբաղանական իր հանդեսի էջերում Ստեփաննին մեծ տեղ է արամադրել գեղարվեստական զբաղանությունը և զբաղանություն տեսության հարցերին: Արժանին հատուցելով Խ. Արուսյանի, Գ. Պոռչյանի, Ղ. Աղայանի, Ա. Շահազիզի ստեղծագործությունը, Ստեփաննին նրանց ստեղծած զբաղանություն կարևորագույն չափանիշը համարում էր ազգային ոգին, ազգային կյանքի ճշմարտացի արտացոլման կարողությունը: Ազգային զբաղանություն հետագա զարգացումն իր հերթին պայմանավորված էր ժողովրդի բարոյական զարգացման պատշաճ մակարդակով, ուստի և պահանջում էր բարձր Հիմքերի վրա դնել ժողովրդի կրթություն և լուսավորություն գործը:

Գրիգոր Արծրունին ևս քննարկել է հայ զբաղանություն ընթացիկ վիճակը: Քննադատելով կյանքից կտրված «մաքուր արվեստի» նմուշները, ինչպես և զբարարակցու պաթիակի ճառերով լեցուն զբաղան երկերը, Արծրունին առաջնահերթ է համարել ուսուցողական զբաղանություն ստեղծումը: Նա մեծ կարևորություն է ավել նաև հայոց լեզվի զարգացման, աշխարհաբարի մշակման խնդրին:

«Հայկական աշխարհի» հրատարակություն հատկապես առաջին շրջանում Ստեփաննին ապագրել է իր ստեղծագործությունները քնարական պարզունակ բանաստեղծություններ, «Արա Գեղեցիկ և Նուարդ» պոեմը (գրված Խորեն Գայֆաջյանի նյութերի հիման վրա), թարգմանական մանկական պիեսներ: Հայոց թատրոններին օգնելու նպատակով ամսագրի առաջին համարներում նա ապագրել է իր փոխադրած «Լևոն Առաջին Հայկական թագավոր» պատմական դրաման: Ուշագրավ են Ստեփաննի կատարած թարգմանությունները ուսական և եվրոպական պոեզիայից, որոնց մեջ քիչ է են քաղաքացիական պոեզիայի լավագույն նմուշները: Այսպես, նա թարգմանել է Պուշկինի, Նեկրասովի, Օդարյովի, Պոլեժանի, Վայնբերգի, Հայնեի բանաստեղծությունները, Լեսպարգի «Հունգարական երգը», Բե-

րանժեի մի բանաստեղծութունը և նրա կենսագրութունը: Նա տպագրել է Ֆրանսերենից իր թարգմանած «Հալ Մենի Կանտիմիր» պատմվածքը, որը «Հյուսիսսփայլի» էջերում տպագրվել էր դեռևս 1858թ.:

«Հայկական աշխարհ» ամսագրում շարունակաբար տպագրվել են Հովհաննես Քուչուքեկյանի բանաստեղծութունները՝ Հարություն Ոստանիկ գրական կեղծանունով: Քուչուքեկյանը միաժամանակ թարգմանել է Վ. Հյուգոյի, Շիլլերի, Ի. Կոլլովի, Մ. Միխայլովի բանաստեղծութունները, իսկ Թոմաս Մուրի «Պատանի երգիչ» (իռլանդական երգ) բանաստեղծութունը նվիրել է Նալբանդյանի հիշատակին:

Անհամեմատ աղքատ էր ամսագրի արձակի բաժինը, որը նույնպես լրացվում էր թարգմանութուններով (Բոկաչչո, Գրիմմ եղբայրներ, Վ. Հյուգո, Մոլիեր, Ալֆոնս Դոդե): Տպագրվել է ն. Ալադաթյանի «Վայ իմ կորած հիսուն ոսկի» վոդևիլը, որը հայ ուսանողները Ստեփաննի մասնակցությամբ 1859 թ. հունվարին բեմադրել էին Մոսկվայում: Ամսագրի թարգմանութունների բաժնում իրադարձութան նշանակութուն ուներ ն. Դորբոլյուբովի «Հայր Ալեքսանդր Գավազցին և նրա քարոզները» հրաշլիի հոդվածը, որը թարգմանել էր Փիլիպոս Վարդանյանը: Այն ջատագովում էր իտալական ժողովրդի ազատագրական պայքարի հերոսներին:

Խորեն Ստեփաննի զգալի տեղ է նվիրել նաև Հայագիտական մտքի զարգացմանը արտասահմանում և հայ իրականության մեջ, հոդվածներ է նվիրել խոշոր հայագետների գործունեությանը (Վ. Լանգլուա, էդ. Դյուլորիե, Մ. Բրոսսե, Մ. Էմին, Ք. Պատկանյան և ուրիշներ): Հայագիտության բնագավառում Ստեփաննի ծառայությունն անգնահատելի է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար նրա բարձրարժեք թարգմանությամբ, որից մի շարք հատվածներ հրատարակվել են ամսագրում:

Թեև «Հայկական աշխարհը» հրատարակության երկրորդ շրջանում տպագրվում է մեծ ուշացումներով և կորցնում իր երբեմնի հետաքրքրությունն ու գործուն նշանակությունը, այդուհանդերձ մեծ է Ստեփաննի-լրագրողի ծառայությունը հայ մշակույթին: Նա հայ դպրոցին, գրականությանը, թատրոնին և հայագիտությանը ծառայել է նվիրումով, շուրջ մեկ և կես տասնամյակ ընթերցողների մեջ բորբոքել գիտության և կրթության սերը, նրանց ուսուցանել արթուն պահել ազգային ինքնաճանաչության ոգին:



# Գ Լ ՈՒ Խ Ե Ե Ր Կ Ր Ո Ր Դ

## ԱՐԵՎՄՏԱԿԱՅ ՄԱՍՈՒԸ

«ՄԱՍԻՍ» (1852-1908)

1852 թ. «Մասիս» հիմնադրմամբ նոր փուլ է բացվում արևմտահայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ: Ստեղծվում է մի պարբերական, որն ամբողջովին հավատադրված էր լիբերալ-լուսավորական գաղափարախոսությունը, ազգային լինելով հրատարակվում էր մասնավոր հիմունքներով և այդ առումով էլ անկախ էր: Իր գոյությունը երկարատև շրջանում (1852-1908) թերթը բարձրացրեց ազգային կյանքի բազմանիստ հարցեր, որոշակի օբյեկտիվությունը պարզաբանեց ու գնահատեց թուրքական բռնապետության մեջ ափսոսելի իրավիճակը և այնտեղ ապրող ժողովուրդների, անչուշտ, առաջին հերթին հայ ժողովրդի, սոցիալական ծանր կացությունը, պայքար մղեց սահմանադրության, հեռեպես նաև բուրժուական առաջադիմական սկզբունքների համար, սուր բանավեճի մեջ մտավ հետադիմական մտայնության ներկայացուցիչների հետ, իր գրական-թարգմանական նյութերով օգնեց ընթերցողի գեղագիտական ճաշակի բարձրացմանը, վերջապես, եվրոպական ժողովուրդների կյանքին ու քաղաքական շրջադարձային անցքերին նվիրված նյութերով կապեց արևմտահայ միտքը եվրոպականի հետ անվերապահորեն հարելով եվրոպական ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին:

«Մասիս» շարաթաթերթը հիմնվել է 1852 թ. փետրվարի 2-ին: Փարիզից 1851 թ. Կ. Պոլիս վերադարձած Կարապետ Ություճյանի մոտ Գերագույն ժողովի որոշմամբ բանախցելու եկած պատգամավորներին Խորասանճյան Պետրոս ամիրային և Հ. Կրճիկյանին, «Մասիս» ազգա խմբագիրն առաջարկում է երեք պայման իրեն հանձնել լրագրի արտոնատիրությունը, իրեն թողնել լրագրի շահն ու վնասը և «Հայաստան» անունը փոխարինել «Մասիսով», պահանջներ, որոնք ընդունվում են: Կ. Ություճյանի խմբագրությունը թերթը լույս առավ մինչև 1884 թ., որից հետո մեկ տասնամյակ, նրա արտոնա-

տիրությամբ, այն Հրատարակում էր «Արևելքի» վարչութիւնը, իսկ 1892 թ. «Մասիս» Հանդեսի խմբագրութիւնը ստանձնեցին գրական նշանավոր դեմքեր Գրիգոր Զոհրապը, Տիգրան Կամսարականը և Հրանտ Ասատուրը:

«Մասիսին» աշխատակցել են ժամանակի գրեթե բոլոր նշանավոր դեմքերը՝ Նիկողայոս Զորայանը, Մատթեոս Այվատյանը, Մատթեոս Մամուրյանը (առաջին տասնամյակ), որոնց այնուհետև միացել են (1860-1870) Հակոբ Ոսկանը, Սրապիտն Լեքիմյանը, Համբարձում Ծիգմեճյանը (Արմենակ Հայկունի), Վահան Պառնասյանը, Թովմաս Թերզյանը, Մադաթիա Գարագաշյանը, Մարկոս Աղաբեկյանը, Մկրտիչ Նուրիկյանը (նաև Պարույր ծածկանունով), մինչև «Մասիսը» շաբաթաթերթից վերածվեց երկօրյա թերթի (1870-1879) Ծերենցը (Հովսեփ Եղմանյան), նշան Ծիվանյանը՝ բանասիրականներով, Համբարձում Իփեկչյանը՝ մանկավարժական տեսութիւններով, Հակոբ Պարոնյանը՝ «Կամիթներով», Խորեն Նար-Պեյը, Խորեն Ալըբայանը և ուրիշներ:

Կարապետ Ություճյանը ծնվել է 1823 թ., արդուկարար Սիմոն աղայի ընտանիքում, որտեղից և ծագում է նրա ազգանունը: Սկզբնական կրթութիւնը ստացել է Կ. Պոլսի Պալատի, ապա Սամաթիայի թաղային վարժարաններում, աշակերտել է նշանավոր արևմտահայ պատմաբան Ավետիս Պերպերյանին: 1839 թ. ընդունվել է նոր բացված Սկյութարի ճեմարանը, բայց Հայտնի պատճառով ճեմարանի շուտափույթ փակումը ստիպել է Ություճյանին ուսումը շարունակել ինքնակրթությամբ: 1844 թ. մասնավոր դասեր է վերցրել Պետրոս Խորասանճյանի տանը, իսկ 1848 թ. աչքի ընկնող մանկավարժ Խաչատուր Պարտիզպանյանի և մի խումբ այլ երիտասարդների հետ մեկնել է Փարիզ, ուր որպես ազատ ունկնդիր Հաճախել է Առևտրական բարձրագույն վարժարան, հետևել է Սորբոնի Համալսարանի և Կոլեժ դը Յրանսի դասընթացներին, հիացմունքով ունկնդրել Ֆրանսիացի նշանավոր պատմաբան Միշլեի դասախոսութիւնները:

Ություճյանը եղել է սահմանադրական ժողովի անդամ, քաղաքական ժողովի ատենադպիր, դպրոցների հոգաբարձու, անդամակցել է կաթողիկոսական Հանձնաժողովներին, թաղային ուսումնական խորհուրդների աշխատանքներին և այլն:

Որպես Հրատարակախոս Ություճյանը թե՛ բանավեճի մեջ է կցել «Մեղվի» (Հ. Արվաճյան), «Մեծմուսյը Հավատիս» կաթողիկոսներալ խմբագիր Հ. Վարդանյանի, պահպանողականության ներկայացուցիչ Հ. Չամուռճյանի

(«Զուհայ», «Երեւակ») հետ: Հիմնավոր կերպով զբաղվել է թարգմանչական գործունեութեամբ. բնագրից թարգմանելով «Գաղտնիք հավատաքննութեան», Էժեն Սյուրի «Թափառական հրեան», Ժյուլ Վեռնի «Քսան հազար փարսախ ծովերու տակ», «Հինգ շաբաթ օդապարիկով», «Կրանտ նավապետին որդիքը», «Ուղեորութեան երկրից ի լուսին» և այլ գրքեր:

Կ. Ությունյանի չափավոր լիբերալիզմը, երբեմն ծայրահեղ զգուշավորութեանը առիթ են տվել, որ ժամանակակիցներն ու հետնորդները նրա մասին խոսելիս ոչ առանձին սիրով շեշտեն նրա հենց այդ հատկանիշները: Թերեւս նրանք իրավացի են իրենց գնահատականի մեջ, եթե մանավանդ հաշվի առնենք, որ նրա կողքին ասպարեղ էին եկել այնպիսի կրքոտ ու փայլուն հրատարակիտոսներ, որպիսիք Հ. Սրվանյանը, Ա. Հայկունին, Կ. Փանոսյանը, Գ. Զիլինկիրյանը, Մ. Մամուրյանն էին, և որոնց ելույթները, մանավանդ Հ. Սրվանյանի արձատական գեմոկրատիզմը, ինչ-որ տեղ ժամանակավրեպ էին դարձնում Կ. Ությունյանի և «Մասիս» հանդարտ լիբերալիզմը:

Այսուհանդերձ, այսօրվա դիրքերից «Մասիսը» պիտի դիտենք որպես պոլսահայ նոր շրջանի հրատարակիտոսութեան այն պարբերականը, որը, հաղթահարելով քառասունական թվականների պաշտոնական հրատարակիտոսութեան մեջ իշխող պահպանողական ուղղութեանը, իր տպագրած հարուստ նյութով լայն ակոս բացեց եվրոպական մակարդակի լրագրական արվեստի և հետագա գեմոկրատական մամուլի համար:

1852 թ. առաջին համարում «Մասիսը» ընթերցողներին մանրամասն ծանոթացնում է թերթի նպատակներին ու քաղաքական ուղղութեանը:

Ըստ իրենց բովանդակութեան, թերթի նյութերը գետեզվում են հինգ բաժիններում, որոնք են՝ ազգային, քաղաքական, տնտեսական, բանասիրական և խոսք լուրեր:

1861 թ. գեկտեմբերի 27-ի «Ազգը» ընթերցողներին հայտնում է, որ գալիք նոր տարուց մայր թերթին կից լույս է տեսնելու նաև «Մանրալուրք Մամիս լրագրոս» անունով կցորդը, որը և իրոք իրագործվում է:

Թերթի № 1-ում ազգաբարձած նպատակադրումները հանդեցնում են այն եզրակացութեանը, որ «Մասիսը» ազգի բարեկեցութեան և առաջընթացի հիմնական նախապայմանը համարում է լուսավորվելը, դպրոցներ կառուցելը, կանանց ու աղջիկներին կրթելը, որը ազգի իմացական, բարոյական ու նյութական բարօրութեան հիմքն է:

իհարկեմ, թերթի խմբագիրը գիտեմ և տեսնում է ազգի կամ ժողովրդի սոցիալական շերտավորումը և դրանից բխող հետևանքները: Սակայն նա աշխատում է համահարթել այդ հակասությունները և շարադրում է իր սկզբունքները: «Մենք կկարծենք, - գրում է «Մասիսը», - որ ազգի մը վերին, միջին ու ստորին կարգերը իրարու հետ անանկ սերտ կապակցություն մը ունին, որ մեկ կարգին աղեկությունը կամ գեշությունը հարկավ մյուսներուն ալ կհասնի, և թե ամեն կարգ իր վիճակին համեմատ հարկավ պաշտոն մը, իրավունք ու պարտք ունի կատարելու, և մասնավորապես վերին կարգի պաշտոնն է հոգալ, խնամել ու հսկել, միջին կարգին պաշտոնն է հնազանդիլ ու գործակից ըլլալ, ու ստորին կարգի պաշտոնն ալ անսալ ու երախտագետ ըլլալն է»:

Ազգային հարցը «Մասիսում» իր տրամաբանական լուծումն ուներ, որը հատկապես 60-ական թվականներից հանգում էր Եվրոպայի օգնություններին: Ինչ վերաբերում է Թուրքիայի քաղաքակրթություն և կայսրության բոլոր ազգությունների հետ միասին հայերի ինքնորոշվելուն, ապա այն թույլ հույսերը, որ այդ կապակցությունը «Մասիսը» կապում էր Թուրքական բարենորոգումների հետ, չուտով չոգիացան, և թերթը խմբագրի հետ միասին սկսեց հավաստել, որ Թուրքիայի համար առայժմ վաղաժամ է առաջադիմության մասին խոսելը, երկրի բարձրագույն իշխանավորները իրենք չեն համակրում 1839 թ. հռչակված Հաթիթ-ի շերիֆը, չեն ուզում այն կիրառել գավառներում, Թուրքիայում գեո շատ քիչ են լուսավորության ու առաջադիմության համար անհրաժեշտ հիմնարկները:

Ազգային շահերով և սեփական բուրժուազիայի բարգավաճումով շահագրգռված թերթը հույսը, համենայն դեպս մինչև Բեռլինի վեհաժողովը, կապում էր ոչ թե Թուրքիայի ներքին կատարելագործման, այլ Եվրոպայի վճռական միջամտության հետ (1863, № 576 և այլ համարներ):

Որքան էլ, սակայն, արևմտահայերի քաղաքական վիճակի բարելավման միտումներն առնչվում էին Եվրոպայի հետ, պետք էլ այդ հանգամանքը չփոթել հայ ազգային բուրժուազիայի բուն շահերի հետ՝ երկրի ներքում, որտեղ նրանք, տնտեսական որոշակի կշռի հասնելու մղումով, շահագրգռված էին Թուրքական ներքին շուկայի բարգավաճմամբ և բուրժուական հարաբերությունների զարգացմամբ ու բնականաբար աճածությունները էին ընդունում եվրոպական տերությունների վարած գաղութային քաղաքա-

կանուխյունը Թուրքիայում, քաղաքականություն, որն անդամալուծում էր որոշակի քայլեր անող Հայ, Հույն, Հրեա ձեռնբերեցների նախագծումները և, արագ անկման դատապարտելով տեղական առևտուրն ու արդյունաբերությունը, նրանց դարձնում էր եվրոպական մեծածախ առևտրի միջնորդներ միայն:

Հալատարմադրվելով այս ուղղությունը, «Մասիսը» պարբերաբար տպագրում է նյութեր, որոնք արտացոլում են եվրոպական տերությունների կողմից Թուրքիայի գաղութացումը, և քաջալերում է տեղի Հայ և այլազգի Հարուսաններին, որոնք Հանձն են առել օգնել տերությունը Հրաժարվելու մեծ պետությունների առաջարկած փոխառություններից:

Արտաքին տնտեսական և քաղաքական ճնշումից և դրան զուգակցվող ներքին փլուզումից էլ բորոնող կայսրությունը փորձում էր քաղաքակրթվել, բարենորոգվել, իսկ բարենորոգումների ղեկն իրենց ձեռքն առած տերությունները և մասնավորապես Անգլիան ու Ֆրանսիան աշխատում էին Օսմանյան կայսրությանը շահագրգռված երկրներին և առաջին Հերթին Ռուսաստանին Համոզել, թե «Հիվանդ» երկիրը պետք չունի բաժանման, քանի որ բարենորոգումների ճանապարհով նա աստիճանաբար կհասնի զարգացած երկրների մակարդակին ապահովելով նաև ենթակա ժողովուրդների բարեկեցությունը:

Այս տեսակետից առանձնակի կարևորություն են ստանում այն նյութերը, որոնք վերաբերում են թուրքական կառավարության կողմից բարենորոգումներ անցկացնելու ճիգերին և դրանց մեծ մասի ձախողումներին կամ անարդյունավետությանը, որոնց թվում էին անշուշտ մեկ Հետաքրքրող Հռչակումները կայսրության բոլոր ազգերի Հավասարության, անձի և գույքի ապահովության, կրոնի ու դավանանքի ազատության մասին:

Եվրոպական տերությունների թելադրանքով երկրի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ պետության ուշադրությունն ուժեղացալ Հատկապես Ղրիմի պատերազմի տարիներին (1853-1856), երբ զգալի ծավալներ էին բնդուևում կայսրության սահմաններից քրիստոնյաների գեպի Ռուսաստան գաղթելու գեպերը:

1853 թ. պատերազմական իրադարձություններից առաջ արտաքին գործոց նախարար նշանակված Մուստաֆա Ռեշիդը, իր մտտ կանչելով Կ. Պոլսի Հայոց և Հույների պատրիարքներին ու Երուսաղեմի պատրիարքի փոխանորդին, Հանդիսավոր կերպով նրանց է Հանձնում սուլթանական բարձրագույն

Հրովարտակը (Հաթթի շերիֆ), որը «Հպատակ» քրիստոնյա ժողովուրդներին խոստանում էր դավանանքի ազատություն և կյանքի ապահովություն: Սուլթանական հրամանը «Հկատարելու», մահմեդականների կողմից վերավորանքներ ու նեղություններ կրելու դեպքում անմիջապես պետք էր դիմել Բարձր դուռ (1853, № 70-71):

Քրիստոնյաների նկատմամբ այս «Հոգատարությունը» շարունակվում է նաև պատերազմի ընթացքում: 1854 թ. հոկտեմբերի համարում «Մասիսը» դարձյալ բավական տեղ է հատկացնում կայսերական նոր Հրովարտակին, որը, թերթի վկայությամբ, «գրավել է բոլոր Եվրոպայի ուշադրությունը»: Դրա հիմնական բովանդակությունն այն էր, որ «օրինաց առջև քրիստոնեից քաղաքական հավասարությունը, ամեն քաղաքական ու զինվորական պաշտոններու անոնց հասնիլը, գլխահարկին տուրքին ջնջվիլը արդեն որոշված են...: Ողբալի անկարգություններուն առաջին առնելու ու ասկե ետև ընողները, պատժելու համար հատուկ դատաստանագիրք մը անմիջապես պիտի առաջարկվի» (1854, № 142):

Նման Հրովարտակներն ամեն անգամ մեծ երախտագիտություններ էին լցնում պալատին մոտ կանգնած հայերի սիրտը, և «բարեգութ ու Հպատակասեր» կայսերն իրենց շնորհակալությունը հայտնելու համար Բ. դուռ էին գնում պոլսահայ նշանավոր ամիրաներն ու աղաները: Ազգերի հավասարության մասին Հրովարտակները, սակայն, չէին խանդարում Օսմանյան տերությունը տեղն ու տեղը դրժելու իր իսկ խոստումները, երբ, օրինակ, Պոլիս-Սոֆիա հեռագրական գծի բացման առիթով հատուկ հայտնվում է, թե հեռախոսով կարելի է խոսել «միայն տաճկերեն» (1857, № 293):

Հրովարտակները թղթի վրա հավաստիացնում են «Վեհափառ ինքնակալին իր տերության քրիստոնյա ժողովրդոց վրա ունեցած ծայրագույն խնամքը»: Նոր որոշումով «Գլխահարկի (խարաջ) տուրքը վերացած է. զինվորական կարգի մեջ քրիստոնյա Հպատակները մինչև զնդապետի (միրալա) աստիճան պիտի կրնան հասնիլ»: Այդպես էր որոշման մեջ և բոլորովին հակառակը՝ իրական կյանքում: «Մասիս» № 171-ում ավելի մանրամասն է խոսվում զինվորագրության նոր կանոնադրության մասին, որտեղ, ի միջի այլոց, հայտնվում է, որ, անշուշտ, կայսերական բանակում մեծամասնություն պիտի կազմի մահմեդական տարրը, «իսկ իրենց հավատարմությունը պետությունն սպացուցած քրիստոնյաները» խարաջի փոխարեն պիտի վճարեն

նպատակաւ իսննելի ասկերիս: Այսինքն մեկ հարկը փոխարինվեց մյուսով, իսկ հասնախ էլ թուրքական իրականութեանը հատուկ անօրինականութեան տրամաբանութեամբ թե՛ մեկով և թե՛ մյուսով:

Բրիտանոյաներին խոստացված իրավական հավասարութեանից բացի թանկիմաթի ժողովի մշակած օրինագծով բարեգործութեաններ և վարչական վերափոխութեաններ էին մտցվում նաև հունական, հայկական, բուլղարական պատրիարքարանների կառավարման գործում, որի մասին հետաքրքրական նյութեր է տպւում «Մասիւր»: 1857 թ. № 303-ում կարգում ենք, որ հունական պատրիարքարանը Բարձր դռնից 16 կետից բաղկացած հրաման է ստացել 1856 թ. փետրվարի 6-ի Հաթի-ի հումայունի համեմատ ազգային ժողով կազմելու, այնտեղ 7 եկեղեցական և 10 «երեւելի աշխարհական» երեսփոխաններ բնաբերելու մասին, որոշումներ, որոնց ոգուն դեմ էին մետրոպոլիտը և նրան շրջապատող պաշտօնողական վերնախավը: «Մասիւր» մեջբերում է անում հունական առաջադիմական «Վիզանթիա» թերթից, որն, ըստ երեւոյթի, արտահայտում էր հունական բարձրացող բուրժուազիայի ձգտումները, և դժգոհութիւն հայտնում հունական պատրիարքարանի կողմից այդ որոշումների վատ իրագործման առիթով: Դժգոհութեաններն այնքան վճռական էին, որ Կոստանդնուպոլսի հույն պատրիարքը հրաժարական է տալիս, թեև այն չի բնորոշում սուլթանի կողմից:

«Մասիւրն» անշուշտ կիսում էր «Վիզանթիայի» դժգոհութեանը պատրիարքի միանձնյա իշխանութեանից, որն արտահայտվում էր նախ և առաջ սահմանադրութեան վերաբերյալ նյութերի տպագրութեամբ և այն պայքարով, որ արեմտահայ լիբերալներն ու դեմոկրատները ծավալել էին մամուլի էջերում դեռ 1854 թ. հանուն դեմոկրատական հարաբերութեանների հաստատման, և որն առայժմ նույն պաշտօնողական ուժերի դիմադրութեան պատճառով պակասում էր անհաջողութեամբ, մինչև 1860 թ. մայիսի 24-ին վերջապես ավարտվեց առաջադիմական ուժերի հաղթանակով և իր բովանդակութեամբ իրոք սահմանադրական, ազգային կառավարման կանոնադրութեան հռչակմամբ:

«Մասիւրում» բավական լուրջ որակ են կազմում զավառի հայութեան սոցիալական ծանր վիճակն արտացոլող նյութերը, որոնք բացահայտում են մշտական պատահականութեաններին ենթակա, կրկնակի կեղեքվող ժողովրդի հուսահատութեանն ու գոյութեան համար մղած օրհասական պայքարը:

1861 թ. № 486-ում տպագրված նամակում վեր է հանվում Նիկոմիդիայի մի քանի գյուղերի, մասնավանդ Պահճեճիկ գյուղի թշվառ վիճակը, որը պետության տնտեսական քաղաքականության հետևանք էր: Ամխահանու-  
թյամբ և փայտամշակությամբ զբաղվող 1000 տուն գյուղացիներ զրկվում են իրենց ապրուստի միակ միջոցից, որովհետև ամխահանության տնայնագոր-  
ծական եղանակը դառնում է անեկամտաբեր, իսկ «տախտակամշակութունն»  
արգելվում է օրենքով:

«Մասիսի» տեսաբան Վ. Պառնասյանը, ի թիվս այլ հարցերի, անդրադառ-  
նում է նաև մշեցիների վիճակին և գրում, թե քրդերի հարստահարություննե-  
րից այլևս ուրիշ միջոց չգտնելով, ծայր թշվառության հասնելով նրանք լքել  
են հայրենիքը և Պոլիս գալով աղերսագիր են մատուցել պատրիարքին,  
խնդրելով միջնորդել Բ. դռանը գսպելու քրդերի անիրավությունները (1863,  
№ 576):

Հայտնի է, որ Մուշի առաջնորդությունը հանձն առած Մկրտիչ Խրիմյանը  
մեծ ջանքեր թափեց տեղի հարստահարությունները կանխելու և Օսմանյան  
տերության ու հայ կապալառուների անօրինականությունները մերկացնելու  
ուղղություն: Նա մասնավորապես փորձում էր աշարի կամ տասնորդի հա-  
վաքման գործում որևէ կարգ ու կանոն հաստատել և թույլ չտալ, որ գյուղա-  
ցիներից մեկի փոխարեն մի քանի տասնորդ գոփեն: Բայց նրա դեմ ըմբոստա-  
ցան տեղի հասարակարիչները, այդ թվում նաև հայ կապալառուները (մուլ-  
թեղիմեներ), վարկաբեկեցին ու հալածեցին Խրիմյանին, իբր նա խանգարում է  
հավաքել տերունական հարկը:

Խրիմյանին իր պաշտպանություն տակ է առնում թերթը. այդ ազնիվ  
հոգևորականը նրանց «ապօրինավոր շահասիրությունը դեմ թուժք մը եղած  
է»: Տեղում այս ծանր ապօրինությունների հարցը լուծել չկարողանալով  
Խրիմյանը նույնպես եկավ Կ. Պոլիս՝ շարժելու հայոց պատրիարքարանի և մե-  
ծամեծների գլուխը և, նրանց անճարակությունը հանդիպելով, ձեռնունայն և  
հուսահատ վերադարձավ իր բարձիթողի երկիրը:

«Մասիսի» 1864 թ. № 627-ում պատմվում է հավատափոխության ցնցող  
մի դեպք, երբ «մանկամարդ աղքատ հայուհի մը աղքատության թշվառու-  
թյուններեն ազատվելու համար» դիմում է թուրք կանանց, որ ինքը պատ-  
րաստ է ընդունել մահմեդականություն, «ևթև իր վիճակը բարելավցընող ան-  
ձի մը հետ զինքն ամուսնացնեն»: Տեղի մուֆթին «վիրավորիչ խոսքերով»  
վսնդում է կանանց: Իսկ Խարբերդի Հյուսնի Մանսուր գյուղի մի հայ բնակ-



չուհու առջև խնդիր է դրվում մահամեղական Հավատքի բերել նաև ծծկեր որդուն, յոթ տարեկան աղջկան և ութ տարեկան տղային, իսկ երբ մայրը հրաժարվում է այդ անել, թուրքերը խեղդամահ են անում ծծկեր երեխային, կնոջ գործը հասցնում են մինչև Խարբերդի իմամին, իսկ գյուղի հայերն էլ իրենց Հերթին դիմում են Կ. Պոլսի Ազգային ժողովին նրա միջոցով արգարադատություն խնդրելով Բարձր դռնից (1862, № 568):

«Մասխի» բերած բազմաթիվ փաստեր վկայում են, որ բացարձակ կամայականությունն էր թուրքական իրականության օրենքը, իսկ թանգիմաթի հրապարակած «ազատությունները» դատարկ տառ միայն: Ենուք չէր կարող լինել ազգերի Հավասարության մասին, եթե քաղաքում, օրը ցերեկով մի թուրք գովազանի հարվածով սպանում է Հայ խանութպանի Հղի կնոջը, որովհետև վերջինս, խառնվելով թուրքի չվճարած զուռուշների պատճառով առաջացած վեճին, փորձում է հաշտեցնել ամուսնուն և սանձարձակ գնորդին: Իսկ Հարցաքննության ժամանակ թուրքը սառնասրտությամբ պատասխանում է «Այո, սպանեցի, ի՞նչ կրլլա կզեր. կհավուռ չէ՞ մի» (1853, № 295, 307):

Այդպիսի լկտի պատասխան է տալիս քննիչին նաև մեկ ուրիշ թուրք մարդասպան, երբ Հայ երիտասարդի մոտ նորոգելու տված հրացանի համար պահանջվածք վճարելու փոխարեն վիճում է նրա հետ և հրացանի կոթով այնպես է հարվածում արհեստավորին, որ վերջինս մահանում է: «Ես, - ասում է նա, - գանդիկա կրթելու համար ծեծեցի, բայց մեռավ. Հայ մը մեռնելով ի՞նչ կրլլա եղեր» (1853, № 93): Այս կարգի հազորդուժները թերթում բավական շատ են: Կրանցից արված եզրակացությունը միանշանակ է. հայերն իրենց պատմական հայրենիքում ապրելու հոյ չունենին:

Որպես լայն ընդրկում ունեցող թերթ, «Մասխն» իր էջերը տրամադրում էր ոչ միայն ազգային կյանքն ու Օսմանյան կայսրության ներքին իրադարձություններն արտացոլող նյութերին, այլև պարբերաբար լուսարանում էր գրսի աշխարհի կարևորագույն անցքերը, հատկապես XIX դարի 50-60-ական թվականներին եվրոպական երկրներում ծայր առած ազգային-ազատագրական շարժումները (իտալական, հունգարական, լեհական), որոնք հուզում էին արևմտահայ ղեմակրատական մտավորականությունը, որպես ոչ միայն այլ ժողովուրդների կյանքին վերարերոջ իրադարձություններ, այլ նաև իրադարձություններ, որոնք խմբում և կազմավորում էին Հայ Հասարակական

միտքը հենց սեփական ժողովրդի ազգային-ազատագրական ծրագրերը մշակելու տեսակետից:

«Մասիսի» դիրքորոշումն այս հարցերում պարզ էր և հետևողական: Թերթն անվերապահորեն համակրում էր եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, քանի այն ծառայում էր այդ երկրներում ձևավորվող սահմանադրական կամ սահմանադրական-միապետական կարգերին, իսկ հեղափոխությունների նկատմամբ նա համակրանք չուներ: Այդ տեսակետից չափազանց բնորոշ էր Թերթի վերաբերմունքը դեպի իտալական ազգային-ազատագրական շարժումները և ժողովրդական հերոս Գարիբալդին, որին բարձրացնում, հերոսի պատվանդանին էր դնում, քանի Գարիբալդին իր զինվորներով օգնում էր Քավուր-Էմմանուել երկյակին ստեղծելու իտալական միացյալ ազգային թագավորութուն և, ընդհակառակը, քարկոծում էր Գարիբալդուն Ֆրանսիական զորքերին միացած իտալական թագավորական զորքերի դեմ պայքարելու շրջանում և իր տեսաբան Վ. Պառնասյանի միջոցով հայտարարում, թե ավելի գերադասելի է Քավուրի վարած դիվանագիտութունը «կարմիր շապիկով» Գարիբալդիի վտանգավոր քայլերից (1863, № 608):

Նույն վերաբերմունքն ունի Թերթը հունգարական և լեհական ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ, որոնցից լեհական դեպքերը նրան հուզում են հատկապես այն պատճառով, որ դրանց միջամտած երկրները, հետամուտ իրենց շահագիտական նպատակներին, Հանդիստ դիտում են, թե ինչպես արյունաքամ է լինում քաջարար կոպող մի ժողովուրդ:

Ընդհանուր առմամբ, վրդովված հարցնում է Թերթը, նման տեսարանին լուռ ու անտարբեր Հանդիսատես պիտի լինեն Անգլիան ու Յրանսիան և, դիմելով այդ երկրների ժողովուրդներին, գրում է. «Անգլիո ու Գաղղիո կառավարություններն Հանդիսատես ըլլալ ուզեն ալ, ժողովուրդները լուռ պիտի կենան», պիտի թողուն որ Լեհաստան իր այս վերջին հուսահատ ճգանցը մեջ անօգնական սպառնելով հավիտյան կորչի», և № 591-ում հավատացնում է, թե ժողովուրդները գոնե այդ բանը թույլ չեն տա և կստիպեն իրենց կառավարություններին միջամտել արյունահեղ իրադարձություններին:

Ի վերջո 1863 թ. վերջերին լեհական շարժումը սկսում է անկում ապրել և գլխադադարի պատրաստ Ռուսաստանը բանակցությունների միջնորդ է ստեղծում, որը խիստ գոհացնում է «Մասիսին», քանի որ արյունահեղու-

թյան դադարեցումը և բանակցությունների միջոցով ազատատենչ ժողովրդին սահմանադրական արտոնություններ տալը թերթը Համարում է փրկության յափազույն ելքը (1863, № 599):

Հունգարական ղեկավարին անդրադառնալիս, թերթը բացարձակ Համակրանքով ու սիրով է խոսում Հունգարական Հեղափոխության առաջնորդ Կոշուտի և նրա զինակիցների մասին մշտապես Հույս Հայտնելով, որ այդ քաջ և իմաստուն առաջնորդը կարող է Հունգար ժողովրդի ազատագրության մեծ գործը պսակել Հաջողությամբ, մանավանդ որ նրան Համակրում են գրեթե բոլոր առաջադեմ ժողովուրդները:

XIX դարի 60-70-ական թվականներին թուրքական բռնապետության և ֆեոդալական ճնշումների դեմ ենթակա ժողովուրդների ու գյուղացիության ընդդիմաները և զինված պայքարը նոր, լայն ծավալներ ստացան: Իտալական, լեհական, Հունգարական Հեղափոխությունների օրինակով թուրքական լծի դեմ 1861 թ. ոսթի կանգնեցին Հերցեգովինայի և Բոսնիայի քրիստոնյաները, 1866 թ. ապստամբեցին Կիպրոսի Հույները, 60-ական թվականներին խլրաումներ սկսվեցին Բուլղարիայում, 1862 թ. իրենց անկախությունը պաշտպանելու Համար զինված զիմադրությամբ թուրքական բազմաբանակ զորքերի դեմ դուրս եկան Ձեյթունի Հայերը:

«Մասիս» նյութերը Ձեյթունի ապստամբության մասին պատմական արժեք ունեն, որովհետև բացահայտում են այդ ազատ երկրամասի նկատմամբ գործադրված բարբարոսությունների և կազմակերպված արշավանքի բուն գրգապատճառները:

Դեռ 1861թ. № 481-ում «Մասիսը» նշում է, որ աղետալի վիճակն է առիթ տվել Ձեյթունի ժողովրդի խիստ զժգոհությանը, և Հույս է Հայտնում, որ այն կկանխվի Բ. դասը ներկայացված բողոքագրով: «Մարաշեն գիրեր առնվեցան, - գրում է թերթը, - որովք կիմացվի թե Ձեյթունի Հայք Հարստահարությանց չի զիմանալով, զինուք զիմադրություն ըրեր են զիրենք Հարստահարողներուն: Ժողովս զիրեր խրկել տվավ տեղվույն կառավարության, որ Հայոց պաշտպանություն ընեն, և ազգայնոց, որ Հնազանդություն ընեն: Միանգամայն Արբազանը անձամբ զնաց բարեխոսության առ արաաբին գործոց տեսու չն»:

Նման նյութերով, որ այնքան էլ առատ չեն Հասկանալի պատճառով, պարզ է դառնում, որ թուրքական բռնապետության մեջ նույնիսկ անհնազանդ Համարված զեյթունցիները գերծ չէին անօրինակ Հարստահարություն-

ներից և իրենց իրավունքները պաշտպանելու համար դիմում էին զինված պայքարի:

1862 թ. օգոստոսից թերթում արդեն տազնապալից նյութեր են երևում Զեյթունում տիրող իրավիճակի մասին: Մարաշից ստացված տեղեկությունները սարսափ են ազդում. նահանգի կուսակալ Ազիզ փաշան գնում է Զեյթունի վրա իր ճանապարհին ավերելով Ալաբաշ գյուղը, սպանելով երկու հարյուր հայ, թալանելով գյուղացիների ինչքը և հրի մատնելով եկեղեցին: Ալաբաշ գյուղի հետ հաշիվը մաքրելուց հետո գազանաբարո փաշան շարունակում է իր ճանապարհին ընկած մյուս բնակավայրերի մոխրացումը. կողոպտում ու գետնին է հավասարեցնում Զեյթունից երկու ժամվա հեռավորությունյան վրա գտնվող Ս. Փրկչի վանքը, սպանում է վանքի սպասավորներին, մի ծեր կնոջ ու մի թափառող շուն սպանելով՝ նետում է նրանց դիակներին, որպես անպատվություն:

Թերթի վերաբերմունքը դիմադրող և ապստամբ ժողովրդի նկատմամբ բերում է այն եզրակացություն, որ նրա գաղափարախոսների նպատակն էր շուտափուլիս կանխել արյունահեղությունը և վերահաստատել խաղաղությունը: Սակայն թերթի վախը ժողովրդական հուզումների նկատմամբ, մանավանդ երբ հարցը վերաբերում էր արևմտահայությունը, որի դեպքում փոքր գործոն էր թուրքական բռնապետության հսկող չափից թաքնվելու անհրաժեշտությունը, էր խանգարում «Մասիսին» խոստովանելու այն վտանգները, որոնցով լի էր բռնություններին ենթակա և հալածվող ժողովրդի ճակատագիրը: Մերձավոր արևելքի նկատմամբ մեծ տերությունների, այդ թվում նաև քաղաքական ակտիվ ասպարեզ մտնող Միացյալ Նահանգների կողմից ծանր վիճակում գտնվող ժողովուրդներին թանկ գնով մեկնած ուժացման խայժը իրեն երկար սպասեցնել էր տալիս: Այս հանգամանքից տաղնապած «Մասիսը» խոստովանում է, որ զեյթունցիներին սպառնում է այդ հուսահատ քայլին դիմելու վտանգը. «ժողովրդյան մը ազգայնությունը պահպանելու ծառայող միջոցներն զրկված այս կողմի հայերը դժվարին պարագաներու մեջ հոռմեականություն հարիլ կուզեն և անտեղի չէ կարծել, որ զիրենք ուշացնող խոչընդոտները քիչ ժամանակեն կը վերնան» (1864, № 621):

Զեյթունի դեպքերը սրեցին և ավելի բևեռեցին հայ հասարակական միտքը, ստիպեցին հայ քաղաքական տարրեր հոսանքների ներկայացուցիչներին ավելի սժմափ նայելու դրսից սպասվող օգնությունը և գուցե առաջին

անդամ ամենայն պարզութեամբ խոստովանելու, որ Եվրոպան ազգերին օգնութիւն ցույց է տալիս երկար ժամանակ իր օգուտը ծանր ու կշիռ անելուց հետո միայն (այս մասին տե՛ս Հատկագին «Մեղփի» «Զեյթունի գործը» Հոգիվածը Հանդեսի 1862 թ. № 163-ում, ուղղված «Լեւանդ Հերալդի» թղթակցի ստահոգ մեղադրանքներին ընդդէմ Հայերի):

Սրպես արեւմտահայ լիբերալ դադափարախոսութեան առաջին հետեւողական պարբերական, «Մասին» իր էջերում արտացոլում էր XIX դարի երկրորդ կեսի լուսավորական շարժման բոլոր կարեւոր էլէէջները:

Իերթն ուշադրութեամբ արձագանքում էր արեւմտահայ և արեւելահայ հասովածներում տեղի ունեցած հոգեւոր ու մշակութային կարեւոր իրադարձութիւններին, Հայապիտութեան ձեռքբերումներին Եվրոպայում և այլուր, ողջունում էր Հայ դրական ու քաղաքական մտքի հաջողութիւնները, լուսավորութեան, դպրոցական գործի առաջընթացը, արվեստի բարգաւաճումը ինչպէս Կ. Պոլսում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս: Այդպիսով, «Մասին» լիովին կատարում էր ազգի լուսավորութեան ու մտավոր զարգացման գործում մասնուլին ընկած իր բաժինը:

Ազգային դարձմանի և մշակութային կյանքի աշխուժացման կարեւոր օգակներէից մեկը թատերական արվեստն էր, որին Հայ լուսավորիչները անցյալ դարակեսից սկսում են մեծ ուշադրութիւն նվիրել՝ շեշտելով արվեստի այդ նյութի դաստիարակչական և բարոյախոսական նշանակութիւնը:

Թատերադրութիւնների և թատերական բեմադրութիւնների մասին առաջին մասնագիտական Հոդվածներով «Մասինում» հանդես է գալիս Տիգրան ԅուսուֆյանը, որի ընդհանուր տեսութիւնները հնարավորութիւն են տալիս ամփոփ պատկերացում կազմելու արեւմտահայ թատրոնի անցած ուղու մասին:

1857-1859 թթ. Կ. Պոլսի մշակութային կյանքին առանձին աշխուժութիւն է հաղորդում Միջագյուղի (Օրթագյուղի) թատերական խումբը, որի ոգևորողը, գեղափարը և թատերադէտը Հայ նշանավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանն էր: Տ. ԅուսուֆյանի տեսութիւնները վիճարկում են այն խթանիչ գերբ, որ ունեցել էն Մ. Պեշիկթաշլյանը և Ա. Հեթիմյանը ազգային թատրոնի զարգացման գործում:

Մտավոր կյանքի զարգացման պակաս կարեւոր փաստ չէր նաև Հայագիտական Հրատարակութիւններին նկատմամբ պոլսահայ հասարակայնութեան շահագրգռութիւնը, ըստ որում, Պոլսն էր գառնում այն կենտրոնը, դեպի

ուր ուղղվում էին նաև դրսի, հատկապես Եվրոպայի հայ մտավորական գործիչներին հայացքները:

«Մասիսի» սևեռուն ուշադրության նյութ են նաև արևելահայերի հայագիտության ասպարեզի նվաճումները: 1857 թ. № 263-ում «Բնաստրական» վերնագրով թերթն արտատպում է «Կավկազ» պարբերականում Պ. Շանշյանի ուսերեն թարգմանած Եղիշեի Վարդանանց պատերազմի մասին Դ. Մելիքյանի գրախոսականը, ուր արժեքավորվում է 1853 թ. լույս տեսած այդ աշխատությունը:

Այս ամենով հանդերձ, անշուշտ, «Մասիսի» ուշադրության առանցքը արևմտահայ իրականության մեջ հայագիտության նվաճումներն են: Այս տեսակետից բնորոշ է Մ. Այվատյանի «Ազգային մատենագրությունը, ձեռագիրներու խուզարկության առաջարկություն մը և քանի մը հին ձեռագիրներու վրա տեղեկություն» հոդվածաշարը, ուր արծարծվում է այն միտքը, թե ներկա դարիս առաջադիմությունը և լուսավորությունը թերի կլինեն, եթե մեր գավառներից ու հին թոնրատներից դուրս չբերվեն ու ի մի չհավաքվեն կորստյան մատնված հին ձեռագրերն ու հիշատակարանները, որոնք մեզ ավելի են մոտեցնում մեր և այլ ժողովուրդների անցյալ պատմությանը, հազորդակցում են «սուրբ թարգմանչաց ժամանակների» ոճին, լեզվին, սովորույթներին և մեզ ավելի կրթում ու ազնվացնում (1852, № 9-13):

Ժողովրդին կրթելու, գործնական կյանքին վարժեցնելու և եվրոպական ժողովուրդների ապրելակերպին ու կենցաղին հաղորդակցելու տեսակետից պակաս կարևոր չեն այն ջանքերը, որ անում էր «Մասիսը» իր էջերը պարբերաբար թարգմանական գրականությունը տրամադրելով: Ֆրանսիական մեծ լուսավորիչ Վոլտերը եվրոպական այն առաջին գրողներից էր, որ իր ստեղծագործությամբ գրավեց պոլսահայերի ուշադրությունը: 1854 թ. № 106-ից «Մասիսը» Մ. Մամուրյանի թարգմանությամբ իր ընթերցողներին է ներկայացնում Վոլտերի «Ձադիգ կամ նախախնամություն» նշանավոր երկը:

Դրան այնուհետև հետևում են բազմաթիվ այլ արժեքավոր թարգմանական շարքեր, ինչպես Գուլյամիթի «Վեկֆիլդի երեցը» նշանավոր երկն էր, որ դեռ 1863 թ. թարգմանվել է հատվածաբար տպագրվել էր «Մասիսի» մանրաթերթերում: Ինչպես ազգային և օտար դրամատուրգիայի նմուշներից կազմված կայուն խաղացանկը և դերասանական պրոֆեսիոնալիզմի ձևավորումը խթանեցին թատերագիտական մտքի զարգացմանը, այնպես էլ օտար լեզուներից կատարված թարգմանական լավագույն երկերի հրատարակումն

ու ազգային նոր գրականությունից առաջին նմուշները զարկ տվեցին գրականագիտական մտքի զարգացմանը: XIX դարի 60-ական թվականներից «Մասիս» պատմագրականագիտական և բարոյախոսական տեսությունների տակ հանախ աչքի է ընկնում Վ. Պառնասյանի ազգասուներ, որը միաժամանակ թերթի հետազմանադրական գաղափարախոսությունից կամերտոնն էր: Մինչև օրս էլ իր թարմությունը պահպանել է նրա «Թշվառք, վեպ Վիքթոր Հյուկոյի» բանասիրականը, ուր արժանին է մատուցվում Ֆրանսիական մեծ ողմանտիկին ու մարդասերին (1863, № 588):

Անդրադառնալով արևմտաՀայ գրական կյանքի երևույթներին, Պառնասյանը թերթի 1863 թ. № 572-ում վերլուծում է Արմենակ Հայկունու «էլիզա» վեպը, որը տպվել էր Զմյուռնիայում, 1861-1862 թթ.: Գրախոսականը վիճում է արևմտաՀայ զարգացող արձակին պրոֆեսիոնալ գրականագիտությունից կողմից ներկայացվող բարձր պահանջների մասին:

ԱրևմտաՀայ մտավորականությունից և մամուլի հետաքրքրությունը դեպի ժողովրդի անցյալի ու ներկայի հոգևոր արժեքները, այն ներգործուն մասնակցությունը, որ ունեցել են նրանք հասարակական կյանքի առաջադիմությունից պրոպեգանդիստներ, ինքնին խոսում է նաև «Մասիս» խոշոր ներդրման մասին այդ կարևոր ազգօգուտ գործում:

Կեռես XIX դարի 40-ական թվականներից ուժեղ թափ ստացած բուրժուական-լուսավորական շարժման գաղափնակետը արևմտաՀայ սահմանադրությունից հրատարակումն էր, որը, օրինականացնելով դեմոկրատական մտայնությունից հաղթանակը արևմտաՀայերի մեջ, միաժամանակ իր գործադրությունից և վերաբնությունից շուրջը ծավալված պայքարով լուրջ գաղափարամարտերի սկիզբը դրեց և հստակ տարանջատեց քաղաքական միտքը, մամուլը և հրատարակախոսությունը:

1847 թ. Կոստանդնուպոլսում հիմնվել էր դեմոկրատական հիմունքներով Հայ Հանրությունը կառավարելու կոչված Ազգային ժողով, որը ըստ էության, դեռևս գործելով առանց կանոնադրության, դարձյալ ենթակա էր պատրիարքի և Բ. դռան կամբին, պատգամավորների ընտրությունները կատարվում էին կամայականորեն, ոչ ընդհանուր քվեարկությամբ, և դրա հետևանքով այնտեղ շարունակում էր իշխել ամիրայական պահպանողական վերնախավը:

Հայ Հանրությունից դեմոկրատական կառավարման գործը ավարտին հասցնելու բարենպաստ առիթ էր բարենորոգումների դիմած թուրքական

կառավարութեան 1854 թ. օգոստոսի 26-ի Հաթթի-ի Հյումայունը, որով «ոչ մահանդական հասարակութուններին» իրավունք էր տրվում իր միջից ընտրված հանձնաժողովի միջոցով «քննել իր ունեցած առանձնաշնորհումներն ու արտոնութիւնները, սահմանել ժամանակի և քաղաքակրթութեան պահանջած բարենորոգումներն ու հաղորդել Բ. դռանը»: Բնական է, որ նման Հնարավորութեան վաղուց սպասող արեւմտահայերը անմիջապէս ձեռնամուխ եղան հանձնաժողով կազմելուն, որի փոփոխվող կազմի մեջ մտան աչքի ընկնող քաղաքական գործիչները՝ Գրիգոր Օտյան, Մինաս Մինասյան, Մկրտիչ Աղաթոն, Ալթյուն Տյուրբի, Նահապետ Թուսինյան, Բարունակ Ֆերուհան Խան, Ստեփան Ասլանյան, Սերվիչեն, Կարապետ Ություճյան, այսինքն բոլոր այն հայ գործիչները, որոնք հաճախ տարբեր դիրքերից, բայց միևնույն է, շահագրգռված էին արեւմտահայ հասարակութեան վերափոխմամբ: Ահա հայ համայնքի կառավարման համար կանոնադրութիւն ստեղծող այդ նիստերից մեկում էր, որ ապագա սահմանադրութեան նախագիծը կազմող գործուն անդամներից մեկը՝ Ն. Թուսինյանը, առաջարկեց ապագա կանոնադրութիւնը կոչել Սահմանադրութիւն, որը հետագայում և ըմբռնումով ընդունվեց ոչ միայն անմիջապէս հիշյալ գործով զբաղվողների, այլև ողջ Հայութեան կողմից, մի բան, որ վկայում է, թե որքան պատրաստ էր արեւմտահայութիւնը, և նրա հետ նաև ողջ արևելահայութիւնը, դեմոկրատական վերափոխութիւնների համար:

Թերթը հաղորդումներ է տպագրում Կ. Պոլսի մոտ գտնվող Հյունքյար-Իսկլեսի հարթավայրում Սահմանադրութեան տարեգարձի առիթով կազմակերպված ժողովրդական խանդավառ հանդիսութիւնների մասին վերարտադրելով այն հուզմունքն ու վրդովմունքը, որ ապրում էր ժողովուրդը զգալով սահմանադրութեան սպառնացող վտանգը, երբ կառավարութիւնը ոչ առանց հայ պահպանողականութեան հուշարկման, որոշեց վերաքննել սահմանադրութիւնը՝ պատրաստվելով թեատել այն դեմոկրատական սկզբունքներից:

Այս մտադրութիւնն իրագործելու համար Բ. դուռը կազմեց հատուկ հանձնաժողով, ուր մտնում էին Սերվիչենը, Գր. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը և ուրիշներ, կազմվեց նաև այսպես կոչված ազգային հանձնաժողով՝ Գր. Օտյանի, Մ. Աղաթոնի, Ստ. Ասլանյանի, Ն. Թուսինյանի և այլոց մասնակցութեամբ:



Գործերի բնթացքին տեղյակ ժողովուրդը 1862 թ. օգոստոսի 1-ին գինված ներխուժում է պատրիարքարան, ուր խորհրդակցում էր խառը ժողովը, փորձում է ցրել այն սահմանադրությունը փրկելու համար: Այս դեպքերին աչալուրջ հետևող կառավարությունը Ալիմի փաշայի զլխավորությամբ մի գունդ է ուղարկում ժողովրդին ցրելու համար, սպառնալով պատժել «խոռվարարներին», իսկ հեռանալիս թողնում է 60 զինվոր պատրիարքարանը պաշտպանելու համար:

Այս փաստերը հաստատում են այն միտքը, որ թուրքական կառավարությունը, նախ, ստիպված էր որոշ գիշումների զիմել քրիստոնյա, այդ թվում նաև արեմտաՀայ ժողովրդի անոց սոցիալական և քաղաքական պահանջներին բավարարություն տալու համար և հետո արևմտաՀայերը չէին կարող բավարարվել սահմանափակ կանոնակետերի բնդունմամբ, որպիսին կառավարական շրջաբերականն էր, ուստի տասնյակ տարիներ տեղ իրենց պայքարը ձեռնարկեցին մի կանոնադրության մեջ, որն իր բովանդակությամբ և հիմնական ուղղվածությամբ իրոք սահմանադրական էր:

Պատրիարքարանի և գործող Ազգային ժողովի կողմից մերժվող և տարիներ շարունակ ձգձգվող նիստերի մասին բազմաթիվ զայրալից հաղորդումներ կան ինչպես այդ տարիների «Մասիս», այնպես էլ «Մեղուի» համարներում, բայց չենք կարող չբերել իր տեսակի մեջ եզակի պատմական մի վավերագիր ստված «Մասիս» 1860 թ. № 415-ում, որը հենց նշանավորում է ոչ միայն սահմանադրության բնդունման փաստը, այլև այն հանգամանքը, որ արեմտաՀայ հասարակական կյանքի գեմոկրատացման պրոցեսն անկասելի էր և արտահայտում էր արեմտաՀայ գեմոկրատիայի և ժողովրդական խավերի ձգտումները: 1859 թ. 30 հոգուց բաղկացած արևմտաՀայ նշանավոր լիբերալ գործիչների մի խումբ, սկզբում հավաքվելով Հայ ազատագրական պայքարի ոչ երկրորդական տեսարան Հակոբ Նորատունկյանի տանը, իսկ ապա «Նոր մեծ խանում», մշակեց և գեկտեմբերի վերջին Գեորգ պատրիարքին ներկայացրեց մի վերջնագիր, ուր մասնավորապես ասված էր. Հայոց գերազույն ժողովրդ - Ա. նման աշխարհիս բոլոր ժողովուրդներին, իրավունք չունի պատրիարքի կամբով նիստեր անցկացնել, եթե դրանց ներկա չեն ժողովականների կեսից ավելին: Բ. ժողովը որոշումներ պիտի բնդունի, եթե դրանց համաձայն են ներկաների մեծագույն մասը: Գ. ժողովականը, եթե առանց հիմնավոր պատճառի երեք անգամից ավելի բացակայում է նիստերից, համարվում է իր պարտականություններից ազատված: Դ. Գերազույն

ժողովի բոլոր նիստերը ատենագրվում են և Հաջորդ նիստում կարդացվելուց հետո վավերացվում նախագահի կողմից:

«Եթե այս առաջարկությունը, - գրված է Հայտարարությունում, - Ձեր սրբազանությունն անմիջապես ի գործ չի դնե, կատիպիինք Հրաժարվիլ»: Գործերի ներկա վիճակում շարունակել աշխատելը Ազգային ժողովի վերոհիշյալ անդամները համարում էին անիմաստ ոչ միայն «իրենց չգործած մեղքերի» համար պատասխանատվություն չկրելու, այլև ազգային գործերի անօրինությունը «այժմյան խոտորնակի ընթացքում վտանգավոր պարագաներու մեջ չձգելու համար» (1860, № 415): Այնուհետև հետևում են ստորագրությունները և ընդունված որոշման տարեթիվը 1859 թ. դեկտեմբերի 31:

Իհարկե, նույնիսկ Հայ սահմանադրականների այս հարվածող խումբը միատարր չէր և միահամուռ համաձայնություն չէր ընդունել հակասահմանադրական Գևորգ պատրիարքի հեռացման հարցը. ըստ որում, քսան կողմից տասը դեմերի մեջ էր նաև «Մասիսի» խմբագիր Կ. Ությունճյանը: Այս վերջին տասնյակի, ըստ որում, ինչպես հետագայում երևում է «Մեղուի» նյութերից, նաև Գր. Օտյանի վախճանայն էր, որ մինչև սահմանադրության հաստատումը պատրիարք փոխելը նրանց կողմից դիտվում էր որպես սահմանադրության և պատրիարքի կողմնակիցներին գրգռելու ավելորդ առիթ:

Սակայն, ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, ճիշտ էին հեռացման կողմնակիցները, որոնց ճնշման ներքո Բ. դուռնի կողմից վավերացվում է պատրիարքի հեռացումը (1860, № 429), և արևմտահայ պատմության մեջ առաջին անգամ գաղտնի քվեարկություն էր քվեարկության քվեարկության մեծամասնության ձայնով պատրիարք է ընտրվում Պրուսայի առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսը: Թե որքան էր ժողովուրդը շահագրգռված մշակված կանոնադրության հաստատմամբ և որքան հիվանդոտ էր ընդունվում դրա դեմ կատարված յուրաքանչյուր ոտնձգություն, վկայում է «Մասիս» մի Հաղորդում կապված պատրիարքական վերը նշված ընտրությունների հետ:

Հակասահմանադրական ուժերը, Գևորգ պատրիարքի կողմնակիցները, խաղալով ժողովրդի զգացմունքների հետ, լուրեր էին տարածել, թե պատրիարքի հեռացումով սահմանադրության թշնամիները ցանկանում են խափանել այն: Մինչ խորհրդարանում ընտրություն էր կատարվում, դրսում աղմկում էր մայր եկեղեցու բակում հավաքված բազմահազարանոց ամբոխը, որը պահանջում էր ժողովը եկեղեցում անել, որպեսզի ինքն էլ իր կամքը Հայտնի համոզված, որ այնտեղ գրված էր սահմանադրության լինել-չլինելու

Հարցը: Վերջապես աշխարհականների այն Համաստիացույցները, թե նորբնտիր պատրիարքը, իր օրոք գործադրելով կանոնադրությունը, կրավարարի «ազգի բաղձանքն ու ակնկալությունները», Հանգստացնում են Հավաքվածներին և միայն այդ պայմանով ստիպում նրանց ցրվել տները (1860, № 430):

Վերջապես 1860 թ. մայիսի 24-ի արժանաչիշատակ օրը գումարված ընդհանուր ժողովում նշանավոր քաղաքական գործիչների, մտավորականության, բարձրաստիճան ամիրանների, եկեղեցականների և արհեստավորության ներկայացուցիչների ներկայությամբ ընթերցվում ու վավերացվում է սահմանադրությունը, որը, ինչպես հրեվանքով նշում է «Մասիսը», «Հայկական տարեկրությանց մեջ ոսկեղեն տառերով նշանակելու արժանի օր մըն էր» (1860, № 493):

Թերթն այնուհետև Հաղորդում է, որ մինչև սահմանադրական օրենքին Համաձայն երեսփոխանների և ընդհանուր քաղաքական ու կրոնական ժողովների ընտրությունները կազմվում են 12 Հոգուց բաղկացած ժամանակավոր քաղաքական և կրոնական ժողովներ, որոնց կոչումն էր «ազգի գործերը առայժմ երեսի վրա չթողնել»: Նույն ժողովում, ըստ սահմանադրության կանոնների, որոշվում է ընտրել ազգային գործերը կառավարելու գործադիր Հիմնարկներ, որոնք էին ազգային վարչությունը ատենապետի գլխավորությամբ, ազգային ընդհանուր ժողովը (քաղաքական և կրոնական ժողովներով) և առանձին խորհուրդներ ուսումնական, տնտեսական, դատաստանական:

Հիշելով, թե ինչ երկրի և օտար պետականության ինչպիսի վերահսկողության պայմաններում էր ընդունվում Հայոց անգրանիկ ղեկավարատական սահմանադրությունը, հարկ է նշել, թե ինչու, 150 կետից բաղկացած նրա ծրագրում Հիշատակություն անգամ չկար արևմտահայ ժողովրդի իրավական-քաղաքական կացության, գալստային Հարստահարությունների, անօրինականությունների վերացման ուղիների, դատական պատիժների կամ իրավաբանական օրենսդրության մասին, զրանում որոշ օտար հետազոտողներ մեղադրում են Հայոց սահմանադրությունը մոռանալով նրա ստեղծման պատմական միջավայրը, հեռաբար, չզնահատելով այն սխրանքը, որին գիտնում էր բիրտ բռնակալության ներքո գանձող մի ժողովուրդ քաղաքակիրթ ապրելաձևի Հասնելու Համար: Վերոհիշյալ իրավունքները վերապահվում էին թուրքական պետութայնը, որի կամայականությունները և ենթակա

ազգերի նկատմամբ կիրառված խտրականությունը կանխելը աներևակայելի էր սահմանադրական ժողովի համար:

Ուստի, եթե չլինե՞ր թուրքական կառավարության բացասական ներկայությունը, վստահորեն կարելի է ասել, որ հայ հակամարտ քաղաքական ուղղությունների, դեմոկրատների, լիբերալների ու պահպանողականների պայքարը տարածայնությունների դրսևորման իր բոլոր ձևերով, կարող էր բերել սահմանադրական ուժերի լիարժեք հաղթանակին, որին ձգտում էին արևմտահայերը: Այս բանում կարելի է համոզվել թեկուզև թերթեղով «Մասիսի» 1860-1867 թթ. համարները, որոնք լի են տաղանավով սահմանադրական ժողովի գործունեության խափանման ուղղությամբ պետութայն և հայ պահպանողականության գործադրած ջանքերի նկատմամբ, հաղորդումներով պետութայն կողմից սահմանադրության վերաքննման և վավերացման հարցի ձգձգման մասին, որն ինքնըստինքյան արդեն կազմալուծում էր սահմանադրական ժողովի կենսունակությունը, ջլատում երեսփոխանների վստահությունը իրենց կատարած աշխատանքի հանդեպ:

Տարօրինակ է, որ նման պայմաններում գործունեության լայն ասպարեզ էր բացվել Հ. Չամուռճյանի հետադիմական «Երևակի» համար, որի ամբաստանություններն ընդդեմ սահմանադրական ժողովի հասնում էին այնտեղ, որ Չամուռճյանը սահմանադրությունն ու նրա գործադիր օրգանները համարում էր «պետություն պետութայն մեջ» (տե՛ս «Երևակ», 1861, թիվ 109, էջ 14-15): Իր պարբերականում Չամուռճյանը քրիստոնեական կրոնը հայտարարում էր սահմանադրությունից դուրս, անտրամաբանական էր համարում սահմանադրական իշխանութայն ազդեցությունը կրոնի և կրոնավորների վրա, ձգտում էր չեզոքացնել դեմոկրատական ուժերի համազգային համախմբման գաղափարը և ստեղծել այն իրավիճակը, երբ ազգի վրա միանձնյա իշխում էր պատրիարքը («Երևակ», 1861, թիվ 109, 111):

Բուռն վեճերը, որ ծավալվում էին թերթի էջերում 1860-1864 թթ. «ներսեն ու դուրսեն» պայքարի ընթացքում, ինքնուրույնության ձգտող ազգի ուժերը ջլատելու միտում ունեին միայն, քանի որ ժողովրդի իրավիճակը բարելավելու և նրան համախմբված պայքարի հավաքագրելու փոխարեն՝ դրանք վեր էին անվում նույն ժողովրդի շահերի համար պայքարող քաղաքական ուժերի քայքայման, մոռացության էին տրվում գլխավոր խնդիրները, և, որ պակաս կարևոր է, դիմազրկվում և անզորություն էր մասնավոր Ազգային ժողովը:

Արժեքներու սահմանի պատրիարքի նիշտ ընտրութիւնը այնպիսի մի անլուծելի խնդիր էր («ներսեն», այսինքն՝ Երուսաղեմի վանքի վանականներէց, որոնք, իրոք, հարմար թեկնածու չէին կարող առաջադրել «գուրսեն», այսինքն՝ թուրքահայաստակ որեւէ արեւմտահայ արքեպիսկոպոս, որպիսիք առաջադրվում էին մի քանիսը), որ այդպէս այնկողմեր ողջ Արեւմտահայաստանը, դրան միջամտեր նաև Էջմիածնի կաթողիկոսարանը: Եվ կամ այդ նույն տերութեան ազգահայած քաղաքականութեան արդյունք չէ՞ր այն հանգամանքը, որ 1860 թ. իր գոյութիւնը հաղիվ սկսած «Համազգային բարեգործական ընկերութիւնը», ուր ընդգրկված էին ազգի լավագույն ներկայացուցիչները (Չ. Եփրեմեանյան - Մերենցի գլխավորութեամբ), և որի հիմնադրումը մեծ խանդավառութեամբ նշեց «Մասիսը» (1860, № 452), քանի որ այդ կազմակերպութեան ծրագրում տեսնում էր ազգի առաջընթացի հեռանկարներ (1860, № 459), ստիպված եղավ հատուկ հայտարարութիւն տպել իրենց միութեան յուծարքի մասին:

Հաղթանակ էին տանում տերութեան դիժը վարողները, ինչպէս չորս տարի տևած «ներսեն» և «գուրսեն» պայքարում ի վերջո հաղթեցին հետադիմական «ներսեցիները»՝ Երուսաղեմի պատրիարք ընտրելով Եսայի վարդապետին, որն իր կենտրոնախույս քաղաքականութեամբ, անշուշտ, չէր նպաստելու արեւմտահայութեան համախմբման գործին:

Պահպանողականութեան տարած հաղթանակներն աստիճանաբար պետութեանը համարձակութիւն էին տալիս ազատ խոսքի սահմանափակման վերաբերյալ իր սանձազուստները պատրիարքարանի միջոցով կիրառելու ձևերից անցնելու բացարձակ ճշման:

Թուրքական լիբերալներին կամ «նոր օսմաններին» դեմ մեծ վեզիր Ալի փաշայի 1867 թ. հրատարակած մամուլի մասին «ժամանակագոր» օրենքը փաստորեն ավելի էր խտտացնում 1864 թ. «Մամուլի մասին» օրենքը, քանի որ դրաննչսական մարմիններին իրավունք էր ընձեռում կասկածելի փաստարկներին վրա հիմնված պարզ մի շրջաբերականով ուղղակի արգելել ու փակել ուղած պարբերականը:

Պետութեան այս արգելափակիչ միջոցառումները գործունեութեան նոր, դժվարին փուլ էին ստեղծում արեւմտահայ մամուլի, հրատարակախոսական մտքի և ժողովրդի կյանքի բարելավման համար մղված պայքարի գործում: Եվ որքան էլ այդ օրենքների դեմ ըմբոստացան հայ պարբերական մամուլի օրգանները և դրանց թվում ու առաջին հերթին «Մեղուն», միևնույն է, պայքար-

րում Հաղթելու էր հետադիմական կառավարութիւնը, որի քաղաքակրթութեան հասնելու ձգտումները դեռևս շատ հեռու էին հուսադրող լինելուց:

### «ՄԵՂՈՒ» (1856-1865)

XIX դարի 60-ական թվականներին քաղաքական տարբեր հոսանքների միջև ծայր առած գաղափարական պայքարը միաժամանակ ավարտում էր լիբերալ-լուսավորական ծրագրերի ծավալումը հանուն արևմտահայ հանրութեան նորոգման: Այս պրոցեսում իր առանձնահատուկ դերն ունեցավ «Մեղու» ամսագիրը, որը փաստորեն արևմտահայ դեմոկրատական մտքի առաջատարն էր 1850-1870 թթ. , երբ հանդեսը ընդհատումներով հրատարակվում էր նախ Հարութիւն Սրվաճյանի, ապա երկրորդ շրջանում Հակոբ Պարոնյանի ուժերով:

Հայ պատմագիտութեան մեջ Հ. Սրվաճյանի և նրա հրատարած «Մեղվի» գործունեութիւնն ուսումնասիրված է բավական հանդամանորեն, սակայն, մեր կարծիքով, Հ. Սրվաճյանի աշխարհայացքը առաջին, մինչսահմանադրական (1856-1860) շրջանում անհրաժեշտ հստակութեամբ չի գնահատված, մինչդեռ հենց այդ հանգամանքն է տեղիք տվել Հ. Սրվաճյանին և «Մեղվին» սերտորեն գործակցող Գրիգոր Օտյանի քաղաքական դավանանքների թուր գնահատութեանը, որի մասին թերևս պետք է մի փոքր ավելի հանգամանորեն խոսել: Այդ կնպաստի 50-60-ական թվականների արևմտահայ հասարակական մտքի երկու խոշոր ներկայացուցիչների դիրքորոշումները ճշտելուն:

Գր. Օտյանը արևմտահայ սահմանադրական շարժման տեսարանը և «Մեղվի» հովանավորը, պաշտպանում էր տեսակետներ, որոնք միանգամայն բնորոշ էին ժամանակի լիբերալ մտավորականութեանը և իրենց նախադեպն ունեին, հանձինս 40-50-ական թվականների լուսավորիչներ Ն. Զորայանի, Սերվիչենի, Գ. Աղաթոնի, Գ. Սթիմարաճյանի և այլոց արծարծած դադափարների:

Վերցնենք թեկուզև բազմիցս հոլովված և անվերապահորեն Հ. Սրվաճյանին վերագրված «Լեհ գնդապետի մը մեր ազգին համար դատած արհեստը» նշանավոր հոդվածը («Մեղու», 1856, № 3), որի հիմքում փաստորեն 1860 թ. Կոստանդնուպոլսում հիմնված «Համազգային բարեգործական ընկերութեան» ծրագրերն էին, և որի ներկայացուցիչները հետամտում էին ազգը բարեկեցիկ վիճակի հասցնելու համար հավաքել 600. 000 դուռուշ, գրանով մի

մեծ հողակտոր գնել Կիլիկիայում, այնտեղ փորձնական ագարակ ու երկրագործական դպրոց հիմնել, հողագործությունը լավ հասկացող հայ մասնագետներ պատրաստել, նրանց կցել հողի մշակներին և աստիճանաբար դեպի Կիլիկիա գրավել հայրենի երկիրը թողած ու կայսրության մեծ քաղաքներում ապրուստի միջոց որոնող պանդուխտներին և այս ձևով լուծել արևմտահայ Հատվածի սոցիալական ծանր կացությունն անլուծելի խնդիրներից մեկը:

Ե՛վ «Հայաստան», և՛ «Նոյյան աղավնի», և՛ «Մասիս» պարբերականները, և՛ Ն. Զորայանի առանձին ուսումնասիրություններն ուշադիր ընթերցողները կարող են նկատել, որ նման ծրագիրը արևմտահայ լիբերալ գործիչների հարցադրույթների համադրումն էր, Գր. Օտյանը «Մեղվի» հովանավորը, դրանց լավագույն ընդհանրացնողը, այնինչ Շ. Արվանձյանը, դեմ չլինելով դրանց, անդամագրվելով նաև «Բարեկործականին», ավելի որոշակի էր զբաղվում ժողովրդի ծանր սոցիալական վիճակն արժևորող հրատապ հրապարակախոսություն, ուստի և օրվա հեռու չառնչվող թեմաները նրան չէին հրապուրում:

«Մեղվի» լիբերալ թևի տպագրած հոդվածները գերակշռում էին այն նյութերի նկատմամբ, որոնք բացարձակապես պատկանում էին ժողովրդական դիրքորոշմանը և հատկապես, ստորագիր թեև անստորագիր, Շ. Արվանձյանի գրչին, այդ պատճառով «Մեղուն», որ հայ պատմագիտություն մեջ հայտնի է օրվա Շ. Արվանձյանի պարբերական, մինչև XIX դարի 60-ական թվականները հիմնականում ծառայել է արևմտահայ լիբերալ-սահմանադրական ուղղություն, խի աշտեղից էլ բխել է այն արմատացած եզրակացությունը, որ Շ. Արվանձյանը իր հրապարակախոսական գործունեության առաջին շրջանում հարել է լիբերալ, անդամ պահպանողական ուղղությանը:

«Մեղվի» առաջին շրջանի հրապարակախոսությունը բնորոշ էին այնպիսի հոդվածներ, ուր փառաբանվում էր «բարի տանիրոջ» առաքինություններով օժտված միապետը, ինչպիսին էր անստորագիր հոդվածաշարի հեղինակի բնութագրմամբ Լյուդովիկոս XVI-ը (1856, № 2 և հետո):

Նման հոդվածները մինչև փաստական թվականների «Մեղվի» հրապարակախոսությունը չափավոր երանգ էին հաղորդում, թեև դրանով չէր սբողվում նպատակադրման տարբերությունը այնպիսի նյութերի միջև, ինչպիսին էր, օրինակ, 1857 թ. № 9-ից շարունակաբար մինչև № 19-ը լույս տեսնող «Պանդուխտն ի պանդոկ մահու մահճին մեջ» վիպակը, իրական մի պատում իրոք ժողովրդական թշվառություն մասին, աղետալի այն չարիքի, որը վի-

ճակվել էր օտարության և մեծ քաղաքների պանդոկների ու քարվասարանների դադը պատերի մեջ տրոհվող ու մեռնող հային:

Հայի սեփական հայրենիքից օտարվելու, այլ ազգերի հետ ձուլվելու և կամ իր իսկ հայրենիքում ազատությունն ու հավատը կորցնելու, դրանով իր դիմազիծը տրոհելու կարևորագույն խնդիրները դեռ մինչև սահմանադրության հրապարակումը խոր մտահոգություն են պատճառել Սըվաճյանին: Նրա այս ընկալումներին ու մտահոգություններին բնորոշ է «Հայ դադթականություն» անստորագիր հոդվածը (1859, № 26, էջ 204-207), որը մատնում է հեղինակի մեծ տագնապը իր երկիրը ստիպողաբար լքող ժողովրդի հետագա ճակատագրի հանդեպ:

Տեսնելով Հյուսիսային Կովկասից մյուրիդիզմի և Շամիլի շարժման տապալումից հետո մահմեդական լեռնցիների տեղաշարժը դեպի Թուրքիա, հրապարակախոսը գրում է, թե «Իսկյութարի ծովասանդուխին» կանգնած ամեն ոք չի կարող զսպել իր հուզմունքը տեսնելով այս տարագրությունը: Ի՞նչ են փնտրում նրանք այստեղ, և ի՞նչն է դրդել նրանց թողնել Հարազատ վայրերը՝ ավելի քաղաքակիրթ երկրի լուծը փոխելով ոչ քաղաքակիրթ երկրի լծի հետ: Այլ բան է, զարգացնում է իր միտքը Սըվաճյանը, երբ արտագաղթում է Հայը, որի ոտքերի տակ այրվում է Հայրենի հողը, իր որդիներին ծնած հողը, որն այլևս դարձել է այն դաշտը, ուր կոտորվում ու ոչնչանում են Հայերը:

Ժողովրդի տխուր ճակատագրի մասին «Մեղվի» № 26-ում արձանագծած մտքերը հետագա զարգացում են ապրում «Հ. Գ. Սըվաճյան» ստորագրությամբ հրապարակված «Պատասխան առ Մասիս» (1859, № 31, 33, 35), «Հավատափոխություն առ ազնիվ պանտրմացիք և հետևարար ամեն անոնք, որ ինչևիցե պատճառով մը հավատափոխության կզիմեն» (№ 23) հոդվածներում, որոնցում բացահայտվում են ժողովրդին հավատափոխության մղող սոցիալական պատճառներն ու դրանց աղետալի հետևանքները, կորցնել Հայրենիքը, վտանգել ազգային նկարագիրը, խարխիլ ժողովրդի միասնականությունը:

Իր խոսքերը Հ. Սըվաճյանն ուղղում է խոսվահույզ բանդրմացիներին, որոնց հողնատանջ էին արել տեղացի Հայ մեծահարուստները, և որոնց անտանելի չարաշահումներից ազատվելու համար Բանդրմայի ժողովուրդը, Կ. Պոլսի Հայ պատրիարքարանից և Թուրքական կառավարությունից ոչ մի օգնու-



թյուն չստանալով դիմում է Հավատափոխության խարվելով եվրոպական միսիոներներին մեկնած խայծից:

ժողովրդի ապագային դարանակալ ողբերգությունն ընկալվում է որպես անձնական ողբերգություն: Պետականություն, ինքնուրույնություն չունեցող Հայ ժողովուրդը, փոխելով Հավատը, օտարվում էր իր ազգակիցներից: Կաթոլիկ կրոնին ապավինողը կաթոլիկ պրոպագանդիստներին թելադրանքով այլևս դադարում էր Հայ կոչվելուց և դառնում էր «Հոռոմ Հայ», իսկ բողոքականը «Հայ բրոթեկսիան»: Լուսավորչական Հայերն էլ, անկարող ընկալելու եվրոպական քաղաքականության դավերը, ատելությունը էին նայում կրոնափոխներին, և ահա Հայրենիքից, պետականությունից, անկախությունից զրկված մի բուռ ժողովուրդ զրկվում էր նաև ազգային միությունից, այնինչ, գրում է Հ. Արվանճյանը, այս ծանր պարագայում, երբ «միություն կը շինես ուժը», առանց այդ միության, պառակտման այս ուղիով Հայերը շուտով, ընկած մեծ տերությունների իշխանության տակ և մյուս կողմից էլ Հալածվելով ու արհավելով, կոչնչանան ու կվերանան որպես ազգային ամբողջություն: Այսինքն Հավատափոխության երևույթի մեջ Հրապարակախոսը նախ և առաջ դնում էր քաղաքական բովանդակություն, որն արդյունք էր եվրոպական տերությունների անագնիվ դիվանագիտության և դրանից է՛լ ավելի բաջալերված Օսմանյան կայսրության վարած Ֆիզիկական բնաջնջման վաղևի ուղեգծի:

Կոստանդնուպոլսում Անգլիայի գեսպան Հենրի Բուլվերին 1858 թ. գրած նամակում Հ. Արվանճյանը զարգացնում է նույն մտքերը՝ ցոյց տալով այն ծանր կացությունը, որում Հայանվել էր ագնիվ, դարերով տառապած, բայց միշտ իր ագնիվության պատճառով բոլորի կողմից խարված ժողովուրդը: Օտարերկրյա Հոգևորների խորդավանքներն ի վերջո լավ ըմբռնած թուրքական պետությունը Հրաշալի կերպով օգտագործում է ընձեռված Հնարավորությունները իր իշխանության տակ ընկած ժողովրդին վերջնականապես ծնկի բերելու համար: Հ. Արվանճյանի այս գիրքորոշումն, ի վերջո, նույնպես անուղղակիորեն Հակադրվում էր Հայ լիբերալ մտավորականության եվրոպամետ կողմնորոշմանը և արդեն այն ժամանակ բացահայտում վերջիններին մոլորությունը եվրոպական երկրներից սպասվող ակնկալիքներում (1860, № 103):

Բայց Հայ ժողովրդին միսիոներներից հասած ճակատագրական վնասներից ողբերգություն ապրող Հ. Արվանճյանը չի բավարարվում լուկ փաստն ար-

ձանագրելով: Նա աշխատում է վերլուծել այս երևույթի արմատները գալով այն եզրակացության, որ ի վերջո տերությունները ղեկավարվում են սեփական շահերով, որը, ցավոք, չի համընկնում հայ ժողովրդի դարավոր իդեալին:

Եզրակացությունը միակն է՝ հայ ժողովուրդը պետք է միավորվի՝ անկախ իր դավանաբանական պառակտվածությունից և, դավանանքին ուշադրություն չդարձնելով, պայքարի իր ազգային նպատակներն իրագործելու համար:

«Մեղվի» հրապարակման առաջին տարիներին նրա համարներում զուգահեռ, հաճախ նույնիսկ միևնույն էջում, հայտնվում էին իրարամերժ կարծիքներ, ինչպես օրինակ, Սըրվաճյանի հրապարակած հիշյալ «Առ նորին վսեմ. սըր Լենրի Պուլվեր» հոդվածը լույս տեսնելիս: Հոդվածի տակ նույն էջում տպվում է նաև «Հետևություն» չստորագրված նյութը, որի հեղինակը, «ի լրացումն» նույն թեմայի, զարգացնում է Սըրվաճյանի մտքերը ժխտող տեսակետներ:

«Հետևությունում» հայ ժողովրդի ծանր վիճակը ընդհուպ դավանափոխության աղետալի հետևանքները, բացատրվում է հայերի անկարողությամբ, որոնք ոչ մի ջանք չեն թափում «իրենց եվրոպային ճանչըցնել տալու»: Այդ պատճառով էլ եվրոպացիները հայերի մասին գաղափար էին կազմում բողոքական հայերի և կամ եվրոպական թերթիերի հաղորդած տեղեկություններից, որոնց աղբյուրը դարձյալ բողոքական հայերն էին:

«Պետք է օրինավոր կերպով խնդրել», գրում է «Հետևության» հեղինակը, այն դեպքում միայն «Մեր տերությունը «պատրաստ եմ» կզոչե ձեր ուզած արտոնությունները շնորհելու»:

Կարծես թե առանձին մեկնաբանության կարիք չի զգում նաև այն հանգամանքը, որ միևնույն այրող հարցերի նկատմամբ դրսևորված հակադիր վերաբերմունքից բացի «Մեղվի» տպագրած նման նյութերում արգեն պարզորոշ ուրվագծվում էր ազգային ինքնորոշման հեռանկարներում թուրքիայի պետական սիստեմից հիասթափված հայ լիբերալիզմի ձևավորվող համակրանքը դեպի եվրոպական երկրները: Եթե արեւմտահայ դեմոկրատիան հարցը դնում էր ավելի արմատապես ծանր վիճակից դուրս գալու առաջնահերթ միջոցը տեսնելով ազգային միասնության մեջ, իսկ կողմնորոշումների խնդրում ձեռք էր մեկնում հարևան Ռուսաստանին ապափինած արևելահայ հատվածին, ապա արեւմտահայ, լիբերալիզմն արգեն տեսական հիմքեր էր

մշակում ազգային-ազատագրության հարցը, համենայն դեպս տվյալ շրջանում, Եվրոպայի միջոցով լուծելու համար:

Ընդդիմ նույն ըմբռնումներից ելնելով «Մեղզի» լիբերալ թեր ժողովրդի սոցիալական չարիքների գրեթե միակ պատճառը համարում էր օտար կապիտալի ներթուփումը օսմանյան շուկա և գանում, որ հենց այս երևույթը (և ոչ թե նաև այս երևույթը) կասեցրեց Հայ արհեստավորի նախաձեռնությունը և նրան ազրատության գիրկը նեակեց:

Հարցադրումների այս միակողմանիությունն իրենց գուղահեռներն ունեն «Մեղզի» ավելի վաղ հրատարակումներում: Հայ ժողովրդի պատմության ողբերգական արմատները այդ շրջանի հողվածներից մեկում բացատրվում էր նրա «ազգային բնավորությամբ», «անմխարանության ձգտումով»:

«Մեղզի» մի հողվածում կարդում ենք, որ հայերը «օր օրի ազրատանալ սկսան այն տակենն ի վեր, որ Տակհաստան... իր գուռները բացավ Եվրոպայի ճարտարության ու արհեստներուն» (1856, № 2, էջ 25-30): Արեւմտահայ բուրժուազիայի գծողությունն էր Թուրքիան գաղութացնող եվրոպական տերություններից, Թուրքիայի վարած «եվրոպականացման» կամ «մոդեռնացման» քաղաքականությունից, որն իր արտահայտությունն էր գտնում ոչ միայն «Մեղզի» լիբերալ թերի էլույթներում, այլև այդ նույն ուղղության գաղափարափող «Մասիս», գրանից էլ առաջ լույս տեսնող «Հայաստանի» էջերում: Եվրոպական մրցակցությունը չդիմանալով, կարդում ենք «Մեղզի» այդ նույն հողվածում, հայ գյուղացին «էթող իր ընտանիքը, արտերը», Ելավ ուրիշ երկիր գնաց, իսկ «ազգը, կորցնելով իր անհատներին», տուժեց մեծապես:

Այս վիճակից գուրս գալու բանալին «Մեղզի» լիբերալները գտնում էին ազգային երեկյիների անձնական օրինակելի վարքի և ժողովրդին հովանի լինելու մեջ: Վերջին հանգամանքը հնարավորություն կրնձեներ ժողովրդին «ազգ. բնտանիքը կառավարելու հողը բուրրովին իրմե վերցած ու բարի անձերու հանձնելով», «ընտանյաց հողերու ետենն» ընկնել, իսկ երբ համոզվեր, որ տակությունը ազգի միջից բնաջինջ է կղել, ինքն էլ իր «տունեն գանսնք հարածական ընկելու» կմղվեր և մեկ ազգային համերաշխ ընտանիք կկազմվեր (1857, № 10, էջ 218-219: Տե՛ս № 2-ից «Համառոտ տեսություն հայոց ներկա և ապագա վիճակներուն վրա» շարունակարար տպվող հողածը):

Ահա ժողովրդի բուն ցավերն ըմբռնելու այս հայեցական դիրքորոշումն էր պատճառը, որ ստիպեց Ն. Սվաճյանին առաջին ուժեղ գրչապայքարը ծավալել «Մասիսի» դեմ, հակամարտության մեջ մտնելով խմբագրի Հետ Բանդրմայի դեպքերը մեկնաբանելու խնդրում: Բանակռիվը հարցի շուրջ, որ ծագեց «Մեղվի» և «Մասիսի» միջև, նոր ուժով դրսևորեց Ն. Սվաճյանի ժողովրդասիրտությունը, ոչ միայն օտար, այլև ազգային կեղեքիչների գործելակերպը մերկացնելու նրա կարողությունն ու համարձակությունը: «Պանդրմայի առաջնորդը չուզողները ի՞նչ մարդիկ են» հոդվածով (1859, № 19) Ն. Սվաճյանը բացահայտում էր փողատերերի կամայականությունների թողնված ժողովրդի թշվառ վիճակը: Ունևորների և ընչազուրկների այս հիմնահարցի արծարծումն աննախադեպ էր արևմտահայ հրապարակախոսությունում, առավել ևս մինչսահմանադրական հրապարակախոսությունում մեջ, երբ դեռ կարծես հաշտ էին ընթանում լիբերալ և դեմոկրատական մտայնության ուղիները, համենայն դեպս «Մեղվի» էջերում: Ժողովրդի թեկնածու թեմական առաջնորդին չուզողները, գրում է Սվաճյանը, 4-5 մեծատուններ են, որոնք անսքող թալանելու, ժողովրդին անպատիժ կեղեքելու համար ձգտում են պաշտոնանկ անել իրենց ոչ հարմար կրոնավորին, ամենևին ուշադրություն չդարձնելով բողոքող բանդրմացիների վրա: Հաջորդ հոդվածում Սվաճյանն արդեն պարզաբանում է, որ «Այս խոռվություն ալ բուն պատճառը սա է, որ այն մեկ քանի անձերը, այնտեղի բոլոր եկեղեցական կառավարությունը և եկամուտները ձեռք անցուցած ըլլալեն զատ, ժողովուրդին առտնին և քաղաքական գործերուն ալ մեջ մտնելով, ամեն գործերը իրենց ձեռքովը կը տեսնին, ուզածուն պես դատաստան կը տեսնին՝ միշտ հարուստը, այսինքն՝ իրենց ավելի ստակ տվողը իրավանց տեր հանելով...» (1859, № 20, էջ 153):

Սվաճյանը պաշտպանում է կեղեքիչների դեմ ըմբոստացած բանդրմացիներին, որոնք ուզում էին զսպել կամայականություն սերմանողներին և ստիպել Կոստանդնուպոլսի Ազգային ժողովին անսալ իրենց ձայնին: Ժողովուրդը, որին արդեն հոգնատանջ էին արել հայաժանքները, սպառնում էր իր բողոքները չլսելու դեպքում «Հասունի գիրկը» ընկնել:

Ո՞րն է ըստ Սվաճյանի Բանդրմայի առաջնորդի՝ Հովհաննես Եղևսյան եպիսկոպոսի մեղքը. այն, որ նա ազգային ժողով հաստատեց, որոշելով չորս անձնիշխանների գրկել կամայականություններ անելու իրավունքից: Այս բանը, բնականաբար, դժգոհություն առաջացրեց գրություն տերերի մեջ,

նրանք սկսեցին Հայածել առաջնորդին, այնինչ Կ. Պոլսի պատրիարքարանում նրան չպաշտպանեցին, չպատժեցին անօրինակություններ թույլ տվողներին, որպեսզի առաջնորդի Հեղինակությունն այդ ձևով բարձրանա, կարողանա շարունակել իր բռնած ճիշտ ընթացքը ոչ միայն ազգային, այլև թուրք կեղեքիչներին շրջանում: Այսպիսով, Արվաճյանը մինչև սահմանադրութայն ընդունումը արդեն քննադատում էր Ազգային վարչությունն ու պատրիարքարանը, մեղադրում էր նրանց ժողովրդի ձայնին չունկնդրելու մեջ: Այս Հանդամանքը նույնպես շեշտում է «Մեղվի» և «Մասիսի» միջև եղած տարածայնությունները: Մինչդեռ «Մեղուն» գրում էր, թե վերը նշվածն է «միակ պատճառ Հայոց ամեն ատեն օտարներու ռաքին տակ երթալուն», «Մասիար» դժգոհում էր «Մեղվի» բռնած ընթացքից և գրում. «Մեր ազգին վիճակին և ժողովրդյան մեծագույն մասին տգիտությանը նայելով, ազգային կառավարութայն գործերուն վրա չափով, խոհականությամբ և արդարասեր ողբով պետք է դատաստան բլլվի Հրապարակական թերթի մը մեջ, և ոչ թե անոր Հարզն ու Համարումը կտրելու, և բարոյական ազդեցությունը, որ անոր միմիայն գորությունն է տկարացնելու կերպով» («Մեղու», № 20, էջ 155, 1859, № 409):

Այս տարածայնությունները լիրերալ «Մասիսի» և Հ. Արվաճյանի միջև խորն էին, և դրանց բացահայտումը նպաստում է Հասկանալու, թե ինչու Հետադադում ևս սահմանադրութայն Համար պայքարող Հրապարակախոսը այդպես անխնա սկսեց քննադատել նաև սահմանադրական ժողովն ու Հոգևոր վեհապետությունը, երբ Հենց սահմանադրութայն Հրապարակման տարում Համոզվեց, որ նոր ստեղծված վարչության ղեկն իրենց ձեռքը վերցրած ազգային երևելիները դարձյալ պաշտպանում են միայն ուժեղների շահերը՝ անտեսելով մեծամասնությանը:

Սահմանադրությունն ընդունելուց մեկ ամիս չանցած «Մեղուն» վրդովված գրում էր, թե ինչպես Ազգային ժողովն ու նրա Երեսօխանները ազատ են արձակել Վանի Պողոս վարդապետի նման մի Հանցագործի առանց նրան գոնև կարգադուրի անելու: Վերջպես, մինչև «Մեղվի» խմբագրին ուղղված Մ. Նալբանդյանի Հայտնի նամակի տպագրությունը (1860, № 119, էջ 273-276), Արվաճյանը № 118-ում Հրապարակում է «Վանցի Պողոս եղբայրը» նյութը, ուր պայքարի Հրավեր նետելով ողջ Ազգային ժողովին, նրա կրոնական խորհրդին, ի լուր ամենքի Հայտարարում է, թե «Մեղուն» իրեն խարված

է գգում ոչ թե մասնավորապես Պողոս վարդապետի Հանդեպ արված թույլ դատի, այլ այն պատճառով, որ պատրանք է եղել իր կարծիքը «կրոնական ժողովին իր պարտուցը հսկողութիւն վրա», ուստի կրոնական ժողովի այդ կողմնակցութիւնը դատապարտելով «Մեղուն» է պարտավորվում ժողովրդի առաջ մերկացնելու Պողոս վարդապետի Հանցանքները և դնելու իր դատակնիքը (№ 118, էջ 266-267):

Իր բացահայտ պայքարում ընդդեմ իրենց չարդարացնող Ազգային և Կրոնական ժողովների Սրվաճյանն ավելի հեռուն գնաց և դիմաց չտեսնված մի քայլի, օրագրի միջոցով իր վճիռը հայտնելով հասարակութայնը խնդրեց նրա կարծիքը. այսինքն «Ընթերցասիրաց ընկերութիւն» գրասենյակը գալով իրենց ստորագրութիւնները դնել «Մեղվի» դիմումի տակ: Այդ օրերին Կոստանդնուպոլիս եկած Մ. Նալբանդյանի համար թերևս նույնիսկ անսպասելի էր պայքարի նման մակարդակով արված փաստը, և նա, անմիջապես համեմալիվելով առաջադրված միջոցին, իր վերը նշված նամակում գրեց, թե «Հայոց ազգի մեջ դեռ առաջին անգամն է, որ մի օրագիր, իր վճիռը հրապարակելով, խնդրում է բանավոր հասարակութայն կարծիքը: Անպատմելի ուրախ ենք այս բանի վերա» (1860, № 119, էջ 273):

Եթե Մ. Նալբանդյանի համար մինչև Կոստանդնուպոլիս գալը որոշակի անակնկալ էր Հ. Սրվաճյանի նման հրապարակախոսին Հանդիպելը, ապա Սրվաճյանի համար այդ նույնը չէր, որն ապրել ու ոգևորվել էր Նալբանդյանի հայացքներով, վերջինիս հրապարակախոսական ասպարեզ մտնելու առաջին իսկ օրից:

Բնորոշ է այս տեսակետից այն հրճմանքը, որ հակառակ լիբերալների ու պահպանողականների, ապրում էր Հ. Սրվաճյանը՝ արեւելահայ մեծ դեմոկրատի մուտքը Կոստանդնուպոլիս արձանագրելով. «Շատոնց ի վեր, - խոստովանում է Սրվաճյանը, - կը ճանչեինք պ. Նալբանդյանը իր հրատարակութիւններովը Հյուսիսափայլ օրագրին մեջ և, իր ոգվուն սկզբանցը լավ ծանոթ ըլլալով հեռվեն, հեռվեն կօրհնեինք նաև իր և իր արժանապատիվ աշխատակիցներուն Զանքերը ի լուսավորութիւն Ազգին և մասնավորապես ուսուխարնակ ազգայնոց» (1860, № 117, էջ 258):

Սրվաճյանը երջանիկ է ծանոթանալու «Հյուսիսափայլի» գլխավոր աշխատակցի հետ ոչ միայն այն պատճառով, որ նա «Հյուսիսափայլը» համարում է «Թուսիո մեջ» «ոչ թե միայն սկզբունքներովն ու ազատամտությամբը, այլ նաև նյութերուն քնարությամբն ու մեջը փայլած ամեն տեսակ

դիտութիւններովը» «էն պատմական հայ օրագիրը», այլև այն պատճառով, որ Նալբանդյանին համարում է իրօք հայ ժողովրդի միասնութիամբ ու ապագա ազատագրութիամբ շահագրգռված գործիչ, ուրախ է, որ Նալբանդյանի միջոցով կամբանա կապը արեւելահայ «ազգայնոց» հետ, որոնց Նալբանդյանը «մեր իղձերն ու ջանքերը հասկըցնելով զանոնք ալ մեզի գործակից ընելու պիտի աշխատի»:

Թվում է բացատրութիւն կարիք չեն զգում «Մեղվի» խմբագրի ազգային գործելակերպի լայն ընդգրկումներն ու ծրագրերը, ընդհուպ մինչև «սուսիարնակ ազգայնոց» հետ գործակցելը, որոնց իրագործման հեռանկարներում նա հենվում էր Մ. Նալբանդյանի կանխագծումներին ու մտադրութիւններին: Այստեղից հեշտ է եզրակացնել, թե ինչու դեռ մինչև Մ. Նալբանդյանի Կոստանդնուպոլիս գալը Շ. Արվաճյանը «Մեղվի» տարբեր համարներում արտասպում էր հատվածներ «Հյուսիսափայլում» հրատարակված Մ. Նալբանդյանի ստեղծագործութիւններից, ինչպես «Մանկութիւն օրեր», «Ազատութիւն» բանաստեղծութիւններն են (1860, № 107, № 109) կամ կոսմ էմանուէլի «Հիշատակարանից» մի շատ բնորոշ հատվածը, ուր մասնափորձապես ասված էր. «Ազատութիւն հաստարանը և լծակը է հասարակ ժողովուրդը: Մի ազգ, թող սրբան էլ կամի, հարուստ լինի երևելի մարդերով, այնուամենայնիվ այդ ազգի ազգութիւն մեքենան շարժվում է հասարակ ժողովրդի վերա, սա է այդ մեքենայի առանցքը, լծակը և հաստարանը» (1860, № 101, էջ 130):

Սահմանադրութիւնը Շ. Արվաճյանը դնահատում էր ելնելով մեկ սկզբունքից, թե որքանով այն նեցուկ կլինի ժողովրդին, և սահմանադրութիւն հռչակման առաջին իսկ օրից սթափ հայացքով էր զննում Ազգային ժողովի գործունէութիւնը, այնինչ սահմանադրութիւն ընդունումից մեկ տարի հետո «Մեղվի» լիբերալ թիւը գրում էր, թե «երանի կուտան հեռարնակ հայերը տաճկաստանցի հայերուն» իրենց վայելած սահմանադրական արտանութիւնները համար (1861, № 127, էջ 58):

Այդ նշանակում էր, որ սահմանադրութիւն նվաճելու համար հետեոյապանորեն պայքարող Շ. Արվաճյանը հրապարակից սահմանադրական Ազգային ժողովի գործունէութիւնից, այդ ժողովի հիմնադրման առաջին իսկ օրերից: Այդ ունեւր իր սկզբունքային պատճառները և բխում էր Շ. Արվաճյանի խոր ժողովրդավարութիւնից:

Ժողովրդի սոցիալական իրավիճակի բարելավման ծրագրի բացակայու-  
թյունը սահմանադրական ժողովի ծրագրերում և թուրքական բռնակալու-  
թյան բիրտ սահմանափակումներով պայմանավորված՝ հայ ազգային-ազա-  
տագրական շարժումների անհեռանկարայնությունը է. Արվածյանին  
կանգնեցրին գաղափարական խոր փակուղու առաջ, որը և նրա նման անհան-  
գիստ մի հրապարակախոսի ստիպեց մտնել անհավասար պայքարի մեջ նո-  
րաստեղծ Ազգային ժողովի և նրա շուրջ համախմբված գործիչների հետ:

Հակասություններն արտահայտվում էին այն հոդվածներում, որ տպագ-  
րում էր է. Արվածյանը Երուսաղեմի խնդրի կամ «ներսեն ու դուրսեն» պայ-  
քարի, Պողոս վարդապետի դատի, կղերի պահպանողականություն, ազգային  
հիվանդանոցում իշխող անտանելի վիճակի, կենտրոնական վարչություն կող-  
մից զավառահայերի սահմանադրական իրավունքների սահմանափակման,  
նրանց բողոքների նկատմամբ եղած անտարբեր վերաբերմունքի և այլ հար-  
ցերի մասին, որոնց դեմ անհաշտ պայքար էր մղում է. Արվածյանը:

«Մեղվի» և նրա խմբագրի բռնած անհաշտ ընթացքը Ազգային ժողովի,  
պատրիարքարանի և, այստեղից հետևող թուրքական կառավարության մեջ  
ընդունված «հնազանդություն» նորմերի դեմ բնականաբար խախտում էր  
պարբերականի անխափան հրատարակումը, և «Մեղուն» ու Հարություն  
Արվածյանն են, որ հետևողականորեն պատժվում էին՝ առաջինը՝ չհրատա-  
րակվելով, երկրորդը՝ պատրիարքարան կանչվելով, սաստումներ ու տու-  
գանքներ ստանալով: Թեթև սխալ չի լինի, եթե ասենք, որ մինչև թուրքա-  
կան 1865 թ. հունվարի 1-ից գործողության մեջ մտած «մամուլի օրենքների»  
հրատարակումը ոչ մի արևմտահայ պարբերական այնպես չի հալածվել,  
ինչպես «Մեղուն», իսկ մամուլի մասին պետական նոր օրենքները, որոնք  
մինչ այդ էլ հայոց պատրիարքարանի և Ազգային ժողովի կողմից տարբեր  
ձևերով կիրառվում էին մամուլի օրգանների և նրա հրատարակիչների նկատ-  
մամբ դեռևս 60-ական թվականների սկզբներից, փաստորեն անհնար դարձրին  
«Մեղվի» հետագա գոյությունը, որի մասին նախօրոք հայտնում էր ինքը՝  
Արվածյանը:

Թուրքական օրենքները մամուլի մասին և գրաքննչական պատիժները  
բացարձակ մարտահրավեր էին ազատ խոսքի ջատագովներին նաև տպագա-  
տասնամյակների համար և գործողության նոր ծրագիր էին, որին դա-  
տապարտված էին ղիմակայել պետականությունից դուրս և օսմանյան  
սահման չճանաչող կամայականություններին ենթակա ժողովուրդները: է.



Արվաճյանը կատարեց իր խոսքը, որով նա հանդես էր եկել «Մեղվում» դեռ նախքան «օրենքների» կիրառումը, բայց որում, նա գտնում էր, որ ավելի լավ է «Մեղուն» մեռնի ազատության փլատակների տակ, քան շարունակի իր գոյությունը մամուլի կոչումը ստորացնող պայմաններում:

1865 թ. Հունիսին, երբ մամուլի սահմանափակումների դեմ բողոքում էր նաև «Մասիսը», Հինգ տարով փակվեց Հ. Արվաճյանի «Մեղուն», որից հետո, 1870-1874 թթ., սկսվեց նրա հրատարակության երկրորդ շրջանը:

### «ՄԻՈՒԹՅՈՒՆ» (1860) ԵՎ

### «ՄԻՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ» (1861-1862)

1860 թ. գմյունահայ մամուլի ընդհանուր ուղղության շրջադարձն էր, որը սկզբնավորվեց «Միություն» հանդեսի երևան գալով: Մինչ այդ լույս տեսած պարբերականները, մասնավորապես «Հայրենասերը» և «Արփի Արատյանը», թեև ունեցան իրենց ինքնուրույն ուղեգիծը, սակայն հետո էին Հայ հասարակական մտքի վերընթաց ուղին արտացոլելուց: Զմյունահայ մամուլի պատմության մեջ «Միությունը», ապա և նրանից մեկ ու կես տարի հետո ասպարեզ իջած «Ծագիկ» հանդեսը, նշանավորեցին Հայ դեմոկրատական մտահայեցության կազմավորումը:

«Միությունը» հիմնել ու հրատարակել է Հաշտենից ընկերությունը, այն կրում էր «Հանդես Հաշտենից» ենթատիտղոսը: 1859-ի Հուլիսի վերջերին, այն օրերին, երբ Զմյունիսյի հայկական միջավայրում տեղի էին ունենում լուրջ խմբումներ, մի խումբ առաջադեմ երիտասարդներ հիմնում են Հաշտենից ընկերությունը և շուտով սկսում հրատարակել նրա հանդեսը «Միությունը»: Դա մի ժամանակաշրջան էր, երբ Հայ մամուլում լայն արձագանք էր գտնում Իտալիայի ազատագրական պատերազմը, երբ «Արևմուտքը» Փարիզից, «Մեղուն» Կ. Պոլսից և «Հյուսիսափայլը» Մոսկվայից ազգային զարթոնքի կոչեր էին հղում, ազդի առաջընթացն ու ազատագրության նախապայմանը համարում ազգային միասնությունը և կրթության զարգացումը:

Հաշտենից ընկերությունը գալիս էր արագացնելու «իմաստության արեգակի» ծագումը, այլ խոսքով, նպաստելու լուսավորության տարածմանը: Ընկերության հիմնադիրները և նրա կորիզը կազմող խորհրդական անդամներն էին Հայրապետ Սավաճյանը, Տեառյան եղբայրները, Հովհաննես

Մաքսուտոֆը, Սարգիս Պալապանյանը, Գրիգոր Կոստանդյանը, Հակոբ Մարկոսոֆը, Ղուկաս Մամուրջյանը, Սարգիս Վանանդեցիին, որոնք արդեն Հայտնի էին իրենց գրական-մանկավարժական, գիտական-թարգմանական, ոմանք նաև Հասարակական ու հրապարակագրական գործունեություններով:

«Միություն» Հանդեսի առաջին Համարը լույս է տեսել 1860 թ. Հունվարի 1-ին: Ծավալով այն մեծ է՝ 8 էջ: Հանդեսը երկշաբաթյա պարբերականությունով էր գոյատևել է գրեթե մեկ տարի: Դեկտեմբերի 1-ին հրատարակվել է նրա վերջին՝ 23-րդ Համարը: Հանդեսի տպագրություն մասին թեև նախապես ծրագրային հայտարարություն չի հրատարակվել, բայց նրա անդրանիկ հոդվածը կրում է հենց «Հայտարարություն» խորագիրը՝ «Խմբագրություն» ստորագրությամբ: Դա Հաշտենից ընկերություն վերոհիշյալ ինը ղեկավարների Համատեղ խոսքն է ընկերություն և նրա օրգանի մասին: Նրանց «անձնական խնամքովն և աշխատասիրությամբ» լույս տեսնող Հանդեսը նախատեսված էր դարձնել ընկերություն բարենպատակ ձգտումների լուսարանման օրգանը: Հայտարարությունը որոշակիորեն շեշտում է Հանդեսի ուսումնական դիմագիծը, բանասիրական և բարոյագիտական նյութեր տպագրելու նպատակը:

Ինչպես ցույց է տալիս Հայտարարությունը, խմբագրությունը ծրագրել էր իր ջանքերն ի սպաս դնել ազգային երկպառակությունները վերացնելուն և միություն ու փոխադարձ սիրո Հաստատմամբ ընդհանուր առաջադիմություն աջակցելուն:

Առանձին շրջափուլ է կազմում «Միության» ինն ամիսների՝ Հունվարից սեպտեմբեր ընկած ժամանակամիջոցը, երբ տպագրվել են Հանդեսի 17 Համարները՝ ընկերության ղեկավարների ընդհանուր խմբագրությամբ: Այդ կազմում առաջնային սեղ ունեին ընկերության ատենադպիրը և գանձապետը՝ Սավալանյանն ու Կոստանդյանը:

Խմբագրական ընդհանուր մարմնի մեջ նրանք չեն կորցրել իրենց անհատականությունը, հոդվածներ են տպագրել իրենց իսկ ստորագրությամբ և հրապարակել սեփական մտորումները:

Հայ մշակույթի ասպարեզում արդեն ճանաչված թարգմանիչ-հեղինակի՝ Սավալանյանի (1821-1901) առաջին հոդվածը նվիրված է Հայոց մատենագրությանը՝ «գրատանց»: Ազգային լուսավորությանը նպաստ բերելու նպատակով այս մոռացված խնդրի հարուցումը չափազանց տեղին էր: Հեղինակը, որ դրանից առաջ աշխատել էր Երուսաղեմի միաբանությունում և

լավատեղյակ էր նրա ձեռագրատան վիճակին, գրատներն ու դիվանները համարում է ազգի հարստությունն ու «ընդհանուր օգտիցը» ծառայող հաստատություններ:

Սովալանյանը, ընդգծելով հայ ձեռագրերի մեծագույն արժեքը, նշում է, որ դրանց պաշտամունքը բխում է ուսման փափագից: Դրանք պետք է մատչելի լինեն ժողովրդին, որը, փրկելով իր կյանքը, փրկել է նաև գրքերն ու հիշատակարանները: Ինչպես ժողովուրդը, այնպես էլ նրա գիտությունն ու գեղարվեստն ամփոփող մատյանները դարեկար ճնշվել ու հալածվել են: Այսօր դրանք չպետք է մնան «ուրիշ ավելի խորագույն խորշի և անլույս դարանի մը մեջ» և ցեցի ու փռու կեր դառնան: Հեղինակը «ինչ ընելու է» հարցը լուծում է հաշվի առնելով հայություն ցիրուցան վիճակը և ելնելով ազգի «գլուխ մը և իշխան» չունենալուց, առաջարկելով հրատարակել ձեռագիր ժառանգությունը:

Սովալանյանն ավելի հանդամանորեն անդրադառնում է Երուսաղեմի մատենադարանին, որն ինքը պրպտել, քննել էր: Հազարի չափ մատյանները մինչև 600 տարվա հնություն, շատերն էլ հազվագյուտ, «հետին աստիճանի անխնամ թողնված... մասնաշափ փռու տակ թաղված են», գրում է նա: Հոգվածագիրն անհրաժեշտ է համարում գրադեպ գրքատեր կարգել, կազմել ձեռագրերի գիտական ցուցակ, հիմնել ուսումնարան «ներհուն, բանագետ և աշխատասեր» մշակներ պատրաստելու համար:

Հ. Սովալանյանը, նրա հետ նաև «Միություն» մյուս խմբագիրները, այդպիսով հարուցում էին հայոց ձեռագրերի գիտական քննության խնդիրը, գրեհորում նրանց անկրկնելի արժեքի ըմբռնողություն, հրապարակայնորեն արծարծում դրանք ժողովրդի սեփականությունը դարձնելու հարցը:

Գ. Կոստանդյանը սկզբունքային կարևորություն էր տալիս ազատախոսության նշանակությանը հայ կյանքի և իր ժամանակի իրազրություն համար: Պարտքի գիտակցումը և պարբերական մամուլի ժողովրդի կյանքում կատարելիք գերի ըմբռնումը Գ. Կոստանդյանին հանդեցնում է իրավացի եզրակացության. «Մեզ նման սփռվալ ժողովուրդը ի՞նչ կըլլա արդոք, եթե բնագոտություն մտիկ չընեն և օրինավորին և լավագույնին զեմ կկենա գոտոգանալով...: Միությունը իրեն նպիրական պարտք սեպած է չկասիլ օրինավոր բնագոտություններ և վիճարանություններ ընելի, քաջ գլխանալով, որ չափազանց օգտավետ կազմուրիչ մ'է նաև ներկա հայություն» (էջ 34): Սակայն Գ. Կոստանդյանը միաժամանակ մերժում է բուռն բանավեճերը, ա-

ուսման ևս այն բանակազմները, որոնք ողողում էին այն ժամանակվա հայ մամուլի էջերը ուղեկցվելով փոխադարձ վիրավորանքներով: Նա հանդարտ, ծանրակշիռ, փաստարկված բանավեճի կողմնակից էր:

«Միության» խմբագրական կազմում որոշիչ դերք ունեւր Ղ. Մամուրյանը: Ա. Փափազյանի վաղեմի առաջադեմ սանը, որ 1850-ականի սկզբներից Ալեքսանդրիայի հայոց Արամյան դպրատան գովելի վարդապետն էր, իսկ տասնամյակի վերջերից՝ Մեսրոպյանի տեսուչն ու դասատուն, հայտնի էր Ֆրանսերենից կատարած մանկավարժական տրակտատների թարգմանությամբ:

Ղ. Մամուրյանի ինքնուրույն առաջին հոդվածը՝ «Աղջկանց դաստիարակության վրա դիտողություն մը» (էջ 34-37), շոշափում է իրական սեռի ազգային կրթության ու դաստիարակության հրատապ խնդիրները: Քննության դնելով ազգային դաստիարակության խնդիրը, Ղ. Մամուրյանը նկատում է, որ այդ խնդրի նշանակությունը և անհրաժեշտությունն ըմբռնողները քիչ են, «հետևաբար կենթադրենք, թե վտանգը մեծ պիտի ըլլա», - գրում է նա: «Միությունը» դրանով իսկ հարուցում էր կանանց ազատագրության խնդիրը, որը շուտով պետք է ստանար նաև սոցիալական բովանդակություն: «Միության» առաջին շրջափուլը նշանավորվել է արժեքավոր ձեռքբերումով: Նրա էջերում սկսել է հանդես գալ Մատթեոս Մամուրյանը, որը, լինելով պատրիարքարանի ղեկավանպետը և ապրելով Կ. Պոլսում, անդամագրվել էր Հաշտենիցին: Նա Կ. Պոլսից Հաշտենիցին է ուղարկել արևմտահայ գրականության առավել նշանակալից երկերից մեկը՝ «Անգղիական նամականին», որի տասներկու նամակներն առաջին անգամ հրատարակվել են «Միության» էջերում, 1860 թ.:

Երևույթն ինքնըստինքյան կարևոր նշանափուլ է հայ հրատարակատեսության ու հասարակական մտքի համար: Մտքեր հուզելու տեսակետից այն նշանակությունը, որ ունեցավ Մ. Նալբանդյանի «Հիշատակարանը», նույն հասարակական արժեքն արևմտահայ կյանքում ունեցավ Մ. Մամուրյանի այս, ինչպես և «Հայկական նամականին», իբրև հայության զանգվածներին հուզող, հրատապ հարցեր արծարծող և փիլիսոփայական ու տնտեսագիտական լուրջ դադափարներ առաջադրող երկ: Նամականին հրատարակախոսական հզոր հնչեղություն ուներ առհասարակ, իսկ «Միության» համար մասնավորապես: «Անգղիական նամականին» պարզապես հայտնություն էր, կողմնորոշման նշանակետ:

Զմյուռնահայ երիտասարդությունն Հանդեսը առանձին Հողվածով չի անդրադարձել սահմանադրությունը: Միայն այն բանից Հետո, երբ պատրիարքը վավերացնում է սահմանադրությունը, Հանդեսի 13-րդ Համարում խմբագրությունն առաջնորդողի փոխարեն տպագրում է Մ. Մամուրյանի «Ազգային սահմանադրություն» հողվածը:

Հրատարակելով Մամուրյանի հողվածը խմբագրությունն արտահայտում էր իր համերաշխությունը և զազափարական դաշինք Հաստատում նրա Հեղինակի Հետ: Մամուրյանի այդ հողվածը սկզբունքային կարևորություն ունի արևմտահայ Հասարակական մտքի կողմնորոշումը պարզաբանելու համար: Հողվածում վաղեմի ժամանակները Հիշելուց Հետո Մամուրյանը նկարագրում է ներկա վիճակը. «Մեր ազգին նավը... Հիմա մրրկալից օվկիանոսի մեջ Հակասակ Հովերով կտարուրերի և քանի կՀեռանա Հայրենական սիրելի եզերքեն ծովամույն ապառաժներ և խուժք առջևը կելնեն: Մեր ղեկավարները նոր ալեկոծ ծովերը չճանչնալուեն մատահություն չունինք վրանին: Ներքին և արտաքին չար ազդեցություններ դմեզ կճնչեն: Անզսպելի կիրք, անիրավություն, իշխանասիրություն օրեօր երևան կուգան: Կաշառատուն, կաշառակերր, շահախնդիրը ու փառամուրը ձեռք ձեռքի տված ազգին իրավունքը ռանակոխ բնելու դժվարություն չէին քաշեր: Այս էր մեր միապետական կամ յով ևս բսեմ անիշխանական ժամանակը» (էջ 98):

Սահմանադրությունը, գրում է Մամուրյանը, ավետում է այդ ամենի վախճանը, այսուհետև սահմանադրությունն է «մեր օրինաց սկզբունքը, մեր ակերը և չէ թե այսինչ իշխանը և այնինչ կրոնավորը»: Սակայն, որպեսզի սահմանադրությունը դառնա գործող օրենք, Հարկավոր է այն Հսկել: Ժողովուրդը նրան պետք է չունչ և իշխանություն տա, պետք է «աչքը չորս» արած ազգային Հաստատություններից պահանջի «օրինապես և սահմանադրապես» շարժվել. Հարկավոր է Հիմնել բնկերություններ, լրագրերն ավելացնել, «հասարակաց բնդհանոր կարծիք մի ստեղծել», որպեսզի ազգային ժողովն իր ամեն մեկ քայլը կատարելիս պատկառի, ինչպես ընդհանուր դատավորից:

Մամուրյանն անդրադառնում է «մանր-մունք կուսակցություններին», որոնց թիվը դեռ կավելանա, և որոնք դեռ պիտի «խրտին զազանի կամ բացարձակ», սակայն նրանց բոլորի նպատակը պետք է լինի «ազգը արթուն պահելը»: Նա համարձակությամբ առաջ է քաշում ժամանակի համար թերևս ամենից կենսական Հարցը, անհրաժեշտ է Համարում, որ «ժողովրդյան մեջ

ազգասիրական կուսակցություն մի, անոր հառաջագնաց, ողջախոս և ընտիր մասեն բաղկացյալ կազմվի և տիրապետեն ամենուն վրա» (էջ 101-102):

Սա Մամուլայանի 60-ական թթ. ծրագիրն էր, որ ընդհանրապես շատ չէր տարբերվում Հաչատնիցի գործիչների ծրագրից, «Միության» առաջին տարեկանի ուղեգծից:

Զուգադիպությունը պատահական չէր, զմյուռնահայ երիտասարդությունն այդ շրջանում հանդես էր բերում ընդհանուր շահագրգռություն նպաստելու ազգային առաջադիմությունը: Նպատակի նույնությունը պայմանավորել էր նրանց համատեղ աշխատանքը:

«Միության» երկրորդ շրջափուլը սկսվում է նրա 17-րդ համարից, որտեղ հրատարակվել է «Մարդկային կենցաղ» խորագրով այլաբանական պատումը, որը, սակայն, մնացել է կիսատ, բայց շարունակվել է «Միություն սահմանադրականում» 1861-1862 թթ. և դարձյալ մնացել անավարտ:

Սխալված չենք լինի, եթե, մասամբ, Գ. Զիլինկիրյանի հետևություններ, թեկուզ, այս հոդված-պատումի հետ կապենք «Միության» գաղափարական անցումը դեմոկրատական սկզբունքներին, թեև կոնկրետ կերպով այն չէ, որ առիթ է տվել խմբագրություն պառակտմանն ու հետագիմություն անմիջական հարձակմանը («Մաղիկ», 1861, № 17, էջ 52):

Մանրամասնորեն չանդրադառնալով այլաբանորեն ներկայացվող հոդվածաշարին նշենք, որ հեղինակի նշանաբանն է. «Ազատախոսությունը անիրավ գործերու դեմ անսխալ զենք մ'է»: Այս սկզբունքով էլ նա խոսք է բացում ազգային անհոգություն մասին և նրա ինչ լինելը բացատրելիս շեշտում, որ անձնական ընդհանուրին զոհելը դուրսգաղնություն է: Ազատախոսություն կոչ անող հեղինակը, թեև ազատ չէ իր մտորումները բացելուց շարագրելիս և բավարարվում է միայն ակնարկներով, այնուամենայնիվ, երևան է հանում «Միության» և նրա խմբագիրների սկզբունքային դիրքորոշումը կղերահետադիմական հոսանքի և առաջադիմական գաղափարախոսություն նկատմամբ: Հեղինակը նկատի ունի առաջագնաց, պայքարող երիտասարդությունը, նրա հավաքական կերպարը կամ էլ ուղղակի Մ. Նալբանդյանին, որ գրեթե միևնույնն է, քանզի Նալբանդյանն իր բոլոր գործերով, գաղափարներով ու հույսերով ողջնչում էր 50-60-ական թթ. առաջագնաց հայ երիտասարդությունը, նրա պատգամախոսն էր, գրոշակակիրը և առաջնորդը:

Հոդվածի հաջորդ հատվածը տեղայնացված է. հեղինակը նկատի ունի զմյուռնահայ մշակութային կենտրոնը՝ Մեսրոպյան վարժարանը, որ անվան-

ված է «ժողովատուն մի», ներկայացված է իբրև հակապատկեր քաղաքում նկատվող եռանդի, պղատարխոսության, առաջադիմության, անվեհերության: Վարժարանում անշուքություն է, նրա «արժեքը և երախտիքը մոռացված և լքված» են, նրանում ամբողջուն է տիրում:

«Թշվառ ժողովատուն... - գրում է Հեղինակը, - քո ժամացույցը դարբնի և ստաղձագործի գործիքներով կուզեն կարգադրել և լարել... Հիշեցու՛ր արյունդ, այլազգյայ հավատո պատերազմին նման կանգնե՛ր քու դրոշակդ, Հրավիրե՛ր քու զավակներդ... զա՛րկ Հրավիրի զանգակը... 63 տարվա փառացի վրայեն մի՛ թողուր, որ բենկիթիմուրներու և ճինկիդխաներու մահառիթ կառքը սահի անցնի...» (էջ 141-142): Կոչ անելով պայքարի ելնել «Հայրենասիրական վահանով», Հեղինակը վերջում ազգարարում է. «Հայրենասեր սիրտ մի բնավ պետք է ընկճի, երբ շունչ ունի և կենդանի է...»: Հողվածի Հեղինակը գաղափարապես զինված է առաջադիմական հայացքներով, ջերմ հայրենասեր է, սուղորված վստահությամբ:

Պետք է նշել, որ «Միություն» խմբագիրները ծանոթ էին «Հյուսիսսփայլի» եթե ոչ բոլոր համարներին, ապա այն համարին, ուր նալբանդյանն իր «Հիշատակարանի» համապատասխան հատվածում քննադատում էր Սարգիս Միրզայի պիեսը, ինչպես նաև «Արեմուտք» և «Մեղու» հանդեսներում սուղորված նալբանդյանի հողվածներին: Ուստի, պետք է ենթադրել, որ «Միությունը» գնում էր «Հյուսիսսփայլի» հետքերով, իսկ նրա խմբագիրների հողվածներում շոշափում էին նալբանդյանի խոհերն ու գաղափարները:

Զմյուսնիայում շատ տարիներ առաջ սկիզբ առած և ծանրաբայլ ընթացող լուսավորական շարժումը, որի գործող ուժերը կրթություն ստացած երիտասարդներն էին, 1860-ական թթ. արդեն որոշակիորեն դեմոկրատական ուղղություն էր ստանում և չուստով պետք է կայուն դեմոկրատական դիմադրիժ ընդուներ: Անցումային այդ շրջանում շարժման մակընթացությունը կյանքի կոչելիս երիտասարդների մի նոր խմբի, որին ըստ էության գլխավորում էին Հ. Ստվարանյանը և Ս. Վանանդեզին: Այդ դերը նրանց էր վիճակվել ոչ այնքան շարժումը գլխավորելու ունակությունների շնորհիվ, որքան իրադարձությունների բերումով: Բանն այն է, որ սկսած թերթի 18-րդ համարից Հաշտենիցի և «Միություն» խմբագրությունից հրաժարվել էին առավել գործուն ամբամները Գ. Կոստանդյանը, Հ. Մարտատաֆը, Տեաեյան եղբայրները և Ս. Պայապանյանը: Նրանցից միայն Գ. Կոստանդյանն է անդրադարձել տեղի ու-

նեցածին մի տարի հետո հոգւած Հրատարակելով «Մաղիկի» 1861 թ. հոկտեմբերի 1-ի համարում (№ 10, էջ 74-75): Այդ հոգածը պարզաբանում է խմբագրութայն ներսում կատարված անցուղարձը և գաղափար տալիս հայ մշակույթի երախտավորի, հանրահայտ «Մեթոդի վրա» (1878) բնագիտափիլիսոփայական աշխատութայն ապագա հեղինակի երիտասարդական տարիների գործունեութայն մասին:

Չնայած այդ ամենին, խմբագրութայն «պատկառելի կեսի» հրատարականը նկատելի չափով չի ազդել հանդեսի մարտունակութայն, առավել ևս ուղղութայն և սկզբունքների վրա: Հանդեսի հետագա համարների քննությունը ցույց է տալիս «Միութայն» հետևողականությունը՝ համաքայլ ընթանալ դեմոկրատական մամուլի հետ, պաշտպանել իր սկզբունքները, իրականացնել ստանձնած պարտավորությունը՝ գլխավորել պայքարի ելնող զմյունահայ երիտասարդութայն շարժումը:

Հանդեսի երկրորդ շրջափուլում հրատարակված խմբագրականներից տեղեկանում ենք, որ Ազգային սահմանադրությունը վերջապես գործադրութայն ուժ է ստացել: Սահմանադրութայն հետ կապված մեծ հույսերը թելադրում են հանդեսին ակնկալելու, որ այն պիտի բերի խոսքի և կարծիք հայտնելու ազատություն: Սահմանադրութայն և նրա պարզակելիք ազատախոսութայն շնորհիվ, ինչպես խորապես համոզված էր «Միությունը», ժողովուրդը պետք է փրկություն գտներ: Եվ նա ազատ խոսքը դիտում է իբրև մարդությունից ստացած անկապտելի իրավունք:

Հարցադումը հանգում է հետևյալին, որ ազգը կառավարելու պարտք ունեցողներին շատերը չեն հանդուրժում խորհելու և խոսելու ազատությունը և, չկարողանալով խափանել կամ կործանել այն, «կեսին վար զարնել զանոնք կամ այնպիսի ազատախոհ և ազատախոս մարդիկը... որոնց վրայոք խոսիլն անգամ իրենց ազնվականութայնը կդիպչի»: Խոսքը տիրող և հարուստ դասի մասին է, նրանց մասին, ովքեր սեփականել են նաև ազատախոսությունը և մահու չափ չեն հանդուրժում, երբ նույն խոսքի իրավունքից օգտվելու երկչոտ փորձ է անում որևէ հասարակ մարդ: Խոսքի և կարծիքի ազատութայն ջատագով հանդեսը, բնականաբար, առաջ է քաշել նաև հարակից մի արմատական հարց մամուլի ազատութայն, նրա վիճակի ու խնդիրների հարցը:

Մրազրային իր դրույթներով հանդեսն արձագանքում էր 1859 թ. «Արևմուտքի» հավատամքին ու գաղափարներին, «Մեղուի» սկզբունքային



դրույթներին: Հանդեսը գաղթօջախում սկզբնավորում է դեմոկրատական մամուլի լիիրավ քաղաքացիությունը: Այն վարում է քննադատական ուղեգիծ, շոշափում կենսական հարցեր, առաջադրում արժատական խնդիրներ և հետևողականորեն ձգտում սահմանադրական սկզբունքներ հաստատել ծառանայով ամիրայական-մեծատունական ոգու և մտայնությունից դեմ:

Գաղթօջախի հետադիմությունը և ավատատիրական մտայնությամբ տոգորված մեծատունները բուռն պայքար են ծավալում «Միություն» երիտասարդ խմբի դեմ: Նրանց նախ հաջողվում է պառակտել Հանդեսի խմբագրական մարմինը, ապա, դիմելով թուրքական տեղական իշխանությունը, հասնել այն բանին, որ նրա երեք խմբագիրները ձերբակալվեն ու բանտ նետվեն:

Գաղթօջախի առաջադեմ մտավորականությունը և աշխատավորական խավերը ոտքի են կանգնում և, նրանց ճնշմանը տեղի տալով, իշխանությունները հաջորդ օրն իսկ ազատում են խմբագիրներին: Բայց «Միությունը», որ չհասցրեց տարին բոլորել, խափանվեց: Միայն ութամսյա ջանքերից հետո Հաշտենիցի հրապարակագիրներին հաջողվեց թուլլավություն ստանալ վերսկսելու հանդեսի հրատարակությունը, որը երևան եկավ նոր անվանումով «Միություն սահմանադրական», բայց նույն սկզբունքներով և ուղեգծով: Այս անգամ Հանդեսը գոյատևեց մեկ տարուց փոքր-ինչ ավելի:

Ի պաշտպանություն «Միության» և նրա խմբագիրներին, զմյուռնահայ առաջադիմականների հետ բողոքի հզոր ձայն բարձրացրին հայ դեմոկրատական և առաջադեմ պարբերականներն ու հրապարակախոսները: «Մեղուն» հատուկ ուշադրությամբ էր հետևում զմյուռնահայ հասարակական կյանքին, մասնավորապես այն ամենին, ինչ կատարվում էր «Միության» հետ և նրա շուրջը: Հ. Արվաճյանը 1861 թ. հունվարին «Մեղուի» երկու համարներում հանդես եկավ հուժկու հոգովածով «Միություն» և զմյուռնացի հայեր»: Հողվածը բաժանելով Հինգ առանձին ենթադիրնազրված հատվածների Արվաճյանը բացում է խնդրի բոլոր ծալքերը, բացահայտում այն ամենը, ինչ հանդեսից էր Հաշտենիցի հանդեսի դատապարտությունն ու վախճանին:

1860 թ. օգոստոսին հիմնվում է Վասպուրական քնկերությունը և նույնանուն թատրոնը: Ընկերության հիմնադրման նշանակությունը հայ հասարակական մտքի զարգացման խմատով այն էր, որ նա անմիջականորեն ծառանդել էր Հաշտենիցի ու «Միության» դեմոկրատական ոգին ու սկզբունքները:

Բնական էր, որ Սըվաճյանը, պաշտպանելով ու գնահատելով Հաշտենիցն ու «Միությունը», պիտի պաշտպաներ նաև նրանց շնորհիվ ծնունդ առած Վասպուրականը: Հաշտենից - «Միություն» և Վասպուրական-Թատրոն գաղափարական ընդհանրությունն էլ պայմանավորում էին արևմտահայ դեմոկրատական օրգանի «Մեղուի» շահագրգիռ հետաքրքրությունը նրանց նկատմամբ:

«Միության» դեմ բռնկած հալածանքներին լայնորեն անդրադարձել են նաև «Մասիսը» և «Փարիզը»: Դրանով խնդիրը դուրս է եկել արևմտահայ շրջանակներից և արծարծվել գաղութահայ հասարակական ոլորտներում: Երբ «Փարիզում» ծանուցվեց, որ Զմյուռնիայում վաճառվում է հայտնի տպագրիչ ու տառերի կերտող Ճ. Արամյանի հանրահայտ «Մայր Հայաստան» պատկեր-պլակատը, Վասպուրական Թատրոնն իր կենտրոնական օթյակի ճակատը զարդարեց նրանով՝ հանդիսականների մեջ արտակարգ հետաքրքրություն առաջացնելով խորհրդանշական նկարի հանդեպ: Նույն այդ պատկեր-պլակատը, ի դեպ, հրապարակ գալուց հազիվ երեք տարի անց՝ 1865 թ. հայտնվեց Ալեքսանդրապոլում՝ նորաստեղծ Թատրոնի հսկայական վարագույրի վրա ասեղնագործված:

Հաշտենից ընկերություն, նրա օրգանի՝ «Միության» և Վասպուրական ընկերություն ու Թատրոնի սըվաճյանական-մեղվական դիրքորոշման հետ լիովին համահունչ է Մ. Նալբանդյանի դիրքորոշումը, որը կարելի է համարել նաև նրանց գործունեության գնահատություն: Նա 1861 թ. դեկտեմբերին «Մեղու» թերթում հրապարակած իր ճառում «Վասպուրական անձնուրաց ընկերություն հայխոս Թատրոնի» մասին գրել է. «Այստեղ հաջող ենք համարում և դեպի նոցա ուղղել մեր առ ի սրտե շնորհակալությունը և ընթացք ու հաջողություն հայտնել յուրյանց չնաշխարհիկ ասպարեզի մեջ: Կեցցեն բոլոր հայ Թատրոնք»:

«Միություն» հանդեսը, անկախ նրա խմբագրական կազմի պառակտումից և կարող ուժերի հեռանալուց, քննարկել է իր ժամանակի հրատապ խնդիրները, վարել որոշակի դեմոկրատական ուղեգիծ, հարուցած արմատական հարցերով նպաստել հայ դեմոկրատական մամուլի հաստատմանը Զմյուռնիայի հայկական գաղթօջախում:

«Միություն սահմանադրականը» հրատարակվել է իրրև «Միության» շարունակություն (Բ տարի), սկզբնական շրջանում լույս էր բնծայվում նույն խմբագրական մարմնի կողմից և դարձյալ Հաշտենիցի օրգանն էր: Հանդեսը

լույս է տեսել 1861 թ. սեպտեմբերի 1-ին, նոր համարակալումով ու էջակալումով, «Հանդես Հաշտենից» ենթատիտղոսով, նույն զիրքով ու ութէջյա ծավալով, արդարությունն ու իմաստությունը խորհրդանշող հրեշտակապատկեր զարդանակատով: Հանդեսը տպագրվում էր Տեսեյան տպարանում: Կիսամսյա պարբերականությամբ հրատարակվել է 1862 թ. օգոստոսը ներառյալ:

Զմյուռնիայի գաղթօջախում հասարակական միջնորդաբ բնավ նպաստափոր չէր Հաշտենիցի գործունեությունն և նրա հանդեսի վերածնությունը համար: «Միություն» խափանումից և նրա խմբագիրների հետ հաշվհարգար տեսնելուց հետո հետագիմությունն առերևույթ մամբապնդել էր իր զիրքերը և նոր գրոհներ էր ձևանարկում առաջադիմություն, ինչպես և ավելի բացահայտ հարձակումներ էր գործում սահմանադրություն դեմ: Մասնավորապես անլուր հայածանքի ենթարկվեց Հաշտենիցի և «Միություն» խմբագրության հիմնադիր անդամ Չ. Սավալանյանը: Գաղթօջախի հակադիր ուժերի միմյանց հետ կնքած հաշտությունը, որ վավերացվել էր հոգևոր առաջնորդի կնիքով, խախտա էր և շուտով պետք է տեղի տար նոր պոսթիկումների: Հետաքրքրական է, որ Գ. Զիլինկիրյանն իր արդեն տպագրվող հոդվածաշարի մի հատվածը նվիրել է աստեղադրի Չ. Սավալանյանի շուրջ տեղի ունեցածին («Ծագիկ», 1861, № 8, էջ 57-61, 68-71): Զիլինկիրյանի հոդվածը մեղվական-սրվաճյանական էլույթին համադր խոսք է, որտեղ փայլում է Զիլինկիրյան-հրապարակախոսի գրիչը: Ուշագրավ է, որ նա Զմյուռնիայի երիտասարդությունը գեմոկրատական ձգտումները և պայքարը կապում է 1789 թ. ֆրանսիական հեղափոխության սկզբունքների հետ:

Հաղթանակի գափնի շնորհելով երիտասարդությունը Գ. Զիլինկիրյանն անմիջապես էլ արձանագրում է, որ կատարյալ պարտությունը վանելու համար բռնամուկները նոր գրոհի են անցել: Եվ «Ծագիկն» իր հերթին մերկացնում է հետագիմականների բռնատիրական հակումները, նրանց ներկայացնելով նույն մեղադրանքները, որոնք հրապարակվել էին «Միություն» էջերում:

Հետաքրքրական է «Ծագիկի» հետևյալ բնութագրիչ ազդը «Միությունն սահմանադրականի» մասին. «Հրեշտակի կերպարանք առած վերջապես հարյալ Միությունը: Օրհնյալ է հարությունն նահատակ հանդեսներու: Այս՛, հարյալ Միությունը՝ Սահմանադրական մակդիրով զարդարված այս անգամ, որն որ ոչ նվազ ուրախություն կպատճառե մեզ, վասնզի օրհնյալ է նահա-

տակ հանդեսներու և լրագրիներու հարուժյունը: Գալու՞ է արդոք այն օրը, ուր նաև Արևմուտքի, Մեղուի և Մյունախի հարուժյան ավետիսը տալու բարեբաղդուժյուն պիտի ունենանք» (1861, № 8, էջ 64):

Պատահական չէ, որ հիշատակվում են Ս. Ոսկանյանի «Արևմուտք», Լ. Սըվաճյանի «Մեղու» և Կ. Փանոսյանի «Մյունախի էրճիս» (հայատառ տաճկերեն) հանդեսները, որոնք արևմտահայ դեմոկրատիայի պարբերականներն էին: «Միուժյուն սահմանադրականը», նրանից առաջ նաև «Միուժյունը», դրվելով այդ պարբերականների կողքին, համարվում էին, եթե ոչ նրանց համարժեք պարբերականներ, ապա անսպասան դիտվում էին իրեն նրանց ձայնակից ու զինակից օրգաններ:

Ոչ միայն ձևով, այլև էությունը «Միուժյուն սահմանադրականը» շարունակում էր «Միուժյան» որդեգրած ուղեգիծը: Այդ մասին հանդեսի խմբագրուժյունը տեղեկացնում է նաև առաջին համարի առաջաբանում, ուր ասվում էր, թե անվանափոխուժյունից բնավ չեն փոխվում «իր նախկին բնուժյունը, սկզբունքը և կարծիքները»: Խմբագրուժյունը միաժամանակ ներկայացնում էր հանդեսի ուղղուժյունը, այն է՝ տարածել սահմանադրուժյան սկզբունքները, ազգային խնդիրները քննել քննադատուժյամբ, պակասուժյունները բացահայտել, ծանոթացնել անտեսադիտուժյան սկզբունքներին, բանասիրական հոգովածներ հրատարակել:

Սկզբունքային և կյանքի առաջադրած առանցքային հարցերում ու խնդիրներում «Միուժյուն սահմանադրականը» և «Մաղիկը» համեմատելի էին գործում: Այդ գլխավոր խնդիրներից առաջինը շարունակում էր մնալ ազգային սահմանադրուժյունը, որին հանդեսը նվիրել է պարբերաբար տպագրվող հոդվածաշար (№ 1, 6, 8, 9, 13): Գրանցից միայն Գրդ համարում լույս տեսած հատվածի տակ դրված է «Աշոտ» ստորագրուժյունը, որն օգնում է պարզելու հոդվածագրի ինքնուժյունը: Խոսքը Մ. Մամուրյանի մասին է:

Հաշակելով ազգի ազատության և գոյատևման իրավունքը, հեղինակը նրա ապագան պայմանավորում է ոչ թե որևէ տերուժյունով, որևէ օրենքով, այլ հենց իրենով՝ իր անցյալով ու ներկայով, որը պետք է պատվանդան ունենա ժամանակի ոգին և սնվի արդի լուսավորուժյամբ: Ազգասիրուժյունն արդեն գործող ուժ է դարձել և այն «ոչ միայն ազգային գոյության գորավոր ապացույց մ' է, այլ և անոր հառաջագիմուժյան անդիմադրելի մղիչ մը» (էջ 43):

Նույնքան հանգամանալից հեղինակը հիմնավորում է նաև սահմանադրության անհրաժեշտությունը այն համարելով ազգի բնական իրավունքի, հասարակական կացություն և ընթացքի անկասելի արդյունք: Եթե նրա դեմ էլնի «ամբարտապան» վերին իշխանությունը, ապա ազգը կամ ժողովուրդը «ազգու միջոցներու դիմել կրոնադատվի և ստեպ իր նպատակին կհասնի»:

Սահմանադրության շուրջ մտորելով ու «Բարեկամ» ընդդիմախոսի Հետ րանավիեկելով հեղինակը գիտակցաբար ընդգծում է նրա անհրաժեշտությունը: Սահմանադրությունը կանգուն է, տեղ է գտել ժողովրդի «արտին և գլխին մեջ... Օրենք մի որ... ընդհանուր հավանությունը գործադրություն կդանե ժողովրդյան մեջ, նույն օրենքը հարատև գործադրելի է» (էջ 65):

Այսպես, հանդեսը, որ ստանձնել էր սահմանադրական մականունը կատարում էր իր բուն խնդիրը, ժողովրդին նախապատրաստում մասսայական շարժման համար, որ պիտի կազմեր սահմանադրական պայքարի բարձրակետը:

«Միություն սահմանադրականում» զգալի տեղ են գրավում ընդհանուր բնույթի նյութերը և ինքնուրույն ու թարգմանական երկերը:

Հետաքրքրական է Մ. Մամուրյանի «Անդդիական նամականի» շարքը (էջ 7-8, 34-38), ուր հեղինակը քննում է Հայ ժողովրդի պատմական անցյալը պատասխանելու համար իրօրյա հրատապ ազգային հարցերին: Հայ ժողովրդի էությունը, գրում է Մամուրյանը, ազատասիրություն է, որ հաստատվում է նրա նախահայերի մասին մեկ հասած պատումներով, խորենացու վավերագրած տարեգրությունը:

Գեղարվեստական բնույթի նյութերից ամենանշանավորը «Գերի ընտանիք» ողբերգությունն է, որը հատվածաբար գեանդվել է Հանդեսի գրեթե բոլոր համարներում սկսած 1861 թ. դեկտեմբերի 1-ից: Ենթադրվում է, որ նրա հեղինակը Ս. Վանանդեցին է, որը հանդեսում հրատարակել է ժամանակին Հետաքրքրություն առաջացրած իր ուսումնասիրությունը «Վիկտորիա Անդդիս թագուհույն Հայոց թագավորները սերիլը»: Առավել լուրջ խնդիրներ շոշափող նյութերից հարկ է առանձնացնել Ս. Վանանդեցուն վերագրվող «Մարդկային կենցաղ» հոդվածաշարը, որի առաջին կեսը լույս է տեսել «Միությունում»:

Հանդեսում Սափալանյանի ստորագրությամբ տպագրվել են «Ի՞նչ է ճշմարիտ ազգասիրությունը և թե ամեն մարդ կրնա և պարտ է ազնվացնել գինքը», «Նշխարք Հայ մասենագիտության» հոդվածները (№ 6):

«Միություն սահմանադրականին» աշխատակցած Հեղինակներից էր նաև Գ. Կոստանդյանը: Իր «Խրթին ու աշխարհիկ լեզու» հոդվածում (№ 4) նա մտահոգություն է հայտնում այն բանի համար, որ խզում գոյություն ունենր մամուլի և ժողովրդի միջև, այն ժողովրդի, որի համար նա ստեղծվել ու գոյություն ունենր:

Հանդեսը մի շարք նյութեր ու հաղորդումներ է նվիրել Վասպուրական թատրոնին և թանգարանին (№ 2, 7, 11, 14), որոնք մասամբ ունեն սկզբնաղբյուրի նշանակութուն, որովհետև Վանանդեցին միաթամանակ տնօրինում էր և՛ թատրոնի ու թանգարանի գործունեությունը, և՛ ղեկավար դեր ունենր «Միություն սահմանադրականի» խմբագրությունում:

Հայ մամուլին նվիրված Հանդեսի երեք հաղորդումներից «Հավերժահարսին», «Գարուն Հայաստանիին» և «Բողբոջին», հատկապես արժեքավոր է երրորդը, որն օգնում է անհրաժեշտ գաղափար կազմելու հայ մամուլի մատենագիտությունները մտած, բայց գրեթե անհայտ մնացող պարբերականի մասին:

Ուշադրության արժանի են «Մաղիկի», «Մեղուի», «Մեծմուսի», «Փարիզի» տպագրած որոշ նյութերի արձագանքները Հանդեսում (էջ 64, 87, 96):

Վաղուց հայտնի է այն ռեզուլենչ արձագանքը, որով «Մաղիկը» և նրա խմբագիրը դրսևորել են Հնդկաստանից վերադարձող և Զմյուռնիա այցելած Նալբանդյանի նկատմամբ: Ինքնին հասկանալի է, որ գաղթօջախում լույս տեսնող մյուս դեմոկրատական Հանդեսը նույնպես պետք է արձանագրեր մեծ հրապարակախոսի և գործչի այցը, արտահայտեր իր վերաբերմունքը: Դա առավել ևս բնական էր, քանի որ, ինչպես նշվում է «Մաղիկի» հաղորդման մեջ, Նալբանդյանին դիմավորելու պատիվը հիմնականում վիճակված էր Հենց Հաչատեանից և Վասպուրական ընկերություններին, որոնց ղեկավար կորիզը նույն գործիչներն էին, և որոնք էլ հրատարակում ու տնօրինում էին «Միություն սահմանադրականը»:

Այն համերաշխությունը, որով երկու դեմոկրատական Հանդեսները 1861 թ. կեսերին ամենայն իրավամբ կոչ էին անում ազգային գործիչներին ու միմյանց հակադրվող խավերին միաբանվել և ամեն ինչից վեր դասել ազգային շահերը, շուտով խզվեց: Որքան էլ տարօրինակ է, «Մաղիկը» և «Միություն սահմանադրականը» ոչ էական, ոչ սկզբունքային խնդիրներում սկսեցին հակադրվել միմյանց: Ակզբնաչբանի համերաշխ քայլերը, որ, ինչպես նշվեց, բավականաչափ արդյունավոր կարող էին լինել գաղթօջախի համար, տարեվերջին վերաճեցին կատարյալ բանակոխիների: Երկու պարբեր-

բականները, գիտակցելով Հանդերձ, որ պետք է դադարեցնել վեճերը, այնուամենայնիվ, շարունակում էին բանավիճել: Հանդեսների բանակոթիվն ընդհատվել է միանգամից առանց կողմերից որևէ մեկի պարտության, չհասնելով որևէ արամաբանական եզրահանգման: «Միություն սահմանադրականը», որի ստեղծագործական ուժերը ջլատվում էին, բաժանորդներ չունենալու և կամ էլ արտոնությունը չնորոգվելու պատճառով, 1862 թ. օգոստոսից դադարում է հրատարակվել: Նրա անօրեն Ս. Վանանդեցին նվիրվում է Վասպուրական թատրոնին և մեծ հեղինակություն ձեռք բերում այդ ասպարեզում, իսկ 1867-1869-ին հրատարակում է «Իրավունք» Հանդեսը նպաստելով գաղութահայության քաղաքացիական իրավունքի հաստատմանը, որի մասին նա հանախ էր խոսում «Միություն սահմանադրականի» էջերում:

Այսպիսով, Հանդեսը գրեթե մեկ տարվա իր գործունեությունից ընթացքում հիմնականում նպաստել է դեմոկրատական մտահայացության ծավալմանը, իր գաղափարն սկզբունքներիով համաքայլ ընթացել դեմոկրատական մամուլի, նաև «Ծաղիկի» հետ: Հավատարիմ իր անվանը «Միություն սահմանադրականը» սիրույազանդել է Ազգային սահմանադրությունը, պայքարել նրա դրույթների կիրառման համար:

### «ԾԱՂԻԿ» (1861-1867)

Զմյուռնիայի Հայ գաղթօջախի պարբերական մամուլի էջերում ծավալվող պայքարի առաջավոր գծում 1861-ի Հուլիսից հայտնվում է «Ծաղիկը» և դրափում այն տեղը, որ թափուր էր մնացել «Միության» խափանումից հետո: Դեմոկրատիայի գրոշն անցնում է նոր և ամուր ձեռքեր, և պայքարը մղվում է նոր թափով:

«Հաշտանից բնկերություն Միությունն», - գրել է Հ. Սըլվաճյանը, - ո՛չ ոք կուրանա, իր գծբախտ մահվամբը նմանեցավ այն ցորենի հատին, որ եթե չընկնի ու չմեռնի արդյունավոր չի ըլլար»:

Այդ արդյունավորման գրսեհորումներից մեկն էր Հենց «Ծաղիկ» Հանդեսը, որ ժառանգեց իր անմիջական նախորդի հիմնական սկզբունքները և երևան եկավ մասամբ «Միության» շնորհիվ նախապատրաստված միջավայրում 1861 թ. Հուլիսի I-ից նախ տասնօրյա, իսկ 1864 թ. նոյեմբերից № 99-ից, կիսամսյա պարբերականությամբ:

«Ծաղիկը» զմյուսնահայ առաջադեմ երիտասարդությունից ոգեշնչումով հիմնել և առաջին շրջանում (№ 1-46) խմբագրել են Գ. Չիլինկիրյանը և Ա. Հայկունին: Այնուհետև, մինչև վերջնական դադարելը, 146-րդ համարը, հանդեսը խմբագրել ու տնօրինել է Չիլինկիրյանը մասնավորապես Մ. Մամուրյանի ակտիվ աշխատակցությունը ու աջակցությունը: Գոյատևման վեցուկես տարիների ընթացքում հանդեսն ընդհանուր հաշվով լույս է տեսել հազիվ հինգ տարի միշտ ութական մեծադիր էջով (118± էջ): Գաղթօջախի մեծատունները և հետադիմությունը հանդեսի դեմ գրոհել սկսել են նրա Ե-րդ համարից, երբ Չիլինկիրյանը դատապարտել է նրանց ինքնագլուխ արարքները: Այնուհետև հանդեսը հալածանքի ենթարկվեց ևս Հինգ-վեց անգամ, երկու անգամ ընդհատվեց նրա հրատարակությունը: Սակայն ո՛չ հալածանքները, ո՛չ էլ շարունակ կրկնվող ու սաստկացող սպառնալիքները չընկճեցին Չիլինկիրյանին: Նա չզիջեց իր դիրքերը, չհահանջեց որդեգրած սկզբունքներից:

«Սահմանադրությունը, - գրում էր Չիլինկիրյանը, - այն հաստատուն հիմնադրությունն է, որուն վրա կկոթնին ազգային ապահովության, փառքին ու ապագային սյունները»: Իր յուրաքանչյուր համարով «Ծաղիկը» վավերագրել է առաջադիմության քայլափոխը, դեմոկրատիայի լինելության ընթացքը, ընդհանրապես այն պայքարը, որ գաղթօջախում մղվում էր ազգային գոյատևման և առաջընթացի համար: Սահմանադրական ոգով գրված քննադատական իր հոդվածներով «Ծաղիկը» պատնեշել է ամիրայական ոգով տոգորված մեծատունների փորձերը, նոր պայմաններում ու նոր եղանակներով շարունակել ազգային կյանքի տնօրինությունը, մերկացրել ու խափանել է բռնատիրական կամայականությունները: Հանդեսը ազգային պաշտոնյաներից պահանջում էր գտնվել իրենց կոչման բարձրության վրա, հիշել, որ հաշվետու ու պատասխանատու են ժողովրդի առջև, ըստ «Ծաղիկի» ազգային մարմինը և պաշտոնյան պետք է ընտրվեն «բոլոր հայ ժողովուրդեն»:

Հենց սկզբից «Ծաղիկը» գաղափարապես համերաշխվեց ու մինչև վերջ դաշնակցեց Հ. Սըվաճյանի և նրա «Մեղուի» հետ, ոչ միայն ընթացյալ նրանց դեմոկրատական ուղեգծով, այլև հրապարակային պայքարում բացահայտորեն պաշտպանեց այդ ուղեգիծը: Այդ հանդեսները դարձան արեմտահայ դեմոկրատիայի օրգանները՝ շարունակելով Նալբանդյանի ու Օսկանյանի հրապարակախոսության ուղեգիծը:



«Մաղիկը» Հայ Հասարակական մտքի 1860-ականին ապրած վերելքի ծնունդն է, միաժամանակ և նրա արտահայտությունը: Զարթոնքի ժամանակաշրջանի լավագույն օրգաններից մեկը լինելով, նա արտացոլել է արևմտահայ դեմոկրատական գաղափարախոսությունից վերելքը:

Անդրադառնալով Զմյուռնահայ կյանքի վերջին հինգ-վեց տարիներին, «Մաղիկն» արձանագրում է, որ «բռնասերներու կուսակցություն մը կազմված է Հոս և անոր պարագլուխներն» իրենց ձեռքն էին վերցրել ազգային գործերը, թույլ էին տրվում կամայականություններ, որոնց զոհեր էին դարձել Համայնքի «չնաշխարհիկ անդամներ» Ա. Փափազյանը և Մ. Վանանդեցին:

Հանդեսն ուշադրությունը բեկառում է ժողովրդի մեծ մասը կազմող արհեստավորների դասին ի հակակիտ բարձր խափի, որի նպատակն է սոսկ «ստակ շահի և նյութական կյանք վայելել»: Ժողովրդական դասը դեռ խաբխափում է ազիտություն մեջ, և նրան լուսավորելը առաջնահերթ խնդիր է: Այդ նպատակը պետք է հետապնդի մամուլը միաժամանակ դառնալով բռնություն չխերիմ թշնամին: Հենց այդպիսի խնդիր է դնում իր առջև «Մաղիկը»:

Երբ Հայասնի դարձավ Նալբանդյանի մահը, Մ. Մամուրյանը «Մաղիկի» 124-րդ Համարում Հրապարակեց «Միբայել Նալբանդյանց» Հողվածք, իսկ մահվան տարելիցի առթիվ կրկին առանձին Հողվածքով անդրադարձավ նրա ծառայություններին, ապա և Նալբանդյանի կողմնակիցներին ու հակառակորդներին պայքարին: Մ. Մամուրյանի այդ Հողվածքները Մ. Նալբանդյանի գործի ու դերի, նրա ավանդների նշանակությունից եզակի գնահատություններից են, նալբանդյանագիտությունից առաջին հիմնաքարերից: Դրանցով ամենայն պարզորոշությամբ վավերացվել է նաև «Մաղիկի» և «Արևելյան մամուլի» ապագա խմբագրի Մ. Մամուրյանի սկզբունքային դիրքորոշումը, որն էական դեր պետք է կատարեր արևմտահայ Հասարակական մտքի ասպարեզում:

Գ. Զիլինկիրյանը տեսականորեն պաշտպանել ու հիմնավորել է դեմոկրատական մամուլի սկզբունքները, հետևողականորեն կիրառել է դրանք և իր հերթին ավել լավագույն օրինակն այն բանի, թե ինչպիսին պետք է լինի իր ժողովրդին ծառայել ցանկացող Հանդեսը: Նա գտնում էր, որ «ազատասեր թերթի մը առաջին և անհրաժեշտ պարտքն է կամ արիաբար զինել անիրավությունից դեմ... կամ լավագույն Համարել Հրատարակվելից դադարել»

(1863, էջ 507): Թե՛ ինքնուրույն, թե՛ թարգմանական նպատակաուղղված նյութերի միջոցով «Ծաղիկը» և նրա խմբագիրը մեծ շահախնդրությունը նպաստում էին Հայ մտքի ընդլայնմանն ու խորացմանը:

«Ծաղիկի» կենտրոնական խնդիրներից մեկը եղել է ազգի միասնություն պահպանումը, ժողովրդին երկպառակություններից ազատելը, դավանաբանական և ներքին անպտուղ հակառակություններին վերջ տալը: Նրա հիմնադրություն էր «Ձորոտյունը միությունում մեջ է»: Հանդեսը գրեթե ամեն մի համարում քննում էր այդ հարցերը, խմբագրականներ նվիրում, հիշեցնում հին օրերը, երբ ազգը հզոր էր իր միասնականությունում, մեջբերում ականավոր մտածողների խոսքերն այդ մասին՝ սկսած Մ. Խորենացուց: Հայ ժողովուրդն, ըստ «Ծաղիկի», պետք է պարզի մի դրոշ՝ «Աստուծո՛ւն ևսք ազգություն», իսկ նրա յուրաքանչյուր անդամը պետք է գործի՝ «Ամեն մեկ անհատ ընկերություն մեջ կատարելու պարտավորություններ ունի» նշանաբանով (1861, էջ 1-2): Դրանք հանդեսի ծրագրային դրույթներն էին:

1860-ական թթ. Ազգային սահմանադրություն նկատմամբ վերաբերմունքն արևմտահայ իրականության մեջ այն արմատական հարցերից մեկն էր, որով երևան էր գալիս այս կամ այն գործչի, առավել ևս այս կամ այն տպագիր օրգանի բուն դիմագիծը, նրա առաջադիմական կամ հետադիմական լինելը:

Սահմանադրության լինելու շրջանին է վերաբերում նաև «Ծաղիկի» պայքարը, որ իր հերթին չափազանց ծանր էր, նաև բնորոշ արևմտահայ կյանքի ու հասարակական մտքի ոգորումների համար:

«Ծաղիկի» շնորհիվ հրապարակախոսական լայն ասպարեզ են գտել այնպիսի ակնառու մտավորականներ, ինչպիսիք էին՝ Գր. Զիլինկիրյանը, Ա. Հայկունին, Մ. Մամուրյանը: Նրանք ամուր կապերով կապված էին Զմյուռնիայի հայկական դադթօջախին և լուրջ դեր են խաղացել Հայ կյանքում նախ օրպես հրապարակախոսներ:

Գր. Զիլինկիրյանի (1839-1923) հրապարակախոսություն մասին գաղափար է տալիս «Ծաղիկի» ամբողջ հավաքածուի քննությունը: Նա միայն հանդեսի հիմնողն ու խմբագիրը չէր, նա էր ստեղծում ու կենսավորում «Ծաղիկի» յուրաքանչյուր համարը, որոշում գաղափարական ուղղությունը: Նրա գրչին ևն պատկանում հանդեսի շատ նյութեր: Գրել է գրեթե բոլոր ժանրերով, նաև գեղարվեստական գործեր, կատարել թարգմանություններ: Կյանքի վերջին տարեշրջանում Զիլինկիրյանը հրատարակել է «Վիպականը և ցան ու

ցիր գրգռածներ» ժողովածուն, ուր մեկտեղել է իր գեղարվեստական գրգռածքները:

Ծավալով և արժեքով հատկապես աչքի է ընկնում Ձիլինկիրյանի «Զմյուռնական նամականին», որ հրատարակվել է մոտ 20 հատվածով նվիրված գաղթօջախի հասարակական իրադարձություններին ու գործիչներին: Ինչպես Մամուրյանը, Ձիլինկիրյանը նույնպես մեծ համաթյամբ է օգտագործել նամակաների ժանրային հնարավորությունները: «Նամականին» արտացոլել է 1866-ին և հաջորդ տարում գաղթօջախում տեղի ունեցած հիմնական իրադարձությունները: Նամականը միաժամանակ «Ծաղիկի» խմբագրի խորհրդածություններն են, նրա կարծիքների ու հայացքների արտահայտությունը, որոնցում մեծ տեղ է գրավում կրթություն Ծավալելու խնդիրը, մասնավորապես Մեսրոպյան և Հոխիսիմյան վարժարաններում ուսումնակրթական գործի գրգռածքը:

Ձիլինկիրյանը հանդես է եկել Ազգային սահմանադրությունը նվիրված մոտ մեկ տասնյակի հասնող հոդվածներով, Զմյուռնիայի վարժարանների մասին տեսություններով, հաճախակի անդրադարձել է ազգային մարմինների և պաշտոնավորների գործունեությունը, մշակութային կարևոր իրադարձություններին, գրել է պատումներ, թատերախոսություններ ու գրախոսականներ: «Թշվառներից» բացի կատարել է մեծ թվով փոքրածավալ գործերի թարգմանություններ, բանավիճել է օտար մամուլի մի շարք օրգանների հետ, երբ քննություն առարկան հայ կյանքի իրադարձություններն էին: Հանդեսը վազան էր դմյուռնահայ և առհասարակ արևմտահայ հետադիմություն հանդեպ, հենարան էր մարտնչոց հրապարակախոսություն ու դեմոկրատիայի համար: Նրա յուրաքանչյուր համարը սկզբնադրյուրի արժեք ունի հայ կյանքը, մշակույթի պատմությունն ուսումնասիրելու համար:

Զմյուռնիայի 1922 թ. սահմակեցուցիչ աղետից եղևնից հետո, որի հետևանքով լիովին բնաջնջվեց հայ գաղթօջախը, Ձիլինկիրյանը միակ հայն էր, որ մնացել էր այնտեղ: 1923 թ. փետրվարի սկզբին նա վախճանվեց 85-ամյա տարիքում:

Ա. Հայկունին (1835-1866) մինչև Զմյուռնիայում հաստատվելը և «Ծաղիկի» խմբագրիներից մեկը դառնալը արդեն հայտնի դեմք էր, մասնավորապես հրատարակել էր առաջին թատերական հանդեսը՝ «Մուսայր Մասյաց»: Հանդեսում հրատարակած չափածոների շարքը կազմում է նրա գրական ժա-

ուսնագութջան կարևոր մասը, իսկ հոգվածներն ու «բանադատականները» հրապարակախոսութջան պսակը:

Հայկունու «Զայն» ընդհանուր խորագրով հոգվածաշարը, որ հրատարակվել է «Ծաղիկի» տասնմեկ համարներում (№ 4 և հետո), հրապարակախոսական ոգեչունչ խոսք է նվիրված հայ հասարակական խնդիրներին: Ազգին ուղղված նրա առաջին մտորումներից մեկն ավարտվում է կոչով. «Հայեր, արիացե՛ք անգամ մը. բարձրացուցե՛ք ճակատներնիդ...»:

Գիտակցելով ու շոշափելիորեն զգալով, որ «Ճշմարիտը խոսելը խոսելեն դժվար է», Հայկունին դատապարտեց ազգային անտարբերությունը և հայտարարեց. «Մենք դեռ հալ կոչվելու համար շատ դասեր ունինք ուսանելու և շատ պատիժներ կրելու»: «Հայ ազգ և սահմանադրություն» խորագրով Հայկունու հոգվածաշարը (№ 35, 37, 40) տոգորված է սրտացավ մտահոգությամբ գաղթօջախների հայությունից ծանր կացությունից, նրա հասարակական ու իրավական վիճակի նկատմամբ:

Հայկունին «Ծաղիկում» առաջինն է արձագանքել Զեյթունի 1862 թ. օգոստոսի ինքնապաշտպանությունը և, «Լեանտ հերալդ» թերթի զրպարտությունները հերքելով, մարտականորեն պաշտպանել զեյթունցիների պայքարը: Նա քողարկված ձեռով կոչ է անում «անուշիկ հայերին»՝ «պաշտպանեցե՛ք ձեր պատիվը ձեր թշնամիներուն դեմ և հասկցուցե՛ք աշխարհիս, թե հայերը կճանաչեն յուրյանց պատիվը, իրավունքը և չեն այնքան վատ, որ ամեն անիրավ թշնամությունց համբերեն» (1862, № 42, էջ 351-352):

Ա. Հայկունին «Ծաղիկի» էջերում սահմանադրությունից իրավունքը նույնացնում էր մարդու ազատության իրավունքին, որը համարում էր նախախնամական, սուրբ և նվիրական, ապա հռչակում, թե «ճիվաղ է նա, որ ուրիշին ազատությունը չի ճանչնար» (1862, № 35, էջ 292):

«Հայ ազգ և սահմանադրություն» հոգվածաշարում, խոսքն ուղղելով բոլոր ազգասերներին, ամբողջ ազգին, նա շեշտում էր, որ «ամեն մարդ յուր պարտավորությունը պարտի կատարել», որ ազգը պետք է «յուր փրկության այն մեկ հատիկ միջոցին դիմե, որ է սահմանադրություն» (1862, № 37, էջ 306, 307):

Պայքարելով սահմանադրության համար, «Ծաղիկը» հետևողականորեն մերկայացրել է Չամուռճյանի մասնությունից հասնող վարքագիծը, բացահայտել նրա հաստատմանը խոչընդոտող իրական պատճառները, հակադրվել մի

չարք պարբերականների, մինչև անգամ բանավիճել է իր համակրանքը վայելող «Արևմուտքի» հետ (№ 74): Նրա էջերում օրվա հարց դարձավ սահմանադրութունն արդյունավորելու խնդիրը, որի իրականացման համար պահանջվում էր ասպարեզ կլինել ու կոլվել: Անարժանների ընտրութունն ազգային մարմիններում նշանակում է «Ներկան ամուլթյան դատապարտել և սպազան թունավորել», գրում էր «Ծաղիկը»:

Զմյուռնիայից մեկնելուց հետո Կ. Պոլսում Ա. Հայկունին շարունակել է գրողի ու հրատարակատուի իր նշանակալից գործունեությունը, կրկին ու կրկին հալածանքների ենթարկվել, բայց մնացել է անկոտրում: Միայն վաղահաս մահը կարողացավ լուցնել նրան:

Մ. Մամուրյանը (1830-1901) նույնպես «Ծաղիկին» աշխատակցել սկսելուց առաջ գործչի և հրատարակագրի բավական փորձառություն ուներ, հրատարակել էր «Անգղիական նամականիք» պատկառելի մասը, պաշտոնավարում էր Կ. Պոլսում լինելով պատրիարքարանի ղեկավանապետը: Հաճախակի հանդես գալով «Ծաղիկի» էջերում և լինելով Կ. Պոլսի նրա գործակալը, նա այնուհետև դարձավ հանդեսի կայուն աշատակիցը և Գր. Ջիլինկիրյանի ոչ միայն ջանադիր աջակիցը, այլև դադափարական ու փաստական բարեկամը:

Հարուստ է «Ծաղիկում» Մ. Մամուրյանի թողած հրատարակխոսական ու զուտ գրական ժառանգությունը: Գրաքննությունը կաշկանդել է նրա գրելը, բայց նա կարողացել է ճեղքել այդ ցանցը, դիմել է այլարանություն, խոսել թափանցիկ ակնարկներով, հաճախ ասելիքը փոխարինել կախման կետերով, բայց և այնպես կարողացել է իր դադափարները հասցնել ընթերցողին, նույնիսկ ազգային-ազատագրական խնդիրներ արծարծել: Ուշագրավ են Մ. Նալբանդյանին նվիրված Մ. Մամուրյանի հոդվածները, ինչպես նաև «Ազգային սահմանադրություն» ընդհանուր խորագրով հոդվածաշարը (№ 135-137, 140-141), որը խնդիրը հանգամանորեն վերլուծող արժեքավոր վավերագրերից մեկն է:

1864 թ. տարեգրքյան համարից նա «Վրույր» ծածկանունով սկսեց հանդեսում լույս բնծայել իր նշանավոր երկերից մեկը «Հայկական նամականիք»: Նա իր նամակներով դարդարել է «Ծաղիկի» էջերը մեծ վարպետությամբ ու խորամտությամբ քննելով հայկական կյանքի «անցքերը և խնդիրները», խորհրդածելով դրանց շուրջը, առաջադրելով ծրագրային հարցեր, բացահայտելով ազգային շատ խոցեր:

«Ծաղիկի» հրապարակագիրներին կարելի է հիշատակել Գ. Կոստանդյանին, Մ. Նուպարյանին, Տ. Քյուրքճյանֆին, Ն. Գաղտաղլյանին, Գր. Պարտիզպանյանին, Հ. Մարկոսյանին, Հ. Սավալանյանին և էլի մի քանի ուրիշներին, որոնց հրապարակախոսությունը որակ է տվել հանդեսին, նպաստ բերել նրա մարտունակությանը:

Շատ բան է արել հանդեսը, որպեսզի արևմտահայ իրականությունում ճանաչվի ազատության անհրաժեշտությունը և մամուլի նկատմամբ զիտակից ըմբռնում արմատավորվի: Այս առումով հետաքրքրական է, որ հենց առաջին համարներից նրա էջերում հրատարակվել է Ֆրանսիացի մտածող Ժյուլ Ամենի «Խորհելու ազատությունը» տրակտատը (№ 1-5, հետո): Ուշագրավ է, որ հանդեսի (№63-ից) ճակատը զարդարել է Հյուգոյի բանաձևը՝ «Մամուլը ընկերային աշխարհին լույսն է»: Մամուլն ազգի լուսավորության «զորավոր միջոցներից» մեկը համարելով, որի գոյատևումը պայմանավորված է ազատությանը և ստանալիք պաշտպանությանը, հանդեսն իր խնդիրը համարեց արմատախիլ անել այն ամենը, ինչ «միջին դարու դրոշմը կկրե»:

«Ծաղիկի» առաջնակարգ նպատակադրումներից մեկը եղել է ազգային միասնության անհրաժեշտությունը պրոպագանդա և ազգային կարևոր խնդիրների առաջադրումը՝ ելակետ ունենալով ազգային սահմանադրությունը և ազգապահպանության խնդիրը:

«Զորությունը միության մեջ է» գաղափարը տարեցտարի արժարժվել է հանդեսի խմբագրականներում, հոդվածներում, բարոյախոսական զրույցներում, բանավեճերի ընթացքում: Ազգային միասնության և ազգային մարմինների գործունեության խնդիրներում այն կանգնած էր սկզբունքային դիրքում, ելակետ ուներ աշխատավորական զանգվածների շահերը, վարում էր հետևողական և մարտական ուղեգիծ:

Այսարհայացքային և ազգային-ազատագրական պայքարի հասունացման առումով կարևոր է նաև «Ծաղիկի» դիրքորոշումը Իտալիայի ազատագրական պայքարի և նրա առաջնորդներից մեկին՝ Ջ. Գարիբալդիի նկատմամբ:

Իտալիայի, ինչպես և ամեն մի ճնշված երկրի, օտար լծի տակ ճնշվող յուրաքանչյուր ժողովրդի ազատագրությունն ու անկախությունը հայ ժողովրդի և նրա մի մասնիկը կազմող զմյուռահայ երիտասարդության համար ինչ-որ հույս ներշնչող, գործելու մղում հաղորդող երևույթ էր: Առավել

նշանակալից է այն, որ «Մաղիկը» հրատարակել է Ձ. Գարբրալդիի և Վ. Հյուգոյի նամակագրության պատասխանները:

Հանդեսը համակրանքով էր սոցոքրված նաև մյուս ժողովուրդների ազգային և սոցիալական շարժումների, մասնավորապես Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունների նկատմամբ, մատնացույց էր անում ազգային միասնություն հաստատելու և հայրենիքի ամբողջությունը վերականգնելու համար խոստովական ժողովրդի մարտնչումները: Չիլիեկիրյանն անտեղյակ չէր Ռուսաստանի հասարակական շարժումներից, նույնիսկ ուս տարազիրների ընդհատակյա գործունեությունից: Դեռևս 1862-ի վերջերին, խոսելով Ռուսաստանի մասին, հիշեցնում էր «ազատության այն սերմերի» մասին, որոնք պետք է «զորավոր էյուզեր տան» և «երկար ժամանակ ե լվեր ցանված են այս լայնատարած երկրին մեջ»: Նալրանդյանի կապակցությունները Մ. Մամուրյանը նախ 1862-ին, ապա 1867-ին խոսում էր Ալ. Գերցենի «Կոլոկոլի» մասին, որպես «հակաուս սրագրի», այսինքն ցարիզմի դեմ պայքարող պարբերականի: Արդեն 1883 թ. Չիլիեկիրյանն «Ուղեորություն...» մեջ մեջբերում է Գերցենի խոսքերը քաղաքակրթության ու չքավորության անհամատեղելիություն մասին:

«Մաղիկը» նաև գրական հանդես էր և ազգային գրականություն ստեղծելը նրա զլխավոր մտահոգություններից մեկն էր, այնպիսի գրականության ստեղծումը, որը ոչ թե գրադեցնի ընթերցողին, այլ գազափարներ տա նրան, մղի գործողության և պայքարի ոգի նեշնչի: Նա հայ հրապարակախոսությունը այնպե լավագույն նմուշներ, բազմաթիվ մարտաչունջ հոգվածներ ու խմբագրականներ: Հանդեսը Չիլիեկիրյանի լավագույն ըմբռնմամբ ու թարգմանություններով, շքամուտք եղավ Վ. Հյուգոյի «Թշվառների» համար:

Խմբագրական իր համություններով, տաղանդավոր գրչով, աննահանջ հետևողականությամբ ու սկզբունքային մարտունակությամբ Գր. Չիլիեկիրյանը հանձնի «Մաղիկի» այլև է հայ մամուլի լավագույն օրինակներից մեկը, որն իր հերթին գրանք փոխանցել է «Արևելյան մամուլին», որի ապագա խմբագիրը Մ. Մամուրյանը, Չիլիեկիրյանի գինակիցն էր ու աջակիցը, որի անշեղ հավատարմությունը գեմտիրատական ուղեգծին, հենվում էր նաև «Մաղիկի» գեմտիրատական ուղղություն և մշակած գեանի վրա: Այս կերպ ահա ապահովվեց զմյուսնահայ գեմտիրատական մամուլի գրեթե անընդմեջ շարունակականությունը մի ամբողջ քառասունամյակ՝ 1860-ից մինչև 1900-ական թվականները:

## «ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» (1855-1856, 1858-1864)

Մինչև XIX դարի երկրորդ կեսը Արևմտյան Հայաստանի տարածքում չէր հրատարակվում պարբերական մամուլի որևէ օրգան: Այն ժամանակվա հաղորդակցության պայմաններում Կ. Պոլսում լույս տեսնող պարբերականը Արևմտյան Հայաստան կամ արևմտահայ գավառ կարող էր հասնել մի քանի ամիս ուշացումով: Գավառահայության ազգային ինքնագիտակցության և ինքնաճանաչության հաստատման, հասարակական կյանքը արթնացնելու համար խիստ անհրաժեշտ էր հենց տեղում կազմակերպել պարբերական մամուլի հրատարակության գործը: Այդ նպատակով 1855 թ. հունիսին Կ. Պոլսում սկսեց հրատարակվել «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի անվանումն անգամ հուշում էր ընթերցողին, որ հրատարակիչը մտադիր էր գործը շարունակել Վասպուրականում Արևմտյան Հայաստանի ամենամեծ հայաբնակ նահանգներից մեկում: Ամսագրի տիտղոսաթերթին գրված էր. «Թուրքյալ Հայրենասեր թևոք ՀԱրծրունի գահեն ի Վան Տոսպ, հրատարակյալ Հայրենասիրությամբ Մկրտիչ վարդապետի Խրիմյան վանեցվո»:

Մկրտիչ Խրիմյանը ծնվել է 1820թ., Վանում: Կրթությունը ստացել է Վանի մերձակա Կտուց և Լիմ անապատների դպրոցներում: Ինքնակրթությամբ լրացնելով գիտելիքների պակասը՝ նա 1842-ից հաստատվում է Կ. Պոլսում, ուր աչքի է ընկնում իր հայրենասիրական ելույթներով: Հայրենի երկրին ծանոթանալու նպատակով ճանապարհորդում է Պարսկահայքում, Անդրկովկասում, այցելում Երուսաղեմ: Այդ շրջագայությունների գեղարվեստական արտացոլումը եղան 1850 և 1851-ին հրատարակված «Հրավիրակ Արարատյան» և «Հրավիրակ երկրին ավետյաց» չափածո հայրենասիրական ստեղծագործությունները: 1848-1850 թթ. ուսուցչություն է անում Կ. Պոլսի հայկական թաղամասերի դպրոցներում: Ցանկալի հյուր էր գաղթօջախի ազդեցիկ գերդաստաններում, հայ հասարակական կյանքին տոն տվող հայրենասեր մտավորականների շրջաններում: 1851թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքի հանձնարարությամբ մեկնում է Կիլիկիա՝ ուսումնասիրելու տեղի հայության կյանքը, նպաստելու կրթական-դպրոցական, լուսավորական կյանքի զարգացմանը: 1854թ. ձեռնադրվում է վարդապետ Վասպուրականի Հոգևոր առաջնորդի կողմից: Հոգևորականի վեղարը լայն հնարավորություն էր ընձեռում ժողովրդի մեջ հասարակական աշխատանք ծավալելու համար: Պետք է հստակ տարբերակել Կ. Պոլսում ապրող, հարմարավետ և ճոխ կյանքի



սովոր և դավաճում գործող հոգևորականներին: Վերջիններս իրենց սոցիալական ծագումով իսկ դառնում էին արևմտաՀայ գավառի ամենաՀոծ բնակչության արհեստավորության և գյուղացիության, այսինքն լայն դեմոկրատիայի շահերի արտահայտիչ:

Երիմյանը Համառ Չանքեր է գործադրում Վասպուրականի վանքերից մեկում Հիմնադրելու տպարան, բացելու հոգևոր «Ժառանգավորաց» դպրոց: Իսկայն բարձրաստիճան հետադեմ հոգևորականների հալածանքից դարձյալ մեկնում է Կ. Պոլիս: Տեղի եկեղեցիների բնմերում «Հայաստան և Հայրենասիրություն» քարոզող վարդապետը իր ելույթներով հուզում է գաղթական Հայերի սրտերը, նրանց մարած ոգիները վառում Հայրենասիրական կրակով: Պանդուխտ և գաղթական Հայերը հաղորդակցվում են Հայրենիքում ապրող ժողովրդի ծայրաստիճան աղքատ, տառապանքներով լի կյանքին, ջերմություն և սիրով լցվում հեռավոր Հայրենիքի նկատմամբ: Մեծահարուստ ազգային գործիչ Պողոս Պետրոսյան ազան իր ընդարձակ տան մի սենյակը տրամադրում է «Արծիվյան» խմբին, որը կարճ ժամանակամիջոցում մի պատկանելի դուստր է հանդանակում ամսագիրը հրատարակելու համար: Ամսագրի 4 համարները հրատարակվեցին Կ. Պոլսի Արապյան եղբայրների տպարանում, թիվ 5-ից սկսած խմբագիրն ունեցավ սեփական տպարան Ուսկյուտարի Սուրբ Խաչ եկեղեցում: Ամսագիրն իր տարածող գործակալներն ուներ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Կարինում և Վանում: Մի ամբողջ տարի 1855 թ. Հունիսից մինչև 1856-ի Հունիսը, խմբագիր-հրատարակիչը Համառ և հետևողական նախադատրաստական աշխատանք էր կատարում ամսագրի հրատարակությունը Վասպուրականում իրականացնելու համար: Այդ բնթացքում հրատարակվում է ամսագրի 12 համար: Հոդվածներն մեծ մասը գրում էր խմբագիրը: Բուն վերնագրերից բացի հոդվածներն ունեին բնութագրող անվանումներ Բանախոտություն, Բարոյական, Դատարարություն, Հայրենասիրական և այլն: Ծրագրային հոդվածի մեջ խմբագիրը հայտնում էր, որ նպատակաձգված է «գրել և խոսել զՀայրենյացն, զնորին նախնի ճոխ բարգավաճությունցն, զվերջին դժբախտ վիճակացն, զհայրենաշեն քաջացն հայոց, զառաքինի հարցն հոգևոր և որ ինչ առ Հայրենիսն վերաբերին»: Խմբագրի ուշադրության կենտրոնում հայ պանդուխտների ծանր վիճակն էր Կ. Պոլսում և այլ վայրերում: Պանդուխտությունը և գաղթականությունը համարելով արևմտահայ կյանքի չարիքներից ամենածանրը, մի երևույթ, որի

պատճառները իրավացիորեն բացատրում էր երկրի քաղաքական անկայուն վիճակով, Հայ գյուղացու և արհեստավորի սոցիալական անտանելի կացութիւնով, նա եռանդուն պայքար էր մղում պանդխտութիւնը կանխելու, արեւմտահայ գավառը Հայաթափ անելու դեմ, կոչ անում գաղթաշխարհի Հարուստ և ունեւոր անհասներին իրենց լուծման ներդնել Հայրենաբնակ ժողովրդի տառապանքների թեթեւացման համար: «Ըջմարիտ Հայրենասիրութիւնը» համարելով «բուն Հայրենյաց երկրի մեջ բնակվելը», իրիմյանը կոչ է անում «տարաշխարհիկ հայկազուններին» վերադառնալ Հայրենիք, շենացնել պապերից ու Հայրերից ժառանգութիւն ստացած երկիրը, գերադասելով Հայրենի «փշալից դաշտերը» պանդխտութիւն «ծաղկալից բուրաստաններին»:

Տարբեր հարցեր է բարձրացնում որոնումների մեջ գտնվող խմբագիրը ամսագրի նախապատրաստական, առաջին շրջանում. ամենից առաջ իր ընթերցողներին ծանոթացնում է Հայկական տարբեր վայրերի հետ: Կիլիկիա կատարած ուղևորութիւններին ժամանակ իր խորհրդածութիւնները, Հայրենիքի ողբալի կացութիւնը՝ պետականութիւնը կորցրած Հայ ժողովրդի ցիր ու ցան վիճակը, ազգային դպրոցների անմխիթար գոյութիւնը բարելավելու, աշխարհաբար և գրաբար լեզուների դերի, նրանց զարգացման ուղիների հարցը քննարկման նյութ են դառնում ամսագրում: Հատկանշական է, որ իբրև վարդապետ նախապատվութիւնը տալով գրաբարին, իբրև Հասարակական գործիչ խմբագիրը գտնում է, որ ամսագրերը, պարբերական հրատարակութիւնները պետք է գրվեն «աշխարհիկ լեզվով, պարզ ու մաքուր ոճով»: Ակնբախ է խմբագրի ժողովրդասեր միտումը՝ թերթը, գիրքը մոտեցնել և Հասկանալի դարձնել Հասարակ ժողովրդին (№ 1, էջ 15): Նույն այդ նպատակամղովածութիւնով էլ իրիմյանը պայքարում էր դպրոցներում միասնական դասագիրք հաստատելու, դասագրքերը պարզ ու հասկանալի շարագրելու համար: Այդ շրջանում ամսագրում տեղ են գտել նաև կրօնական բովանդակութիւն ունեցող հոդվածներ, ուր հեղինակ-խմբագիրը, կլնելով ավետարանական նախաստեղծ ճշմարտութիւններին, պաշտպանում էր ազգասիրին, տնանկներին, զրկվածներին:

1856 թ. № 12-ում (Հունիս ամսին) հայտարարելով, որ ամսագրի հրատարակութիւնը ժամանակավորապես դադարեցվում է՝ հրատարակութիւն վայրը փոխելու պատճառով, իրիմյանը թողնում է Բոսֆորի և Մարմարայի «գեղազովարձ ամիերը» և իր տպագրական մեքենայով, թղթի անհրաժեշտ պաշարով մեկնում Վասպուրական: Ազգեցիկ Օսյան գերդաստանի աջակցու-

թյամբ նրան հաջողվում է Կ. Պոլսի հայոց պաարիարքարանի կողմից նշանակվել Վանի մերձակայքում գտնվող Վարազա վանքի վանահայր վանքը հանելով Վասպուրականի հողեր առաջնորդի իրավասությունից: Ակսովում է մի ծանր անեղացին աշխատանք: 1856 թ. կեսը և ողջ 1857 թ. աշխատանք է տարվում ամսագրի վերահրատարակման համար: 1857-ին Հենց Վարազա վանքում Երիմյանի անօրինությունները բացվում է «Ժառանգավորաց» դպրոցը: Վանքի միաբանությունն անդամները դառնում են այդ վարժարանի առաջին ուսուցիչները, իսկ 19 պատանիներ նրա առաջին գիշերօթիկ սաները: Դպրոցը նորություն էր արևմտահայ այդ միջավայրում լուսավոր դասարաններ, նստարան ու գրատախտակ, նույնիսկ քարտեզ ու թանգարան: Իր համախոհ սաների և միաբանությունն աջակցություններ 1858 թ. մարտից Երիմյանը վերսկսում է «Արծուի Վասպուրականի» հրատարակությունը: Դա ամսագրի կյանքի երկրորդ շրջանն էր, ավելի հասունացածը, քան նախորդը: Եթե պոլսյան «Արծուին» ուներ իր գործակալներն ընդամենը 4 քաղաքում, ապա այս շրջանում անհամեմատ ընդլայնվում է ամսագրի բաժանորդագրությունն ապահովող գործակալների շրջանակը՝ Վան, Կարին, Բաղեշ, Չմյուռնիա, Տրպիզոն, Կ. Պոլիս, Սալմաստ: Ուշագրավ է, որ Սալմաստի գործակալն է դառնում 1857-ին Արևմտյան Հայաստան շրջագայություն կհած, անձնակազմ Երիմյանի, նրա գինակիցների և վարժարանի Հեսա հարաբերություն հաստատած Հակոբ Միրզայան Մեկիր Հակոբյանը՝ ապագա վիպասան Բաֆֆին, իրրև «միանգամայն գործակալ Պարսկաստանի հայոց»: Այդ ժամանակվանից էլ սկսվեց նրա գործակցությունը ամսագրին:

1858 թ. № 1-ի «Նախարան առ ընթերցող» հոդվածում խմբագիրը նշում է, որ ցանկանալով առավել կարգավորել հրատարակվող նյութերի դասակարգումը՝ ըստ բովանդակության, ամսագրի նյութերը բաժանվում են մի քանի բաժինների. ա) Հանդես աստվածապաշտություն, բ) Հանդիսարան հայրենաշեն առարինյացի հայոց, գ) Տեսարանը հայրենի աշխարհաց, դ) Բուրաստան բարոյական առարինությունաց, ե) Թանգարան հայկաղյան դպրություն:

«Հանդես աստվածապաշտություն» բաժնի հոդվածները նվիրված էին հայ եկեղեցու նշանավոր դեմքերի հայրենասիրական գործունեություն լուսարանմանը: Ընթերցողները ծանոթանում են Գրիգոր Լուսավորչի, նրա սրբիների ու թոռների Արիստակես, Վրթանես, Հուսիկ և Դանիել հոգևորականների կատարած գործերին, ներսես Մեծի, Սահակ Պարթևի գործունեությունը: Առանձին սիրով, երկյուղածությամբ և հարգանքով է լեցուն Մեսրոպ Մաշ-

տոցին նվիրված Հոգվածը (1850, № 7), ուր ընդգծվում է նրա կատարած մեծ գործը, իբրև Հայ գրեթե բոլորի հեղինակ, առաջին Հայկական դպրոցների հիմնադիր և ուսուցիչ: Խմբագիրը գնահատում է Մաշտոցին իբրև «կարոտյալ Հայ մանկավույն» «Հաց հոգեպարար» պարզևող անձնավորություն: Նրա գործը համարելով ժողովրդի գոյապահպանման առաջին գեները, Խրիմյանը նկատում է. «Եկեղեցին Հայաստանյայց պայծառանայր, ընթերցվածքս լսելի լինեին ունկս ժողովրդյան, տաղք Մովսիսազիր Մատենից՝ Հայաբարբառ հնչեին, դպրոցք բանային, մանկունք կրթեին, քաջաքաջ ուսման ասպարեզ խիզախեին»: Հաջորդաբար հոգվածներ են նվիրվում «սուրբ Թարգմանիչներին», Մաշտոցի աշակերտներին. մեծարվում է Մովսես Խորենացին իբրև «քերթողահայր, ակնաղբեր Հայացի դպրություն» (1858, № 9), գնահատվում է «վսեմախոս պատմագիր Եղիշեն» (1858, № 10), Եզնիկ Կողբացին, իբրև ընտիր աստվածաբան, Դավիթ Անհաղթը՝ Հայ փիլիսոփայական մտքի հսկաներից մեկը: Նշված անունների թվարկումը ցույց է տալիս, որ «եկեղեցաշեն Հայեր» պիտակով մեծարվում են Հայ մշակույթի մեր մեծերը: Փաստորեն սրբերի շարքն անցած այդ բույլը արժեքավորում է՝ չափանիշ ունենալով ժողովրդի գոյատևման համար կատարած նրանց գործը:

Այդ բաժնի հոգվածների մեծ մասի հեղինակը Խրիմյանն է, դրանք անստորագիր հոգվածներ են: Հոգվածների մյուս մասը ստորագրված է Ա. Մ. Ա.: Մեր կարծիքով, այդպես հանդես է եկել ամազրի Վանի գործակալ Մկրտիչ Ատոմյանը (Առաջին Ա տառը ժամանակին օգտագործվում էր իբրև Արժանապատիվ բառի կրճատ ձև: Այդ եզրակացությունն ենք հանգել Համադրելով մյուս կրճատ տառակապակցությունները, որոնք առավել Հայտնի են): Այս անունը Հայտնվում է 1858-ի № 2-ից, ապա ավելի հաճախ նույն թվի № 9-ից: 1859-ից այդ բաժնի հոգվածներն ստորագրվում են նաև երեք աստղանիշ (\*\*\*) , ապա Հայտնվում է երկու աստղանիշ և Արտամեսոյան ազգանունը: Նա Վարադա ուխտի անդամներից էր, Խրիմյանի մերձավորազույն գործընկերը, վարժարանի ուսուցիչներից մեկը: Չնայած տարբեր հեղինակների առկայությունը, հոգվածների նպատակաուղղվածությունը մեկն էր՝ Հայ եկեղեցու դերի գնահատումը Հայապահպանության համար մղվող պայքարում, երբեմն նաև, բավականին մեղմ և վախվորած, նրա ապաշնորհ ներկայացուցիչների քննադատությունը, Հայ մշակույթի գործիչների և դիտական այրերի գովաբանումը: Հեղինակների ոճը իրարից չի տարբերվում: Թե-

րես խմբազրի անստորագիր Հողվածներն աչքի են ընկնում մեծ զգացմուն-  
քայնութեամբ, Հայրենասիրական կրթոտ քարոզով, ծրագրային առաջարկու-  
թյուններով:

«Հանդիսարան հայրենաշեն առաքիցյացն հայոց» խորագիրը կրող բաժնի  
Հողվածները նվիրված էին Հայ ժողովրդի, Հայ պետականութեան քաղաքա-  
կան ղեմքերին: Հայկ և Արամ Նահապետներ, Արա Արամյան (Արա Գեղեցիկ),  
անդրանիկ Թաղակալ արքա Հայոց Պարույր, Տիգրան Երվանդյան, Արտաշես  
առաջին, երկրորդ, Արշակունի Արշակ առաջին և երկրորդ, Վռամշապուհ, Ա-  
շոտ, Ամբաս, Աբաս, Գազիկ Բազրատունիները, Կիլիկիայի Հայ իշխանական  
աների ներկայացուցիչները, նրանց վերականգնած պետականութեան Հայտնի  
անձերը դարձել են այս բաժնի Հողվածների գործող անձինք: Այդ Հողված-  
ներում միախառնված են Հայկական պետականութեան մի քանի ղինաստիա-  
ները Երվանդունիները, Արտաշիսյանները և Արշակունիները: Հեղինակները  
նպատակ չեն դրել պարզել նշված պատմական անձնավորությունների գոր-  
ծունեության բոլոր դրվագները, ճշտումներ մտցնել, համեմատել պատմական  
տարբեր աղբյուրները, հանդիս որոշակի եզրակացութեան, մի խոսքով, քննա-  
կան մտակցում հանդես բերել պատմական ղեկավարի և ղեմքերի նկատմամբ:  
Մեր կարծիքով, 1858 թ. № 1-5-ը ներառյալ, այդ բաժնի Հողվածների Հեղի-  
նակը Խրիմյանն է: Դրանց հատուկ է ջերմ Հայրենասիրությունը, անցյալի  
իդեալականացումը, Հայ առաջին Թագավորների առաքինի և Հայրենասիրա-  
կան վարք ու բարքի գնահատականը, Հայաստանի անցյալի Հզոր պետա-  
կանութեան գովերգումը, միևնույն ժամանակ կոչ-Հրավեր ժամանակակիցնե-  
րին օրինակ վերցնել մեր նախնիներից, չհնացնել ամայացած երկիր Հայրե-  
նին: Գովերգելով Հայկի ազատասիրությունը, բնական Բելին Հաղթելու նրա  
անկոտորում կամքը խմբագիրը գրում է. «Ձայն արձակյալ առ Ձեզ որդիք և  
Հայկա Հողացյալ սուկերք, մի թողուք աննշան ամայանալ գեղաշեն դաստա-  
կերան իմ Հայկոճորո, որ ցորչափ շինութեամբ կանգուն կացցե, հավերժական  
պարծանք են Հայրենյաց...» (1858, № 1, էջ 9):

1858 թ. № 6-ից սկսած այդ բաժնի Հողվածները գրում է Վարագա միա-  
բանութեան անդամ, «ժառանգավորացի» ուսուցիչ Տիգրան Գալիսիկյանը:  
Այստեղ ևս տիրողը նույն սկզբունքն է անցյալի Հզոր պետականությունը  
հակադրել ներկայի, պետականությունից զուրկ, տարբեր լծերի տակ իր  
գոյությունը մի կերպ քարշ ավոզ ժողովրդի անհույս կացութեանը: Շարու-  
նակովում է թագավոր Հերոսների շարքը, մեկը իբրև ուսման տարածող և քա-

Չայերող (Վաղարշակ), մյուսը «Նախանձախնդրությամբ պաշտպաններ այն գարդարված հայկական այգին, որ չըլլա թե իր հայրենի ցանքեն պղտիկ ճյուղ մի անգամ քակվի»: Սակայն Գալփակճյանի հոգվածներն աչքի են ընկնում մեծ նվիրվածությամբ և քրիստոնեական կրոնի ջատագույնությամբ: Նրա համար գովասանքի և հիշատակության են արժանի այն թագավորները, որոնք նպաստել են քրիստոնեության տարածմանն ու հզորացմանը: Պապը, որ ցանկանում էր անկախ լինել հայ եկեղեցուց, Գալփակճյանի կողմից որակավորվում էր քաջասական հատկանիշներով: Մարզպանական Հայաստանի ոչ մի քաղաքական գործիչ չի գրավում հանդեսի աշխատակիցների ուշադրությունը: Արշակունիների անկումից և հայ պետականության կորստից հետո մի մեծ ժամանակաշրջան դուրս է մնում հանդեսի տեսադաշտից: Մի համառ հետևողականությամբ այդ հոգվածների հերոսները միայն կենտրոնացված պետականության ստեղծողներն են, այս անգամ արդեն Բագրատունի դինաստիայի ներկայացուցիչները: Եթե Աշոտ առաջինը գովերգվում է հայ պետականության վերականգնման համար, ապա նրա որդի Սմբատը Հայաստանի սահմանները ընդարձակելու: Պարսպանքի են արժանանում անմիաբան Ֆեոդալները, որոնք անսահման չարիք են բերում ժողովրդին, սակայն երբեմն քրիստոնեական ներդրամություն է հանդես բերվում նրանց նկատմամբ, Ֆեոդալական կենտրոնախույս ձգտումների պատճառը և հայ պետականության կորուստը որոնելով արտաքին հանգամանքների մեջ: Քանի որ ամբողջ ամսագիրը կոչված էր դաստիարակելու ժողովրդի և իր ժամանակի հոգևոր ու աշխարհիկ մեծերի միտքն ու սիրտը, դրա համար էլ դրվատանքի են արժանանում մանավանդ այն տիրակալները, որոնք պակասեցրել են ժողովրդի վրա դրված հարկերը: Թեթևացրել նրա վիճակը: Գաղիկ Բագրատունին «իր առատասրտությամբ արքունական հարկերը քիչցուց և շատերն ալ բոլորովին սուրբերե ազատ ըրավ» (1859, № 8, էջ 195):

Հոգվածների հերոսներ են դառնում նաև Կիլիկյան հայկական պետականության ստեղծողները Ռուբենը (1859, № 9, էջ 280-289), Կոստանդինը, Թորոսը (1859, № 12, էջ 308-312): Ընթերցողների համար մեծ էր այս բաժնի հոգվածների նշանակությունը: Հայ պետականության քաջակայության պայմաններում ժողովրդին պատմել նախնիների կատարած սխրանքների, կենտրոնաձիգ հայկական հզոր պետականության ստեղծողների մասին, նշանակում էր դատ տալ ժամանակակիցին, նրան պատրաստել պայքարի, նրա մեջ վառ պահել ընդվզումի գաղափարը:

«Տեսարանք հայրենի աշխարհաց» բաժինը նպատակաձգված էր ընթերցողին ծանոթացնել պատմական Հայաստանի վայրերին. «Արծուին Վասպուրահան յուր գլխավոր պարտքը համարած է բոլոր Հայաստանին փառապաշտել տխուր վայրաց վրայոք աշխարհազրական տեղեկություններ տալով անոնց Հին ու արդի դիճակն ըստ կարյաց նկարագրել և իրրև պատկեր տխրադեմ Հայրենասիրտ համազգյաց աչքին դիմաց դնել» (1858, № 1, էջ 16): Այդ բաժնի Հոդվածները նկարագրում են Հայկական վանքերը, մենաստանները, բաղաքները, գյուղերը: Դրանք Օսմանյան Թուրքիայի և Ռուսաստանի կազմում գտնվող պատմական Հայաստանի նշանավոր վայրերն են՝ Վերին և Ներքին Վարացի համալիրները, Վան-Տոսպ նահանգի նշանավոր գավառներն ու գյուղերը, վանքերը: Արևելյան Հայաստան կատարած Հայտնի ճանապարհորդությունից հետո այդ ընդհանուր խորագրի տակ Հոդվածներ են նվիրվում Երևանին, Տիֆլիսին, Այուռլայց աշխարհին, Շուշին, Վարաբաղին: Այս Հոդվածների նպատակն էր արևմտահայերին ծանոթացնել արևելահայություն կեցությունը, ուսումնական գործի զրգացումը, Հիմնված ընկերություններին: Այդ բաժնի Հոդվածներով Հիմք դրվեց ժողովրդագրական Հայտնի շարժմանը, որն իրականացրեց Վարաղա գաղտնյա իր Հիմնադիր անօրենսով և զինակից սաներով: Դա մի Հայրենասիրական առաքելություն էր, որ կատարեցին նրանք եկող սերունդների համար թողնելով մեր պատմական Հուշարձանների, ճարտարապետական կոթողների մանրամասն ստորագրություն-նկարագրությունները:

Բացի նրանից, որ այդ Հոդվածները այսօր մեզ արժանահավատ և հավաստի տեղեկություններ են տալիս այն ժամանակվա սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ, ամենից առաջ այսօր դրանք ունեն անզնահատելի արժեք այն պատճառով, որ մեզնից բռնություն մի վրած պատմական Հայրենիքի մի մասի հավաստի նկարագրություն են: Այդ բաժնի Հոդվածների մեծ մասը անստորագիր է, այսինքն պատկանում է խմբագրի զրչին: Մյուս մասը, թեև \*\*\*-ով, սակայն, կարծում ենք, պատկանում է Գ. Արվանձախանցի զրչին, որը այդ բաժնի Հոդվածների մի մասի նաև Հայտնի ստորագիրն է:

«Քուրաստան բարոյական առաքինությանց» բաժինը պարունակում է բարոյախոսական Հոդվածներ, որոնք բարձրացնում են հավերժ կենդանի բարոյական բարձր հատկանիշներ, գովաբանում բարությունն ու առաքինությունը, Հայրենասիրությունն ու անձնագոհությունը, քաջությունն ու

ազնվութիւնը, Համբերութիւնն ու Հանդուրժողականութիւնը, գթասրտութիւնն ու սերը մերձավորի նկատմամբ և պախարակում շարութիւնն ու նախանձը, անբարոյականութիւնն ու արտամոլութիւնը, սնապարծութիւնն ու նիշիլիզմը, վախկոտութիւնն ու նենգութիւնը, մարդկային այլ ստոր կրքեր ու հակումներ: Հաճախ այդ ամենն արվում էր Ավետարանից բերված օրինակներով, առօրյա կյանքում Հանդիպող փաստերով ու ընդհանրացումներով: «Աշխարհս ծովու կը նմանի, ով որ լողալ չի գիտեր, կը խեղդվի», «Հանդես մարտից արդարութեան ու անիրավութեան», «Զիք Հաղթող դժվարութեան աշխարհի, քան զհամբերութիւն» խորագրերը մոտավոր պատկերացում են տալիս այդ բաժնի պարունակած հոգեվածնների մասին:

Այդ շրջանում իրենց գրական թոթովանքներն են սկսում Գարեգին Սրվանձտյանցը, Արշամ Գրիգորյանը, «Ժառանգավորացի» մյուս սաները: Այդ հոգեվածները, գրված անփորձ պատանիների կողմից, կարծես մի կոչ էին ուղղված նոր կարգալ սովորող Հայ գյուղացուն՝ ամեն կերպ պայքարել գոյատևման համար, բացել նոր դպրոցներ ու վարժարաններ, հաստատ մնալ երկրի վրա, չբռնել աստանդականի ցուպը: Իրենց ուսուցչի նման անմնացորդ նվիրվելով Հայրենիքի բարգավաճմանը, նրանք պախարակում, միևնույն ժամանակ հորդորում էին Հայ մեծատուններին իրենց ունեցվածքից բաժին Հանել Հայրենիքը կանգուն պահող գյուղացիներին:

«Թւանգարան հայկազյան դպրոցային» բաժինն իր առաջ դրել էր երկու նպատակ, առաջինը՝ հրատարակել Հայկական վանքերում պահվող ձեռագիր հիշատակարաններից ուշադրութեան արժանի հատվածներ և երկրորդ՝ գեղարվեստական գրականութեան նմուշներ՝ թե՛ արդեն տպված գրքերից, թե՛ ամսագրին թղթակցող հեղինակների ստեղծագործութուններից: Հատվածներ են տպվում Բերդակ գյուղի գրչագիր Հայամավուրքից, Կենդանանց գյուղի ավետարանից, Սալնապատի վանքի ավետարանից, Լամզկերտ գյուղի ճառոցից և բազմաթիւ այլ հիշատակարաններից: Հատվածների հրատարակութիւնը կատարվում էր մեծ բժախնդրութեամբ, ընտրվում և հրատարակվում էր Հայ ժողովրդի պատմութեան որևէ նշանավոր դրվագ, ժողովրդի ծանր իրավիճակի, հերոսական կամ ողբերգական անցքի նկարագրութիւն:

Այլ էր գեղարվեստական գրականութեան նմուշների հրատարակման հարցը: Առաջնակարգ նշանակութիւն էր ստանում արեւելահայ հեղինակների հետ հարաբերութիւն ստեղծելու խնդիրը: Խմբագիրը ուրախութեամբ հայտնում էր ընթերցողներին Ախուրյան գետի եզերքից «բազկ մը երկու



փունջ ծաղիկ բերանը առած Վարագա մենաստանը կհասնի, կողջունն զԱր-  
ծիվը և իր բերնի ծաղկեփունջը բնծաները կընվիրե թանգարանիս» (1858, № 1,  
էջ 75): Այնքանդրապոլի գավառական արքունի ուսումնարանի օրենուսույց  
վարժապետ Հակոբ քահանան էր, որ, շնորհավորելով «Արծուի» նոր շրջանի  
ծնունդը, բանաստեղծություն է հղում նրա էջերում տպելու համար: Սակայն  
առաջիկ կարևորը Հակոբ Մելիք-Հակոբյանի նամակներին հրատարակությունն  
էր ամսագրի էջերում և այդ նամակներին տրված խմբագրի մեկնաբանու-  
թյունը: Մանթիպցնելով «Տփիսիսի մեծաճուշակ ներսիսյան դպրոցի» նախկին  
սանի գործունեությունը Խրիմյանը համաձայնում է նամակագրի մտքերին  
ժամանակի հայ հոգևորականության քննադատության հարցում, նրա հա-  
կադրվելուն IV և V դարերի հոգևորականների ծավալած լուսավորական գոր-  
ծունեությունը, իր ժամանակի տղետ, հետադեմ, խավարասեր հոգևորական-  
ների տպիկարությունը: Եթե նամակագիրն առաջարկում էր ազգի լուսա-  
վորություն գործը խլել հոգևորականների ձեռքից և հանձնել հայրենասեր  
աշխարհիկ մարդկանց, ապա Խրիմյանը, քննադատելով հանդերձ, ցանկանում  
էր բարեխափել նրանց գործունեությունը: Ելնելով ավետարանական ճշմար-  
տություններից, եկեղեցու սպասավորների առաջ դրված պահանջներից  
«Դուք եք լույսը աշխարհի», «Դուք եք պըր երկրի», խմբագիրը դատապար-  
տում է, որ նրանք զարձեղ են «շիջած ճրագներ»: Նա անհրաժեշտ է համարում  
վճռական միջոցներ ձեռք առնել և հոգևորականների գործունեությունը  
ծառայեցնել միայն ժողովրդասեր նպատակներին:

Բաժնում տեղ գտած գեղարվեստական ստեղծագործություններին ծանրա-  
կշիռ մասը «ժառանգավորաց» վարժարանի սաների ստեղծագործություն-  
ներն են, մեծ մասամբ չափածո բանաստեղծություն և պոեմի ձևով: Հայտնի և  
անհայտ անունների մի շարք է մեր առջև բացում այդ բաժինը: Արսեն Թոխ-  
մախյան, Գարեգին Արվանձախյան, Արշամ Գրիգորյան, Եղիշև Մեսրոպյան,  
Նահապետ Փիրզալեմյան, Արփիար Ա. Գ., Հրաչյա Մարգար, Միհրդատ Պար-  
թեյան, Արամ Բժշկյան, - ահա ոչ լրիվ ցուցակը այն անձնավորությունների,  
որոնց ստեղծագործությունները զարգարել են «Արծուի» էջերը:

Բանաստեղծություններից բացի, ամսագրի հինգ համարներում անընդմեջ  
լույս է տեսնում նաև մի պիես ժամանակի լեզվով «Թատրոնական վեպ»  
«Վերջին Արտաշիր Արշակունի թագավոր հայոց» խորագրով: Ժամանակա-  
կիցների վկայությամբ այդ պիեսը բեմադրվել է Վարագում, դպրոցի աշա-  
կերաների ուժերով, ցուցադրվել հանդիսությունների ժամանակ և ստացել

Հասարակական ու քաղաքական Հնչեղություն: Չնայած պիեսն ստորագրվել է «Աշակերտք Վարագա վարժարանից», սակայն մեր և մյուս Հետազոտողների կարծիքով այն պատկանում է Գարեգին Սրվանձտյանցի գրչին: Դարերի Հեռվից պիեսի գործող անձինք ժողովրդին կոչում են միաբանություն և Հայրենասիրություն: Կարծես իր ժամանակի իրավիճակն է նկարագրում Հեղինակը անդրադառնալով անցյալին: «Գողեր կիսադան եկեղեցյաց բեմի վրա, առաջնորդ չկա: Ավագակները պատած են ամեն կողմից, իշխան ու դատավոր չկա: Հայաստանի մեջ ամենքն էլ դարձան թշնամի, յուրյանց շահուց և յուրյանց փառաց միայն Հոգացողք»: Գործը թույլ է գեղարվեստական տեսակետից: Գործող անձինք իրարից տարբերվում են միայն անուններով և արտահայտած տեսակետով Հայրենասե՞ր, թե՞ Հայրենադուրժ: Դրական Հերոսները փաստորեն Հեղինակի խոսափողներն են: Այդ բոլորով հանդերձ մեծ էր պիեսի նշանակությունը, նրա դաստիարակիչ ուժը:

1860 թվականին լույս տեսավ «Արծուի Վասպուրական» ամսագրի միայն երկու Համար: Դրա պատճառը խմբագրի և նրա գլխավոր աշխատակցի ճանապարհորդությունն էր Արևելյան Հայաստան: Ծանապարհորդությունը բեկումնային եղավ ամսագրի և խմբագրի Համար: Ամենից առաջ ընդլայնվեցին ամսագրի տարածման շրջանակները: Այժմ գործակալներ կային արևմտահայ և արևելահայ նշանավոր կենտրոններում Վան, Բաղեշ, Մուշ, Կարին, Տրապիզոն, Պոլիս, Տիֆլիս, Գանձակ, Ղարաբաղ, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Երևան, Նախիջևան, Վերին և Ներքին Ազուլիսներ, Դավրեժ, Սալմաստ: Այդ քաղաքների աչքի ընկնող Հասարակական գործիչները դարձան ամսագրի երկրպագուներ, խմբագրի և նրա սաների Համախոհներ: Միևնույն ժամանակ նրանք իրենց ազդեցությունը թողեցին նրիմյանի վրա: Առավել Հետաքրքրական դարձան նրա Հոգվածները, սուր և որոշակի Հարցադրումները: Առնականացավ ամսագրի գլխավոր աշխատակից Գ. Սրվանձտյանցի գրիչը: Այս շրջանում ամսագրում մեծ տեղ էր զբաղում առանձնապես Հրապարակախոսությունը:

1861 թ. Համարներում անընդմեջ լույս են տեսնում նրիմյանի Հոգվածները «Նորհրդածություն Վասպուրական Արծվույն իր ճանապարհորդության մեջը», «Հոգի և զգացողություն Հայկազյանց Ռուսաստանի», «Հայկազյանց Հառաջադիմության կեդրոն բուն Հայրենիքն է», «Ժողովրդական դպրոց», «Ազգային երկպառակություն», «Ազգային կեդրոնական վարչություն», «Հայրենյաց նոր Հառաջադիմության Համար մա՞րդ պետք է, թե՞

Սահմանադրությունը» և այլ հոդվածներ Խրիմյանի Հրապարակախոսությունը բարձրացրին մի նոր աստիճանի, զբանջում առավել ընդգծվեցին Հեղինակի դեմոկրատական հակումները: Համեմատելով եկեղեցական և ժողովրդական դպրոցները, խմբագիրը առավելությունը տալիս էր վերջինին, որովհետև եթե եկեղեցական դպրոցը նպատակ ուներ ստեղծել կիրթ և ժամանակակից հոգևորականներ, ապա ժողովրդական դպրոցը խիստ անհրաժեշտ էր գյուղացու արհեստավորի, ժողովրդի համար: Նույնիսկ նա պահանջ էր դնում եկեղեցական դպրոցի բոլոր սաներին հոգևորական շարժել, այլ նրանց զգալի մասին պատրաստել որպես ժողովրդի լուսավորության անխոնջ մշակներ: Առաջինը ինքն էր կիրառում այդ պահանջը, երբ իր ժառանգավորացի ուսանողներին մեծ մասին ուղղում էր դեպի հանրային կյանք: Նա անհրաժեշտ էր համարում հորաքննել «ընկերական ոգին», որովհետև ժողովրդական դպրոցները կարող են բացվել ընկերությունների, հոգաբարձությունների միջոցով: Այդ դպրոցները պետք է բացել Հայաստանի բոլոր գավառներում, մասնավորապես գյուղերում, որովհետև ժողովրդի մեծ մասը գյուղաբնակ էր:

Խմբագիրը շեփուրում է իր ընթերցողներին. «Հայրենյաց լուսավորությունիս իսկական պատճառ ժողովրդական դպրոցն է, այս դպրոցները յուրաքանչյուր գավառի մեջ հաստատող ընկերական հոգին է, այս հոգին վառող ու կազմող հոգեոր առաջնորդաց և քաղաքական իշխանաց միաբանական կամքն է», սակայն դրանց բացակայության պատճառով 4 միլիոն հայերից «դեռ ամենափոքր մասն հաղիվ գրել ու կարդալ գրեան» (1861, № 3, էջ 74): Խրիմյանը կախարդական շղթայի օգակների նման աղքատությունը և ազիտությունը համարում է մեկը մյուսով փոխադամանավորված. աղքատ են, որովհետև աղետ են, աղետ են, որովհետև աղքատ են:

Հետաքրքիր են Խրիմյանի հայացքները արևմտահայ Ազգային սահմանադրություն մասին: Սահմանադրության համար միզիոզ պայքարում ստույգ նշմարելով հակառակ կողմի ներկայությունը, կանգնելով այդ շարժման առաջամարտիկների շարքերում Խրիմյանը գգում էր, որ սահմանադրական շարժման ամբար բերելու է ժողովրդական սկզբունքի հաղթանակ, սահման է գրվելու ամիրաների և հայ մեծահարուստների տանձգություններին, ազգի գեղի մոտ իր տեղն է դանելու նաև հայ էսնաֆը: Այդ պատճառով էլ նա ահագանդ էր հնչեցնում, երբ Սահմանադրության նախկին գեկավարներից ոմանք, միացած հակառակորդներին, «վերաքննություն» պատրվակի տակ կառավարությունն էին մատնում սահմանադրությունը. «Երանություն տեղ թող

վայ կարդան, ուրախության փոխարեն թող սգան և տրտմին, մինչդեռ Տաճկաստանի լրագրաց բոթալից ձայներեն կիմանանք, թե սահմանադրության նորարույս բողբոջը չորացնելու համար միևնույն ազգային համաշխարհ հողիներեն հակառակհողմ խորշակներ կփչեն, որուն համար թող կուտամ հետո ողբալ» (1861, № 2, էջ 39): Բննարկելով սահմանադրությամբ հաստատված Ազգային կենտրոնական վարչության առջև դրված խնդիրները, Խրիմյանը պահանջ է դնում, որ «ճարտարամիտ արհեստավորը կամ խելոք աղքատը» մաս ունենան այդ ժողովում իբրև «արժանավոր անդամ ընտրվելու»: Նրա սուր աչքը տեսնում է, որ Կ. Պոլսի կենտրոնական Ազգային ժողովը կոչվածը, որի պատվիրակները մեծ մասը հայ գաղթածախի երևելի անդամներն էին, չի ներկայացնում ողջ գավառաբնակ արևմտահայ ժողովրդի շահերը, և քանի որ նրա աշխատանքները դեռ չեն ընկել հունի մեջ, քանի դեռ այդ «կենտրոնականը» երեքում է ներքին երկպառակություններից, ապա ավելի վատթար վիճակում են ազգային գավառական ժողովները: Այդ պատճառով էլ նա առաջադրում էր վերանորոգման մի ծրագիր, որ պետք էր կիրառել կենտրոնական ժողովի նկատմամբ:

Նա տեսնում էր, որ Վարչության կիրառած միջոցառումները շատ դժվարությամբ կամ գրեթե չեն հասնում արևմտահայ գավառաբնակ ժողովրդին, սահմանադրությունը գավառում մնում է իբրև մեռած տառ: «Բժիշկ հայրենյաց մահճին մոտ պետք է. խիստ ուշ և անազան կհասնեն վարչության դեղերը մինչև ի Հայաստան», ուրեմն կենտրոնական վարչությունը պետք է Հայաստանում լիներ: Խրիմյանը հանդես է գալիս իբրև նոր ժամանակների մարգարե ու պատգամախոս: Նա գավառի հայության շեփորահարն է: Բավական է մահանման քունը, արթնության ժամ է: Եկել են նոր ժամանակներ, կրծքով պետք է պաշտպանել օրենքը և անընդհատ բարեխղիվ այն: Համատարած խավարի թագավորության մեջ հնչում էր Վասպուրականի Արծուիի կոչը «Արթնացեք, Հայկա որդիքներ, արթնացեք, նախատես զգուշությամբ պահապան ու պաշտպան պատրաստեք, ամեն կողմեն շուրջ փակելով Սահմանադրության նորածին մանկանը...» (1862, № 6, էջ 174):

Ամսագրի 3-րդ շրջանի հոգովածների բարձրակետը Գարեգին Սրվանձտյանցի հրապարակախոսական գործունեությունն էր: Աշակերտը գերազանցեց ուսուցչին և մի քայլ առաջ մղեց «Արծուիի» հրապարակախոսությունը: «Շիրիմբ նախնյաց», «Հայրենասիրություն և հայրենիք», «Ակսենք մեր գործ,

նորեն սկսենք»։ «Շինական հայոց կյանքի Հայաստան» Հողվածներն իրենց մնալուն տեղն ունեն ոչ միայն «Արծուիի», այլև ողջ ՃՕ-ական թվականներին արևմտահայ հրապարակախոսությունից մեկը։

Ազգի հիշողությունը, նրա պատմությունը, նրա անցյալը ներկայի և ապագայի անբաժանելի կապն է։ Այդ պատճառով էլ բոլոր դարերի բունակալները իրենց հարձակումն ուղղում են առաջին հերթին նրա պատմության դեմ։ Այս ելակետից էլ Արվանձտյանցը քննարկում է իսկական Հայրենասիրություն կոչվող երևույթը, նկարագրում ներկա Հայրենիքի անմխիթար կացությունը, նրա բնիկ ժողովրդի սիրոված տարանջատ վիճակը, քննադատում ազգային սնապարծությունը, գաղառական նեղ Հայրենասիրությունը Հակադրում միասնական Հայրենիքի գաղափարն ու իսկական Հայրենասիրությունը։

Առանձնակի Հետաքրքրություն է ներկայացնում «Ակսենք մեր գործ, նորեն սկսենք» Հողվածը (1862-63, № 1, էջ 6-9)։ Մարտական ոճով, առնական կոչով, պատգամարկի առաքելությամբ Գ. Արվանձտյանցն այստեղ առաջին անգամ հնչեցնում է ազատագրական պայքարի մոտիվներ, ձայնակից լինում Հյուսիսից և Արևմուտքից եկող պայքարի կոչերին, պաշտպանում Հայ ժողովրդի արդար դատը։ Եթե Ֆրանսիական հեղափոխությունը առաջ քաշեց իր Համամարդկային եղբայրության, Հավասարության, ազատության կարգախոսները, Արվանձտյանցը, կրելով այդ ազդեցությունը, առաջ է քաշում «Նորություն, Լուսավորություն, Բարություն և Ծշմարտություն» կոչերը։ Ողևորելով Հայ ազատամարտի մասնակիցներին նա հորդորում էր չընկճվել, պայքարել անդադար. «Բանանք մեր աչքերը, բանանք մեր կուրծքեր, միշտ դիմենք Հառաջ, միշտ արի ու քաջ, գործենք անվեհեր ու անձնանվեր, գործենք անդադար, թե՛ տիպ, թե՛ գիշեր»։ Այդ Հողվածը գրված էր Զեյթունի ապստամբության և պարտության անմիջական տպավորության տակ։ Նա սրաթափանց ակնարկով հասկացնում էր Հայ ազատամարտի մասնակիցներին, որ չՀուսահատվեն ապստամբության պարտությունից, թողնեն լացն ու արցունքը և նորից սկսեն գործը. «Վոխե ու կոխվիր, զարկ ու զարկվիր, ինկար վեր կանգնիր, անշուշտ կհաղթես, մեռնիս էլ կհաղթես, վերջապես կհաղթես, վասնզի նոր ես ու լուսավոր ես, բարի ես, ճշմարիտ ես»։ Ուսուցչի լուսավորական փրկիչ ծրագրերից սա մի քայլ առաջ էր, աշակերտը լուսավորությունը նկատում էր իրրե մի անհրաժեշտ աստիճան ազատագրական պայքարի մեջ։

«Շինական Հայոց կյանքի ի Հայաստան» մեծածավալ հոդվածի (1862-63, № 3, էջ 65-93) ենթավերնագիրն էր «Թշվառ նկարագրութուն»: Լեզիակը քաջ ճանաչում է իր նկարագրության օբյեկտը՝ Հայ գյուղացուն, նրա տառապանքներով լի կյանքը՝ ծնված օրից մինչև գերեզման: Մարդկային արարածի համար այդ անտանելի կյանքը ոչ թե ապրել էր, ոչ թե «վայելել, այլ վայվայել»: Դա բողոքի, գայրույթի մի սրտակեղևք ճիշդ էր Աստոն դեմ. «Արարի՛չ, ա՛յս է քո ստեղծածի վիճակը, արդյոք այսպիսի սիրտերը ինչպես կօրհնեն քեզ»: Գեղարվեստական անպաճույճ հնարներով, անհուն կարեկցանքով Սրվանձտյանցը նկարագրում է անհույս և անհեռանկար, տառապալից կյանքի պատճառով, արևմտահայ գյուղից, գավառից Կ. Պոլիս և մեծ քաղաքներ պանդխտության մեկնողների քարավանների երթը, գյուղում մնացած նորահարսի, ծեր մոր, բախտի քմահաճույքին, ռեսի, պարտատեր վաշխառուի երախին մատնված թշվառների կյանքը:

Սրվանձտյանցը ցույց է տալիս Հայ գյուղացու հողազրկման պրոցեսը, նրա պանդխտության և գաղթի դիմելու սոցիալական արմատները: Այդ էր պատճառը, որ այդ հողվածը երկու տարի անց արտատպեց Հ. Սրվաճյանի «Մեղուն» (1865, № 259, 261, 262, 265, 267, 270) դրանով ավելի մասսայականացնելով այն և ընդգծելով դրա ներգործուն ուժը:

1862-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, Մ. Խրիմյանի վրա թողնելով Վարազա վանքի վանահայրութունը, նրան նշանակեց Տարոնի Ս. Կարապետ մեծահոգև վանքի վանահայր և Տարոնի հոգևոր առաջնորդ: Խրիմյանը կարգավորեց Վարազա վանքի, «Ժառանգավորաց» վարժարանի, ամսագրի հրատարակության գործը, իր հետ վերցրեց Վարազա վանքի փայտյա տպարանը և իր մտերիմ սանի Գարեգին-Սրվանձտյանցի հետ մեկնեց Տարոն: Այդ ամենը չէր կարող չազդել ամսագրի հրատարակության վրա: 1862-ին 12 համար հրատարակվելուց հետո 1862-1863 տարիչըջանում հրատարակվում է ամսագրի 6 համար, այնուհետև 1864-ին, հրատարակվելով ևս 6 համար, «Արձուի Վասպուրականի» հրատարակությունը դադարում է: Ըստ երևույթին Տարոնից հնարավոր չէր հեռանել Վարազի տպարանում լույս տեսնող ամսագրի գործերին: Դա ամսագրի բնական մահն էր:

Մեկ տասնամյակ անց Վարազում դարձյալ հրատարակվեց «Արձուի Վասպուրական» ամսագիրը՝ այս անգամ Գերմանիայում լեզվարանական կրթություն ստացած Մանվել Անանյանի խմբագրությամբ: Խրիմյանը, որ այդ ժամանակ Կ. Պոլսի Հայոց պատրիարքն էր, իր ղեգստությունն է Հայանում ամ-

սազրի ուղղութեան վերաբերյալ նշելով, որ սառը գերմանական ոգին ազդել է խմբազրի վրա, և ամսագիրը չի բարձրացնում ժողովրդին հուզող հարցեր: Այն շատ կարճ կյանք ունեցած և ընդհանուր ոչինչ չունեք Խրիմյանի ամսագիր հետ:

### «ԱՐԾՈՒԿ ՏԱՐՈՆՈ» (1863-1865)

1863 թ. ապրիլին Տարոնի Ս. Կարապետ վանքում սկսում է լույս տեսնել «Արծուիկ Տարոն» երկչարաթիվերթը Գարեգին Արվանձաթյանի խմբագրութեամբ:

Գարեգին Արվանձաթյանը ծնվել է 1840թ., Վանի Այդեառան թաղամասում, Սանդեկ տոհմում: Մանուկ Հովհաննեսը (մկրտութեան անունը) վաղ հասակից մեծ սեր ու հեռաբերբուրություն է ցուցաբերում հրաշապատում հերթաթիկների, ժողովրդական զրույցների, Վանա մամիկների «կրթանների» նկատմամբ: Տառաճանաչությունն ստանում է Վանի Հայնկույանների վարժարանում, որը, բաժարար համարելով, ծնողները նրան առլիս են կոչկակարի արհեստ սովորելու: Սակայն ուսումնառանք պատանին չի հաշտվում դրա հետ և որոշ ժամանակ անց ուսումը շարունակում է Վանի նշանավոր մանկավարժներ Քոլոյ Հովհաննեսի և Ավետիս Սահառունու գլխորդում: 1857թ. նա մեկնում է Վարազ և դառնում Խրիմյանի նորարաց «Ժառանգավորացի» անդրանիկ սաներից մեկը: Ուսումնառութեան տարիներին, ուսումնասիրելով Հայ ժողովրդի պատմությունը, ազդվելով Եղիշեի «ազու մրմունջներից», նրա հերոսներից մեկի Գարեգին Արվանձաթյանի անուն ազգանունը վերցնում է ինքը, իսկ դրանից հետո իրենց ողջ տոհմը գրվում է Արվանձաթյանց:

1860-ին ավարտում է «Ժառանգավորացը», բայց չի բաժանվում ո՛չ իր ուսուցչից և ո՛չ էլ վարժարանից, դառնում է վարժարանի ուսուցիչներից մեկը և «Արծուի Վասպուրականի» փոխխմբագիրը: 1860-ին Խրիմյանի հետ ուղևորվում է Արեւելյան Հայաստան, իսկ 1862-ին, երբ Կ. Պոլսի Հայոց պարիարարանը Խրիմյանին հաստատեց Տարոնի հոգևոր առաջնորդ, զինակից դարձած սանը ուսուցչի հետ մեկնեց Տարոն: Այստեղ էլ նա շարունակում է իր յրազրական գործունեությունը և «Արծուի Վասպուրականի» ամսագրի հրատարակության գործին հետեւելու հետ մեկտեղ սակզծում է իր թերթը, որն ազդարարում էր «Թուուցեայ թեւօք Վասպուրական Արծուոյն ի Մամիկոնեան աշխարհէն Յիւննականեան լեբանցն ի Մշոյ Ս. Կարապետի հրաշարի ուխտէն»:

Դրանով երկշաբաթաթերթի խմբագիրը հայտնում էր իր պատկանելությունը Վասպուրականի Արծիվին (Խրիմյանի դպրոցին), հավատարմությունը նրա դավանած սկզբունքներին:

Առաջին համարի խմբագրականում «Արծիվն թռուցանե գԱրծուիկ» խորագրով հոդվածում, լրատարի առաջին նպատակն էր համարվում գաղթական հայերին լուրեր հաղորդել հայրենիքից, ամրացնել կապը հայրենիքի հետ: Լրատարը պետք է տարածվեր «ի Վասպուրական - Վան, ի Տուրուբերան - Բաղեշ, ի Տիգրանակերտ - Տիարպեքիք, ի Կարին - էրզրում», սակայն Արևմտյան Հայաստանի Մեծ Հայքի այս տարածքով չէր բավարարվում խմբագիրը: Նա ցանկանում էր Արծուիկի թևերը թափահարել «Մինչ ի Ռուսաստանի Հայաստան և Պարսկաստան, նաև ի Պոնտոս և ի Փոքր Հայաստան, Խարբերդ, Ակն, Սեբաստիա»: Առավել ուշադրություն է դարձվում արևմտահայություն մշակութային կենտրոնին Կ. Պոլսին, ուր գտնվում էր պանդուխտ հայություն հոծ զանգվածը, որը «յուր երկրեն լուր առնելու փափագով կտանջվի»: Խրիմյանի օրինակով աշակերտը ևս նշում է թերթի գործակալներին անունները, որոնք իրականացնում էին նրա բաժանորդագրությունը Զիարեթում, Մուշում, Պուլանջիսում, Բաղեշում, Վանում, Իգդիրում, Կարինում, Ակնում, Արաբկիրում, Երզնկայում, Տրապիզոնում և Կ. Պոլսում:

Ո՞րն էր լինելու երկշաբաթաթերթի հավատամքը. «Քո ճանապարհ ճշմարտություն լինի, քո եղանակ՝ բարեխառն խոհեմություն, քո ընթացք՝ զգուշություն, քո շունչն՝ ազատություն, քո բարբառ՝ հայրենասիրություն» (1863, № 1): Փոքրիկ խմբագրականն ավետում էր, որ թերթն ստեղծվել է առավել գյուղացիների, քան քաղաքացիների համար, այն պիտի բաժանվի Մշո վիճակի բոլոր գյուղերում, այդ պատճառով էլ հոդվածները պետք է լինեն պարզ, ժողովրդին հասկանալի լեզվով, որպեսզի կարողանան գյուղացիներին «սիրտերնին կրթել, միտքերնին զարթուցանել ազգասիրական և քաղաքական սկզբունքներ լսելու...» (№ 1): «Արծուիկ» ծավալը փոքր էր, որ նոր կարգալստվորող գյուղացին չհոգնի կարդալուց, գինը՝ էժան, որ բոլորը կարողանան գնել:

Տարոնում, նույն վանքում, Արվանձայանցի անմիջական ջանքերով, Խրիմյանի աջակցությամբ, բացվում է նոր «Ժառանգավորաց» վարժարան, որի անօրենն ու գլխավոր ուսուցիչը դառնում է «Արծուիկի» խմբագիրը, որը հայտնում էր իր ընթերցողներին, թե Ժառանգավորացի ուշիմ աշակերտները զարգարելու են «Արծուիկի» էջերը իրենց ստեղծագործություններով: «Ար-



ծուխի» համեմատությունը «Արծուիկը» մի քայլ առաջ էր դեմոկրատական ուղղվածությունը և նպատակասլացությունը: Հայրենիքի անցյալի փառքի և արտաքին թշնամիների փոխարեն, խմբագիրը ցույց էր տալիս Հայաստանի ներկան հասարակ ժողովրդի թշվառ կացությունը, նրա ծանր շահագործված օտարազգի և սեփական հարստահարիչների կողմից:

Ամենակենսական հարցը, որ դրավում է խմբագրի ուշադրությունը, բրդական հարստահարություններն էին: Արվանձտյանցը նկարագրում է բուրդ աշխրթնագետների գործած ռեիները, հայերի ազգային սովորույթների նկատմամբ շեյխերի կատարած ոտնձգությունները: Մինչդեռ Կ. Պոլսի «ագ-դասերները», «ջոջ ազաները» սահմանադրության հաղթանակի հանդեսներ էին տոնում, գավառի ժողովրդանվեր գործիչը արձանագրում էր, որ գավառի հայությունը բոլորովին չի վայելել սահմանադրության շնորհները, այն մեռած տառ է Տարոնում: «Ի՞նչ սահմանադրություն: Ի՞նչ քաղաքական խորհուրդ: Ի՞նչ ազգային ժողով: Պսակ շեխերու հրամանով կլիխի, քահանայից իշխան սորա են և վարիչ: ... Ոչ մարդկային իրավանց, ոչ արքայական օրինաց այս կողմերը չես տեսնար ծանոթություն, ընդունելություն և հաստատություն: Քաղաքացին կամ զեղի մեծն ի բուրդն կխրախուսե և բուրդն սոցա կապաստանի ու կգործե» (1864, № 1):

Խմբագիրը անհուն կարեկցանքով է նկարագրում Տարոնի հայության տառապանքները, սակայն կարեկցանքը փոխվում է գայրույթի, ցասման, դատապարտումի. նա ծաղրում է այն հոգեորականներին, ովքեր ժողովրդին հնազանդության, համբերության և հեղուկյան կոչ էին անում, ովքեր դեմ էին բմրոսացման, ազատագրական շարժումների: «Մեր վիճակի վրա լա՞նք, թե ծծղանք» հողվածը դատապարտում էր ստրկամտությունը, կոչ անում «սույած լինել գայլերեն չհաղթվելու համար»: «Արծուիկի» էջերում տպվում են Տարոնի հարստահարված գյուղացիության բողոքները, սղբախառն աղերսները՝ ուղղված Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ազգային վարչության ու ժողովի անդամներին: Այդ բոլորի կազմակերպիչը Արվանձտյանցն էր, բոլոր բողոքագրերի հեղինակը՝ ինքը: Նրա այդ հողվածները ներկայացնում են հեղինակի զիրբորոշումը, նվիրվածությունը գյուղացիության շահերին: Խմբագրի սրբափառաց աչքը ականում էր, որ բրդից, պետական հարկահավաքից ոչ պակաս, գույց և հավասար, գյուղացուն կեղերում էր Հայ մեծահարուստը, վաշխառուն, հոգեորականը: «Արտաքին ձեռք չէ գմեղ չարչարող մենք կտանջվինք մեր ձեռքեն, կչարչարվինք մեր ազգեն, իրենց փառաց հա-

մար գմեզ կզոհեն, իրենց շահուն համար գմեզ կվաճառեն... գնեցեք գմեզ... ալ դանակ ոսկորին հասած է» (1863, № 2, 3): Այս հոդվածը ևս գրավեց Լ. Սըվաճյանի ուշադրութիւնը, և նա այն արտատպեց «Մեղվում» (1863, № 208, 210, 212): Հոդվածը մեծ արձագանք գտավ պոլսահայութեան մեջ: Սըվանձտյանցը շարունակում է իր մերկացումները. նրա խարազանը ուժգին ձաղկում էր Ազգային ժողովում ժամանակ վատնող էֆենդիներին, որոնք անտարբերութեամբ և հանգստութեամբ ընդունում են կառավարութեան՝ Վանը, Մուշը (Վասպուրականն ու Տարոնը), իբրև Քուրդիստան ներկայացնելու միտումը: «Արծուիկում» անարգանքի սյունին են դամվում հայ և ալլազգի ցեղերը, հայ գյուղացու քրտինքը յուրացնողները: Գավառի և Կ. Պոլսի հետադիմականները, դաշինք կնքած, կառավարութեանն են մատնում երկչաբաթաթերթը. իբրև անհնազանդութեան քարոզիչ, իբրև ապստամբ: Տարին դեռ չբոլորած, թերթը փակվում է: Խրիմյանն ու Սըվանձտյանցը մեկնում են Կ. Պոլիս տեղում պայքարելու և հաղթելու: Առժամանակ դադարած թերթի խմբագիրը այդ «սոսկալի մատնութիւններին» մասին գրում է Պոլսի «Ժամանակում»։ «Արծուիկ թերթին մատնութիւնը և անոր խափանումը, տպարանի գոցվիլը և վարժարանի ցրվիլը դեռ մոռցված չեն»: Մի քանի ամսից հետո վերսկսվում է թերթի հրատարակութիւնը: Նրա առժամանակյա խափանումը չէր վհատեցրել Սըվանձտյանցին. նա նույն ուժգնութեամբ շարունակում է իր գործը:

Թերթի ամենօրյա հոգսը հայ պանդուխտների կյանքն էր, պանդխտութիւնը իբրև ազգային չարիք ներկայացնելը, պանդխտութեանը գիմակայելը: Խմբագիրը տեսնում էր, որ «Պոլիսը դարձեր է Հայաստանցվոց կյանքը սպառնելու սպանդարան մը», որ Կեսարիայից, Ակնից, Վանից, Արարիկից և այլ վայրերից այլտեղ գաղթած ընտանիքները երկու սերնդից ափելի չեն հարատևում, իսկ Հայաստանը հայաթափ է լինում, գրկվում իր աշխատող ձեռքերից, երկրագործը Պոլսում զբաղվում է չոփչիութեամբ, թուլումբաջիութեամբ, իր կյանքը մաշում տեղի խաներում: Ի՞նչ էր առաջարկում Սըվանձտյանցը պանդխտութեան վերացման համար. ամենից առաջ բարելավել գյուղացիութեան սոցիալական կացութիւնը: Ի՞նչ միջոցներով: Այստեղ արդեն գործիչը առաջադրում էր ուսմանտիկ ծրագրեր, նա առաջարկում էր Պոլսի մեծահարուստ ազգային գործիչներին վերադառնալ Հայաստան, այնտեղ գնել ընտիր և ընդարձակ հողեր, գործարաններ կառուցել, գարկ տալ արդյունաբերութեան զարգացմանը. «Հաստատեցեք Հայաստանի մեջ մեքե-

նաներ, գործարաններ շաքարի համար, շերամի համար, բամբակի համար, պսամայի համար... վերջնական ամեն բանի համար և առաջին ու վերջին ներկրագործության համար, հացի համար. Հոս պահեցեք, թող աշխատեն Հայաստանցի խղճալիները, իրենց ընտանյաց քովը և իրենց քրտինքը թափեն իրենց հայրենի հողը» (1864, № 30): Ուրեմն, պանդխտությունը վերջ տալու համար անհրաժեշտ է Հայաստանում զարգացնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Տեղական արդյունաբերության զարգացմանը խանգարում են օտարերկրյա ձեռնարկատերերը, որոնք շահագրգռված են երկիրը դարձնել Հումքի բազա և սպսոման շուկա: Արդյունաբերության զարգացման համար իրրև Հումքի բազա նա առաջարկում էր գյուղատնտեսությունից զարգացումը: Արդյունաբերության և գյուղատնտեսությունից զարգացմանը խմբագիրը նախում էր ոչ թե ձեռնարկատերերի, այլ հասարակ ժողովրդի «Հայաստանցի խղճալիներին» շահի, նրանց սպառնով կյանք ստեղծելու տեսակետից: Այս իմաստով ուշադրության արժանի է «Արձանական գիմառնություն ի տապանն սրբոյն Սահակա Պարթևի հայրապետին» կրոնական խորագրով, սակայն քաղաքական բովանդակություն ունեցող հոդվածը, որն ստորագրել է երեսնցի Նահապետ Աթանասյանը<sup>42</sup>: Գարձյալ նույն նկատառումներով գիմելով արևմտահայության ազդեցիկ խավերին՝ «Հայ իշխաններին», Հեղինակը կոչ է անում նրանց պահպանել հասարակ ժողովրդին. «Ծառք արմատովն է ծառ, տունը Հիմամբ է տուն, Հետեաբար ազգության լծակն ու հաստարանը է հասարակ ժողովորդը. առանց ասոնց չկա ազգություն և ուր չկա ազգություն, Հոն ի՞նչ մարդկություն» (1864, № 24): Մ. Նալբանդյանի խոսքերի համարյա բառացի կրկնությունը «Արժուիկի» էջերում ցույց է տալիս Հեղինակի և խմբագրի համաձայնությունը և նվիրվածությունը մեծ Հեղափոխականի գաղափարներին: Մ. Նալբանդյանի ազդեցության հետքերն ենք տեսնում նաև Գ. Սրվանձաթյանցի այն մտքերում, երբ պայքարելով պանդխտության ծավալման դեմ առաջարկում էր զարկ տալ երկրագործությանը:

Ինչպես Նալբանդյանն էր անարգանքի սյունին դաժում կղերաազգայական սեպտիկայի ներկայացուցիչներին, մասնավորապես վանեցի Պողոս վարդապետ-

<sup>42</sup> Խ. Սրվանի աշակերտներից էր, ժամանակին հանդիպում էր ունեցել Սիբայել Նալբանդյանի հետ, 1861-ին Գ. Սրվանձաթյանցի հետ Վարազ մեկնելու ճանապարհին հյուրընկալվել Բաֆթու տանը, ապա իրև աշակերտ սովորել Ս. Կարապետի ժառանգավորաց վարժարանում:

տին, նրա արևմտահայ հետևորդը նույն ուժգնությամբ ձաղկում էր ավելի բարձրաստիճան մի հոգևորականի՝ Աղթամարում ինքնակոչ կաթողիկոս օժված Խաչատուրին, որը, այդ աստիճանին հասնելու համար, կազմակերպել էր իր նախորդի՝ Պետրոս Բլբլուլի սպանությունը: «Այս Խաչատուրն է, որ խեղճ ժողովուրդը այսպես կհարստհարե, կկեղեքե ու մորթագեղձ կընե, նա է գավառին թանգիմաթը, թաշիրը և գամշուր առնողը, որով հարյուրապատիկ կենդն զժողովուրդ...» (1864, Լ20): Բարձրաստիճան հոգևորականը ամեն ինչ անում է «յուր անհազ սնտուկը» լցնելու համար: Սրվանձտյանցը զայրացած դիմում է Ազգային վարչությունը՝ պահանջելով նման անձնավորությունը ոչ թե հաստատել կաթողիկոս, այլ պատժել ամենախիստ պատժաշարիով, քանի որ անպատժելիություն զգացումը ծնունդ է տալիս նոր հանցանքների: Մերկացումները ոչ միայն հայ հոգևորականների, աշխարհիկ տերերի դեմ էին ուղղված, այլև կառավարական պաշտոնյաների, նրանց ապօրինի գործողությունների: Յանկանալով վարագուրել պաշտոնյաների չարաչառմաները՝ պետությունը հարստահարությունները վերագրում էր միայն քրդերին: Սակայն Սրվանձտյանցը ըմբոստանում էր նաև դրա դեմ:

Այս մերկացումների համար խմբագիրը չափազանց թանկ է վճարում: Գավառի ռեակցիան, միացած կենտրոնական հետադեմ մտայնության հետ, կառավարությունն են մատնում «Արժուիկը»: 1865-ին այն փակվում է ընդմիջտ: Փակվում են Ս. Կարապետի վանքում բացված Ժառանգավորացը, Սրվանձտյանցի կողմից Տարոնում բացված բոլոր վարժարանները: Քաղաքական մեղադրանքով ուսուցիչը ու աշակերտը մեկնում են Պոլիս՝ արդարանալու: Առժամանակ հաղթում են «խավարյալները»: Դրանից հետո, հակառակ Խրիմյանի և Սրվանձտյանցի թափած բոլոր ջանքերին, նրանց երկուսին էլ չհաջողվեց ունենալ սեփական օրգանը: Հետզհետե սաստկացող սուլթանական ռեակցիայի պայմաններում սկսված «Լրագրաց քոլերան» նրանց գրկում է այդ հնարավորությունից:

Մի քանի խոսք Սրվանձտյանց խմբագիր-կազմակերպչի մասին: Այն ժամանակվա Տարոնի պայմանները, երթևեկության դժվարությունները, կապի միջոցների սղությունը դժվարացնում են խմբագրի աշխատանքները: Կարևոր հոդվածները գրում էր ինքը: Հոդվածներ էին գրում նաև վարժարանի սաները: Լևոն Տոմեցին, Նահապետ Աթանասյանը, Հմայակ Դիմաքսյանը և ուրիշներ: Բազմաթիվ նամակներ էր ստանում խմբագիրը և՛ Արևելյան Հայաստանից, և՛ իր շրջակա վայրերից: Լուրեր են հաղորդվում Մուշից, Վանից, Կարինից, Բա-

դեշից. Տրապիզոնից: Արևելյան Հայաստանից Հղված նամակները Հասնում են մեծ ուշացումով, երբեմն 7, երբեմն 5 ամիս, սակայն խմբագիրը տպում է դրանք Համապատասխան ծանոթություններով: Թերթի էջերում ստեղծագործություններով Հանդես էին գալիս «Ժառանգավորացի» սաները: Բանաստեղծությունների Հեղինակներ են Եղիշե Կարապետյանը, Մկրտիչ Հովակիմյանը, Սիմեոն Կյուրեղյանը, Հայկ Թորգոմյանը և ուրիշներ:

Թերթի էջերում տպվում են նաև խմբագրի Հավաքած Հայ բանահյուսությունից գոհարները՝ «Վոխիկներու երգ» (Սիրտս նման է էնա փլած տներ), «Ընճուղիկ» (Կոտ ու կես կորեկ ունեմ), «Երկրագործի երգ» (Լուսնակն անուշ...) և այլն: Գրանով փաստորեն սկիզբ է դրվում խմբագրի բանահավաքչական և բանագիտական գործունեությունը: Այդ մասունքների Հրատարակությունից հետո ջերմ ընդունելությունը, Սրվանձտյանցի ակնհայտ նախասիրությունները ստիպեցին նրան շարունակել աշխատանքները այդ ուղղությունամբ: Իրար Հեռեից լույս տեսած նրա ժողովածուները՝ «Գրոց-բրոց», «Հնոց-նորոց», «Մանանա», «Համով-Հոտով», եղան Հայ բանահյուսությունից, բանագիտության, և ազգագրության բնագավառի առաջին աշխատությունները:

Գալստահայ մամուլի առաջնեկները «Արծուի Վասպուրականն» ու «Արծուիկ Տարոնն», մեծ դեր կատարեցին Վասպուրականի և Տարոնի Հայությունից Հասարակական կյանքը Հուզելու, ժողովրդի սոցիալական վիճակը թեթևացնելու, լուսավորական շարժումը ծավալելու, ազգային ինքնագիտակցությունից զարգացման, ազատագրական շարժումների պատրաստվելու ուղղությունամբ: Պատահական չէ, որ 70-80-ականներին Հենց այդ վայրերը եղան արևմտահայ ազգային-ազատագրական կազմակերպությունների ստեղծման օջախներ և Հնոցներ: Վարպազ դպրոցի ցանած սերմերը Հաջողությունամբ ծլարձակեցին պարարտ Հողում:

## Գ Լ ՈՒ Ն Ե Ր Ր ՈՐ Դ

### ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՅԼ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

«ԱՐԵՎԵԼԸ» (1855-1856) ԵՎ

«ԱՐԵՎՍՈՒՏԸ» (1859, 1864-1865)

Հայ ականավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանը ծնվել է 1825 թ. Զմյուռնիայում: Նա խոշոր դեր է կատարել անցյալ դարի 50-60-ական թվականներին Հայ մամուլի և հրապարակախոսության, Հայ հասարակական մտքի զարգացման մեջ: Ոսկանյանն իր ժամանակի կրթված ու զարգացած գործիչներից էր. խմբագիր, հրապարակախոս, գրող, թարգմանիչ, գրաքննադատ ու մանկավարժ: Ոսկանյան գործչի և հրապարակախոսի դազափարական ձևավորման արմատներն առնչվում են հասարակական այն միջավայրի հետ, որտեղ նա աճել է, սովորել և մի կարճ միջոց աշխատել՝ բոլորելով իր կյանքի առաջին քսանամյակը:

Տակավին դպրոցական, նա մասնակցել է զմյուռնահայ հասարակական կյանքին և գաղթօջախի մշակութային ընկերությունների գործունեությանը, 1844 թ. ընարվել Սյունյաց մշակութային ընկերության ատենադպիր: Մովսիսյա վաճառաչահ այդ քաղաքի Հայ զանգվածն ապրում էր ազգային եռանդուն կյանքով, մեծ ուշադրություն նվիրում գաղթօջախի կրթական-մշակութային հարցերին: Բնականից օժտված երիտասարդն այդ մթնոլորտում համակվում է ազգասիրություն և ազատասիրությամբ, իր ժողովրդի պատմական ճակատագրի ըմբռնմամբ և հանուն նրա պայտեման մաքառելու վճռականությամբ: Եվ այդ կոչումը նրան տանում է մեծ ճանապարհով:

1845 թ. կրթությունը շարունակելու նպատակով նա մեկնում է Փարիզ, որտեղ ապրում և գործում է շուրջ 20 տարի՝ մշտապես կապված մնալով Հայ զանգվածների ու գաղթօջախների հետ, վերապրելով Հայության հոգսերն ու ճակատագիրը: Փարիզում Ոսկանյանն սկզբնապես հաճախում է բժշկական ուսումնարան: Այնուհետև, չնայած նյութական անապահով վիճակին, նա

այնուամենայնիվ կարողանում է ավարտել ուսումնասիրությունը Սորբոնի Համալսարանում, աշակերտելով ժամանակի անվանի դասախոսներին:

Փարիզում գտնվելու տարիներին Սահանյանը նվիրվել է ընթերցանության, հաճախել է զանազան հրապարակային դասախոսություններ, լայն շփումներ ունեցել ֆրանսիացի մտավորականների հետ: Նա հաղորդակցվել է ուսանողական բուռն կյանքին, միաժամանակ հաստատուն կապեր պահպանելով ֆրանսահայ միջավայրի և այնտեղ գտնվող հայ մտավորականների հետ: Ավիլին, Սահանյանը մեկն էր նրանցից, ովքեր 1849 թ. փորձեցին ի մի գումարել ֆրանսահայերին և հիմնել մշակութային Արարատյան ընկերությունը, նա նույնիսկ գրել է այդ ընկերության կանոնադրության նախագիծը:

Ֆրանսիայի ականավոր դեմքերից մեկը, որոնց հետ մոտիկից շփվել է Սահանյանը, եղել է բանաստեղծ Բերանժեն: Նա առիթ է ունեցել ծանոթանալու մեծ երգչի հետ, արտասանելու նրա բանաստեղծության հայերեն իր թարգմանությունը, նույնիսկ, ինչպես հիշատակվում է, ընծա է ստացել նրա երկերի հատորակը: Սահանյանը՝ զեռես ուսանող, շփումներ է ունեցել ապագա ֆիլիսոփա-արվեստագետ Հ. Թենի, գրող Էդ. Արուի հետ, աշխույժ հետաքրքրություն դրսևորել սոցիալական գիտությունների նկատմամբ: Այդ ամենն, անշուշտ, նպաստել է նրա հասարակական գիմազծի ձևավորմանը: Բայց գրանցից առավել նա ներշնչվել է հասարակական-հեղափոխական շարժումներով ապրող Փարիզի 40-ական թվականների թեժ մթնոլորտով:

1848-ի փետրվարին Սահանյանը վճռական կովի ելած Փարիզի բարիկադների վրա էր, զենքը ձեռքին մարտնչում էր հեղափոխական Ֆրանսիայի համար, գինակցում էր թագավորական պալատը գրաված ֆրանսիացի պրուլետարներին և ուսանողությունը: Հրաշունչ այդ օրերին նա հանդամանքների բերումով հանդես էր գալիս որպես ազատությունը կորցրած իր ժողովրդի ներկայացուցիչը, որն ըմբռնում էր իր պարտքը՝ զենքը ձեռքին պայքարել մի այլ ժողովրդի իրախունքների հաստատման համար: Ահա նա ինչ էլ գրել այդ առիթիվ տարիներ հետո հպարտությունը հաստատելով իր գավառանքը և պատասխանելով հետադիմության հրապարակային մեղադրանքին. «Կհավանենք միայն, որ փետրվարի ազատության առաջին որոտումը մեր վրային արեկյան դերություն մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ ստատկությունը. անհուն աշխույժ մը ավազ մեզ և գրեթե ակամա տապալեցի մեջ նեանց: Այս՛. Լուի Ֆիլիպին զեմ ապստամբողներու հետ էինք, այս. ըրինք

ազատութեան համար ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին թյուլըրի մտնելու պատիվը ունեցանք...» («Արևմուտք», 1859, № 17, էջ 132):

1849 թ. հունիսի վերջերին, երբ ոտքի էր ելել Փարիզի ուսանողութիւնը և բողոքի ձայն բարձրացրել Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեան և Հռոմի պապի դեմ ի պաշտպանութիւն Իտալիայի ազատագրութեան, Ոսկանյանը դարձյալ ցուցարարներէ շարքում էր, նույնիսկ մի պահ եղաւ նրանց դրոշակակիրը:

Ընդափոխական շարժումներին Ոսկանյանի մասնակցութիւնն աննկատ չմնաց: Նա ձերբակալվեց ու բանտ նետվեց, ուր մնաց մոտ երկու ամիս: Դրանից հետո էլ նա հետապնդվում էր ոստիկանութեան կողմից և, հալանաբար, այդ պատճառով ստիպված էր թողնել Ֆրանսիան: 1853-1854 թթ., լինելով Կ. Պոլսում և Զմյուռնիայում, նա հրապարակեց երկու պամֆլետ «Ներքին համոզումն» և «Հռոմեական պարգև», որոնցում նա վեր է հանել ազգապահպանութեան և ժողովրդի լուսավորութեան հանգուցային հարցերը: Դրանք Ոսկանյանի առաջին հրապարակախոսական ելույթներն էին՝ գրված քննվող կենսական հարցերի խոր իմացութեամբ, կրակոտ շնչով ու մեծ վարպետութեամբ: Նրա պամֆլետները, որ հրապարակ էին եկել ծածկանունով, հասարակական արձագանք ունեցան: Տարիներ հետո «Ներքին համոզումն» պամֆլետը արժանացաւ նաև Մ. Նալբանդյանի հատուկ ուշադրութեանը:

Կ. Պոլսում և Զմյուռնիայում Ոսկանյանը մոտիկից ծանոթացաւ արևմտահայ աշխարհի և գաղթօջախի այդ երկու կարևոր կենտրոնների այնօրյա հասարակական կյանքին, հրատարակութիւններին, կրթական գործին, չփվեց ու մտերմական կապեր հաստատեց մի շարք գործիչների, մասնավորապես Գրիգոր Օտյանի հետ: Այդ ընթացքում նա ձեռք գտրեց նաև էժ. Սյուրի «Թափառական հրեա» վեպի թարգմանութեանը, բայց հրատարակվեց դրա միայն առաջին մասը: Մերժելով հրատարակչական միջամտութիւնները՝ թարգմանիչը հրաժարվեց վեպի շարունակութեան լույս ընծայումից:

Փաստորեն հենց այդ տարիներին Ոսկանյանը նախապատրաստում էր պարբերական օրգանի հրատարակութիւնը: Նրա ստորագրութիւնը կրող մի թուցիկ-ազգարարութիւնից՝ «Առ հայ ազգ», գրված 1854 թ., հայտնի է դառնում, որ նա իր շուրջն ուներ համախոհ երիտասարդներ: Այդ ուրույն թուցիկն էլ ինքնին վկայում է, որ հասունանում էր ազգին դիմելու պահանջը: Երիտասարդների այդ խումբը 1855 թ. նախաձեռնում է հայ ազատ



մամուլի հիմնադրումը Փարիզում նրա առաջին խմբագրի պարտականու-  
թյունը դնելով Սևկանյանի վրա:

Այդպես, 1855 թ. հուլիսի 1-ին երևան եկավ Հայ առաջին պարբերականը  
Փարիզում «Արևելք» խորագրով: Գա փոքր չափսի Հանդես էր բաղկացած 32  
էջից: Լույս էր տեսնում երկշաբաթյա պարբերականությունով, բայց տարած-  
վում էր զաղթօջախներում, հիմնականում Թուրքիայի Հայաշատ վայրերում:  
Հանդեսը հրատարակվել է մինչև 1856 թ. հունվարի կեսը: Լույս է տեսել 14  
համար:

«Արևելքի» առաջին համարում, զիմելով ընթերցողներին, Սևկանյանը  
Հայտնում է, որ երկար ժամանակ բարեկամները Հորդորել են իրեն ազգի  
մտավոր կարտուսթյունը հոգալու համար մի պարբերաթերթ հրատարակել,  
բայց Հայրենիքի սիրուց դատ ոչինչ չուենեալով, երկու անգամ ձեռնարկել է  
այդ գործը և Հարկադրված ընդհատել: Ի վերջո, իր «արի և գոտեպինդ» բա-  
րեկամների քաջախրոթյամբ սկսել է «Արևելք» կիսամսյա Հանդեսի հրատա-  
րակությունը, որի նվիրական նպատակն է համարում Հայաստանի լուսա-  
փորությունը: Խմբագիրը միաժամանակ Հայտնում է, որ մտնելով լրագրու-  
թյան ասպարեզը չի ձգտում փառքի, այլ տեսնելով ազգի վիճակը, մեծ փա-  
փազով ջանում է օգնել նրան: Եթե «Արևելքի» շնորհիվ Հայաստանը մի քայլ  
առաջ գնա, գրում է նա, և Հանդեսը իրեն կայծ մշուշի մեջ լույս տալուց հետո  
դադարի անգամ, այն կհամարի իր փառքը: Ինչ վերաբերում է գործունենու-  
թյան եղանակին, ապա Սևկանյանը ազդարարում է, որ պետք է հավատարիմ  
մնա միմիայն ճշմարտությունը: Թերթը չպետք է քաղցրալեզու լինի, գրում է  
նա, «այլ պիտի աշխատի, որ մեր ողորմելի ազգը յուր այժմյան բուն վիճակը  
իմանա և իր մահարույր վերբերու գարման մը տանի» (1855, № 1, էջ 3):

Չնայած իր կարճատև գոյությունը, «Արևելքը» նշանավորել է մի կարևոր  
փուլ Հայ մամուլի և հրատարակախոսությունից պատմության մեջ: Նրանով  
գործնականում սկզբնավորվում է Հայ քննադատական հրատարակախոսու-  
թյունը, օրվա հրատապ հարցերը գրեթե առաջին անգամ մեր իրականության  
մեջ արծարծվում են հրատարակայնորեն, ստանում հասարակական հնչեղու-  
թյուն, քննվում ամենայն անաչառությամբ: Նույնպես առաջին անգամ մար-  
տական ձայն է բարձրացվում տիրող մտավոր անշարժության, միջնադարյան  
պատկերացումներին, կղերական-ափստատիրական գաղափարախոսության և

ամիրայական դասի դեմ: Լենց դա է «Արևելքի» իբրև տպագիր օրգանի դիմագիծը, գլխավոր առանձնահատկությունը:

«Արևելք» հանդեսն ուներ պատմական, ազգային, գիտական, վիպական, դատական (քննադատական), բանասիրական (բանաստեղծությունների) բաժինները: «Արևելքի» ոչ միայն խմբագիրը, այլ նաև հրատարակախոսը եղել է ինքը Ս. Ոսկանյանը: Նա ստեղծել է հանդեսի յուրաքանչյուր համարը, ապահովել նրա հստակ ուղղությունը և մաքառել գրեթե ամեն մի սկզբունքային հոդվածի ու հարցադրման համար: Ոսկանյանը սոսկ խմբագիր չէր, այլ հրատարակախոս-ստեղծագործող, իր գաղափարներով ընթերցող հասարակությանն ուսուցանող տեսաբան-խմբագիր: Նա սեփական ստորագրություններ և Լարմա, Լրանտ, Վահե, Ա. Գ., Վ. Մ. ծածկանուններով տպագրել է բազմաթիվ հոդվածներ, գիտական հաղորդումներ, քաղաքական լուրեր: «Արևելքի» գրական բաժնում տպագրել է չափածո գործեր, ակնարկներ, գրախոսություններ: Եվրոպական գրականությունից կատարած թարգմանություններով նա ձգտել է դաստիարակել հայ ընթերցողին, նպաստել ազգային գրականության և դրամատուրգիայի զարգացմանը: Այսպես, խոսելով պոեզիայի նշանակության մասին, նա այն միտքն է հայտնել, թե հայերն այնքան արտասուք են տեսել, որ մոռացել են երգելը, ուստի խոստանում է հանդեսի էջերում բանաստեղծությունների տպագրություններ վարժեցնել հայերի միտքը: Եվ կամ՝ ներկայացնելով Պոնսարի արվեստը, գրում է, թե թատրոնը և՛ լուսավորության, և՛ արվեստի վառարան է, որը, հաստատվելով հայերի մեջ, կարող է ոգի տալ հայ մշակույթին: Ոսկանյանը թարգմանել է Դյուրայի «Ուտրա» վեպը, Ֆլորիանի «Ժանո և Քոլեն» կատակերգությունը, Կոռնելի «Տիկին Լավալիթին արիությունը», Շատրբիանի «Լետին Ապենսերաթ» («Վերջին Իրն Սերրաջ») պատմվածքները, Լաչամպուտի առակները և այլն: Նա մեծ վերելքով թարգմանել է Լամենեի «Արի գինվոր» բանաստեղծությունը, ամսաթերթի պոեզիայի բաժնի զարդը, որում փառաբանվում է ժողովրդի ազատության համար մարտնչող ռազմիկը: Զանազան առիթներով նա մատչելի ոճով ընթերցողներին ծանոթացրել է ժերար Դը Ներվալի, Տեչանելի, Ժյուլ Սիմոնի, Միցկևիչի արվեստին: «Արևելքի» խմբագիրը մեծ կարևորություն է տվել նաև զրաբննադատության զարգացմանը հայ գրականության մեջ:

Ստեփան Ոսկանյանի հրատարակախոսական տաղանդը փայլատակել է մասնավորապես նրա բանավիճային հոդվածներում, որոնք ուղղված էին Մխիթարյան միաբանության արբահայր Գ. Լյուբյուզյանի, Տատյան Պոդոս

Ամիրայի, Ն. Չամուռճյանի և նրանց համակիր գործիչներին դեմ: Հակամարտություն առաջին պատեևառը հեղիակհայ մեծահարուստ Սամվել Մուրադյանի կտակած դուստրների հարցն էր, որոնք տեօրինում էր Մխիթարյան միաբանությունը: Հրապարակախոսը պնդում էր, որ կտակի ոգին խախտված է, բանի որ Սամվել Մուրադն իր կտակով հանձնարարում էր առանց դավանարանական խորականությունյան այդ դուստրներով մի վարժարան հիմնադրել ազգի որը և աղքատ երեխաների համար: Այնինչ, ինչպես հայտարարում էր Ոսկանյանը, Մխիթարյանների հիմնադրած դպրոցում սովորում էին միայն կաթոլիկ դավանությունյան բնտանիքների երեխաներ: «Մուրադյան կտակը և Հյուսիսայրայանը» հողվածում նա բնդվում է այդ անարդարությունյան դեմ և հաշիվ պահանջում Հյուսիսայրայան: «Մուրադյան ոգի» բանաստեղծությունյան մեջ երազում հայտնված Մուրադյանը Հայկի որդիներից պահանջում է պատասխանատվության ենթարկել Հյուսիսայրայանին իր կտակից շեղվելու համար: Այլ բանաստեղծություններում Ոսկանյանը ծագրում է արբահորը, անողրամ ստեղծում նրա անվան ստուերով և այլն: Եստ ավելի անողոր էր նրա պայքարը դավանարանական հարցերում դանցանքներ թույլ տված գործիչների դեմ: «Հայր Աղույիկ» հողվածում նա քննադատում է Մխիթարյան հայրերից մեկին, որը Կ. Պոլսում կաթոլիկություն էր պրոպագանդում: Սակայն այդ բարոյներից առավել Ոսկանյանն անհանդուրժելի էր համարում հայոց ազգային ժողովի անդամ, Պողոս ամիրա Տատյանի վարքագիծը: Կերջինս Փարիզի արքեպիսկոպոսին ուզղած մի հայտարարությունյան մեջ այն միտքն էր հայտնել, թե հայոց և կաթոլիկ եկեղեցիների մեջ գրեթե տարբերություն չկա, և թե ինքը «այնպես լավ կաթոլիկ է», որպես արքեպիսկոպոսը (№ 14, էջ 419):

«Արեւելքում» խոսվում է այդ առիթով Կ. Պոլսից, Չմուռնիայից և Եգիպտոսից ստացված բողոքների մասին, բնդ որում Կ. Պոլսից ստացված նամակը Ոսկանյանը տպագրում է իր թերթի վերջին, 14-րդ համարում: Նամակին կցված էր մի խումբ հայերի դիմումը պատրիարքին, որով նրանք պահանջում էին հասարակությունյան մեջ ծագած տարաձայնությունները վերջացնելու համար քննությունյան առնել թե՛ Տատյանի հայտարարությունը և թե՛ Չամուռճյանի վարքագիծը, որն իր «Ձոհալ» պարբերաթերթի միջոցով «Կաթոլիկ կրոնի և վարդապետությունյան տարածումը իրեն նպատակ բռնած կերելի» (էջ 418): Ի դեպ, այդ բողոքի նամակներում բերվում էին Տատյանի «Հայտարարությունյան» մի հատվածը և 17 քաղվածք «Ձոհալից»: Ամփոփման իր խոս-

քում Ոսկանյանը, վկայակոչելով ազատասեր և հայրենասեր անձանցից ստացած ազդու բողոքները, այլև մամուլի որոշ օրգանների ընդդիմութունը, հավաստում է, որ «Հոռմեական լուծը մեր մեջ գերի չպետք է գտնի այսուհետև»:

Ոսկանյանի հետևողական պայքարը պապական գաղափարախոսության դեմ պատահական չէր: 1850-ական թվականներին սուր և բացահայտ բնույթ էին ստացել Հոռմեական եկեղեցու նկրտումները՝ հայոց եկեղեցու վրա նույնպես տարածելու իր իշխանութունը, անգամ ծրագրեր էին մշակվում հայ և Հոռմեական եկեղեցիների միավորման համար: Թեև հարցն արտաքննապես արծարծվում էր կրոնադավանաբանական երանգով, այն արմատապես առնչվում էր ազգապահպանության գերագույն խնդրի հետ: Ահա թե ինչու պայքարը Հոռմեականության դեմ այնքան բուռն էր ու կրքոտ և տևական ընթացք ստացավ ժամանակի հայ պարբերականների էջերում:

Ավելորդ չէ նկատել սակայն, որ այս պարագաներում թեև Ոսկանյանի դիրքորոշումը միտված էր ազգի միության խնդրին, նրա բանավիճային եռանդը դուրս էր գալիս բարոյակթիկական մի շարք նորմերի սահմաններից: Այսպես, անտեսելով արբահայր Գևորգ Հյուրմյուզյանի եռանդուն գործունեությունը, իբրև միաբանության ղեկավար, ինչպես և նրա գիտական անուրանալի վաստակը, որը նույնպես նվիրված էր ազգային մշակութիին, Ոսկանյանը բաց հրապարակում անողոք ճակատամարտ էր տալիս արբահորը: Այդ նրան չի ներվում, և ժամանակի զորավոր ուժերի՝ Պողոս Տատյանի և Գարրիել Այվազովսկու ջանքերով «Արևելքը» փակվում է: Մի քանի տարի անց, իր պարբերաթերթի դադարեցման կապակցությամբ պատասխանելով «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը, Ոսկանյանը գրում է. այն չէր կարող այլևս հրատարակվել, որովհետև նրա խմբագիրը «չուզեց, չուզեր և չպիտի ուզե իրեն հանձնված դրոշը քանի մը վարդապետներու առջև ծալել»: Այնուհետև այդ առիթով նա չափազանց դիպուկ բնութագրում էր իր թերթի ուղղությունը. «Արևելքին» միմիայն արժեքն էր իր ազատությունը. անով և անով միայն կրնար պարծիլ ուրիշ օրագիրներու քով: Այս ազատությունը իրեն չթողուց կրոնամուլ սե ոգին» («Արևմուտք», 1859, № 1, էջ 16):

«Արևելք» հանդեսի դադարեցումից հետո Ստեփան Ոսկանյանը շարունակում է ապրել Փարիզում և զբաղվում է ինքնակրթությամբ: Նրան հաջողվում է իր շուրջը համախմբել փարիզահայ մի խումբ առաջադեմ երիտա-

սարդների, որոնք հատուկ ընկերություն են հիմնադրում հանդես հրատարակելու նպատակով: 1859 թ. հունվարի 1-ից սկսում է լույս տեսնել «Արևմուտք» կիսամյա պարբերաթերթը, որի խմբագիր է հաստատվում Ստեփան Սևանյանը: «Արևմուտքը» հովանավորում էին փարիզարևակ երիտասարդ վաճառական Շ. Թյուսյուդյանը, տպարանատեր Ճանիկ Արամյանը, բժշկություն ուսանողներ Շ. Քյաթիպյանը և Տ. Փեշտիմալեյանը: Ֆրանսիական կառավարության առջև պատասխանատվությունն ստանձնել էր Սևանյանի բարեկամներից Օգյուստ Տրյեդը: «Արևմուտքը» նույնպես տպագրվում էր Ճ. Արամյանի տպարանում: Խմբագրական ամբողջ աշխատանքը, ներառյալ սրբագրությունը, կատարում էր Սևանյանը, որի գրչին էլ պատկանում են հանդեսի գրեթե բոլոր նյութերը ինքնուրույն թե թարգմանական, ստորագրված թե անստորագիր: Հանդեսը լույս էր տեսնում կիսամյա պարբերականությամբ, ութէջյա, փոքր-ինչ մեծադիր ծավալով: 1859-ին լույս է տեսել «Արևմուտքի» 24 համար և Սևանյանի ակամա հրաժարականից հետո հրատարակությունն ընդհատվել է մինչև 1864 թ.:

«Արևմուտքի» ենթավերնագիրն էր «Արձագանք Եվրոպայի լուսավորության»: Թերթի առաջին համարի ծրագրային հոդվածը մեկնաբանում էր այդ ձեռնարկում: Միտք և ազատություն, ահա այն գործոնները, որոնք դարձել են Եվրոպայի փառքն ու հարստությունը, և որոնց վրա պետք է խարսխվի նաև հայկական ազգային լուսավորությունը: Սևանյանը հայությունը կոչ էր անում հանուն Հայաստանի բարգավաճման ընդունել այն ամեն օրենքները, որոնք Եվրոպային լույս, ուժ և բարօրություն էին տալիս (1859, № 1, էջ 2): Սակայն նա միաժամանակ վերապահում է անում, քանի որ հայ իրականության մեջ լուսավորության գործը կաշկանդվում էր ոչ միայն արտաքին թշնամիների, այլև ներքին հակառակորդների («Եզդիտների») կողմից, ապա նոր օրգանի խնդիրներից է համարում անգիջում պայքարը հետադիմության դեմ: Սևանյանը թեև չէր մոռանում «Արեւելքի» կործանման պատճառները, բայց հույս էր հայտնում, որ խավարամուլները զենքերն ի վերջո կխորտակվեն ճշմարտության վահանին զարնվելով, որովհետև, նրա խորին համոզմամբ, մտքի գործոնը շատ ավելի կենսունակ է դավերից ու խարդավանքներից:

Սևանյանի գրիչն «Արևմուտքում» շատ ավելի փորձառու էր, համարձակ ու ազատամիտ: «Արևմուտքը» նա կապեց իրական կյանքի հետ, այն գարձրեց ազգային կյանքի թերությունները բացահայտելու և ազգի առաջա-

դիմուկթյունը դրանով իսկ խթանելու միջոց: «Ազգային պակասություն» հոդ-  
վածում, առարկելով այն անձանց, որոնք պահանջում էին չհրապարակել ազ-  
գի թերուկթյունները, Ոսկանյանը հայտարարում է. «Վերք մը, թե՛ բարոյական  
և թե՛ նյութական, պետք է որ հայտնվի, որ բուժ գտնեն: Մեզի համար ազգա-  
սեր է այն մարդը, որ պակասություն մը կը հայտնեն, կը նկարագրեն և դարման  
կը փնտռեն և չազգասերը այն, որ ջանք կընեն ամեն բան ծածկելու: Հայրենա-  
սիրության թյուրըմբռնում է՛ իր ազգը միշտ գովել, յամենայնի արդարացնել  
և հին նախապաշարուժով օտարը թշնամի սեպել» (1859, № 3, էջ 18):

Ինչպես «Արևելքի» հրատարակության շրջանում, այժմ ևս Ոսկանյանը իր  
թերթի էջերում մեծ տեղ է նվիրել գրականությանը և գրական քննադատու-  
թյան հարցերին: «Արևմուտքում» տպագրվել են Ֆլորիանի «Երկու տոմսակ»  
կատակերգությունը, հատվածներ Աբբա Պրևոյի «Մանոն Լեսկո» վեպից, մի  
հատված Հովհան Վանանդեցու «Տեսարան հանդիսիցն Հայկա, Արամա և  
Արայի» դրուցադներգությունից, Ստ. Ոսկանյանի «Հայ դրուցադնուհի մը»  
պատմվածքը: Հանդեսում տպագրվել են Ոսկանյանի մի շարք պամֆլետները,  
երգիծական և բանավիճային ստեղծագործությունները: «Արևմուտքում»  
տպագրված գրաքննադատական հոդվածներում Ոսկանյանը ներկայացրել է  
Ֆրանսիական գրականության ժամանակի նորույթները (Հ. Մորոյի, Ժյուլ Սի-  
մոնի գրքերը), ինչպես և զետեղել է Բերանթեի ընդարձակ կենսագրությունը,  
ընտրված գրել բանաստեղծի պոեզիայի առանձնահատկությունները: Ոս-  
կանյանը գտնում է, որ ոչ մի բանաստեղծ մինչ Բերանթեն չի համարձակվել  
բազմության սիրտը տոգորել ազատության սիրով, մի բան, որ մարդկության  
և ազգերի առաջին և վերջին պարտականությունն է: Բանաստեղծի անվան  
համար նա անմահություն է գուշակում:

Իր հրապարակախոսությամբ Ոսկանյանն ընդլայնեց Հայ հասարակական  
մտքի շրջանակը կայուն տեղ հատկացնելով տեսական մտքի զարգացմանը:  
Նա պաշտպան կանգնեց գիտության, լուսավորության, իմաստասիրության,  
բանաձևեց «Միտք և ազատություն» այն համոզմունքն ունենալով, որ  
«Լուսավորությունը միտքի ազատությամբ կսկսվի և կպահվի»:

Ոսկանյան խմբագիր-քաղաքացու մեծ մտահոգություններից մեկն է եղել  
ազգային դիմագծի անադարտ պահպանությունը, երբ նրա կուկթյունը խա-  
թարման վտանգի տակ էր, երբ ոճամոլությունն ու կապկային ընդօրինակու-  
թյունը ներթափանցում էին հայ կենցաղը և ընտանիքները: Այդ առումով նա

չափազանց բարձր էր դասուժ հայ կնոջ դերը, նրան համարում ոչ միայն բնտանիքի սյուն, այլ նաև սերնդի ու ազգությունից հաստիարակ:

Կնոջ դերի բարձրացումը և նրա ազատագրումը կապանքներից Սուկանյանի հրապարակախոսությունից մեջ սոսկ մի մասն է այն ընդհանուր պայքարի, որ նա ծավալել է մարդկություն ընդհանուր ազատություն համար: Մարդու ազատությունը, ինչպես բանաձևում էր Սուկանյանը, անպարտելի է: «Ազատությունը կյանքի պես, իրավունքս է», - գրել է նա: Գաստիարակությունը գուցորդելով հայրենասիրություն հետ նա դեռ «Արևելքում» հռչակում էր, որ «Հայրենասերը միայն հայրենիքի արժանի է», ուստի և հայրենիք ունենալու և ազատություն նվաճելու համար նա անհրաժեշտ էր համարում նախ հայրենասեր սերունդ գաստիարակել: Այն հարցին, թե արդյոք հայ ժողովուրդը մի օր կարթնանա՞ և ազատության համար ոտքի կկանգնի՞, Սուկանյանն աներևր պատասխանել է «Այո՞», «Մենք բան մը չի պիտի խնայինք մեր կողմե», թեև դիտակցում էր, որ «ժամանակը դժվար է»:

Հենց այդ դժվար ժամանակում էլ Սուկանյանը ելք գտավ ազատասիրական գաղափարներ պրոպագանդելու և ազգային-ազատագրական պայքարի կողմնելու համար: Ինքնին ներկայացած առիթը Իտալիայի ազատագրություն ու միավորման համար Ավստրիայի դեմ մղվող պատերազմին Չերանսիայի մասնակցությունն էր: Պատերազմի ընթացքը լուսարանելու համար հատուկ արտոնություն ստանալով Սուկանյանը փառարանեց օտար լծի դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարը, նրա հերոսներին, գաղափարախոսությունը:

Շուրջ չորս ամիս «Արևմուտքի» մայիս-օգոստոսի 10-15-րդ համարները նա հիմնականում արամադրեց ավստրո-իտալա-ֆրանսիական պատերազմի ընթացքը լուսարանող նյութերին նպասակ ունենալով ազգային-ազատագրական պայքարի սղով առողրել թուրքական լծի տակ հեծող հայությունը: Այդ ամիտներին Սուկանյանը «Պատերազմի լուրեր» խորագրի տակ տպագրել է պաշտոնական հաղորդագրությունները, ինչպես և զանազան ղեկուցազրեր, Գարիբալդիի և Վիկտոր Էմմանուելի կոչերը, ճառերը: Նա փառարանել է Գարիբալդիին, համակրանքով հիշել հունգարական հեղափոխությունից հերոսներ Կուշուտին, հայազգի հրամանատար Էոնեստ Գիշին և այլ հերոսներ:

Շատ խորհրդանշական խոստովանություն է անում հրապարակախոսը այդ օրերի իր լրագրական քաղաքականությունից վերաբերյալ նշելով, թե իրեն թույլատրված է պատերազմական նյութերը թարգմանել և ո՛չ թե մեկնու-

թյուն տալ դեպքերին: «Եթե երբեմն երկու թարգմանության մեջ տեղը ազատաբույր ակնարկություն մը սպրդեցա՞վ կամ Ավստրիայի դեմ սաստիկ բառեր տեսնվեցան, պատճառը մեր անբուժելի հայրենասիրության պետք է տրվի»(1859, № 16, էջ 121):

Հիրավի, նկարագրելով իտալական ժողովրդի խանդավառությունն ու ամենքին համակած հերոսական ոգին, Ոսկանյանը չի թաքցնում իր հիացմունքը. «Իտալացի՛ք, աշխարհիս ցույց կուտաք, որ մի՛ և անկախ Հայրենիքի արժանի եք. պիտի հիշվիք դուք իբրև օրինակ և ձեր անունը կիսամեռ ազգերու սիրտը պիտի բռնկե: Փա՛ռք ձեզի»(№ 10, էջ 77): Նա, անուղղակիորեն դիմելով Հայերին, իտալացիների օրինակով ուսուցանում էր այն ճշմարտությունը, թե «ժողովուրդ մը, որ ուխտ կընե ազատության ծառայել, անմեռ է անոր պես»(№ 13, էջ 102): Այս առումով հետաքրքրական է նրա վերաբերմունքը Մետերնիխի նկատմամբ, որի մահվան առիթով գրած հոդվածում արտացոլվել է Ոսկանյանի ատելությունը բոլոր ազգերի բռնապետների նկատմամբ (1859, № 13, էջ 100-101):

Ոսկանյանն ամենայն հմտությամբ օգտվեց պատերազմի ընթացքը լուսաբանելու արտոնությունից, բայց շուտով, օգոստոսին, պատերազմական գործողությունները դադարելու հետ մեկտեղ, այդ արտոնությունը կորցրեց ուժը:

Ստեփան Ոսկանյանը քննություն է առել նաև թուրքական բռնապետության սահմաններում ապրող Հայության ծանր վիճակը: Հայերն ընկել են գազանների երախը, գրում է նա, մինչդեռ նրանցից ոմանք խունկի աման են նվիրում Այվազովսկուն: «Վառողի՛ աման պետք է, խնկաման կպատրաստեն: Վա՛յ, Հայկին թոռները, վա՛յ»(1859, № 14, էջ 109):

«Արևմուտքի» խմբագիրը գտնում էր, որ ժողովուրդը բախտորոշ պայքարի ելնելուց առաջ պետք է լայնակի ու խորությամբ, առանց ազմուկի ու բարձրագույն Հայտարարությունների, առանց կոչերի նախապատրաստվի այդ պայքարին: Հակառակ դեպքում նա փրկություն ձեռք բերելու փոխարեն կարող է ոչ միայն վտանգել իր ֆիզիկական գոյությունը, այլև անհայտանալ պատմության ասպարեզից, ինչպես այդ պատահել է բազմաթիվ ազգերի ու ժողովուրդների հետ: Լիովին ըմբռնելի այդ գաղափարը Ոսկանյանը հստակորեն արտահայտեց ավելի ուշ՝ բացատրելով, որ ժողովրդի իսկական ազատագրության համար «բազուկին քով միտք պետք է, որ դատե, կշռե և շարժելու կետը Հայտնե, բոլորտիբը եղածը մանր քննելով»:



Ոսկանյանի Հրապարակախոսությունն աչքի է ընկնում նաև մեկ այլ առանձնահատկությունով: Նա 1840-1850-ական թվականներից իր Հայեցակետում մշտապես ուներ Մայր Հայաստանը, տեսնում էր նրա բողոքող ավերակները, լսում նրա կանչող ձայնը և Համադործակցեց նրա ճակատագիրը կյանքի նպատակ դարձրած գործիչների հետ: Եվ դա ոչ թե Հանդամանքների բերումով, այլ բխում էր Ոսկանյանի ընդհանուր գաղափարախոսությունից ու ծրագրերից:

Այդ առումով նշանակալի երևույթ է այն, որ Թ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպին առաջինն արձագանքել է Հենց Ս. Ոսկանյանը, արձագանքել է ամենայն ըմբռնումով, Հայ նոր գրականության իրական մայրուղու մատնանշումով, նաև վեպի գեղարվեստական արժեքի և Աբովյանի տաղանդի պաշտան գնահատմամբ: Ոսկանյանը, հաղթահարելով արեւելահայ աշխարհաբարբ, որին նա թերևս առաջին անգամ էր ծանոթանում, բացառիկ հոգեհարադատությամբ է կարդացել «Վերքը», ջերմորեն ընդունել նրա գաղափարախոսությունը, անկեղծ Համակրանքով տողորվել Աբովյանի և նրա երկի, Հայ շինականի ու նրա գավակների նկատմամբ: Մինչ այդ նա ծանոթ էր Աբովյանի գործունեությանը, գիտեր նրա ողբերգական կորստի մասին, նույնիսկ շփոթել էր նրա աշակերտ-բարեկամներից մեկի հետ: Ավելին, Ոսկանյանի ֆրանսիացի բարեկամներից մեկը, որ Կովկասում հանդիպել էր Աբովյանին, նամակով պատմել էր նրա մասին:

Կարդալով Աբովյանի վեպը՝ Ոսկանյանը հանգեց արմատական հետևություն. «Ժամանակը եկավ, որ Հայ Ուսմիկն ալ զգա, որ իր սամկությունովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներն վար չմնար թե՛ ազգային և թե՛ օտարազգի բռնափորներու դեմ զնելու ասին», նաև անառարկելի գաղափարի Հայ գրականության գերազույն խնդրի ըմբռնման առումով. «Ժողովուրդին սիրար, ահա գրագիտության ազրյուրը, իր անցյալը և ավանդությունները, ահա զրելու նյութերը, ազգ և մարդկություն՝ ահա նպատակ, ուր ճշմարիտ բանասերը կաշխատի ու զգիլ և իր Հետ ասնիլ բազմությունը, որու անգամ է... Երանի թե պ. Աբովյանին գիտափորությունը հասկցվեր և իր շափիզը մնար ազգին մեջ» (1859, № 6, էջ 41-42): Երեք հոդված նվիրելով Աբովյանին ու նրա «Վերքին»՝ Ոսկանյանը վեպից արտատպել է նաև մի հատված՝ ճաշակ տալով երկի ու նրա լեզվի մասին:

Կարելի է ասել՝ Աբովյանի վեպը բացեց Ոսկանյանի աչքերը մայր երկրի ու նրա ժողովրդի հանդեպ: Աբովյանով նա ճանաչեց արեւելահայությանը, և այդ

նրա համար կատարյալ բարեբախտութիւնն էր: Բայց դա միայն սկիզբն էր: Հենց այն օրերին, երբ տպագրում էր Աբովյանին նվիրված իր հոդվածները, Ոսկանյանը երջանկութիւն ունեցավ ծանոթանալու և մտերմութիւն հաստատելու ժամանակի արևելահայ խոշորագույն մտածողի ու հրապարակախոսի՝ Մ. Նալբանդյանի հետ:

1859 թ. ապրիլին Փարիզ ժամանեց Մ. Նալբանդյանը, որը մինչ այդ գիտեր Ոսկանյանի մասին և նույնիսկ ուրախությամբ պատրաստակամութիւն էր հայտնել Մոսկվայում և Ռուսաստանում ստանձնելու «Արևմուտքի» գործակալութիւնը:

Փարիզ հասնելուց անմիջապես հետո Նալբանդյանը հանդիպել է Ոսկանյանին: Դա սոսկ երկու հրապարակախոսների տեսակցութիւնն չէր, այլ հայ ժողովրդի երկու հատվածների առավել նշանավոր գործիչների հանդիպում, որը վավերացրեց նրանց գաղափարական ընդհանրութիւնը և սկզբնավորեց նրանց համագործակցութիւնը, խոստումնալի մի սկիզբ, որը սակայն հանգամանքների բերումով տևական չեղավ:

Հավանաբար հենց Նալբանդյանի միջոցով Ոսկանյանն ստացավ «Հյուսիսսփայլի» համարները և, ծանոթանալով դրանց, «բերկրալի տեսավ», որ ազատութեան և լուսավորութեան սկզբունքները «ասպարեզ մ'ունեն Ռուսիայի ազգայիններու մեջ»: Նա համոզվեց նաև, որ փոքր ազգութիւններին ճշող ցարական Ռուսաստանից բացի գոյութիւն ունի նաև առաջադիմական, իր լուսավորութեամբ բնավ հետ չմնացող Ռուսաստանը, ուր մտավոր արթնացում է ապրում նաև հայութիւնը: Բացառիկ լակոնիկ ու պատկերավոր լեզվով Ոսկանյանն այսպես է արտահայտվել «Հյուսիսսփայլին» նվիրված հաղորդման մեջ. «Այս մտական հարութիւնը բարի նշան է և հավաստի ենք, որ իր արդյունքը չպիտի ուշանա զգալի կերպով տարածվիլ բոլոր ազգին վրա: Զարմանալի երևույթ: Ուրկե՛ս սկսավ մեր լուսավորութիւնը և ուր կապավինի հիմա... Իզմիրի, Պոլսի և ուրիշ քաղաքներու հայերը պիտի մաշնան տեսնելով, որ Հյուսիսն՞ց կ'սփայլի լույսը» (1859, № 10, էջ 79): Սխալված չենք լինի, եթե Ոսկանյանի այս խոսքերի մեջ նշմարելու լինենք նաև նրա քաղաքական դիրքորոշումը, որ, անշուշտ, կապվում է նաև Մ. Նալբանդյանի հետ:

Մեծ իմաստ են պարունակում և ինքնին խոսում են Ոսկանյանի հյուսիսսփայլյան-Նալբանդյանական կողմնորոշման փաստերը: Հաջորդ հունիսյան համարներում Ոսկանյանը «Արևմուտքի» էջերը տրամադրեց Նալբանդյանին՝

Հյուսիսափայլից արտատպելով նրա «Նամակ առ Հրատարակողը» կրակոտ պամֆլետը, որ Համահունչ էր իր Ոսկանյանի Հրապարակախոսությունները:

Վերստին տպագրելով «Նամակ առ Հրատարակողը» պամֆլետը, Ոսկանյանը գինյորագրվում էր արևելահայ իրականությունում Նալբանդյանի ծաղկած պայքարին, իր հաղեսը դարձնում այդ պայքարին օժանդակող մի ամբիոն, որի Համար ևս ոչ պատահաբար նրան մեղադրանք էին հարուցում: Միտժամանակ այդ փաստը նշանավոր է նրանով, որ, որքան հայտնի է, առաջին անգամ էր Նալբանդյանի խոսքն արտատպվում և առաջին անգամ ասպարեզ գտնում գաղութահայ (նաև արևմտահայ) մամուլում, մեծապես ընդլայնվում էր նրա ընթերցողների և ազդեցությունների շրջանակը: Դա ինքնին խոշոր ծառայություն էր հայ ղեմկրատական Հրապարակախոսությունն ու հայ Հասարակական մտքին:

Այդ «Նամակից» բացի Ոսկանյանը «Արևմուտք» հանդեսի վերջին Համարներում արտատպել է նաև նրա թարգմանություններ տպագրված «Թափառական Հրեա» վեպին կցված նախաբանը: Շատ չանցած, երբ Հնդկաստան մեկնելու առիթով Նալբանդյանը եղավ Էջմիածնում, ապա և Փարիզում, նա ամենայն հայաց կաթողիկոս Մաթեոսից օրհնություն կոնդակ հասցրեց Ոսկանյանին, որին կաթողիկոսը ճանաչում էր Զմյուռնիայից և Համակրանքով էր վերաբերվում նրան լուսավորական գործունեություն համար:

Իր հերթին Նալբանդյանը մեծ հարգանքով է տոգորվել Ոսկանյանի, նրա վարած ուղեգծի և Հրատարակած հանդեսի նկատմամբ:

Մ. Նալբանդյանը գրել է. «Շատ փոքր է Փարիզում գտանված հայերի թիվը, բայց այս փոքրի մեջ երևում է ազգայնությունը ավելի շատ, քան թե այլ բազմահայ բազաքներում... Փարիզում գտանվում է քանքարավոր պ. Ս. Ոսկանյան ուսումնական ազգայինը, որ ... այժմ հրատարակում է Արևմուտք անունով կիսամսագիրը... Մեր գիտենք մի ազատախոս հեղինակի վիճակը անկիրթ ազգի մեջ, այդպիսի հեղինակը ոչ թե միայն պիտի կուրծք մաշե, աչքի լույսը թափե ազգին նոր գաղափարք տալու համար, այլև պիտի տանի այն սե-սե բամբասանքները, որ անխորհուրդ խավարասերքը անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վերա... այս պատճառով ևս տեսնում ենք զանազան խրտմունք և թշնամական հարձակմունք Արևմուտքի թե՛ Հիմնադրերի և թե՛ շարագրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար... Մեր մի առանձին հոգիածով մասնավորապես կիսունք Արևմուտքի վերա...

Հյուսիսսփյառը Հանձնառու է Արևմուտքի գործակալությանը Թուսիայի մեջ: Արևմուտքի ազնիվ հրատարակողը և հիմնադիրքը թող Հաճին ընդունել մեր առ ի սրտե հրապարակական շնորհակալությունը, որոնց ցանկանում ենք նույնպես ամենայն հաջողություն և հառաջադիմություն»<sup>43</sup>:

Սակայն, շնայած ժամանակի առաջադեմ գործիչների աջակցությանը, Ոսկանյանի ծավալած հրատարակական-լուսավորական գործունեությունը դժվարությամբ էր ուղի հարթում հայ Հասարակական կյանքում: «Արևմուտքի» երկրորդ համարում նա Հայտարարում է մի նոր ընկերության հաստատման մասին, որի անդամները պետք է զբաղվեին լուսավորության հարցերով: Ոսկանյանն այդ Հայտարարության մեջ նշում է Հայաստանի մտավոր թշվառությունն ամոքելու գործում ընկերություններ ստեղծելու անհրաժեշտությունը: Բայց ընթերցողներին հիշեցնելով նախորդ տարիներին ստեղծվելիք ընկերությունների ձախողումը, համոզմունք է հայտնում, որ անցյալի չիրականացված ծրագրերի բեկորներով իրենց կհաջողվի ամրապնդել նորի հիմքը: Ինչպես երևում է մեկ այլ ծանուցումից, այդ ընկերության կազմակերպիչը եղել էր ինքը՝ Ոսկանյանը: Թերթի 20-րդ համարում տպագրված այդ ծանուցման մեջ նա հայտնում է, որ «ավելի աշխուժով, քան թե զգուշությամբ» հրապարակելով իրենց ծրագիրը, գենք է տվել հոգևորականների ձեռքը, որոնց հաջողվել է գծտություն սերմանել ընկերության անդամների միջև և խափանել այդ մտահղացման իրականացումը: Այս առիթով նա գրում է. «Համոզված էինք, թե կրոնքը ավելորդ, չըսենք նեղություն է մեր դրոշին, որ ազատութենեն ուրիշ դրոշմ չէ կրեր երբեք: Համոզված էինք, թե ողորմելի ժողովրդի մը ապառնի վիճակը հավատքով չպատրաստվիր: ... Կփափաղեինք, կրոնավորներն հեռու ազգին ծառայել...»: Սակայն հակառակորդներն այնուամենայնիվ հաղթում են, և նոր ընկերության ծրագիրը տապալվում է դեռ չձեռնված:

Բանավիճելով «Մասիս» թերթի տեսարան, բանաստեղծ («պուետ») Խաչատուր Մխաբյանի հետ, որը Հայերի ազգապահպանման միակ միջոցը կրոնն ու լեզուն էր համարում, «Արևմուտքի» խմբագիրը Հայտարարում է. Հայեր, մեր միություն միջոցը կրոնը չի եղել և չպիտի լինի: Մեզ միմյանց կապողը ճշմարիտ լուսավորությունը պետք է լինի, իսկ նշանաբանը՝ Հայաստան անունը: Նա առաջարկում է բառարանից ջնջել լուսավորչական, պապական և

<sup>43</sup> Միքայել Լալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Ե., 1982, էջ 165-166:

բողոքական բառերը և ողջ ազգի ուժերը միավորել «Հայաստանի Համար կոմիտե», կեցցե նոր Հայաստան կանչելու» (1859, № 24, էջ 196):

«Արեւմուտք» Հանդեսում Ոսկանյանի մարտական ելույթները, Հեռեւողան կան պայքարը կղերական գործիչներին և բարձրաստիճան պաշտոնյա Հակոբ Կոնիկյանի թշնամական գործողութիւնների դեմ, ավելի էին բորբոքում կրքերը: Նրան զրպարտում են մամուլի էջերում, Հայհոյում, սպառնում, իսկ Կ. Պոլսի թերթերից մեկի նամակագիրը նույնիսկ պահանջում է «Արեւմուտքը» «այրել, մրկել, փոշի դարձնել»: Ե. Մխաբյանը «Մասիսի» էջերում արգահատանքով է արտահայտում Ոսկանյանի ազատամտութեան մասին, նրան Համարում մի գրող, որն իր ժահրոտ գրչով կամենում է Հայերի մեջ Հասարակապետութիւն պատմաստել: Ոսկանյանը մտնում է բանավեճի մեջ բացառիկ տաղանդ գրսեւորելով այդ ելույթներում: «Սազ մը պուեստ» երգիծական բանաստեղծութեան մեջ նա բառախաղով ծաղրում է Մխաբյանին, որի գործն է Համարում միայն լողալ, սողալ և ձայներ արձակել:

Ոսկանյանը լուրջ Հակամարտութեան մեջ էր Գարրիել Այվազովսկու Հեռ և բազմիցս անդրադարձել է նրա ելույթներին, աշխատութիւններին, «Արեւելիք» և «Արեւմուտքի» դեմ մղած նրա Հեռեւողական պայքարին: Իսկապես, Այվազովսկին Հ. Կոնիկյանի Հեռ անդիջում պայքար է ծավալել Ոսկանյանի դեմ, առանձնապես ջանացել ամեն կերպ թուլացնել նրա Հզոր գրչի թափը: Սակփան Ոսկանյանը, Հիմնականում սկզբունքային պայքար վարելով նրա դեմ, երբեմն իր ելույթներում Հանիրափի նսեմացրել է նրա գրական գործերի արժանիքները: «Իբրև գրագետ մեծ բան մը չարժեր ինքը», գրում է մի Հոդվածում: Անշուշտ չափազանցութիւն կար նրա և այլ ելույթներում, որոնցում դամանորեն ծաղրում էր Այվազովսկուն, նրան ներկայացնելով իբրև Հողեւորական մի գործիչ, որը, մտնելով ազգային գործերի ասպարեզ, Հայ ազգի ճակատագիրը վաճառում է ոսկով: Դրա ցայտուն արտահայտութիւնն է «Գարրիկ» բանաստեղծութիւնը, որը գրված է Բերանժեի մի բանաստեղծութեան նմանութեամբ:

Ոսկանյանի բանավեճային ամենածանրակշիւ ելույթը նրա պատասխանն է «Մասիսի» Հոդվածագիր «Պարոն Թորոսի» մեղադրանքներին: «Քասնչորս ստութիւն» խորագիրը կրող Հոդվածում Ոսկանյանը մեկ առ մեկ Հիշատակում է իր բնդիմախոսի առաջ քաշած մեղադրանքները և պատասխանում գրանց: «Պարոն Թորոսը» (Հ. Կոնիկյան) նրան մեղադրում էր փետրվարյան Հեղափոխութեանը և 1849 թ. Հունիսյան դեպքերին մասնակցելու Համար, որի

պատճառով բանտ էր ընկել: Հիշատակում է և զանազան փաստեր՝ փորձելով Ոսկանյանին ներկայացնել իբրև քաղաքականապես անբարեհույս անձնավորություն: Ամենայն արժանապատվությամբ ընդունելով իր դեմ ուղղված մեղադրանքները, Ոսկանյանը ոչ միայն չի փորձում հերքել դրանք, այլև, նշելով իր և Կոնստնդիանի հայացքների միջև եղած անջրպետը, մեկ անգամ ևս ընդգծում է իր դավանած բարոյական արժեքների գերազանցությունը: Բանավիճային այդ հոգւվածում Ոսկանյանն անուղղակիորեն տալիս է իր գործունեությունից գնահատականը, որը, հիրավի, պատիվ է բերում նրա անվանն ու վաստակին. «... ու՛ր և գտնվի՛նք, ազատության հետ պիտի մնանք և բռնությունը չպիտի սիրենք երբեք թե՛ հայերուն և թե՛ օտարներուն մեջ»: Սակայն հակառակորդ բանակը գործում էր անվրեպ. ինչպես «Արևելքի» պարագայում, 1859 թ. նույնպես Ոսկանյանի հարվածների ծանրությունից ճնշված հակառակորդները դիմում են իրենց միակ զենքին՝ խարդավանքին, և «Արևմուտքի» հրատարակությունն անհնար է դառնում: Պարտավորված լինելով հանդեսը խմբագրել մեկ տարի՝ Ոսկանյանը սակայն տասը ամիսը լրանալուց հետո ստիպված էր հրաժարվել անվարձ ու չգնահատված:

Ավելի քան չորս տարի՝ 1860-1863 թթ. նա օրվա հացը վաստակում էր օտար միջավայրում: Խմբագրում էր Թուրինում Ֆրանսերեն հրատարակվող «Լա Իտալի» թերթը: Հիշատակվում է, որ նա արժանացել է Իտալիայի պրեմիեր-մինիստր Քավուրի վստահությունը և դարձել նրա անձնական քարտուղարը: 1861 թ. Քավուրի մահվանից հետո Ոսկանյանը վերադառնում է Ֆրանսիա և 1864-ից վերսկսում «Արևմուտքի» հրատարակությունը: Փետրվարից մինչև հունիսի 1-ը կանոնավոր լույս տեսնելուց հետո հանդեսն անհայտ պատճառներով դրեթե յոթ ամիս դադարեց և հրապարակ եկավ միայն 1865-ի հունվարին՝ բայց փետրվարի 15-ի համարը եղավ վերջինը: Ոսկանյանը առիշտ հեռացավ հայ հրապարակախոսական ասպարեզից: 1866-1867 թթ. նա հատուկ հրավերով վարում էր Ջմյուռնիայի Մեսրոպյան և Նոնիսիմյան վարժարանի տեսչի և Ֆրանսերենի դասատուի պաշտոնը: Այս ասպարեզում նույնպես Ոսկանյանը մնալուն հետք թողեց իր նշանավոր ձեռնարկումներով, դրանց թվում նաև շխարհարարի ուսուցումն առաջին անգամ պաշտոնապես դպրոցում իրագործելով, որ այն տարիներին առաջադիմական մեծ քայլ էր:

Ոսկանյանի վարչամանկավարժական նորամուծությունները Մեսրոպյան վարժարանում նրա դեմ հանեցին բավական թվով հակառակորդներին,

սկզբնավորեցին մի նոր պայքար նրա դեմ: Առաջադիմական մանկավարժական սկզբունքներ կիրառող տաղանդավոր գործչին այլևս ոչինչ չէր մնում անել, քան Հեռանալ Հայկական միջավայրից և օտարներին ծառայել: Նա 1869-ից ձեռնամուխ եղավ Ֆրանսերեն «Լա ռեֆորմ» թերթի Հրատարակությունը և այդ գործը շարունակեց մինչև վախճանվելը 1901 թվականի փետրվարի 23-ը:

Հեռանալով Հայ իրականությունից, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, Ոսկանյանը, իրօք, «երբեք չդադարեց Հայ ըլլալն»: Նա շարունակում էր Հետևել ու արձագանքել Հայ Հասարակական կյանքի իրադարձություններին, «Օրպել» ծածկանունով կամ անտտրագիկ երբեմն Հանդես էր գալիս Հայ մամուլի կշիռում, իր «Լա ռեֆորմ» թերթում գրում էր նաև Հայկական կյանքից: Ոսկանյանը միաժամանակ ստեղծագործում էր մայրենի լեզվով, նա նույնիսկ Ֆրանսերեն Հրատարակած երկու առանձին պամֆլետ է նվիրել արևմտահայ մտավոր կյանքում մեծ հուզումներ առաջացրած Հարցերին:

Ստեփան Ոսկանյանի գործունեության երկրորդ շրջանի ավելի քան 35 տարվա արդարքը, ինչպես և նրա Հրատարակած Ֆրանսերեն թերթը, ցավոք, անծանոթ են մնում Հայ բանասիրությունը: Սակայն այն, ինչ Հայանի է «Արևելքի» և «Արևմուտքի» էջերից, ամբողջական պատկերացում է տալիս Հայ Հասարակական կյանքում ծավալված այն Հախուռն պայքարի մասին, որ սկսվել է 1850-ական թվականներին Ոսկանյանի մասնակցությունով: Նա մոլեռանդորեն նվիրված էր ազգի միավորման, լուսավորության ու բարօրության գաղափարներին: Իր թերթերում նա բարձրացրել է ժամանակի կենսական խնդիրները, որոնք քննարկում էր առաջադիմական մտքի չափանիշներով չխնայելով աշխարհիկ կամ կրոնական ոչ մի Հեղինակություն:

Ոսկանյանի թերթերի Հաջողությունը պայմանավորված էր նաև նրա անբուխր տաղանդով: Խոսքի կախարդական ուժը նրան Հնարավորություն է տալիս ամբողջ խորությունով վերլուծելու իր գաղափարները և տեսանկյն գործնելու դրանց ճշմարտությունն ու արդարացիությունը:

Ժամանակակիցները և Հետագայի Հայ գործիչները բարձր են գնահատել Ոսկանյանի նվիրվածությունն իր գաղափարներին և նրա վաստակը Հայ Հասարակական մտքի զարգացման ընթացքում: Գրիգոր Զիլինկիրյանը «Արևմուտք» թերթը Համարել է «ազատության առաջին գանդակը»: Մատթեոս Մամուրյանը Ոսկանյանին գատել է այն գործիչների թվին, որոնք ծննդյան ու

վահճանի վկայագիր չունեն և հավերժորեն ապրում են ներկայի ու ապագայի մեջ: Հարուխյուն Սրվաճյանը միշտ սիրով է հիշել «այն անձին, որ գիշեր ցերեկ հայրենիք և ազատություն կերազե»: Լեւոնաբերական է «Մեղուի» 1859 թ. № 18-ի մի բարեկամական շարժը: Այնտեղ պատկերված է Ոսկանյանը՝ «Արևմուտքի» կապոցը ձեռքին Կ. Պոլիս մտնելիս: Քաղաքացիների մի խումբ մահակներով է դիմավորում հրապարակախոսին. «Քու լուսավորությունը Փարիզի մեջ ծախե, մեր քեռիները մընտռելու՞ եկար»: Ոսկանյանը դառնությամբ գոչում է. «Ապերախտ հայեր, խավարյալ հայեր...» (արտահայտությունը բառացի առնված էր Ոսկանյանի հոգվածներին):

Ստեփան Ոսկանյանի բազմախոս հրապարակախոսական արվեստը ամբողջ խորությամբ բնութագրել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: Ոսկանյանի «Թեթև, պարզ, դիպուկ, կարճաբան և պատկերավոր ոճը, նրա աֆորիզմների հանդուժմտածելակերպը, համարձակ, կտրուկ, շանթահարող և թունացայտ նրա գրիչը մեզանում գերազանցեց միայն Նալբանդյանը, մինչև Նալբանդյանի բեմելը ոչ մեկը հայ հրապարակախոսներից պայքարի դաշտ էր իջել Ոսկանյանի մարտական շուխուրդ»<sup>44</sup>:

Ստեփան Ոսկանյանի խմբագրական-հրապարակախոսական գործունեությունը թեև կարճատև եղավ, բայց նրա ներդրումը հայ մամուլի անդաստանում շատ նշանակալից էր: Նրա «Արևելքը» և «Արևմուտքը», գտնվելով ժամանակի հասարակական կյանքի պահանջմունքների բարձրության վրա, ինչ-որ տեղ չափանիշ են դարձել արևմտահայ դեմոկրատական լրագրության համար:

### «ՓԱՐԻԶ» (1860-1863)

Ստ. Ոսկանյանի «Արևելքից» և «Արևմուտքից» հետո «Փարիզը» երրորդ հայ պարբերականն է, որ հրատարակվել է Ֆրանսիայի մայրաքաղաքում: Նրա խմբագիրն էր Աբրահամ Մուրատյանը, որը արևմտահայ ընթերցողին ծանոթ էր Նիկոմիդիայում հրատարակած իր «Հայրենասեր» թերթով (1850-1853): Մուրատյանը բավականաչափ կրթված մտավորական էր, ծնվել էր Նիկոմիդիայում ուսուցչություն արած նշանավոր Մուրատ վարժապետի ընտանիքում:

<sup>44</sup> Աշոտ Գովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Ե., 1955, էջ 312:



Իր Հրատարակութեան Համար «Փարիզը» մեծապես պարտական էր Փարիզում Հանդիմանած արեւմտահայ լուսամիտ վաճառականների բարոյական և մտափոր աջակցութեանը: Դրա շնորհիվ Մուրատյանը 1860 թ. հունվարի 6-ին Հրատարակում է «Փարիզի» առաջին Համարը:

Իրրե խմբագիր, Մուրատյանը ունեցել է որոշակի Հասարակական Հայացքներ և մտափոր առնչութիւններ վերոհիշյալ առաջադեմ վաճառականութեան Հետ արտահայտելով առհասարակ գաղութահայ առաջավոր բուրժուադիայի ձգտումները: Ա. Մուրատյանը որդեգրել է ուրույն մի կոնցեպցիա, որը դարձանալիորեն տարողունակ էր արեւմտահայ բազմածալ իրականութեանը լուսարանելու և նրա զարգացման ընթացքը սեփական մեկնակետից բացատրելու Համար: Հրատարակվելով Փարիզում այս թերթը ամբողջովին նվիրվել էր արեւմտահայ իրականութեան խնդիրներին և արտացոլում էր այն, այս տեսակետից ամենեւին չտարբերվելով ժամանակի՝ Կ. Պոլսում և Չնչուսնիայում Հրատարակվող թերթերից:

Օսմանյան Թուրքիայի և Արեւմտահայաստանի կյանքի ցանկալի փոփոխութիւնների Հիմքում Մուրատյանը և նրա Համախոհները ամենից առաջ դնում էին եվրոպական դիտութեան ու լուսավորութեան յուրացման գաղափարը: Դրանով «Փարիզը» Հանդես էր գալիս որպես 1860-ական թթ. Հայ լուսավորական շարժման քարոզիչ, շարժում, որի սկզբնավորողներն էին Ն. Ջորայանը, Ն. Ռուսինյանը, Ստ. Ոսկանյանը, Ստ. Նազարյանը, Մ. Մամուրյանը և ուրիշներ:

Ա. Մուրատյանի կարծիքով, ազգային վերածնութեան Հիմք կարող է լինել միայն վաճառականութեան և առևտրի, արհեստների ու հողագործութեան զարգացումը, որը կհասցնի եվրոպական անտեսութեան Հետ սերտ կապեր ունեցող ազգային կապիտալի և արգյունարերութեան գործառույթին: Այլ կերպ ասած, Մուրատյանը ազգային վերածնութեանը չի պատկերացնում այլ կերպ, բան անտեսական, բարոյական ու մտափոր զարգացման եռամիասնութեամբ: Իր ընթերցողների մեջ Մուրատյանը առանձնացնում էր Հայ կրթված վաճառականութեանն ու մտափորականութեանը, որպես ազգի առաջատար ուժերի:

Ընդառաջելով Հայ ազգագ Հասարակութեան անտեսական ու մտափոր խնդիրներին «Փարիզը» դրանց լուծման նախօրինակը փորձում էր որոնել անցյալում: Հայ վաճառականութեան պատմութիւնը նա հաշվում է Հազար տարի պատմական Հետադարձ կարճ ակնարկներում Հիշելով Հայ առևտրի փառապանծ ավանդույթները: XVIII դ. Հայ առևտրի խմբումն ու անկումը

Մուրատյանը բացատրում է մի քանի պատճառներով, այդ թվում վաճառականների համագործակցության թուլությամբ ու տարերային գործելակերպով, որը միանգամայն անզոր էր որևէ բան հակադրելու եվրոպական մրցակցին կազմակերպված ու մեթոդիկ առևտրին: Եվ Մուրատյանը հղանում է տեսականորեն հնարավոր թվացող, բայց իրականում ֆանտաստիկ մի ծրագիր՝ միմյանց գործնական կապերով կապել աշխարհի բոլոր ծագերում գտնվող հայ վաճառականներին ոչ միայն ազգային ինքնագիտակցության ու բարոյականության ամուր շաղախով, այլև առևտրատնտեսական կապերով Արևմտահայաստանից մինչև Կ. Պոլիս ու Զմյուռնիա, Մերձավոր ու Միջին Արևելքից մինչև Եվրոպա, Ամերիկա և Աֆրիկա: Յրանսիայի մայրաքաղաքում նստած այս հայրենասեր գործիչը իրեն է վերապահում այդ վիթխարի աշխատանքի մեջ միջնորդ-ծանոթացնողի դերը: Այս նպատակով նա տպագրում է Եվրոպայում գործող հայ վաճառականների անուն-հասցեները: Նա տպագրում է Փարիզի և Վրեննայի, Մանչեստրի և Մարսելի հայ վաճառականների ցանկը, իր թերթում բաց է անում «Երթևեկությունք հայոց ի Փարիզ» խորագիրը դարձյալ նույն նպատակով:

Լավ գիտակցելով բուն հայրենիքում երկրագործության զարգացման նշանակությունը Մուրատյանը իր առջև գործնական խնդիր է դնում ըստ հնարավորին խթանել այդ զարգացումը գործնական հրապարակումներով: Դրան են հետամտում «Փարիզի» լրատվությունը անգլիական բամբակագործարանների, դրանց արտադրանքի, աշխատողների, հումքի ներմուծման և այլնի վերաբերյալ, ընդարձակ ծանոթությունները ֆրանսիական տնտեսությունից մասին, վիճակագրական տվյալների ըստ ամենայնի օգտագործումը և այլն: Մուրատյանը ընդգծում է ամենից առաջ Արևմտահայաստանի տնտեսությունը և տնտեսական հարաբերությունները ճանաչելու հարցի կարևորությունը: «Տաճկաստանի բամբակի բերքը» հոդվածում «Փարիզը» իրական տվյալներով ներկայացնում է երկրի բամբակագործական երբեմնի ծաղկած կենտրոնների քայքայումը: Համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ Օսմանյան թուրքիայի փոքրասիական մասը պատմականորեն ապացույցել է տեղական բամբակագործության և դրա վրա հենվող արտադրության զարգացման հնարավորությունը, իսկ հայ վաճառականության գործունեությունը այս մարզում կասկած չի թողնում ազգային ձեռներեցությունից մասին:

Մուրատյանը բազմական ճանաչում էր Թուրքիայի տնտեսությունը խոչընդոտող գործոնները, և այստեղից սկսվում է նրա ընդդիմությունը օսմանյան պետական կարգի դեմ: «Հարկ է, - գրում է նա, - որ երկրագործաց աշխատությունը պաշտպանվի տերութենեն, պետք է, որ փոխադրության միջոցներ գտնվին երկրին մեջ, որպեսզի երկրագործներուն պիտույքներեն ավելցած բերքերն ուրիշ տեղ փոխադրելը գյուրին լինելով ավելորդ բերքերնին ստակ բնել կարողանան և այսպես օգուտ տեսնելով քաջախելին» (1861, 15 փետրվարի): Նա նկատում է Թուրքական տնտեսական կործանարար քաղաքականությունը ապրանքային արտադրության զարգացման համար. մանր ապրանքարտադրողի ուժերը ջլատվում են հարկերի, պարհակների ու ապօրինի արտատնտեսական հարկադրանքի ծանրություն տակ: Մուրատյանը մի պահ այս վիճակից դուրս գալու ելքը տեսնում էր իր մեծարած վաճառականություն կարողությունների մեջ. առևտուրը այս պատճառով համեմատարար անկախ է, և նրա զարգացմամբ միայն կարող են կառուցվել ճանապարհներ, երկաթուղիներ և այլն: Ակնհայտ է «Փարիզի» խմբագրի առջև ծառայած փակուղին. մի կողմից նա ավտոնոմ դեր չի վերապահում առևտրին, սրա զարգացման հիմքում դնում է երկրագործությունը, բայց և մյուս կողմից, նկատելով այդ հիմքի չզոյությունը, կարվում է իր իսկ առաջադրած նախադրյալներից և ինքնուրույնություն վերագրում առևտրին ու վաճառականությունը: Արժեքավորը, սակայն, Թուրքիայի տնտեսության և տնտեսական քաղաքականության նկատմամբ թերթի քննադատական վերաբերմունքն է:

«Փարիզի» գործնական ծրագրի մի մասն էր կազմում Հայ գաղառում նորագույն երկրագործությունն ու արհեստներին նվիրված գրականություն տարածումը: Այս նպատակով նա առաջարկում է կազմել հրատարակչական մի բնկերություն, որով հետամտում էր գավառը ինչ-որ չափով փրկել տնտեսական քայքայումից: Ազգի մտավոր ուժերին կոչ անելով լուրջ ուշադրություն դարձնել գավառին Մուրատյանը աչքի առաջ ուներ այն քայքայող սոցիալական չարիքը գաղթը: Կ. Պոլսում նա հաշվում է 40.000-ի չափ պանդուխտ վանեցիկների, որոնք տառապում են անլույս ու անհրապույր խաներում, հետին չբավորության մեջ: Պոլսեցիներին նա առաջարկում է բավական ոտմանախի մի ծրագիր վճարել նրանց պարտքերը և վերագործնել Հայրենիք: Այստեղ ևս Մուրատյանը ապավինում է ազգային սիրո և գիտակցություն գործոնին: Այսուհանդերձ, ազգի հետամնացության և տնտեսական

Թշվառութեան պատճառները քննելիս Մուրաթյանը ի հայտ է բերում անվի-  
ճելի խորաթափանցութիւն: Հետամնաց միջավայրը նա նույնացնում է նաև  
ազգային բռնութիւնների հետ, բավական անսքող դատապարտում թուրքա-  
կան բռնակալութիւնը: Մի հայտնի չափով նա այդ բռնակալութեանն է վե-  
րագրում հայերի ներկա անմխիթար կացութիւնը: Այստեղից՝ բռնութեանը  
անմոռունջ շնթարկվելու և դրա դեմ ընդվզելու գաղափարը, որ կազմում է, ի  
դեպ, «Փարիզի» հայեցութեան կարևոր կողմերից մեկը: Եվրոպական և աս-  
մերիկյան մամուլից նա տպագրել է տեղեկութիւն՝ Վանում թուրք զինվոր-  
ների և հայ ազգաբնակչութեան ընդհարումների մասին: Լուրն, անշուշտ, չա-  
փազանցված է. երկու կողմից սպանվածները և վիրավորները թիվն, իրը, հաս-  
նում է հազարի: Խմբագիրը չլթաքցրած հպարտութեամբ գրում է. «Ուրեմն  
հայք տակավին իրենց նախնայաց մեկ նշանավոր հատկութիւնը դեռ պահած  
են» (1862, 28 փետրվարի):

Հայերի ազատասիրական ընդվզումները գնահատելու հարցում Ա. Մու-  
րաթյանը ազատամիտ և քաղաքակրթութեան խաղաղ զարգացման այդ ջա-  
տազույլը, դարձյալ ի հայտ է բերում բռնութիւններին բռնութեամբ ընդդի-  
մանալու իր համոզմունքը և այս հարցում միանգամայն համամիտ է իր  
թղթակցին՝ Ամերիկայում գործող նշանավոր հրատարակախոս-դեմոկրատ  
Խաչատուր Օսկանյանին: 1840-ական թթ. դեռևս ԱՄՆ տեղափոխված Խ. Օս-  
կանյանը «Ազգարար Բյուզանդյանի» երբեմնի խմբագիրը, այս ժամանա-  
կաշրջանում ԱՄՆ-ում աշխատակցում էր «Նյու Յորք հերալդ» թերթին և  
կանոնավորապես թղթակցում «Փարիզին»: Ուշագրավ է նրա մի թղթակցու-  
թիւնը («Հայու տղա» ստորագրութեամբ, որ նրա վաղեմի ծածկանունն էր),  
իտալական ազատագրական պայքարի մասնակից իշխանուհի Բելգիոզայի  
«Փոքր Ասիա և Սիրիա» գրքի մասին: Այստեղ իշխանուհին մեծարում է Փոքր  
Ասիայի հայերին, նրանց վեհանձնութիւնն ու ազատասիրութիւնը:  
Մինչդեռ Ադանայի փաշային տված իր այցի ժամանակ իշխանուհին տեսնում  
է հարուստ հայ վաճառականների, որոնք զարմացնում են նրան իրենց վախ-  
կոտ ու հաճկատար կեցվածքով: «Հայու տղան» այստեղ մի էական հավելում  
է անում երկչոտութիւնն ու վատութիւնը ոչ թե ազգի բնավորութեան զիծն  
են, «այլ ազգի առաջնորդ եղողներու կվերաբերի» (1862, 1 օգոստոսի): Առ-  
հասարակ Օսկանյանի հոգիվածները «Փարիզին» տալիս են պրոֆեսիոնալ  
հրատարակութեան նկարագիր, դրանք հազեցած են բազմակողմանի բովան-  
դակութեամբ և միշտ հրատապ արեմտահայութեան և ԱՄՆ-ում բնակվող

Հայերի համար: Ուշագրավ է Հայրենի եկեղեցու և կրոնի պաշտպանությունը նրա գրչով ընդդեմ բողոքական և կաթոլիկ միախններենների ոտնձգությունների: Է. Օսկանյանը շատ կարևոր ավանդ ունի ԱՄՆ-ում Հայերի մասին նպաստավոր հասարակական կարծիք ստեղծելու գործում: Բանավեճը նա հմտորեն ծառայեցնում է իր ազգակիցների մասին թյուր կարծիքները հերքելուն լինեն դրանք Հայտնողները ամերիկյան որոշ թերթեր, թե բողոքական կամ կաթոլիկ ոչ ուղղամիտ հրատարակությունները թուրքիայում: «Փարիզի» իր բնթերցողներին նա ծանոթացնում է ԱՄՆ-ի քաղաքական անցուղարձին, հանրապետականների ու ժողովրդավարների սկզբունքային տարբերություններին, ամերիկյան քաղաքացիական պատերազմի պատճառներին, հանդես գալիս իրրե սարկուիթյան վերացման ջերմ կողմնակից:

«Փարիզը» ձգտել է ըստ ամենայնի արձագանքել Կ. Պոլսի և Չմյուռնիայի ազգային, մշակութային ու հասարակական կյանքին, յուրովի մեկնաբանել դրանք: Ա. Մուրատյանի քարոզչությունը չունի որևէ «կուսակցական» նախադրություն, այլ ի սպաս է դրվում ազգի ընդհանրությունը իդեալական կացություն հայտարարելով ազգային միաբանությունն ու սերը: Սրանով հանդերձ, նա վարել է լրագրական որոշակի ուղեգիծ, որով էլ մեկնաբանել է արևմտահայ կյանքը: Թերթը ուշադրություն է դարձրել արևմտահայ սահմանադրության շուրջ ընթացող պայքարին, պաշտպանել է սահմանադրականներին և սահմանադրությունը համարել անիշխանությունը վերջ տվող իրավական ակտ: Այս հարցում նա չի հարում ո՛չ Սրվաճյանի «Մեղվին», ո՛չ էլ սահմանադրության արժատական հակառակորդներին, այլ իրեն հատուկ ազատամտությամբ սահման է դնում ծայրահեղություններին: Արևմտահայությունը նա կոչ է անում իրատես հայացքով նայել ոչ միայն ազգի ներքում կատարվող փոփոխություններին, այլև զուսպ և հեռատես լինել Բ. դասն հետ փոխհարաբերություններին մեջ: Հետու պահելով իրեն սահմանադրական թե՛ բախումներից Մուրատյանը երբեմն հակադրվում է «Մեղվին», երբեմն իր համամտությունը հայտնում նրան միշտ ընդգծված անկողմնակալություն ցուցաբերելով: Սակայն այնտեղ, որտեղ նկատելի էին զառնում բռնությունն ու հետադիմությունը, Մուրատյանը անվարան անցնում էր ազատախոհության կողմը: Անդրադառնալով գմյուռնահայ դադթախում իրեն սաղնապող հասարակական ներհակություններին Մուրատյանը կողմնորոշվում է դեպի գմյուռնահայ առաջադեմ երիտասարդությունը և սպազրում նրանց կրթոս հոգվածները սեղի առևտրական վերնախավի «ե-

ուպետ» աղաների կամայականությունների դեմ: Զմյուռնացի երիտասարդ գրագետների, նրանց «Միություն» հանդեսի դեմ ուղղված հալածանքներին անդրադառնալով՝ Մուրատյանը գրում է, որ ինքը կողմնակից է օրենքին և դատապարտում է բռնությունները: Լենց այսպիսի հավասարակշռված վիճակ էր հետամտում «Փարիզը» լուսավորության ու մշակութի գարգացման հեռանկարներին մեջ, որ ապահովելու էր ժողովրդի և նրա կառավարողների բանական ու գիտակցված փոխհարաբերությունը: Նա առհասարակ ակնածանքով է մտածում գիտության նվաճումներին: Մուրատյանը շատ մեծ նշանակութուն է տալիս հայագիտության գարգացմանը, պրոպագանդել է Փարիզի «Ասիական ընկերություն» գործունեությունը, նրա հայագրի անդամներին:

«Փարիզի» անկախ կեցվածքը ազգային մեծատունների նկատմամբ, Զմյուռնիայի եռապետների քննադատությունը և հասարակ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը հազիվ թե դուր գային Փարիզի նրա հովանավոր հայագրի վաճառականներին: Դժվար է այս հարցում որևէ որոշակիություն մատնանշել, համենայն դեպս, իրողությունն այն է, որ 1861 թ. սեպտեմբերին խզվեցին տպարանատեր Ճանիկ Արամյանի և Ա. Մուրատյանի փոխհարաբերությունները: Մուրատյանի թերթը լույս չի տեսնում երկու ամիս (սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին), ապա տեղափոխվում է նոր տպարան և հրատարակվում Վ. Լանդլուայի օգնությամբ: Հաստատ կարելի է սասել, որ «Փարիզը» վարում էր անկախ ուղեգիծ: Մ. Նալբանդյանի և «Հյուսիսսփայլի» վերաբերյալ նրա համակրանքը, Սինոզի կողմից վերջինիս նկատմամբ բռնությունների դեմ ուղղված բողոքը արգեն խոսում են այդ անկախության օգտին: Պատահական չէ, ի դեպ, որ «Փարիզի» հետ բանավիճոց Գ. Այվազովսկին, թեկուզ և հանիրավի, այդ թերթի ոճը նմանեցնում է «Նրկուտողի» «մեծաբանս սնոտեաց բարբառող» հեղինակի ոճին: Ինքը՝ Մուրատյանը, ծանոթ է եղել Նալբանդյանի գաղափարներին և, չբաժանելով դրանք, բարձր է գնահատել, սակայն, նրա նպատակը:

Մուրատյանի քարոզչության մեջ գրեթե միշտ նկատելի է կասկածը օսմանյան բռնակալության պայմաններում հայության՝ քաղաքակրթությանը առնչվելու, նրա արժեքներին տիրելու հնարավորության հանդեպ: Ազդի բարոյական միասնությունը նրան պատկերանում էր անհասանելի հեռուներում, աննշմար արդյունքներ էր տալիս ցաքուցրիվ հայ վաճառականներին ազգային կապերով միավորելու գաղափարը, որ խոստովանում էր Մու-

րատյանը: Այս պայմաններում «Փարիզի» խմբագրի Թափառող Հայացքը իր վրա պետք է բեռներ 1862 թ. Ձեյթունի հերոսական ինքնապաշտպանությունը: Ձեյթունն է դառնում Մուրատյանի քաղաքական ու ազգային երազանքների բարձրակետը, և այս իմաստով էլ պետք է գնահատել նրա վերաբերմունքը դեպի ոչ միայն Ձեյթունի իրադարձությունները, այլև ինքնակոչ իշխան Լեոն Լուսինյանի անձը: Թվում է, նրան առավել քան Հատաբբբում է Լուսինյանի մասին տեղեկություններ տվող իտալական թերթի խորհրդածությունը, թե լուրը վերաբերում է քաղաքակիրթ ազգերի շարքում գաստոզ մի ժողովրդի, որն արժանի է տերությունների ուշադրությանը:

1862 թ. սեպտեմբերից «Փարիզում» Հայտնվում է «Ձեյթունի անցքերը» նոր խորագիրը, և թերթը, իր խմբագրի քաղաքական ակնկալիքների Ձեյթունում Հայկական ինքնավարություն ստեղծվելու հեռանկարների համեմատ, Հայերի ինքնապաշտպանություն մասին տպագրում է Հարուստ լրատվություն: Այս խորագրի նյութերը մեծ մասամբ Կ. Պոլսի եվրոպալեզու և ֆրանսիական մամուլի արձագանքն ու մեկնաբանություններն են Ձեյթունի դեպրերի մասին: Թերթը տպագրում է Վ. Լանգլուայի «Պատմություն Լուսինյանց Կիլիկիո» աշխատությունը, Ս. Մ. Ժիրարդենի հոդվածը Ձեյթունի Հայերի մասին, նույն թեմայով Կ. վարդ. Շահնազարյանի հոդվածի արտատպությունը «Օպինիոն նասիոնալից» և այլն: Ֆրանսիական մամուլը եռանդով պաշտպանում էր ղեյթունյիների դատը: Ձեյթունում օսմանյան քաղաքականությունը «Փարիզը» համարում է բռնակալության ծայրահեղ դրսևորում «տգեա կառավարիչներն արդեն ժողովուրդը թշվառ պահել են ի գատ առենը մեյ մըն ալ կելնեն անոնց կոտորած մը կուտան» (1862, 10 հոկտեմբերի): Արեւմտահայ թերթերից թերևս ոչ մեկը այնքան բան չի արել եվրոպայում և բուն արեւմտահայ ընթերցող շրջաններում ղեյթունյիների պայքարի մասին Հասարակական համակիր կարծիք ստեղծելու գործում, որքան արեց «Փարիզը», և սա նրա խոշոր երախտիքներից մեկը պետք է համարել:

Ձեյթունի և Արեւմտահայաստանի ազատագրության հեռանկարների շուրջ մտորելիս Մուրատյանը աչքի առջև ուներ նաև այլ ազգերի շարժումները: 1863թ. մայիսին Մուրատյանը տպագրեց լեհական ապստամբությունը նվիրված հոդված հագեցած խորին համակրանքով առ «իր ազգային անկախությունը փափագող» լեհ ժողովուրդը:

«Փարիզը» գաղարկ է 1863 թ. կեսին: Հազիվ թե այդ դադարի պատճառները հարկ լինի որոնել նրա խմբագրի գաղափարական մեկուսացման մեջ: Ա. Մուրատյանը մշակութային արդասավոր հունգեր էր ցանկ ֆրանսիայի մայ-

բաքաղաքում և Ստ. Ոսկանյանի երկու պարբերականների հետ ստեղծել Հայամետ ալիսիսի միջավայր, որին կարող էր հրաժեշտ տալ միայն նյութական գործոնի ազդեցութամբ:

### «ԵՐԿՐԱԳՈՒՆ» (1863-1864)

Կարապետ Շահնազարյանը XIX դարի 50-60-ական թվականների լուսավորական մտքի ներկայացուցիչներից է, ժամանակի մշակութային և հասարակական անվանի գործիչներից մեկը:

Կարապետ Շահնազարյանը ծնվել է 1814 թ., Իրանի Համադան քաղաքում: Սովորել է էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, ապա Թիֆլիսի Արզանյանների մասնավոր վարժարանում: 1836 թ. ընդունվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանը: 1839-1842 թթ. պաշտոնավարել է էջմիածնի ժառանգավորաց դպրոցում, որպես տեսուչ և ուսուցիչ: 1843 թ. Շահնազարյանը Տաթևում ձեռնադրվում է վարդապետ: 1846 թ. տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ ներսես կաթողիկոսը նրան նշանակում է թեմական աստանի նախանդամ, հետագայում՝ Ներսիսյան դպրոցի խորհրդարանի անդամ, ապա՝ վերատեսուչ: 1850 թ. մեկնում է Կ. Պոլիս: Այստեղ Շահնազարյանը նշանակվում է Ղաթլիայի եկեղեցու քարոզիչ:

1853 թ. Շահնազարյանը տեղափոխվում է Փարիզ, որտեղ հետագայում հաստատում է իր տպարանը և սկսում «Շար Հայ պատմագրաց» մատենաչարի հրատարակությունը: 1857-1862 թթ. նա տպագրում է Ղեռնդ վարդապետի, Ստեփանոս Ասողիկի, Մովսես Կաղանկատվացու, Ստեփանոս Օրբելյանի, Ամբաստ Սպարապետի, Վահրամ Բաբունու և Թովմա Մեծովեցու աշխատությունները համառոտ ծանոթագրություններով: Իրաժամանակ հրատարակում է նաև իր աշխատությունները՝ «Դաշանց թղթի քննությունն ու հերքումը», «Ընդարձակ տեղագրություն Հայաստանի» և այլն: Շահնազարյանը ժամանակին ընտրվել է Փարիզի Արևելյան ընկերության, ինչպես նաև ձեմարանի խորհրդարանի անդամ:

Զեյթունի 1862 թ. ապստամբություն օրերին Շահնազարյանը մի հիշատակագիր է ներկայացնում Նապոլեոն 3-րդ կայսրին՝ նրա ուշադրությունը բեռնելով Կիլիկիայի հայերի վիճակի վրա: Այդ կապակցությամբ «Զեյթունի անցքեր» խորագրով հոդված է տպագրում «Փարիզ» թերթում, կազմակերպում է դրամական հանգանակություն՝ ապստամբներին օգնելու նպատակով:



1862 թ. օգոստոսին ԵաՀնազարյանին Մանչեստրի Հայ Համայնքը Հրա-  
չիրում է Անգլիա ստանձնելու տեղի Հայության Հոգևոր առաջնորդի պաշ-  
տոնը, ուր և նա մեկնում է 1863 թ. փետրվարին: Մանչեստրում նա սկսում է  
առարակել «Երկրագուռը» թերթը, որի առաջին Համարը լույս է տեսնում  
1863 թ. Հուլիսի 30-ին, իսկ վերջինը 30-րդը, 1864 թ. Հոկտեմբերի 4-ին, որից  
Հետո դրա Հրատարակությունը դադարեցվում է ԵաՀնազարյանի Հիվանդու-  
թյան պատճառով: Բուժման նպատակով 1864 թ. նա տեղափոխվում է նախ Ե-  
գիպոսու, ապա Պոլիս, որտեղ և վախճանվում է 1865 թ. օգոստոսին:

4. ԵաՀնազարյանին, որպես Հայ մտավորականության ներկայացուցչի,  
ընկանաբար, ամենից առաջ Հուզում էին Հայ Հասարակության զարգացման  
Հարցերը Ռուսաստանի և Թուրքիայի սոցիալ-տնտեսական կարգերի պայ-  
մաններում, երկրներ, ուր ապրում էր Հայության նշանակալից մասը: XIX  
դարի 50-60-ական թվականներին, երբ աշխատավոր զանգվածների դրու-  
թյունն ավելի ու ավելի անտանելի էր դառնում ֆեոդալական և կապիտալիս-  
տական շահագործման Հետևանքով, նրա Հայեցության մեջ առաջնահերթ  
նշանակություն է ստանում և առաջին պլան մղվում տնտեսական խնդիրը:  
Երկրագործությունը նա Համարում էր «մարդկային Հարստության առաջին  
սղբը», ապահով կյանքի անհրաժեշտ նախապայման: ԵաՀնազարյանը  
Հատկապես ընդգծում է, որ երկրագործությանը զբաղվելու դեպքում մարդիկ  
կվայելին ոչ միայն բարօրություն, այլև կՀասնեն քաղաքացիական ա-  
զատության: «Եթե Հայաստանի մեջ երկրագործությունն ծաղկի, - գրում է  
նա, - ... տարակույս չկա, որ 15-20 տարվան մեջ ժողովուրդն նյութական  
լիություն վայելի, և լիութենեն, Հայանի է, որ կծնանին ամեն քաղաքական,  
մտավոր և բնկերական բարիք» (1864, №16): ԵաՀնազարյանը ընդգծում էր  
նյութական գործոնի վճռական դերը և Համոզված էր, որ առանց տնտեսական  
Հարցի լուծման անհնար էր Հասնել քաղաքացիական բարօրության:

Երկրագործության զարգացումը լայն և նոր Հնարավորություններ էր  
ստեղծում նաև վաճառականության Համար: Հենվելով բուրժուական տնտե-  
սագիտական տեսությունների վրա նա նշում է, որ ազգին Հատկապես մեծ  
օգուտ կարող են տալ վաճառականական ընկերությունները: Որպես այդ  
ընկերությունների օգտակարության ապացույց, ԵաՀնազարյանն օրինակ է  
բերում Եվրոպայի և Ասիայի վաճառականներին, որոնք, ընկերություններ  
Հաստատելով, «գույցն աշխատությանը տիեզերաց ճոխությունն իրենց եր-  
կիրներն կբաշխեն» (1864, №14):

Շահնագարյանը առաջադրում էր նաև երկրագործական ընկերություններ, ուսումնարաններ հիմնելու խնդիրը: Եվ նա շատ ավելի նպատակահարմար էր գտնում դրամն օգտագործել այդ նպատակների իրագործման, քան եկեղեցի կամ խաչքար կառուցելու համար:

«Երկրագունդի» էջերում Շահնագարյանի արծարծած տեսակետները տնտեսական հարցերի վերաբերյալ պատահական երևույթ չէին հայ իրականություն մեջ: Դրանցից շատերն արդեն քննարկվել էին Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունում, արևմտահայ մամուլում, մասնավորապես՝ Ն. Զորայանի, Լ. Սըրվաճյանի, Մ. Մամուրյանի, Լ. Շիլմանյանի և այլոց հոդվածներում, 1860 թ. սեպտեմբերին 4. Պոլսում ստեղծված «Բարեգործական ընկերություն» հայտարարությունում և այլն:

Ժողովրդին թշվառ վիճակից դուրս բերելու և նրա առաջադիմություն գործում Շահնագարյանը որոշիչ նշանակություն էր տալիս լուսավորությունը: Մեջբերելով Թուսսոյի և Լայբնիցի խոսքերն ազգային կրթության նշանակության մասին՝ նա գրում է. «Միևնույն խոսքն մեք ալ կկրկնեմք մեր սիրելի ազգայնոցն. «կրթեցե՛ք մեր զավակներն, և ահա՛ 15-20 տարվան մեջ մեր ազգն կերպարանափոխ կըլլա. քանզի գիտությունն ամենայն բարյաց աղբյուր է, իսկ անգիտությունն՝ ամենայն չարյաց ծնող» (1864, № 3): Նրա խորին համոզմունքն է, որ որքան տգետ է հպատակ ազգը, այնքան ավելի ամուր է նրան սեղմող բռնակալական լուծը: Այդտեղից հետևում էր, որ կրթությունը, լուսավորությունը ժողովրդին կընձեռենին ազատագրման հնարավորություններ:

4. Շահնագարյանին խիստ մտահոգում էր հայ ժողովրդի չափազանց հետամնաց վիճակը, որի մեջ էական փոփոխություն չէին կարող մտցնել մի քանի բացառիկ ուսյալ անհատներ: Նա համոզված էր, որ միայն համընդհանուր, համազգային լուսավորությունը կարող էր արդյունավետ և օգտակար լինել ժողովրդի համար: Այդ պատճառով էլ անհրաժեշտ էր համարում ամենուրեք ծավալել ազգային լուսավորություն գործը: Սակայն նա չկարողացավ հաղթահարել լուսավորականության պատմական այն սահմանափակությունը, որը ենթադրում էր մարդկանց վիճակների մեջ եղած տարբերությունը վերացնել դաստիարակության և կրթության միջոցով: Այնուամենայնիվ, չնայած այս հանդամանքին, Շահնագարյանի լուսավորական-դեմոկրատական մտայնությունը առաջադիմական երևույթ էր ժամանակի հասարակական մտքի զարգացման պայմաններում:

Ելնելով ազգի դաստիարակութեան, լուսավորութեան խնդիրներէց Շահնազարյանը մեծ տեղ էր տալիս լրագրի հրատարակութեանը, քանի որ մամուլը նպաստում էր հասարակութեան առաջընթացին, ստեղծում հասարակական կարծիք, որից վախենում էին անգամ հզոր բռնակալները: Չեռնամուխ լինելով «Երկրագունդի» հրատարակութեանը, նա գտնում էր, որ այն պետք է «ժողովրդի էական պետքերը ճանաչի և անոնց ծառայի բարոյական սերմեր, ազգասիրական ոգի, ազատութեան սեր և կարևոր հմտություններ տարածելով» (1864, №19): «Երկրագունդը» նա համարում էր ազգային և ազատ լրագիր, որը միշտ պատրաստ էր արձագանքել ազգի շահի դեմ գործած անիրաւություններին, ինչպես նաև նրա օգտին կատարված բարերարություններին: «Երկրագունդն» անխնա պայքարելու էր բռնութեան, հարստահարութեան և օրինազանցությունների դեմ, ով էլ լինէր դրանց գործողը՝ բարձրատիեան հոգևորական, թե պաշտոնյա աշխարհական: Շահնազարյանը գիտակցում էր, թե որքան մեծ պատասխանատւություն էր վերցրել իր վրա հանձն առնելով «Երկրագունդի» խմբագրումն ու հրատարակումը. դա իրեն հնարավորություն էր տալիս գործելու անհամեմատ ավելի ազատ պայմաններում Թուրքիայի և Ռուսաստանի իր հայազգի պաշտոնակիցների համեմատութեամբ, որոնք գտնվում էին միապետական գավազանի ազդեցութեան տակ:

4. Շահնազարյանը ժամանակի հայ իրականութեան մեջ առաջադիմական, օգտակար թերթերի շարքում առաջին հերթին նշում էր Ն. Սըվաճյանի «Մեղուն», որն արեւմտահայութեան ամենաառաջադիմական, դեմոկրատական պարբերականն էր: «Երկրագունդի» էջերում անհատ պայքար էր մղվում սեպտիմոն-պազանոզական պարբերականների «Մեծմուսի», «Ջոհայի» և «Երեակի» դեմ:

«Երկրագունդի» հրատարակման կապակցութեամբ Շահնազարյանն անդրադարձել է աշխարհաբարի և դրարարի հիմնահարցին: Իր պարբերականի առաջին համարում տպագրված հայտարարութեան մեջ նա գրում է, որ լրագիրը կշարադրվի աշխարհաբարով, քանի որ դա էր ժողովրդի համար հասկանալի և բնդունելի, իսկ «մեր թարգմանչաց լեզուն աստվածապաշտութեան և սրբազան ճոխարանութեան կպահանջ» (1863, №1):

4. Շահնազարյանը, ազգային առաջադիմութեան գործում որպես վճռական գործոն բնդունելով լուսավորությունը, դրա հետ մեկտեղ չէր բացառում ժողովրդի գինված պայքարը՝ բնդեմ հարստահարութեան և ստրկացման: Լիովին արդարացնում էր ժողովրդական շարժումները, որոնք ուղղված էին հակաժողովրդական քաղաքականություն վարող կառավարությունների դեմ:

Նա գտնոււմ էր, որ այնտեղ, ուր կա արդար օրենք և օրինավոր իշխանութիւն, յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է նեցուկ և պաշտպան լինել նրան: Եվ պարտավոր է ընդհակառակը. «ուր ոչ արդար օրենք կա և ոչ օրինավոր իշխանութիւն, ոչ ապաքեն ամեն մարդ, իհարկե ստիպյալ, իր ընչից և պատվո և կենաց պաշտպանելու պարտական է և կատարյալ իրավունք ունի: Ո՞վ կարե այս բնական, համաշխարհական և հավիտենական օրենքս ջրել» (1864, №24):

4. Ծահնագարյանն այս կապակցութեամբ արդարացնում է նաև ընդհատակյա ընկերութիւններին գոյութիւնը: Եվ նա կոչ է անում պայքարել ոչ թե դրանց, այլ այդ ընկերութիւնները ծնող պատճառների դեմ: Այդ առիթով նա քննադատութեան նշանախեց է դարձնում պոլսահայ ամիրայութեան և կղերականութեան գաղափարախոս Լ. Չամուռճյանին, նրա թարգմանած և ծանոթագրած «Սորհուրդ գաղտնի ընկերութեանց» աշխատութեան հետադիմական գաղափարախոսութիւնը: Ծահնագարյանը համոզված է, որ այդ ընկերութիւնները կգոյատևեն այնքան ժամանակ, քանի դեռ չեն հաստատվել ազատութիւնն ու արդարութիւնը: Նա գաղտնի ընկերութիւններ ծնող պատճառ համարում էր բռնութիւնը (1864, №12):

4. Ծահնագարյանը գիտակցում էր լուսավորչկան կրոնի նշանակութիւնը, որպես հայ ժողովրդի համախմբման և հարատևման գլխավոր գործոն: Հայ եկեղեցու հեղինակութիւնը բարձրացնելով նա աշխատում էր խոչընդոտել միախոններնեի քարոզչութիւնը, որը հետամտում էր ժողովրդի հոգևոր միասնութեան խարխլումը: Սորապես ըմբռնելով այս հանգամանքը՝ «Երկրագունդի» խմբագիրն անհաշտ պայքար էր մղում հայ ժողովրդի կրոնափոխութեան, հայ եկեղեցու կաթոլիկ կամ բողոքական եկեղեցիներին ազդեցութեանը ենթարկվելու դեմ: Այդ նպատակով նա իր պարբերականի մի շարք համարներում տպագրում է «Հիսուսյաններ» վերտառութեամբ հոդվածաշարը (1864, № 11, 12, 15), որտեղ աշխատում է ցրել ժողովրդի մեջ տարածված այն պատրանքը, թե իբր բողոքականութիւն կամ կաթոլիկութիւն ընդունելով նրանց դրութիւնը կբարելավվեր, նրանք կվայելեին եվրոպական տերութիւններին հովանավորութիւնը: Իբրև իր ասածի ապացույց, նա մեջ է բերում 1856 թվականի Փարիզի դաշնագրի այն հատվածը, որով թուրքիայում քրիստոնյա տերութիւններին մասնավոր պաշտպանութիւնը վերացվում էր, և նրանք «հավաքաբար միայն և անխտիր ամեն քրիստոնյա ժողովրդոց պաշտպանութիւն ընելու կարող են» (1864, №11):

Ընդունելով Հայ եկեղեցին, լուսավորչական կրոնը որպես Հայ ժողովրդի ազգայազարանման հիմնական միջոց, Շահնազարյանը միաժամանակ խիստ քննադատություն է ենթարկել հոգևորականությանը, ժողովրդի շահերին չհամապատասխանող նրա վարքագիծը լինի հասարակ քաշանա, թե կաթողիկոս (1864, №9):

Շահնազարյանը ազգությունը էլը դիտում իրեն սոցիալապես միատարր երևույթ: Նա տարբերակում էր մի կողմից մեծատուններ, մեծահարուստներ, իշխանավորներ, իսկ մյուս կողմից հասարակ ժողովուրդ, ընդ որում հասկանալով և ընդգծելով դրանց շահերի և նպատակների հակադրությունը: «Երկրագունդի» խմբագրին մեծ ցավ էր պատճառում այն փաստը, որ տերությունները, ժողովրդի դառն տքնության արդյունքները հավաքելով, փոխանակ նանապարհներ, կամուրջներ, աղքատանոցներ, որբանոցներ, դպրոցներ կառուցելու, «պղնձագին նավեր, շերտավոր հրազեններ, երկաթապատ բերդեր բազմացնելու կաշխատին» (1864, №13): Շահնազարյանը դառնություն է խոսում այն մասին, որ Եվրոպայի և Ասիայի «փառամուլ» թագավորները, վարելով նման քաղաքականություն, օրեցօր ավելի էին ծանրացնում ազգի «գերություն շղթան» (1864, №14):

4. Շահնազարյանը, ազգության խնդրի հետ կապված, հատուկ նշանակություն էր տալիս տարբեր ազգերի փոխհարաբերության հարցին: Խարազանելով ազգային խտրականության քաղաքականությունը, նա պաշտպանում է բոլոր ժողովուրդների իրավահավասարության սկզբունքը, նրանց անկախ գոյություն և զարգացման իրավունքը համոզված, որ միմյանց ճնշելով, Հարստահարելով ազգերը երբեք չեն հասնի բարօրության: Եվ ազգերի համար շատ ավելի նպատակահարմար է գտնում համաձայնության գալ ոչ թե «հրանոթով և սփինով», այլ «բանավոր արամարանություն» և իրավախոհություն» (1864, №17):

4. Շահնազարյանը գտնում է, որ ազգերը կամա թե ակամա մասնակից են մյուս ազգերի թե՛ զժբախտությունը և թե՛ բարօրությունը իրենք էլ ինչ-որ չափով ազդելով դրանց վրա: Այդ իսկ պատճառով նա յուրաքանչյուր ազգի բարեկեցություն անհրաժեշտ պայման է համարում նրա բարի կամեցողությունը հարևան ժողովուրդների նկատմամբ: Մեծ նշանակություն տալով ազգերի փոխօգնությունը գրում է. «Արդ մեք այժմ տկար դուրով, հարկ է, որ մեր կարեկցությունը մեզ պես տկարաց նվիրենք, որպեսզի մեք ալ այլոց կարեկցությունն արժանանանք. կեցցե իրավունք, կորիցեն անիրավությունք, Հափշտակողք և բռնավորք» (1864, №22):

4. Ծահնազարյանը, անդրադառնալով պետութլույնների ղեկավարների վարած արտաքին քաղաքականութլյանը, ընդգծում է, որ այն հարմարեցվում է երկրում իշխող վերնախավերի շահերին: Դատափետելով Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Պրուսիայի վարած գաղութլային քաղաքականութլույնը, ազգային խտրականութլույնը, պաշտպանում է բոլոր ժողովուրդների անկախ գոյութլյան և զարգացման իրավունքը: Նա արդարացի և անհրաժեշտ է համարում ճնշված ու հարստահարված բոլոր ժողովուրդների իտալացիների, լեհերի, դանիացիների, աֆրիկացիների և այլոց ազգային-ազատագրական պայքարն ընդդեմ բռնակալների ու գաղութարարների հանուն ազատութլյան ու անկախութլյան:

4. Ծահնազարյանին, որպես հայ մտավորականութլյան ներկայացուցիչ, բնականաբար ամենից առաջ հուզում էր հայ ժողովրդի ծանր վիճակը, որը տառապում էր ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի տիրապետութլյան տակ:

Նա մանրամասնորեն անդրադարձել է Թուրքիայի հայութլյան ծանր վիճակին և ներքին կյանքին: Հայ ժողովրդի նկատմամբ Թուրք պաշտոնյաների, քրդերի գործած անիրավութլույնների, դաժանութլույնների, հարստահարութլույնների, նույնիսկ սպանութլույնների վերաբերյալ «Երկրագունդում» պարբերաբար հոդվածներ էին տպագրվում, որոնց լրատվութլույնը ուղարկվում էր Վանից, Կարսից, Տիգրանակերտից, Կ. Պոլսից (1864, №8, 9, 19, 22, 25, 27): Ծահնազարյանը համոզված էր, որ այդ օրինազանցութլույնները կատարվում են Թուրքական կառավարութլյան գիտութլյամբ և հովանավորութլյամբ, որի ջրաղացին ջուր էին լցնում նաև որոշ հայ խոշոր պաշտոնյաներ, և որոնց արգահատանքով էր բնութագրում Թերթի էջերում:

4. Ծահնազարյանը, իր «Երկրագունդ» լրագրում բավական հանգամանորեն անդրադառնալով հայութլյան ծանր վիճակին, չի հաշտվում ստեղծված իրավիճակի հետ և չի կորցնում հույսը տեսնել իր հայրենիքը ազատ ու անկախ, իսկ ժողովրդին ինքնիշխան ու երջանիկ: Հենց դա էլ նա համարում է իր քաղաքական սկզբունքը:

Իսկ ինչպե՞ս էր նա պատկերացնում օտարի տիրապետութլույնից հայ ժողովրդի ազատագրումը: Այդ կապակցութլյամբ անդրադառնում է այն աղերսագրերին, որ ժողովուրդն իր վիճակի բարելավման հույսով ուղղում էր ազգային պատրիարքարանին կամ սուլթանական կառավարութլյանը: Եվ Ծահնազարյանը համոզված է, որ Թուրքական իրականութլյան պայմաններում նման միջոցներով անհնարին էր որևէ արդյունքի հասնել: Հայերը, նրա կար-

ծիրքով, պետք է բռնությունը «զենքով վանեն», «արով և հրացանով» (1864, №24):

4. ԵաՀնագարյանն օտար լծից հայ ժողովրդի ազատագրման, նրա ինքնուրույնության և միասնության վերականգնման միակ ելքը համարում է զինված պայքարը: Եվ այս գաղափարով իր հայրենակիցներին ոգեշնչելու համար նա օրինակ է բերում V դարի հայ ազատագրական շարժման խոշոր գործիչ Վարդան Մամիկոնյանին, որը իր հայրենիքի ազատագրման միակ ճիշտ միջոցը համարեց զինված պայքարը և ինքն էլ գլխավորեց այն: «Թեև հայրենյաց սաշտպանության համար մղված ճակատին մեջ անկավ. այլ Հայությունն և հավատքն անոր սուրբ մահվամբն փրկվեցան», - գրում է նա: ...Սեցցե Հայաստան. - նորոգություն Հայաստանի. - Սեցցեն Հայոց վերածնության ճշմարիտ մշակներն. - Միաբանությունն բաժանյալ Հայոց» (1864, №2):

4. ԵաՀնագարյանը լրացնում էր մեր այն լուսամիտ մտածողների ջոկատը, որոնք ժամանակի կարևոր, հրատապ խնդիրների ու հիմնահարցերի լուծման գործում հրապարակ էին իջնում դեմոկրատական և արմատական գիրքերից:

## Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

### Հ Ա Յ Դ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

#### X I X Դ Ա Ր Ի

### Վ Ե Ր Զ Ի Ն Ե Ր Ե Ս Ն Ա Մ Յ Ա Կ Ի Ն

#### Չ Լ ՈՒ Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

### Ա Ր Ե Վ Ե Լ Ա Ր Ա Յ Ա Չ Ա Ս Ա Մ Ի Տ Մ Ա Մ Ո Ւ Ը

XIX դարի 70-ական թվականները Անդրկովկասում հատկանշվում են կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացմամբ: Թեև բուրժուական ռեֆորմներն այստեղ փոքր-ինչ ուշացումով հասան և համարժեք գործադրում չստացան, ինչ Ռուսաստանում, այդուհանդերձ, դրանք խթանեցին նոր հարաբերությունների զարգացումը նաև կայսրության ծայրամասում: Փոթի-Թիֆլիս (1872), Թիֆլիս-Բաքու (1883) երկաթուղագծերի և այլ ճանապարհների կառուցումը թելադրված էր կապիտալիստական ձեռնարկությունների երևան գալով: Հայ դրամատերերի առևտրական կապիտալի համար գործադրության նոր ոլորտ բացվեց, ուր նրանք սկզբում վեհերոտ, իսկ ապա ավելի համարձակ մուտք գործեցին: Լեռնահանքային և նավթարդյունաբերության մեջ նրանց վիճակված էր ծանր մրցակցություն օտարերկրյա կապիտալիստների հետ՝ հանձինս Բաքվում հաստատված շվեդ Նորել եղբայրների, Ֆրանսիացի Ռոտշիլդի, Գետաբեկի պղնձահանքերում գերմանացի Սիմենս եղբայրների և այլն: Ապրանքային դարձավ գյուղատնտեսական արտադրանքը. երևան եկան բամբակազտիչ, մետաքսի, կաշվի, օղու, կոնյակի, գինու և այլ գործարաններ: Հայ բուրժուազիան իր գերակշիռ մասով զարգացավ նախ Անդրկովկասի արդյունաբերական գլխավոր կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և ապա նոր բուռն Հայաստանում, որտեղ ֆեոդալիզմի մնացուկներն ավելի ուշ տեղի տվեցին բուրժուական հարաբերությունների առջև:



Սոցիալ-տնտեսական տեղաշարժերը հասարակական միտքը բեռնացրին, դադարաբաշխական սուր պայքար ծավալվեց երկրի զարգացման ուղիների հարցի շուրջ: Նրանք, ովքեր անգերապահորեն ընդունեցին կապիտալիզմի զարգացման եվրոպական ուղին, համարադրվեցին հասարակական մտքի լիբերալ հոսանքի բանակում: Եվրոպական քաղաքակրթությունը չմեծող, սակայն նրանվաճումները յուրացնելուն զուգընթաց ազգային առանձնահատկությունները պահպանելու, տեղական շահերի նախանձախնդիրները խմբավորվեցին ազգային-պառնակաճողականություն՝ դրոշի տակ: Բուրժուական այս երկու հոսանքների հանդիման կանգնեց ազգային դեմոկրատիան, որն արտահայտում էր կապիտալիզմի զարգացումից տուժող շերտերի գյուղացիական զանգվածների և արհեստավորությունների շահերը, աչքի էր ընկնում նոր հարաբերությունների քննադատությունը:

XIX դարի հայ քաղաքական կյանքի համար նշանակալից իրադարձություն եղավ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Հայերի ռուսական կողմնորոշումը դորացավ սնունդ առնելով ռուսական զենքի օգնությունը ազատագրվելու հույսից: Ազգային-ազատագրական պայքարը, կամավորական շարժումը արեմտահայությունը թուրքական անարգ լծից ազատագրելու համար, աննախադեպ թափ ստացան: Պատերազմի հետևանքով քաղաքական շրջանառություն ստացավ Հայկական հարցը: Սակայն եվրոպական մեծ տերությունների և մասնավորապես Անգլիայի ջանքերով ռուսական զենքի հաղթանակի պտուղները նվազագույնի հասցվեցին: 1878 թ. հունիսին Բեռլինի վեհաժողովում Արեմտյան Հայաստանի ինքնավարությունից հրաբերված Մ. Խրիմյանի ղեկավարած պատվիրակության խնդրքը մնաց անհետևանք, զրա փոխարեն առաջարկվեց 61-րդ հեղհեղուկ կեսը բարեփոխումների անորոշ ձևակերպումով, որը և դուռ բացեց հայերին բնաջնջելով Հայկական հարցը «լուծելու» թուրքական իշխանությունների բիրտ քաղաքականության առջև:

Բեռլինի վեհաժողովից հետո և մանավանդ Ալեքսանդր 3-րդի գահակալությունը սկսված ուսուցիչայի պայմաններում հայ ազատագրական շարժումը նոր փուլ մտավ. ազգային ինքնագիտակցությունը հասավ սեփական ուժին ապավինելու, ազատությունը ղենքով նվաճելու անհրաժեշտությունը մրսնմանը: 1880-ական թթ. սկզբներին ստեղծվեցին Կարինի «Պաշտպան Հայրենյաց», Վասպուրականի «Արմենական», Մոսկովայի հայ ուսանողություն «Հայրենասերների միություն», Երևանի «Հայասեր-ազգասեր»

կազմակերպուեթյունները: Թիֆլիսում կազմակերպվեց Գրիգոր Արծրունու խմբակը, որի անդամներից էին Ռաֆֆին, Գ. Սունդուկյանը, Բ. Նավասարդյանը, Ա. Թոխմախյանը, Գ. Տեր-Ասատուրյանը և ուրիշներ: Խումբը կապերի մեջ էր վերոհիշյալ կազմակերպուեթյունների հետ: Ծիշտ է, ազատագրական պայքարի այս վերելքը չարգասավորվեց արևմտահայուեթյան ազատագրուեթյան կետ-նպատակը միասնական ծրագրով, շարժման տարեբայնուեթյունը հաղթահարելու և կազմակերպված պայքարով իրականացնելու իրողուեթյամբ, բայց այն մեծապես խթանեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցուեթյան զարգացմանը: Հասարակական հոսանքների պայքարը նախապատրաստեց և հանգեցրեց նոր փուլի՝ քաղաքական կուսակցուեթյունների ձևավորմանը:

### «ՄՇԱԿ» (1872-1892)

XIX դարի 70-80-ական թվականների հասարակական-քաղաքական կյանքում նշանակալից դեր խաղաց «Մշակ» թերթը, որը տարեգրեց հայ ժողովրդի զարգացման բուրժուադեմոկրատական շրջանը և կապիտալիստական հարաբերուեթյունների մուտքը հայ իրականուեթյուն: Թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին ժամանակի պատգամախոսն էր:

Արծրունին ծնվել է 1845 թ. , Մոսկվայում: Նա սերում էր իշխանական գերդաստանից: Պապը՝ Գևորգ աղա Արծրունին, 1813 թ. Վանից տեղափոխվել էր Թիֆլիս, ընդունել ուսաստակուեթյուն: Թե՛ Արծրունու պապը և թե՛ հայրը՝ գեներալ Երեմիա Արծրունին, աչքի են ընկել իրենց ազգասիրական գործունեուեթյամբ: Հետագայում Երեմիա Արծրունին դարձել է Թիֆլիսի առաջին քաղաքագլուխը, իսկ մայրը՝ իշխանուհի Ագրիպինան, վախճանվել է շատ վաղ, երբ որդիները դեռ մանուկ հասակում էին: 1858 թվականից Արծրունիները ապրում էին Թիֆլիսում: Եղբոր՝ Անդրեասի հետ Գրիգորը 1863 թ. ավարտում է Թիֆլիսի գիմնազիան և ապա ուսումը շարունակում նախ Մոսկվայի, ապա Պետերբուրգի համալսարանի բնագիտական ֆակուլտետում: Վերահաս հիվանդուեթյունը՝ թոքախտը, նրան տանում է Նիցցա միաժամանակ ստեղծելով ոչ միայն բուժվելու, այլև եվրոպական կրթուեթյուն ստանալու փափագելի իդեի իրականացման հնարավորուեթյուն՝ Յուրիխ, Ժնև, Հելզելերբերգ, Փարիզ, Վիեննա քաղաքներում: Նա ստանում է քաղաքատնտեսուեթյան և փիլիսոփայուեթյան դոկտորի աստիճան, Մխիթարյան-

ների մոտ կատարելագործում Հայերենի իմացությունը և վերադառնում Հայրենիք նրան ոգտակար լինելու անկոտրում որոշումով. նա արդեն ընտրել էր իր գործունեությունը բնագավառը՝ լրագրությունը: Եվրոպայից թղթակցելով Թիֆլիսում լույս տեսնող «Մեղու Հայաստանի» թերթին և «Հայկական աշխարհ» ամսագրին՝ նա իր Համար արդեն ստեղծել էր խոստումնալից և շնորհալի Հրատարակատեսի Համբավ:

«Հայկական աշխարհում» նա արդեն խնդիր էր դրել «գտնել ընդհանուր կրթություն տարածելու մի գորեղ միջոց, որ մեկներ, պարզեր ժողովրդին Հասարակական և քաղաքական երևույթները, մի միջոց, որ ուղղություն տար Հասարակական կարծիքին» (1870, №5): Ժողովրդի լուսավորության և ինքնանաճման այդպիսի միջոց նա Համարում է քաղաքական ակտիվ լրագիրը և ձեռնամուխ է լինում նրա ստեղծմանը: Արծրունիների ընտանեկան Համարություններում ծնվում է խմբագրական կորիզը: Երիտասարդ Գրիգորի զազափարին Համանություն ևն տալիս և աջակցություն խոստանում Միհրդատ Ամերիկյանը, Գեորգ Չաչկյանը, Պողոս Իզմայիլյանը, Վասիլ Շահ-վերդյանը, Գարրիել Սունդուկյանը, Պերե Պոռչյանը, Ստեփանոս Պալասանյանը, իսկ երբ խմբին միանում է նաև պարսկաստանցի երիտասարդ Հակոբ Մելիք-Հակոբյանը, ազագա նշանավոր դրող Բաֆֆին, ապա խմբագրական մարմինը ձևավորված կարելի էր Համարել: Նախ 1871 թ. դեկտեմբերին Հրատարակվում է թերթի ծրագիրը՝ կրթական թերթի նմանությամբ կազմված, նրա անվան Մշակ, բացատրությամբ: «Մշակը» գալիս էր ակոսելու Հայ Հասարակական մտքի անդաստանը, իրրե մտավոր մշակ: Թերթի առաջին Համարների առաջնորդող Հոդվածները, որոնք գրում էր խմբագիր Գր. Արծրունին, գծում ևն նոր օրգանի ուղղությունը. խմբագիրն այն բնութագրում է որպես բնական-մտրակողական:

«Մշակի» առաջին Համարի 1872 թ. ամսնորյա առաջնորդող խորհրդանշորեն վերնագրված «Երեկ, Այսօր և Էլզուց», փաստորեն շեփորում է Ֆեոդալիզմի նկատմամբ կապիտալիստական նոր Հասարակարգի Հաղթանակի պատմական անխուսափելիությունը այդպիսով «Մշակին» վերապահելով վերելքի շրջան ապրող Հայ բուրժուազիայի խոսարեանի պաշտոնը: Արծրունին խնդիր է գնում մամուլը մոտեցնել կյանքին, Հուզել կենսական-գործնական խնդիրներ, վերացական լուսավորական քարոզը փոխարինել պոլիտիկատական սոցիոլոգիայի և դրական գիտությունների պահանջներին Համապատասխան կյանքը վերանորոգելու առաջադրությամբ:

Արժրուենին «Մշակը» դիտում էր «Հյուսիսսփայլի» հետևորդ ու հետևորդ, ամեն առիթով խնկարկում մեծ նախորդների նազարյանի ու նալբանդյանի գործը: Համար առ համար Արժրուենին սրում է ազգային ինքնաճանաչման, նոր ժամանակների հետ համաքայլ ընթանալու, ինքնաքննությունը սեփական արատներից ազատազրկելու, բարոյապես կատարելագործվելու և այլ պահանջներ, լրագրի միջոցով դրանք դարձնում հասարակական քննարկման նյութ:

«Մշակի» շուրջը համախմբվեց Հայ մտավորականության այն մասը, որը, կրթություն ստանալով եվրոպայում, հայրենիք էր վերադարձել եվրոպական կենսափորձը հայկական կյանքին պատկաստելու անկոտրում ցանկությունը: Հայ իրականության մեջ ևս, ինչպես ուսականում, գործեց արևմտականների մի սերունդ, և Արժրուենին, կարելի է ասել, դարձավ Հայ արևմտականների առաջնորդը. նա «Մշակի» խնդիրը համարեց պրոպագանդել եվրոպական կյանքի այն ձևերը, հաստատությունները, շարժումները, որոնք կօգնեին վերափոխելու Հայ կյանքը ըստ քաղաքակրթության պահանջների և Հայ ժողովրդին կանգնեցնելու աշխարհի կրթված և լուսավոր ժողովուրդների շարքում:

Արժրուենին լիբերալ-ոեֆորմիստական մտահայեցություն ուներ: «Մշակի» ծրագիրը սահմանափակվում էր բուրժուադեմոկրատական ազատությունների և բուրժուական պառլամենտարիզմի պաշտպանությունը: Փաստելով հանդերձ եվրոպական հասարակության բնեռացման և դասակարգային հարաբերությունների սրման իրողությունը «Մշակը» փայտայում է միասնական համերաշխ ազգի իդեալը, դատապարտում ուղիղության ու գաղութատիրական քաղաքականությունը, երազում հաշտ ու խաղաղ մարդկություն: Պետական օեֆորմներով կարգավորվող խաղաղ կուլտուրական զարգացում, դասակարգերի հաշտեցում, - սա է «Մշակի» տեսարանների հավատահանգանակը:

Արժրուենու պատմահայեցությունը ելնում էր այն սխեմայից, ըստ որի մարդկությունը զարգացումը անկասելի առաջընթաց է, որի շարժիչ ուժը առաջադիմության ու հետադիմության պայքարն է: «Մշակի» տեսարանները դրվատում են այն կուսակցություններին ու գործիչներին, որոնք ընդառաջ են գնում հանրապետական պառլամենտարիզմին: Չհամակրելով սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսությունն ու պայքարի եղանակները Արժրուենին դատապարտում է նաև սոցիալական շարժումները բռնություններ, «բացա-

«իկ օրենքներով» նշելու Բիսմարկի քաղաքականությունը: Ուշագրավ է, որ Ներսեսիայի պատմական զարգացումը իր անընդմեջ Հեղափոխություններով Հակադրելով Գերմանիայի խաղաղ զարգացմանը Արծրունին գերադասում է կապիտալիզմի զարգացման պրուսական ուղին. նրա կարծիքով Հեղափոխությունը և ազատությունը «Հակառակ սկիզբներ են, միմյանց Հակասող գաղափարներ» (1875, №4):

Ներսեսիան իր քաղաքակրթական ողջ նվաճումներով Հայ ընթերցողին է ներկայանում 1889 թ., երբ Արծրունին մասնակցում է գրողների միջազգային վեհաժողովին: Փարիզից Հոլանդ նրա նամակները (1889, № 69-85) և Թիֆլիսում գրած «Տպագրությունները» (№ 94, 95) եվրոպական քաղաքակրթականների խայծն են ցուցադրում իր ողջ գայթակղությունը: Թեև եվրոպական երկրների անունները մշտապես տեղ են զբաղեցնում «Մշակի» արտաքին տեսություններում, սակայն զրանց մեջ կա մեկը, որի նկատմամբ Հիացմունքն անվերապահ է. դա Շվեյցարիան է, որն իր կոնֆեդերատիվ կառուցվածքով, Համայնքների իրավահավասար փոխհարաբերությամբ, տեղական ինքնավարությունը և օրինակելի կրթական Համակարգով անուժ է «Մշակի» սոցիալական իդեալը: Այլ խնդիր ունեն Իտալիան ներկայացնող նյութերը. նրա ազատագրական շարժումներն այն չափանիշն են, որի վրա «Մշակը» ձևում էր քաղաքական պայքարի իր եթե ոչ միակ, ապա գլխավոր իդեալներից մեկը: Այդ իդեալի մարմնավորումը խտացված է մի մարդու մեջ Գարիբալդիի, որը «ներկայացնում է իր անձամբ մարդկային պատմության մեջ վաղուց չտեսնված ժողովրդական Հերոսի պատկերը» (1872, № 25): «Մշակի» 1882 թ. մայիսի 27-ի Համարը բացվում է Արծրունու «Ջուզեպե Գարիբալդի» առաջնորդողով. Իտալիայի ազգային Հերոսի մահը ստիպել է գրիչ վերցնել Հայ թերթի խմբագրին և գրել իր լավագույն Հոդվածներից մեկը, պատմել մի մարդու մասին, որին տեսել էր անձամբ, վկա եղել նրա փառքին:

Եվրոպա ուսանելու զննցած Հայ երիտասարդները սիրով թղթակցում էին «Մշակին». գրանց մեջ կարելի է նշել Հարոյին (Ն. Տեր-Հարությունյան), Փ. Վարդանյանին, Ա. Արասխանյանին, Գ. Ղարաջյանին: Սակայն «Մշակի» եվրոպական թղթակիցների մեջ պետք է առանձնացնել մի անուն՝ Անդրեաս Արծրունի. եզրայրների Հոգևոր մտերմությունը «Մշակի» Հրատարակության տարիներին վերաճեց գաղափարական Համագործակցության, որը կրտսեր եղբոր գիտական վաստակին բերեց նաև Հրավարակախոսի պատկառելի Հե-

ղինակուլթյուն, իսկ ավագ եղբոր հրատարակած թերթի համար ապահովեց համաեվրոպական կյանքը լուսաբանող նյութերի այնպիսի առատություն, որ տասնյակ թղթակիցներ չէին կարող համատեղ ներկայացնել: Լինելով Բեռլինի և Բրեսլաուի համալսարանների և Ախենի բարձրագույն տեխնիկական ուսումնարանի պրոֆեսոր, Բեռլինի բնախույզների ընկերության, Բրեմենի աշխարհագրական ընկերության, Թուսաստանի հանքաբանական ընկերության անդամ, հանքաբանների միջազգային վեհաժողովների անընդմեջ մասնակից, ճանաչված գիտնական Անդրեաս Արծրունու աշխատակցությունը «Մշակին», ինչ խոսք, մի հետաքրքիր երակ էր ներարկում թերթի գործունեության մեջ: Հաստատվելով Գերմանիայում Ա. Արծրունին ստանձնում է եվրոպական կյանքը թերթում լուսաբանելու պարտականությունը: Ավելին, երևելի հանքաբանը շրջագայություններ է կատարում աշխարհի բազում երկրներում, որոնց արդյունքը, գիտական հետազոտություններին զուգընթաց, նաև ճանապարհորդական հետաքրքիր նոթերի հրատարակումն էր «Մշակում»: Բեղմնավոր էր հատկապես նրա աշխատակցությունը Բեռլինի վեհաժողովի օրերին, երբ նա, գտնվելով Գերմանիայի մայրաքաղաքում և անձնական շփումներ ունենալով հայկական պատվիրակության անդամների հետ, մանրամասնորեն ներկայացնում է այդ բարձր առյանի գործունեությունը: Յավոք, նա ստիպված էր արձանագրել Հայերի հիսթորիայի իրողությունը, երբ փոքր ազգին զոհ են մատուցում «եվրոպական կոնցերտին» և պաշտպանում «մի փտած, անընդունակ, կոպիտ, մոլեռանդ, անբարոյական պետության», ինչպիսին Թուրքիան էր (1880, № 118): Ա. Արծրունին հանդես է գալիս հողվածներով ու առաջնորդներով նաև Անդրկովկասի տնտեսական զարգացման վերաբերյալ, ամփոփում Հայաստանում, Կովկասում և Թուսաստանում իր երկրաբանական հետազոտությունների արդյունքները, սրում տեղական բնական հարստությունների շահագործման հիման վրա ազգային արդյունաբերությունը զարգացնելու խնդիրը՝ համահունչ «Մշակի» առաջադրած ծրագրին:

Իսկ տնտեսական զարգացման ի՞նչ ուղի էր գծում «Մշակը»: Եթե «Հյուսիսափայլը» հայ ժողովրդի բուրժուական զարգացման լուսավորական շրջանի ամբիոնն էր, ապա «Մշակը» եղավ հայ իրականության մեջ կապիտալիստական հարաբերությունների հաստատման գաղափարախոսը: «Մշակին» վերապահված էր Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման առաջամարտիկի դերը, որը, հակառակ բուրժուական ազգային-պահպանողական

Հոսանքի գործիչների, նախապատգուծյունը տալիս էր ոչ թե մտավոր-բարոյական, այլ անտեսական գործոնին: Արծրունին Հորդորներով դիմում է Հայ կապիտալիստներին փորձելով նրանց դուրս բերել ասիական նիրհից. չհետևել անտեսության քաղաքակիրթ ձևերին, նշանակում է ինքնասպանու-թյուն գործել, - նշում է նա (1872, №23): «Տնտեսական Հույսեր» առաջնոր-դող Հոդվածում (1874, №7) նա միավորվելու կոչ է անում և՛ մեծ գումարատեր արդյունարերողներին, և՛ մանր արտադրողներին, որպեսզի առաջինները դի-մակայեն օտար Հզոր կապիտալին, իսկ երկրորդները խուսափեն խոշոր ար-տադրությունը կույ գնալու վտանգից: Եվրոպական կապիտալը ամուր դիր-քավորվել էր Անդրկովկասում և եթե մի կողմից խթանում էր քաղաքակիրթ անտեսության արժատավորմանը, ապա մյուս կողմից յուրացնում էր տեղա-կան ժողովուրդների ազգային Հարստությունները: Նրանցից ազատվելու մի կէք էր տեսնում «Մշակը». սովորել նրանցից անտեսություն վարելու ձևերը և ապա արտամղել երկրից:

Անդրկովկասի Հայ կապիտալիստներին ուղղված ուշագրավ Հոդվածներով Հանդես է գալիս Երվանդագաղնն: «Նավթային Հարցին» նվիրված Հոդվածա-շարում (1881, №190, 1882, №60, 237-239), պաշտպանելով Հայրենական ար-դյունարերությունը Հովանավորելու «Մշակի» ջանքերը, երիտասարդ Հրա-պարակախոսը ծաղրում է Հայ Հարուստների մանկամիտ ինքնարավականու-թյունը և անտեղյակությունը անտեսական տարրական օրենքներին: Անդրկովկասի անդին Հարստությունը լցվում է եվրոպացիների անհատակ գրպանները փոխանակ նպաստելու ժողովրդի անտեսական և մտավոր զար-գացմանը:

«Մշակի» նյութերով կարելի է Հաստատել նաև նրա մտահոգությունը մանր արտադրության գոյությունը նկատմամբ: Ականատես կապիտալիստ-ական մանր արտադրության Հեռ արհեստավորության մղած կենաց ու մահու գոտեմարտին «Մշակը» տարեկրում էր պատմական պաշը Հույս փայտայն-լով մանր արտադրության փրկությունը վերաբերյալ: Այս մտահոգությամբ է գրված Հայանի անտեսագետ Սողոմոն Եղիազարյանի «Համաբարական միու-թյուններ» Հետադատությունը (1890, № 95-98): Խոշոր արտադրության կող-բին մանրերի գոյության իրավունքի պաշտպանությունը մշակական տեսա-կետին էլք հակադրվում:

«Մշակի» էջերում մենք հանդիպում ենք նաև այն նոր դասակարգի պրոլետարիատի վիճակի նկարագրությունը, որին նա անվանում է Մշակներ: «Մշակի» տուրքը բուրժուական լիբերալիզմին նրան մղում են «բանվորական խնդրի» խաղաղ ուղիները որոնման, պրոլետարիատի շահագործումը մեղմելու և աշխատանքի ու կյանքի լավ պայմանների ծրագրերի առաջադրման: Հարցի հեղափոխական լուծումները նրա համար անընդունելի են:

«Մշակի» էջերը լին են պանդուխտ մշակների կյանքը պատկերող սրտաճմլիկ նկարագրություններով, որոնք ասես մի գրչով են գրված՝ գիշատիչ շահագործման փաստի հավաստում և ապա՝ զթասրտության կոչեր: «Մշակը» մշակներին մեջ տեսնում էր լոկ կյանքից մերժվածների, կարեկցանքի արժանի մի զանգված, որի ծնունդն արգելակելը մարդասիրական պարտք էր դիտվում: Ուշագրավ է, որ Արծրունին Հայ «պահպանողական» մտածողությանը անհարիր էր գտնում սոցիալիզմի գաղափարը. «Անդրկովկասը երբեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալական որևէ պրոպագանդայի համար: Մենք ունենք մեր սեփական ներքին խնդիրները, մեր տնտեսական և ուսումնական ցավերը: Սոցիալիզմը հակառակ է մեր բնավորության, և մենք պետք է մեր բոլոր ջանքերը գործ դնենք մեր անդրկովկասյան ազգությունների հայերի, թուրքերի և վրացիների ինքնակրթության գործը առաջ տանելու» (1879, №48):

Որդեգրելով սոցիալ-դարվինիզմը՝ Արծրունին բանալի է փնտրում գոյության կռվի օրենքներով բացատրելու դասակարգային հակամարտությունը, իսկ էվոլյուցիոն զարգացմամբ՝ հիմնավորելու առաջադիմության խաղաղ ընթացքը, որտեղ հեղափոխությունները, սոցիալիստական ուսմունքները մերժվում են որպես «արտաոռց շեղում» հասարակության բնականոն ընթացքից:

«Մշակը» մեծ տեղ էր հատկացում հայկական դավառի և դյուղի սոցիալական զարգացման խնդիրների լուսարանմանը՝ առաջադրելով «գյուղափրկիչ» իր ծրագիրը: Կարելի է անվարան ասել, որ այդ չըջանում հայկական ոչ մի թևերի չի ունեցել գյուղական այնքան թղթակիցներ, որքան «Մշակը»: Նրանց նամակները «Մշակը» դարձնում են գյուղական կյանքի մի հանրագիտարան, որտեղ անսպառ նյութ կարելի է գտնել անցյալ դարի 70-80-ական թվականների Հայ գյուղի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի մասին: Դա Անդրկովկաս ներխուժած կապիտալիստական Հարբերություն-



ների հարմածներն ասկ քայքայվող գյուղն է, որը քանդում էր իր նահապե-  
տական կապանքները և մտնում մի նոր կացութաձևի մեջ: Սոցիալական հար-  
ցի լուծման դեմոկրատական մղումները թերթի էջերում «խաղաղ գոյակցում»  
են յիբերալ ծրագրերի հետ: Երկրագործ դասակարգի քայքայման պատմական  
իրողությունն ականատես Արծրունին միջոցներ է փնտրում գյուղի բևեռաց-  
ման երևույթի առաջն առնելու: Ճիշտ այնպես, ինչպես Անդրկովկասի ար-  
տադրություն առաջընթացի հեռանկարը տեսնելով խոշոր արտադրության  
զարգացման մեջ, նա միաժամանակ ջանք էր թափում մանր արտադրողներին  
պրոյեկտարացումից փրկելու: Նրա նիղերը ազրարային հարցում մի կողմից  
ուզգված էին գյուղատնտեսության մեջ խոշոր տնտեսությունների զարգաց-  
մանը, իսկ մյուս կողմից գյուղացիական մանր տնտեսություններին կոոպե-  
րացիաների, ինքնօգնություն, էժան վարկի և այլ միջոցներով դիմակայուն  
զարգնելուն: Արծրունին հույս ուներ փրկել ազգի հիմքը կազմող երկրագործ  
դասակարգին նրան ժամանակակից կազմակերպության ձև տալու միջոցով:

«Մշակի» էջերում կարելի է տեսնել նաև 70-80-ական թվականների ուսու  
իրականության նշանակալից երևույթի նարոզնիկական շարժման ազդեցու-  
թյունը: Հրահրել շարժում դեպի գյուղ, դեպի ժողովուրդ, - այս մտահոգու-  
թյունը անբաժան եղավ արծրունյան «Մշակից»: Սակայն սա չի նշանակում,  
թե «Մշակի» տեսաբանները ամբողջությամբ բաժանում էին նարոզնիկներին  
սոցիալ-քաղաքական հայացքները, որոնց համար համայնքը գյուղացիական  
սոցիալիզմի սաղմն էր: Սոցիալիզմի նարոզնիկական կազապարը հակացուց-  
ված էր «Մշակի» գաղափարախոսությունը:

Ուշադրության արժանի է Արծրունու «Ճորտերի ազատության երեսնամյա  
տարեդարձը» առաջնորդող հոդվածը (1891, № 23), որը հանրագումարի էր  
բերում գյուղացիական ռեֆորմի 30-ամյա արդյունքները: Արծրունու մեջ,  
իրև նոր հասարակարգի պաշտպանի, խոսում է ֆեոդալիզմի երզվյալ թշնա-  
մին: Նա Այեքսանդր 2-րդի «ամենամեծ վերանորոգիչներից մեկի», անունը  
արժանի է տեսնում ոչ միայն սուսաց, այլև հանուր մարդկություն պատմու-  
թյան մեջ ոսկյա տառերով արձանագրվելու:

Այսպիսով, թեև թղթակիցներին, աշխատակիցներին գրչով մանրբուրժուա-  
կան դեմոկրատիզմը խմբագրի բարեհաճ թույլատվությամբ թափանցում էր  
թերթի էջերը, սակայն նրա առաջատար հիմնական ուղղությունը մնում էր  
բուրժուական յիբերալիզմը:

Եթե «Մշակի» նյութերը դասդասելու լինենք ըստ հիմնահարցերի, ապա ամենածավալուն բաժինը կկազմեն արևմտահայութիանը նվիրված նյութերը: Դժվար է առանց «Մշակի» և Արծրունու գաղափարախոսութիան պատկերաց- նել XIX դարի 70-80-ական թվականների Հայ ազգային-ազատագրական շարժումների պատմությունը: «Մշակի» քաղաքական կողմնորոշումները սնվում և ուժ էին ստանում թուրքական բռնատիրության դեմ բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարից, որն իր վճռական փուլը մտավ անցյալ դարի 70-ական թվականների կեսերից:

Նախ «Մշակը» անվերապահ դիրք գրավեց թուրքիայում սահմանադրա- կան շարժումների նկատմամբ բացառություն չանելով նաև Հայերի այսպես կոչված ազգային սահմանադրությունը: «Մշակի» խմբագիրը թերթի առջև խնդիր դրեց ցրել ամեն մի սահմանադրական պատրանք, որը խանգարելու էր ազգի քաղաքական արագ հասունացմանը: Ազգային սահմանադրությունը, հռչակված 1860 թ. և ի սկզբանե գրկված ազգի գոյությունն ապահովող քա-ղաքական երաշխիքներից, «գործադրման» ավելի քան 15 տարվա ընթացքում սուլթանական կառավարության կողմից ենթարկվել էր այնպիսի ձեռ- խնդումների, որոնք ի չիք էին դարձրել նրա նշանակությունը: Ի՞նչ սահմա- նադրություն, եթե այն չի տարածվում գավառի վրա, որտեղ ապրող ազգի մե- ծամասնությունը ենթարկվում է բռնությունների ու հարստահարության, դատում է «Մշակը»: «Կրիդիսի րոպեում հայտնվեցավ, որ հռչակված սահ- մանադրությունը օդային մի ամրոց էր, - գրում է Արծրունին, - որ այդ երեկելի սահմանադրությունը անգոր է պաշտպանել Հայերին տերության կամայականության ու բարբարոսության դեմ» (1876, №45):

Թուրքերի սահմանադրական շարժումը զուգադիպեց Արևելյան ճգնա- ժամի սրման և բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի հզո- րացման իրողությունը, հանդամանք, որը Թուրքիայի նորելուկ բուր- ժուազիային գործարքի մղեց միապետության հետ: Սակայն այդ ամօթավի դաշինքը անկարող եղավ կանխել թուրքական բիրտ լծի դեմ ճնշված ժո-ղովուրդների ընդվզումը: 1875-1876 թթ. ապստամբեցին բուլղարները, հեր- ցեգովինացիները, բոսնիացիները, սերբերն ու չեռնոգորցիները: «Մշակի» քաղաքական տեսությունները անսքող համակրանքով են լցված դեպի սլա- վոն ժողովուրդների պայքարը: Օր առ օր լուսաբանվում են բալկանյան անցքերը ենթատեքստ ունենալով մի այդպիսի արդար պատերազմի թատե- րաբեմ էլ տեսնել Փոքր Ասիայում. հարկավոր է միանալ սլավոնական

չարժամանք, «զենէ նրան, նրանից օրինակ և ուժ առնել: Բաշկանյան պատե-  
րագմբ դնահատելով իբրև քրիստոնեութեան կոխիվ մահմեդականութեան դեմ  
Արծրունին այն միտածամանակ դիտում է իբրև քաղաքակրթութեան կոխիվ  
բարբարոսութեան դեմ: Քաղաքական իրադրութիւնը պարզուսում է Հայերին  
դաշնակիցներ հանձնինս պատամբ սլավոնների, և Ռուսաստանի նման Հզոր  
պետութեան աջակցութիւնը: Հայերը պետք է դառնան այն Հենարաններից  
մեկը, դառնում է Արծրունին, որի վրա հենվելով Ռուսաստանը պետք է իրա-  
կանացնի իր պատմական առաքելութիւնը Արևելքում: «Մինչև ե՞րբ»,  
«Լի՞թե այժմ էլ Հայերի Հերթը չէ» (1876, № 27, 28) առաջնորդողները  
թուրքական յուժը հանդուրժելը ոչ թե քրիստոնեական մարտիրոսութիւն, այլ  
ստրկամտութիւն են որակում և կոչնակում են շղթաների թոթափում:  
Սկսվում են Արծրունու «Հայոց խնդիր» վերնագրով առաջնորդողները, որոնք  
փաստորեն քաղաքացիական իրավունք են տալիս Հայկական Ռարց տերմի-  
նին. «Այժմ էլ տարակուսել չի կարելի, թե ինչպես կա սլավոնական խնդիր,  
ինչպես կա հունական խնդիր, նույնպես դրած է եվրոպական դիպլոմատիայի  
առջև և Հայոց խնդիրը» (1876, № 47): Արծրունին դաս է տալիս իր ազգին, որ  
միջազգային դատարանում խնդիր կարելի է հարուցել միայն զենք վերցնե-  
լով, արյուն թափելով, որ մտամոր ուժի առափելութիւնը վերապահված է քա-  
ղաքակիրթ Հեռավոր ապագային: Հայերի դեմ կանգնած է բարբարոս թուր-  
քիան, որը քաղաքականութեան մեջ խիստ ավանդապահ է: Ահա Արդուլ Հա-  
միդը հրապարակ է հանել Հերթական աչքակապութիւնը նոր սահմանադ-  
րութիւնը նպատակ ունենալով չեղոքացնել Հպատակ ժողովուրդների համար  
բարենորոգումների նախագիծ առաջադրող եվրոպական դեսպանաժողովի ո-  
րոշումը: «Այդ սահմանադրութիւնը, ինչպես թուրքիայի բոլոր անցած խոս-  
տումները, խորամանկ, նենդավոր աչքակապութիւններ են, ավելի ոչինչ», -  
թուրքական նոր ապրանքին դին է գնում Արծրունին (1876, № 49):

Միջհատյան սահմանադրութիւնը, սակայն, քաղաքական իրական ար-  
դյունքի չհասցրեց. «խաղաղ զենքերի» մեջ դա վերջինը եղավ: «Մշակի»  
1877 թ. ապրիլի 18-ի համարի առաջնորդողը վերնագրված է «Պատերազմ»:  
Անսպասելի իրադարձութիւն չէր ուս-թուրքական պատերազմի սկսվելը.  
«Քրիստոնյաների պաշտպանութեան գործը ընդդեմ մահմեդական տարրի  
բարբարոս ճնշման, այն անվերջանալի Արևելյան խնդիրը... կվճռվի ոչ թե ա-  
նորոշ դիպլոմատիական բանակցութիւններով, այլ սրով և արյունով», -

գրում է «Մշակը»: Արծրունին շտապում է գուշակել պատերազմի արդյունքները. «Թուրքիայի վերջին ժամը հասավ: Թուրքիան կազմող բոլոր երկրները կտոր-կտոր ընկնելու են. այդ երկիրներից ամեն մինը կամ կմիանա մի ուրիշ երկրի հետ կամ կկազմի մի անկախ փոքրիկ պետություն» (1877, №32): Պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու մեջ Արծրունին տեսնում է Հայկական հարցի լուծման լավագույն ելքը: Սակայն եթե դա չհաջողվի, հայերը պետք է ձգտեն, դարձյալ Ռուսաստանի օգնությունը, ստանալ ինքնավարություն: Արծրունին մատանացույց է անում ոչ միայն այն ուժը, որին պետք էր ապավինել, այլև այն ուժը, որից պետք էր զգուշանալ: «Հայաստան և Եվրոպա» առաջնորդողում (1877, № 30) և այլ հոդվածներում Արծրունին մերկացնում է փոքր ազգերին ոտնակոխ անելու, նրանց շահերը իրենց եսական նպատակներին ծառայեցնելու եվրոպական մեծ պետությունների միասնական քաղաքականությունը, մասնավորապես Անգլիայի նենգ պահվածքը:

Քաղաքական նոր իրավիճակի՝ պատերազմի պայմաններում, երբ թուրքական երիտասարդ բուրժուազիայի լիբերալ գաղափարախոսությունը ազգայնամոլություն կերպարանք առավ՝ հայտնաբերելով Հպատակ ազգերին ճնշելու սուլթանի քաղաքականության հետ իր հոգեհարազատությունը, Արծրունին հանդես եկավ հետաքրքիր գուգադրություն՝ իր առաջնորդողներից մեկը վերնադրելով՝ «Հին և նոր թուրքեր» (1877, № 53):

Արծրունու դիտարկումը խորաթափանց է. Միդհատ փաշան և նրա կուսակիցները քրիստոնյաների համար ավելի վտանգավոր են, քան հին թուրքերը: Մահմեդականության վրա ձևված սահմանադրությունն ինքն իրեն արժեզրկվում է, քանի որ օրենքի ուժ է տալիս մի կրոնի գերազանցությունը, իսկ «ընդհանուր հայրենիքի» և «օսմանցի» հորջորջված քաղաքացիության կարգախոսների տակ թաքնված է այլ ազգերին դիմազրկելու, նրանց ինքնորոշումը խափանելու ձգտում: Արծրունին հեռատեսորեն գուշակում էր գալիք այն ոճիրները, որ «նոր օսմանցիները» արդեն հղանում էին դեպի իշխանություն տանող ճանապարհի ստորոտներում, որպես զենք ընտրելով պանօսմանիզմը: Թուրքական բարբարոս լծից ազատվելու մի ելք է տեսնում «Մշակի» խմբագիրը՝ «ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ զենքը ձեռին արյուն թափելով...» (1877, №63):

Պատերազմի տարիներին «Մշակի» հեղինակությունը շեշտակիորեն բարձրացավ: Դրան մեծապես նպաստեցին, բացի Արծրունու և Բաֆֆու բո-

ցաշունչ էլույթներից, նաև արևմտաՀայ թղթակիցները, որոնց մեջ առանձնանում է երկու անուն Ակրտիչ Փորթուզայան և Արփիար Արփիարյան: Ա. Փորթուզայանը, կարելի է ասել, ուղղակի կամուրջի դեր էր կատարում արևմտաՀայերի և արևելաՀայերի միջև, ամեն կերպ օժանդակում նրանց համագործակցությունը զարգացնելու «Մշակի» ջանքերին: Արևմտյան Հայաստանի մասին նրա հոդվածները ահագանգում են «ոչ թե լալու, այլ գործելու ժամանակ է» (1877, №54-59): «Մշակի» միջոցով նա հանգանակություն է կազմակերպում «Արարատյան ընկերության» օգտին («Մշակը» հանդանակում է 13 հազար ռուբլի, իսկ երբ Արևմտյան Հայաստանում սկսվում է սոփր 30 հազար էլ սոփյալների համար), փորձում կյանքի կոչել լուսավորության և տնտեսական զարգացման միջոցով արևմտաՀայերի փրկությունն իրագործելու ուղղությունը «Մշակում» առաջ քաշած իր ծրագրերը: Ա. Փորթուզայանը «Մշակի» համար հայտնադործում է նաև Ա. Արփիարյանի նման թղթակից, որի Հայկակ գրական կեղծանունը շուտով փնտրվող ստորագրություն է դառնում «Մշակի» ընթերցողների համար: Նրա նամակներով պատրիարքարանի և Ազգային ժողովի գործունեությունը, պոլսաՀայ ողջ Հասարակական-քաղաքական կյանքը, կարելի է ասել, օրագրային մանրամասնությամբ տարեգրվում են «Մշակի» էջերում, իսկ Հարցադրումների գեմտկրատական շեշտվածությունը թերթին հաղորդում է քաղաքական սրություն:

ԱրևմտաՀայ կյանքի լուսարանման գործում չի կարելի մոռանալ նաև Գր. Նիկողոսյանի մատուցած ծառայությունը: Եթե Էրզրումից գրած նամակներով նա բացում է թուրքական իշխանությունների կողմից գալառաՀայություն ճնշման ու կեղեքման անագորոշն պատկերը, ապա 1880 թ. Կոստանդնուպոլիս մեկնելով իրրև «Մշակի» թղթակից, նա հրապարակախոսական ախարի գործունեություն է ծավալում արևմտաՀայ Հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնում մշակական դադափարները պրոպագանդելով տեղի մամուլում և պոլսաՀայ կյանքը լուսարանելով «Մշակի» էջերում:

Հայկակը Կ. Պոլսից, Ա. Արծրունին Բեռլինից լուսարանում են միջադային վեհամոզովի ընթացքը. թերթի առաջնորդողները և քաղաքական տեսությունները պատվում են Բեռլինի վեհամոզովի շուրջը, մեծ թիվ են կազմում արտասպությունները ալլալեզու պարբերականներից. գնահատելով վեհամոզովի արդյունքները հայերի համար «Մշակն» այն որակում է Հին սասցվածքով «Լեւոր մուկ ծնեց»(1878, №131): 61-րդ հոդվածը ոչ միայն

ոչինչ չտվեց արևմտահայերին, այլև հնարավորութուն տվեց թուրքական իշխանութիւններին անգլիական քաղաքական հովանու տակ կեղծ խոստումներ յանաբեւ խաղով ժամանակ շահել՝ Հայերի նկատմամբ հաշվեհարդար տեսելու համար: Արծրունին կոչ է անում արևմտահայերին հզոր ուժ կազմել ոչ միայն թուրքական, այլև անգլիական կամայականութեան դեմ, չգաղթել երկրից, որովհետև քանի դեռ «Հայերը բազմաթիվ կլինեն Հայաստանում, Թուրքիայի և Անգլիայի համար շատ դժվար կլինի ոտնակոխ անել Հայաստանը» (1878, № 132): «Մշակը» եռանդուն պայքար է սկսում գաղթի առաջն անելու համար:

Քաղաքական նոր իրադրութիւնը պահանջում էր նոր դիրքորոշում, քաղաքական դասն այս էր. «Այն ազգերը, որոնք զենքը ձեռին ապստամբեցան տերութեան դեմ, եվրոպական դիպլոմատիան շնորհեց նրանց այս կամ այն մարդկային իրավունքը, իսկ Հայոց ազգը ոչինչ չստացավ, որովհետև հնազանդ էր մնացել տերութեանը»: XIX դարի քաղաքական բարոյականութիւնը Արծրունին բանաձևում է՝ «ես ապստամբում եմ, ուրեմն ես կամ» (1878, № 165):

Հարկավոր է հիմնավորապես նախապատրաստվել, նախապատրաստվել և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես: «Մշակը» առաջ է քաշում նոր կարգախոս՝ «Խաղաղ պատերազմ»: Նա մի կողմից ողջունում և պաշտպանում է Զեյթունի, Վասպուրականի, Կարինի ազատագրական շարժումները՝ դրանք դիտելով ազգի քաղաքական հասունացման նշան, մյուս կողմից առաջ է քաշում Արևմտյան Հայաստանի «տնտեսական վերաշինութեան» ծրագիր: Պետք է քաղաքակրթել արևմտահայերին, երկիրը դնել կապիտալիզմի զարգացման ուղու վրա, զարկ տալ արհեստագործական կրթութեանը, կառուցել ճանապարհներ, ջրանցքներ, Փարիկաներ, գործարաններ, կազմակերպել կոոպերատիվ ընկերութիւններ, վարկատու դրամակրկեր և այս միջոցով պատենել դեռ տարագնացութեան առջև:

Արհեստավորաց ընկերութիւնում 1879 թ. մարտի 11-ին իր նշանավորելույթում «Թուրքաց Հայերի տնտեսական դրութիւնը», որ հետո հրատարակվեց «Մշակում» (№ 75-82) և առանձին գրքույկով, Արծրունին հիմնավորում է իր տնտեսական լիբերալիզմը: Հայ ժողովրդին դիտելով քաղաքակրթված եվրոպայի դեսպան Արևելքում հրապարակախոսը նրան միանգամայն ընդունակ է գտնում ինքնավարութեան, ավելին, նա Հայ ժողովրդին «խաղաղ պատերազմի» առավելութիւնը ցուցադրելու պատմական առա-

քելություն է վերագրում ասելով, թե «արեւմտյան լուսավորված եվրոպայի ժամանակակից անմարդասեր զաղափարի դեմ այդ կենդանի բողոք ներկայացնող ազգությանը վիճակված է ոչնչացնել այն անբարոյական սկզբունքը, որ պահանջում է նշված ազգից, իր գոյությունը ապացուցելու համար դենք վերցնել, ապստամբել, արյուն թափել»: Արծրունու մեջ խոսում է դասական լիբերալը, որը վերջին հաշվով խորշում է արյունից, ապստամբությունից, քաղաքացիական պատերազմից, իր բռներով բարբարոսության դեմ բարբարոսությամբ կռվելուց: Եթե ուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ ուսական գեներին ապավինելու հեռանկար կար, Արծրունին ապստամբության, գեների կոչ էր անում, ապա ՅՕ-ական թվականներին, Բեռլինի վեհաժողովի կողմից ուսական գեների նվաճումները նվազագույնի հասցվելուց և շուտով նաև ցարական կառավարության քաղաքականության մեջ Հայկական հարցի նկատմամբ աննպաստ շրջադարձ տեղի ունենալուց հետո, Արծրունին ստիպված եղավ զիջել իր մարտական դիրքերը: «Լուսավորությունը միանալով անասական ուժի հետ, - գրում էր Արծրունին, - հրաշքներ կարող է գործել» (1887, № 86):

Անասան ու հեռուգական էին սակայն նրա երկու գլխավոր աշխատակիցները Հայկակը և Բաֆֆին: Հայկակը փառարանում է Ջեյթունի ապստամբներին, Պապիկ իշխանին և նրա արի զինակիցներին գրելով. «այդ յայտն մեր ազգի համար հուսո ապաստարան մ'է» (1879, № 98): Իսկ երբ պայքարի գեներ բարձրացրին կարնեցիները, Հայկակը գրեց. «Կարնո գեպերը ավելի ազդեցություն ունեցան թուրք կառավարության վրա, քան պատրիարքարանի հազար թագրիրները, դեսպանաց ծանուցագրերը, խաղաղական ամեն միջոցներ» (1883, № 33): 1886 թվականին ողջունելով «Մշակի» վերահաստարակումը և խոստանալով իր աշխատակցությունը Հայկակը վերահաստատում է իր քաղաքական կողմնորոշումները: Նա մատնացույց է անում թուրքական կառավարության այն անսրող քաղաքականությունը «աստիճանաբար սկսարացնել թուրքիս ոչ-խլամ ժողովուրդները, ապազային մեջ զանոնք խլամաց հետ ձուլելու հաջողություն ձեռք բերելու համար» (1886, № 1):

Կյանքի վերջին տարիներին Արծրունին վկա դարձավ իր ոսմանտիկ ծրագրերի փլուզմանը: Մահվանից քիչ առաջ նա գրում է. «Ազատամիտ թուրքաց կուսակցությունը» առաջնորդողը (1892, № 86), որտեղ զուգահեռ անցիկացնելով Միզաս փաշայի և նրա քաղաքական նոր էպիգոնների միջև,

նշում է, որ չպետք է հավատալ Թուրքական «ազատամիտ» կուսակցության եղբայրության և հավասարության վերաբերյալ փարիսեցիական կոչերին, որ Լոնդոնում հրատարակվող նրանց օրգանը ոչ այլ ինչ է, եթե ոչ «գիմակավորված ամենաթունդ ֆանատիկության արգասիք»: Մանր մտավախությանն ենք էին համակում հրապարակախոսին, երբ նա գրիչ էր ձեռքն առնում արևմտահայ եղբայրների ցավից խոսելու. մահը նրան ազատեց դառնալու դրանց իրականացման ականատեսը՝ 90-ական թվականներին, մեծ եղեռնի նախերգանքին:

Խոսելով արևմտահայ կյանքի վրա «Մշակի» ունեցած ազդեցության մասին Հայկակը նշել է «Մեզ համար նոր երևույթ մըն էր, որ Թիֆլիս հրատարակվող թերթ մը այնքան ուժգնապես միջամտե զուս Թուրքիո հայոց գործերուն. այնպես որ «Մշակը» կրնար համարվիլ իր Պոլիս հրատարակվող թերթ մը: Մուտքը Թուրքիա քանիցս արգելվեցավ, բայց առանց հետևանքի» (Լեո, Եժ. հ. 6, էջ 599): Այո, եթե արևելահայ լեզուն չմատնեք, «Մշակը» արևմտահայ թերթ կարող էր թվալ, այնքան սրտացավությանը էր պաշտպանում արևմտահայ դատը:

Հայ ազատագրական պայքարի դադափարարանության զարգացման ապարեզում «Մշակի» նշանակությունը լիովին արժեքավորված էի լինի, եթե այդ գործում չառանձնացնենք այն նշանակալից դերը, որ խաղացել է թերթի գլխավոր աշխատակիցը՝ Բաֆֆին: Նրա հրապարակախոսական ելույթները և թերթի էջերում հատված առ հատված տպագրված վեպերը նշում են զազափարական այն բարձրակետը, որին հասավ ոչ միայն «Մշակը», այլև հայ ազատագրական միտքը XIX դարի 70-80-ական թվականներին:

Բաֆֆին իսկական հայտնություն էր Արծրունու համար: Թերթի սուղ էջերը ժլատորեն փակելով գրական երկերի առջև՝ խմբագիրը դրանք շոսյլորեն սրամաղրում էր Բաֆֆուն՝ միանգամից ապահովելով երկու շահ՝ ասպարեզ ժամանակի պատգամախոս գրողին և մասսայականություն «Մշակին»: Դժվար էր ասել, թե որտեղ է սկսվում և որտեղ վերջանում Բաֆֆու հրապարակախոսությունը. թերթում հրապարակված կրքոտ ելույթները շարունակվում էին նրա գեղարվեստական կտալներում տասնապատկելով իրենց ներգործուն ուժը: Մնիթքադն և Բաֆֆի ստորագրությունները երաշխավորում էին հարցադրումների ամենադեմոկրատական և արմատական լուծումները:



Արևմտահայութեանը նվիրված առաջին նամակներում (1879, №9, 10, 14) նա դեմքով դառնում է դեպի «ճնշված և Հարստահարութեանց մեջ մաշված Հայերը» և, գինձորագրվելով ղեմնկրատիայի պայքարին, Հայտարարում է. թե «նոցա Համար պետք է մտածել, նոցա Համար պետք է գործել, մեր Հույսը նորա են»: Ե՛վ մտածեց, և՛ գործեց. «Մշակի» էջերում Բաֆֆու մանրբուրժուական սոցիալիզմը իր փայտամաններն է կառուցում վեր կանգնելով մշակական լիբերալիզմից, հետևողականորեն որոնելով ազգային Հարցի ղեմնկրատական լուծումներ:

«Տարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը» ուսումնասիրութեան մեջ (1875, №19, 20) Բաֆֆին խորամուխ է լինում արևմտահայութեան վիճակի սոցիալ-քաղաքական և հոգեբանական պատճառների մեջ: Հայերն այստեղ ենթարկվեցին երկաստիճան նվաճման. գտնվելով Օսմանյան պետութեան կազմում նրանք վերստին նվաճվեցին ավազակաբարո քրդական ցեղերից, բնդամին շարունակ Հանգես էին դալիս նորանոր նվաճողներ, ամայացնում երկիրը, ոչնչացնում աշխատավոր ձեռքի ստեղծածը: Սակայն քրդից, թուրքից, պարսիկից ավելի սարսափելի թշնամի Բաֆֆին Համարում է ազգովի տարադրութունը: Այդ չարիքի դեմ փրկութեան մի ճանապարհ է տեսնում Բաֆֆին, որ նաև Նալբանդյանի գաղափարն է երկրագործութուն, հողի հետ Հաստատուն և ամուր կապ:

Թուս-թուրքական պատերազմը Բաֆֆու գրիչը վերածեց մի իսկական գեներլի. «Ահա զարկեց ժամը, - գրում է նա, - և Տանկաստանի Հարստահարված բրիտանյանների վիճակը պիտի որոշվի: Քաղաքագետները զրան կոչում են Արևելյան Հարցի լուծում: Այս բազմադարյան խճճված Հանդույցը պետք է լուծվի սրով»: Բաֆֆին բանաձևում է պատմական պահի կարգախոսը. «Ազատութունը արվում է այն ազգերին, որոնք իրենց ազատութունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատութուն չկա, որպես առանց գոհերի փրկութուն» (1878, №22):

Բնույնի վեհաժողովի նախօրյակին, երբ Հայկական թերթերը լի էին Հույսերով ու գուշակումներով, Բաֆֆին գրում է «Գեռես ուշ էջ» հոդվածը (1878, №41, 42), որտեղ երևում է քաղաքականութեան նկատմամբ նրա զգաստ Հայացքը: Պատրանքներ չկան. «Հայերի վիճակը ոչինչ փոփոխութուն չի կրելու», - Հայտարարում է նա մեծ տերութունների հակամարտ շահերի բախման պայմաններում բացառելով Հայանպաստ որոշում: Բնութագրելով հասարակական տարբեր շերտերի դիրքորոշումը Բաֆֆին Հայացքը դարձ-

նում է դեպի ներքնախավերը և, ոչ մի ակնկալիք չունենալով «վերևների» ևսական դասակարգից, բռնակալությանը դիմադրող մի ուժ է տեսնում միայն ինքնազիտակցության եկած ժողովուրդը, որը «ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով: Այդ լինում է հեղափոխական ցույցերով և դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, - ցածից դեպի վեր է բարձրանում»: «Մարդը գոյության կռվի մեջ» Հոդվածում (1878, №186-191) Բաֆֆին փորձում է սոցիալ-դարվինիզմի տեսութայամբ հիմնավորել ազգերի էվոլյուցիոն զարգացման ընթացքի մեջ ժամանակ առ ժամանակ հեղափոխությանը դիմելու անհրաժեշտությունը:

Բաֆֆի հրապարակախոսը սրում է հայ ժողովրդի երկու հատվածների համագործակցության խնդիրը՝ համատեղ նախապատրաստական լայն աշխատանքի ծավալումով զինված պայքարի համար: Նա իր կոչը առաջինը հղում է երիտասարդությանը և իբրև պայքարի օրինակ մատնացույց անում դեպի ժողովուրդ զնացող ռուս նարոդնիկ երիտասարդությանը, ինչպես նաև ֆրանսիական ուսանողությանը՝ երկրի ամենահեղափոխական ուժին. «Երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական հեղափոխություն, - գրում է նա, - ուսանողները խլրտվում են, զարթնում են որպես քնած առյուծ և առաջինն են լինում, որ թնդեցնում են փողոցները մարսելիեզներով, փչրում են բռնավորների արձանները և թռչում են բարիկադների վրա»: Վկայակոչվում են 1830 և 1848 թթ. հեղափոխությունները և մանավանդ Փարիզի Կոմունան: Այս մտքերն արտահայտված են Բաֆֆու «Հայ երիտասարդությունը» ընդարձակ Հոդվածում (1879, №192-195, 197-199, 201-208): Հոդվածն ուչազրափ է նաև արևելահայ իրօրյա պարբերական մամուլի Բաֆֆու տված գնահատականներով, որոնք զարմացնում են իրենց անաչառությամբ: «Մշակի» դերը համարելով բացառիկ, որը դյուբական գավազանի նման միանգամից կենդանություն մտցրեց անշարժ ու թմրած հասարակության մեջ և սեփականեց ժամանակի հատկանիշը՝ «կրիտիկական ոգին», Բաֆֆին արժանին է հատուցում նաև պահպանողական ուղղության օրգաններին՝ «Մեղվին», «Փորձին», գտնելով, որ դրանք ևս ձգտում են նույն նպատակին՝ յուրաքանչյուրը իր նախընտրած ճանապարհով: Այդ նպատակն է նպաստել ազգի զարգացմանը: Հոդվածի բուն արձագանքները ստիպեցին Բաֆֆուն վերստին հանդես գալ (№226), պաշտպանել իր մտահայեցությունը, որը սնվում էր մարդկային ընդհանուր պատմական

փորձից: Ազգի զարգացման առանձնահատուկ ուղիներ փնտրելու պահպանողական մտայնությունը Բաֆֆին հակադրում է պատմահայեցությունն առաջավոր, դիտական համակարգ, որը իր ազգի անգամ բացառիկ զժբախտ նահատակների պայմաններում լուծումներ է փնտրում մարդկություն զարգացման ընդհանուր օրինաչափությունների ոլորտում: Այդ համակարգի մեջ տեղադրելով ազգային հարցը գրողը ազգային միությունը կրոնի և եկեղեցու վրա հենելը համարում է հակապատմական, ուրեմն դատապարտված: Պաշտպանելով «Մշակի» հռչակած ազգայնության գաղափարը՝ նա ավելտում է. «Մեր իդեալը պետք է լինի ԲԱՅՈՒԹՅՈՒՆը: Կրոնական համոզմունքները պետք է խոնարհվեն այդ գաղափարի առջև» (1880, №101): Նա պաշտպանում է «Մշակի» էջերը բոլոր դավանանքի հայերի առջև լայնորեն բանալու Արծրունու դիրքորոշումը՝ ընդգծելով, թե «մենք մեկ ազգի որդիներ ենք»: Ազգի լեզուն, հայրենիքը, ցեղային առանձնահատկությունները դիտում է որպես ազգի գոյության գլխավոր հիմունքներ:

Բաֆֆին հիանալիորեն արհապետում էր հրապարակախոսական զենքին և այն իր ձեռքից վայր էլք դնում, երբ անցնում էր ստեղծագործական այլ ոլորտի դեղարվեստական կտավների: Տարբեր միջոցներով դրանք միտված էին նույն նպատակին: Նրա վեպերը ազգային-ազատագրական պայքարի ծրագրեր էին և ստացան քաղաքական մանրիֆեստի նշանակություն: Գոհհացում, բայց ճշմարտություն կար նրա հակառակորդների այն պնդման մեջ, թե ժիպասանը «Մշակի» գաղափարները տեղափոխում է իր վեպերի մեջ, թե նրա հերոսները խոսում են «Մշակի» լեզվով: Միայն թե թերություն փոխարեն այստեղ արժանիք պետք էր տեսնել, քանի որ գրողի գրչի մոդական հպումից «Մշակի» գաղափարները բյուրեղանում, իմաստավորվում և բազմապատկում էին իրենց ներգործուն ուժը: «Մշակի» ընթերցողների համար «Գավիթ Բեկը» պատմության դասն էր արդիականացնում հերոսական անցյալի օրինակով պայքարի ոգեկոչելով ազգակիցներին, «Ջալալէդդինը», «Ոսկի աքաղաղը», «Խաչագողի հիշատակարանը» իրական կյանքի անագորույն պատկերն էին մերկացնում, «Խենթը» ապագայի լույսի խայծն էր ցուցադրում սոցիալիզմի ուտոպիական հեռանկարին լծորդելով ազատագրական պայքարի հազթանակը: Խենթի երազի խորհրդանշական պատկերով Բաֆֆին գծում է մի ապագա հասարակարգ, ուր չկան իշխողներ, և երջանկությունն ու բարօրությունը բոլորի բաժինն են: Սա արդեն դուրս էր «Մշակի» «լեզվամատածողություն» շրջանակներից, սա այն բարձրակետն էր,

որին հասել էր Բաֆֆին միայնակ՝ առաջ անցնելով և հետևում թողնելով «Մշակը», Գրիգոր Արծրունուն:

Պատահական չէ, որ պահպանողական հետադիմությունը հենց Բաֆֆուն ընտրեց որպես նշանախեց. 1883 թվականին «Մեղուն» գրեց իր կենսագրության ամենամոթալի էջը՝ հրապարակելով Հայկունու (Եղիշե քահանա Գեղամյան) «Մատենախոսությունները» Բաֆֆու «Կայծերի» դեմ: Հոգևորական «գրաքննադատին» ակնհայտորեն վախեցրել էին վեպի քաղաքական նախագծումները «որպես հար և նման» «Մշակի» գաղափարներին: Չեզոքացնելու համար «Կայծերի» թողած հակապական տպավորությունը Հայկունին վեպի հերոսներին, ոչ առանց հետին մտքի, նմանեցնում է «ցարասպան անարխիստներին» և զուգահեռ հայտնաբերում Պերնիչևսկու և Բաֆֆու քարոզած գաղափարներում՝ ակնարկելով, որ «Ինչ անել» վեպի հերոսուհի Վերա Պավլովնայի երազը դրված է «նենթի» Վարդանի բերանում: Սա ուղղակի մատնություն էր՝ և տեղ հասավ ճիշտ հասցեով: Շատ չանցած «Մշակի» խմբագրությունը և Բաֆֆու բնակարանը ենթարկվեցին խուզարկության, և տնային բանտարկությունը գրողին զրկեց սադրիչին անմիջապես պատասխանելու հնարավորությունից: Այդ պարտականությունն իր վրա առավ Լեոն գրելով «Կրիտիկան մեր մամուլի մեջ» Հոդվածը (1883, № 118, 119) և ցույց տալով Հայկունու «Կրիտիկայի» ողջ սնանկությունը: Հայկունուն իրրև վայ կրիտիկոսի վերջնականապես ջախջախելու խնդիրը իրականացնում է Բաֆֆին՝ հանդես գալով Փավստոս ստորագրությամբ (1883, № 141, 142, 144, 145, 148, 149): Բանախոսական ելույթից վերաճելով մի իսկական զրական մանիֆեստի Հոդվածը ոչ միայն երևան է հանում պահպանողական մտահայեցության սահմանափակությունը, այլև ցուցադրում Բաֆֆու իրրև գեղագետ-մտածողի հայացքների բարձր համակարգը՝ պատգամի արժեք ձևեր բերելով ապագա զրական սերունդների համար: Հենվելով Բելինսկու և Դորրոյուրովի հեղինակություններին՝ Փավստոս-Բաֆֆին մի կողմից գծում է կրիտիկոսի ցանկալի կերպարը, մյուս կողմից՝ գրողի, առաջինի համար պարտադիր համարելով հատուկ ձիրքը, գիտողականությունը, ճշմարտասիրությունը, դատավորի անկողմնապահությունը, լուսավոր և առաջադեմ հայացքները, իսկ երկրորդի համար զրական տաղանդից բացի՝ ժամանակի ձգտումների և գաղափարների մարմնավորող լինելը: Եթե Արովյանի ժամանակը ծնեց «Վերքը», ապա իր ժամանակը՝ «Կայծերը»: Ինչ վերաբերում է «Մշակին», ապա Բաֆֆին այն նմանեցնում է մի մեծ գետի, որի մեջ

խառնվում են զանազան աղբյուրներից բխած վտակներ: Եթե Արծրունին իբրև խմբապիր հսկում է, որ գետը չփոխի իր ընթացքը և չշեղվի իր ուղղությունից, ապա Բաֆֆին, լինելով այդ վտակներից մեկը, մշտապես պահպանել է «իր վտակը» համը, հոտը, գույնը, այսինքն ինքնուրույնությունը: Հենց որ կասկածի տակ դրվի այդ առանձնաշնորհը, կհասունանա խզումը և հեռացումը «Մշակից»:

Յավոր, այսպես էլ եղավ: Արծրունի-Բաֆֆի հարաբերությունը հայ հասարակական մտքի պատմության հետաքրքիր երևույթներից է: Բաֆֆու հողվածների ընթերցումը ոչ թե նրա երկերի ժողովածուներում, այլ ուղղակի «Մշակի» էջերում, Արծրունու հողվածների հարևանությունը, իրեն առաջին սպավորություն հաստատում է մի բեղմնավոր համագործակցություն, որի նշանակությունը դժվար է գերազնահատել: Բայց որքան էլ արժեքավոր, այդ համագործակցության ժամանակավոր բնույթը պարտադրված էր պատմական դարգացման սրինաչափությամբ: Այնքանով, որքանով պատմականորեն անխուսափելի էր դեմոկրատիայի տարանջատումը լիբերալիզմից, այդքանով էլ անխուսափելի էր Բաֆֆու հեռանալը Արծրունուց:

Հայ հասարակական մտքի բազմափաստակ ուսումնասիրող Աշ. Նովհան-նիսյանը իր «Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակություն» արժեքավոր հողվածում, բնութագրելով 80-ական թթ. գաղափարական միջնորդը, որը տեղատվություն էր ապրում մի կողմից Հայկական Հարցի ձախողման և մյուս կողմից ցարական կառավարության բռնած ոչ հայանպաստ ընթացքի պատճառով, անխուսափելի է դիտում քաղաքական Հոտանքների տարարածանումը Հենց այդ շրջանում, երբ լիբերալ գաղափարախոսները դիմաշրջվում են ազգային ակաիվ քաղաքականությունից, իսկ ազգային դեմոկրատիան, բնդհակառակը, իր վրա է առնում ազգային քաղաքական և մշակութային պահանջների արծարծման հոգսը (տե՛ս. «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, №1, էջ 15-30):

1884 թվականը ճշմարտամային տարի եղավ Արծրունու համար. նրա ապրած ֆինանսական տագնապը վտանգեց նաև «Մշակի» գոյությունը: Թերթի ճակատագրով մտահոգված դիխավոր աշխատակիցը, թվում է, փրկության խարխուլ գտավ առաջարկելով թերթի հրատարակությունը շարունակել իր կողմած խմբագրական կոլեկտիվի ուժերով (որի մեջ մտնում էին ինքը Բաֆֆին, Գ. Միրզոյանը և Ն. Արեկյանը), որոշակի թոշակ վճարելով Արծրունուն, որը սնանկանալուց հետո պատրաստվում էր մեկնել արտասահման: Բաֆֆին

փայտաբան էր ոչ միայն «Մշակը» փրկելու հույս. թերթի իրավունքը ձեռք բերելով նա ծրագրում էր «Մշակին» հաղորդել նոր ուղղություն: Սակայն «Մշակը» վերափոխելու ծրագրերը ի դերև ելան: Արժույթին մեկնեց արտասահման, իսկ «անբարեհույս» խմբին մերժվեց «Մշակի» հրատարակության իրավունքը: 1884 թ. հուլիսի 11-ին (N 65) դադարեց թերթի հրատարակումը:

Արժույթին արտասահմանում երկար չմնաց: 1885 թ. կեսերին նա վերադարձավ շտապելով վերականգնել թերթի հրատարակությունը, քանի դեռ նրա ընդհատումը չէր անցել մեկ տարուց, և հրատարակության իրավունքը ուժի մեջ էր: Նրան հաջողվեց վերահաստատել իր խմբագիր-հրատարակչի իրավունքը: Մեծ էր Բաֆֆու հիասթափությունը, երբ նա Արժույթուց առաջարկ ստացավ միայն աշխատակցել «Մշակին», իբրև նախկին աշխատակից: Այդ օրերին Բաֆֆին գրեց իր նշանավոր նամակը Արժույթուն, որ բովանդակում է պառակտման ծանրակշիռ հիմնավորումը: Բաֆֆին խորհուրդ է տալիս Արժույթուն մի կողմ դնել «դիկտատորի գավազանը», իր շուրջը համախմբել թարմ ուժեր և նոր հոսանք ու կենդանություն հաղորդել թերթին: Սակայն Արժույթին մերժում է «Մշակը» «ընկերաբար» հրատարակելու Բաֆֆու առաջարկը, և Բաֆֆին հեռանում է թերթից:

Պառակտումը դառնություն պատճառեց, մեծ կորուստ եղավ «Մշակի» համար, սակայն չխանգարեց, որ պահպանվի երկուստեք հարգանքը՝ ազգին մատուցած ծառայությամբ պայմանավորված: Պառակտումից չորս տարի անց Բաֆֆու անսպասելի մահվան բոթն առնելով Արժույթին գրողի պայծառ հիշատակին նվիրված ջերմ հոդված գրեց՝ նրա մահով երիտասարդությանը զրկված տեսնելով իր գաղափարական առաջնորդից, հասարակությանը բարձր իդեալների մատակարարից: «Մշակը» հետմահու տպագրեց Բաֆֆու վերջին հոդվածը (1889, N 9), որ թղթերի մեջ հայտնաբերել էր գրողի այրին ու հանձնել խմբագրությանը: Այն գնահատանքի հուզիչ խոսք էր «Մշակի» մասին, որի լծակի ծանրության մի կողմը 14 տարի իր ուսերին տարել էր գլխավոր աշխատակիցը: Այդ հոդվածը Բաֆֆու ստորագրությամբ հաստատված մի երաշխավորագիր է, որով հայ մամուլի պատմության պատվավոր պատվանդանի վրա Գրիգոր Արժույթու «Մշակի» տեղը կարելի էր համարել երաշխավորված: Բաֆֆին Արժույթու և «Մշակի» անուրանալի արժանիքն է համարում «կրիտիկական հայացքի», «ինքնաքննության և ինքնաճանաչության» ոգին հայ հասարակության սեփականությունը դարձնելը:

Անցյալ դարի 70-80-ական թվականների Հայ Հասարակական մտքին բնորոշ է գաղափարական սուր պայքարը և լրագրական բանավեճի աննախադեպ ծավալումը: Դա ևս մեծ մասամբ «Մշակի» ծառայութունն էր: Նրա սուր Հարցադրումները, կյանքը բևեռացված դիտարկելու մեթոդը, նորոգչական անվերապահ պահանջները գաղափարակիցներ զորակոչեցին ոչ միայն մշակական բանակը, այլև նրա դեմ Հանեցին Հակառակորդների բավական պատկառելի մի բանակ:

Արծրունին Հայ լուսավորիչների երկրորդ սերունդն է ներկայացնում, «Մշակը» «Հյուսիսափայլի» Հետնորդն է: Եթե Արծրունին շարունակում էր նազարյանի գիծը, ապա Բաֆֆին Միքայել Նալբանդյանի: «Հյուսիսափայլից» Արծրունին ընդօրինակելի էր գտնում նրա քննադատական ոգին:

Հասարակական նոր օրգանիզմի երկունքի պահին նրա ծնունդը գաղափարապես նախապարաստող ուժերի մի մասը մտահոգված էր այն նոր կողմերի մշակմամբ, որով նորածինը պիտի տարբերվեր Հնից, իսկ մյուս մասը նախանձախնդիր էր այն գծերի պահպանմամբ, որոնք ժառանգաբար պիտի անցնեին նոր օրգանիզմին: Հասարակական զարգացման ուղիների ընտրության խնդիրն էլ բնիած էր լիբերալ-մշակականների և ազգային-պահպանողականների բանավեճի Հիմքում. արմատական «Մշակը» արտահայտում էր կյանքը նորոգելու, իսկ ազգային-պահպանողականները՝ ավանդականը իբրև Հենարան պահպանելու պահանջը: Սկզբում «Մշակը» իր սուրը խաչեց «Մեղու Հայաստանի» թերթի Հետ, որը, Ստ. Մանդինյանից Պ. Սիմեոնյանին անցնելով, Հանել էր կղերաֆեոդալական Հանդերձը և դարձել ազգային-պահպանողական թերթ: Ինչպես ընդունված է ասել, կողմերի բանավեճի թթիվորը Հոգեորականության Հարցն էր: Իբրև բուրժուական լուսավորիչ, Արծրունին ավարտված էր համարում Հոգեորականության Հեղեմոն դերը ազգի մտավոր կյանքում և նրա կազմակերպությունը արմատական վերափոխման ենթարկելու և ազգի ընդհանուր առաջադիմության գործին լծելու խնդիր էր դնում: Արծրունին «Մշակի» էջերը բացել էր բոլոր Հայերի առջև՝ անկախ դավանանքից, ձգակելով համազգային օրգանի առանձնաչորհուր: Նա խտտագույնս դատապարտում էր Հայրենիք Հասկացությունը տեղ եկեղեցիում դնելու ձգտումը, որը քայքայում էր ազգի միասնական մարմինը: Իբրև ազգային գաղափարախոս, նա ազգի գոյությունը պայմանավորում էր ոչ

թե կրոնով, ի հակակէջն ազգային-պահպանողականներին, այլ հայրենի հողով, լեզվով, ազգային առանձնահատկություններով: «Կրոնները կարող են իրար հաջորդել, սակայն ազգությունը մնում է հաստատ», պնդում է նա (1873, №24): «Մշակը» կոչ է անում բոլոր դավանանքի հայերին միավորվել՝ ազգի միասնությունը կարևորելով իբրև ազգի գոյության պայման (տե՛ս 1880, №121): Հաշտություն դասակարգերի միջև, հաշտություն այլադավանների միջև, - սա է Արծրունու միասնական ազգի իդեալը:

Արծրունին պատահական չի համարում, որ և՛ «Հյուսիսափայլը», և՛ «Մշակը» ազգի և եկեղեցու թշնամի ու դավաճան են հայտարարվում «Մեղ-վի» խմբագիրների կողմից: Նա «Մեղվի» և՛ հին, և՛ նոր խմբագրի բաժինն է համարում խավարասիրությունն ու հետադիմությունը: Երբ 1885 թ. «Մեղուն» դադարեց, «Մշակը» նրա մահը «բնական» գտավ: Արծրունին, իհարկե, ընկնում էր ծայրահեղության մեջ՝ հին ու նոր «Մեղուն» նույնացնելով: Նա, փաստորեն, անգիտանում էր կղերաֆեոդալական պահպանողականությունը բուրժուական ազգային-պահպանողականությամբ փոխարինվելու պատմական իրողությունը: Նոր «Մեղուն» նույնպես բուրժուական թերթ էր, սակայն, ավելի աջ, նա ավանդականի պահպանման նախանձախնդիր էր և իր այս ճիգի մեջ ֆեոդալացնում էր եկեղեցու դերը, որպես ազգի հոգևոր հենարանի և ազգապահպան հիմնավոր սյունի: Մեղադրել «Մեղվին» եվրոպական քաղաքակրթության նկատմամբ նիհիլիզմի մեջ, ինչպես վարվում էր «Մշակը», լոկ իրեն վերապահելով այդ քաղաքակրթության մունտրիկ դերը Հայ իրականության մեջ, անարդարացի է: «Մեղուն» կողմնակից էր ներմուծման միայն թե ընտրողաբար, ավանդականը ոչ քամահրելով: «Մեղվի» գիծը խոցելի էր այլ ծայրահեղությամբ. նա գերազնահատում էր բարոյական գործոնի դերը ի հաշիվ տնտեսականի: Հոգևորականության դեմ «Մշակի» վարած հրապարակային «դատավարության» մեջ «Մեղուն» ստանձնում է դատապաշտպանի դեր՝ նրան անհարիր դասելով «կղերական» ասականը և ազգապահպան դերը անսասան դիտելով:

Հայկական հարցի լուծման խնդրում «Մշակի» և «Մեղվի» դիրքերը որոշակիորեն տարբեր էին. «Մշակի» կոչնակած զինված պայքարի միջոցները «Մեղուն» անհեռատես, վաղաժամ ու վտանգավոր էր դիտում զուշավոր քաղաքականության, «խաղաղ հեղափոխության» իր գիծը հակադրելով հաստատվող թերթին:



Ազգային-պաշտպանողական հոսանքի դեմ «մշակի» գաղափարական պայքարը իր նոր փուլը մտադ Ար. Լովչաննիսյանի «Փորձ» և «Արձագանք» պարբերականների հրատարակումով: Բանավեճը ավելի տեսական խորություն ստացավ, մասնավորապես լեզվի զարգացման խնդիրների վերաբերյալ: Հայ ժողովրդին եվրոպականացնելու տենչը ուղեկցեց Արծունու ողջ հրապարակախոսությունը: Հին ու նոր լեզվի հարաբերություն և աշխարհաբարի հեռանկարի հարցում անգամ նա նախում էր դեպի եվրոպա բացված լուսամուտը պնդելով, որ մարդկություն հետ համաքայլ ընթանալու համար ազգային լեզուն էլ պետք է մշակվի «եվրոպական քաղաքակիրթ առաջագեմ լեզուների զարգացման համեմատ»: Ընդամենն ազգային զարթոնքը նա կապում էր ինչպես մամուլի և գրականության, այնպես էլ լեզվի «ուսմկացման» հետ ընդամառ՝ զնալով լուսավորական շարժման դեմոկրատական միտումներին:

«Փորձը» և «Արձագանքը», լինելով ավելի ուշ շրջանի հրատարակություններ, ազգային-պաշտպանողական հոսանքի գաղափարախոսությունը ձերբազատեցին նախապաշարված սահմանափակ տեսակետներից նրան տալով ավելի «բուրժուական» տեսք: Աղերսներ հայտնաբերելով լիբերալիզմի հետ նրանք հաստատեցին այն իրողությունը, որ լիբերալիզմը և ազգային-պաշտպանողականությունը, անկախ նրանց «անհաշտելի» հակամարտություն, բուրժուական գաղափարախոսությունների կրողներն էին: Ազգի բուրժուական զարթոնքը նրանց միասնական նպատակակետն ու հաշտեցման հանդիսադարձն էր, ուր նրանք շտապում էին տարբեր ճանապարհներով: Ա. Լովչաննիսյանի պարբերականները ևս հայ եկեղեցու ազգապաշտպան դերի և նրա հեղինակություն նախանձախնդիրներ էին, հայ ժողովրդի ազգային ավանդների մոլեռանդ պաշտպաններ: Կապիտալիզմի զարգացման հարցերին «Արձագանքը» ավելի զգաստ հայացքով էր նայում, և շարաթափերի տնտեսական նախագծումներում դժվար է հակասություններ հայտնաբերել «Մշակի» հետ: Պարզապես նա այդ հարցերին համեմատաբար քիչ տեղ էր տալիս գերադասելով քննարկել ազգի զարգացման բարոյաէթիկական խնդիրները: «Արձագանքը» ավելի ցավազին էր ընդունում կապիտալիզմի բերած բարոյական ավերածությունները և պահանջում էր քննադատաբար մոտենալ եվրոպական քաղաքակիրթությանը, որը «Մշակը» անվերապահորեն զովարանում էր: Հենց զրա համար էլ ազգային-պաշտպանողական թերթը կառչում էր անցյալի արժեքներից, որպես ժողովրդի ազգային

նկարագիրը անաղարտ պահելու միջոցի: Աշխարհաբարի զարգացման գործում «Արձագանքի» տեսաբան Ն. Քարամյանը «Մշակի» դիրքը որակում էր որպես օտարամոլութուն, գրաբարը դիտում իբրև նոր լեզվի համար մայրական ստնտու. «Արձագանքը» «Մշակի» ուղղութիւնը համարում էր ազգի համար վնասակար և, մերժելով ազգի առաջադիմութիւնը նպաստելու նրա մենաշնորհը, իր ընտրած ուղին էր համարում ճիշտ: Դա պատմական դպրոցի ուղղութիւնն է, որը «Արձագանքի» համար գիտութիւն վերջին խոսքի արժեք ունեն, քանի որ հենվում էր ազգերի զարգացման առանձնահատկութիւններին, պատմական անցյալին:

Արծրունին գրականութիւն առջև դնում է նույն խնդիրը, ինչ հրապարակախոսութիւն ինքնաքննութիւն արահետով ազգի հասարակական-քաղաքական վերածնունդը: Նա երազում էր տեսնել մի գոգոյան դպրոց հայ գրականութիւն մեջ: Նա շրջանառութիւն մեջ դրեց «տենդենցիոզ» գրականութիւն տերմինը՝ պաշտպան կանգնելով բարձր գաղափարային, հասարակականորեն օգտակար գրական արտադրանքին: Գրական այդ մանիֆեստին ամենից լավ ծառայում էր Բաֆֆին: Հասարակութիւն արատները անխնա մտրակող «Մշակին» Բաֆֆին ոչ միայն օգնում էր մերժելու իր դարն ապրածը, այլև մատուցում էր քաղաքական իդեալներ՝ կերտված ռոմանտիզմի հրապուրիչ գույներով: Սակայն գտնվելով գրական ուղղութիւններին հաջորդափոխութիւն պատմական փուլում՝ «Մշակը» պաշտպանում էր նաև քննադատական ռեալիզմի իրավունքները: Ծիշտ է, նրա էջերում այն շարքատվորվեց ռոմանտիզմի գազաթը հատկանշող երկերին համարժեք գործերով, բայց իր նպաստը բերեց գրական նոր ուղղութիւն հաղթանակին: Ինքնիզմի կարապետը գյուղագրական գրականութիւնը իր հրապարակախոսական ուղղվածութիւն հարմար եկավ «Մշակի» գաղափարական իդեալներին (Ս. Եղիազարյան, Գ. Պապյան և ուրիշներ): «Մշակը» հրապարակեց Սուեդուկյանի «Համալի մասլահաթները», «Վարինկի վեհերը», Ղ. Աղայանի «Սերը արտաքսված» վիպակը, Վ. Փափազյանի ու Լեոյի պատմվածքները և այլն:

Ինքնորոշվող գրաքննադատական միտքն իր լուրջ հայտերն էր ներկայացնում Արծրունու, Բաֆֆու, Լեոյի, Խ. Մալումյանի տեսական հոդվածներում, որոնց ղեկավարական չափանիշները յուրացված էին ռուս առաջադիմական գեղագիտութիւն գաղտնից: Առհասարակ Արծրունին, լինելով ռու-

սական կողմնորոշման ամենաշերտ պաշտպաններին մեկը Հայ իրականությունից մեջ, իր թերթի էջերում առանձնահատուկ ուշադրություն է արժանացնում ռուս գրականությունը և հրապարակախոսությունը դրանց վերապահելով այն նշանաձողերի դերը, որոնց պետք է ձգտել, հետևել: Արժույնով ռուսական կողմնորոշումը անվում էր այն քաղաքական նկատառումից, որ Հզոր պետությունից Հովանին ազգային ապահովող գոյություն և զարգացում էր խոստանում Հայ ժողովրդին: Նա «Մշակի» առաջադիր խնդիրներին մեկը դարձրեց ծանոթացնել իր ընթերցողներին ռուս առաջադիմական գրականության և հրապարակախոսության ձևաքերումներին դրանց մեջ փնտրելով նաև այն հարցերի պատասխանները, որոնք հասունացրել էր Հայ իրականությունը:

Հայ նոր գրականության զարգացման խթանների մեջ Արժույնին մեծ նշանակություն էր տալիս 40-ական թթ. ռուս հասարակական շարժումներին: «Հայոց նոր գրականություն» առաջնորդող Հոդվածում (1882, №242) նա ուղղակի նշում է, որ «Հզոր գրականական շարժումը Ռուսաստանում իր ներգործությունն ունեցավ քիչ ժամանակից հետո և Հայերիս մտավոր շարժման վրա»: Դրա արտահայտությունն էին Արուսյանը, Պատկանյանը, Նազարյանը, Նալբանդյանը, Շահազիրը, Բաֆֆին և ուրիշներ: Խորամուխ լինելով ռուսական հասարակական հոսանքների մեջ և փնտրելով «Մշակին» համակրելի ուղղություն Արժույնին կանգ է առնում արևմտականների վրա: Կարելի է ասել, որ Արժույնին եվրոպական քաղաքակրթության նույնպիսի կրթող սրտազանդիտ էր, ինչպիսին ռուս արևմտականներն էին 40-50-ական թվականներին: Ռուս գրականության նվաճումները նա վերագրում էր արևմտական այդ շարժմանը և ժուկոփական, Պուշկինին ու Լերմոնտովին համարում «արևմտյանների բանաստեղծներ»: Պատահական չէ, որ ռուս հեղինակներից «Մշակի» էջերում ամենից շատ, թերևս, մեծարվել է Ի. Ս. Տուրգենևը: «Մշակում» հրատարակվել են նրա արձակ բանաստեղծությունները, «Հրեա» վիպակը: Տուրգենևի անունը Արժույնու համար խորհրդանիշ էր մի ողջ սերնդի գաղափարական պայքարի, որը հասունացրեց Ռուսաստանում ճորտատիրական կարգերի կործանումը: Բարձր գնահատականի են արժանանում նաև Գարշինի, Գոնչարովի, Դոստոևսկու, Օսարովսկու, Ուսպենսկու ստեղծագործությունները: Առանձնապես գնահատելի է, որ «Մշակում» մեծակնածանքով են Հոյսովում Բելինսկու, Դորբոյուրովի, Նեկրասովի, Շելդուևովի և մանավանդ Սալախիով-Շչեկերինի անունները: «Вестник Европы»

ամսագրում կարգալուծ Շչեդրինի հոդվածները՝ Արծրունին գրում է առաջնորդող հոդված, որտեղ նշում է. «Ցանկալ մեզ համար մի Շչեդրին, ցնորք կլիներ, բայց ցանկալի է, որ մեր գյուղական կյանքով հետաքրքրողները ծանոթանային Շչեդրինի դիտելու, ուսումնասիրելու և գրելու մեթոդի հետ և աշխատեին հետևել նրա օրինակին մեր գյուղական կյանքի ուսումնասիրության և հետազոտության գործում» (1887, №5): Գեղարվեստական արժանավորության, անզուգական երգիծանքի ձուլումը խորագույն ճշմարտացիության հետ նա համարում է Շչեդրինի տաղանդի բնորոշ գիծը՝ երազելով իր թերթում ևս գյուղական խավարի և Հարստահարության շչեդրինյան մերկացումներ:

«Մշակի» էջերում սուր քննադատության է ենթարկվում ուսու հետադիմական մամուլը, հանձինս «НОВОЕ ВРЕМЯ» և «МОСКОВСКИЕ ВЕДОМОСТИ» թերթերի, բացահայտվում են Սուվորինի և Կատկովի շովինիստական, անմիտ ու կարճատես ելույթների բերած վնասները փոքր ժողովուրդների ազգային կյանքին: «Մշակի» էջերում Արծրունին մեծ տեղ է հատկացրել նաև սլավոնաֆիլության քննադատությանը: Նման ուշադրությունը դալիս է ոչ միայն և ոչ այնքան ուսու հասարակական մտքի տարբեր ուղղությունների նկատմամբ Արծրունու հետաքրքրությունից, որքան սլավոնաֆիլության և հայ պահպանողականության զուգադրմամբ վերջինիս պատմական դատապարտվածությունը հաստատելու և իր դադափարական հակառակորդներին ջախջախելու գործում լրացուցիչ զենքեր հայթայթելու ցանկությունից:

Դեռևս «Մշակի» հրապարակման գաղափարը հղանալիս Գր. Արծրունին այն որոշակի պատկերացումն ուներ, որ թերթը մի յուրատեսակ ազգային դպրոց է, մի մեծ լսարան, որի ունկնդիրը ամբողջ ազգն է: Ազգի հավաքական դաստիարակի պաշտոնը թերթը պետք է զուգորդեր մյուս «կրթիչ հաստատությունների» գործունեությանը, որոնց թվում խմբագիրը առանձնացնում էր ազգային դպրոցն ու թատրոնը:

«Մշակը» առաջադրում է դպրոցը ռեֆորմի ենթարկելու, այն կյանքին մոտեցնելու, պոլիտեխնիկ կրթությունը զարգացնելու մի ամբողջ ծրագիր: «Մշակի» թղթակիցների մեծ մասը ուսուցիչներ էին, որոնք դպրոցական հարցը դարձնում էին համարյա ամեն համարի քննության նյութ, ուսումնական ծրագրերի փոփոխության, ռեալական ուղղության արմատավորման, դպրոցը կյանքին մոտեցնելու, մանկավարժական կադրերի պատրաստման,

ուսուցիչներին նյութական ապահովության և այլ խնդիրները չեն իջնում թեր-  
թի էջերից: «Մշակը» առաջարկում է բանալ արհեստագիտական և երկրա-  
գործական ուսումնարաններ, եղածներին տալ այդպիսի թեքում. դպրոց-  
ներում մտցնել արհեստների ուսուցում: Այս թեմաներով ուշագրավ Հոգված-  
ներից Հանդես է գալիս Խաչատուր Մալումյանը, որը 30-ական թթ. երկրորդ  
կեսից դառնում է թերթի ամենասկտիվ աշխատակիցներից մեկը: Լինելով  
գյուղական միջավայրի ծնունդ և, լավ իմանալով գյուղի Հոգսերը (նա եղել է  
ուսուցիչ Մեղրիում և Աղուլիսում), նարդնիկ Հրապարակախոսը «Մշակի»  
էջերում եռանդով պրոպագանդում է ժողովրդին լուսավորելու և նրան տնտե-  
սական բարեկեցության Հասցնելու գաղափարը: Օժտված լինելով լրագրական  
անուբանալի շնորհքով, նա պաշտպանում և զարգացնում է Արծրունու տե-  
սակեաները, Հաճախ Հանդես գալիս առաջնորդող Հոգվածներով:

«Մշակում» առանձին ուշադրության են արժանանում իզական դպրոց-  
ները. դա բխում էր կնոջ Հասարակական դերի ակտիվացման «Մշակի» լայն  
ծրագրի իրականացման մտահոգությունից: Կարելի է անվարան պնդել, որ  
անցյալի Հայ մասնուլում ոչ մի պարբերական այնպիսի ուշադրություն չի  
նվիրել կնոջ ազատագրության Հիմնահարցին, ինչպես «Մշակը»: Հենց նրա  
էջերում երևացին առաջին կին թղթակիցները, որոնք, խմբագրի խրախուսիչ  
առաջնորդողներով ոգևորված, ազատորեն գրում էին իրենց Հուզող խնդիր-  
ների մասին շատ Հաճախ առաջ անցնելով խմբագրի Հարցադրումներից: Աշ-  
խատանքով ձեռք բերած անկախությունը Արծրունին Համարում էր կնոջ ա-  
զատության առաջին աստիճանը, որին պետք է Հաջորդեր պայքարը տղա-  
մարդու Հետ Հավասար քաղաքացիական իրավունքներ նվաճելու Համար: Հայ  
կնոջ ազատագրությանը նվիրված Արծրունու Հրապարակած նյութերով Հե-  
տագայում (1912 թ.) կազմվեց «Հայ կինը» վերնագրով մի ժողովածու, որի ա-  
ռաջարանում Արծրունին իրավամբ մեծարվում է որպես «իրավագուրկ Հայ  
կնոջ պաշտպան»:

«Հայոց թատրոն» խորագիրը եղել է «Մշակի» մշտական բաժիններից  
մեկը, որը շատ Հաճախ զրազեցնում էր թերթի առաջին սյունակը, իբրև ա-  
ռաջնորդող: Թատրոնը դիտելով իբրև կենդանի լրագիր Արծրունին սրում է  
«ժողովրդական, ազգային բեմական արվեստի» զարգացման անհրաժեշտու-  
թյունը. Թատրոնը մի բուռ գվարճասերներից խլելու և ժողովրդին Հանձնելու  
կենսական պահանջը: Թատրոնի գեմոկրատացումը դիտվում է որպես նրա  
գոյության և զարգացման պայման (1872, №31): «Մշակը» Սուեդուկյանի

ստեղծագործութիւնի գաղափարական և գեղարվեստական արժանիքների ե-  
ռանդուն պաշտպանն էր, նրա դրամատուրգիայի առաջին գնահատողն ու  
պանծացնողը, նրա պիեսների օրինակով «աամկական» լեզվով ժողովրդի բուն  
ապրած կյանքը բեմ հանելու ջատագովը: Արծրունուն կարելի է համարել մեր  
առաջին թատերական քննադատներից մեկը, որը երկու տասնամյակ  
անընդմեջ հուզեց բարձր գաղափարներով ներշնչված, հանդիսատեսի մեջ  
«փոթորիկ առաջ բերող» թատրոնի անհրաժեշտութունը և, դերասանին հա-  
մարելով կենդանի քարոզիչ, դրեց ուսուցչի և խմբագրի կողքին:

Հայկական կյանքի ոչ մի ոլորտ դուրս չմնաց «Մշակի» ուշադրութունից.  
Արծրունու խոսքերով «մի ձեռքում քլուեազը, իսկ մյուսում ջահը», նա  
նետվեց քանդելու ֆեոդալական բոլոր կապանքները և հայ ազգին դուրս բե-  
րելու համաշխարհային քաղաքակրթութիւնի լայն ճանապարհ: Նա եղավ եվ-  
րոպական լրագրական կուլտուրայի ներմուծողը հայ իրականութուն  
մամուլը մոտեցնելով կյանքին, ստեղծելով թղթակիցների մի իսկական բա-  
նակ, ընթերցողի հետ խոսելով նրան հասկանալի պարզ, մտերիմ լեզվով:  
«Մշակի» հեղինակութունն անց աննախադեպ չափերով. ծնվելով իրրև շա-  
բաթաթերթ 1877 թ. լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ, իսկ 1878 թ.  
դառնում է ամենօրյա. նրա բաժանորդների թիվը առաջին տարվա 500-ից  
անելով հասնում է 1300-ի (1879-1881 թթ.): Ֆինանսական տագնապի  
պատճառով 1884 թ. մեկուկես տարով ընդհատվելով 1886-ից «Մշակը» հրա-  
տարակվում է շաբաթական 3 անգամ: Իրավունք ունեւր Արծրունին, երբ  
թերթի 20-ամյակին նշում էր, որ «Մշակը» ստեղծել է մի ամբողջ դպրոց: Այդ  
դպրոցում իրենց ժուռնալիստական մկրտութունն ստացան հայ մամուլի շատ  
անվանի գործիչներ՝ Ա. Արփիարյանը, Լեոն, Մ. Փորթուզալյանը, Ա.  
Քալանթարը, Ա. Արասխանյանը, Ա. Աթնասյանը և ուրիշներ: Արծրունին  
վստահ էր, որ իր մահից հետո մշակական «կուսակցութունը» կստեղծի մի  
նոր խմբագրութուն, որը նույն հունով առաջ կտանի թերթը: Այդպես էլ  
եղավ: 1892 թ. դեկտեմբերի 19-ին կյանքի կես դարը չբոլորած նշանավոր  
հրատարակախոսը կնքեց իր մահկանացուն: «Մշակի» ոչ միայն տարվեթ-  
ջյան երկու համարները, այլև յոթ ամիս հետո նոր խմբագրի Ա. Քալանթարի  
ստորագրությամբ լույս տեսած թերթի առաջին համարը ամբողջապես  
նվիրված էին Գրիգոր Արծրունու հիշատակին: Պանծացնելով «Մշակի» ան-  
զուգական խմբագրի դերը հայ մամուլի և հրատարակախոսութիւնի պատմու-  
թյան մեջ որպես նոր էջի բացողի՝ նրա աշակերտները միաժամանակ երգվում

էին Հաճատարիմ մնալ արծրունյան «Մշակի» ոգուն, շարունակել նրա գործը: Եւ պետք է ասել որքանով նոր «Մշակը» Հաճատարիմ մնաց Հին «Մշակի» լազադույն ավանդույթներին՝ ժամանակի պատգամախոսը և առաջադիմութեան գրոշակակիրը իրենելուն, պահպանեց իր ազդեցութունը Հասարակական առաջադեմ շրջաններում:

«Մշակի» կեսդարյա պատմութեան մեջ առաջին երկու տասնամյակը առանձնանում է որպէս բեղմնավոր, առաջադիմական, Ֆեոդալիզմի մնացորդների դեմ անհաշտ պայքարի, դեմոկրատական հոսանքի Հետ դաշինքի շրջան: Եւրունակելով «Հյուսիսափայլի» գործը Արծրունու «Մշակը» պայքարեց Հայ Հասարակութունը նահապետական կապանքներից ու Հետամնացութունից ազատելու, մամուլը կյանքին մոտեցնելու և կենսական խնդիրներին ծառայեցնելու Համար: Նա մեծ նպաստ բերեց Հայ նոր գրականութեան, մշակույթի և դպրոցի զարգացման գործին: Այս բոլորը Հիմք են տալիս «Մշակի» Հրատարակ գալը Հայ մամուլի պատմութեան մեջ դիտել իրրե շրջադարձային կետ, երբ լրագիրը դառնում է կյանքի վրա ներգործող գործիչ՝ ուժ, ժողովրդին կրթող, նրա մեջ ազգային ինքնագիտակցութուն և քաղաքացիութուն դաստիարակող մի իսկական ազգային Համալսարան:

### «ՄՈՒՐԸ» (ԻՒՆ շՐՁԱՆ, 1889-1900)

XIX դարի 70-80-ական թվականներին կապիտալիստական Հարաբերութունները Հաստատեցին իրենց իրավունքները Հայ իրականութեան մեջ: «Մշակը» մեծապես նպաստեց դրան լրագրային պարբերականութեամբ հուզելով և փութացնելով օրվա կենսական խնդիրների լուծումը: Սակայն արագորեն դարգացող տնտեսութունը, Հեղաբեկվող սոցիալական Հարաբերութունները, վերելք ապրող նոր դպրոցը, դեմոկրատացող նոր գրականութունը, արվեստն ու թատրոնը, ինքնորոշվող գիտութեան ճյուղերը սրեցին Անդրկովկասում Հայկական նոր ամսագիր ունենալու պահանջը: Այն կոչված էր ձերբագատելու օրաթերթի սուղ էջերում կաշկանդված Հրատարակախոսութունը և Հարստացնելու տեսական-գիտական միտքը: Ժամանակի Հասունացրած այդ խնդիրն իրականացրեց տնտեսագիտութեան դոկտոր Ավետիք Արասխանյանը, որը 1889 թ. հունվարից սկսեց լույս ընծայել «Մուրճ» անունով Հասարակական-քաղաքական և գրական ամսագիր: Դա Ա. Հովհաննիսյանի «Փորձից» Հետո եվրոպական տիպի Հայկական երկրորդ

ստվարածավալ ամսագիրն էր (126-300 էջ): Իր հասարակական-քաղաքական դիրքորոշմամբ «Մուրճը» ամբողջացրեց լիբերալ հոսանքի եռանկյունին, որի հիմնադիրը Նազարյանն էր, շարունակողը և զարգացնողը Արծրունին և Արասխանյանը: Ըշտեղով իր քաղաքական դիմագիծը ամսագիրն արագորեն դառնում է հայ բուրժուական մտավորականության ձախ թևի օրգանը՝ հատկանշված լիբերալիզմի և դեմոկրատիզմի բարդ ներթափանցումներով:

Ավ. Արասխանյանը ծնվել է 1857 թ., Վերին Ագուլիսում: 1876 թ. ավարտելով Թիֆլիսի ռեալական դպրոցը մեկնում է Եվրոպա բարձրագույն կրթություն ստանալու: Ուսումը Լայպցիգի, Փարիզի և Ստրասբուրգի բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվում է տնտեսագիտություն դոկտորի աստիճանի ձեռքբերումով: Հրաժարվելով Գերմանիայում գիտական կարիերայի դալժակդիչ հեռանկարից, որ առաջարկում էր նրան նրա ուսուցիչը՝ հայտնի տնտեսագետ Շմոլլերը, Արասխանյանը շտապում է հայրենիք իր ազգին օգտակար լինելու ցանկություններով: Աշխատակցությունը «Մշակին» ինչպես ուսանողական տարիներին, այնպես էլ Թիֆլիս վերադառնալուց հետո, նրա համար դառնում է լրագրական բեղմնավոր գործունեություն նախապատրաստվելու դպրոց: Բացի այդ, նա Թիֆլիսում դասախոսություններ է կարդում քաղաքատնտեսության վերաբերյալ, բացում առևտրաարդյունաբերական դասընթացներ: Արծրունու հետ ունեցած տարածայնություն պատճառով Արասխանյանը հեռանում է «Մշակից» և ձեռնամուխ լինում սեփական պարբերական ստեղծելու գործին:

Ամսագրի առաջին համարը բացվում է «Մուրճ» ամսագիրը որպես հասարակական օրգան» առաջնորդող հոդվածով: Դա ամսագրի սոսկական ծրագիրը չէ, այլ հայ հասարակական մտքի, նրա տարբեր ուղղությունների մի հետաքրքիր վերլուծություն, որը մատնանշում է նաև նոր պարբերականի տեղը գաղափարական ճակատում: Մեծ դեր վերապահելով մամուլին Արասխանյանը «Հյուսիսսփայլով» և «Մշակով» պարբերացնում է հայ ազատամտականության երկու փուլերը և իր ամսագրի դերը կոչված տեսնում շարունակելու և զարգացնելու նախորդների գործը, իր նպատար բերելու հայկական «վերածնելիությունը», այսինքն բուրժուական դարձնիքին: Ուշագրավ է, որ «հայ հասարակական հառաջադիմությունը» Արասխանյանն ակոսյամ է տեսնում ոչ միայն «Հյուսիսսփայլ»- «Մշակ» ազատամտական ուղղությունը, այլև «ազգային շիրլայով», որի հիմնադիրը համարում է Մ. Աղաբեկյանի «Կոունկ» ամսագիրը: Եթե առաջին ուղղությունը մարդկային



ընդհանուր քաղաքակրթութեան ներմուծողն էր Հայ իրականութիւն, ապա երկրորդը ազգի պատմական ձեռքբերումների ավանդապահն էր: Երկու ուղղութիւնների Համերաշխման, նրանց դրական իղեալների վրա ձեռքած է «Մուրճ» ամսագրի խմբագրի գաղափարական նախասիրութիւնը:

Այ. Արասխանյանի տնտեսագետ լինելու Հանդամանքը պայմանավորում էր ամսագրում սոցիալ-տնտեսական Հարցերի գերակշռութիւնը: Անաշառ քննութեամբ ուսումնասիրել տնտեսական խնդիրները և պարզել երկրի զարգացման Հեռանկարները, այս ծրագիրը «Մուրճի» հասարակական, քաղաքական և գրական կոչումներին ավելացնում է մեկը ևս՝ գիտականը: Արասխանյանը Հանդես է գալիս որպես բարձր զարգացած կապիտալիզմի կողմնակից, և նրա բոլոր գծողութիւնները բխում են Անդրկովկասում կապիտալիզմի անբավարար զարգացումից: «Մուրճը» Հանդես է բերում տեղական ազգային արդյունաբերութեան զարգացման շահախնդրութիւն, Հայ կապիտալիստների վրայից «ասիական տարազը» Հանելու և նրանց եվրոպական քաղաքակիրթ տեսք տալու մտահոգութիւն:

Ինչպէս խմբագիրը, այնպէս էլ ամսագրի տեսարանները, Հատկապէս տնտեսագետ Գրիգոր Վարդանյանը, տնտեսական Հարցի ռեֆորմիստական յուծմամբ և կապիտալիզմի արմատավորմամբ են պայմանավորում Հայ ժողովրդի Հետագա զարգացումը: Մատնացույց անելով օտար կապիտալի գործած «Հրաշքները» Անդրկովկասում, Վարդանյանը ցավով եզրակացնում է, թէ «մենք կմնանք միշտ կախված օտար կապիտալիստներից, որոնք մեզ վրա իշխում են, որովհետև նորա ամեն բանում գերազանցում են մեզ» (1892, №5, էջ 730):

«Մուրճը» ավելի մեծ տեղ է Հատկացնում «բանվորական խնդրին», քան դա անում էր մանր արտադրողի պրոլետարացումից վախեցող «Մշակը»: Ամսագրի էջերը լի են բանվոր դասակարգի ծանր վիճակի նկարագրութիւններով: Հետաքրքիր Հոդվածներով Հանդես է գալիս Գ. Ղարաջյանը: Լինելով մարքսիզմի առաջին տարածողներից մեկը Անդրկովկասում Ղարաջյանը նոր տեսանկյունից է մտնում բանվորական խնդրին՝ ծագելով այն մարդկանց ապարդյուն ջանքերը, ովքեր աշխատում էին խափանել նոր դասակարգի ծնունդը (տե՛ս 1894, № 1, էջ 103):

«Բանվորական խնդիրը» Հոդվածում (1897, №11-12) Արասխանյանը բավական իրական դույներով է ներկայացնում կապիտալիստական աշխարհը, մատնացույց անում անհավասարութիւնները «ժողովրդի մեծամասնութեան

և նրա փոքրամասնության միջև», այսինքն դասակարգային հակամարտությունը: Երբ հարկ է լինում ընտրել պայքարի միջոց, նա հայացքը դարձնում է դեպի տրեդ-յունիոնիստական շարժումը, քանի որ նախապատվությունը տալիս է օրենսդրական ճանապարհով ձեռք բերվող տնտեսական բարեփոխումներին: Բուրժուական ռեֆորմիզմը մենում է Արասխանյանի աշխարհայացքի լեյտմոտիվը, որին մենում է հավատարիմ իր ողջ կյանքում:

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման անհրաժեշտությունը հիմնավորելու նպատակով խմբագիրը դիմում է նաև մարքսիզմի տեսական գիտնանոցին՝ հողվածներ տպագրելով տնտեսագիտական նոր ուսմունքի մասին:

Արասխանյանի աշխարհայացքի դեմոկրատական դրսևորումները ցայտուն արտահայտություն գտան հատկապես հայ գյուղի խնդիրը ամսագրի էջերում արծարծելիս: «Մուրճի» խմբագիրը մեծ հարգանքով է գրում ուսական «Համակրելի» շարժման նարոդնիկության դեպի ժողովուրդը ղնալու երևույթի մասին, ամեն կերպ աշխատում դրա արձագանքը տեսնել հայ իրականության մեջ: Կարելի է վստահորեն ասել, որ դարավերջի հայ գյուղը ժամանակի ոչ մի պարբերականում այնպիսի ճշմարտացի և բազմակողմանի լուսաբանման չի արժանացել, ինչպես «Մուրճում», շնորհիվ նրա տեսաբանների, գավառական թղթակիցների և հայ գյուղագիրների, որոնք «ժողովրդագետ գրողների խումբ» անունն ստացան:

Խմբագիրը և թերթի գլխավոր տեսաբան Գ. Վարդանյանը 1861 թվականի գյուղացիական ռեֆորմի և «աղատարար» Ալեքսանդր 2-րդ թագավորի մասին մեծարանքի խոսքեր չեն խնայում, սակայն գտնում են, որ ռեֆորմի կիրառումը տեղերում աղավաղվեց՝ չհասցնելով ցանկալի արդյունքի: «Գյուղացիների ներկա դրությունն այնպես է, որ կարծես թե ազատության բարիքները նոքա չեն վայելել, և օրենքի բարերարությունը առերևույթ է անցել», - կարդում ենք «Մուրճում» (1892, №7-8, էջ 1140): Իսկ մի քանի տարի անց ամսագրի տեսաբանը ուղղակի հավաստում է. «1861-ին շնորհված ազատությունը սպասածին հակառակ, բացասական հետևանքներ է ունեցել» (1896, №3-4, էջ 454): Այդ հետևանքների մեջ առանձնացվում է ժամանակի ամենացավոտ հարցը՝ «պանդխտության խնդիրը»: Սոցիալական անխուսափելի երևույթի եթե ոչ առաջն առնելու, ապա այն մեղմելու միջոց է դիտվում գյուղական վարկը, ջրանցքների, շտեմարանների կառուցումը, գյուղատնտեսական գիտելիքների տարածումը: Ամսագրի թղթակիցները անարգանքի սյունին են դամում անխիղճ ու ազահ վաշխառուներին, պատ-

մում սակավահոգությունից որ որի ազքատացող գյուղացու անելանելի վիճակի մասին:

Արասխանյանը մեծ հույսեր էր կապում ժողովրդասեր մտավորականության հետ. «Այդ դասակարգը կոչված է հեղաշրջում կատարելու հայկական կյանքի մեջ... նա կոչված է գլխավոր ղեկավարը լինելու գյուղական ժողովրդին, որ այժմ կատարելապես անղեկավար է, խորապես տղես: նա պիտի լինի մտքերի միջնորդը գիտության ու գրականության և գյուղական ժողովրդի միջև» (1899, №9, էջ 1086): Այս տողերը խտացնում են ամսագրի ծրագիրը, որի պաթոսը ժողովրդասիրությունն է, բովանդակութունը՝ լիբերալիզմը: Հենց այդ ծրագրի իրականացմանն է նպատակամղված «Մուրճի» էջերում գյուղագիր գրողների երկերի հրատարակումը, որոնք գեղարվեստական խոսքով, իրականության ճշմարտացի վերարտադրությամբ պիտի հաստատեն, կյանքի կոչեն ամսագրի հասարակական իդեալները:

Դարավերջին գյուղագրական գրականությունը, կարելի է ասել, իր բարձրակետին հասավ «Մուրճի» էջերում: Ամսագրում տպագրվեցին Պ. Պոռշյանի «Յեցեր», «Բղղե», «Հունոն» վեպերը: Ինայիտական խոր ճշմարտացիությամբ պատկերված քայքայվող, հինը կորցրած և նորը դեռևս չգտած գյուղի Պոռշյանի գծած համայնապատկերը հնարավորություն էր տալիս ոչ միայն տեսնելու և ճանաչելու գյուղաշխարհը, այլև մշակելու «գյուղափրկիչ» ծրագիր: Այս խնդրին հետամուտ էին ոչ միայն «Մուրճի» տեսարանները, այլև գյուղագիրները, որոնց ստեղծագործությունը կարելի է դիտել որպես ամսագրի հրատարակախոսության ուղղակի շարունակություն: Հայ նարոդնիկ Ազարիա Աղևյանի անունն անխզելիորեն կապված է «Մուրճի» հետ: Իր մեկ տասնյակ պատմվածքները և «Տգիտության զոհեր» վեպը նա տպագրեց «Մուրճում»: Գյուղական ուսուցիչը պատմում է իր տեսածն ու ապրածը ժողովրդի դժբախտության պատճառը փնտրելով նրա տգիտության, իսկ փրկությունը տեսնելով լուսավորության մեջ: «Մուրճի» էջերում քննադատ ն. Ազարյանը խնդիրը խորացնում է հետաքրքիր հարցադրմով. «միայն տգիտությունը: Իսկ ինքը տգիտությունը ինչի՞ հետևանք է» (1897, №9, էջ 1260-1263): Նարոդնիկ գյուղագիր Բարկեցցի (Գարբիել Մնացականյան) «Նորեկ» վեպը, որը նույնպես ծնունդ էր տպրված կյանքի, նվիրված է մտավորականության հանրօգուտ գործունեությանը: Ազնիվ ձգտման և բուրժուական բիրտ իրականության բախումը, որ վավերացվում է

գյուղագրութեան ռեալիզմով, փաստորեն հաստատում է ամսագրի «գյուղափրկիչ» ծրագրի իդեալիստական լինելը:

Ի պատիվ «Մուրճի» պետք է ասել, որ գրականութեան հարցում նա կողմնորոշվում էր դեպի երիտասարդ սերունդը, դեպի գրական նոր շարժումը, որը դրոշ էր ընտրել գրականութեան ժողովրդայնությունը: Ալ. Մատուրյանը, Լ. Մանվելյանը, Վրթ. Փափաղյանը, Շասթը, Լ. Լակոբյանը, Գ. Դեմիրճյանը, Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը 17-25 տարեկան երիտասարդներ էին, երբ սկսեցին աշխատակցել «Մուրճին»: Այսօր երախտագիտությունը կարող ենք ասել, որ «Մուրճը» կանգնեց բազմաթիվ հայ գրողների գրական օրորոցի մոտ, որոնք «Մուրճի» էջերում թողնելով իրենց ստեղծագործական երախտագրիքը, դուրս եկան արվեստի մեծ ճանապարհ:

«Մուրճում» ամենից շատ հրատարակված բանաստեղծը Ալեքսանդր Մատուրյանն է: Ժողովրդի տառապանքն ու վիշտը, ընդվզման ոգին ու մարտնչման կորովն արտահայտող բանաստեղծությունները Արծիվյան ստորագրությունամբ ամսագրի էջերից հնչում են իբրև պայքարի կոչնակ, քաղաքացիական պոեզիայի հիանալի օրինակ տալով:

Գյուղական աշխարհն իր ցավ ու վշտերով, գյուղացու հառաչանքով ամսագիր է բերում Հովհաննես Թումանյանը («Գուլթանի երգը», «Կալի երգը», «Հառաչանք» և այլն) և հենց «Մուրճի» գրախոսների կողմից մկրտվում որպես ժողովրդակամ բանաստեղծ:

Ժողովրդական պոեզիայի գոհարներով ամսագրի էջերը զարդարելու է գալիս նաև Ավետիք Իսահակյանը: Ն. Աղբալյանի գրախոսությունը բանաստեղծի «Երգեր ու վերքեր» անդրանիկ ժողովածուի մասին հավաստում է գրական երևույթի ողջ նշանակությունը՝ Իսահակյանին միանգամից կանգնեցնելով մեծ բանաստեղծների համար նախանշված պատվանդանին. նրա պոեզիայի բնագծի ամենաթանկագին ու կարևոր մասն է դիտվում ժողովրդակամությունը, որով պոետը կարողանում է «ժողովրդի պես զգալ, նրա սրտով ապրել» (1898, №6, էջ 840-855):

«Մուրճը» արվեստի ճանապարհ հանեց ևս երկու անուն՝ Դերենիկ Դեմիրճյան և Լակոբ Հակոբյան: 80-ական թվականները նրանց դրական մանկություն տարիններն են, բայց հատկանշական է, որ «Մուրճը» նրանց գորավիզ կանգնեց գրողների համար բախտորոշ այդ շրջանում, չնայած նրանց ստեղծագործական հասունացման պոետիկները բաժին ընկան այլ սերնդի:

«Մուրճի» բեղմնավոր աշխատակիցներից է Լևոն Մանվելյանը, որը հանդես էր գալիս և՛ բանաստեղծություններով, և՛ արձակ գործերով, և՛ Հոդվածներով: Դրանք բոլորն էլ ներշնչված են ժամանակի հասարակական հոգսերով: Նրա «Նորտակված կյանք» վիպակը խոսացնում է ժամանակի մասուլի բարքերը, դատապարտում անսկզբունք բանավեճերը ստանալով վավերագրի արժեք:

«Մուրճում» է հրատարակվել Օիրվանազադեի «Արսեն Դիմաքսյան» վեպը, որտեղ երկսայրի սրով հարվածի տակ է առնված դարավերջի և՛ լիբերալ, և՛ պահպանողական մտավորականությունը:

«Մուրճում» հրատարակված Ղ. Աղայանի «Ժամանակակից ատենախոսությունը» մի հետաքրքիր նորույթ էր հայ գրականության մեջ իբրև ուսուցիական սցիպիդմի հայկական մշակում, իսկ նրա «Իմ կյանքի զլխավոր դեպքերը» հուշագրական երկը կենդանագրում է XIX դարի 50-80-ական թվականների գրական-մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի կարևորագույն դեպքերը:

Հայ մտավորականության գերին են նվիրված «Մուրճում» տպագրված Օանթի բոլոր վեպերը (հրատարակել է նաև բանաստեղծություններ): «Երազ օրեր», «Դուրսեցիներ», «Վերժին», «Դերասանուհին», «Դարձ» վեպերի ծրագրային բնույթը համերաշխում է ամսագրի հասարակական ուղղվածությունը, այն է ազդեցու ա գործունեության մղել երիտասարդությունը:

Հայ գեմոկրատական գրականության կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Վրթանես Փափազյանի աշխատակցությունը «Մուրճին» բերում է ոչ միայն գեմոկրատական բնութագիր, այլև հարստացնում ամսագրի ժանրային տեսականին՝ վեպ, պատմվածք, պատկեր, գրույց, նամակ, ուղեգրություն: Փափազյանի, ինչպես նաև Շանթի ոտմանտիզմի հարևանությունը ռեալիստական և ժողովրդային գերակշռող երկերի հետ գրական ուղղությունների հաջորդափոխության դարաշրջանում դարձանալի չէ: Նրանց միավորում էր հասարակական իդեալների նույնությունը:

Այսպիսով, ակնհայտ ու անուրանալի է հայ նոր գրականության զարգացմանը «Մուրճի» բերած նպաստը: Սակայն նա այդ անում էր ոչ միայն գեղարվեստական երկերի հրատարակումով, այլև գրաքննադատական լուրջ ուսումնասիրություններով, գրախոսություններով, որոնք այսօր անզնահասելի նյութ են արամագրում հայ քննադատական մտքի պատմության ուսումնասիրմանը:

Ավ. Արասխանյանը քննադատութիւնը դիտում էր որպէս «գործող գործոն գրական հառաջադիմութեան», որը «բանաձևողը» և «արտահայտիչը լինելով ընդհանրութեան լավագույն մասերի մեջ կազմված կարծիքների», մեծապէս արագացնում է գրական զարգացման պրոցեսը (տե՛ս 1899, №7-8, էջ 895-896): Գրաքննադատութեան հասարակական դերի ու նշանակութեան խոր ըմբռնմամբ «Մուրճի» խմբագիրը ամսագրի շուրջը հավաքագրեց քննադատների պատկառելի խումբ, որոնց մեջ աչքի ընկան հատկապէս Նիկոլ Աղբալյանը, Եղիշէ Մադաթյանը և Կարապետ Կուսիկյանը: Այս քննադատների համար բնորոշն այն է, որ նրանք, լավ յուրացնելով 40-60-ական թթ. ուսուղեմոկրատական գեղագիտութեան պատգամները, գրական երկը գնահատելիս ելնում էին Բեիլինսկու, Դոբրոլուբովի, Պիսարևի առաջադրած չափանիշներից, նախ արժեքավորում ամեն մի ստեղծագործութեան հասարակական նշանակութիւնը:

Վ. Բեիլինսկու մահվան 50-ամյակի առթիվ գրած հոդվածում (1898, №7-9), ցույց տալով հանճարեղ քննադատի բացառիկ դերը ուսու ժողովրդի հասարակական զարգացման գործում, քննադատ Ն. Աղբալյանը երախտագիտութեամբ նաև նշում է. «Մենք հայերս նույնպէս շատ ենք պարտական այդ մարդուն, մեզանից շատ շատերն են սնվել նրա և նրա հաջորդների մտքերից. լինելով ուսու գրականութեան ազդեցութեան տակ, մեր թե՛ գրականութիւնը, թե՛ քննադատութիւնը և թե՛ նորահաս միտքը կրել են նրա ազդեցութիւնը: Միայն ուսները չեն, որ պարտական են նրան, մենք էլ ենք շատ պարտական»:

Քննադատ Կ. Կուսիկյանը «Բանաստեղծ-քաղաքացի» հոդվածում (1897, №5, 6), հենկելով Բեիլինսկու ասույթներին, պաշտպանում է պոետի քաղաքացիութեան բարձր կոչումը՝ պնդելով, որ «երբ արվեստը հեռու է կյանքից և մարդկային կարիքներից, նա չի կատարում յուր իրական կոչումը»: Հոդվածի վերնագրով նա ընդհանրացնում է Ռ. Պատկանյանի բանաստեղծական կերպարը:

Գրաքննութեան կողմից մերժված մի հոդվածում, որ նվիրված էր Չերնիշևսկուն, պանծացնելով մեծ մտածողի հսկայական նշանակութիւնը ուսուական կյանքում, Արասխանյանը նշել է հանճարեղ մտածողի ազդեցութիւնը նաև կովկասյան երիտասարդութեան վրա, երբ «բազմաթիվ պատանիներ Չերնիշևսկու գրվածքները երկրպագութեան պաշտամունք էին շինած» (ՎՍՄՀ, ԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 862):

Իրեն համարելով «Հյուսիսափայլի» հոգևոր ժառանգորդ «Մուրճը» ձգտում է նոր սերունդներին վառել ոչ հեռու անցյալի նշանավոր գործիչների Ս. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի «աստվածային կայծով»: «Ըմբոստ գազափարը հանձինս այդ գործիչների, - գրում է Կ. Կուսիկյանը, - դուրս էր եկել դաշտը և հարվածում էր հասարակության անշարժությունը և ավանդամոլությունը, նրա տգիտությունը և պապական տարտյուֆուսությունը: Նորա սկսել են իրանց գործը համարձակ, հավատով և հուսով, որ իրանց հոգևորուխ խոսքը չի լինի «ձայն բարբառո հանապատի» (1898, №5, էջ 685):

Հայ իրականության հասունացրած խնդիրները լուծելու համար Աբասխանյանը հաճախ էր հայացքը դարձնում դեպի Հյուսիս շատ լավ ըմբռնելով, որ ոուս ազատագրական մտքի որոնումներն ավարտվելու են փրկության ուղիների հայտնությունը ո'չ միայն ոուս ժողովրդի համար: Թարգմանությունները ոուս գասականներից (Գոգոլ, Պուշկին, Լերմոնտով, Տուրգենև, Սալտիկով-Շչեդրին, Գորկի, Չեխով, Ուսպենսկի, Պլեչչև, Կորոլենկո, Կոզմա Պրուտկով, Գարշին, Նազտն) ուղեկցվում են նրանց մասին ուշագրավ հոդվածներով, որոնք նպաստակ ունեն տեսանելի դարձնել այն նշանաձողերը, որոնց պետք է ձգտեր հասնել առնականացող Հայ գրականությունը:

Այ. Մատուրյանը, նախ «Մուրճում» և ապա առանձին գրքույկով հրատարակելով Տուրգենևի արձակ բանաստեղծությունները, գրում է նաև մի գրախոսություն, որտեղ Հայ-ուսական գրական կապերը կարևորում է հետևյալ խոսքերով. «Փամանակն է և հարկավոր, որ մենք ծանոթանանք մի ժողովրդի ստեղծագործություններին, որի հետ այնքան կապված ենք. ոչ մի միջոց այնպես չի մոտեցնում երկու ազգ կամ ժողովուրդ, որքան միմյանց մտքի արտադրություններին փոխադարձ հաղորդակից լինելը» (1896, №10-11, էջ 1349):

Ժողովուրդների փոխադարձ հաղորդակցության անհրաժեշտությունը ըմբռնումը «Մուրճի» էջերում արգասավորվում է նաև համաշխարհային գասականների բազմաթիվ երկերի հայերեն առաջին հրատարակումներով. այդ հեղինակների թիվում են Բայրոնը, Գյոթեն, Հայնեն, Շիլլերը, Սենկևիչը, Մոպսանը, Հյուգոն, Մարկ Տվենը, Լոնգֆելլոն և ուրիշներ:

Հրատարակվելով Թիֆլիսում «Մուրճը» առանձնապես զգայուն էր դեպի վրաց գրականությունն ու արվեստը. Շոթա Ռուսթավելի, Իլյա Ժավճաճաճե, Ալեքսանդր Ղազրեզի, Ե. Գաբաշվիլի, Բարաթաշվիլի, Գ. Մերթելի, ահա այն

հեղինակների ոչ լրիվ ցանկը, որոնց երկերի թարգմանությունները կամ նրանց մասին դրվատական հոդվածները գրադեցնում են ամսագրի բազում էջեր խնդիր ունենալով ամբապնդել հայ-վրացական բարեկամությունը:

Հարկ է նշել, որ «Մուրճը» շարունակեց «Հյուսիսափայլի» և «Մշակի» լուսավորական լավագույն ավանդույթները ամսագրի էջերում պայքար ծավալելով հայոց նոր դպրոցի, թատրոնի, կերպարվեստի ու երաժշտության դեմոկրատացման, դրանք կյանքին ու ժողովրդին մոտեցնելու ուղղությունը:

Արասխանյանի «Մուրճի» հրատարակություն տարիները համընկան հայ ժողովրդի պատմության ողբերգական մի շրջանին՝ 90-ական թվականների հայկական կոտորածներին: Պաշտպան կանգնելով արևմտահայության ազատագրական ոգորումներին «Մուրճի» խմբագիրը բանաձևեց՝ «նրանց ճակատագիրը նաև մերն է»: Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի մեջ հայտնաբերելով մեծ տերությունների թողտվության այն քաղաքականության սաղմերը, որոնք ազատ էին արձակելու սուլթան Համիդի ձեռքերը՝ Հայկական հարցը հայերին ոչնչացնելու միջոցով լուծելու գիշարելի ծրագրի իրականացման համար, Արասխանյանը շորս տարի շարունակ «Ժամանակակից տեսություն» խորագրի տակ Լուսինի ստորագրությամբ քննարկում է արևմտահայության ճակատագրի հարցերը, փորձում պարզել մեծ քաղաքականության որոգայթները փոքր ժողովրդի բախտի նկատմամբ, Արևելյան հարցի մեջ Հայկական հարցի խճճված հանգույցները բանալ: Սակայն «Մուրճը», ինչպես նաև հայկական մյուս պարբերականները, 80-ական թթ. սաստկացած ցարական ռեակցիայի պայմաններում չէին կարողանում լիարերան արտահայտել իրենց ասելիքը: Նյութերի մեծ մասը գրաքննության արխիվների բաժին էր դառնում: Օգնության էր գալիս այլարանական լեզուն. ամենից հարմարը թուրքական լծից ազատագրված բալկանյան ժողովուրդների հերոսական պայքարի մասին պատմելն էր: Սև լեռնյիներին և հերոս բուլղարներին նվիրված հոդվածները դրվատում են զենքին ապավինած ազատագրության հուսալի միջոցը: Ընթերցողներին լայն տեղեկություններ տալով եվրոպայում Հայկական հարցի արժարժումների վերաբերյալ, Արասխանյանը մի որոշ ժամանակ կաշառվում է Գլադստոնի «Հայասիրական ճառերով», սակայն զգաստացումը չի ուշանում: Մեծ տերությունների Մայիսյան նախագիծը, որը մեկ անգամ ևս պարտավորեցնում էր սուլթանական կառավարությանը բարենորոգումներ անցկացնել Հայկական նահանգներում, Արասխանյանը զնահատում է որպես 61-րդ հոդվածի մի նոր



տարբերակ ոչինչ չասող և ոչինչ չպարտավորեցնող: Սասունի կոտորածը խմբադիրը Համարում է աշուղի պատմական դրամայի լուկ մի պատկեր, որին Հաջորդելու ևն ալիլի սոսկայիները: «Մուրճի» Կ. Պուլսի թղթակից Խաչ-Պապյանը այդ մասին մտավարտության իրականացումն է Հաստատում գրելով: «Պուսեն մինչև Տրապիզոն, Կարինեն մինչև Մարաշ և Սերաստիա, կոտորածը մեծ Հրդեհու պես ծավալվեցավ, նարակեցավ բոլոր Տանկահայաստանի և Կիլիկիայի նահանգները... Թուրքերու Համար միակ նպատակ մը կա. Հայերը ջնջել: Միջոցները խիստ շատ են, և առիթներն ու ժամանակը չափազանց նպաստավոր» (1895, №11, էջ 1516): Սա էր Սուլթանի պատասխանը բարենորոգումներն անցկացնելու վերաբերյալ մեծ տերությունների պահանջին: Հայկական Հարցը դանդաղորեն մարում է «Մուրճի» էջերում տեղափոխվելով «Զանազան լուրերի» բաժին, որտեղ խոսում են միայն թվերը, թվերը՝ կոտորածների, դադթականների, որբերի ու որբանոցների, տուժածներիև Հատկացված նպատաների մասին:

Նյութական կարիքը եղել է «Մուրճի» մշտական ուղեկիցը: Խմբադիրը երազում էր ունենալ գոնե Հազար բաժանորդ, իսկ դրանց թիվը 450-ից չանցավ (ամսագրի տպարանակը տատանվել է 400-800-ի միջև): Խմբադիրը դիմում է ունեոր ընթերցողներին փոխառություն տրամադրելու խնդիրքով: Նվիրատուների ջանքերը չեն փարատում վերբը: Դրամական ճգնաժամին ալիկյանում է նաև «Մշակի» կողմից ամսագրին բարոյական ճնշման ևնթարկելու իրողությունը, որը, Ա. Աղելյանի դիպուկ արտահայտությամբ, «Մշակի» գրական փաշայություն արգասիրն էր: Արասխանյանը դժգոհ էր ոչ միայն ետարժույնյան, այլև Արժույնու վերջին տարիների խմբագրած «Մշակից», ինչի մասին գրում էր բանակուվային Հողվածներում փոխարենը արժանանալով Ասիացու Ֆիլիստոններին, իսկ Արժույնու մահից հետո բանակուվային Հարձակումների Ա. Քայանթարի խմբագրած «Մշակի» էջերում:

1900 թ. №6-ից Արասխանյանը պարտքերից ընկճված դադարեցնում է «Մուրճի» Հրատարակությունը: «Մշակը» դա «բնական մահ» է Հորջորջում առաջացնելով առաջավոր մտավորականության բուռն բողոքը: Եվ առաջինը հնչում է Ստեփան Շահումյանի բողոքի ձայնը: «Տարագի» 1900 թ. դեկտեմբերի 24-ի Համարում լույս է առնում մի անստորագիր նամակ Ռիգայի ուսանողության անունից, որի հեղինակը Ստ. Շահումյանն էր: Դատապարտելով բարբերի անկումը մամուլում երիտասարդ Շահումյանը ընդգծում է, որ «Մուրճը» գրականության անկեղծ և անաչառ բարեկամների Համար... միշտ

հետաքրքիր է եղել իր բովանդակությունները և մանավանդ՝ ամբողջ Հայ ընթերցող հասարակության կողմից ճանաչված իր շիտակությունները և ազնվությունները»:

«Մուրճի» կորստից հետո Արասխանյանի հասարակական գործունեության պարագիծը թեքվում է դեպի ցած, գիտական թեքումով պարբերական հրատարակելու դիմումները մերժվում են: Նա նվիրվում է գիտական աշխատանքի միաժամանակ աշխատակցելով տարբեր պարբերականներին: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին նա ձեռնամուխ է լինում Կ. Մարքսի «Կապիտալի» թարգմանությանը, սակայն դրա հրատարակումը չի կարողանում իրականացնել: Արասխանյանը մահանում է 1912 թ. ծայր աղքատության մեջ՝ այդպես էլ չկարողանալով իրականացնել «Մուրճը» վերահրատարակելու երազանքը:

Անուրանալի է Արասխանյանի «Մուրճի» դերը Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության մեջ: Եթե չի կարելի խոսել «մուրճական» ուղղության մասին իբրև հասարակական մտքի առանձին ճյուղի, ապա կարելի է պնդել «Մուրճի» ստեղծած դպրոցի մասին, որը դարձավ Հայ առաջադեմ, դեմոկրատ գրողների կենտրոնատեղի, նրանց գրական մանիֆեստի մշակման դարբնոց: Ժառանգելով «Հյուսիսափայլի» և «Մշակի» լավագույն ավանդույթները «Մուրճը» մի քայլ առաջ մղեց Հայ մամուլի ժուռնալիստական կուլտուրան, հարցերի լայն ընդգրկումով, լուսաբանման գիտական մակարդակով մեծ նպաստ բերեց Հայ ժողովրդի ազգային զարթոնքին և հասարակական զարգացմանը:

«Մուրճը» ունեցել է նաև նոր շրջան, որն ընդգրկում է 1901-1907 թվականները: Այս շրջանում ամսագիրը լույս է տեսել Լևոն Սարգսյանի խմբագրությամբ: Նոր դարաշրջանը քաղաքական նոր մթնոլորտ և ուժերի նոր հաշվեկշիռ բերեց, սակայն ամսագիրը շարունակեց մնալ իբրև դեմոկրատական գրականության առաջատար օրգան:

ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

1860-ական թվականների Հայ պարբերական մամուլի վերելքին Հաջորդում է Հարկադիր խաղաղություն մի յոթնամյակ: 1865-1871 թթ. ասպարեզի վրա մնացել էին «Մեղու Հայաստանի» և «Հայկական աշխարհ» պարբերաթերթերը, որոնց խմբագիրներ Պետրոս Սիմեոնյանը և Խորեն Ստեփանեն, չնայած քաղաքական անբարենպաստ պայմաններին, կարողացան 1860-ական թթ. առաջավոր մամուլի ավանդույթները կամրջել 1870-ական թթ. լրագրություն նոր վերելքի ժամանակներին: 1870-ական թվականներին պատմական բևեռյան նոր գործիչներ, և Հայ լրագրությունը դարձյալ ստանձնեց Հասարակական կյանքի առաջնորդի իր երբեմնի դերը: «Մշակ» լրագիրն անորինակ թարմություն մտցրեց Հայ իրականություն և կարճ ժամանակից սկսեց իշխել մտքերի վրա: Դրա բարեբեր ազդեցությունը թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ վերածնվեց «Մեղու Հայաստանի» շարաթաթերթը: Շուտով հրատարակ իջան «Փորձ» Հանդեսը և «Արձագանք» շարաթաթերթը, այնուհետև «Նոր-Գար» լրագիրը:

Ժամանակի եվրոպական մամուլի չափանիշների այս հրատարակությունները, չնայած նյութական դժվարություններին, ամբողջովին իրենց վրա վերցրին Հայ Հասարակական կյանքի առաջխաղացման, մշակույթի և գրականության զարգացման գործը, քաղաքական իրադարձությունների մեկնարանի և Հասարակական միտքը կազմակերպողի ծանրակշիռ դերը:

Անշուշտ խորհրդանշական է այն իրողությունը, որ թե՛ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին, թե՛ «Նոր-Գարի» և «Արձագանքի» խմբագիրներ Սպանդար Սպանդարյանը և Արգար Հովհաննիսյանը գերմանական համալսարանների շրջանավարտներ էին: 1870-1890-ական թթ. այս խմբագիրները, որ կոփվել էին եվրոպական քաղաքակրթության ավազանում, տաղանդավոր էին և լի գործելու վճռականությամբ: Նրանք անսահման նվիրված էին ազգի լուսավորության և առաջընթացի, նրա անսեսական բարօրության գաղափարների իրականացման նպատակին: Այդ գործիչները, սակայն, ներկայաց-

նում էին երկու տարբեր հոսանքներ և իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում համապատասխան հոսանքի ծրագրով:

Գրիգոր Արծրունին լիբերալ-բուրժուական հոսանքի պարագլուխն էր և իր 25-ամյա լրագրական գործունեության ընթացքում հետևողականորեն պրոպագանդում էր այդ հոսանքի գաղափարները, ամեն կերպ օժանդակում երկրի տնտեսական բարգավաճման, ժողովրդի մտավոր զարգացման ու մշակույթի վերելքի գործին, քննարկում արևմտահայության քաղաքական դրությունն բարելավման հետ կապված հարցերը:

Ազգային-պահպանողական հոսանքը գլխավորում և դրա գործունեությանն ուղղություն էր տալիս արևելագետ Կարապետ Եզյանը, որը թեև ամբողջ կյանքն անց է կացրել Պետերբուրգում, սերտորեն կապված էր հայ իրականության հետ և գործուն մասնակցություն էր ցույց տալիս երկու հատվածների հայության ազգային-մշակութային և քաղաքական կյանքին: Ազգային-պահպանողական աչքի ընկած գործիչներից էին Գևորգ Եվանգուլյանը, Աբգար Հովհաննիսյանը, Պետրոս Սիմեոնյանը, Սպանդար Սպանդարյանը, Ալեքսանդր Երիցյանը և ուրիշներ: Հազվի առնելով քաղաքականության մեջ ընդունված անվիճելի այն տեսակետը, թե յուրաքանչյուր ազգի ապահով գոյության կայուն երաշխիքը պետությունն է, լեզուն և կրոնը և նկատի ունենալով, որ հայ ժողովուրդը վաղուց կորցրել է իր պետականությունը, ազգային-պահպանողականները մճռական նշանակություն էին տալիս ազգի կենսապահովությունը խթանող մյուս երկու գործոնների՝ լեզվի և եկեղեցու անխաթար պահպանմանը: Աշխարհի տարբեր երկրներում ցրված հայության համար Եզյանը եկեղեցին համարում էր անքակտելի մի հանգույց, որի շնորհիվ դարեր ի վեր մինչև ներկա ժամանակները «պահպանվել է մեր ազգայնությունը և ինքնուրույնությունը»<sup>45</sup>: «Մշակի» խմբագիրը չէր բաժանում այդ տեսակետը: Նա իր մարտական ելույթներում բնական զիտությունների պրոպագանդին միացնում էր անցյալի ավանդական հիմնարկները բարեփոխելու, կրոնական ծեսերը վերանայելու, հեղինակությունները քննություն տակ ձգելու պահանջները: Ժամանակի պարբերական մամուլի կջերում այս հարցերի շուրջ ծայր առած բանավեճում երկու տասնամյակ շարունակ միմյանց դեմ պայքարում էին լիբերալ-բուրժուական և ազգային-պահպանողական հոսանքների ներկայացուցիչները: Առանձնապես տեսական էր

<sup>45</sup> ԳԱԹ, Գյուտ Աղանյանի ֆոնդ, վավ. 420:

«Մշակի» մի կողմից և «Մեղու Հայաստանի» ու «Նոր-Դար» թերթերի միջև տարված կատաղի բանավեճը, որի ընթացքում շրջանառություն մեջ են մտնում «մշակականներ», «մեղովականներ» և «նորդարականներ» անվանահոչումները:

Շուտով վրա են հասնում նոր իրադարձություններ: Ռուս-թուրքական պատերազմը օրակարգ է մտցնում Հայկական հարցը, և Հայ Հրապարակախոսները եռանդալիս քննարկում են արևմտահայերին ինքնավարություն տալու խնդիրը: Հակառակ մեր պատմական գրականության մեջ ընդունված այն կարծիքին, թե ազգային-պաշտպանականները հեռու են եղել արևմտահայ ազատագրական շարժումներից, նրանք մեծ ուշադրություն են նվիրում այդ խնդրին: Ինչպես Արծրունու շրջանակի գործիչները, նրանք նույնպես մասնակցում են արևմտահայ շարժումների առիթով կովկասում ստեղծված կազմակերպությունների աշխատանքներին, նյութապես աջակցում սպասվող ազատագրական պայքարի նախապատրաստմանը:

XIX դարի 70-80-ական թթ., երբ քաղաքական և տնտեսական կյանքը ծանր կերպարանք է առնում Արևմտյան Հայաստանում, ազգային-պաշտպանականները դիմադարձ չեն լինում ռուսական պետականությունից: Նրանք Ռուսաստանը համարում են Հայերի «բնական բարերարը», որն անձի և գույքի ապահովություն էր տվել արևելահայերին, և որի հզորությունից հույս ունեին սգավել սլավոնական ճնշված ժողովուրդների հետ լուծելու նաև Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը: Սակայն ցարական կառավարությունը 1880-ական թթ. սկզբին փոխում է իր քաղաքականությունը, իսկ դարավերջին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում սկսում է հետապնդել ազատ մտքի ամեն մի արտահայտություն: 1885 ապա և 1896 թվականներին փակվում են Հայկական դպրոցները, արևմտահայ շարժման հետ կապված գործիչները մեղադրվում են, այսպես կոչված, Հայկական անջատողականության մեջ և հալածվում: Այդ նույն մեղադրանքով «Արձագանք» լրագիրն առնվում է մշտական հսկողության տակ:

Չկարողանալով համակերպվել օրավուր դժվարացող բարոյական և նյութական պայմաններին Պետրոս Սիմեոնյանը 1886 թ. դադարեցնում է «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակությունը: Դարավերջին ցարական գրաքննությունն այնչի է խտացնում հսկողությունը մամուլի հայ օրգանների վրա: 1898 թ. առանց հիմնավոր պատճառի փակվում է «Արձագանքը», իսկ խմբագիր Արզար Հովհաննիսյանին արգելվում է զբաղվել խմբագրական

աշխատանքով: Սպանդար Սպանդարյանն իր համարձակ ելույթների համար 1903 թ. ձերբակալվում և վտարվում է Կովկասից:

### «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» (1863-1886)

«Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը (հետագայում եռօրյա, ապա օրաթերթ) միմյանցից անկախ երկու շրջափուլ է ունեցել: Այն 1858-1862թթ. խմբագրել է Ստեփանոս քահանա Մանդինյանը, իսկ 1863-1886 թթ. (նոր շրջան) Պետրոս Սիմեոնյանը: Սիմեոնյանը ծնվել է 1830 թ., նոր Նախիջևանի Թոփտի գյուղում, 1849 թ. ավարտել է Լազարյան ճեմարանը, այնուհետև 1851-1853 թթ. սովորել է Դորպատի համալսարանում և տեղափոխվել Թիֆլիս: 1853-1883 թթ. աշխատել է Ներսիսյան դպրոցում, իբրև մանկավարժ և տեսուչ: «Մեղու Հայաստանի» թերթի դադարումից հետո երեք և կես տարի խմբագրել է էջմիածնի Աթոռի «Արարատ» հանդեսը, ապա աշխատակցել ժամանակի թերթերին: Նրա գրչին են պատկանում «Արբազան պատմություն հին և նոր ուխտի» և «Ընդհանուր պատմություն (համառոտ) հին և միջին դարերի» աշխատությունները:

Պետրոս Սիմեոնյանը ազգային-պահպանողական հոսանքի առավել գործունյա ներկայացուցիչներից էր, որի տարիների վաստակը բարձր գնահատելով հայ մշակույթի մեծ բարերար Մկրտիչ Սանասարյանը «Մեղու Հայաստանի» թերթի 25-ամյա հոբելյանի առթիվ «ազնիվ և երկարատև ծառայության համար» նրան ցմահ 600 ռ. թոշակ է նշանակել: Սա նախադեպը չունեցող երևույթ էր հայ իրականության մեջ, երբ լրագրողը վարձատրվում էր հասարակական գործունեության համար: Վախճանվել է 1911 թ.: Նրա մահվան կապակցությամբ հայ մտավորականները 1911 թ. հունվարի 30-ին լույս են բնծայում «Մեղու Հայաստանի» թերթի բացառիկ համարը, որն ամբողջովին կազմված էր նրա ժամանակակիցների մեծ հետաքրքրություն ներկայացնող հուշերից:

Պետրոս Սիմեոնյանը «Մեղու Հայաստանի»<sup>46</sup> շաբաթաթերթին աշխատակցում էր դեռևս Մանդինյանի խմբագիր եղած տարիներին: Ստանձնելով նոր շրջանի քաղաքական և բանասիրական լրագրի խմբագրի պարտականությունը նա առաջին հերթին մեծ ուշադրություն է նվիրում ժամանակի

<sup>46</sup> Այսուհետև՝ նաև «Մեղու»:

արեւելահայ կյանքի հիմնական խնդիրներից մեկի ազգային-լուսավորական հարցի լուսաբանմանը: Ամսագրի էջերում հրատարակվում էին արեւելահայ և արևմտահայ իրականութեան կրթական-մշակութային ամենօրյա նորությունները: Հատկապես 1866-1871 թթ. «Մեղվի» համարները լցվում էին Անդրկովկասի հայարնակ կենտրոնների և քաղաքների դպրոցների, բարեգործական ընկերությունների, թատերական ներկայացումների շուրջ գրված նյութերով:

9. Միմեոնյանը մեծ չափով արտատպություններ էր կատարում արևմտահայ թերթերից, որոնցում քննարկվում էին Ազգային սահմանադրության վերահաստատման հետ կապված խնդիրները, նկարագրվում սահմանադրության տարեդարձների տոնակատարությունները: Հատուկ հոդվածով վեր է հանվել սահմանադրության դերը արևմտահայության առաջընթացի գործում:

Արտաքին լուրերի բաժինը նույնպես հարուստ էր քաղաքական լրատվությունը: «Մեղվի» հրատարակության առաջին տարիները համընկնում էին լեհական ապստամբության ժամանակների հետ, որը մեծ չափով լուսաբանվում էր, հարկավ ուսական թերթերից կատարված թարգմանությունների միջոցով: Ավելի աշխույժ էր «Մեղվի» բանավիճային բաժինը, որը տարվում էր թորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի դեմ: Պետք է նշել, սակայն, որ տպագրված բանավիճային հոդվածներն այսօր ավելի խոսում են ոչ թե սկզբունքային բանակռիվների, այլ երկու անհաշտ խմբագիրների լեզվակոփ մասին: Ստեփանեն քննադատում էր Միմեոնյանի և Ա. Պալասանյանի հոդվածների ոճը, «Մեղուն» Ստեփանեի մտքած նոր կետադրական համակարգը: Շարունակաբար հոդվածներին նյութ էր դառնում Ստեփանեի գրական կեղծանունների ինքնությունը բացահայտելու պարապ խնդիրը, կամ անդամահատվում էին «Հայկական աշխարհի» հերթական համարները: Բավական է հիշել, որ միայն 1869-ին «Մեղվի» էջերում տպագրվել է բանավիճային 13 հոդված: Հետագայում կրկին անդրադառնալով Ստեփանեի ամսագրին, երբ այն տեական դադարից հետո սկսել էր հրատարակվել, Միմեոնյանը իր պաշտոնակցին կրակի տակ է ասում նրա, այսպես ասած, մանկավարժական արտավոր մեթոդների համար: Նրա համոզմունքով այդպիսիք էին Ստեփանեմանկավարժի կազմակերպած «երեկոները, թատրոնները, պարահանդեսները, ճառախոսությունները»:

Թեև «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը Հիմնականում բաժանվում է միայն Հին և Նոր շրջանների, բայց իրականում Միմեոնյանի խմբագրություն տարիներին «Մեղուն» նույնպես ուներ իր պայմանական բաժանումը: 1863-ից 1871 թվականն ընկած ժամանակահատվածում նյութի և խմբագրական աշխատանքի բերումով այն տարանջատվում է հետագա 1872-1886 թթ. շրջանից, երբ հրատարակվում էր իբրև մեղվական կուսակցություն օրդան: 1860-ական թթ. վերջին «Մեղվի» նյութական վիճակն այնքան է ծանրանում, որ խմբագիրը վճռում է այն դադարեցնել: Մի խումբ «ուսումնական եւ բանիմաց» երիտասարդների միջամտությամբ, սակայն, նա շարունակում է հրատարակել թերթը: Այդ երիտասարդները՝ մայրաքաղաքների համալսարանավարտներ Ալ. Քրիմիչյանը, Նիկ. Ալադարյանը, Գ. Եվանգուլյանը և ուրիշներ, նոր միայն վերադառնալով հայրենիք, որոշել էին նվիրվել մանուկների և կանանց կրթության գործին: Պ. Միմեոնյանի եռանդուն ջանքերով և Մակար առաջնորդի օժանդակությամբ նրանց հաջողվում է 1869-ին Հիմնադրել Գայանյան դպրոցը, որտեղ աշխատում էին անվճար: Նրանք միաժամանակ հնարավորին չափով օժանդակում էին «Մեղվի» հրատարակության գործին:

1872 թ. «Մշակ» թերթի Հիմնադրումը կենսական նոր ուժեր է հաղորդում Միմեոնյանի թերթին: Բանն այն էր, որ Գրիգոր Արծրունին, բացահայտ արհամարհանքով խոսելով «Մեղվի» մասին, նշում էր, թե այն չի ներկայացնում նոր սերնդի հայացքները և իր ուղղությամբ անհեռանկար է: Այնքանով, որքանով Արծրունին թերագնահատում էր պահպանողական գործիչների ազգային գաղափարախոսությունը, Միմեոնյանն ի հակակշիռ Մշակակալ կուսակցության ստեղծում է իր՝ «Մեղվակալ կուսակցությունը»:

1872 թ. «Մեղվի» խմբագրական կազմը համալրվում է նոր ուժերով, որոնց գործուն մասնակցությամբ թերթը փոխվում է թե՛ արտաքին ձևով, թե՛ նյութերի հարստությամբ ու դասակարգումով: Հենց 1872 թ. էլ սկսվում են «Մեղվի» և «Մշակի» անվերջանալի բանավեճերը, որոնք հասարակական շրջաններում և մամուլի էջերում քաղաքացիություն են ստանում իբրև Մեղվակալ և Մշակակալ ուղղությունների բախումներ:

Դեռևս 1873 թ. ի պատասխան Գ. Եվանգուլյանի այն խորհրդին, թե «Մեղուն» և «Մշակը» կարող են հաշտ ու խաղաղ համագործակցել, Միմեոնյանն այդ անհնար է գտնում՝ հայտարարելով, թե իրենց տարածայնությունները լուրջ հիմքեր ունեն: Հիրավի, ի՞նչն էր ընկած այդ ան-



գիջում և տեական բանավեճերի հիմքում, որոնց կենսունակությունը պահպանվում է երկու տասնամյակից ավելի: Միմեոնյանն այդ համարում է ազգայնություն խնդիրը: «Էներ Արծրունու Հեռ միջնադարյան, աստվածային վեճ չէ, գրում է նա. «Մեր վիճաբանությունը Հայոց ազգային եկեղեցու նշանակության մասին է Հայ ազգայնությունը պահպանելու վերաբերությամբ այսօր» (1880, №55): Առավել պարզելով միտքը Միմեոնյանը Հետագայում ասում է. «Մեզ համար ազգային քաղաքական տեսակետից կրոնը միջոց է նպատակի համար»: «Կրոնական միություններ - մեր երկրորդ սկզբունքն է, - գրում է նա, - որը լողիկական Հետևանք է առաջին սկզբունքին - ազգային միություն» (1881, №252. քնդգծ. մերն է - Մ. Մ.):

Եվ այսպես, աստարեզում գրվում էր ազգային-պահպանողական Հոսանքի գաղափարական հավատամքի գրույթներից հիմնականը եկեղեցուն տրվելիք գերիշխող դերը Հայ Հասարակական կյանքում: Միմեոնյանը Հարցը դնում է ուղղակի, նա Արծրունուց պահանջում է հրապարակավ պատասխանել այն Հարցին, թե «Հայ եկեղեցին Հայ ազգայնության պահպանության զլխավոր Հաստատությունը եղե՞լ է և է՞» այսօր, թե՞ ոչ»: Արծրունին, բնականաբար, չէր կարող այդպիսի հայտարարություն անել, քանի որ ազգայնության գործոնների թվում չէր ընդունում կրոնը: Նա գտնում էր, որ կրոնն ու ազգությունները Հասկացություններ են, ուստի եկեղեցին չի կարող ներկայացնել ազգությունը: Կրոնը նա համարում էր համոզմունք, դավանություն բնարությունը խղճի ազատության արտահայտություն, ուստի և ազատամբրոն էր արամագրում ավետարանական քարոզիչ Արք. Ամիրխանյանին պրոպագանդելու իր դավանության սկզբունքները:

Սկզբունքային այս Հարցից բացի Միմեոնյանին Հուզում էին Արծրունու նաև այլ Հարցադրումները. դրանք էին Հայոց եկեղեցու ներքին կառուցվածքը փոփոխելու և այն նախնական լուսավորչական պարզության Հասցնելու պահանջը, Հայ Հոգևորականության բարոյական և մտավոր մակարդակի քննադատությունը, համայնարանական երիտասարդությունը նրա տված անարդարացի գնահատականը, քաղաքացիական ամուսնություն թույլատրության պահանջը և այլն:

Այս ամենից, սակայն, առանձնանում է ևս մեկ Հարց, որը կյանքի էր կոչվել նրանց սպրած ժամանակի բերումով: Այդ ազատագրական պայքարի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի Հարցն էր: Միմեոնյանը դեմ էր Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի Արծրունու պահանջին,

քանի որ այն համոզմունքն ունենր, թե քրդական և թուրքական գյուղերով շրջապատված հայությանը հազիվ թե հաջողվեր դրական որևէ արդյունքի հասնել: «Մեզ ուրիշ ոչինչ հարկավոր չէ, - գրել է նա, - միայն թե բարոյական և նյութական հեղափոխություն»: Ժամանակին այս կապակցությամբ «Մշակի» թղթակիցը «Մեղուն» անվանել էր «թուրքասեր թերթ» և պատճառ դարձել Սիմեոնյան Քաղքցու լավագույն ֆելիետոններից մեկի ստեղծմանը: Հեղինակը նախ բացատրում է, որ այդ անվանն արժանացել է այն պատճառով, որ հայերին խորհուրդ է տվել խաղաղ մնալ, որպեսզի նրանց շրջապատող թուրքերը նրանց վնաս չտան: Այնինչ, պարզվում է, որ իբր տաճկահայերի հզոր բանակները կազմ ու պատրաստ, զորքերով, փողերով, գանձերով, քողովներով պետք է գրավեն Պոլիսը, «Բայց այդ անպիտան թուրքասեր «Մեղուն» չէ թողում, արգելում է»: Քաղքցին ծաղրով թվարկում է հայ իշխանական ծագում ունեցող զորավարներին, որոնք ամենքը «կրակ կտրած, պխերը ոլորած, կանգնած են, նժույգների դպիր հատանելը աշխարհք դղրդացնում է, թող սրանց և ահա քուրդ ու տաճիկ, չերքեզ ու թուրքմեն դոցա ոտքերի տակ փոշի կդառնան: Բայց չէ թողում:

Ո՞վ:

էլի այն անպիտան «Մեղուն», որ թուրքասեր է» (1878, №6):

Արդեն ասացինք, որ Արծրունու հետ վարած բանավեճերում Սիմեոնյանը նրան կշտամբում էր հոգևորականության անզուսպ քննադատության համար. ուշագրավ փաստ է, սակայն, որ «Մեղվի» խմբագիրն իր հերթին բազմիցս քննադատել է ժամանակի հոգևորականներին: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գեթ այդ հարցում նրանք համամիտ էին, բայց ելնելով միևնույն մեկնակետից, նրանք ընթանում էին տարբեր ուղղություններով: Նրա քննադատական հոդվածների առիթով շատերն այն կարծիքն են հայտնել, թե Սիմեոնյանը հեռացել է պահպանողականությունից և հարձակողական դիրքեր գրավել իր հոսանքի նկատմամբ: Ոմանք էլ «Մեղվի» խմբագրին հանդիմանում էին հոգևորականությանը վարկաբեկելու համար: Ի պատասխան այդ ընդդիմախոսների, Սիմեոնյանը բացատրում էր, որ ինքը նույնպես ազգային կյանքի զարգացման համար շատ կարևոր է համարում հոգևորականության դերը, սակայն չի կարող անտարբեր լինել նրանց բարոյական պահվածքի հանդեպ: Նա գրում է. «Հայ կաթողիկոսություն, հայ եկեղեցի և ազգ - սոքա իրանց պարտքերով և իրավունքներով սուրբ են եղել «Մեղվի» համար, որ նոցա վերաբերությամբ նա անհողողոզ պահպանողա-

կան դիրք է պահպանած: Իսկ եպիսկոպոս, վարդապետ, քահանա և այլն, անձնավորությունք են, որոնք այսօր կան, վաղը ոչ» (1879, №1): Իրրև ճշմարիտ լրագրող, նա նաև այն միտքն է հայտնում, որ մամուլի խնդիրն է «կոնսորդ պահպանել ազգային գործակատարների գործունեության վերաբերությունը: Ի՞նչ պիտի լինի - եթե սա էլ լուչ»: Եվ «Մեղուն» համարձակորեն շարունակում է խոսել: Բանն այնտեղ է հասնում, որ Միմեոնյանը զավեշտի առարկա է դարձնում նույնիսկ Էջմիածնի Աթոռի բարձրատիճան հոգևորականներին գրելով «Սողոմ-Գոմոր» երգիծական պատկերը (1876, №29): Այդտեղ նկարագրված էին ոչ անհայտ Մանկունի եպիսկոպոսի և Նրա յուրայինների շահատակությունները: Տպագրելով հոգևորականների հոռի բարբերը մերկացնող իր հողվածները Միմեոնյանը միաժամանակ նշում էր այն միջոցները, որոնք կարող էին օգնել բարելավելու ստեղծված իրավիճակը:

1870-1880-ական թվականներին, երբ Անդրկովկասն արդեն ոտք էր դրել կապիտալիզմի զարգացման նոր փուլը, թերթի էջերում մեծ տեղ է տրվում Անդրկովկասի տնտեսական զարգացման հեռանկարների հարցին: Ինչպես ժամանակի մյուս թերթերը, «Մեղվի» թղթակիրացները ևս առաջին հերթին կարևորում էին երկրամասի տեղական հումքը սեփական ձեռքերով մշակելը կանխելու համար երկրի հարստության հոսքը արտասահման: Այդ հողվածներում առաջարկվում էր արդյունաբերություն և գյուղատնտեսություն կարևոր ճյուղերի դժով երիտասարդ մասնագետներ պատրաստել արտասահմանում, որոնք, վերադառնալով հայրենիք, կարողանային կազմակերպել երկրի բնական հարստությունները Անդրկովկասում մշակելու, տեղում գործարար բնկերություններ ստեղծելու և զիտությունների ու արհեստների զարգացմանը խթանելու գործը: Հողվածագիրներից առանձնապես աչքի էր բնկնում Մոսկովայի Պետրովսկի ակադեմիայի ուսանող, շուշեցի Հովսեփ Տեր-Մովսեսյանը, որն իր բազմաթիվ հողվածներում ժամանակի տնտեսագիտական մտքի բնձեռած տվյալներով քննարկում էր երկրամասի տնտեսական կյանքի առաջընթացի հետ կապված խնդիրները:

«Մեղվի» էջերում շատ մեծ տեղ է հատկացվել հայկական դպրոցների վիճակի քննությունը: Այսպես, բազմիցս խոսվել է ուսուցիչների մանկավարժական մակարդակը բարձրացնելու, դպրոցները նյութական վիճակն ապահովելու, մանկավարժների և թեմական տեսուչների աշխատավարձը բարձրաց-

նելու մասին: Քննարկվել են գանազան մեթոդական խնդիրներ, առաջարկներ ու ծրագրեր:

Թերթի դպրոցական բաժնի Հոդվածները Հարստացել են անվանի մանկավարժներ Ղազարոս Աղայանի և Հ. Նազարյանցի մանկավարժական, ուսուցողական և բանավիճային հոդվածներով: Պետրոս Սիմեոնյանն իր ընդարձակ հոդվածներով լուսաբանել է Անդրկովկասի և այլ բնակավայրերի Հայկական դպրոցների վիճակը, ձեռքբերումները, դժվարությունները:

Ամբողջ եռանդը ներդնելով դպրոցական-կրթական Հարցերի լուսարանման գործում Պետրոս Սիմեոնյանը, սակայն, չէր կարող պարծենալ իր շարաթաթերթի գրական բաժնի նյութերով: 1860-ական թթ. թեև տպագրել է Խաչատուր Արովյանի «Էս գրքի ճամփի խրատը», «Ազնես», «Հախվերմազի գովքը», «Հազար փեշեն» ստեղծագործությունները, բայց Հայ նոր գրականությունը որևէ նշանակալից գործ չի տպագրվել: «Մեղվի» էջերում շարունակել են իշխել Սեյազի, Հ. Քուչուբեկյանի, Ե. Իսահակյանի բանաստեղծությունները: Թարգմանական գրականությունից շարաթաթերթում գետեղվել են Պուշկինի «Ոսկե ձկնիկը», Կոխլովի առականերից, Գրիմ եղբայրների պատմվածքները, Սաադիի «Գուլիստանից» Հատվածներ: Անհամեմատ բարձր մակարդակ ունեին Ստ. Պալասանյանի բանասիրական հոդվածները՝ նվիրված Հայ գրականության զարգացման խնդիրներին, աշխարհաբարի Հետագա ճակատագրին, բարբառների ուսումնասիրման կարևորությունը և այլն: Ժամանակի Համար նշանակալից երևույթ էր Հայկական ձեռագրերին նվիրված հոդվածը, որում խոսվում էր դրանց մշակման, պահպանության, ձեռագրաց ցուցակ կազմելու անհրաժեշտություն մասին:

1872-1886 թթ. «Մեղվի» գրական բաժինը նույնքան դժգույն էր, որքան նախկինում: Թեև տպագրվել են մի շարք պատմվածքներ և պատկերներ, բայց դրանք շատ հեռու էին ժամանակի Հայ գրական ստեղծագործությունների նույնիսկ միջին մակարդակից: «Մեղվի» պատմվածքները, ասեք, մի չգրված օրենքով ստեղծվում էին Համանման սյուժեով և կրկնում միմյանց: Այսպես, այդ պատմվածքներում Հիմնականում խոսվում է դժբախտ սիրահարների ճակատագրի և նրանց ողբերգական վախճանի մասին: Այդ կարգի ավելի ծավալուն գործերից են Բ. Այվազյանի «Անմուրագներ», «Նա խելագարվեցավ» վեպերը և այլն:

«Մեղուն», սակայն, մեծ ազդու է հանել իր աշխատակից Հայկունու գրախոսություններով, որոնք աչքի էին ընկնում բիրտ ոճով ու անպատաս-

խանատու հայտարարութիւններով: Հայ բանասիրութեանը քաջ հայտնի են Բաֆֆու վեպերին տված նրա կամայական գնահատականները:

Հայկունու արտառոց կարծիքները, սակայն, բնաջ էլ վերջին խոսքը չէին հայ գրականագիտութեան մեջ: «Մշակի» էջերում տպագրված Բաֆֆու-Փափատուի հոդվածաչափը հիմնականում փշուրում է Հայկունու սնտախ «գրականագիտական» կարծիքները և փրկում հայ գրականութեան և գրականագիտական մտքի պատիվը իրօրյա մամուլի էջերում:

Սպանդար Սպանդարյանը մի շարք հոդվածներ է նվիրել հայ գրականութեան դարգացման, բննադատութեան կարևորութեան և մամուլի նշանակութեան հետ կապված հարցերին: Հետաքրքրական են «Հայոց թատրոն» խորագրի տակ տպագրված Սպանդարյան-Յունիուսի բազմաթիվ թատերախոսութիւնները:

Պետրոս Միմեսյանն առանձնահատուկ ուշադրութուն է նվիրել երգիծական ստեղծագործութիւններին և այդ բաժինը պահպանել թերթի հրատարակութեան մասնավորապես երկրորդ շրջանի բոլոր տարիներին: «Մեղվի» մշտական երգիծարաններից էին Թոխմախը, Ղալայչի Մարգարը, Աղվինինց Դավիթը, Փառնակեր և ուրիշներ: Թոխմախը, որ թղթակցում էր Ախալցխայից, բնդդծում էր անդի բարբերի անկումը, հոգևորականութեան շահամոլութիւնը և նրա անտարբերութիւնը ժողովրդի կարիքների նկատմամբ:

Ղալայչի Մարգար կեղծանունով ֆելիետոններ է գրել Սարիբեկ Տեր-Մելքիսեղեկյանը: Նա բննադատել է հոգևորականութեան բարբերը, ուշադրութուն հրավիրել դպրոցների և վանքերի անխնամ վիճակին:

Տարբեր ստորագրութիւններով և Թիֆլիսի բարբառով ֆելիետոններ է գրել Գեորգ Տեր-Ալեքսանդրյանցը, որն ափելի հաճախ հանդես էր գալիս Աղվինց Դավիթ գրական կեղծանունով: Թերթի հրատարակութեան վերջին տարիներին բացվում է «Հայելի» հանդեսը, որը վարում էր Փառնակերը: Հետո մնալով Հասարակական Հնչեղութիւն ունեցող խնդիրներից «Հայելին» սոսկ օրվա մանրիկ գծաւթիւնների հետքերով գրված անգույն ֆելիետոններ էր ցուցադրում:

Մեր պատմարանասիրական գրականութեան մեջ հիշատակվել է, որ Գր. Արծրունին, Ա. Հովհաննիսյանը և Պ. Միմեսյանը հրատարակախոսական հոդվածների հետ մեկտեղ գրել են նաև սրամիտ ֆելիետոններ ստորագրելով գրանք Ասիացի, Մախլաս և Քաղըցի գրական կեղծանուններով: Այդ գրա-

կանուխյան մեջ չի նշվել այն փաստը, որ «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիրը դեռևս 1871-ին իր գրական աշխատակից Միքայել Սուլյանին հանձնարարել է Ֆելիետոններ գրել, և հենց նա էլ իր համար ընտրել է «Քաղքցի» ծածկանունը: Հետագայում այդ ստորագրուխյամբ ֆելիետոններ են տպագրել և՛ Սուլյանը, և՛ Միմեոնյանը<sup>47</sup>: Այսօր դժվար է որոշել «Քաղքցի» ստորագրուխյամբ տպագրված տասնյակ ֆելիետոնների բուն հեղինակի ինքնությունը, սակայն «հասարակ աշքով» իսկ կարելի է նկատել, որ իրենց գրական արժանիքներով դրանք չեն գտնվում միևնույն մակարդակի վրա:

Պետրոս Միմեոնյանը հաճախ էր առաջնորդող հոգիվածների տեղ հրապարակում իր ֆելիետոնները: Երբեմն շատ սրամիտ և օբյեկտիվ նրա գործերը մեծ տպավորություն էին թողնում ժամանակակիցների վրա, և անշուշտ, ունեցել են բարոյադաստիարակչական որոշակի նշանակություն: Սակայն, ֆելիետոններից շատերին պակասում է չափի զգացումը, որովհետև հեղինակը ֆելիետոնի նյութ է դարձնում առօրեական ամեն մի մանրուք, հաճախ կրկնում սյուժեները ձանձրալի դարձնելով ասվածը:

Բանավիճային հարցերում Քաղքցու ֆելիետոնները հիմնականում ուղղված էին «Մշակի» դեմ, որի մասին ընդունված էր գրել «Մեր հակառակ մամուլը»:

1870-ական թթ. Պետրոս Միմեոնյանը բացառիկ ուշադրուխյամբ հետևում էր Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին և հրապարակում թե՛ իր թղթակիցների ուղարկած նյութերը և թե՛ արտատպուխյուններ կատարում արևմտահայ թերթերից: 1877 թ. ուռու-թուրքական պատերազմն սկսվելու կապակցուխյամբ նա արտատպուխյուններ է կատարում նաև «Գոլոս» լրագրից, որն օբյեկտիվորեն լուսաբանում էր ընթացիկ դրուխյունը: Քննուխյան առնելով արևմտահայերի ծանր վիճակը՝ «Գոլոսը» գտնում էր, որ սպասվելիք խաղաղուխյան դաշինքում պետք է հստակորեն նշվեն ինքնավար Հայաստանի սահմանները և այն, թե ինչպիսի բարենորոգումներ պետք է կատարվեն Հայաստանում: 1878 թ. և՛ «Մեղուն», և՛ «Գոլոսը» հրապարակում են հայերի պահանջները ներկայացնող Հիշատակագիրը, որը Նրիմյանը և Նարպեյր պետք է ներկայացնեին ղեկավարածողովին:

Թեև «Գոլոսը» ղեկավարածողովի արդյունքները համարում է «Սև կջ նվրոպայի պատմուխյան մեջ», «Մեղուն» գոհունակուխյուն է հայտնում ձեռք

<sup>47</sup> Տե՛ս «Մեղու Հայաստանի» թերթի 1911 թ. բացառիկ համարը:

բերվածից և կոչ անում Հայությանը կենտրոնանալ Հայաստանում և կրթութ-  
յան ու արհեստների զարգացման միջոցով զինել զեպի իրենց բարձր ապա-  
զան, որի երաշխիքը տալիս էին, նրա արտահայտություններով, եվրոպական  
երկրները և Ռուսաստանի երկզյխանի արծիվը: Այս օրերին է տպագրվում  
Մինաս Ձերազի «Թե ինչ շահեցանք Պետլինի վեհաժողովեն» գրքույկը,  
որում համոզմունք էր հայտնվում, թե այն, ինչ Հնարավոր էր, Հայերը ձեռք  
են բերել: Նրան է պատկանում նաև այն պատկերավոր խոսքը, թե «Պետլինի  
վեհաժողովեն մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկ է խիղախել և հանել ոս-  
կին»: Տպագրելով այս գրքույկի տեսությունը Սիմեոնյանը նշում է, որ  
«Մեղզի» էջերում վերջին տարիներին տպագրված հոդվածները «բոլորովին  
համաձայն են պ. Ձերազի Հայեցվածքներին», այն է «Հայերը պետք է բնա-  
կան ճանադարհով ձեռք բերեն իրենց օրինավոր բաժինը» (1878, №45): Այս  
հարցադրումն ինքնին թեյազրույց էր այն գաղափարը, թե «Հայերը մինչև  
հարցի լուծումը պետք է հեռու մնան ավելորդ ցույցերից» (1879, №38):

Իրադրությունը երկրում ծանրանում էր: 1879 թ. Սիմեոնյանը հրապա-  
րակում է Գ. Արվանձյանցի, Վահան վարդապետ Պարտիզակցու և Արիստա-  
կես Տ. Սարգսյանց վարդապետի կազմած Տեղեկագիրը, որում շարադրված էին  
16 առաջնորդություններում նրանց կատարած շրջագայությունների ար-  
դյունքները:

Երկրում ահապանացող բռնությունների և անիշխանության բազմաթիվ  
փաստեր էին հրապարակում «Մեղզի» սեփական թղթակիցները: Տարիներ  
շարունակ նրանք արևելահայ ընթերցողներին ծանոթացրել ևն արևմտահայ  
ընակչության կացությունը սուլթանական Թուրքիայում, ռուս-թուրքական  
պատերազմին հաջորդած քաղաքական անցուղարձին, եվրոպական զիլանա-  
ղեանների այցելությունների մանրամասներին: Նրանք խելոք էին, կրթված,  
հրաշալի գիտելի երկիրը և թուրքական կառավարության խարդավանքները,  
ուստի իրենց թղթակցություններում ներկայացնում էին ոչ միայն իրավի-  
ճակը, այլև փաստերի շրջահայաց վերլուծություններով գուշակում գրա սպառնա-  
լից հեռանկարները:

«Մեղզի» Կ. Պոլսի հիմնական թղթակիցներն էին Արզամբը (1879-1880) և  
Սոսյունը (1881-1885), Վասպուրականի թղթակիցն էր Հայկունին (1880-1882):  
Նրանց փաստառատ թղթակցություններին էր պարտական Պ. Սիմեոնյանը,  
որի թերթը Հայկական հարցը լուստարանում էր մեծ իրազեկություններ:

«Մեղզի» էջերում տպագրված մի քանի ծանրակշիռ հոդվածներ ընդհանրացնում են Հայկական Հարցի լուծման երկու հիմնական ուղղութիւնները: Դրանցից առաջինը խմբագրական հոդված է թերթի 1878 թ. 44-րդ համարի առաջնորդողը: Այն գրվել է նոյեմբերին, դեպպանաժողովի ավարտի թարմ տպավորութեան տակ և առաջիկայում գործելու ուղիներ է մատնանշում թե՛ ժողովրդին և թե՛ հրապարակախոսներին: Խմբագրութիւնն ընդգծում է այն իրողութիւնը, որ դեպպանաժողովի արդյունքներով «Անգլիայի ազդեցութիւնը Ասիական Տաճկաստանում կատարված իրողութիւնն է. նա անդառնալի է»: Այս պարագաներում արեւմտահայերը պետք է շրջահայաց լինեն և մտածեն այն մասին միայն, «թե ինչ պետք է անել, որ որքան կարելի է ավելի օգուտ քաղվի ազգի համար ապագայում այդ եվրոպական ազգի հետ ունենալիք հարաբերութիւնից: Ուշադիր լինելով Անգլիայի դիտավորութիւններին և նպատակներին, նրանք ըստ այնմ պետք է որոշեն իրենց անելիքները»:

Երկրորդ փաստաթուղթը Ծերենցի «Հայկական խնդիր» հոդվածն է, որում քննադատելով թուրքական կառավարութեան ազգակործան քաղաքականութիւնը հոդվածագիրը նույնպէս այն համոզմունքն էր հայտնում, թե հայերը, որ ժամանակին դիմել են Անգլիային, ճիշտ են վարվել և պետք է հետևեն այդ քաղաքականութեանը (1880, №20-21):

Երրորդ հոդվածը, որ դարձյալ կրում է «Հայկական խնդիր» խորագիրը, անստորագիր է և մեր կարծիքով պատկանում է Կարապետ Եզյանի գրչին: Այն հայ-ուսական հարաբերութիւնների պատմական տեսութիւնն է: Հայերի հավատարմութիւնը ուսական կառավարութեանը բազմիցս ապացուցվել է, ասված է հոդվածում, Ռուսաստանն իր հերթին շարունակ գորավիզ է եղել հայերին, որի մասին է վկայում արեւելահայերի ապահով կյանքը Ռուսաստանում: Այժմ ևս ճգնաժամային այս վիճակում Ռուսաստանն անվերապահորեն հարցի լուծումը կհասցնի ավարտին: Ռուս քաղաքագետները, հաշվի առնելով ստեղծված դրութիւնը, կզբաղվեն 61-րդ հոդվածի իրականացմամբ, Եվրոպան ևս կօժանդակի Ռուսաստանին: «Չտարակուսներ, ժամանակը մոտ է», ասված է հոդվածի ավարտին (1881, №8-9): Եվ այսպէս՝ և՛ Անգլիան, և՛ Ռուսաստանը...

Ինչպիսի՞ն էր թերթի քաղաքական տեսարան Սպանոյար Սպանոյարյանի դիրքորոշումը: Սպանոյարյանն իր լրագրական-հրապարակախոսական գործունեութիւնն սկսել է 1872 թ. «Մշակ» թերթի էջերում: 1877 թ. հեռանում է



«Մշակից», ինչպես գրել է Հեստագայում չհանդուրժելով խմբագրի բռնակալությունը իր կամքի և համոզմունքների վրա:

1878 թ. սկսել է աշխատել «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրությունում: Շուտով անուղղակիորեն ստանձնելով խմբագրի պաշտոնը՝ Սպանդարյանը գրում է թերթի և՛ առաջնորդողները, և՛ քաղաքական տեսությունները, և՛ մասնավորապես կաթողիկոսական ընտրությունների, և՛ Հայկական Հարցի վայրիվերումների հետ կապված ծրագրային հոդվածները:

1881 թ. հանդելով այն եզրակացություն, որ բարենորոգումների գործն ինքն իրեն չուծում չի ստանա, նա առաջարկում է Հայերի շահերը հարմարեցնել թե՛ Թուրքիայի և թե՛ եվրոպական պետությունների շահերին: Նա միաժամանակ այն միտքն է հայտնում, թե եվրոպան պետք է հասկանա, որ Թուրքիայում Հայերի հետ հավասարապես ճշդում են նաև քրդերը և թուրք ժողովուրդը, որոնց կառավարությունը թշնամացնում է Հայերի հետ: Վատ իշխանություն պայմաններում այդ ազգությունները նույնպես իրավազուրկ են, ուստի պետությունները պետք է Հայերի հետ մեկտեղ օգնեն և նրանց: Սպանդարյանի հույժ մարդասիրական այս քարոզը ոչ միայն ծաղրով է ընդունվում ընդդիմադիր մամուլի կողմից, այլև հողվածագիրը թրքամուլի անուն է վաստակում:

Սպանդարյանն իր հողվածներում քննարկել է և արեմտահայերի արտագաղթի խնդիրը, դատապարտել արեմտահայ մամուլի անտարբերությունն այդ հարցում: Մինչդեռ Հայկական հողերը դատարկվում են, և կառավարությունն իսկույն այդ վայրերում բնակեցնում է թուրքերին, գրում է նա, Կ. Պոլսի մամուլի էջերում Հայ գործիչները մեծ եռանդով բանավիճում են մեռած գրաբարը կյանքի կոչելու հարցի շուրջը: Եթե մի ժամանակ ունեինք ազգություն առանց Հայրենիքի, գուցե այժմ Հայերն ուղում են Հայրենիք հիմնել առանց ազգություն, ծաղրում է Հայերի անգործունեությունը հրապարակախոսը (1881, №180):

Սակայն նրան մշտապես մտահոգում էր 61-րդ հողվածի ճակատագիրը: Հաղորդելով այն լուրը, որ Թուրքիայի դեսպան Շաքիր փաշան ուսուցչ արտաբին գործերի նախարար Գիրսին Հայանել էր, թե Հայկական Հարցը կլուծվի, երբ Փոքր Ասիայում բրդական խոտովությունները հանդարտվեն, և երկրամասում խաղաղություն ախրի, Սպանդարյանը խորին տազնապով ավելացնում է. այսինքն նրանք քրդերի ձեռքով Հայերին այն վիճակին

կհասցնեն, որ էլ ոչ հայ կմնա, ոչ Հայկական հարց և, իսկապես, ճշմարիտ գերեզմանային խաղաղություն կտիրի Հայաստանում (1881, №104):

Սոսնելով այն մասին՝ որ Ավստրիան և Գերմանիան ձգտում են Արևելքում պահպանել քաղաքական «status quo»-ն և պաշտպանել Թուրքիայի շահերը, Սպանդարյանը «Թուրքիայի քաղաքականության մասին» հոդվածում մեկնաբանում է «status quo» կոչվածը: Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում աշխարհի ամենահին քրիստոնյա ժողովուրդը, զրկված կյանքի ապահովության ամենասուրբ իրավունքից, հալածվում է, կողոպտվում, տառապում ստրկական լծի տակ: Եվ այդ «աիրող դրությունն» է, որ հիշյալ պետությունները պետք է ջանան պահպանել:

Այս հանգամանքը նկատի ունենր Սպանդարյանը, երբ «Հայոց խնդիրը» հոդվածում դատապարտում էր հայերի կրավորական դիրքը: Սկսած 1878 թ. հայերն սպասում են և ողորմություն խնդրում, - գրում է նա: - Սակայն «Ողորմություն խնդրելով, հայցելով, ստրկության լուծի տակ գտնվող ոչ մեկ ժողովուրդ յուր իրավունքները չէ ստացել, յուր նպատակին չէ հասել: Իրավունքները չեն ստանում, իրավունքները ձեռք են բերում», ուսուցանում է հրապարակախոսը (1882, №5, քննգծ. պատկանում է Սպանդարյանին):

1883 թ., սակայն, Դյուքերինի այցը Կ. Պոլիս և նրա հարցապնդումները սուլթանին, թե ինչու որևէ քայլ չի կատարվում բարենորոգումներն անցկացնելու ուղղությամբ, ոգևորում են Սպանդարյանին, և նա որոշակի հույսեր է կապում Անգլիայում սկսված հայանպաստ շարժումների և մամուլի ելույթների հետ:

Հայկական հարցի լուծման երեք հեռանկար... Ռուսաստան, Անգլիա, արգասագրական շարժումներ: Հայ հրապարակախոսները ղեկավարում էին գիվանագիտության սարքած խարդավանքների ոլորտներում, կորցնում քաղաքական կողմնորոշումը, համառորեն շարունակում որոնումները, բայց ազատության արշավույթը չէր երևում: Այս պատկերն է ներկայացնում «Մեղու Հայաստանի» թերթի քաղաքական բաժինը ուս-թուրքական պատերազմին հաջորդած յոթնամյակում:

Տարիների տքնաջան և լարված գործերը հոգնեցրել էին Պետրոս Սիմեոնյանին, բայց դրանք միակ դժվարությունները չէին նրա համար: «Մեղվի» խմբագրին մշտապես հետապնդում էր ժամանակին իր գործում մեծ համբավի հասած ավագ գրաքննիչ Սուրմոն խան Մելիք-Մեհրաբովի «ա-

չայուրջ» աչքը: Եղիշե քահանա Գեղամյանցն իր հուշերում պատմում է, որ գրաբննիչը բացի այն, որ տողեր և էջեր էր հանում և իր ավելացրած նախագատեթյուններով ավերում մտքերը, հաճախ էլ պահանջում էր թերթի անունից «Հայաստանը» գեղն նետել և թողնել «Մեղուն»: Սիմեոնյանն ստիպված է լինում նոր տառեր ձուլել տալ «Մեղուն» մեծ տառատեսակով, իսկ «Հայաստանի»-ն փոքրիկ: Բարենպաստ իրադրություն ժամանակ նա իսկույն ցուցադրում էր խոշորատառ Հայաստանը:

Գրաբննիչը նրան նեղում էր և արևմտահայ թղթակիցների ինքնությունը նշտելու հարցում: «Իհարկե այդ պահանջը չէր կատարվում, - գրում է Գեղամյանցը, - բայց կարևոր թղթակցություններն էլ չէին տպագրվում: Պուսի մի թղթակցի անունն ու հասցեն իմանալու համար խանր (Մեհրաբյան գրաբննիչը) շատ մեծ եռանդ ու հետաքրքրություն էր ցույց տալիս: Չորս անգամ նրան անպաշտոն կերպով հայանվեցավ թղթակցի անունն ու հասցեն, բայց չորս անգամ էլ սուտ, հնարովի: Ամբողջ Պուսի թաղերը ման էին եկել և չէին գտել թղթակցին:

Բայց յուր թղթակցին աղատելու համար Պ. Սիմեոնյանցի գործադրած այս միջոցը վերջի վերջո նրա վրա սուղ նստեց»<sup>48</sup>:

Այս ամենն անշուշտ ծանր էր անդրադառնում նրա խմբագրական հոգսաշատ աշխատանքների վրա: Առավել զժպարը սակայն թերթի նյութական վիճակն ապահովելու հոգսերն էին: Սիմեոնյանը յուրաքանչյուր տարվա վերջին ստորություն ուներ ներկայացնել «Մեղվի» հաշիվը: Ըստ այդ հաշիվների «Մեղուն» 1864 թ. ունեցել է միայն 257 բաժանորդ, 1865-ին՝ 310: Թերթի վիճակը մնում է ծանր նաև 1880-ական թթ.: Այդ տարիներին նույնպես խմբագիրը և նրա գործակիցներն աշխատում էին անվճար: «Մեղուն» օրաթերթ գործնելու նպատակով իշխան Ն. Ամատունու գլխավորությամբ ստեղծված բնկերությունը կանոնադրություն է հաստատում և նախատեսում մուծումների մի մակարդակ, որը պետք է ապահովեր օրաթերթի ծախսերը: 1881-ին ունենալով 1000 բաժանորդ «Մեղուն» թեև հրատարակվում է շարաթական 6 անգամ (257 համար), բայց նախատեսված գումարները չեն հավաքվում, և 1882-ին թերթը լույս է տեսնում շարաթական 3 անգամ: Բաժանորդների թիվն իջնում է 700-ի, այնուհետև 1884-ին՝ 360-ի, իսկ 1886-ին՝ 250-ի:

<sup>48</sup> Տե՛ս «Սեղու Հայաստանի» քերթի 1911 թ. բացառիկ համարը:

1886 թ. տպագրելով շաբաթական 2 համար՝ խմբագիրը 63-րդ համարի առաջնորդողում հայտնում է թերթը դադարեցնելու իր վճիռը՝ միաժամանակ պարտավորվելով այլ ասպարեզներում շարունակել իր «թույլ ուժերը գործ դնելու հօգուտ հայ եկեղեցվո և ազգի»:

Մինչև իր կյանքի վերջը, անհաղորդ նոր ժամանակների քաղաքական կյանքում կատարված նոր հեղափոխիչ գաղափարներին, Սիմեոնյանը մեկընդմիջտ մնաց իր ընտրած գաղափարական դիրքերում՝ ամուր պահելով երդվյալ պահպանողականի ժամանակավրեպ հավատամքը: Նա օժտված էր հրապարակախոսի համեստ տվյալներով, բայց գործունյա էր և հետևողական իր թերթի ուղղության պաշտպանության մեջ: Ժամանակակիցների վկայությամբ, իրրև քաղաքացի և հրապարակախոս, նա եղել է չափազանց համեստ, ազնիվ և անշահախնդիր, անսահման նվիրված լրագրողի իր պատվավոր գործին:

### «ՓՈՐՁ» (1876-1881)

«Փորձ» ազգային և գրական հանդեսը, իսկ դրա դադարումից հետո «Արձազանք» պարբերաթերթը հրատարակել է Աբգար Հովհաննիսյանը 1882-1898 թթ.: Նա ծնվել է 1849 թ., Թիֆլիսում, նշանավոր բժշկապետ Հարություն Հովհաննիսյանի ընտանիքում: Ավարտել է Կ. Եղյանի պանսիոնը, Թիֆլիսի գիմնազիան, այնուհետև 1872 թ. գիտությունների դոկտորի աստիճանով Լայպցիգի համալսարանը (տնտեսագիտություն և ֆինանսներ մասնագիտություն): Վերադառնալով Թիֆլիս՝ նա աշխատանքի է անցնում տեղի առևտրական բանկում, ապա մինչև կյանքի վերջը վարում է փոխադարձ վարկի ընկերության բանկի կառավարչի պաշտոնը:

Չնայած ծառայողական զբաղմունքները, որ նյութապես ապահովում էր նրա ընտանիքի առօրյա հոգսերը, Աբգար Հովհաննիսյանն իր ամբողջ գիտակցական կյանքում հրապարակախոսական-լուսավորական լայն գործունեություն է ծավալում:

Հայ գրականությունը Արևմտյան Եվրոպայում ներկայացնելու նպատակով նա 1886-ին հիմնադրել է «Հայկական գրադարան» («Արմենիկ րիբլիոտեկ») մատենաշարը և Արթուր Լայտտի հետ միասին գերմաներեն հրատարակել հայ գրականության լավագույն նմուշները 11 հատորով:

«Փորձը» լույս է տեսել 1876 թ. Հուլիսից: Բարձր գնահատելով «Հյուսիսփայլ» և «Կոուսնկ Հայոց աաշխարհին» ամսագրերի վաստակը Հայ ժողովրդի բարոյական դաստիարակութեան ասպարեզում Հովհաննիսյանը 1876 թ. ապրիլին գրված ծանուցման մեջ Հայտնում էր, որ պետք է շարունակի նրանց սկսած գործը:

Ինչ վերաբերում էր Հանդեսի ուղղութեանը, ապա նշվում էր, որ այն նվիրված պետք է լինի ազգայնութեան դադափարի պաշտպանութեանը:

«Փորձի» ծրագիրը կազմված էր ինը բաժիններից, որոնցից կարևորներն էին գրականութեան, պատմութեան, կրթութեան և մանկավարժութեան, ազգային և ներքին տեսություններին նվիրված բաժինները: Արգար Հովհաննիսյանը ճիշտ էր կուսակց օրերի մեծ պահանջը: Մեկ տասնամյակ առաջ դադարել էին 1860-ական թթ. Հայ լրագրութեան փառքը կազմած «Հյուսիսփայլը» և ազգային կյանքի առաջընթացին իր մեծ նպաստը բերած «Կոուսկը»:

Կյանքի վերջին օրերն էր սպրում «Հայկական աշխարհը»: Ծիշտ է, Հայ իրականութեան մեջ մեծ ժողովրդականություն էր վայելում «Մշակ» լրագիրը, իսկ «Մեղու Հայաստանի» թերթը բավականաչափ բարելավվել էր, այնուամենայնիվ, այդ պարբերականները չէին կարող փոխարինել ամսագրին, որի պահանս ակնհայտորեն զգացվում էր: Ահա թե ինչու Հայ Հասարակութունը սիրով է ընդունում «Հաստ ամսագրի» լավագույն օրինակը «Փորձը»:

«Փորձին» աշխատակցելու էին Հրավիրված ժամանակի գրական և հրատարակատեսական կարող ուժերը: Ծանուցման մեջ Հիշատակված էին Գ. Բարխուդարյանի, Ալ. Երիցյանի, Ստ. Պալասանյանի, Լ. Մելիք-Հակոբյանի, Ռ. Պապկանյանի և այլոց անունները: Իր արծարծած հարցերի լայն շառավղով և Հայ նոր գրականութեանը հատկացրած բացառիկ ուշադրությամբ «Փորձը» ջերմ ընդունելության արժանացավ:

Բանի որ «Փորձ» Հանդեսի հրատարակութեան ժամանակաշրջանը զուգադիպում է 1877-1878 թթ. ուս-թուրքական պատերազմական իրադարձություններին, Հովհաննիսյանը մեծ աեղ էր հատկացնում արևմտահայութեան անտեսական կյանքին, երկրի քաղաքական կացութեանը, բազմակողմանիորեն քննարկում դավառահայութեան վիճակը և ժողովրդի Հայցած ինքնավարութեան Հեռանկարային հարցերը: Բնականաբար կովկասահայ իրականութեան սոցիալ-անտեսական խնդիրները, որոնք առաջին համարներում

քննարկվում էին, իրենց տեղը զիջում են արևմտահայ կյանքի հրատապ հար-  
ցերին:

«Փորձ» հանդեսն օրինակելի էր և՛ կառուցվածքի, և՛ բովանդակության  
հարստության առումով: «Փորձը» պարզ ճակատով կարող է խոսյան  
կանգնել ամեն մի այլազգի եվրոպական պարբերագրություններին»,- գրել է  
Ռ. Պատկանյանը: «Փորձը» «Եվրոպական ամսագիրներուն ամենն նշանա-  
վորներու հետ կրնար մրցիլ թե՛ քանակի, թե՛ որակի կողմն», - հաստատում է  
Մ. Մամուրյանը: Փրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլորինն գրել է. «Զեր  
գործը արժանի է տեղ բռնելու համանման ամենաընտիր հրատարակություն-  
ների շարքում, որ ունի մեր Արևմտյան Եվրոպան, նա պատիվ է բերում այն  
ազգին, որ ընդունակ է այսպիսի աշխատություններ արտադրելու և մի բարձր  
գաղափար է տալիս քաղաքակրթության այն աստիճանի մասին, որին այդ  
ազգը արդեն հասել է»<sup>49</sup>:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին և դրան հաջորդած  
մի քանի տարին Աբգար Հովհաննիսյանը հիմնականում քննարկել է պատե-  
րազմի առիթով քրիստոնյա մյուս ժողովուրդների հետ նաև հայերի ինքնա-  
վարություն ստանալու կենսական հարցը: Դեռևս պատերազմի նախօրյակին,  
1876-1877 թթ. «Փորձի» 2-րդ համարում<sup>50</sup>, Հովհաննիսյանը, Հայաստանի  
քաղաքական ազատության պահանջը իրավական հիմքի վրա խարսխելու  
նպատակով, քննության է առնում Արևմտյան Հայաստանի բնակչության  
բարոյական և տնտեսական տագնապալի դրությունը: Այդ հոդվածում վեր են  
հանվել արևմտահայության կյանքի ամենացավոտ խնդիրները՝ արտագաղթը,  
ժողովրդի կյանքի և գույքի անապահովությունը, պետական պաշտոնյաների  
չարաչառումները և այլն: Հետագայում, օգտագործելով Մ. Խրիմյանի «Վան-  
գույժ» և «Դրախտի ընտանիք» աշխատությունները գրախոսելու առիթով,  
«Փորձի» տեսարան Ստ. Պայասանյանը մեկ անգամ ևս ընդգծում է հայու-  
թյան օրհասական դրությունը, հրապարակում գրքերի այն հատվածները, ու-  
րոնցում հեղինակը հայերին կոչ էր անում սթափվել ընդարձության վիճա-  
կից:

<sup>49</sup> «Արծազանք», 1882, No 1:

<sup>50</sup> Քանի որ «Փորձը» սկսել էր հրատարակվել 1876-ի հուլիսից, առաջին երկու տարվա հա-  
մարները նշվում էին երկու տարեթվերի հիշատակումով՝ հուլիսից-հուլիս:

Գաղափարաճառությունները կյանքի իրական վիճակն է պատկերված Գ. Արվանձատյանի կազմած Տեղեկագրում, որը հրատարակվում է «Փորձի» էջերում: Այդտեղ նույնպես խոսվում է պետություն հարկային դաժան քաղաքականություն, ոստիկանական բռնությունների, դատարաններում իշխող կամայականությունների մասին: «Փորձի» էջերում գրախոսվել է պարտիզակցի Վահան Վարդապետի «Մոսք ղՀայրենեաց» հրատարակային մեծարժեք դասախոսությունը (տպագրված Կ. Պոլսում 1879 թ.): Հանդեսում տպագրվել է Առ. Պալասանյանի «Գաղթականություն խնդիր» ծրագրային հոդվածը: Այն նվիրված էր արևմտահայության կյանքի շարիքներից մեկի արտադրողի բնությունը: Այնուհետև «Փորձի» էջերում տեղ են գտել Կ. Պոլսի պատրիարքարանի Տեղեկագրերի նյութերը, այլևայլ հոդվածներ և ուսումնասիրություններ նվիրված Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային: Այդ հոդվածներից իր կարևորությունը աչքի է ընկնում Հայ հրատարակախոս և արձակագիր Ծերենցի (Հովսեփ Երզնանյան) 1879 թ. ապրիլի 29-ին Թիֆլիսում կարգացած հրատարակային դասախոսություն համառոտագրությունը՝ նվիրված Կիլիկիային: Արևելահայությունը ծանոթացնելով Կիլիկիայի աշխարհագրական պայմաններին Ծերենցը հանդամանորեն պատկերում է Հայերի սոցիալական և քաղաքական դրությունը և այն պատճառները, որոնք նրանց տանում էին դեպի կործանում (հարկահանություն, կրոնական խտրականություն, կաշառակերություն, համաճարակներ, սով և այլն):

«Փորձը» մեծապես լուսարանել է ուս-թուրքական պատերազմական իրադարձությունների հետևանքով ստեղծված քաղաքական իրավիճակը, եվրոպական երկրների զիջմանագետների կողմից Հայկական հարցի արժարժույթը, արևմտահայերի Հայցած ինքնավարության հետ կապված դրամատիկական վայրօրերումները: Պատերազմի բնթացքում Հովհաննիսյանը հրատարակում էր ժամանակի ուսական և եվրոպական թերթերում տպագրված այն հոդվածների համառոտագրությունները, որոնք առնչվում էին Հայկական հարցին: Ընդհանրացնելով այդ հոդվածներում հրատարակված առաջարկները, խմբագրությունը պարտափորեցնում էր Հայ մտավորականությանը իրենց հոդվածներով ոչ միայն նախապատրաստել եվրոպական հասարակական կարծիքը, այլև քաղաքականապես լուսավորել Հայ հասարակությունը: Այսպես, «Հայաստանի անկախությունը» հոդվածին Առ. Պալասանյանը կցում է ծրագրային մի առաջարան, որում նշվում էր, թե խմբագ-

րության նպատակն է ցույց տալ ընթերցողին, թե շունաստանը, Իտալիան, Սերբիան «որքան հաստատամտություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել» իրենց բաղձանքին հասնելու համար: Այնուհետև անուղղակիորեն դիմելով հայ ընթերցողին, Պալասանյանն ավելացնում է. «Շուրջ ժողովուրդը յուր երկարատև և փառավոր կռիվ ցույց տվեց, թե արժանի է այն անկախության, որի համար նա զենք էր բարձրացրել» (1877-1878, № 2, էջ 218):

Օտարալեզու մամուլի նյութերից բացի Շովհաննիսյանը Բեռլինի վեհաժողովի նախօրյակին հանդեսի էջերում գետեղել է նաև օտար լեզուներով լույս տեսած մի քանի գրքերի տեսություններ («Հայաստան և Լիբանան», «Գեսպանաժողովը և Հայերը», «Արևելյան խնդիրը և Հայերը»): Այդ տեսություններում խմբագրությունը, մասնավորելով խոսքը, հայկական ինքնավարության ստեղծման կոնկրետ ուղիներ էր մատնանշում:

Պատերազմն ավարտվում է ռուսական զենքի հաղթանակով: Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը հուսադրող էր: Սուլթանի կառավարությունը պարտավորվում էր հայաբնակ գավառներում իրագործել անհրաժեշտ բարեփոխումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը: «Փորձի» խմբագրությունը մեծ ակնկալիքով էր սպասում առաջիկա դեսպանաժողովին՝ գտնելով, որ «Հայաստանի վիճակը բարվոքելու միակ հնարը ինքնավարությունն է»: «Տաճկական Հայաստանի ինքնավարությունը» հոդվածի հեղինակը (անստորագիր) նշում էր, որ «Անցյալի օրինակները պարզապես ցույց են տալիս, թե բոլոր այն խաթիբ Հյուսիսայրուսներն ու խաթիբ Երեմյանները, որ օսմանյան կառավարությունը ամեն ծանր ճգնաժամերից հետո շնորհել է յուր քրիստոնյա հպատակներին, միշտ մեռած տառի զորություն են ունեցել, և թե այլևս չէ կարելի հույս դնել այնպիսի խոստումների վրա, որ այսօր տրվում են վաղը մոռացվելու համար» (1877-1878, №3, էջ 355-356):

1878 թ. հուլիսի 13-ին ստորագրվում է բեռլինյան պայմանագիրը, որի համաձայն Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածի փոխարեն ընդունվում է նոր՝ 61-րդ հոդվածը: Հայերը հուսախաբված էին: Չեն վավերացվում 16-րդ հոդվածով ընդունված Ռուսաստանի իրավունքները: Բ. դուռը պարտավորվում էր հայաբնակ գավառներում բարենորոգումներ անցկացնել՝ դրանց մասին սոսկ տեղյակ պահելով շահագրգիռ պետութայուններին: Մերենցը սուր քննադատության է ենթարկում Բեռլինի պայմանագիրը և, առաջինը լինելով իր



ժամանակակիցների մեջ, կոռւում է Բ. դռան նոր, դաժադիր քաղաքականութիւնը: Նա հրապարակում է սուլթանի մեծ վեզիր Քյամիլ փաշայի մշակած ծրագիրը, որով բացահայտորեն հայտարարում էր հայ ազգը Ֆիզիկական բնաջնջելու միջոցով Արեւմտյան Հայաստանը վերջնականապես ազատել օտար միջամտութիւններից:

Սկզբնապես 16-րդ հոգովածով գոհ Ա. Հովհաննիսյանը Բեռլինի վեհաժողովից հետո հույներ է կապում Անգլիայի կառավարութեան հետ: Երկու տարի անց, սակայն, նա վերանայում է իր դիրքորոշումը և արդարացի դայրույթով խոսում այն մասին, որ Անգլիան, զավթելով Կիպրոսը, դրա փոխարեն երաշխավորել էր Օսմանյան կայսրութեան արեւելյան հատվածի ամբողջութիւնը խուլ մնալով «արեւելյան քրիստոնյաների արդարացի պահանջների առաջ»:

1880 թ. սկզբներին, երբ ցարական կառավարութեան քաղաքականութիւնը փոխվում է Թուրքիայի նկատմամբ, զրաքննութիւնը նկատելի դժգոհութիւններ է հարուցում հայ խմբագիրների համար: «Փորձի» ազգային տեսութեան բաժնի նյութերը սակավանում են խմբագրի «կամփից անկախ պատճառներով»: 1880 թ. «Մշակ», «Փորձ» և «Մեղու Հայաստանի» պարբերականների մուտքը արգելվում է Թուրքիա այդ երկրի դեմ թշնամական հոգովածներ տպագրելու պատճառարանութեամբ: Արդար Հովհաննիսյանը, սակայն, այս ծանր օրերին կարողանում է աշխուժացնել ազգային տեսութեան բաժինը: 1880 թ. ամռանը, մեկնելով Կ. Պոլիս, նա ստանում է Հակոբ Պարոնյանի համաձայնութիւնը թղթակցելու «Փորձին»: 1880-ի 2-րդ կեսից հանդեսի ազգային տեսութեան բաժնում սկսում է տպագրվել Պարոնյանի «Հիշատակարանը», որը Հովհաննիսյանը վերանվանում է «Հոսհոսի ձեռասեղ»: Պարոնյանի մարտաշունչ ելույթները ամբողջական պատկերացում էին տալիս արեւմտահայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակի մասին պատերազմից հետո: Մեծ երկիծարանը, ամենայն սրութեամբ քննադատելով եվրոպական երկրների դիվանագիտական խաղերը, բազմաթիւ փաստերով ցույց էր տալիս դրանց արամբարանական հետեանքը դարձած Բ. դռան հայահալած քաղաքականութիւնը:

Արդար Հովհաննիսյանի հայացքները նույնպես զարգացում են ապրում: 1880-ական թթ. սկզբներին նա, ոգևորված Հայաստանում նախապատրաստվող ազատագրական շարժումներով, ներգրավվում է այդ շարժումներին օժանդակող խմբերի մեջ: Այս օրերին «Փորձի» էջերում հրապարակվում է

Արբուհի Երիցյանի «Հակոբ Շահամիրյանի մատենագրական գործունեությունը Լնդկաստանում» հոդվածը, որը Հայաստանի ազատագրման և ինքնավարության համար հայ գործիչների մղած պայքարի պատմությունն էր (1881, №2):

Ազգի և Հայրենիքի մասին մեծ գործիչներին ասույթների տպագրությամբ Հովհաննիսյանը կրկին հավաստում էր իր նվիրվածությունը ազգային-ազատագրական պայքարի գաղափարին (1881, №1):

«Փորձի» խմբագիրը մեծ ուշադրություն է նվիրել նաև հայ ժողովրդի երկու հատվածների կրթական, մշակութային հարցերին: Դպրոցական գործը նա համարում էր հայության «կյանքի և մահվան խնդիրը», որով պայմանավորված էր ազգային կյանքի «ամենահաստատ սյան»՝ հայոց լեզվի գոյությունը: XIX դարի 70-80-ական թթ. հայ իրականության մեջ մեծ վերելք էր ապրում դպրոցաչինական գործը: Արևելյան Հայաստանում ավելանում էին դպրոցները, սիրով ու նվիրվածությամբ մանկավարժական աշխատանքի էին լծվում եվրոպական և ռուսական համալսարաններում կրթություն ստացած մանկավարժները, հիմնադրվում էին մանկավարժական թերթեր, կազմակերպված հիմքերի վրա էր դրվում հրատարակչական գործը:

«Փորձի» էջերում պարբերաբար հոդվածներ են տպագրվել՝ նվիրված Ներսիսյան, Գայանյան օրիորդաց, Նոր Նախիջևանում հիմնադրված արհեստագիտական դպրոցների կանոնադրություններին: Հրապարակվել են զանազան հաշվետվություններ, դպրոցներում ուսումնական գործի բարելավման հետ կապված հոդվածներ: Հովհաննիսյանը միաժամանակ մեծ տեղ է նվիրել Արևմտյան Հայաստանի մշակութային կյանքի լուսարանությունը, կոչ արել «գործին հմուտ անձանց» օժանդակել Արևմտյան Հայաստանի մշակութային ընկերություններին: Հանդեսում տպագրվել են Դպրոցասիրաց-Արևելյան ընկերության գործունեության Տեղեկագրերը, Կիրիկյան ընկերության կանոնադրությունը, Արարատյան ընկերության եռամյա գործունեության հաշվետվությունը: 1880 թ. տպագրվել է վերոհիշյալ ընկերությունների հիմքի վրա «Միացյալ ընկերության» ստեղծումն ազդարարող ծանուցումը, իսկ հետագայում այդ ընկերության կանոնադրությունը և այլն:

Խմբագրությունն զգալի տեղ է նվիրել նաև մանկավարժական գիտությունների և պատմության խոշոր մանկավարժների մեթոդական ուսումնասիրությունների տեսությունը, թարգմանական այլևայլ հոդվածներ: Հանդեսի մանկավարժա-

կան բաժինը նանաշողական մեծ արժեք ունի և ներկայացնում է այդ գիտության բարձր մակարդակը նախորդ տարիների համեմատությամբ:

«Փորձը» կատարել է նաև արևելահայ իրականությունը դեռևս անծանոթ պատմաբանասիրական ամսագրի դերը և իբրև այդպիսին այսօր իսկ պահպանում է իր մեծ նշանակությունը: Այստեղ տպագրվել են Մ. Էմինի, Բ. Պատկանյանի Հողմածները, Վ. Բաստամյանի «Ամուսնությունը ըստ Հայոց եկեղեցական իրավաբանություն» աշխատությունը և Մխիթար Գոշի «Գաստատանագրքի» համար նրա գրած առաջաբանը: «Փորձի» խմբագիրը մեծ նշանակություն էր տալիս նաև քաղաքակրթության ասպարեզում պատմական Հայաստանի մատուցած ծառայությունների վերհանմանը: Ամսագրի էջերում նա Հրապարակել է բազմաթիվ պատմական ուսումնասիրություններ և ուղեգրություններ, որոնք լուսաբանում էին պատմական Հայաստանի դերը անցյալում և նրա նարտարապետական հուշարձանների անանց նշանակությունը: Այս առումով խոշոր երևույթ էր Գարրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) «Ճանապարհորդական նկատողությունք» սովորածավալ ուղեգրական նոթների տպագրությունը: Քաջբերունիին գավառական բժիշկը, ողջ կյանքն անցկացնելով չրջագայությունների մեջ, նվիրվել է նաև Հայրենի երկրի հնությունների, պատմական հուշարձանների, ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը: Իր նոթերում նա նկարագրել է ոչ միայն նարտարապետական հուշարձանները, այլև Հայ գավառների բնակչության կյանքը, ազգային ծեսերն ու հավատալիքները, դպրոցական գործի վիճակը տեղերում, Հրատարակել է ժողովրդական գրույցների և խաղերի հետաքրքրական նմուշներ:

«Փորձի» էջերում են տպագրվել Ալեքսանդր Երիցյանի և Ստեփանոս Պալասանյանի պատմական և բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններն ու թարգմանությունները, Հրապարակախոսական Հողմածները: «Փորձը» իր հեղինակությամբ մեծապես պարտական էր Երիցյանի և Պալասանյանի աշխատակցությունը, նրանց անխոնջ աշխատասիրությունն ու անբասիր տաղանդին: Սաանայով Հովհաննիսյանի նյութական և բարոյական աջակցությունը նրանք իրենց Հերթին վարձահատույց են եղել խմբագրին և «Փորձը» դարձրել զրտական հանդեսի այն նոր տիպը, որի պահանջն զգացվում էր Հայ կյանքում Հայագիտության աննախընթաց զարգացման շնորհիվ:

Անգնահատելի է «Փորձ» Հանդեսի դերը Հայ նոր գրականությանը մատուցած ծառայությունը գործում: «Փորձում» են տպագրվել և կյանքի ուղեգիր ստացել Պերճ Պոռյանի «Հացի խնդիր», «Կովածաղիկ» և «Շահեն» վեպերը, որոնցից «Հացի խնդիրը» Հովհաննիսյանը հրատարակել է նաև գերմաներեն, իր հիմնադրած «Հայկական գրադարան» մատենաշարի 5-րդ և 6-րդ հատորներում: Գաբրիել Սունդուկյանը տպագրել է «Խաթաբալա» կատակերգությունը: Հանդեսի էջերում է տպագրվել գրական աշխարհին դեռևս անծանոթ Մուրացանի «Բաղդասար մետրոպոլիտ Լասան-Ջալալյանցի համառոտ կենսագրությունը» հետազոտությունը: Բաֆֆին աշխատակցել է «Փորձին» իրրև հրատարակախոս: Հանդեսում տպագրվել են նրա «Պարսկաստան» հոդվածը և «Ծանապարհորդություն թիֆլիսից մինչև Ագուլիս» ուղեգրությունը: Եթե հաշվի առնելու լինենք քաղաքական այն շիկացած մթնոլորտը, որում հրատարակվում էր «Փորձը», ապա հասկանալի կդառնա, թե ինչու Պարոնյանը և Մերենցը նույնպես այդ պարբերականի էջերում հանդես են եկել որպես հրատարակախոսներ:

Ստեղծագործական և բարեկամական ջերմ կապերով էր կապված Թափայել Պատկանյանը Աբգար Հովհաննիսյանի հետ. «Փորձի» էջերում տպագրվել են Պատկանյանի երեսուներեք բանաստեղծությունները, «Ես նշանած էի» և «Փառասեր» վիպակները, «Ծանապարհորդական տպավորություններ» ուղեգրությունների մի մասը:

Պատկանյանի «Ազատ երգերը» առաջին անգամ տպագրվել են «Փորձի» էջերում, և Հովհաննիսյանը հետագայում այն միտքն է հայտնել, թե «Փորձն» է թելադրել նրան երկարամյա լուծությունից հետո հնչեցնել «այն ազատ երգերը, որոնք այնքան զեղեցիկ ապացուցում էին մեր զգացմունքները, ձգտումներն ու հույսերը, մեր լավագույն «Եսը»:

1876-1878 թթ. Պատկանյանի պոեզիան ծնվեց պատմական ժամանակաշրջանի թելադրանքով և նոր դարազուլիս բացեց Հայ գրականության մեջ: Բալկանյան երկրներում սկսված ազատագրական շարժումները ոգեշնչում են բանաստեղծին, և նա սլավոնական ժողովուրդների օրինակով փորձում է ոտքի հանել Հայերին: Պատկանյանի «Ազատ երգերն» արտահայտում էին ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ բանաստեղծի սերնդակիցների նվիրական պատրանքները և դրանց խորտակման իրողությունը: Եվ այնքանով, որքանով ժամանակի բոլոր հասարակական հոսանքների գործիչները

տողորված էին արեմտաՀայութեան պաշտօնագրման գաղափարներով. Պատկանյանի պոեզիան այդ օրերի համազգային ոգևորութեան արգասիքն էր և այդ ոգևորութեան կազմակերպողը միաժամանակ: «Ազատ երգերը» դաստիարակում էին Հայ ընթերցողներին, նրանց խանդավառում ազգային-ազատագրական պայքարի մեծ հեռանկարներով: Ժամանակին այդ բանաստեղծութիւնները յայն տարածում էին գտել ոչ միայն Արեւելյան Հայաստանում, այլև արեմտյան Հատվածում: Արգար Հովհաննիսյանն առանձին ժողովածուով 8000 օրինակ տպագրանակով հրատարակում է «Ազատ երգերը» և 4000 օրինակը ուղարկում Տանկաստան ձրի բաժանելու Հայերին:

«Փորձի» Հիմնական աշխատակիցներից էր Գեորգ Բարխուդարյանը, որը Հանդեսի էջերում տպագրել է մի քանի բանաստեղծութիւն («Վանեցու երգ», «Գարուն Հայաստանի», «Հույս»), տպագրվել է նաև նրա «Մ. Նալբանդյանցի Հիշատակին» բանաստեղծութիւնը «XXX - ցի Հիշատակին» վերնագրով: Այն գրված էր Նեկրասովի «Դորրոյլուրովի Հիշատակին» Հայտնի բանաստեղծութեան նմանողութեամբ: Գարձայ Նեկրասովի շնչով էր գրված «Ափսոս աշխատանք» բանաստեղծութիւնը ուղղված գրաքննական խստութիւններին գեմ:

«Փորձի» խմբագիրը մեծ ծառայութիւն է մատուցել Հայ գրականութեանը ամսագրի էջերում հրատարակելով Միքայել Նալբանդյանի անտիպ գործերից երկուսը: Նա Հանդեսի 1877-1878 թթ. 3-րդ համարում տպագրել է Նալբանդյանի «Նկատողութիւնը» գրախոսութիւնը գրված Պարոպալլոյի ամրոցում և «Սատանայի պաշտոնական մեծ Հանդեսը» պարսազագիրը (1881, №5-6) գրելով, որ երջանիկ է, քանզի իրեն հաջողվել է կորստից փրկել իր ամենահամակրելի հեղինակի գրվածքը: Տպագրելով Նալբանդյանի «Նկատողութիւնը» կից գրութեամբ Հովհաննիսյանը նշում է. «Պարտափորութիւն ենք համարում Հայտնելու, որ մի առանձին պատիվ կհամարենք մեզ Համար, եթե կարողանայինք «Փորձի» էջերը զարդարել այս հեղինակի անտիպ մնացած գրվածքներով»: Ակնածանքը Նալբանդյանի անվան և նրա ստեղծագործութեան նկատմամբ հետագայում պահպանվում է և «Արձագանքի» հրատարակութեան տարիներին:

«Փորձը», իրրե գրական Հանդես, Հայ հասարակութեանը ծանոթացրել է և եփրոպական գրականութեանը: Տարիներ շարունակ Գեորգ Բարխուդարյանի թարգմանութեամբ «Փորձի» էջերում տպագրվել են Շիլլերի «Դոն Կարլոս»,

«Օրլենանի կույսը» և «Ֆինեսկոյի դավադրությունը Ջենովայում» ողբերգությունները, Շեքսպիրի «Վենետիկի վաճառականը», Լեսսինգի «Նաթան իմաստունը», Հայնեի, Գյոթեի, Շիլլերի, Ուլանդի, Մյուլլերի, Լեմմոնտովի, Պետեֆիի բանաստեղծությունները: Փիլիպոս Վարդանյանի թարգմանությամբ տպագրվել են Գյոթեի «Կյավիգո» ողբերգությունը, Գվերացցիի «Նոնցայի բերդը» և Հայզեի «Բեաթրիչ» վիպակները:

Եթե եվրոպական դասական հեղինակների հուշակված ստեղծագործությունների թարգմանությունյամբ Ա. Հովհաննիսյանը և Գ. Բարխուդարյանը հայ ընթերցողին հաղորդակից էին դարձնում արվեստի աշխարհի խոշոր նվաճումներին, ապա մի շարք ծրագրային ստեղծագործությունների միջոցով նրանք ուղղակիորեն արձագանքում էին օրվա անհետաձգելի հարցերին: Այսպես, Բարխուդարյանը թարգմանել է հունգար բանաստեղծ, մեծատաղանդ Շանդոր Պետեֆիի «Իմ խնդրած մահը», «Հայրենիքի մասին», «Շղթա» և այլ բանաստեղծությունները, որոնց մեջ արտահայտված ազատության ու անկախության տենչանքը, ազգության ոտնակոխ եղած սուրբ իրավունքների վիշտը և բաղձանքը փրկված տեսնելու ստրկական շղթաները, մոտիվներ էին, որ կարող էին կոչվել նույնքան հունգարական, որքան էլ Հայկական և համամարդկային: Հայերին հարազատ էին նաև հույն ժողովրդի ազատագրական պայքարի էջերը դրվատող «Ֆանարիտը» և «Հույների պատերազմական երգը» բանաստեղծությունները:

Ծրագրային արձակ գործերից էին Ալֆոնս Դոդեի երեք պատմվածքը, Գրենվիլ Մյուրրեի, Գվերացցիի, Դիկկենսի պատմվածքները, Պոլ դը Մյուսեի, Մասսիմո Դ'Այելիոյի վեպերը և այլն: Բոլոր այս հեղինակների ստեղծագործությունների հիմնական ոգին ազգային-ազատագրական պայքարի ջատագովումն էր: Հետագայում անդրադառնալով վերոհիշյալ ստեղծագործությունների տպագրությունը Հովհաննիսյանը գրել է. «Այն ժամանակակից եվրոպական հեղինակների մատենագրությունները, որոնց հետ «Փորձը» առաջինը ծանոթացրեց հայ հասարակությանը, դրանք այնքան էին համապատասխանում «Ազատ երգերի» ուղղություն» («Արձագանք», 1882, №1):

Եթե «Ազատ երգերն» ընդունենք որպես ազգային-ազատագրական պայքարի երգեր, հետևապես ժամանակի առաջադիմական գրականության բնութագրման չափանիշ, ապա «Փորձի» գրական բաժնին տրված վերոհիշյալ գնահատականը ճշմարիտ է, որը հաստատվում է այդ հանդեսի ամբողջ պատմությամբ:

Գեղարվեստական գրականության հետ մեկտեղ Հովհաննիսյանը մեծ տեղ է նվիրել նաև գրական քննադատությանը: Հանդեսի գրաքննադատական և մատենագիտության բաժինը վարում էր Ստեփանոս Գալասանյանը, որն այդ բաժնի և՛ տեսական ծավալուն հոդվածները, և՛ գրախոսությունները ստորագրում էր Կրիշ գրական կեղծանունով: Քանի որ Գալասանյանն ստիպված էր կատարել բաժնի բազմաթիվ աշխատանքները, ապա այստեղ լիովին գրեկորվել են նրա գրականագիտական և լեզվաբանական սկզբունքները, խորագիտությունը և գեղագիտական նուրբ ճաշակը:

«Փորձ» ամսագիրը մեծ նպաստ է բերել ժամանակի գրական շարժմանը, իր հարուցած հասարակական-քաղաքական հարցերով լայն ճանաչում գտել հայ իրականության մեջ:

1881 թ. հուլիսին Հովհաննիսյանը ժամանակավորապես դադարեցնում է ամսագրի հրատարակությունը: Նրան ստիպում էր սիրած գործն ընդհատել հայ խմբագիրներին բաժին ընկած գրամական ճգնաժամը: «Փորձի» հրատարակության ընթացքում Հովհաննիսյանը կրել էր 14 հազար ութիսու վնաս, որը նրան կանգնեցնում է սնանկության շեմին: Նրա հույսերը, թե կկարողանա կարգավորել ֆինանսական գործերը և վերսկսել ամսագրի հրատարակությունը, չեն իրականանում, և «Փորձը» դադարում է ընդմիջտ: Դադարում է, սակայն, հայ մամուլի պատմության մեջ է մտնում իբրև XIX դարի 70-80-ական թվականների, խմբագրի արտահայտություն «Ճակատագրական օրերի», պարբերաթերթ, հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայ հատվածի անտեսական և քաղաքական կյանքի ուսումնասիրման բացառիկ կարևոր սկզբնաղբյուր:

### «ԱՐՁԱԳԱՆԸ» (1882-1898)

1881 թ. հարկադրված լինելով դադարեցնել «Փորձ» ամսագիրը Աբգար Հովհաննիսյանը ձեռնամուխ է լինում «Արձագանք» շաբաթաթերթի հրատարակությանը: Այն սկսում է լույս տեսնել 1882-ի փետրվարից, կիրակի օրերին, 2 մամուլ ծավալով: Ա. Հովհաննիսյանի նոր պարբերաթերթը հետաքրքրությունների ափիլի լայն շրջանակ ուներ: Խմբագրի ուշադրության կենտրոնում էին արևելահայերի առօրյան, անտեսական, բարոյական ու մշակութային կյանքի հետ կապված հոգսերն ու անելիքները: Միաժամանակ շաբաթաթերթը շարունակում էր կենդանի հետաքրքրություն պաշտպանել արևմտահայության վիճակի և նրա ճակատագրի նկատմամբ: Հրատարակու-

Թյան առաջին տարիներին Հովհաննիսյանն «Արձագանքի» էջերում մեծ տեղ է նվիրել Անդրկովկասի սոցիալ-տնտեսական հարցերին, փորձել լուսաբանել ժողովրդի աղքատացման և հողազրկության երևույթները հայ գյուղում: 1861 թ. ռեֆորմին հաջորդած ժամանակաշրջանն էր այս, երբ Ռուսաստանն անցում էր կատարում տնտեսական հին կացութեմեծից դեպի կապիտալիստական զարգացման ուղին: Տնտեսական նոր հարաբերություններն արագացնում են գյուղի շերտավորումը, նպաստավոր պայմաններ ստեղծում կուլակության ու վաշխառուների անարգել հարստահարությունների համար, հողազրկման դատապարտում չքավոր գյուղացիներին և արագացնում նրանց արտագնացությունը դեպի քաղաքները:

Անդրկովկասի գավառներից ստացած նամակների հեղինակները ոչ միայն նկարագրում էին իրավիճակը գյուղերում, այլև իրենց խորհուրդներով փորձում էին օգնել գործին: Խմբագրությունն իր հերթին առաջարկում էր իրագործել ռեֆորմի սկզբունքները, հաստատել խնայողական-փոխատու գանձարաններ, հասարակական շտեմարաններ, շինական-հողային բանկ և այլն: Լիբերալ-նարողնիկության հայ ներկայացուցիչներ Ս. Հախումյանը, Ն. Աբելյանը, Գ. Ենգիբարյանը փրկություն միջոց էին համարում համայնքների պահպանումը: Սակայն, որքան էլ «Արձագանքը» և մամուլի հայ օրդանները, մտահոգված գյուղի քայքայման իրողությունը, փորձում էին փրկել կապիտալիզմի զարգացման ճանապարհին փուլզման դատապարտված գյուղական տնտեսությունները, հայ գյուղը շարունակում էր քայքայվել, իսկ հողազուրկ գյուղացիները մեկնում էին արդյունաբերական կենտրոնները՝ համալրելու բանվորների մեծ մասամբ Բաքվի նավթագործների շարքերը: Հատկապես Բաքու և Թիֆլիս քաղաքներում արագորեն զարգանում էր արդյունաբերությունը. Անդրկովկաս էին մուտք գործում եվրոպական գործարար կապիտալիստները, որոնք, հսկայական միջոցներ ներդնելով, շահագործում էին Անդրկովկասի բնական հարստությունները: Ալ. Շիրվանզադեն, Ա. Հովհաննիսյանը, Ալ. Երիցյանը իրենց հողվածներով ահագանգում էին կովկասի ժողովուրդներին սպառնացող վտանգի մասին և հորդորում նրանց՝ երկրի բնական հարստությունները շահագործել սեփական միջոցներով: Նրանք միաժամանակ իրենց հողվածներով, հրապարակումներով, վիճակագրական նյութերով օժանդակում էին տեղական արդյունաբերողներին ընթացիկ գործերին:



«Արձագանքը» մեծ չափով լուսարանել է Անդրկովկասի Հայոց կրթական, մշակութային հաստատությունների վիճակը, փորձել օգնել թատրոնի կատարելագործմանը, ինչպես և շարունակել է «Փորձի» ստեղծած ավանդույթը Հայ բանասիրության զարգացմանը նպաստելու առումով:

Տարիներ շարունակ թերթի էջերում հոդվածներ են հրատարակել ճանաչված մանկավարժներ և բանասերներ Նիկ. Տեր-Ղևոնդյանը, Նիկ. Փարսյանը, Ալ. Երիցյանը և այլք: Նրանց հոդվածներում քննարկվել են մանկավարժական կադրերի պատրաստման, ուսուցիչների բարոյական և նյութական դրուժյան ապահովման, դավառական դպրոցների բարելավման հետ կապված հարցերը, մասսայականացվել է ներսիրյան և Հովնանյան դպրոցների աշխատանքի ուսանելի փորձը:

«Արձագանքը» ժամանակի մյուս պարբերականների հետ մեկտեղ դարափերջին նշանակալից գործ է կատարել Հայ հասարակությանը թատրոնի հետ կապելու, նրա դեղարվեստական ճաշակը զարգացնելու հարցում, օգնել է դերասանների արվեստի ճանաչմանը և նրանց տաղանդի լիարժեք գնահատմանը: Հայ թատրոնի զաղափարի ժողովրդականացման գործում մեծ նշանակություն ունեցավ Երիվանդադեի «Հայկական թատրոն» հոդվածաշարը: Երիվանդադեի և Հովհ. Հովհաննիսյանի թատերախոսություններն օգնել են Հայ սեպուխական թատրոնի ամրապնդման, սեփական թատերացանկի ստեղծման, բեմագրությունների լեզվական կուլտուրան բարձրացնելու գործին:

Մեծ էր «Արձագանքի» դերը Հայ իրականության մեջ գիտական մտքի աշխուժացման բնագավառում: Թերթի էջերում լուսարանվել է Հայագիտություն վիճակը Եվրոպայում և Ռուսաստանում, քննարկվել են Հայ գիտնականների աշխատությունները, հրատարակվել ժողովրդական բանահյուսության նմուշներ: Թերթի բանասիրական բաժնում տպագրվել են Ալ. Երիցյանի, Խ. Հովհաննիսյանի (Շուրջյան), Գյուլտ քահանա Աղանյանի, Կ. Եղյանի, Փ. Վարդանյանի, Գ. Խալաթյանի և այլ մտավորականների առանձին ուսումնասիրությունները, հոդվածները, հաղորդումներն ու գրախոսությունները: 1894-1896 թթ. տաղնապալի ժամանակներում խմբագրությունը մեծ տեղ է նվիրել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների ժողովրդի բանավոր ստեղծագործությունների հրատարակությանը, ողջունել այդ խնդրին նվիրված Ս. Հայկունու, Զ. Ըանիկյանի աշխատանքների տպագրությունը: Այս տարիներին թերթի էջերում բազմաթիվ նյութեր են գետնկոկել

նվիրված Արևմտյան Հայաստանի բնակավայրերի նկարագրութանը (Սասուն, Վան, Կիլիկիա, Զեյթուն, Տիգրանակերտ, Ակն, Հին Բայազետ և այլն):

Ինչպես «Փորձի» հրատարակութան տարիներին, հետագայում նույնպես Ա. Հովհաննիսյանն առանձնահատուկ ուշադրություն է նվիրել գեղարվեստական գրականության տպագրութանը: Հայ նոր գրականությունը նա համարում էր հայոց «ընտիր ձիրքերի ամենափայլուն արտահայտիչը», գանձ, որը քաղաքակիրթ աշխարհին պետք է ներկայացնե՛ր հայերի քաղաքացիության իրավունքը: «Արձագանքի» հետ միաժամանակ Արթուր Լալայտի հեղինակակցությունը ձեռնարկելով «Արմենիչն բիրլիտտեկ» մատենաշարի հրատարակությունը՝ Հովհաննիսյանն առաջնորդվում էր նույն սկզբունքով: Հայ գրականության հատընտիրը հրատարակելով գերմաներեն՝ ցույց տալ եվրոպային, որ հայերը թեև եղել են փոքր ածու, բայց նրանց աշխարհում ևս կատարվել են արիություն գործեր՝ արժանի գրով հիշատակվելու:

«Արձագանքի» գրական բաժնում տպագրվել են Սուեդուկյանի՝ խորապես ունալիստական «Մասլահաթները» և Շիրվանզադեի արձակը, Պատկանյանի երգիծական էջերը և վիպակները, որոնք հայ աշխատավորության շահերի պաշտպանության իրենց կրքով և բուրժուական հասարակարգի արատավոր բարոյականության քննադատությամբ նոր որակ էին հաղորդում մեր գրականությանը: «Արձագանքում» տպագրված Պատկանյանի և Հովհաննիսյանի բանաստեղծական գործերն արտացոլում էին արևմտահայության աղետալի ճակատագիրը և շեփորում նրա ազատագրական պայքարի անհրաժեշտության գաղափարը: Այդ պոեզիան մամուլի էջերում շնչավորում էր 1880-1890-ական թթ. հայ ժողովրդի ազատագրական ձգտումների մթնոլորտը:

Բաֆֆին և Մուրացանը, «Արձագանքում» տպագրելով իրենց գլուխգործոց վեպերը «Սամվելը» և «Գեորգ Մարգվետունին», հայ ժողովրդի պատմական անցյալի ճակատագրական իրադարձություններին հաղորդում էին քաղաքական և արդիական մեծ հնչեղություն, ժամանակակիցներին դաստիարակում բունակալության դեմ պայքարի և հայրենասիրության ոգով:

Վ. Փափազյանի, Պ. Պոռչյանի, Բ. Այվազյանի, Ս. Քամալյանի, Գարրիկի-Մաճկալի (Գարրիկի Մնացականյան-Բարկենց), Կրպելի (Կարապետ Հովհաննիսյան) և բազմաթիվ այլ հեղինակների վեպերը, պատմվածքները, գրույցները ամբողջացնում էին պարբերաթերթի հիմնական զբոսների շոշափած

խնդիրները: Հովհաննիսյանն զգալի տեղ է նվիրել նաև արևմտահայ գրողներին: Տպագրվել են Ա. Չոպանյանի, Գր. Չոհրապի, Հ. Պարոնյանի, Գ. Գուրյանի ստեղծագործություններից:

«Արձագանքի» գրական գործիչներին շարքում աչքի է ընկել նաև թերթի խմբագիր Արզար Հովհաննիսյանը: «Մախլաս» գրական կեղծանունով նա ստեղծել է ֆելիետոնների մի շարք, որոնցում շոշափվում էին հայ իրականություն մշակութային և քաղաքային կյանքի զանազան երևույթները: Մախլասը մեծ հաջողությամբ մասնակցել է նաև ժամանակի լրագրային բանավեճերին: Պարոնյանի «Ազգային ջոջերի» նմանողությամբ նա ստեղծել է արևելահայ ջոջերի շատ հետաքրքրական մի քանի դիմապատկեր: 1898 թ. «Արձագանքի» վերջին 6-րդ համարում տպագրվել է Մախլասի ֆելիետոնը («Ազատ լրագիր») ուղղված սուլթանական Թուրքիայի ծախու լրագրության դեմ: Այլ Շիրվանզադեն իր հուշագրություններում խոստովանում է, որ «նա տաղանդավոր ֆելիետոնիստ էր և ամենասարամիար, որ երբևէ ունեցել է հայ մամուլը: Նա կլիներ երևելի երգիծարան, եթե իրան չմանրացներ»<sup>51</sup>:

«Արձագանքի» մշտական բաժիններից էր և թարգմանական գրականության բաժինը: Հովհաննիսյանը տպագրել է Ա. Գրիբոյեդովի, Մ. Սալտիկով-Շչեկոյրինի, Ա. Պլեչչևեևի, Գի դը Մոպասանի, Հ. Իրսենի, Ա. Գոգեի, Ժյուլ Վեռնի, Հ. Աենկելիչի և բազմաթիվ այլ հեղինակների ստեղծագործությունները, ինչպես և տարբեր առիթներով ներկայացրել ռուս և եվրոպացի մի շարք գրողների կյանքը և ստեղծագործությունը:

Արզար Հովհաննիսյանը պատշաճ տեղ է նվիրել նաև գրական քննադատությանը: Թերթի մատենախոսության բաժնում տպագրվել են Այլ. Շիրվանզադեի, Գ. Ենդիրարյանի, Ս. Հախումյանի, Հ. Հովհաննիսյանի, Ստ. Մալխասյանի մեծաթիվ հոդվածները, որոնք խթանել են հայ գրականության զարգացմանը նոր ժամանակների զեղազխտական մտքի չափանիշներով:

«Փորձ» և «Արձագանք» պարբերականների հրատարակության տարիներին Արզար Հովհաննիսյանն իր թերթերի շուրջն է համախմբել ժամանակի գրական ուժերին, նյութապես սատարել նրանց և բարոյապես ոգևորել: Դրա շնորհիվ հայ մշակույթի անդատաճանում կազմավորվել է գաղափարական մի հզոր ուժ, որը ոչ միայն արձագանքել է ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի կենսական երևույթներին, այլև համազգային հարցերի վրա

<sup>51</sup> Շիրվանզադե, ԵԼԺ, հ.8, Ե. 1951, էջ 150:

կենտրոնացրել ժողովրդի ուշադրությունը, նրան դաստիարակել բարձր առաքինությունների և քաղաքացիական արիությունից բխող:

Ժամանակի պարբերական մամուլի էջերում զգալի տեղ են զբաղվել նաև բանավեճերը, որոնք այսօր պարզում են անցյալի լրագրողների ստեղծագործական կյանքի ու պայքարի ամենատարբեր կողմերը:

«Արձագանքի» Հրատարակությունից տարիներին Հովհաննիսյանը բանավեճել է ինչպես լիբերալ ուղղությունից «Մշակի», այնպես էլ ազգային-պաշտպանողական «Մեղու Հայաստանի» և «Նոր-Դար» թերթերի խմբագրությունների հետ: Սակայն, եթե հակամարտությունը «Մշակի» հետ ինչ-որ չափով հասկանալի է, ապա առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ նույն հոսանքին պատկանող թերթերի բանակցիվը: Այս կարգի բանավեճերի նյութ են դարձել հիմնականում հայ հոգևորականության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, կաթողիկոսական ընտրությունների կանոնակարգի, կաթողիկոսությունից թեկնածուների առաջ քաշման հետ կապված հարցերը: Այսպես, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պետրոս Սիմեոնյանը գտնում էր, որ մամուլի օրգաններն իրավասու են քննարկելու հոգևորականների վարքագիծը, և իր հոգևածներով քննադատում էր էջմիածնի միաբանության մեջ տիրող բարքերը՝ առաջացնելով ազգային-պաշտպանողական գործիչների անբավականությունն ու մտահոգությունը: 1884 թ. տեղի ունենալիք կաթողիկոսական ընտրությունների նախօրյակին «Արձագանք» և «Մեղու Հայաստանի» թերթերի խմբագիրներն ընդհարվում են՝ ընտրությունների խնդրում Ազգային ժողովի ունենալիք դերի, կաթողիկոսի իրավունքների, ինչպես և կաթողիկոսական թեկնածուների ընտրության հարցերում (եթև Հովհաննիսյանը պաշտպանում էր Կ. Պոլսի պատրիարք Ն. Վարժապետյանի և Մ. Խրիմյանի թեկնածուները, Սիմեոնյանն անվերապա հորեն զրկատու էր Մակար Թեղուտցի եպիսկոպոսին): Այս հարցերի շուրջ երկու թերթերում տպագրված բանավեճային հոդվածները երբեմն հասնում էին ծայրահեղ կոպտությունների: Տարիներ անց, սակայն, միևնույն հոսանքին պատկանող Հովհաննիսյանը և Սիմեոնյանը կրկին հաշտվում են և շարունակում համագործակցել:

«Արձագանքի» և «Նոր-Դարի» խմբագիրները նույնպես բանավեճում էին կաթողիկոսական թեկնածուների արժանիքների, Ազգային ժողովի նշանակությունից և դերի, սուլթանական կառավարության նկատմամբ ունենալիք տակ-

տիկայի Հարցերի շուրջ: Ապանդար Ապանդարյանն անարդարացի էր Համարում Ազգային ժողովին վերապահված բացառիկ դերը կաթողիկոսական բնարությունների նախապատրաստական փուլում, Համարձակվում էր կշտամբել ՄԱԿ դարի վերջին երեք կաթողիկոսներին նրանց մեղադրելով ժողովրդի լուսավորության գործում դրսևորած անձնունհասություն մեջ: Նա մեծապես պրոպագանդում էր Մեյքիսեդեկ եպիսկոպոս Մուրադյանի թեկնածությունը: Չնայած այդ ամենին, Հովհաննիսյանի և Ապանդարյանի փոխհարաբերությունները նույնպես վերջնականապես չեն խաթարվում, և Հետագայում նրանք ևս շարունակում են իրենց Համերաշխ գործունեությունը ազգային լուսավորության անդաստանում:

«Արձագանքի» և «Մշակի» միջև բանավեճերի առիթներն ավելի քան լուրջ էին և հիմնավոր: 1880-ական թթ. վերջին այս թերթերի միջև ծայր է առնում մի ծանրակշիռ բանավեճ կապված լեզվաչինությունների Հարցի հետ: Քննարկման նյութ էին դարձել լեզվի դարդացման օրինաչափությունների և դրական Հայերենի Հարստացման միջոցների հետ կապված խնդիրները: Այս բանավեճն առավել տեական և թեժ մարտերից մեկն էր, որ ծավալվել է երկու թերթերի միջև, բայց տարվել ժամանակի լեզվաբանական գիտական մտքի բարձրակետից: Հովհաննիսյանը և Արծրունին բանավիճել են նաև եկեղեցու բարենորոգումների, կաթողիկոսի տեղակալի իրավունքների, Սինոդի անդամների բնարության կարգի շուրջ: Այս և առօրեական մշակութային Հարցերի հետ կապված այլևայլ բանավեճերն ընթացել են միմյանց նկատմամբ անհանդուրժողականությունների միմուխորտում, երկուստեք գործադրած անտակտությունների և կոպտությունների պայմաններում:

Ազգային-պահպանողական և լիբերալ-բուրժուական այս հոսանքները, սակայն, Հիմնականում ներկայացնելով բուրժուական լիբերալիզմի միևնույն գաղափարական ուղեկիժը, իրարից տարբերվում էին Հարցերի լուծման տակտիկական ուղիներում: Ընդ որում, եթե եկեղեցուն աված նշանակության և դրա գնահատականի Հարցում «Մշակի» գործիչները ձախ թեում էին, իսկ «Արձագանքը» աջ, ապա ազգային լեզվի պաշտպանությունից և պարոնների ու մշակութային Հաստատությունների պահպանման մարզում «Արձագանքի» Հակացարական դիրքորոշումը անվերապահ առաջադիմական-դեմոկրատական միտավածություն ուներ: Այսուհանդերձ, ժողովրդին լուսավորելու, ազգը ինքնաճանաչության Հասցնելու, նրա մտավոր և բարոյական մակարդակը ժամանակի բազարակիրի մոգեբերին Հասցնելու իրենց ջանքերում թե՛ լիբերալ,

Թե՛ ազգային-պահպանողական հոսանքների և Թե՛ դեմոկրատական շրջանակների գործիչներն աշխատում էին մեծ ինքնանվիրումով:

Այսպես 1895 թվականից Աբգար Հովհաննիսյանը դադարեցնում է բանավեճը Հայկական Թերթերի խմբագիրների հետ և ուշադրությունը կենտրոնացնում ուսանական ռեակցիոն Թերթերի թշնամական ելույթների վրա: Բանն այն էր, որ 1895-1897 թթ., երբ Հայկական Զարդերի կապակցությունը դիվանագիտական ոլորտներում արժարժվում էր Հայկական հարցը, և մամուլի ուսանական բազմաթիվ օրգաններ բարյացակամորեն էին լուսարանում այդ քննարկումների ընթացքը, մի քանի ռեակցիոն լրագրողներ փորձում էին խեղաթյուրել փաստերը: Այսպես, «Կավկազ», «Նովոյե Վրեմյա» և «Մոսկովսկին վեդոմոստի» Թերթերի խմբագիրները, կյանքի կոչելով «Հայկական սեպարատիզմի» վերաբերյալ նախկինում հեղյուրված մեղադրանքը, ահազանգում էին Հայերի քաղաքական անբարեհուսություն կարծեսցյալ վտանգի մասին: Նրանք միաժամանակ քանում էին գծտույթուն սերմանել Կովկասի բազմազգ ժողովուրդների միջև:

«Արձագանքում» գետեղված բանավիճային Հողվածներում Թերթի խմբագիրը և տեսաբանները Ն. (Կ. Եղյան), Ն Ն. (Նիկ. Քարամյան) հերքում էին ռեակցիոն լրագրողներ Վ. Վելիչկոյի, Ա. Սուվորինի և այլոց շարամիտ մեղադրանքները, հիմնավորում Կովկասի եղբայրակից ազգությունների բարոյական բարձր նկարագիրը և պաշտպանում Կովկասի հայերի իրավունք՝ ոչ միայն կարեկցելու, այլև սատար կանգնելու արևմտահայ ազգակիցներին նրանց հասած անօրինակ թշվառության պայմաններում:

Եթե Հայ լրագրողների հետ վարած բանավեճերում «Արձագանքի» տեսաբանները երբեմն թույլ էին տալիս վրիպումներ ու լրագրային էթիկայի խախտումներ, ապա այդ չի կարելի ասել ցարական ռեակցիոն լրագրողների դեմ նրանց բանավեճերի մասին: Քաղաքական բնույթի այդ ելույթներն ունեին գաղափարական հստակ դիրքորոշում, անզիջում էին և համարձակ, զրված ազգային արժանապատվության անսքող մղումով: Այս էր պատճառը, որ բանավիճային այդ Հողվածներից շատերը մերժվել են գրաքննության կողմից:

Դեռևս 1881 թ. սեպտեմբերին, ծրագրելով հրատարակել «Արձագանք» շաբաթաթերթը, Հովհաննիսյանը նամակներ է հղում արևմտահայ իր բարեկամներին և նրանց առաջարկում թղթակցել Թերթին: Ծրագրից, որ կցված էր նամակներին, ապագա թղթակիցներին հանձնարարում էր համակողմանիորեն լուսարանել արևմտահայության առօրյան, նրանց տնտեսական և քաղաքա-

կան դրուժյունը: Այնուհետև, սկսած «Արձագանքի» հրատարակության առաջին տարիներից, Արևմտյան Հայաստանի կյանքը թերթի էջերում արտացոլվում է այնպիսի չափերով, որ Կ. Պոլսի թղթակից Վաղինակը (Պետրոս Տոնապետյան) 1886 թ. գրում է, թե «Արձագանքը» Կ. Պոլսում «Թուրքիո Հայոց լրագիր» տիպոգրան ստացրել է ժողովուրդեն»:

1882-1883 թթ. Հովհաննիսյանն առանձին հոդվածներ է նվիրել «Միացյալ բնկերություն» գործունեությունը, 1883-1884 թթ. լայնորեն լուսարանել է կաթողիկոսական բնտրությունների նախընտրական պայքարի պատկերը Արևմտյան Հայաստանում: Խմբագրությունը հոդվածներ է նվիրել արևմտահայության քաղաքական կյանքի վերլուծությունը: «Պանդխտությունը և դադիականությունը կամայացուցանեն մեր երկիրը, - սսվում էր Վանից ուղարկված մի թղթակցություն մեջ: - Թուրքը կուզե հազարավոր տարիներ սպրոզ Հայ ազգը բնաջինջ անել աշխարհին վրայն» (1884, №40):

Հետագա տարիներին իրադրությունն ավելի է բարդանում. 1891-ին սուլթանն արգելում է ազգային ժողովի գործունեությունը, կասեցնում Ազգային սահմանադրության գործադրությունը: 1892-1893 թթ. տպագրված թղթակցություններում նկարագրվում են գավառների բազմապիսի հոգսերն ու վշտերը սուլթանի, հիվանդությունների, ավարառություն, սպանությունների, մասսայական արտագաղթ: «Անմարդանում է Մուշը, ամայանում է Տարոնը», ահապանդում են թղթակիցները (1893, №130, 131, 142): «Տաճկահայոց նոր դադիք» բանավիճային հոդվածում, որն ուղղված էր արևելյազես Վամբերի մի հոդվածի դեմ, Ստ. Կանայանը հերքում է նրա Հայանած այն միտքը, թե իբր Հայերի դադիք «ոչ մի կերպով կարելի էլ վերագրել... կառավարության վատ վարմունքին և կամ քրդերի տված նեղություններին»: Նա Հայտարարում է, որ սկսված նոր դադիքն անպայմանորեն պետք է վերագրել «և՛ կառավարության վարմունքին, և՛ քրդերի տված նեղություններին», բնդ սրում, նշում է նա, վերջինք բխում է առաջինից: Կանայանը դատապարտում է օսմանյան կառավարության Հայակործան քաղաքականությունը Բեռլինի վեհաժողովից հետո, վիպակորչում պերճախոս փաստեր այդ իրողությունը հաստատելու համար: Ե՛վ չերթեղների բնակեցումը Հայաբնակ գավառներում, գրում է նա, և՛ Համիդի հեծելազորի ստեղծումը, և՛ բարենորոգումների ծրագրի վիժեցումը մի նպատակ ևն հետապնդում միայն թշվառության աստիճանին հասցնել Հայերին և, բարոյապես նվաստացնելով,

գրկել բողոքի իրավունքից կամ ստեղծել գաղթի պայմաններ և այդ կերպ կրճատել նրանց թիվը երկրում» (1893, №138-140):

Բռնությունները Թուրքիայում հասնում են իրենց կիզակետին: 1894-ի ամռանը սուլթան Աբդուլ Համիդը կազմակերպում է Սասունի կոտորածները. ավերվում են 36 գյուղեր, զոհվում 30000 հայ բնակիչ: Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչներից կազմված քննիչ հանձնաժողովը մեկնում է Մուշ և տեղում քննում կատարված ոճրագործության հետ կապված նյութերը: Արևմտյան մամուլը մի շարք հաղորդումներ է հրատարակում քննիչ հանձնաժողովի աշխատանքների, «Անգլո-հայկական միության» գործունեության, Լոնդոնում կազմակերպվող միտինգների մասին: «Դեյլի տեյեգրաֆի» էջերում տպագրվում է թերթի թղթակից, փիլիսոփա և լեզվաբան էմիլ Դիլլոնի «Սասուն և սասունցիք» հոդվածաշարը: Հովհաննիսյանն իր թղթակիցների նամակներից բացի մեծ չափով արտատպում էր եվրոպական և ռուսական պարբերականներում հրատարակվող նյութերը:

Մայիսի 11-ին երեք պետությունների լիազոր դեսպանները Հայաստանում անհրաժեշտ բարենորոգումներ անցկացնելու ծրագիր են պարտադրում սուլթանին: Այսպես կոչված «մայիսյան ռեֆորմների» լուրը ոգևորում է հայերին: Շտապ կերպով, իրրև «Արձագանքի» հատուկ թղթակից, Կ. Պոլիս է գործուղվում հրատարակախոս Սիմեոն Հախումյանը: Սուլթանը սակայն չէր շտապում գործնական որևէ քայլ կատարել: Մի քանի անգամ երկարաձգելով իր պատասխանի համար նշանակված ժամկետները նա ի վերջո հուլիսին պաշտոնապես մերժում է դեսպանների պահանջը և հայտարարում, թե անհրաժեշտ աշխատանքներ է կատարում բարենորոգումներ անցկացնելու իր տերության բոլոր վիլայեթներում: «Մնաք բարով, ռեֆորմների ծրագիրը» խոսքերով Ս. Հախումյանը դառնությամբ ամփոփում է իր հերթական թղթակցությունը Կ. Պոլսից:

Այս ամենին հաջորդում են 1895 թ. սեպտեմբերի ցույցի պատրվակով Կ. Պոլսում և Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգներում կազմակերպված հայկական կոտորածները: 1896 թ. օգոստոսին Օսոմանյան բանկի միջոցակի առիթով Կ. Պոլսում սպանվում են 6000 հայեր: Այնուհետև կոտորածները շարունակվում են Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում: Զոհերի թիվը հասնում է 300.000-ի: Հայ մամուլը տագնապով էր հետևում իրադարձությունների ընթացքին: «Արձագանքի» էջերում տպագրվում են ստեղծված ողբերգական իրավիճակի վերլուծությունները պարունակող մի շարք նյու-



թեր: Իրենց արամաբանական ուժով և հրապարակախոսական ազնիվ կրթով աչքի էին բնկնում հատկապես Հախումյանի հողովածները:

1896-ի ամռանը, դարձյալ իբրև թերթի թղթակից, Հախումյանը մեկնում է Լոնդոն: Նրան, սակայն, հուսախարություն էր սպասում: Չնայած անգլիական ժողովրդի բարյացակամությանը հայ ժողովրդի նկատմամբ, հայերի հետ համերաշխության նրանց կազմակերպած անկեղծ ցույցերին, կառավարությունն զրազված էր միմիայն Կրեաթի հարցով: Այդ նորությունն չէր: Անգլիական դիվանագիտությունը Հայկական հարցի լուծումը ձխտողելու գնով ձեռք էր ձգել Կիպրոսը, այժմ հերթը Կրեաթինն էր, որի վերահսկողությունը նրան հաջողվում է ստանալ այս անգամ ի հաշիվ հույն ժողովրդի արգար իրավունքի: Այնպիսի ապավորություն էր ստեղծվում, ասեք օրակարգում չէր էլ եղել Հայկական հարցը: Հախումյանի եզրակացությունը միանշանակ էր. «Սուլթանը ոչ մի միջոցառումներ չէ անում, ոչ մի ռեֆորմներ չէ բնդունում քաջայերվելով եվրոպայից»: «Ահա և վերջը» հողովածը ոչ միայն Հախումյանի, այլև «Արձազանքի» խմբագրության վերջին խոսքն էր արևմտահայության զրամատիկական ճակատագրի պարզաբանման առումով: «Մ՛յ՛ վ՛ զեկավարում եվրոպայի քաղաքականությունը, - ավարտում է խոսքը Հախումյանը, - ո՞վ՛ է կարգադրում Արևելքի գործերը: Թող թևորեախկները զեռ հուսան, թե այդ կարգադրողը եվրոպան է, բայց փաստերի օղակը ցույց է տալիս և պապակում, որ հրապարակի տերը Թուրքիան է, որից եվրոպական ամեն մի պետություն սպասում է յուր բաժինը...» (1897, №87):

«Արձազանքի» խմբագրությունը 1897-ին այլևս պատրանքներ չունեք ո՛չ բարենորոգումների ծրագրի, ո՛չ եվրոպական դիվանագիտությանն ո՛չ էլ ցարական կառավարության նկատմամբ: Հովհաննիսյանը բազմաթիվ նյութեր է նվիրում Արևմտյան Հայաստանից Կովկաս գաղթած հայերի առօրյա հոգսերին, նրանց համար նպաստներ և հանգանակություններ կազմակերպելու գործին: «Արձազանքի» խմբագրությունը կից ձրի ճաշարան է հիմնադրվում, իսկ խմբագրության անդամներից կազմված հատուկ մի հանձնաժողով Վ. Փափազյանի, Ն. Աղբալյանի և Ս. Զուրարյանի անդամակցությունով լրջորեն զբաղվում է Թիֆլիսի բազմաթիվ թագամասերում ապաստանած գաղթականների կենցաղի հարցերով: «Արձազանքի» էջերում պարբերաբար ապագրվում են հանձնաժողովի պաշտոնական գեկուցագրերը, որոնց հիման վրա քաղաքային վարչությունը համապատասխան օգնություն էր

ցուց տալիս կարոտյալներին: Թղթակցություններ են տպագրվում նաև Թուսաստանի բազմաթիվ երկրամասերում և քաղաքներում կազմակերպված Հանգանակությունների վերաբերյալ:

Զգայուն վերաբերմունք ցուցաբերելով դեպի Հայերը՝ Հովհաննիսյանը և նրա գործակիցները չէին մտածում նրանց առմիշտ կապել Կովկասի Հետ: Եկվոր Հայերն ունեին իրենց սեփական երկիրը, որը ոչ մի դեպքում չէր կարելի դատարկ թողնել: «Արձագանքի» էջերում խոսվում էր այդ Հայրենիքի վերաշինման անհրաժեշտության մասին, երկրի բարենորոգման ծրագրեր էին մշակվում և այլն: «Թուրքահայ գաղթականները Թիֆլիսում» հոդվածի հեղինակներ Փափազյանը, Աղբալյանը և Զուրաբյանը որոշակիորեն այն միտքն են հայտնում, որ իրենց «վերջնական նպատակը՝ նրանց Հայրենիք ուղարկելը պիտի լինի: Պահպանել գաղթականների կյանքը և աշխատել մարմար դեպքում նրանց հայրենիք ուղարկել... այս է մեր ասելիքի ծուծը», մեկնաբանում են նրանք խմբագրության մշակած ծրագիրը (ընդգծումը հեղինակներին է., 1897, №127):

Աբգար Հովհաննիսյանը և գրաքննությունը, իր 22-ամյա խմբագրական գործունեության ընթացքում Աբգար Հովհաննիսյանն առաջնորդվել է մամուլի նկատմամբ ունեցած կայուն սկզբունքներով, խորապես գիտակցել իր կոչման նշանակությունը: Նա բազմիցս ընդգծել է մամուլի խոշոր դերը հասարակական կյանքում, այն համարել ոչ միայն պետականություն չունեցող քաղաքակիրթ ժողովրդի մշակութային կյանքի կազմակերպման հիմնական գործոններից մեկը, այլև հասարակական կյանքի առաջնորդը: Այդ իմաստով նա մեծ հատուկյամբ բարձրացրել է իր թերթի բարոյական կշիռը և նրա ներգործուն ուժը՝ առանձնապես քաղաքական կյանքի ճգնաժամային ժամանակներում: Չնայած գրաքննության խստություններին, Հովհաննիսյան խմբագիրը կարողանում էր գտնել ժուռնալիստական հնարանները, որոնց միջոցով շրջանցելով գրաքննական պատնեշը՝ նա անուղղակիորեն պատասխանում էր օրվա առաջնահերթ հարցերին: Այսպես, սկսած 1894-ից, երբ Հովհաննիսյանը թերթի հիմնական խնդիրն է դարձնում լուսարանել Արևմտահայաստանում տեղի ունեցող իրադարձությունները, նա ինչ-որ չափով սահմանափակելով հրապարակխոսական հոդվածների քանակը՝ դեղարվեստական գրականության և բանասիրական հոդվածների միջոցով, այնուամենայնիվ, վեր է հանում ճշմարտությունը:

Լրագրական հնարանքի լավագույն միջոցներից էր եվրոպական ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատմություններից առնված ուշագրավ դրվագների հրատարակումը: Այսպես, «Արձագանքում» տպագրվել են մի շարք հոդվածներ նվիրված թուրքական լծի դեմ բուլղար ժողովրդի պայքարին, իտալական ժողովրդի պայքարի հերոսներ Գարիբալդիին և Գափանցիին: Եմբագիրը բազմիցս դիմել է հունգար ժողովրդի ազատագրական պայքարի թեմային: 1892 թ. տպագրվել է «Հունգարական ազգային բանաստեղծությունը 1848-1849-ի պատերազմի ժամանակ» մեծարժեք հոդվածը, 1894-ին Լյուդվիգ Կոչուտին նվիրված մի քանի հոդված, 1896-ին «Հունգարիայի հաղարամյակը» հոդվածը: Հովհաննիսյանը տպագրել է և մի շարք նյութեր նվիրված չեխ ժողովրդի պատմությանն ու մշակույթին:

Իրենց պատմությունը և ազատասիրական ավանդներով Հայ ժողովրդին մտա կանգնած եվրոպական ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումների օրինակով «Արձագանքի» հրատարակախոսները դաստիարակում էին արեմտաՀայությունը ճակատագրական 1880-1890-ական թվականներին: Այդ ամենը, սակայն, կատարվում էր դժվարին պայմաններում, գրաքննություն կոմիտեի հետ խմբագրի ունեցած ամենօրյա բախումների ճանապարհով:

«Արձագանքի» հրատարակության տարիները զուգահեռվում են Ալեքսանդր III -ի թագավորության, երկրի մտավոր կյանքի դեմ նրա ձեռնարկած ուկազիտն միջոցառումների ժամանակներին: Հայ պարբերական մամուլի գրաքննության գործը, որը ենթարկվում էր Կովկասի փոխարքայությանը, 1882 թ. փոխարքայության վերակազմումից հետո կառավարչապետությանը, 1883-ի հուլիսից մտնում է Մամուլի գործերի գլխավոր վարչության անմիջական ենթակայության տակ: Այնուհետև ներքին գործոց նախարարության ցուցմունքով Կովկասի գրաքննության կոմիտեն ուշադրությունը կենտրոնացնում է Արեմտյան Հայաստանի նկատմամբ Անդրկովկասի հայության մեջ ծավալվող աշխույժ հետաքրքրության վրա: Այս օրերին է, որ կառավարական բարձր առյաններում շրջանառության մեջ է դրվում «Հայկական սեպարատիզմ» տերմինը: Կոմիտեի նախագահն իր ղեկուցադրերում հայտնում էր այն միտքը, թե Հայ լրագրերը, առերես խոսելով արեմտահայերին խոստացված բարենորոգումների իրականացման մասին, փաստորեն ձգտում են Հայաստանի վերածնությունը իրրե քաղաքական մի ամբողջական մարմին,

այն անջատելու ծրագրով թե՛ Թուրքիայից, թե՛ Ռուսաստանից: Այս կապակցությամբ Կովկասի կառավարչապետը Ալեքսանդր III-ից թույլտվություն է խնդրում ուժեղացնել գրաքննությունը «Հայերի մեջ սկսվող քաղաքական շարժումների դեմ»: Շուտով ստացվում է ներքին գործոց նախարարի հրահանգը գրաքննական խստություններն ուժեղացնելու վերաբերյալ թե՛ տեղական և թե՛ արտասահմանից Կովկաս ուղարկվող Հայ պարբերականների նկատմամբ: Այդ պայմաններում առանձնապես դժվարանում է «Արձագանքի» հրատարակության գործը: Արդեն 1883-1885 թթ. կառավարչապետության գրազրույթյունների մեջ «Արձագանքի» մասին խոսվում էր իբրև վտանգավոր մի օրգանի, որն իբր գլխավորում էր Հայերի ազգային (պահպանողական) կուսակցության մամուլը և տողորված էր ողջ Հայ ժողովրդի քաղաքական միավորման մասին անիրագործելի երազներով<sup>52</sup>: Բաֆֆին իր նամակներից մեկում այս օրերին գրում է. «Այժմ լրագրության և առհասարակ մամուլի դրույթունը խիստ դժվարին պայմանների մեջ է գտնվում..., ցնեզուրայի խստությունը չափ չունի»<sup>53</sup>: Ծիրվանզաղեն մտքի դահիճներ է անվանում գրաքննիչներին, որոնց հետ իբրև թերթի գլխավոր աշխատակից ի պաշտոնն հաճախակի էր չփվում:

1884 թ. հոկտեմբերին Ներսես Վարժապետյանի մահվան կապակցությամբ Աբգար Հովհաննիսյանը, առանց գրաքննության թույլտվության «Արձագանքը» սգո սև շրջանակով տպագրելու և տպաքանակի մի մասը տարածելու համար, պատժվում է. շաբաթաթերթը ութ ամսով փակվում է:

1885 թ. արգելվում են բոլոր հոդվածները և հեռագրերը կապված հայկական դպրոցները փակվելու հետ. նույնիսկ 1886-ին, երբ ծխական դպրոցները վերաացվել էին, խմբագիրներին արգելվում էր խոսել այդ հարցի մասին: 1894-1896 թթ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող հայկական ջարդերի տարիներին Հայ լրագրողներին կարգադրվում է բավականաձև միայն արտասահմանյան և ուսական մամուլից կատարված արտատպություններով և ուսական հեռագրական գործակալության մատուցած նյութերով: 1894 թ. «Արձագանքի» համար գրաքննության ներկայացված նյութերից մերժվում է 83 հոդված, 1895-ին՝ 141, 1896-ին՝ 145 և 1897-ին՝ 89 հոդված: Այդ հարցին

<sup>52</sup> Տես Մ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1976, էջ 468-492:

<sup>53</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Ե. 1959, էջ 615:

վերաբերող նյութերի ապագրությունն արգելվում է նաև «Մշակ» և «Նոր-Նար» թերթերում:

Վրաստանի պետական պատմական արխիվի «Կովկասի գրաքննություն կոմիտեի» հարուստ բաժնում պահպանվում են հայ պարբերաթերթերի համար ներկայացված, բայց մերժված նյութերի բնագրերը: «Արձագանքից» մերժվել են Պետեֆիի և Նալբանդյանի բանաստեղծությունները, հայկական զգրոցների փակվելու առիթով գրված Արշ. Մխիթարյանի և Ս. Քամալյանի բանաստեղծությունները, Ա. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Սուլայանի (Սիրվան) բանաստեղծությունները հայկական ջարդերի թեմաներով: Արգելվել են Ա. Շիրվանզադեի «Արհամարհվածը» պատմվածքը և «Հաղբատ-Սանահին» ուղեգրությունների 2-րդ գլուխը, Գամառ-Քաթիպայի բազմաթիվ բանաստեղծությունները, զանազան պատկերներ, «Մեր տեղի ծակարուները» քաղաքական պամֆլետը և այլն:

Գրական ստեղծագործություններից բացի, որոնք բոլորն անհնար է թվարկել, մերժվել են բազմաթիվ հրատարակախոսական և բանավիճային հոդվածներ, թղթակցություններ, թարգմանական նյութեր նվիրված դարավերջի քաղաքական իրադարձություններին և Կովկասի հայություն հասարակական կյանքին:

Գիտենալով հանդերձ, որ գտնվում է գրաքննության կոմիտեի ամենօրյա հսկողության տակ, Հովհաննիսյանը շարունակում էր անվարան ընթանալ իր նախընտրած ուղիով: Նա ինքնավստահ էր և համարձակ: Ազգի շահը այն միակ արժեքն էր, որին ծառայում էր անձնուրաց: Այդ են ապացուցում ոչ միայն գրաքննության հետ ունեցած նրա բախումներն ու ստացած բարոյական հարվածները, այլև նյութական այն զոհարելությունը, որ նա կատարում էր ազգի լուսավորության և նրա մշակույթի զարգացման համար:

Հովհաննիսյան խմբագիրը զրսեորել է նաև կազմակերպչական մեծ ունակություններ և ժամանակի ընթացքում անընդհատ կատարելագործել իր հրատարակությունները: «Արձագանքի» հրատարակության տարիներին շարավաթերթի (այնուհետև լրագրի) գլխավոր աշխատակիցներն են եղել Ալ. Շիրվանզադեն, Ս. Հախումյանը, Վ. Փափազյանը, առաջատար աշխատակիցները Գյուտ քահանա Աղանյանը, Հարոն (Նիկ. Տեր-Հարությունյան), Փիլ. Վարդանյանը, Նիկ. Քարամյանը, Հովհ. Հովհաննիսյանը, Ալ. Երիցյանը:

Ա. Հովհաննիսյանը ժամանակի այն եզակի խմբագիրներից էր, որը բարձր հանորար էր վճարում հայ գրողներին, խրախուսում նրանց աշխատանքը,

դրանով իսկ ապահովում հայ նոր գրականութիւնի զարգացման բնականոն ընթացքը: «Արձագանքի» հրատարակութիւնի հետ կապված ծախսերը չնայած խարխլում են նրա նյութական վիճակը, թերթը մեծ հաջողութիւն է հասնում, և բաժանորդների թիվն աստիճանաբար ավելանում է: Եթէ հրատարակութիւնն առաջին տարիներին «Արձագանքն» ուներ 700 բաժանորդ, ապա 1898-ին այդ թիվը հասնում է 1700-ի: 1898 թվականը Հովհաննիսյանը դիմավորում է ապագայի նորանոր ծրագրերով: Նա վերջապես ազատվել էր դեֆիցիտից և կայուն աշխատավարձով սեփական թղթակիցներ նշանակել արտասահմանյան երկրներում: Այսպես, Լոնդոնի թղթակիցն էր Կ. Պոլսում «Արձագանքի» երբեմնի թղթակից Վաղինակը, Փարիզի թղթակից է հաստատվում Արշակ Չոպանյանը: Իսպանիայից սկսում է թղթակցել Վարդգես Սուրենյանցը: Թվում է «Արձագանքը» արդեն մտնում էր իր դոյուլիան առավել արգասավոր շրջանը, բայց հենց տարեսկզբին, երբ հրատարակվել էր թերթի միայն վեց համար, Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը մի շնչին պատրվակով ութ ամսով դադարեցնում է թերթը: Պատժաժամկետը դեռ չլրացած մայիսին, Գոլիցինի պնդումով, Ռուսաստանի ներքին գործոց նախարարը «վնասակար ուղղութիւնի պատճառով» թերթը դադարեցնում է ընդմիջ: Արգար Հովհաննիսյանն այդ հրամանով զրկվում էր հետագայում խմբագիր կամ հրատարակիչ լինելու իրավունքից:

Թեև դժվար էր հաշտվել այդ դժգոհ դատավճռի հետ, բայց Հովհաննիսյանն իր մեջ ուժ է գտնում զբաղվելու բանասիրութիւնով: Նա օգնում է գերմանացի հայագետ Յրանս Յինկի «Հանդես հայագիտութիւն» մատենաշարի հրատարակութիւնը, ֆրանսերեն է թարգմանում Բաֆֆու երկու վիպակը, որոնք հրատարակվում են Փարիզում: 1902 թ. նրան շնորհվում է ֆրանսիական ակադեմիայի թղթակից անդամի կոչում: Արգար Հովհաննիսյանը վախճանվում է 1904 թ.:

### «ՆՈՐ - ԴԱՐ» (1883-1906)

1883 թ. գեկտեմբերին Թիֆլիսում հրատարակախոս Սպանդար Սպանդարյանի խմբագրութիւնով սկսում է հրատարակվել քաղաքական, գրական լրագիր «Նոր-Դարը»:

Սպանդարյանը ծնվել է 1849 թ., Շուշի քաղաքում: 1872 թ. իրավաբանական գիտութիւնների դոկտորի աստիճանով ավարտել է Լայպցիգի համալսա-

րանք, այնուհետև 1872-1883 թթ. աշխատակցել «Մշակ» և ապա «Մեղու Հայաստանի» պարբերաթերթերին «Գոկոտր Սպանդարյան» և «Յուսիու» ստորագրություններով:

«Նոր-Գարի» առաջին ծրագրային Համարում Սպանդարյանը ներկայացնում էր թերթի գործունեություն ուղեգիրը՝ ընթերցողներին ինչ-որ տեղ զարմացնելով իր ինքնատիպ դատողություններով: Այսպես, թեև 1884 թ. Հայ Հասարակական միտքն անառարկելիորեն վերելք էր ապրում, նոր թերթի խմբագիրը Հայտարարում էր, թե իր օրերի սերունդը, դատապարտված լինելով անշարժության, «անընդունակ է գործելու»: «Այս ծանր պարագաներում ահա, նշում է Սպանդարյանը, «Նոր-Գարը» կամենում է զարթեցնել թմրած ուժերը, առաջ մղել ժողովրդի մեջ առողջ ձգտումները»: Առաջին Հայացքից Հավակնոտ թվացող այս Հայտարարությունը, սակայն, խոսում է նոր խմբագրի ինքնափաստություն, Հասուն հրապարակախոսի կայուն սկզբունքների և սփական մտահղացումներն իրականացնելու Հաստատակամություն մասին:

«Նոր-Գարի» ուղղության բացահայտման առումով նույնպես Սպանդարյանը շեղվում էր ընդունված դասական ձևակերպումներից: Նա Հայտարարում է, որ իր թերթը պետք է լինի պահպանողական պահպանելու և պաշտպանելու Համար մայրենի լեզուն, կրոնը, ազգային հիշատակներն ու ավանդությունները: Արմատական, երբ անհրաժեշտություն կզգացվի ոչնչացնել այն ամենը, ինչ դեմ է Հասարակության շահերին, ի վերջո՝ նաև անգատամիտ, բանի որ «նա կարող չէ պահպանել անպիտանը, որովհետև մերն է, և կարող չէ չընդունել պիտանին, որովհետև օտարինն է»:

Կյանքը ցույց տվեց, սակայն, որ Սպանդար Սպանդարյանը հիմնականում շարունակում էր ազգային-պահպանողականներ Գարեգին Մուրադյանի և Պետրոս Միմենյանի գաղափարական ուղեգիրը իր Հետագա գործունեությունը առավել Հստակ զարձնելով ազգային-պահպանողական Հոսանքի նպատակաուղղվածությունը: Դեռևս 1882 թ. «Մեղու Հայաստանի» թերթում Սպանդարյանը «Մշակի» դեմ գրած բանավիճային մի հոդվածում Հանգամանորեն պարզարանել էր ազգային-պահպանողական Հոսանքի բուն նույնությունը. Գ. Արծրունին «Մեղու Հայաստանի» թերթն անվանում է կրոնական և կղերական թերթ, սակայն Հայերը կղերական մամուլ, իրեն աշղպիսին, չունեն, գրում է նա: Մեր ուղղությունը որոշակի է և պարզ. «Նա կղերական կամ կրոնական չէ, այլ նա «ազգային» է բառի ազնիվ և բուն նշանակությամբ»:

Եթե մեր ազգային ուղղութիւնը կերպարանք տանք, ապա «կարող ենք ասել, որ դրա մարմինը – Հայրենիքն է, դրա հոգին – ազգայնութիւնը սկզբունքը: ... Մեր նպատակը ազգութիւնն է, – դարձյալ կրկնում է նա, – կրոնը, լեզուն, ցեղը... միջոցներ են, որոնց օգնութիւնով մենք մեր նպատակին հասնել ենք ձգտում» (1882, № 74):

Ավելի ուշ, 1892 թ. գրած «Եկեղեցու ամենազոր ուժը» առաջնորդողում Սպանդարյանը կրկին խոստովանում է. Այն, որ «Նոր-Դարը» իր գոյութիւնը ընթացքում «ազգային ամեն տեսակ խնդիրներից բարձր և գերադաս է համարել Հայոց առաքելական եկեղեցու պաշտպանութիւնը խնդիրը և միշտ նախանձավոր է եղել այդ եկեղեցու հաստատութիւնը և պայծառութիւնը», այն պարզ պատճառով, որովհետև «Նոր-Դարը» միայն նրա մեջ է տեսել մեր գոյութիւնը անդրդպելի խարխալը, նրա մեջ է որոնել մեր անճեղքելի փրկութիւնը» (1892, № 39, ընդգծ. մերն է):

Հայկական եկեղեցին պայծառ տեսնելու նպատակամղումով Սպանդարյանը բազմաթիւ հոդվածներ է նվիրել Հայ հոգևորականութիւնը բարբերին, վեր հանել այն թերութիւնները, որոնց մասին խոսվում էր նաև զավառներից ստացված նամակներում (անբարեխղճութիւն, անպատասխանատվութիւն, ծուլութիւն և այլն): Այդ հոդվածներում նա միաժամանակ անհրաժեշտ միջոցներ էր առաջարկում նրանց կրթական-բարոյական մակարդակը բարձրացնելու նկատառումով:

Կրոնը և լեզուն համարելով այն երկու գործիք սյուները, որոնց վրա պետք է բարձրանա ժողովրդի մտավոր-բարոյական առաջադիմութիւնը, Սպանդարյանը վճռական նշանակութիւն է տվել քրիստոնեական վարդապետութիւնը դասավանդմանը դպրոցներում և եկեղեցական արքայութիւններին բարելավմանը:

Մշակական-մեղվական պայքարը 1884-ից փոխադրվում է այլ հարթութիւն: Սպանդարյանի կողմից Հայ լուսավորչական եկեղեցուն արված անվերապահ գնահատականները բանավեճերի նոր աղբյուր են դառնում սկզբնավորելով մշակական-նորարարական հոսանքների պայքարը: Ինչպես կյանքի այլ բնագավառներում, Արծրունին նորարարական պահանջներ էր ներկայացնում նաև Հայ եկեղեցուն և նրա կազմակերպութիւնը: Կաթողիկոսական ընտրութիւնների նախօրյակին նա նպատակահարմար էր գտնում ընտրել այնպիսի գործչի, որը կարողանար Հայոց եկեղեցին «կերպարանափոխել, մտցնելով նրա մեջ ժամանակի ոգուն ու պահանջներին համեմատ բարե-



փոփոխություններ, վերանայել մի քանի Հնացած օրենքներ»: Հավատարիմ մնալով Գ. Մուրադյանի սկզբունքներին Սպանդարյանը վճռականորեն մերժում է փոփոխություն կոչված Հասկացությունը: Գրիգոր Արծրունին, ելնելով գործիչների «ներքին Համոզմունքի ազատություն» իր անդրդվելի սկզբունքից, ինչպես և նախկինում, շարունակում էր պնդել, որ բողոքական գործիչ և բարոցիչ Ամիրխանյանը ազատ է մամուլի էջերում արտահայտվելու հոգուս իր Համոզմունքների: Սպանդարյանն անհնար էր գտնում այդ և պահանջում Ամիրխանյանի ելույթներն արգելել մամուլի էջերում, քանի որ զրանք ժողովրդի մանավանդ անդարդացած խավերին շատ հեշտությունը կարող էին մղել դավանափոխության:

Բանավեճեր երկու Հոսանքների միջև երբեմն նեղանում էր Հանգելով անհեթեթություն: Այսպես, Արծրունին, Հաղորդելով Գեորգյան ճեմարանի բացման լուրը, դրա Հարեանությունը գետեղել էր մի Հաղորդում արևի խավարման մասին: Նորդարականները ներքին մի կապ են ստեղծում այդ լուրերի միջև և Համապատասխան մեկնարանություն տալիս «կատարվածին»: Եվ կամ Արծրունին նույնպես մոռանում էր չափի զգացումը, երբ իր թերթի մասին գրում էր, թե «Մշակի» ընդհատման ժամանակամիջոցում մեկ և կես տարի Հայ ազգը մայրենի լեզվով ոչինչ չի կարդացել («Նոր-Դար», 1886, №175):

1890 թ. «Նոր-Դարի» խմբագրությունը պատեհ առիթ է ստանում Արծրունուն վերագործնելու այն վիրավորանքների պատասխանը, որ ստացել էր թերթը մինչ այդ: 1890-ի դարնանը ծրագրված էր նշել Արծրունու հրապարակախոսական գործունեության 25-ամյա հոբելյանը: «Նոր-Դարի» խմբագրությունն առանց ձանձրանալու 1890 թ. սկզբից մինչև մայիս, երբ պաշտոնապես պետք է կատարվեր հոբելյանը, Արծրունու գեմ տպագրում է հոդվածների մի պատկանելի շարք, որոնցում այն միտքն էր արտահայտվում, թե Արծրունու հիմնադրած կործանարար դպրոցի հետևանքով քայքայվում են Հայ ընտանիքների հիմքերը, անտեսվում է ազգի կյանքում դավանափոխության հետ կապված վտանգը, նսեմացվում է էջմիածնի դերը և այլն:

Հոդվածներում քննարկվում են նաև Արծրունու գիճահարույց տերմինները ազատամիտ, սուջապեմ, արմատական և ապա խավարամիտ, նեղ-Հայաց, սիրացուական և այլն: Ի վերջո, «Ինչու՞ չենք մասնակցում» առաջնորդողում Սպանդարյանը հայտարարում է, որ ինքը և յուրայինները չեն

մասնակցի հորեւյանին ճիշտ այնպես, ինչպես 1883 թ. Արծրունին էր հրաժարվել մասնակցել Պետրոս Սիմեոնյանի հորեւյանին:

Չնայած բանավիճալին այս մանրախնդիր կամիթներին, որոնք աշխարհի ցանկացած պարբերաթերթի ձեւավորման պարտադիր բաղադրիչներն են կազմում, Սպանդար Սպանդարյանը «Նոր-Դարի» էջերում բարձրացրած հարցերով մեծապես նպաստել է հայության բարոյակրթական մակարդակի բարձրացմանը և ազգային ոգու ամրապնդման ազնիվ գործին:

«Նոր-Դարի» էջերում հանգամանորեն քննարկվել են Անդրկովկասի տնտեսական զարգացման հետ կապված խնդիրները, վեր են հանվել գյուղական տնտեսությունների քայքայման և նավթաշխարհի բանվորության աշխատանքի դժվարին պայմանների պատկերները: Թերթի թղթակիցները և հարցի տեսաբանները թեև փորձել են գտնել հանգուցային այդ հարցերի լուծման միջոցները, բայց դրանք, բնականաբար, քիչ արդյունավետ էին մասնավոր ձևով իսկ փոխելու իրերի դրուժյունը: Չնայած դրան, Սպանդարյանի լրագիրը դրական դեր է կատարել 1880-1900-ական թվականների օրվա հրատապ խնդիրների վերլուծությամբ, վաշխառուների և հարկահանության չարիքների, արդյունաբերական բուրժուազիայի գիշատչական վարքագծի սուր քննադատությամբ:

«Նոր-Դարի» խմբագիրը թերթի առաջնորդներում քննության է առել երկրի բնական հարստությունները սեփական միջոցներով արդյունահանելու, արհեստներն ու երկրագործությունը կատարելագործելու հետ կապված հարցերը: «Գինու, մետաքսի, բամբակի, բուրդի վաճառականությունից միայն որքան օգուտ կարող է ստանալ մեր երկիրը, եթե դրանք ինչպես հարկն է մշակվին և պատրաստվին», - գրում է նա: Ինչ վերաբերում է գյուղի ամենամեծ չարիքից վաշխառուների ճիրաններից գյուղացուն ազատագրելուն, ապա դրա միակ միջոցը Սպանդարյանը համարում է առևտրական բանկային ընկերությունների կողմից գյուղացիներին տրվելիք էժան վարկը:

Գյուղական հարցի տեսաբաններից աչքի է ընկել Կոստանտին Մելիք-Շահնազարյանը, որն իր մի շարք հոդվածներում Կովկասի գյուղական բնակչությանը խորհուրդ էր տալիս լրջորեն զբաղվել երկրագործությամբ՝ առանց սպասելու, որ այդ բնագավառում ևս սկսեն տնօրինել եվրոպացիք: Առանց արմատական փոփոխության անհնար գտնելով գյուղացիների դրուժյան բարելավումը՝ Կ. Մելիք-Շահնազարյանը իբրև վճռական միջոց առաջարկում է գյուղացիների մեջ արմատավորել համայնական աշխատանքի գաղափարը:

Աշխատանքը միացյալ ուժերով, արդյունքների արդար բաշխման սկզբունքը և փոխադարձ օժանդակությունը գործոններ է համարում, որոնք, նյութական ապահովություն ստեղծելով գյուղացիների համար, նրանց կկապեն հողի հետ և վերջ կտային պանդխտության աղետին (1896, №59): Այս գաղափարը խրախուսվում է Ապանդարյանի հերթական առաջնորդող հոդվածում («Ընկերականության սրտեմբ խթան է առաջադիմության», 1896, №65):

«Նոր-Դարի» էջերում մեծաքանակ թղթակցություններ, հոդվածներ, զանազան տեսություններ են տպագրվել նվիրված Կովկասում արդյունաբերության զարգացման բնթացքին, բանվորության վիճակին և հարակից այլ հարցերի: Շատ ծավալուն և արժեքավոր է «Առևտրականությունը և արդյունաբերությունը Անդրկովկասում» ուսումնասիրությունը, որի հեղինակն ստորագրել է «Ալֆա» ծածկանունով: «Նոր-Դարի» տեսաբանը երկրի տնտեսության վիճակը բնութագրում է առևտրի և արդյունաբերության զարգացման ստիճանով, որն անբավարար է գտնում Անդրկովկասում: Դրա պատճառը նա համարում է տեղական մասնագիտական ուժերի պակասը, որից օգտվելով եվրոպական գործարար անձինք աստիճանաբար նվաճում են երկրի վաճառաչաֆ կենտրոնները: Հոդվածագիրը տեղացիների ուշադրությունը հրավիրում է տեխնիկական մասնագիտական կադրեր պատրաստելու հարցին դրան տալով վճարական նշանակություն:

«Նոր-Դարի» արտասահմանյան թղթակիցները հաղորդում էին եվրոպական երկրներում հետզհետե աճող բանվորական շարժումների և ստեղծվող կազմակերպությունների մասին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում թերթի արտասահմանյան թղթակից Հ. Խաչումյանի թղթակցությունները նվիրված բանվորական շարժումներին:

«Նոր-Դարի» խմբագիրը պատշաճ տեղ է նվիրել գրականության, բանասիրության, մշակույթի հարցերին: Այսպես, տպագրվել են թերթի Հիմնական աշխատակից Մուրացյանի ստեղծագործությունները, սկսած առաջին «Հասարակաց որդեգիրը» պատմվածքից մինչև 1895 թ. գործերը, երբ նա հեռանում է «Նոր-Դարից» և սկսում է աշխատակցել «Արձագանքին»: «Նոր-Դարում» մշտապես տպագրվել են թերթի աշխատակիցներ Նոր-Դոսի, Հար. Ընդուրյանի, Ա. Աղապյանի և Կրպեի (Կարապետ Հովհաննիսյան) բազմաթիվ պատմվածքները, ինչպես և ժամանակի այլ հեղինակների արձակ էջերը:



բերում գիշերաշին և կիրակնօրյա դպրոցներ հիմնադրելու գործը: Մեծ ուշադրություն է նվիրվել ներսխայան դպրոցում և Գեորգյան նեմարանում մանկավարժական կազմեր պատրաստելու հարցին, ուսուցիչներին հետ ժամանակին պայմանագրեր կնքելու, նրանց նյութական դրուժյունը բարելավելու, մանկավարժական արտոնակարգ ձևեր բերելու հետ կապված ղեկավարությունները հարթելու խնդիրներին: Տպագրվել են թարգմանական և հայ հեղինակների գրչին պատահանող մանկավարժական հոդվածներ:

«Նոր-Գարի» էջերում մշտական, գրեթե ամենօրյա իր բաժինն է նվաճել թատրոնը: «Հայոց թատրոն Թիֆլիսում» և «Հայոց թատրոն Բարբում» վերատառություններ տպագրվել են թատերախոսություններ ընթացիկ ներկայացումների մասին, թատերական կյանքի տեսություններ, հոբելյանական հոդվածներ և առաջնորդողներ:

Հարուստ է թերթի բանասիրության բաժինը: Այստեղ տպագրվել են բազմաթիվ հոդվածներ նվիրված հայ և այլազգի գրողների կյանքին ու գործունեությանը, լեզվաբանական հարցեր, ազգագրական նյութեր: «Վերք Հայաստանի» վեպի տպագրության 35-ամյակի կապակցությամբ հարց է բարձրացվել կանգնեցնել Արովյանի արձանը և հրատարակել նրա երկերը: Մամուլից արտատպվել են Արովյանի երկու հոդվածները, ինչպես և Նալբանդյանի վերջին նամակը ուղարկված Կամիլիին:

Առանձին հոդվածներ են նվիրվել Ա. Գրիբոյեդովին, Վ. Բելինսկուն, Վ. Եկերպիրին, Ֆիրզուսին, Ալ. Ղազրեկին և Նիկ. Բարաթաշվիլուն:

Հետաքրքրական են բանահյուսական նյութերի հրատարակումները, որով թերթը հնարավորին չափով նպաստում էր այդ ճյուղի արժեքների գիտական ուսումնասիրությանը:

«Նոր-Գարի» բանասիրական բաժինը մեծապես հարստացել է թերթի աշխատակից Մանուկ Աբեղյանի աշխատասիրություններով, լեզվաբանական և բանասիրական հոդվածներով: Նա 1890-1898 թթ. «Նոր-Գարի» էջերում իր ստորագրությամբ և «Վարսամ» ու «Գրասվոր» ծածկանուններով տպագրել է մի շարք հոդվածներ նվիրված լեզվական բազմապիսի խնդիրների, ուղղագրության հարցերին, ինչպես և գրախոսել է տպագրվող պատմագիտական աշխատությունները և գրական ստեղծագործությունները:

«Նոր-Գարի» ամենահարուստ բաժինը նվիրված էր արևմտահայության առօրյա ընկերությանը: Թերթը ներկայացնում էր հայկական նահանգներում սիրող ծանր իրավիճակը, հայության անտեսական ու բարոյական տառա-

պանքները, 1894-1896 թթ. կոտորածների մղձավանջը: Դեռևս 1876-1883 թվականներին Սպանդարյանը «Մեղու Հայաստանի» թերթի էջերում բազմաթիվ հոդվածներ էր հրապարակել Հայկական հարցի անցած ճանապարհի մասին: Ասվել է արդեն, որ նա, հիասթափվելով սուլթանի հետ եվրոպական դիվանագետների ունայն խոսք ու զրույցից, հանգել էր սեփական ուժերով ազատութուն նվաճելու բանական եզրակացութայնը: «Նոր-Դարի» հրատարակութայն առաջին երկու տարիներին, սակայն, Սպանդարյանը վերանայում է ոչ հեռու անցյալի իր հայացքները և փորձում հաշտութայն եզրեր գտնել Օսմանյան տերութայն ու արևմտահայութայն միջև: Այսպես, երբ 1885 թ. ռուսական թերթերից մեկում խոսվում է էրզրումի հայութայն անել վիճակի մասին, Սպանդարյանն այդ չափազանցութուն է համարում և այն կարծիքը հայտնում, թե հայերի բարձրացրած աղմուկը կասկածների առիթ կարող է տալ կառավարութայնը: Մի այլ հոդվածում նա հույս է հայտնում, որ արևմտահայերը շրջահայաց կգտնվեն և, հավատարիմ մնալով կառավարութայնը, կաշխատեն հենց այդ վերջինից ձեռք բերել իրենց հասանելիք իրավունքները և մարդավայել կացութունը, քանի որ իրենց բախտը կապված է Թուրքիայի գոյութայն հետ: Դարձյալ 1885-ին Սպանդարյանը գրում էր. «Թուրքահայերը խոհեմությամբ գործելով պետք է աշխատեն Բ դռան հետ համաձայնությամբ ձեռք բերելու անհրաժեշտ բարենորոգումները: Թուրքահայերը կարող են իրենց վիճակը բարվոքել և իրենց գոյութունը ապահովացնել, հավատարիմ մնալով տիրող կառավարութայն՝ սուլթանի գերիշխանութայն տակ: Սա մեր կարծիքն է. ինչպես և այն, որ հայերը, տնտեսական և քաղաքական բարձր կյանք ունենալով, կապահովեն պետութայն գոյութունը» (№142):

Սակայն, երբ իրերի դրութունը երկրում բարդանում է, և թղթակիցներն ահազանգում են հայերի զանգվածային արտագաղթի մասին, Սպանդարյանը կոչ է անում արևմտահայ գործիչներին՝ ամեն գնով կանգնեցնել այդ հոսանքը:

1891 թվական: Սուլթան Աբդուլ Համիդը արգելում է Սահմանադրութայն տարեդարձի տոնակատարութունը և Ազգային ժողովի նիստերի գումարումը: Արևմտյան Հայաստանից ստացվող թղթակցութուններն ավելի ու ավելի տագնապալից են դառնում: Դրանց հեղինակները պատմում էին Մուշի գյուղերում կատարված բռնութուններին, Համիդի հեծելազորի խժոժութունների մասին: 1894-ին ստացված լուրերը վերջնականապես

փոխում են թեթի բնույթը: «Ի՞նչ կցանկանայինք» առաջնորդողում Սպանդարյանը, դիմելով Թիֆլիսում Թուրքիայի Հյուպատոս էսսադ Բեյին, գրում է. «Ե՛նձ ցավ է մեզ համար, որ Փոքր Ասիայից դանդատներն այժմ-յանում ու չեն պահպանում»: «Նոր-Գարը», հրապարակելով այդ լուրերը, կցանկանար, որ «այդ մասին քննություն լիներ, որ շարագործները պատժվեն և զրկվածներն իրենց կյանքի, գույքի ու պատվի ապահովություն ստանային» (1894, №9):

1894-ի օգոստոսին սկսվում են Սասունի զեպերը: 46 գյուղեր հիմնովին ավերվում են: 1895 թ. «Նոր-Գարի» էջերում հրապարակվում են բազմաթիվ թղթակցություններ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող բռնությունների, բանտարկությունների, սպանությունների մասին:

1894 թ. նոյեմբերին «Նոր-Գարի» մուսքը Թուրքիա արգելվում է: Խմբագիրն ափսոսանք է հայտնում ոչ թե բաժանորդներ կորցնելու, այլ այն բանի համար, որ թեև իր կարգում էին և այն «ներգործում էր մտքերի վրա որոշ ուղղություն»:

«Մայիսյան ուժորմների» ձախողումից հետո, երբ Թուրքական կառավարությունը «Հայաստան» անունը դարձնում է «Քուրդիստան» և ուժեղացնում բռնությունները ժողովրդի վրա, Սպանդարյանը պահանջում է, որ պատրիարքը մի տեղեկագիր տարածի եվրոպայում բացահայտելով Հայաստանի բրիտանյա ժողովրդի վիճակը: Դրությունն ավելի է ծանրանում Գում-Գափուի եկեղեցու միջադեպից հետո, երբ սուլթանական կառավարությունը մասսայական կոտորածներ է սկսում երկրում: «Նոր կոտորածներ Հայաստանում», «Խառնակություններ Հայաստանում», «Հայոց խնդրի շուրջը», «Հայոց գործերը» բաժինները դառնում են ամենօրյա: Կոտորածները ծավալվում են Հայաստանի բոլոր վայրերում (Բիթլիս, Մարաշ, Էրզրում, Տրապիզոն, Կիլիկիա և այլն): Պատրիարք Իգմիրյանը Հայտագիր է ուղարկում մեծ պետություններին Թուրքիայում Հայ ազգի բնաջնջման քաղաքականության փերարկրյալ բնություն նշանակելու պահանջով:

1895 թվականին, շարունակվող բռնությունները չկարողանալով կասեցնել, Իգմիրյանը հրաժարական է տալիս: 1896-ի օգոստոսին Օսումանյան բանկի գրավման գործուղությունը հաջորդում է կոտորածների, ձերբակալությունների, Հայության արտագաղթի նոր ալիք: «Նոր-Գարը» բազմիցս անդրադառնում է եվրոպական գիվանադատության անպատու դանակցություններին սուլթանական կառավարության հետ: Սպանդարյանն ա-

ուանձնապես քննադատում է անգլիական կառավարութեան եսակենտրոն քաղաքականութիւնը ընդգծելով այն միտքը, որ անգլիական քաղաքական գործիչները, արեւելյան գործերին խառնվելով, առաջ են մղում լոկ Անգլիայի շահերը: Նա նշում է, որ նրանցից ոչնչով հետ չեն մնում և գերմանացիք, որոնք, ապահովելով Թուրքիայի հողերի անձեռնմխելիութիւնը, նորանոր արտոնութիւններ են ձեռք բերում:

Երբ հայկական դպրոցները փակվելուց տարիներ անց, 1903 թ. ամռանը, ցարական կառավարութեան հրամանով բռնագրավվում է և հայ եկեղեցիների գույքը, Սպանդարյանը քաղաքացիական արիութիւն է դրսևորում և հրապարակային մի ճառով իր վրդովմունքը հայտնում փոքր ազգութիւնների նկատմամբ ցարիզմի կիրառած ռեակցիոն քաղաքականութեան հանդեպ: Հայ խմբագիրը թանկ է վճարում այդ ելույթի համար: Սակայն, հավատարիմ ճշմարիտ լրագրողի իր կոչմանը, Սպանդարյանը հանդգնում է խոսել և հրապարակորեն պաշտպանել իր ժողովրդի մշակույթի և առհասարակ հոգևոր կյանքի հետագա անխաթար զարգացման բնական իրավունքը:

«Նոր-Դարի» մշտական աշխատակիցներից էր բժիշկ Միսաք Արամյանը, որի լրագրական գործունեութեան 25-ամյակը լրանում է 1888 թ.: Նա աչքի է ընկել եկեղեցական գրականութեան մասին գրված մատենախոսութիւններով և բանավիճային հողվածներով: Թերթի երկարատև աշխատակիցներից էին Մուրացանը և Նար-Գոսը: Վերջինս «Նոր-Դարի» գլխավոր աշխատակիցն էր 1894-ից մինչև թերթի դադարումը: «Նոր-Դարն» իր լեզվական կուլտուրայով և գրական-հրապարակախոսական բաժիններին բարձր մակարդակով շատ բանով պարտական էր այդ մեծատաղանդ գրողներին:

«Նոր-Դարի» բանասիրական բաժնի ամենահեղինակավոր գործիչը Մանուկ Արեղյանն էր: Գևորգյան ճեմարանն ավարտելուց և մի քանի տարի մանկավարժական աշխատանք կատարելուց հետո նա 1890 թ. իր գործունեութիւնն սկսում է «Նոր-Դարի» էջերում և եռանդուն մասնակցութիւն ցույց տալիս նաև խմբագրական աշխատանքներին: Արեղյանը 1893-ին թևե մեկնում է արտասահման և մինչև 1898 թ. ուսանում Ենայի, Լայպցիգի, Բեռլինի և Փարիզի համալսարաններում, բայց այդ տարիներին նույնպես անընդմեջ թղթակցում է լրագրին ուղարկելով թե՛ լրատվական նյութեր և թե՛ ծավալուն մասնագիտական ուսումնասիրութիւններ («Գրական դպրոցներ» շարքից վերածնութիւն, սխոլաստիկա, ֆրանսիական կյանքից, սոմանտիզմ):



«Նոր-Գարին» Հիմնական թղթակիցներից, ապա և աշխատակիցներից էր գրականագետ, մանկավարժ Մինաս Բերբերյանը: Երկար տարիներ թերթին աշխատակցել են Հայ դուռնագիրներ Արշակ Ազազյանը և Հարություն Ճուղուրյանը: Նրանք ոչ միայն տպագրել են իրենց գեղարվեստական գործերը, այլև թղթակցությունները և հրատարակախոսական հոդվածները: Սկսած 1892 թ. Շուշիից «Նոր-Գարին» թղթակցել է մանկավարժ Հակոբ Ճաղարեկյանը, որի «Գալատական քրոնիկոն» շարքի թղթակցությունները մեծ հետաքրքրություն էին ներկայացնում:

Գեորգյան ճեմարանի շրջանավարտ Մելիքոն Գանազյոզը, որն աշխատում էր ծխական դպրոցներում, 1890-1894 թթ. միաժամանակ կատարել է «Նոր-Գարին» գլխավոր աշխատակցի պաշտոնը և այդ գործն ընդհատել էջմիրածնի միարան դառնալու կապակցությամբ:

Վերը հիշված գործիչներից բացի «Նոր-Գարին» ծածկանուններով թղթակցել են նաև բազմաթիվ երիտասարդ մանկավարժներ, որոնք աշխատում էին դավառական քաղաքներում:

«Նոր-Գարին» իր սեփական թղթակիցներն ուներ նաև արտասահմանյան երկրներում, որոնք ստորագրում էին գրական կեղծանուններով: Կ. Պոլսի թղթակիցն էր «Mars»-ը, որը գրում էր արևելահայերենով և մի թղթակցություն մեջ ակնարկում էր, որ սովորել է Գեորգյան ճեմարանում և Ռուսաստանից Հեռացել 1884 թ.: Նրա փաստառատ հոդվածները գրված էին ուժեղ արամարանությամբ և մեծ կրթով, նկարագրվող գեղպերի գրագետ մեկնաբանություններով:

Փարիզի թղթակիցն էր Ս. Սապազ-Գուլյանը: Նա «Նոր-Գարին» աշխատակցում էր 1895 թվականից և դարձյալ գրսեորում էր ժամանակի քաղաքական իրադարձությունների լավատեղյակություն, հոդվածները գրում քննական մտակցությամբ: Սապազ-Գուլյանն արեմտասահայ էր, բարձրագույն կրթությունը քաղաքական գիտությունների գծով ստացել էր Փարիզում: Նրա թղթակցությունները հարուստ լրատվություն էին պարունակում ոչ միայն Հայկական հարցի մասին, այլև ներկայացնում էին Զրանսիայում տեղի ունեցող իրադարձությունները:

Անգլիայի թղթակիցն էր Միհրանը, որը 1894-1896 թթ. բազմաթիվ հոդվածներ է գրել նվիրված կանանց կամանսրպալայի հետ կապված հարցերին:

Նյու Յորքի և Բոստոնի թղթակիցն էր Մովսէսը. Պարսկաստանի թղթակիցը Պալուսին:

«Նոր-Դարի» արտասահմանյան թղթակիցներից բացառիկ տաղանդավոր էր Հովհաննէս Խաչումյանը: Մագուսով Գանձակից, Խաչումյանն ավարտել է Գեորգյան ճեմարանը և մի քանի տարի հայրենի քաղաքում մանկավարժական աշխատանք կատարելուց հետո մեկնել արտասահման: 1892 թ. ընդունվել է Լայպցիգի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը. սովորել հունարեն, եբրայերեն, երաժշտություն ցանկանալով խորամուխ լինել Աստվածաշնչի թարգմանության հետ կապված հարցերի մեջ:

1893 թ. Խաչումյանը մեկնում է Ամերիկա, որտեղ մասնակցում է Ջիկագոյի աշխարհանդեսի կրոնական համաշխարհային վեհաժողովին: Անդլերեն լեզվով նա զեկուցում է կարդում հայ եկեղեցու պատմության մասին հիացնելով բոլորին: Ջիկագոյից անցնում է Բոստոն, ապա Լոնդոն, որտեղ դասախոսություններ է լսում Քեմբրիջի համալսարանում և կարդում մի զեկուցում «Հայոց եկեղեցին և ամերիկյան քարոզչությունը Հայաստանում»: Երկարատև ուղևորութունից Հ. Խաչումյանը վերադառնում է Լայպցիգ, բայց հիվանդանալով թոքերի քաղցկեղով վախճանվում է 1896 թ.: Նրա թաղումը կատարվում է Լայպցիգում, մեծ հանդիսավորությամբ: Հայ մամուլում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, տարբեր քաղաքներում կատարվում նրա հիշատակի հոգեհանգստյան արարողություններ: Ինչ վերաբերում է «Նոր-Դարին», ապա երբ հաղորդվում է թերթի տաղանդալատ թղթակցի մահվան լուրը, Սպանդարյանը, սկսած «Նոր-Դարի» №81-ից և մինչև №110-ը, գրեթե բոլոր համարներում շարունակաբար նյութեր է տպագրում նվիրված նրա հիշատակին: Բացառիկ երևույթ է այդ, որն ինքնին խոսում է Խաչումյանի իսկական լրագրողի արժանիքների մասին:

Հրատարակության առաջին իսկ տարվանից «Նոր-Դարը» մեծ ուշադրություն է արժանանում ընթերցողների շրջանում: Դրա վկայությունն էր նաև այն, որ թերթի բաժանորդների քանակը մշտապես եղել է 900-ից 1200, մի բան, որ ժամանակի պայմաններում կարելի էր բավարար համարել, եթե միայն բաժանորդները ճշտապահ լինեին և վճարեին իրենց պարտքը: Սակայն բաժանորդագները խմբադիրը ոչ միայն ժամանակին, այլև հետագայում երբևէ չի ստացել ճշտությամբ և ստիպված է եղել աշխատել նյութական դժվարին պայմաններում: Չնայած դրան, նա կարողանում էր «Նոր-Դարը» հրա-

տարակել շարաֆական 5 անգամ, բացառութեամբ 1890-ի, երբ գրաշարների և տառերի պահափ պատճառով թերթը տպագրվում է շարաֆական 3 անգամ:

1893 թ. դեկտեմբերին նշվում են «Նոր-Գարի» 10-ամյա և խմբագրի հրատարակախոսական գործունեության 20-ամյա տարեշրջանները: Այդ առիթով տպագրված տոնական համարներում (№226-229) խոսվել են Սպանդարյանի լրագրական գործունեության առանձնահատկությունների նրա սկզբունքայնության, գործին անձնագոհ նվիրվածության, կամքի ուժի, ուղղամտության մասին: Իրևե առաջնորդող տոնական №227-ում արտատպված էր «Նոր-Գարի» 1883 թ. առաջին համարի առաջնորդողը:

Սպանդարյանը շատ բարձր էր գնահատում մամուլի դերը հասարակական կյանքում և մեծ ակնկալիքներ էր կապում թերթերի գործունեության հետ: «Մեր երկրի մամուլի զրույթյան առիթով» (1886), «Մամուլը և նրա դերը մեր ժողովրդի մեջ» (1888), «Անբարեխղճությունը մամուլի մեջ» (1893), «Մամուլը և նրա կոչումը» (1896) և բազմաթիվ այլ առաջնորդողներում նա շոշափել է այդ խնդիրը, միշտ ընթերցողներին հասցրել այն ճշմարտությունը, թե «մամուլը կյանքի ազն է, աշխարհի լույսն է, և եթե այդ աղբ անհամի, այդ լույսը գրվանի տակ ծածկվի, ահա այն ժամանակ կյանքի և խավարի տիրապետությունն անխուսափելի է» (1893, №126):

Իր լրագրական աշխատանքի հարուստ փորձի բերումով Սպանդարյանը գատախարակել է թերթի հետ կապված մի խումբ երիտասարդ լրագրողների: Թերթի թղթակիցներին ուղղած նրա խորհուրդները այսօր ևս մնում են մամուլի աշխատողների պարտադիր սկզբունքները:

Այն բանից հետո, երբ 1903 թ. եկեղեցական դույրի գրավման առիթով Սպանդարյանը ելույթ է ունենում եկեղեցում, դեկտեմբերի 6-ին նրան ձերբակալում են: Նույն օրը լույս է տեսնում «Նոր-Գարի» վերջին 221-րդ համարը, իսկ խմբագիրն արտաքսվում է Անդրկովկասից: Մեկ տարի անց, 1904 թ. սեպտեմբերին, Սպանդարյանը դիմում է Մամուլի գործերի գլխավոր վարչության պետին խնդրելով թերթի համար երկրորդ խմբագիր հաստատել «Նոր-Գարի» խմբագրության քարտուղար Միրայել Զաքարի Հովհաննիսյանին (Նար-Դոս): Ի պատասխան այդ դիմումի, նրան 1905 թ. փետրվարի գրությունը թույլատրվում է շարունակել թերթի խմբագրումը և հրատարակությունը:

«Նոր-Գարի» հրատարակությունը վերսկսվում է 1905 թ. օգոստոսից և դադարում է 1906 թ. ապրիլին: Այնուհետև, սկսած 1907-ից մինչև 1916 թ.

ներառյալ, Սպանդար Սպանդարյանը, թերթի հրատարակութեան իրավունքը չկորցնելու համար, յուրաքանչյուր տարի տպագրում է «Նոր-Դարի» մեկական համար շկարողանալով սակայն վերականգնել հրատարակութունը:

## «ԱՐԱՐԱՍ» (1868-1919)

1874 թ. Գևորգյան Ճեմարանի հիմնադրմամբ էջմիածինը դարձավ Հայագիտութեան և Հայ մշակույթի նշանակալի կենտրոն: Այս կենտրոնի տնական գործունեութեան լավագույն արդյունքներից մեկն էլ «Արարատ» ամսագիրն էր: էջմիածնի կաթողիկոսների ջանքերով մինչ այդ ստեղծվել էր տպարան, ինչ-որ չափով կարգավորվել և կանոնավորվել էր մատենադարանը, հիմնադրվել էր Ժառանգավորաց դպրոցը: Դեռևս 1825 թվականին Ներսես Ե Աշտարակեցին մտադրվել էր հիմնադրել մի հանդես, որը պետք է կոչվեր «Տարեգրություն Հայոց գրագիտական» և որի նպատակն էր «չխօսիլ ամենևին քաղաքական և առօրեայ անցքերու վրայ, այլ զուտ գիտնական բովանդակութիւն պիտի ունենար» («Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 122-123): Սակայն սա ևս, բազմաթիվ այլ մտահղացումների նման, չիրականացավ Հայ ժողովրդի համար այնքան ճակատագրական քաղաքական դեպքերի պատճառով:

Շարունակելով նախորդների անավարտ մնացած և չիրականացած գործերը Գևորգ Դ կաթողիկոսը «... Ժամանակի պահանջներին հպատակելով... կամեցաւ մի պաշտօնական բերան ստեղծել Հայ եկեղեցու համար»:

Եվ այսպէս, 1868 թ. մայիսից էջմիածնում սկսեց հրատարակվել «Արարատ» ամսագիրը, որի տիտղոսաթերթը ծանոթացնում է. «Ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց», իսկ անդրանիկ պրակի առաջարանի մեջ համառոտ ներկայացվում է հանդեսի ծրագիրը: Ըստ այդ ծրագրի, «կրօնական» բաժնում պետք է լինէին կաթողիկոսների գործեր, պատմիչների կենսագրություններ, նրանց երկերից հատվածներ, ձեռագրերի մասին տեղեկություններ, նկարագրություններ, «պատմական» բաժնում Հայաստանի նահանգների, գավառների, քաղաքների մասին աշխարհագրական տեղեկություններ, ուսումնասիրություններ՝ գրչութեան, մշակույթի նախկին օջախների մասին, իսկ «բանասիրական» բաժնում հոգվածներ, ճամփորդական նոթեր, նամականեր և այլն: Հետագայում ամսագիրն այդ ծրագիրը մասնակի փոփոխություններով պահպանեց մինչև վերջ՝ 1919 թ.:

«Արարատի» Հիմնադրումով էլջմիածինը, Հոգևոր կենտրոն մնալով, աստիճանաբար վերածվեց նաև գիտական կենտրոնի՝ իրբև այդպիսին առաջինը լինելով Արևելյան Հայաստանում: «Արարատը» մինչև 1897 թվականը Հրատարակվում էր բացառիկ արտոնյալ պայմաններում, այն միակ ամսագիրն էր թերևս ամբողջ կայսրություն մեջ, որ գրաքննություն չէր ենթարկվում: Ամսագրի Հիմնադիր Գևորգ Գ կաթողիկոսի և կայսեր նախնական պայմանավորվածությամբ «Արարատի» գրաքննիչը կաթողիկոսն էր կամ Մինոզի նախագահը (կաթողիկոսական դահլթթ Թափուր լինելու դեպքում): Ենթահամարտունություն փոխարեն ցարական կառավարությունն ուներ այն ակնկալիքը, թև կաթողիկոսի իշխանությունն ու Հեղինակությունը, ինչպես նաև «Արարատ» ամսագիրը ծառայելու ևն Արևմտյան Հայաստանում և Ռուսաստանի տարածքում ապրող Հայերի մեջ կայսրություն ազդեցությունը տարածելուն և ամրապնդելուն: Գրաքննության չենթարկվելն անհանգստացնում էր Կովկասի ուսու կառավարիչներին, Հատկապես քաղաքացիական մասի նոր նշանակված (1897 թ.) գլխավոր կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինին, որն այդ առիթով ներքին գործերի նախարարին գրել է, թև Հրատարակության սկզբից ևևթ «Արարատ» ամսագիրը խիստ անհամապատասխան է գտնվել իր Համար նախանշված ուղղությունը: Ըստ նրա, առաջին իսկ Համարում զետեղված ծրագրից արդեն նկատելի էր, որ առանձին ուշադրություն է դարձվելու ամսագրի պատմաաշխարհագրական բաժնին, որի միջոցով նախատեսվում էր Հայերի մեջ արթնացնել Հայրենասիրական զգացմունքներ նկարագրելով «ազգի և Հայրենիքի պաշտպան նախնիների մեծ գործոց յիշատակարանները» և ապագրելով պատմական ակնարկներ, ինչպես Արարատյան մարզի, ուր իրենց դահերն ևն Հաստատել Հայոց թագավորները, այնպես էլ Հայաստանի այլ վայրերի մասին: Գոլիցինը Համոզված էր, որ «Արարատը» չկարողացավ օժանդակել Հասնելու այն նպատակին, որը զրվել էր 1868 թվականին, այն է Հայերի մերձեցումը ուսու ժողովրդի հետ: Եվ, «ևլնելով վերոհիշյալ մասնումներից, այլև նկատի ունենալով, որ պրավոսլավ եկեղեցու բոլոր Հոգևոր պարբերական Հրատարակությունները և նույնիսկ թեմական տեղեկագրերը ևևթակա ևն պատասխանատու գրաքննության», Գոլիցինն անհիմն էր Համարում այդ ուղղությամբ բացառություն թույլ տալն օտար դավանություն պատկանող Հոգևոր ամսագրին և փտահ էր, որ նույնպիսի գրաքննություն պետք է ևևթարկել «Արարատ» ամսագիրը» (Անցյալի վավերագրեր, «Էջմիածին», 1968, ԺԱ-ԺԲ, էջ 104): Եվ ահա, 1897 թ. օգոստոս ամսից մինչև 1905 թ. Հոկտեմբեր «Արարատը» Հրատարակվում էր Հանրաձանոթ «արտոն-

ված է գրաքննությամբ» արտահայտությամբ: Սկզբնական շրջանում «Արարատը» «աշխատասիրութիւն միաբանից ս. Էջմիածնի» էր. իսկ ավելի ուշ, արդեն 80-90-ական թվականներից աշխատակցելու էին հրավիրվում «Ճեմարանի ուսուցչական խումբն և ազգիս մեջ ամենուրեք գտանուող բանասեր գիտնական և ուսումնական անձինք» (1887, էջ 511): Թանգարանի և ձեռագրատան (մատենադարանի) գանձերն ուսումնասիրելու նպատակով Պետերբուրգից Էջմիածին էին այցելում Ն. Մառը, Յա. Սմիռնովը, Ն. Ադոնցը, Վ. Բարթոլոմը, Բ. Տուրանը, Փարիզից Ա. Մեյեն ու Յ. Մակլերը: Միաբանության գիտնական-անդամների և ակադեմիական գիտության ներկայացուցիչների միջև ստեղծվել էր գիտական սերտ համագործակցություն և բարեկամություն, որի վկայությունն է նրանց միջև եղած նամակագրությունը, ինչպես նաև միաբանության անդամներից շատերի կայսերական ակադեմիայի հնագիտական ընկերության անդամ լինելու փաստը:

Հրատարակության առաջին տարիներին «Արարատի» հնարավորությունները շատ համեստ էին, աշխատակիցներ զբեթն չուներ, հաճախ կաթողիկոսի նշանակած խմբագիրն ամբողջ համարի նյութերի հեղինակն էր:

70-ական թվականներից աստիճանաբար ձևավորվում է ամսագրի գիտական բնույթը: 1887 թվականից սկսեց ամսագրի վերելքի շրջանը, իսկ 90-ական թվականներին այն հասավ գիտական բարձր մակարդակի և իր հրապարակումներով ու հետազոտություններով շատ կարևոր տեղ զբաղեց դարավերջի և XX դարի սկզբի հայագիտական պարբերականների շարքում:

Սկզբում, մինչև 1872 թ. «Արարատը» հրատարակվում էր մայիսից մայիս, որից հետո և մինչև վերջ շարունակվում էր հունվարից հունվար: Ծավալը մեծացավ, արտաքին տեսքը, հրատարակության պայմանները բարելավվեցին, ամսագիրը դարձավ ավելի բովանդակալից:

«Արարատը» թեպետ խմբագրվել է տարբեր մարդկանց կողմից, սակայն դա էական ազդեցություն չի ունեցել ամսագրի ուղղություն վրա: Նրա վերջին խմբագիր Գյուլտ Տեր-Ղազարյանի ուսումնասիրությունների համաձայն, «Արարատն» ունեցել է 16 խմբագիր, որոնց մեջ եղել են նշանավոր և բեղուն գիտնականներ Վահրամ եպոս. Մանկունին, Խորեն վ. Ստեփանեն, Հուսիկ արքեպոս. Տեր-Մովսիսյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Արշակ Տեր-Միքելյանը, Կարապետ եպոս. Տեր-Մկրտչյանը, Գարեգին կաթ. Հովսեփյանը, Տիրայր եպոս. Տեր-Հովհաննիսյանը և ուրիշներ:

Ամսագրի վրա խմբագրի անունը չէր նշվում, քանի որ, ինչպես Կարապետ կալիսկոպոսն էր գրում. «Պաշտօնական թերթի համար խմբագրություն փո-

փոխուելն այն նշանակութիւնը չունի, ինչ որ մասնաւոր թերթի Համար. աշատեղ մի պաշտօնական մարմին, մի Հաստատութիւն կայ, որ Հակում է թերթի վերայ և ուղղութիւն տալիս նորան, խմբագրութիւնը Հաստատութեան ներկայացուցիչն է միայն, որ առաջնորդուում է տրուած ուղղութեամբ և ցուցումներով, և քանի Հաստատութիւնը նոյնն է մնում, կարող է ներկայացուցիչը փոխուել, իսկ թերթը պահել իւր ուղղութիւնն ու շարունակել անսայթաք իւր ընթացքը» (1902, էջ 493):

Իսկապես այդպես էր. ամսագրի ուղղութեան վրա խմբագրի և խմբագրական Հանձնախմբի փոփոխութիւնը չէր ազդում, սակայն ուղղութիւնը ներկայացնելու մակարդակի վրա այն շատ զգալի էր: Տարբեր չըջաններում ամսագրի տարբեր մակարդակներ ունենալը պայմանավորված է Հենց դրանով: 1868-1872 թվականների «Արարատը» նամակների, լուրերի, Հաշվետվութիւնների, բաժանորդների ցուցակների, Ենթարանի ուսանողների ստեղծագործութիւնների ասպարեզ էր:

Վահրամ Մանկունին իր խմբագրութեան տարիներին 1875-1878 թվականներին, գերազանցապես իր և Արեւ Մխիթարյանի Հողվածներով ուշադրութիւն է դարձրել դավանական, Հայ-Հունական, Հայ-կաթոլիկ Հարարութիւններին, ծիսական Հարցերին:

1879-1885 թվականներին խմբագրութիւնը (Գր. Եպս. Աղասիբեյլյան, Ա. Եպս. Գովթյան) Հրատարակում է կրօնական-բարոյախոսական Հողվածներ, Հիմնականում թարգմանութիւններ Ֆրանսերենից և գերմաներենից: 80-ական թվականների վերջերից արդէն ամսագրի ուղղութեան մեջ սկսեց գերիշխել գիտականը, Էջմիածնի միաբանութեան կազմը Համալրվեց եվրոպական կրթութիւն ստացած միաբաններով, որոնք «Արարատը» Հասցրին մի նոր որակի:

90-ական թվականներից, Հ. Տեր-Մովսիսյանի, Գ. Տեր-Մկրտչյանի, Կ. Տեր-Մկրտչյանի, Գ. Հովսեփյանի շնորհիվ «Արարատն» էլ ունեցավ իր գոյութեան 50-ամյա ընթացքի փայլուն շրջանը, երբ առաջադիմելով Հաստի իր զարգացման բարձրակետին. դա Խրիմյան Հայրիկի կաթողիկոսութեան ժամանակն էր Կարապետ և Գարեգին Եպիսկոպոսների խմբագրութեամբ, և «Արարատ» ոսկե շրջանն էր» (տե՛ս Յիսնամեակ «Արարատ» ամսագրի, «Տարագ», 1917, էջ 77):

Ամսագրին աշխատակցում էին մեծ մասամբ միաբանութեան անդամները և Ընթարանի ուսուցիչները, երբեմն էլ ուսանողները: Ամսագիրը մեծ թիվով Համակիրներ և աշխատակցողներ ուներ թե՛ Հայաստանում և թե՛ նրանից

դուրս: Հրավիրվեցին աշխատակցելու Ն. Ակինյանը, Կ. Կոստանյանը, Ստ. Մալխասյանը, Ն. Բյուզանդացին, Գր. Խալաթյանը, Հր. Աճառյանը և ուրիշներ: Հայագետներից շատերն իրենց աշխատանքներն առաջին անգամ հրատարակել են այս Հանդեսում, և այդ հրատարակումների մեջ կան այնպիսիները, որոնք առայժմ գիտությունը հայտնի են միայն «Արարատի» հրատարակությունում: Ամսագիրն ունեցավ բավական երկար կյանք՝ 52 տարի և բազմաթիվ էլեկտրոնային կրթություններ: Կաթողիկոսն էր Նշանակում խմբագրին և ութ Հոգուց բաղկացած խմբագրական մարմինը: Յուրաքանչյուր խմբագիր յուրովի աշխատել է հայագիտական իմաստով հարստացնել ամսագրի բովանդակությունը, և ստեղծվել են այնպիսի բաժիններ, որոնց մեջ հրատարակված նյութերն այսօր էլ գիտական մեծ արժեք ունեն: Այդպիսիք են, օրինակ՝ Կ. Տեր-Մկրտչյանի «Յաւելուած», Հ. Տեր-Մովսիսյանի «Ա. էջմիածնի գրադարան», Ա. էջմիածնի արխիւ», Բ. Աղավեղյանցի «Հայկական հարց», Գ. Հովսեփյանի «Մայր Աթոռի դիւանից» և այլն: Սակայն ամսագրի ընդգծված հայագիտական ուղղվածությունը, հատկապես վերոհիշյալ խմբագիրների օրոք, այնուամենայնիվ, ստվերում էր նրա պաշտոնական-կրոնական դերը, և ժամանակ առ ժամանակ ծագում էր այն միտքը, որ անհրաժեշտ է ունենալ գիտական և կրոնական առանձին Հանդեսներ:

Գ. Տեր-Մկրտչյանի «Արարատի» խմբագրի պարտականությունների ստանձնումով 1891-1892 թթ. ավելի հստակ ու որոշակի է դառնում ամսագրի հայագիտական ուղղությունը: Նրա հրատարակությունները լույս են տեսել աղանդավորական շարժումները լուսարանող բնագրեր, այն ժամանակ հայագիտությունը քիչ հայտնի հեղինակների երկեր, հիշատակարաններ, վարքեր, ծածկագրեր, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած բնագրագիտական-աղբյուրագիտական ուսումնասիրություն է, քանի որ պարզվում է բնագրի հեղինակը, ժամանակը, տեղը, ճշտվում են պատմական իրադարձությունների մանրամասները: Բացի բնագրերից Գ. Տեր-Մկրտչյանն ամսագրիը հարստացնում էր իր թարգմանություններով, որոնք օժտվում էին շատ արժեքավոր ծանոթագրություններով: Գ. Տեր-Մկրտչյանը, որպես խմբագրության անդամ և խմբագիր, Հանդեսի արտաքին տեսքի և բովանդակության, ծավալի, պարբերականության հարցերի առումով ևս մեծ և շնորհակալ աշխատանք էր կատարում:

1895 թ. Կարապետ Տեր-Մկրտչյանը, որ նախ խմբագրական Հանձնախմբի անդամ էր և ապա խմբագիր, տեղեկացնում է, որ «Արարատը» այս (3-րդ) համարից սկսած «կունենայ իւր Յաւելուածը, ուր կտպագրուին հետզհետէ



Հասուկատրներ Մայր Աթոռի ձեռագիրներից առ այժմ որքան կարելի է հնագոյն յիշատակարաններ» (1895, էջ 82): Եվ, իրոք, բազմաթիվ արժեքավոր ազդեցություններ, վավերագրեր առաջին անգամ տպագրվել են «Արարատ» ամսագրում: Գրանցից շատերն այսօր սկզբնազդրուրի արժեք ունեն, որովհետև դրանց բնագրերը կորած են: Կ. Տեր-Մկրտչյանի այդ կարգի Հրապարակումներից են «Իրենէոս և նշխարներ նորա գրուածներէց», «Տիմոթէոս էլուրոսի նորագիւտ երկը և նորա մի քանի նոր Հասուածները նախնի Հայերից առած»: Ե. Տեր-Մինասյանի Հեա Համատեղ արված այդ ուսումնասիրությունները գիտական աշխարհում առաջացրին մեծ հետաքրքրություն և աշխուժություն, իսկ Գերմանիայում Հրատարակվեցին և վերահրատարակվեցին Հայերեն բնագրերը գերմաներեն զուգահեռ թարգմանությամբ, առաջաբանով և ցանկերով: Շատ արժեքավոր են «Արարատում» Կ. Տեր-Մկրտչյանի, Ա. Տեր-Միրեյանի, Հ. Գլուխանդարյանի Հրապարակած թղթերը, որոնց Համեմատությունը «Գիրք թղթոց» ժողովածուի Հեա ցույց է տալիս, որ դրանք ավելի լիակատար և ճշգրիտ են, քանի որ կազմված են ձեռագրերի Համեմատությամբ: Թղթերի, ինչպես նաև Տիմոթէոս Կուդի «Հակաճառութեան» և Հովհաննես Իմաստասերի «Խոստովանութեան» ուսումնասիրությունը բացառիկ կարևորություն ունի դարերի ընթացքում Հայ եկեղեցու ինքնուրույն, անկախ դիրքը պաշտպանելու ձգտումն ըստ արժանվույն գնահատելու և Հայ եկեղեցու պատմության ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա դնելու Հարցում:

«Արարատի» Հրապարակումների մեջ նշանակալի տեղ ունեն բանահյուսությունը, ուղեգրությունները, ձեռագրերի ուսումնասիրությունը: Իրենց բանահյուսական-բանագիտական աշխատանքի արդյունքն ամսագրի էջերում հրատարակել են Մ. Արեգյանը, Հ. Աճեմյանը, Հ. Աճառյանը, Խ. Կատյանը, Հ. Ավչյանը, Ս. Հայկունին, Ն. Քարամյանը, Մ. Զաքարյանը:

Գերմանացի ճանապարհորդ բարոն ՀաբսաՀաուզենի ուղեգրությունը, որ կրում է «Ճանապարհորդութիւն յայկոյս Կովկասու, այն է ի Հայս և ի Վերս» խորագիրը, պարունակում է XIX դարի առաջին կեսի Հայերի, վրացիների, արխաղների, օսերի, գաղթական գերմանացիների կյանքի, կենցաղի, բարքերի, դավանանքի, ծեսերի, մարդաբանական տրվի, ավանդությունների, ազգամիջյան փոխհարաբերությունների մասին, թեև ինչ-որ տեղ Հակասական, սակայն շատ արժեքավոր տեղեկություններ: Իր այդ արժանիքների Համար ուղեգրությունը բազմիցս հրատարակվել և թարգմանվել է տարբեր լեզուներով: 1869 թ. այն Հայերենի է վերածել Արիստակես վարդապետ Սեղրակյանը:

Ձեռագրերի ավելացման հետ մեծանում էր ձեռագրացուցակներ ունենալու անհրաժեշտությունը: Ձեռագրերի նկարագրություն անդրանիկ փորձը, XVII-XIX դարերի գրչագրերի հիշատակարանների և նամակների հրատարակմամբ, «Ս. Էջմիածնի գրադարան» վերնագրով, «Արարատի» էջերում հայտնվում է 1888 թ.: Այնուհետև հաջորդում են Խ. Դատյանի, Մ. Մաքսուդյանի, Հ. Աճառյանի, Ս. Տիգրանյանի, Մ. Տեր-Մովսիսյանի և այլոց հրատարակումները: 1883 թ. Հ. Տեր-Մովսիսյանը «Ս. Էջմիածնի արխիւ» վերնագրով բաժնում հրատարակել է XIX դարի կաթողիկոսական ընտրություններին վերաբերող կարևոր արխիվային նյութեր պատգամավորների ցուցակներ, սինոդի, կովկասի փոխարքայի, Կ. Պոլսի պատրիարքի գրագրությունը:

«Արարատի» առաջին խմբագիր Արել եպիսկոպոս Մխիթարյանը հրատարակել է Եիրակի և Արարատյան դաշտավայրի հուշարձանների տեղագրական ուսումնասիրությունների շարք: Այդ ուսումնասիրությունները հարուստ են վիճագրերի հրատարակմամբ և պատմիչների հաղորդումների վկայակոչումներով: Մեսրոպ Սմբատյանի անվան հետ է կապված քսանից ավելի սեպագիր արձանագրությունների հրատարակումը՝ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Բ. Պատկանյանի մասնակի վերծանություններ: Սեպագիր արձանագրություններ են հրատարակել նաև Գ. Տեր-Մկրտչյանը, Կ. Բասմաջյանը, Հ. Տեր-Մովսիսյանը: Շատ են նաև վիճագիր արձանագրությունների հրատարակումները, որոնց գիտական մակարդակն իհարկե հետո է կատարյալ լինելուց, սակայն դրանով կանխվում էր այդ սկզբնաղբյուրների անհետ կորուստը: Արվում էին հայերեն արձանագրությունների ժողովածու՝ դիվան կազմելու փորձեր, այդ մասին միմյանց հետ խորհրդակցում էին Մ. Տեր-Մովսիսյանը և Ն. Մառը:

«Արարատը» արձագանքում էր նաև առօրյա խնդիրներին: Ամսագրի էջերում տպագրվում էին մանկավարժություն, հոգեբանություն, բժշկություն, կենսաբանություն վերաբերյալ ինքնուրույն և թարգմանական աշխատանքներ, մեծ տեղ էր հատկացվում Հայկական հարցին, արևմտահայություն վիճակին, թուրքերի դեմ նրա հերոսական պայքարին (1894-1896 թթ. Սասունի, Զեյթունի, Վանի հերոսամարտերը): Եվ բնականաբար, ինչպես տեղեկացնում է «Արարատը», հայոց կաթողիկոսն այդ դժվար օրերին պետք է լիներ իր ժողովրդի հետ:

Մակայն, ըստ ուսանական կառավարությունների և նրա պաշտոնյաների համոզմունքների, ազգային-ազատագրական պայքարի այդ բռնկումները թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ հատվածների կողմից ընդամենը «խռովություններ» էին, որոնք միասույն էին մեծ տերություն շահերին և, հետևաբար, պետք է նշմարվեին: Ներքին գործերի նախարարին ուղղված Գոլիցինի հայտնի զեկուցույցում սույնում էր. «Արարատ» ամսագրի նամասրինակ ուղղությունն արտահայտվեց նաև ներկա պատրիարքի (Թրիմյան Հայրիկ - Կ. Ա.) օրոք, այն բանից հետո, երբ Ձեռք գերազանցություն կողմից 1895 թվականի հոկտեմբերի 31-ի հ. 17 գրությունը առաջարկվեց նրան իր ազդեցությունը գործադրել ուսահայերի և արտասահմանյան հայերի նկատմամբ նպատակ ունենալով վերջ տալու քաղաքական խռովություններին Փոքր Ասիայում: Կարծեք կանխամտածված ձևով, ի հակասություն այդ առաջարկության, «Արարատի» մի ամբողջ շարք համարներում երևացին ծայրահեղորեն զրգոխ ընույթի հողվածներ, ուղղված բոլոր մեծ պետությունների դեմ, որոնք իրենց մասնակցությունն են բերում խռովությունների խաղաղեցման գործին: ... Ընդ որում, այս հարցում որևէ ներգործություն երբեք չի կարելի սպասել Էջմիածնից, որը Պատրիարքի զլխավորությամբ սովորաբար հայերի համար հանդիսանում է ո՛չ այնքան կրոնական, որքան քաղաքական միասնության կենտրոն և հյու գեևք նրանց անջատողական ձգտումների համար» («Էջմիածին», 1968, ԺԱ-ԺԲ, էջ 104): 1914 թ. ամսագրի խմբագիր նշանակվեց Բարկեն վարդապետ Ազավելյանցը: Նա ստեղծեց «Հայկական Հարցի» բաժին, ուր հրատարակվում էին սկանտեսների հուշեր, օրագրեր, հայ, ռուս, եվրոպացի գործիչների, գրողների, հրապարակախոսների էլույթներ, զեկույցներ, գիծակազրական սոլյայներ:

Հայ ժողովրդի քաղաքական և ընկերային-տնտեսական պատմության Հարցերը ևս արծարծվել են «Արարատի» էջերում: Շատ են թարգմանական հողվածները. Վ. Պատույի «Պարսկական պատերազմ 1826-28 թթ.» գրքի Հայաստանին վերաբերող հատվածները, Ֆ. Լօօֆսի «Հայ եկեղեցին», Վ. Բոլստոփի «Եկեղեցու պատմությունը տիեզերական ժողովների շրջանում», Պ. Միլյուկովի «Փարիզի միջազգային մեհաժողովը Հայկական Հարցի առթիվ», Բրբրստրն եղբայրների «Ճանապարհորդություն և քաղաքական կեանք Հայաստանի մէջ» գրքից հատվածներ: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ չի եղել Հայ ժողովրդի կյանքի քիչ թե՛ շատ հիշարժան իրադարձություն, սոն, տարևից, որին «Արարատն» անդրադարձած էլինի իր հրատա-

րակության տարիներին: Դա եղել է նոր կաթողիկոսի ընտրություն, Ղարաբաղի նվաճման 100-ամյակ, գրի և գրչության, տպագրության հորելյան, Հայկական Հարց, եկեղեցական կալվածների բուսագրավում և վերադարձ, ազգային դպրոցների փակում ու վերաբացում, որ արտահայտվել է հողավածների, ուսումնասիրություններ տպելով, ցուցահանդեսներ կազմակերպելով, հորելյանական հատորներ և գրքույկներ հրատարակելով, ծրագրեր առաջարկելով և դեպքերին մասնակից դարձնելով ի սփյուռս աշխարհի ցրված հայությանը, որով էջմիածինը հանդիսանում էր այն կազմակերպությունը, որի շուրջ համախմբվում էր ամբողջ հայությունը, որովհետև հայ ժողովրդի պատմությունը նաև հայ եկեղեցու պատմությունն է, և դրանք իրարից զատելն անհնար է:

1918 թվականին լրացավ «Արարատի» հրատարակության հիսնամյակը: Հորելյանը նշելու համար արվում էին նախապատրաստական աշխատանքներ, սակայն քաղաքական աննպաստ պայմանների պատճառով այն հետաձգվեց: Խմբագիր Գ. Տեր-Ղազարյանը կազմել էր ամսագրի նյութների բովանդակության ցանկ, որի սկիզբը հրատարակվել է «Արարատում», իսկ շարունակությունը մնացել է անտիպ: 1918-1919 թթ. «Արարատը» բացառապես գիտական հանդես էր, այնուհետև ամսագրի հրատարակությունը դադարեց:

«Արարատի», Գևորգյան Ճեմարանի, էջմիածնի հրատարակությունների շնորհիվ ստեղծված գիտական միջավայրում և այդ հիմքի վրա 1920 թվականին ստեղծվեց առաջին գիտական ինստիտուտը, որը և «Արարատի» վերջին տարիների ավանդույթով հրատարակեց իր «Գիտական նիւթերի ժողովածուն» (1921-1922 թթ.):

1968 թ. նշվեց «Արարատի» հիմնադրման Հարյուրամյա հորելյանը, հրատարակվեց ամսագրի լիակատար մատենագիտությունը, նրա ժառանգորդ «էջմիածին» ամսագրի այդ տարվա ԺԱ-ԺԲ միացյալ համարները նվիրվեցին «Արարատի» հորելյանին և ամսագիրը գնահատվեց ըստ արժանիույն:

Հիրավի, «Արարատը» եկեղեցու պատմության, մատենագրության, բանասիրության հարցերի բազմակողմանի և խոր ուսումնասիրությամբ արևելահայ իրականության մեջ լավագույն հայագիտական պարբերականներից է:

## Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

### ՅԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«ՊՍԱԿ» (1880-1883)

Հայ լրագրությունը Երևանում սկիզբ է առել հայերեն առաջին պարբերականի «Ազդարարի» ծննդից (1794 թ. Մադրաս) ութ աստամյակ անց, 1880-ական թվականներին: Պատմական այդ ժամանակահատվածում կապիտալիստական արտադրահարաբերությունների մուտքը Հայաստան առաջ է բերում սոցիալական, տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքի նոր տեղաշարժ, որն էլ իր հերթին զարգացման նոր ընթացք ու նոր ուղղություն է հաղորդում պարոսյին, գրականությունը, արվեստին, գիտությունը, հրապարակախոսությունը:

Այդ տարիներին Երևան քաղաքում գործում էին հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, մշակութային-կրթական կյանքը առաջ մղելու նպատակներով խանդավառված, ուսական և արևմտակերտական քաղաքներում բարձրագույն կրթություն ստացած ազատախոհ մտավորականներ բժիշկներ, հրապարակախոսներ, մանկավարժներ: Նրանցից էին Լևոն Տիգրանյանը, Վասակ Պապաջանյանը, Էմին Տեր-Գրիգորյանը, Գայանե Հովհաննիսյանը, Հայկ Մատակյանը, Սարգիս Բեկնազարյանը, որոնց ջանքերով Երևանում շարք են մտնում մշակութային-կրթական, առողջապահական նոր օջախներ: Այսպես, Հիմնվում է առաջին նախակրթարանը (մանկապարտեզը), հայ ընթերցողի գատին է հանձնվում Երևանի առաջին տպագիր գիրքը Էմին Տեր-Գրիգորյանի «Թուջնիկ» բանաստեղծությունների ժողովածուն (1876), լույս է տեսնում առաջին պարբերականը «Պսակ» շաբաթաթիերթը, կազմակերպվում են հայրենասիրական, ազգասիրական միություններ, ընկերություններ: 1880-ական թվականներին սկսում է գործել «Հայասեր-ազգասեր» զազանի կազմակերպությունը, որի Հիմնական նպատակներից մեկը հայ ժողովրդի մեջ ազգային-ազատագրական պայքարի զազափարների տարածումն էր:

«Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության ծրագիրը իրականացնելու, Երևանում լուսավորական գործը առաջ մղելու, աշխատավոր ժողովրդի սոցիալ-տնտեսական իրավիճակը բարեփոխելու համար միջոցներ առաջադրելու նպատակներով կազմակերպության անդամներից Վասակ Պապաջանյանը հանդես է գալիս Երևանում առաջին պարբերականի ստեղծման նախաձեռնություններ: Նա 1879 թ. նոյեմբերին դիմում է Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությանը՝ Երևանում հայերեն շաբաթաթերթի հրատարակելու իրավունք ստանալու խնդրանքով: 1879 թ. դեկտեմբերի 26-ի հատուկ գրույթյամբ Կովկասի փոխարքան Վասակ Պապաջանյանին թույլատրում է 1880 թ. հունվարի մեկից Երևանում լույս ընծայել հայերեն պարբերական շաբաթ մեկ անգամ: Փոխարքան միաժամանակ խմբագրից պահանջում է խստորեն հետևել գրաքննության կանոններին<sup>54</sup>:

«Պսակ» շաբաթաթերթի խմբագիր Վասակ Պապաջանյանը ծնվել է Երևանում, 1847 թվականին: Նա ավարտել է Թիֆլիսի դասական գիմնազիան, ապա ուսումը շարունակել Գերմանիայում: Սովորել է Հայդելբերգի, Բոննի, Լայպցիգի համալսարաններում, լսել Կանտի, Ֆիխտեի, Ֆոյերբախի դասախոսությունները: Փիլիսոփայության դոկտորի աստիճան ստացած վերադառնում է հայրենիք և Ղարաբաղի թեմակալի փոխանորդ Արիստակես Սեդրակյանի առաջարկով ստանձնում Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի տեսչի պարտականությունները: Վասակ Պապաջանյանի միջնորդությամբ Շուշի են հրավիրվում ազատաշունչ գաղափարներով տոգորված հայրենասեր ու բանիմաց ուսուցիչներ Արսեն Թոխմախյանը, Զավադբեկ Իշխանյանը, Գրիգոր Պապյանցը, Հովհաննես Լալայանցը և ուրիշներ: Վասակ Պապաջանյանի օրոք կարգի է բերվում դպրոցական գրադարանը, դպրոցին կից հիմնվում է թատերական խումբ, կազմակերպվում են ներկայացումներ, վերանորոգվում է դպրոցի տպարանը և այլն: Լեոն, բարձր գնահատելով Վասակ Պապաջանյանի գործունեությունը, գրում է. «Ինչ որ պարտավոր է արձանագրել պատմությունը, դա այն է, որ Վասակ Պապաջանյանի միամյա տեսչությունը, եթե միանգամից ամենքին գոհացնող մի ուսումնարանական դրույթուն չստեղծեց, բայց և հին իրականության

<sup>54</sup> Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՎԿԴՊԱ), ֆ. 430, ց. 1, գ. 1883:

շարունակութիւնն էր: Ընդհակառակն, դա մի բոլորովին նոր կյանքի առաջին տարին էր: Դպրոցն սկսում է կազմակերպվել նոր հիմքերի վրա»<sup>55</sup>:

1879 թվականին Վասակ Պապաջանյանը տեղափոխվում է Երևան: Այստեղ նա խմբադրում է «Հայկական աշխարհ» ամսագրի՝ 1879 թվականին Երևանում լույս տեսած միակ համարը:

Երևանում Վասակ Պապաջանյանը Հասարակական կարգով վարում է մի շարք պաշտոններ: 1881-1883 թթ. նա Երևանի քաղաքային ինքնավարութիւնն անդամ էր, 1883 թ. քաղաքային վարչութիւնն անդամ, սպա և քաղաքապետի պաշտոնակատար:

1883 թ., երբ Երևանում բացահայտվում է «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպութիւնն գործունենութիւնը, Պապաջանյանին և խմբի մյուս անդամներին ցարի Հրամանով 1885 թ. մարտին աքսորում են Կովկասի սահմաններից դուրս:

1889 թ. աքսորավայրից վերադառնալուց Հետո Վ. Պապաջանյանը, Երևանում չգտնելով Հոգեհարազատ միջավայր, Հեռանում է Հասարակական գործունենութիւնն ասպարեզից և մշտական բնակութիւնն Հաստատում Մաղկաձորում: Այստեղ էլ 1893 թվականին կնքում է իր մահկանացուն:

Վ. Պապաջանյանի խմբագրած «Պսակ» շաբաթաթերթի առաջին համարը լույս է տեսնում 1880 թվականի մարտի 15-ին: Այն Հրատարակվում էր շաբաթ մեկ անգամ, սկզբում «Գրականական, պատմական և մանկավարժական», իսկ 1882 թվականից՝ «Ազգային, քաղաքական և բանասիրական լրագիր» ենթավերնագրերով: 1881 թվականին բաժանորդների թիվը 240-ից Հասնում է 500-ի: «Պսակ» շաբաթաթերթի նյութերը գետեղված են Հետևյալ բաժիններում՝ «Գրականական», «Պատմական», «Մանկավարժական», «Թղթակցութիւններ», «Զննական Հայացք», «Նառն լուրեր», «Հայտարարութիւններ»: Թերթի առաջին տարվա երկու համարները տպագրվում են Զ. Գևորգյանի տպարանում, այնուհետև թերթը տպագրվում է Վասակ Պապաջանյանի նորաբաց տպարանում:

«Պսակի» աշխատակիցներն էին Արսեն Թոխմախյանը, Գայանե Հովհաննիսյանը, Արամ Մելյանը, Թովմաս ՄՀերյանը, Սարգիս Բեկնազարյանը, Լևոն Տիգրանյանը և ուրիշներ:

<sup>55</sup> Լեո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 391:

«Պսակ» թերթը ասպարեզ է իջնում կապիտալիստական արտադրահարաբերութիւնների զարգացման հետեւանքով քայքայվող գյուղի սոցիալական, իրավական, տնտեսական, կրթական իրավիճակը ներկայացնելու և այդ իրավիճակի բարեփոխմանը նպաստող միջոցներ առաջադրելու համար: Միաժամանակ շարաթաթերթի կետ նպատակն էր՝ ազգային-ազատագրական պայքարի գաղափարները տարածել Երևանի նահանգի ազգաբնակչութան մեջ:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան Ստեֆանոյի կոնֆերանսի և Բեռլինի վեհաժողովի պայմանագրերը բերում են այն համոզման, որ ազատութեան հասնելու համար պետք է ապավինել սեփական ուժին: Նույն եզրակացութեան են հանգում նաև Վասակ Պապաջանյանն ու նրա թերթի շուրջ խմբված մտավորականները. «Հայկական խնդիրը, ինքը ժողովուրդն է եթե մինչև այսօր հայն անծանոթ էր Եվրոպային, ապա այն պատճառով, որ նա - հայը - կորցրած էր պատվասիրութեան զգացմունքը, բայց, երբ փոքրինչ իրեն ճանաչեց, փոքր-ինչ ձայն հանեց, հայկական խնդիրը երևան դուրս եկավ: Ուրեմն, ինչպես որ ինքն իր ինքնաճանաչութեան նորավառ նշույլներով առաջ բերեց իր խնդիրն, նույնպես էլ պետք է ինքն իր ինքնազործունեութեամբ լուծուժն տա այդ խնդրին» (1883, №7): Հարցի բարեհաջող լուծման նախապայմանը նրանք տեսնում էին ազգի միասնական պայքարի մեջ: Ազգային-պաշտպանողական հայացքների տեր թուրքիայի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարում ղեկավար դերը վերապահում էր եկեղեցուն:

Միաժամանակ Պապաջանյանը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բարեհաջող ավարտը կապում է ռուս ժողովրդից սպասվող օգնութեան հետ. «... կաթողիկոսի գահը նստեցնել այնպիսինին, որին հաջողի գեթ էջմիածնից հայերի կենտրոնը տարածելու իրավունքը, հայերի պետը լինել, որ այսպիսով մի հզոր կապ կազմենք, որ և կապի տեղը լինի աթոռատեղին, որ միջոց ունենանք, որ անհաղթ ՌՈՒՄ շնորհով ձեռք բերենք ցանկալին, որ ամպի պես մի օր թնդանք Թուրքիայում մեր թշնամիների գլխին՝ կյանքի, գոյքի մեր ցանկալին ձեռք բերելու» (1883, №9):

Հայտնի է, որ այդ տարիներին (1880-ական թվականներ) թուրք և քուրդ հրոսակախմբերը անխնա ավերում էին Արևմտահայաստանի հայկական գյուղերը: Թուրքական կառավարութիւնը, ինչպես նկատում է «Պսակը», չափազանց խորամանկորեն էր առաջ տանում իր հայաջինջ քաղաքականութիւնը: Նա առաջին հերթին սկսում է փակել հայոց դպրոցները: Այս առթիվ



շարաթափանցիկ գրում է. «Թուրքիան այսօր անամոթաբար ձեռք է կարկառում Հայոց դպրոցներին, ուզում է իր ճիրանների մեջ առնել Հայոց դպրոցները, ուրիշ խոսքով, Հայոց ազգութայն այդ ծնելարանը, Հայոց սերնդի այդ արգանդը, որ ճմիր, որ մզի իր վայրագ ճիրանների մեջ այդ ծնելարանը, որ այլերի, փչացնի այդ մայրական, այդ կենսագործ արգանդը» (1883, №9):

Գրաքննութայն Հետապնդումներից խուսափելու Համար խմբագիրը Հաճախ ազգային-ազատագրական պայքարին վերաբերող Հարցերը մեկնաբանում էր այլաբանորեն այնպես, որ ուշադիր ընթերցողը միայն կարող էր ըմբռնել նյութի իսկական իմաստը: Նման Հոդվածների մասին Պապաջանյանը գրել է. «Թո՛ղ ներեն մեզ Հայ ընթերցողները, որ ուրբ-մուրբ ճանապարհով ենք տանում մեր պատմութայն ընթացքը, որ երբեմն էլ գուցե անտեղի ավելորդություններ ենք ներս բերում, բայց այդ ամենն էլ խորհրդով ենք անում և ... միևնույն ժամանակ կխնդրեինք, որ խելամտությամբ կարգան այն խորհրդավոր դրվածքը, որ դատապարտված է զգուշ ու կցկտուր նախադասությունների միջոցով դուրս ցուլանալ» (1883, №7):

Ի Հարկե, «Պսակի» ազատաշունչ ոգով դրված շատ Հոդվածներ չեն վրիպում գրաքննութայն ուշադրությունից: Գրաքննչական մարմինները Հաճախ արգելում են առանձին Հոդվածներ, առանձին նախադասություններ կամ ամբողջ Համարի մեկ կամ երկու էջը: Նման դեպքերում խմբագիրը իր ընթերցողներին ստիպված է լինում Հայտնելու գրելով. «չտպվեցավ», կամ «մեզանից անկախ պատճառներով այս Համարը կես թերթ է Հրատարակվում»: Իսկ Հաճախ էլ արգելված նախադասությունների փոխարեն դրվում են բազմակետեր: Ինչպես վկայում են փաստերը, Հաճախ խմբագիրը ստիպված է եղել, ինչպես ինքն է գրում. «մտածածը, խորհածը ինչպես առանց մի անցաթղթի մարդի փականքի տակ դնել ու միշտ բանտարկել, գրածը, շարադրածը ջնջել ու Հավիտյան անհետացնել» (1883, №1):

Կովկասի գրաքննչական կոմիտեն «Պսակը» Համարել է «ծայրահեղ վտանգավոր ուղղություն ունեցող թերթ»<sup>56</sup>:

Չնայած Հետապնդումներին, «Պսակ» թերթը կարողանում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարները տարածել ժողովրդական լայն զանգվածների շրջանում:

<sup>56</sup> ՎԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1332:

XIX դարի 80-ական թվականներին կապիտալիզմի ուղին թեակոխած երկրամասի անտեսական ու սոցիալական կյանքի զարգացման պահանջները ելնելով Հայ առաջադեմ մամուլը փորձում է ներկայացնել գյուղի և քաղաքի դեմոկրատական վերափոխման իր ծրագրերը: «Պսակ» թերթը ազգի նյութական և հոգևոր ուժերի ծաղկումը տեսնում է աշխատավոր կամ, ինչպես թերթում է գրված, «Հասարակ ժողովրդի մեջ»: «Հասարակ ժողովուրդը, - գրում է թերթը, - մեկ ազգի, իսկ ընդհանուր Հասարակ ժողովուրդը մարդկության Հասարակական շինվածքի Հիմքն է: Նա մի ազգի կորիզն է, իսկ առաջադեմ ու լուսավորված դասը, նրա ծաղիկն ու Հասած պտուղը» (1880, №1): Այս հոդվածում, որ պատասխան խոսք է ուղղված Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայի Հայ ուսանողների խմբագրությունն ուղարկած ողջուն-նամակին, մեջբերված են քաղվածքներ Միքայել Նալբանդյանի «Նկատողությունք» Հրատարակախոսական հոդվածից: Այսպես, «Հասարակ ժողովուրդը ոչինչ առանձին Հատկություն և անուն չունի, բացի մարդու և քրիստոնեի անունից: Ոհ, որքան Հարուստ է այդ աղքատությունը, և, գտանվելով ցած աստիճանի վրա, ինչպես բարձր կանգնած է նա» (1880, №1):

«Պսակ» շաբաթաթերթը, իհարկե, Հասարակական զարգացման վերաբերյալ առաջադրած իր ծրագրերով չէր Հասնում նալբանդյանական ոգու ըմբռնմանը:

«Պսակը», ներկայացնելով գյուղի աշխատավորություն անտեսական ու սոցիալական թշվառ իրավիճակը, քննադատում է Հարուստ մեծատուններին, նրանց անիրավ դործերը: «Աղա ես, - գրված է այնտեղ, - ապա և ունես իրավունք առնել-տալ, ուտել-խմել, պատժել-անարգել, Հափշտակել-բամբասել, զրկել, սպանանել, կողոպտել և այլն» (1882, №227):

Շաբաթաթերթը կոչ էր անում աշխատավոր գյուղացիներին սթափվել, «կոտրել լուռության սառույցը», պայքարի դուրս գալ իրենց մարդկային արժանիքներն ու իրավունքները Հանիրավի ոտնահարողների դեմ: «Ճանաչեցեք ձեզ, - դիմում է նրանց թերթը, - ձեր պատիվը, մի՛ք թափիլ ձեր մարդարևուրը խոզերի առաջ» (1881, №40): Թերթը այն կարծիքն է Հայտնում, որ ժողովուրդը ինքը պետք է լինի իր դատավորը, բոլոր անիրավություններին քննողն ու մերկացնողը: Դեմոկրատական այս միտումը նկատվում է թերթի բոլոր հոդվածներում: Ժամանակի ազդային-դեմոկրատ մտածողների նման Վասակ Պապաջանյանն էլ ազգային ճնշման վերացման հետ էր կապում

սոցիալ-տնտեսական կյանքի բարեփոխման Հեռանկարները: Նման միտումն արտահայտված է Հետևյալ աշխարհայեցողությամբ. «Ժամանակով ազան հափշտակեց Պարկը, կամենում էր հափշտակել նաև Չոմախը (դադանակ): Բանականությունը նրան ասում էր. սուր Պարկը, բայց պահիր Չոմախը: Չոմախով կարող ես ձեռք բերել Պարկ, բայց Պարկով՝ երբեք Չոմախ: Նա լսեց բանականությունը, ավելց հափշտակողին Պարկը և պաշտեց սրբի տեղ Չոմախը... անգին Չոմախը: Այժմ մեր գյուղացին ունի միայն մի Չոմախ, օրհնյալ է փայտն, որով լիցի արգարություն» (1880, №1): Այլաբանությունը, կարելի է հասկանալ այն իմաստով, որ թերթը վճռական դերը վերապահում է զենքին, ազատագրական պայքարին:

Պապաջանյանի համոզմամբ ազգի «աննդյան առատ աղբյուրներն են երկրագործությունը և վաճառականությունը, իսկ նորա կրթության միակ աղբյուրն է ուսանողությունը» (1880, №1): Այս միտքը հաստատելու համար խմբագիրը մեջ է բերում Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» և «Նկատողությունք» ստեղծագործություններից համապատասխան հատվածներ: «Պսակը» զարգացնելով «... ազգի մտավոր առաջադիմությունը կախում ունի նրա նյութական կացությունից» դրույթը, տնտեսական կյանքի բարեփոխման երաշխիքը տեսնում է տնտեսության կազմակերպման այն ձևերի մեջ (գյուղատնտեսական ֆերմաներ, փոխատու-խնայողական ընկերություններ, հացի շտեմարաններ և այլն), որոնք լայնորեն կիրառվում էին ռուսական և արևմտասեփրոպական երկրներում: Այսպես, «Հողագործական և արհեստակցական ընկերությունների կարևորությունը մեր ազգի համար» հոդվածում պրոպագանդվում է գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների ստեղծման գաղափարը: «Ամեն մի լուսավորված ու քաղաքակրթված ազգի մեջ, - գրված է այնտեղ, - երբ մեկ անհատի ուժը չի բավականանում որևէ գործ գլուխ բերելու, միանում են մի քանի անհատներ, կազմում ընկերություն և սկսում գործել միասին» (1881, №5): Իսկ «Գյուղատնտեսության բարվոքմանը նպաստելու միջոցները» հոդվածաշարում (1881, №6-11) ցույց է տրվում գյուղատնտեսական ֆերմաների դրական դերը գյուղի աշխատավորության ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր կյանքում:

«Պսակը» անդրադարձել է նաև հայ դպրոցի ու մատաղ սերնդի կրթության հարցերին: Թերթում մանկավարժական թեմաներով հոդվածներ են տպագրել առաջադեմ մանկավարժներ Սարգիս Բեկնազարյանը, Հովհաննես

Հիթուժը և ուրիշներ: Նրանք բարձրացնում էին գյուղական վայրերում մասնագիտական կողմնորոշում ունեցող ուսումնարանների սակզծման պահանջը: «Պսակի» էջերում մեծ տեղ է արվել նաև կանանց ու ազջիկների կրթության ու դաստիարակության հարցերին: Հովհաննես Հիթուժն իր «Ի՞նչ ենք պատրաստում մենք մեր ազջիկներից» ծավալուն հոդվածում (1880, №15) առաջարկում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշակերտուհիների բարոյակրթական մակարդակը բարձրացնելուն: Նա պահանջում է ազջիկներին սովորեցնել ասեղնագործություն, կարուձև, անգամ շերամապահություն, թունչնապահություն: «Ահա այդպիսի կրթությունից Հատո, - դրում է նա, - Հուսալի է, որ մեր ազջիկները կլինեն կատարյալ մայրեր, և մենք կունենանք կերպարանափոխված, ազնվացած գերգաստաններ և ժողովուրդ» (1880, №15): Հոդվածագրի համոզմամբ՝ կրթված ազջիկներն ու կանայք, միաժամանակ պետք է զինված լինեն հասարակական բարձր գաղափարներով, և այդ գաղափարները նրանց համար «ավելի բարձր, ավելի թանկ պետք է լինեն, քան կնությունը, մայրությունը, գովակներ մեծացնելը»:

Թերթը բարձրացնում է կնոջ հասարակական դերի և նշանակության հարցը: Իմենով հայ կանանց ու ազջիկներին կոչ է անում նրանց ներգրավվել ազգօգուտ գործերի մեջ, կազմակերպել կանանց բարեգործական ընկերություն, որն զբաղվի Երևանի հասարակության բարոյակրթական գործերով: Թերթի կոչի արդյունքն այն է լինում, որ 1882 թ. տիկ. Սրբուհի Խուդաբաշյանը կազմակերպում է Հայ կանանց ընկերություն, որի վարչության անդամներ են ընտրվում Սրբուհի Խուդաբաշյանը, Աշխեն Եղիազարյանը, Վարվառա Օրբելին, Աննա Բայրդինյանը: Թերթում պարբերաբար լուսաբանվում է այդ ընկերության գործունեությունը:

«Պսակ» շաբաթաթերթը բարձրացրել է նաև մայրենի լեզվի դասաժամերի ավելացման, դասավանդման որակի բարձրացման, ուսուցիչների աշխատավարձի, Երևանում թատերական մշտական խմբի ստեղծման, հասարակական գրադարան-ընթերցարանի բացման, գեղարվեստական, գիտահանրամատչելի գրքերի հրատարակության հարցերը:

«Պսակ» թերթում տպագրվել են նաև գեղարվեստական գործեր: «Որբի ինամակալը», «Սարգիս աղան», «Ագահության զոհը» և այլ գրական պատկերներում հարազատորեն ներկայացված են ազգի մեծատունների ցույց ու շվայտ կյանքը, արգահատելի արարքները:

«Պսակ» թերթը, չանսալով «Մշակի» այն խորհրդին, թե Երևանի նահանգում լույս տեսնող թերթը չպետք է Համարձակվի քննել ընդհանուր Հարցեր, անդրադառնում է ժամանակի Հուզող գրեթե բոլոր խնդիրներին, այդ թվում նաև եկեղեցու և կրոնի Հարցերին: Ընդունելով եկեղեցու դերն այն չափով, ինչ չափով այն սատար էր կանգնում ազգի միասնությանն ու գոյատևմանը, «Պսակը» գրում է. «Թո՛ղ Հայը ամեն կերպ աշխատի իր եկեղեցին լավացնել, բայց երբևք նրանից չհրաժարվի: Թո՛ղ Հայը Հալածի, պարսավի վատ Հոգևորականին, թո՛ղ պատառի նրա երեսի դիմակը, թո՛ղ նրան պատժի, սպանի, երբ նա գող է, կաշառակեր է, չարազործ է, անպիտան է, բայց երբևք վատ Հոգևորականներից զզվելով, նրանց արարքներից վիրավորվելով, դավաճան չհանդիսանա ազգի միություն օգի, կապի դեմ, որոնց մեջ է պայմանավորված իրենց միություն խորհուրդը...» (1883, №2):

Այսպիսով, «Պսակը» իր էջերում քննարկման է ենթարկել ժողովրդին Հուզող բոլոր կարևոր խնդիրները դասվելով այն պարբերականների շարքը, որոնց մասին Ռ. Սարինյանը գրել է. «Սակայն կային բազմաթիվ պարբերականներ, որոնք թեև ձև չէին տալիս ամբողջական ու վերջավորված ուզողության և թերևս աչքի չէին ընկնում սոցիալ-տնտեսական կյանքի խոր ու Համակողմանի վերլուծություններ, այնուամենայնիվ, զբաղվում էին առաջադրած խնդիրներով»<sup>57</sup>:

«Պսակ» շարաթաթերթը, հետևելով «ժողովրդասիրական շարժման» գաղափարներին, Հասարակական զարգացման գործում կարևորությունը տալիս էր մտավորականությանը և իր դեմոկրատական միտումներով դասվում «գաղափարական-դեմոկրատական ուրույն Հայեցություն ունեցող»<sup>58</sup> պարբերականների շարքը:

1883 թվականի մարտին, երբ բացահայտվում է Երևանի «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության գործունեությունը, և 1884 թ. ի թիվս այլ գործիչների աքսորվում է նաև Վասակ Պապաջանյանը, «Պսակի» Հրատարակությունը դադարում է:

<sup>57</sup> Ռ. Սարինյան, Հայ տնտեսագիտական մտքի քննական վերլուծություն (XIX դ. 70-90-ական թվականներ), Երևան, 1984, էջ 130:

<sup>58</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, 1964, էջ 35:

## «ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (1883-1885)

Անցած դարի 80-ական թվականներին Երեւանում լույս է տեսել նաև Էմին Տեր-Գրիգորյանի «Երեւանի Հայտարարություններ» կիսաերգիծական երկչափաթերթը:

Բանաստեղծ, գրամատուրգ, գերասան, Հրապարակախոս Էմին Տեր-Գրիգորյանը ծնվել է 1855 թվականի Հունվարին: Սկզբնական կրթութունը ստացել է Աստարիանի Հայոց Ազգարարյան ուսումնարանում, որտեղ նրա Հայրը Հովակիմ Տեր-Գրիգորյանը, գասափանդում էր Հայոց լեզու: Հետագայում Հոր միջնորդությամբ պատանի Էմինը ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, բայց այն դեռ չափարած ընտանիքի հետ տեղափոխվում է Էջմիածին: Այստեղ ուսումը շարունակում է Գեորգյան ճեմարանում: Ճեմարանն այսօր տալիս է հետ Էմինը նշանակվում է Երեւանի նահանգային վարչության քարտուղար: Ապա ընտրվում է քաղաքային վարչության անդամության թեկնածու, Երեւանի քաղաքային դումայի անդամ և այլն: Օգտագործելով պետական իր պաշտոնները՝ նա կարողանում է մի շարք բարենորոգումներ մտցնել Երեւան քաղաքում: Նրա անմիջական նախաձեռնությամբ Երեւանում անց են կացվում ջրմուղ-կոյուղու գիծ, հեռախոսային ցանց, կառուցվում է էլեկտրակայան և այլն:

Էմին Տեր-Գրիգորյանը ծավալել է նաև թատերական ակտիվ գործունեություն: Նա Գայանյան դպրոցի շենքին կից կառուցել է թատերական բեմ օժանդակ Հարմարություններով, ղեկավարել թատերական խումբը, գրել կենցաղային թեմաներով պիեսներ, որոնցից ուշագրություն արժանի են «Դամոկլյան սուր», «Բարեգործի դիմակի տակ» և այլն:

Գիտակցելով իր ձեռնարկած գործի կարևորությունը Հարազատ քաղաքի ու նրա բնակչության Համար՝ նա գրել է. «Պայքարել եմ Երեւանի դեմ Երեւանի Համար»: Նա Համոզված էր, որ եթե ինքը չհասցնեք տեսնել Երեւանը բարեկարգ վիճակում, և արժանի չլինեք գոչելու «վերջապես Հասանք այդ օրվան», ապա «այդ կըացահանչե, - ինչպես ինքն է գրում, - ամբողջ սրտով, անհուն բերկրությամբ ամեն մի Հայ, Համայն Հայությունը»:

Էմին Տեր-Գրիգորյանը ժամանակին աչքի է ընկել նաև որպես խմբագիր ու Հրապարակախոս: 1883 թվականից մինչև 1885 թվականը Երեւանում լույս է ընծայել «Երեւանի Հայտարարություններ» կիսաերգիծական երկչափա-

թերթը: Իր պարբերականի առաջնորդող հոդվածներից մեկում նա գրել է. «Թերթիս նպատակը չէ եղել նոր-նոր մտքեր արծարծել, նոր ծրագրեր ու պրոգրամներ կազմել, այս կամ այն մասին նոր հարցեր զարթեցնել մերայինների մեջ- ոչ, դոցա համար ունենք ավելի ընդարձակ և իմաստալից պարբերական հրատարակություններ, այլ գլխավորապես նորա նպատակն է եղել ընթերցասիրություն մտցնել մեր հասարակ զասակարգի մեջ, կրկնում ենք, որի ամեն մի անդամը հազիվ թե, իր երեխայության ժամանակ Սաղմոսը ավարտելուց հետո մի որևէ գիրք կամ հրատարակություն կարդացած լիներ» (1884, №1):

«Երևանի Հայտարարություններ» թերթը լույս էր տեսնում շաբաթը մեկ կամ երկու անգամ: Թերթը բաղկացած էր երկու էջից, ուներ հետևյալ բաժինները. «Բաղաքային և նահանգային նորություններ», «Անեկդոտներ, հարցեր ու ծիծաղաշարժ գրույցներ», «Առևտրական լուրեր, տեղական շուկան», «Հայտարարություններ՝ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, թուրքերեն)»: Թերթում տպագրված նյութերի մեծ մասը պատկանում էր խմբագրի գրչին: Նա գրում էր կենցաղային թեմաներով գրույցներ, ծիծաղաշարժ պատմություններ, բանաստեղծություններ: Հանդես էր գալիս «Գող», «Բոյաճի», «Դամքաչ» ծածկանուններով:

Թերթի փոքրածավալ պատկերներում սուր քննադատության են ենթարկվել քաղաքի կաշառակեր դատավորները, տկարամիտ հոգևորականները, տգետ ուսուցիչները, ստոր ու անվայել բարքի տեր պետական պաշտոնյաները, ձեապաշտ կանայք: Բուրժուական իրավակարգի հոսի բարքերի մասին թերթը գրում է. «Մեղքը մեռած է: Արդարությունը այրված: Բարերարությունը դրված է բանտում» (1884, №44-46):

Իր քննադատական խոսքը տեղ հասցնելու նպատակով էմին Տեր-Գրիգորյանը թերթում բացում է մի նոր բաժին՝ «Բամբասանք» խորագրով: Այս առթիվ նա գրում է. «Բամբասողը որքան էլ ցածր, անլսելի ձայնով է խոսում, բայց ականջ էի մտնում, որ նրան չլսի, նրա ամեն մի խոսքը կայծակից էլ արագ է թռչում, խոլերայից էլ շուտ է տարածվում» (1884, №45-46): Այս բաժնում շոշափվում են գլխավորապես սոցիալական, կենցաղային թեմաներ: Յուրյ տալու համար, որ կապիտալիստական աշխարհում մարդկային փոխհարաբերությունների հիմքում ընկած են փողը, պաշտոնը, դիրքը, թերթը գրում է. «... Հիմի ի՞նչ պաս, ի՞նչ բարեկենդան, մարդիկ նյութական որդիներ են դար-

ձեի, միանգամայն անտարբեր են դեպի ամեն ինչ և միայն փող և փող են պո-  
ուում» (1884, №13):

«Երևանի Հայտարարություններ» թերթում խրատուսանքի են արժա-  
նանում բարեգործական նպատակներով ստեղծված մի շարք ընկերություն-  
ներ: Այսպես, բարձր դնահատկությամբ Արրուհի Խուզարաշյանի կազմակերպած  
Կանանց բարեգործական ընկերության գործունեությունը, թերթը դիմում է  
Երևանի բնակչությանը խնդրելով նրանից «պահպանել այդ օգտավատ Հիմ-  
նարկությունը և չթողնել, որ մասազ Հասակի մեջ այն մեռնի» (1884, №35-  
36):

Էմին Տեր-Գրիգորյանի թերթը Համարձակորեն իր ճշմարիտ խոսքն է  
ստում ժամանակի մամուլի այս կամ այն օրգանի Հասցեին տալով յուրաքան-  
չյուրի անկողմնակալ գնահատականը: Այսպես, նկատի ունենալով «Մեղու  
Հայաստանի» թերթի պահպանողական ուղղությունը, թերթը գրում է. «... էլի  
գլուխը քարչ գնում է ու իր Հին գուռնան մեր ականջին փչում, նույնահանգ  
և շատ անգամ նույնազանի ֆելիետոններով ու երկդիմի խոսքերով իր դադա-  
փարն առաջ տանում» (1885, №1): Իսկ «Մշակը», որ այդ ժամանա-  
կաշրջանում Անդրկովկասում այն միակ թերթն էր, որ Հայ մտավորականու-  
թյանը Հուշում էր նոր ու թարմ գաղափարներ, արժանանում է գովասանքի ու  
խրատուսանքի Համարվելով «շատերին Համակրելի ու օգտակար թերթ»,  
«Հյուսիսսփայլից» Հետո այն միակ օրգանը, որը «առանց երկնչելու, ճակատ  
առ ճակատ պայքարում էր տգիտությունից դեմ, չէր քաշվում սանլու ճշմար-  
տությունը, մերկացնելու Հայ սեակցիոն գործիչների վնասակար գործունեու-  
թյունը»: «Նազարյանից Հետո, - գրում է թերթը, - Հասարակական շահերի  
գլուխ կանգնած ղեկավարներից ոչ մեկը չի ունեցել այն կտրուկ լեզուն, վառ  
եռանդը, խոսքի ուժը, ժողովրդականի չափ դյուրըմբռնելի ոճը, իսկական  
խմբագրին վայել մտավոր պատրաստությունը, որպիսին ունեցել է «Մշակի»  
խմբագիրը պ. Գր. Արծրունին» (1884, №55):

Հայտնի է, որ 1885 թվականին ցարական կառավարությունը Հատուկ ո-  
րոշում է ընդունում Հայկական դպրոցների փակման մասին: Այս որոշման  
վերաբերյալ Հաղորդումը տպագրվում է թերթի մարտի 17-ի Համարում:  
Դպրոցների փակմանը Հաղորդում են Հալածանքը ազգային մշակութային գոր-  
ծիչների Հանդեպ, մայրենի լեզվով գրքերի ու պարբերականների լույս ընծայ-  
ման արգելումը: Կոփկասի մամուլի գործերի գլխավոր վարչությունը 1885 թ.



գեկեմբերի 20-ին հրաման է արձակում «Երևանի հայտարարություններ» թերթը փակելու մասին:

Երևանի մամուլի առաջին օրգանները «Պասկ» շաբաթաթերթին ու «Երևանի հայտարարություններ» կիսաերգիծական թերթը, ժամանակին ծառայեցին իրենց կոչմանը՝ Երևանի ընթերցող հասարակայնությանը դաստիարակելով հայրենասիրության, ազգային արժանապատվության զգացումներով: Այդ պարբերականները միաժամանակ հետագա սերունդներին հարուստ նյութ թողեցին Երևանի ազգաբնակչության վաղք ու բարքի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, հասարակական ու կրթական կյանքի մասին:

### «ԱՌՈՂՁԱՊԱՅԱԿԱՆ ԹԵՐԹ» (1881-1884)

Բժշկական մասնագիտական պարբերականների շարքում առանձին տեղ ունի բժիշկ Լևոն Տիգրանյանի Երևանում հրատարակած «Առողջապահական թերթ» հայերեն առաջին բժշկական մասագիրը:

Լևոն Տիգրանյանը 1881 թվականին, ի պատասխան իր դիմումի, Կովկասի մամուլի գլխավոր վարչության կողմից ստանում է Երևանում «Առողջապահական թերթ» անունով պարբերական հրատարակելու իրավունքը:

Լևոն Տիգրանյանը ծնվել է 1842 թվականին, Երևանում: Սկզբում սովորել է Երևանի նահանգային դպրոցում, ապա տեղափոխվել Թիֆլիս, ուր երեք ամիս սովորել է Ներսիսյան դպրոցում, վեց ամիս էլ՝ զիմնագիտյում: 1858 թվականին Տիգրանյանը մեկնում է Պետերբուրգ, որտեղ իր քեռու Մկրտիչ Սանասարյանի միջնորդությամբ ընդունվում է Կարապետ եզյանի մասնավոր պանսիոնը: Այստեղ սովորում է լեզուներ և կատարում թարգմանություններ: 1875 թվականին Տիգրանյանն ավարտում է Դորպատի համալսարանի բնագիտական ֆակուլտետը և բժշկի վկայական ստացած վերադառնում է Հայրենիք: 1879 թվականին ստանձնում է Երևանի քաղաքային բժշկի պաշտոնը: Այդ ընթացքում միաժամանակ զբոսում և հրատարակում է բժշկական մասնագիտական թերթեր: 1879 թվականին հրատարակում է «Անատոմիական բառարանը», 1881-ին՝ «Մարդակազմություն հայոց ուսումնարանների համար» դասագիրքը, 1883-ին՝ «Բառարան բժշկական բույսերի - լատիներենից հայերեն և ռուսերեն»:

Բժիշկ Լևոն Տիգրանյանը միաժամանակ ազգային ակտիվ գործիչ էր: 1881 թվականին հատուկ հանձնարարությամբ լինում է Արևմտյան Հայաստանում,

տեսակցում Հյուպատոս Կ. Կամսարականին, գրուցում Խրիմյան Հայրիկի Հետ: Իր կատարած ճանապարհորդության մասին նա հոգվածաշար է տպագրում «Մշակ» թերթում (1882, №229, 230):

1885 թվականին Լեոն Տիգրանյանը, որպես «Հայասեր-պղպասեր» գազանի կազմակերպության անդամ և զեկավարներից մեկը, երեք տարով աքսորվում է Դորպատ: Աքսորից վերադառնալուց Հետո գրադվում է թարգմանչական աշխատանքով: Թարգմանում է Գյոթեի «Ճառուտը», «Հերման և Դորոթեան», Գոդդի «Ռեիդորը», Ֆրեդերիկ «Մանկական պարտեզ» աշխատությունը, հրատարակախոսական հոգվածներ տպագրում «Մշակում», «Պսակում», «Լուսայում» և այլ պարբերականներում:

Լեոն Տիգրանյանը մահացել է 1906 թվականին, Երևանում:

«Առողջապահական թերթ» ամսագիրը լույս է տեսնում ամիսը մեկ անգամ, 16 էջով: Ամսագրին աշխատակցում էին բժիշկներ Ա. Բարսեյանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Ա. Ծահադիգյանը, Բ. Նավասարդյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ: Ամսագրի բաժիններն էին 1) Պետական կարգադրություններ ժողովրդի առողջության պահպանման վերաբերյալ, 2) Առողջապահական հոգվածներ, 3) Բժշկական մատենախոսություն, 4) Խառն լուրեր և Հայտարարություններ:

Ամսագիրը առաջին իսկ համարից լայն տարածում է գտնում Երևանի նահանգի ազգաբնակչության մեջ: Առաջին տարում բաժանորդների թիվը Հասնում է մոտ 480-ի: Այն տարածվում է նաև Մոսկվայում, Թիֆլիսում, Կիևում, Էրզրումում և այլուր:

Ամսագրի հիմնական խնդիրն էր հայ ժողովրդի մեջ տարածել բժշկական գիտելիքները և կենցաղում արմատավորել առողջապահական կանոնների կիրառումը: Ձեռնարկելով այս պարբերականի հրատարակությունը խմբագիրը նպատակ ուներ, ինչպես ինքն է գրում, «սովորեցնել Հայերին, թե մարդ ինչպես պետք է ապրի, ինչ կանոնների պետք է իրան ենթարկի առողջ կամ հիվանդ ժամանակ, որ առողջ ժամանակ նրա առողջությունը սակավ խանգարվի, միշտ զվարթ լինի, իսկ հիվանդ ժամանակ կարողանա պահպանել իրան, որ պակաս տանջվի ու շուտ առողջանա» (1881, №1):

«Առողջապահական թերթ» ամսագրում քննարկվում են միջավայրի սահտարական վիճակի, մատող սերնդի բուժսպասարկման կազմակերպման, դպրոցական Հիգիենայի, մոր և մանկան առողջության պահպանման, նորա-

ծին երեխայի խնամքի, ինչպես և Ֆիզիկական դաստիարակութեան վերաբերյալ հարցերը:

Պետք է նշել, որ առողջապահութեան հարցերը ամսագրում քննարկվում են բնակչութեան տնտեսական, սոցիալական խնդիրների հետ սերտորեն շաղկապված: Խմբագիրը հիվանդութեան առաջացման ու տարածման աղբյուրը համարում է աղքատությունն ու տգիտությունը: Ամսագրում հարց է բարձրացվում աղքատների համար ուսումնարաններ բացելու և նրանց համապատասխան աշխատանքով ապահովելու մասին: Երբեմն էլ շեղվելով առողջապահական հարցերից խմբագիրը քննադատութեան է ենթարկում բուրժուական աշխարհի նորամուտ բարքերը, փորձում ցույց տալ, որ ժամանակի հասարակութեան մեջ փողը ապականում է մարդկանց, մեկին հոգով աղքատացնում, մյուսին՝ մարմնով տկար դարձնում:

Ամսագրի էջերում լայն քննարկման են ենթարկվում դպրոցական առողջապահութեան հարցերը: Հայկական դպրոցները սանիտարական ու առողջապահական անմխիթար վիճակից դուրս բերելու նպատակով խմբագիրը տպագրում է հայ ակնամուր մանկավարժների այն աշխատությունները, որոնցում ցույց են տրված դպրոցական առողջապահութեան կազմակերպման միջոցները: Այսպես, Սարգիս Բեկնազարյանի «Մեր մարմինը առողջ պահելու ընդհանուր պայմանները, կամ մի համառոտ հայացք մարմնական (Ֆիզիկական) կրթութեան մասին» վերնագրով հոդվածում (1882, №2-3) պահանջվում է դպրոցներում ունենալ ուսուցչական և հոգաբարձական խորհրդարան, ընթերցարան, մատենադարան և ամենակարևորը՝ մարզարան, ուր «կարելի կլինի ձմեռվա ընթացքում մարմնամարզական վարժությունները շարունակել»:

Ամսագիրն անդրադառնում է նաև մատաղ սերնդի աշխատանքային դաստիարակութեան հարցերին: Պահանջում է աշակերտներին սովորեցնել հյուսնի գործը, ընտելացնել դաշտային աշխատանքներին:

Այդ տարիներին, երբ լայն տարածում են գտնում ազգային-ազատագրական պայքարի գաղափարները, ազատասիրական խոհերով տարված խմբագրի հեռաձայր նպատակն էր՝ մատաղ սերնդից պատրաստել Ֆիզիկական կոմիտեի ու հայրենիքի ազատագրութեան գործին նվիրված քաջ քաղաքացիներ:

Հոգ տանելով մատաղ սերնդի համակողմանի դաստիարակութեան մասին Լ. Տիգրայանը պահանջում է ուսումնական ծրագրերում մտցնել առողջապահական կանոնների վերաբերյալ դասընթացը դիմելով ծնողներին.

«Հայրե՛ր ու մայրե՛ր, պահանջեցեք դաս տալ ուսումնարաններում առողջապահություն, եթե սիրում եք ձեր զավակներին» (1881, №3, էջ 85): Նա իր այդ պահանջը ներկայացնում է 1882 թ. կայացած ուսուցչական առաջին ժողովի կարգադրիչ Հանձնաժողովին, գրում է հրատարակում է «Արարկապարտություն» գիրքը, որը տարիներ շարունակ սրպես դասագիրք օգտագործվում է Հայկական դպրոցներում:

«Առողջապահական թերթ» ամսագրում մեծ ուշադրություն են արժանանում նաև մոր և մանկան առողջապահության պահպանման հարցերը: Երևանում, ուր այդ տարիներին մեծ չափերի էր Հասնում երեխաների մահացությունը, անչափ կարեւորվում է ծնողների շրջանում բժշկական և Հիգիենիկ գիտելիքների տարածման կազմակերպումը: «Առողջապահական թերթ» ամսագիրը պարզ ու Հասկանալի լեզվով գրում է երեխաների առողջապահության պահպանման հարցերի մասին, ինչպես նաև օգտակար խորհուրդներ է տալիս ծնողներին:

Հիվանդությունների ախտահանման, բուժման միջոցների վերաբերյալ Հողվածներ էին արտատպվում նաև ուսուսական բժշկական ամսագրերից ու թերթերից:

Բժշկական գիտելիքների տարածման գործում խմբագիրը մեծ դեր է հատկացնում աղջիկներին ու կանանց: Նա առաջարկում է Երևանում ստեղծել գթասիրտ քույրերի ընկերություն, որի «նմանը վաղուց արդեն գործում է քաղաքակիրթ երկրների յուրաքանչյուր գավառում» (1882, №4, էջ 100):

Լևոն Տիգրանյանը, միաժամանակ լինելով քաղաքի գլխավոր բժիշկը, էր ամսագրում անդրադառնում է քաղաքի բնակչությանը խմելու մաքուր ջրով ապահովելու, ճակիճները վերացնելու, քաղաքի սանիտարական վիճակը բարելավելու հարցերին:

Հայ բժիշկներին և Հատկապես առողջապահական բնադավառի աշխատողներին օգնած լինելու նպատակով խմբագիրը ամսագրում պարբերաբար տպագրում է ծանոթագրություններ նոր լույս տեսած բժշկական գրքերի վերաբերյալ:

Ամսագրում տպագրված Հողվածների մեծ մասը պատկանում է խմբագրի գրչին: Ընդամենը 14 Հողված գրել են այլ հեղինակներ (Ա. Հովհաննիսյան, Ա. Բաբայան, Ա. Ծահազիրյանց, Ա. Միրիմանյանց և ուրիշներ): Այդ Հանդամանքը խմբագրին չի վհատեցնում: Նա խիզախորեն առաջ է տանում գործը

ամսագրի գոյութիւնը պահպանելով առանց պարտքի, նույնիսկ դրամական եկամուտ ստանալով:

1885 թվականին, Լևոն Տիգրանյանին Երևանից արտաքսելուց հետո, բնականաբար դադարում է լույս տեսնելուց և «Առողջապահական թերթը»:

Մեծ է եղել «Առողջապահական թերթ» ամսագրի դերն ու նշանակութիւնը, քանի որ այն բժշկական մասնագիտական պարբերական լինելուց բացի, միաժամանակ ծափալել է նաև հասարակական, քաղաքական գործունեութիւն: Այդ իսկ պատճառով ամսագիրը հետաքրքրութիւն է ներկայացնում ինչպես հայ բժշկութեան, այնպես էլ հայ հասարակական մտքի պատմութիւնն ուսումնասիրողների համար:

ԱՐԵՎՍՏԱՅԱՅ ՄԱՍՈՒԸ

1870-1890-ական թթ. արևմտաՀայ մամուլը, հենվելով նախորդ տասնամյակների Հայ լրագրության Հարուստ ավանդույթների վրա, դարձավ Թուրքիայի Հայ բնակչության Հասարակական, տնտեսական ու Հոգևոր կյանքն արտացոլող ամենահարուստ վավերագիրը: Այս երեսնամյակի սկզբից արդեն արևմտաՀայ թերթերի և ամսագրերի առաջատար թեմաները դարձան գավառի Հայ Հարստահարված ու իրավազուրկ բնակչության կյանքի բացահայտումը, քրդական կեղեքումները, պաշտոնեություն Հարստահարումները և այլն: Դեմոկրատական մամուլը «Մեղուն», «Թատրոնը», «Ասիան», «Մանգումեի էֆքյարը», «Արեկյան մամուլը» և այլ պարբերականներ գավառի Հայ բնակչության ծանր կացությունը չէին ներկայացնում զուտ փաստագրական ճշտությամբ, այլ բողոքի ձայն էին բարձրացնում բռնությունների դեմ: 1870-ական թթ. արևմտաՀայ մամուլի մեջ նախ նկատվում, ապա որոշակիորեն ընդգծվում է նոր ուղղությունն ազգային ինքնորոշման տրամադրությունների դրսևորումը, որն արտահայտվում էր գավառում Հարստահարությունների Համատարած ցուցադրմամբ, ազգային և թուրքական իշխանությունների սուր քննադատությամբ ի շահ իրավազուրկ և կեղեքվող արևմտահայության: Թերթերի և ամսագրերի Համար առաջնակարգ թեմա է դառնում Արևմտահայաստանի սոցիալական ծանր վիճակի բացահայտումը և դրա զուգահեցումը ազգային ճնշումների իրողությանը: Օսմանյան ներքին քաղաքականության թեկուզ զուսպ քննադատությունը ևս իր ընդհանուր ուղղության մեջ արտացոլում էր Հայ մամուլի Հասարակական Հասունացումը: Կառավարության կողմից այդպիսի քննադատությունը և առհասարակ արևմտահայության տնտեսական ու ազգային դրության պատկերումը դիտվում էր որպես երկրի շահերին «դավաճանելու» արտահայտություն, ուստի և գործի էր դրվում գրաքննական ահաբեկող մեքենան: Վերջինս, որ ըստ ամենայնի վերահսկում էր Թուրքիայում Հրատարակվող մամուլը Աբդուլ Ազիզի և Մուրադ 5-րդի ժամանակ, իր բռնու-

թյուններով հրեշավոր չափերի հասած Արդուլ Համիդի ժամանակ սկսած 1870-ականի վերջերից: Չնայած դրան, արևմտահայ մամուլը կարողացավ անդրադառնալ ժամանակի նաև այլ կարևոր թեմաներին, որպիսիք էին ազգային սահմանադրությունը, եկեղեցու և կղերի դործունեությունը, օսմանյան լիբերալ շարժումը, ազգային կրթությունն ու լուսավորությունը և այլն, ընդամենն, պարունակելով նաև քննադատական որոշակի լիցք: Մասնավորապես, Հայկական Հարցի միջազգայնացումը 1870-ական թթ. երկրորդ կեսից՝ մամուլին հնարավորություն էր տալիս այս կամ այն կերպ արտահայտել քաղաքական տրամադրություններ:

1880-ական թթ. սկզբից օսմանյան կառավարությունը արտաքին քաղաքականության բարենպաստ պայմանների բերումով վերջ տվեց բարենորոգումների դիվանագիտական խաղերին: Մասնակի բարենորոգումների ծրագրերին հակադրվեցին ընդհանուր, ամբողջ երկրի բարենորոգումների մասին կեղծ հավաստիացումները, և Արևմտյան Հայաստանի խնդիրը դուրս եկավ Թուրքիայի քաղաքական օրակարգից: Դրան հետևեց Համիդյան ռեակցիայի հարձակումը Հայերի ազգային ինքնորոշման ամեն մի դրսևորման դեմ: Արդելվեց արևելահայ թերթի մուտքը Թուրքիա, արևմտահայ մամուլն ու գրատպությունը ընկան ծանր գրաքննության ներքո: Սուլթանը փաստորեն բացառիկ լիազորություններ շնորհեց գրաքննությանը՝ նրան հատկացնելով պաշտոնական գաղափարախոսությունը ամեն կերպ հիմնավորելու և այն ցանկացած ոտնձգությունից զերծ պահելու գործը: Ձևականորեն ղեռն գործում էր 1864 թ. մամուլի վերաբերյալ օսմանյան իրականության համար բավականաչափ լիբերալ օրենքը (այն պաշտոնապես երբեք չեղյալ չհայտարարվեց կամ չփոխարինվեց այլ օրենքով), սակայն իրականում Հայկական խմբագրությունները գործում էին գրաքննիչների մշտական ներկայությամբ, որոնք մաղով էին անցկացնում տպարան մտնելիք ամեն մի նյութ: Դաժան, կասկածամիտ և ռիսակալ գրաքննությունը ամենուրեք զգացնել էր տալիս իրեն՝ ինչ-որ չափով հոգեբանական գործոն դառնալով խմբագիրների համար: 1880-1883 թթ. խափանումների և հալածանքների ենթարկվեցին «Թերճեմանը էֆֆեյարը», «Մամուլը», «Մասիսը», «Ճերիտի հավատիսը» և այլ պարբերականներ: 1883թ. մամուլի վրա հաստատվեց կանխարգել գրաքննություն, որ անուամ էր ամեն ինչ՝ մամուլը լրատվությունից ու թարմ գաղափարներից զրկելու, նրա ինքնուրույնությունը ոչնչացնելու համար: Օս-

մասնայն գրաքննութիւնն այդ խրախճանքը տեւց մինչև 1908 թ. Արդուլ Համիդի տապալումը:

Վայրագ Հսկողութեան պատճառով արեւմտահայ մամուլը 1880-1890-ական թթ. բովանդակաւ կորցրեց իր քննադատական ոգին և ստիպուած էր սահմանափակվել զուտ լրատութեան շրջանակներում բունպատելով իր վերաբերմունքը ոչ միայն փաստերի, այլև դրանց մեկնաբանութեան խմատով: Այս նույն պատճառով 1894-1896 թթ. արեւմտահայ թերթերը և ամսագրերը չկարողացան անդրադառնալ կոտորածներին: Բովանդակ է միայն տակ, որ կոտորածների ժամանակ ոտտիկանութեան հրամանով թերթերը տպագրում էին «պաշտոնական լուրեր» այն մասին, թե սուլթանի «Հայրական հոգատարութեան և խնամքի շնորհիվ» Հայաբնակ նահանգներում ամեն ինչ խաղաղ է և հանդարտ: Աչալուրջ և բազմածալ Հսկողութեան պայմաններում մամուլ չէր կարող սպրդել արյունահեղ գափառի գրութեան մասին ամենահեռավոր ակնարկն անգամ:

1870-ական թթ. սկզբներին արեւմտահայ առաջավոր մամուլը Համալրվեց «Ասիա» թերթով (1872-1874): Նրա էջերում նկատելի է Պարոնյանի և նրա «Մեղվի» հանդեպ անքող Համալրանքը մասնավորապես Մ. Փորթուգալյանի խմբագրութեան տարիներին: «Ասիայում» քննադատվում են գափառի այլազգի և Հայ Հարստահարիչները, բողոքի ձայն է բարձրացվում պաշտոնական ու ոչ պաշտոնական Հարստահարումների դեմ: Թերթը պաշտպանում էր Խրիմյանին ընդդեմ նրա Հակառակորդ կրոնական ու քաղաքական ժողովների: Մ. Փորթուգալյանը աներկյուղ պայքար է մղել Եվդոհիայի, Վանի, Օրդուի, Ամասիայի «չորպանի աղաների» դեմ ի պաշտպանութուն կեղեքվող Հայ ազգաբնակչութեան: Մյուս կողմից, թուրքական իշխանութունների համարձակ մերկացումներով «Ասիան» միանում էր ժամանակի Հայ առաջավոր հրատարակութունների դիրքորոշմանը: Առհասարակ, թուրքական Հարստահարութունների դեմ արեւմտահայ մամուլի բողոքը այս շրջանում 1870-ականի առաջին կեսին, հիմնավորվում էր գափառական Հարստահարութունների դեմ պատրիարքի և Ազգային ժողովի համառ հարցադրումներով: Հայտնի են այս ժամանակ հրատարակվող այլ պարբերականների «Մեղվի», «Մասիսի», «Մանգումեի էֆքյարի», «Օրագրի» համարձակ հրապարակումները, որով արեւմտահայ լրագրութունը քննարկման առարկա էր դարձնում օսմանյան իշխանութունների ակնառու թերութունները: «Ասիայի» և «Թատրոնի» համագործակցութունը դրսևոր-



վել է նաև ազգային եկեղեցու բարենորոգման, մտավորականության օգնություններում նրա թերությունները վերացնելու ձգտման մեջ: Այս թեմայի շրջանակներում էլ Պարոնյանը աշխատակցել է «Ասիային» նրա էջերում տպագրելով յոթ հոդված (տե՛ս «Ասիա», 1874, 22 և 24 հուլիսի, 1 օգոստոսի, 2, 24-25, 30 սեպտեմբերի, 20 հոկտեմբերի): Այսուհանդերձ, թերթի համարձակախոսությունն արդեն դուրս էր գալիս ազգային իշխանությունների և թուրքական գրաքննության թողափության սահմաններից: Թերթը առմիշտ խափանվեց 1874 թ. հոկտեմբերի 21-ին:

1870-ական թթ. իր լայն հարցադրումներով ու հրապարակախոսական արություններ աչքի էր ընկնում Օ. Խոճասարյանի «Օրագիր» թերթը (նախկին «Միլի Ավարայրին», նոր արտոնատիրություն հրատարակվել է 1869 թ.): Արևմտահայության գրություն բարվոքումը Օ. Խոճասարյանն առնչում էր թուրքիայում քաղաքական կարգերի աստիճանական բարելավման հետ, և այն սակավաթիվ հայ պարբերականներից էր, որ հանդգնեց տպագրել նյութեր՝ Օսմանյան Թուրքիայում երեսփոխանական ժողով հաստատելու վերաբերյալ (1872 թ. նոյեմբերին, երբ երկրում հայաժողով էր օսմանյան լիբերալ սահմանադրական շարժումը): Հայտնի են նաև «Օրագրի» հանդամանակի հոդվածները Արևմտահայաստանի բնակչության հարտահայրությունների, նրանց նյութական ու հոգևոր աննախանձ կացություն և այլնի վերաբերյալ: Խոճասարյանը, սակայն, պոլսահայ խոշոր և միջակ առևտրականության և ազգային եկեղեցու առանձնաշնորհումների համոզված պաշտպանն էր և հիմնավորում էր նրանց առաջատար դերը ամբողջ արևմտահայության կյանքում: Այստեղից էլ սկիզբ էր առնում նրա ընդդիմությունը Մ. Խրիմյանի ու նրա պատրիարքական գործունեության դեմ: «Օրագիրը» գրեթե միշտ ուշադրության կենտրոնում է պահել հարանվանությունների հարցը արևմտահայ իրականության մեջ, պաշտպանել է հակահասունյաններին հասունյանների դեմ պայքարի ընթացքում: 1876 թ. «Օրագիրը» դադարեցվել է գրաքննության կողմից, սակայն ազդեցիկ ազգայինների միջամտության շնորհիվ վերահրատարակվել է «Նորագիր» անվամբ (այնուհետև հրատարակվել է «Նոր-դար» անվամբ): Մշտական բանավեճեր է մղել «Մասիսի» և «Մանգուսեի էֆեյարի» դեմ՝ ազգային հարցերում նրանց հետ տարակարծությունների պատճառով:

Իր հարուստ տեղեկատվությամբ և հաճախ անսպասելի ու նույնիսկ սենսացիոն հրապարակումներով 1870-ականի մամուլում առանձնանում է Ն.

Թյուրպենտեյանի «Լրագիրը», որը Կ. Պոլսի ամենաժողովրդական թերթերից մեկն էր (1875-1880): «Լրագիրը» քննադատում էր բարենորոգումների հարցում թուրքական իշխանությունների կեղծ պատրաստականությունն ու երեսպաշտությունը: Այս թեմայով հրատարակումները համոզում էին բնիկացողին, որ, անկախ կառավարության հավաստիացումներից, հարստահարություններն ավելի են ուժեղանում պալատներում: Բ. զուան կողմից բարենորոգումների ծրագիրը վիժեցնելու հետ էր կապում «Լրագիրը» Արևմտահայաստանում ծայր առած զաղթականությունը: Քննադատելով Արեղին փաշայի բարենորոգչական կեղծ գործունեությունը՝ «Լրագիրը» ցույց էր տալիս, որ պալատներում այդ պաշտոնյան կրկին պաշտոններ է շնորհում այն անձանց, որոնք հեռացվել էին բարենորոգումներին ընդդիմանալու համար: Թերթը բացահայտորեն գրում էր, որ կառավարությունը դիմում է քրդերին ընդդեմ հայերի:

Ն. Թյուրպենտեյանը բացասաբար արտահայտվեց Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի վերաբերյալ: Միջազգային իրավունքից ոչ մի օգնություն չակնկալող «Լրագիրը» արտահայտում էր հայկական այն շրջանների տրամադրությունները, որոնք ազգի ազատագրությունը համարում էին ապագայի գործ՝ ազավիճելով միայն սեփական առաջընթացի հնարավորություններին: Թերթը ընդհանուր առմամբ ճիշտ էր գնահատում Ռուսաստանի դերը Օսմանյան Թուրքիայի ժողովուրդների ազատագրման գործում և Սան Ստեֆանոյի համաձայնագիրը գերադասում էր Բեռլինի վեհաժողովի որոշումներից ամենից առաջ նկատի առնելով արևմտահայություն անվտանգության երաշխիքները: Ազգային ինքնորոշման տրամադրությունները համարձակորեն պաշտպանելու համար «Լրագիրը» խափանվեց տպագրական տեսչություն կողմից:

1870-ական թթ. Կ. Պոլսում հեղինակավոր թերթերից էր Մ. Մելիքյանի «Հայրենիքը» (1870-1891): Այս օրաթերթը ևս բազմազան լրատվություն է պարունակել Կ. Պոլսի և Արևմտահայաստանի ազգային կյանքի, հասարակական իրադարձությունների, սահմանադրական մարմինների, կղերի և եկեղեցու գործունեության վերաբերյալ: Թերթը հանդես է եկել զավառացիների մարդկային իրավունքների և արժանապատվության պաշտպանությանը: «Մեծմուսլը հավատիս» և «Արարատ» թերթերի խմբագիրների հետ միասին հալածվել է թուրքական իշխանությունների կողմից 1876 թ. Տրապիզոնի Շանա գյուղում հայերի հարստահարությունները բացահայտող հոդվածի

պատճառով: Երբեմն սուրբ է տվել սենսացիոն Հրապարակումների առանց ստուգելու լրատվության ճշտությունը, որի պատճառով սուր քննադատություն է արժանացել Հ. Պարոնյանի և Կ. Ություճյանի պարբերականներում:

1870-1880-ական թթ. և մանավանդ բարենորոգումների հարցի քննարկման ժամանակաշրջանում Կ. Պոլսում բավական ընթերցվող Հրատարակություն էր «Լույս» կիսամսյա հանդեսը (1874-1885): Ունենալով կրոնական և ազգային բովանդակություն՝ այն ամբողջովին հետևում էր պատրիարքարանի ուղեգծին, պաշտպանում հայ կղերի իրավունքները մայրաքաղաքում և զավառներում: Աջակցել է ն. Վարժապետյան պատրիարքին Արևմտահայաստանում բարենորոգումների առթիվ: Բարենորոգումների իրականացումը կապակցել է կառավարության արդարացի քաղաքականության հետ: Արևմտահայաստանում բռնությունների հիմնական մեղավորը համարել է քրդական վերնախավին և առաջարկել է զինված քրդերին քաղաքակրթելու և լուսավորելու անիրական ծրագրեր: «Լույսը» արդարացի քննադատություն է ենթարկել թուրքական հայտայաց և մոլեռանդ մամուլը, որը արևմտահայությանը մեղադրում էր երախտամոռություն մեջ՝ կլնելով նրանից, որ նա հանդգնում է բողոքել անտանելի հարստահարությունների դեմ: 1879 թ. այս պարբերականը խմբագրել է Հ. Պարոնյանը՝ տալով նրան Հրապարակախոսական փայլ ու քաղաքական հնչեղություն, որը հետո երբևէ չուներցավ այդ պարբերականը:

Մ. Խրիմյանի պատրիարքական ընթացքը, ուրեմն և զավառի օգտին սահմանադրության վերաքննության սկզբունքն էր պաշտպանում Բարթող Սուրի խմբագրությունում հրատարակվող «Արևելյան փող» (1871-1873, հրատարակվել է նաև «Փող առավոտյան» և «Փող արևելյան» անուններով) շարաթաթերով: Աչքի է ընկել քաղաքական և կրոնական ժողովների անդամների քննադատություններ, մասնավորապես կրակի տակ է առել Բր. Ղազարոսյանի և Ստ. Փափազյանի գործունեությունը, որոնք շարունակում էին պայքարը պատրիարքությունից հեռացած Մ. Խրիմյանի դեմ: Շարաթաթերով Հրապարակախոսական ելույթներում նկատելի է ազգային իրավունքների ընդլայնման, պատրիարքական իշխանության նկատմամբ ազդի լիակատար գերակայության միտումը, որը նշանակում էր նաև Բ. դռան՝ պատրիարքական պաշտոնը վերահսկելու հնարավորությունների սահմանափակում: Հաճախակի է անդրադարձել զավառներում արևմտահայերի իրավազրկության

Հարցին: «Արևելյան փողը» Համագործակցել է արևմտաՀայ առաջադիմական պարբերականներին:

1870-ական թթ. մինչև 1884 թ. «Արևելքի» Հայտնությունը, «Մասիսը» մեռած էր արևմտաՀայ ամենալուրջ Հասարակական և քաղաքական պարբերականը: Ինչպես և նախորդ տասնամյակներին «Մասիսը» շարունակում էր իրականացնել և պաշտպանել պարարիարքների ուղեգիրը, որ Հովատարուկա վերաբերում է Բ. դռան, գաղափարական Հարստահարությունների, սահմանադրության վերաքննության, Հայկական Հարցի և այլնի նկատմամբ պատրիարքներ Մ. Արիմյանի և Ն. Վարժապետյանի դիրքորոշմանը: Թերթը դավանում էր ազատամիտ ուղղություն, ըստ ամենայնի պաշտպանում էր այն գաղափարը, որ արևմտաՀայության տնտեսական և Հոգևոր զարգացումը կարող է իրագործվել օսմանյան պետության կիրոպականացման, բարեփոխումների միջոցով, որոնք պետք է իրագործվեին կիրոպական տերությունների տնտեսական, քաղաքական ու Ֆինանսական աջակցությամբ: Հարստահարությունների վերացումը «Մասիսը» ենթադրում էր օրինապատշաճ բողոքի և իշխանությունների պատրաստակամ աջակցության պայմաններում: Այդպիսի աջակցությունը թերթը ակնկալում էր օսմանյան պետության քաղաքական բարեփոխումից, ուստի և պաշտպանել է Թուրքիայում երեսփոխանական ժողովի, սահմանադրական միապետության գաղափարը: Այս իմաստով էլ Համակրանքով է վերաբերվել «Նոր օսմաններին» քննադատելով, միաժամանակ, կայսրության մեջ ազգերը թուրքերին միաձուլելու նրանց (ինչպես և «Հին թուրքերին») ուսմունքները: 1870-ական թթ. «Մասիսը» չափավոր դիրքերից պաշտպանել է խոսքի և տպագրական ազատության սկզբունքը Հանդես գալով զբաքննական խստությունների դեմ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին եռանդով աջակցել է պատրիարքին, տպագրել գաղափարական Հարստահարություններին նվիրված բազմաթիվ նյութեր, ողջունել Հայկական Հարցի քննարկումը Բեռլինի վեհաժողովում Հետամտելով գաղափարական բարենորոգումների ծրագրի իրագործումը: Համիդյան զբաքննության սաստկացումից Հետո «Մասիսը» խափանվել է մի քանի անգամ (1880 և 1883 թթ.) Հարստահարությունների թեմային անդրադառնալու պատճառով:

1880-ական թթ. «Մասիսը» ի վիճակի չեղավ գոյակցել թուրքական իշխանությունների Հետ: Կ. Ությունյանը, որ տարիներ շարունակ պաշտպանել էր ԱրևմտաՀայաստանի և Թուրքիայի բարենորոգումների ծրագրերը, չկա-

րողացալ նույնն անել այն դեպքում, երբ սուլթանը սկսեց վարել այդպիսի ծրագրերը ի չիք դարձնելու հարձակողական քաղաքականութիւն: «Մասիսի» եռանդը չքանում էր նաև ազգային առաջընթացի ուղիների հարցում խառնակված պատկերացումների պատճառով ընթերցողին նոր խոսք ստելու անկարողութիւնն էր: Գաղափարական անհուսութեանը միացալ նյութական միջոցների պակասը: 1884 թ. հուլիսին Կ. Ություճյանը «Մասիսը» վաճառեց նոր օրաթերթի «Արևելքի» վարչութեանը՝ իրեն պահելով թերթի արտոնատիրութեան իրավունքը: «Մասիսը» օրաթերթից վերածվեց շաբաթաթերթի: Այս շրջանում նրա շարունակական թեմաները դարձան արևմտահայութեան կրթական, տնտեսական ու կրօնական կյանքի մասին լրատվութիւնը, ինչպես և եվրոպական դրականութեան քարոզչութիւնը: Շաբաթաթերթը հետևում էր «Արևելքի» բաց արած շավդին՝ իրականութեան նկարագրութիւնն ու մի որոշ վերլուծութիւնը ոչ առանց քննադատութեան, բայց և առանց որևէ ծայրահեղութեան: Առավել քան նկարագրական ու փաստագրական արժեք ունեն նրա տպագրած նյութերը Արևմտահայաստանի այլևայլ շրջանների մասին: «Մասիսը» իր կարևոր նպաստն էր բերում 1880-ական թթ. մամուլում հստակ երևացող ուղղութեանը՝ անաղմուկ ուսումնասիրել և ըստ հնարավորին նախապատրաստել փաստական նյութ, արևմտահայ գաղափար կացութիւնը իրատեսորեն ըմբռնելու նպատակով: Նրա մի այլ խումբ հոգիվածներում քննարկվում են գաղափար ընտանիքի և բարքերի հարցերը, քննադատվում ժամանակավորեպ սովորույթները և այլն: Գաղափարի, ժողովրդական կյանքի ակունքների հանդեպ «Մասիսը» ի հայտ է բերել լուրջ հետաքրքրութիւն տպագրելով ժողովրդական ու աշուղական երգեր, զրույցներ, առածներ ու սացվածքներ:

«Մասիսը» կարևորում էր թարգմանական դրականութիւնը և գերակշիռ մասով տպագրել է Ֆրանսիական հեղինակներին՝ Դոդե, Մոպասան, Ղյուզո, Մերիմե, Դյումա և այլք: Հատուկ հետաքրքրութիւն է հանդես բերվում ուս գրականութեան հանդեպ:

1887 թ. «Արևելքի» վարչութիւնը «Մասիսը» հանձնեց Ա. Արփիարյանին, որի խմբագրութեան տարիներին (1887-1889) շաբաթաթերթին աշխատակցեցին ռեալիստ գրողները (Գր. Զոհրապ, Հ. Ասատուր, Լ. Բաշայան, Մ. Կյուրճյան, Տ. Կամսարական և ուրիշներ): Արփիարյանը «Մասիսին» տվեց թարմ բովանդակութիւն, նոր հարցադրումներ ազգային մշակույթի, գրականութեան ու լեզվի զարգացման ուղիների վերաբերյալ: Շաբաթաթերթի

Հեղինակներին Հատուկ էր քննադատական որոշակի ուղղությունը, Հասարակական թերությունների բացահայտման ձգտումը գեղարվեստական գրականություն և Հրապարակախոսության ասպարեզում: Արփիարյանը մշտական ընդգիծության մեջ էր ազգային մարմինների նկատմամբ և նրանց գործունեության բարելավման պահանջներն առնչում էր ժողովրդի կենսական կարիքները բավարարելու նպատակին: «Մասիսում» տպագրվեցին Արփիարյանի քրոնիկները «Օրվան կյանքը» վերնագրով, որն ընդգրկում էր արևմտահայ իրականության տարաբնույթ խնդիրները: Հատուկ ուշադրության առարկա են շարաթաթերթի ջանքերը մերձեցնելու արևմտահայ և արևելահայ Հատվածները Հոգևոր ու Հասարակական նոր կապերով ու առնչություններով:

1890 թ. «Մասիսը» վերածվեց երկշաբաթաթերթի. թեև փաստացի խմբագիրը Արփիարյանը չէր, սակայն նրա և մյուս ևեալիստների աշխատակցությունը ապահովում էր պարբերականի Հրատարակությունը: 1890թ. վերահրատարակված «Մասիսը» խմբագրում էր Գր. Ջոհրապը (տնօրեն՝ Ն. Ասատուր): Այն Հրատարակվում էր երեք շաբաթը մեկ. ևեալիստական նովելներին (նորավեպ) տպագրության Հետ միասին նրա էջերը նվաճեցին ոչ Հեռու անցյալի ազգային գրական ու մշակութային գործիչների նորովի բնութագիրը տվող նյութերը: «Ծանոթ դեմքեր» խորագրի ներքո տպագրվեցին Գր. Ջոհրապի Հպանցիկ գիմաստվեները, այլ Հեղինակների նույն բնույթի գործեր:

1894 թ. վերահրատարակված «Մասիսին» ևեալիստներն այլևս չեն աշխատակցել: Այս երկշաբաթյա «Մասիսը» Հրատարակում էր Ազգային վարչության ուսումնական խորհուրդը, որպես նախնական և երկրորդական կրթության Հանդես (տնօրեն՝ Ն. Արամյան): «Մասիսը», սակայն, չՀարատևեց այս նոր ուղղության մեջ. 1896 թ. Հունիսից այն վերստին վերածվում է շաբաթաթերթի, այս անգամ կրոնական, գրական, գիտական և քաղաքական բնույթի Արմաշի դպրեվանքի միաբանների աշխատակցությամբ: Խմբագրությունը վարում էր Մ. Օրմանյանը:

Գրական առաջատար Հրատարակության իր դերն ու անունը «Մասիսը» վերականգնեց 1898 թ. դեկտեմբերից արտացոլելով արևմտահայ գրականության և գրաքննադատության առաջավոր կողմնորոշումները: Դարավերջի «Մասիսը» իր գրական բովանդակությամբ Հանդերձ բարոյախոսական Հիմնավոր քննադատության ենթարկեց արևմտահայ Հանրության թերություն-

ները, ազգային մարմիններին և այլն: Այս տարիներին «Մասիսը» մշտապես տպագրում էր Մ. Շամտանճյանի, Ա. Անտոնյանի, Ե. Տեմիրճիպաշյանի, Սիպլիի, Գր. Զոհրապի, Հ. Գազանճյանի և այլոց գրական ու հրատարակատեսական հոդվածները և այլ բնույթի նյութեր, որոնք հագեցած էին արդիականություններով և կարևոր հարցադրումներով: Մինչև 1908 թ. իր վերջնական դադարը «Մասիսը» մնաց առաջին գրական շաբաթաթերթը արևմտահայոց մեջ:

1880-ական թթ. վերջին անգամ ազգային-ազատագրական պայքարի քարոզչությունը հնչեց Զմյուռնիայի «Մետեորա» տարեգրքում (խմբագիր՝ Գր. Մսերյան, 1880-1881): Գր. Մսերյանը թարգմանաբար տպագրեց Հույն դրոշ է. Եմենիցի «Նոր Հունաստան» երկը՝ թուրքական լծի դեմ Հույն ժողովրդի հերոսական պայքարի տարեգրությունը: Պատմագեղարվեստական այդ երկով Մսերյանը Բեռլինի վեհաժողովից և բարենորոգչական խաղերից Հուսախար իր ընթերցողին էր ներկայացնում բռնակալությունից ազատագրվելու պատմականորեն արդարացիված միջոցը՝ զինված ապստամբությունը: «Նոր Հունաստանի» տպագրությունը մնաց անավարտ: Գրաքննությունը չէր կարող հանդուրժել այդպիսի երկի տպագրությունը:

«Մետեորայի» աշխատակից Մ. Նուպարյանը Հայկական հարցը բացատրում էր ազգային ինքնորոշման դիրքերից: «Արևելյան խնդիր, Հայկական խնդիր» ծավալուն ուսումնասիրության մեջ նա հիմնավորում էր ազատագրական պայքարի գաղափարը և ժխտում Բ. դուան ու նրա եվրոպական պաշտպանների այն տեսակետը, թե հպատակ ժողովուրդների շարժումները օտար թելադրանքի արդյունք են եզրակացնելով, որ այդ շարժումների հիմքում ընկած է հպատակ ազգերի տնտեսական ու քաղաքական վատթար վիճակը:

Հայ գեղագիտական մտքի պատմության մեջ «Մետեորան» առաջիններից էր, որ տեսականորեն հիմնավորեց ռեալիստական գրականության կարևորությունը՝ ռեալիստական գեղագիտությունն առնչելով պոզիտիվիզմի տեսական դրույթներին: Պարբերականը խափանվել է թուրքական իշխանությունների կողմից:

Կրոնական բովանդակություն ունեւր «Բյուրակն» հանդեսը (1882-1908) Մ. Ությունճյանի խմբագրություն տարիներին, որը տպագրում էր բողոքական դավանանքի մեկնակետից ընկալվող նյութեր: 1898 թ. «Բյուրակնը» վերածվեց շաբաթական հանդեսի, երբ Մ. Ությունճյանը նրա խմբագրությունը

Հանձնեց Գ. Անդրեասյանին: Հայերի կոտորածներին Հետևող այս ժամանակաշրջանում խմբագիրը կարծում էր, որ իր վերածնությունը ազգը պետք է որոնի անտեսական ու հոգևոր զարգացման, ազգային մշակույթի ինքնությունը ըստ ամենայնի պահպանելու հնարավորությունների մեջ: Այստեղից էլ «Բյուրակին» բերած կարևոր նորությունը ժողովրդական բանահյուսության համալիր հետազոտության ուշադրով փորձը: Շաբաթաթերթը տպագրեց ժողովրդական ստեղծագործության բազմաթիվ նմուշներ գրասոված կտորերով, Ակնի, Մշո և այլ գավառներից (Երզն, առածներ, ասացվածքներ և այլն): Արժեքավոր են նրա տպագրած հոդվածներն ու ուսումնասիրությունները, հայ աշուղների ու երգիչների վերաբերյալ հետաքրքիր նյութերն ու ինքնատիպ էջերը XVII - XVIII դդ. հայ գաղթականությունների մասին: «Բյուրակին» գավառական գրականության հարցերը քննարկել է սեպտեմբերին, ժողովրդական արմատներ ունեցող գրականության զարգացման տեսանկյունից և հայ գրականության տպագրայի երաշխիքը որոնել գավառի գրականության մեջ:

Պահպանողական ուղղություն ունեցող Կ. Պոլսի «Մաղիկ» շաբաթաթերթը (1886-1911): Շաբաթաթերթը ազգի առաջատար գործունը համարում էր ազգային եկեղեցին և այս տեսանկյունից էլ հակադրվում էր «Մշակին»: Տպագրել է հասարակական ու գրական բովանդակության նյութեր հատուկ ուշադրություն դարձնելով գավառի կրթական ու կրոնական կյանքին: Ազգային կյանքում եկեղեցու դերն ընդգծելու նպատակով «Մաղիկը» տպագրել է հոդվածներ ու թղթակցություններ էջմիածնի, Երուսաղեմի և Կ. Պոլսի հոգևոր կյանքի ու իրադարձությունների մասին: Հանդեսը կողմնակից էր արևմտահայության խաղաղ զարգացմանը ազգային արժեքները պահպանելու և տարածելու ուղիով: Ժամանակակից եվրոպական գրականությունը համարել է ազգային բարքերի խաթարման հիմնական պատճառներից մեկը: Այստեղից պարբերականի հակադրությունը արևմտահայ սեպտեմբերին, տպագրել է այս ոգով գրված Լ. Մկրտիչյանի և 1893թ. «Մաղիկի» խմբագրությունը ստանձնած Ա. Սուրենյանի պահպանողական գրականագիտական հոդվածները: Հայտնի է նաև վերջինիս բանավեճը Գր. Ջոհրայի հետ, որտեղ նա փորձում էր ազգի կացությունը բացատրել բարքերի և բարոյականության անկումով: Այս շաբաթաթերթը ևս հետևել է ժամանակի տարածված այն տեսակետին, թե արևելահայ գրողներն իրենց արևմտահայ գրչեղբայրներին զիջում են արվեստով, բայց առավելություն ունեն կյանքի ճամբար-



տացի պատկերման ասպարեզում: «Մադիկին» աշխատակցել են Ե. Տեմիրճի-պաշյանը, Եվտերպեն, Բ. Որբերյանը, Ա. Այվազյանը, Ն. Տաղավարյանը, Մ. Գոչունյանը և ուրիշներ:

Գրականության զարգացման ուղիների հարցում հակառակ դիրքորոշում ունենր և «Հայրենիքի» գիծն էր պաշտպանում 1890-ականին Հրատարակված «Լույս» կրոնական, գրական ու բանասիրական շաբաթաթերթը (1895-1908), Բ. Կյուլենեյանի խմբագրությունը: «Լույսը» պաշտպանում էր Ֆրանսիական բնապաշտական դպրոցը և հայ սեփականներին: Կողմնակից էր արևմտահայ դպրոցի վերականգնմանը և այս պատճառով սուր քննադատության է ենթարկել արևմտահայ դպրոցի ուսումնական ծրագրերն ու մեթոդները: Տպագրում էր նաև գիտական լրատվություն:

1890-ական թթ. Կ. Պոլսում Հրատարակվել են նաև «Բյուզանդիոն», «Տեսարան», «Առաջնորդ վաճառականաց», «Սուրհանդակ», «Հանրագիտակ», «Մոզայիք», «Պատկեր», Զմյուռնիայում «Իզմիր» և մի քանի այլ պարբերականներ, որոնք ավելի կամ պակաս նշանակալի հետք են թողել արևմտահայ մամուլի պատմության մեջ: Պարբերականների այս առատությունը վկայում է Կ. Պոլսի հայ մամուլի վերելքը, որ պայմանավորված էր ազգային արհավիրքներով թելադրված բարոյական ու հոգևոր նոր արժեքների հետամուտ ընթացողի որոնումներով: Պարբերական մամուլի էջերում, անկախ գրաքննական խստություններից, ակներևաբար իրեն զգացնել էր տալիս տեսակետների ու ըմբռումների այն բազմաձևությունը, որից գոյանում էր ազգեցիկ հասարակական կարծիքը:

## «ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՍՈՒԼ» (1871-1909)

Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» պարբերականը արևմտահայ ամենակրկարակյաց Հրատարակություններից մեկն է, որի էջերում արտացոլված են շուրջ էոբս տասնամյակի ազգային-քաղաքական կյանքի ու հասարակական մտքի կարևոր տեղաշարժերը: Պարբերականը Հրատարակվել է հայ ժողովրդի համար ողբերգական մի ժամանակաշրջանում, երբ սուլթանական կառավարությունը, հատկապես 1880-ական թթ. սկսած, հետևողականորեն իրականացվող պետական քաղաքականություն է դարձնում Հայերի բնաջնջումը, թերևս միակ հետևողականը թուրքական կառավարման հեղհեղուկ և այլա-սերված համակարգի մեջ:

«Արևելյան մամուլը» արտացոլել է այդ իրավիճակից ելք փնտրող առաջադիմական մտավորականության խոհերն ու արամազրույթյունները: Հանդեսին աշխատակցել են Մ. Մամուրյանը, Գր. Ջիրինկիրյանը, Ծերենցը, Գ. Սրվանձտյանցը, Մ. Նուպարյանը, Ռ. Որբերյանը, Մ. Գոչուսյանը, Ե. Տեմիր-ճիպաշյանը, Թլկատինցին, Ջիֆթե-Սարաֆը, Հ. Ալփիարը, Ա. Հարությունյանը, Ա. Անտոնյանը, Հ. Գազանճյանը և շատ ուրիշներ, հրատարակախոսական ու գրական այնպիսի ուժեր, որոնք առաջատար դեր ունեին ազգային իրականության մեջ: Աշխատակիցների այսպիսի կազմը, լավ կազմակերպված տեղեկատվական կապը գավառների և Կ. Պոլսի, ինչպես և Հայկական այլ կենտրոնների հետ, պարբերականին Հնարավորություն են տվել ժամանակին և ակտիվորեն արձագանքելու ազգային կյանքի ամենարագմազան երևույթներին, մշակելու որոշակի հասարակական հայեցակետ, որ հիմնականում բնորոշվում էր նրա խմբագիր Մ. Մամուրյանի դադափարական ուղեգծով:

Մատթեոս Հովհաննեսի Մամուրյանը ծնվել է 1830 թ. Հոկտեմբերի 17-ին, Զմյուռնիայում: 1845 թ. ավարտել է այդ գաղթօջախի ս. Մեսրոպյան, ապա Փարիզի Մուրադյան վարժարանները: Մի կարճ ժամանակ (1851 թ.) Մ. Աղաբեկյանի հետ Զմյուռնիայում վարել է Աղաբեկյան երկսեռ վարժարանի տեսչությունը, ապա մեկնել է Կ. Պոլիս, զբաղվել մանկավարժությամբ: 1856-1857 թթ. եղել է Անգլիայում, հետևել Բեմբրիջի Համալսարանի դասընթացներին: 1860-ականի առաջին կեսին աշխատել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում: 1866-1888 թթ. ընդհատումներով վարել է Զմյուռնիայի վարժարանների տեսչի պաշտոնը: 1871 թ. մինչև մահը խմբագրել է իր հիմնադրած «Արևելյան մամուլ» Հանդեսը: Ականավոր հրատարակախոսը մեծապես նպաստել է Հայ հասարակական մտքի զարգացմանը: Նրա հրատարակախոսական գործերի մի մասը (վաղ շրջան) տպագրվել է «Հայկական նամականի» և «Անգղիական նամականի կամ Հայու մը ճակատագիրը» վերնադրերով: «Արևելյան մամուլի» հրատարակախոսական Հոդվածների գերակշիռ մեծամասնությունը գրել է Մ. Մամուրյանը փաստորեն այդ Հանդեսը դարձնելով իր գաղափարների արտահայտիչը և որոշելով նրա ուղղությունը: Աշխատակցել է «Կոռունկ Հայոց աշխարհին» և շատ ավելի արդյունավետ Զմյուռնիայի «Ծաղիկ» Հանդեսին: Լինելով ժամանակի խոշոր Հայ մանկավարժներից մեկը հեղինակել է «Համառոտ ընդհանուր պատմություն դպրո-

ցաց համար» (եռամաս), «Մանր վեպեր ու դասեր քաղված տղայոց համար», «Գիտելիք ու պարտիք տղայոց» և այլ դասագրքեր:

Մ. Մամուրյանը մեծ ներդրում ունի Հայ թարգմանական գրականության մեջ. նրա գրչին են պատկանում Ա. Դյուժայի, Վ. Սկոտի, Ժ. Վեռնի, Ժ. Օնեի, Վոլտերի, Գյոթեի և այլ բազմաթիվ եվրոպական գրողների երկերի Հայերեն թարգմանությունները:

1870-1890-ական թթ. «Արևելյան մամուլի» հրատարակատեսակները բնութագրվում է առաջադեմ բովանդակությամբ, որ արտահայտվում էր ժողովրդական զանգվածների սոցիալ-տնտեսական շահերի, ազգային իրավունքների ընդլայնման, Հայ մշակույթի, գրական լեզվի ու նոր գրականության զարգացման ասպարեզում նրա ներդրած խոշոր վաստակով: «Արևելյան մամուլի» հրատարակության առթիվ Հարություն Սըվաճյանը ջերմորեն ողջունեց Մ. Մամուրյանին՝ քաջալերելով նրան «Քալեցք ի ժիր և մի կայնիք, կոխեցք ամեն խոշուխութ, ոչինչ խնայեցք ի շինություն ազգին՝ արհամարհելով ամեն նկատում և ամեն անձնական շահ...» («Մեզու», 1871, 16 մարտի):

1870-ական թթ. Մամուրյանն արդեն չէր խանդավառվում սահմանադրական հույսերով: Ազգային-քաղաքական ճնշումները և Հայ ժողովրդի իրավազրկությունը սահմանադրության հաստատումից հետո էլ խորապես զսպացող գործիչը ամփոփվել էր զուսպ շրջանակներում: «Արևելյան մամուլի» հրատարակության ազդում, ըստ էության, Մամուրյանը զնահատում էր ոչ միայն իր, այլև 1860-ական թթ. սահմանադրական սերնդի ոգևորության անհեռանկարայնությունը:

1870-ական թթ. արևմտահայերի սահմանադրությունը զնահատելիս «Արևելյան մամուլն» առաջնորդվել է ժողովրդավարական սկզբունքներով: Պարբերականը պաշտպանում էր գավառներում սահմանադրության գործադրման, նրանց ինքնուրույնությունը ազգային շրջանակներում ապահովելու գաղափարը, որ նույնանում էր Հայտնի «ապակեդրոնացման» պահանջին: Մյուս կողմից, Մամուրյանը և նրա համախոհները առաջադրում էին արևմտահայության ներկայացուցչության պատրիարքարանի կրոնական և ազգային իրավասությունները տերության կողմից օրինականացնելու, պատրիարքարանի, որպես Հայության հոգևոր ու ազգային կենտրոնի, իրավունքների վավերացման խնդիրները: «Մեր իրավունքն է պահանջել տերութենեն, - գրում էր Մամուրյանը, - որ ամեն քաղաքական և քա-

դաքային իրավանց մեջ մեզ հաղորդ ընե, որպեսզի պատրիարքարանի պաշտոնեւթյունը լսկ ստփեր մը, անհոգի պաշտոնական մարմին չդառնա» (1871, №3, էջ 121):

Ոտանհարելով արեւմտահայերի սահմանադրական իրավունքները և պատրիարքի ավանդական իրավասութիւնները 1870-ական թթ. վերջին Բ. դուռը սկսել էր միջամտել առաջնորդական ընտրութիւններին և, նույնիսկ առանց պատրիարքին տեղեկացնելու, պաշտոնակ էր անոււ իրեն ոչ ցանկալի առաջնորդներին: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո սուլթանը Հայկական Հարցի սեփական լուծման ծրագիրը դնում էր դործնական հենքի վրա որոճալով ժողովրդի Ֆիզիկական ոչնչացման միտքը: Այս ծրագիրը սուլթանը նախապարաստում էր երկու ուղղութիւն՝ Հայ գավառի անտեսական քայքայումը ապահովող միջոցառումներով, իսկ խոշոր գաղթօջախներում սահմանադրական հիմնարկները վերացնելու քաղաքականութիւնը: Այս պայմաններում ազգային վարչութիւն և կրոնական ու Հասարակական Հաստատութիւնների Հանդես Բ. դռան վերաբերմունքի քննադատութիւնը «Արեւելյան մամուլի» էջերում հասնում էր Հասարակական լարվածութիւն: Թուրքական պաշտոնեւթիւն ազդեցութիւն տակ ընկած ազգային ժողովի գործունեութիւնը ուշադրով քննադատութիւն է նկատուելի Գր. Չիլինկիրյանը իր «Ուղեորութիւն ի Կոստանդնուպոլիս» Հրատարակախոսական նոթագրութիւն մեջ, որ տպագրվեց «Արեւելյան մամուլում»: Ազգային ժողովը նա պատկերում է իբրև դրամատերերի շահերի պաշտպան, որի նիստերն անցնում են չնչին ու անիմաստ բանավեճերի մթնոլորտում: Ինչպես Մամուլրյանը, Չիլինկիրյանը ևս սահմանադրութիւն ամենամեծ թերութիւնը գտնում է նրա քաղաքացիական անլիարժեքութիւն մեջ: Սակայն Հրատարակախոսը մերժում է ոչ թե սահմանադրական գաղափարն ընդհանրապես, այլ բռնապետական այն իրականութիւնը, որը բովանդակազրկել էր սահմանադրութիւնը:

Այս ժամանակաշրջանում Մամուլրյանը սահմանադրութիւնից ավելի իր ուշադրութիւնը կենտրոնացնում է եկեղեցու որպես ազգային ամենակարևոր Հաստատութիւն վրա: Սակայն Արեւմտահայաստանի դրութիւն բարելավման մեջ կրոնական Հանգամանքի և դերի գերագնահատումը ունեցավ այն բացասական հետեանքը, որ «Արեւելյան մամուլը» երկրորդական տեղ Հատկացրեց բուն գավառի կացութիւն լուսաբանմանը, մի բան, որ նրան կտրում էր Կ. Պոլսի Հայ առաջադիմական մամուլի ուղղութիւնից:

Հայտնի է, որ XVIII դ. Ֆրանսիական լուսավորիչների Հայացքները խոր կնիք էին դրել արևմտահայ դեմոկրատների աշխարհայացքի վրա: Հասարակության և պետության ժողովրդավարացումը «Արևելյան մամուլի» խմբագիրը պատկերացնում էր անհատի ու նրա լուսավորության միջոցով կարծելով, թե որքան ազատ լինի անհատը, այնքան ամուր ժողովրդավարական հիմքերի վրա կխարսխվի պետությունը: Առհասարակ XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ առաջադեմ հրապարակախոսները պետությունը պատկերացնում էին որպես համընդհանուր շահերի երաշխիք, անհատի և հասարակության հարաբերությունները հավասարակշռող գործոն: Մ. Մամուրյանը ևս հարում է այն տեսակետին, որ պետությունը հասարակության կամքի արտահայտությունն է, որ կոչված է արդարացիորեն ապահովելու հասարակական արտադրությունը, բաշխումն ու սպառումը և համապատասխանաբար սոցիալական բոլոր խավերի համաձայնությունը: Հեղափոխությունները նա գնահատում է որպես այդ համաձայնությունը կորցրած հասարակության բացառիկ և ոչ բնականոն միջոցառում, որ ձգտում է բռնի ուժով հակադրվել արդեն բռնություն գործադրող հասարակական ուժերին: XVII-XIX դդ. եվրոպական հեղափոխությունները «Արևելյան մամուլի» էջերում գնահատվում են որպես դրա կոնկրետ օրինակներ:

Մ. Մամուրյանը անհատի ազատությունը դիտում է իրրև նրա կամքի և նպատակասլաց գործունեությունից ազատություն: Ինչպես անձեռնմխելի է անհատը, նույնքան անձեռնմխելի պետք է լինեն նրա աշխատանքի և գործունեության արդյունքները, որ բխում են աշխատանքի ազատության սկզբունքից: Անհատի և պետության, սրանց փոխհարաբերության շուրջ նշված ըմբռնումները սուր ծայրով ուղղվում էին Թուրքիայի հասարակական-քաղաքական կարգերի դեմ և հիմնավորում բռնակալության անբանականությունը: Պետության հակաժողովրդական բովանդակությունը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ այլասերվում են նրա հիմնական ֆունկցիաները, և նա վերածվում է բռնության գործիքի: Այդ բռնությունն է, որ ծնում է հեղափոխությունները: Մամուրյանը հակվում է պետությունը իր շավղի մեջ հրելու տեսակետի կողմը, այսինքն՝ հասարակական հակասությունների վերացումը պետության իսկ ջանքերով: Դա ցուցադրում է նրա բարենորոգչական տրամադրությունները, հասարակության խաղաղ բարեփոխման վերաբերյալ նրա համոզմունքը: Արտաքուստ թվացող այն հակասականությունը, որ Մամուրյանը մերթ պաշտպանում է հասարակության

բարենորոգչական զարգացումը և մերթ հեղափոխությունները, իրականում նրա խոհերի հակասականությունը չէ: Պարզապես Մամուրյանը հեղափոխությունը անհրաժեշտ և բնական էր համարում մի հասարակության մեջ, որ ի վիճակի է բարեփոխվելու իր բունակալական բնույթի պատճառով: Հենց այս տեսակետից է գնահատում Մամուրյանը Առաջին ինտերնացիոնալի գործունեությունը, որը, նրա կարծիքով, բարենորոգումների հարկը զգացող եվրոպական պետություններին պետք է հիշեցնեք նրանց բնական պարտականությունը: «Արգեն միջազգային բնկերությունը մեծ ահ ու տազնապ կազդե կառավարությանց և հիմնական բարեկարգությանց պետքը կզգացնե», - գրում է նա (1871, №10, էջ 483): Հատկանշական է այս առումով նաև Մամուրյանի վերաբերմունքը Փարիզի կոմունայի նկատմամբ: «Արևելյան մամուլը» կոմունայի իրազարժություններին անդրադարձել է նրա հռչակման ժամանակից սկսած: Այնքանով, որքանով Փարիզի ըմբոստացած ժողովրդի պայքարն ուղղվում էր բռնության և միապետության դեմ, Մամուրյանը հասկանում էր և համակրում այդ պայքարը: Սակայն այդ համակրանքը չքանում էր այնտեղ, որտեղ կոմունայի ձգտումները գերաճում էին ծայրահեղությունների: Մամուրյանը մերժում էր մասնավոր սեփականությունն ոչնչացման և հանրային ունեցվածքի հաստատման սկզբունքները: Որպես սոցիալական ժողովրդավարության ներկայացուցիչ, նա անվերապահորեն պաշտպանում էր սոցիալական հակասությունները մեղմացնելու և ամբողջովին վերացնելու գաղափարը:

Պարբերականի մերկացումների օրյեկտ են դառնում ժամանակի արևմտյան հասարակության տնտեսական հակասությունները: Այս իմաստով շատ ուշադրավ են 1880-1890-ական թթ. Մամուրյանի տպագրած կամ հեղինակած բազմաթիվ հոդվածները բանվոր դասակարգի տնտեսական կացության և այն բարելավելու վերաբերյալ: Այդպիսին է Ջուլյանի «Անդործ բանվորը» հոդվածի թարգմանության նպատակը հանդեսում, որպես նման հակասությունների ցուցադրում (1877, №7, էջ 258-264): Ժամանակի հասարակական ամենակարևոր հարցը, Մամուրյանի կարծիքով, շխատության և թշվառության մեծ խնդիրն է: Տնտեսական անհավասարությունը հասել է այնպիսի խորության, որ կրում է ոչ միայն սոցիալական հեղափոխության, այլև համաշխարհային պատերազմի հնարավորությունը: Ինչ վերաբերում է բանվոր դասակարգի հեղափոխական պայքարին, ապա Մամուրյանը կողմնակից էր այն մեղմելուն և ապա վերացնելուն ուղղված բարեփոխիչ

ձեռնարկումներին: Այդ դասակարգի տնտեսական պահանջները չբավարարելու դեպքում նա սպառնալիքի տակ կզնի հասարակության քաղաքական հիմքերի գոյությունը:

«Արևելյան մամուլում» բուրժուական հասարակության հանդեպ գրեթե նույն վերաբերմունքն ուներ նաև Գր. Ջիլինկիրյանը, որ հավատում էր հասարակության խաղաղ, բարեփոխումների միջոցով վարդանախու Հնարավորություններին: Ջիլինկիրյանը հասարակական կարծիքին և ի վերջո հասարակական գիտակցությանն էր վերագրում տնտեսական ու քաղաքական անհավասարությունները վերացնողի, ինչպես և հեղափոխությունները կանխողի ու հասարակական բոլոր խավերի համակեցությունը վերահսկողի առաքելությունը: Նա տնտեսական թշվառությունը անհամատեղելի է համարում քաղաքակրթությանը: Հակառակ դեպքում այդ քաղաքակրթությունը դատապարտված է կործանման: Իր «Ճանապարհորդություն ի Կ. Պոլիս» աշխատության մեջ նա գրում է. «Անոթության հետ համաձայնող քաղաքակրթություն չկրնար ըլլալ, կրսե Ալեքսանդր Հերցեն, ստորին դասու ժողովուրդը միշտ ստորին դասու ժողովուրդ պիտի մնա, մինչև որ հաջողի սնունդ և ազատ ժամանակ շահելու» (1882, №10, էջ 436):

«Արևելյան մամուլը» ընթերցողի հայացքն ուղղում էր դեպի ռուսական և եվրոպական հասարակական կարևոր իրադարձությունների հորձանուտը, նրան տալիս առաջադիմական կողմնորոշում: Ընդհանուր իմաստով նրա այս ընթացքը դադափարական հաղորդակցության եզրեր էր հաստատում արևմտահայ դեմոկրատական, ազգային-ազատագրական շարժման և միջազգային հեղափոխական շարժման միջև: Նկատենք, որ ռուսական և եվրոպական սոցիալ-դեմոկրատական շարժումը իր հերթին լուրջ ուշադրություն էր դարձնում Թուրքիայի ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարին, որպես հեղափոխական շարժումների համընթաց ուժի:

1870-ական թթ. Մամուլյանը, թեև ոչ հետևողականորեն, արտահայտել է ազատագրական պայքարի տրամադրություններ: Ազատագրական շարժումը, ինչպես և դրա հաջողության գործնական ուղիները նա պատկերացնում էր ավելի շուտ որպես ապագայի գործ, որին պետք է ձեռնարկել համապատասխան լուսավորական ու տնտեսական գործունեությունից նախապատրաստական շրջանից հետո միայն: Այստեղից է սկիզբ առնում նրա չափավոր դիրքորոշումը ազգային շարժման առջև ծառայած խնդիրների լուծման հարցում: Հետագայում, Բեռլինի վեհաժողովին հաջորդող ժամանակաշրջանում,

«Արևելյան մամուլը» Հիմնականում քննարկում էր ժողովրդի անաստական և Հոգևոր զարգացման խնդիրները, որը ոչ միայն Համիդյան բռնապետության պարտադրած շրջանակն էր, այլև իր Մամուլյանի դիրքորոշման արդյունքը: Ժողովրդի ապագան մտենից առաջ նրան պատկերանում էր անաստական զարգացման Հնարավորությունների միջոցով: Սահայն թուրքական իրականության մեջ այդ Հնարավորություններն արդեն իսկ կրում էին չիրագործվելու դատականիքը, մասնավորապես ուսու-թուրքական պատերազմից Հետո, երբ կառավարությունը սկսեց անցնել արևմտահայությունը բնաջնջելու ծրագրի իրականացմանը: Այս պայմաններում Մամուլյանի Հասարակական-քաղաքական Հայացքները Հակվում էին դեպի պահպանողականություն, նրան Հեռացնում գավառներում խմորվող ազատագրական պայքարի տրամադրություններից: 1880-1890-ական թթ. «Արևելյան մամուլի» Հասարակական բովանդակությունը ստանում է երկակի ուղղվածություն. քաղաքական իմաստով այն Հակվում է դեպի չափավորություն, մինչդեռ ազգային առաջավոր մշակութիի զարգացման տեսակետից նա նպաստում է ժողովրդի ազգային-Հոգևոր նիրհած ուժերի արթնացմանը:

Այս ժամանակը ջանում քաղաքական իրադրությունը Մամուլյանին ազատագրական շարժման Հաջողության որևէ Հույս չէր ներշնչում, իսկ արտաքին որևէ ուժի ապավինելը նրան թվում էր ոսմանտիկական պատրանք: Ազգային ինքնավարության և անկախության գաղափարը նա Համարում էր գերագույն, բայց ոչ մտտիկ ապագայում իրագործելի նպատակ, որին պետք էր նախապատրաստվել ամբողջ ազգով ստեղծելով դրա Հոգևոր ու նյութական բոլոր նախադրյալները: Ազատագրական պայքարի նկատմամբ Մամուլյանի դիրքորոշումը, կարծում ենք, չպետք է նույնացնել արևմտահայ պահպանողականների կամ լիբերալների Հայացքներին: Վերջիններս ազատագրական պայքարի Հաջողությունը կամ բացառում էին, կամ առնչում էին եվրոպական կողմնորոշմանը: Մինչդեռ Մամուլյանը տեսականորեն անհրաժեշտ ժամանակ էր ենթադրում այդ պայքարին պատրաստվելու Համար: Այսպիսի դիրքորոշումը ցուցադրում էր նրա արտաքին քաղաքական կողմնորոշման բացակայությունը: Դրան նա Հակադրում էր ազգային «ուրույն քաղաքականությունը», որը Հենվում էր ներազգային մտավոր ու տնտեսական ուժերի զարգացմանը: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության Հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումներին, ապա, վերջին Հաշվով, նրա կարծիքով, դրանք պետք է Հասցնեին «մեծ Հեղաշրջման»:



«Արևելյան մամուլը» անսքող Համաիրանքով էր արտահայտվում սլավոնական բնակչության ազատագրական պայքարի մասին: 1875 թ. պարբերականը լուսարանում էր Սերբիայում և Ձեռնոգորիայում թուրքական բռնությունների հանդամանքները, զրվատում հպարտ լեռնականների քաջագործություններն ու ըմբոստ ողին: Բալկանյան ժողովուրդների ապստամբությունները Մամուլյանը բացատրում էր նրանց կյանքի անտանելի պայմաններով, մշտական անասելի հարկահանություն և հարստահարություններով:

«Արևելյան մամուլի» շատ հողվածներում որոշակիորեն զգացվում է նրա խմբագրի անվստահությունը ցարիզմի նկատմամբ, քննադատական դիրքը դեպի նրա նվաճողական քաղաքականությունը: Այսուհանդերձ, Մամուլյանը հաշվի էր առնում արևելահայության անհամեմատ գերադասելի վիճակը՝ իրավազուրկ արևմտահայության հետ համեմատած: Նա քանիցս հայտնում էր, որ հայերը Ռուսաստանում օգտվում են քաղաքացիական իրավունքներից ու սոցիալական ապահովության երաշխիքներից, որի շնորհիվ բարենպաստ պայմաններ են ստեղծվել ժողովրդի տնտեսական ու մշակութային զարգացման համար: Ինչ վերաբերում է ցարիզմի դեմ ուսու ժողովրդի մղած տնտեսական ու քաղաքական ազատագրության պայքարին, ապա Մամուլյանը դրա միջազգային կարևոր նշանակությունը ընդգծել է իր «Սև լեռին մարդը» վեպում: Ցարիզմի անկման հետ էր առնչում Մամուլյանը Ռուսական և Օսմանյան կայսրությունների ճնշված ժողովուրդների ազատագրման գործը:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին ռուսական զենքի հաղթանակի հետ առավել որոշակի սպասելիքներ էր կապում «Արևելյան մամուլի» աշխատակից Մերենցը: Նկարագրելով զավառահայ թշվառացած զանգվածներին Մերենցը նրանց կացության բարելավման որևէ հնարավորություն չէր տեսնում թուրքական տիրապետության պայմաններում: Իր հերթին ևս Մերենցը եզրակացնում էր, որ արևելահայ բնակչության բարեկեցություն և աճի երաշխիքը քաղաքացիական ապահովությունն է, որից իսպառ զուրկ են արևմտահայերը: «Արևելյան մամուլում» տպագրած նրա հոդվածներում, սակայն, զգացվում է, որ դեռևս գործուս վերաբերմունք չի հայտնում Օսմանյան թուրքիայի անտանելի իրականության վերաբերյալ: Բաֆֆու հետ բանավիճելիս նա գործի էր դնում պահպանողականների վաղեմի փաստարկները ընդդեմ ազգային շարժման:

«Արևելյան մամուլի» վերաբերմունքը ազատագրական պայքարի հանդեպ զգալիորեն պայմանավորված էր բալկանյան իրադարձություններով և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի իրողությունները: Սակայն ամսագրի խմբագիրը՝ քչերից մեկը հայ հասարակական մտքի պատմության մեջ, հազ-թահահարելով արտաքին քաղաքական կողմնորոշումների հրապույրը, միջազգային դեպքերի զարգացման մեջ ի վերջո կարողացավ նկատել ազգային շահերի յուրահատկությունը: Մի տեղ այդ շահերը համընկնում էին, երբ Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը այս կամ այն չափով համընթաց էր գնում ընկճված ժողովուրդների ազատագրական տրամադրություններին և մի այլ տեղ հակադրվում այդ նույն քաղաքականությունը, երբ Մամուլը նկատի էր առնում ցարիզմի քաղաքականությունը փոքր ազգերի նկատմամբ: Բեռլինի վեհաժողովում նվիրույթի և Ռուսաստանի դիվանագիտությունը և նրանց շահախնդրական ձգտումների մեջ թափանցելը Մամուլը նաև համար պարզ էր դարձնում այն, որ Օսմանյան կայսրության գոյատևման կամ փլուզման, նրա կազմի մեջ մանող ժողովուրդների ապագան օտար քաղաքականությունը դնահատում է միայն սեփական շահերի տեսանկյունից:

Ռուս-թուրքական պատերազմի սկզբից մինչև 1880-ականի սկիզբը «Արևելյան մամուլը» ամբողջովին վերածվեց ազգային-քաղաքական հրատարակության: Ամսագիրը պատերազմի էլքի հետ էր առնչում արևմտահայերի ինքնավարության իր սպասելիքները և ներշնչվում ժողովրդի ազատագրական ձգտումներով: Արևմտահայությունը իր ազատագրական տրամադրություններն արտահայտում էր ռուսական զորքին աջակցելու միջոցով, որին թուրքական կառավարությունը պատասխանեց հայաբնակ թիկունքի ամայացման վայրագ քաղաքականությամբ:

Նկատի առնելով կայսրության մեծ ուժը «Արևելյան մամուլը» չէր կողմնորոշվում դեպի արևմտահայություն ապստամբության ուղին: Ազգային շարժման հանդեպ նրա վերաբերմունքը որոշելու տեսակետից կարևոր է այն հանգամանքը, որ Մամուլը վաղաժամ էր համարում ազատագրական պայքարը և առարկում էր այն կարծիքին, թե արևմտահայերը արդյունքի չեն հասնի, եթե արյուն չթափեն: Ազատագրական պայքարը, նրա կարծիքով, պետք էր վաղորդե կազմակերպել, մի բան, որ չէր արվել: Հայերը հետ են մնացել շարժման տրամաբանական ընթացքից: Դարասկզբին ծավալված

քաղաքական ցնցումներն ու ազատագրական կռիվները, կարծում էր Մամուլրյանը, անցել են ժողովրդի կողքով:

Ազգային ինքնորոշման մոտալուտ ձևը Մամուլրյանին պատկերանում էր Թուրքիայի գերիշխանության ներքո ինքնավարության տեսքով: Հայ Հասարակական մտքի պատմության մեջ Մամուլրյանն առաջիններից էր, որ եվրոպայի կամ Ռուսաստանի օգնությունը կապակցում էր ոչ թե քրիստոնեություն, մարդասիրության, հայերի մտավոր ընդունակության, «քաղաքակրթիչ դերի» և այլ անիրական պատկերացումների հետ, այլ ելակետ էր ընդունում տերությունների քաղաքական ու տնտեսական շահերը: Այս առթիվ ուշագրավ է նրա քննադատական դիրքը Բեռլին մեկնած Հայ պատգամավորության գործունեության հանդեպ: Այլ հարց է, որ Մամուլրյանը ճիշտ չէր պատկերացնում այդ շահերի համապատասխան քաղաքականությունը: Նա կարծում էր, որ ինքնավար Հայաստանը տերությունների համար կլինի վաճառահանման հարմար շուկա, Հուսալի պատվար Անգլիայի հնդկական տիրույթների համար, ընդդեմ ցարիզմի դեպի տաք ջրերը տանող առաջխաղացման: Սակայն Անգլիան ոչ թե ենթադրյալ ինքնավար Հայաստանի, այլ բուն Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական կացությունը ամրապնդելու մեջ էր որոնում Ռուսաստանի փոքրասիական առաջխաղացումը կասեցնելու երաշխիքը: Իսկ դա նշանակում էր, որ Բեռլինի վեհաժողովում Անգլիան հանդես չէր գալու Հայկական հարցի օգտին:

Բեռլինի վեհաժողովի արդյունքները սթափեցրին Մամուլրյանին, որը հանգեց այն ճիշտ եզրակացությունը, որ տերությունների քաղաքականությունն հիմքում ընկած են ուժն ու շահը:

Բեռլինի վեհաժողովից հետո Արևմտահայաստանի անապահով վիճակի, հարստահարությունների ու բռնությունների հաղթահարումը «Արևելյան մամուլը» կապակցում էր առհասարակ հայ առևտրական կապիտալի ազգօգուտ գործունեության, տերությունների վրա նրա ունենալիք ազդեցության հետ: Հայկական կապիտալը բնաշխարհում ապրելու էր արդյունաբերականի վերածվելու գործընթացը և տերությունների օգնությամբ ժողովրդին էր տրամադրելու ինքնապաշտպանության միջոցներ: Առհասարակ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ազգային դրամատերերի միջոցով Հայաստանի տնտեսական վերաշինության մտայնությունը ընդհանուր էր արևմտահայ և արևելահայ հասարակական մտքի մի շարք ներկայացուցիչների համար (Գր. Արծրունի, Մ. Աղաբեկյան և այլն):

Պետք է նկատել, որ այդպիսի Հեռանկարը գրեթե անիրականանալի էր: Թուրքիայի տնտեսական, քաղաքական ու վարչական Համակարգը Հէր կարող ընձեռել տնտեսական զարգացման այդպիսի պայմաններ: Ինքնին օսմանյան պետութեան տնտեսական քաղաքականութիւնը, որը Հաջորդ տասնամյակներին արդէն պետք է ստանար շեշտված ազգայնամոլական բնույթ, բացառելու էր այդպիսի Հնարափորութիւնը: Մյուս կողմից, Թուրքիայի և տերութիւնների քաղաքական Հակասութիւնները այնպիսի վիճակում էին, որ Հեռավոր ժամանակների գործ էին դարձնում լայն չափերի Հասնող տնտեսական Համագործակցութիւնը: Կարճ ժամանակ անց Մամուրյանը պետք է ազատագրվեր նաև բարենորոգումների մասին ունեցած պատրանքներից, մասնավորապես Անգլիայից ունեցած ակնկալիքներից: Իսկապես, թուրքական վարչաքաղաքական ամբողջ Համակարգը ի սկզբանէ թշնամական վերաբերմունք է ցուցաբերել բարենորոգումների Հանդեպ:

1880-ական թթ. Մամուրյանը արդէն Համոզված էր, որ թուրքական կառավարութիւնը ձգտում է Հայկական Հարցը լուծել ժողովրդի ֆիզիկական բնաջնջման միջոցով: Դրան նա Հակադրում է ազգային ինքնուրույն քաղաքականութիւնը, որն ուներ չափավոր, բայց և իրատես ընդմեջակութիւն և Հիմնական ուշադրութիւնը կենտրոնացնում էր ազգի տնտեսական, Հոգևոր ու մտավոր զարգացման գործնական խնդիրների վրա. «Հայ ժողովրդյան... առաջին Հիմնական քաղաքականութիւնը պիտի լինի իր ազգայնութեան պայմանները պահել, զարգացնել, անպայման չվստահելով արտաքին դիվանագիտութեան մ'որ երբեմն ակար ազգութիւններն իբրև գործիք կգործածեն և իսպառ կճգմեն» (1880, № 11, էջ 499):

1880-ական թթ. սկզբից Մամուրյանը Հայկական Հարցին և բարենորոգումների թեմային գրեթէ չի անդրադարձել, որի պատճառը Աբդուլ Համիդի բռնակալական քաղաքականութիւնն էր: Բարենորոգումների վերաբերյալ «Արևելյան մամուլի» տպագրած վերջին նյութը «Բարենորոգումները Փոքր Ասիայում» վերնագրով, պաշտոնական բնույթ ունէր: Այն ներկայացնում էր 1895 թ. Հոկտեմբերի 5-ի սուլթանական իրադէն Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի առաջադրած բարենորոգումների ծրագրի մասին: Հատկանշական է, որ «Արևելյան մամուլը» իրադէն էի մեկնաբանել: Սուլթանական գրաքննութիւնը մամուլին թույլ Հէր տալիս որևէ ինքնուրույն դատողութիւն անել այդ մասին:

Այլ առիթներով տպագրած իր նյութերում «Արևելյան մամուլը» անդրադառնում էր Հարստահարությունների Հարցին, ինչպես և տերությունների քաղաքականությունը թուրքիայում: Բնութագրելով բռնակալության տակ ընդարմացած արևմտահայության Հասարակական կյանքը՝ Մամուլը գրում էր. «Միտպաղաղ, Հեռեպակս պղտոր լճակի մը կերպարանք կառնու ժողովուրդ մը, որ շարունակ բարձրագույն Հեղինակությունն մը վճիռներու և պատգամներու կսպասն իր ընթացքը կանոնավորելու Համար... որ միօրինակության և միակերպության մեջ կքարանա և ամեն շարժման ու ազդեցություն առջև անզգա ու անտարբեր կերևի» (1897, №8, էջ 259): Հրատարակախոսը բողոքում էր խղճի ու մտքի ազատությունը ստնահարելու դեմ, ակնարկում էր թուրքիայի կացությունը՝ նշելով, որ նա չի նական պարսպով պատվարվել է քաղաքակրթության ընթացքից:

Սակայն բռնակալության քննադատության այս ձևը նպատակասլաց չէր և իր վերացականության պատճառով կորցնում էր Հասարակական ազդեցությունը: Այն արժեքավոր է այն տեսակետից, որ Հայ առաջավոր Հասարակական միտքը թուրքիայում շարունակում էր օգտագործել լեզավ մամուլի էջերը՝ կայսրության քաղաքական կարգերը քննադատելու Համար: Վերացական միտքը ուշադրություն չէր գրավում կասկածամտությամբ Համակված բռնակալության մթնոլորտում:

Մ. Մամուլըյանի պարբերականը հանգամանալի քննության է ենթարկել ազգային դպրոցի և մանկավարժության խնդիրները: Ինքը Հանդեսի խմբագիրը, ժամանակի ականավոր մանկավարժներից էր: 1868 թ. նա ստանձնել է Զմյուռնիայի Հայ դպրոցների տեսչի պաշտոնը՝ վարելով մինչև 1878 թ., այնուհետև կրկին ղեկավարել այդ դպրոցները 1880–1888 թթ.: Նա պրոպագանդել է եվրոպական առաջավոր մանկավարժության նվաճումները, Հեղինակել բազմաթիվ դասագրքեր, որոնց կենսունակությունն ապացուցվել է տասնամյակների գործածությամբ: Կրթության բովանդակությունը Մամուլըյանը ծառայեցնում էր ժողովրդի Հասարակական պահանջմունքներին, և որպես այդպիսին՝ հակադրվում դպրոցի Հնավանդ, իրենց սպառած չափանիշներին: Մամուլըյանը անհատի Հոգևոր-բարոյական Հարստությունը առնչում էր բնության և Հասարակական իրողությունների ճանաչողությանը և այս իմաստով քննադատում ավետարանական ուսուցման միակողմանիությունը:

Մամուլը յանի կարծիքով բարոյական դաստիարակութունը վերջնական ու պատրաստի սինեմա է, այլ իմացության պրոցեսին Համընթաց աստիճանական շարժում դեպի բարոյական բժբուժումների ամբողջութունը: Բարոյական դաստիարակութունը նրա Հայեցության մեջ անմիջապես առնչվում է ժողովրդի ազգային ու տնտեսական իրավիճակի ճիշտ գնահատման, ուրեմն և նրա առաջընթացի խնդիրներին:

Մամուլը արեմտաՀայ դպրոցի առջև ծառայած ամենակարևոր խնդիրներից էր Համարում տարրական կրթության իրականացումը: «Ուսուցանելու արվեստը» աշխատության մեջ, որ նվիրված է տարրական դպրոցի ուսուցման Հարցերին, նա դաստիարակութունը դիտում է որպես ֆիզիկական, մտավոր և Հոգևոր կարողութունների զարգացման միջոց: Ընդ որում նրան, ինչպես և Պեստալոցուն, առավելապես Հուզում էր բարոյական դաստիարակութունը, որպես Հոգևոր և ֆիզիկական կարողութունների զարգացման նախապայման, որից կախում էր ունենալու «խելքի և ձեռքի» կատարելագործումը: Կրթութունը ոչ այլ ինչ է, բայց եթե դաստիարակության միջոց, այն միայն դաստիարակության միջոցով է վերածվում մտավոր և իմացական ուժի: Դաստիարակությանը նա տալիս է լայն բովանդակութուն: Դաստիարակության և կրթության տարբերության, ինչպես և սրանց փոխպայմանավորվածության գնահատման Հարցում Մամուլը յանի Հայացքները որոշակի կապ ունեն Զրեոբելի բժբուժումների Հետ, և այս իմաստով արեմտաՀայ մանկավարժը իր ժամանակի ու միջավայրի պայմաններում ներկայանում է որպես եվրոպական առաջավոր մանկավարժական սկզբունքների ստեղծագործաբար կիրառողը Հայ իրականության մեջ:

Մամուլը յանի առաջադիմական Հայացքները դրսևորվում էին նաև լուսավորության գործի կազմակերպման դեմոկրատական սկզբունքների պաշտպանության մեջ: Վերնախավը, կարծում էր նա, ընդդիմանում է ժողովրդական լայն զանգվածների կրթությանը ելնելով նրանց տգիտության մեջ պահելու Հասարակական շահախնդրութուններից: «Ըստ իս, - գրում է նա, - ժողովրդյան կրից և տգիտության վրա իրենց իշխանութունն ու շահը Հաստատող դասերն են, որ միշտ առիթը ձեռքե չեն Հաներ իբրև գործիք վարել ժողովուրդն, որ նպատակի մը... Հասնին» (1875, №2, էջ 61): Ազգային լուսավորության բարեփոխումը Մամուլը յանը պատկերացնում էր նախակրթարանի և տարրական դպրոցների լայն ցանցի Հիմնումով: Նա առաջարկում էր Հայ դպրոցների բաժանման Հստակ կարգ, այն է թաղային

դպրոցները վերածել պարզ նախակրթարանների, որոնց շարունակութունը պետք է լինեին երկրորդական դպրոցները: Մամուլը և «Արևելյան մամուլը» առաջատար աշխատակիցները Հանդես էին գալիս որպես նոր ազգային դպրոցի համոզված պաշտպաններ, ուստի և նրանց գործունեութունը համազգային բնույթ ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսակետներից:

Ժողովրդավարական նույն սկզբունքներն էր պաշտպանում Մ. Մամուլը ևս. երկրորդական աշխարհաբարի ասպարեզում: Ելնելով աշխարհաբարի որակական ինքնուրույնութան համոզմունքից «Արևելյան մամուլը» բարձր գնահատական տվեց Ա. Այալըյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի Հայերէն լեզուի» (1866 թ.) աշխատութանը՝ այն դիտելով որպես խոշոր նվաճում արևմտահայ աշխարհաբարի ուսումնասիրութան ասպարեզում:

Մ. Մամուլը բարբառների առաջացումը կապում էր Հայկական էթնոսի ձևավորման, պատմական ու աշխարհագրական գործոնների հետ կարծիք հայտնելով, որ մի երկարատև ժամանակաշրջանի ընթացքում գրաբարն ու բարբառները գոյատևել և գործածվել են զուգահեռաբար: Մամուլը կարծիքով, գրաբարն ինքը նախապես այդ բարբառներից մեկն էր, այսինքն՝ արարատյան բարբառը, որ գրական լեզվի աստիճանի էր հասել մշակագործման շնորհիվ: Իր մոտեցումը Մամուլը հիմնավորում էր համեմատական քերականութան ներկայացուցիչների տեսութայամբ և առհասարակ արևմտահայ առաջին գործիչներից էր, որն այդ տեսակետը կիրառում էր գրաբարի և բարբառային ձևերի առաջացման հիմնահարցերը լուծելիս:

Քերականութան մասին Մամուլը դատողութունները ցույց են տալիս, որ մի հայտնի չափով նա նկատի ունի համազգային գրական լեզվի մշակումը: Աշխարհաբարի զարգացման ընթացքը ի վերջո, նրա կարծիքով, պետք է հասցնէր զույգ հատվածների գրական լեզուների մերձեցմանը, համազգային լեզվի ստեղծմանը: Դեռևս 1871 թ. նա առաջարկում էր մշակել արևմտահայ և արևելահայ գրական լեզուների փոխադարձ ներհյուսմանը նպաստող և ընդառաջող քերականութուն (1871, №12, էջ 579-582): Ըստ երևույթի, այս տեսակետը ունեն պայմանական բնույթ, որովհետև համազգային լեզու ստեղծելու համար անհրաժեշտ էին այնպիսի քաղաքական հիմքեր, ինչպիսիք են ազգի վերամիավորումը և ինքնորոշումը: Չնայած

գրան, Մամուրյանը Համազգային լեզվի ստեղծման գործընթացը Համարում էր հայ մշակույթի զարգացման ամենահրատապ խնդիրներից մեկը:

Համազգային գրական լեզվի իր առաջադրումներով Մամուրյանը նկատի ուներ ամենից առաջ ազգային դպրոցի և այնուհետև, գեղարվեստական գրականության զարգացման խնդիրները: Լինելով ազգային զարթոնքի և լուսավորականության ջանասիրներից մեկը Մամուրյանը գերաճում էր զուտ արևմտահայ շրջանակներից. նրա դատողություններն ու ընդհանրացումները Հետամտում են առհասարակ հայ ժողովրդի քաղաքական, ինչպես և մշակութային-հոգևոր ընդհանրությանն ու միասնությանը: Դրանով է առաջնորդվել «Արևելյան մամուլի» խմբագիրը նաև հայ գեղարվեստական գրականության զարգացման ընթացքի վերաբերյալ իր պատկերացումներում: Առհասարակ Հասարակական մտքի ամբոխի իր գերն «Արևելյան մամուլն» ամբողջացրել է գեղարվեստական գրականության գնահատման ասպարեզում և, որպես կարևոր հրատարակություն, ինքն էլ արտացոլել է ժամանակի հայ գրականության բնութագրական կողմերը:

Իր հրատարակության սկզբնական շրջանում (1870-ական թթ.) պարբերականը հակված էր դեպի պատմահայրենասիրական ուսմանտիկան: Հանդեսը տպագրեց Գ. Պատկանյանի «Վահագն», «Զարմայր և Պանթեղիզ», «Մատուցություն և վիշտ Ախուրյան գետակի», «Մերն ի Մասիս» ստեղծագործությունները: Գաղթօջախի իր Հեռավորությունից Մամուրյանի պարբերականը գնահատում էր ոչ թե Պատկանյանի պաշտպանողական գաղափարները կամ գրաբարխառն լեզուն, այլ ազգային վաղեմի փառքի և ինքնության գաղափարների վերհանումը: Արևելահայ գրականությունից «Արևելյան մամուլը» տպագրել է նաև Բ. Պատկանյանի, Մ. Սաղաթյանի, Մ. Նալբանդյանի և Բաֆթու ստեղծագործությունները: Այստեղ է առաջին անգամ տպագրվել Մ. Նալբանդյանի «Արկածք Աղամայ» պոեմի Ա մասը:

Հանդեսի ինքնուրույն գրականությունը Հիմնականում Հեղինակել են նրա խմբագիրն ու աշխատակիցները: Մամուրյանը տպագրել է «Սեֆիլենց տունը», «Տիրայր կամ մեծ մարդը» ուսմանտիկական կատակերգությունները: Հայրենասիրության, ազգապահպանության, քաղաքացիական առաքինության որակները այն ուղենիչներն են, որոնցով առաջնորդվում են նրա դրական Հերոսները: Կատակերգության վերջաբանը զուտ ուսմանտիկական բնույթ ունի. բացասական Հերոսը Հանկարծակի փոխում է իր վարքագիծը և դառնում հայրենասեր: Մամուրյանը կատակերգությանը պարտադրել է իր



գաղափարը Հայ Հարուստները պետք է Հրաժարվեն իրենց եսամոլ նկարագրից և Հասնեն ազգային ինքնագիտակցության:

Մյուս «Տունեն դուրս» զավեշտում մատնացույց է արվում բնաշխարհում Հայ Հարուստների Հաստատվելու և ազգի տնտեսական զարգացմանը նպաստելու հնարավորությունը:

Գրամագլխի ներդրումով Արևմտյան Հայաստանը տնտեսապես վերակենդանացնելու գաղափարը Մամուրյանին հուզել է նաև Հետագայում: Գրողի Հիասթափությունները այս Հարցում արտահայտվել են նրա «Տիրայր կամ մեծ մարդը» կատակերգությունից մեջ:

1890-ական թթ. Մամուրյանը «Արևելյան մամուլում» տպագրեց «Իմաստասեր մանկիկ մը» վիպակը (Մ. ստորագրություն): Այստեղ նա անխնա քննադատություն է ենթարկել քաղքենիական ընտանիքի օտարամոլությունը: Ի տարբերություն իր նախորդ ստեղծագործությունների, Մամուրյանը այս Հասարակական իրողությունը վերարտադրել է որոշակիությունից մեջ: Վերնախավի պապագայնացման և բարոյագրիման գործընթացը Մամուրյանը առնչում էր ազգային դաստիարակությունից կտրվելու հետ:

Վիպակում Հասարակական բարոյականության և ընտանեկան բարքերի բարենտրոգման երաշխիքը լծորդվում է անհատի այլասիրական պարտականությունների գիտակցմանը: Մամուրյանի այս, ինչպես և նախորդ ստեղծագործությունների, ուժանտիկական հենքը երևում է Հերոսների ընտրություն, նրանց գործողությունների պատճառաբանվածությունից մեջ: Նրա երկերում գաղափարները միջավայր են թափանցում դրսից և ոչ թե այդ միջավայրին ներքնապես Հատուկ զարգացման արդյունք են: Գաղափարի միջավայր թափանցելու և նրան հակադրվելու երևույթը այն հենքն է, որի վրա Հանգչում է Մամուրյանի և առհասարակ մյուս ուժանտիկների Հայեցողությունը:

Մամուրյանի գեղարվեստական կարողությունները և գաղափարական ձգտումները առավել ամբողջականորեն են արտահայտվել «Սև լեռին մարդը» վեպում: 1871-1881 թթ. «Արևելյան մամուլում» տպագրվել է վեպի մի մասը, այնուհետև սուլթանական գրաքննությունը կասեցրել է դրա տպագրությունը: Այն արտացոլում է պարսկական և թուրքական բռնապետությունների դեմ XIX դ. առաջին տասնամյակներին մղված ժողովրդական պայքարի իրողությունը: Սակայն Հեղինակի գաղափարական միտումները ցարիզմի, Թուրքիայի և եվրոպական տերությունների փոխհարաբերու-

Թյան շուրջ, ըստ էության, վերաբերում են 1870-ական թթ. խորացած Արևելյան ճգնաժամին և Հայկական Հարցին: Հայրենիքը կարելի է հետ նվաճել ոչ թե նրա նկատմամբ պատմական իրավունքների վկայակոչումով, այլ սրով, այս է հեղինակի առաջադիր գաղափարներից մեկը: Մամուլը այն ոչ մի հավատ չունի ո՛չ թուրքական և ո՛չ էլ ցարիզմի ապագայի նկատմամբ: Պատմավեպում ցուցադրվում է այն ճշմարտությունը, որ Հայ ժողովրդի ազատագրության քողի ներքո ցարիզմն իրականացնում է ընդամենը իր նվաճողական քաղաքականությունը: Մամուլը այն արտահայտել է այն խորին Հիասթափությունը, որ ապրել էին Հայ Հասարակական-քաղաքական առաջավոր շրջանները Հայկական մարզը վերացնելու (1840) և Հայ եկեղեցին ինքնուրույնությունից զրկելու ցարական քաղաքականությունից: Մինչդեռ, Մամուլը դրվատում է «ընկերասեր», «զվարթ և գործունյա» ուսուցողի առաքինությունները, նրա ժողովրդավարական ապագային նայում հավատով: Մամուլը նույնիսկ ուրվագծում էր Ռուսաստանի ունենալիք ազգային-քաղաքական կառուցվածքը, ինչպես և նրա նշանակությունը կայսրության բեռը թոթափած ժողովուրդների համար:

«Աև լեռին մարդը» ազգային-ազատագրական պայքարի վիպական ուժմանտիկ արտահայտությունն է. նրա հերոսների գործողություններն ու փոխհարաբերություններն իրականանում են այդ գաղափարի շուրջ: Արտահայտելով ազատագրական շարժման տրամադրություններ՝ Մամուլը փորձում էր իրականության մեջ որոնել դեպի այդ նպատակը տանող ուղիները:

Մամուլը գեղարվեստական ստեղծագործությունը, սակայն, իր արվեստով և առավել ևս Հասարակական ներգործությամբ զիջում է նրա թարգմանչական գործունեությանը: Լինելով Ջմյուռնիայի թարգմանական դպրոցի առաջատար ներկայացուցիչներից մեկը՝ Մամուլը անչափ մեծ երախտիք ունի Հայ-եվրոպական գրական կապերի զարգացման գործում: Բացի առանձին Հրատարակություններով լույս ընծայած իր թարգմանություններին, նա «Արևելյան մամուլում» իրագործել է վիթխարի աշխատանք թարգմանելով Վ. Սկոտի «Իվանոն», Դ. Միտչելի «Ամուրիի մը երազները», Գրենվիլի «Մորելվին քաղումը», Ժ. Օնեի «Կարապի երգը», Է. Դրընըրի «Մանկիկի մը վեպը», Լ. Գընվեի «Մութ օրերը», «Նավարե ի լույսը», Ֆ. Հյուսի «Անեռեռլթ պարոնը» և այլն: Թարգմանական իր բեղմնավոր գոր-

ծուևնությունները Մամուլըյանը մնում է եզակի երևույթ մեր գրականության պատմության մեջ:

Մամուլըյանը գրականության հասարակական ներգործության հետ էր առնչում ժողովրդի բարոյական արժեքների վերածնության խնդիրը: Ազգի բարոյական, ինչպես և մտավոր ու անտեսական զարգացումը նա որոնում էր այն գործոնների մեջ, որոնք պատմականորեն բնութագրական էին եղել նրա բարոյականությանը: Բարոյականությունն էր որոշակի չափ ու սահման դնելու անհատի ու հասարակության հարաբերությունների հակասությունների խորացման վրա, բարոյականի սահմանած այն չափը, որը յուրօրինակ հավասարակշռություն էր ստեղծելու հասարակության տարրեր խավերի, սոցիալական շերտերի միջև: Այս պատճառով 1850-1880-ական թթ. արևմտաՀայ դեմոկրատները հեղափոխությունը համարել են բռնություն, ծայրահեղ միջոց, որը պատմականորեն հիմնավորված կարող է լինել այն դեպքում, երբ չկա այլընտրական պատասխան վերևից եկող ճնշումների ու բռնության դեմ:

Մամուլըյանի համար ևս գրականության և արվեստի բարոյական ներգործությունը չափանիշի դեր էր կատարում առանձին ստեղծագործությունների արժեքավորման ժամանակ: Այս իմաստով Մամուլըյանը շարունակական քննադատության էր ենթարկում նատուրալիզմը: Զոլայի նատուրալիզմը նա էէր ընդունում հենց բարոյականությունը փաստերի մոայլ թանձրության մեջ կորցնելու համար: Նրա կարծիքով, նատուրալիզմը մնում է հասարակության խոցերի հայեցողական հետազոտության շրջանակներում և ի վիճակի էէ դրական ներգործություն ունենալու հասարակության հետագա զարգացման վրա: Նկատենք, որ նատուրալիզմի այս թերությունը հանդեսը առհասարակ վերագրում էր ևեալիստական գրականությանը: «Վեպն ի Ֆրանսա» հոդվածում նույն դպրոցի մեջ են տեղավորվում ևեալիզմն ու նատուրալիզմը, իսկ Զոլան հռչակվում էր նատուրալիստական ուղղության առաջնորդ: Սակայն դրանից չպետք է եզրակացնել, որ «Արևելյան մամուլը» դեմ էր ևեալիստական գրականությանը: Ինքը՝ Մամուլըյանը շատ բարձր էր գնահատում Պարոնյանի ևեալիզմի քննադատական պաթոսը, իրականության արատավոր կողմերի համարձակ բացահայտումը և բողոքն ընդդեմ ազգային ճնշումների:

Գրականության ազգային բովանդակության կամ ժողովրդայնության պահանջը Մամուլըյանը առաջ էր քաշում նաև 1890-ական թթ. առավել լայն

ընդգրկում են որով, ներառելով ազգային կյանքի և իրականության էական կողմերի արտացոլումը: Այս տեսակետից ուշագրավ է Ձոհրապի ստեղծագործության արժեքավորումը: Ձոհրապի նովելները նա համարում է արժեքավոր, բայց ոչ բավարար ազգային նկարագրի պատկերման տեսակետից: Մամուլյանին չէր գոհացնում այն, որ Ձոհրապի հերոսները կտրված են գավառական միջավայրից, և որ առհասարակ գրանցում բացակայում է գավառական իրականության պատկերը: Ռեալիստ Ձոհրապի սկզբունքները, բնականաբար, չէին կարող բավարարել ուսմանտիկ գեղագետին, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում էր ազգային բարոյականությանը: Հակասությունը բխում էր գեղագիտական երկու տարբեր ուսմանտիկական և ռեալիստական մեկնակետերից: Այն պատկերացումը, որ գրականությունը պետք է կրի ազգային ոգու ընդհանուր կնիքը, պատճառն էր նաև այն բանի, որ «Արևելյան մամուլի» հեղինակները քիչ ուշագրություն դարձրեցին արեմտաՀայ գրականությունը գավառականի և պոլսականի բաժանելու և ընդհանրապես դրա շուրջ մղվող բանավեճին:

1870-1880-ական թթ. «Արևելյան մամուլի» տպագրած չափաժող ստեղծագործություններն աչքի չեն ընկնում իրենց գեղարվեստական արժանիքներով, սակայն ունեն ազգային ու սոցիալական բունությունների դեմ ուղղված շեշտված միտումներ: Երես շրջելով քաղաքի սոցիալական ներհակություններից, բարքերի նորոյա հեղաբեկումներից, հանդեսի բանաստեղծները ապավինում են գյուղին: Սակայն բուն իսկ գավառական իրականության պատկերը նրանց մտայնության մեջ ամբողջական չէ հասարակական առումով, որչափով նրանք կամ վերանում են ներքին հակասություններից և կամ սահմանափակվում գավառական զորեղների բարոյախոսական քննադատությունը: Այս պոեզիան ավելի շուտ բողոքող է, քան մարտնչող, Հայեցող, քան եզրակացության հանգեցնող: Այսպիսիք են Կ. Խոսքանցի, Վեհակնի, Աղուարդի և այլոց բանաստեղծությունները:

1880-ական թթ. «Արևելյան մամուլը» տպագրել է Ե. Տեմիրճիպաչյանի բանաստեղծությունները «Տաղարան», «Ասիական առավոտք» և «Ասիական երեկոյք» խորագրերով: «Ասիական առավոտքը» հագեցած է Տեմիրճիպաչյանին հատուկ հոռետեսական, միաժամանակ խոհական տրամադրություններով: Երկրորդ մասում այն շնչում է որոշ կենսասիրականությամբ, թեև պահպանում է պատկերի վերացականությունը: «Ասիական երեկոյքը» արդեն հագեցած է թանձրամած միտովայով և մահվան մոռյլ տեսիլքներով:

Տեմիրծիպաշյանի այս ստեղծագործությունները մի որոշ չափով արտահայտում են ազգային ազեաներից հուսարեկ արևմտահայ մտավորականության մի մասի ընկճված խոհերը:

«Արևելյան մամուլը» նշանակալի ծառայություն ունի ժողովրդական բանահյուսության նմուշները ժողովրդականացնելու գործում: Այստեղ ակնառու է Գ. Սրվանձտյանցի աշխատակցությունը: Նա տպագրել է Մուշի, Վանի, Բուլանըխի, Տիգրանակերտի, Մոկաց սիրերգերն ու կենցաղային խաղիկները: Նրա օրինակին հետևեց «Հայր» ստորագրող բանահավաքը (Ստ. Կանայան), որն արժեքավոր նմուշներ է հրատարակել Արարատյան դաշտի, Մոկաց և Ռշտունյաց բանահյուսությունից:

1890-ական թթ. գեղարվեստական գրականությունը դառնում է «Արևելյան մամուլի» գաղափարական բովանդակության հիմնական առանցքը: Թուրքական համատարած ռեակցիայի պայմաններում գրականությունը հրատարակախոսության համեմատությամբ արևմտահայ մամուլում ձեռք է բերում առաջատար նշանակություն և փաստորեն պայմանավորում այդ մամուլի հասարակական ուղղությունը: Գրաքննության մազով անցած հրատարակախոսությունից քիչ բան էր մնում, մինչդեռ գեղարվեստական գրականությունը, այնուամենայնիվ, կարողանում էր պահպանել իր հասարակական ներգործության որոշակի հնարավորությունները: Ուստի և «Արևելյան մամուլի» առաջադիմական գերը այս շրջանում ամենից առաջ պետք է որոնել նրա տպագրած գեղարվեստական ստեղծագործություններին մեջ:

Դեռևս որոշակիորեն չձևավորված, բանաստեղծական տարտամ մտորումների կողքին և դրանցից հետո էր, որ ծնվեց Հանդեսի իսկական պոեզիան: Ըստ էության, պարբերականի քաղաքացիական պոեզիան սկսվում է Ա. Չոպանյանի «Երջանկություն» բանաստեղծությամբ, որ առավել նկատելի է դառնում Ռ. Որբերյանի գործերով:

Որբերյանի բանաստեղծությունները ներծծված են ազգային կորուստների ապրումներով: Ժողովրդի ողբերգական առօրյան բանաստեղծը ցուցադրեց հասարակական հնչեղություն ունեցող պատկերներով («Արմաշի Հողին», «Կցկտուր խոսքեր»): Մենությունը զգացումները բանաստեղծը հաղթահարում է հակասական խոհերով, որտեղ զգացնել են տալիս նրա Հայրենասիրական մտիվներին հատուկ հույսը և կորովը («Ծաղկանոցի նոճին», «Նոր տարի», «Հակապատկեր»): Կենսասիրական տրամադրություններ են արտահայտում

Հանդեսում տպագրած նրա մյուս բանաստեղծությունները («Քնարին», «Փափաքը», «Ժամացույց»)։ Հանձին Որբերյանի, Չմյուռնիայի Հայ մամուլը Հաղթահարեց իր Համար դժգոհամասշեխի ազգային բանաստեղծության նորօրյա չափանիշները։ Դա արտահայտությունն էր այն իրողության, որ պարբերականի ղեմնորատական բովանդակությունն ապրում էր որոշակի տեղաշարժ անցում անելով դեպի գեղարվեստական գրականության հրատարակությունը։

1890-ական թթ. «Արևելյան մամուլում» սեպտեմբերյան գրականությունը մուտք է գործում Մ. Գոչունյանի ստեղծագործություններով։ Մ. Գոչունյանը (Քասիմ, Քասիմզուխտ ծածկանուններով) պարբերականին աշխատակցել է ֆելիետոններով և հրատարակատեսակական Հոգովածներով։ «Ազգային նիշեր» վերնագրով նրա թղթակցություններում, չնայած գրաքննությանն ապակողմնորոշող դատողություններին, զգացվում է խորին դժգոհություն իրականությունից։ Գոչունյանն ազատ խոսքի և մամուլի Համոզված կողմնակից է։ Աշխարհայացքային տեսակետից նա ազդվել է Մամուլրյանի, մանավանդ Ն. Պարոնյանի ղեմնորատական Հայացքներից։ Ավելին, նրա որոշ գործերում (օրինակ, «Օրթագեղը երևակայականին և իրականին մեջ») ակնառու է Պարոնյանի «Պտույտ մը Պոյտ թաղերուն մեջ» և «Մեծապատիվ մուրացկաններ» երկերի ազդեցությունը՝ ոչ միայն երգիծող օրյեկար ներկայացնող պատկերների, այլև նպատակի տեսակետից։

Գոչունյանի հրատարակատեսակական տարերքը Կ. Պոլսի Հայ Հասարակական ու մշակութային կյանքն է, ուր նա Հանդես է բերել Հիանալի իմացություն, իրողությունները նրբամտորեն ու ճաշակով ներկայացնելու լայն կարողություններ։ Քասիմը երգիծական Հաղողված ձևի մեջ դիպուկ ծաղրուծանակի է ենթարկել պոստալայ վերնախավի առօրյան և բարոյազրկությունը։ Քասիմի երգիծանքի առանձնահատկությունը, թերևս, նրա որոշակիությունն է։ Իրական դեպքերի Հիման վրա նա ստեղծում է երևույթի արտաքուստ խեղճված, բայց թանձրացական-ճշմարտացի պատկերը Հասնելով ճանաչողական ընդգրկումների։ «Արևելյան մամուլում» Գոչունյանը մշտական Հարձակումների թիրախ է ընտրել տգետ բժիշկներին, կարծեցյալ խորագետ մանկավարժներին և այլն։ Նրա երգիծանքին Հատուկ են անսպասելի, կտրուկ անցումները և դրանով իսկ տարասեռ երևույթների միջև պատճառական կապերի սրամիտ Հայտաբերումը։

Բասիմի Հրապարակխոսությունը երգիծանքի բարձր արժանիքներով, մանավանդ ճոխ ու ճկուն արտահայտչամիջոցներով, անկասկած, «Արևելյան մամուլը» օժտում է Հասարակական սրությամբ: Նա ստեղծել է խոսքի և գործողությունների, դինամիկ կոմիզիմի սքանչելի օրինակներ՝ շարունակելով Հայ երգիծաբանության մի քանի լավագույն կողմերը:

«Արևելյան մամուլում» իր առաջին գործերն է տպագրել և 1900-ական թթ. ախտիվորեն աշխատակցել Հ. Ալփիարը: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տպագրվել են նրա «Պաշիկը», «Կանացի դիմաստվերներ» պատմվածքները (1894-1895), որոնք ունեն կենցաղային բովանդակություն: Ալփիարը դրսևորել է երգիծաբանի իր ակնառու տաղանդի նշանները, Հաջողված սրամտություններն ու դիպուկ ակնարկները:

Հանդեսում 1890-ական թթ. տպագրվել են Վարուժանի «Մտածին պատկերներ» դիմանկարային շարքի պատմվածքները, որտեղ Հեղինակը ձգակել է պատկերել ժամանակի երիտասարդության հոգեբանությունն ու բարոյական ներաշխարհը: Գրեթե նույն բովանդակությունն ու ոճն ունեն Հրանտ Մամուլյանի պատմվածքները: Վերջինս, սակայն, լավ չի ճանաչում գավառական միջավայրը, որի մասին իր պատկերացումներն ամբողջացրել է Մամուլյան-Հոր գաղափարական ուժեղ ազդեցությամբ:

Պարբերականի արձակում ճանաչողական կարևոր նշանակություն ունեն Մ. Նուպարյանի «Իմ մանկական հիշատակներս» և Մ. Մամուլյանի «Իմ Հուշագրերս» գործերը: Դրանցում վավերագրական հարուստ նյութեր կան զմյուռնահայ Համայնքի ազգային, Հասարակական, մշակութային կյանքի և գործիչների վերաբերյալ (1840-1850-ական թթ.):

«Արևելյան մամուլում» թեմատիկ նորույթով ուշագրավ է Գր. Հակոբյանի «Գաղտնեխույզ Նորենց» պատմվածաշարը: Այն դետեկտիվի ժանրի առաջին արտահայտություններն էր արևմտահայ արձակում, որ կրում է Կոնան Դոյլի ազդեցությունը:

«Արևելյան մամուլի» թարգմանական գրականության մեջ իր կարևոր ներդրումն ունի Մ. Նուպարյանը: Եթե Մամուլյանը գերազանցապես թարգմանում էր անգլիական գրականությունից, ապա Նուպարյանը՝ Ֆրանսիական ընազրից: Հանդեսում նա տպագրել է Բուալոյի, Մոլիերի, Ռասինի, Լաֆոնտենի, Լյուդոյի, Վինչիի, Մոպասանի, Լեթանդրի, Անդրեոյի, Վակաբեակոյի, Պյոլոզոմի և այլոց չափածո և արձակ ստեղծագործությունների թարգմանությունները: Ընդհանրապես Ֆրանսիական գրականությանը իրա-

զեկ լինելու համար արեւմտահայ ընթերցողը շատ բանով էր պարտական Մ. Նուպարյանին:

Թարգմանական պոեզիայում պարբերականը նշանակալի տեղ է տվել նաև ուսու գրականությանը: Սա. Կանյանը հանդես է եկել Պուշկինի, Լերմոնտովի, Պելչեևի, Յիգանովի ստեղծագործությունների թարգմանություններով («Հայ Արմեն», «Հայ» սատրագրություններով): Նշելով ուսու գրականության «բնատիպ ու գորեղ կողմերը» հանդեսի խմբագիրը հայացքը դեպի այդ գրականությունն էր հասում նաև արեւելահայ գրականության բնութագրման առթիվ: Հետագայում «Արեւելյան մամուլը» թարգմանել և ընթերցողին է ներկայացրել Մ. Գորկու, Լ. Տոլստոյի, Լ. Պոլոնսկու և այլոց ստեղծագործությունները:

«Արեւելյան մամուլը» առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել Եւքսպիրի ստեղծագործության նկատմամբ: Դարավերջի անկումային հոսանքներին պարբերականը հակադրվել է նաև անգլիացի դասականի երկերի դադափարայնության տեսակետից: Այս դիրքորոշումն առաջինն արտահայտեց Ռ. Որբերյանը «Ուիլյամ Եւքսպիր» քննադատական-կենսագրական հոդվածով: Այնուհետև հանդես եկավ Ա. Նավարյանը Եւքսպիրի ստեղծագործությունների և շեքսպիրյան եվրոպական բեմադրությունների վերլուծությամբ: Նավարյանը փորձում էր Եւքսպիրի երկերը դիտել պատմական-հասարակական կոնկրետ իրականության մեջ: Նրա այս ուսումնասիրությունների նշանակությունը մեծանում է այն հանգամանքով, որ արեւմտահայ ընթերցողին է ներկայացնում ընդհանրապես շեքսպիրագիտական մտքի զարգացումը հանձինս Ջ. Բենտոնի, Քուրիջի, Սպենսերի և Թենի: Ուշագրավ են Համլետի, Օթելլոյի, Դեզդեմոնայի, Յագոյի, Ռոմեոյի և Ջուլիետի կերպարների վերլուծությունները:

1899 թ. «Արեւելյան մամուլը» տպագրեց «Վենետիկի վաճառականը» գմյուռնացի գրագետ-վաճառական Լ. Պալոզյանի թարգմանությամբ: Նույն թվականին դարձյալ գմյուռնացի Գ. Բաբազյանի թարգմանությամբ Վենետիկում հրատարակվել էր Եւքսպիրի «Համլետը»: Այդ առթիվ «Արեւելյան մամուլը» տպագրեց Սոսնակի (Հ. Ֆերմանյան) հոդվածը, որը հետաքրքրական մտքեր է պարունակում նաև «Համլետի» նախորդ (Ս. Արծրունու և Հ. Մասեհյանի) թարգմանությունների վերաբերյալ: Եւքսպիրի ստեղծագործությունը պարբերականի համար դառնում էր միջոց համազգային մշակութային կյանքին հաղորդակցվելու և նրա զարգացման ընթացքի վրա ներգոր-



ծելու համար: Թարգմանությունների հետ միասին (Գյոթե, Հայնե, Դոդե, Լոնդֆելլո, Մարկ Տվեն, Հերել, Միլվուա, Բերման և ուրիշներ) «Արևելյան մամուլը» տալիս էր գրական գործիչների և նրանց ստեղծագործության գնահատականը, որ կապվում էր նրա գրաքննադատական ընդհանուր ուղղությունը:

### «ԱՐԵՎԵԼԸ» (1884-1896)

Թուրքիայի պարտությունը ռուս-թուրքական պատերազմում, Բեռլինի վեհաժողովը և նրա արդյունքները, Բալկանների կորուստը ստիպեցին թուրք կառավարող շրջաններին, կայսրության ամբողջությունը պաշտպանելու համար, հակահարձակման անցնել ողջ ճակատով: Անասելի ծանր վիճակ ստեղծվեց ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, Հայ ժողովրդի համար: Մոլեզնոդ ռեակցիայի զոհը դարձան արևմտահայ Հասարակական կյանքը ահոսող օրգանները. փակվեցին «Մեղուն», «Թատրոնը»: Արևմտահայ մամուլի վրա ծանրացած «երկաթե ձեռքը» կատարում էր իր ավերիչ դերը: Այդ իրադրության մեջ 80-ականների կեսերից անհրաժեշտություն էր զգացվում ստեղծել մի նոր օրգան, դրա կարիքը առավելապես զգում էին երիտասարդները, որոնք Հնարավորություն էին ստացել շփվել արևելահայ Հասարակական-քաղաքական կյանքին: Արևմտահայ Հասարակական գործիչներից մի քանիսը թղթակցում էին արևելահայ թերթերին, մասնավորապես «Մշակին» և առնականանում նրա ազդեցության տակ: Նրանցից մեկի՝ Ա. Արփիարյանի նախաձեռնությամբ մի խումբ երիտասարդներ Կ. Պոսում 1884 թ. հիմնադրում են «Արևելք» քաղաքական և ազգային օրաթերթը: Թերթի արտոնատերը Ստեփան Տամատյանն էր: Կազմակերպականֆինանսական գործերը վարում էր հատուկ վարչությունը, որի 6 անդամները «երևելիների» համարում ունեցող բարձր պաշտոնեությունների հայացուցիչներ էին: Գրական բաժինը ղեկավարում էր Արփիար Արփիարյանը, որն իր շուրջն էր համախմբել շնորհալի երիտասարդ լրագրողների՝ Լևոն Բաշլյանին, Մելքոն Կյուրճյանին, Տիգրան Կամսարականին, Գրիգոր Զոհրապին, Բյուզանդ Բեչյանին, որոնք նոր շունչ ու կյանք հաղորդեցին արևմտահայ Հասարակական կյանքին: «Մշակի» ճանաչված թղթակից Ա. Արփիարյանը գրում է «Արևելքի» ծրագրային Հայտարարությունը: Վկայակոչելով արևելահայ մամուլի ձեռքբերումները Հայ Հասարակական կյանքը ընդար-

մացումից դուրս բերելու և աշխուժացնելու առումով նա «Արեւելքի» կոչումը համարում է հասարակական բարքերի վերափոխումը. «Սասիան նաղարյանց գծեց ուսասհայ մամուլին համար միանգամ ընդմիջտ մի այնպիսի ուղղութիւն, որուն սթափիչ ազդեցութեան ներքե հասարակաց գիտակցութիւնը զարգանալով, պարբերական մամուլը դարձավ անհրաժեշտ պիտույք մը ուսասհայոց ժողովրդի մտավորական պահանջներուն համար» (1884, №1): Ավելի ուշ, դարձյալ անդրադառնալով նորաստեղծ թերթի խնդիրներին, Արփիարյանը «Արեւելքը» համարում էր երիտասարդութեան օրգան և նրան վերադահում վերափոխիչ՝ դեր ազգային և հասարակական կյանքում (1884, №9):

«Արեւելքի» խմբագիրներինց մեկը Բյուզանդ Քեչյանն էր լրագրական աշխատանքի փորձ ունեցող մի անձնավորութիւն: 1879-ից նա աշխատակցել էր «Մասիսին», բարեկամիկ նրա վիճակը: Հետագայում, երբ նա հեռանում է «Մասիսից» և դառնում «Արեւելքի» խմբագիրներինց մեկը, «Մասիսն» աստիճանաբար զրկվում է իր բաժանորդներից: Կ. Պոլսի հայութիւնն ի վիճակի չէր ապահովել ծավալուն այդ երկու թերթերի հրատարակութիւնը, և «Մասիսի» խմբագիր Կ. Ություճյանը հարկադրված վաճառում է թերթի հրատարակութեան իրավունքը «Արեւելքի» վարչութեանը, իսկ վերջինս այն դարձնում է զուտ գրական հանդես: Հերքելով «Մասիսը» «կուլ տալու» մեղադրանքները Քեչյանը այդ երեւոյթը համարում է ոչ թե բռնի մահ, այլ բնական սերնդափոխութիւն: Իսկ «Արեւելքի» ուղղութիւնը բնութագրում է՝ «Հառաջադիմական առանց արմատական լինելու, պահպանողական առանց հետադեմ լինելու: Այսպես պարտի լինել նաև մեր ազգային քաղաքականութիւնն: Այդ եղած էր նաև «Մասիսի» ուղղութիւնն յուր լավագուշտ ժամանակաց մեջ» (1884, №227):

«Արեւելքը» ունեւր ազգային, քաղաքական և ներքին լուրերի, գրադատական բաժիններ: Իբրև թերթոն անընդհատ լույս էին տեսնում եվրոպական գրականութեան նմուշներ, ընթերցողի մեջ ճաշակ զարգացնում դեղարվեստական գրականութեան նկատմամբ: «Արեւելքին» վիճակված էր մեծ դեր խաղալ արևմտահայ լրագրութեան պատմութեան մեջ՝ որպես ջրբաժան գիծ հին ու նոր լրագրութեան միջև: Գրիգոր Զոհրապը ուղղակի հավաստում է, որ «Պոլսո նոր լրագրութիւնը Արեւելքով կսկսի»:

Խմբագրական աշխատանքներում ամեն ինչ հարթ չէր ընթանում: «Արեւելքը» լիբերալ բուրժուազիայի օրգանն էր, որ երբեմն արտահայտում

էր նրա աշխատակիցներին աջ, իսկ երբեմն դեմոկրատական թևի Հայացքները, նայած թե խմբագրական մարմնում որ տարրն էր գերակշռում: Այդտեղից էլ նրա տարրեր էջերում տեղ գտած հոդվածների հակասությունը: Այդ իրողությունն իր արտահայտությունն է գտել «Արևելքի» կառուցվածքում: Թերթի առաջին երկու էջերը պաշտոնական հոդվածներն էին, որոնց հեղինակները ազգային կյանքում պաշտոններ զբաղած գործիչներ էին, իսկ երրորդ էջի նյութերը, մեծ մասամբ, վերաբերում էին Արևմտյան Հայաստանի տարրեր գավառներին, ժողովրդի ծանր սոցիալական կացությունը, նրա վճարած տուրքերին ու հարկերին, վաշխառուների քայքայիչ գործունեությունը: Արևմտահայ կյանքում «Արևելքը» խաղում էր նույն դերը, ինչ արևելահայ կյանքում «Մշակը»: Պատահական չէ, որ մշակութային կյանքին վերաբերող նյութերում մեծ տեղ էին զբաղում «Մշակի» գործունեության լուսաբանումը, Արծրունուն նվիրված հոդվածները:

Չնայած թերթի բաժինների այս բեկռացմանը խմբագրությունը, սակայն, միասնական էր երկրի տնտեսական զարգացման և Հասարակական կյանքի վերափոխման իր ծրագրերում: Թերթի էջերում մեծապես լուսաբանվել են Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ կապված խնդիրները: Տնտեսության զարգացումը, արդյունաբերության և գյուղատնտեսության կապիտալիստական արտադրանքային անցնելու հարցերը, հաղորդակցություն ճանապարհների ցանցի ընդլայնումը, ներքին ու արտաքին մաքսային համակարգի աշխատանքների բարելավումը, գյուղացիության վրա բարդված անասելի ծանր հարկերը, պայքարը վաշխառության դեմ իրենց արտացոլումն էին գտնում «Արևելքի» էջերում:

Արևմտահայության մեծ մասն զբաղվում էր երկրագործությամբ, սակայն ֆեոդալական արտադրանքային հնարավորություն էլ էր տալիս գյուղացուն ընդլայնել իր տնտեսությունը, շահույթով վարել այն, ներդնել գյուղատնտեսական տեխնիկա, ստացված բերքը դուրս բերել շուկա: Ուժ չունենալով վճարել պետական հարկերը գյուղացին զբաղ էր դնում իր փոքրիկ հողակտորը, պարտք վերցնում վաշխառուից: Թերթի խմբագրական հոդվածները (որոնք մեծ մասամբ գրում էր Բ. Քեչյանը) հորդորում էին կառավարությունը, որ գավառներում չծանրացնի հարկերի չափը: Հաղորդելով, որ պետական բյուջեի դեֆիցիտը փակելու համար կառավարությունն ավելացրել է զինվորական տուրքը 1/3-ով, կալվածական տուրքը՝ 1/4-ով և մյուս տուրք-

քերը Համապատասխան չափով, հոգվածագիրը նշում է. «Ուղղակի և անուղղակի տրոց մեծագույն բաժինն ալ հոգագործ դասուն վրա կիյնա: Հոգագործները Համեմատապես ամեննն ավելի անպաշտպանն են և Հետեւապես ամեննն ավելի արժանի են կառավարութեան Հայրական հոգատարութեան» (1888, №1280):

Գյուղատնտեսութեան զարգացման Համար անհրաժեշտ էր Համարվում «լավ ճամբաներ և աժան դրամագլուխ» ստեղծել, որը փրկէր գյուղացուն վաշխառուի ճանկից, ազատեր պանդխտութեան չարքներէրից և օգնէր զարկ տալու գյուղատնտեսութեան նոր ճյուղերի Հիմնադրմանն ու զարգացմանը: Քննարկելով Կ. Պոլսում վաճառվող գյուղատնտեսական ապրանքների տեսականին իրենց գներով թերթը ցույց էր տալիս, որ Հսկայածավալ կայսրութեան գյուղատնտեսական մթերքների մեծ մասը ներմուծվում էր դրսից եվրոպական երկրներից և Ռուսաստանից: Նպատակահարմար էր դիտվում զարկ տալ Հատկապես անասնապահութեանը քաղաքի Հարուստների և գյուղի անասնապահների միացյալ ընկերություն ստեղծելով: Հայ մեծահարուստները, ներդնելով իրենց դրամը գյուղատնտեսութեան զարգացման Համար, կկազմեն ազարակային տնտեսութեաններ և իրենց արտադրած մթերքներով կողողեն թուրքական շուկան: Սակայն դա անհնարին էր, ամենից առաջ Հազորդակցութեան միջոցների Համարյա բացակայութեան պատճառով: Կառավարական պաշտոնյաների ուշադրությունը Հրավիրելով Արեւմտյան Հայաստանի տարածքում ճանապարհների բացակայութեան վրա թերթը Հարց էր բարձրացնում սկզբնական շրջանում գաժառններն իրար Հետ կապել գեթ կառուղիններով, մինչև երկաթուղիների կառուցումը:

Գյուղատնտեսութեան զարգացման Համար անհրաժեշտ էր Համարվում գյուղատնտեսական մթերքների պատրաստումը գործարանային եղանակով, քանի որ պանրի, յուղի և այլ մթերքների պատրաստումը չէր կարող խթանել զարգացած առևտուր վարելուն: Թուրքիան, նաև նրա կազմում գտնվող Արեւմտյան Հայաստանը, արտաքին շախարհին մատուցում էին միայն Հումք (1888, №1325): «Արեւելքի» տեսաբանը շեշտում է այն իրողությունը, որ եվրոպական երկրները բուրդը գնում են էժան գներով, մշակում և տասնապատիկ թանկ վաճառում Թուրքիայում: Նույնը կատարվում է և կենդանիների կաշիների Հետ: Թերթը Հարց է բարձրացնում կազմակերպել գործարանային արտադրություն. «Մի երկիր, որ չունի գործարանային կյանք, չունի և վաճառականութեան ապագա: Թուրքիո առևտրականները վաճառականութեամբ

չեն պարապիր, այլ միջնորդի դեր կիսազան միայն արեւմուտքի և արեւելքի միջև» (1888, №1325):

Առանձնակի ուշադրութիւն է դարձվում գինեգործութեան զարգացմանը. «Հարկ է կրկնել, թե գինեշինութիւնը մեծ արհեստ մ'է, որ միլիոնավոր մարդիկ կապրեցնեն: Մեր երկրին այգիները եվրոպացւոց սքանչացման առարկա են, որք, մեր գինիներ գնելով, արհեստական կերպով կպատրաստեն և, Յրանսիայի և Հունգարիոյ ամենեն սուղ գինիներին համահավասար հանդիսացնելով, քանի մը պատիկ սուղ կվաճառեն» (1889, №1784):

Խմբագիրը հետեղականորեն քննադատում է կառավարական պաշտոնյաների վարած մաքսային քաղաքականութիւնը՝ գտնելով, որ այն վճռորոշ նշանակութիւն ունի գյուղատնտեսութեան և նրանից բխող արդյունաբերութեան զարգացման համար: Ըստ նրա, այդ սխալ քաղաքականութեան պատճառով է, որ աղքատութիւն է տիրում թե՛ մայրաքաղաքում, թե՛ գաւառներում: «Առածի կարգ անցած Փոքր Ասիոյ բնական հարստութիւնները» բոլորովին չեն օգտագործվում, և այդ պատճառով Կ. Պոլսի շուկան ողողված է Ռուսաստանի և Դանուբյան երկրների մսով, յուղով, ցորենով, մինչդեռ կարող էր հակառակը լինել (1889, №1778): Տնտեսական կյանքի վերափոխման, հաղորդակցութեան ճանապարհների բացման, եվրոպան թուրքիայի հետ երկաթուղիներով կապվելու հետեւանքով խիստ մրցակցութիւն էր սկսվել եվրոպական էժան ապրանքների՝ և հայերի արտադրած ապրանքների միջև: Մրցակցութեան պատճառով հրապարակից դուրս էին մղվում այնպիսի արհեստներ, որոնք տասնամյակներ առաջ զարգացած վիճակում էին: Եթե 70-80-ական թվականներին կոչկակարութիւնը և դերձակութիւնը Կ. Պոլսում հայերի մենաշնորհն էին, ապա 90-ականների սկզբից այդ երկու արհեստն էլ ծանր հարված են ստանում եվրոպական էժան ապրանքների ներխուժման հետեւանքով: Նույն վիճակում էին նաև կերպասագործութիւնը, մետաղագործութիւնը և այլ արհեստներ:

Թերթի խմբագիրը իր համախոհներով զգալի գործ էր կատարում Արևմտյան Հայաստանի և թուրքիայի տարածքում կապիտալիստական արտադրահարաբերութիւնների հաստատման և զարգացման ուղղութեամբ, ճանապարհ էր հարթում և նպաստում նորելուկ հայկական բուրժուազիայի զարգացման և դիրքերի ամրապնդման համար: Սակայն ուժերի այդ բեկուցումը իր հետ բերում էր նաև բացասական երևույթներ: Քայքայվում էր հայ գաւառը, ունեզրկվում և հողազրկվում աղքատ գյուղացին, օրավուր ուժե-

զանում էր գյուղացու պրոլետարացման պրոցեսը, անասելի մեծ չափերի էր հասնում պանդխտությունը: Եվ եթե թերթի առաջին երկու էջերը նկարագրում էին դրական տեղաշարժերը, առաջարկություններ ներկայացնում կառավարական պաշտոնյաներին ու հայ մեծահարուստներին, ապա երրորդ էջը ներկայացնում էր մի այլ պատկեր:

Տնտեսության զարգացման հարցերը շոշափող հոգովածների մեծ մասի հեղինակները գավառական թղթակիցները, դեմոկրատ մտավորականության ներկայացուցիչները, հետապնդում էին ավելի հեռուն միտող մի նպատակ գյուղատնտեսության նոր ճյուղերի արմատավորման, արհեստների զարգացման և արդյունաբերության վերելքի միջոցով կանխել գավառաբնակ ժողովրդի պանդխտությունն ու գաղթը: Պանդխտությանը դիմակայելու համար առաջարկվում էր գավառական կենտրոններում հաստատել «փոխառովական սնդուկներ» կամ երկրագործական դրամատներ, զարկ տալ գյուղում տնտեսության տարբեր ճյուղերի, զանազան արհեստների, արդյունագործության զարգացմանը: Սակայն դրանք կիսատ-պռատ միջոցառումներ էին. գյուղացուն պանդխտությունից հետ կանգնեցնելու առաջին սոցիալական պայմանը նրան հողով ապահովելն էր, մինչդեռ դարի 2-րդ կեսից անընդհատ ուժեղանում էր հայ գյուղացու հողազրկման գործընթացը, նա զրկվում էր նաև արտադրության գործիքներից, մեկնում էր պանդխտության կամ ստրկական գոյություն էր քարշ տալիս տեղում գառնալով հողատերերի մարբան:

«Արեւելքի» 3-րդ էջը տրամադրված էր արևմտահայ գավառին: «Գավառական սուրհանդակ» ընդհանուր խորագրի տակ զետեղվում էին գավառներից եկած թղթակիցությունները, որոնց միջոցով կայսրության մայրաքաղաքի հայ բնակչությունը հաղորդակցվում էր Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների հայության կյանքին: Այսպես, շնորհաշատ արձակադիր Մեկքոն Կյուրճյանը Հրանտ ծածկանունով ակնարկներ էր լույս ընծայում «Պանդուխտի կյանքեն» վերտառությամբ, ուր պատմվում էր Կ. Պոլսում իր գոյությունը մի կերպ քարշ տվող պանդուխտների մասին:

Գավառական թղթակիցները ներկայացնում էին հայ գավառի սահմուկեցուցիչ պատկերը՝ հողազուրկ գյուղացի, որդեկարոտ ծնողներ, սիրատենչ հարսներ, անհայր գավակներ, վաշխառուներ, քուրդ ցեղապետներ, թուրք հարկահավաքներ: Գեղամ Տեր-Կարապետյանը, Մարկոս և Պողոս Նաթանյանները, Ղևոնդ Փիրզալեմյանը, Հարություն Տուտուխյանը, Մեկքոն

կյուրճյանը, Փյունիկ և Ուխտավոր ծածկանուններով հեղինակները լուրեր են հաղորդում մայրաքաղաքի հայությանը: Իրար են հաջորդում հոգովածներ «Սովն ի Հաճն», «Սովը ՔոթհաՀիո գավառում», «Գործի սովն ի Կիլիկիա», «Հացի խնդիրն ի Մուշ» և այլն, որոնց խորագրերն իսկ հոգովածների բովանդակության խոսուեն վկայություններ են: Բնության տարերային աղետները երաշտը, կարկուտը, միախառնվում են սոցիալական աղետներին և գավառահայությանը կանգնեցնում անլուծելի հարցականի առաջ՝ ինչպե՞ս պահպանել իր և ընտանիքի գոյությունը: Սովի ճիրաններում գտնվող գավառահայությունը հաճախ դիմում էր գավառափոխության կամ կրոնափոխության. «Հաճնցի ազգայինք այլևս չկրնալով դիմանալ անթության և որևէ կողմն օգնություն մը հունենալով ի Հարկն ստիպյալ խուճը-խուճը բողոքականության կղիմեն» (1888, №1240): Մի այլ գավառում ՔոթհաՀիայում, ազքատ գյուղացիները սովի պատճառով ծախում են իրենց գավակներին, որ գեթ նրանք քաղցից չմեռնեն (1888, № 1147):

Թերթը ցավով է արձանագրում գավառահայության հարստահարությունները, նշում դրանց մեջ կառավարական պաշտոնյաների խաղացած դերը, կառավարության վարած հայահալած քաղաքականությունը, քրդերին հայերի դեմ իբրև զենք օգտագործելու փաստերը:

«Արևելքը» կատարել է շնորհակալ մի գործ, որը մեծապես նպաստել է արևմտահայության ժողովրդագրության ստեղծմանը: Գավառի մտավորականության ներկայացուցիչները, զիտակցելով հարցի կարևորությունը, մանրամասնորեն նկարագրել են համապատասխան նահանգի հայկական գյուղերի թիվը, բնակչության քանակը, զբաղմունքը, արհեստները և այլն: Այսպես, տպագրվել են Խարբերդին և նրա շրջակայքին (Կապան-Մատեն, Արարկիր), Քղի-Գասապային, Բալուին (Հավավ և շրջակա գյուղեր), Բաղեշին, Զեյթունին, Մարզվանին և Ամասիային, Աֆիոն-Գարահիսարին, Օրդուին, ՔոթհաՀիային, Բաբերդին, Եվդոկիային, Սեբաստիային, Կարինին, Վանին, Երզնկային, Տիգրանակերտին և նրա շրջակայքին, Մշո դաշտին և քաղաքին, հայկական Տավրոսին և այլ վայրերին վերաբերող բազմապիսի նյութեր: Նման նյութերը մայրաքաղաքի հայությանը ավելի սերտորեն էին կապում իրենց արմատներին, իսկ հետնորդների համար կենդանի էին պահում Արևմտյան Հայաստանի գավառների պատկերը: Մարկոս Նաթանյանը, որ «Միացյալ ընկերությանց» փոխտեսուչն էր, պաշտոնի բերումով շրջում էր Արևմտյան Հայաստանի տարբեր նահանգներում: Այդ շրջագայությունների

ժամանակ նրա գրած Հոգվածները Ն., Մ. Ն., կամ Մարկոս Նաթանյան ստորագրութեամբ լույս են տեսնում «Արևելքում» «Ուղեկորութուն» ընդհանուր խորագրով:

Տեղագրութունների հետ միասին գալառական մտավորականները Կ. Պոլսի Հայութեանը ծանոթացնում են տարբեր գալառների Հայ բնակչության նիստ ու կացին, զբաղմունքներին, ծեսերին, Հավատալիքներին, ավանդութուններին, ժողովրդական ու Հոգևոր տոներին (Զատիկ, Սահակ Պարթևի տոն, Թարգմանչաց տոն և այլն): Հոգվածները չէին կրում սոսկ նկարագրական բնույթ: Հեղինակներն արտահայտում էին իրենց վերաբերմունքը ժողովրդական այս կամ այն սովորության նկատմամբ, Հավանութուն տալիս, երբեմն մերժում կամ խարազանում Հոռի սովորույթները: Առանձնապես ուշադրութուն է դարձվում Հայ գալառներում տարածում գտած «պաշլբիս» վնասակար սովորույթի վրա, որը զիտվում էր իբրև պանդխտության պատճառներից մեկը, Հայ ընտանիքներին և ամուսնութուններին խանդարող բացասական մի երևույթ: Գալառների Հոգևոր առաջնորդները զիմում էին պատրիարքարանին «Ղալանը» կամ «Պաշլբիսը» վերացնելու առաջարկութեամբ:

Գրիգոր Խալաթյանի Կ. Պոլսում գտնվելու առիթով ներկայացվում է նրա «Երազիր Հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութունները» աշխատութունը, որը մեծ դեր խաղաց Հայ ազգագրութունը զիտական մակարդակի բարձրացնելու գործում: Աշխատութեանը կցած խմբագրի սեղմ առաջաբանը ցույց էր տալիս, թե ինչ կարևորութուն էր ներկայացնում թերթի Համար Հայ ազգագրութեան դրույթների մշակումը: Այդ թեմայով Հոգվածներից առանձին հետաքրքրութուն է ներկայացնում Հարութուն Տուտուխյանի 4 մասից բաղկացած Հոգվածաշարը Հայ դուղացու սնահավատութունների, ծեսերի և այլ Հավատալիքների վերաբերյալ (1888, №1263, 1275, 1285): Նման գործունեութեամբ «Արևելքը» իր մասնակցութունն էր բերում XIX դարի 2-րդ կեսին սկիզբ առած Հայ ազգագրութեան, Հնագիտութեան և ժողովրդագրութեան շնորհակալ գործին:

Հետաքրքիր Հոգվածներ են նվիրվում ընդհանրապես Հնագիտութեանը, մասնավորապես Հայ Հնագիտութեանը, արձանագրութունների վերլուծութեանը: Դրանց մեջ աչքի է ընկնում վրաց գիտնական Դ. Բազրատաձեի «Հայկական Հնագիտութուն» Հոգվածը, ուր հեղինակը, անդրադառնալով Հայ և վրաց ժողովուրդների նախնական պատմութեանը, նմանութեան եզրեր



և առնչություններ է գտնում երկու Հարեան ժողովուրդների Հնագիտության մեջ: Թերթը կատարում է դնահատելի մի գործ՝ պարզ ու հասկանալի լեզվով ժողովրդին ծանոթացնելով իր ժամանակի գիտության նվաճումներին: Թերթի գիտական բաժինը անփոփոխ վարում էր Հովսեփ Յուսուֆյանը: Ընթերցողները ծանոթանում են աստղագիտության, ֆիզիկայի, բժշկության, տեխնիկայի ձեռքբերումներին: Գրիգոր Զոհրապը արժանին է մատուցել Յուսուֆյանի կատարած գործին: Որակելով նրան իբրև «մեր ազգին մեծագույն գիտնականը», գրում է . «Իր ջանքը եղած է գիտական հոգիածնորով, որ Արևելքի ամենեն պատվաբեր էջերը կը կաղմեն, գիտությունը ուսկացնել, հասկանալի ու մատչելի, նույնիսկ հրապուրիչ ընծայել ամեն անոնց, որոնք կը կարեն, թե չոր ու ցամաք անապատ է այն...»<sup>59</sup>:

Ուշադրություն են գրավում մանավանդ բժշկությանը նվիրված հոդվածները, որոնք ընթերցողներին տալիս էին տարրական գիտելիքներ մարդկային հիվանդանայի կանոնների վերաբերյալ, ժողովրդականացնում բժշկագիտության մեծ նվիրյալներից մեկի՝ Լուի Պաստյորի գյուտը պատվաստման միջոցով Հիվանդությունները կանխարգելելու վերաբերյալ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ազգային սահմանադրությանը, Ազգային ժողովի գործունեությանը վերաբերող հոդվածները: Խմբագիրը իրավացիորեն նկատում է, որ Ազգային սահմանադրությունը Հայության համար ունի առավելապես բարոյական ուժ և արժեք, քան իրավական: Թերթը քննադատում է Հասարակական այն խավերին, որոնք մեծ Հույսեր էին կապում Սահմանադրության Հետ ազգության Հասարակական-քաղաքական կյանքը բարելավելու գործում:

Ազգային սահմանադրության երեսնամյա տարեդարձի առթիվ գրված խմբագրական հոդվածում արդարացիորեն նշվում է, որ նախորդ սերունդը սին Հույսեր է կապել Սահմանադրության Հետ, իրավացիորեն գտնելով, որ բռնապետական Թուրքիայում Հպատակ ժողովուրդը չի կարող Հաստատել սահմանադրական կարգեր:

Թերթը քննադատում է ազգային ժողովի ամուլ նստաշրջանները, ազգային երեսփոխաններին: Լևոն Բաշալյանը Թափառիկ ծածկանունով հոդվածաչար է լույս ընծայում «Վանդակեն դուրս» ընդհանուր խորագրով, ուր գեղարվեստական տարբեր Հնարքներով նկարագրում է Ազգային ժողովի ե-

<sup>59</sup> Գր. Զոհրապ, Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 69-70:

ըստփոխաններին նիստից առաջ, նիստի ժամանակ և հետո: Պարոնյանի սկզբունքով գրված «ազգային ջոջերի» այս շարքը հիացնում է ընթերցողին իր նուրբ հումորով, սուր գիտողականությամբ:

Ուշադրության արժանի է ընդհանրապես հոգևորականության և հայ եկեղեցու նկատմամբ թերթի ունեցած վերաբերմունքը: Պետականությունից զուրկ հայության համար եկեղեցին դիտվում է ազգապահպանման առաջին և ամենամեծ գործոնը. «Մեր եկեղեցին ապրած է և կապրի ազգի կյանքովն և ազգին կյանքը սերտիվ կապված է եկեղեցվո գոյության հետ: Ինչ որ հարված մ'է մեր եկեղեցվոյն, հարված մ'է նաև մեր ազգին: Անոնք, որ թշնամություն ընել ուզած են մեր ազգին, բարեկամ չեն եղած մեր եկեղեցվո և ստեղծ փորձած են եկեղեցին նվաճելով ընկճել նաև ազգը» (1884, №106): Կաթողիկոսական ընտրությունների ողջ մանրամասները ընթերցողներին ծանոթացնելու նպատակով խմբագրությունը Արփիարյանին իբրև հատուկ թղթակից ուղարկում է էջմիածին: Հոգվածներ են նվիրվում կաթողիկոսական ընտրելիներ ներսես Վարժապետյանին, Մկրտիչ Խրիմյանին, Մելքիսեդեկ Մուրադյանին, Մակար Թեղուտեցուն: Քննարկվում է Հովհաննես Կարբեցուց (1831-ից) սկսած հաջորդ կաթողիկոսների գործունեությունը, նրանց հարաբերությունը ցարական արքունիքի հետ:

4. Պոլսի պատրիարքների ընտրությունները ևս արժանանում են թերթի ուշադրությանը. թերթն իր վերաբերմունքն է արտահայտում նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ (Հ. Վեհապետյան, Խ. Աշըգյան, Մ. Իզմիրլյան): Դատապարտվում է Կիլիկիայի կաթողիկոսի գործունեությունը, Աղթամարի կաթողիկոսի ապաշնորհությունը:

Թերթը քննադատում է իր ժամանակի բարձրաստիճան այն հոգևորականներին, որոնք հրաժարվում էին մեկնել դավառները հոգևոր առաջնորդի պաշտոն կատարելու, գերադասելով ապրել մայրաքաղաքում, ապահով և հանդիստ կյանքով: Այդ պատճառով էլ հասարակ ժողովրդի մեջ հետզհետե պակասում է հարգանքը եկեղեցականների նկատմամբ: Այդ հանգամանքն անհանգստացնում է խմբագրին: Հավատացյալ ժողովրդի անտարբերությունը եկեղեցու նկատմամբ կրեթի բազմաթիվ բարոյական կորուստներ: Ժողովրդի մեջ քրիստոնեական հավատքը վառ պահելու նպատակով հոգվածներ են տպվում նվիրված քրիստոնեությանն ընդհանրապես, մասնավորապես ազգային առաքելական դավանությանը: Պախարակվում են հավատափոխությունն ու դավանափոխությունը, իբրև ազգային միասնությունը

Հարվածող բացասական երևույթներ: Քննադատվում են օտար միսիոներները, որ ցանկանում են առաքելական Հայերին դավանափոխ անել: Դրսևորելով լայնախոհություն և կրոնական հանդուրժողականություն ըլլող կրօնների և դավանանքների նկատմամբ խմբագիրը միանշանակ պատասխան է տալիս Հայույթյան կրոնական միութիւյան Հարցերին՝ այն դիտելով իբրև ազգային միասնութիւյան կարևոր գործոն:

Մի առանձին բաժին են կազմում Ռուսաստանին, նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականութիւյանը, Համաշխարհային քաղաքակրթութիւյան ասպարեզում նրա խաղացած դերին, ռուսական մշակույթին, մամուլին և զբաղանութիւյանը նվիրված հոդվածները: Դրանց մեծ մասը խմբագրական հոդվածներ են, որոնք զբվել են սկզբում Ա. Արփիարյանի, ապա Բ. Քեչյանի կողմից: Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրութիւյունն ունեն իր պատճառները: Հայ ժողովրդի մի ստվար մասն ապրում էր այդ լայնածավալ կայսրութիւյան տարածքում, հետևապես, նրա վարած քաղաքականութիւյան ելևէջները ամեն դեպքում պետք է շոշափեին Հարազատ ժողովրդի մի Հատվածի շահերը: Այդ դիրքերից էլ քննադատվում էր ցարական կառավարութիւյան քաղաքականութիւյունը Հայ եկեղեցու իրավունքների սահմանափակման ուղղութիւյամբ, մատնանշվում ցարական բյուրոկրատիայի ստեղծած «Պոլոժենիայի» հակահայկական բնույթը: Առանձնապես շահագրգիռ խոսակցութիւյուն է ծավալվում ցարիզմի կողմից 1884 թ. փետրվարի 14-ին ընդունված օրենքի առթիվ, ըստ որի Հայ ծխական դպրոցները պետք է ենթարկվին ցարական լուսավորութիւյան նախարարութիւյանը: Այդ գործողութիւյունը ենթադրում էր Հայկական դպրոցների գոյութիւյանն սպառնացող իրական վտանգ: Խմբագիրը խարաղանում էր ազգային փոքրամասնութիւյան հոգևոր ոլորտին Հասցրած այդ Հարվածը:

Մեծ հետաքրքրութիւյամբ են ընթերցվում ռուս մամուլին և ցարական զբաղննութիւյանը նվիրված հոդվածները: Ռուսական մշակույթին լավատեղյակ Արփիարյանը մեկուսմեկ թվարկում է ռուս զբաղանութիւյան առաջադեմ գործիչներին Ռադիչչևից սկսած. «ԺԸ դարու ազատ և մարդասեր գաղափարաց արձագանքն եղան Ռուսիո մեջ, ռուս լրագրապետաց և զբաղիտաց բաժին եղած են միշտ աքսոր ի Սիպերիա, արտաքսում և կախաղան» (1884, №224): Տուրգենևը բանտարկվեց, ապա արտաքսվեց, Դոստոևսկին 10 տարի դատապարտվեց, Չերնիշևսկին և Միխայլովը պատժվեցին և աքսորվեցին: Ռուս մամուլը գտնվում է երկաթե մամլիչի տակ: Արևելյան Հայաստանին

քաջածանոթ Արփիարյանը խորամուխ է եղել ռուսական մամուլի, ռուս լրագրողների և մտավորականության գործադրած ջանքերին, իրենց գործունեությունը ծավալելու, ընթերցողների հետ կապ հաստատելու, ահափոր գրաքննության պայմաններում իրենց գաղափարները պրոպագանդելու ձևերին: «Ռուս լրագիրք զորավորին դեմ տկարին զենքը կհանեն – խորամանկություն: Այս լրագրաց խմբագիրներուն և ընթերցողներուն միջև գաղտնի հասկացողություն մը հաստատված է: Ընթերցողք տող ընդ մեջ կարդալով կիմանան իրենց խմբագրաց բուն միտքն» (1884, № 226): Խմբագիրը դատապարտում է ցարական կառավարության գաղութացման քաղաքականությունը Ուկրաինայի նկատմամբ գտնելով, որ վերջինս պատերազմով նվաճված երկիր կամ պարտված ժողովուրդ է, դրա համար էլ պայքարում է մեծապետական քաղաքականության դեմ, առաջադրում տեղական ինքնուրույնության պահանջներ իրենց «ցեղային հատկանիշները» անկորուստ պահպանելու համար:

Տարբեր առիթներով քննադատվում է ռուսական կառավարության քաղաքականությունը նաև Ֆինլանդիայի և Լեհաստանի նկատմամբ: Սակայն ցարական կառավարության ազգային քաղաքականությունը քննադատելով հանդերձ, խմբագիրը գնահատում է Ռուսաստանի պատմական առաքելությունը մատնանշելով նրան իբրև մի երկիր, որի միջոցով եվրոպական քաղաքակրթությունը պետք է տարածվի աշխարհի ամենահին ու ընդարձակ մասը Ասիայի վրա: Հեղինակը գտնում է, որ անխուսափելի է ռուս ժողովրդի ազատագրումը, և ճորտերի ազատագրումից հետո ակնկալում է «երկրորդ և մեծագույն ազատագրումը մի ժողովրդի», որի «ձիրքերն ու առաքինությունները գերակշռում են թերուկություններին» (1888, №1368): Թերթում բարձր գնահատականի է արժանանում ռուսական մշակույթը, մասնավանդ գրականությունը: Ե՛վ խմբագիրը, և՛ թղթակիցները մի քանի անգամ անդրադառնում են ռուս գրականության հսկաներից մեկի՝ Լև Տոլստոյի ստեղծագործությանը: Տարբեր առիթներով գնահատվում են նաև ռուս երաժշտության հանճարները, մասնավորապես Պյոտր Զայկովսկին:

Թեմատիկ առումով առանձնանում են այն հոդվածները, որոնք նվիրված են կնոջ իրավահավասարությանը, հասարակության մեջ նրա ունեցած դերին, ընտանիքի ամրություններին: Հարցի ընդհանուր քննարկումից հետո խմբագիրը խոսքը որոշակիացնում է ազգության մեջ հայ կնոջ ունեցած դերի վերաբերյալ: Նշելով մեր անցած բազմադարյան գոյապայքարի ու-

դին խմբագրական հոդվածում հեղինակը դնահատում է հայ կնոջը, իբրև ազգի պաշտպանությունից պատվար. «Մեր պատմությունը՝ անցյալ, թե ներկա, ցույց կուտա, թե հայ կինը միշտ կենսական պաշտոն մը ստանձնած է հայ ազգի պաշտպանության մեջ... Մարտիրոս մը, որ յուր արյունովը կանուցանե յուր ազգը» (1884, №15): Հոդվածագիրը իր ժամանակի հրամայականն է համարում կրթիկ և լուսավորիկ հայ կնոջը, քանի որ նա է նոր սերնդի առաջին ընական դաստիարակը: Եթե Կ. Պոլսում իզական սեռի հայ ներկայացուցիչները փոքրիշատե հնարավորություն ունեին դպրոց հաճախելու, ապա Արևմտյան Հայաստանի տարածքում մատների վրա կարելի էր հաշվել իզական վարժարանները: Դրա համար էլ խմբագիրը գովեստով և դոհունակությամբ է խոսում Կ. Պոլսում ստեղծված «Ազգանվեր Հայուհյաց» և «Դպրոցասեր տիկնանց» ընկերությունների գործունեություն մասին, որոնք նպատակ էին դրել ամեն գնով սատարել իզական վարժարանների ստեղծմանը հայ գավառներում: Հոդվածներ են նվիրվում այդ ընկերություններին: Խմբագրից բացի այդ թեմայով հանդես են գալիս Եղիշե վարդապետ Այվազյանը, Արփիար Արփիարյանը, Մելքոն Կյուրճյանը, պատմում գավառներում նրանց կողմից բացած դպրոցների մասին: Համեմատելով մայրաքաղաքի և գավառի հայ կանանց՝ խմբագիրը և գավառական թղթակիցները նախապատվությունը տալիս են գավառի հայ կնոջը, որն իր ամուսնուն պանդխտությունից ճանապարհհեռուց հետո, ինքը միայնակ սնուցում է իր գավառիներին՝ փոխարինելով նաև հորը: Հայ կինը մեծ առաքելություն ունի կատարելու, ընտանիքը ամուր է նրա շնորհիվ: Խմբագիրը խարազանում է պոլսեցի քաղքենի հայ կանանց, որ իրենց գավառիներին զրկում են հայեցի դաստիարակությունից, նրանց տալիս օտարալեզու դպրոցներ, կտրում ազգային արմատներից: Դրան հակառակ գավառահայ կինը ազգային ավանդությունների պահպանն է, ուրեմն՝ կրթական, լուսավորական նպատակներ հետապնդող ընկերությունները պետք է մեծ աշխատանք կատարեն նաև մայրաքաղաքի կանանց շրջանում: Այդ միտումով «Արևելքը» ընթերցողներին պարբերաբար ծանոթացնում է Կ. Պոլսի արժանավոր հայ կանանց գործունեությանը (Եղիսաբեթ Յուսուֆյան, Նազլը Վահան (Ս. Տյուսաբի մայրը) և ուրիշներ): Մի քանի անգամ հոդված է տպվում Գայանե Մատակյանի ազգանվեր գործունեության, նրա բացած առաջին մանկապարտեզ-ծաղկոցի մասին: Թերթը բարձրացնում է կնոջը տղամարդուց տնտեսապես անկախ դարձնելու հարցը: Հետամուտ բուրժուական լուսավորության իր ծրագրերին՝ թերթը պահան-

ըում էր շեշտը դնել առանձնապես ազբատ աղջիկների կրթության վրա, որպեսզի վերջիններս իրենց աշխատանքով կարողանան գրամօժիտ վաստակել Հաջողությամբ ամուսնանալու Համար, քանի որ քաղաքացի կնոջը դրամ էր պետք ամուսնանալու: Իսկ գավառում կատարվում էր Հակասակը, երբ ամուսնանալու Համար սիեսան պետք է ծանր «պաշլբի» կամ «ղալան» վճարեր աղջկա ծնողներին: Երկու երևույթներն էլ Հավասարապես բացասաբար էին անդրադառնում ազգության ընտանեկան կյանքի, աճի և թվաքանակի վրա: Այդ երևույթը իր վրա է դամում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ուշադրությունը, որը շրջաբերական է ուղարկում գավառի Հոգևոր առաջնորդներին ամուսնական Հարցերը տեղում կանոնավորելու Համար: Թերթը քննադատում է պատրիարքարանին, Հոգվածաշար նվիրում այդ շրջաբերականին և դիտողություն անում, որ նման կիսակտուր միջոցներով ընտանիքի ամբողջական Հարցերը չեն վճռվում: Պատրիարքարանին քննադատելով Հանդերձ, ամուսնական խնդիրները լուծող մարմինը Թերթը Համարում էր Հենց նրան կամ տեղերի եկեղեցական իշխանություններին:

Առանձին բաժին են կազմում այն Հոդվածները, որոնք վերաբերում են կրթության և լուսավորության Հարցերին: Թերթը պարբերաբար Հոդվածներ է տպել նվիրված արևմտահայ մշակութային, կրթական ընկերություններին: Առանձնապես շատ են «Միացյալ ընկերությունների» մասին Հոդվածները, որոնք ունեն տեղեկատվական բնույթ և միաժամանակ բարձրացնում են կրթության ու լուսավորության Հրատապ խնդիրներ: «Միացյալ ընկերությունների» ստեղծումը Համընկնում է 80-ականների սկզբին, իսկ 1884-ին, երբ սկսվում է Հրատարակվել «Արևելքը», Համընդհանուր ոգևորությունը տեղատվություն էր ապրում: Թերթը Հաճախ անդրադառնում է «Միացյալի» տարեկան Հաշվետվություններին, տարբեր վայրերում նրանց բացած ուսումնարանների կացությունը, կրթական ընկերությունների «Միացյալի», «Դպրոցասեր տիկանցի», «Ազգանվեր Հայուհյացի» Հարաբերություններին: Արևմտահայության կրթական Հոգսերը Հոգացող կենտրոնական այդ ընկերություններից բացի գավառներում ստեղծվել էին մշակութային, կրթական զանազան ընկերություններ. Խարբերդի և Աֆիոն-Գարահիսարի Սմբատյան ընկերությունները, Ամասիայի «Դպրոցասիրացը» և այլն: Խմբագիրը իբրև Հրատապ Հարց բարձրացնում է գավառները միջնակարգ դպրոցներով ապահովելու խնդիրը, որպեսզի միջնակարգ կրթություն ստա-

նալու Համար Հայ երիտասարդը գավառից չմեկնենր Կ. Պոլիս: Դա կարող էր գեթ մի փոքր պանդխտութիւն կոչվող ահապոր չարիքի դեմն առնել:

Ըստ խմբագրի, չի կարելի թույլ տալ, որ գավառը զրկվի Ֆիզիկական ուժից և «մտավոր կորովից»: Գավառահայութեան կրթութեան խնդիրը պետք է հուզի անմիջապէս գավառացիներին: Ամեն գավառ պարտավոր է բացել իր մշտական գործող դպրոցը և ապահովել ուսուցչական կադրերով: Իսկ Կ. Պոլսից եկած կրթական օգնութիւնը «լոկ խմոր մ'է գավառացի ժողովուրդը խմորելու Համար ազգային նախակրթութեամբ»: Գավառը պետք է դառնա Հայութեան ազգային Հատկանիշներ, Հայեցի կրթութեան և Հայ ապրելու կենտրոն:

Քննարկելով դպրոցական ծրագրերի, միասնական դասագրքերի խնդիրը, խմբագրին հուզում էր նաև դպրոցների բարելավման Հարցերը, նա պահանջում էր ծեծի անհապաղ վերացում, պատժական միջոցների արգելում, երեխայի ներդաշնակ զարգացում: Խմբագիրն առաջարկում է Հետեւել եվրոպական, առավելապէս Ֆրանսիական դպրոցներին, ուր դասավանդվող կարևոր առարկաների թվին էր պատկանում մարմնամարզութիւնը: Կարևոր է Համարվում արհեստների ուսուցումը ևս: Խմբագիրը պահանջ է դնում դպրոցների տնօրէնների առջև Հետեւել Սանասարյան վարժարանի օրինակին, Հասնել այն բանին, որ յուրաքանչյուր շրջանավարտ սան տիրապետի որևէ արհեստի: Առաջ էր քաշվում նաև արհեստագործական վարժարան բացելու Հարցը:

Բոլոր դպրոցները Համար դաստիարակութեան անհրաժեշտ նախապայմանը ուսուցումը անխառն Հայերենով վարելն էր: Քննադատվում էին մարաքաղաքի դպրոցները, ուր երբեմն խեղաթուրվում էր Հայերենը: Արևմտյան Հայաստանի տարածքում դտնվող դպրոցներում ավելի անաղարտ էր պահպանվում մայրենին: Այնտեղ ավելի վառ ու կենդանի էին ազգային ավանդույթները: Հարց էր բարձրացվում դպրոցներում դասավանդման առարկա դարձնել Հայ ժողովրդական երգը: Իրավացիորեն քննադատվում էր, որ արևելահայ և արևմտահայ դպրոցները «այս Հարցը բարձրիթողի են արել և երգը տակավին վերջին տեղն է բռնում»: Մինչդեռ երգը ազգային ոգու պահպանման կարևոր գործոններից է:

Դպրոցների վիճակը բարելավելու ամենաճիշտ ուղին ուսուցչական կադրերի մակարդակի բարձրացումն էր: Սակայն դա կարող էր իրականանալ ուսուցիչների սոցիալական վիճակը բարելավելով, նրանց պաշտպանվածու-

թյունը ուժեղացնելով: Այդ նպատակի համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, որոնց խիստ պակասից միշտ տառապել են հայկական դպրոցները: Եվ քանի որ թուրքական կայսրության տարածքում բնակվող Հայությանը, ի թիվս այլ հարկերի, վճարում էր նաև կրթական հարկ, խմբադիրը հարց է բարձրացնում, որ պետական գանձարանը իր բյուջեից միջոցներ տրամադրեր նաև հայկական դպրոցներին: Նա միամտաբար կարծում էր, որ եթե Ազգային ժողովը կամ պատրիարքարանը այդ հարցը բարձրացնեն կայսերական կառավարության առջև, ապա հայկական դպրոցների ծախսերը կհոգա թուրք պետությունը (1884, №184): Մինչդեռ Հենց 80-ականներին կեսերից է սկսվում թուրքական կառավարության արշավանքը հայկական դպրոցների վրա, ուր, ի թիվս այլ խստությունների, արգելվում էր Հայ ժողովրդի պատմության ուսուցումը:

«Արևելքը» տեղեկատվական բազմաթիվ հոդվածներ է տպում Կ. Պոլսի համարյա բոլոր թաղային վարժարանների, մասնավոր դպրոցների, գալաթական աչքի ընկնող դպրոցների մասին: Գովեստով նշվում և մեծարվում են Հայ ազգային գործիչները, որոնք իրենց նվիրել էին մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործին (Ռ. Պերպերյան, Հ. Գուրգենյան, Գ. Մատակյան, Մ. Սարբյան, Հ. Տուտուխյան և ուրիշներ):

«Արևելքի» խմբագրությունը թերթի հրատարակության բոլոր տարիներին մեծ տեղ է նվիրում գրականության և արվեստի հարցերին: Գրաքննություն սաստկացման պայմաններում, 80-ական թթ., երբ գրքի հրատարակությունը դառնում է գրեթե անհնարին, գեղարվեստական մտքի միակ Հանդրվանը դառնում էին օրաթերթներն ու Հանդեսները: Ա. Արփիարյանի համառ ջանքերով և հոգածությունը «Արևելքի» շուրջն է համախմբվում երիտասարդ շնորհալի գրողների մի բույլ, որը դառնում է 80-ականների արևմտահայ բնախոսական գրականության ստեղծողն ու նրա տեսական դրույթները հիմնավորողը: Արփիարյանից բացի այդ խմբի մեջ էին Տ. Կամսարականը, Լ. Բաշլյանը, Մ. Կյուրճյանը, Հ. Ասատուրը, Գ. Ջոհրապը և ուրիշներ: Արփիարյանը ղեկավարում էր թերթի գրական բաժինը: Նրա գրչին են պատկանում «Օրվան կյանքը» ընդհանուր խորագրերը կրող քրոնիկները ստորագրված «Հրազդան» ծածկանունով, որոնք աչքի էին ընկնում մեծ նպատակասլացություններ, գրականության, արվեստի նորույթները պնակա-



տելու, արժեքավորելու, հրատապ հարցեր բարձրացնելու ձգտումով ու խան-  
դով:

Մինչև 80-ականները արևմտահայ գրական ասպարեզում իշխողը դասա-  
կան և ուսմանտիկ ուղղություն էր: Վերը հիշված գրողները գրեցին կյանքը  
գրականություն չունեցող գարձնելու հրամայական պահանջը պայքարելով այն  
տեսարանների դեմ, որոնց համար գրականությունը պետք է ունենար ոչ թե  
ճանաչողական արժեք, այլ դառնար ժամանցի առարկա, մխիթարեր հուսա-  
հատ հոգիներին: Կյանքի բազմակողմանի ճանաչումը և նրա վերափոխմանը  
նպաստելը պետք է դառնար գրականության հիմնական խնդիրը: 80-ական-  
ների գրական նոր սերունդը գրողի հիմնական պարտքն էր համարում բոլոր  
ուժերը ծառայեցնել կյանքի առաջընթացին: Գրողից պահանջվում էր կյանքը  
նկարագրել այնպես, ինչպես այն կար, իր ողջ բազմազանությունը, ընդ որում  
ամենից առավ հանձնարարվում էր բացահայտել ժողովրդի ամենափոքր, բայց  
կարևորագույն բջի՛ ընտանիքի բարքերի անկման պատճառները: «Թող Հայ  
վիպասանները... իրենց դուժբիշ գրիչներով ներկայացնեն մեզ մեր ընտանե-  
կան վիճակը յուր բոլոր իսկություն մեջ: Թող Հոշոտեն մեր սրտերը, բայց Հե-  
ղափոխեն մեր բարքերը» (1884, №39): Արփիարյանը քննադատում էր ժամա-  
նակի կին գրողների, մասնավորապես Ս. Տյուսարի ստեղծագործությունները,  
որոնց հատկանիշը նրբությունն ու փափկությունն էր, մինչդեռ, ըստ նրա,  
«գրականություն մը Ղիղերու կարոտ է, կորովի պետք ունի, որ զորանա և զո-  
րացնե ժողովրդին միտքն ու հոգին, կին հեղինակները չեն կարող բնականա-  
բար դրոշմել մեր գրականության այդ առնական դրոշմը» (1884, №3): Տյու-  
սարի ստեղծագործությունները քննադատվում են նաև մի այլ տեսանկյու-  
նից: Նշվում է, որ Տյուսարն իր ստեղծագործություններում հուզում է Հայ  
կնոջ ազատագրության հարցը առանց նրան ճանաչելու: Հայ կնոջ փոխարեն  
նա պաշտպանում է Ֆրանսուհիների դատը, որովհետև ելնում է Ժորժ Սանդի,  
տիկին Սթալի և Դյումա որդու ստեղծագործություններից: Տյուսարը հեռու  
էր Հայ կնոջ հոգսերից, նրա միջավայրից:

Հայացք նետելով արևմտահայ գրականության ամենամյա ձեռքբերում-  
ների վրա՝ Արփիարյանն անդրադառնում է առանձին հեղինակների ստեղծա-  
գործություններին, նշում դրանց դրական և բացասական կողմերը: Ա-  
ռանձնապես սուր քննադատության է ենթարկվում Գ. Զիլինկերյանի  
«Ուղևորություն ի Կ.Պոլիս» ստեղծագործությունը: Նշելով վերջինիս  
ծառայությունները Ֆրանսիական գրականության ընտիր նմուշները արև-

մտահայ ընթերցողին թարգմանաբար ներկայացնելու գործում, Արփիարյանը միաժամանակ դատապարտում է նրան այն բանի համար, որ սեփական ստեղծագործության մեջ չի նկարագրել Հայ ժողովրդի տարրեր խավերի ներկայացուցիչներին: Նրա աչքից վրիպել են ե՛լ Հայ կինը, ե՛լ Հայ երիտասարդությունը, ե՛լ արհեստավորները: Արփիարյանը խնդր է դնում գրականութան հերոս դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին, որոնք կազմում են «ազգութայն սիրտը», նրանք են ոսկերիչ, նավավար, ժամագործ, դերձակ, խանութպան, որոնք «անարգ արարածներ չեն, այլ ողջ Հանրությունը շաղախող հիմնական խմորը»:

Արևմտահայ ռեալիստական գրականության տեսակետից ուշագրավ երևույթ էր Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի հրատարակությունն «Արևելքում», թերթոնի ձևով: Առաջին իսկ հատվածներից այն իր վրա դամեց գրականադեմոստրի ու գրողների ուշագրությունը, իսկ վեպի ավարտից հետո հենց «Արևելքում» սկսեցին լույս տեսնել բազմաթիվ քննադատականներ. Եղիա Տեմիրճիպաշյան, Զատիկ Հայկյան, Հրազդան, Դիմակ, Հակոբ Մեղավորյան, Հրանտ Ասատուր և ուրիշներ: Դրանց պատասխանեց հեղինակը Տիգրան Կամսարականը, որը տվեց ռեալիստական գրականության իր ըմբռնումները՝ սահմանազատվելով նատուրալիստական ուղղությունից. «Իրապաշտությունը կբավականանա Հանապազօրյա կենաց պարզ նկարագրությամբ և չի ջնար յուր հետազոտության մեջ ընկերական շենքին ժահահոտ նկուղներն, ուր կղեգների նյութապաշտությունը... նյութապաշտ դպրոցը հաճախ հրեշ կհամարի մարդն, իրապաշտն հրեշին և հրեշտակին խառնածինը կնկատե զնա, այսինքն իրական մարդն» (1888, №1297):

Երկու համարում շարունակաբար լույս տեսած Հակոբ Մեղավորյանի «Վարժապետին աղջիկին» քննադատներուն առթիվ» Հողվածում հեղինակն ընգծում է անաչառ քննադատության մեծ նշանակությունը գրականության զարգացման համար: «Մշակված քննադատությունը հեղինակի գրչին թուխք կուտա, հայհոյանքը կխամբեցնե զայն, իսկ անմիտ գովեստը կբթացնե: Քննադատությունը միշտ մեծ դեր ունեցած է Հանճարներուն զարգացման գործին մեջ» (1888, №1449): Մեղավորյանը ևս շարադրում է իր սկզբունքները գրականության ռեալիստական ուղղության վերաբերյալ, քննադատում է Ս. Պալասանյանին (Գրիչ), որ «Փորձի» մեջ գրում էր, թե մեր կյանքից վերցրած թեմայով Հնարավոր չէ վեպ գրել, քանի որ մեր կյանքն աղքատ է. «Կյանք ամեն տեղ կա, ճոխ թե աղքատ: Վեպը կենաց պատկերն է,

գրականությունը կենաց պատմությունը: Որչափ գրականությունը իրական կյանքի նմանի, այնչափ Հաջողած կհամարին վեպն: Ուրեմն ամեն կյանքե կարելի է վեպ գրել: Մի՞թե կյանքը վեպ է?» (1884, №1449): Եվ քանի որ «Վարժապետին աղջիկը» արևմտաՀայ գրականության առաջին Հաջողված փորձն էր վիպագրության ասպարեզում, քննադատները բարձր են գնահատում այդ ստեղծագործությունը:

80-ականների արևմտաՀայ գրականության մեջ իշխողը առավելապես նորավեպն էր (նովելը): Այդ ժանրի մեջ անգերազանցելի էր Գր. Զոհրապը: ԱրևմտաՀայ քննադատները ըստ արժանվույն գնահատեցին Զոհրապին նրան Համարելով փառավոր Հայտնություն մեր գրականության Համար:

«Արևելքի» ուշադրության կենտրոնում է նաև արևելահայ գրականությունը: Բարձր է գնահատվում Խ. Աբովյանը, իբրև արևելահայ նոր գրականության և աշխարհաբար լեզվի Հիմնադիր, նշվում է Պ. Պոռչյանի ստեղծագործությունը, իբրև արևելահայ գյուղական կյանքի ռեալիստական արտացոլում: Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, Կ. Տյուրյանը Հանդես են գալիս «Արարատյան գրականություն», «Երևույթներ ռուսաՀայոց գրական կյանքին» ընդհանուր խորագրերը կրող Հոգվածներով, անդրադառնում արևելահայ գրականության զարգացման միտումներին, քննարկում Շիրվանզադեի գործերը, տալիս արևելահայ մամուլի, մասնավորապես «Մշակի» և «Մուրճի» տեսությունը: Հատկանշական է այն խորը Հարդանքն ու ակնածանքը, որ տածում է 80-ականների «Արևելքը» Գրիգոր Արծրունու և նրա «Մշակի» նկատմամբ: Արժեքավորվում է «Մշակի» կատարած դերը արևելահայ Հասարակական կյանքում, այն ներկայացվում իբրև «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի ավանդույթների շարունակող: Սակայն աննախադեպ էր այն ժողովրդականությունը, որ արևմտաՀայերի շրջանում վայելում էր վիպասան Բաֆֆին:

Արփիարյանը Համոզում է խմբագրության անդամներին «Արևելքում» արտատպել Բաֆֆու երկերը, սակայն դա կարող էր պատճառ դառնալ թերթի խափանման: Որպես թերթին, լույս է ընծայվում «Խաչագողի Հիշատակարանը» (1884, №24-155): Քաջալերված Արփիարյանը ձեռնարկում է «Խասասալի մեղիքությունների» տպագրմանը, որը նույնիսկ Արևելյան Հայաստանում Հանդիպել էր մեծ դժվարությունների. «Կովկասու գրաքննությունը արդեն Հաշմած է այդ շատ պատվական երկը: Մենք ալ մեր կարգին կհանդիսանանք ավելի խիստ գրաքննիչ մը. իրավ է, ձեռքերնիս առաջ չհրթար, բայց

դայս կպահանջե անհրաժեշտ հարկը» (1884, № 289): Այդ գործի հրատարակութիւնը արեւմտահայ ընթերցող հասարակայնութեան վրա կարող էր ունենալ հեղափոխիչ դեր, հուշել, թե ոչ շատ վաղ անցյալում հայերն ունեցել են կիսանկախ իշխանութիւններ (մելիքութիւններ), և դրդել վերականգնել դրանք: Կառավարութեան ուշադրութիւնը շեղելու նպատակով «Խամսայի մելիքութիւնները» լույս տեսան վերապատմութեմ ձեռով: Սակայն այն չգրկուեց կառավարութեան ուշադրութիւնից, և արգելից գործի հրատարակութիւնը մինչև վերջ: Բարեբախտաբար, շարադրանքի մեծ մասը արդեն լույս էր տեսել: Մեր թմարկած գրողներից բացի 1880-ական թթ. «Արեւելքի» էջերում իրենց ստեղծագործութիւններն են տպագրում Ա. Չոպանյանը, Հ. Տուտուխյանը, Գ. Կարապետյանը, կին գրողներ Վարսանուշը, Անայիտը և ուրիշներ:

90-ականների սկզբից Արփիարյանը և իր գրական գինակիցները վերջնականապես սահմանադատվում են «Արեւելքից» և առանձնանում «Մասիս» գրական հանդեսում և «Հայրենիք» օրաթերթում: «Արեւելքի» ուղղութիւնը փոխվում է, թերթի շրջադարձը երևում է և գրականութեան նկատմամբ ունեցած վերաբերմունքից, առավել ևս ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ ունեցած դիրքորոշումից: Եթե 80-ականների կեսերին առաջաձոր մտավորականութիւնը ցանկանում էր անգամ գրականութեան ազդեցութեամբ հեղաբեկել մարդկանց մտքերը, կասկած հարուցել օտար լծի հարատեւութեան նկատմամբ, ապա 80-ականների վերջին, երբ այդ խումբը հեռանում է «Արեւելքից», ասպարեզը մնում է Բ. դուան հետ հարաբերութիւնը պաշտպանելու կողմնակից գործիչներին: Դրանց ներկայացուցիչն էր թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը: Դատապարտելով ազգային հեղափոխական ելույթները, վրդովվելով «անխոհեմ» հայերի եվրոպական երկրներում հրատարակած հակաթուրքական հողվածների առթիվ խմբագիրը հույսը կապում է «բարեխնամ սուլթանի» հայանպաստ հայտարարութիւնների հետ գտնելով, որ նա ի վիճակի է երկրում կարգ ու կանոն հաստատել: Հայերը, ըստ խմբագրի, դարեր շարունակ եղել են հավատարիմ հպատակներ, և օսմանյան կառավարութիւնը ի դեմս հայերի տեսել է իր վստահութիւնը վայելող ազգի: Սակայն բազմաթիվ ձեռքարկութիւնները դավաճեցրում, խուզարկութիւնները կարինում, ընդհարումները տեղի հայ բնակչութեան և թուրք ստրկանութեան միջև, մեկ ամիս անց Գում-Գափուի ցույցը Կ. Պոլսում օտարերկրյա դեսպանների աչքի առաջ, ստիպում են Քեչյանին փոխել իր կարծիքը

Արեւմտյան Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերյալ: Տպելով Գուճ-Գափուի ցույցի պաշտոնական զեկուցագիրը Բ. Քեչյանը բանակուիվ է սկսում թուրքական պաշտոնական օրգանների «Միզանի» և «Թուրքիմանը Հազիգաթի» դեմ մատնանշելով, որ Արեւմտյան Հայաստանի դավառներում տարվում է նպատակասլաց հակահայկական քաղաքականութիւն, որը հետապնդում է Հայաստանը Հայերից դատարկելու միտումներ: Թուրքական լրագրերը ժխտում էին Արեւմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու անհրաժեշտութիւնը և, թուրքիան համեմատելով եվրոպական երկրների հետ, փորձում էին ապացուցել, որ միշտ էլ բազմաթիվ ոճրագործութիւններ են կատարվում ինչպես Լոնդոնում և Փարիզում, այնպես էլ ողջ թուրքիայում: Դրան «Արեւելքի» խմբագիրը պատասխանում է, որ հայկական նահանգներում կատարվող ոճրագործութիւնների մեծ մասը ուղղված է ազգութիւնը Հայ մարդկանց դեմ, հետեւապես, դրանք կրում են քաղաքական բնույթ:

Թուրքական թերթերի դեմ դրած Բ. Քեչյանի բազմաթիվ բանավիճային հոդվածները բացահայտում են նրա Հայաքցների տարուբերումները Հայերի ազգային-ազատագրական ձգտումների հարցում: Մի կողմից նա արդարացնում է Հայ ժողովրդի ձգտումը ազգային ինքնութիւնը պահպանելու և իր պատմական հայրենիքում ապրելու հնարավորութիւն ձեռք բերելու համար, մյուս կողմից, ընդվզելով հանդերձ թուրք լրագրողների դեմ, խարաղանում է Հայազգի «անխոհեմ, սակավաթիվ անձանց» քայլերը «օրինականութեան» և «բարեխնամ» սուլթանի դեմ:

Շուտով տեղի է ունենում «Արեւելքի» վարչութիւնի երկփեղկումը, Բ. Քեչյանը դառնում է թերթի խմբագրապետ: Ըստ Արփիարյանի, 1890-ի փետրվարից ի վեր «Արեւելքը» վեր է ամրում զուտ պահպանողական թերթի, զուրկ «որևէ գաղափարից»: Քեչյանի խմբագրութեամբ այն դառնում է դործարար շրջանների թերթ:

1891-ին վերջանում է «Արեւելքի» տիրապետութեան շրջանը: Նրա աջ և ձախ թեքերի պառակտումից ստեղծվում է երկու ուղղութիւն, որոնք իրար հետ մաքառում են «բուռն սաստիկութեամբ»: Նոր ուղղութիւնը համախմբվում է Արփիարյանի շուրջը, որը 1891-ին սկսում է հրատարակել «Հայրենիք» օրաթերթը: Այս դեպքերից հետո «Արեւելքը» աշխատում է այլևս հանդրադառնալ ազգային խռովահույզ իրադարձութիւնների նկարագրութեանը, հաստատ պահել «հավատարիմ հպատակի» իր համարումը:

Սակայն 4-5 տարի անց, 1894-ի վերջերից, Սասունի ինքնապաշտպանական ելույթների և 1895-1896 թթ. Հայկական կոտորածների ընթացքում դարձյալ նկատվում է որոշ շեղում: Այս անգամ մայրաքաղաքի Հայությանը Հազոր-դակից դարձնելով Թուրքական «Իգտամ», «Սապահ» և «Թերճիմանը Հազոր-գաթ» թերթերում Հայկական Հարցին նվիրված Հոդվածներին, ուր թուրք խմբագիրները Հարձակվում էին «Հայերի ինքնավարության ձգտումներին» վրա, զրպարտություն էին Համարում եվրոպական թղթակիցների Հոդվածները Հայկական կոտորածների վերաբերյալ, Բ. Քեչյանը էջը ցանկանում տալ իր դիրքորոշումը, Թուրքական թերթերի Հազորագրությունների օգնությամբ նա ընթերցողին Հազորում էր իրադարձություններ և փաստեր: Թերթը Հրատարակում էր նաև կառավարության պաշտոնական դեկլարացիան, ուր Հազորում էր, թե գավառների Հայությունը շնորհակալություն է Հայտնում Բ. դռանը «Հանրային ապահովությունը» վերականգնելու Համար: Դրանից անուղղակիորեն Հասկացվում էր, որ կառավարությունը ճնշել է գավառներում ծագած շարժումները: Եվ Հատկանշական է, որ այդ «շնորհակալագրերը» Հղում էր այն վայրերի բնակչությունը, ուր թուրքական կառավարության կազմակերպած Հայկական կոտորածներին ի պատասխան, Հետևել էին ինքնապաշտպանական մարտեր Զեյթուն, Վան, Ուրֆա, Բիթլիս (Սասուն), Ամասիա, Քոթաշիա, Խարբերդ և այլն: Շնորհակալագրերի Հետ միասին նշվում էր, որ կառավարությունը «խաղաղությունը» Հաստատելու Համար ստիպված ձերբակալել է խռովարար Հայերին, որոնց պատժաչափը պետք է որոշեր Թուրքական դատարանը:

Օրավուր ահազնացող գրաքննության պայմաններում բնական է թերթի այդ «օբյեկտիվ» վերաբերմունքը Հայկական խնդրի և ազատագրական շարժումների նկատմամբ: Արփիարյանի «Հայրենիքը», որ էջը ցանկանում խեղդվել երկաթե ճիրաններում, Համարյա ամեն ամիս դադարման Հրաման էր ստանում: Իրադրությունը երկրում շիկանալուն զուգընթաց դժվարանում էր նաև «Արևելքի» Հրատարակության գործը: 1896-ին «Բանկ Օտոմանի» գրավումից Հետո ոստիկանությունը ցանկացավ իր կողմից պատվիրած Հոդվածներով խեղաթյուրված ներկայացնել դեպքի պատճառները, սակայն Բ. Քեչյանը մերժեց այդ առաջարկը, և գրավումից Հետո 8-9 օր թերթը էՀրատարակվեց, որպեսզի խուսափի դադարման Հրաման ստանալուց: Հայկական այն թերթերը, որոնք այդ օրերին շարունակում էին Հրատարակվել, թուրքա-

կան գրաքննության կողմից արգելվեցին, հրապարակի վրա մնաց միայն Հայաստան թուրքերեն «Ճերիտեի շարգիեն»:

1896-ի աշնանից «Արևելքը» չի հրատարակվում: Բյուզանդ Բեչյանին մեծ դժվարությամբ հաջողվում է արտոնություն ստանալ և հրատարակել «Բյուզանդիոնը»: 1898-ին գրաքննությունը թույլ է տալիս շարունակել «Արևելքի» հրատարակությունը, սակայն իր գոյությունը մինչև 1912 թ. մի կերպ շարունակած թերթը բոլորովին նման չէր 80-ականների «Արևելքին»: Այն լիովին կորցնում է դեմոկրատական ավանդույթները, մնում իբրև խիստ պահպանողական մի օրգան, որի համար հաճախ վրդովեցնող և անհանգստացնող էին անգամ պատրիարքարանի ձեռնարկումները:

1898-1906 թթ. թերթի արտոնատերը շարունակում է մնալ Ստ. Տամատյանը, հերթով խմբագրապետ են դառնում Լ. Բաշայանը, Զ. Յուսուֆյանը, Վ. Թեքեյանը: 1900-ից թերթի տնօրեն է դառնում Գարեգին Պոյաճյանը: Երիտթուրքերի հեղափոխությունից հետո թերթն ապրում է մի փոքր աշխուժացում, իսկ 1910-ից դարձյալ սկսվում են հալածանքներն ու հետապնդումները: 1911-ին թերթը մի քանի անգամ փոխում է իր անվանումը. «Լուսին», «Պայքար», «Լրաբեր», «Չեղոք» (անվանումներն էլ արտահայտում են իրենց բովանդակությունը): 1912 թ. լիովին դադարում է թերթի հրատարակությունը:

### «ՅԱՅՐԵՆԻՔ» (1891-1896)

1890-ական թթ. արևմտահայ ամենաժողովրդական հրատարակությունը Ա. Արփիարյանի և Հ. Շահնազարի խմբագրությամբ ու արտոնատիրությունը լույս տեսնող «Հայրենիք» օրաթերթն էր:

«Հայրենիքին» աշխատակցում էին «Մասիսի» հանրահայտ դեմքերը Գր. Զոհրապը, Լ. Բաշայանը, Մ. Կյուրճյանը, Տ. Կամսարականը, նաև նոր աշխատակիցներ Ե. Օտյանը, Ա. Չոպանյանը, Սիպիլը, Ա. Հարությունյանը, Աղ. Փանոսյանը և ուրիշներ: Իր անկախությամբ ու հասարակական իրողությունների վերաբերյալ թարմ ու նորովի վերլուծություններով այս օրաթերթը մեծապես նպաստեց արևմտահայ հասարակական կարծիքի ձևավորմանը: Թերթը գործնական մարմնավորում տվեց Թիֆլիսի առաջավոր Հայ դործիչների հետ արևմտահայ մտավորականության կապերին: Կ. Պոլսի հետ «Մշակի» հաստատած հարաբերությունները կենտրոնանում էին «Հայրենիքի» խմբագրատանը: Մոտ լինելով «Մշակին» ու նրա դործիչներին, մաս-

նավորապես արծրունիական սկզբունքներին՝ «Հայրենիքը» այդ թերթից արել է արտատպութուններ, ըստ Հնարավորին ներկայացրել արևելահայ իրականությունը, մշակույթն ու գրականությունը: Ա. Արփիարյանի թերթը շարունակում և լայն հուն էր բացում 1880-ական թթ. դեմոկրատական Հրապարակախոսության ու գրական-գեղարվեստական ամսագրությունների զարգացման համար: Այն նոր որակ էր թուրքերայում Հրատարակվող մամուլի պատմության մեջ Հասարակական կյանքի ու շարժումների հետ ունեցած իր լայն կապերով և, անշուշտ, համազգային բովանդակությամբ: Թաքուն կամ ակնառու համակրանք հայտնելով սոցիալիստական գաղափարների հանդեպ թերթը սոցիալական ու Հասարակական Հարաբերությունների, արտագրություն, բաշխման ու սպառման արդարացիությունը հետամուտ պաշտպանում էր գավառի և քաղաքի աշխատավորության շահերը: Այսպիսի ուղեգիծը ցայտուն է երևում «ապարանքի և խրճիթի», Հասարակ մարդկանց ու վերնախավի կտրուկ հակադրումներով և բացահայտ համակրանքով վերջինիս նկատմամբ: Իր բազմաթիվ խմբագրականներում Արփիարյանը հանդես էր գալիս «հավասարության և ուսմակարական ոգու» սկզբունքների պաշտպանությամբ: Իր գրչակիցների հետ նա առաջ էր քաշում մտավոր մշակույթը ժողովրդին ծառայեցնելու գաղափարը և խիստ քննադատության ենթարկում ազգային վերնախավի եսակենտրոն ձգտումներն ու կեցվածքը: Հասարակական ու սոցիալական կյանքի փոփոխությունները թերթը կապում էր ազգային իրականության բոլոր ոլորտների վարչական մարմինների, եկեղեցու և լուսավորական հիմնարկների, ազգային տնտեսության երկրագործություն, առևտրի ու արհեստների, արտադրության բարեփոխումների հետ: Որպես այդ բարեփոխմանը նպաստող ուժ, «Հայրենիքը» առաջարկում էր նշված բոլոր ասպարեզների վրա Հասարակական կարծիքի վերահսկողություն գաղափարը: «Մենք կհավատանք, - գրում էր թերթը, - թե մեր բոլոր գրածները իրենց արդյունքը պիտի ունենան, մենք կհավատանք, թե պարապ տեղը չենք գրեր: Բայց կհավատանք նաև, թե համբերող ըլլալու ենք» (1892, 28 դեկտեմբերի): «Հայրենիքը» արևմտահայոց մեջ շարունակում էր «Արևելքի» 80-ականի իսկական արժեքները և ամենից առաջ Հասարակության իրատես ուսումնասիրման խնդիրը՝ այս ասպարեզում ուսանելի համարելով ուսու և Ֆրանսիական մամուլի ու Հրապարակախոսության կուտակած փորձը: Հասարակության տարբեր խավերի, նրանց բարքերի ու բարոյականության, բնավորության ու սովորությունների, կենցաղի և այլնի մանրամասն զննու-



թյունը Հնարավորութուն պետք է տար խորամուխ լինելու ժողովրդի իրական կացությանը, «ճշտագույն ծանոթություններ» ձեռք բերել նրա մասին, ինչպես նկատում էր Լ. Բաշալյանը (1892, 24 սեպտեմբերի): Ընդ որում, «Հայրենիքը» շատ կարևոր նշանակություն էր վերապահում ուղղամիտ ու շիտակ քննադատական խոսքին, որի անկողմնակալությունը պետք է սնուցվեր ժողովրդի շահերի գիտակցությունից: Այս էր պատճառը, որ ազգային մարմինների քննադատությամբ Հանդես եկող «Հայրենիք» հրատարակախոսները ակնկալում էին իրենց քննադատության գործնական արդյունքները: Որոշ դեպքերում դա Հաջողվում էր: Այսպես, թերթի քննադատությունը նպաստեց Կ. Պոլսի Ազգային Հիվանդանոցի և Դատաստանական խորհրդի գործունեության բարելավմանը, արձագանք էին գտնում դավառական մարմինների ու առաջնորդների Հասցեին թերթի քննադատական ելույթները և այլն: Ազգային կյանքի, մշակույթի, օսմանյան Հպատակության մեջ գտնվող ազգի ապագայի Հեռանկարները շատ քողարկված կերպով կապելով սոցիալիստական Հեռավոր նպատակների Հետ «Հայրենիքը» առաջնայինն ու կարևորը Համարում էր ազգի ժողովրդավարական ուժերի Հասունացումը, ազգային շարժման Համար մտքերի նախապատրաստումը: Այստեղից էր ծայր առնում ինքնաճանաչողության, ժողովրդական կյանքի Հետազոտության, նրա առաջընթացը խանգարող արգելքների բացահայտման այն կրքոտ ձգտումը, որ ամենուրեք նկատելի է «Հայրենիքի» հրատարակախոսության մեջ: Այս պատճառով է նաև, որ թերթի առաջատար թեմաներից էր Արևմտահայաստանն ու Հայ բնակչությունը: «Հայրենիքը» սկզբից իսկ պնդում էր, որ անհրաժեշտ է իր նյութերից «մեծ մաս մը տալ դավառացիներու կյանքին» և որ մշտապես պետք է շարունակել այդ Հիմնական ուղղությունը (1891, 15 Հոկտեմբերի):

Ի տարբերություն մյուս թերթերի գավառական թղթակցությունների, «Հայրենիքը» փորձում էր վերհանել գավառի կացությունը պայմանավորող էական պատճառներն ու Հանգամանքները: Գավառական թղթակցությունները արդյունավետ կլինեին, գրում էր «Հայրենիքը», եթե դրանց Հեղինակները «նախապաշարյալ գաղափարները ջնջելու Համար Հողմածներ գրեն. կրթութունը ծավալելու Համար իրենց Հայրենակցացը այլևայլ միջոցներ ցույց տային» (1891, 19 օգոստոսի): Արևմտահայաստանում Հայության վիճակի, իրավազրկության ու ծանր կենսապայմանների նկարագրություններով թերթը անուղղակիորեն Հասարակական ակտիվությամբ էր Համակում իր

ընթերցողներին: Արժեքավոր են, մասնավորապես, «Հայրենիքի» տնտեսական բնույթի հոդվածները, լրջամիտ վերլուծություններն ու եզրակացությունները Արևմտահայաստանի տարբեր շրջանների հայ բնակչության, նրա սոցիալական դրույթյան ու առօրյայի մասին: Նրա էջերում բազմաթիվ հոդվածներ կան նվիրված Վանի, Մուշի, Սեբաստիայի, Կիլիկիայի, Խարբերդի և բազմաթիվ այլ վայրերի հայության դրույթյանը, որի կայունությունը էր թերթը պայմանավորում Հայ Հայրենիքի գոյությունը:

«Հայրենիքը» գավառի տնտեսական վիճակը մեղմելու ամբողջական ծրագիր չի ունեցել. նրա պատկերացումները Հիմնականում ձևավորված էին եվրոպական առաջավոր տնտեսական վերափոխումների, տնտեսագիտական և տնտեսավարության արդիական մեթոդների (Շուլցե-Դեյլիչ) արևմտահայ իրականությանը Հարմարեցնելու, ազգային բարոյականությունը և գրան առնչվող Հաստատությունները բարեփոխելու ձգտումների վրա: Ոչ մի ակնկալիք չուներ նաև օսմանյան պետության ազդարային քաղաքականությունից «Հայրենիքը» Հուլիսի էր կապում Հայ գյուղի դրամաֆինանսական կայունացումն ապահովող փոխօգնության, վարկատու և այլ ընկերությունների կազմակերպված ու նպատակալաց գործունեության հետ: Թերթը ուշադրություն էր դարձնում նաև գավառի ու քաղաքի արհեստավորությանը, մասնավորապես գավառներում արհեստագործության անկմանը: Նրա հեղինակներից Տ. Արալանյանը Հայ արհեստավորների տնտեսական մեկուսացածությանը և անկայուն վիճակին վերջ տալու նպատակով, կոչ էր անում կազմել արհեստագործական ընկերություններ, հետևել մայրաքաղաքում արդեն կազմակերպված և գործող եվրոպական արհեստագործական ընկերակցություններին (1891, 26 փետրվարի): Ազգի նյութական և բարոյական վիճակի բարեփոխման, գավառին էական նյութական ու մտավոր օգնություն ցուցաբերելու Հարցում Արփիարյանը կարևոր էր համարում ազգային ընկերությունների գործունեությունը: Հայտնի է նրա համագործակցությունը Գր. Արծրունու հետ «Հայրենիքի» Հրատարակությունից դեռ շատ առաջ, մասնավորապես «Միացյալ» ընկերության գործունեության ասպարեզում: 1890-ականին ևս Արփիարյանը «Հայրենիքում» տպագրած իր նյութերով խրախուսել, ինչպես և բարոյական օգնություն է ցուցաբերել կրթական ու բարեգործական ընկերություններին:

Գավառական իրականության հոգսերը թեթևացնելու կարևոր գործոններից մեկը «Հայրենիքը» համարում էր կղերի գործունեության բարելավման

խնդիրը: Կ. Պոլսի կրոնական ժողովի անգործունակության քննադատությունը Արփիարյանը առիթ էր դարձնում նաև թուրքական իշխանությունների՝ դավառներում վայրագությունների հանդեպ անտարբեր և ապախրախուսող վերաբերմունքը բացահայտելու համար: Թերթն ի ցույց էր դնում կրոնական իշխանությունների թուլությունն ու անհոգությունը՝ դավառներում բռնություններին չընդդիմանալու փաստերից ելնելով: Թերթի կարծիքով, եկեղեցու ազգանվեր գործունեությունը կարող էր դավառը մի որոշ չափով փրկել անարդարություններից ու հարստահարություններից: Կանգ չառնելով որևէ հեղինակության առջև «Հայրենիքը» խստիվ քննադատության էր ենթարկում պատրիարքին, կրոնական ժողովի անդամներին, դավառական անգործունյա առաջնորդներին և այլն:

Մի հայտնի չափով Արևմտահայաստանի նյութական դրություն բարվոքման հույսերը «Հայրենիքը» առնչում էր ազգային բուրժուազիայի գործունեության հետ: Ուշագրավ է «Այտրնի կուսակալություն» վերնագրով վիճակագրական ընդարձակ լրատվությունը՝ քաղված պաշտոնական տարեցույցից (1891–1892 թթ.), որտեղ տեղեկություններ են տրվում վիլայեթի բնակչի մայական պայմանների, տարածքի, բնակչության, ֆինանսական դրության, տուրքերի ու հարկերի, զբաղվածության և այլնի վերաբերյալ: Կ. Պոլսը և Ջմյուռնիան հայ առևտրականության գործունեության առավել լայն ասպարեզներն էին թուրքիայում, ուստի «Հայրենիքը» հատուկ ուշադրություն էր դարձնում այդ քաղաքներում գործող հայազգի առևտրականների տնտեսական գործունեությանը և դրա հեռանկարայնությանը: «Հայրենիքը» կտրուկ քննադատության է ենթարկում հայ առևտրականության գործելակերպի արևելյան հետամնաց մեթոդները, նեղ ասպարեզն ու առանձնացածությունը: «Մեր դրամատերերը» հողվածում հայ առևտրականներին խորհուրդ է տրվում դիմել նոր, առաջավոր մեթոդներին՝ ձեռնարկատիրությանը և ընկերությունների մեջ միավորվելուն: Իրենց մեկուսի կեցվածքով, անհատական ասպարեզի մեջ անընդհատ գործելու միօրինակությամբ զմյուռնացի դրամատերերը, նկատում էր «Հայրենիքը», կամովին եվրոպացիներին են հանձնել կապիտալի շրջանառության առավել արդյունավետ ասպարեզները: Նրանք, գրում էր թերթը, «ավանդական աֆիոնի կամ մանիֆաթուրայի գործեն մազ մը իսկ չեն շեղիր» (1892, 18 փետրվարի): Տեղում արտադրանքի կազմակերպումը թերթը շատ ավելի բարձր է գնահատում, քան միջնորդի սահմանափակ դերը:

Լինելով ազգի դեմոկրատական ուժերի խոհերի արտահայտիչը «Հայրենիքը» ժողովրդի ազգայն ամենից առաջ լծորդել է Հասարակ ժողովրդի բարոյական ու նյութական զարգացման հետ: Հայ բոլոր խավերի իրավիճակը այս տեսակետից «Հայրենիքին» որևէ լավատեսություն էլք հուշարկում: Գավառի քայքայման, 1890-ական թթ. լայն ծավալներ ստացած դյուզադյունների հողազրկման գործընթացի հետևանքները թերթը տեսնում էր նաև բուն քաղաքում ի դեմս գավառացի բազմահազար գաղթականների: Հայրենասիրական շնչով են հագեցած «Հայրենիքի» բազմաթիվ հոդվածները, ակնարկներն ու թղթակցությունները Կ. Պոլսի պանդուխտ բազմությունների առօրյայի ու թշվառ վիճակի մասին: Ա. Արփիարյանի, Ա. Չոպանյանի, Հրանդի (Մ. Կյուրճյան) և այլոց հոդվածները ներկայացնում են Հայ պանդուխտների մոռացված աշխարհը հետին թշվառության ու մերկության մեջ: Բրիտտոնեական գթություն, խղճի և ազգասիրության զգացումներով հագեցած հոդվածները այս կարգի Հրապարակումների ենթատեսակներում «Հայրենիքին» տալիս են խորապես առաջդիմական և ազգային նկարագիր: Այս խավերի իրական վիճակի պատկերն ու բնութագիրն է, որ «Հայրենիքին» տալիս է ցասկոտ բնավորություն, երբ խարազանում է քաղքենիական անտարբերությունը գավառի դժբախտ գավաղների հանդեպ, եսամոլ առանձնացումը ազգության թերևս, ամենակարևոր մասից, որ կարող է հասնել նույնիսկ անասնական վերաբերմունքի: Նույն կերպ թերթին իր տեսադաշտում է պահում Համեմատաբար նորօրյա մի աղետաբեր չարիք դեռևս 1880-ական թթ. ծայր առած ԱՄՆ գաղթելու իրողությունը: Թերթը նկատի ունի մասնավորապես խարբերոցիներին, որոնց աղետալի չափերով ճարակում էր գաղթելու անզուսպ ցանկությունը: Քննադատական կրակը թերթը ուղղում է մանավանդ այն Հայազգի անձանց, որոնց Հրահրումներով գաղթը ավելի մեծ ծավալներ էր ստանում: Բախտախնդիր այդ Հայերը իրենց Հայրենակիցներին խրախուսում էին արագացնելու Ամերիկա մեկնելը, այնուհետև, չնչին գնով տիրանում էին նրանց ունեցվածքին. «15-20 ոսկի տալով արտեր, տուններ, ալգիներ գրավ կառնուն, հանձնարարելով խեղճերն իրենց ունայնամիտ բարեկամաց, հորք Ամերիկա նոր ողջակիզաց գալստյան կապասեն», - գրում էր «Հայրենիքը»: Հաճախ չգիտակցված այս տարերային շարժման առաջն առնելու նպատակով «Հայրենիքը» իրական գծերով ցույց է տալիս խաբված գաղթականների ծանր վիճակն Ամերիկայում, կոչ է անում չլքել Հայրենիքը և դիմանալ ու հաղթահարել դժվարությունները (1892, 11 հունվարի):

«Հայրենիքի» Հասարակական ուղեգրի՞նք ընդլայնագրելիս կարևոր նշանակություն է ստանում Հասարակության և մամուլի փոխհարաբերության, մամուլի ազգային նշանակության գնահատականը: Ա. Արփիարյանը և Գր. Զոհրապը քանիցս անդրադարձել են մամուլի և Հրապարակախոսության բարոյական մեծ արժեքին՝ մտքերի ու Հասարակական կողմնորոշումների ձևավորման գործում: Վերջինի Հաջողության կարևոր նախապայմանը «Հայրենիքը» Համարում էր լրատվության ճշմարտացիությունն ու անկողմնակալությունը: Այս սկզբունքը ամենից առաջ ուղղվում էր պոլսահայ ժամանակակից մամուլի այլասերված բարքերի, մտավոր անկարողության ու ճղճիմության դեմ, որոնց տարածման դիտավոր պատճառը Արփիարյանը Համարում էր բարոյական արժեքների կորուստը: «Օրվան կյանքը» քրոնիկում, որ շարունակաբար տպագրվում էր «Հայրենիքում», Արփիարյանը գրում էր. «Ինչ որ ներելի է խմբագիրներու ընել՝ ուրիշ բան չէ, բայց եթե ճշմարտությունն ըսել, երբ կրնան, իսկ չեն կրնար ճշմարտությունն ըսել, դեթ լռելու քաջությունն ունենան: Լռությունն ալ շատ անգամ ճշմարտախոսություն է» (1891, 12 Հոկտեմբերի): Արփիարյանը նկատի ուներ Հասարակության մեջ մամուլի կողմից ավերածություններ առաջացնելու և դրամի ու իշխանության առջև խոնարհվող մամուլի անցանկալի Հնարավորությունը:

«Հայրենիքը» մեծապես ազդվել է «Մշակից»: Ինքնաքննադատության, ազգի թերությունների վերհանման և դրա միջոցով բուժման, մամուլի և լրագրության գործնական ու Հասարակական ընդլայնի օգտակարության, վերջապես Համազգային նպատակների միասնության Հետևողական պաշտպանության մեջ կարելի է նկատել այս երկու թերթերի դադափարական միասնական դիրքորոշումները: Իր բովանդակության Համազգային տարողունակությամբ, քննադատական արժեքով և Հասարակական որոշակի ներգործությամբ «Հայրենիքը» արևմտահայոց մեջ մի Հայտնի Հափով կատարում էր նույն դերը, ինչ «Մշակը» արևելահայ իրականության մեջ: Քննադատական այս ուղեգրի՞նք բացառիկ կարևորություն տվեց «Հայրենիքին» 1890-ական թթ. արևմտահայ Հասարակության արդիականացման, նրա ազգային մարմինների, բարքերի ու բարոյականության բարելավման ասպարեզում:

Անհատի ու Հասարակության ինքնաճանաչողության, իրականության մեջ նրանց տեղը բացահայտելու նպատակն էր Հետամտում նաև «Հայրենիքը»:

նիքի» գեղարվեստական գրականությունն ու գեղագիտական դիրքորոշումը: Թերթը շարունակում էր Հայ գործիչներին մշակութային դերը Հասարակական գիտակցությանը Հասցնելու կարևոր գործը: Այս թեմայով առանձնանում են Գր. Ջոհրայի, Ա. Արփիարյանի, Սիպիլի, Տ. Կամսարականի, Լ. Բաշալյանի և այլոց Հոդվածները, նովելները և ակնարկները: Դրան զուգահեռ Հրատարակվել են բազմաթիվ գրաքննադատական Հոդվածներ, որտեղ սեպտեմբրի գեղագիտական գրույթները գործադրվում են կոնկրետ ստեղծագործությունների բնութագրման համար: Ազգի բարոյական նկարագիրը «Հայրենիքն» ըմբռնում էր ամենալայն իմաստով այն դիտելով իրական կյանքի պայմանների, միջավայրի կացության ու մարդկանց փոխհարաբերությունների Հենքի վրա: Գրականությունը ոչ միայն այդ միջավայրի արդյունքն է, այլև իր բարոյական ներգործության ուժով ինքն է ազդում նրա վրա: Այստեղից Արփիարյանի բարձր գնահատականը արևելահայ սեպտեմբրյան արձակին: «Հայրենիքի» խմբագիրը արևմտահայ առաջին գեղագետներից մեկն էր, որը բազմակողմանիորեն պաշտպանել ու Հիմնավորել է սեպտեմբրյան գրականության մեջ: Ռեալիզմը նա ընկալում էր իրականության ճանաչողության և բարոյականության մարդասիրական կողմնորոշումների սերտաճան տեսակետից: Այսպիսի Հիմնավորումներից մեկում Արփիարյանը Հերքում էր սեպտեմբրյան Հանրավի քննադատությունը ուղղված կյանքի անպատշաճ, անպարկեշտ պատկերների մեջ թափանցելու նրա բնույթի դեմ: Բաց պատկերները գրականության մեջ կարող են վրդովել միայն քաղցնիական կեղծ ամոթխածությունը, մինչդեռ դրանք իրական նկարագրի արտացոլում են, ուստի և «մեր գրադեպտե, որք կամբաստանվին, թե անբարոյական բաներ կգրեն, մեր է՛ն մեծ մարդասերներն են, ընկերական ցավերու Համար վշտահար են, այդ ցավերու պատճառները կուզեն բացատրել, թշվառներու վրա գթություն ու կարեկցություն Հրավիրել», - գրում է Թերթը (1891, 12 սեպտեմբերի): «Հայրենիքում» ըստ ամենայնի արժեքավորվել են վեպը և նովելը: Ընդ որում, «Հայրենիքի» գրաքննադատները ենթադրում էին ոչ թե եվրոպական գրականության սոսկ ընդօրինակումը, այլև ազգային իրականության ու բարոյականության վերափոխման խնդիրներին Համապատասխան ժանրի սեփական մշակումները իրականի, քարոզչականի և իդեալականի Հնարավոր ուղղվածությամբ:

«Հայրենիքը» անգնահատելի երախտիք ունի արևմտահայ և արևելահայ գրականությունները մերձեցնելու ասպարեզում: Թերթը Հստակեցրել և Հիմ-

նափորված ձեակերպումներ է տվել արևմտաՀայ առաջավոր գրաքննադատության այն տեսակետին, որ զույգ Հատվածների գրականությունները փոխադարձաբար իրար լրացնելու կարիք ունեն. եթե արևմտաՀայ գրական երկերը աչքի են ընկնում արվեստի նրբությունամբ ու Հղկվածությամբ, ապա արևելահայերի գրական արտադրանքը դրա փոխարեն պարունակում է ուսուցիչական Հզոր լիցք, ժողովրդի բնավորության բովանդակ խորությունը: Այս զույգ արժեքների փոխհարստացմամբ էր պատկերացնում «Հայրենիքը» առաջիկայի Հայ գրականության զարգացման ընթացքը:

«Հայրենիքի» էջերում որոշակի Հնչեղություն ունի դրացի ժողովուրդների Հետ Հայության բարեկամական ու առողջ Հարաբերությունների թեման: Թուրքիայի փոքր ժողովուրդների փոխադարձ ճանաչողությունից ելնելով Արփիարյանը Հատկապես բարձր է գնահատել Հույների և Հայերի բարեկամությունը: «Մենք Հայերս, - ասվում է մի խմբագրականում, - պարտավոր ենք լավ ճանչնալ Հույն ժողովուրդը, զոր որչափ ավելի քննենք, այնքան ավելի մեծարելու և սիրելու պատճառներ կրնանք գտնել» (1893, 20 սեպտեմբերի): Եվ, ընդհակառակը, թերթը վնասակար է Համարում այն մտավոր արդյունքները, որ կարող են արթնացնել որևէ ժողովրդի մութ բնագոյները ազգայնամոլության գրգռներով Հրահրվելու միջոցով: Բարձր գնահատելով վրաց գրականությունը և նրա մարդասիրական նպատակները «Հայրենիքը» միաժամանակ գրականության կոչմանը խորթ էր Համարում վրաց վիպասանուհի Ե. Գաբաշվիլու վիպակի մի Հիվանդագին միտումը՝ վրացիներին ներկայացնել որպես Հայ վաշխառուի զոհ: Վաշխառությունը սոցիալական չարիք է և ոչ թե ազգային, իրավացիորեն դիտում է Հեղինակը, ուստի չարիքի աղբյուրը պետք է որոնել Հենց «ընկերային Հարաբերությանց մեջ» և ոչ թե հրահրել ցեղական ատելություն (1894, 7 մայիսի): Ազգային արժանապատվության պաշտպանությամբ Հանդես է եկել նաև Ե. Օտյանը՝ դարձյալ ժողովուրդների փոխադարձ Հարգանքի, ազգատեցությունը մերժելու մեկնակետից (1893, 20 սեպտեմբերի):

Արևելահայ գրականության գեղարվեստական ու գրական արժեքը լավ ճանաչելու Համար Արփիարյանը «Հայրենիքում» ևս առաջ էր քաշում դեռևս «Արևելքի» և «Մասիսի» էջերում ժամանակին շոշափած ոուս գրականության ուսումնասիրման Հարցը: «Հայրենիքը» տպագրել է ոուս բազմաթիվ դասականների ստեղծագործությունների թարգմանությունները առավել խորացնելով Հայ և մերձավոր մշակութային կապերի ու Հարաբերություն-

ների հունը: Նույն կերպ, «Հայրենիքը» տպագրել է եվրոպական, մասնավորապես ֆրանսիական գրականության թարգմանությունները:

«Հայրենիքում» իր հետագա զարգացումն է գտել դիմանկարային ակնարկի ժանրը: Ա. Արփիարյանի, Գր. Ջոհրապի, Լ. Բաշլյանի, Հր. Ասատուրի, Տ. Կամսարականի և այլոց ջանքերի շնորհիվ այդ ժանրի գործերը ի հայտ են գալիս, որպես իսկական զեղարվեստական ստեղծագործություններ: Այդպիսի բնույթ ունեն Ա. Արփիարյանի «Օրվան կյանքը» վերնադրով շատ քրոնիկներ, Տ. Կամսարականի «Անհետացող գրագետները», Ե. Օտյանի քրոնիկները, Գր. Ջոհրապի դիմանկարային հոգվածները, Գ. Շերմազանյանի «Երևելի հայեր ի Պարսկաստան» գրքից արված արտատպությունները և այլն, որտեղ արժեքավորվում են Հայ ժամանակակից կամ մոտ ժամանակի նշանավոր դեմքերը, արվեստի, գրականության ու հասարակական գործիչները:

1892-1893 թթ. սկսած «Հայրենիքի» (ինչպես և ամբողջ արևմտահայ մամուլի) հանդեպ առավել սաստկացավ թուրքական գրաքննությունը: Մասնավորապես, հսկողության տակ առնվեցին երկրի ներքին անցուղարձին վերաբերող լուրերը: 1894-1896 թթ. կոտորածների ամբողջ ժամանաշրջանում թերթերն ընկան ոստիկանական անմիջական վերահսկողության ներքո, որը չվարանեց ներխուժել լրագրության բնագավառը: Գավառներում կաղամկերաված սպանդի վերաբերյալ հասարակությանը ապակողմնորոշվու համար ոստիկանությունն ինքը «խլեց» թերթերի լրատվական նախաձեռնությունը: Իշխանությունները կազմում և ամեն օր թերթերում տպագրել էին տալիս այսպես կոչված «Պաշտոնական զեկուցումները», որտեղ հայտնվում էր «սուլթանի ողորմածության շնորհիվ» դավառներում տիրող անդորրության և ժողովրդի բարգավաճ կյանքի մասին: Թերթերի դադարեցման և նրա աշխատակիցների աքսորի սպառնալիքն անտեսելով այսպիսի նյութեր տպագրել են «Արևելքը», «Հայրենիքը», «Ճերիտեի շարդիյեն», «Մանգումեի էֆքյարը», «Լույսը» և այլն: Եվ երբ կոտորածների իրողությունը ծածկելն այլևս անհնարին դարձավ, թերթերին ուղարկվեցին պատրաստի խմբագրականներ, որտեղ դավառներում «անկարգությունների» պատճառն էին համարվում հայերի «ապստամբ ու խռովարար» գործողությունները: Ոստիկանությունն իր ուժերը հաջողությամբ փորձում էր նաև լրագրական այլ ժանրերում. այսպես, դարձյալ պարտադրանքի ուժով «Հայրենիքը» տպագրել է Ադրիանուպոլսի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի և տեղի հայ



երևելիների հայտարարութիւնը, որտեղ նրանք, բնականաբար, իշխանութիւնների թեւադրանքով, դատապարտում են իրենց ազգակիցների «չվայլող ընթացքը» (1895, 13 հունվարի): Կ. Պոլսի ոչ միայն հայկական, այլև թուրքական ու այլալեզու թերթերը այդ օրերին ողողված էին այսպիսի կեղծ ու թիված բարեհաստակային հայտարարութիւններով:

Իր անհնազանդ կեցվածքի, Ա. Արփիարյանի հեղափոխական գործունեութիւն ու համակրանքների պատճառով «Հայրենիքը» ի սկզբանե դարձել էր թուրքական իշխանութիւնների տազնապալի ուշադրութիւն առարկան: Դա էր պատճառը, որ «Հայրենիքը» յուրահատուկ առաջնութիւն էր ստացել իր խափանումների քանակով: Եւրջ հնգամյա հրատարակութիւն ընթացքում թերթը փակվել է վեց անգամ՝ ընդհանուր առմամբ փակված մնալով մոտ մեկ տարի: 1895 թ. աշնանը ոստիկանութիւն հալածանքներն ուղղվեցին ոչ միայն «Հայրենիքի» խմբագրի, այլև տնօրեն Ն. Ծահնազարի և թերթի հրատարակատեսների դեմ: Ա. Արփիարյանը 1896 թ. սկզբներին վտարանդվեց Եվրոպա, Կ. Պոլսում ձերբակալվեց Ն. Ծահնազարը:

«Հայրենիքը» փակվեց 1896 թ. հուլիսին: Այն վերահրատարակվեց սուլթանի համիդի տապալումից հետո, 1909 թ. հուլիսին:

ԱՐԵՎՍՏԱՅԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՍՈՒԸ

4. Պոլսի «Մեղուն» (1850-1870-ական թթ. Ղ. Սըվաճյանի և Ղ. Պարոնյանի խմբագրության տարիներին), այնուհետև Ղ. Պարոնյանի «Թատրոնը», «Թատրոն բարեկամ մանկանցը», «Լույսը», «Միծաղը», «Խիկարը» և այլ պարբերականներ երգիծական առավել բովանդակալի հրատարակություններն էին ամբողջ XIX դ. արևմտաՀայ մամուլի պատմության մեջ: Սակայն նշված պարբերականների հետ միաժամանակ կամ դրանցից առաջ և հետո արևմտաՀայ մշակութային ու հասարակական կյանքում իրենց, թեկուզ և նվազ համեստ դերն են ունեցել նաև այլ երգիծաթերթեր, որոնք դասել են իրենց ընթերցողին, նպաստել նրա ոչ միայն անհատական ու հավաքական կարծիքի ձևավորմանը, այլև յուրովսանն իրենց լուծման են ներդրել Հայ երգիծական արվեստի, երգիծական հրապարակախոսության զարգացման մեջ: Չպետք է մոռանալ նաև այն, որ երգիծաթերթերը, այդ թվում և Սըվաճյանի ու Պարոնյանի պարբերականները, սնվում էին Կ. Պոլսի և դավառների Հայության բանահյուսությանը, և որ դրանց բոլորին, իրենց որակական տարբերություններով հանդերձ, միավորում էր նույն ժողովրդական, տարերային երգիծանքը: Այս հանգամանքը առանձնապես կարևոր է արևմտաՀայ երգիծանքի առանձնահատկությունները և առհասարակ զարգացման ընթացքը հետազոտելու տեսակետից: Շատ ուշագրավ է, որ երգիծանքը, հուժմորը արևմտաՀայ գեղարվեստական մշակույթի մեջ հաստատուն տեղ է ունեցել և փնտրվող ժանր է եղել պարբերական հրատարակություններում: Նախ Մխիթարյանների պարբերականներում (որոնց հիմնական ընթերցողը արևմտաՀայ Հանրությունն էր), այնուհետև 1850-60-ականի հրատարակություններում երգիծանքը և հուժմորը դիտվում են որպես հասարակության ուշադրություն հետաքրքրաբերությունը արծարծելու միջոց, ազդեցիկ Հնարավորություն խոսքն ու գաղափարը առավել տպավորիչ դարձնելու համար:

Արևմտահայ առաջին երգիծական Հանդեսը «Զվարճախոսն» է (1855-1856): Այն Կ. Պոլսի «Զվարճասիրաց» ընկերության Հրատարակությունն էր: Տպագրել է երգիծական բնույթի կարճ ստեղծագործություններ, զրույցներ, առակներ, նաև ծաղրանկարներ: Հավանաբար, ընկերության գործունեության անկման հետ պետք է առնչել պարբերականի կարճ կյանքը: «Զվարճախոսը», թերևս, ոչ այնքան կարևոր է իբրև երգիծաթերթ, այլ որպես առաջինը արևմտահայ մամուլում ժանրային նախասիրության իմաստով: Հատկանշական է, որ 1856-ին, «Զվարճախոսի» դադարից հետո, Կ. Պոլսում սկսվեց Հրատարակվել Չ. Սրվաճյանի «Մեղուն»: Վերջինս, սակայն, չի կարելի դիտել որպես գուտ երգիծական Հանդես: Ընդհակառակը, նրա ենթավերնագրում երգիծանքին հատկացվում է վերջին տեղը՝ «Հավաքածու բարոյական, բանասիրական, գրագիտական, տնտեսական, առևտրական և զվարճալի գիտելյաց»: Ըստ բովանդակության, նյութերի քանակն իսկ խոսում է այս թվարկման հաջորդականության իմաստի օգտին: Բայց հենց այն Հանգամանքը, որ «Մեղվի» երգիծանքը պարունակում է հասարակական ամենալայն խավերին հուզող հարցադրումներ, հանրային կյանքին վերաբերող լուրջ ընդհանրացումներ և ներթափանցված է սրամտության զարմանալիորեն հարուստ պաշարներով, այդ երգիծանքին տալիս է առաջնակարգ նշանակություն՝ Հանդեսի գաղափարական ուղղության և առհասարակ բովանդակության դրսևորման տեսակետից:

Երգիծանքի հանրային պահանջարկը և ասելիքը միայն Կ. Պոլսում չէ, որ զգացնել էր տալիս իրեն: 1862 թ. Զմյուռնիայում Հրատարակվում է «Դիմակ» երգիծական Հանդեսը Ա. Տետեյանի խմբագրությամբ: «Դիմակի» երգիծանքը ևս նրա նյութերի մեջ հետին տեղ է գրավում. այդ Հանդեսի էջերում առավել աչքի են ընկնում եվրոպական գրականությունից թարգմանված նմուշները, արևմտահայ հանրային ու մշակութային իրականությանը վերաբերող այլևայլ նյութերը: Երգիծական բովանդակության Հրապարակումները Հիմնականում զետեղված են «Թերթ փեղցփեղությունց» բաժնում, որտեղ ծաղրի են ենթարկվում արևմտահայ կյանքի ստվերոտ կողմերը: Պետք է նկատել, սակայն, որ դա ոչ այնքան երգիծանք է, որքան այլաբանություն: Արևմտահայ երգիծանքը միայն «Մեղվով» (Չ. Սրվաճյանի ժամանակից) պետք է ամբողջովին ազատագրվեր այլաբանությունից՝ իրերը կոչելով իրենց իսկական անունով: Իհարկե, այլաբանությունը հետագայում ևս, որպես երգիծանքի մշտական ուղեկից, պետք է դրսևորվեր մամուլի էջերում,

բայց այս անգամ զուտ որպես զրսեւորման Հարկադրական միջոց և ոչ երբեք զրսեւորման միակ ձև: Այլ խնդիր է արդեն, որ Համիդյան սեփականի պատճառով մինչ այդ այլաբանությունից ձերբազատված երգիծանքը 1880-ական թթ. դարձյալ պետք է մտնէր այդ Հուսույի կազմադարի մեջ երգիծական ոգու ինքնապահպանության զգացումից զրգոված: Հիշենք, որ այլաբանության պարտադրված ձևից քանիցս բողոքել է Հ: Պարոնյանը՝ նկատելով, որ զրա մեջ սպանվում է երգիծանքը:

Այսուհանդերձ, «Դիմակի» երգիծանքը երբեմն Հասնում է Հասարակական սրության: 1862 թ. Զեյթունի ապստամբության օրերին Հանդեսը տպագրեց «Արյունահեղ դերասանությունն ի Զեյթուն» վերնադրով երգիծական թատերազգը (№3, էջ 23), որտեղ արյունալի իրադարձությունների իսկական մեղավորին «գրացի մարդասպաններին» է ակնարկում նկատի առնելով թուրքական բռնապետությունը: Այլաբանորեն ասված թափանցիկ խոսքի մեջ այսպիսի մեղադրանքի համար ևս համարձակություն էր հարկավոր:

«Դիմակը» Հայ մամուլի պատմության մեջ Հիշարժան է նաև նրանով, որ Հատվածներ է տպագրել Եփեսոսի «Համլետից» Ա. Տետեյանի թարգմանությունը: Ակներև է, որ «Դիմակը» միայն երգիծանքին չէ, որ ապավինում էր նկատի ունենալով իր լուսավորական հեռագնա նպատակները: Ոչ միայն երգիծանքի, այլև առհասարակ լուսավորական իր նպատակները նկատի ունենալով «Դիմակը», երբ իր առաջին առաջնորդողում գրում էր «Դիմակը» ազգին «փոշեխից ականջներուն բարոյական խլությունը բանա պիտի և լսեցնե երիտասարդաց նորաշունչ Հնչմունքը, որոնցմով ազգին ապագա օգտին համար օգբերը կղզրդեն ամեն օր» (№1, էջ 1): Նկատենք, որ «Դիմակը» ի վիճակի չեղավ իրականացնելու այս ծրագրային լայն ընդգրկումները: Հավանաբար, դատելով այս պարբերականի աղքատիկ բովանդակությունից և նույնքան աղքատիկ երգիծանքից, վերը նշված Հայտարարությունը Տետեյանները նկատի ունեին իրենց հրատարակչական գործունեությունն առհասարակ: Պարբերականի տպագրած երգիծական նյութերը կատակով ներկայացված մանր լուրերը զմյուսնահայ կյանքից, երգիծական բարոյական առածներն ու ասացվածքները («Չաթ-չութ-չիթ» և «Թերթ ավեղյգիեղությանց» խորագրերի ներքո) սոսկ Հիշեցնում էին, որ «Դիմակը» ունի նաև երգիծական բաժին: Հետաքրքրություն է առաջացրել, անշուշտ, «Թոփիկ և Տըմպլիկ» երգիծական պատումը, ներհակ գործող անձանց զրույցի ձևով, որոնք փորձում

են վեր Հանել զմյուռնահայ կենցաղի ծիծաղելի կողմերը՝ իրենց Հակադրու-  
թյամբ լրացնելով իրար (№1, էջ 67):

«Դիմակը» հրատարակվել է ընդամենը 7 Համար, ուստի և նրա Հասարա-  
կական նշանակությունը, առավել ևս նրա երգիծանքի Հասարակական նշա-  
նակությունը չպետք է որևէ չափով գերազնահատել: Ժանրի սկզբնավորումը  
և զարգացումը ամբողջովին պետք է վերագրել Կ. Պոլսին:

Եթե նկատի ունենանք, որ 1850-1860-ական թթ. արևմտահայ երգիծա-  
թերթերը, բացի «Մեղվից», հրատարակվել են շատ կարճ ժամանակ, առավել  
աչքի է ընկնում վերջինիս դերը ընդհանրապես Հայ երգիծանքի զարգացման  
ասպարեզում: Միայն 1869-ին էր, որ հրատարակ իջավ Գ. Այվազյանի  
«Մամուլը», իբրև երկրորդը «Մեղվից» հետո: Ենթավերնագիրն էր՝ «Արձա-  
զանք Հասարակական կարծյաց, Հանդես զավելչտական»: «Մամուլը» (1869-  
1882) ևս, ինչպես «Մեղուն», ամենևին չի ամփոփվել զուտ երգիծանքի աս-  
պարեզում, նրա նյութերը լուսաբանում են արևմտահայ կյանքի ամենատար-  
բեր կողմերը՝ Հանրային Հարաբերություններ և կյանք, մշակութային իրա-  
կանություն, գաղափարաբանություն, թատրոն, դրականություն, ազգային-քաղա-  
քական իրադարձություններ, Թուրքիայի ներքին և արտաքին կացություն,  
լուսավորություն, կրթություն և այլն:

«Մամուլը» առաջիններից մեկն էր, որ զարգացրեց երգիծական պատումը  
Ֆելիետոնի ժանրը: Դրանք երգիծական սրություն ունեցող հրատարակախո-  
սական հոդվածներ են՝ ուղղված այս կամ այն կենցաղային երևույթի, գործչի  
դեմ: Այս կարգի հրատարակումներում նկատելի քանակ են կազմում կեն-  
ցաղային զրույցները, անեկդոտները, Կ. Պոլսի Հայություն միջին խավերի  
առունին վիճակը պատկերող երգիծական պատմվածքները, մանրապատում-  
ները, զրույցները և այլն: Հասարակ ժողովրդի խոսակցական լեզվով ու լեզ-  
վամտածողությամբ հրամցվող այդ նյութերում «Մամուլը» ծաղրում էր պու-  
սահայ կյանքի ստվերոտ կողմերը, Հնացած և ժամանակավրեպ սովորույթ-  
ներն ու թեթևամիտ նորոյրա հակումները: Ե՛վ լեզվի, և՛ շարադրանքի ստեղ-  
ծագործական բնույթի տեսակետից «Մամուլի» այս նյութերը բավականա-  
չափ մոտ են Հ. Սրվաճյանի հեղինակած և «Մեղվի» էջերում դեռևս 1850-ա-  
կանի վերջին ու 60-ականին տպագրված երգիծական զրույցներին: Դրան-  
ցում ևս, ինչպես «Մեղվի» պատմվածքներում, հաճախ ամբողջ շարադ-  
րանքը, սյուժեին կառուցված են զրույցի վրա. առավել քան ակնհայտորեն  
նկատելի է խոսքի կոմիզմի գերակշռությունը դրություն կոմիզմի նկատ-

մամբ: Ավելին, գործողության կոմիդը պարզապես միջոց է առաջինի ըստ ամենայնի դրսևորման համար: Թեմաները ևս նույն իսկ «Մեղվի» թեմաներն են՝ կենցաղային պատկերներ, ամուսնություն, ընչաքաղցություն, մոգայամոլություն, քահանաների տգիտություն և ազահություն, դպրոցական գործի թերությունների վերհանում և այլն: Ուշագրավ է նաև, որ «Մամուլի» առաջատար երգիծաբանը, ավելի շուտ գործող անձը Մեփիստոփելն է, հավաքական մի կերպար հար և նման Սրվաճյանի Մեչուխեչային: Իրենց սրամտությամբ «Մամուլի» ֆելիետոնները, անշուշտ, զիջում են Հ. Սրվաճյանի նույնարևույթ գործերին, իսկ Մեփիստոփելը իր հասարակական լայն հետաքրքրություններով Մեչուխեչային: Կարևորը, սակայն, այն է, որ Սրվաճյանի «Մեղուն» ստեղծել էր արևմտահայ երգիծանքի մի յուրահատուկ դպրոց, որի առաջին հետևորդն էր «Մամուլը»: Մասամբ երգիծանքի բովանդակությամբ, իսկ ամենալայն առումով արվեստի տեսակետից, «Մամուլը» արևմտահայ երգիծական գրականության ու հրատարակատեսության մեջ շարունակում էր խորացնել Սրվաճյանի երգիծանքի հունը: Սրվաճյանը միայն որոշ չափով կարողացավ սանձել ժողովրդական երգիծանքի տարերքը: Նույնը անում էր «Մամուլը» և եթե ի զորու չէր ավելին անել, ապա գոնե հաստատում էր սրվաճյանական ուղեգծի կենսունակությունը մինչև 70-ականի վերջը: Հ. Պարոնյանին էր միայն վիճակված ամբողջովին յուրացնել այդ երգիծանքի արդիականության համար էական հարստությունը և այն դարձնել հիմքը արդեն տեղական շրջանակներից դեպի համամարդկայինը ընթացող իր բարձր արվեստի:

Այժմ մի քանի խոսք «Մամուլի» երգիծաբան հեղինակների մասին: Հ. Պարոնյանի, Ա. Արփիարյանի և ուրիշների պնդումներով, «Մամուլի» նյութերը գրում էր ոչ թե նրա խմբագիր Գ. Այվազյանը, այլ նրա կողմից վճարվող երգիծաբանները: Հիրավի, «Մամուլի» նյութերը հիմնականում անստորագիր են, և այս հանգամանքը, թվում է, ինչ-որ չափով խոսում է հիշյալ վկայությունների օգտին: Մյուս կողմից, Գ. Այվազյան երգիծաբանի մասին առհասարակ լռում են նրան ժամանակակից գրողներն ու հրատարակատեսները (եթե չհաշվենք հիշյալ ժխտական դիտողությունները), ինչպես և հետագայի արևմտահայ մտավոր ու մշակութային գործիչները: Թերևս, Գ. Այվազյանին անտեսելու մեջ իր դերն են ունեցել նրա շարունակական բանավեճերը Հ. Պարոնյանի հետ, որի ընթացքում արևմտահայ երգիծանքի անգերազանցելի վարպետի սպանիչ ծաղրը իր ճակատագրական կնիքը կարող

էր թողնել Այվազյանի ոչ միայն ժամանակակից, այլև Հետագա ճանաչման վրա: Այս ամենը Հնարավոր է, բայց ոչ այնքան Համոզիչ, որովհետև «Մամուլում» տպագրվել են նաև այնպիսի երգիծական Հասուն գործեր (դարձյալ անստորագիր), որոնց Հեղինակը եթե Գ. Այվազյանը լիներ, ապա դա անպայման Հայտնի կգառնար ժամանակի իրազեկ մարդկանց: Բոլոր դեպքերում, եթե մի կողմ թողնենք Հեղինակային ինքնությունը, «Մամուլը» նշանակալի դեր է կատարել Հայ երգիծական Հրատարակությունների և բուն երգիծանքի ժողովրդականացման ասպարեզում:

Լրագրության մեջ «Մամուլի» Հայտնությունը պետք է որ Հուսադրեր դեմոկրատորեն տրամադրված գործիչներին ու Հրատարակություններին: Նոր երգիծաթերթը ողջունեց Մ. Խրիմյանի պատրիարք ընտրվելը (1869, №39, էջ 309-310) և ծանակելով նրա Հակառակորդներին՝ Հարձակման անցավ պաշտպանողականության դեմ: Հետագայում ևս «Մամուլը» բավական Հաջող երգիծական նյութեր տպագրեց պոլսահայ անգործ ընկերությունների (ինչպես Գում-Պափուի «Հայկյան ընկերությունը»), անբան և թեթևսովի երիտասարդության, Հետամնաց վարժապետների և այլնի վերաբերյալ (1871, №160, էջ 28, №159, էջ 18-19): Երգիծաթերթի տպագրած Հումորը բավականաչափ սրամիտ էր նաև ժամանակի ընթերցողին զվարճացնելու Համար: Ահա այդպիսի նյութերից.

«Կաշառք-այս ապրանքին առուծախն արգելված ըլլալուն գաղտնի կծախվի կոր:

Գովեստ-Փնտրողը շատ, տվողը քիչ, մտիկ ընողը Հիչ» (1871, №172, էջ 122):

«Մամուլն» իր Հրատարակության սկզբնական շրջանում անՀաշտ դիրք դրավեց Հայ էֆենդիական դասի նկատմամբ բացահայտելով նրա ապագաչին նկարագրերը: «Հայ էֆենտիններուն ժողովը» երգիծական բանաստեղծության մեջ մերկացվում է Հայազգի թուրքական պաշտոնյաների կացության և ձգտումների արատավոր շրջանակը.

- Էհ, ազգն իմ ինչ Հոգ, խերն եմ անիծեր,

Գոչեց խոշոր ֆես մը, շարժեց Հունքեր,

Մենք առաջ երթանք, շահինք բյութպեններ,

Գրպան լեցընենք կարմրուկ ոսկիներ (1871, №180, էջ 191):

Երգիծաթերթի Համարձակախոսությունը, որ ի Հայտ եկավ առաջին Համարներից, չէր կարող դուր գալ թաղական իշխանությունների Հովանա-

վորութիւնը վայելող տեղական ջոջերին: «Մամուլը» խափանվել և նրա խմբագիրը մեկ ամսովա բանտարկութեան է դատապարտուել Սիլուատարի ս. Խաչ եկեղեցում թաղի դպրոցական Հանդեսը երգիծելու համար (1869, №35, էջ 275-280): Երգիծաթերթը արդարամիտ դիրք գրավեց Հասունյան-Հակա-Հասունյան պայքարի ժամանակ սուր հարձակումներ գործելով Հասունի և նրա կամակատարների վրա: Ի դեպ, այս թեմայով (այլ թեմաներով ևս) Այվազյանն իր երգիծաթերթում տպագրեց հայատառ թուրքերեն բազմաթիւ հոդվածներ: Դատելով ըստ ամենայնի՝ նա բավական մոտ է եղել Հակա-Հասունյան շրջաններին: Երգիծական սրութեամբ է օժտուած «Մամուլի» տպագրած Հասունյանի երևութական նամակը կարգինալ Անտոնելլիին («Գերապատիւ Հասունի պատասխանը»), որը երգիծական ինքնամերկացման հաջող օրինակ է (1871, № 180, էջ 180-190):

«Մամուլի» այս շրջանի հասարակական դիրքորոշման համար բնութագրական է նրա համարձակ կեցվածքը դավառական հարստահարութիւններին մերկացման ասպարեզում: «Վանա ազատ հրացանակիրները» առաջնորդողում ծանակվում են Վանի թուրք և քուրդ հարստահարիչները, ինչպես և ազգային իշխանութիւնները դրանց չզիմակայելու համար: «Մամուլը» նույնիսկ ընդդիմութեան կոչ է անում ժողովրդին. «Ուրեմն դուք դձեզ պաշտպանեցեք, ով ասիացիք, դուք ձեր փրկութիւնը հողացեք, ձեր գործը դուք ձեր ձեռքով տեսեք: Երբ մարդ այնպիսի երկրի մը մեջ կապրի, ուր կյանքն ու ինչքն անապահով է, հարկ անհրաժեշտ է, որ կրն իր վրա, ինչ որ յուր կենաց, ընչից և պատվո պահանջութեանը համար պետք է» (ն. տ., էջ 82): Հարստահարութիւնների վերաբերյալ «Մամուլը» բազմաթիւ հեռագրեր է տպագրել Մուշից, Վանից, Չարսանճագից, Բաղեշից, Խիզանից և այլն: Նույն բնութեան ունի նաև «Բարբարոսութիւն» հոդվածը Սեբաստիայի մեջ տեղի ունեցած իրադարձութիւնների մասին (1871, №173, էջ 129-130): Պարբերականի այսպիսի մերկացումների մեջ բավական ազմուկ հանեց Չանիկի առաջնորդ Արիստակեսի նամակի տպագրութիւնը, ուր ներկայացվում էին թուրքական բռնադատիչների և դատարանների աղաղակող կամայականութիւնները հայերի հանդեպ (1871, № 183, էջ 210-212, №184, էջ 222-223): Միայն անուղղակի հարկերի ու պարհակների թվարկումն իսկ (թեմեթիւ, էմլադ, ճանապարհի շինողէք, թեմեթիւ, իջարա, կոչապա և այլն) նամակում բացահայտում է հայերի պարանոցին դրված հարկային ծանր լուծը: Տպագրական տեսչութիւնը ճնշումն ուժեղացրել է «Մամուլի» վրա այս նամակի



տպագրութեան համար: Իշխանութիւններին համագործակցած տպագրական տեսչութիւնը պահանջում էր հերքում տպագրել: Դրան «Մամուլն» ընդդիմացալ «Հետս կոչումն» հողվածում այս անգամ ևս անդրադառնալով գալառի հայութեան իրավագուրկի վիճակին: Առհասարակ, «Մամուլը» հայտնի է դրաքննութեան դեմ իր համարձակ կելույթներով: «Տպագրական ազատութիւն» հողվածում (1872, №210, էջ 25-26) նա խոսքի ազատութեան խնդիրը տեղափոխում է քաղաքացիական ազատութիւնների շարքը այն կապակցելով թուրքիայում սահմանադրութիւնը հաստատելու գաղափարի հետ: Այս հողվածի համար «Մամուլը» խափանվեց երեք ամսով (1872 թ. մարտ-հունիս): «Մամուլը» լրացնում էր իշխանութիւնների կողմից առավել խիստ հալածված արեւմտահայ պարբերականների ցանկը:

Հիշարժան է «Մամուլի» պայքարը թուրքական հետադիմական հրատարակութիւնների դեմ: Հարստահարութիւնները կոծկող կամ ժխտող թուրքական մամուլը («Բասիրեթ», «Վաքըթ» և այլն) «Մամուլի» էջերում պատասխան է ստացել նաև թուրքերին: Հանդեսը հաճախ լուրեր էր տպագրում Կ. Պոլսի ազգային ժողովի, պատրիարքարանի, երեսփոխանների գործունեութեան մասին: Երգիծաթերթը քննադատական վերաբերմունք է դրսևորել թուրքական և ազգային իշխանութիւնների նկատմամբ, պաշտպանել ժողովրդի շահերը:

«Մամուլը» տեւական և անզուսպ բանավեճեր է վարել Հ. Պարոնյանի հետ: Այս հանգամանքը շատ կարևոր նշանակութիւն է ունեցել «Մամուլի» համար մեր պարբերականների մեջ նրա տեղը որոշելու գործում: Հետագայում նա կամ լուրի մատնվեց և կամ էլ ուսումնասիրողների կողմից արժանացալ քամահարական որակումների հիշվելով միայն Հ. Պարոնյանի հետ վարած բանակռիվների կապակցութեամբ: Այս ընդհարումների հիմքում ընկած էին նաև գաղափարական որոշակի հակադրութիւններ: Հ. Պարոնյանը չէր կարող հանդուրժել Գ. Այվազյանի վաղանցուկ համակրանքը պատրիարք Խրիմյանի հանդեպ, այնուհետև բացահայտ թշնամանքը: Ամբողջ 1872-1873 թթ. «Մամուլը» խիստ հարձակումների թիրախ դարձրեց Մ. Խրիմյանին վերջնականապես անցնելով նրա հակառակորդների բանակը: Բանավեճի մյուս պատճառը պետք է համարել Հ. Վարդովյանի քննադատութիւնը «Մամուլում» մի գործիչ, որին Հ. Պարոնյանը մրցակից թատրոնից (Մաղաքյանի) և թատերախոսներից պաշտպանում էր ըստ ամենայնի: Հ. Պարոնյանը բավական երկար ժամանակ պետք է գործի դնել իր սպանիչ ծաղրը

Այվազյանին լռեցնելու Համար (կողմերը «Մեղուն» և «Մամուլը» իրար դեմ տպագրեցին նաև ծաղրանկարներ): 1873 թ. վերջին «Մամուլում» Պարոնյանի դեմ ուղղված Հարձակումների միացավ նաև Հ. Հաճյանը: Նրան Պարոնյանը պատասխանեց տպավորիչ Հարվածներով ոչ միայն «Մեղվում», այլև Հետագայում նաև «Թատրոնում»:

Բանավեճից առավել, սակայն, մեր օրերի Հետազոտողի Համար կարևոր են այն կենսագրական տեղեկությունները, որ սկսմայից տալիս է «Մամուլը» Հ. Պարոնյանի մասին:

Հետագայում ավելի էին ընդգծվելու Հ. Պարոնյանի և «Մամուլի» Հակասությունները, երբ Այվազյանը բացահայտ ժխտական դիրքորոշում ցուցաբերեց Հայկական Հարցի միջազգայնացման դեմ: Համապատասխան այս պահպանողական մտայնության, «Մամուլի» երգիծանքը ստանում է որոշակի քաղաքական երանգավորում: Ծիշտ նույնպիսի վերաբերմունք ունեին Հայկական Հարցի նկատմամբ Կ. Փանոսյանը, Ն. Թյուլպենտճյանը և ուրիշներ, պահպանողականների մի մասը Բեռլինի վեհաժողովից ի վեր:

1882 թ. դեկտեմբերի 23-ին «Մամուլը», Հավանաբար անզգուշորեն, տպագրեց Կյուրինի «Լուսավորչյան» ընկերության տարեդարձի առթիվ Մանուկ Զգոնյանի չափածո ուղերձը, որտեղ Համարձակ մտքեր են Հայտնվում «քաջության զեն ու զրահներ Հազնելու», չարի դեմ կռվելու և այլնի, ազգային միութայն մասին: Կարինի «Պաշտպան Հայրենյացի» առթիվ խիստ տազնապած թուրքական իշխանությունները այս բանաստեղծությունը Համարեցին «ազգային Հեղափոխության մարչ»: Այվազյանը կալանավորվեց և դատապարտվեց ցմահ աքսորի Միտիլենա կղզի: «Մամուլն» ընդմիշտ խափանվեց, իսկ նրա խմբագիրը ազատվեց միայն երեք տարի Հետո 1886 թ., սուլթանի ներման Հրամանագրով: «Արարատի» խմբագիր Մ. Այվատյանի, «Արչալույս արարատյանի» խմբագիր Հ. Սըլվաճյանի Հետ միասին Գ. Այվազյանը օսմանյան ոստիկանական գրաքննության առավել ողորդական զոհերից է:

«Թատրոնի» և «Մամուլի» ժամանակակիցն էր Կ. Պոլսում Հրատարակվող «Միմոս» եռօրյա երգիծաթերթը (1875-1876): Արտոնատերն էր Ա. Սազայանը, խմբագիրը նախ Հ. Հաճյանը (մինչև 1876 թ. նոյեմբերի 26-ը), որից Հետո խմբագիր և արտոնատեր էր Ա. Սազայանը: Այս երգիծաթերթի Հրատարակության մեջ էական դեր է կատարել Ն. Պեգիբճյանը, որը փաստորեն խմբագրել է երգիծաթերթը (1876, №52, էջ 410): «Միմոսի» նյութերը

տպագրվել են Հայերեն և Հայատառ թուրքերեն: Ոչ քիչ դեպքերում միևնույն երգիծական պատուժը (զրույց, Փելիետոն) կիսով չափ գրված է Հայերեն, կիսով չափ թուրքերեն, որը վկայում է «Միմոսի» երկլեզու ընթերցողների զգալի քանակի մասին:

Երգիծանքի սրությամբ ու Հասարակական արժեքի տեսակետից այս երգիծաթերթը չէր կարող մրցել ո՛չ «Մամուլի», և ո՛չ էլ, առավել ևս, «Մեղվի» կամ «Թատրոնի» հետ: Այս երգիծաթերթը կենցաղային երգիծանքի սահմաններից այն կողմ չէր անցնում և հիմնականում նպատակ ուներ զվարճալի պատմություններով ու զրույցներով լցնել ընթերցողի պարապ ժամանակը: Դատելով ըստ ամենայնի, «Միմոսը» հիվանդագին է ընդունել մրցակից երգիծաթերթերի գերազանցությունը և փորձել ծաղրել «Մեղվին» ու «Մամուլին»: Հ. Պարոնյանի դեմ գրած մի հոդվածը, օրինակ, «Հայոց Տելի Ճորճին» վերնագրով (1875, №20, էջ 157-158), իր պարզունակությունը վկայում է նրանով, որ անպատշաճ որակումները շփոթում է սրամտության հետ: Հ. Պարոնյանին «Միմոսը» հակադրվում էր Հ. Վարդովյանի Հետ վերջինիս բարեկամության պատճառով: Եթե մեծ երգիծաբանը առիթ էր տալիս իրեն կողմնակալության մեջ մեղադրել Չուխաճյանի ու նրա խմբի վրա հարձակումների պատճառով, ապա «Միմոսը» կողմնակալություն էր թույլ տալիս առավել մեծ չափերով Հ. Պարոնյանի ու Հ. Վարդովյանի գործունեությունը կասկածի տակ առնելու իմաստով: Այս իրողությունը ունեցավ իր դրական կողմերը ևս: «Միմոսը» այն սակավաթիվ պարբերականներից է, որ 1875 թ. թատերախոսականներ է տպագրել Տ. Չուխաճյանի և «Քյոսա քյաչյա» օպերետի մասին: Մասնագետներին այսօր կարող են հետաքրքրել նրա տպագրած ուշագրավ նյութերը ժամանակի պոլսահայ թատրոնի ու թատերական գործիչների վերաբերյալ:

«Միմոսում» ևս զգալիորեն գերակշռում է երգիծական զրույցը կամ պատուժը, որտեղ բացակայում է գործողությունը, շարժումը և ըստ այդմ էլ գործողության կոմիզմը:

Երգիծաթերթը թերահավատություն էր լցված Ազգային սահմանադրության նկատմամբ և դրա անգործունակության վկայությունն էր համարում Հայ դավառի անտերունչ վիճակը: Պատրիարքարանի և Ազգային ժողովի ջանքերն այս ուղղությամբ նա համարում էր թերի և անկատար: Այստեղից նրա բացասական վերաբերմունքը նախկին պատրիարք Մ. Խրիմյանի գործունեության նկատմամբ, որի կուսակից պարբերականներին («Թատրոն»,

«Մասիս», «Մանգուսե-ի էֆքբար») Համարում էր իր ակտյանները: Միաժամանակ, «Միմոսը» էջը հարում նրանց հակառակորդ «Ղալաթիո օճախի» անդամներին (Ստ. Փափազյան, Քր. Ղազարոսյան) նկատելով, որ սրանք «Հոլովակի ջահ է ձեռնի գավառացոց մեջ պառակտություն սերմանելու կզրարին» (1875, №21, էջ 162): «Զախակոզմյաններից» և «աջակոզմյաններից» սահմանազատվելով «Միմոսը», սակայն, որպես Հովանավոր ուներ Հ. Տատյանին, թուրքական հեղինակավոր շրջաններում իր ազդեցությունն ունեցող այդ անձնավորությունը, որը Պարոնյանի որերիմ հակառակորդն էր 1870-ական թթ.: Հայտնի է Հ. Պարոնյանի անկախ ու սկզբունքային պայքարը այս ամիրայական շառավղի դեմ, ինչպես և այն, որ մի Հայտնի չափով և՛ «Մամուլը», և՛ «Միմոսը» օգտվում էին Հ. Տատյանի մատուցած մեկանից: Այսպես, 1875 թ. դեկտեմբերի 20-ից (№34) «Միմոսը» խափանվեց երկու ամսով, սակայն վերահրատարակվեց պատժաչափը չլրացրած, 1876 թ. Հունվարի 14-ին (№35) Արթին Տատյանի և նրա մտերիմ, տպագրական վերատեսուչ Սայիտ պեյի միջնորդությամբ (1876, №35, էջ 273):

«Միմոսի» երգիծանքը լիովին զուրկ է քաղաքական հնչեղությունից: Նրա երգիծական նյութերը բացառապես գրված են պոլսաՀայ բարբառով և եթե առանձնապես չեն փայլում իրենց արվեստով, ապա հետաքրքրություն են ներկայացնում պոլսաՀայերի կենցաղի, ժողովրդական հումորի ու լեզվամտածողության տեսակետից: Արեւմտահայ երգիծանքի ժանրի առանձնահատուկ զարգացման ընթացքը քննելիս զգալի է դառնում «Միմոսի» դերը: Նրա երգիծանքում իրար են խառնված իրականի շոշափելիորեն թանձր գծերը և երգիծանքի անորոշությունն ու վերացականությունը, որ սրամտությունը անխուսափելիորեն տալիս է անեկղոտային բնույթ:

Մոտավորապես նույն մակարդակն ուներ «Շառիվաղի արևելյան» եւնորյա հանդեսը: Հրատարակվել է Կ. Պոլսում, 1876 թ., «Միմոսից» արդեն Հայտնի է. Հաճյանի տնօրինությամբ և խմբագրությամբ: «Շառիվաղին» ևս հրատարակվել է Հայերենով և Հայատառ թուրքերենով, ընդ որում, «Զավեշտական» խորագրի ներքո տպագրվում էին բացառապես Հայատառ թուրքերենով նյութեր: «Շառիվաղիում» հանդիպում ենք նույն կենցաղային թեմատիկային, երկխոսություն-ֆելիետոններին, հետամնաց բարքերի ու աւնորյայի երգիծանքին: Ինչպես և «Մեղուն» ու «Մամուլը», «Շառիվաղին» էլ ունի իր մշտական գործող անձը Դև Նիկոն («Սանդարամետաց

№2, էջ 15): Նիկոն և Նրա զրուցակիցները ստեղծում են ոչ միայն խոսքի, այլև գործողության կոմիզմի հաջողված օրինակներ: Հայերեն և հայատառ թուրքերեն գործերի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Ն. Հաճյանն է, որը համասարաչափ տիրապետում էր երկու լեզուներին: Հաճյանը գրում է պոլսահայ բարբառով թուրքերենի առատ գործածությամբ: Նրա Ֆելիետոնները կառուցված են ժամանակի արևմտահայ երգիծանքին հատուկ առանձնահատկություններով հիմքում ունենալով իրական դեմքեր ու դեպքեր: Երբեմն Ֆելիետոնների նյութը այնքան ճշմարտապատում էր լինում, որ պոլսահայերը գրանց մեջ տեսնում էին իրենց սեփական դեմքը:

1876 թ. ամռանից սկսած նկատելի է դառնում «Շառիվառի» քաղաքական ակտիվությունը: Նա համարձակորեն պաշտպանեց Ն. Պարոնյանի «Թատրոնը», երբ այն խափանվել էր Ներսես պատրիարքի հայտնի շրջաբերականը քննադատելու համար: Պատրիարքի և տպագրական տեսչության արարքը «Շառիվառին» համարում է բռնություն և հակասահմանադրական գործողություն (1876, №21, էջ 242): Նույնպիսի համարձակությամբ երգիծաթերթը «Օրաթերթ «Մասիս» լրագրո» թերթից արտատպեց «Անատուլի հայերի վիճակը» հոդվածը այն դեպքում, երբ ինքը Կ. Ություճյանը, երկյուղելով դրա հետևանքներից, ոչնչացնել էր տվել «Մասիս» այդ հավելված համարները: «Շառիվառին» իրավացիորեն Ություճյանին մեղադրում էր փոքրոգության մեջ: Այս երգիծաթերթը թարգմանաբար տպագրեց Աբգար Սեթի «Հիշատակարանը», որտեղ հեղինակը արևմտահայերի դրություն բարելավումը կապակցում էր Արևմուտքի միջամտության հետ (1876, №48, էջ 378-379, №49, էջ 385-390): «Շառիվառի» այսպիսի ընթացքը, բնականաբար, հազիվ թե վտանգից զերծ պահեր նրան: Համենայն դեպս, 1877-ին, որքան մեզ հայտնի է, «Շառիվառին» այլևս չի հրատարակվել: Օսմանյան հետադիմությունը 1876-ի վերջին հարձակման էր անցել մասնավորապես երգիծաթերթերի դեմ, հրահրվելով երգիծանքի հանդեպ սուլթանի բնադրական ատելությունից:

## «ՄԵՂՈՒ» (1872-1874)

Ն. Սրվաճյանը 1865-ին դադարած «Մեղվի» հրատարակությունը նորոգեց 1870 թ. սեպտեմբերին փաստորեն սկիզբ դնելով ոչ միայն «Մեղվի», այլև արևմտաՀայ դեմոկրատական մամուլի նոր շրջանին: Սրվաճյանը Հեռուգրականորեն շարունակում էր Հավատարիմ մնալ 50-60-ական թթ. «Մեղվի» գաղափարական ուղեգծին և սկզբունքներին: Դրանք ամենից առաջ դրսևորվեցին Հասարակական արատները ի Հայտ բերելու և քննադատելու «Մեղվի» նպատակաուղղվածությամբ, ազգային իրավունքների պաշտպանության և նրա դեմոկրատական լուսավորության բնագավառներում: Սրվաճյանը Հույժ կարևոր էր Համարում եկեղեցու անուկից Հանդես եկող անարժան կղերի քննադատությունը, ինչը Հատուկ էր դեռևս 1850-1860-ական թթ. «Մեղվին»:

Այսուհանդերձ, վերահրատարակված «Մեղուն» նույնը չէր կարող լինել, ինչ նախորդ տասնամյակներին: Ինքը Սրվաճյանը, նկատում էր, որ երբեմնի «Մեղուն» նկատի ունեն բազային վերնախավի ազդեցությունը վերացնել Հայ Հանրության ներսում և ապա բարվոքել կղերի վարքը: «Իմ ուխտիս առաջին մասը ըստ արժանվույն կատարած ըլլալու Հաջողեցա», - գրում է Սրվաճյանը և ավելացնում, որ երկրորդը չի կարողացել իրագործել, որովհետև իր քննադատության առարկան մնում է անդրդվելի Հենվելով ժողովրդի տգիտության վրա (1871, 22 ապրիլի): Դպրոցի, լուսավորական-կրթական և եկեղեցական Հիմնարկների, սահմանադրական մարմինների գործունեության Հանդեպ դրսևորած գործուն վերաբերմունքով Սրվաճյանը ցույց էր տալիս, որ «Մեղուն» դարձյալ ընթանում է Հայ իրականության կարևոր խնդիրներին Համընթաց ամենուրեք պաշտպանելով ժողովրդի տնտեսական, ազգային ու մշակութային զարգացման Հնարավոր պայմանները:

Միաժամանակ նոր շրջանը այնքան էլ բարեհաջող չսկսվեց «Մեղվի» Համար: Նյութական պատճառներով պարբերականը հրատարակվում էր աչքի զարնող անկանոնությամբ զուտ անվանապես պահպանելով եռօրյա պարբերականությունը: Այս ճգնաժամը խորացավ մանավանդ 1871-1872-ին: Ն. Սրվաճյանը դառնություններով գրում էր, թե «Ատեն եղավ, որ ամիս մեկ թերթ մը եղավ, ատեն եղավ, որ այնչափ ուշացավ, որ «Մեղունին» բարեկամները «Մեղուն» մեռավ» Հրատարակեցին ու Հռչակեցին» (1872, 4 նոյեմբերի): Սրվաճյանը այս երևույթը բացատրում է անձնական զբաղմունքով, որ թե-

լադրվում էր նյութական սուղ պայմաններով «վասնզի «Մեղուն» մեզ պահելու անկարող էր, ուստի ուրիշ գործերով զբաղելու ստիպված էինք» (ն. տ.): 1871 թ. մայիսի 29-ին Սըվաճյանը Հայտնում էր, որ իր անձնական գործերը թույլ էն տալիս կանոնավորապես հրատարակել «Մեղուն»:

Ծանր կացությունը հարցականի տակ էր դրել «Մեղվի» հրատարակությունը, և Հայտնի չէ, թե որքան ժամանակ անկանոն լույս տեսնող թերթը կարող էր ապավինել բաժանորդի ներողամտությանը, եթե ասպարեզում է Հայտնվեր շ. Պարոնյանը:

Երիտասարդ երգիծաբանին Հանձնելով «Մեղվի» խմբագրի օգնականությունը Սըվաճյանը նախապատրաստվում էր երգիծաթերթը ամբողջովին նրան Հանձնել: շ. Պարոնյանը արգեն բավականաչափ Հայտնի էր մամուլին և Հանրությանը, իբրև «Փող առավոտյան» և «Եփրատ» պարբերականների խմբագիր և Հեղինակ: Մոտ Հինգ ամիս տեւած Սըվաճյան-Պարոնյան Համագործակցությունը բոլորվեց նրանով, որ Սըվաճյանը նրան Հանձնեց «Մեղվի» տնօրենությունը, խմբագրությունը, գործակալությունը՝ երբեմն իրեն վերապահելով նրա խմբագրության օգնականությունը: Հենց այս ժամանակից էլ «Մեղուն» կրում է Պարոնյանի խմբագրական-հրատարակատեսակի անհատականության կնիքը, անշուշտ, շարունակելով և նոր որակների հասցնելով «Մեղվի» դեմոկրատական, սըվաճյանական սկզբունքները:

Հակոբ Հովհաննեսի Պարոնյանը ծնվել է 1843 թ. նոյեմբերի 19-ին, Ադրիանուպոլսում: Կրթությունը ստացել է տեղի Արչակունյաց վարժարանում, սովորել է նաև Հունական դպրոցում: 1863 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս և այստեղ էլ շարունակել իր գրական գործունեությունը, աշխատակցել պարբերական մամուլին: 1870-ական թթ. առաջին կեսին զբաղվել է մանկավարժությամբ Կ. Պոլսի Մեզպուրյան վարժարանում և Սկյուտարի ճեմարանում: 1860-ականի երկրորդ կեսից ամբողջովին տրվել է լրագրական-խմբագրական գործունեությանը. աշխատակցել է «Փող առավոտյան» պարբերականին, ապա խմբագրել է «Եփրատը»: 1872-1874 թթ. խմբագրել է շ. Սըվաճյանի «Մեղուն» Հանդեսը, իսկ 1874-1877 թթ. Հիմնել և խմբագրել է «Թատրոն» երգիծաթերթը: Միաժամանակ (1874-1875 թթ.) խմբագրել է «Թիլաթրո» արաբատառ թուրքերեն Հանդեսը, 1876-ին «Թատրոն բարեկամ մանկանց» պատկերազարդ մանկական ամսագիրը: 1879 թ. Պարոնյանը խմբագրել է «Լույս», 1883 թ. «Միծաղ» պարբերականները: Նրա խմբագրած վերջին պարբերականը «Նիկարն» էր (1884-1888), որը տպագրվել է Կ. Պոլսում և Ադրիանու-

պոլսում: Պարոնյանը աշխատակցել է «Մասիս», «Լույս», «Փորձ», «Արձագանք», «Փարոս Հայաստանի» պարբերակաձևներին իր երգիծանքի բացառիկ ուժով նրանց տալով Հասարակական սուր հնչեղութիւն: Սակեղձագործել է բացառապես երգիծանքի ժանրով:

Հ. Պարոնյանը մնում է Հայ երգիծական հրապարակախոսութեան և գրականութեան չգերազանցված վարպետը: Մեծ արժեք ունեն նրա զեղարվեստական երկերը «Ատամնաբույժն արևելյան» և «Պաղտասար աղբար» կատակերգութիւնները, «Ազգային ջոջեր» դիմանկարային շարքը, «Մեծապատիվ մուրացկանները», բազմաթիվ ինքնատիպ ու ընդհանրացման մեծ լիցք պարունակող երգիծական այլ հրապարակումները, որոնք Հայ երգիծանքի դասական արտահայտութիւնն են:

Պարոնյանը վախճանվել է 1891 թ., 4. Պոլսում:

«Մեղուն» Հ. Պարոնյանի խմբագրութեանը հանձնելուց հետո մի կարճ ժամանակ անց Սրվաճյանը իսպառ հեռանում «Մեղվից», թեև երբեմն զգացվում է նրա աշխատակցութիւնը<sup>60</sup>: Այսպես, անվիճելի է թվում, որ Սրվաճյանի Հայտնի Մեչուխեչայի մասնակցութեամբ (կամ նրա անունով) տպագրված Ֆելիետոնները պատկանում են Սրվաճյանի գրչին: Արդ, Մեչուխեչան դործող անձ է «Ավագերեցութեան կոիվ մը» (1873, 5 մայիսի) Ֆելիետոնում, որ կրում է «Անիկա» ստորագրութիւնը: Նույն «Անիկա» ստորագրութիւնն է կրում «Հարսնախոսութիւն» (1873, 14 ապրիլի) Ֆելիետոնը: «Անիկա» ստորագրողը Հայտնվում է «Մեղվի» այլ Համարներում ևս: Նրա նյութերին Հատուկ է սրվաճյանական շարադրանքի ոճը 4. Պոլսի բարբառով աշխույժ և սրամիտ երկխոսութիւններ, կենցաղային զվարթ հումոր, մայրաքաղաքի Հայ միջին խավերի առօրյայի պատկերում և այլն: Պետք է եզրակացնել, որ «Անիկան» եղել է Սրվաճյանի ծածկանունը Պարոնյանի խմբագրած «Մեղվում»: Նույն տեսակետից նայելով խնդրին Սրվաճյանի հեղինակութիւնը պետք է լինի Յ. ստորագրութեամբ «Լրագրապետը և յուր անձը» հոդվածը (1873, 12 սեպտեմբերի): Այստեղ ծաղրի է ենթարկվում «Օրագրի» խմբագիր Օ. Խոճասարյանը, «որն ամեն օր չամաշըր փոխելու պես սկզբունք կփոխե» (ն. տ.): Խոճասարյանի մասին լուր բերողն է «մեր Հինավուրց Մեչուխեչան, որ մեռած կկարծեինք»: Ֆելիետոնի կենտրոնական դեմքը Մեչուխեչան է, որը Խրիմյանին պաշտպանում է Խոճասարյանի հար-

<sup>60</sup> Սիմէն «Մեղվի» վերջին համարը (1874 թ. 9 մարտի) Սրվաճյանը նշվել է որպես «Տըրլագրոյ»:



ձակումներից: Այստեղից ևս պետք է մակաբերել, որ Ֆ. ստորագրութունը պատկանում է Սրվաճյանին: «Մեղվում» ևս մեկ անգամ Հանդիպում ենք Ֆին «Ազնվականության նշաններ» ընդարձակ հոդվածի ներքո (1873, 26 սեպտեմբերի): Սրվաճյանի թիրախն այստեղ հայ էֆենդիական դասն է՝ իր զավեշտական, բայց և իրական ու Հանդամանալի նկարագրով: Ֆ. ստորագրությամբ են տպագրվել նաև մի քանի կենցաղային մանրապատումներ (1873, 13 հոկտեմբերի):

2. Պարոնյանի «Մեղուն» իբրև երգիծաթերթ և Հասարակական կյանքն արտացոլող պարբերական, ունի իր շատ յուրահատուկ կողմերը գաղափարական, ինչպես և երգիծական արվեստի տեսակետից: Ամենից առաջ նորույթ էր գավառական Հարստահարությունների Հետևողական վերհանումը, ընդ որում, հաճախ ուղղված օսմանյան կոնկրետ պաշտոնյաների դեմ: Ազգային իրավագրկության հարցը Պարոնյանը բարձրացնում էր առօրյա կենդանի փաստերով ընթերցողին հուշարկելով դրանցից բխող եղբակացությունը: Հայ Հարստահարվող բազմությունների քաղաքացիական իրավունքներից ելնելով Պարոնյանը բազմաթիվ անգամներ ծագրել է քաղաքական ժողովի գործելակերպը Հարստահարությունների առթիվ դիմումներ ուղարկել դավառների թուրքական իշխանություններին: Պարոնյանը նպատակահարմար էր համարում, որ քաղաքական ժողովը դիմի Հենց կառավարությանը Հասարակական հարցերի վերաբերյալ թաղիները մերժելու և այդ ժողովի ազգային իրավասությունները միայն կրոնականի շրջանակներում սահմանափակելու դեմ, որով էլ կպաշտպանվեն ազգային իրավունքները: Երգիծարանը ցույց էր տալիս Հենց Բ. դուռն կողմից հայերի երբեմնի իրավունքների սահմանափակումը կառավարության և պատրիարքարանի փոխհարաբերությունների տեսակետից: Եթե նախկինում կրոնական հարցերի վերաբերյալ Բ. դուռն իր հրամանագրերն ազգին էր ուղարկում պատրիարքարանի միջոցով, իսկ վերջինս էլ առաջնորդներին ու վալիներին, ապա այժմ պատրիարքարանը դրանք ստանում էր ոչ թե կառավարությունից, այլ սրան ենթակա օղակներից, որով և խախտվում են նրա իրավասությունների սահմանները: Ազգային ժողովի գործունեության քննադատությամբ հանդերձ, Պարոնյանը Համառորեն պաշտպանել է արևմտահայերի սահմանադրության այն դրույթները, որոնք ենթադրում էին ժողովրդի կրոնական և ներհամայնքային-վարչական առանձնաշնորհումները:

«Մեղվում» է ծայր առնում Բ. դուան տնտեսական ու ֆինանսական քաղաքականության ձախողման երգիծական բացահայտումը, որն առավել ամբողջական ու նպատակասլաց պեռք է դառնար «Թատրոնում»:

«Մեղվի» երգիծանքը Հ. Պարոնյանի հայտնությունը ձեռք է բերում երկակի արժեք՝ այն գրեթե հավասարաչափ բաշխվում է Հրապարակախոսական և գրական ժանրերի վրա իրենով պայմանավորելով և՛ մեկի, և՛ մյուսի հասարակական բովանդակությունը: Պարոնյանի ստեղծագործությունների կարևոր արժեքը, թերևս, նրա երգիծանքի որոշակիությունն է: Նախորդ շրջանի «Մեղվի» հետ համեմատած Պարոնյանի երգիծաթերթը շատ ավելի հարուստ է ժամանակի գործիչների, իրողությունների, հասարակական ու ազգային անցուղարձի ցուցադրումով, գործողությունների ընթացքով ու բնութագրումներով:

Հ. Պարոնյանի զուտ գեղարվեստական երկերի լինելության տեսակետից ոչ միայն անհրաժեշտ, այլև հետաքրքիր է նրա լրագրական ելույթների և ստեղծագործության փոխադարձ կապերի բացահայտումը: Հայտնի է, որ «Աղգային ջոջերը» նախապես հղացվել են Հրապարակախոս Պարոնյանի գործունեության սահմաններում («Թատրոն», «Լույս») և այնուհետև մշակվել ու դարձել ինքնուրույն գեղարվեստական գործեր: Վերոհիշյալ կապը կարելի է տեսնել ոչ միայն «Մեղվի» թեմաների, այլև դրանց բուն կատարման մեջ: Այս իմաստով լրագրական գլուխգործոց կարելի է համարել «Ճառ» վերնագրով ոչ մեծ հուլիսյան: Աղգային սահմանադրության տարեդարձին նվիրված այդ ճառը իր բացառիկ դատարկախոսությունները ու անհեթեթությունները իսկույն հիշեցնում է «Մեծապատիվ մուրացկանների» բանաստեղծի մենախոսությունը (1871, 3 հունիսի): Պարոնյանը ընդգծում է սահմանադրության իմաստազրկումը, այն, որ դրա անունից շաղկրատողները ոչ մի ընդհանուր բան չունեն ազգային շահերի, մանավանդ ազգի իրավունքների պաշտպանության հետ, որին կոչված էր սահմանադրությունը: Համազգային երևույթի հայտնությունից հետո ի հայտ է գալիս այդ երևույթը սեփական շահերին ծառայեցնելու, գաղափարը նենգափոխելու իրողությունը, և այս հանգամանքը խորաթափանցորեն նկատելի և երգիծելի է Պարոնյանը: 1860-ականի սահմանադրական ոգևորությունը սառել էր, և բացորոշ նկատելի էին դարձել դրա այլակերպության աստիճանի հասած ստվերոտ կողմերը: Աղգային մարմինների և գործիչների երգիծական նկարագրություններում Պարոնյանը

Հատուկ ուշադրութիւն է դարձնում այն Հանդամանքին, երբ դադափարը վերածվում է իր Հակադրութեանը:

Պարոնյանի երգիծանքը դառնում է ավելի ներդրօն, երբ նկատի է առնում սահմանադրական օրինականութիւնը սեփական շահախնդրութիւնններին, սնամասնութեանն ու կրքերին ենթարկող երեսփոխանների կեցիվածքը Ազգային ժողովում: Պատրիարք Մ. Խրիմյանի և նրա Հակառակորդ քաղաքական ժողովի տեսական ընդհարումների ժամանակ Պարոնյանը միշտ պաշտպանել է առաջինին՝ Հաշիի առնելով Հայ դավառի կենսական շահերով մտահոգված ազգանվեր եկեղեցականի նպատակները: Պատրիարքի սկզբունքային պաշտպանութիւնը «Մեղվի» էջերում Հասցրեց նրան, որ Պարոնյանը ձեռք բերեց ոխերիմ Հակառակորդներ ի դեմս կրօնական և քաղաքական ժողովների մի խումբ գործիչների: Սրանք զարմանալի Հետեղականութեամբ նետվեցին «Մեղվի» վրա ճգնելով խափանել տալ այն: Նրանց սադրանքներով իբր պատրիարքի դեմ և «բարոյականութեան դեմ մեղանչող» ծաղրանկար տպագրելու Համար «Մեղուն» խափանվեց երկու ամսով՝ 1873 թ. Հունվարի 18-ից (1873, 10, 17 Հունվարի): «Մեղուն» Հալածանքների է ենթարկվել այսպես կոչված «ձախակողմյան» երեսփոխաններին ծանակելու և Խրիմյանին սատարելու պատճառով: Այդ խմբակցութեան մեջ էին մտնում Նար Պեյը, Մ. Իզմիրլյանը, Ստ. Փափազյանը, Բր. Ղազարոսյանը, Օ. Խոճասարյանը և ուրիշներ: «Մեղվի» դեմ առանձնապես մոլուցքով էր գործում Նար Պեյը՝ Հանրահայտ մի Հոգևորական, որն իր Համբավի Համար քիչ բանով էլ էր պարտական «Մեղվի» ծաղրութեանակին: Եպիսկոպոսի քննադատութիւնը «Մեղվի» էջերում Հատուկ սրութեան Հասսով այն ժամանակ, երբ նա ընտրվեց նախ Թոգոսթոյի, ապա Ջմյուռնիայի առաջնորդ, սակայն երկու դեպքերում էլ Հրամարվեց նախընտրելով Պեշիկթաշի եկեղեցու քարոզչի Հանգստավետ պաշտոնը: Այս փաստերը տեղիք տվեցին Պարոնյանի սրամտութիւնների Հեղեղին և «Մեղվում» տպագրված Համապատասխան ծաղրանկարներին: Նույն կերպ երգիծաթերթը, անկախ Հալածանքներից և մատնադրերից, Հասարակական կարծիքի դատին էր Հանձնում կղերի այլ ներկայացուցիչների ազգավնաս գործելակերպը սկսած վանեցի Պողոս վարդապետից և վերջացրած Ամբրոսիոս ու Գր. Ալեաթեան վարդապետներով: Պարոնյանը, անտարակույս, բարձր էր գնահատում եկեղեցու դերը ազգային բարոյական, մշակութային ու Հասարակական կյանքում, Հաշիի էր առնում նրա Հեղի-

նակությունը ազգային արժեքների պահպանութան գործում: Եվ նույնքան էլ Հետևողական էր, երբ Հոգևորականութան ներկայացուցիչները արհամարհում էին այդ ակնկալիքները: 1873 թ. ապրիլին կրոնական ժողովը պաշտոնական նախազգուշացում հղեց «Մեղվին» արգելելով այսուհետև ծաղրել եկեղեցականներին և կրոնական արարողությունները: Կարծրացած պահպանողականությունը չէր Հանդուրժում առհասարակ որևէ Հոգևորականի քննադատություն դիտելով այդ ոտնձգություն կղերի դասային անձեռնմխելիության դեմ: Առարկելով այսպիսի մոտեցմանը, Պարոնյանը Հայտնում էր, որ մի կրոնավորի ծաղրելը դեռևս կրոն ծաղրել չի նշանակում: Կոնկրետ օրինակներով նա Հիմնավորում էր իր Հողվածներում Հիշատակվող կրոնավորների ընթացքի քննադատությունը և եզրակացնում, որ, Հովանավորելով Հանցավորներին, կրոնական ժողովը ինքն էլ դառնում է Հանցակից մի Հանցադրծություն, որը պատժելի է օսմանյան քրեական օրենսգրքի Համապատասխան Հողվածով (1873, 28 ապրիլի):

Մեզանում գաղափարական սխեմայի ուժով անհերքելի ճշմարտություն էր Համարվում այն, որ դեմոկրատական գործիչը միշտ և ամենուրեք խոնարհվել է ժողովրդի առջև, որովհետև ժողովուրդը անսխալական է, և որ տվյալ գործչի մեծությունն առաջին չափանիշներից մեկն այն է, թե որքանով է նա անխառն արտահայտել ժողովրդի տրամադրությունները: Նույնը պարտադրվել է մեր բոլոր առաջադիմական գործիչներին, այդ թվում և Պարոնյանին: Իրականում Պարոնյանը (և ոչ միայն Պարոնյանը) խորապես Համոզված էր, որ ճշմարիտ ժողովրդասեր Հրապարակախոսը ինքն է նպաստելու Հասարակական կարծիքի ձևավորմանը, և որ ժողովրդի մեջ ինքնակա գործառող կարծիքը դեռևս Հասարակական կարծիք չէ: Վերջինս մտավոր մշակույթի արդյունք է, որը, իբրև այդպիսին, պետք է ներարկվի Հենց իրեն ժողովրդին: Այս իմաստով ուշադրավ է Պարոնյանի «Մեղուի» դեմ Հարձակողներուն» Հողվածը, որտեղ երգիծաբանը պնդում է, որ ինքը Հավատարիմ է մնում ճշմարտությանը և, անկախ ժողովրդի վերաբերմունքից, շարունակելու է իր սկզբունքային մերկացումները (առիթը եղել է Նար Պեյին դատափետելը): «Այս պատերազմին մեջ, - գրում է Պարոնյանը, - ժողովուրդը Հաղթվելով է, որ Հաղթանակ կտանի: Որովհետև երբ ճշմարտության մը Հայտնվիլը ժողովրդյան զայրույթ կպատճառե, ըսել է, որ ժողովուրդը ճշմարտության դեմ կզինվի, ըսել է, որ ժողովուրդը սխալանքի մեջ է» (ն. տ.):

Իբրև Հասարակական որոշակի ուղղութիւնը դաժանող Հրատարակութիւնը, «Մեղուն» իր Հստակ վերաբերմունքն է Հայտնել արեւմտահայ պարբերականների Հանդեսը, բանավիճել ըստ Հարկին ինչպես միշտ գործի դնելով երգիծանքի իր անսպառ պաշարները: Ամենատարբեր առիթներով Պարոնյանը ծագրել է մամուլի անսկզբունքայնութիւնը, երկերեսանիութիւնը, հաճատարութիւնը աշխարհիկ և կղերական ջոջերին: 1870-ականի սկզբներին Սրիմյանի պատրիարքութեան ժամանակ արեւմտահայ պարբերականների դադարակարգի տարրորջման առանցքը վերաբերմունքն էր պատրիարքի գործունեութեան նկատմամբ: Իր Հայրենանվեր գործունեութեան շնորհիվ մեծ ժողովրդականութիւն վայելող Սրիմյանը պատրիարքական իշխանութիւնը դարձրել էր միջոց Արեւմտահայաստանի կացութիւնը բարձրելու Համար: Սահմանադրութիւնը այս տեսակետից նա դիտում էր իբրև փոփոխութեան ենթակա իրավական ակտ, որի փոփոխութիւնը ամենից առաջ պետք է պայմանավորված լիներ վերոհիշյալ նպատակով: Նրա օրոք պատրաստված «Հրահանգը» դավառական ազգային ժողովների Համար, ինչպես և Բ. դռանը մատուցված դավառական Հարստահարութիւնների տեղեկագիրը իրավական տեսակետից ոչ այլ ինչ էին, բայց եթէ սահմանադրութեան կիրառումը ամբողջ ազգի վրա տարածելուն ուղղված միջոցներ: Գավառներում սահմանադրութեան կիրառութեան փոփոխութիւնները, որ փորձում էր իրականացնել Սրիմյանը, պոլսահայ վերնախավն ընկալեց ոչ այլ կերպ, քան փորձութիւնը սահմանադրութեան գոյութեան Համար, ուրեմն և ազգային դաշխակութիւնը իր դասային առանձնաշնորհումների առջև: Բ. դռանն ուղղված դավառական Հարստահարութիւնների վերաբերյալ թագրիրները մայրաքաղաքի բուրժուակղերական վերնախավը դիտում էր իբրև քաղաքականութիւն Հետամտող ազգային Հանդեսութիւն: Սասկացող այդ տագնապը վերածվեց բացահայտ պայքարի և թշնամանքի: Այս Հողի վրա էր իրականանում վերոհիշյալ տարրորջումը, որի արդունքը եղավ պատրիարքի և նրան ընդդիմադիր քաղաքական ու կրոնական ժողովների ընդհարումը: Արեւմտահայ պարբերականները բաժանվեցին երկու ուղղութեան պատրիարքի Համակիրների և Հակառակորդների:

2. Պարոնյանի «Մեղուն» նպատակասլաց բանավեճ էր մղում Հակա-սրիմյանական բոլոր պարբերականների դեմ: Պարոնյանի երգիծանքի Հարուստ զինանոցից զարմանալի առատութեամբ ժանրի նորութիւններ էին Հայտնվում Հարվածելու «Ասիայի», «Օրագրի», «Հայրենիքի», «Մամուլի»,

«Փուռնջի» կողմնակալությանը, պատրիարքի Հակառակորդներին ծառայելու պատրաստակամությանը, նրանց անտարբերությանը գավառի ժողովրդի կարիքների նկատմամբ:

Հակառակորդ մամուլին Պարոնյանը ծաղրել է բովանդակագուրկ նյութերի, Հակասական լրատվության և, մանավանդ, անմիտ ու անհեթեթ պատճառներով իրենց բանավիճային եռանդը սպառելու համար: «Մեղուն» երգիծել է «Մասիսի» և «Փուռնջի» միջև ծավալված տեական բանակոխիլը «կենդանի» բառի, դրա ուղղակի և փոխաբերական իմաստների շուրջ: Այս առումով Հետաքրքիր է նրա սարկաստիկ երգիծանքը «Օրագրի» և «Մազունն-ի էֆթյարի» բանակոչի առթիվ: Դրան նվիրված Ֆելիետոնը «Ճակատամարտ «Օրագրո» ընդդեմ «Մանզումեի» (1872, 4 նոյեմբերի) վերնագրով, իր տեսակի մեջ մի իսկական գլուխգործոց է. Հեղինակը ստեղծել է բարձրարվեստ ոճ դասական և վերամբարձ դարձվածներով պատկերելով այս պարբերականների կոխիլը, որի ոչ միայն պատճառը, այլև ընթացքը չնչին են և ողորմելի: Ստեղծվում է խիստ շոշափելի մի երգիծական Հակադրություն երևույթի և էականի միջև, որը երկուստեք ծիծաղելի է դարձնում պայքարող կողմերին:

Խրիմյանի Հակառակորդ մամուլի դեմ «Մեղվի» պայքարն իր ծայրակետին Հասավ 1873 թ. սեպտեմբերին, երբ Պարոնյանը տպագրեց «Արտասուք «Մեղվի» Հողվածը: Այստեղ շարադրված են նաև նրա առաջադիմական ըմբռնումները ժողովրդի և երեսփոխանության փոխհարաբերությունների, վերջինիս իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Այդ փոխհարաբերության մեջ գերական ժողովուրդն է, իսկ ընտրյալ անձինք նրա կամքն իրականացնողները, որովհետև երեսփոխանի իշխանության աղբյուրը ժողովուրդն է: Պարոնյանը շատ հստակ ներկայացնում է այդ իշխանության չարաչահումները, իբրև բռնապետության անցում կատարելու դրսևորում: «Ժողովուրդն ընտրված ըլլալովը ժողովրդյան քեզի տված իշխանութենեն զատ ուրիշ իշխանություն կուզես ունենալ ալ երեսփոխանություն չես, բռնավոր մ'ես», - գրում է նա և հարում. «Այո, երեսփոխանության ժողովուրդն վախնալ պիտի սորվեցունենք» (1873, 1 սեպտեմբերի):

Հողվածը շփոթ և իրարանցում առաջ բերեց Խրիմյանի Հակառակորդ քաղաքական ժողովի անդամների մեջ: Սրանց կամակատար մամուլը Պարոնյանի Հողվածը մեկնաբանեց ամբոխավարության ոգով, որպես կոչ ժողովրդին հարձակվելու և բռնություն գործադրելու երեսփոխանության վրա: «Օրագիրը» միանգամայն Օ. Խոնասարյանի անհավասարակշիռ և ջղածիք

խառնվածքի ոգով, տպագրական տեսչութան ուշադրութիւնն էր հրավիրել «Մեղվի» իրրե խոռվութիւն հրահրողի վրա: «Զոյելյան բանակը» հող-վաժնում Պարոնյանը հերքում էր այդ ամբաստանութիւնը (1873, 12 սեպտեմբերի):

Հայտնի են «Մեղվի» բանակուիւնները Գ. Այվաղյանի «Մամուլի» հետ, որին անդրադարձել ենք իր տեղում: Ավելացնենք, որ «Մամուլի» հետ Պարոնյանը սուր հակադրութիւն ունեն, ինչպես ասվեց, նաև Վարդոյան-Մաղաքյան մրցակցութեան պատճառով: Եթե «Մամուլը» պաշտպանում էր Մաղաքյանին, ապա Պարոնյանը նույնը, թեև առավել հիմնավորված, անում էր Վարդոյանի դործը և անձը դրականորեն բնութագրելիս: Այսուհանդերձ, պետք է նշել, որ բանավիճող կողմերը հաճախ դիմում էին պատշաճութեան սահմանները անցնող որակումների միակ դեպքը Պարոնյանի ամբողջ լրագրական գործունեութեան մեջ: Մաղաքյանի «Արեւելյան թատրոնի» առթիվ Պարոնյանը բանավիճել է նաև «Մամուլում» իր դեմ հանդես եկած երգի-ծարան Ն. Հաճյանի հետ (1873, 12, 15 դեկտեմբերի):

Հայտնի է նաև Պարոնյանի սուր քննադատութիւնը ուղղված «Մամուլի» հովանավոր մեծահարուստ Ն. Կոչեյանի դեմ: Այս քննադատութիւնը առիթ է տվել ասելու, թե առհասարակ Պարոնյանը ատելութիւն է ունեցել մեծահարուստների այդ կեղծ բարեգործների նկատմամբ: Իրականում Պարոնյանը յուրաքանչյուրի, այդ թիւում և հարուստ մարդկանց, գործունեութիւնը բնութագրելիս չափանիչ է ունեցել նրանց վարքագծի ազգային օգտակարութիւնը: «Հայրենիք» թերթը Պարոնյանը քննադատում էր այն բանի համար, որ նա հանիրավի հարձակվել էր դրամատեր Մկ. Մուրատյանցի վրա: «Հայրենիքին» նա հիշեցնում է, որ չպետք է կողմնակալ լինել, որովհետև այդ անձը իր ծախքով Հայ աղջիկների համար դպրոց է բացել Գատը գյուղում և բավական գումար վճարել հիվանդ աղքատներին բժշկելու նպատակով (1873, 8 օգոստոսի):

«Մեղվի» էջերում բազմաթիւ ուշագրավ դիտողութիւններ կան «Մասիսի» զգուշավոր կեցվածքի, անսկզբունքայնութեան հասնող վեհերոտութեան, «Մանգումե-ի էֆէքարի» գաղափարական հակասական ու ոչ հետեողական ընթացքի և այլնի վերաբերյալ: Երգիծաթերթը ազդեցիկ ելույթներ է ունեցել ոչ միայն ազգային մշակույթի, այլև դպրոցի և առհասարակ լուսավորութեան հարցերին անդրադառնալիս: Պարոնյանը երգիծել է Կ. Պոլսի դպրոցների հնացած ուսումնական ծրագրերը, դասացանկերը, դրանց ան-

տերունչ վիճակը, տնօրենների անձեռնհասութիւնը և այլ ստփերոտ կողմեր միայն նորն ու դրականը հաստատելու դիրքերից: Այս ոգով «Մեղուն» ծաղրել է Սամաթիո Սահակյան վարժարանի անկարգ վիճակը, Ղալաթիո վարժարանի բարձիթողի դասացանկը, Կ. Փանոսյանի Ազապյան վարժարանի աշակերտուհիների թեթևաոլիկ ուժիմը և այլն: Առանձնահատուկ սրութիւն ունի «Խասգլուղի ներսիսյան վարժարանը» (1873, 9 հունիսի) ֆելիետոնը, ուր ցուցադրվում է աշակերտների տգիտութիւնը: Պարբերականը խորհուրդ էր տալիս վարժարաններում չափավորել բանասիրական, լեզվադիտական թեքումը և դրանց տալ գործնական կյանքին համապատասխան արհեստագիտական ու առևտրական գիտելիքներ: «Մեղուն» հատուկ ուշադրութիւն էր դարձնում դպրոցական ծրագրերում լեզվի ուսուցման հարցերին և քննադատում լուսավորութեան մարդում հուսալի խրամատներ փորած պահպանողական գրաբարամոլներին: «Վարժապետական ժողով» ֆելիետոնում ծաղրուծանակի է ենթարկվում այդ ժողովում չդադարող վիճարանութեան թեման «գրաբարը նախակրթարանի մեջ ավանդվելու է, էջ նէ՛ ուսումնարանի մեջ» (1873, 26 սեպտեմբերի): Նույն ժողովը Պարոնյանը երգիծել է «Գրաբարի խնդիր» ֆելիետոնում դավեշտական իրադրութեան մեջ ցույց տալով ժողովի այն մասնակիցներին, որոնք, դպրոցի կարևոր խնդիրները մի կողմ թողած, պայքարում էին յուրաքանչյուրն իր գրած քերականութեան դասագիրքն ընդունել տալու համար: Մանրախնդիր և չնչին հիմնավորումները, հոլովների քանակի շուրջ բարձրացրած անհեթեթ աղմուկը ի դեպ հիշեցնում են մեր ոչ վաղ անցյալում համանման բովանդակութեան բանակոխիվները.

- Բուկին հոլովներդ քանի՞ են:

- Վեց: Բուկի՞նդ:

- Տասը:

- Եկուր սըվոնք երկուքը միացնենք, ընդարձակ քերականութիւն մը շինեմք, տասնվեց հոլովով քերականութիւն մը (1874, 9 փետրվարի):

«Մեղվի» պարոնյանական երգիծանքն ուսումնասիրելիս չպետք է մոռանալ, որ լրագրական երգիծանքը ոչ սակավ դեպքերում գրեթե պատրաստի պարունակում է հեղինակի գեղարվեստական երկերի հերոսների նկարագրի այս կամ այն կողմը, սյուժեների նախնական տեսքը: Այս կողմով ևս համոզիչ կդառնա Պարոնյանի հրապարակախոսութեան բացառիկ գեղարվեստական արժեքը, ճիշտ այնպես, ինչպես և հասարակական զարմանալի հրատապութիւն ունեն նրա գեղարվեստական երկերը: 1874 թ. ապրիլին, հրատարակե-



լով իր նոր երգիծաթերթը «Թատրոնը», Ն. Պարոնյանը նոր ասպարեզ էր բացում իր բարձրարվեստ երգիծանքի համար, որն արդեն ըստ ամենայնի ձևավորվել էր «Մեղվի» երկամյա հազեցած ժամանակաշրջանում:

### «ԹԱՏՐՈՆ» (1874-1877)

«Թատրոնը» ոչ միայն Ն. Պարոնյանի երգիծանքի հետագա շարունակու-թյունն է, այլև բուն իսկ «Մեղվի» շարունակությունը: Այս նոր պարբերա-կանը լույս տեսավ այն ժամանակ, երբ Ն. Սրվաճյանը, իբրև «Մեղվի» արտո-նատեր, դրա հրատարակության իրավունքը անվճար փոխանցեց Ն. Պարոնյա-նին: «Թատրոնի» հրատարակութունը կարելի է համարել Սրվաճյանի և Պա-րոնյանի համագործակցության ավարտը: 1874 թ. ապրիլի 24-ին «Թատրոնի» հրատարակութունից տասնութ օր անց, Պարոնյանը այնտեղ տպագրեց Սրվաճյանի մահախոսականը՝ նշելով, որ նա «ազատախոս գրիչներու առա-ջինը կրնա համարվիլ» (1874, 24 ապրիլի):

Հրատարակվելով 1874-1877 թթ., որոնք վճռական շրջադարձային փուլ էին առհասարակ Օսմանյան կայսրության և Հպատակ ժողովուրդների կյանքում, «Թատրոնն» ամենից առաջ ի հայտ էր գալիս որպես Հայ քաղա-քական երգիծանքի բարձրակետ: Ընդ որում, քաղաքական երգիծանքը ժան-րային իմաստով չափազանց ընդգրկուն է և պարունակում է մեծ երգիծաբանի և՛ հրապարակախոսությունը, և՛ գեղարվեստական գրականությունը: Երկրորդական չպետք է համարել Պարոնյանի նաև կենցաղային երգիծանքը, որը միայն մասամբ է առնչվում Ն. Սրվաճյանի և նրան ժամանակակից մյուս երգիծաբանների (Ն. Հաճյան, Գ. Այվազյան և ուրիշներ) կենցաղային բնույթի գործերին, և որոնց դրսևորման սովորական ձևը ոչ թե գործողության ցու-ցադրումն էր, այլ երկխոսությունը: Պարոնյանն իր նախորդներից տարբեր-վում է գործողության հայտնաբերումով (խոսքին զուգահեռ) և լեզվական յուրօրինակությամբ: Պոլսահայ կենցաղը Պարոնյանը պատկերում է հիմնա-կանում գրական արևմտահայերենով՝ հարկ եղած դեպքում օգտագործելով բարբառը:

Այսուհանդերձ, «Թատրոնի» տարերքը քաղաքական երգիծանքն է, որ դրսևորվել է Օսմանյան Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական կացության, արևմտահայերի հարստահարությունների, ազգային սահմա-նադրական մարմինների, թուրքական լիբերալ գաղափարախոսության և

սուլթանիզմին հատուկ բռնակալական իրողությունների բացահայտման ու քննադատության մեջ: Պարոնյանը սկզբունքային և որոշակի մոտեցում է դրսևորել այս բոլոր խնդիրների նկատմամբ չընկրկելով ո՛չ հեղինակությունների, ո՛չ պաշտոնի և ո՛չ էլ դրանց ձեռնարկած հետապնդումների առջև: «Թատրոնում» ի հայտ է գալիս անկեղծ և ուղղամիտ երգիծանքը, որին խորթ են մանվածապատ խոսքն ու խուսանավումները: Երգիծանքի առարկան ընտրվում է իր հասարակական կարևորության հատակ գիտակցություններ, ապացուցադրվում էական և երկրորդական հատկանիշների այնպիսի ինքնատիպ համադրմամբ, որ հնարավորություն է տալիս այդ առարկան պատկերել իր երևույթի և էություն միասնություն մեջ: «Թատրոնում» Պարոնյանը, ինչպես երբեք, անողոք է և շիտակ, ամենուրեք կարծեցյալ վսեմի մեջ ծիծաղելիին որոնող ու հայտնաբերող:

«Թատրոնի» դիրքորոշումը ազգային հարցերում գերաճում-հասնում է ընդհանրացնող բնույթի, երբ քննադատական կրակի տակ է առնում Ազգային ժողովի գործունեությունը: Այս տեսակետից կարևոր է Պարոնյանի «Սահմանադրություն մեջ ազնվապետություն» հոդվածը՝ երեսփոխաններ Հ. Տատյանի և Հ. Իփեկճյանի ընդհարման կապակցությամբ: Պարոնյանը անխնա ծաղրի է ենթարկում Հ. Տատյանին՝ երեսփոխանական ժողովում նրա ամբարտապան կեցվածքի, Հ. Իփեկճյանին՝ վիրավորանք հասցնելու համար: Իրավունքի տեսակետից այն ժամանակ և այսօր էլ ուշադրավ են Պարոնյանի ժողովրդավարական պատկերացումները ընտրական մարմիններում ժողովրդի ներկայացուցիչների ներկա գտնվելու վերաբերյալ:

Հ. Տատյանի հետ Պարոնյանի բանակռիվը որոշ իմաստով ճակատադրական նշանակություն ունեցավ «Թատրոնի» համար: Երգիծաբանը ձեռք բերեց ուխտերիմ և հիշաչար մի հակառակորդ: Պաշտոնական շրջանների հետ կապված «վսեմափայլ պեյը» չհապաղեց լռեցնելու ըմբոստ հրապարակախոսին: «Թատրոնը» խափանվեց տպագրական տեսչություն կողմից երկու ամսով 1874 թ. հոկտեմբերի 21-ից (№70) մինչև դեկտեմբերի 21-ը (№71): Վերահրատարակված «Թատրոնի» առաջին իսկ համարում Պարոնյանն ապացուցեց, որ պատժիչ միջոցառումը չի սասանելու իր սկզբունքային դիրքորոշումը:

Սահմանադրական մարմինների գործունեությունը մշտապես եղել է «Թատրոնի» քննադատական տեսադաշտում: Արդարացի ծաղրուծանակի առարկա է դառնում քաղաքական ժողովը մի դեպքում «ազգային սնտուկի»

մշտական դատարկության, մյուս դեպքում այդ ժողովի նույնչափ դատարկ վիճարանությունների և երեսփոխանների եսակենտրոն կարծիքները ցուցադրելու խմաստով: Երգիծարանի գրչի թիրախ են դառնում նաև որոշակի անձինք՝ Ստ. Փափազյանը, Ստ. Ասլանյանը, Գր. Ալեաթճյանը, Նար Պեյը, Ամբրոսիոս վարդապետը և ուրիշներ, որպես Հասարակական թերությունների կոնկրետ մարմնավորողներ:

«Թատրոնի» առաջատար թեման, այսուհանդերձ, պետք է Համարել Արևմտահայաստանի Հարստահարությունների խնդիրը, որ պետք է դիտել իր ամբողջության թուրքական իշխանությունների վարած քաղաքականության, Թուրքիայում տերությունների դիվանագիտության և այլնի պարոնյանական գնահատումների Համադրության մեջ: «Թատրոնին» Հարստահարությունների Հարցին անդրադառնալու հնարավորություն էր ընձեռում Արևելյան Հարցի խորացող ճգնաժամը, Խրիմյանի պատրիարքության ժամանակներից Ազգային ժողովի որդեգրած Հարստահարությունների դեմ բողոքի ուղեգիրը: 1870-ականի առաջին կեսին «նոր օսմանները» և օսմանյան պահպանողականության միջև քաղաքական սուր անկյունների որոշ Հարթեցման փորձերը այս կամ այն չափով ևս նպաստում էին Հպատակ ժողովուրդների բողոքելու իրավունքին: Հայ ժողովրդավարական միտքը բողոքի միջոցով ակնկալում էր Հասնել բարենորոգումների՝ բարեխաղիով դավառական բազմությունների տնտեսական ու ազգային ծանրադույն կացությունը: Ընդամիս, ի տարբերություն «Մասիսի», «Փունջի», «Օրագրի» և այլ թերթերի տպագրած նույն բովանդակության նյութերի, «Թատրոնում» Հարստահարությունների պատկերը ներկայացվում էր ոչ միայն քրդական ավազանու և իշխանությունների Համագործակցության մերկացմամբ, այլև ցասկոտ քննադատության շեշտով ուղղված ստրկական լուծը անմոռունջ կրողներին: Իր ընթերցողի մեջ արթնացնելով բողոքի տրամադրություններ՝ Պարոնյանը ներգործուն պայքար էր մղում դավառացիների «գերութենն ավելի դեշ» կացության դեմ: Բռնություններին գործնականում դիմադրելու գաղափարը առավել նկատելի է Պարոնյանի «Հարստահարությունը» հոդվածում: Առիթը Մշո մեջ կատարված Հարստահարություններն էին 1875 թ. ամռանը և աշնանը: Ամենքից մոռացված և լքված մի խումբ մշեցիների մեջ սողոսկում էր կրոնափոխության միջոցով փրկվելու միտքը: Պարոնյանը դրան է հակադրում սեփական ուժերով պաշտպանվելու գաղափարը. «Չենք ուզեր Մշո Հարստահարյալ ազգայնոց սիրտն վիրավորել, բայց կհարցու-

նենք, թե քյուրտերն իրենց զարկած միջոցին իրենք ձեռվրնին կապած կնստին, ինչու համար այդ հարստահարիչ քյուրտերը բռնելով տեղական կառավարութեան չնե հանձներ», - գրում է նա (1875, 8 նոյեմբերի):

Ժողովրդին գլխիկոր հնազանդութեան թմբությունից դուրս բերելու, բռնակալութեան դեմ նրա մարդկային արժանիքները պարզելու և ազատութեան պատրաստելու այս մտայնութիւնը հատուկ էր Հայ ժողովրդավարական գաղափարախոսութեան ջահակիրներին, որն իր բարձրակետին էր հասնելու 1870-1880-ական թթ. Բաֆֆու, Ն. Պարոնյանի, Մ. Փորթուզալյանի, Մ. Մամուրյանի, Ծերենցի և այլոց հրապարակախոսութեան ու գեղարվեստական գրականութեան մեջ:

Հարստահարութիւններ թեմայով «Թատրոն» տպագրած նյութերում մյուս էական առանձնահատկութիւնը թուրքական իշխանութիւնների մեղսակցութեան մերկացումն է երգիծական հոյակապ արվեստով: Հատկապես պետք է նշել Պարոնյանի չափազանց սեղմ, բայց զարմանալիորեն տարողունակ սատիրական ձևակերպումները, որոնք շատ բնութագրական են արեւմտահայութեան հանդեպ այդ իշխանութիւնների գործելակերպը բացահայտելու տեսակետից: «Բարեխնամ կառավարութեան ուշադրութիւնը» հողվածում տրվում է իշխանութեան թանձր և ընհանրացված պատկերը. «Հարստահարութիւնը Մշո կուսակալ կարգված է, Հարստահարութիւնն է Մուշը կառավարողը», - գրում է Պարոնյանը (1875, 22 նոյեմբերի): Այնուհետև «Թատրոնը» արտատպել է Կարինից «Մասիսին» ուղարկված և տեղի հայ բնակչութեան տառապանքները նկարագրող նամակը սգո շրջանակի մեջ: Հրապարակախոսը ընդգծում է, որ իր հպատակների կյանքի և պատվի ապահովումը կառավարութեան պարտավորութիւնն է, որ իսպառ բացակայում է Կարինում:

Հողվածի տպագրութիւնից անմիջապես հետո «Թատրոնը» խափանվեց. տպագրական տեսչութեան վրդովմունքն էր առաջացրել այն, որ Պարոնյանը նշված նամակին կցել էր «չափազանցված խորհրդածութիւններ» ակներևորեն նկատի առնելով իշխանութիւններին ուղղված քննադատութիւնը: «Թատրոնը» փակվեց մեկ ամսով և վերահրատարակվեց դեկտեմբերի 27-ին (№175):

Հարստահարութիւնների մերկացման մյուս ասպարեզը «Թատրոնում» արեւմտահայերի պատվի և արժանապատվութեան ոտնահարման փաստերի

ցուցադրումն է Բաղեշում, Տրապիզոնում, Սեբաստիայում, Զեյթունում և այլուր:

Ժողովրդի ազգային ու տնտեսական կացության, դրա անհրաժեշտ փոփոխության հարցը «Թատրոնի» սեեռուն ուշադրության առարկան էր, Պարոնյանի հրապարակախոսության առանցքը: Այս խնդիրը Պարոնյանի համար չափանիշ էր բնութագրելու արևմտահայ սահմանադրական մարմինները, կղերի ու եկեղեցու վարքագիծը, ազգային գործիչների գործունեության բովանդակությունը: Պատահական չէ, որ ժողովրդի դրության, ինչպես նաև նրա մշակույթի նկատմամբ դրսևորած վերաբերմունքով էր առաջնորդվում Պարոնյանը, երբ գրում էր ազգային գործիչներին նվիրված իր դիմանկարները:

Ժամանակին Ղ. Սըվաճյանը նկատում էր, որ «Մեղվի» առաջնակարգ պարտականություններից մեկը պետք է լինի կղերի թերությունները բացահայտելու միջոցով եկեղեցու ազգային նկարագրի բարվոքումը: «Թատրոնը» զարգացնում է այս սկզբունքը հրապարակախոսական առավել զորեղ միջոցներով: Պարոնյանը երգիծել է հոգևոր անձանց, Կ. Պոլսի որևէ թաղի քարոզչի, առաջնորդական աթոռը զբաղեցրած հոգևորականի, կրոնական ժողովի անդամների, պատրիարքների և այլն: Ընդամենը, Պարոնյանը միշտ նկատի է ունեցել իր քննադատության հասարակական կարևորությունը: Հայտնի է «Թատրոնի» անհայտ դիրքը Բերայի ս. Հարություն եկեղեցու քարոզիչ Ամբրոսիոս վարդապետի նկատմամբ, որի բարոյական մեղանշումները հետևողականությամբ ցուցադրված են «Թատրոնում»: Վարդապետը, ոչ առանց կրոնական և խառը ժողովի իր բարեկամների թևակոխության, դատական գործ էր հարուցել Պարոնյանի դեմ, որից հրապարակախոսը դուրս եկավ պատվով մինչև վերջ Հիմնավորելով իր քննադատության արդարացիությունը: Նույնչափ միանշանակ և կտրուկ էր Պարոնյանի վերաբերմունքը վանեցի արկածախնդիր Պողոս վարդապետի հանդեպ, որի դեմ առաջավոր հրապարակախոսությունը ի դեմս Ղ. Սըվաճյանի և Մ. Նալբանդյանի, պայքար էր սկսել դեռևս 1860-ական թթ. «Մեղվի» էջերում, իբրև արձագանք Վանում և ապա Կ. Պոլսում այս անձի շուրջ ընթացող ընդհարումների «պողոսյան» և «ապողոսյան» խմբակցությունների միջև:

«Թատրոնում» երգիծական անխնա հարվածների են արժանացել կղերի կողմից եկեղեցական իրավասությունների չարաշահումները: Հատկանշական են այս տեսակետից «Թատրոնի» և Նար Պեյի, մյուս կողմից «Թատրոնի» և

կրոնական ժողովի բախումները Միջագուղում կատարված ապօրինի կրկնամուսնության շուրջ: Այդ դործը Պարոնյանը դարձնում է միջոց առհասարակ սահմանափակելու կրոնական ժողովի դերը ամուսնությունների մեջ: Բարձրի և բարոյականության մաքրության համար էր, որ Պարոնյանը պայքարում էր այդ նպատակին կոչված, բայց իրականում այդ նպատակը խաթարող կղերի դեմ: Այս դեպքում, սակայն, կրոնական ժողովը քրիստոնեական հեղուկություն չցուցաբերեց: Նրա ջանքերով «Թատրոնը» փակվեց երեք ամսով 1876 թ. փետրվարի 19-ից (№183) մինչև մայիսի 29-ը (№184): Պատճառը «Ամուսնական դատ մը և անոր պաշտպանը» վերնագրով ֆելիետոնն էր, որտեղ բացահայտվում է Նար Պեյի կամայականությունը: «Թատրոնում», «Լույսում», «Նիկարում» և այլուր Պարոնյանի քննադատական բազմաթիվ ելույթները կղերի ոչ արժանավոր ներկայացուցիչների դեմ ցույց են տալիս, որ մեծ երգիծաբանը այս խնդրին շարունակում էր տալ համազգային նշանակություն: Երբեք չպետք է անտեսել, որ լուսավորչալ և ազգանվեր կղերից Պարոնյանն ուներ բավականաչափ լուրջ սպասելիքներ ժողովրդի նյութական և հոգևոր զարգացման, նրա ազգային դրուկյան և իրավունքների բարվոքման ասպարեզում:

Ազգային-հոգևոր ամենակարևոր կապերից մեկը համարելով եկեղեցին և կրոնը Պարոնյանը, բնականաբար, անհանդուրժող դիրք պետք է դրավեր հայ հանրության մեջ այլ դավանանքների տարածման վտանգի հանդեպ: Տակավին 1870-ականին բարձրացված խնդիրը հայ կաթոլիկների և լուսավորչականների մերձեցման իմաստով, նա պատկերացնում էր միայն ազգային եկեղեցու շուրջ խմբվելու միջոցով: Հայտնի են նրա քննադատական ելույթները Ծերենցի դեմ կաթոլիցիզմի դեմ վերջինիս արմատական դիրքորոշում չունենալու համար: Պարոնյանը ազգային միասնությունը պատկերացնում է ոչ այլ կերպ, քան ազգային-կրոնական միասնության մեջ: Երգիծաբանը իրավացիորեն հաշվի էր առնում միլիթների համակարգի նշանակությունը Օսմանյան Թուրքիայում և դրանից բխող բոլոր հետևանքները ամենալայն ազգային ու հասարակական իմաստով: Ծերենցը ևս հանգելու էր այդ մտքին մի քանի տարի անց վերադառնալով ազգային եկեղեցու դավանանքին:

Առանձնապես կրթող էր երգիծաբանը բողոքականության հքուպանսիվ նկրտումների հանդեպ: «Միսիոներական պատգամավորություն» հոդվածում նա չափազանց տեսանելի է դարձնում բողոքականության քայքայիչ դերը: Դառը հեգնանքով է ներկայացվում միսիոների երեսպաշտ նկարագիրը

խաթարված անդրծովյան առողանությամբ «Աս իեհրայռը կորսիված է, պիէտք է բառի հռատներ տալ և ճամբու բիէնել» (1875, 23 հունվարի): Մարդորսության բողոքական ցանցի վտանգավոր ավերածություններից խուսափելու համար Պարոնյանը առաջարկում էր ստեղծել համապատասխան նյութական միջոցներ, քանի որ հայտնի է, որ բողոքականները իրենց հունձքը առատորեն էին անում այնտեղ, որտեղ գործում էին սովի կամ անհուսության օրենքները: Պարոնյանն առաջարկում էր այլևս հույս չդնել պատրիարքաբանի կամ էջմիածնի վրա, կազմել ընկերություն, որպեսզի «մեր տառապյալ եղբայրներուն օգնենք, բողոքականություն քարոզվող զավառներուն վարժարաններն բարեկարգենք» (1875, 10 մայիսի): Սրանով հանդերձ, Պարոնյանը միշտ պահպանեց չափի զգացումը. նա դեմ է ծայրահեղություններին, այսինքն հախուռն կերպով ժխտել այն ամենը, ինչ կապվում է բողոքականության գործունեության հետ: «Սով և բողոքականություն» հոդվածում (1875, 12 հունիսի) նա ըստ արժանվուն է գնահատում բողոքականների մարդասիրական օգնությունը Արևմտահայաստանի սովյալներին և քննադատում այն խմբագիրներին, որոնք այդ օգնության մեջ նկատում էին զավանակա՞ն ուրագայթներ: Այս կարգի օգնությունը նա համարում է զուտ մարդասիրական պարտքի կատարում: Պարոնյանը կղերամտության համոզված հակառակորդն էր՝ անկախ որևէ դավանանքից: Դրանից ելնելով՝ նա հիմնավոր առարկություններ էր անում կղերական (ժառանգավորաց) վարժարան հիմնելու ծրագրին և միանգամայն բավարար էր համարում Երուսաղեմի և Արմաշի գործող վարժարանները:

«Թատրոնում» ևս Պարոնյանն ամեն կերպ խրախուսել է Ղ. Վարդույանի մշակութային գործունեությունը, և երբեմն այդ խրախուսանքը մերձենում է կողմնակալության, երբ գնահատում է նրա մրցակից Տ. Չուխաճյանին ու նրա թատրոնը: Հազիվ թե կարելի լինի խոսել Պարոնյանի անկողմնակալության մասին, երբ նա իր թատերախոսականներում գնահատում է «Արիֆին Հիյլեսի» և «Քյոսա Քեհյա» օպերետները: Պարոնյանը ժխտում է առաջինի կատակերգական արժանիքները՝ երաժշտությունը, տեքստը, գործողության զարգացումը՝ «նյութն ու հիմը» անելով նաև ինչ-ինչ արդարացի դիտողություններ: Բայց և Պարոնյանը նախանձախնդիր է նույն Չուխաճյանի թատրոնի նկատմամբ, երբ խոսքը վերաբերում է թուրք մամուլի հանրավիճարձակումներին (1876, 18 դեկտեմբերի): Միաժամանակ, մեծ երգիծաբանը հույս անողոք էր հայերի թրքասիրական ցույցերի նկատմամբ:

Իր խորաթափանցութեան և իմացական լայն կարողութիւնները շնորհիվ Պարոնյանը կարողանում էր ընկալել քաղաքական ապատեղեկատվութիւնը, որից և զգուշացնում էր Հայրենակիցներին: Ամենուրեք նա ելակետ ուներ ա- նաչառ և ճշմարտացի լրատվութիւնը: 1876 թ. Հուլիսին Պարոնյանը ընթեր- ցողի աչքին Հուլժ կասկածեմի, ապա ծիծաղելի դարձրեց մի քանի Հայերեն թերթերի («Լրագիր», «Նորագիր», «Մեծմուսը Հավատիս») ստահող լուրը Թուսաստանի դեմ կովկասյան կարծեցյալ ապստամբութեան մասին, որին, իբր, մասնակցել էին նաև Հայերը՝ կաթողիկոսի գլխավորութեամբ: Նա իրա- վացիորեն մեղադրում էր պատրիարքարանին այդ կեղծ լուրի մասին Հերքում չհրապարակելու և ժողովրդին չկողմնորոշելու համար: Պարոնյանը մերժում էր թուրքական կողմնորոշումը, սակայն և առարկում էր ցարիզմի ազգահա- լած քաղաքականութիւնը քողարկելու միտումներին:

Արեւելյան Հարցի դիվանագիտական բոլոր վայրիվերումները, տերու- թիւնների քաղաքական խորդավանքները իրենց նրբերանգներով արտացոլ- վել են «Թատրոնում», որ այսօր էլ զարմանք է պատճառում իր ապշեցուցիչ խորութեամբ: Երգիծական ամենաբազմազան Հնարանքներով Պարոնյանն իր ընթերցողին տեղյակ էր պահում Թուսաստանի և Անգլիայի Հակակշիռ քա- ղաքականութեանը, Բիսմարկի վատ քողարկված չեղքութեանը Բալխան- ներում, Ավստրիայի շահախնդիր մտահոգութիւններին և այլն: Միստ ար- տահայտիչ իրազրութիւններում կամ երկխոսութեան, Համառոտ խոսքի շրջանակներում Պարոնյանը ստեղծել է գործողութեան և խոսքի կոմիզմի ար- տակարգ Հետաքրքիր նմուշներ, որոնք իրենց տպավորիչ ընդհանրացումնե- րով վկայում են երգիծաբանի՝ երևույթը խորքից դիտելու մեծ կարողու- թիւնը: «Թատրոնի» խմբագրելը միջազգային իրադրութեան գիտակի նրբամ- տութեամբ էր գնահատում տերութիւնների քաղաքականութեան գաղտնի ծախքերը: Բուլղարիայում թուրքական գազանութիւնների առթիվ Գլադստոնի գրած գրքուկը, որ խանդաղատանք էր առաջացրել իր քրիս- տոնեասիրութեամբ, չչփոթեցրեց Պարոնյանին, որը մարդասիրութիւնից շատ առավել դրա մեջ տեսնում էր բրիտանական կայսրութեան շահերը: Անգլիա- կան քաղաքականութեան այս երգիծական-իրատես վերլուծութեամբ էր, որ Պարոնյանը անգլիական Հասարակական կարծիքը նմանեցնում էր Հովանոցի, որը «Հովը սաստիկ փչելուն պես մյուս կողմը կղաւնա կոր» (1876, 4 դեկտեմ- բերի):



Թուրքական սահմանադրութեան երգիծումով ևս Պարոնյանը սթափ ճշգրտումներ էր մտցնում արեւմտահայ առաջավոր մտավորականութեան դիրքորոշման մեջ: Երգիծաբանը ի սկզբանէ համոզված էր օսմանյան բռնակալութեան և սահմանադրական կարգերի անհամատեղելիութեան մեջ: Նրա բազմաթիւ երգիծական պատումների, դատողութիւնների և դիտողութիւնների մեջ անսքող երևում է իր թերահավատ վերաբերմունքը սահմանադրութեան գործունակութեան նկատմամբ: Այդ պատճառով սահմանադրութիւնը նա անվանել է «ոսկեզօծյալ սահմանադրութիւն»: «Թատրոնում» պարզորոշ երևում է սահմանադրութիւն հռչակող արեւելյան Հին բռնակալի դիմագիծը: 1876 թ. վերջին Միդհատ փաշայի քսորը ևս Պարոնյանը դիտում է որպէս թուրքիայում սահմանադրութեան անհեռանկարայնութեան ապացույց: Սահմանադրական ազմուկ-ազադակի մեջ Պարոնյանը ցուցադրում է թուրքական իշխանութիւնների ճիգն ու ջանքը թաքցնելու ապօրինութիւններն ու բռնութիւնները: Պաշտոնական քարոզչութեան, սահմանադրական «նոր դարազլիսի» խմբերգի և կեղծ ոգևորութեան խորքում երգիծաբանը հայտարարում է բռնակալական հասարակութեան անշարժութիւնը: Հատկանշական է, որ Պարոնյանը մերկացնում է սուլթանական քարոզչութեան այն կեղծիքը, թէ իբր թուրքիան իր քաղաքակրթութեամբ գերազանցել է Ռուսաստանին նրանից շատ առաջ դառնալով սահմանադրական երկիր: Ժամանակին հորինված այս կեղծիքը հարատեւել է մեր օրերի թուրքական պատմաբանների և նորելուկ քաղաքագետների ելույթներում, ուստի և Պարոնյանի սպանիչ երգիծանքը այս հարցում ունի արդիական նշանակութիւն:

Ոչ մի սպասելիք չունենալով օսմանյան խորհրդարանից և սահմանադրական մարմիններից Պարոնյանը դիպուկ ծաղրի է ենթարկել Սերվիլէնի ակտիվութիւնը սենատի անդամ ընտրվելու գործում: Նույն վերաբերմունքը նա չթաքցրեց այն ժամանակ, երբ Կ. Պոլսի հայերն ու հույները սկսեցին մրցակցել սենատում ազատ տեղ (քրիստոնյայի) զբաղեցնելու համար: Խորհրդարանի ընտրութիւնների առթիւ Պարոնյանն անխնա երգիծել է նաև Կ. Պոլսի այն դատարկապորտ խավերին, որոնց ներկայացուցիչները, զուրկ լինելով որևէ սեփականութիւնից, անձնական կյանքում չհասնելով որևէ հաջողութեան, փորձում էին սահմանադրական խաբուսիկ մթնոլորտի մեջ տիրանալ հասարակական որոշ դիրքի: Օսմանյան սահմանադրութեան սնանկութեան մեջ Պարոնյանն ի հայտ է բերում իր ժխտական վերաբերմունքը

առհասարակ թուրքական լիբերալ շարժման ու գաղափարախոսության հանդեպ:

«Թատրոնի» քաղաքական երգիծանքի հունը առավել լայնացնում են նրա էջերում տպագրված երգիծական դիմանկարները: Հետագայում դրանք լրացնելով ու վերամշակելով Պարոնյանը հրատարակեց իր խմբագրած «Լույսի» 1879-1880 թթ. համարներում և սպա միաժամանակ, հրատարակեց առանձին «Ազգային ջոջեր» վերնագրով: «Թատրոնում» Պարոնյանը տպագրել է Բարունակ Ություճյանի, Կ. Փանոսյանի, Ն. Ռուսինյանի, Խ. Միսաքյանի, Օ. Խոճասարյանի, Կ. Ություճյանի և այլոց դիմանկարները: Պարոնյանի կերտած դիմանկարները լիարժեք գեղարվեստական ստեղծագործություններ են, բայց և իրենց իրապատում բովանդակությամբ որոշակիորեն առնչվում են նրա հրապարակախոսական երկերին և ընդլայնում դրանց ճանաչողական ու մտավոր սահմանները:

Ոչ միայն ազգային, այլև թուրքական քաղաքական կյանքի անվրեպ ու խոր քննադատությունը «Թատրոնում» վկայում է, որ Պարոնյանը այս պարբերականում շատ ավելին կարող էր անել, եթե դրան չխանգարեր ոստիկանական գրաքննությունը: 1876 թ. Համիդի թելադրանքով գրաքննությունը ըմբոստ մամուլը սկսեց մեղադրել անկրոնության, հակապետական գործունեության և անբարոյականության մեջ: Մեղադրանքն ամենից առաջ ուղղվում էր երգիծաթերթերի դեմ: Հունվարին ծաղրանկարների վրա հաստատվեց նախնական գրաքննություն: Մեկ տարի անց, 1877 թ. սկզբին մեկընդմիջտ արգելվեց թուրքական երգիծաթերթ «Հեյալը», իսկ մայիսին «նոր օսմաններին» դեմ ուղղված հալածանքի կապակցությամբ քստորվեց «Քաճքաճա» երգիծաթերթի տնօրեն Մուհիբ բեյը: «Թատրոնում» այլևս հնարավոր չէր քաղաքական շեշտ ունեցող «Կսմիթներին» տպագրությունը. «Դիվանագետները կամթտելու տեղ աղջիկները կկամթտեն», - գրում էր դառնացած երգիծաբանը (1877, 23 ապրիլի):

Երգիծաթերթերի դեմ ուղղված սուլթանի մոլուցքը տարածվեց նաև «Թատրոնի» վրա. այն խափանվեց 1877 թ. հունիսին:

«Թատրոնին» զուգահեռ Պարոնյանը 1874-1875 թթ. հրատարակել է արաբատառ թուրքերեն «Թիյաթրո» երգիծաթերթը: Գ. Ստեփանյանի հիմնադրող կարծիքով այդ թերթը հիմնականում հենվել է «Թատրոնի» նյութերի վրա, սակայն Պարոնյանը «Թիյաթրոյին» տվել է որոշ ինքնուրույնություն. կան նյութեր, որոնք չեն տպագրվել «Թատրոնում», բայց գետեղվել են «Թիյաթր-

րոյում», կան և այնպիսիք, որոնք ենթարկվել են որոշակի փոփոխութիւններին: «Թիլյաթրոն» դադարեցվել է 1875 թ. ապրիլին մեծ տերութիւններից մեկի քաղաքականութիւնը ծաղրելու պատճառով: Նախատեսված լինելով թուրքախոս ընթերցողի համար «Թիլյաթրոն» մյուս կողմից պետք է ապահովեր «Թատրոնի» նյութական դրութիւնը, թեև չպետք է անգիտանալ նրա բերած նպաստը թուրքական մամուլին և հրատարակախոսութեանը:

## «ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՍ ՄԱՆԿԱՆՑ» (1876)

1876 թ. հունվարից մինչև դեկտեմբեր Հ. Պարոնյանը իր տնօրինութեամբ և խմբագրութեամբ հրատարակել է «Թատրոն Բարեկամ մանկանց» կիսամսյա հազեսը: Ժամանակագրական կարգով լինելով երկրորդ մանկական հայ պարբերականը ամերիկյան միսիոներների հրատարակած «Ավետաբեր տղայոց համար» (1872–1915) ամսագրից հետո, «Թատրոն բարեկամ մանկանցը» իր ազգային բովանդակութեամբ, մանկան դաստիարակութեան և կրթութեան հիմնահարցերի խոր և արդիական առաջադրմամբ ու գործնական լուծումներով մնաց առաջին և բացառիկ հրատարակութիւնը ամբողջ արևմտահայ մշակութի պատմութեան մեջ:

Այս պարբերականը արևմտահայ մամուլի մեջ միանգամից երկու ակնառու նորույթ էր բերում: Նախ, այն աշխարհիկ կրթութեան ու դաստիարակութեան բնույթ ու նպատակներ ունեցող հրատարակութիւնն էր: Երկրորդ կարևոր նորույթը ժանրային առանձնահատկութիւնն է, ոչ միայն մանկական, այլև երգիծական բնույթը: Եվ եթե Պարոնյանի այս պարբերականի ազգային նկարագիրը խոր ազդեցութիւն թողեց հետագայում հայոց մեջ հրատարակվող մանկապատանեկան պարբերականների վրա, ապա ժանրային, երգիծական ոճի տեսակետից այն մնաց իբրև անկրկնելի երևույթ առհասարակ հայ մանկապատանեկան հրատարակութիւնների մեջ:

Բնականաբար, այսպիսի բնույթ և ոճ ունեցող հանդեսի խմբագիրը (մանավանդ, երբ խմբագիրն էր գրում նյութերի մեծագույն մասը) պետք է լիներ մանկավարժ և երգիծաբան: Ոճի տեսակետից տվյալ համադրութիւնը ինքնին անսովոր է, որովհետև երգիծանքի սահմաններ չճանաչող ժանրային հանդգնութիւնը սպառնում է չտեղավորվել այնպիսի փխրուն և նուրբ մի բնագավառում, ինչպիսին մանկավարժութիւնն է: Այստեղից չափի և բովանդակութեան հակասութիւնը երգիծանքի և մանկավարժութեան միջև:

Պարոնյանը, սակայն, զարմանալի ներդաշնակություն տվեց այդ Համադրու-  
թյանը ստեղծելով բարոյական դաստիարակությունն ու կրթությունը եր-  
գիծական ժանրի միջոցով սերմանող չափազանց ինքնատիպ մի Հրատա-  
րակություն, որտեղ երգիծանքը Հանդես է գալիս իբրև բարոյական նպատա-  
կադրմանը ենթակա շարժիչ ուժ: Սա էր «Թատրոն բարեկամ մանկանց» Հան-  
դեսի մեծ Հմայքն ու արժեքը ժամանակի արևմտահայ դեռատի ու մեծահա-  
սակ ընթերցողի Համար:

«Իմ պզտիկ կարդացողներին» վերնագրով առաջաբանում Պարոնյանը  
մանկան առջև բացում է պարբերականի և ընթերցողների անցնելիք Հրապու-  
րիչ ու անչափ Հետաքրքիր ճանապարհը: Խմբագիրը կարծեք խոստանում է  
մի անվերջանալի կախարդական խաղ նոր դասեր, զվարճալի նյութեր, գեղե-  
ցիկ ու Հետաքրքրական պատմություններ, Հանելուկներ և այլն: Պարոնյանը  
այստեղ և առհասարակ, պարբերականի ամբողջ Հրատարակության ընթաց-  
քում առաջին շարք է մղում խոր ակնածանքի զգացումը մայրենի լեզվի Հան-  
դեսը: Ապա աննկատելի անցումներով և մանկանը դրավող պարզ զրույցով  
խմբագիրը իր «երեք տարեկանն մինչև տասնհինգ տարեկան» ընթերցողին  
ուրվագծում է մեծահասակների զարմանահրաշ աշխարհ տանող ճանա-  
պարհները՝ զրաճանաչություն, նամակ գրել, Հաշվել, տնային տնտեսություն  
վարել, խոհարարական Հմտություններ, մարմնամարզական վարժություններ,  
աղոթք, ճարտասանություն և այլն:

«Թատրոն բարեկամ մանկանց» Հանդեսում Պարոնյանը կարողացավ Հաս-  
նել մանկահասակ ընթերցողի Հետ Հետադարձ կապին: Նրա Հետ Պարոնյանը  
զրուցում է որպես Հավասարը Հավասարի Հետ սկզբից իսկ զրավելով նրա  
վստահությունն ու Հավատը: «Բայց խոսքը մեր մեջ մնա, - գրում է նա, -  
գաղտուկ ըսելիք մը ունիմ ձեր ականջն ի վար: Ես այսչափ բաներ ձեզի սոր-  
վեցնել խոստացած ատենս, կան անանկ բաներ, որ ես ալ ձեզնե սորվելով,  
պիտի գրեմ, ինչպես որ այս «Թատրոնին» մեջ գրած պատմություններուս  
Հատը ձեզի պես պզտիկ տղոցմ սորված եմ» (1876, №1, էջ 2): Պարոնյանը, ի-  
րոք, Հարգում է երեխայի արժանապատվությունը լավ գիտենալով դրա  
արժեքը նրա դաստիարակության գործում: Խմբագիրը նույնիսկ խաղի է վե-  
րածում իր Հանդեսի բաժանորդագրության Հարցը, այնպիսի մի խաղի, որտեղ  
Հրապուրված մանուկները ակամայից նույն խաղի մեջ պետք է ներգրավելին  
ծնողներին: «Սիրուն զավակներս, այս ամեն սորվեցնելիքներուս Համար մեկ  
բան մը պիտի ուզեմ ձեզնե. ամեն մեկ «Թատրոնին» Համար 50 փարա պիտի

տաք ինձ, որ ես այլ թուղթի և մեկանի տամ և որ գրեթե (սայքի) 100 տրամ խնձորի կամ ափ (ափուճ) մը շաքարի գինն է: Բայց այս 50 փարան ձեր գանձանակեն (խումպարա) պիտի տաք ինտոր որ խաղալիքի կամ պտուղի (յեմիշ) համար կուտաք: Այս կերպով ձեր մեծերուն ծանրություն տված էք ըլլար» (ն. տ. էջ 3):

Պարոնյանը առաջնակարգ նշանակութիւն է տվել մանկան բարոյական և մտավոր դաստիարակութեանը: Հանդեսի բոլոր գեղարվեստական ստեղծագործութիւնները, ճանաչողական արժեք ունեցող պատկերազարդ նյութերը, իր խմբագրի հաճախակի զրույցները ընթերցողի հետ և այլն, ամենուրեք ցույց են տալիս, որ սկզբունքային նշանակութիւն է տրվում առաքինութեանը, հայրենասիրութեանը, մարդասիրութեանը, արժանապատիւութեանը, բնութեան նկատմամբ ակնածանքին, խորը հարգանքին դեպի իմացութիւնն ու քաղաքակրթութեան արժեքները: Պարոնյանը խուսափում է բարոյական մերկապարանոց քարոզներից, նա նախընտրում է փոքրիկ պատմութիւններ, առակներ, ոտանավորների, արվեստի ու բնութեան գեղեցկութիւնների սյուժետային ներգործութեան միջոցով ազդել մանկան երեւակայութեան վրա, առաջնորդել նրան գեղեցիկի, առաքինութեան հրապուրիչ ուղիներով և ձևավորել նրա վարքագիծը: Դաստիարակչական բնույթի նյութերում պարբերականը ելնում է մարդու բարոյական պարտքի զգացումից, որով և պայմանավորում է նրա վերաբերմունքը մյուս մարդկանց, արտաքին աշխարհի նկատմամբ: Հաճախ այդ պարտքը Պարոնյանը պատկերացնում է կրոնաբարոյական դաստիարակութեան ազնվացնող արժեքներով: «Թատրոն բարեկամ մանկանցի» առաջին համարում Պարոնյանը տպագրել է «Խոսք առ ծնողս և պաշտպանս տղայոց» համառոտ դիմումը ծնողներին, որտեղ ուրվագծվում է պարբերականի բովանդակութիւնը: Այստեղ նա շեշտում է իր ամենակարևոր նպատակը «դեռահաս տղայոց դաստիարակութիւնը»: Այս նպատակին Պարոնյանը ձգտում է ոչ միայն պարզ ճշմարտութիւններ հասցնելով, այլև դրանց կցելով սեփական մեկնաբանութիւնները: Պարոնյանը խորապես համոզված էր, որ բարոյական դաստիարակութիւնը սկսվում է ընտանիքից, և որ մանուկը նախապես իր մեջ չի կրում բարոյական որևէ արժեք կամ հակում որևէ արժեքի նկատմամբ: Այս պատճառով պարբերականը լեցուն է ընտանեկան, կենցաղային իրադրութիւններին մեջ իրենց փոխհարաբերութիւնները իրացնող դեռահասների ու մեծահասակների առօրյան պատկերող զրույցներով, պատմվածքներով, խրատներով և այլն: Այդ

փոխհարաբերությունների մեջ մի որոշ տեղ է հատկացվում պատժի միջոցով ներգործությանը, բայց այնպիսի վերապահումով, որ պատիժը չպետք է վերածվի բռնության, այլ համողի մանկանը դրա արդարացիության մեջ. պատիժը պետք է հավասարակշռի հանցանքին:

Բարոյական դաստիարակության գործընթացը Պարոնյանը պատկերում է մի շատ հետաքրքիր նորույթով. ստեղծել է մի աղջկա՝ Վարդուհու կերպարը, որը դեպքից դեպք ստանում է բարոյական դասեր և խրատովում՝ հրաժարվելով իր բնավորության ու վարքագծի հոռի կողմերից (№1, էջ 5-6, №3, էջ 21-22, №7, էջ 50):

Քաղքենի հասարակության վարքուբարքը մանուկ ընթերցողի աչքին արժեզրկելու միտումով Պարոնյանը երբեմն դուրս է գալիս մանկական աշխարհից և ցույց տալիս մեծահասակների աշխարհի թերությունները, մանկան մեջ պատվաստում քննադատական վերաբերմունք դրանց հանդեպ: Հայտնի են երգիծաբանի սքանչելի սրամտությունները «Թատրոնում» ուղղված մոդայամուլության, արտառոց ընդօրինակությունների դեմ, վերաբերեն դրանք հագուստին, պճնամուլությանը թե վարքագծի չափանիշներին: Այս արատների հիմքում Պարոնյանը նկատում է քամահրանքը ազգայինի նկատմամբ, ստրկամիտ հաճոյացումը օտարին («Նորասիրություն» հոդվածը, №9, էջ 66-67):

«Թատրոն բարեկամ մանկանցը» իր ընթերցողին կապում է բնությանը այն համարելով բարոյական ինքնության ձևավորման գորեղ խթան: Զրույցների և պատմվածքների մանուկ հերոսները հարգանք ու սեր են տածում բնության հանդեպ, կամ նրանց է ներարկվում այդ տրամադրությունը: Պարբերականի բոլոր համարների վերջում համառոտ տեղեկություններ են տրվում որևէ կենդանու (առյուծ, գայլ, աղվես, եղնիկ և այլն) մասին համապատասխան պատկերով: Ընդ որում, տեղեկությունները տրվում են միօրինակ շարադրանքով կենդանու արտաքին տեսքի նկարագրությունը, բնավորությունը և այլն: Այսպիսի սխեման մանկանը վարժեցնում էր կանոնավոր մտածողության: Նույն կերպ մատուցվում են նաև աշխարհագրական գիտելիքներ, ինչպես օրինակ, «Մասիս» լեռը (№11, էջ 81-82): Հայրենի բնության և ծննդավայրի մասին նյութերը պարբերականը ծառայեցնում է Հայրենասիրական զգացումների խորացմանը՝ հիշվում են նաև ազգային պատմության դրվագներ կապված Հայրենի բնության հետ: Կ. Պոլսի մասին տրվող տեղեկությունների մեջ կան ուշագրավ տվյալներ այնտեղ բնակվող

Հայերի մասին, նշվում է նրանց թվաքանակը 200. 000: Հայտնվում է նաև, որ Թուրքիայի մայրաքաղաքի բոլոր Հայ բնակիչներն էլ եկվոր են, գաղթել են Հայաստանից և որ «քառասուն Հազարի մոտ ալ խեղճ խարիպներ կան, որոնք իրենց ընտանիքեն, տունեն-տեղեն Հեռու անտանելի խեղճության մեջ կապրին» (№2, էջ 10): Հանդեսում մեծ Համակրանքով ու բարոյական պատասխանատվության գիտակցությամբ են ներկայացվում Հայության, մանավանդ Հասարակ ժողովրդի կյանքի պատկերները արհեստավորների գործը, աշխատավոր մարդկանց զբաղմունքը: Առանձնահատուկ ջերմությամբ է գրված «Ահա աշխարհ, ահա մարդ» հոդվածը (№16, էջ 124) 4. Պուսի Հայ բեռնակիրների մասին առարկայացված մեծադիր նկարով, որ պատկերում է Հաղթ ու ջլապինդ բեռնակիրներին: Նրանց արտաքին գեղեցկությանը Պարոնյանը զուգադրում է ներքին, հոգևոր աշխարհի Հրապույրը, որով առաջացրած գեղագիտական զգացումը դառնում է ամբողջական:

Պարբերականը ազգային պատմությունից ընտրում է այնպիսի դրվագներ, որոնք առավել Հետաքրքրական և ուսանելի կարող են լինել: Այդպիսիք են «Մեծն Ներսես կաթողիկոս և Պապ թագավոր» գրույցը, նույն բնույթի «Արամ Հայկազն» պատումը և այլն: Նյութերի մի այլ խումբ վերաբերում է ընտելյան այլևայլ երևույթներին, օգտակար Հանածոներին, դրանց արդյունահանմանը: Այստեղ ևս զգալի է Պարոնյանի որոշակի միտումը վերացական ճշմարտությունները կամ ընդհանուր տեղեկությունները որոշակիացնել գործնական գիտելիքներով ու գործնական Հեռանկարով: Բնակության վայրի ճանաչողությունը, շրջակա բնական միջավայրի իմացությունը Համարելով մանկան կրթության և դաստիարակության կարևոր գործոն՝ Պարոնյանը Հակադրվում էր արևմտահայ դպրոցի սխոլաստիկ ու անառարկայական ուսուցմանը:

Արևմտահայ դպրոցի լեզվագիտական անիմաստ ու ոչ գործնական թեքման դեմ «Թատրոնում» սկսված և այստեղ շարունակվող բանավեճ պետք է Համարել նաև արհեստների նկատմամբ Հետաքրքրություն և առաջացնող նյութերի, մտորումների և սրամիտ դատողությունների պարոնյանական շարքը: «Փորագրություն» հոդվածում (№3, էջ 21) Հանգամանալի գիտելիքներ են Հաղորդվում պատկերների տպագրության, գործիքների, եղանակների և այլնի մասին:

Պարոնյանը Հատուկ ուշադրություն է Հատկացրել պատանի ընթերցողին նախապաշարումներից, միջավայրի տգիտությունից ձերբազատելու խնդրին:

Հրաշքները Հանդեսում բացատրվում են մատչելի տրամաբանություններով: Հերքելով կրոնական նախապաշարումները Պարոնյանը փորձում է անկախորեն զարգացնել մանկան միտքը անառարկելի Հեղինակության Հանդես, խորացնել դիտելու և բնութագրելու, քննադատական վերաբերմունքի ունակությունը:

Խմբագրությունը սոսկ դաստիարակ չէ, այլ նաև մանկան սիրելի բարեկամը, որը անկեղծ զրուցում է նրա Հետ, անընդհատ շփվում է աննկատելիորեն ներարկում բարոյական արժեքներ: Պարոնյանը իր ընթերցողին ամեն մի Համարում առաջարկում է Հանելուկներ և կազմակերպում յուրահատուկ մրցույթ Հաղթողին միշտ մի որևէ պարզ և ուղարկելով: Որևէ մանկան առաջարկ մերժելու դեպքում ևս Պարոնյանը Հանդես է գալիս որպես Հմուտ մանկավարժ, իր մերժումը Հայտնում է անուղղակի ու միջնորդավորված, մանկան արժանապատվությունը Հարգող նրբություններ և, վերջապես, մատուցման այնպիսի սրամիտ ձևով, որ մերժումը փաստորեն պետք է բարձրացնել և բերխայի տրամադրությունը: Այսպես, Պարոնյանը պարզ է ուղարկում իր մի ութամյա ընթերցողի Հանելուկը ճիշտ լուծելու Համար: «Ուրիշ աղջիկ մը այս լսելով Հանելուկ մը գրեր խրկեր էր ինձ, որ նոր «Թատրոնիս» մեջ դնեմ: Ես այն Հանելուկը մազ մնաց աս «Թատրոնիս» մեջ պիտի դնեի, բայց նայեցա, որ «քիթ» կնշանակեր, մտածեցի, որ այն Հանելուկով քիթն բունել կուղեին, ինչու որ գրիչ նշանակող Հանելուկը (ութամյա Նարդիկի լուծածը - Ա. Խ.) լուծողին գրիչ նվեր տալուս պես ինչպես կրնայի քիթ նշանակողը լուծողին ալ քիթ մրցանակ տալ» (№2, էջ 15):

Պարբերականն իր ընթերցողին սովորեցնում է քաղաքավարության, կիրթ նիստուկացի, մեծերի Հետ Հարգալիիր վարվեցողության և բարեկրթության կանոնները: Ավելի բարձր տարիքի պատանիներին ուսուցանում է տեսարարության նրբությունները, խնայողության ձևերը միշտ աչքի առջև ունենալով Հասարակ, զուսպ կենցաղով ու բարքերով ապրող Հայ ընտանիքի երեխաներին:

Հոգևոր ու բարոյական արժեքների այս քարոզը Պարոնյանն ամբողջացնում էր գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական ստեղծագործությունների տպագրություններով: Գ. Այվազյանի (Այվազովսկի) և Ա. Գալֆայանի առակների տպագրությունը Հետամտում էր մարդկային Հոռի կողմերի վնասակարության ցուցադրումն ու դատապարտումը, աշխվության և առաքինության զգացումների արծարծումը: Տպագրվել են նաև փոքրիկ զրույց-



ներ, խրատներ, պատմվածքներ և այլն: Ըստ երևույթին, դրանց մի մասը թարգմանվել է նվրոպական գրականությունից, հեղինակները չեն նշվում:

Անկասկած, Պարոնյանը հանդիպել է նյութական անհաղթահարելի խոչընդոտների: «Թատրոն բարեկամ մանկանցի» բաժանորդների թիվը այդպես էլ չանցավ 220-ից, իսկ ստացված արդյունքը հնարավորութունն էէր տալիս «գեղեցիկ տպագրությամբ էժան թերթ հրատարակել»:

Թեպետ բաժանորդները փորձել են խրախուսել Պարոնյանին «Թատրոն բարեկամ մանկանցի» հրատարակութունը շարունակելու համար, բայց ինքը երգիծաբանը, դրա հետ որևէ լուրջ հեռանկար չէր կարող կապել: Հանդեսի 1877 թ. առաջին համարը լույս տեսավ Հինգ ամիս անց 1877 թ. հունիսին, որ արդեն կապ չուներ Պարոնյանի գործունեության հետ: Պարբերականը սկսեց հրատարակվել նոր խմբագրությամբ կորցնելով իր երբեմնի հմայքն ու ականավոր խմբագրին:

1879 թ. սեպտեմբեր-1880 թ. ապրիլ ամիսներին Ն. Պարոնյանը խմբագրել է «Լույս» պարբերականը, շարունակելով «Թատրոնի» ավանդույթները: Այս ժամանակաշրջանում Հայ մամուլը Թուրքիայում ինչ-որ չափով կարողանում էր օգտվել պատերազմում պարտված երկրի գաղափարական անկայունության հետ: 1880-ից արդեն Աբդուլ Համիդը պետք է սանձագերծեր իր բռնակալութունը նրա շոշափուկները տարածելով Հպատակ ժողովուրդների, այդ թվում և Հայության առաջադրած ամեն մի ազատ մտքի դեմ:

«Լույսում» Պարոնյանի քաղաքական երգիծանքը փայլում է իր Հարուստ և բազմակողմանի բովանդակությամբ: Նա ամբողջացրեց իր երգիծական դիմանկարների շարքը ընդգրկումների և ընդհանրացման ուժով դրան տալով Համազգային բնույթ: Պարոնյանը տպագրեց նոր դիմանկարներ Խ. Գալֆայան, Տ. Յուսուֆյան, Ստ. Ասլանյան, Ն. Տերոյնց, Մ. Տիգրանյան, Ա. Հասունյան, Գր. Արծրունի, Ն. Վարժապետյան և ուրիշներ, ինչպես և վերահրատարակեց իր «Թատրոնից» Հայտնի ջոջերի կենսագրութունները վերամշակելով դրանք:

Երգիծական դիմանկարի ժանրը Պարոնյանը Հայոց մեջ ներմուծել է Ֆրանսիական երգիծական գրականութունից, սակայն ժանրի սեփական մշակմամբ այն օժտել է ստեղծագործական անկրկնելի անհատականությամբ: Ազգային երեկելիների այդ դիմանկարներում բազմակողմանիորեն արտահայտվել է Պարոնյանի վերաբերմունքը ժամանակի Հայ Հասարակական կյանքի, ազգային ու մշակութային գործիչների նկատմամբ ընդգրկելով արևմտահայ իրականության գրեթե բոլոր բնագավառները: Այս իմաստով այդ կենսագրութունները արևմտահայ կյանքի յուրահատուկ Հանրագիտարան են, մասնավորապես 1850-1870-ական թթ. ընդգրկող ժամանակաշրջանի գեղարվեստահրատարակախոսական փայլուն և անկրկնելի նկարագիրը: Դիմանկարների մյուս խոշոր արժեքը դեմոկրատական Հրատարակախոսության սկզբունքների խոր և հետևողական շարադրանքն է մեծ երգիծաբանի գրչով: Շարքի կարևոր արժանիքներից է նաև ռեալիստական գրականութայն տեսական Հիմնավորումը, ինչպես և այդ ուղղութայն գեղարվեստական սկզբունքների կիրառումը ժամանակի արևմտահայ գրական պրոցեսի նկատմամբ, որ Պարոնյանը պետք է ամբողջացնի «Նիկարում»:

Հայտնի է, որ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին Հետևեց Թուրքիայի բարենորոգման շուրջ տերութունների և Աբդուլ Համիդի դիվա-

նագիտական խաղը: Բարենորոգումների խնդիրը դարձավ չարարկումների առարկա, որն օգտագործելով՝ երկուստեք քաղաքական շահ էին ակնկալում և՛ տերութունները, և՛ սուլթանը: Վերջինս բարենորոգումների հարցը հմտորեն ի սպաս էր դնում Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում պաշտոնական թուրքական տնտեսական ու քաղաքական համակարգը պահպանելու, տերութուններից միջոցներ կորզելու գնով պատերազմից հյուսիսում իր ֆինանսական վիճակը կարգավորելու համար: Իրենց հերթին, տերութունները բարենորոգումների հարցը դարձնում էին կարևոր լծակ՝ Թուրքիայի ներքին գործերին միջամտելու, երկրում իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու, հումքի և շահույթի լրացուցիչ աղբյուրներ լրացնելու և, որ հույժ կարևոր է, Մերձավոր ու Միջին Արևելքում իրենց աշխարհաքաղաքական դիրքերն ամրապնդելու համար: Օգտագործելով Թուրքիայում առաջնակարգ անգլո-ուսական հակամարտությունները՝ Թուրքիան, տերութունների բարեհաճ թողալով ժամը, բռնեց բարենորոգումների հարցը լուծելու յուրօրինակ ուղի: Բ. դռան համար օրակարգի հարց դարձան ոչ թե բարենորոգումների համար իրական ու մտածված գործողությունները, այլ այդ վերափոխումներն ամեն կերպ վիժեցնելու, դրանց կենսագործմամբ խիստ շահագրգռված ժողովուրդների, մասնավորապես արևմտահայերի, կեղեքման սաստկացումը, հայ գյուղացիության հողազրկման ծրագրված կատարումը:

«Լույսում» Պարոնյանը ոչնչացնող քննադատության է ենթարկել այս իրականությունը: Ունենալով ամենայն տեղեկատվություն և իրականություն գնահատման փայլուն վերլուծական կարողություններ՝ Պարոնյանը սկզբից իսկ թերահավատությամբ էր համակված բարենորոգումների իրականացման նկատմամբ: Այս առումով Թուրքիայի պետական ու քաղաքական համակարգը ոչ մի հույս էլ չէր ներշնչում Պարոնյանին: Անհնարին է որևէ գործ ձեռնարկել կաշառակերություն մեջ մինչև կոկորդը խրված պաշտոնյաների միջոցով: Պետական իշխանության մակարդակով արվում են այնպիսի անմիտ քայլեր, որոնք ոչ մի կապ չունեն իրական բարենորոգումների հետ: Պարոնյանը ծաղրում է Խինանսական հսկող Հանձնաժողովները, որոնք Իսթանբուլում չեն սնկի պես հանկարծակի՝ նույն կերպ անհետանալու պայմանով, ցուցադրում դրանց զուտ անվանական նշանակությունը: Պարոնյանը քանիցս երգիծել է կառավարության այլ միջոցառումները երկրի ֆինանսական դրու-

թյունը շտկելու հարցում ցույց տալով դրանց չնչինությունը կեղծիքի, հետամնացության և բռնությունների մեջ խորասուզված կայսրության համար:

Պարոնյանը թափանցել է բարենորոգումների շուրջ ծավալված անդլիական և օսմանյան դիվանագիտական խաղի խորքերը: Բարենորոգումներ սկսելու իր անկարողությունը թուրքիան պատճառաբանում էր դրամական տագնապով, իսկ Բեռլինի վեհաժողովից հետո սուլթանին ընդդիմախոսող անդլիական քաղաքականությունը պնդում էր, թե դրամ կլինի այն ժամանակ, երբ իրականացվեն բարենորոգումները: Պարոնյանը ծաղրում է այդ կախարդված շրջանակը, որից, ի դեպ, իրականում դուրս գալ չէին ցանկանում ո՛չ թուրքիան, և ո՛չ էլ Անգլիան: «Արդ, - եզրակացնում էր Պարոնյանը, - քանի որ դրամ գտնելու համար բարենորոգում պետք է, բարենորոգում ընելու համար ալ դրամ պետք է, ըսել կըլլա, ոչ դրամի երես տեսնալիք ունինք, ոչ ալ բարենորոգման»<sup>61</sup>:

«Լույսում» ևս Պարոնյանի ուշադրության կենտրոնում է Արևմտահայաստանի կացությունը: Պարոնյանը էջը հավատում գափառահայրության ծանր դրությունը փոխելու վերաբերյալ խոստումներին և մատնացույց էր անում առհասարակ երկրի քայքայված վարչական դրությունը: 1879 թ. , երբ Բ. դուռը Պեյքըր փաշային ուղարկելու էր հեռավոր շրջանները իբր կարգուկանոն հաստատելու, Պարոնյանը նախապես ցույց էր տալիս այդ առաքելության ձախողումը: Գավառներում խորացած չարիքի արմատները, նրա կարծիքով, պետք էր որոնել հենց Կ. Պոլսում: «Խոնարհաբար կհրավիրենք Պեյքըր փաշան, - գրում է նա, - որ Ասիա չուղևորված՝ անգամ մը էմլադ իդարեսին (Հողային սեփականության վարչություն - Ա. Խ.) Հանդիպի և Հոն եղած անիրավությունները քննելն ու տեղեկագրելն վերջը երթա Ասիո մեջ տեղի ունեցած և տեղի ունենալիք հարստահարությունները քննելու»<sup>62</sup>:

Ինչ վերաբերում է ըսն Արևմտահայաստանին, ապա երզնիժառանգ նկատում էր, որ «բռնությունները ավելի կանոնավոր կերպով կչարունակվին»<sup>63</sup>: Ղարսից Սեբաստիա գաղթող թուրքերը վայրագություններ են գործադրում «անհավատների» դեմ, Դերջանում գայմազամը ինքն է բռնությունների գործուն մասնակիցը, իսկ Վանում իշխանությունները աչք են փակում թուրքերի հանցագործությունների առաջ՝ «սա պայրամն անցնի

<sup>61</sup> Պարոնյան Գ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 349:

<sup>62</sup> Լույս տեղում:

<sup>63</sup> Լույս տեղում, էջ 311:

պետք եղածը կանօրինենք»<sup>64</sup>: Պարոնյանն անդրադարձավ Աբեղին փաշայի բարենտրոգչական կարծեցյալ գործունեությունը և կեղծ ջանքերին՝ Հայերին Հարստահարող քրդերին իրը Ալբանիա աքսորելու Հարցում: Իրականում քրդերը Հայկպից այն կողմ չէին անցել, որ կապվում էր նրանց սովորական քոչվորական տեղաշարժերի հետ: «Ավելի դյուրին է Ալպանիան Հայկպ աքսորել, քան քյուրտերն Ալպանիա»<sup>65</sup>, - հեղնում էր Պարոնյանը:

Երգիծաբանը բացահայտում էր կառավարությունից Հանցավոր գործողությունները քրդական Հարստահարիչ վերնախավին խրախուսելու գործում: Բ. դուան թևադրանքով «Թերեհմանը Հագրդաթ», «Ճերիտե-ի Հավատիս» և «Վաքրթ» թերթերը պնդում էին, որ պետք է ներողամիտ լինել Հարստահարիչների հանդեպ: «Թերեհմանը Հագրդաթը» բնական երևույթ էր Համարում անօրինականությունները պնդելով, որ դրանք Հասկանալի բան են թուրքերի Համեմատությամբ փոքրամասնություն կազմող Հայերի Համար: Այս թերթը նույնիսկ չէր խորշում Հայերի ստորագրություն կեղծ Հոդվածներ տպագրելուց, որտեղ դատապարտվում էին Հենց իրենք՝ Հայերը և անմեղ Համարվում Հարստահարիչները: Այս թերթը, Հայտնում էր Պարոնյանը, իր բան ու գործն է՝ դարձրել «Հաքրեթաթ» (ճշմարտություն - Ա. Ն.) անվան տակ գալիս (կեղծ - Ա. Ն.) Հոդվածներ Հրատարակելը»<sup>66</sup>: Նա ցույց էր տալիս, որ այդ թերթի նպատակն է շինծու նամակներով քրդերին զրգռել Հայերի դեմ:

Պարոնյանի քաղաքական երգիծանքը առավել նպատակասլաց է դառնում, երբ ծաղրի է ենթարկում Թուրքիայի երեկվա մերձավորագույն բարեկամ, իսկ այժմ նրան Հակառակ դիրքորոշում որդեգրած Անգլիային: Երգիծական մի խորաթափանց խորհրդածություն մեջ նա ցույց է տվել այս կարգի քաղաքական կերպափոխությունների բուն պատճառը՝ շահը, սեփական շահերի Հավասարակշռության քաղաքականությունը, որը պահպանվում է թույլ երկրների ու ժողովուրդների տարածքների անդամահատման Հաշվին: Այդ քաղաքականություն էր Պարոնյանը բացատրում Կիպրոսի բռնազավթումը Անգլիայի կողմից, այլև ռուս-անգլիական Հակամարտությունները Թուրքիայում: Տեղի իրական կացության և Անգլիայի աշխարհավարական նպատակների անսպասելի ու սրամիտ Համադրմամբ երգիծաբանը թափանցում էր անգլիական երեսպաշտ քաղաքականության խորքերը: Ի դեմս Կա-

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 308:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 315:

րինի անգլիական Հյուպատոս Թրոթըրի, Պարոնյանը մարմնավորում էր անգլիական կեղծավոր ու արևելյան քծնանքը յուրացրած դիվանագիտությունը:

«Լույսում» բացահայտվում է եվրոպական քաղաքականության նպատակը Թուրքիայում տնտեսական ու ֆինանսական ամուր դիրքերի նվաճումը ի հաշիվ այդ երկրի տնտեսական Հնարավորությունների և զարգացման: «Բանկ Օտոմանը» պատկերվում է որպես Թուրքիայում եվրոպական տերությունների ծավալած կողոպտչական գործունեության խորհրդանիշ: Երգիծական մի փոքրիկ պատկերի մեջ Պարոնյանն անում է ոչնչացնող եղբակացություն «Նկատելով, որ Պոլսո բանտը բավական չէ տանել բոլոր գողերը, որոշվեցավ, որ բանտը փոխադրվի Ղալաթիա Բերշեմպե պալատ, Պանք Օթոմանի շենքը»<sup>67</sup>: Այլ աւիթներով ևս Պարոնյանը սուր ծաղրով է ներկայացրել «Բանկ Օտոմանի» ֆինանսական ամենազորությունը Թուրքիայում, նրա թալանչիական գործունեությունը:

«Լույսում» Պարոնյանը ակնհայտորեն առաջնակարգ թեմա չի համարում ազգային մարմինների գործունեության քննադատությունը, եթե չհաշվենք ընդերի դիմանկարներում առանձնացող սուր վերաբերմունքը: Պարոնյանը այլևս ակելի սպասելիքներ չունեւր այդ մարմիններից, քան այն, ինչը քննադատության էր արժանացրել մինչ այդ: Երբեմն-երբեմն երգիծաբանը անդրադառնում է դրանց, երգիծում այդ մարմինների գրեթե անարդյունավետ գործունեությունը, երեսփոխանների պարապ շաղակրատանքը և այլն: Պարոնյանը նրանց գործունեությունը մի տեղ նմանեցնում է աշտարակաչինության Հայտնի լեզվական խճողմանը նույնչափ Հայտնի տխուր Հետևանքով<sup>68</sup>:

Հայկական Հարցի ձախողումը Բեռլինի վեհաժողովում և առհասարակ Հետագա քաղաքականության մեջ, Պարոնյանը մի Հայտնի չափով բացատրում է նաև ազգային անմիաբանության, իրարամերժ պատկերացումների ու ներհակ գործողությունների բարդույթով, ազգային միասնական նպատակի բացակայությամբ: Երգիծաբանը Հայացքը Հառում է ամենակարևոր ազգային միասնության և եկեղեցու ու դպրոցի բարոյական վերածննդի Հարցերին: «Լույսում» ևս նա դրսևորել է իր բացասական վերաբերմունքը Հայերի մեջ օտարադավանության տարածման, Հասունյան-Հակահասունյան պայքարի

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 356:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 295:

ազգը ջլատող հետեանքների և այլնի նկատմամբ: Պարոնյանը սուր խայթ-  
վածքներ է հասցնում ազգային վանական հաստատություններին, անբան  
վանահայրերին, որոնք «վանքին ստակն ուտելը սկզբունք ըրած են իրենց»<sup>69</sup>:

«Լույսում» ուրվագծվում է Հայ մշակույթի դեմ թուրքական հետադիմու-  
թյան հարձակումների մուսլ պատկերը: Երգիծական մի փոքրիկ պատկերով  
Պարոնյանը ցույց է տալիս, որ Վարդույանի թատրոնում արգելվում են ոչ  
միայն Հայերեն ներկայացումները: Թատրոն եկած Հայ կանանց ուստիկանը  
արգելում է խոսել Հայերեն:

«Լույսից» Պարոնյանը հեռացել է 1880 թ. ապրիլին, և դրա պատճառների  
մեջ էական նշանակություն է ունեցել նյութական միջոցների պակասը, որը  
մշտապես հետապնդել է երգիծաբանին: 1882 թ. սկզբին «Լույսի» տնօրեն-  
ները կրկին հրավիրում են Պարոնյանին խմբագրելու պարբերականը: Հավա-  
նաբար, այս անգամ ծագել են այլ կարգի հակասություններ, որովհետև մի ո-  
րոշ ժամանակ անց Պարոնյանը ընդմիշտ թողեց «Լույսի» խմբագրությունը:

### «ԾԻՇԱՂ» (1883)

1883 թ. հունվարին Հ. Պարոնյանը սկսեց հրատարակել «Ծիծաղ» վեր-  
նագրով երգիծական պարբերականը՝ առանձին տետրակներով: «Ծիծաղը»  
լույս է տեսել Համիդյան գրաքննության կամայականության պայման-  
ներում, երբ Հայ մամուլը կորցնում էր իր ինքնուրույնության վերջին հնա-  
րավորությունները:

Գրաքննական խստությունների մթնոլորտը Պարոնյանը զգում էր շատ  
ավելի նրբորեն, քան իր գրչակիցներից շատերը: Պատճառը ոչ միայն բռնու-  
թյունները չհանդուրժող նրա խառնվածքն էր, այլև բուն իսկ այն ժանրը, ո-  
րով գրում և ստեղծագործում էր ինքը: Հիրավի, գրաքննությունը ամենից  
առաջ զսպաշապիկ էր հագցնում երգիծական հրատարակություններին,  
ինչպես ցույց է տալիս առհասարակ թուրքիայում հրատարակվող մամուլի  
պատմությունը: «Լույսից» հետո Պարոնյանի Համար միանգամայն պարզ էր,  
որ Համիդյան իրականության մեջ երգիծանքը կարող է թիրախը խոցել ոչ թե  
ուղղակի՝ դիմհար, այլ միայն միջնորդավորված ձևով: Որոշակի նշանախե-  
ցին հարվածելը երգիծաբանի Համար դառնում էր բումբրանգ՝ բառի զուտ  
ֆիզիկական իմաստով: Արևելյան բռնակալության մեջ քննադատությունը

<sup>69</sup> Եսյուն տեղում:

Հետապնդվում էր, երգիծական քննադատությունը առավել ևս: «Մեղվի», «Թատրոնի» և «Լուսի» ԽՍՀՄ փորձը ցույց էր տալիս իշխանավորների ու իշխանությունների մոլուցքը առանձնապես երգիծական քննադատության նկատմամբ: «Արդարև, - գրում էր Պարոնյանը, - երգիծանքը կհայածե մոլի-ները, բայց մոլիներն ալ էնն դադրիլ Հայածելե երգիծաբանները»<sup>70</sup>:

Այս իրադրություն մեջ Պարոնյանը ստիպված էր դիմել դասական երգիծանքի ժանրին այլաբանությունը: Այս անգամ Հրապարակախոսը իր տաղանդի ողջ ուժն ու հզորությունը ուղղում էր արատի և ոչ թե զրա անմիջական կրողի դեմ խորապես գիտակցելով, որ սահմանափակելու է այդ հզորության կործանարար Հնարավորությունները: Սա էր «Ծիծաղի» որակական տարբերությունը նրա նախորդ պարբերականների երգիծանքից, որտեղ արատը և այն կրողը Հանդես են գալիս միասնաբար: Մարդկանց փոխարեն այստեղ գործում են կենդանիները շները, կապիկը, աղվեսը, դայլը, կատուն և այլն, իսկ բուն արատը Հանդես է գալիս ոչ իրական տեսքով, այլ այլաբանորեն: Այս պատճառով երգիծանքի թիրախի Հետ այս նոր պատկերի նույնությունը ընթերցողը կարող էր կռահել միայն զուգորդումներով, ակնարկներով և մերձավոր կամ Հեռավոր նմանություններ: Այլաբանական ծաղրը, այսպիսով, «Ծիծաղում» Հանդես է գալիս իր Հայտնի ձևախեղումներով, որ թուլացնում էր երգիծանքի ուժը: Պարոնյանը ակնհայտորեն նախընտրել է նվազագույնը ոչնչից դիմելով այլաբանական երգիծանքին: «Ծիծաղի» «Երկու խոսքում» երգիծաբանը անկեղծորեն խոստովանում է այլաբանության անցնելու իր շարժառիթները: Նշելով, որ իր «դյուցազուններու խումբը» կազմված է բացառապես կենդանիներից, Պարոնյանը ցույց է տալիս ծաղրի այս ձևի «Հարմարությունները»: Երգիծաբանին այն Հեռու է պահում «անձնականություններ վիրավորելու երկյուղեն», քանի որ «պարոն ուղտն յուր պատիվն արատավորած տեսնելուն Համար դատարանն դատարան չպիտի դիմե զիս քանի մը ոսկվո տուգանաց դատապարտել տալու մտք, ոչ ալ հոգ պիտի ընեմ եթե պարոն ավանակն յուր բարեն դարբեցնե ինձ, առարկելով, թե իրեն արժանապատվությանը դպած եմ»<sup>71</sup>:

Իր այս բնույթով Հանդերձ և նույնիսկ դրա շնորհիվ «Ծիծաղի» ծաղրը ունի լայն սահմաններ պոլյասՀայ բարքերից մինչև Հասարակական կյանքը, սահմանադրական մարմինների գործունեությունից մինչև Հայ մամուլը և քաղաքական իրականությունը, նաև որոշակի անձինք, իհարկե, այլաբանա-

<sup>70</sup> Պարոնյան Գ., Երկերի ժողովածու, հ. 4, էջ 484:



կան կամ միջնորդավորված կերպավորումներով: «Միծաղում» կարևոր նշանակություն ունեն Պարոնյանի գրական-գեղագիտական հայացքների դրսևորումները, գրական իրողությունների գնահատականները:

«Միծաղի» մշտական գործող անձինք են ինքը Միծաղը, շան կերպավորումով, որ հեղինակի մտքերի և բարոյական ըմբռնումների արտահայտիչն է, և մյուս շունը՝ Բարոյականը, որը բարոյական դատավճիռ է կայացնում պարբերականի գրեթե բոլոր նյութերում: Եներին դարձնելով իր ձայնափողերը՝ հեղինակը, հավանաբար, նկատի է ունեցել սրանց հավատարմության խորհրդանիշ լինելը, ինչպես և կինիկների դպրոցի (շնական դպրոցի ըստ Պարոնյանի թարգմանության - Ա. Խ.) հստակորեն ընդգծված բարքերի, բարոյականության և իրավունքի չափանիշների ժխտումը այսինքն այն ամենը, ինչ ժխտում էր նաև երգիծաբանը Օսմանյան Թուրքիայի բռնակալական իրականության մեջ: Միծաղն ունի ինքնաբեկագրական որոշակի արտահայտություններ, որով հեղինակը, կարծեք, ցանկանում է առավել շոշափելի դարձնել իր և իր ձայնափողի նույնությունը. «Պարտեզիս մեջ, - Հայտնում է նա, - եղինճ կրունի, անոնք դափնի կուզեն»<sup>72</sup>: Պարբերականում գործում են նաև Նախանձը, Զրպարտությունը, Քսությունը, ԾաՀը, իբրև այլևայլ մարդկային արատների մարմնավորումներ: Ուշադրավ է, որ հեղինակը այս վերջինների շարքն է դասում նաև Համբավին ու Բախտին, որոնք դառնում են այդ արատների ինքնահաստատումը՝ տրվելով մարդկային ստորություններին, ստոր մարդկանց և ամենուրեք շրջանցելով արժանավորներին:

Ազգային-քաղաքական խնդիրներին «Միծաղը» շատ քիչ է անդրադարձել. այդ տեսակետից հատկանշական է «Մըջլուններուն բողոքագիրն» «Միծաղի» մեջ եզակի քաղաքական բովանդակության երգիծական այլաբանությունը: Այն Բեռլինի վեհաժողովի գրոտեսկային պատկերն է, մըջլունները հալածանքների ու կոտորածների դեմ բողոքող Հայ ժողովուրդը: Ավագածոցովը, սակայն, թույլ չի տալիս մըջլուններին ներկա լինել իրենց իսկ Հարցի քննարկմանը, ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես եղել էր իրականում: Այդ ժողովի Հզորները մըջլուններին գնահատում են միայն ուժի հայեցակետից:

Պարոնյանը խարազանել է հետադիմության սահմանած պայմաններին համակերպվող մամուլը, բարոյական արժեքները կորցնելու գնով Հարմար-

<sup>71</sup> Նույն տեղում, հ. 5, էջ 7:

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 23:

վող խմբագիրներին: «Միծաղում» կան շատ Հեռավոր, անճանաչելիության չափ վերացական կամ էլ թափանցիկ ակնարկներ խմբագիրների, Հասարակական գործիչների, գրողների, իրողությունների և այլնի վերաբերյալ, որոնք պետք է որ ընկալվեին ընթերցողի կողմից: Դժվար է, սակայն, նաև անիմաստ, փորձել ամեն մի ակնարկ կամ արտահայտություն որոշակիացնել: Դա կնշանակեր գուհիացնել Պարոնյանի երգիծանքի գեղարվեստական արժեքը, որովհետև «Միծաղը» ամենից առաջ պետք է դիտել ոչ թե իբրև Հրապարակախոսական երկ, այլ գեղարվեստական ստեղծագործություն սրան Հատուկ վերացարկման Հատկանիշներով: Որպես այլաբանության վարպետ, Պարոնյանը միմյանց է խառնել իրականն ու երևութականը, որոշակին ու վերացականը: «Կենդանիներու մամուլյն Հասարակաց կարծիքը» վերնադրով այլաբանությունը ծաղր է ծախու մամուլի նկատմամբ. մերկացվում է նրա անսկզբունքայնությունը, քծնանքն ու շահամուլությունը: Միաժամանակ ակնարկներ կան որոշակի անձանց մասին, բայց ամբողջությամբ վերցրած Պարոնյանը նկատի ունի մամուլի արատների խտացած արտահայտությունները: Այլաբանական զրույցներում Պարոնյանը ի Հայտ է բերում երևույթը տարբեր կողմերից լուսաբանելու մեծ վարպետություն: Այսպես, «Միծաղ և բարոյական», «Աստրեա և ծիծաղ» զրույցներում ցուցադրվում են խմբագիրների նյութական և բարոյական աննախանձելի վիճակը, բաժանորդ գտնելու և Հրապարակելու ամենօրյա դժվարությունները<sup>73</sup>: Անշուշտ, Պարոնյանը երբեմն դիմում է որոշակիության. «Միծաղում» ծաղրվում է «Մշակ» և «Մեղու Հայաստանի» թերթերի տեղական բանավեճը վերջինիս 25-ամյա հոբելյանի առթիվ («Մեղու» և «Գեորգոս»)՝<sup>74</sup>: Երգիծվում է ինքնանպատակ, միայն կրքեր բավարարող բանավեճը, որը գուրկ է Հանրության մտավոր ու բարոյական աշխարհը Հարստացնելու կարողությունից:

Պարոնյանի գրչի նշանակետեր են դարձել նաև մտավորականության այլ ներկայացուցիչներ փաստաբաններ, բժիշկներ և այլն: «Միծաղը» խարաղանում է շողոմ խմբագրի կաթնեղբայր փաստաբանի մասնագիտական սաղորանքները, կեղծիքներն ու զրպարտությունները, որոնց օրինականության տեսք է տրվում: Սպանիչ է թերուս բժիշկներին տրված բնութագրերը նորընծա մի բժշկի երգիծական ծանուցման մեջ<sup>75</sup>:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 52-58, 172-17:

<sup>74</sup> Նույն տեղում, էջ 69-70:

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 78:

Անհատների և ազգային հաստատութիւնների թերութիւնները դիտարկելով առհասարակ բարոյական թերութիւնների և բարոյազրկման ընդհանուր իրողութիւնների մեջ Պարոնյանն, այնուամենայնիւ, այդպիսիք առաջնակարգ թեմա չի դարձրել «Միծաղում»: Երգիծաբանն այստեղ շատ բան չի ավելացնում «Մեղվում» և «Թատրոնում» արդեն ասվածին: Հարցադրումների թարմությամբ աչքի է ընկնում «Կենդանիներու մեկ կարևոր նիստը» ալլաբանութիւնը<sup>76</sup>: Խոսքը վերաբերում է երեսփոխանական ժողովի նիստերին երեսփոխանների առակի կարգ անցած բացակայութեան հարցին: Բացակայող երեսփոխանները արդարանում են ամենասահեթեթ և անմիտ պատճառաբանութիւններով տեղնուտեղը մերկացնելով իրենց իսկ ստախոսութիւնը: Ժողովը, սակայն, հիմնավոր է գտնում նրանց դիմումները ոչ ավելի պակաս տխմարամիտ դատողութիւններ անելով:

«Միծաղի» կարևոր արժանիքներից է այն, որ այստեղ Պարոնյանը բավական հետեղականորեն արտահայտել է իր գրական և գեղագիտական հայացքները, արժեքավորել գրական այս կամ այն երկը: Երգիծաբանը տարբեր առիթներով բանավիճում է ռոմանտիկական ուղղութեան 70-80-ական թթ. հետևորդների հետ կանգ առնելով մի քանի սկզբունքային հարցերի վրա: Նախ, մերժում է ռոմանտիկական ոճը չարչրկող հեղինակների ճոռոմութիւնը և վերամբարձութիւնը: «Փիլիսոփայղոս և Անթոս» զրույցում<sup>77</sup> Պարոնյանն ընդգծում է վերամբարձ ոճի բնականի հակապատկերը կազմելու կործանարար նշանակութիւնը գրական երկի համար: Մյուս գեղագիտական դրույթը, որ պաշտպանում է Պարոնյանը բանավիճելով ժամանակի անարվեստ և առավել ևս՝ էպիգոն գրականութեան հետ, գրականութեան ճշմարտացիութեան խնդիրն է: Անթոսը ընդունում է իր սկզբունքային մի թերութիւնը՝ պարզութեան պակասը, բայց և անում է իր դիպուկ դիտողութիւնը ընդդիմախոսին՝ հարատևող օտար ազդեցութիւնները գրականութիւնը դարձնում են կենսազուրկ, հեռացնում ճշմարտութիւնից: Ինչպես միշտ, հայտնվում է և Բարոյականը՝ նշելով, որ պարզութիւնը և ճշմարտութիւնը ամենից առաջ փնտրվող գեղեցկութիւններ են արվեստում:

Այս ելակետային դիրքերից էր Պարոնյանը մերժում Ե. Տեմիրճիպաշյանի և Գ. Օտյանի փոխադարձ սքանչացումները «Գրական և իմաստասիրական» շարժման էջերում, գրականութեան ներհայեցողական կամ ինտուիտիվ

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 177-186:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 380:

ըմբռնման գեղագիտական գրույթը: Պարոնյանը երգիծում է զգացմունքային գրականութունը, որ ինքնանպատակ է դառնում խուսափելով իրականության վերարտադրման խնդրից:

Պարոնյանի գրական-գեղագիտական հայացքների բացահայտման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունի Ս. Տյուսաբի «Մայտայի» առթիվ գրած այլաբանական քննադատությունը: Պարոնյանն այստեղ արտահայտել է իր գեղագիտական մոտեցումները գրականության և իրականության փոխհարաբերության, գրականության բարոյական արժեքների ու չափանիշների վերաբերյալ: Նա ծաղրում է իրականությունը ոճի պճնագեղության և ճոռոմոթյան մեջ թաղելու արհեստական մեթոդը: Այստեղից միջավայրի արհեստական պատկերումը Տյուսաբի վեպում: Պարոնյանը նկատում է, որ «Մայտայի» Հեղինակը գաղափար չունի արևմտահայոց մեջ «տիրող սովորություններուն, օրենքներուն և բարոյականի վրա»<sup>78</sup>: Պարոնյանը ընդգծում է իրականության զգացողության պակասը վեպում և, ընդհակառակը, հերոսուհու զգացմունքների և բարոյականության այն անձև աշխարհը, որ այդպես էլ չի գտնում իր իրական մարմնավորումը: Կրիտիկոսի միջոցով Պարոնյանը ցույց է տալիս, որ Տյուսաբի դատողությունները կանանց աշխատանքի մասին ամենևին չեն վերաբերում ո՛չ Հայ գեղջիկուհուն, ո՛չ էլ նրա քաղաքաբնակ քույրերին, որոնք, իրոք, աշխատում են տղամարդուն համահավասար նաև իրենց ընտանիքներում: Հայ իրականության մեջ Պարոնյանը չի գտնում կնոջ էմանսիպացիայի գաղափարի տնտեսական հիմքերը, ուստի այդ գաղափարն իսկ երգիծաբանի համար մնում է որպես լուկ Հարուստ և ձանձրացող կնոջ մտավարժանքների առարկա: Քննադատը Տյուսաբի վեպում նկատում է գործողության զարգացման արհեստականություն, շինծու իրադրությունների և նույնքան շինծու կոնֆլիկտների բարդացումներ ու լուծումներ:

Իր գրաքննադատական հայացքները Պարոնյանն առավել ընդարձակ և, որ կարևոր է, այլաբանական ժանրի պարտադրանքից շատ ավելի ազատ արտահայտեց «Խիկար» պարբերականում:

«Միծաղը» գաղաբեց 1883 թ. մայիսին: Ժանրային, ինչպես նաև գաղափարական տեսակետից այն Պարոնյանի երգիծանքի մեջ շատ ուշագրավ տեղ է զբաղեցնում: 1880-ականի առաջին կեսին, համիդյան հետադիմություն

<sup>78</sup> Նույն տեղում, էջ 240:

ծավայման պայմաններում այն հանդես էր գալիս իբրև արևմտահայ երգի-  
ծանքի ինքնապահպանության հատկանշական մի դրսևորում, երբ ձևա-  
խնդումների կամ մասերը կորցնելու գնով, այնուհանդերձ, ամբողջը կարո-  
ղանում էր փրկել իրեն անխուսափելի թվացող ոչնչացումից:

## «ԽԻԿԱՐ» (1884-1888)

«Խիկարը» Պարոնյանի հրատարակած վերջին պարբերականն է, որ կրում է նախորդ տարիներից հայտնի երգիծաբանի պերսոնաժի անունը: Ամսագիրը լույս է տեսել 1884-1888 թթ. նախ 4. Պոլսում (1884 հունվար-մայիս), հետո Ազրիանուպոլսում (1884 հունիս - 1885 մարտ), վերջում 4. Պոլսում (1886 օգոստոս-1888 հոկտեմբեր):

«Խիկարի» հրատարակության ժամանակ Պարոնյանը նպատակահարմար գտավ հրատարակել զուտ այլաբանական երգիծանքից: «Ծիծաղը» կատարել էր իր դերը և այլևս ո՛չ ձևով և ո՛չ էլ բովանդակությամբ չէր կարող հրապուրել հեղինակին կամ ընթերցողին: Արևմտահայ կյանքն առաջադրում էր նոր խնդիրներ բռնապետության պայմաններում իսկ բարձրացնել ազգային վտանգվող մշակույթի, հասարակական հաստատությունների, եկեղեցու, դպրոցի և այլնի կենսունակությունն ապահովող հիմնահարցեր, համախմբել ազգը որևէ ծրագրի կամ ուղղություն չուրջ: Իր ամբողջ հրապարակախոսական կյանքում լինելով հասցեագրված երգիծանքի պաշտպան Պարոնյանը «Ծիծաղից» հետո փորձեց վերադառնալ հրապարակախոսական իր նախասիրած սկզբունքներին: Սակայն անցումը միանգամից հնարավոր չէր, թեկուզ արդեն ստեղծված կաղապարները քանդելու տեսակետից, ուստի Պարոնյանը այստեղ ևս բավական տուրք է տվել այլաբանական երգիծանքին, մանավանդ, «Խիկարի» առաջին շրջանում:

Իր ամբողջություն մեջ «Խիկարը» ավելի շուտ գրական, քան հրապարակախոսական պարբերական է: Այստեղ են տպագրվել երգիծաբանի «Քաղաքավարություն վնասները», ֆելիետոնների շարքը, «Պաղտասար աղբար» կատակերգությունը, երգիծական շատ պատմվածքներ, այլաբանական զրույցներ, գրական երկերի թարգմանություններ և այլն: «Խիկարի» մեջ նկատելի է գրական և հրապարակախոսական ժանրերի սերտաճումը, որի ակնառու դրսևորումն է «Քանի մը խոսք առ օրիորդ կամ տիկին պատմություն» խորագրով նյութերի շարքը: Կարելի է ավելացնել, որ «Խիկարն»

ունի Հրապարակախոսական ձևի և թեմատիկայի անհամեմատ լայն ասպարեզ, քան «Միծաղը» և ոչ քիչ դեպքերում հասնում է անմիջական երգիծանքի այնպիսի փայլատակոճմների, ինչ հատուկ էր «Մեղվին», «Թասարոնին» և «Լուսին»:

Սահմանադրական մարմինների վերաբերյալ երգիծական նյութերում «Խիկարի» մեջ զգացվում են «Միծաղի» այլաբանական հնարանքները: Գրոտեսկը, որ բնականորեն ծնունդ է առնում այլաբանությունից, Պարոնյանը կիրառում է էականը բացահայտելու նպատակով, որ լիուլի ընկալում էր ընթերցողը: Հին թեման և հին թիրախը դրա շնորհիվ երևում են նոր լույսով, և երգիծաբանը ստեղծում է երգիծանքի ձևի ու առարկայի նորություն անսպասելի պատրանք: Այսպիսին է «Կուսակցություններ դից կաճառին մեջ» ֆելիետոնը, ուր հին թեման է «կուսակցությանց» անհեթեթ վեճերը երեսփոխանական ժողովում, նրանց առաջացրած փոթորիկները մի բաժակ ջրում: Պարոնյանը նոր գծեր է հայտնաբերում երեսփոխանական ժողովի նկարագրի մեջ եվրոպական խորհրդարանների կապիտալը, տկարամիտ ընդօրինակումը: Քաղքենի բարքերը տեղափոխվել էին ազգային մարմիններ, և այս համատարած երևույթի դեմ էր իր սլաքներն ուղղում երգիծաբանը:

Հազիվ թե ճիշտ կլինե՞ր Համաձայնել այն պատկերացման հետ, թե Պարոնյանի քննադատությունն ուղղված է միայն աշխարհիկ և կղերական վերնախավի դեմ: Բայց Պարոնյանը ժողովրդավարական է և Հասարակությանը նայում է ավելի լայն հայեցակետից, քան դասակարգային մոտեցումն է, նայում է ամբողջ ազգի հայեցակետից: Հետևաբար, նրա երգիծանքը վերաբերում է ոչ թե մեկ-երկու խավի, այլ ամբողջ ժողովրդի մեջ տեղ գտած արատներին, որոնց վերացման մոլեգին և կրքոտ ցանկությունը նրան դարձնում է մեծ հայրենասեր: Հայ առաջավոր Հրապարակախոսություն մեջ ազգի վերքերը ցուցադրելու անզուսպ մղումը պայմանավորված էր դրանք բուժելու իսկական ու անկեղծ ցանկությունը: Արծրունին, Բաֆֆին և Հ. Պարոնյանը 1870-ականի սկզբից առաջնորդվում էին գաղափարական միևնույն սկզբունքով՝ ազգի արատները վերացնել դրանք մերկացնելու միջոցով:

Բարքերի և բարոյական դիմազրկության երգիծումը, որ առկա է Պարոնյանի բոլոր պարբերականներում, կապվում է ազգային ոգու վերածնությունը նպաստելու նրա մշտական ձգտումների հետ: «Քաղաքավարություն վնասներ» խորագրի երգիծական պատմվածքներն ու ֆելիետոնները, զրույցներն ու ակնարկները, հիրավի, լայն ընդգրկումներ ունեն չափի և տարածու-

թյան տեսակետից և կարծեք կազմում են ժամանակի պոլսաՀայ բարքերի երգիծական յուրօրինակ Հանրագիտարանը: Դրանք Հիմնականում ընտանեկան-կենցաղային տեսարաններ են լի և՛ խոսքի, և՛ գործողության կոմիդով: Առանձին տեսարաններն ու պատկերները լրացնում են միմյանց, ամբողջացնում Պարոնյանի երգիծանքը, որ հետամտում է գավառական նեղմտության, ճղճիմության, քաղքենիական թեթևամտության ու սեթևեթանքի խոշորացուցային պատկերումը Հայ ընտանիքներում: Ժանրային իմաստով այս շարքը Համալրվում է երգիծական կարճ պատմվածքներով ու զրույցներով, որոնք դարձյալ ամփոփվում են կենցաղային շրջանակներում: Այդպիսի բովանդակություն ունեն նաև «Առտնին տեսարաններ» խորագրով նյութերը և, դատելով դրանց թեմատիկ կրկնությունից, Հաջողություն են ունեցել ընթերցողների շրջաններում:

Պարոնյանի երգիծական պատմվածքներում, որպես կանոն, կանայք առավել ակտիվ տարր են, նորաձևության, ավելի շուտ նորաձև թեթևամտության կրողները, իսկ ամուսինները պահպանողական են, ուշ կռահող կամ կռահելու դեպքում դժգոհ փնթփնթացողներ, որից, սակայն, իրերի դրուժյունը բնավ չի փոխվում, եթե նկատի չառնենք գավեշտական վիճակի խորացումը: Կնոջը առաջին պլան մղելով երգիծաբանը հետամտել է երկու նպատակ. նախ՝ բարքերի անկման ցուցադրումը ավելի տպավորիչ է դառնում այն ժամանակ, երբ իբրև դրա կրող Հանդես է գալիս կինը՝ ընտանիքի, ազգային բարքերի ու բարոյականության գլխավոր պահպանը: Եվ երկրորդ կնոջը Հատուկ բնատուր խելքը և մտածողության յուրահատուկ ձևախեղումը նրան դարձնում են կամ երգիծանքի առավել անսպառ աղբյուր և կամ Հարմարագույն Հենք, որի վրա իր սրամտություններն է կառուցում Պարոնյանը: ՊոլսաՀայ բարքերի երգիծումը նա Հասցրել է դասական վարպետության: Նրա շատ պատմվածքներ, թվում է, կրկնելով միևնույն թեման, իրականում այն բացահայտում են խոցելի տարբեր Հատվածներից միշտ զարմանք Հարուցելով դրուժյան թարմություն և անկրկնելի սրամտություններով: «Գինովությունն ի նպաստ բարեգործական ընկերությունց» պատմվածքում բարեգործական միջոցառումները արդեն վերածվել են բարոյաղբիման փաստերը քողարկող միջոցի: Իրեն նախատող ամուսնու առջև կինը Հանդես է գալիս կրթասերի լուսապսակով. «Կսիրեմ զինքն, այո, կսիրեմ... միմիայն ի նպաստ կրթական Հաստատությունց, որոց մեջ մտավորապես և բարոյապես կզարգանան ազգին աղքատիկ մանկտին, որոնք լույս, լույս, լույս կաղաղակեն» (1884, Հունվար,

էջ 27): Այս ամենը ավարտվում է նրանով, որ ամուսինը ուղեղի խանգարում է ստանում ցայտունորեն արտահայտված ակտանիշներով. «Ի նպաստ» բառն այնքան ջղերուն դպած էր, որ երկու զավակներն միույն «ի նպաստ հրկիզելոց» անուն դրած էր, և մյուսին «ի նպաստ սովելոց» կկանչեր» (ն. տ., էջ 28):

Այլ պատմվածքներում և ֆելիետոններում ծաղրվում են անճարակ բժիշկները, փաստաբանները և այլն: Ուշագրավ է բարբերի մեջ մտած պերճախոս դամբանականներ արտասանելու արատավոր երևույթի քննադատութունը, որ արհեստ ու մասնագիտութուն էր դարձել ստորաքարչ քծնողների համար: Երգիծաբանը ծաղրուծանակի է ենթարկում այն իրողութունը, որ մեռնելուց հետո էլ մարդը չի ազատվում կեղծիքից ու երեսպաշտութունից: «Անդիի աշխարհի» թեման Պարոնյանը հմտորեն ծառայեցնում էր այս աշխարհի սոցիալական անարդարութունները բացահայտելու նպատակին:

Պոլսահայ բարբերի և բարոյականության հոռի կողմերի քննադատությամբ Պարոնյանը հանդես է գալիս որպես ողբերգակատակերգական նկարագրի գրող և հրապարակախոս առաջինը արևմտահայ գրականության և հրապարակախոսության մեջ:

Բարբերի անկման ընթացքը կասեցնելու գործում Պարոնյանը նշանակալի դեր էր վերապահում ազգային մամուլին, որի հաճախակի քննադատութունը «Խիկարի» էջերում վկայում էր երգիծաբանի հիասթափությունների մասին: Նրա կարծիքով, այդ դերը կարող էր կատարել միայն ազատ մամուլը, որ վեր է կանգնած խմբակային կամ դասային նեղ շահերից: «Արևելքի» Հայտնութունը Պարոնյանը համարում էր մամուլի դերի և նպատակների դեմ ուղղված վտանգ, ելնելով այն բանից, որ, ունենալով հարուստներից կազմված վարչութուն, մամուլը մենաշնորհ դարձնելու վտանգավոր նախադեպ է ստեղծում: Այստեղից էր գալիս «Արևելքի», նրա վարչության և նույնիսկ այդ թերթի շուրջ խմբված գրական նոր սերնդին (Ա. Արփիարյան, Լ. Բաշալյան, Մ. Կյուրճյան, Գր. Ջոհրապ և ուրիշներ) հակադրվելու միտումը: Հայտնի են նրա հարձակումները Արփիարյանի դեմ, որոնք որոշ դեպքերում իրենց կրքով ու զգացնել տվող կողմնակալությամբ հիշեցնում են Գ. Այվազյանի հետ նրա երեմնի բանավեճերը: Արփիարյանին Պարոնյանը կշտամբում էր Նուպարյան-Բյուզանդացի հակադրության մեջ վերջինիս հանիրավի մեծարելու համար (Պարոնյանին դուր չէր գալիս Բյուզանդացու լեզվական պահպանողականութունը): Պարոնյանի և Ար-



փիարյանի բանավեճը, սակայն, չուներ անհաշտելի բնույթ: Նույնը, թերևս, կարելի է ասել Մ. Մամուրյանի հետ նրա թոռուցիկ բանավեճի մասին:

Մ. Մամուրյանի դժգոհությունը սնուցվում էր նաև կաթողիկոսական ընտրության հարցում Պարոնյանից տարբեր ըմբռնումներից: Մամուրյանը պաշտպանում էր Մ. Մուրատյանի, իսկ Պարոնյանը՝ Մ. Խրիմյանի թեկնածությունը: Մամուրյանը ազգի համար վճռորոշ էր համարում կաթողիկոսի անձն ու գործունեությունը, Պարոնյանը՝ ոչ, կարծելով, որ կաթողիկոսը գործում է զորեղ տերություն Ռուսաստանի կողմից թուլլատրված անձուկ շրջանակներում: Կաթողիկոսի և Հայ եկեղեցու ազատ գործունեության հարցում Պարոնյանը համամիտ էր Գր. Օտյանին՝ ճիշտ համարելով Մայր աթոռի փոխադրումը Էջմիածնից:

Կաթողիկոսական ընտրությունից առավել Պարոնյանը արժեքավորում էր ազգային դպրոցի և լուսավորության խնդիրները: Բարոյականության անկումը մի Հայտնի չափով նա համարում է ժամանակի ոչ արդյունավետ կրթական համակարգի հետևանք: Երգիծաբանը այդ համակարգը, ուսման ծրագրերը ջախջախիչ քննադատության է ենթարկել մի շարք հոդվածներում: Այդ ծրագրերը չեն համապատասխանում կյանքի պահանջներին, դրանց վրա հենված ուսուցումը Հնարավոր չէ իրացնել, որովհետև անմիտ են ու բովանդակազուրկ: Ուսումնական ծրագրերի պարոզիա է «Ժամանակիս պահանջմանցը համաձայն կրթական ծրագրի մը» ֆելիետոնը, որտեղ երգիծաբանն առաջարկում է մի ծրագիր՝ կազմված քրեական ու բարոյական հանցանքների այնպիսի ուսուցումից, որը բարեկեցություն էր ապահովելու շրջանավարտի համար (1884, մայիս, էջ 131-140): Պարոնյանը ծաղրուծանակի է ենթարկում մասնավոր իրավագիտությունն ու իրավունքը ցույց տալով, որ սրիկայությունն ու կեղծիքը բարձրացել են իրավունքի աստիճանի: «Խիկարում» ևս ընդգծվում է դպրոցի ժողովրդական բնույթը, արհեստագիտական կրթության անհրաժեշտությունը՝ աղքատությունը վերացնելու դործում:

Պարոնյանը ուշադրություն էր հրավիրում Հայ մտավորականի, գրչի մշակի նյութական անզորության վրա: Անտարբեր Հասարակության պայմաններում երգիծաբանը իրական է համարում մտավորականության բարոյական անկման վտանգը: Երգիծաբանին չէր լքում մեծապատիվ մուրացկանի բարոյական բարդույթի զգացողությունը, որ նա մարմնավորելու էր Համանուն վիպակում:

Իր պարբերականին Պարոնյանը տվեց միջոցների բազմազանություն և նպատակասլացություն ըստ Հնարավորին արձագանքելով իրականության կարևոր երևույթներին: «Նիկարի» ընթերցողները, անշուշտ, Պարոնյանին մղել են առավել սրույթյան ու որոշակիություն, թեև, ինչպես տեսանք, նա ևս դժգոհ էր երգիծանքի ծածկալեզվից նկատելով, որ «Նիկարը» անցնում է գրաքննության մամլիչներով, և որ նրանից չի կարելի ակնկալել այն լեզուն, որ գործածում էին «Մեղուն», «Թատրոնը» և «Լույսը»: Այսուհանդերձ, «Նիկարում» Պարոնյանը Հասափ երգիծական խոսքի արվեստի մեծ նրբություն, քննադատական դատողություններում առկա և պարտադիր խոսսանավումներն ու շրջանցումները նա փոխհատուցում էր երևույթի բնութագրման խիստ արտահայտչականությամբ, զուսպ, բայց դիպուկ գնահատումներով: Եթե «Մեղվում», «Թատրոնում» և «Լույսում» Պարոնյանը ծաղրում էր և՛ երևույթը, և՛ դրա առարկայացումը, ապա «Նիկարում» առավել քան նկատելի է երևույթի խիստ կշռադատված երգիծումը:

«Նիկարի» էջերում Պարոնյանը մշակեց երգիծական գովազդի ժանրը, որ ինչքան մեզ Հայտնի է, եզակի մնաց Հայ լրագրության մեջ: Որևէ Համառոտ սյուժեի մեջ Հանկարծ ներխուժում է «Նիկարի» բացառիկ նշանակությունը: Այս կերպ, ընթերցողի մեջ ակամա Հետաքրքրություն է առաջանում «Նիկարի» Հանդես, որը Հաճախ նույնանում է ծիծաղի բուժիչ Հատկություններին:

«Նիկարի» վերջին տարիներին նկատելի որակ են կազմում նրա գրաքննադատական նյութերը: Նախապես ամսագիրը տպագրում էր Հիմնականում կարճ գրախոսականներ, իսկ Հետագայում ավելի մոտեցավ Կ. Պոլսի գրական կյանքին: Այստեղ ևս նրան մտահոգում է ընդօրինակությունները Հոսքը գրականության մեջ, որ կասեցնում էր ինքնուրույն գրականության զարգացումը: Ամսագիրը նկատում էր նաև չափածո խոսքի այլ թերությունները միօրինակությունն (Թ. Թերզյան) ու Հանգապաշտությունը (Ե. Տեմիրճիպաշյան, Աղ. Փանոսյան): Պարոնյանը երգիծում էր ռոմանտիկ պոետիկայի սեթևեթանքները, պաթետիկ ոճը:

Պարոնյանն իր ամսագրում չի անդրադարձել գրական նոր շարժմանը, որի ասպարեզը, ինչպես Հայտնի է «Արևելքն» էր: Նա նշում է միայն այն փաստը, որ «Երիտասարդությունն ինքզինքը նորավեպի տված է»: «Վարժպետին աղջիկը» մեծ փոթորիկ Հարույց Հրապարակի վրա» (1887, Հունիս, էջ 348): «Արևելքի» երիտասարդ գրագետների և Պարոնյանի միջև առաջացած

սառնութիւնը, թերևս նաև սուղ ժամանակը խանգարել էին երգիծաբանին անդրադառնալու նորավեպերին:

Գրաքննադատական նուրբ դիտողութիւններ է անում «Եսթեր» ստորագրող Հեղինակը: «Դանիել մը որ կգրադատե» (1887, մարտ, էջ 235) հոդվածում նա ըստ էութեան առաջադրում է տեղին և պարագային Համապատասխան լեզվատնական միջոցների գործածութեան, լեզվի և բուն նյութի ներդաշնակութեան խնդիրը: Այս ներդաշնակութիւնը փլվում է բաւերի, ձևի բացահայտ նախապատվութեամբ բովանդակութեան նկատմամբ, որի պատճառը նմանողութեան ձգտումն է: Այս տեսակետից «Եսթերը» քննադատում է նորավեպերի լեզուն: Առավել ուշագրավ է նույն քննադատի մի այլ հոդվածը Պարոնյանի «Պաղտասար աղբարի» մասին: Այն կատակերգութիւնը արժեքավորող առաջին լուրջ քննադատական խոսքն է, ուր Հանգամանալի վերլուծութեան են ենթարկվում Պաղտասարի, Անուշի, Կիպարի և այլոց կերպարները, ցույց տրվում նրանց բնութագրող կարևոր իրադրութիւններն ու գործողութիւնները: «Եսթերը» փորձում է կատակերգութիւնը գնահատել իր ամբողջութեան մեջ՝ արժանին Հատուցելով խոսքի և տեսարանների կոմիքմին: Քննադատը Պարոնյանի երգիծական արվեստի առանձնահատկութիւնները ներկայացնում է կատակերգութեան առանձին կողմերի կոնկրետ վերլուծութեամբ:

«Խիկարը» տալիս էր ոչ միայն ռեալիստական կատակերգութեան դասական նմուշի, այլև ռեալիստական գրաքննադատութեան Հաջողված օրինակը իր մասնակցութիւնը բերելով 1880-ականի արևմտահայ գրական շարժմանը:

## Գ Լ ՈՒ Ն Վ Ե Ց Ե Ր ՈՐ Դ

### ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՈՒԸ (1870-1900)

Արևելահայ մանկավարժական մամուլն սկզբնավորվում է անցած դարի 70-ական թվականներին, երբ առաջընթաց են ապրում մանկավարժական միտքն ու կրթական գործը: Այդ տարիներին նոր ժամանակների պահանջներին համապատասխան ձևավորվում է Հայ ազգային դպրոցը իր բնորոշ առանձնահատկություններով: Միաժամանակ գործում են ծխական, հոգևոր, թեմական դպրոցներ, իգական ու երկսեռ վարժարաններ, մեծ աշխատանք է տարվում դպրոցական միասնական համակարգ ստեղծելու ուղղությամբ: Հայ մտավորականը, հարազատ ժողովրդին ծառայելու նպատակներով խանդավառված, նախընտրում է աշխատել նաև մանկավարժության բնագավառում:

Ուսուցման և դաստիարակության հարցերի շուրջ մամուլում հողվածներ են տպագրում բժիշկները (Լ. Տիգրանյան, Դ. Ռոստոմյան, Բ. Նավասարդյան և ուրիշներ), բնագետները (Ալ. Բիշմիրյան և ուրիշներ), ինչպես նաև հասարակական ու քաղաքական գործիչները: Ահա թե ինչու «Մշակը» գրում է. «Մենք հասկացանք մեր դաստիարակության թերությունները, և ամենքս սկսեցինք (գոնե այդպես ենք կարծում) մանկավարժությամբ պարապել» (1872, №1):

Ստեղծվում է Հայ և ռուս լուսավորիչ մտածողների ու հեղափոխական-դեմոկրատների հայացքներով անված Հայ մանկավարժների մի ամբողջ սերունդ: Մասնագիտական բարձրագույն կրթությունը ստացած իննելով արևմտասեփրոպական դարգացած երկրների կենտրոնական քաղաքներում այդ սերնդի ներկայացուցիչները (Պ. Շանշյան, Ս. Մանդինյան, Խ. Ստեփաննե, Ս. Բեկնազարյան, Առ. Բահաթրյան, Իս. Հարությունյան, Հ. Տեր-Միրաքյան, Ս. Բաբայան, Գ. Հովհաննիսյան և ուրիշներ) մամուլում տպագրած իրենց հողվածներով և առանձին աշխատություններով Հայ ուսուցչին հաղորդակից են դարձնում նոր մանկավարժության դեմոկրատական սկզբունքներին, ուսուցման ու դաստիարակության առաջավոր մեթոդներին և միաժամանակ ուղիներ նշում դրանք Հայ դպրոցում կիրառելի դարձնելու համար:

Զգացվում էր առանձին պարբերականի գոյության անհրաժեշտությունը, պարբերական, որը ուղղություն և ամենօրյա օգնություն ցույց տար Հայ ուսուցիչներին և նպաստեք Հայ ազգային, ժողովրդական դպրոցի ձևավորմանն ու զարգացմանը: Առաջինը, եթե ոչ մանկավարժական, ապա Հայ ժողովրդին ընդհանրապես կյանքում և կենցաղում օգտակար խորհուրդներ տալու նպատակներով ամսագիր հրատարակելու փորձ է անում Թեոդոսիայի Հայկական սեմինարիայի տպարանի վարիչ Գ. Ե. Խաչիկով-Դուլվետովը (Տեղիվեթյան): Նա 1872 թ. դիմում է Ռուսաստանի ներքին գործերի նախարարին «Դաստիարակ» անունով ամսագիր հրատարակելու խնդրանքով: Խնդրագրում նշված է, որ ամսագրում տպագրվելու են գիտապրակտիկ բովանդակությամբ հոդվածներ արհեստների, գյուղատնտեսության, մանկավարժության մասին, ինչպես և վեպեր, պատմվածքներ, Հայտարարություններ: Խնդրագրին կցում է իր ատեստատը, բնութագրերը և վկայականը: Սակայն ներքին գործերի նախարարությունը մերժում է նրա խնդրանքը: Այնուհանդերձ, Տեղիվեթյանին Հաջողվում է իրականացնել ամսագրի հրատարակության գործը:

Գ. Ե. Տեղիվեթյանը ծնվել է 1836թ.: Մոսկվայի Լազարյան ճեմարանի լրիվ դասընթացն ավարտելուց հետո նա աշխատանքի է անցնում Թեոդոսիայի մաքսատանը, որպես գրասենյակային աշխատող, իսկ 1865-1871 թթ. աշխատում է նախկին Խալիբյան վարժարանում, որպես ուսուցիչ լեզվի և աշխարհագրության դասատու:

1873 թ. հունիսին Գ. Տեղիվեթյանը Թեոդոսիայում լույս է ընծայում «Դաստիարակ» ամսագիրը: Պարբերականի յուրաքանչյուր համար բաղկացած է 16 էջից: Ամսագրի նպատակների մասին առաջին համարում գրված է. «Ինչպես որ ամենայն ճշմարիտ դաստիարակ պարտք կճանչնա իրեն այնպես խոսիլ իր սաներուն հետ, որ միշտ օգուտ մը քաղեն լսած բաներեն, այնպես և մեր ամսաթերթին պարտքը պիտի լինի միշտ արժանի երևցնել ինք զինքը գործնական դաստիարակ ըսվելու ճշմարիտ պարժանքին»:

«Դաստիարակը» իր դաստիարակչական ուղղվածությամբ պատասխանում էր առաջադեմ մանկավարժության պահանջներին, ինչպես խմբագիրն է գրում. «Հետևելով քաղաքակիրթ երկրների մանկավարժությանը, տպագրել մարդավարության ու առողջապահության վերաբերյալ նյութեր»: Թերևս, պետք է նշել, որ խմբագիրը իր խոստումը իրականացնում էր ոչ թե մանկավարժության տեսության վերաբերյալ մասնագիտական նյութեր տպագրելով,

այլ գործնական կյանքում, առօրյա կենցաղում հայ ընթերցողին օգտակար խորհուրդներ տալով, վարվեցողության բարեկիրթ ձևերը սովորեցնելով, անցյալի ու ժամանակի պատմական դեպքերի ու դեմքերի մասին փոքրածավալ պատմութիւններ ղետեղելով: Ամսագիրն ուներ հետեւյալ բաժինները «Տնտեսականք», «Աշխարհագրականք», «Պատմականք», «Բնագիտականք», «Վիպասանականք» և «Զանազանք»:

«Դաստիարակ» ամսագրի ծառայութիւններից մեկն էլ եղել է այն, որ հայ ընթերցողին ծանոթացրել է ռուս մեծ բանաստեղծներ Ա. Ս. Պուշկինի և Մ. Յ. Լերմոնտովի ստեղծագործութիւններին: Այստեղ տպագրվել են Պուշկինի «Բախչիսարայի շատրվանք» պոեմը (1873, №5) և Լերմոնտովի «Հայրենիք» բանաստեղծութիւնը (1873, №3): Ի դեպ, ամսագիրը բարձր դնահատականի է արժանացրել Պուշկինին և նրա այդ ստեղծագործութիւնը. «Ռուսաց աշխարհաքարոզ և առաջին գերահռչակ քնարերգակ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինին անվանի գրվածներեն մեկն է «Бахчисарайский фонтан»-ը, որի թարգմանութիւնը կղենմք այստեղ ի վայելս մեր բանասիրաց» (1873, №5):

Թերևս, պետք է նշել, որ «Դաստիարակը» չհանդիսացավ այն պարբերականը, որը համարվեր մանկավարժական մասնագիտական ամսագիր կամ նման ամսագիր ստեղծելու ուղղութիւնը կատարված առաջին փորձ: Հայ պարբերական հրատարակութիւնների շարքում դեռ շարունակեց թափուր մնալ մանկավարժական մասնագիտական պարբերականի տեղը:

## «ԴՊՐՈՅ» (1874-1876)

Հայ մանկավարժական մտքի աշխուժացման տարիներին մտավորականութեան առաջադեմ ներկայացուցիչները միջոցներ են փնտրում մանկավարժական մասնագիտական պարբերական ստեղծելու ուղղութիւնում: Նրանցից առաջինը գործնական քայլերի է դիմում հրապարակախոս, մանկավարժ Վահան Բաստամյանը: Նա 1874 թ. , Վաղարշապատում (էջմիածին) լույս է ընծայում «Դպրոց» մանկավարժական ամսագիրը:

Գայանյան վանքի վանահայր Վահան Բաստամյանը ծնվել է 1842 թ., Թիֆլիսում: Սկզբում սովորել է Հարութիւն Շահնազարյանի մասնավոր դպրոցում, 1856 թվականից՝ Մոսկվայի Հազարյան ճեմարանում: Բաստամյանը կրթութիւնը շարունակում է Մոսկվայի Համալսարանում, սովորում է սկզբում բնագիտութեան, ապա իրավաբանական ֆակուլտետ-

ներում: Համալսարանը ավարտում է առաջին կարգի «մրցանակակիր» դիպլոմով:

1872 թ. Բաստամյանը ձեռնադրվում է վարդապետ: Նա թեև կրոնական էր, սակայն աշխարհիկ կրթության ու դաստիարակության ջերմ պաշտպան: Նրա հիմնական նպատակը ազգային մշակույթին ծառայելն էր: Մանկավարժական նորագույն դպրոցները ուսումնասիրելու նպատակով նա շրջագայում է արևմտասլավոնական զարգացած երկրներում, ծանոթանում ժողովրդական կրթության կազմակերպման նորագույն մեթոդներին: ՎաՀան Բաստամյանը, չստանալով ամսագիրը էջմիածնի վանքի տպարանում տպագրելու իրավունքը, Գայանյան վանքին կից հիմնում է իր սեփական տպարանը: Նոր ամսագրին բաժանորդագրվելու ցանկություն են հայտնում ընդամենը 150 հոգի: Եվ քանի որ ամսագիրը լույս էր տեսնում 200 օրինակից, ուստի խմբագիրը ստիպված է լինում 50 օրինակը անվճար ուղարկել դպրոցներին: 40 էջից բաղկացած ամսագրի հոդվածների մեծ մասը պատկանում է խմբագրի գրչին: Ամսագրին թղթակցում են զրող և մանկավարժ Ղ. Աղայանը, բնագետ Ա. Բիշմիրյանը, ուսուցիչ Կ. Թեյմուրազյանը, արևելահայ առաջին մանկապարտեզի հիմնադիր Ս. Բաբայանը և ուրիշներ:

Ազգի ինքնության պահպանման, ժողովրդական կրթության կազմակերպման գործին ծառայելու նպատակներով ասպարեզ մտած պարբերականը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը հասցեագրված է ուսուցիչներին ու ծնողներին և լուսաբանում է մանկավարժության գործնական խնդիրներն ու տեսական հարցերը: Երկրորդ մասը նվիրված է մանուկներին ու պատանիներին:

Ազգային նոր դպրոցի համար ծավալված պայքարը, որի հասարակական ու քաղաքական նպատակներից մեկը ազգի ինքնության պահպանումն էր, իր արձագանքն է գտնում ամսագրում: «Ազգային դպրոցի մեջ է, - գրում է ամսագիրը, - ազգի զարգացման զորությունը, ազգի առաջադիմություն և բարորություն պայմանը: Ուստի, նույն ինքը ազգը, նորա ընդհանրությունը պիտի հոգա իր դպրոցների մասին» (1874, №1):

Արևմտասլավոնական երկրների և ռուսական մանկավարժական մտքի ազդեցությունների պայմաններում սեփականը չկորցնելու մտավախությունից ելնելով ամսագիրը Հայ դպրոցի ղեկավարությունը հանձնարարում է Հայ ժողովրդին, նրա լավագույն մտածողներից կազմակերպված ընկերություններին: Եվ ամսագրի համոզմամբ ազգային դպրոցի դռները բաց պիտի լինեն

բոլորի հարուստի, աղքատի, երկրագործի, հոգևորականի, աշխարհականի երեսաների համար:

Ազգի ինքնութեան պահպանման, ժողովրդական կրթութեան զարգացման առաջին նախապայմանը ամսագիրը տեսնում է ուսուցումն ու դաստիարակութիւնը մայրենի լեզվով կազմակերպելու մեջ: «Լուսավորված Եվրոպան, - գրում է ամսագիրը, - որ այժմ այնպիսի մեծ ուշադրութիւն ունի մանկավարժական գիտութեան վրա, անհերքելի օրենք է համարում, որ յուրաքանչյուր մանկան սկզբնական մտավոր զարգացումը պիտի կատարվի անպատճառ և անպատճառ մայրենի լեզվով» (1874, №1):

Հետեւելով նորագույն մանկավարժութեան դրույթներին ամսագիրը պահանջում է Հայոց լեզվի և հասարակական այլ առարկաների, ինչպես և բնական գիտութիւնների դասավանդումը կազմակերպել այնպես, որ այն անպայմանորեն հետապնդի նաև բարոյակրթական նպատակներ: Ամսագրում առանձին ուշադրութեան են արժանանում բնական գիտութիւնների դասավանդման հարցերը: Քննադատաբար անդրադառնալով Հին, սխոլաստիկական կրթութեան համակարգին ու նրա վնասաբեր հետեւանքներին՝ առաջարկվում է մշակել բնագիտութիւնն առարկայի դասավանդման նոր մեթոդներ: Այդ տեսակետից աչքի են ընկնում հատկապես Ա. Քիշմիշյանի Հոգվածները («Համառոտ հայացք բնագիտութեան դասավանդման վրա» և այլն):

Ամսագրում ուսուցման և դաստիարակութեան հարցերը քննարկվում են իրենց միասնութեան մեջ: Մի շարք հոգվածներում («Ուսումնարանի ազդեցութիւնը աշակերտի խելքի ու բնավորութեան զարգացման վրա», «Դասագրքի մանկավարժական նշանակութիւնը» և այլն) այն միտքն է զարգացվում, թե դպրոցը կծառայի իր նպատակին, եթե գիտելիքների հաղորդման հետ մեկտեղ օժանդակի և աշակերտի բնավորութեան ձևավորմանը, զբացումների դաստիարակութեանը, ընդհանրապես նրա հոգևոր աշխարհի հարստացմանը:

Դպրոցում կարգ ու կանոնի պահպանումը ևս ամսագրում դիտվում է որպես դաստիարակութեան լավագույն միջոց: Պահանջվում է կարգապահութիւնը ապահովել ոչ թե պատիժների միջոցով, այլ ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ ցուցաբերած ազնվաբարո, հանգիստ, մեղմ վերաբերմունքի շնորհիվ (Ղ. Աղայան, «Դաստիարակութեան մեջ կարելի» է պատիժը որպես կրթողական հնարների մինը ընդունել, թե՞ ոչ» և այլն):



«Ուսուցչի պարտքն է, - գրում է Ղ. Աղայանը, - ոչ թե պատիժների հետ ընտելացնել նրանց (աշակերտներին), այլ ատելութուն ձգել նրանց մեջ դեպի այդ անազնիվ վարմունքը» (1874, № 2):

«Դպրոց» մանկավարժական ամսագրում տպագրվել են հոգվածներ թարգմանված ռուսական մանկավարժական պարբերականներից («Народная школа», «Семья и школа», «Детский сад», «Детское знание» և այլն): Ամսագիրը ընթերցողներին ծանոթացնում է Ռուսսոյի, Պեստալոցցու, Դիստերվեզի, Կոմենսկու և մյուսների մանկավարժական հայացքներին:

Ամսագրում միաժամանակ փորձ է արվում ներկայացնելու հայ մանկավարժական մտքի պատմությունը (անցյալից մինչև ներկա ժամանակները): Վ. Բաստամյանն իր «Պատմական տեղեկություններ հին և նոր դպրոցների վերա» (1874, №1-5) աշխատության մեջ ներկայացնում է հայ ազգային դպրոցի զարգացման անցած ուղին առաջին դարից մինչև XIX դարի 70-80-ական թվականները:

«Դպրոց» ամսագրում մեծ ուշադրության են արժանանում մանկավարժական բարձրորակ կադրերի պատրաստման, ուսուցչական սեմինարիաների հիմնադրման, առողջապահական տեսակետից պիտանի դպրոցական շենքերի կառուցման վերաբերյալ հարցերը:

Աճող սերնդի դաստիարակության գործում պակաս դեր չեն ունեցել նաև ամսագրի երկրորդ բաժնի նյութերը: Այդ բաժինը կրում է «Ընթերցարան» վերնագիրը, որտեղ գետեղված փոքրածավալ նյութերը պատմում են աշխարհում տեղի ունեցած նորագույն գյուտերի, հետաքրքիր իրադարձությունների և այլնի մասին: Տպագրվել են նաև գրական-գեղարվեստական գործեր, որոնք գրված են հարց ու պատասխանի ձևով և ներկայացնում են փոքրածավալ պատմությունների մանուկների ու պատանիների առօրյա կյանքից: Դրանք բոլորը հետապնդում են բարոյախրատական նպատակներ:

Այսպիսով, «Դպրոց» ամսագիրը, լինելով հայ առաջին մանկավարժական ամսագիրը, իր տեսակի մեջ նորություն էր հայ ժողովրդի մշակութային կյանքում: Այն առաջինը հրապարակային քննարկման դրեց մանկավարժական հնացած համակարգի վերակառուցման հարցը պահանջելով սերտ կապ հաստատել դպրոցի և կյանքի միջև:

## «ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» (1878-1880)

Հաջորդ մանկավարժական ամսագիրը «Մանկավարժական թերթ» պարբերականը, լույս է տեսել 1878 թ. Թիֆլիսում: Խմբագիր-հրատարակիչն էր Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Հակոբ Տեր-Հովհաննիսյանը: Նա սկզբում որպես ուսուցիչ աշխատել է Թիֆլիսի Գայանյան երկրորդ իգական դպրոցում, ապա նշանակվել է Վրաստանի և Իմերեթի հայոց ուսումնարանների թեմական վերատեսուչ:

«Մանկավարժական թերթ» ամսագրի տպաքանակը հասնում էր 350-ի: Բաժանորդագրություններից ստացված գումարը բավարարում էր և՛ տպագրության ծախսերը, և՛ դրամական օգուտ էր բերում խմբագրությանը: Ամսագիրը բաղկացած է 64 էջից: Մանկավարժական այս նոր ամսագիրը, ի տարբերություն նախորդի, ուներ աշխատակիցների մշտական կազմ: Հոդվածներ էին գրում մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած առաջադեմ մանկավարժներ Ա. Բահաթրյանը, Ս. Մանդինյանը, Ս. Բաբայանը, Հ. Ղուկասյանը և ուրիշներ:

Ամսագրում քննարկվում էին նաև արևմտահայ կրթական կյանքի հարցերը: Բարձրացվում էր հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ հատվածների համար կրթական համընդհանուր միասնական համակարգ ստեղծելու հարցը: «Հայոց դպրոցների միության խնդիրը» հոդվածում (1878, №6) առաջարկվում է արևմտահայ և արևելահայ դպրոցների միջև հաստատել փոխադարձ կապ ու համագործակցություն, ինչպես նաև ստեղծել ուսուցիչների ընդհանուր միություն: Միաժամանակ ամսագիրը բարձր գնահատականի է արժանացել արևմտահայ մտավորականության կողմից: Ձմյուռնիայում լույս տեսած «Արևելյան մամուլ» ամսագիրը գրում է. «Կարող ենք բացարձակ ասել, թե «Մանկավարժական թերթի» հրատարակությունն մի նոր և սիրուն երևույթ է մեր հայ պարբերական հրատարակությանց հորիզոնին վերա: Այստեղ տպագրված հոդվածները կհամոզեն մեզ, որ «Մանկավարժական թերթն» ունի կոչումն, ունի նպատակ, ունի պատրաստություն և գործողներ, որոնք ոչ թե լոկ կզրեն դաստիարակության վերա, այլ ինքնին դաստիարակության պաշտոն վարելով, մի կողմեն կգործեն և կփորձեն, և մյուս կողմեն կզրեն» (1879, փետրվար):

«Մանկավարժական թերթ» ամսագիրը, շարունակելով նախորդ «Դպրոց» ամսագրի ավանդները, իր գործունեության համար որպես նպատակ նույն-

պես ընտրում է պայքարը ազգի ինքնության պահպանման համար: Այս ամսագրում ևս մեծ տեղ է տրվում մայրենի լեզվի ուսուցման հարցերին, դասավանդման մեթոդներին: Ա. Բահաթրյանի «Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ» (1878, №1-7), «Քերականություն աշխարհիկ լեզվի» (1878, №4), «Ընթերցարանը և նրա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ» (1879, №8-9) և այլ աշխատություններում քննարկվում են հայոց լեզվի դասավանդման առաջավոր մեթոդները, զարգացվում է այն միտքը, թե հարագատ միջավայրից, ազգային կյանքից վերցված նյութերի հիման վրա պետք է աշակերտներին սովորեցնել լեզվի քերականության կանոններն ու օրենքները: Ի դեպ, Ա. Բահաթրյանն առաջինն է Հայ անցյալի մանկավարժներից, որ թողել է մեթոդական հարուստ գրականություն:

«Մանկավարժական թերթ» ամսագրում ոչ միայն մայրենի լեզվի ու գրականության, այլ նաև մյուս առարկաների դասատվության մեթոդները նույնպես ենթարկվում են բազմակողմանի քննարկման: Ս. Մանդինյանը և մյուսները իրենց մեթոդական դրույթները շարադրելիս հետապնդում են դպրոցը կյանքի հետ կապելու նպատակներ:

Ամսագրում հոդվածներ են տպագրվել նաև բնագիտության, աշխարհագրության, պատմության, երգ-երաժշտության, խաղերի ուսուցման վերաբերյալ: Մեծ թիվ են կազմում նաև նախադպրոցական և տարրական կրթության հարցերի շուրջ գրված հոդվածները: Դրանց հեղինակներն են Ս. Բաբայանը, Ս. Մանդինյանը և ուրիշներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Մանկավարժական թերթը» անդրադարձել է նաև մանկական ընթերցանության հարցերին: Մեջբերելով Վ. Գ. Բելինսկու հետևյալ միտքը, թե «մանկանց համար պետք է լինին ոչ թե մանկական գրյանք, այլ առանձին հրատարակությունք գրյանց, որոնք հեղինակած են նույնիսկ հասակավորների համար, հրատարակությունք, որոնց միջից պետք է դուրս ձգած լինի այն ամենը, ինչ որ մանկանց դեռ վաղ է գիտեանալը», ամսագիրը հանդուժ է այն եզրակացության, որ մանկական ընթերցանության նյութերը պետք է վերցված լինի իրական կյանքից, պետք է ունենա մտածված բովանդակություն և ներկայացնի կյանքն այնպես, ինչպես որ այն կա: Ամսագրի էջերում առաջին անգամ ուրվագծվում են Հայ մանկական նոր գրականության տեսական սկզբունքները:

«Մանկավարժական թերթ» ամսագրին աշխատակցել են նաև բժիշկներ և այլ մասնագիտությունների տեր երիտասարդներ: Ամսագրում բավական մեծ

Թիվ են կազմում դպրոցական առողջապահական հարցերի շուրջ գրված հոդվածները:

Ամսագիրը քննարկման առարկա է դարձրել նաև ուսուցչական Համընդհանուր ժողովների Հրավիրման Հարցը: Բարձր գնահատելով գրանց դերը ուսուցչիներին կրթութայան նոր մեթոդներին ծանոթացնելու գործում գրում է. «Ինչ օգուտ գյուղի ուսուցչին, եթե նա միայն կարդար մանկավարժական հոդվածներ առանց փորձով տեսնելու դոցա մեջ նկարագրած մեթոդների գործադրութունը, եթե նա ուսման և դաստիարակութայան վրա չլսեր մի քանի կենդանի խոսք» (1878, №2): Ուստի, ամսագիրը լայն աշխատանք է ծավալում ուսուցչական նոր ընդհանուր ժողովի Հրավիրման օգտին:

Ուսուցչական ընդհանուր ժողովի նշանակութայան մասին ամսագիրը գրում է. «Այդ ժողովի մեջ Հին ուսուցչին իմացավ, որ այժմ չի պահանջվում միայն կարդալ, գրել և Հաշվել սովորեցնել ժողովրդական ուսումնարանի աշակերտներին, այլև կարևոր է ծանոթացնել նորան յուրյան շրջապատող բնութայան, Հայրենիքի, ազգի Հետ...» (1878, №1-2):

«Մանկավարժական թերթ» ամսագրի էջերում Հարց է բարձրացվում ազգային կենտրոնական մատենադարան, ուսուցչական սեմինարիաներ Հիմնելու մասին: Ամսագիրը իր գործունեութայան ընթացքում կարողացավ ծառայել իր կոչմանը՝ որոշակի նպաստ բերել Հայ ազգային նոր դպրոցի կազմավորման ու զարգացման գործին:

### «ՎԱՐԺԱՐԱՆ» (1882-1884)

«Մանկավարժական թերթ» ամսագրի դադարելուց երկու տարի Հետո, Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի Հրավիրման նախօրյակին 1882 թ. օգոստոսին, Թիֆլիսում լույս է տեսնում «Վարժարան» մանկավարժական ամսագիրը: Ամսագրի բաժանորդների թիվը Հասնում է 300-ի: Նյութական միջոցների սղութայան պատճառով 1883 թ. Հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր և 1884 թ. Հունվար ամիսներին ամսագիրը լույս չի տեսնում: Խմբագրի և աշխատակիցների ջանքերի շնորհիվ 1884 թ. փետրվարից ամսագիրը վերստին Հրատարակվում է: Մանկավարժական այս պարբերականի ծավալը 44 էջ էր:

«Վարժարան» ամսագիրը խմբագրում և Հրատարակում էր Թիֆլիսի Գայանյան օրիորդաց դպրոցի տեսուչ Նիկողայոս Խոսրովյանը: Պարբերա-

կանին աշխատակցում էին ժամանակի առաջադեմ մանկավարժներն ու մշակութային գործիչները (Ղ. Աղայան, Ս. Բեկնազարյան, Ս. Մանդրինյան, Փ. Վարդանյան և ուրիշներ):

Ամսագրի Հիմնական նպատակն էր Հայ ուսուցիչներին Հաղորդակից դարձնել ուսուցման և դաստիարակութայան նոր մեթոդներին: Առաջին Համարի խմբագրական Հոդվածում գրված է. «Վարժարանի» նպատակն է Հեռու պահելով իրեն անձնական Հարձակումներից ու կուսակցական Հաշիվներից, քննութայն առնել ուսումնարանի ներկա դրությունը և միջոցներ ցույց տալ նրան ժամանակի պահանջներին Համապատասխան դիրք բռնելու Համար» (1882, №1-2):

Ամսագիրը բավական մեծ աշխատանք էր կատարում Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովում քննարկված Հարցերը մեկնաբանելու և ժողովրդականացնելու ուղղությամբ: Հայտնի է, որ 1882 թ. օգոստոսի 20-ին բացվեց Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը, որին մասնակցեցին գրեթե բոլոր աչքի ընկնող մանկավարժները, թվով 200 Հոգի: Ժողովը քննարկեց դպրոցի Հետ կապված բազմաթիվ Հարցեր: Այնտեղ ընթերցվեցին մայրենի լեզվի և այլ առարկաների ուսուցման մեթոդաբանութայն, մատաղ սերնդի բարոյակրթական դաստիարակութայն, գործնական գիտելիքների Հաղորդման վերաբերյալ զեկուցումներ: Ժողովականների նախաձեռնությամբ կազմվեցին Հատուկ մասնախմբեր՝ ծխական և միջնակարգ դպրոցների Համար ուսումնական ծրագրեր մշակելու նպատակով: Ժողովի մասնակից ուսուցիչների Համար կազմակերպվեց առանձին օրինակելի դպրոց, որտեղ փորձնական-ցուցադրական դասեր անցկացվեցին, և այդ դասերի քննարկումների ժամանակ Համապատասխան ցուցումներ տրվեցին մասնակիցներին:

«Վարժարան» ամսագիրը, մեծ կարևորություն տալով ժողովին, իր էջերում պարբերաբար Հատվածներ է տպագրում զեկուցումներից: Ամսագրում է տպագրվում ժողովի նախագահ և ժողովին իր դործուն մասնակցությունը ունեցած Սեդրակ Մանդրինյանի «Ի՞նչ ծրագիր է Հարկավոր մեր ծխական ուսումնարաններին» Հոդվածը, որպես նվեր Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովին: Այստեղ նա շարադրում է ազգային նոր դպրոցի Համար կազմած իր ծրագրի Հիմնական դրույթները և պահանջում գիտական Հիմքերի վրա դնել մայրենի լեզվի ուսուցման գործը: Նա առաջարկում է ազգային լեզուն սովորեցնել ազգային մատենագրությունից վերցված նյու-

թերի Հիման վրա. «Ազգային կրթութիւնը միայն Հայոց բառերով չի մատակարարվի, այլ ազգային Հանճարով, որ ազգային մատենագրութեան մեջ է ամփոփվում» (1882, №1-2): Նա միաժամանակ զարգացնում է այն միտքը, որ «ուսումը կրթական ու դաստիարակական» պետք է լինի:

«Վարժարան» ամսագրում մայրենի լեզվի և գրականութեան ուսուցման մեթոդաբանութեան շուրջ Հոգվածներ են տպագրել Ա. Բահաթրյանը («Այլընտարանից Հետո կարգալն ու գրելը»), Ղ. Աղայանը («Գրագիտութեան ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նրանից խոտորվելը»), Գր. Երզնկյանը («Տարրական քերականութեան դասավանդման մասին») և ուրիշներ:

Ամսագրում քննարկվել են նաև այլ առարկաների դասավանդման մեթոդները: Ս. Բեկնազարյանը իր «Ժողովրդական տարրական դպրոցներում աշխարհագրութեան և բնական գիտութեան դաս տալու եղանակն ու ծրագիրը» Հոգվածաշարում (1883, №6-7) նշում է այն եղանակները, որոնցով պետք է դասավանդվեն բնական գիտութեանները՝ դաստիարակչական նպատակներով: Իսկ Փ. Վարդանյանը «Բնագիտութեանը վարժարանի մեջ» Հոգվածում բնական գիտութեանների ուսուցումը կապելով բարոյական դաստիարակութեան Հետ, գրում է. «այն մի գործը և ազդու միջոց է Հալածելու ժողովրդի միջից այն սնապաշտութեանը և կույր Հավատը, որով մարդը ամեն մի Հեղինակութեան ստրկանում է և ուրիշների ձեռքին Հլու գործիք դառնում և իր անկախութեանը կորցնելով, մարդկային կոչումն անգամ ուրանում» (1884, №4-5):

Փ. Վարդանյանն ամսագրում Հանդես է եկել նաև աշակերտների գեղագիտական դաստիարակութեան Հարցերի շուրջ Հոգվածներով: Դպրոցում նկարչութեան ուսուցումը պարտադիր է Համարում Հատկապես աշխատավոր դասի երեխաների Համար: «Հրահանգելով նոցա նկարչութեան մեջ, - գրում է նա, - վարժարանն այն արած կլինի, որ արհեստավորը կղաղարե մի լոկ մեքենա լինելուց և կղառնա ավելի նուրբ բաներ շինելու, իր արհեստը ավելի Հահավետ կացուցանելու ընդունակ մարդ» (1883, №10):

«Վարժարան» ամսագրի մանկական բաժնում գետեղված են մանուկներին ու պատանիներին Հասցեագրված գեղարվեստական գործեր, որոնց մեծ մասը Թարգմանական է: Տպագրվել են Անդերսենի «Աղջիկն ու լուցկին», «Թագավորի նոր զգեստը», «Օրիորդ Ինգեն» և այլ պատմվածքները, Ա. Ս. Պուլկինինի «Ոսկե ձկնիկը» Հեքիաթը (Ռ. Պատկանյանի Թարգմանութեամբ): Ինքնուրույն ստեղծագործութեաններից աչքի են ընկնում Ղ. Աղայանի, Ա.

Մեհրաբյանի և մյուսների բանաստեղծութուններն ու փոքրածավալ պատմութունները: Այդ բոլոր գործերը երեխաների մեջ դաստիարակում են մարդկային լավագույն հատկանիշներ՝ բարություն, ազնվություն, մարդասիրություն, հայրենասիրություն, աշխատասիրություն և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ երբ 1883 թվականի հունվարին Թիֆլիսում լույս է տեսնում «Աղբյուր» ամսագիրը՝ արեւելահայ առաջին մանկապատանեկան պարբերականը, «Վարժարանի» խմբագրությունը նպատակահարմար է դառնում փակել ամսագրի մանկական բաժինը՝ գրելով. «Վարժարանը» այսուհետեւ նվիրելու է իր ուշադրությունը ծնողներին ու դաստիարակներին առաջնորդություն պատրաստող հոգիւններին և դպրոցի հասուն ուսանողներին ընթերցանության պաշարին և այսպիսով աշխատանքը բաժանված կլինի «Վարժարանի» և «Աղբյուրի» մեջ, որով անշուշտ գործը համեմատաբար ավելի մեծ հաջողություն կգտնի» (1884, №3):

Ի տարբերություն նախորդ մանկավարժական ամսագրերի, «Վարժարանը» իր ընթերցողներին ցուցումներ էր տալիս մայրենի լեզվի և այլ առարկաների դասավանդման մեթոդների վերաբերյալ, ավելի խոր ու բազմակողմանի վերլուծության էր ենթարկում ուսուցման ու դաստիարակության հարցերը:

1884 թ. սեպտեմբերին նյութական սուղ միջոցները ստիպում են խմբագրին ընդմիջտ փակել ամսագիրը:

### «ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՅ» (1884-1887)

1884 թ. մարտին, երբ դեռ չէր փակվել «Վարժարանը», Խորեն Ստեփաննի Թիֆլիսում լույս է ընծայում «Մանկավարժանոց» մանկավարժական նոր ամսագիրը: Խմբագիրը, աշխատանքի բերումով ամեն տարի տեղափոխվելով քաղաքից քաղաք, փոխում էր նաև ամսագրի հրատարակության վայրը: 1885 թ. ամսագիրը լույս է տեսնում Ախալցխայում, 1886 թ. նորից Թիֆլիսում, 1887 թ. Պետերբուրգում: Ամսագրի յուրաքանչյուր համարը 64 էջ է:

«Մանկավարժանոցը» չունի աշխատակիցների հիմնական կազմ: Խմբագիրը այն հրատարակում էր «Հույսը դնելով իր եռանդի և ուժերի վրա»: Ամսագիրը տպագրվում էր 200 օրինակից, որից 100-ը անվճար ուղարկվում էր հայկական դպրոցներ:

«Մանկավարժանոցի» Հիմնական նպատակն էր՝ Հնարավորության սահմաններում ուսուցման և դաստիարակության մեթոդների վերաբերյալ մասնագիտական տեղեկություններ հաղորդել ուսուցիչներին, դրանով իսկ միաժամանակ օժանդակել Հայ ուսուցչական կազմերի պատրաստման գործին: Ամսադրի խմբագրությունը կազմում է առանձին հարցաթերթիկներ և, ուղարկելով ուսուցիչներին, պահանջում նրանցից գրել իրենց կարիքների ու հոգսերի մասին: Սակայն խմբագրությունը ստանում է միայն եկատերիսոզարի հոգևոր դպրոցի պատասխան-տեղեկագիրը, որը և տպագրված է ամսագրում:

Ամսագիրը իր էջերում քննարկել է մատաղ սերնդի բարոյակրթական և գեղագիտական դաստիարակության հարցերը: Պահանջվում էր հատկապես նկարչության, ինչպես և երգ-երաժշտության դասավանդումը Հայկական դպրոցներում դնել իր բարձրության վրա, լուրջ ուշադրություն դարձնել աշակերտների մեջ գեղեցիկի ճաշակը զարգացնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին: Միաժամանակ առաջարկվում է դասասենյակները զարդարել քանդակներով, նկարներով: «Ուրեմն, - գրում է ամսագիրը, - բավական չէ միայն ուսուցանել նկարչություն մեր դպրոցներում. հարկավոր է նույն ինքն դպրոցը շինել թանգարան, մի տեսակ սրբության սրբոց (սրբավայր), որտեղ թափափորեր գեղեցկությունը գիտության և առաքինության հետ» (1884, №1): Պահանջվում է նաև կենդանություն տալ ազգային երգերին, ժողովրդական երաժշտությանը:

Մանկավարժական մասնագիտական նյութերից բացի այս ամսագրում տեղ են գտել նաև հասարակական, քաղաքական կյանքի վերաբերյալ, ինչպես նաև պատմական թեմաներով գրված հոդվածները:

Ամսադրում, որպես Հայ մամուլի անցյալի պատմությունը ներկայացնող հոդվածի առաջին փորձ, ուշագրավ է «Ազդարար» անդրանիկ Հայ ամսագիրը և նրա խմբագիր Հարություն քահանա Շմալոնյանը» հոդվածը (1887, №1), որի հեղինակն է Ս. Գուլամիրյանը: Այդ հոդվածը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես այն տեսակետից, որ առաջին անգամ Հայ ընթերցողին ծանոթացնում է Հայերեն առաջին պարբերականի ու Հայ առաջին խմբագրի գործունեությունը:

«Մանկավարժանոցի» մի շարք հոդվածներ էլ տեղեկություններ են հաղորդում աշխարհի տարբեր ծայրերում ապրող Հայերի մասին («Լազիստանի Հայեր», «Հնդկաստանի և Բիրմայի Հայեր» և այլն):



Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ամսագրի գրական էջերը: Այստեղ գետնողված բանաստեղծությունների մեծ մասը պատկանում է խմբագրի գրչին: Այդ չափածո գործերում հեղինակն արտահայտում է իր դժգոհությունը ժամանակի սոցիալական, տնտեսական, բարոյական կյանքում տեղ գտած անարդարություններից:

Խմբագիրը ընտրել է իր ամսագրում տպագրել է ռուս բանաստեղծ Ա. Ն. Պլեչչեևի «Առաջ» բանաստեղծությունը (1884, № 1), որը ամբողջովին բողոք է ուղղված ժամանակի անիրավությունների դեմ և պայքարի կոչ՝ Հանուն լավագույն կյանքի և ժամանակին հնչել է որպես հեղափոխական երգ:

«Մանկավարժանոցի» խմբագիրը ևս, չունենալով նյութական բավարար միջոցներ, 1887 թ. փետրվարից փակում է ամսագիրը:

«Մանկավարժանոցի» փակվելուց հինգ տարի հետո 1892 թ. Ենայի Համալսարանի շրջանավարտ Հովհաննես Բարխուդարյանը Մոսկվայում լույս է ընծայում «Մանկավարժական գրադարան» տարեգիրքը: Լույս է տեսել ընդամենը մեկ գրքով: Պետք է նշել, որ «Մանկավարժական գրադարանի» խմբագիրը Հովհաննես Բարխուդարյանը, դեռ ուսանողական տարիներից զբաղվել է մանկավարժության և հոգեբանության հարցերով: 1889 թ. նա Ենայում լույս է ընծայել «Որքանով Լեյբնիցը հոգեբանության մեջ Հերբարտի նախորդն է» աշխատությունը, որը նրա դոկտորական դիսերտացիան էր: Բարխուդարյանը զբաղվել է Հրապարակախոսական գործունեությամբ: Նա աշխատակցել է «Հանդես գրականական և պատմական», «Մուրճ» և այլ պարբերականներին:

«Մանկավարժական գրադարանում» հոդվածներ են տպագրել ժամանակի աչքի ընկնող մանկավարժներ Հովհ. Տեր-Միրաքյանը, Իս. Հարությունյանը և ուրիշներ: Տարեգիրքը Հայ ընթերցողին ծանոթացրել է ռուս և արևմտասփյուռպական դասական մանկավարժների Հայաքցներին, Ենայի, Փարիզի և կենտրոնական այլ քաղաքների մանկավարժական սեմինարիաներում, ժողովրդական դպրոցներում ուսուցման ու դաստիարակության կազմակերպման գործին:

Տարեգրքում առանձին բաժին է հատկացված արևմտահայ կրթական գործի լուսաբանմանը: Հովհ. Տեր-Միրաքյանը, որն այդ տարիներին գտնվում էր Զմյուռնիայում, տպագրում է «Կովկասյան մանկավարժների արդի դերը իրենց տաճկահայատակ ազգայինների կրթական գործում» հոդվածը (1892, գիրք առաջին): Նա քննադատաբար է անդրադառնում հատկապես մայրենի

լեզվի ուսուցման դրվածքին: Մայրենի լեզվի, ինչպես և այլ առարկաների ուսուցման գործը արևմտահայ դպրոցում բարելավելու համար անհրաժեշտ է համարում արևելահայ մանկավարժների միջամտութունը: Նա առաջարկում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ավելացնել տանկահայ աշակերտների թիվը, արագորեն լուծել վարժապետանոց բացելու հարցը, ստեղծել հոգեբանության և բարոյական փրկիսոփայության ձեռնարկ և այլն:

Տարեգրքում տպագրված են նաև ուշադրության արժանի գրախոսականներ: Դրանք վերաբերում են ինչպես մանկավարժական («Ընդհանուր մանկավարժութուն»), այնպես էլ պատմական («Արասխանյանց Ավետիք. Արևելյան ազգերի հին պատմութունը») թեմաներով գրված աշխատութուններին:

«Մանկավարժական գրադարան» տարեգիրքը ևս ժամանակին իր օգտակար դերը կատարել է: Այն նպաստել է հատկապես Մոսկվայի և Ռուսաստանի հայաբնակ վայրերի ուսուցիչների տեսական գիտելիքների հարստացմանը:

Այսպիսով, անցած դարի վերջին քառորդում սկիզբ առած ու տարիներ ընթացքում վերընթաց զարգացում ապրած Հայ մանկավարժական մամուլը, հանդես գալով ուսուցման ու դաստիարակության նոր ու առաջավոր մեթոդների քարոզմամբ, կատարում է իր անհրաժեշտ դերը նորագույն մանկավարժության դեմոկրատական սկզբունքները Հայ ազգային դպրոցում արմատավորելու, Հայ մանկավարժական նոր մտքի ձևավորմանն ու զարգացմանը իր կարևոր նպաստը բերելու գործում:

## Գ Լ ՈՒ Խ Յ Ո Թ Ե Ր Ո Ր Դ

### ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՍՈՒԸ

Հայ մանկապատանեկան մամուլի պատմութիւնն սկզբնավորվում է XIX դարի 50-ական թվականներին: Այն սերտորեն առնչվում է լուսավորական շարժման առաջադրած խնդիրներին:

Ռուսական և արևմտասեփրոպական երկրներում բարձրագույն կրթութիւնն ստացած Հայ ժողովրդի զավակները Կոստանդնուպոլսում, Ջմյուռնիայում, Թիֆլիսում, Մոսկվայում, Երևանում և այլուր Հանդես են գալիս կրթական ընկերութիւնների, միութիւնների կազմակերպման նախաձեռնութիւններով: Նրանք (Ն. Ջորայան, Գր. Օտյան, Ն. Ռուսինյան, Աղաթոնյան եղբայրներ, Ստ. Նազարյան և ուրիշներ), Հետևելով XIX դարի արևմտասեփրոպական առաջադեմ մտածողների (Դ. Դիդրո, Ժան Ժակ Ռուսսո և ուրիշներ) պատմափիլիսոփայական և մանկավարժական Հայացքներին, կրթութիւն և լուսավորութիւն տարածման մեջ են տեսնում սոցիալ-տնտեսական կյանքի վերափոխման և Հասարակական զարգացման Հիմնական երաշխիքը: Հիմք ընդունեով «ազգը ինքը պետք է կրթի իր զավակներին» նշանաբանը նրանք ուշադրութիւն կենտրոնում են պահում ազգային կյանքի ինքնազարգացման խնդիրները: Ստ. Նազարյանը, Ն. Ջորայանը և ուրիշներ իրենց մանկավարժական Հոգիվածներում բարձրացնում են դպրոցը իրական կյանքի պահանջներին Համապատասխան վերափոխելու խնդիրը, առաջարկում են աշակերտներին ուսուցանել զանազան արհեստներ և այլն: Հետևելով Խ. Աբովյանի մանկավարժական Հայացքներին Ստ. Նազարյանն իր աշխատութիւններում («Առաջին Հոգեդէն կերակուր», «Հանդես նոր Հայախոսութիւն» և այլն) այն միտքն է դարձրացնում, թե անող սերունդը իր կրթութիւնը պետք է ստանա մայրենի լեզվով:

Աճող սերնդի դաստիարակութիւն լավագույն միջոցներից մեկն է Համարվում ընթերցանութիւնը: Ուստի, առանձին մանկավարժների կողմից, ինչպես և մամուլի էջերում մշակվում են տեսական Հարցեր մանկական ընթերցանութիւն վերաբերյալ:

Մանկական ընթերցանության նկատմամբ առաջացած մեծ հետաքրքրու-  
թյունն ինքնին առաջ է բերում մանկապատանեկան մամուլի ստեղծման  
անհրաժեշտությունը: Հայ մանուկների ու պատանիների համար առաջին  
տպագիր օրգանները երևան են եկել արևմտահայ իրականությունում: Դրանք  
աշակերտական պարբերականներ են, որ լույս են տեսել լուսավորիչ մտածող-  
ների անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Կոստանդնու-  
պոլսում Սահակյան վարժարանի աշակերտները 1851 թվականին հրատա-  
րակում են «Բուրաստան ս. Սահակյան» ամսագիրը, իսկ Ջմյուռնիայում  
Մեսրոպյան վարժարանի աշակերտները «Թուֆակ Հայկազյան» և «Երկա-  
սեր» աշակերտական պարբերականները:

**«ԲՈՒՐԱՍՏԱՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ» (1851-1853),  
«ԹՈՒԹԱԿ ԴԱՅԿԱԶՅԱՆ» (1854-1855) ԵՎ «ԵՐԿԱՍԵՐ» (1855)**

XIX դարի 50-ական թվականներին Հայ կրթական հաստատությունների  
շարքում աչքի ընկնող տեղ են զբաղում Կոստանդնուպոլսի Սամաթիա թա-  
ղամասում 1831 թվականին կառուցված Սահակյան և 1879 թվականին  
Ջմյուռնիայում հիմնադրված Մեսրոպյան վարժարանները:

Հայ մանկապատանեկան մամուլի անդրանիկ օրգանի լույս ընծայման  
նախաձեռնությունը պատկանում է Կոստանդնուպոլսի Սահակյան վարժա-  
րանի աշակերտներին: Նրանց հրատարակած «Բուրաստան ս. Սահակյան»  
ամսագիրը 1851 թվականին լույս է տեսել 12, 1852 թվականին 5 համար:  
1853 թվականի փետրվարին փակվել է: Ամսագրի խմբագիրներն են եղել նույն  
վարժարանի բարձր դասարանների աշակերտներ Միքայել Մարգար-  
յանը, Հարություն Թյուլյանը: Պարբերականին աշխատակցել են Հարու-  
թյուն Այտընյանը, Սարգիս Շամլյանցը, Հովհաննես Գարրիելյանը և ուրիշ-  
ներ: «Թուֆակ Հայկազյանը» նույնպես խմբագրել են Ջմյուռնիայի Մես-  
րոպյան վարժարանի բարձր դասարանի աշակերտները Պ. Ավետիսյանը, Ջ.  
Սիմոնաքյանը: Աշխատակցում էին նույն վարժարանի աշակերտներ Գ. Կոս-  
տանդյանը (ապագայում բնագետ, «Մեթոդին վրա» հայտնի երկի հեղինակը),  
Ջ. Ագշեհիրցին (Ջ. Ս. Ա.), Արմենակ Պալապանյանը (Ա. Ս. Յ. Պ.) և ուրիշներ:  
Աշակերտական հաջորդ պարբերականը «Երկասերը» հրատարակում են  
Մեսրոպյան վարժարանի չորս աշակերտներ, որոնցից մեկը Մեսրոպ Նու-  
պարյանն էր, իսկ մյուսների անունները հայտնի չեն: «Երկասերի» հիմ-

նադրմանը մասնակից Մեսրոպ Նուպարյանը Հետագայում դարձել է Հրապարակախոս, թարգմանիչ, բառարանագիր: Նա 1877 թ. Հայերեն է թարգմանել «Մարսիլյեզը», ինչպես և Ժ. Մուլիերի, Վ. Շեքսպիրի, Յո. Գյոթեի և եվրոպական այլ Հեղինակների ստեղծագործությունները: Նուպարյանը 1913 թ. ընտրվել է Չրանսիայի պաշտոնակալ: Թե՛ «Երկասեր» և թե՛ «Թուփակ Հայկազյան» ամսագրերի Հրատարակման գործը ղեկավարել է Մեսրոպյան վարժարանի տեսուչ Անդրեաս Փափազյանը՝ նոր մանկավարժության նախակարապետը արևմտահայ իրականությունում: Նրա օրոք բարձր Հիմքերի վրա է դրվում Հայոց, ինչպես և օտար լեզուների ուսուցումը դպրոցում, լուրջ աշխատանք է տարվում աճող սերնդի գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության ուղղությունը:

Աշակերտական առաջին պարբերականները ունեն գրեթե նույն բաժինները: Նյութերը ղետեղված են «Բանասիրական», «Բարոյական», «Ուսումնական», «Տնտեսական» խորագրերը կրող բաժիններում: Միայն «Թուփակ Հայկազյան» ունի նաև «Զվարճալիք» բաժինը:

«Բանասիրական» և «Բարոյական» խորագրերով տպագրվում էին բարոյախրատական փոքրածավալ պատմություններ, զրույց-Հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, որոնք բոլորն էլ ունեն ճանաչողական արժեք և դաստիարակչական նշանակություն: Այսպես, «Բոմբինճեյ իշխանին երջանկություն փնտրելու ճամփորդությունը», «Փընչինելլո խեղհատակին խաղերը» («Բուրաստան ս. Սահակյան»), «Ակամա աստղաբաշխը» («Թուփակ Հայկազյան») և այլ զրույցներում գործողությունների ու պատումների Հաջորդական ընթացքը Համոզում է ընթերցողին, որ երջանկությունը ոչ թե Հարստության, այլ ազնիվ աշխատանքի, մարդկանց օգտակար լինելու, միմյանց Հանդեպ ունեցած պարտքի կատարման մեջ է: Այս պարբերականներում տպագրված մի շարք զրույցներ արտատպվել են Հայ մանկապատանեկան մամուլի Հաջորդ օրգաններում («Բուրաստան մանկանց», «Հասկեր» և այլն) ու Հասել մինչև մեր օրերը, դառնալով մանուկների ու պատանիների ընթերցանությունից սիրելի նյութը: Դրանցից է օրինակ «Աբու Հասանի մաշիկները» զրույց-Հեքիաթը, որը «Բուրաստան ս. Սահակյանում» տպագրվել է «Ազահությունը մարդուս չարիք Հասցնելով ունեցածին ալ վնաս կրերի» վերնագրով:

Լուսավորական Հումանիզմը իր դրսևորումն է գտնում բոլոր զրույցներում: Դրանցում շոշափվում են նաև ռասսայական խտրականություն ու

սոցիալական անարդարութեան թեմաները: Այսպես, «Հնդկաստանցի իշխանի մը ապերախտութիւնը» զրուցում («Թուժակ Հայկազյան») ցույց է տրված, թե ինչպես խեղճ ու ազնիվ արար գերին փրկում է Հարուստ իշխանի կյանքը ազատելով նրան խեղդվելուց: Իշխանը շնորհակալութեան փոխարեն Հարուստի մահովն է արար գերու վրա և գոռում. «Անօրեն, ինչպե՞ս Համարձակեցար քո անարժան ձեռքդ իմ օրհնյալ գլխույս վրա դնել»:

Մանկապատանեկան առաջին պարբերականներում ընթերցանութեան լավագույն նյութ է ներկայացնում պատմականագրական ակնարկը, որը որպես նորութիւն առաջինը տպագրվել է «Թուժակ Հայկազյան» ամսագրում: Այստեղ «Աշխարհիս մեջ եղած երեւելի մարդկանց երիտասարդութեան ժամանակը» խորագրով տպագրվել են Ալ. Մակեդոնացու, Հուլիոս կեսարի, Թեոդորոս կայսրի, Պետրոս առաջինի և մյուսների կյանքն ու գործունեութիւնը պատկերող, պարզ ու հասկանալի լեզվով գրված ակնարկներ:

Ուշագրավ են նաև բանաստեղծական քերթվածները, որոնք գրված են տաղաչափական արվեստի իմացութեամբ և ընթերցողին համակում են Հայրենասիրութեան, մարդասիրութեան, ժողովրդասիրութեան բարձր դաշափարներով: Գրական գործերի մեջ աչքի են ընկնում նաև թարգմանութիւնները: Այսպես, «Թուժակ Հայկազյանում» տպագրվել է Ֆրանսերենից թարգմանված մի չափածո ստեղծագործութիւն, որը կրում է «Բնական ապացույց գոյութեան Աստուծո» վերնագիրը: Այդ գործը ներկայացնում է Ֆրանսիական կլասիցիզմի խոշոր ներկայացուցիչ Լ. Ռասինի «Երգ վասն կրոնից» գրքի Հայերեն թարգմանութեան մի հատվածը: Գիրքը Հրատարակվել է 1842 թ. Վիեննայում, Մ. Գարագաշյանի կողմից: Այս հատվածի տպագրութիւնը վկայում է, որ ամօգրի իմբագիր-Հրատարակիչներն ու աշխատակիցները քաջածանոթ են եղել արևմտեվրոպական գրողներին: «Երկասերում» տպագրվել են Լաֆոնտենի առակներից մի քանիսը («Գորտք թաղավոր կխնդրեն» և այլն):

Ժամանակին այս պարբերականները բավարար աշխատանք են տարել նաև բնական դիտելիքների պրոպագանդման ուղղութեամբ: «Աստղաբաշխական», «Բնապատմական» և այլ խորագրերով տպագրված հոդվածներում տրվել են բնութեան երևույթների ու կենդանական աշխարհի գիտական բացատրութիւնները:

«Թուժակ Հայկազյանում» «Զվարճալիք» խորագրի տակ տպագրվել են ժամանցի հետաքրքիր նյութեր հանելուկներ, խաչբառեր, շուտասելուկներ,

թվաբանական ուսուցիչներ, խաղ-առաջադրանքներ և այլն: Դրանք բոլորն էլ նպատակ ունեին զարգացնելու պատանիների միտքը, վարժեցնելու նրանց հիշողությունը:

Հայ մանկապատանեկան մամուլի առաջին օրգանները, տպագրելով բովանդակություններ և արտահայտչաձևերով մատչելի նյութ մանուկների ու պատանիների ընթերցանության համար, նպաստել են մի կողմից աճող սերնդի բարոյակրթական դաստիարակության ճիշտ կազմակերպման գործին, մյուս կողմից նախանշել են Հայ մանկապատանեկան գրականության և մամուլի զարգացման հիմնական ուղեգիծը:

Հայ մանկապատանեկան մամուլի առաջին օրգանների փակվելուց հետո մինչև 1870 թվականը Հայ ժողովրդի թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հատվածներում պատանիներին հասցեագրված առանձին պարբերական լույս չի տեսնում: Միայն 1870 թվականից սկսած, երբ զարգացման նոր թափ է ստանում Հայ ժողովրդի ազգային կրթական շարժումը, և հրատարակախոսական գործունեության ասպարեզ են իջնում մասնագիտական կրթություն ստացած մանկավարժներ, հրատարակվում են մանկապատանեկան նոր ամսագրեր ու թերթեր («Երկրագունդ», «Ավետարներ տղայոց համար», «Թատրոն բարեկամ մանկանց» և այլն):

### «ԵՐԿՐԱԳՈՒՆԴ» (1870-1871)

1870 թվականին Կոստանդնուպոլսի Նուպար-Շահնազարյան վարժարանի սաները, հարգելով իրենց ուսուցչի՝ Կարապետ Շաշնազարյանի հիշատակը, Մանչեստրում 1863-1864 թվականներին նրա հրատարակած «Երկրագունդ» շաբաթաթերթի անունով էլ հրատարակում են իրենց պարբերականը:

«Երկրագունդ» շաբաթաթերթի խմբագիրն էր Նուպար-Շահնազարյան վարժարանի շրջանավարտ Մինաս Ջերազը (Մինաս Ջերազյան): Մինաս Ջերազը ծնվել է 1852 թվականին, Կոստանդնուպոլսում, միջնակարգ կրթություն ստացել է Ոսա գյուղի Ներսիսյան վարժարանում: 1866 թվականին տեղափոխվել է Նուպար-Շահնազարյան վարժարան, որն ավարտել է 1868 թվականին: Երկար տարիներ լեզու և գրականություն է դասավանդել Կոստանդնուպոլսի մի շարք դպրոցներում: Հայերենից բացի, Ջերազը տիրապետել է ֆրանսերենին, հունարենին, թուրքերենին:

1878 թվականին Մինաս Չերազը Հայոց պատվիրակության կազմում իրրե քարտուղար մասնակցել է Բեռլինի վեհաժողովին: 1880 թվականին եղել է Անգլիայի վարչապետ Գլադստոնի մոտ և խնդրել նրա միջնորդությունը Բեռլինի դաշնագրով Հայկական գավառներում նախատեսված բարենորոգումները իրականացնելու Համար: 1886-1889 թթ. վարել է Կոստանդնուպոլսի Կեդրոնական վարժարանի տնօրենի պաշտոնը: 1889 թվականին Հաստատվել է Լոնդոնում, որտեղ Հրատարակել է «Լ' Արմենի» («L' Armenie») թերթը: 1890 թվականին Լոնդոնի Քինգս կոլեջում Չերազը Հիմնել է Հայոց լեզվի ամբիոն: 1898 թվականին նա տեղափոխվել է Փարիզ: Այստեղ մինչև 1906 թվականը Հրատարակել է իր «Լ' Արմենի» թերթը: Մ. Չերազը Փարիզում ծավալել է գրական և Հրապարակախոսական լայն գործունեություն: Ֆրանսերեն է թարգմանել ու Հրատարակել Պ. Դուրյանի, Խ. Գալֆայանի, Ռ. Պատկանյանի և մյուսների բանաստեղծությունները, լույս է ընծայել «Հայ բանաստեղծներ» խորագրով ժողովածուն: Նա միաժամանակ եղել է մի շարք ընկերությունների («Արևելքի բանահայտության», «Աշխարհագրական» և այլն) անդամ:

Մ. Չերազը մահացել է 1929 թվականին, Փարիզում: Թաղված է Երևանում: Ի տարբերություն նախորդ պարբերականների, այս շաբաթաթերթում լուրջ ուշադրություն է դարձվում դիտություն նորագույն նվաճումների պրոպագանդամբը: Տպագրվում են բնության երևույթների գիտական բացատրություններին նվիրված ակնարկներ, որոնցում մատչելի ձևերով ընթերցողներին Հաղորդվում են տեղեկություններ գիտական աշխարհում տեղի ունեցած նորությունների մասին: Գիտահանրամատչելի ակնարկը ժանրային տեսակետից նորություն էր Հայ մանկապատանեկան մամուլի էջերում:

«Երկրագունդ» շաբաթաթերթը, որպես բարոյակրթական նպատակներ Հետապնդող օրգան, Հանդես էր դալիս դաստիարակության նորագույն մեթոդները ազգային կյանքի պահանջներին Հարմարացնելու առաջարկներով: «Գերմանական վարժապետների կազմությունը ժողովրդական դպրոցներու նկատմամբ և արդի պահանջմամբ Համեմատ» Հոդվածաշարում (1870, № 35-39) քննարկվում են դպրոցական նոր ծրագրերի Հարցերը:

Ինչպես մանկապատանեկան նախորդ պարբերականներում, այնպես էլ «Երկրագունդ» շաբաթաթերթում մեծ տեղ են գրավում արձակ և չափածո գործերը: Այստեղ տպագրվել են Ռ. Պատկանյանի «Քաջ Վարդան Մամի-



կոնյանի մահը» պոեմը (1870, №45, 50, 52), Լամբրեի «Արի զինվոր» բանաստեղծությունը (1870, №17) և այլ գործեր:

«Երկրագունդ» շաբաթաթերթում տպագրվել են նաև Ռ. Պատկանյանի սոցիալական թեմաներով գրված «Մշակ» և «Գանգատ» բանաստեղծությունները (1870, №44) և փորձ է արվել զնահատելու դրանք: «Վերի երկու բանաստեղծությունները, - գրված է այնտեղ, - Ռափայել Պատկանյանի Հանճարոյն արգասիքն են, որ արդեն պոլսեցվոց ծանոթ է իր «Մայր Արաքսի փերով» երգովը, որն որ աշխարհածանոթ բանաստեղծներու անգամ նախանձը կարող է շարժել» (1870, №17):

Կոստանդնուպոլսում լույս տեսած պարբերականը Հայ պատանիներին ու աղջիկներին ծանոթացնում է ուսու Հանճարեղ առակագիր Կոնիլովի ստեղծագործություններին («Տակառ», «Ոսկին» և այլն) և միաժամանակ բարձր գնահատում դրանք: «Արդի գրականությանց մեջ, - գրում է թերթը, - մեծ տեղ է բռնած գաղիացի առակախոս Լաֆոնթեն, բայց կրնանք Համարձակ ըսել, որ Բոնիովը շատ տեղ գանի կը գերազանցե» (1870, №46):

Անհրաժեշտ է նշել, որ «Երկրագունդ» շաբաթաթերթում ուշագրություն են արժանանում Հայ ժողովրդի անցյալի պատմության Հերոսական դրվագները, մի բան, որ էջը նկատվում նախորդ մանկապատանեկան պարբերականներում: Ավարայրի ճակատամարտի և Հայ ժողովրդի մղած կենաց մահու այլ մարտերի մասին են պատմում «Հիշատակ Ավարայրի», «Հայոց պատմություն» և մյուս ակնարկները: Հավանաբար ազգային պատմության վերաբերյալ այս ակնարկները նկատի ունենալով Գրիգոր Օտյանը գրում է. «Երկրագունդի» պես թերթ մը, թեև մանուկներե խմբագրյալ, կուգա Հիշեցնել, որ ուրեմն մենք ալ ունինք դեռ Հայերեն լեզու մը, և այդ լեզվով կրնան եղեր գրվիլ լուրջ ու զգոն հոգվածներ» (1870, №2):

1871 թվականի վերջին «Երկրագունդը» դադարում է լույս տեսնելուց:

## «ԱՎԵՏԱԲԵՐ ՏՂԱՅՈՅ ԳԱՍԱՐ» (1872-1915)

Ի տարբերություն նախորդ մանկապատանեկան պարբերականների, «Ավետաբեր տղայոց Համարը» պատկերազարդ էր և Հասցեագրված էր ինչպես դպրոցական, այնպես էլ նախադպրոցական տարիք ունեցող երեխաներին: Մինչև 1897 թվականը մասագիրքը լույս էր տեսնում նաև Հայաստան և Հունաստան թուրքերենով: Սկզբում այս պարբերականի արտոնատերն էր Ծ. Բ.

Կրինը, իսկ տնօրեն-խմբագիրը Հ. Ա. Պարսմբը: Աշխատակիցներն էին մխիթաներական ընկերության անդամներ Մ. Դավթյանը, Բ. Պոյաճյանը և ուրիշներ:

1908 թվականից ամսագիրը հրատարակվում է որպես «Ավետարների» առանձին բաժին և կրում «Ավետարներ մանկանց» անունը: 1910 թվականից «Ավետարներ մանկանցի» խմբագիրն է դառնում Գրիգոր Գալուստյանը: Գրիգոր Գալուստյանը («Կիլիկեցի») ծնվել է 1879 թ., Կիլիկիայի Մարաշ քաղաքում: Սգընական կրթութունը ստացել է իր ծննդավայրում: Կոստանդնուպոլսի օսմանյան Համալսարանն ավարտելուց հետո որպես ուսուցիչ աշխատում է Ադանայում, Տարսոսում, Կոստանդնուպոլսում: 1919-1929 թվականներին խմբագրել է «Առավոտ նորահասներու», իսկ 1920-1922 թվականներին «Հայ պատանի» ամսագրերը: Գր. Գալուստյանը «Կիլիկեցի», «Գրիչ-քնար» ծածկանուններով հրատարակել է արձակ և չափածո ստեղծագործություններ:

«Ավետարներ տղայոց համար» ամսագրի գաղափարական բովանդակությունը քրիստոնեական բարոյախոսությունն է: Ամսագրում տպագրված բարոյախոսական ընույթի նյութերը հիմնականում վերցված են կրոնական պատմություններից, Աստվածաշնչից («Դանիել և անոր ընկերները», «Սամարացոց հնգամատյանը», «Հիսուսի բռնվելը» և այլն):

«Ավետարներ տղայոց համար» ամսագիրը երբեմն էլ օգտագործում էր աշխարհիկ թեմաներով զրված գեղարվեստական գործերը միայն կրոնական երանգավորում տալով դեպքերի զարգացմանը:

1915 թվականին ամսագիրը ընդմիջտ փակվում է:

## «ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ» (1882-1888)

ԵՎ

## «ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ» (1889-1893)

1880-ական թվականներին Կոստանդնուպոլսում իր հրատարակչական գործունեությունը աչքի էր ընկնում Նշան Պերպերյանը, որը մասնագիտությամբ փորագրիչ էր: Աճող սերնդի դաստիարակությունը գործին իր նպաստը բերելու նպատակով նա 1882 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակում է «Բուրաստան մանկանց», իսկ 1889-ին «Ծաղիկ մանկանց» կիսամյա հանդեսները: «Բուրաստան մանկանցը» հրատարակում էր Ստեփան Տնովլեթյանի, իսկ «Ծաղիկ մանկանցը» Ա. Սազայանի հետ:

Նշան Պերպերյանը, ինչպես և Ստեփան Տեովլիթյանը, լինելով փորագրիչներ, իրենց պարբերականների էջերը զարդարում էին գեղեցիկ ու ճաշակով նկարներով, նախազարգերով, ծաղիկատառերով: Պարբերականներն աչքի էին ընկնում գեղեցիկ ձևավորմամբ:

Մանկապատանեկան այս օրգաններին աշխատակցում էին բանաստեղծներ Իեթևոս Պերպերյանը, Ալեքսանդր Փանոսյանը, Արշակ Մեհարյանը, գրող և հրատարակախոս Մատթեոս Մամուրյանը և ուրիշներ:

Երկու պարբերականներն էլ ունեին դաստիարակչական նույն ուղղվածությունը՝ մանուկներին ու պատանիներին զինել իրական կյանքի ճանաչողությամբ: Տպագրվում էին սոցիալական թեմաներով գրված դրական-գեղարվեստական գործեր, որոնցում վեր էին հանվում կապիտալիստական աշխարհում տիրող սոցիալական հակասությունները: Իեթևոս Պերպերյանի, Արշակ Մեհարյանի և մյուսների չափածո ստեղծագործություններում ցույց էր տրվում, որ ոչ բոլոր երեխաներն էին ապրում ուրախ ու անհոգ կյանքով, որ շատ մանուկների համար կյանքը մի անտանելի բեռ էր, որ նրանք առավոտից մինչև ուշ գիշեր շրջում էին փողոցներում և օրվա հաց մուրում: Նույն թեմաներն էին շոշափված նաև թարգմանական գործերում: Այս պարբերականներում են տպագրվել Վ. Հյուգոյի, Գ. Լոնգֆելլոյի, Ջ. Բայրոնի, Չ. Դիկկենսի, Ժ. Լաֆոնտենի, Անդերսենի և մյուսների՝ որը ու անապաստան երեխաների մասին գրված սրտաճմլիկ պատմվածքները, չափածո ստեղծագործությունները: Անդերսենի «Լուցիլի վաճառող աղջիկը» պատմվածքը իրական կյանքի դասեր էր տալիս երեխաներին՝ բացահայտելով, թե ովքեր էին սեփականացնում աշխատավոր մարդու արդար վաստակը:

«Բուրաստան մանկանց» և «Ծաղիկ մանկանց» պարբերականներում մեծ տեղ էին տրվում ժողովրդական հեքիաթներին, զրույցներին, առակներին: Մանկական ընթերցանության համար օգտակար նյութ էր ներկայացնում դիտահանրամատչելի ակնարկը: «Նշանավոր գործիչներ», «Աշխարհաչան անձինք», «Վարք երեկի արանց» և այլ խորագրերով ակնարկներ էին տպագրվում Ջեյմս Ուայտի, Կոլումբոսի, Ռոբերտ Չոլտոնի և մյուսների մասին:

«Բուրաստան մանկանցը» օգտագործելով քաղաքակիրթ երկրների դպրոցների առաջավոր փորձը, իր էջերում տպագրում է մարմնամարզու-

թյան, լողի, ընդհանրապես սպորտի ձևերը ուսուցանող պատկերազարդ տեքստեր:

«Մազիկ մանկանցը», 1891 թվականից դառնալով շարաթաթերթ, տպագրում է ուսուցիչներին ու ծնողներին Հասցեագրված Հատուկ Հոդվածներ «Դպրոցական դասընթացներ», «Միջին ընթաց», «Բարձրագույն ընթաց» խորագրերի տակ: Այդ տեքստերը պարունակում են Հայոց լեզվի քերականական կանոնները ուսուցանող դիդակտիկ նյութեր, մեթոդական ցուցումներ գործնական պարապմունքների անցկացման Համար, Հոգեբանական օրենքների բացատրություններ և այլն:

«Մազիկ մանկանցում» սկիզբ է դրվում մակապատանեկան գրականությունից տեսական Հարցերի մշակմանը: Այսպես, Մատթեոս Մամուրյանի «Գրական վեպն ի Ֆրանսիա» Հոդվածաշարում քննադատվում է մանկական գրականություն մեջ տարածում գտած նատուրալիստական ուղղությունը, և ցույց են տրվում ռեալիստական նոր գրականության դարգացման ուղիները: Այս Հոդվածի տպագրությունը Հաստատում է նաև այն փաստը, որ ռեալիստական ուղղությունից գարգացման պահանջներն արդեն դրվում են նաև մանկական գրականության առջև:

## «ԱՂԲՅՈՒՐ» (1883-1918)

XIX դարի 80-ական թվականների Հետ է կապվում Հայ մանկապատանեկան մամուլի երևան գալը արևելահայ իրականությունում: Այստեղ ևս մանկական ընթերցանությունից Հարցերով զբաղվում են մանկավարժները, գրողները, Հրապարակախոսները:

1882 թվականի օգոստոսին Թիֆլիսում տեղի ունեցած Հայ ուսուցիչներին առաջին Համագումարի կողմից, ինչպես և մամուլի էջերում մշակվում են տեսական դրույթներ մանկապատանեկան ընթերցանությունից վերաբերյալ: «Մանկավարժական թերթ», «Մանկավարժանոց» և այլ պարբերականներում զարգացվում է այն միտքը, թե մանկական գիրքը պետք է գրված լինի պարզ ու մաքուր լեզվով և արտահայտի դադափարներ, որոնք նպաստեն աճող սերնդի բարոյակրթական ճշմարիտ դաստիարակությունը: Մշակված դրույթների Համաձայն մանկական գրքերի Հիմնական նյութը պետք է վերցված լինի իրական կյանքից, չըջապատի մարդկանց առօրյայից, ժողովրդական ստեղծագործությունից Հարուստ գանձարանից:

1880 թվականին Թիֆլիսում ուսուցչուհի Նատալյա Տեր-Մարկոսյանի տանը մշտապես Հավաքվում են գրողներ, Հրապարակախոսներ և քննարկում

մանկական գրականության և մանկական մամուլի ստեղծման հետ կապված հարցեր: 1881 թվականին Շուշուց ազգի լուսավորական գործին ծառայելու նպատակներով Թիֆլիս ժամանած Տիգրան Նազարյանը հանձին այդ խմբի գտնում է իր իղձերի ու նպատակների իրագործողին և անմիջապես կապի մեջ մտնում նրա հետ: Նմբի հավաքույթներից մեկի ժամանակ որոշում է ընդունվում մանկական ամսագիր հրատարակելու մասին և ամսագրի խմբագիր է առաջարկվում Տիգրան Նազարյանը:

1883 թվականի հունվարին լույս է տեսնում արևելահայ մանուկների անդրանիկ ամսագիրը՝ «Աղբյուրը»:

Տիգրան Հակոբջանի Նազարյանը ծնվել է 1858 թվականին, Ղարաբաղի Շուշի քաղաքում: 1879 թվականին երիտասարդ Տիգրանը Հայրենի Շուշի քաղաքում հիմնում է հրատարակչական գրասենյակ և հրատարակում լեհ գրող Հենրիկ Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը (ռուսերենից), Ալֆոնս Դոդեի «Երկու մանրավեպը» (բնագրից) և այլ գործեր:

Թիֆլիսում Տիգրան Նազարյանը հրատարակում է նաև «Տարազ» (1890-1919), «Anons» (1892) և այլ պարբերականներ, ինչպես նաև գրպանի և պատի օրացույցներ, արձանախներ, գրքեր: Տիգրան Նազարյանը միաժամանակ վարում է հասարակական լայն գործունեություն: 1915 թվականին, Հայերի ցեղասպանության օրերին Թիֆլիսում բացում է «Հրատապ սփոփանք մայր Հայաստանցիներին» ապաստարանը, նախադպրոցական հասակ ունեցող որբուկների համար «Վասպուրականի դպրոց» մանկապարտեզը:

1919 թվականին Նազարյանը մեկնում է արտասահման, իսկ 1925 թվականին վերադառնում Հայրենիք, բնակություն հաստատում Թիֆլիսում: Հարազատ ժողովրդին օգտակար լինելու նպատակով ստանձնում է Ղարաբաղի օգնություն կոմիտեի փոխնախագահի պաշտոնը: Տիգրան Նազարյանը մահանում է 1926 թվականի սեպտեմբերի 14-ին:

Տիգրան Նազարյանի «Աղբյուր» ամսագիրը արևելահայ մանկապատանեկան անդրանիկ պարբերականը, 35 տարիներ շարունակ եղել է ոչ միայն աճող սերնդի, այլ նաև մեծահասակների ընթերցանության ամենասիրելի գիրքը: «Աղբյուրի» էջերում են տպագրվել գրական առաջին թոթովանքներն այն բանաստեղծների ու գրողների, որոնք տարիներ հետո մեծ ճանաչում են գտել ու իրենց ստեղծագործություններով հարստացրել են Հայ գրականությունը:

Մանկապատանեկան ամսագրի նախընտրած նպատակների մասին խմբագիրը գրել է. «Աղբյուրի» նպատակն է՝ Հայ սերնդի մեջ զարթեցնել պատվա-

սիրության զգացմունքները, զարգացնել Հայ երեսփայի մեջ սեր դեպի ամեն վսեմը, ազնիվը, ինչպես և ատելուծություն դեպի ամեն վնասակարը և չարը» (1883, №1, էջ 1):

Ընդամենը 50 բաժանորդով լույս տեսած ամսագիրը մեկ տարվա ընթացքում ձեռք է բերում 300 բաժանորդ: 1886 թվականին բաժանորդների թիվը հասնում է 1060-ի, 1888 թվականին՝ 1735-ի: Ընդ որում, պետք է նշել, որ «Աղբյուրը» ունեցել է այնքան բաժանորդ, որքան չի ունեցել ժամանակի Հայ պարբերականներից և ոչ մեկը: Ամսագրի յուրաքանչյուր համար բաղկացած է 48-64 էջից:

«Աղբյուր» ամսագրի մշտական աշխատակիցներն են եղել Բաֆֆին, Շիրվանզադեն, Պ. Պոռյանը, Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Հ. Հովհաննեսյանը, Հ. Թումանյանը, Վ. Փափազյանը, Ալ. Ծատուրյանը, Լեոն, Կ. մելիք-Շահնազարյանը, Ա. Մեհրաբյանը, Ս. Քամալյանը, վրացական «Նորթի» («Նվեր») մանկական ամսագրի խմբագիր Ղուլաձեն, ռուս գրող Ն. Ա. Սոլովյով-Նեսմելովը, Հայ մանկավարժներ Հ. Տեր-Միրաքյանը, Ա. Բահաթբեկյանը, Նկարիչներ Գ. Բաշինջազյանը, Վ. Սուրենյանը, ակադեմիկոս Կարամզինը, Պետրովը, փորագրիչներ Ռաչևսկին, Գ. Տատիշվիլին, ցինկոգրաֆ Ս. Սողոմոնյանը և ուրիշներ:

Առաջին երկու տարիներին ամսագրի պատասխանատու քարտուղարն էր Գ. Միրզոյանը: 1905 թվականին, երբ ժամանակավորապես փակվում է «Նոր-Դար» թերթը, Նար-Դոսը տեղափոխվում է «Աղբյուրի» խմբագրություն և ստանձնում քարտուղարի պարտականությունը: Վերջին տարիներին ամսագրի պատասխանատու քարտուղարն էր Լ. Մելիք-Աղամյանը:

«Աղբյուրի» նյութերը տեղաբաշխված են երկու բաժիններում: Առաջին բաժինը նախատեսված էր մանուկների ու պատանիների, իսկ երկրորդ բաժինը ծնողների ու դաստիարակների համար: Առաջին բաժնում տպագրվում էին պատմվածքներ, մանրավեպեր, բանաստեղծություններ, հեքիաթներ, զրույցներ, առակներ, գիտություն ու արվեստի տարբեր ճյուղերի վերաբերյալ ուսանելի տեղեկություններ, ինչպես և «Այլ և այլք», «Զվարճալիք» ու «Հետաքրքրական տեղեկություններ» ենթավերնագրերով ուղագրով նյութեր: Երկրորդ բաժնում զետեղվում էին մանկավարժության տեսության ու պատմության վերաբերյալ Հոդվածներ, գրախոսականներ, նամակներ, խառը լուրեր և այլն:

Գեղարվեստական ընթերցանության համար նյութեր ընտրվում էին ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանից: «Աղբյուրի» ակ-

ները, - գրված է այնտեղ, - Հոսում են ժողովրդական հեքիաթներից, խաղերից, ավանդություններից, որոնք, ուղղելով մեր փոքրիկ և քաղցր ընթերցողների հոգին ու սրտերը, պարարտ հող պետք է պատրաստեն ապագայում պտղաբեր սերմեր անցնելու մարդկության համար» (1883, №1, էջ 1):

Իր գոյության երեք ու կես տասնամյակների ընթացքում «Աղբյուր» ամսագիրը ստեղծել է բազմաբովանդակ և բազմաժանր գրականութուն մանուկների ու պատանիների համար ելակետ ընդունելով Խ. Արովյանի մանկավարժական դրույթները, ինչպես և ուսու ու հայ հեղափոխական-դեմոկրատների մշակած գեղագիտական սկզբունքները:

1880-ական թվականներից սկսած զարգացման նոր ընթացք է հաղորդվում Հայ ուսուցիչական գրականությանը, որը մեծ դեր է խաղում մանկապատանեկան գրականության ուղեգիր ճշտելու գործում: Մանկական գրականությունը, կազմելով ընդհանուր գրականության անբաժանելի մասը, ընթանում է զարգացման նույն ուղիներով, ինչ և ընդհանրապես գեղարվեստական գրականությունը:

«Աղբյուրում» տպագրված Գ. Միրզոյանի մանկական գրականության տեսական հարցերին նվիրված հոդվածներում («Իմ նամակները», «Մանուկները և նրանց ընթերցանությունը» և այլն) պահանջվում է ցույց տալ իրական կյանքը այնպես, ինչպես որ այն կա: «Մի կեղծ՝ մանուկների առաջ, - գրում է Միրզոյանը, - ցույց տվեք նրանց կյանքի և՛ փշերը, և՛ վարդերը, միայն ասածների մեջ լինի ճշմարտություն» (1884, №3, էջ 3):

«Աղբյուրի» գրականության թեմատիկան էջը զանազանվում ընդհանուր գրականության թեմատիկայից: Այստեղ առաջին անգամ տպագրվել են ցարիզմի լծի տակ տառապող ժողովուրդների հալածական ու սոցիալ-տնտեսական թշվառ իրավիճակը պատկերող Ղ. Աղայանի «Զմեռ» (1884, №2, էջ 58-60), «Ճախարակ» (1883, №2, էջ 85), «Հիշողություն» (1886, №12, էջ 419-420) և այլ մանկական ոտանավորները:

«Աղբյուրում» աչքի են ընկնում նաև Վ. Փափաղյանի, Կ. Մելիք-Շահնազարյանի, Հ. Ծուղբուրյանի, Ն. Սոլովյով-Նեսմելովի և մյուսների մանկական ստեղծագործությունները: Ամսագրում դաստիարակչական նպատակներով տպագրվել են նաև մեծահասակներին նվիրված ստեղծագործություններ: Այստեղ են տպագրվել Բաֆֆու «Պարույր Հայկազն» վիպակը, «Կայծեր» վեպի «Վարագ» գլուխը, Ի դեպ, այդ երկուսը առաջին անգամ տպագրվել են «Աղբյուրում»: Ամսագրում է տպագրվել նաև Բաֆֆու «Զրաբերդ» պատկերը:

«Աղբյուրի» էջերում ընթերցանության լավագույն նյութ է ներկայացնում Հեքիաթը: Ղ. Աղայանի և մյուսների ժողովրդական Հեքիաթները մանուկների մեջ սերմանել են բարոյական բարձր Հատկանիշներ քաջություն, անվեհերություն, աշխատասիրություն, անձնազոհություն և ամենակարևորը մարդկայնություն և մարդասիրություն:

Ամսագրում զգալի տեղ էր տրվում ուսու և արևմտասեփոխական երկրների գրողների ստեղծագործություններին: Դաստիարակչական տեսակետից աչքի էին ընկնում Պուշկինի, Լերմոնտովի, Պլեշնեևի, Կորոլենկոյի, Չեխովի, Տուրգենևի, Տոլստոյի, Եկենկոյի, Ինչպես նաև Եիլլերի, Գյոթեի, Հայնեի, Բերանստեի, Մոպասանի, Զոլայի, Հյուգոյի, Դիկենսի և մյուսների գործերը:

«Մուրճ» ամսագիրը, արժեքավորելով «Աղբյուրի» դերը, գրել է. «1880-ական թվականների գրականական ֆոնի վրա մենք միայն մեկ նոր գործիչ ենք նշմարում միջնուրար ճնշող Հայ օրաթերթերի կողքին դա «Աղբյուր» մանկական ամսագիրն է, որով մեզնում սկիզբ դրվեց մանկական գրականություն: 80-ական թվականներին գրական աշխույժը մենք նշմարում ենք ավելի այդ թերթում, քան որևէ այլ տեղ. նա արտահայտել և իր կոչումը գտնել տվեց մի գրողի, որ Ղազարոս Աղայանն է. և այդ Համեստ թերթում նույնիսկ միթարություն էր գտնում ստեղծագործել մի ոչ մանկական գրող Բաֆֆին: Մանկական գրականությունը գտած լինելով իր Հերոսին, ճիշտ է, չկարողացավ Հարատև շկոլայի Հիմնական գծերը ամուր գծագրել, բայց նա մի գործի սկիզբը դրեց, որ պիտի Հարատևեր» (1897, №1, էջ 11):

Ինչպես վերը նշվեց, «Աղբյուրի» յուրաքանչյուր Համար ուներ երկրորդ բաժին, որտեղ տպագրվում էին նյութեր ծնողների ու դաստիարակների Համար: Այս բաժնում Հանդես էին գալիս ժամանակի առաջադեմ մանկավարժներ Տ. Ռաշմաճյանը, Ա. Բահաթրյանը, Ս. Բեկնազարյանը, Ղ. Աղայանը, Աթ. Խնկոյանը, Ս. Մանդինյանը և ուրիշներ:

«Աղբյուրը», Հենվելով մանկավարժություն առաջավոր դրույթների վրա, գտնում է, որ դաստիարակությունն ու միջավայրն են մարդկանց դարձնում չար կամ բարի: Այսպես, Ս. Բեկնազարյանն իր «Երկու խոսք բարոյական կրթության մասին» Հոդվածում (1887, №1, էջ 1-7) վերլուծում է դաստիարակության այն Հիմնական գործոնները, որոնք կարևոր դեր ունեն կատարելու աճող սերնդի Հոգևոր կրթության, մտավոր զարգացման, բնավորություն կազմավորման մարդերում: Նա դաստիարակությանը տալով Հոգեկան բոլոր կարողությունների «և՛ մտաց, և՛ զգացման, և՛ կամաց» կրթության դեր, Հաստատում է այն դրույթը, թե ինչպիսին մարդու դաստիարակու-



թյունն ու միջավայրն են, այնպիսին կլինեն նաև նրա ընավորությունն ու բարոյական կերպարը:

Ամսագրում քննարկվում են նաև երեխաների հոգեբանության հետ կապված հարցերը: «Երեխաների հոգեբանությունից» (հեղինակ՝ Տ. Ռաշմաճյան) հոդվածում ցույց է տրվում, թե ինչպիսի նշանակութուն ունի երևակայությունը աճող սերնդի և ընդհանրապես մարդկանց բարոյական կյանքի զարգացման գործում:

«Աղբյուր» ամսագիրը լայնորեն պրոպագանդում էր գործնական աշխատանքի դերը տեսական գիտելիքների յուրացման գործում՝ հակադրվելով բուրժուական մանկավարժության մեջ XIX դարի երկրորդ կեսին լայն տարածում գտած «Զևական կրթության» և «Նյութական կրթության» միակողմանի սկզբունքներին, որոնք չէին առաջադրում մանուկներին օբյեկտիվ իրականության ճանաչողությամբ զինելու պահանջը:

Մանուկների ու պատանիների գեղագիտական դաստիարակությանն էին նպաստում ամսագրի պատկերները, որոնց մի մասը եթե պատահական ընտրության արդյունք էր, ապա մյուս մասը ուներ ճանաչողական և ուսուցողական նշանակութուն:

«Աղբյուրը» ուներ նաև հավելվածներ: Տարին մեկ անգամ ամսագրի խմբագրությունն իր ընթերցողներին էր ուղարկում մանկական գրքեր, պատկերազարդ այլոսմներ: «Աղբյուրի» հրատարակությամբ լույս տեսած գրքերի թիվը հասնում է 100-ի:

«Աղբյուրը» իր գոյության ամբողջ ընթացքում պահպանել է զաղափարական ու դաստիարակչական միևնույն ուղղությունը:

1914 թ. համաշխարհային առաջին պատերազմի տարիներին գրողներից շատերը հեռացել են ամսագրից, և խմբագրությունը նյութերի պակասը լրացրել է նախորդ համարներից կատարված արտատպություններով: Պատերազմն էլ 1918 թվականին դարձավ ամսագրի փակման հիմնական պատճառը:

«Աղբյուր» ամսագրի էջերում զետեղված գեղարվեստական ընթերցանության նյութը պարարտ հող էր մանկավարժության նորագույն դրույթների վրա հիմնված մանկապատանեկան նոր գրականության և մանկական նոր մամուլի զարգացման համար:

Այսպիսով, հայ մանկապատանեկան անցյալի մամուլը, սկիզբ առնելով աշակերտական պարբերականներից, տարիների ընթացքում ձեռք է բերում դաստիարակչական ու հասարակական կարևոր նշանակութուն, դառնում գեմոկրատական, լուսավորական շարժման լծակներից մեկը, որով և իր ար-

ժանի տեղն է գրավում ժամանակի գաղափարական պայքարում և մանկավարժության առաջավոր դրույթների տարածման գործում:

## Գ Լ ՈՒ Խ ՈՒ Թ Ե Ր Ո Ր Ղ

### ՀԱՅԱՍՏԱՌԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՄԱՍՈՒԼԸ (1840-1900)

Հայատառ թուրքերեն մամուլի հանդես գալը XIX դ. 40-ական թթ. պայմանավորված էր Օսմանյան թուրքիայում թուրքախոս Հայ Հատվածների առկայությամբ: Լեզվական պատենչով կտրված լինելով Հայ իրականությունից Արևմտահայաստանի թուրքախոս Հայ բազմությունները, այսուհանդերձ, պահպանում էին իրենց ազգային ինքնությունը, իրենց ազգային տարածքի վրա ապրելու և Հայ լինելու պատմականորեն ձևավորված գիտակցությունը: Ազգային լեզվի կորուստը տվյալ դեպքում պատմական ճակատագրի անմիջական կնիքն էր. մի դեպքում դավանական Համոզմունքների հարկադրված փոփոխությունը (թուրքախոս Հայ կաթոլիկներ), մյուս դեպքում օսմանյան ավանդական միջավայրի լեզվական ու կրոնական ճնշումները էական դեր էին ունեցել նշված Հատվածների մեջ մայրենի լեզուն ամբողջովին կամ մասամբ մոռացություն տալու գործում: Թանգիմաթի շրջանում ազգային զարթոնքով պայմանավորված Հայ մամուլի սկզբնավորումը թուրքիայում շուտով ի Հայտ պետք է բերեր նաև թուրքախոս այդ շերտերին Հայ Հասարակական կյանքին ծանոթացնելու և նրա մեջ ընդգրկելու, ինչպես նաև նրանց տրամադրությունները և ձգտումները լուսարանելու կամ արտահայտելու պահանջները: Եռտող միասնական ազգի գաղափարը պետք է դառնար այն գոտևորող ընդհանրությունը, որ լայն շփումներ էր ստեղծելու կրոնական-դավանաբանական և լեզվական անջրպետներով տրոհված արևմտահայ Հանրությունից Համար: Եվ 1840 թ. սկիզբ է առնում (գրեթե միաժամանակ թուրքիայի Հայերեն մամուլի հետ) Հայատառ թուրքերեն մամուլը, որի ձևավորումը, կապվելով ազգային զարթոնքի գործընթացի հետ, Համապատասխանում էր դրա գաղափարական զարգացման միտումներին:

Հստակորեն պետք է տարբերել այն պարբերականները, որոնք տպագրվել են զուտ Հայատառ թուրքերեն, և այն պարբերականները, որոնք, Հիմնականում Հայերեն լինելով և միշտ Հայերենի անվիճելի գերազանցությամբ, տպագրել են Հայատառ թուրքերեն նյութեր: Կարծում ենք, սխալ կլիներ վեր-

Ղիններս մտցնել Հայաստան թուրքերեն պարբերականների ցանկի մեջ: Այնուհետև և այս անգամ զուտ բովանդակության առումով, Հայաստան թուրքերեն մամուլի մեջ պետք է առանձնացնել այն Հրատարակությունները, որոնք տպագրվել են ոչ թե Հայկական գաղափարախոսության բերումով, այլ պաշտոնական կամ առևտրային նկատառումներով և որոնք Հիմնականում ունեցել են իրենց թուրքական բնագիրը (արարատառ թուրքերեն): Այդպիսիք են, օրինակ, 1870-ական թթ. Կ. Պոլսում Հրատարակված «Հեյալ» («Երևակայություն») և «Դիյոժեն» («Դիոգենես») պարբերականները, որոնք որևէ կապ չեն ունեցել Հայ իրականության հետ: Այդպիսին էր նաև Հայաստան թուրքերեն առաջին պարբերականներից մեկը՝ «Թագվիմ-ի վեգային» («Օրացույց դեպքերի»), որը դեռևս 1832 թ. ունեցել է թուրքական այդ պաշտոնաթերթի զուտ Հայերեն տարբերակը («Լրո գիր» վերնագրով) և Հայաստան թուրքերեն է Հրատարակվել 1840 թ.: Հայաստան թուրքերեն մամուլը քիչ է ուսումնասիրված. դրա լեզվի և բովանդակության խնդիրներն ու նպատակադրումները լի են Հայ մամուլի ցայտօր Հայտնի բովանդակությունից դուրս մնացած նակնկալներով<sup>79</sup>:

Հայաստան թուրքերեն անդրանիկ Հրատարակություններից էր «Ազգարար Բյուզանդյանը» (խմբագիր Խ. Օսկանյան, Կ. Պոլիս, 1840-1843): Այս շաբաթաթերթը 4 Համար տպագրվել է Հայերեն, ապա, սկսած 5-րդ Համարից, Հայաստան թուրքերենով: Եթե նկատի ունենանք, որ «Ազգարար Բյուզանդյանը» արևմտահայ առաջին պարբերականներից մեկն է, ապա նրա խմբագիրը, իրոք, կանգնած է Կ. Պոլսի Հայ լրագրության ակունքների մոտ: Հայաստան թուրքերեն «Ազգարար Բյուզանդյանը» ևս ունեցել է լուսավորական և քաղաքակրթիչ բովանդակություն, ինչպիսին Հայերեն «Ազգարար Բյուզանդյանն» էր:

Հայաստան թուրքերեն պարբերականների մեջ իր հեղինակությամբ և հասարակական ազդեցությամբ առանձնանում է «Մեհմուլայը Հավատիս» («Լուրերի ծաղկաքաղ») պարբերականը, որ լույս է տեսել Կ. Պոլսում, 1852-1883 թթ., Ն. Վարդանյանի խմբագրությամբ: 1861 թ., որոշ ընդմիջումներով,

<sup>79</sup> Հայաստան թուրքերեն մամուլի ուսումնասիրության մեջ լուրջ ներդրում է Գ. Խ. Ստեփանյանի աշխատությունը, որով, փաստորեն, հիմք է դրվել այդ հիմնահարցի գիտական հետազոտությանը (տես Ստեփանյան Գ., Հայաստան թուրքերեն հայ մամուլը. «Հայ պարբերական մամուլի պատմությունից», 1, Երևան, 1963, էջ 239-274): Այս հիմնահարցին է վերաբերում նաև Գ. Ա. Ստեփանյանի «Հայաստան թուրքերեն պարբերական մամուլը» (Երևան, 1987) մատենագիտական արժեքավոր աշխատությունը:

ամսագիրն ունեցել է «Ռուզնամե-ի մեծմուլաբ Հավատիս» («Մեծմուլաբ Հավատիս» լրատու») Հավելվածը: 1850-1860-ական թթ. Հ. Վարդանյանի ամսագիրը, պաշտպանելով կաթոլիկական դավանանքը, բանավիճել է մի շարք Հայերեն պարբերականների հետ («Ծաղիկ», «Մեղու» և այլն): Ստ. Ոսկանյանը, Հ. Սրվաճյանը, Գր. Զիրինկիրյանը, Մ. Մամուլյանը և ուրիշներ այս պարբերականի հետ բանավիճել են, իբրև Հայերի մեջ կաթոլիկության տարածման պաշտպանի՝ ելնելով ազգային դավանական միասնության մտահոգությունից:

Հ. Վարդանյանը բազմակողմանիորեն կրթված անձնավորություն էր. կաթոլիկության պաշտպանությունը նա չի Հանգեցրել դավանական Հակամարտության: Այդ է վկայում, ի դեպ, նրա «Ազգայի Հիքեսաի» («Ազգայի պատմությունը») վեպը, որտեղ նա պատկերել է դավանական Հակասություններով պայմանավորված բարոյական ու Հասարակական կաշկանդումների ճակատագրական Հետևանքը անՀատի Համար: Դավանանքի և ազգության փոխՀարաբերության Հարցերում «Մեծմուլաբ Հավատիս» գնահատականը, սակայն, կարելի է տալ միայն այդ պարբերականի նյութերին ծանոթանալու և ոչ թե սոսկ նրա ընդդիմախոսների ելույթների վրա Հիմնվելու դեպքում: Ավելացնենք, որ Հ. Վարդանյանը Հեղինակել է «Սահմանադրական ճշմարտություններ» լրջմիտ աշխատությունը, Փրանսերենից թարգմանել «Նապոլեոն Մեծի պատմությունը» եռահատորյակը և այլն, որով նպաստել է արևմտահայերի Հասարակական ու քաղաքական մտքի զարգացմանը:

1860-1870-ական թթ. «Մեծմուլաբ Հավատիսը», ի տարբերություն իր Հրատարակության սկզբնական շրջանի, մոտեցել է Հայ իրականությանը, առավել լայնախոհ լուսաբանել Հանրային կյանքի իրադարձությունները, ուշադրաբար մեկնաբանություններ տվել Եվրոպայի և Օսմանյան Թուրքիայի քաղաքական կյանքին: Անդրադարձել է Հասունյան-Հակահասունյան պայքարին: Այս պարբերականը Հետաքրքիր տեղեկություններ է Հաղորդել Հայ մամուլի, նրա նկատմամբ դրաքննական քաղաքականության և այլնի մասին: Տպագրել է պատմական ու բանասիրական նյութեր, թարգմանություններ գեղարվեստական գրականությունից:

1850-ական թթ. Կ. Պոլսում Հրատարակվում էին Հ. Զամուռյանի «Զոհալը» («Երևակ», 1855-1856) և Կ. Փանոսյանի «Մյուսնատիի էրճիաս» («Արգետի մունետիկ», 1859-1862) թերթերը: Իր խմբագրի Հայեցության Համեմատ, «Զոհալը» տպագրել է պահպանողական բովանդակություն ունեցող

նյութեր, մասնավորապես տեղ տվել կրոնաբարոյական բնույթի հոգվածներին ու մեկնաբանություններին: Կրոնին ու կրոնական բարոյականությանը վերաբերող ընդարձակ հոգվածներով Չամբուռյանը շարունակում էր ազգային եկեղեցու պահպանողական տրամադրությունների վրա հենված իր ուղեգիծը, որ նա արտահայտել էր դեռևս 1840-ական թվականներից «Արշալույս Արարատյանում», «Հայրենասերում» և իր իսկ խմբագրած «Հայաստան» թերթում: «Ձուհալի» այս ուղղությունը և մանավանդ ժողովրդավարական դաշափարախոսության դեմ հարձակումները Չամբուռյանն առավել անսքող դարձրեց իր խմբագրած «Երևակ» թերթում (հայերեն), որ լույս է տեսել «Ձուհալից» հետո:

Հայաստա թուրքերեն առաջին ժողովրդավարական թերթը «Մյունխաթի էրճիասը» էր, որ լույս է տեսել ականավոր հրատարակախոս և հասարակական գործիչ Կ. Փանոսյանի խմբագրությամբ: Թերթն արտացոլում էր դավառի և Կ. Պոլսի ժողովրդական խավերի տրամադրությունները: Կեսարացի խմբագիրը իր թերթում, ինչպես և Հ. Սըվաճյանը «Մեղվում», որոնք Հիմնականում նույն ուղղությունն էին դավանում, տպագրել է իրականությունը ճշմարտացիորեն ներկայացնող նյութեր: Թերթը լուսաբանել է Արևմտահայաստանի տարբեր շրջանների կրթական, կրոնական և առհասարակ ազգային կյանքը, ձգտել է ըստ հնարավորին նպաստել դրանց զարգացմանն ու ժողովրդավարացմանը: Ունենալով անհանգիստ խմբագրական խառնվածք, լինելով անզիջում հանրային կյանքի թերությունների հանդեպ՝ Կ. Փանոսյանն իր թերթում լայն քննարկման առարկա դարձրեց դպրոցական, եկեղեցական և թաղային խնդիրները, լուրջ և անաչառ խորհրդածություններով փորձեց յուրովի մտավոր հսկողության ենթարկել հասարակական կյանքն ու ազգային անցուղարձը: Այս իմաստով «Մյունխաթի էրճիասը» նկատելի երախտիք ունի իր ժամանակի պոլսահայերի և որոշ գավառների հայության հասարակական կարծիքի ձևավորման գործում:

1860-ական թթ. Կ. Փանոսյանը տպավորիչ բանավեճեր է վարել Կ. Պոլսի ս. Փրկչյան Հիվանդանոցի և Եղիգուլեի անձնապատան հոգաբարձության դեմ և իր ազդեցության շնորհիվ հաջողել է ասպարեզից հեռացնել հակառակորդներին: Պ. Թագթագյան պատրիարքի 1867 թ. հուլիսի 15-ի շրջաբերականով նրան է հանձնվել Հիվանդանոցի տնօրինությունն ու պատրիարքարանի և Հիվանդանոցի «մտից ու ծախուց մատակարարությունը» (1860, 15 փետրվարի):

«Մյուևատիի էրճիասը» հմտալի հոգվածներ է տպագրել Ազգային սահմանադրութեան վերաբերյալ և այս հիմնահարցում կանգնել առաջադեմ մտավորականութեան կողքին կողմնակից լինելով ամիրայութեան և կղերական վերնախավի ընդարձակ իրավունքները կարգուկանոնով սահմանափակելու մտայնութեանը: «Ազգային» խորագրի ներքո «Մյուևատիի էրճիասը» քննարկել է ազգային Կանոնադրութունը, պատրիարքի և Գերագույն ժողովի գործունեութունը և պաշտպանել «սահմանադրված» ազգի դադափարը: Այստեղ հարկ է նշել, որ Կ. Փանոսյանը Ազգային սահմանադրութեանը երբևէ քաղաքական բովանդակութուն չի վերագրել և «սահմանադրութուն» ասելով հասկացել է զուտ կանոնադրութուն, որ պետք է գործեր ազգային-վարչական շրջանակներում: Այս տեսակետից էլ իր թերթում նա քննարկել է արևմտահայութեան տնտեսական կյանքի զարգացման հարցերը: Նրա էջերում մասնավորապես լայն արձագանք է գտել ազգային երկրագործութեան հիմնահարցը, որ ձևավորվել էր 1840-1850-ական թթ., նախ Ն. Զորայանի, Մ. Աղաթոնի, այնուհետև Մ. Նալբանդյանի և Շ. Սրվաճյանի Հայեցութեան մեջ: Որևէ ազգի հարստութունը և հարստանալու իրական միջոցը Կ. Փանոսյանը համարում էր երկրագործութունը, որից էլ նա բխեցնում էր արհեստների ու առևտրի զարգացման հեռանկարները արևմտահայոց մեջ: Կ. Փանոսյանը խորհուրդ էր տալիս յուրացնել եվրոպական առևտրի ու արտադրութեան եղանակները, ազգովին պատրաստվել անցնելու տնտեսութեան կարևոր խնդիրների լուծմանը:

«Մյուևատիի էրճիասը» բանավիճել է Շ. Վարդանյանի «Մեծմուսը Հավատիսի» Հետ քննադատելով նրա անվերապահ կողմնակցութունը կաթոլիկութեանը և Հռոմի հրահանգներին: Թուրքերենով մղվող այս բանավիճը անմիջական ու տպավորիչ կարող էր լինել առհասարակ թուրքալեզու Հայ կաթոլիկների համար, որոնք էջին կարող կարգալ նման բնույթի նյութերը (լեզվական պատենելի պատճառով) ժամանակի Հայ պարբերականներում: «Մյուևատիի էրճիասը» այդ բանավիճին տվել է կարևոր նշանակութուն ելնելով ազգային միասնութեան գաղափարից (1859, 15 մայիսի):

Հայ լրագրութեան մեջ «Մյուևատիի էրճիասը» առաջիններից մեկն էր, թերևս առաջինը, որը Հետևել է կարծիքների բազմազանութեանը տեղ տալու, միևնույն Հանրային երևույթը տարբեր, նույնիսկ ներհակ մեկնակետերից լուսարանելու ազատամիտ հրապարակախոսական քաղաքականութեանը: Կարծիքների բազմազանութեան վերաբերյալ Կ. Փանոսյանի այսպիսի լայնա-

խոհ մտեցումը արեւմտահայ մամուլի համար կարեւոր նորութիւն էր, որի պատճառով նրան քննադատական դիտողութիւններն են արել գաղափարապես առավել հետեւողական «Մաղիկ» հանդեսը (Զմյուռնիա) և հետագայում Ղ. Պարոնյանը: Համենայն դեպս, այս դիրքորոշման շնորհիվ «Մյուլնատիի էրճիասը» (իսկ 70-ական թթ. «Մանզումեի էֆֆայրը») իր համար տպահովել էր հասարակական լայն հետաքրքրութիւն: Առհասարակ, Կ. Փանոսյանը հայտնի է իբրև համարձակախոս և ուղղամիտ խմբագիր: Նա մամուլի ազատութեան սկզբունքի համոզված պաշտպան էր և ընդդիմացել է տպագրական օրենքով մամուլը զսպելու հակամետ պաշտպանողական գործիչներին (ինչպես Ստ. Փափազյանին, ժամանակի Կ. Պոլսի Քաղաքական ժողովի անդամներին և այլն): Բացի «Մյուլնատիի էրճիասում» տպագրած նյութերից, Կ. Փանոսյանը 1863 թ. հրատարակեց մամուլի ազատութիւնը Հիմնավորող գրքույկ «էֆֆայրը մուխայեթե» («Ազատ կամահայտնութիւն») վերնադրով: Այստեղ Կ. Փանոսյանը բանավիճում է տպագրական օրենքի նախանձնախնդիր Ստ. Փափազյանի («Ժամանակ» թերթի խմբագիրը) հետ, որը զուտ հայերեն պարբերականների համար այդպիսի օրենքի ընդունումը դիտում էր մամուլի «անսանձ ազատութիւնը» սահմանափակելու իրավական երաշխիք: Կ. Փանոսյանը, մինչդեռ, պնդում էր, որ Օսմանյան Թուրքիայում արդեն իսկ գործում է քրեական օրենսգիրք, և որ մամուլի մեղանշումներին կարելի է իրավական որակումներ տալ այդ օրենսգրքով: Իր ըմբոստ խոսքի և քննադատական սուր հոգիածների պատճառով, որոնք ուղղվում էին ազգային աշխարհիկ ու հոգևոր իշխանավորների թերութիւնների դեմ, «Մյուլնատիի էրճիասը» մի քանի անգամ դադարեցվել է թուրքական իշխանութիւնների կարգադրութեամբ: Կ. Փանոսյանը, սակայն, չի ընկրկել այդ և նման հարվածներից, պաշտպանել է իր սկզբունքները:

1862 թ. Զեյթունի ինքնապաշտպանութեան օրերին Կ. Փանոսյանն իր թերթում համարձակ քննադատութեան ենթարկեց Զեյթուն արշավող թուրքական զորքերի գործողութիւնները և մասնավորապես հրամանատար Ազիզ փաշային: Թուրքական ոստիկանութիւնը չի հապաղում և, «Մասիսի» վկայութեամբ, «Մյուլնատիի էրճիասի» 1862 թ. թիվ 213-215-ում տպագրված հոգիածների պատճառով Կ. Փանոսյանը ձերբակալվում և բանտարկվում է: Բանտում նա անցկացնում է 21 օր (օգոստոս-սեպտեմբերին), որից հետո առկանվելով 20 լիրա ազատ է արձակվում, իսկ «Մյուլնատիի էրճիասը» խափանվում է ընդմիջտ («Մասիս», 1862, 25 օգոստոսի):



«Մյուևատիի էրեխասից» չորս տարի անց, 1866 թ. Կ. Փանոսյանը Հիմնադրել և խմբագրել է «Մանգուսեի էֆքյարը» («Կարծիքների շարք») թերթը, դարձյալ Հայաստան թուրքերենով (այս լեզվով և դրուժյամբ տպագրվել է մինչև 1896 թ., ապա վերահրատարակվել 1901-1917 թթ. Հայերեն):

«Մանգուսեի էֆքյարը» առաջին օրաթերթն է արևմտահայ կյանքում, որի նյութական կացությունը դրված էր բավական լուրջ Հիմքերի վրա, մասնավորապես 1870-ական թթ.: Այս տասնամյակին թերթը Հասավ աննախընթաց լայն ժողովրդականության. թերթը տարեկան ծախսում էր 1500-2000 դուրուշ, նրա Հրատարակության մեջ ներդրվել էին շուրջ երկու տասնյակի չափ աշխատողներ, որ բացառիկ երևույթ էր ժամանակի աղքատիկ Հայ պարբերականների Համար: Ի տարբերություն «Մյուևատիի էրեխասի», «Մանգուսեի էֆքյարը» Արևմտահայաստանում ուներ իր թղթակիցները, որոնք շարունակաբար լրատվություն էին մատակարարում տեղերից Կեսարիայից, Կարինից, Մուշից, Վանից և այլ վայրերից: Այդ թղթակցությունները բազմաթիվ տեղեկություններ են պարունակում գավառի ազգային, Հանրային, կրթական ու Հոգևոր իրականության մասին, ներկայացնում նրա վիճակը ամենատարբեր կողմերից: Խմբագիրը չէր վարանում սուր քննադատության տակ առնել Կեսարիայի (ինչպես և այլ վայրերի) «զոռու աղաներին» ի պաշտպանություն Հասարակ ու կեղեքվող գյուղացիության, ժողովրդական խավերի: Առաջադիմական մյուս պարբերականների Հետ «Մանգուսեի էֆքյարը» Հասարակայնության ուշադրությունը Հրավիրել է գավառներում քրդական Հարստահարումների վրա, ուղղություն տվել Հասարակական կարծիքին գավառական Հարստահարությունների վերաբերյալ (1869, 1-2 ապրիլի): Թերթն ըստ ամենայնի պաշտպանում էր պատրիարք Մ. Խրիմյանի Հայրենասիրական դիրքորոշումը՝ գավառական Հարստահարությունները մերկացնելու, դրանք կառավարության քննարկմանը ներկայացնելու և գործնականում մեղմելու ուղղությամբ: Այս տեսանկյունից էլ թերթը գնահատում էր Կ. Պոլսի Ազգային վարչության գործունեությունը՝ նրանում առաջնահերթը Համարելով գավառի կյանքին խորամուխ լինելը և ազգային իրավունքների պաշտպանությունը: Ազգային վարչությունը նրա էջերում քանիցս քննադատվել է արդյունավետ քայլերի չդիմելու և անհետևողականության պատճառով: Մ. Խրիմյանի պատրիարք ընտրվելուց Հետո (1869), ինչպես Հայտնի է, Ազգային վարչությունն ու պատրիարքարանը կազմել էին գավառական Հարստահարությունների տեղեկագիրը՝ փաստորեն առաջին

անգամ լայն չափերով ներկայացնելով թուրքական լծի մուսլի պատկերը արևմտահայրենական կյանքում: Կ. Փանոսյանը իր թերթում պաշտպանել է Հարստահարությունների մերկացման և այն Թուրքիայի ներքին քաղաքականության լուրջ հիմնահարցերից մեկը դարձնելու գաղափարը: «Մանգոմեի էֆենդի» այս շրջանի «Մեղվի», «Մասիսի» և մի քանի այլ պարբերականների հետ գործուն մասնակցություն է բերել գավառական Հարստահարությունները բացահայտելուն և մշտապես ուշադրություն դարձրել այդ թեմային: Կ. Փանոսյանը տպագրել է դրան առնչվող հավաստի վավերագրեր, ինչպես, օրինակ, Մ. Խրիմյանի նամակը Մշո և Բուլանըլի Հայերի թուրքերից և քրդերից կրած Հարստահարությունների, Հայկական գյուղերը ճորտացնելու, տնտեսական ու հողային ճշգրտումների և այլ կեղեքումների մասին (1869, 7 ապրիլի): Ընդ որում, Կ. Փանոսյանը Հանդես չի եկել սոսկ բողոքողի, գավառում օրինագանցություններն ու անիրավությունները ցուցադրողի դերում, այլ, ըստ Հնարավորին, ձգտել է բարձրացնել ժողովրդի ազգային արժանապատվությունը, ընդդիմություն ոգին: Գավառի կյանքի ծանր կացության վերաբերյալ թերթը տպագրել է նաև Հայերեն հոդվածներ, ինչպես, օրինակ, «Մշեցվոց վրա ընդհանուր տեսություն մը» հոդվածաչափը, որտեղ նորովի են իմաստավորվում Հարստահարությունները: Փանոսյանն ընդգծում է այն իրողությունը, որ Հարստահարությունները խրախուսվում են տեղական թուրքական իշխանությունների կողմից, իսկ Հարստահարողների բազմաչեքտ բանակի առջև Հայ գյուղացին լիովին անպաշտպան է և իրավագուրդ (16, 20, 23 ապրիլի): Տնտեսական ու իրավական այս ծանր կացությունը էլ թերթը բացատրում է գավառից ծայր առած գաղթականության խորապես մտահոգիչ երևույթը: Գավառական կյանքի պատկերումով «Մանգոմեի էֆենդի» ամբողջացնում էր ազգի իրական կյանքի մասին իր անաչառ խոսքը: Նրա էջերում ներկայացվում են այս ասպարեզին վերաբերող մյուս մտահոգիչ գործոնները կաթոլիկ և բողոքական միսիոներների քայքայիչ գործունեությունը, Հայ գավառացու հողազրկման երևույթը և այլն: Որպես այս թեմայի շարունակություն, Կ. Փանոսյանը չէր մոռանում գավառական Հարստահարումների զոհերին: Կ. Պոլսի Հայ պանդուխտներին, տպագրում էր նրանց անուրախ կացությանը նվիրված նյութեր: Հայ գաղթականների Կ. Պոլսի կյանքին, կենցաղին ու առօրյային վերաբերող ուշադրամ նյութերից է մշեցի բեռնակիրներին նվիրված հոդվածը «Խաթանպուլըս Համալլը» («Կ. Պոլսի բեռնակիրները») վերնագրով (1871, 25 նոյեմբերի): Ի

պաշտպանութիւն մայրաքաղաքի Հայ աշխատավորութեան, «Մանգուլների էֆֆֆայրը» Համարձակ ելուցիւթներ էր ունենում թաղական ջոջերի դեմ:

«Մանգուլների էֆֆֆայրում» Կ. Փանոսյանը ցուցադրել է արեւմտահայ դործիչների հոգևոր կապն ու Հիշողութիւնը Մ. Նալբանդյանի գաղափարների մասին: Ետո ուշագրավ է, որ դադարած «Մեղվի» Հրապարակախոսները այդ կապակցութեամբ Հանդես են եկել այս թերթի էջերում: Այսպես, «Մեղվի» խմբագիրներից Ա. Մուրատյանը, բնութագրելով Մ. Նալբանդյանի ժողովրդանկեր գործունեութիւնը, նրան Համարում է «ճշմարիտ նահատակ» և մեջբերում «Ազատութիւն» բանաստեղծութեան քառատողերը (1869, 9 հունվարի):

1866 թ., այն բանից Հետո, երբ Բ. դուռը դադարեցրեց սահմանադրութեան գործունեութիւնը, «Մանգուլների էֆֆֆայրը» Հանդես եկավ դրա վերագործադրման պահանջով: Կողմնակից լինելով վարչական անիշխանութեանը վերջ տալուն թերթը տպագրեց Խառն ժողովի Հանդարտութեան կոչերը ժողովրդին, որը եկեղեցիներում շարունակում էր իր հուզումները: Տպագրվեց նաև Խառն ժողովի ատենադպիր Գր. Օտյանի ազդը ազգային խմբագիրներին, որով Հայտնվում էր, որ նրանք նշված ժողովի գործունեութեան մասին տեղեկութիւն կարող են ստանալ ցանկացած օր դիմելով նրա դիմանին (ն. տ.): «Մանգուլների էֆֆֆայրը» այս օրերին անաչառ վերաբերմունք է դրսևորել Հասարակական իրադարձութիւնների նկատմամբ, տպագրել է քննադատական սուր հոդվածներ պատրիարք Պ. Թագթագյանի և Բ. դուռն դեմ պաշտպանելով Հայերի ազգային ու վարչական իրավունքները: Այդ իրավունքները դարձնելով բազմակողմանի քննարկման առարկա Կ. Փանոսյանը շարունակում էր «Մյուսատիի էրեխասից» Հայտնի իր ուղեգիրը ապահովելով կարծիքների այլազանութեան դրսևորումը: «Լրագրաց էջերը, - գրում էր նա, - ժողովրդյան բաց ըլլալը կարծյաց ազատութեան պահանջումներն մեկն է: Եվ թերթ մը, որչափ որ կարծյաց զանազանութիւն կամ տեսակ-տեսակ դրութիւնք պարունակե, այնչափ ընթերցողաց օգտակար ծառայութիւններ ըրած կըլլա» (ն. տ.):

Հաղիվ թե Բ. դուռնը Հանդուրժելի կարող էր լինել կարծիքների տարբերութեան վերաբերյալ այս տեսակետը, մանավանդ թերթը Հրատարակվում էր թուրքերեն և մատչելի էր ոչ միայն Հայերին: Իր Համարձակութեան Հա-

մար «Մանգուճեի էֆֆայարը» ժամանակավոր դադարի ենթարկվեց ներքին գործոց պաշտոնյա Սավֆեթի Հրամանով, որի տեքստը տպագրվել է թերթում:

Կ. Փանոսյանը բացահայտում էր նաև դավառի Հայ կյանքի սովորուստ կողմերը և դրանց կրողներին: 1869 թ. նրա թերթը դատափետում էր Նիկոմեդիայի կրոնավորների ազատ բարձրն ու զեխությունը, որ նա անհարիր էր համարում կրոնավորների համար: Այս իրողությունների նկատմամբ Հակառակ դիրք ունեւր «Փուճը» թերթը, որը, զուտ պաշտպանողական նախասիրություններից ելնելով, փորձում էր քողարկել այդ զեղծումները: Այս ժամանակից է սկսվում «Մանգուճեի էֆֆայարի» և «Փուճըի» տեւական բանակոխվը, որը, կորցնելով իր Հասարակական Հնչեղությունը, Հետագայում տեղի պետք է տար Հ. Պարոնյանի ծաղրուծանակին:

Սատարելով Եվզոկիայի աղաների դեմ պայքարի ելած Մ. Փորթուգալյանին և նրա կողմնակիցներին Կ. Փանոսյանը տպագրեց առաջինի բանտից ուղարկած նամակը («Ձայն ի բանտ», Հայերեն): Այստեղ Փորթուգալյանն ընդգծում է Հայերի Հանդեպ թուրքական իշխանությունների կամայական վերաբերմունքը «նախ պատժել և ապա դատել» (1872, 17 Հունվարի): «Մանգուճեի էֆֆայարը» Հասարակության դատին էր ներկայացնում Հայ դավառի սոցիալական ու ներազգային Հակասությունները՝ դրանով իսկ նպաստելով ժողովրդավարական մամուլի Հանրային ներգործությանը XIX դարի 70-ական թվականներին:

Արևմտահայ իրականության մեջ այս թերթը նորություն էր բերում նաև այն իմաստով, որ դուրս էր գալիս ազգային կյանքի շրջանակներից և քննադատում թուրքական պաշտոնեությունը՝ բացահայտելով նրա անտարբերությունը ժողովրդի Հանդեպ: 1872 թ. մարտին, միջամուխ լինելով «Լևանտ Հերալդ» և «Լա թուրքի» թերթերի բանավեճին, Կ. Փանոսյանը տպագրեց մի Հոդված, որտեղ ծանակում էր թուրքական բարձրաստիճան պաշտոնյանների վյուճեխանների եսասիրական գործունեությունը: Այս Հոդվածի պատճառով թերթը խափանվեց երկու ամսով տերություն դեմ «ծայրահեղորեն անպատշաճ լեզու գործածելու» մեղադրանքով: Թուրքական և ազգային իշխանությունների դեմ ըմբոստ կեցվածքի պատճառով թերթը խափանվել է նաև նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին և բազմիցս Հետագայում:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին «Մանգուճեի էֆֆայարը» խորին տաղնապով Հետևում էր պատերազմի թատերաբեմ դարձած Հայկական դավառների ողբերգական դրությունը և ճշմարտացի լրատ-

վություն տալիս դրա մասին: 1877 թ. Հունիսին թերթը տպագրեց թուրքական զորքերի Վանի շրջանում գործած «աննկարագրելի բարբարոսությունների» մասին մերկացնող թղթակցություն: Կանոնավոր զորքերի թալանին Հետեւել էին բաշիբոզուկների բազմությունները: Թղթակցությունը իրարանցում առաջացրեց տպագրական տեսչությունում: Ոստիկանությունը ձեռքակալեց Կ. Փանոսյանին, նրա գործը Հանձնվեց զինվորական դատարան: Ամբաստանյալին մի կերպ Հաջողվեց Սերվիլեների օգնությամբ ազատվել սպառնացող պատժից, բայց նրա թերթը խափանվեց երկու ամսով:

1878 թ. Կ. Փանոսյանը ուրույն ուղեգրի ղրսեորեց Հայկական Հարցում, ավելի շուտ՝ Հանդես եկավ այդ Հարցի միջազգայնացման դեմ: Փանոսյանը կարծում էր, որ ո՛չ եվրոպական տերությունները և ո՛չ էլ Ռուսաստանը չափազրգույթ չեն արեւմտահայության ազատագրության Հարցում և, որ Հայերի քաղաքական գործուն առնչությունները տերությունների Հետ կարող են միայն զրգուել սուլթանին և սպառնալիքի տակ դնել ժողովրդի գոյությունը: Ազգային ինքնավարության գաղափարը նա Համարում էր ազգային վաղածին Հույների արդյունք և այս ըմբռնումով էլ բացասաբար տրամադրվեց Բեռլինի վեհաժողովի Հանդեպ, մանավանդ այն օրերին, երբ Հայության ինքնորոշման տրամադրությունները բորբոքվում էին վեհաժողովից ակնկալվող Հույներով: Այսպիսի վերաբերմունքը ճակատագրական եղավ «Մանգոլների էֆֆյարի» Համար: Թերթի Հեղինակությունը, Հետեւապես և բաժանորդների քանակը աղետալիորեն նվազեց: 1870-ական թթ. վերջերին նրա երեքմեկ ժողովրդականությունը անցյալի Հուշ էր արդեն:

Ազգային ինքնորոշման տրամադրությունների դեմ ելնելով Կ. Փանոսյանը, սակայն, շարունակում էր պահպանել պատվարժան ու անաչառ Հրապարակախոսի նկարագիրը: Նա կտրուկ Հակադրություն էր ներկայացնում դարավերջի այն Հայ խմբագիրների Համեմատությամբ, որոնք իրենց թերթերի էջերը լցնում էին մեծաՀարուստ ազգայիններին ուղղված քծնանքի ու ստորաքարչության առատ Համեմունքներով: Այս առթիվ անՀրաժեշտ է Կ. Փանոսյանի Հիշատակի վրայից մաքրել Հանիրավի քսված այն բիծը, որի Հեղինակը Լեոն է՝ իր մի ծայրահեղ գնահատականով: Ելնելով նրանից, որ նյութապես ծանր վիճակում գտնվող Կ. Փանոսյանը 1890 թ. ապրիլին դրամական նպաստ է ստացել կաթողիկոսից, որն ուղարկել էր 50 ռուբլի, Լեոն եզրակացնում է, որ կաթողիկոսը կաշառել է Կ. Պուսի Հայ խմբագիրներին («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», 1921-1922, գիրք 1-2, էջ 89-92): Բայց

շատ խմբագիրներ տարբեր ժամանակներում դիմել են կաթողիկոսին և նյու-թական օգնություն ստացել (ինչպես, օրինակ, Ղ. Պալղաղարյանը, Ղ. Ալա-ճաճյանը, որին, ի դեպ, նույնպես կաշառված է համարում Լեոն և այլն): Ծայ-րահեղ դեպքում խոսքը կարող էր վերաբերել Կ. Փանոսյանի թերթի և կաթո-ղիկոսի ուղղության որոշ նույնությանը, բայց դա ևս ոչ մի իրավունք չի տա-լիս հայ ամենաշիտակ խմբագիրներից մեկին մեղադրել շահամոտության մեջ:

1888 թ. «Մանգումեի էֆքյարի» խմբագրությունը ստանձնել է Մ. Գոչունյանը, որն այդ ժամանակ արդեն ճանաչված հրատարակախոս էր: Հա-ջորդ տարիները թերթի վերաբերյալ տվյալները շատ աղքատիկ են: Հայտնի է, որ այն դադարած է մնացել մի տեական ժամանակ և վերահրատարակվել է 1901 թ., միայն Հայերեն, Մ. Գայսերյանի արտոնատիրությամբ և Մ. Գոչունյանի խմբագրությամբ: Արդուլ Համիդի վարչակարգի պայմաններում թերթը շարունակել է իր անաչառ և ուղղամիտ ընթացքը, որի պատճառով են-թարկվել է հալածանքների:

4. Պոլսի երկլիզվյան հայատառ թուրքերեն և հայերեն թերթերից էր «Միածանը» (1866-1870), որը տարբեր ժամանակներում սպազրվել է Կ. Չու-խաճյանի, Ա. Սուրենյանի և Ս. Կյուրճյանի խմբագրությամբ: 1870-ից սպազրվել է միայն թուրքերեն: «Միածանը» կողմնակից էր արևմտահայ հանրային կյանքի վերակառուցմանը և սահմանադրությունը ամբողջ ազգի վրա տարածելու գաղափարին, ընդամին, էջմիածնին վերապահելով ազգի միակ հոգևոր առաջնորդի դերը (ի թիվս այլ խմբագիրների, Գևորգ կաթողի-կոսին ուղղված 1867 թ. հունվարի 16-ի ուղերձում Կ. Չուխաճյանը Աղթա-մարի և Սսի կաթողիկոսներին համարում է «ինքնընտիր, ինքնահրավեր և ինքնակոչ») (Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 147, վավ. 102): Հայ մամուլում այս թերթը առաջիններից էր, որ թղթակցություններ և հոդ-վածներ է նվիրել Արևմտահայաստանի տնտեսական թշվառությանը, մեր-կացրել հարստահարությունների բազմաթիվ դեպքեր: Ծանաչողական արժեք ունեն մանավանդ «Միածանի» այն նյութերը, որոնք նվիրված են Մշո դաշ-տի Հայության զրկանքներով լի առօրյային: Թերթը նկատել է Հողային սե-փականատիրական հարաբերությունների կործանարար բնույթը հայ գա-վառի համար, շահնա-հարկահանների ու վաշխառուների ամայացնող գոր-ծունեությունը, Հայերի Հողազրկության ծանր ու տանջալի գործընթացը: «Միածանը» պաշտպանել է Մ. Խրիմյանի պատրիարքական գործունեու-

Թյունը և իր տպագրած նյութերով, ըստ էության, նպաստել գավառական հարստահարությունների վերաբերյալ տեղեկագրի հրատարակմանը: Այս թերթը ևս եղել է տպագրական տեսչության ուշադրության կենտրոնում, խափանվել է մի քանի անգամ, ինչպես 1869 թ. փետրվարին, այնուհետև հաջորդ տարվա մարտին և այլն:

Հայերեն և հայատառ թուրքերեն էր հրատարակվում Օ. Խոճասարյանի խմբագրած «Օրագիր» թերթը՝ երկրորդ օրաթերթը արևմտահայոց մեջ՝ «Մանզումեի էֆքյարից» հետո: Տպագրվել է Կ. Պոլսում, 1868-1878 թթ.: Մինչև «Օրագրի» հրատարակությունը, Օ. Խոճասարյանը աշխատակցել է «Մանզումեի էֆքյարին» և «Միածանին», ուստի պետք է կարծել, որ երկլեզվյան հրատարակության հանդեպ իր հակումները նա ձեռք է բերել այդ պարբերականներում և մոտիկ է եղել թուրքախոս Հայ մտավորականության հետ: «Օրագիրը» Օսմանյան թուրքիայում բարենորոգումների համոզված կողմնակիցն էր, որի հետ առնչում էր արևմտահայության դրության բարելավումը: Այստեղից նրա քննադատական դիրքը օսմանյան ավանդական հասարակության և հետամնաց հաստատությունների հանդեպ, թեև բուն Հայ հանրության զարգացման ընթացքը նրան պատկերանում էր բավական պահպանողական պատկերացումների հիման վրա: Այսպես, Խոճասարյանի թերթը ընդդիմանում էր սահմանադրության վերաքննության խրիմյանի ջանքերին (պատրիարքը ելնում էր գավառի շահերից), բայց և դեմ էր սուլթանական բացարձակ ինքնիշխանությանը: Նրա մի շարք ելույթներում այն մտայնությունն է դրսևորվում, որ երկրում գերադասելի է սահմանադրական միապետությունը և այս իմաստով էլ «Օրագիրը» համերաշխում էր «նոր օսմաններին»:

Իր համոզմունքները բացահայտորեն պաշտպանելու համար «Օրագիրը» մի քանի անգամ ենթարկվել է խափանման: Ազգային իրականության գնահատման հարցում թերթը ընդհարվել է հակադիր համոզմունքներ ունեցող «Մեղվի», «Թատրոնի», «Մասիսի» և «Մանզումեի էֆքյարի» հետ, մտնելով բուռն բանավեճերի մեջ: 1873 թ. «Օրագիրը» վերացրել է թուրքերեն հոդվածները և տպագրվել միայն հայերեն:

Երկլեզվյան երգիծական հրատարակություն էր Գ. Այվազյանի խմբագրած «Մամուլը» (1869-1882): «Մամուլը» ևս ունեցել է ազգային և հանրային հետաքրքրությունների բավական լայն շառավիղ, հատկապես ուշադրություն է դարձրել պոլսահայ և գավառահայ իրականության կարևոր հիմ-

նահարցերին, ազգային մշակութիւն, թատրոնին ու գրականութեանը: «Մամուլը» պաշտպանել է ազգային միասնութեան գաղափարը՝ ընդդէմ դավանական անջրպետներին: Իր թուրքերէն հոդվածներով, Ֆելիետոններով ու զվարճալի նյութերով պարբերականը նպաստել է թուրքախոս Հայ Հանրութեան ազգային գիտակցութեան զարգացմանը:

Գ. Այվազյանը նախ ողջունել է պատրիարք Մ. Խրիմյանի գործունեութիւնը, ապա խստորեն քննադատել մերժելով սահմանադրութեան վերաքննութեան նրա մտահղացումն ու այս ուղղութեամբ նրա գործելակերպը: Այս, ինչպէս և ազգային թատրոնի զարգացման հարցերում տարակարծիք է եղել Ն. Պարոնյանին, որի առթիվ նրանց շարունակական բանավեճերը երկուստեք Հասել են ծայրահեղութիւններին:

«Մամուլը» իր ներդրումն ունի ժամանակի Հայ երգիծանքի, մասնավորապէս երգիծական պատումի և Ֆելիետոնի ժանրի զարգացման ասպարեզում: Նրա երգիծանքն առավել մոտ է ժողովրդական երգիծանքին, և իր գրական նյութերը միջին տեղ են գրավում ժողովրդական երգիծական զրույցի ու պատմվածքի միջև, ուստի Հետաքրքիր անցումային փուլ են ներկայացնում արևմտահայ պատմվածքի ժանրի զարգացման մեջ: Ստեղծագործական ձևի իմաստով «Մամուլի» երգիծական նյութերը առավել մոտ են Ն. Սըվաճյանի նույն ժանրի գործերին: «Մամուլը» դադարեցվել է թուրքական իշխանութիւններին կողմից «Ուղեբձ» վերնագրով մի ազատասիրական և զրգոխէ բանաստեղծութիւն տպագրելու պատճառով (1882, №972, էջ 286):

1850-1890-ական թթ. Հայաստան թուրքերէն մամուլի ստեղծման ու զարգացման գործում անուրանալի երախտիք են ունեցել Ն. Հաճյանը, Ա. Սաֆայանը, Ն. Պեղիբճյանը, Տ. Ծիվելեկյանը: Ն. Հաճյանը խմբագրել է Հայաստան թուրքերէն առաջին երգիծական թերթը՝ «Զվարճախոսը» (1855-1856, Կ. Պոլիս, Հրատարակութիւն Համանուն ընկերութեան), այնուհետև «Շառիվառի» երգիծաթերթը (1876, Կ. Պոլիս), իսկ Ա. Սաֆայանը՝ «Միմոս» երգիծաթերթը (1875-1876, Կ. Պոլիս): Ա. Սաֆայանը ներդրում ունի նաև Հայաստան այլ թուրքերէն և զուտ Հայերէն պարբերականների Հրատարակութեան գործում: Նա էր «Ծաղիկ» (Կ. Պոլիս, 1886-ից), «Ծաղիկ մանկանց» (Կ. Պոլիս, 1889-1893) Հայերէն պարբերականների, ինչպէս և «Թերեմանը էֆթյարի» Հայաստան թուրքերէն թերթի արտոնատերը: Կ. Պոլսում Համանման գործունեութիւն էր ծավալել Տ. Ծիվելեկյանը, որը «Թերեմանը էֆթյարի» և «Ճերիտեի շարգիյի» արտոնատերն էր 1880-1890-ական թթ.: Նրա արտո-



նատիրությամբ էր հրատարակվում նաև Հայերեն «Սուրհանդակ» թերթը (1899-1908):

Հայատառ թուրքերեն երգիծաթերթերը<sup>80</sup> նշանակալի դեր են ունեցել Հայ երգիծանքի զարգացման ասպարեզում, և դրանց հետագա ուսումնասիրությունը, անկասկած, շատ կողմերով կնպաստի արևմտահայ երգիծական գրականության ու հրապարակախոսության առանձնահատկությունների բացահայտմանը և ամբողջական նկարագրի վերհանմանը: Հայ երգիծանքի այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հ. Սրվաճյանը, Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը, անշուշտ, միանգամից ձևավորված երևույթներ չեն, այլ հենվել են ավանդույթների, երգիծական ընկալման արդեն գեղագիտական որոշակի նախասիրություններ ունեցող միջավայրի վրա: Հայատառ թուրքերեն երգիծանքը, լինելով Հայ հեղինակների տաղանդի արգասիքը, ներկայացրել է այդպիսի միջավայրի շատ ուշագրավ և բազկացուցիչ տարրը:

1870-ական թթ. Հայատառ թուրքերեն հրատարակություններից ժողովրդավարական դիրքերի վրա էր կանգնած նշանավոր խմբագիր և հրապարակախոս Մ. Այվատյանի խմբագրած «Արարատ» թերթը (Կ. Պոլիս, 1872-1876): Մենդյամբ կեսաբացի այս հրապարակախոսը եղել է Կ. Փանոսյանի և Հ. Սրվաճյանի դադափարական հետևորդը, հանդես է եկել արևմտահայ կյանքում վարչական, մշակութային և կրթական գործերի ժողովրդավարացման դիրքերից: «Մանգոլմեի էֆֆյարին» մի կարճ ժամանակ աշխատակցելուց հետո նա հիմնում է «Արարատ» թերթը (նախ առօրյա, ապա շաբաթաթերթ և օրաթերթ): Այվատյանը համարձակորեն ցույց է տվել անարժան կղերականների չարաշահումները, ժողովրդից մեկուսանալու վտանգավոր երևույթը: Այս թերթը ևս հաճախակի նյութեր է տպագրել զավառի Հայության մասին, պաշտպանել Հարստահարությունների առթիվ պատրիարքի և Հայ առաջավոր մամուլի ելույթները: Կ. Պոլսի մյուս պարբերականների հետ («Մեղու», «Թատրոն», «Մանգոլմեի էֆֆյար») սուր քննադատության է ենթարկել Հայ էֆենդիական դասին, նրա ազգային դիմազրկությունն ու հասարակական մեկուսացումը: Օսմանյան վարչական հիմնարկներում պաշտոնավարող այդ մարդկանց Մ. Այվատյանն անվանել է «հեթանոսի Հացն ուտող» և ըստ դրա էլ գնահատել նրանց տեղը Հայ հասարակության մեջ: 1876 թ. «Արարատը», «Մեծմուսյը Հավատիս» և «Հայրենիք» թերթերի հետ միա-

սին դատափետեց թուրքական իշխանություններին՝ Տրապիզոնի Շանա գյուղում հայ բնակչության դեմ գործադրված բռնությունների առթիվ: Երեք պարբերականներն էլ անհապաղ խափանվեցին նույն թվականի Հոկտեմբերի 24-ին, որոնցից «Արարատը» ընդմիջտ: Սմբազիրները գանակոծվեցին, առանձնապես սաստիկ վնասվեց Մ. Այվատյանը, որն անկողին ընկավ և այդպես էլ չապաքինված վախճանվեց 1876 թ. դեկտեմբերի 15-ին: Հրապարակախոսը թաղվեց համաժողովրդական խորին հարգանքի ցույցերով, Կ. Պոլսի Ղալաթիո եկեղեցում:

1870-ական թթ. բավական ընթերցվող պարբերականներ էին «Ավետաբերը», «Մեծնուայր թեսափիրը», «Վարազայի հավատիսը», «Ռուզնամեի Մասիսը» և այլն<sup>81</sup>:

Հայատառ թուրքերեն մամուլի ճանաչված գործիչներից էր Մ. Գափամաճյանը, որը 1880-ական թթ. խմբագրել է «Մեծնուայր ախպար» («Լուրերի հավաքածու», 1884-1906) թերթը՝ միաժամանակ խմբագրելով կիրակնօրյա «Հայրենիքը»: «Մեծնուայր ախպարը» հետադաշյում խմբագրել է Հ. Թուլայանը, որը բացառապես հայտնի է իբրև Հայատառ թուրքերեն մամուլի գործիչ (խմբագրել է նաև «Մեծնուայր հավատիս» թերթը նրա վերջին շրջանում): 1880-ական թթ. Կ. Պոլսի հայատառ թուրքերեն մամուլի երախտավորներից է նաև Տ. Քելեկյանը, որը հիմնադրել և խմբագրել է «Ճիհան» («Աշխարհ», 1884-1885) և սրա եռամսյա հավելված «Մուսավիթը ճիհան» («Պատկերազարդ աշխարհ», 1885) պարբերականները:

Հայ և ոչ միայն հայ ընթերցողի միջավայրում արժանի հեղինակություն էր վայելում «Թեհրեմանը էֆթյար» («Կարծիքների թարգմանիչ», Կ. Պոլիս, 1877-1884) թերթը: Այն խմբագրել է Տ. Ճիվելեկյանը, արտոնատերն էր Ա.

<sup>80</sup> Հասկանալի պատճառներով սրանց մեջ չի մտնում Գ. Պարոնյանի «Թիյաթրո» երգիծաբերը, որը հրատարակվել է արարատառ թուրքերենով:

<sup>81</sup> Օսմանյան ոչ պաշտոնական մամուլի հայատառ ուրբերեն տարբերակների հրատարակության հետաքրքիր դրվագներից է թուրքական մամուլի գործիչ Թ. Կասաբի նախաձեռնությունը: 1871 թ. նա հրատարակել է իր «Դիյոթեն» երգիծաբերի հայատառ թուրքերեն տարբերակը, որի մուտքը հեզմանցով դիմավորեց Գ. Պարոնյանը («Մեղու», 1871, 23 մարտի): 1873 թ. վերջին նա Ն. Թուլպեհտոջյանի տնօրինությանն էր հանձնել իր «Գեյալ» թերթի հայատառ թուրքերեն տարբերակը (խմբագրել է Գ. Թուլայանը): Լինելով «նոր օսմաներին» մոտիկ կանգնած անձնավորություն, Կասաբը, թերևս, հետամտել է ոչ միայն ֆինանսական նպատակներ (ի դեպ, «Դիյոթենը» նա հրատարակել է նաև հունարեն ու ֆրանսերեն, տե՛ս Parnaksizoglu A. Türk gazetecilik ve basin tarihi, Istanbul, 1959, s. 20): «Գեյալը» (ուրբմն և նրա հայատառ թուրքերեն տարբերակը) դադարել է 1876 թ. վերջին՝ Թուրքիայում մամուլի կարծեցյալ ազատության առթիվ ծաղրանկար տպագրելու պատճառով (Nüzhet S. Türk gazeteciliği, Istanbul, 1931, s. 60):

Սադայանը: «Թերճեմանը էֆֆյարը» ուներ չափավոր ուղեգիր, կողմնակից էր Օսմանյան Թուրքիայում ընդհանուր (և ոչ մասնակի) բարենորոգումների տեսակետին: 1877 թ. այս խնդրի առթիվ բանավիճել է «Նոր-Դարի» Հետ (1877, 10 փետրվարի):

«Թերճեմանը էֆֆյարում» 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, Արևելյան Հարցի ու տերությունների և Թուրքիայի քաղաքական փոխ-հարաբերությունների մասին Հմտալի Հոդվածներով ու մեկնաբանություններով Հանդես էր գալիս Ն. Վարդանյանը «Մեծուսայը Հավատիսի» երբեմնի խմբագիրը: Թերթը, ինչպես և մյուս լուրջ Հայկական պարբերականները, իր տեսադաշտում է պահել Արևմտահայաստանի Հարստահարությունների, ազգային իրավազրկության Հարցերը և բողոքի ձայն բարձրացրել ի պաշտպանություն կեղեքվող ժողովրդի: Արևմտահայության իրավիճակի կապակցությամբ նա Համարձակորեն բանավիճել է թուրքական պաշտոնական տեսակետն արտահայտող «Ստամբուլ» թերթի Հետ: Պատերազմի ավարտից Հետո նա ընդարձակ տեղեկություններ է տվել Մուշի, Բաղեշի, Վանի, Խնուսի, Դերսիմի Հայերի քայքայված տնտեսության և առհասարակ ծանր դրության մասին: «Թերճեմանը էֆֆյարը» ուշադրություն է դարձրել Արևմտահայաստանի ազգային ու մշակութային կյանքի այլևայլ իրողություններին և տպագրել ճանաչողական նշանակության շատ նյութեր: Թերթը նկատել է արևմտահայերի Համար աղետալի այն երևույթը, որ պատերազմից Հետո եկվոր չեքքեղները Հողազրկում են Հողի օրինավոր տիրոջը Հայ գյուղացուն: Սեբաստիայի Հայերի Հարստահարությունների վերաբերյալ «Թերճեմանը էֆֆյարը» տպագրել է Մ. Փորթուզալյանի նամակը (Հայերեն) (1878, №24): Արժանին պետք է Հատուցել թերթի իշխանություններից չեքինչելու և նրանց Հանդեպ քննադատական վերաբերմունք դրսևորելու Համար: Իր ազգանպաստ ելույթներով «Թերճեմանը էֆֆյարը» դրգուում էր թուրքական մամուլին, մանավանդ նրա լեզուն մատչելի էր Թուրքիայի Հետաքրքրվող շրջաններին: Նրա դեմ առանձնապես եռանդով էր գործում թուրքական «Վաքըթ» («Ժամանակ») թերթը, որը իշխանությունների ուշադրություն էր Հրավիրում նրա իր կարծիքով անբարեհույս ընթացքի վրա: Մի առիթով Ն. Պարոնյանը դիպուկ երգիծել է առհասարակ լրտեսի դեր ստանձնած «Վաքըթի» վարքագիծը. «Վաքըթեն» զգուշանալու է, - գրում էր նա: - Այս լրագիրը քանի մը ատենն ի վեր սովորությունը ըրած է օրը քանի մը անգամ տպագրական տեսչության ուշադրությունը Հրավիրել

«Թերճեմանը էֆֆեյարին» այն ամեն խորհրդածություններուն վրա, զորս հերքելու ոչ գլուխ ունի, ոչ լեզու» («Լույս», 1880, №2, էջ 361): «Թերճեմանը էֆֆեյարին» Հենց այդ տեսակետից զնահատող տպագրական տեսչությունը մի քանի անգամ վարչական կարգով փակել է այն: «Վաքըթի» մշտական Հարձակումներն ու զրպարտությունները դրդեցին «Թերճեմանը էֆֆեյարին» դատի տալու թուրքական թերթին: Վերջինիս փաստաբանը, սակայն, անակնկալ էր պատրաստել Ա. Սաֆայանի և Տ. Ծիվելեկյանի Համար. դատարանում նա «Թերճեմանը էֆֆեյարը» ներկայացրեց իրրև ապստամբության Հետամուտ Հայկական մի կազմակերպության Հրատարակություն: Հենց դատարանի դահլիճում դատավորի Հրամանով ձերբակալվեցին թերթի տնօրենը և խմբագիրը: Միայն մեղադրանքի կատարելապես անհիմն լինելը փրկեց նրանց բանտից:

«Թերճեմանը էֆֆեյարը» տպագրել է տնտեսական ընդարձակ տեսչություններ, տնտեսագիտական գիտելիք պարունակող Հոդվածներ, գեղարվեստական գրականություն և այլն: Հայ-Ֆրանսիական գրական կապերի իմաստով ուշադրավ է բանաստեղծ Ա. Մոսիկյանի նամակը Վ. Հյուգոյին իր «Սերը» բանաստեղծության Հետ միասին և Հյուգոյի պատասխանը նրան («Թերճեմանը էֆֆեյար», 1878, №193, 195): Ինչպես և «Մեմուռայը Հավատիսը», «Թերճեմանը էֆֆեյարը» ևս կարևոր լրատվություն է պարունակում Հասունյան-Հակահասունյան Հակամարտությունների և Հայ կաթոլիկ Համայնքի տրամադրությունների մասին: «Թերճեմանը էֆֆեյարը» պաշտպանել է առաջադեմ Հայ կաթոլիկներին և քարոզել Համազգային միաբանության գաղափարը անկախ դավանական տարբերություններից: Նրա էջերում արտացոլվել է Հասունյան-Հակահասունյան պայքարի յուրօրինակ ավարտը. թերթը տպագրեց Հակահասունյանների երեքմսի առաջնորդ, պատրիարք Քյուրեկյանի մեղայականը ուղղված պապին (արտատպել է Հոռոմի «Օբսերվատորն ումանո» թերթից) (1879, №537):

1880-ական թթ. կեսից Կ. Պոլսում Հրատարակվող Հայաստան թուրքերեն թերթերից ամենատարածվածն ու երկարակյացը «Ճերիտեի շարգիյեն» էր («Արևելյան Հանդես», 1885-1921 ընդհատումներով), որի Հիմնադիր-խմբագիրը Տ. Ծիվելեկյանն էր: Այս թերթը շարունակել է «Թերճեմանը էֆֆեյարի» ավանդույթները՝ Հանգամանալի լրատվություն տալով Արևմտահայաստանի բնակչության, Կ. Պոլսի Հայ Համայնքի, նրանց ազգային ու մշակութային առօրյայի վերաբերյալ: «Ճերիտեի շարգիյեն» 1890-ական թթ. լիովին բաժա-

նել է Հայ մյուս պարբերականների ճակատագիրը և Հալածանքների ու ճնշման ենթարկվել Համիդյան ոստիկանական գրաքննությունից: 1895 թ. այն «Հայրենիքի» ու «Արևելքի» Հետ միասին Հրաժարվեց տպագրել թուրքական ոստիկանության պատրաստած այն նյութերը, որոնք պատագրվում էին մայրաքաղաքի Հայ մամուլին, և որոնք մեջ գավառի կոտորածների ամբողջ մեղքը բարդվում էր Հայերի վրա:

4. Պոլսից բացի, Հայաստան թուրքերեն պարբերականներ են Հրատարակվել նաև գավառներում: Դրանցից են «Սեյհանը» (Համանուն վիլայեթի անվամբ, Ադանա, 1860-ական թթ.), «Էնվարը շարգիյեն» («Արևելքի ճառագայթ», Կարին, 1866-1877), «Ֆրաթը» («Եփրատ», Հալեպ, 1867-1869), «Խյուտավենտիկյարը» («Հուգավենդիքյար» Բուրսայի վիլայեթի անվանումը, Բուրսա, 1869-1879), «Սիվասը» («Սեբաստիա», 1876-1878), «Մենտորը» (Այնթապ, 1884-1886) և այլն:

Այսուհանդերձ, XIX դ. Հայաստան թուրքերեն մամուլի խոշոր կենտրոնը մնում էր 4. Պոլիսը, որտեղ Հրատարակվում էին մի քանի անգամ ավելի շատ պարբերականներ, քան գավառներում: Պատկերը բավականաչափ փոխվում է XX դարի սկզբից մինչև մեծ եղեռնը, երբ թուրքիայի մայրաքաղաքում կտրուկ կերպով նվազեց Հայաստան թուրքերեն պարբերականների քանակը Արևմտահայաստանի և Հայ այլ գավառների նույնանման Հրատարակությունների Համեմատությամբ: Այս երևույթը վկայում է ազգային միասնությունից գործընթացի լուրջ Հաջողությունների մասին: Հայ թուրքախոս Հատվածները 4. Պոլսում Հայ մշակույթի այդ խոշոր կենտրոնում, աստիճանաբար Հեռանում էին պարտադրված լեզվից թուրքերենից և ավելի մեծ չափերով ընդգրկվում մայրենի լեզվի ու դրա միջոցով ազգային մշակույթի և Հանրային կյանքի ոլորտները:

## Գ Լ ՈՒ Խ Ի Ն Ն Ե Ր ՈՐ Դ

### ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՒԽԻ ՍԿՂԱԿՎՈՐՈՒՄԸ

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նոր հուժկու վերելքը, որը սկսվել էր XIX դարի երկրորդ կեսին, լիցքավորել էր Հայ Հասարակական միտքը՝ ծայրաստիճան ակտիվացնելով գաղափարական հոսանքները: Սակայն այդ հոսանքները, լինելով առանց հստակ ուրվագծված սահմանների, որոնց կենտրոնում իբրև կանոն կանգնած էր լինում Հայ Հասարակութայն այս կամ այն գրական ներկայացուցիչը, թերթերի այս կամ այն խմբագրությունը, չէին կարող կատարել քաղաքական առաջատար դերը, որը գլխավորեր ազգային-ազատագրական պայքարը: Պատմական դարգացման օրենքներին Համապատասխան, այդ դերը պետք է կատարեին ազգային քաղաքական կուսակցությունները:

Ժամանակը Հրամայաբար թելադրում էր քաղաքական այնպիսի կառուցվածքների կազմավորման անհրաժեշտությունը, որոնք ի զորու լինեին ղեկավարելու ազգային-ազատագրական շարժումը, մշակելու քաղաքական պայքար վարելու արվեստն ու ձևը: Այդպիսի կառուցվածքներ ստեղծվել էին. 1885 թվականին Վանում արմենականների կազմակերպությունը, 1887 թվականին Ժնևում Հնչակյանների կուսակցությունը, 1890 թվականին Թիֆլիսում դաշնակցականների կուսակցությունը: Հայկական կուսակցությունները նախորդ Հասարակական-քաղաքական հոսանքների անմիջական ծնունդը չէին, բայց իրենց արմատներով սնվում էին նրանց գաղափարական ժառանգությունից:

Հայ քաղաքական կուսակցությունների կազմավորումը XIX դարի 80-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին, Հայ մամուլի պատմության մեջ Հանգեցրեց մի նոր երևույթի՝ կուսակցական մամուլի առաջացման:

Կուսակցական մամուլն ունի մի էական առանձնահատկություն. այն ապահովում է իր կուսակցության գաղափարախոսության ու քաղաքականության քարոզչությունը:

Այս առումով «Արմենիա» թերթը չի կարող լինել կուսակցական մամուլի տիպական օրինակ: Տվյալ դեպքում գործել է հակադարձ գործառնություն սկզբունքը: Թերթը 1885 թվականին Վանում ստեղծված արմենականների կազմակերպության խոսափողը չի եղել, բայց այդուհանդերձ Հենց դրա շնորհիվ առաջացավ այդ կազմակերպությունը և երկար ժամանակ իր վրա կրում էր թերթի գաղափարաքաղաքական ազդեցությունը: Արմենականները, որոնք չունենին սեփական մամուլ, մինչև 1896 թվականը ղեկավարվում էին «Արմենիա» թերթի գաղափարախոսական դեղատոմսերով: Հենց այդ հանգամանքը մեզ իրավունք է տալիս «Արմենիան» դասելու կուսակցական մամուլի կարգը:

«Արմենիայի» հրատարակությունը անխզելիորեն կապված է Մկրտիչ Փորթուզալյանի անվան հետ: Փորթուզալյանը ծնվել է 1848 թվականին, Կոստանդնուպոլսում: Որպես գործունեության հիմնական ոլորտ ընտրելով մանկավարժական աշխատանքը՝ Փորթուզալյանը միաժամանակ ակտիվորեն զբաղվում էր լրագրական գործունեությամբ: 1874 թվականին Փորթուզալյանը ստանձնեց 1872 թվականից Կոստանդնուպոլսում լույս տեսնող Հայերեն և Հայատառ թուրքերեն «Ասիա» լրագրի տնօրեն-խմբագրի պաշտոնը և սկսեց լրագրից հրատարակել միայն Հայերեն: Միևնույն ժամանակ Փորթուզալյանը աշխատակցում էր թիֆլիսահայ Միհրդատ Ամերիկյանցի կողմից Կոստանդնուպոլսում հրատարակվող «Շար կարծյաց» լրագրին:

Ամերիկյանցը իր հերթին թիֆլիսում հրատարակվող «Մշակ» լրագրի թղթակիցն էր, Գրիգոր Արծրունու բարեկամն ու գործակիցը: Թղթակցությունների հետ միասին Ամերիկյանցը Արծրունուն էր ուղարկում նաև իր թերթի օրինակները: Արծրունուն անչափ հետաքրքրում էին Տաճկահայաստանի վերաբերյալ նյութերը, նրա ուշադրությունը գրավել էին Փորթուզալյանի հոդվածները: Իսկ երբ Արծրունին իմացավ, որ «Մեղու Հայաստանի» թերթում տարբեր կեղծանուններով հրապարակված մի շարք հոդվածների հեղինակը նույն ինքը Փորթուզալյանն է, ցանկություն հայտնեց անձամբ ծանոթանալ տաղանդավոր հրապարակախոսի հետ:

Շուտով այդպիսի հնարավորություն ստեղծվեց: 1875 թվականին «Ասիա» լրագիրը իր հայրենասիրական ուղղության պատճառով փակվեց թուրքական կառավարության կողմից: Ժամանակավորապես ընդհատվեց Փորթուգալյանի խմբագրական գործունեությունը: Օգտվելով դպրոցական արձակուրդներից Փորթուգալյանը մեկնեց Թիֆլիս, որտեղ երկու շաբաթ շարունակ գտնվում էր Հայ երիտասարդության մտքերի այն ժամանակվա տիրակալի Արծրունու միջավայրում:

Հոգևոր հաղորդակցման արդյունքը եղավ այն, որ Կոստանդնուպոլիս վերադառնալուց հետո Փորթուգալյանը վճռականապես հրաժարվեց թուրքիայի մայրաքաղաքում ունեցած աշխատանքից և առանց Հաջողության որևէ երաշխիքի, իր համարձակությամբ ու պատասխանատվությամբ փոխադրվեց Վան, Արևմտյան Հայաստան տեղական ուսումնական հաստատություններում աշխատելու, արևմտահայության պատանի սերնդին Հայրենասիրական ոգով դաստիարակելու և նրա մեջ ազգային ինքնագիտակցություն զարգացնելու համար: Փորթուգալյանի այդ քայլը հասարակական ապտակ էր Պոլսի «ոսկյա» Հայ երիտասարդությանը, որը արագորեն ուժանում էր թուրքիայի մայրաքաղաքի հասարակական-քաղաքական դաղջ մթնոլորտում:

Մեկ տարի անց, ռուս-թուրքական պատերազմը սկսվելու կապակցությամբ Արծրունին Փորթուգալյանին հրավիրեց Թիֆլիս, որպես Արևմտյան Հայաստանի փորձագետ: Փորթուգալյանը մի ամբողջ տարի անցկացրեց «Մշակի» խմբագրությունում սերտորեն հաղորդակցվելով Արծրունու և Բաֆֆու հետ: Հոգևոր աճի առումով դա մի բացառիկ արդյունավետ ժամանակ էր Փորթուգալյանի համար, մի ժամանակ, երբ ձևավորվում էր Հայ ազգային-ազատագրական պայքարի ապագա գաղափարախոսի աշխարհայացքը, և որոշվում էր նրա հետագա ճակատագիրը:

Փորթուգալյանի վկայությամբ, «եթե 1875-ին Արծրունու խորհրդով դեպի Հայաստան դնացած և երկար ատեն հոն մնալով բուն իսկ տեղին ուսումնասիրած չլինեի մեր Հայրենիքի դրությունը, եթե տարիներ ավելի Թիֆլիզի մեջ անցուցած չլինեի Գ. Արծրունու և Բաֆֆիի հետ հարաբերությամբ, այլ մնացած լինեի Կ. Պոլսի մեջ, չպիտի ենթարկվեի այն հանգամանքներին, որոնք Հայրենիքի ազատության գործին մեջ իմ գաղափարների զարգացման և փորձառությունս նպաստեցին և որոնք շղթայաբար իրար-ի-րար կապված հետևանքներով վերջապես 1885-ին ալ մղեցին զիս դեպի Եվ-



րուպա, Հայաստանի վիճակին անծանոթ և անտարբեր մնացած Հայ գաղթականութիւններին մեջ ալ մի շարժում գոյացնելու նպատակով: Հետեւապես Արմենիայի Հրատարակման ալ անուղղակի մի պատճառ եղած կը լինի Արծրունին» («Արմենիա», 1893, №40):

«Արմենիայի» Հրատարակման Համար անմիջական առիթ ծառայեց Փորթուգալյանի բռնազաղթը Վանից Կոստանդնուպոլիս, 1885 թվականին: Ռուս-թուրքական պատերազմից Հետո Փորթուգալյանը վերադարձել էր Վան, որտեղ գրադվում էր մանկավարժական գործունեութիւնը, Հիմնելով Վարժապետանոցը՝ Վանում Հայերի Հայրենասիրական դաստիարակութիւնի դարբնոցը: Վանը ավանդաբար եղել է արեւմտահայութիւնի ազգային-պատարական պայքարի կենտրոններից մեկը:

Փորթուգալյանը, որ ցանկանում էր Համախմբել ազգային ուժերը, ակտիվորեն մասնակցում էր Վանի Հասարակական-քաղաքական կյանքին, ուներ իր զինակիցների խումբը՝ բաղկացած նախկին աշակերտներից, և քաղաքական պայքարում իրիմյան Հայրիկի դաշնակիցն էր: Թուրքական վարչական մեքենան, օգտագործելով իրիմյանի և Փորթուգալյանի Հակառակորդներին, կարողացավ մատնութիւններ կազմակերպել նրանց դեմ և 1885 թվականի դարնանը նրանց վտարեց Վանից:

Զրկվելով սիրած աշխատանքից, իր երախայրիք Վարժապետանոցից, ինչպես նաև առանց գոյութիւնի միջոցների մնացած արեւմտահայ պատանեկութիւնի Հայրենասիրական դաստիարակութիւնի գործը շարունակելու Հնարավորութիւնից Փորթուգալյանը ստիպված եղավ վտարանդել Ֆրանսիա:

Ինչպես Հետագայում գրում էր Փորթուգալյանը, «Թյուրք վարչութիւնի բռնութիւնն էր, որ Հալածեց այս տողեր գրողին, որ ստիպեց Եվրոպա անցնելով ձայն բարձրացունել, աղմուկ ձգել արտասահմանի իր ազգակիցների մեջ, աջակցութիւն փնտռել և արձագանք գտնել»<sup>82</sup>:

Բայց եթէ «Արմենիայի» ստեղծման Համար առիթ ծառայեց թուրքական իշխանութիւնների բռնութիւնը կայսրութիւնի Համար վտանգավոր Հայրենասերի նկատմամբ, ապա լրագրի ստեղծման գլխավոր պատճառը, իհարկե, բուն կայսրութիւնի բռնութիւնն էր Հայ ժողովրդի նկատմամբ: Այդ կապակցութիւնը Փորթուգալյանը ընդգծում էր. «Լոսլայն անցանք Եվրոպա և

<sup>82</sup> «Արմենիայի» հուշարար: Ա տարեկան, Մարտի, 1890, էջ 6:

ձեռնարկեցինք Մարտեյի մեջ ունենալ Հայերեն տպարան և Հրատարակել Հայերեն լեզվով մի ազատ լրագիր, մեր Հարստահարված Հայաստանցի եղբայրների դրուժյունը աշխարհահռչակ դարձունելու, արտասահմանյան Հայերի ուշադրութունը անոնց վրա հրավիրելով աջակցութուն խնդրելու, մեր գաղափարները Հայ ժողովրդին մեջ տարածելու և երկարժամանակյա աշխատությամբ և ուսումնասիրությամբ մեր ստացած փորձառության արդյունքներին համեմատ գործելու նպատակով»<sup>83</sup> :

Լրագրի կազմակերպման գործում աներկբայելի դեր խաղաց Փորթուգալյանի լրագրական ու խմբագրական փորձը: Փորթուգալյանը չունեի ո՛չ հովանավոր կազմակերպչութուն, ո՛չ էլ առանձին անհատ մեկենաս: Եվ առհասարակ Եվրոպայի Հայերի Համար նա անծանոթ մարդ էր: Այդուհանդերձ, այդ «անծանոթ» մարդը կարողացավ Հրաշք գործել առանց որևէ մեկի աջակցության կազմակերպել լրագիրը և անընդմեջ խմբագրել այն 36 տարի շարունակ:

Իր խնայած միջոցներով Փորթուգալյանը ձեռք բերեց Հայկական տառեր և թուղթ, այնուհետև հրատարակութունն սկսելուց մեկևեկես ամիս առաջ Հայտարարություն տվեց իր լրագրի լույս ընծայման, նրա նպատակների ու խնդիրների մասին և բանաժանորդագրություն բացեց լրագրի Համար: Ուշագրավ է, որ Հայտարարության մեջ բացարձակապես խոսք չկար քաղաքականության մասին, ընդհակառակը, այնտեղ ասված էր, որ ստեղծվում է մի լրագիր, որը նպաստելու է Հայ բիզնեսին և արտահայտելու է նրա շահերը:

Այդ կանխամտածված քայլը բավականաչափ դրամական միջոցներ տվեց լրագրին: Միաժամանակ Փորթուգալյանը կարողացավ կազմակերպել փոխառության պարտատոմսեր և Հաջողությամբ իրացնել դրանք: Հավաքած միջոցները Հնարավորություն տվեցին 1885 թվականի հուլիսի 20-ին (օգոստոսի 1-ին) լույս ընծայել լրագրի առաջին Համարը, որի արժեքն էր 10 սանտիմ: Լրագիրը լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ, չորեքշաբթի և շաբաթ օրերին: Փորթուգալյանը միայնակ էր իրականացնում լրագրի լույս ընծայումը մեկ անձի մեջ միավորելով խմբագրին, հեղինակին ու գրաշարին:

Մինչև լրագրի չորրորդ Համարի լույս ընծայումը, թերթն արդեն ուներ 400 բաժանորդ, որոնցից 300-ը գտնվում էին Թուրքիայում: Սակայն Վան Հասած լրագրի առաջին Համարն արդեն նահանգային գրաքննիչ ժողովը

<sup>83</sup> Նույն տեղում, էջ Բ:

վտանգավոր համարեց և արգելեց առաքումը բաժանորդներին: Իսկ չորրորդ համարը լույս տեսնելուց հետո կառավարական հրամանագրով լրագիրը պաշտոնապես արգելվեց Թուրքիայի ողջ տարածքում: Մի քանի ամիս անց, 1886 թվականի հունվարին, ցարական կառավարութունը, որը XIX դարի 80-ական թվականների սկզբից շեշտակիորեն փոխել էր իր քաղաքականութունը Հայկական Հարցի նկատմամբ, արգելեց «Արմենիայի» տարածումը նաև Ռուսաստանում:

ԹՎում էր, թե նոր լրագրին սպասում է սնանկացում: Բայց Փորթուգալյանը ցուցաբերեց արտասովոր հնարամտութուն և կարողացավ փրկել այն: Նա սկսեց լրագիրը արգելված վայրերն ուղարկել մասնավոր նամակների ձևով, ծրարների մեջ: Այնուհետև «Արմենիայի» բաժանորդները, օրինակ, Թուրքիայում, կարգալով լրագիրը, հավաքելով մի քանի համարներ ծրարներով, փաթաթում էին հին հազուստների մեջ և տարածում հրատարակութունը:

Լրագրի արգելումը ոչ միայն չհանգեցրեց նրա սնանկացման, այլև տվեց հակառակ արդյունքը և ծառայեց իբրև լավ գովազդ: Ազգային խնդիրներով չհետաքրքրվող մարդիկ անգամ սկսեցին որոնել արգելված հրատարակութունը: Դրա հետ մեկտեղ հայրենասիրաբար տրամադրված երիտասարդ Հայերը աշխարհի շատ մասերում կամովին ստանձնեցին հալածվող լրագրի անշահախնդիր տարածողների դերը:

Խիստ աճեց լրագրի տպաքանակը: Միջին Հաշվով այն կազմում էր 1000 օրինակ: Նոր բաժանորդներ հավաքելու համար Փորթուգալյանը անցկացնում էր վիճակախազի խաղարկութուններ, որոնց տոմսերը թերթի բաժանորդագրական անդորրագրերն էին: Ում որ երջանիկ համար էր ընկնում, ստանում էր պատկառելի շահույթ 400-ից մինչև 1000 Ֆրանկ: Խմբագիրը արտոնութուններ էր նախատեսում նաև բաժանորդների համար: Այսպես, ով որ կարողանում էր ապահովել «Արմենիայի» հինգ բաժանորդագրութուն, վեցերորդը ստանում էր անվճար:

Փորթուգալյանը օժանդակում էր նաև չունևորներին: Լրագրի հատուկ ծանուցումով նա պատրաստակամութուն էր հայտնում 10 Ֆրանկով բաժանորդագրութուն ձևակերպել այն անձանց համար, ովքեր ի վիճակի չեն պահանջվող գումարը մուծել տարեկան բաժանորդագրության համար (տարեկան բաժանորդագիրը 20 Ֆրանկ էր): Բացի դրանից, տպաքանակի մի մասը անվճար ուղարկվում էր Արևմտյան Հայաստան:

Ֆինանսական լրացուցիչ միջոցներ ստանալու համար Փորթուգալյանը լրագրից բացի մեծ տպաքանակով հրատարակում էր Հայրենասիրական գրականություն էժանագին գրքույկներով Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատության», «Ազատություն Պուլկարիո և կենսագրությունք պուլդար ապստամբապետաց», «Թոմաս Բոցարիս»: 1890 թվականին Փորթուգալյանը հրատարակեց «Արմենիայի հուշարար, Ա տարեկան», 1885-1886 թվականներին «Արմենիայում» ղետեղված առավել հետաքրքիր հոդվածների մի ժողովածու: Իսկ դրանից մի տարի առաջ «Արմենիայի» խմբագիրը համարձակորեն դիմեց մի աննախադեպ քայլի՝ Հայրենական լրագրության պատմության մեջ «Հայոց Հայրենասիրական միություն» կազմակերպության ստեղծմանը, որը աջակցում էր «Արմենիայի» հրատարակմանն ու տարածմանը բոլոր այն վայրերում, որտեղ Հայեր էին ապրում: Կազմակերպության տնօրենը Փորթուգալյանն էր, պատասխանատու քարտուղարը Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան), Վանի ինքնապաշտպանության ապագա հերոսը, լրագրի միակ հաստիքային աշխատողը:

Բայց, իհարկե, լրագրի հաջողությունը ապահովում էին խմբագրի ոչ միայն ֆինանսական հնարամտությունն ու նորարարական կազմակերպական մոտեցումը: Լրագրի բուն բովանդակությունը անչափ հրապուրիչ էր Հայ ընթերցողի համար: Այն պայմաններում, երբ ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ մամուլը գտնվում էին գրաքննության ամենաանողոք աքցանների մեջ, երբ ճշմարտությունը Արևմտահայաստանի մասին մեծ դժվարություններ էր ուղի հարթում դեպի ժողովուրդը, Եվրոպայում սկսել էր լույս տեսնել մի լրագիր, որը հազեցած էր Արևմտահայաստանի մասին թարմ ու արժանահավատ լրատվական նյութերով:

Փորթուգալյանի համար այդ թղթակցություններն ունեին հսկայական նշանակություն, քանի որ նրա արդարացի կարծիքով «Այսօր ամեն Հայ, ըստ տեղին կամ անտեղի կերպով, Հայաստան, Հայաստան կը պոռա. բայց թե հարցնես որ ինչպիսի տեղ է այդ Հայաստանը, կը տեսնես որ բնավ մի որոշ գաղափար չունի... Հույս ունինք որ ամեն կողմի Հայրենասեր Հայերեն կըղուենվի մեր այս հրավեր որ է Հայերին ծանոթացունել իրենց բնակության երկիրը, համոզված լինելով թե պետք է որ նախ մենք մեզ ճանչենք» (1885, №3):

Բայց սխալ կլիներ խոսել «Արմենիայի» զուտ լրատվական բնույթի մասին: Փորթուգալյանը ոչ թե պարզապես հավաստում էր փաստերը, այլ վեր-

լուծում էր դրանք և ցույց տալիս Հասունացած Հիմնահարցերի լուծման նոր ուղիներ: «Արմենիայի» խմբագիրը ոչ թե սոսկ տաղանդավոր լրագրող էր, այլև Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գաղափարախոս:

Լրագրի գործունեությունն առաջին չորս տարիներին Փորթուգալյանի ուշադրությունը բեռված էր երկու Հիմնական գաղափարի վրա: Երկու գաղափարն էլ նոր էին, բայց ազատ, ոչնչով չսահմանափակված հնչեղության պայմաններում լայն արձագանք էին գտել Հայոց աշխարհում:

Առաջին գաղափարը ամփոփ շարադրված էր «Ինչ պետք է անել և ինչ կրնանք անել» հոդվածում (1885, №40): Փորթուգալյանը, վերլուծելով Հայ ազգային-ազատագրական շարժման անցած ուղին, պատրանքային էր համարում տերությունների միջամտությամբ Թուրքիայում խաղաղ բարեփոխումների հետ կապվող հույսերը: Այդ ամենի այլընտրանքը Փորթուգալյանը համարում էր ազգային-ազատագրական Հեղափոխությունը, ապստամբությունը: Նա գրում էր. «Մեր կարծիքով, թեև կը ցանկանք որ խարված լինինք այդ կարծիքի մեջ, թյուրքին խոսք հասկցունելու և աշխարհի ուշադրությունը մեր վրա դարձնելու միակ ելք մնացած է նյութական ճնշումը, Հայերի բողոքը գործնական միջոցներով, ապստամբությունը բռնություն դեմ»:

Բայց Արևմտահայաստանը պատրաստ է արդյոք ապստամբության հարց էր տալիս Փորթուգալյանը և պատասխանում ոչ: Ուրեմն ի՞նչ անել: Պատասխանը համբերատարությամբ, տքնաջան աշխատանքով ապստամբության պատրաստվելն էր: «Փորձառությունը պատրաստվինք և կազմակերպվինք ամենն գործնական և արդյունավոր միջոցին հասնելու համար մի օր: Այդ աստիճանի հասնելու համար, հարկավոր է անցնիլ ներկա կյանքի (բողոքելու, լալու) շրջանին որ հայկական խնդրի մանկական շրջան կը լինի, մինչև որ խնդիրը յուր կատարելության հասակն առնե և գործի ձեռնարկվի»:

Մյուս գաղափարը իր մարմնավորումն է գտել «Պետք է գծել մեր ծրագիրը» հոդվածում (1886, №66): Փորթուգալյանը ընթերցողին բերում էր այն մտքին, որ ազգային-ազատագրական Հեղափոխությունն անհնար է իրականացնել առանց Հեղափոխական կազմակերպության: Կազմակերպությունը այն անհրաժեշտ լծակն է, առանց որի Հեղափոխության գաղափարը կխամրի ու կկործանվի: Այդ կապակցությամբ նա ցանկություն էր հայտնում, որ «Հայկական համատարած մի ընկերություն լինի, որ Եվրոպայի, Ամերիկայի,

Ափրիկեի և նույն իսկ Ռուսիայի և Թյուրքիայի մեջ իրեն գործակից ճյուղեր ունենա հայ դատին պաշտպանության»:

Այնուհետև Փորթուգալյանը միս ու արյուն է հաղորդում այդ գաղափարին, ուրվագծում կազմակերպական առումով. «Պետք է ամենուրեք ընդարձակված և արմատացած ճյուղերով մի այնպիսի գորություն տալ կեդրոնին, որ ի հարկին մեկ ձայնով, միևնույն բույնի մեջ, մեկ մարդի պես վեր կանգնին հայեր շարժելու և իրենց բողոքը լսել տալու համար: Պետք է, որ ամեն ճյուղեր իրավունքներով և պարտքերով կապված լինին կեդրոնին հետ և փոխադարձապես. պետք է, որ ամեն մասնակցող հայ ամսական կամ շաբաթական մի տուրք վճարե ազգային դատի հատկացած ընկերության սնտուկին»:

Փառտարկելով նման կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը Փորթուգալյանը նկատում էր, որ «եթե մենք 1876-77-ին, հայ ազգի ոգևորության ժամանակ, մի այսպիսի կազմակերպություն հաստատած լինեինք և առանց թուլանալու հարատեկինք, այժմ կարող կը լինեինք բավական մեծ գործեր կատարելու: Մենք այն ատեն միայն կը սկսինք շարժիլ գործելու, երբ հրդեհը արդեն տան առաստաղը բռնած է»:

Ազգային հեղափոխության և հեղափոխական կազմակերպության գաղափարները Փորթուգալյանը քարոզում էր տարիներ շարունակ, բայց 1889 թվականին նա ընթերցողին ներկայացրեց արդեն ոչ թե որոշակիորեն փոխկապակցված առանձին գաղափարներ, այլ արդեն ազգի ազատագրության կոնցեպցիան:

Լրագրի 50-53-րդ համարներում Փորթուգալյանը հրատարակեց «Մեր ուղղությունը» ծրագրային ծավալուն հոդվածը: Հոդվածի սկզբում նա հուշակում էր «Արմենիայի» Հիմնական նպատակներն ու խնդիրները. «Մեր գործունեության գլխավոր մասը եղած է և պիտի լինի տարածել հայ հայրենիքի ազատության գաղափարներ և ամրապնդել ու զորացունենլ արդեն կազմված գաղափարներն»:

Խոսելով ազատության մասին՝ Փորթուգալյանը նշում էր, որ առաջնությունը տալիս է առաջին հերթին ազգի ազատագրությանը հասնելուն. «Մեր նպատակն է ամենեն առաջ որ տաճկական Հայաստանի ժողովուրդը ազատվի զինք հարստահարող թրքական լուծեն և իրավունք ունենա անկախաբար ինքզինք կառավարելու և իրեն համար օրենքներ դնելու»:

Փորթուգալյանը ամենևին էլ չէր ժխտում հայ հասարակության սոցիալական հարցերի, նրա ապագա կառուցվածքի կարևորությունը (լրագրում

Հանդիպում են մի շարք բանավիճալին Հողվածներ այն մասին, որ դեռ վաղաժամ է Հայ իրականության մեջ տարածել սոցիալիզմի գաղափարները), նա պարզապես գտնում էր, որ դրանով պետք է զբաղվել անկախության Հասնելուց հետո, ըստ որում, ոչ թե կատարյալ անկախության Հասնելուց հետո, այլ ինքնուրույնության շրջանակներում. «Արմենիայի» նպատակը էլ այժմ են որոշել, թե Հայաստանի վարչական դրությունը սահմանադրական-միապետական պիտի լինի, Հանրապետական թե ընկերավարական... Երբ կարենանք ինքնօրինության իրավունք ստանալ, այն ժամանակ բուն իսկ Հայաստանի մեջ Հայաստանցի ժողովրդի կամքին և տեղական պահանջներին Համեմատ կը խմբագրվին վարչական օրենքներն և ոչ թե այժմ են Եվրոպայի մեջ և «Արմենիայի» խմբագրատան մեջ»:

Ազատության Հասնելու միջոց Փորթուգալյանը, ինչպես և առաջ, Համարում էր Հեղափոխությունը: Բայց Հեղափոխություն կատարելուց առաջ Հարկավոր էր Համապատասխան Հող նախապատրաստել դրա Համար. «Բունի միջոցների գործադրության պետք է դրդել, պետք է սովորեցնել Հայաստանի մեջ գտնվող Հայերն թե՛ խոսքով, թե՛ գրչով և թե՛ մանավանդ գործով օրինակ Հանդիսանալով: Ուրեմն այս նպատակի Հասնելու Համար պետք են անոր նվիրված Հրատարակություններ, կենդանի խոսքով պրոպագանդա անողներ և մանավանդ զենքը ձեռքին կովոզ խումբեր, որոնք ժողովրդին աչքին առջև գործնականապես օրինակ, քաջալեր և օգնական Հանդիսանան դիմադրելու Համար բռնապետության»:

Զինված խմբերի ստեղծմանը Փորթուգալյանը առանձին ուշադրություն էր նվիրում, քանի որ, գտնում էր նա, դեթ մեկ այդպիսի խմբի առկայությունը կատեղծի ազատագրական պայքարի Հիմքը. «Երբ մի այդպիսի փոքրիկ խմբակ կազմվի և քիչ շատ Հաղողություններ ձեռք բերե, նա կեդրոն կդառնա և սիրտ ունեցողներն իր շրջակայներե կերթան կը միանան անոր Հետ և բավական մի խումբ կը կազմեն խմորելու Համար Հայ ժողովուրդը թյուրք կառավարության դիմադրելու ոգովով»:

Փորթուգալյանի կոնցեպցիան Հետագա զարգացում ստացավ 1893 թվականին «Հեղափոխական գործը» Հողվածաշարում (№61-66): Այստեղ ազգային Հեղափոխության տեսությունն ու գործնականը լրացվում էին Հաշվի առնելով անցած չորս տարիներին թուրքիայում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները:

Նախ Փորթուգալյանը մատնանշում է Հեղափոխության գաղափարը ժողովրդական զանգվածների գիտակցության մեջ լայնորեն արմատավորելու անհրաժեշտությունը, առանց որի չէր կարող լինել հաջողության հասնելու հույս. «Եթէ ժողովուրդը տակավին ընդունակ չէ այդ գաղափարները ըմբռնելու ինչպես որ պետք է, եթե գաղափարի վսեմությունը վրա հասնաք չունի որ անով ոգևորվի և ոչ ալ գործին վրա հասնություն որ գիտնա թե ի՞նչ պետք է անե, այդ պայմաններին մեջ Հեղափոխությունը դեռ չը հաջողիր»:

Պայքարելով Հեղափոխության գաղափարի զանգվածայնության, համաժողովրդականության համար, Փորթուգալյանը միաժամանակ նախադաշնակցանքում էր տեղային, առանձին ելույթների ուղիով ընթանալու գայթակղություններից. «Պետք է աշխատել որ մեր շարժումներ դեպի Հեղափոխություն տանին մեզ և ոչ թե աննպատակ շարժումներ լինին լոկ ցույցի համար»:

Փորթուգալյանի կարծիքով, առանձնահատուկ վտանգ է պարունակում ահաբեկչությունը. որը նա վճռականորեն բացառում էր Հեղափոխության զինանոցից: Տարբերություն դնելով ահաբեկչական ու Հեղափոխական միջոցների միջև գրում էր. «Վրեժխնդրական միջոցները միմիայն քանդելու կը ծառայեն, իսկ Հեղափոխական միջոցները քանդելու և միանգամայն քանդվածին տեղ մի նոր շենք բարձրացնելու կը ծառայեն»:

Ըստ Փորթուգալյանի, չարիք է նաև դիկտանտությունը, ոչ պրոֆեսիոնալ վերաբերմունքը Հեղափոխական գործին. «Մեր մեջ նույն իսկ գործիչներեն կան բավական թիվով այնպիսիներ, որոնք գործին դեռ անծանոթ, անոր համար անպատրաստ, անհասկանալի վիճակի մեջ գտնվելով, ափելի վնասակար կը դառնան գործին համար քան թե անտարբերները»:

Ընդհանրացնելով վերը ասվածը Փորթուգալյանը դարձյալ, ինչպես 1886 և 1889 թվականներին, հայ Հեղափոխականներին խորհուրդ էր տալիս հեռու մնալ չնախապատրաստված ելույթներից. «Այս պատճառով է որ մենք կը պոռանք և կը կրկնենք թե Հեղափոխության համար պատրաստություն պետք են. որպեսզի վտանգները կարելի եղածի չափ քիչ լինեն և ի դուր չանցնին, որպեսզի մեր զոհողություններն օտարը միայն չհասի օգուտ քաղելով մեր անպատրաստ վաճակե»:

Այս մարզաբեական խոսքերով էր ավարտվում «Արմենիայի» գաղափարական որոնումները և ձեռքբերումների շրջանը XIX դարի վերջին:



Եթե «Արմենիայի» Հրատարակության պատմությունը կապված է Փորթուզալյանի անվան Հետ, ապա «Հնչակի» Հրատարակության պատմությունը նրա գոյության առաջին տասը տարում նույնքան էլ կապված է Ավետիս Նազարեկյանի անվան Հետ:

Նազարեկյանը ծնվել է 1866 թվականին Թիֆլիսում, ունեւոր ընտանիքում: Սովորել է նշանավոր Հայագետ Ավետիք Եզեկյանի մոտ, գիտեր Հայերեն գրական լեզուն, նրա բարբառները, Հիանալի տիրապետում էր ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներին, ուներ անժխտելի գրական ընդունակություններ, գրում էր արձակ և բանաստեղծություններ, արտակարգ Հոեւոր էր, ուներ Համոզելու բանավիճային տաղանդ: Պատանու ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել նրա ազգականը նշանավոր գրող Մերենցը:

Ավարտելով Թիֆլիսի արական դիմնագիտական Նազարեկյանը ուսումը շարունակում է Պետերբուրգի Համալսարանում: Դեռ Թիֆլիսում եղած ժամանակ կապեր է Հաստատում Հայ նարոդնիկների Հետ, Պետերբուրգում ամբողջովին տարվում նարոդնիկական տարերքով: Երկյուղ կրելով բռնադատություններից ստիպված է լինում վտարանդվել Ֆրանսիա, Փարիզ, որտեղ ընդունվում է Սորբոնի Համալսարան:

Նազարեկյանը Փարիզում ծանոթանում է իր Հայրենակից, նարոդովուական վտարանդի Մարո Վարդանյանի Հետ: 1886 թվականի ամռանը արդեն պսակված դուլգը ժամանում է Ժնև, որտեղ ծանոթանում է արևելահայ երկու Հայրենակիցների Ռուբեն Խանազատյանի և Գաբրիել Կաֆյանի Հետ:

Քառյակի մտքերի տիրակալը «Արմենիան» էր: Ինքը՝ Նազարեկյանը, Փորթուզալյանի ջերմեռանդ կողմնակիցն էր և «Արմենիայում» Հրապարակված առավել սուր թղթակցությունների Հեղինակը: Իսկ երբ «Արմենիայում» Հնչեց Համահայկական Հեղափոխական կազմակերպություն ստեղծելու կոչը, Նազարեկյանը, քառյակի Համաձայնությամբ, Փորթուզալյանին Հղեց մի ուղերձ, որով առաջարկում էր ստեղծել Հիմնադրամ կազմակերպության ստեղծմանը օգնելու և Փորթուզալյանին Հիմնադրամի նախագահ ընտրելու Համար:

Փորթուզալյանի պատասխանը ցնցեց Նազարեկյանին: «Արմենիայի» խմբագիրը պատասխանում էր, որ Հնարավոր չՀամարելով իր անձնական

մասնակցութիւնը Հեղափոխական կազմակերպութեանը, չի կարող դառնալ Հիմնադրամի կտակահատար:

Վրդովված Նազարեհեկյանի կարծիքով, Փորթուզայանի նման դիրքորոշումը այլ բան չէր, քան դավաճանութիւն սեփական ժողովրդի նկատմամբ: Նման Հուզումնալից ոգով էլ Նազարեհեկյանը գրեց մի պամֆլետ «Հայակեր քամելեոն» խորագրով, որը այնուհետեւ բազմացվեց և վերջ գրեց Նազարեհեկյան-Փորթուզայան փոխհարաբերութեանը:

Նազարեհեկյանը Հանգեց այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է անձամբ ստեղծել Համահայկական Հեղափոխական կազմակերպութիւն և անձամբ էլ Հրատարակել նրա տպագիր օրգանը:

Թերթ Հիմնելու, տպարան, տառեր, թուղթ գնելու Համար փող էր Հարկավոր: Խմբի անդամներից միայն Նազարեհեկյանն էր վճարուհակ, բայց նրա ունեցած ֆինանսներն էլ բավական չէին նման նախաձեռնութեան Համար:

Նազարեհեկյանն ու նրա գործակիցները ստիպված էին ժնկի ուսանողական միջավայրում թատերական ներկայացումներ կազմակերպել կովկասյան թեմաներով, որպեսզի անհրաժեշտ գումար Հավաքեն լրագրի կարիքները Հոգալու Համար: Վերջապես պահանջվող գումարը Հավաքվեց և ուղարկվեց Վիեննա Միտթարյանների տեղական միաբանութեանը Հայերեն տպագրական տառեր պատվիրելու Համար: Տպարանի ստեղծման գործում նրան օգնեց Փարիզից ժամանած իր բարեկամ Տիգրան Նավասարդյանը, որ Սորբոնի Համալսարանի ուսանող էր և Հայտնի էր որպէս Հայ բանահյուսութեան Հավաքող: Այդպէս ստեղծվեց տպարանը, որը տեղավորված էր Նազարեհեկյանների փոքրիկ բնակարանի խոհանոցի մի անկյունում:

Տպագրական գործը Նազարեհեկյանը սովորեց նարոգովուցիների ժնկի տպարանում: Ծագեց մի նոր խնդիր ինչպէս անվանել լրագիրը: «Զանգ», «Ահագանգ», Հանկարծ Նազարեհեկյանի մեջ միտք Հղացավ «Հնչակ» նկատի ունենալով այն դերը, որ Գերցենի «Կոլոկոլը» կատարեց ուսւ ժողովրդի զարթոնքի գործում:

1887 թվականի նոյեմբերի 25-ին լույս տեսավ «Հնչակ» թերթի առաջին Համարը՝ նշանավորելով առաջին Համահայկական Հեղափոխական կուսակցութեան և Հայկական մամուլի պատմութեան մեջ առաջին կուսակցական տպագիր օրգանի ծնունդը:

Լրագրի լույս ընծայման գործի սկիզբը դժվար էր: Նախ և առաջ այն պատճառով, որ լրագրի գոյութեան առաջին երկու տարում Հողածնների միակ

հեղինակը Նազարբեկյանն էր, փաստորեն միայն ինքն էլ վարում էր ամբողջ թերթը, իսկ հրատարակութայն առաջին տարում ինքն էլ ապահովում էր շարվածքը: Նրա գործակիցները մի քանի անգամ փորձեցին հողավածներ գրել, սակայն հայերեն գրական լեզվի թույլ իմացությունը և գիտելիքները անհրաժեշտ հիմքի բացակայությունը անհաջողության էին մատնում այդ փորձերը:

«Հնչակը» թղթակցություններ չէր ստանում Արևմտյան Հայաստանից, ասենք, չէր էլ կարող ստանալ: Եվ Նազարբեկյանը, հիանալի տիրապետելով հայկական բարբառներին, մինչև թղթակիցների լայն ցանցի ստեղծումը, Մուշից, Վանից, Կոստանդնուպոլսից եկած լուրերը վերաշարագրում էր ուրիշ թերթերից գրանք իր լրագրում գետեղելով իբրև բնագրեր: Այն տպավորությունն էր ստեղծվում, որ «Հնչակը» գոյություն արդեն առաջին իսկ օրերից թղթակիցների լայն ցանց ուներ տեղերում: Նրա մյուս հնարամտությունն այն էր, որ խուզարկու լրտեսներին մոլորության մեջ դրելու նպատակով դիտավորյալ թաքցնում էր խմբագրության և տպարանի գտնվելու վայրը, ժնեկի փոխարեն նշելով Մոնպելիեն, Փարիզը և երևակայական հայկական ազատ տպարանը Լոնդոնում: Լրագրի տպաքանակը 1890 թ. հասնում էր հազարի:

Նազարբեկյանը դիմում էր նաև այսպիսի մի հնարամտության. լրագրի վերջին էջում շնորհակալություն էր հայտնում մտացածին անձանց, որոնք իբր գրամական նվիրատվություններ են ուղարկել թերթին ստեղծելով այն տպավորությունը, որ նորահայտ լրագիրն արդեն ունի կշիռ, հեղինակություն և կողմնակիցներ, որոնց օրինակին հարկավոր է հետևել:

Սկզբնական շրջանում լրագրի ֆինանսավորման խնդիրը անչափ ծանր էր, առավել ևս, որ Նազարբեկյանը մշակել էր այն սկզբունքը, որ հեղափոխական լրագիրը պետք է լինի անվճար: Մինչդեռ փող էր հարկավոր ոչ միայն լրագիրը տպագրելու, այլև տպաքանակը տարբեր կողմեր ուղարկելու համար, ըստ որում, «Հնչակը» «Արմենիայի» օրինակով թուրքիա և Ռուսաստան էր ուղարկվում բարակ թղթի վրա տպագրված, ծրարներով: Գաղտնապահության նկատառումներից ելնելով ծրարներն ուղարկվում էին Եվրոպայի զանազան քաղաքներից:

Սկզբնական շրջանի անթիվ-անհամար դժվարությունների մեջ երբեմն լինում էր նաև Հաջողություն: Պետք է ասել, որ գրաշար Նազարբեկյանը նկատելիորեն զիջում էր խմբագիր Նազարբեկյանին: Ստեղծագործական, ա-

ուսմել ևս բանաստեղծական խառնվածք ունեցող մարդու համար լրագիրը շարելու գործը հիրավի դժոխսային աշխատանք էր: Բարեբախտաբար, գտնվեց մի որակյալ գրաշար, որը մոտ երեք տարի իր վրա էր վերցրել «Հնչակը» շարելու գործը: Դա հայոց լեզուն չիմացող վրացի ուսանող Եվգենի Վաչագան էր՝ Նազարբեկյանների ու Խանազատյանի բարեկամը: Լինելով հմուտ գրաշար, նա սովորեց հայերեն այբուբենը և անվճար շարում էր «Հնչակը»:

Լրագրի հրատարակության վայրերի աշխարհագրությունը բավական ընդարձակ է. Ժնև (1887-1892), Աթենք (1892-1894), Լոնդոն (1894-1904): Տվյալ փաստը բացատրվում է սոսկ քաղաքական նկատառումներով: Բանն այն է, որ լրագրի խմբագրական մարմինը սկզբում բաղկացած էր հիմնադիրներից, այնուհետև Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության անդամներից: Ժնևյան գործունեության հինգ տարուց հետո, երբ կուսակցությունը արդեն վերածվել էր համահայկական հեղափոխական կազմակերպության թուրքիայում իր մասնաճյուղերի ընդարձակ ցանցով, որոշվեց փոխադրվել Աթենք, այդ տարածաշրջանին ավելի մոտ:

Երկամյա գործունեությունը Աթենքում ընթանում էր թուրքական կառավարության գործակալների ահաբեկչության իրավիճակի մեջ: Կազմակերպվում էին տպարանի կողպուղտներ, մահափորձեր խմբագրության անդամների դեմ: Ի լրումն այդ ամենի, թուրքական կառավարությունը մշտական ճնշում էր գործադրում Հունաստանի վրա, կարողանալով հասնել այն բանին, որ Հունական իշխանություններն արտաքսեն Հնչակյաններին: Երկամյա հարկադիր ընդմիջումից հետո լրագիրը նորից վերսկսեց հրատարակությունը Լոնդոնում, ուր փոխադրվել էր կուսակցության կենտրոնը: Եթե մինչ այդ լրագիրը ամսաթերթ էր, ապա գոյության լոնդոնյան ժամանակաշրջանում դարձավ երկշաբաթաթերթ:

Լրագիրը ավանդաբար ունեցել է հետևյալ կառուցվածքը առաջնորդող Հոգված, միջազգային կյանք, թղթակցություններ (հայկական կյանք), պաշտոնական հաղորդումներ, գրական տեսություն: Լրագիրը հանգամանորեն լուսաբանում էր արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական աղետալի վիճակը ճշգրիտ տեղեկություններ հաղորդելով հայ բնակչության կեղեքումների, ջարդերի և ցեղասպանության, նրա հերոսական ինքնապաշտպանության, Տաճկահայաստանում Հնչակյան կուսակցության ծավալած հեղափոխական գործունեության մասին: «Հնչակի» շնորհիվ միջազգային հասարակայնությունը առաջին անգամ իմացավ Կարինում և Կոս-

տանդնուպուտում տեղի ունեցած բողոքի ցույցերի, Սասունում, Զեյթունում, Վանում ծավալված կռիվների, ամբողջ ազատագրական պայքարի մասին: «Հնչակը» միջազգային մամուլի տեսություններ էր դետեղում Հայկական հարցի մասին արտատպելով առավել կարևոր հոդվածները:

Որպես կուսակցական մամուլի դասական օրինակ, «Հնչակը» ապահովում էր Հնչակյան կուսակցութայն ստրատեգիայի ու տակտիկայի լայն տարածումը ժողովրդական զանգվածների մեջ: Ուստի մեթոդաբանական տեսակետից հիմնավորված կլինի «Հնչակ» թերթի, և ամբողջ Հայ կուսակցական մամուլի պատմությունը, քննել Հենց այդ կուսակցությունների գաղափարաքաղաքական էվոլյուցիայի պատմութայն հետ օրգանական կապի մեջ:

Լրագրի առաջին համարում «Հրատարակութայն մասին» առաջնորդող հոդվածում Նազարբեկյանը տալիս էր լրագրի ապագա գործունեութայն համառոտ բանաձևը. «Առաջացնել Հայ ժողովրդի փրկութայն խնդիրը, փաստաբանել ու պաշտպանել այդ խնդիրը և պատերազմել այդ խնդրի համար»:

Այնուհետև, բացահայտելով այդ բանաձևը, Նազարբեկյանը մատնանշում էր. «Ունենալ ազատ խոսք, իբրև միջոց ազատաբար դիտելու ու քննելությունը բաժայ ժողովրդային ընդհանրութայն կյանքի կողմերը, հրապարակ Հանելու այն բոլոր թշվառությունները, որ վաղուց դարձել են նրա միակ բաժինը և մատնանիշ անելու այդ ժողովրդի կոչումը, որոշելու այն միջոցներն ու նպատակները, որոնք պիտի տանեն նրան դեպի մեկ ապահով կյանք, դեպի մի կյանք, որ միջոց կուեննա ազատ կերպով զարգանալու և ծաղկելու. ահա ընդհանուր խոսքերով, այս հրատարակութայն շարժառիթները»:

Ոչ միայն «Հնչակ» թերթի, այլև ամբողջ ազգային-ազատագրական շարժման համար նշանակալի իրադարձություն եղավ կուսակցութայն ծրագրի հրապարակումը լրագրի 11-12-րդ միացյալ համարում (հեղինակ՝ Նազարբեկյան):

1888 թվականի ծրագիրն ուներ ստորադաս երկաստիճան կառուցվածք և բաղկացած էր երկու մասից մինիմում և մաքսիմում ծրագրերից: Մինիմում ծրագիրն ամբողջովին նվիրված էր ազգային հարցին, ըստ որում, դրա գործադրման ոլորտը բացառապես Արևմտյան Հայաստանն էր. «Թյուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական քաղաքական ազատություն և ազգային անկախություն, որոնք և դառնում են մտակա նպատակ»:

Միայն լուծելով ազգային հարցը, ձեռք բերելով անկախութուն և քաղաքական լրիվ իրավունքներ գտնում էին Հնչակյանները, կարելի կլինի կենսագործել մաքսիմում ծրագիրը՝ ապագա Հասարակարգի կառուցումը Հնչակյան կուսակցության սոցիալական պատկերացումներին Համապատասխան:

Հնչակյանները ի՞նչ միջոցներով էին ցանկանում իրացնել մերձավորագույն նպատակը: Մրազիրը մատնանշում էր, որ «միջոցն է՝ Հեղափոխությունը, այսինքն՝ պետք է բռնի կերպով կերպարանափոխել, Հեղաշրջել ներկա Հասարակական կազմակերպությունը Թյուրքաց Հայաստանում, գործի դնելով ժողովրդական ապստամբությունը»:

Այսպիսով, ծրագրում հստակ որոշված էր ազգային-ազատագրական պայքարի ստրատեգիան Հեղափոխություն, Համազգային ապստամբություն:

Իսկ այդ պայքարի տակտիկան Հետևյալն էր: Մրազրի առաջին հրատարակության հիմքում դրված էր Ռուսաստանի «Նարոդնյայա վոլյա» կուսակցության գործադիր կոմիտեի ծրագիրը (1879 թ.): Այդ ընտրությունը պայմանավորված էր ինչպես Հնչակյան կուսակցության հիմնադիրների նարոդովոլյան անցյալով, այնպես էլ այն Հանգամանքով, որ «Նարոդնյայա վոլյան» բռնապետության դեմ զինված պայքար մղող ոչ պառլամենտական անլեզալ կուսակցության լավ ուսումնասիրված, միջազգային օրինակ էր:

Այս առումով Հարկավոր է նշել նարոդովոլցիների և Հնչակյանների տակտիկական զինանոցի նույնականությունը: Նարոդովոլակական զաղափարները ստեղծագործաբար զարգացվել էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խնդիրներից բխող մի շարք դրույթների ձևով: Նարոդովոլցիների տակտիկայի չորս կետերը՝ պրոպագանդա-ագիտացիա-աՀարեկչություն-կազմակերպություն, պահպանելով ավանդական նարոդովոլակական ձևը, հագեցվել էին խիստ հայկական բովանդակությամբ:

Նարոդովոլցիների ծրագրից վերցրած զուգահեռների հետ միասին, Հնչակյաններն առաջ էին քաշում սեփական ինքօրինակ տակտիկական դրույթներ: Օսմանյան կայսրությունը եղել է ժողովրդների բանտ և դատան ճշման էր ենթարկում ինչպես Հայերին, այնպես էլ կայսրության մյուս ազգերին ու ազգություններին: Այդ փաստը չէր կարող արտացոլում չգտնել ծրագրում. «Վաստակել Հայ ժողովրդին վիճակակից Հայաստանի մյուս ընկիչների ու ցեղերի, որպիսիներ են ասորիները, եզդիները, քյուրդերը և

այլն, Համակրութիւնը դեպի Հայ Հեղափոխական գործը և նրանց աջակցութիւնն այդ գործում»:

Տակտիկայի տեսակետից Հնչակյանների ծրագրում կարևոր նշանակութիւն ուներ մերձավորագույն խնդրի իրացման ժամանակի որոշումը. «Որևէ պատերազմ մղած այս կամ այն օտար պետութեան Թշուրքիայի դեմ պետք է Համարել Հարմար ըստ Հեղափոխականների Համար իրենց մոտակա նպատակն իրագործելու»:

Հնչակյանների ազգային կոնցեպցիան, որը նվիրված էր Արևմտահայաստանի ազատագրմանը թուրքական լծից, ավարտվում էր հետևյալ հեռանկարով. «Թշուրքահայ ժողովրդի ազգային անկախութիւնն ու քաղաքական ազատութիւնը ձեռք բերելուց ու Հաստատելուց հետո՝ այդպիսի զորութեամբ շարունակել ընդհանուր Հայութեան ազատութեան գործը, ազատել օտարների լծից ուսահային ու պարսկահային և կազմել այդ երեքից մի դաշնակցական ուսմկապետական Հանրապետութիւն, որ Համայն Հայութեան Համար ճամբա կրացն դիմելու դեպի հեռավոր նպատակը»:

Նկատենք, որ քաղաքական և ոչ մի կուսակցութիւն այն ժամանակ, Հնչակյան կուսակցութիւնից բացի, իր առջև խնդիր էլք դնում Հասնել ինչպես Արևմտահայաստանի, այնպես էլ Ռուսահայաստանի և Պարսկաստանի կազմում մնացած Հայկական Հողերի կատարյալ անկախութեան և միավորման մեկ Հզոր, անկախ ժողովրդավարական պետութեան մեջ:

Իսկ ո՞րն էր Հնչակյանների վերջնական նպատակը: Ծրագրում ընդգծվում էր սոցիալիստական պատկանելութիւնը և կուսակցութեան Համապատասխան սոցիալական ընտրութիւնը. «Հնչակի» խումբն իր հիմնական Համոզումներով լինելով սոցիալիստ, այդ Հասարակական կազմակերպութիւնը Հայտնվում է նրա իդեալը, նրա հեռավոր նպատակը Հայ ժողովրդի ու նրա Հայրենիքի վերաբերութեամբ»: Պետական կառուցվածքի առումով ծրագիրը կրկնորդում էր ժողովրդավարական սոցիալիստական պետութեան նարոդնիկական տեսական նմուշը (օրենսդիր ժողով և այլն):

Այսպիսով, եթէ Հնչակյան կուսակցութիւնը առաջին սոցիալիստական կուսակցութիւնն է, ապա նրա տպագիր օրգանն էլ առաջին սոցիալիստական թերթն է Հայ իրականութեան մեջ: Լրագիրը առանձնահատուկ ավանդ է ներդրել սոցիալիստական գաղափարների տարածման գործում: Շոշափելով լրագրի էջերում առաջ քաշվող սոցիալիստական գաղափարները պետք է ասել, որ դրանք սկզբնական շրջանում ուսու նարոդնիկների Համայնքային

սոցիալիզմի շրջանակներից դուրս էլին գալիս: Սակայն, արդեն 1889 թվականից սկսած Հնչակյանների սոցիալիստական կոնցեպցիան սկսել էր զարգացում ապրել դեպի մարքսիստական ուղղութայան սոցիալ-դեմոկրատիզմը: Անկախ այդ գաղափարների բովանդակությունից, որը փոփոխվում էր զարգացման ընթացքում, «սոցիալիզմ» Հասկացության մտնելը շրջանառություն մեջ Հարստացրեց Հայ Հասարակական-քաղաքական միտքը:

Որպեսզի լրագրի տվյալ ժամանակաշրջանի գաղափարաքաղաքական ծրագիրը Հնարավորին չափ լրիվ լինի, անհրաժեշտ է կանգ առնել Նազարբեկյանի երկու ծրագրային Հոդվածների վրա: Դրանցից մեկը, որը վերնագրված էր «Հայկական գործի մի քանի խնդիրների մասին», տպագրվել էր 1889 թվականի №4-ում: Դա Հայ իրականության մեջ առաջին տեսական Հոդվածն էր նվիրված պետական անկախություն և մարտնչական Համալիր Հիմնահարցին և այդ գործընթացում ազգայնականություն ունեցած տեղին:

Նազարբեկյանը դնում էր Հարցերի լայն շրջան. ինչպիսի՞ն են պետական անկախության բնույթն ու բովանդակությունը, ազգայնական է արդյոք ամեն մի ազգային-ազատագրական շարժում, ո՞րն է այն սահմանը, որը ազգայինը բաժանում է ազգայնականից:

Պատասխանելով առաջադրված Հարցերին Հնչակյանների պարագլուխը միաժամանակ սպառնիչ պարզաբանումներ էր տալիս իր կուսակցության դիրքորոշման վերաբերյալ: Նազարբեկյանը, մասնավորապես, գրում էր. «Ի՞նչ է նշանակում ազգային անկախություն ընդհանրապես: Դա ուրիշ ոչինչ էլ, եթե ոչ՝ միմիայն անջատվել, զատվել թյուրքիայից և ունենալ սեփական Հայկական ինքնուրույն կառավարություն: Բայց ինչպիսի՞ կերպարանք պիտի կրի այդ սեփական կառավարությունը, երբ թյուրքահայերի ազգային անկախությունն իրագործվի, - ահա Հարցը»:

Նեղինակը նախազգուշացնում էր, որ «կուրացած լոկ մեր ազգային անջատման զգացումով... և ի վերջո մեկ անհատական կառավարությունից ազատվելով՝ կընկնենք մեկ ուրիշ, թեկուզ Հայ, անհատական կառավարության ձեռքը, որը դարձյալ չարիք է ժողովրդի Համար: Այնուհետև նոր ցավ, նորից երազել ազատության մասին»:

Ամփոփելով իր խորհրդածությունները՝ Նազարբեկյանը մատնանշում էր. «Հայկական գործը պարզապես ազգայնական գործ էլ, այլ նա իսկապես մարդկային գործ է, որը թյուրքահայ ազգային անկախության Հետ միասին



անրաժան կերպով դնում է և՛ քաղաքացիական, և՛ մարդկային ընդարձակ իրավունքներ ձեռք բերելու պահանջը»:

Ամբողջ Հոդվածի միջով կարմիր թելի նման անցնում էր Համամարդկային արժեքների առաջնություն միտքը. «Զարգացած հայր չը պիտի գտնե, բաժանե Հային, Հայ ազգը մնացյալ զարգացած մարդկությունից, դարձնելով Հային ու նրա ինտերեսները մեկ օազիս այլ ազգերի և նրանց ինտերեսների վերաբերությամբ: Այլ ընդհակառակը, նա պիտի աշխատե գտնել, մատնանիչ անել ընդհանուր կապը Հայկական և զարգացած մարդկության ինտերեսների մեջ, նա պետք է աշխատե միախառնել այդ ինտերեսները և Հայության ձգտումները դնել Հանրամարդկային մեծ ձգտումների շարքը, քանի որ այդ ինտերեսների, այդ ձգտումների վերջնական նպատակն է ոչ թե միմիայն այս կամ այն ազգի, այլ Հանրամարդկային բարօրությունը»:

Այս գաղափարների օրգանական շարունակությունը եղավ Նազարբեկյանի Հոդվածը գետեղված թերթի 1891 թվականի №12-ում: Նա գտնում է, որ անհրաժեշտ է միավորել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ջանքերը և կազմակերպել նրանց Համընդհանուր ապստամբություն. «Ճնշված ազգերի... ընդհանուր ապստամբությունը ամեն տեսակ բռնության դեմ մի վսեմ, մի սուրբ գործ է և այդ ազգերի միահամուռ ու Համերաշխ Հեղափոխական գործունեությունը միայն կարող է նրանց փրկել ստրկությունից և տալ նրանց միջոցներ Հասնելու իրենց մարդկային կատարյալ զարգացման, ազատության ու բարօրության»:

Հետագա որոնումներն ու խորհրդածություններն այդ ուղղությամբ Հանգեցրին այն բանին, որ շուտով լրագիրն սկսեց ժողովրդականացնել Արևելքում բոլոր փոքր ազգերի անկախ Ֆեդերացիայի գաղափարը, երբ վերջիններս ազատագրվեն թուրքական լծից: Երկար ժամանակ գտնվելով մի երկրում, որը ավագազույն Ֆեդերացիան էր Եվրոպայում, Հնչակյաններն ուսումնասիրում էին ազգային հարցի լուծման շվեյցարական փորձը և այն գտնելով կառուցողական, դրանով Հարստացրին իրենց տեսական զինանոցը:

Երբ կուսակցությունը խոսքից անցավ գործի, Թուրքիայում ստեղծվեց մասնաճյուղերի լայն ցանց, և ակտիվ գործողություններ սկսվեցին այդ տարածաշրջանում, լրագիրը աստիճանաբար Հեռացավ տեսական որոնումների ավանդույթից և դարձավ Հեղափոխական ազգային-ազատագրական շարժման խոսափող:

Եվ միայն 1897 թվականին, Հանրագումարի բերելով կուսակցութայն տասնամյա գործունեութայն արդյունքները, կշռադատելով նվաճումներն ու կորուստները, Նազարբեկյանը «Հնչակի» էջերում բարձրացրեց տեսական մի նոր Հիմնահարց, որը սերտորեն կապակցված էր պրակտիկայի հետ: Այդ Հիմնահարցը ազգային-ազատագրական պայքարի բարոյախոսությունն էր:

Այնպես, ինչպես լեռնային զուլալ գետակը կարող է դառնալ կեղտոտ ու պղտոր հեղեղ, այդպես էլ, եթե գործուն միջոցներ չձեռնարկվեն, ազգային հեղափոխությունը կարող է աղտոտվել սրիկաների կողմից: Ներքին թշնամին անչափ ավելի վտանգավոր է դրսի թշնամուց: Նա չի երևում, թաքնված է, մոտենում է անսպասելիորեն և դարանակալած կարող է հարվածել մեջքին:

Խոսելով Հայ ազատագրական շարժման այդ ողբերգական կողմի մասին նա գրում էր. «Հեղափոխութայն ամբիոնի շուրջը կուտակվեցան անթիվ օտարականներ, պարազիտներ, մոդայի, ձեականութայն ու ֆրազաբանութայն ստրուկներ, չարհիութայն, բյուրոկրատական ու գրազրային մկներ ու ցնցեր, բերելով իրենց հետ իրանց հատուկ բարքերը, Հայացքներն ու սովորությունները, որոնք բոլորն ապականութայն տիղմի արդյունքներ են» (№7):

Նազարբեկյանը նկարագրել է մի երևույթ, որը բնորոշ է բոլոր հեղափոխություններին և ազգային-ազատագրական շարժումներին, երբ ինչ-որ մի որոշակի փուլում իսկական հեղափոխականները անխուսափելիորեն դուրս էին մղվում կեղծ հեղափոխականների կողմից: Եվ Հայ հեղափոխականների բոլոր սերունդների համար որպես ահեղ նախազգուշացում էին հնչում նրա եզրափակիչ խոսքերը. «Հեղափոխութայն վրա այդպիսիները նայում են իբրև առևտրական կամ որևէ պարզ մասնավոր ընկերութայն կամ արհեստի մի ձեռնարկի վրա, որը կարող են, երբ այդ իրանք հարկ տեսնեն, կամ երբ իրանց հաղթված ու նեղն ընկած զգան, ծախել ավելի զորավորին- բեյերին, փաշաներին, սուլթանին իրան»:

XIX դարի վերջի հնչակյան մամուլի հետազոտումը լրիվ չի լինի, եթե կանգ չառնենք երկու մասնազիտացված հրատարակությունների վրա:

Օտարերկրյա մամուլի ուսումնասիրումը Նազարբեկյանին հուշեց քաղաքական երգիծանքն օգտագործել ծրագրում հուշակված նպատակներին հասնելու համար: Դեռ 1891 թվականին նա փորձեց լույս ընծայել երգիծական «Ասպարեզ» լրագիրը, բայց իրենից անկախ պատճառներով առաջին համարի լույս ընծայումից հեռու չգնաց:

Եվ ահա 1894 թվականի մարտին Աթենքում Նազարբեկյանը Պետրոս Մարմյանի հետ միասին վերջապես իրականացրեց իր վաղեմի մտահղացումը՝ պատկերազարդ երգիծական-քաղաքական միամսյա հանդեսի հրատարակումը: Լրագիրը կոչվում էր «Ապտակ»: Լրագրի խորագրի ընտրություն ու նրա նպատակների մասին հանգամանորեն խոսվում էր առաջին համարում: «Ապտակը» հրատարակելով մենք ուզում ենք Հայ Հեղափոխական գործող մարմնին տալ մի նոր զենք երգիծաբանի ապտակը: Այդ ապտակը թաթախված Հայ քաջերի արյունով, պետք է Հարվածի այն ամենքին, թե՛ արտաքին և թե՛ ներքին թշնամիներին, որոնք թշնամի կամ հակառակ են Հայտնվում նաև Հայ ժողովրդի բազմություն աշխատավորի, գեղջուկի և բանվորի շահերին»:

Լրագրում առանձնահատուկ տեղ էին գրավում քաղաքական ծաղրանկարները: Իրենց պարզությունը թափանցում էին ընթերցողների սիրտը: Եվ այդ գործում մեծ ծառայություն ունեւր լրագրի առաջատար ծաղրանկարիչ, իրանահայ Չարլզ Կորմիկը: Լրագիրը գոյատևեց մինչև 1897 թվականը, 1895 թվականից լույս տեսնելով Լոնդոնում:

«Ապտակից» բացի, նույն 1894 թվականին Նազարբեկյանը Աթենքում կնոջ հետ միասին նախաձեռնեց հրատարակչական մի այլ գործ՝ հրատարակեց «Գաղափարը»: «Հանդես գիտական սոցիալիզմի» բուն ենթավերնագիրը անսովոր էր Հայ իրականության համար, քանի որ հրատարակությունը մասնագիտանում էր Հայ Հասարակությունը արդի սոցիալիստական մտքին ծանոթացնելու գործում: Լրագրի առաջին համարում խմբագրությունը նշում էր. «Մենք ոչ թե հույս ունենք, այլ փորձով գիտենք, որ մեր ցանած սոցիալիստական սերմերը չեն ընկնում մերկ ու ապառաջ քարերի վրա, այլ մտածման նյութ, գաղափար ու Հասարակական ուղղություն են տվել և կը տան միշտ Հայ Հեղափոխականին, բանվորին, աշխատավորին, որպես և ազատ մտքի բարի կամքի տեր ու անկողմնակալ Հայերին»:

Լույս էր ընծայվել հրատարակության երկու համար հունիսին և սեպտեմբերին (երկրորդ համարը հրատարակվել էր Լոնդոնում): Այդ երկու համարներում զետեղված նյութերից պետք է նշել միջազգային սոցիալիստական գրականության Հայերեն առաջին թարգմանությունները՝ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Պոլ Լաֆարգի «Կոմունիզմը և տնտեսական էվոլյուցիան», Իզիդոր Լևեկի «Սոցիալիստական Վարժապետարանը» և այլն:

Հետաքրքրուեցան էին ներկայացնում նաև «Մամուլի տեսութունները», որոնցում Նազարբեկյանը տալիս էր հայ մամուլի էջերում արտահայտված սոցիալ-տնտեսական գաղափարների հանգամանալից վերլուծությունը: Հանդեսում գետեղվում էին նաև գրական-քննադատական էսսեներ, պոեզիա (Նազարբեկյանի բանաստեղծությունները), արձակ (Ատրպետ): Ինչպես «Ապտակը», «Գաղափարը» նույնպես, ի տարբերություն «Հնչակի», վճարովի հրատարակություն էր:

Հնչակյանների գործունեության ու նրանց մամուլի ազդեցության հետ անմիջականորեն կապված է նաև մի հազվագյուտ հրատարակության պատմություն: «Հնչակի» 1893 թվականի №11 և 12 միացյալ համարում Նազարբեկյանը ողջունում էր «Ազատ Հայաստան» թերթը՝ այն անվանելով իր օրգանի կրտսեր եղբայրը: Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ հրատարակությունը:

1892 թվականի վերջին Թիֆլիսում տարասոցմիկ մտավորականության, բանվորների ու արհեստավորների ներկայացուցիչներից բաղկացած մի խումբը հիմնեց «Հայ բանվոր հեղափոխականների սոցիալիստ»։ Ասոցիացան կառուցված էր ազգային հատկանիշով և, հիմնադիրների մտահղացմամբ, կոչված էր Արևմտահայաստանում զինված պայքարի, հեղափոխության գաղափարը տարածելու բանվորների շրջանում: Այդ խմբի հաջող իրականացումից հետո, հիմնադիրների կարծիքով, անհրաժեշտ կլինի նարոչնիկական վարդապետության ոգով հասարակության վերակառուցմանն անցնել սոցիալիստական հիմքի վրա: Եթե հիշենք, որ Հնչակյան կուսակցության 1888 թվականի ծրագրում կար մի կետ բանվորների սոցիալիստական կազմակերպությունների ստեղծման մասին, ապա պարզ կդառնան նորաստեղծ կազմակերպության գաղափարական ակունքները՝ Հնչակյան կուսակցությունն ու «Նարոչնայա վոլյան» (բանվորական խմբի ծրագիրը):

1893 թվականի հուլիսից կազմակերպությունը Թիֆլիսում սկսեց լույս ընծայել «Ազատ Հայաստան» թերթը (10-րդ համարից սկսած լրագիրը վերանվանվեց «Կռիվ»): Խմբագրական կոլեգիայի մեջ էին Աշոտ Խումարյանը, Սարգիս Խանոյանը, Սիսակ Տեր-Սիմոնյանը, Արշալույս Խաժակյանը, Պետրոս Մնացականյանը:

Լրագիրը տպագրվում էր ընդհատակյա տպարանում: Լինելով անլեգալ հրատարակություն՝ լրագիրը դիտավորյալ ազավազում էր լույս ընծայման իր տվյալները, Թիֆլիսի փոխարեն նշում էին Բրյուսել, մի եղանակ, որ բնո-

րոշ էր «Հնչակիին»: Տպագրանակը տատանվում էր 200-300 օրինակի սահմաններում, բայց առանձին դեպքերում հասնում էր 1000-ի:

Սկզբնական շրջանում գտնվելով Հնչակյանների ակնհայտ ազդեցութայն տակ լրագիրը քարոզում էր Հնչակյան կուսակցութայն տեսությունն ու պրակտիկան, բայց Հետո ձևավորվեց որպես ազգային սոցիալիստական բանվորական ինքնուրույն լրագիր: Այդ դործընթացը ընդհատվեց ցարական պահանջարկան բաժնի կողմից, որը գտել էր թերթի հետքերը և 1895 թվականին ջախջախել կազմակերպությունն ու թերթի խմբագրությունը:

Եթե Հնչակյանների գաղափարական ազդեցութայն տակ գտնվող «Ազատ Հայաստան» թերթի խորագրում էլ էր Հիշատակվում Հնչակյան կուսակցութայնը պատկանելու մասին, ապա 1897 թվականին Լոնդոնում լույս տեսած «Մարտ» լրագրում ուղղակի գրված էր «Օրգան Հնչակյան կուսակցութայն»:

Եվ այդուհանդերձ լրագիրը ոչ մի առնչություն չունեց Հնչակյան կուսակցութայն հետ:

Դեռ 1896 թվականին Հնչակյանների կուսակցությունն ապրեց մի աղետալի պառակտում: Արևմտահայ Հնչակյանների մի խումբ Արփիար Արփիարյանը, Միհրան Տամատյանը, Միհրան Սվազը, Լևոն Մկրտիչյանը, Անտոն Ռշտունին, Ադասին, Ապահը և ուրիշներ, կուսակցութայն Լոնդոնի համագումարում անջատվեցին նրանից:

Ամեն մի քաղաքական կուսակցութայն պառակտում էլ ուղեկցվում է կուսակցական ունեցվածքի բաժանմամբ: Այդ վիճակից չխուսափեց նաև «Հնչակը»: 1896 թվականի սեպտեմբերի 24-ին պառակտված խումբը լույս ընծայեց գուգահեռ «Հնչակ» լրագիրը նույն խորագրով, նույն տառերով, լույս ընծայման տվյալներով: Սեպտեմբերի 28-ին պառակտված խմբի դատապաշտպանը դատարանի միջոցով Նազարբեկյանից պահանջեց փակել իր «Հնչակը»: Այդ ժամանակ Նազարբեկյանը պատասխան հայտ ներկայացրեց պառակտված խմբին մեղադրելով իր թերթի անվան ու ձևի յուրացման փորձի մեջ:

Սկսվեց մի աղմկալի դատաքննություն, որի նմանը էլ էր եղել Մեծ Բրիտանիայի իրավաբանական պրակտիկայում: Այդ դատաքննութայն օրինակը մտել է անգլիական դասական իրավաբանական գրականութայն մեջ: Անգլիական բոլոր խոշորագույն թերթերը գրեցին այդ դատավարութայն մասին:

Անցնելով դատական բոլոր ատյաններով Նազարբեկյանը կարողացավ պաշտպանել իր «Հնչակը»: Անգլիական արդարադատությունը պառակտված խմբի գործողությունները գնահատեց որպես ոտնձգություն մասնավոր սեփականության դեմ, քանզի «Հնչակը» փաստորեն (ներկայացված էին բոլոր ֆինանսական Հաշիվները) լույս էր ընծայվում Նազարբեկյանի միջոցներով: 1897 թվականի փետրվարի 13-ին դատավոր Ջոսֆիս Նորթը «ի նպաստ Նազարբեկի հաստատեց իր վճիռը, մշտնջենավոր կերպով արգելք դնելով Սըվազլին «Հնչակ» անուն հրատարակություն հանելու» («Հնչակ», 1897, №2):

Ի պատասխան դրան, նույն 1897 թվականին պառակտված խմբի պարագլուխ, Հայտնի Հայ գրող, հրապարակախոս Արփիար Արփիարյանը Հիմնեց «Մարտ» ամսաթերթը, որպես Հնչակյան կուսակցության պաշտոնական օրգան: Սակայն այդ լրագիրը ոչ մի առնչություն չուներ ինչպես Հնչակյանների կուսակցության, այնպես էլ նրա գաղափարախոսության ու քաղաքականության հետ: Այն արտահայտում էր միայն պառակտված խմբի շահերը, որը կազմակերպորեն ձևավորվել էր 1898 թվականին որպես Վերակազմյալ Հնչակյանների կուսակցություն:

Տվյալ կազմակերպությունը հետևյալ էական տարբերություններն ուներ ուղղահայտ Հնչակյան վարդապետությունից.

1) Հակառակ էր թուրքիայում տեղական ելույթներին ու գործողություններին: Կողմնակից էր լավ նախապատրաստված ապստամբության: 2) Չէր ընդունում սոցիալիզմի գաղափարը: 3) Հանդես էր գալիս Արևմտյան Հայաստանի ազատագրության դրժին արևելահայերի մասնակցության դեմ: 4) Կուսակցության ապակենտրոնացված կառուցվածքի կողմնակից էր: 5) Քարոզում էր Հայ ժողովրդի բոլոր ազգային ուժերի միավորման գաղափարը անկախ նրանց որդեգրած գաղափարախոսությունից: Եվ «Մարտ» լրագիրը, լինելով կազմակերպության խոսափողը, պրոպագանդա և ագիտացիա էր մղում այդ դրույթների ոգով:

Նույն ոգով էլ Հանդես էին գալիս 1898 թվականին Լոնդոնում Արփիարյանի կողմից Հիմնված «Նոր Կյանք» կիսամսյա Հանդեսը և Նյու-Յորքում Գարեգին Չթչյանի «Ձայն Հայրենյաց» շաբաթաթերթը: Վերջին երկու պարբերականները լույս ընծայման տվյալներում արդեն ընդգծում էին իրենց պատկանելիությունը Վերակազմյալների կուսակցությանը:

Ըստ հուժան, վերակազմյալների մամուլը, որը ընդհանուր դատողություններ էր անում ապստամբության մասին, հեղափոխական չէր, այլ բարենորոգչական, քանի որ նոր կազմակերպության հիմնադիրներն անցյալում եղել էին Արևմտահայաստանում ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ, արդեն հուսահատվել էին այդ պայքարի արդյունքներից և տարածաշրջանի ապագան տեսնում էին խաղաղ ճանապարհով բարեփոխումներ իրականացնելու մեջ: Այդ մամուլը Հայկական Հասարակական-քաղաքական մտքի մեջ Հարում էր բարենորոգչական ուղղությանը:

## ՂԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ. «ԴՐՈՇԱԿ»

Ի տարբերություն «Արմենիայի» և «Հնչակի», «Դրոշակի» պատմությունը կապված է մեկ անձի հետ: Լրագրի համար, նրա ստեղծողների նախնական մտահղացմամբ, նախատեսված էլ չէր կուսակցության գլխավոր օրգանի դերը: Եվ, այսուհանդերձ, լրագիրը, որը ժողովրդական լայն ճանաչում գտավ, բացառիկ նշանակություն ունեցավ ինչպես կուսակցության համար, որին պատկանում էր, այնպես էլ ամբողջ Հայ ազգային-ազատագրական շարժման համար:

Արևմտյան Հայաստանի ազատագրության համար Հայության զանազան ուժերը միավորող միասնական հեղափոխական կազմակերպության ստեղծման գաղափարը, որը համակել էր արևելահայ երիտասարդությունը, իր նյութական մարմնավորումն ստացավ 1890 թվականի օգոստոսին, երբ Թիֆլիսում ստեղծվեց «Հայ հեղափոխականների դաշնակցությունը»: Դա պատմական նշանակություն ունեցող փաստ էր: Նորաստեղծ կուսակցությունը ներառել էր ինչպես արևելահայ կազմակերպությունները, խմբերն ու խմբակները, այնպես էլ հնչակյան կուսակցությունը: Մի շարք տարասեռ կազմավորումների միավորումը մեկ կուսակցության մեջ տեղի ունեցավ Հայ նարոգնիկության ակնափոր ներկայացուցիչների՝ Քրիստափոր Միքայելյանի և Միմոն Զավարյանի կազմակերպական գործունեության շնորհիվ:

Կանոնակարգված էր նաև կուսակցական մամուլի գործունեությունը. «Հնչակը» պետք է շարունակեր լույս տեսնել ժնևում, որպես գաղափարատեսական օրգան՝ Նազարբեկյանի և Միքայելյանի խմբագրությամբ: Թիֆլիսում նախատեսվում էր հրատարակել «Դրոշակ» լրագիրը, իբրև մարտական օրգան: Սակայն Հանդամանքների բերումով 1891 թվականին միասնու-

թյունը քայքայվեց չհասցնելով տալ հեղափոխական ընկերակցության առաջին իրական պտուղները: Մասնավորապես, հեռացան Հնչակյանները (1892 թվականին «Հայ հեղափոխականների դաշնակցությունը» պաշտոնապես վերանվանվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»):

Այդ պայմաններում «Դրոշակը» պետք է լրիվ իր վրա վերցնեն կուսակցական գլխավոր պաշտոնական օրգանի դործառնությունը և դործունեության գաղափարատեսական ապահովումը: Բայց այդ աշխատանքի համար հարկավոր էին պատրաստված անձինք՝ համապատասխան մտածելակերպով, որոնք կարողանում են խոսքը հասցնել ընթերցողին:

Ստացվել էր այնպես, որ ՀՀԴ-ն իր զարգացման սկզբնական փուլում բաղկացած էր գործիմաց մարդկանցից և համարվում էր նրանցով: Նրանց մեջ գրեթե չկային խոսքի մարդիկ՝ տեսաբաններ: Եվ ստեղծված դատարկությունը լցնելու համար նրանք ստիպված էին, կուսակցության շահերից ելնելով, զբաղվել նաև տեսական աշխատանքով: Այդպես ձևավորվեց դաշնակցականի, համապարփակ հեղափոխականի դասական տիպը, որը տիրապետում էր ինչպես զենքի, այնպես էլ գրչի:

Բայց նման տիպի մարդկանց ձևավորման համար հարկավոր էր որոշ ժամանակ, որի ընթացքում անհատը ձեռք է բերում անհրաժեշտ փորձ ու հմտություններ: Այդ բաղադրիչների բացակայությունը անխուսափելիորեն պետք է անդրադառնար աշխատանքի վրա:

Դրությունը բարդանում էր նրանով, որ այն անձինք, ովքեր կարող էին իրենց բնական ընդունակություններով լրացնել փորձի ու հմտությունների բացակայությունը, Միքայելյանը և Զավարյանը, գտնվում էին աքսորում՝ Բեսարաբիայում: «Դրոշակի» առաջին համարները ստեղծվել են նրանց բացակայությամբ: Եվ այդ հանգամանքը չէր կարող չազդել «Դրոշակի» առաջին համարների մակարդակի վրա:

«Դրոշակ» լրագրի հրատարակմանը նախորդել էր «Դրոշակի թուռցիկ» թերթի երկու համարների լույս ընծայումը: Առաջին համարը չի պահպանվել ինչպես արխիվներում, այնպես էլ մասնավոր հավաքածուներում: 1891 թվականի մայիսի թվակիր երկրորդ համարը սկսվում էր հատուկ ազդարարութայամբ, որ ՀՀԴ-ն, հրատարակելով այդ թերթը, հաղորդում է, որ մտապագայում ունենալու է իր օրգանը «Դրոշակ» վերնագրով:

«Դրոշակ» լրագրի առաջին համարը լույս է տեսել ժանդարմական դատան կամայականության պայմաններում, Թիֆլիսում, 1891 թվականի մայիսին:



Գաղանի տպարանը գտնվում էր նկուղային Հարկում «Նաղ Կուրոյ» պան-գոկի մոտ, այնուհետև տեղափոխվեց Սուրբ Դավիթի լեռան շրջանը, օրինորդ ժենյայինց տան ներքնահարկում: Տառերը ծառանգություն էին մնացել Մոսկվայի «Ազատության ավետարներ» լրագրից: Հետևելով Հայ Հեղափոխական մամուլի ավանդույթներին «Դրոշակը» անվճար հրատարակություն էր և նույնպես դիտավորյալ կեղծում էր լույս ընծայման իր տվյալները հրատարակման վայրը Թիֆլիսի փոխարեն նշելով Վիեննա:

Լրագրի առաջին համարը էջը փայլում գաղափարատեսական հողավածներով: Այսպես, խմբագրական հողավածում հետևյալն էր ասվում կուսակցության ու լրագրի սկզբունքների ու նպատակների մասին. «Նա Հայ ազգի բողոքի և վրեժխնդրության ոգին է: Այս է նրա սկզբունքը և նպատակը: Եվ այդ սկզբունքի ու նպատակի արտահայտությունն է Դաշնակցության «Դրոշակը»:

Զգացվում էր գործունեության տեսական հիմնավորման բացակայությունը, որը լրացվում էր Արևմտյան Հայաստանում պատրիարք Ներսես Վարժապետյանի բարենորոգումների ծրագրի արտատպություն (1878 թ.): Խմբագրական հողավածում այդ կապակցությամբ հատկապես ընդգծվում էր. «Մեջ կը բերենք «Դրոշակի» այս համարում այդ տեղեկագիրը, որովհետև մեր այժմյան պահանջների գլխավոր կետերը մնում են մոտավորապես միևնույնը»:

Զգալով իր այդպիսի դիրքորոշման որոշակի խոցելիությունը լրագրի երկրորդ համարում խմբագրության կողմից հատկապես վերապահում էր արվում, որ «Մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դեպքը, եթե Սուլթանը յուր բարի կամքով մտցնի Տաճկական Հայաստանում Ներսես պատրիարքի ծրագրում պահանջված բարենորոգությունները, որ շատ անհավանական է»:

Այս տեսակետից նոր բան չտվեց նաև լրագրի երկրորդ համարը, քանի որ խմբագրական հողավածը պարունակում էր արդեն Հայտնի ճշմարտություններ պարտիզանական պատերազմի մասին: Լրագիրը հարուստ է էր նաև իր ընդհանուր բովանդակությամբ. խմբագրական, ներքին և արտաքին տեսություն, նամակներ Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից այս էր նյութերի շրջանը:

Լրագիրը սկզբնական շրջանում փաստորեն էջը կատարում իր կուսակցության գաղափարախոսության ու քաղաքականության քարոզչի դերը: Շար-

քային մարդիկ այն ընկալում էին ավելի շուտ իբրև պաշտամունքի առարկա, իբրև սրբություն, կուսակցության խորհրդանիշ, քան իբրև լրագիր: Այդ առթիվ Ռուբենը գրում էր. «Դրոշակն» էր մեր միակ պաշտոնաթերթը, որ Նաբեկի նման կը համբուրվեր իբր սրբություն, բայց անոր նման թաշկինակներու մեջ կը փաթաթվեր և մեկ կողմ կը դրվեր»<sup>84</sup>:

Լրագրի վիճակը չէր կարող չհուզել աքսորում գտնվող կուսակցության պարագլուխներին: Իսկ երբ 1891 թվականի վերջին «Դրոշակի» Թիֆլիսի տպարանը հայտնաբերվեց պահնորդական բաժնի կողմից, և տառերը բռնագրավվեցին, Միքայելյանը անձամբ զբաղվեց լրագրի հետագա ճակատագրով: Անիմաստ էր լրագրի հրատարակումը շարունակել Թիֆլիսում, որը լեզվելեցուն էր ցարական լրտեսներով: Հարկավոր էր իրականացնել սկզբնական որոշումը օրգանը արտասահմանում տպագրելու մասին:

Սկզբում ընտրվեց Ռուսիայից: Այդ վայրի ընտրությանը նպաստում էր ինչպես Ռուսիայի տարածքային մոտիկությունը Թուրքիային (ծովային ճանապարհի առկայությունը Կոնստանցա նավահանգստային քաղաքից), այնպես էլ սահմանակցությունը Բեսարաբիային, որտեղ գտնվում էին Միքայելյանն ու Զավարյանը: Վիեննայի Մխիթարյանների մոտ պատվերվեցին նոր տառեր: «Դրոշակի» տպագրության գործը կազմակերպելու համար Միքայելյանը թողեց աքսորվայրը Քիշնևը, և, անլեզալ անցնելով սահմանը, բնակություն հաստատեց սահմանամերձ Գալաց քաղաքում:

Նրա ջանքերով 1892 թվականի փետրվարին լույս տեսավ լրագրի երրորդ համարը, որն իր բովանդակությամբ խիստ տարբերվում է առաջին երկու համարներից, քանի որ խմբագրական հոդվածը գրել էին Միքայելյանը և Զավարյանը (հոդվածները «Դրոշակում» մինչև 1899 թ. տպագրվել են առանց ստորագրության, սակայն հետագայում դաշնակցականները արխիվային նյութերի հիման վրա կատարեցին հետազոտական մեծ աշխատանք, որի շնորհիվ հայտնի դարձան հոդվածների հեղինակները):

Այդ հոդվածում Միքայելյանը և Զավարյանը հավաստում էին ՀՀԴ-ի նվիրվածությունը ժողովրդավարության սկզբունքներին՝ այդ հասկացությունից միջազգային առումով: ՀՀԴ-ի հիմնադիրները հայտարարում էին, որ Արևմտյան Հայաստանի ապագան անխզելիորեն կապված կլինի ժողովրդավարության և առաջադիմության հետ: Հիմնավոր կերպով դրվում էր Արև-

<sup>84</sup> Ուրբեճ, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Ա հատոր, Թեհրան, 1982, էջ 35:

մտյան Հայաստանի սահմանադրական Հիմունքների Հարցը, որոնց առանցքը պետք է կազմենին ազատ ժողովրդավարական ընտրութիւնները:

Լրագրի «ուսմինական» Համարը մնաց իբրև միակը, քանզի քաղաքական դրութիւնը Ռուսիայում Հնարավորութիւն չէր չէր շարունակելու լրագրի Հրատարակութիւնը: Իսկ Միքայելյանը վերադարձավ քաղաքային: Լրագրի Հետագա ճակատագիրը 1893-1895 թթ. ժամանակաշրջանում կապված էր Ռոստոմի (Ստեփան Զորյան) անվան Հետ:

Ռոստոմը ծնվել է Յդնա գյուղում (Գողթն), 1867 թվականին: Ունեցել է նարոդնիկական անցյալ: 1887 թվականին փորձեց Միքայելյանի Հետ միասին Հիմնել անլիզալ տպարան, բայց միջոցների բացակայութեան պատճառով այդ նախաձեռնութիւնը Հաջողութեամբ չպսակվեց: 1889 թվականին նա մտավ Հեղափոխական ավանդույթներով Հայտնի Մոսկվայի Պետրովյան գյուղատնտեսական ակադեմիան: Զերբակավել էր Հեղափոխական գործունեութեան Համար և քստրովել իր բնակութեան վայրը: Թեև ՀՀԴ-ի Կենտրոնի անդամ չէր, բայց ակտիվորեն զբաղվում էր կուսակցական աշխատանքով, եղել է «Դրոշակի» թիֆլիսյան Համարների Հրատարակութեան տեխնիկական կատարողների թվում: Հսկայական դեր է կատարել կուսակցութեան առաջին ընդհանուր ժողովում Միքայելյանի ու Զավարյանի Հետ միասին:

1893 թվականի սկզբում Ռոստոմը, լրագրի Հրատարակութեանը կարգավորելու նպատակով, կուսակցութեան Բյուրոյի որոշմամբ մեկնեց Ռուսիայի, վերջրեց Միքայելյանի այնտեղ թողած տառերը և Ժնևում Հիմնեց «Դրոշակի» խմբագրութիւնը: «Նմբագրութիւն» բառը տվյալ դեպքում չափազանց բարձր է Հնչում, քանզի Ռոստոմը Համատեղում էր և՛ խմբագրին, և՛ գրաշարին՝ միաժամանակ վարելով իր ծավալով բավական մեծ կուսակցական թղթակցութիւնը: Տպարանը տեղավորված էր Ռոստոմի ուսանողական Համեստ սենյակի անկողնախորշում (Ռոստոմը սովորում էր Ժնևի Համալսարանում):

Սկզբում «Դրոշակը» Հրատարակվում էր գաղտնի, այնուհետև շվեյցարացի Հայտնի քաղաքական գործիչ Ժորժ Ֆավոնի միջնորդութեամբ պաշտոնապես օրինականացվեց իշխանութիւնների կողմից: Թեև «Դրոշակը» Հրատարակվում էր Ժնևում, բայց սկզբնական շրջանում նյութերը ուղարկվում էին Թիֆլիսից: Հաճախ այդ նյութերը պատկանում էին Միքայելյանի և Զավարյանի գրչին: Հատուկ դեպքերում պատահում էր նաև միակցված տարբերակ. Հոգվածի մի մասը գրվում էր Թիֆլիսում, մնացածը՝ Ժնևում:

Այդպիսի նյութերի թվին էր պատկանում խմբագրական Հոդվածաշարը «Այբ ու բենը» ընդհանուր խորագրով: 1893 թվականի №5-ի և 1894 թվականի №6-ի խմբագրականները պատկանում էին Միքայելյանին և Ջավադյանին Համատեղ, իսկ 1894 թվականի №7-ի և 8-ի խմբագրականները Ռոստոմին: Խմբագրական Հոդվածաշարի նպատակն էր մանրամասն և մատչելի ձևով աստիճանաբար ընթերցողին նախապատրաստել ՀՀԴ-ի ծրագրի ընկալմանը, որը պետք է տպագրվեր լրագրում փոքր-ինչ ավելի ուշ:

1894 թվականին ձեռնարկվեց երկրորդ, անհամեմատ ավելի խոշոր քարոզչական մի գործողություն, որին լարված սպասում էր կուսակցությունը. «Դրոշակի» 10 և 11-րդ Համարներում տպագրվեց կուսակցության ծրագիրը:

ՀՀԴ-ի ծրագիրը կազմվել էր դեռ 1892 թվականին և դարձել առաջին ընդհանուր ժողովի քննարկման առարկա: Փաստաթղթի տեսական մասը գրել էր Ռոստոմը (այդ Հանգամանքն էլ պատճառ դարձավ, որ Ռոստոմը նշանակվի «Դրոշակի» խմբագիր, քանի որ ծրագրի այդ մասի մշակմամբ Ռոստոմն ապացուցեց տեսական աշխատանքի իր ընդունակությունները):

Ծրագիրը նվիրված էր Արևմտյան Հայաստանի Հիմնադրարին: Ծրագրի տեսական մասում նախ և առաջ մերժվում էին ամեն կարգի վերացական դատողությունները Արևմտյան Հայաստանի ապագա Հասարակական-քաղաքական կարգի վերաբերյալ. «Մենք չենք ձգտում մտցնել մեր կյանքի մեջ այս կամ այն «դավանությունը» Հանդերձ իր «Հանգանակներով», մենք մեր ժողովրդին չենք նկարագրում այժմ այս կամ այն իդեալական Հասարակական կազմակերպություն իր բոլոր մանրամասնություններով» (№10):

Ազգային կենսական խնդիրների լուծում այս էր փաստաթղթի բուն բովանդակությունը. «Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական լինի. մեր ուշադրությունը, գլխավորապես, կենտրոնացած է մեր երկրի ներկա դրություն վրա»:

Այնուհետև Ռոստոմը տալիս է Արևմտյան Հայաստանի Հասարակական-քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական վիճակի ծավալուն վերլուծությունը, որը եզրափակվում էր Հեղափոխության անհրաժեշտության մասին Հետևություններով: «Այս բոլորին վերջ կարող է տալ միմիայն բուն Հեղափոխությունը, և մենք դիմում ենք նրան: Պետք է թոթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել ներկա միապետական բռնակալ ռեժիմը, ձեռք բերել ազգերի Համերաշխություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի ու Համոզմունքի ազատություն»:

Բայց Ռոստոմը միայն այդ Հետեուիցամբ չէր սահմանափակվում: Ոչ պահաս կարևոր էր նաև այն Հետեուիցումը, որ Հեղափոխությունը «միայն գործի մի մասն է: Միայն դրանով մենք չենք կարող ապահովել աշխատավորին իր աշխատանքից լիակատար կերպով օգտվելու հնարավորությունը»:

Ինչպես տեսնում ենք, Ռոստոմը ազգային խնդիրների շրջանի մեջ մտնում էր նաև սոցիալական հարցեր: Որպես արևմտահայ աշխատավորների սոցիալական պաշտպանության գործիք, նա առաջարկում էր ամրապնդել ու է՛լ ավելի զարգացնել Համայնական սկզբունքը: Ծրագրում մատնանշվում էր. «Մենք գործ կը դնենք ամեն միջոց պահպանելու գոյություն ունեցող Համայնական սկզբունքները, մենք կաշխատենք տարածել Համայնական սեփականատիրությունը, Համայնական աշխատանքը, որպեսզի ավելի պատրաստ դառնանք անցնելու այն հասարակական կազմակերպությանը, որն այսօր-էգուց կը Հաստատվի տնտեսապես ավելի զարգացած երկրներում պրոլետարիատի Հեղափոխությամբ»:

Փաստորեն ծրագրային այդ դրույթը վկայում էր ՀՀ Դ-ի սոցիալիստական կողմնորոշման մասին: Ծրագրի՝ Համայնական սոցիալիզմին տրվող տուրքը տուրք էր կուսակցության պարագլուխների նարոդնիկական գաղափարական ժառանգությանը: Դրա հետ մեկտեղ չի կարելի չնշել, թե Ռոստոմը ինչպիսի զգուշավորությամբ էր գործածում սոցիալիզմի կատեգորիաներն ու հասկացությունները խուսափելով բուն սոցիալիստական տերմիններն օգտագործելուց:

Եվ դա պատահական չէր: Կուսակցության պարագլուխներն իրենց երախայրիքը դիտում էին որպես մի Համազգային կազմակերպություն, որի մեջ պետք է մտնեին Հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները: Բնականաբար, սոցիալիզմի բացահայտ հռչակված կետը Հասարակության որոշ մասին կիրառեցներ կուսակցությունից: Եվ ապա, դա կուսակցության առաջնորդների սկզբունքային կարծիքն էր, որն արտացոլվել էր ծրագրում, Հետամնաց Արևմտահայաստանում առանց պրոլետարիատի առկայության եվրոպական սոցիալիզմը չէր կարող ընդունելություն գտնել: Հարկավոր էր ժամանակ, որպեսզի արդի սոցիալիստական միտքը հող գտներ այնտեղ: Ջէր կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, թե ինչպիսի բացասական արձագանք էին առաջացնում սոցիալիստական կազմակերպությունները եվրոպական երկրներում XIX դարի վերջին:

Տեսական մասից բացի, ծրագիրն ընդգրկում էր նաև Հետևյալ բաժինները «Նպատակ», «Միջոցներ», «Կազմակերպություն», որոնց համատեղ հեղինակներն էին Միքայելյանը և Զավարյանը:

«Նպատակ» բաժնում հավաստվում էր. «Հ. Հ. Դաշնակցության նպատակն է. ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն» (№11):

«Քաղաքական և տնտեսական ազատություն» հասկացության բովանդակությունը բացահայտվում էր նարողնիկական վարդապետության ոգով («Ժողովրդական-առավարական կառավարություն», «տալ չունեցողին հող», «ուժ տալ գյուղացու և արհեստավորի համայնական սկզբունքներին» և այլն):

Կարող է տարակուսանք առաջանալ, թե ինչու «Նպատակ» բաժնում Հեղափոխական կուսակցությունը չէր որոշակիացնում Արևմտահայաստանի անկախության հարցը: Այդ հարցի պատասխանը տալիս է Միքայել Վարանդյանը իր «Հ. Հ. Դաշնակցության պատմություն» աշխատության առաջին հատորում. «Դաշնակցության առաջին քաղաքագետները, այն օրերու պայմաններուն մեջ, հրաժարվեցան անկախության սկզբունքին... Լավ կըմբռնեին, անշուշտ, թե որքան գրգռիչ ու վանող բնույթ պիտի ունենար Հայ Հեղափոխականներու ընթացքը հաչս իսլամ ազգաբնակության, եթե անոնք Հայկական անկախություն մը պահանջեին այն վիճակներուն մեջ, ուր մեծամասնությունը կը կազմեին նույն այդ իսլամ ժողովուրդները: Լավ կըմբռնեին մեր Հին ընկերները, թե որքան հանդուգն ու ցնորական պիտի երևեր անկախ Հայաստանի պահանջը»<sup>85</sup>:

Ծրագրի «Միջոցներ» խորագիրը կրող հաջորդ բաժնում ասվում էր, որ նպատակին ապստամբության հասնելու համար պետք է կազմակերպվին Հեղափոխական խմբեր: Թվարկվում էին նման խմբերի գործառնությունները պրոպագանդա, Հեղափոխական կոմիտեների և մարտական խմբերի կազմակերպում, Հեղափոխական գործի ֆինանսական ապահովում, բնակչության անվտանգության ապահովում, ահաբեկչություն և այլն:

Հեղափոխական խմբերի գործունեության մեջ էր մտնում նաև Հատուկ №6 կետը, որը վերաբերում էր լրագրին. «Ուսումնասիրել երկիրը և ժո-

<sup>85</sup> Վարանդյան, Գ. Գ. Դաշնակցության պատմություն, Առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 119:

դովուրդը հեղափոխական տեսակետից և հարատև նյութ մատակարարել Դաշնակցության օրգանին»:

Մրազիրը եզրափակում էր «Կազմակերպություն» բաժինը: Ըստ էության, դա կուսակցության կանոնադրությունն էր, որով հռչակվում էր այն կարևոր կազմակերպական նվաճումը, որը ձեռք էր բերվել կուսակցության ընդհանուր ժողովում, 1892 թվականին, ապակենտրոնացման սկզբունքը (մինչև 1892 թվականը ՀՀԴ-ն կենտրոնացված կուսակցություն էր): Մրազրում պաշտոնապես հռչակված ապակենտրոնացման սկզբունքը անչափ լայն հնարավորություններ էր տալիս զանգվածների հեղափոխական ստեղծագործության համար, տեղական կազմակերպություններին ազատում էր վերադաս մարմինների թեկադրանքից:

«Կազմակերպություն» բաժինը պարունակում էր մի պարբերություն, որը կարևոր նշանակություն ուներ նաև լրագրի համար, ուր ասված էր. «Դաշնակցությունն ունի իր օրգանը «Դրոշակ» անունով: «Դրոշակը» պիտի լինի անկեղծ արտահայտող, թարգման հայ հեղափոխական կյանքի, երևույթների: Նրա մեջ պիտի շոշափվեն տնտեսական, հասարակական, քաղաքական խնդիրներ համաձայն Դաշնակցության ծրագրած ուղղության: Կհրատարակվին նաև ժողովրդական ու գիտական-սոցիալիստական գրվածքներ»:

«Դրոշակի» գործունեությունը ևս ընթանում էր կուսակցության ծրագրին համապատասխան: Այդ կապակցությամբ շատ հետաքրքրական է կուսակցության պարսիկ գործընկերներին հասցեագրված նամակը. «Տանկաստան այստեղից բավական մեծ քանակությամբ և հաջողությամբ ցրվում է («Դրոշակը»): Այնտեղ ավելի լավ է տարածվում, քան թե Ռուսաստան, ուր համարյա բոլոր ուղարկված համարները բռնագրավվում են:

Ահա 3 ամիս է, թերթը կանոնավորապես ամիսը մի անգամ լույս է տեսնում: Հուսով ենք այդպես էլ կը շարունակվի: Կանոնավոր հրատարակությունը կարելի է ապահոված համարել, եթե միայն նյութի պակասություն չլինի: Աշխատեք, ուրեմն, որքան կարելի է նյութ շատ և շուտ ուղարկել: Եթե ձեզանից մեկն ու մեկը հնարավորություն ունի, թող ընդհանուր և ամիսի հոդվածներ գրի հարկային, հողային, կեղեքման, վաշխառուների գործունեությունից... Թէ չէ ընթերցողների զահլեն գնում է կարդալով միակերպ նկարագրություններ, թե՛ այստեղ սպանեցին, այնտեղ թալանեցին և այլն»<sup>86</sup>:

<sup>86</sup> Ռուստոմ, Պեյրուք, 1979, էջ 95:

Նամակի բովանդակութիւնը վկայում է, թե ինչպիսի հսկայական բեռ է դրված եղել Ռոստոմի ուսերին: Եվ թեպետ նա խմբագրութիւնում արդեն մեծակ չէր, նրան էին միացել Սիմոն Շխեյանը, Հովնան Դավթյանը, Գարեգին Խաթալը, սակայն աշխատանքի ծավալը անչափ մեծ էր:

Իր անձնական հատկութիւններով լինելով բնածին հեղափոխական պրակտիկ Ռոստոմը բարեխղճորեն կատարում էր գաղափարախոսական աշխատանքը ապացուցելով, որ արտասովոր անհատը կարող է օգտակար լինել ցանկացած գործում: Բայց նման աշխատանքը նեղում էր նրան: Ինչպես նշում էր Վարանդեանը, նրա համար իսկական տառապանք էր Հողված դրելը, ճառով հանդես գալը, բանավեճին մասնակցելը և դա ոչ թե այն պատճառով, որ նրա մոտ չէր ստացվում, այլ այն պատճառով, որ դա նրա կյանքի գործը չէր:

Ուստի 27 տարեկան խմբագրապետը, միշտ հեգնանքով արտահայտվելով իր պաշտոնի առթիվ, գերադասում էր Հողվածներ դրելու գործը հանձնարարել կուսակցութեան իր գործընկերներին, իսկ ինքը սահմանափակվում էր դրանք շարելով: Ժնեկի հանգիստ ու միապաղաղ կյանքը օրգանապես հարազատ չէր հեղափոխականի խառնվածքին: Ռոստոմը փայփայում էր վերստին կենդանի հեղափոխական գործին վերադառնալու Հոլսը, ուստի քանիցս խնդրել էր իրեն ազատել խմբագրի պարտականութիւններից: Ոգու անկեղծ ճիչ էին նրա նամակներից մեկի հետևյալ տողերը. «Ես խեղդվում եմ այստեղ, օր չկա»:

Վերջապես, 1895 թվականին նրա խնդրանքը ժամանակավորապես բավարարվեց: Ռոստոմի բացակայութեան ժամանակ խմբագրապետի պաշտոնը դրվել էր Հովնան Դավթյանի վրա: Դավթյանը ծնվել է 1865 թվականին, Շուշիում: 1886 թվականին ավարտել է Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում, մի տարի ուսուցչութիւն արել, այնուհետև մեկնել Ժնեկ, որտեղ տեղական համալսարանում ուսումնասիրում էր հասարակական-քաղաքական գիտութիւններ:

1891 թվականին Դավթյանը միջոցների պակասի պատճառով ընդհատեց ուսումը և վերադարձավ Կովկաս: Հենց այդ ժամանակ էլ տեսուչի պաշտոնի թափուր տեղ էր բացվել Թավրիզի դպրոցում, որտեղ գործում էր դաշնակցական ուժեղ կոմիտե: Այդ կոմիտեի անդամների հետ հաստատած Հարաբերութիւններն էլ կանխորոշեցին Դավթյանի ճակատագիրը, որպես դաշնակցական գործչի: Մի տարի անց Դավթյանն արդեն ճանաչված հեղինակութիւն



էր դաշնակցական շրջաններում: Զավարյանի Հետ Համատեղ, նրան էր պատկանում կուսակցութեան կողմից ապակենտրոնացման կազմակերպական սկզբունքի պատմական ընտրութեան ծառայութիւնը:

1894 թվականին Դավթյանը վերադարձավ Ժնև ուսումը շարունակելու և միանգամից դարձավ Ռոստոմի աջ ձեռքը «Դրոշակում»: Այնպես որ Դավթյանի նշանակումը այդքան պատասխանատու պաշտոնում բնական էր: Դրանով իսկ ապահովվում էր «Դրոշակի» ուղղութեան Հաջորդայնութիւնը:

Դավթյանն ուներ վերլուծական սուր միտք, նրա դատողութիւնները կարուկ էին ու անզիջող: Հենց այդ ոգով են տոգորված նրա երկու առավել նշանակալի հոդվածները: «Դրոշակի» №8-14-ում գետեղված էր Դավթյանի հոդվածաշարը «Ռեֆորմներ» վերնագրով նվիրված մայիսյան բարեփոխումներին (1895 թվականի մայիսի 11-ին մեծ տերութիւնները Անգլիան, Յրանսիան, Ռուսաստանը Թուրքիային էին ներկայացրել Արևմտահայաստանում բարենորոգումների անցկացման ծրագիրը):

Կատարելով այդ ծրագրի Համակողմանի խոր վերլուծութիւն Դավթյանը Հանդում էր Հետևյալ եզրակացութեան. «Դիպլոմատիան արել է այն, ինչ որ ուզում էր. - պահպանել Փոքր Ասիայում ներկա քաղաքական դրութիւնը, սուլթանի միապետական պրեստիժը և Հայ Հեղափոխական ժողովրդի աչքին թող փչել, որովհետև ներկայումս այդ են պահանջում նրա պետական շահերը» (№13):

Մյուս հոդվածը, որ տպագրվել էր 1896 թվականի №6-ում, աննախադեպ էր իր ուղղվածութեամբ Հայ Հեղափոխական մամուլում, քանզի առաջին անգամ ջախջախիչ քննադատութեան կրակի տակ էր ընկել ցարական կառավարութեան քաղաքականութիւնը Հայկական Հարցի նկատմամբ: Վերլուծելով ցարական կառավարութեան քաղաքականութեան մեջ տեղի ունեցած փոփոխութիւնները Արևելյան Հարցի բնագավառում 1881 թվականից Հետո (Ալեքսանդր II -ի սպանութիւնը նարողովուցիների կողմից և Ալեքսանդր III -ի գահակալութիւնը, -Ռ. Խ.) Դավթյանը Հավաստում էր, որ «Օսմանյան պետութեան պատմական ռեսուրսները թշնամին այժմ նրա բարեկամը ու հովանավորողն է, և մինչև իսկ, Հայկական սարսափի մեջ, նրա խրախուսողը»:

Բազմաթիվ փաստեր բերելով, որոնք Հաստատում են արտաքին քաղաքական այդ իրողութիւնը, Դավթյանն անցնում էր ցարիզմի ներքին Հակահայկական քաղաքականութեանը. «Նա սպիտակ տերրոր է սկսում յուր պետութեան մեջ Հայերի վերաբերմամբ և մինչև իսկ յուր ճշնող թաթը մեկնում

Պարսկաստան: Նա սկսում է ամենախիստ կերպով Հետեւել Հեղափոխական շարժման և յուր բանտերը լցնել Հայ երիտասարդներով, որոնց մեղքը նրանումն է կայանում, որ ինտելիգենտ են»:

Իսկ ի՞նչ էր առաջարկում Դավթյանը նման իրավիճակում: «Դրոշակի» խմբագրապետը վճռականապես դեմ էր պայքարի ճակատների ընդլայնմանն ու արդեն մեկ խնդրի վրա կենտրոնացած ազգային ուժերի փոշիացմանը. «Մատնացուլյց լինելով ցարի կառավարութայն բռնած դիրքի վրա, ցույց տալով, որ նա այժմ պրոփոկատորի դեր է կատարում, մենք Հայտարարում ենք կրկնելով, որ նրան երբեք չի Հաջողվիլ Հայ Հեղափոխականներին դուրս բերել իրենց գործունեութայն սահմաններից, չի կարող նրանց ջլատել և դործունեութայն մեջ բաժանումներ առաջ բերել»:

Ուշագրավ է, որ Դավթյանը իր այդ խմբագրական Հոդվածը վերնագրել էր «Ցարի կառավարութայնը», այլ ոչ թե ասենք «Ռուսաստան» կամ «ռուսներ», այսինքն նա գիտակցաբար տարբերակում էր, և դա երևում է նյութի ամբողջ բովանդակութայնից, պաշտոնական ազգայնամտչական Ռուսաստանը ռուս ժողովրդից: Տակտիկական գրագիտութայն Հետ միասին այստեղ առկա էր նաև քաղաքական որոշակի կուլտուրա:

Ինչպես արդեն նշվեց, դաշնակցականների առաջին Համաստեղութայնը պրակտիկ Հեղափոխականներ էին, որոնք անհրաժեշտութայն բերումով էին միայն զբաղվում տեսական, քարոզչական գործունեութայն: Հեղափոխական գործին նվիրված այդպիսի մարդկանց Համար ժնեը, կարծես, աքսորավայր լիներ: Այդպիսի Հեղափոխականներից էր նաև Դավթյանը: Օգտվելով կուսակցութայն ընձեռած առաջին իսկ Հնարավորութայնից նա անհապաղ թողեց խմբագրապետի պաշտոնը և 1897 թվականի սկզբին փոխադրվեց Թուրքիա: Խմբագրապետի պաշտոնը նորից ստիպված եղավ զբաղեցնել Ռոստոմը: Բայց կարճ ժամանակով:

1896 թվականի վերջին - 1897 թվականի սկզբին Թիֆլիսում կայացած ժողովում «Դրոշակի» վրա դրվեցին լրացուցիչ պարտականութայններ: Մասնավորապես, որոշվել էր ստեղծել ուժեղ խմբագրութայն, որը միաժամանակ պետք է Հանդիսանար ամբողջ Դաշնակցութայն արտասահմանյան ներկայացուցիչը Բյուրոն: Խմբագրութայն դերը կուսակցութայն կյանքում դառնում էր ավելի ու ավելի վճռական: 1898 թվականին Թիֆլիսում ՀՀԴ-ի երկրորդ ընդհանուր ժողովը խմբագրութայնը տվեց Արևմտյան բյուրոյի կարգավիճակ:

Միանգամայն բացառիկ լիազորությունների վերապահումը խմբագրութ-  
յանը անհրաժեշտություն էր առաջացնում խմբագրութայն ղեկավար կար-  
գել մի այնպիսի անհատի, որը կարողանար լավագույնս իրացնել տրված լիա-  
զորություններն ու հնարավորությունները: Այդպիսի անձնավորություն էր  
Քրիստափոր Միքայելյանը՝ կուսակցութայն հիմնադիրն ու առաջնորդը:

Միքայելյանը ծնվել է Վերին Ագուլիս գյուղում (Գողթն), 1859 թվակա-  
նին: Վաղ որբացել էր, ունեցել դժվարին մանկություն: Այդ ամենը լիուլի  
փոխհատուցվում էր բնական արտասովոր ընդունակություններով: 1880  
թվականին առաջին աստիճանի վկայականով ավարտել է Ուսուցչական ճե-  
մարանը Թիֆլիսում: Եղել է «Նարոդնայա Վոլյա» կուսակցութայն անդամ:  
Ուսուցչություն էր անում: 1885-1887 թթ. գտնվում էր Մոսկվայում, շարու-  
նակում է ուսումը իրբե ազատ ունկնդիր: 1889 թվականին Թիֆլիսում ստեղ-  
ծեց «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը: Միքայելյանը եղել է  
ՀՀ Դ-ի գլխավոր կազմակերպիչն ու ռգեչնչողը:

Այսպիսով, 1898 թվականի աշնանը Միքայելյանը գլխավորեց «Դրոշակի»  
խմբագրությունը: Նա կարողացավ իր շուրջը համախմբել անվերապահ  
ընդունակությունների տեր հեղինակներին:

Ամենից առաջ Միքայելյանը լրագրին աշխատակցելու հրավիրեց  
«Մշակում» աշխատանքի մեծ փորձ ունեցող, հայ հայտնի լրագրող Խա-  
չատուր Մալումյանին՝ հետագայում Դաշնակցութայն աչքի ընկնող անդա-  
մին: Արժուեռու «դպրոցն» անցած Մալումյանը, որ հիանալի գիտեր արևե-  
լահայ իրականությունը, է. Ակնունի կեղծանվամբ տարիներ շարունակ լրագ-  
րում տպագրում էր կովկասյան իրադարձությունների վերլուծական տեսու-  
թյուն՝ «Կովկասյան խաբրիկներ» ընդհանուր խորագրով:

Խմբագրութայն աշխատանքներին մասնակից դարձնելով մեծավաստակ  
լրագրողներին՝ Միքայելյանը միաժամանակ որոնում էր երիտասարդ տա-  
ղանդներ, նրանց հաղորդում իր փորձն ու գիտելիքները՝ ապահովելով «Դրո-  
շակի» ավանդութների հաջորդայնությունը: Այդպիսի մի տաղանդ էր  
Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան), Դաշնակցութայն նոր ալիքի ներ-  
կայացուցիչը, մի անձնավորություն, որ ակնհայտորեն հակված էր տեսական-  
գաղափարախոսական աշխատանքի:

Մինչև Միքայելյանի խմբագրություն գալը, Վարանդյանն արդեն ուներ  
մամուլում աշխատանքի որոշ փորձ, Դավթյանի մեկնելուց հետո կարճ ժա-  
մանակ նույնիսկ գլխավորում էր «Դրոշակը»: Բայց Վարանդյանի ընդու-

նակությունների իսկական բացահայտումը սկսվեց Միքայելյանի խմբագրապետ եղած ժամանակ: Միքայելյանն անհրաժեշտ ուղղվածություն ու համակարգում տվեց երիտասարդ Հեղինակի տեսական որոնումներին ամենևին չսահմանափակելով նրա ստեղծագործական միտքը: Վարանդյանը, ինչպես և մեկ այլ բազմախոստում հրապարակախոս Սարգիս Մինասյանը, մտել էին լրագրի խմբագրական կազմի մեջ:

«Դրոշակի» Հեղինկաների մեջ մեկ այլ վառ դեմք էր երիտասարդ, բայց արդեն հայտնի գրող, հետագայում դաշնակցական խոշոր գործիչ Ավետիս Ահարոնյանը, որն այն ժամանակ սովորում էր Լոզանի Համալսարանի պատմափիլիսոփայական բաժնում: Տպագրելով Ղարիբի (Ահարոնյանի կեղծանունը) հայրենասիրական պատմվածքները՝ Միքայելյանը «Դրոշակը» Հարսուացրեց նաև գրական-գեղարվեստական ժանրով:

Միքայելյանը լրագրին մասնակից էր դարձնում նաև Հայ մտավորականութան մյուս ականավոր ներկայացուցիչներին, մասնավորապես Լեոյին, որի բոցաշունչ Հայրենասիրական հոդվածները (Թււերյաւն ստորագրութեամբ) տարբերվում էին Հայ ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ այդ Հեղինակի հետագա արտահայտություններից:

Բայց, այսուհանդերձ, «Դրոշակի» կենտրոնական դեմքը Միքայելյանն էր: Նա շարունակեց ու զարգացրեց Ռոստոմի և Դավթյանի ավանդույթները, Արևմտահայաստանից ստացվող թղթակցությունների միջոցով լայնորեն լուսաբանելով այնտեղ տիրող դրությունը: Ինչպես և առաջ, հաճախ թղթակցում էին Հենց Հայդուկ Հեղափոխականները: Լրագրի էջերում մանրամասնորեն ցույց էր տրվում ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, լուսաբանվում էր կուսակցության գործունեությունը այդ ասպարեզում, տրվում էին պայքարի հերոսների մանրամասն կենսագրությունները: Սկսել էր առաջին պտուղները տալ Դաշնակցության կողմից Հայկական Հարցի եվրոպական քարոզչությունը, և «Դրոշակը» տպագրում էր հայամետ տրամադրություն ունեցող եվրոպական քաղաքական գործիչների ելույթները:

Միքայելյանը չէր խուսափում նաև տեսական աշխատանքից: 1899-1900 թթ. «Դրոշակի» խմբագրապետը հրապարակեց մի հոդվածաշար «Ամբոխային տրամաբանություն» խորագրով, հայ Հեղափոխական մտքի մի իսկական դասական օրինակ: Ամեն մի ազգային-ազատագրական շարժում էլ ուղեկցվում է Հեղափոխական մակընթացություններով ու տեղատվություններով, որոնք համահունչ են այդ շարժման Հաղորդություններին ու անհա-

ըողություններին: Հաջողությունների ժամանակաշրջանում նկատվում է համընդհանուր ոգևորություն, իսկ երբ սկսվում է անհաջողությունների շրջանը, նկատվում է բարոյալքում, հեռացում հեղափոխությունից:

Եվ ահա այդպիսի ճգնաժամային ժամանակաշրջանում, երբ հուսահատությունը անհաջողությունների հետևանքով սկսում է տիրել զանգվածներին, միշտ էլ գտնվում են մարդիկ, որոնք, քաղաքական շահերի հետևից ընկած, սկսում են ձայնակցել զանգվածների պարտավորական տրամադրություններին, «մեղավորներ» են որոնում, կեղտ թափում հեղափոխականների հասցեին, ժողովրդին կոչ անում հրաժարվել պայքարից և անձնատուր լինել բռնակալի ուղորմածությունը: Հենց այդպիսի մոտեցման մերկացմանն էլ նվիրված էր Միքայելյանի Հողվածաշարը:

Հողվածաշարի վերջին մասը, որ հրապարակվել է «Դրոշակի» 1900 թվականի №4-ում, վերջանում է հետևյալ եզրակացությամբ. «Հարատև կռիվ, - հաճախ և երկար ժամանակ, դուցե անհաջող, չնայած երբեմն նույնիսկ իր լայն ծավալին, - ահա թե ուր է մեր փրկությունը բանալին: Պահպանենք, շարունակենք կռիվը, որպեսզի լայնանա, ընդարձակվի և ընդարձակվելով հարատևի, ահա դեպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չչեղվենք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապակցությամբ ունի պատմության մեջ հաստատուն օրենքի ուժ. չչեղվենք այդ միակ ճանապարհից, որ սփռված է հուսատու ապագայի գրավիչ ծաղիկներով...»:

Այդ կարգախոսով «Դրոշակը» թևակոխեց XX դար: Հեռավոր մայրցամաքից նրան իր ձեռքն էր մեկնում նրա ամերիկյան կրտսեր եղբայր «Հայրենիքը»:

## Գ Լ ՈՒ Խ Տ Ա Ս Ն Ե Ր ՈՐ Դ

### ԴԵՏՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

#### «ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԵՏԱԲԵՐ», «ՉԱՍԱՅՆԸ», «ԱՇԽԱՏԱՆԸ» և «ԱՉԱՏ ՅԱՅԱՍԱՆ»

Հայ Հասարակական միտքը և մամուլը Հետևում էին ոչ միայն եվրոպական, այլև ռուսաստանյան առաջավոր գաղափարներին, նրանց ավանդույթներին: Ռուս Հեղափոխական և լիբերալ նարոդնիկության ազդեցությունը 1880-ական թվականներին Մոսկվայում և կայսրության այլ քաղաքներում ձևավորվում և գործում են Հայ ուսանող երիտասարդության ընդհատակյա խմբակներ և միություններ: Հայտնի են նաև ռուս նարոդնիկական խմբակների ակտիվ մասնակիցներ, քուլյրեր Եկատերինա և Հռիփսիմե թումանովաները, Ստեփան Ղարաշայանը, Դավիթ Այվազյանը, Օլգա Սաֆարյանը, Կոստանդին Մամիկոնյանը, Մելքոն Մուրադյանը, Ալեքսանդր Փիրումյանը, Արշակ Սաֆարյանը, Գրիգոր Արազյանը, Հովհաննես Մանուչարյանը և ուրիշներ: 1881 թվականին Մոսկվայում ձևավորվել և գործել է Հայ ուսանողների ընդհատակյա մի խմբակ «Հայրենասերների միությունը»: Նարոդնիկական գաղափարների խոր ազդեցությունը կրող Հիշյալ խմբակի մեջ էին Ներսես Աբելյանը, Թամարա Աղամյանը, Դավիթ Ներսիսյանը, Միքայել Զալյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները և ուրիշներ: Միությունը ստեղծեց ընդհատակյա փոքրիկ տպարան և 1884 թվականին հրատարակեց «Ազատության ավետարներ» թերթը: Խմբազրական կազմում էին Ներսես Աբելյանը, Աբրահամ Դաստակյանը և Դավիթ Ներսիսյանը: Հրատարակվել է մի քանի համար, ութ էջ ծավալով: Դադարել է կառավարության Հետապնդումների պատճառով: «Հայրենասերների միությունը», նրա «Ազատության ավետարներ» թերթը և հրատարակած Հեղափոխական կոչերն ու թռուցիկները իրենց գլխավոր խնդիրն էին համարում պայքարի միջոցով Հայաստանի ազատության և անկախության նվաճումը: «Հայրենասերների

միութեան» պատգամներից մեկն էլ ազգերի համերաշխութունն է, - ասված է «Ազատութեան ավետարեւում», - ուստի մենք քարոզում ենք սերտ համերաշխութուն Հայաստանում բնակվող ազգերի մեջ... Մենք հավասարաչափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախութիւնը, եթե միայն նա չի ձգտում հարստահարել ուրիշներին, արգելք չի դառնում ուրիշների կանոնավոր զարգացման... ուստի «Հ. Մ.»-ն աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստութիւններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականութիւնը: Եթե Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը երկրագործը, արհեստավորը, մշակը, տնտեսապես հարստահարվելու են, «Հ. Մ.»-ի աչքում ոչ մի քաղաքական ազատութիւն, միտք նշանակութիւն չունի: «Հ. Մ.»-ը ատելի են թե՛ քուրդ ասպատակող շեյխը, թե՛ թուրք ճնշող պաշտոնյան և թե՛ հայ հարստահարողները: Մենք թշնամի ենք ներկա անձնական բաժան-բաժան կազմակերպութեան, որտեղ տկարն անօգնական է, իսկ ուժեղը հարստահարող ու անգութ: Մենք քարոզում ենք ընկերական միաբանութիւն, որտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը ընդհանուրի համար: Ահա թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետութեան ձեռքի հողերը պետք է անցնեն Համայնքների ձեռքը, Համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող արդյունաբերողն է: Միևնույն ժամանակ Համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցութիւնը, Ֆեդերացիան»<sup>87</sup>:

Արդ, գյուղական Համայնքի վերաբերյալ ուսու նարողնիկները ծրագրերից ընդօրինակված այս և այլ գաղափարները Հայ իրականութեան մեջ նոր, ազատաբազմ զոդանջներ էին: «Ազատութեան ավետարեւրին» մտահոգում էր և ազգային հարցը Հայկական խնդրի լուծումը: 1883-ին Հրատարակած իր կոչերից մեկում, որը սկսվում էր «Պիտի գոռամ, պիտի կրկնեմ անդադար ազատութիւն» հայտնի բնաբանով և տարածվել է Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Արցախում և այլուր, այդ միտքը ավելի ցայտուն է արտահայտված:

<sup>87</sup> Տե՛ս ԳԳԿՊՊԱ, ֆ. 49, գ. 552: Քանի որ «Ազատութեան ավետարեւրի» քիչ համարներ են պահպանվել, մենք ծավալուն քաղվածքներ ենք բերում «դատական արխիվային գործից»:

«Ազատութեան ավետարեբում» և նրա հրատարակութուններում մերկացվում էր թուրքական կառավարող շրջանների հայահալած քաղաքականութունը, հայ ժողովրդին կոչ արվում տապալել սուլթանական դատան տիրապետութունը, «ասպել ազատասեր ժողովրդին վայել ինքնուրույն կյանքով»<sup>88</sup> : «Մենք ցանկանում ենք Հայաստանի ժողովրդին ազատված տեսնել բարբարոսների լծից, - ասված է «Հայեր» վերտառությամբ թուրքիկում, - ... Հայաստանի ժողովուրդը իրավունքներ ձեռք բերելու և բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց, այն է արյունով գնել ազատութունը և ցույց տալ քաղաքակրթված աշխարհին, որ Հայաստանցին ըմբռնել է ազատութեան գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին զոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենաազնիվը, իր սիրելի որդիներին կյանքը»(1884, №4):

Ավելի քան հարյուր տարի է անցել այս տողերը գրելուց, բայց կարգախոսը տակավին չի կորցրել իր նշանակությունը և հնչեղությունը:

«Ազատութեան ավետարեբը» հայ ժողովրդին, առաջին հերթին երիտասարդութեանը, մղում էր դեպի գլխավոր նպատակը ազգային ու սոցիալական ազատութեան նվաճում: Նա երիտասարդութունից պահանջում էր «մտնել ժողովրդի մեջ, հայաստանցուն հասկացնել նրա իրավունքները, այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակը, օգնել նրան ամենայն կերպով և անձնվիրաբար»<sup>89</sup> :

Երիտասարդութունը ժողովրդի ծաղիկն է, նրա հզոր ուժը: Հայրենիքի ազատութունը նրա ազգանվեր գործերով է պայմանավորված: «Ազատութեան ավետարեբի» չորրորդ համարում հրատարակված հոդվածները՝ «Մի բացատրութուն», «Սարսափահար միջոցների դերը մեր հեղափոխական գործունեութեան մեջ Տաճկահայաստանում» և այլն, նվիրված են այս գաղափարին: Նրանցում պարզաբանված են հայ ազգային-ազատագրական շարժման և նրան առնչվող խնդիրները: Ուշադրութեան արժանի է թերթի հետևյալ բանաձևումը՝ Հայ իրականութեան մեջ վերջացավ ինքնաճանաչման շրջանը, սկսվել է իրական, գործնական հարցերի լուծման, թուրքական լծից ազատագրման համար մղվող պայքարի փուլը: Թերթը ճիշտ կերպով նկատել

<sup>88</sup> Կոչի օրինակներից մեկը պահպանվում է Ռուսաստանի դաշնության կենտրոնական պետական պատմական արխիվի ռստիկանության դեպարտամենտի գործերում, III, 1883, գ. 1721, ք. 1-4:

<sup>89</sup> Տե՛ս ՌԴ կենտրոնական պետական պատմական արխիվ, ՌԴ-3, 1883, գ. 1721, ք. 1-4:



է, որ Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները խոր կնիք են դնում Հայ Հասարակական-քաղաքական մտքի վրա, աշխատավոր զանգվածներին արթնացնում, նրանց մեջ բորբոքում Հայրենասիրական տրամագրութիւններ և մղում ապստամբական պայքարի: Հիրավի, Հայ ժողովրդի կյանքում առաջացած նոր իրադրութեան ծնունդն էր «Հայրենասերների միութիւնը», որի թելերը ձգվում-հասնում էին Արևմտյան Հայաստան, Վան և այլ վայրեր: «Ազատութեան ավետարեքը» Հայ ժողովրդին հորդորում էր դասեր քաղել առաջավոր ազգերի փորձից, ազնվաբար ծառայել ազատութեան վսեմ գործին, քանզի «Հայաստանը կանգնած է հեղափոխութեան շեմին, այդ հեղափոխութիւնից հեռու մնալ մենք չենք կարող, որովհետև իրերի դրութիւնը նրան պատմական պահանջ է դարձրել: Մեզ մնում է միայն կազմակերպել նրան և տալ նպատահարմար ուղղութիւն: Հարկավոր է Հայ ժողովրդին արթնացնել դարավոր թմրութիւնից: Դա միայն լուսավորութեան միջոցով չէ, որ պետք է կատարվեր, այլ ազատագրական պայքարի պրոպագանդի, ժողովրդի միասնութեան»:

«Ազատութեան ավետարեքի» չորրորդ համարում տպագրվել են նաև Ռափայել Պատկանյանի «Ազգային երգում» և «Օրահաս» բանաստեղծութիւնները, որոնք Հայաստանի ազատագրութեան մարտակոչեր էին<sup>90</sup>: «Ազգային երգման» մեջ, նկարագրելով Հայ քաղաքական կյանքում առաջացած խմորումները, հեղինակը Հայ բազմիկի բերանով բացականչում է.

Ահա իմ սուրը, որ ձեռքիս ցոլաց,

Էլ ցա չեմ դնիլ վերստին պատյան,

Մինչև չդադարի հայի սուգ ու լաց,

Մինչև չազատվի ստրուկ Հայաստան:

«Ազատութեան ավետարեքը» թեև շուտ փակվեց, բայց որոշակի հետք թողեց Հայ պարբերական մամուլի բազմահարուստ պատմութեան տարեգրութեան մեջ:

«Ազատութեան ավետարեքի» հրատարակութիւնը դադարելուց որոշ ժամանակ անց եվրոպայում սովորող մի խումբ Հայ ուսանողներ հիմնադրեցին մի նոր կազմակերպութիւն, որը հետամտում էր Հայաստանում ապստամբական տրամագրութիւններ առաջացնել: Կազմակերպութեան ղեկավարը Ար-

<sup>90</sup> Բանաստեղծութիւնները անստորագիր են: Տե՛ս Ռ. Պատկանյան, Երկեր, հ. 1, էջ 176-179, 309:

ցախ աշխարհում հայտնի Աթաբեկյան տոհմից էր, Հովսեփ Աթաբեկյանցի հորեղբոր որդի Ալեքսանդր Աթաբեկյանը: 1890-ական թվականներին, ուսումնառության ժամանակ, նա Գարբիել Բահաթրյանի հետ ձեռք է բերում հայերեն տառեր և սարքավորում, ստեղծում մի փոքրիկ տպարան: Գաղտնիութունն ապահովելու նկատառումներով հրատարակութունների վրա նշվում էր «Փարիզ», միջազգային տպարան: Իրականում դրանք լույս էին տեսնում ժնեկում և առաքվում Հայաստան: 1892-ին տետրակների ձևով հրատարակվեցին Սոֆյա Բարդինյայի «Դատական ճառք», Պ. Կրոպոտկինի «Քաղաքական իրավունքները», «Պետութունների քայքայումը» և այլ գործեր: 1893-ին երևան եկավ «Անիշխանական հրատարակութուններ» մատենաշարի առաջին գրքույկը «Գյուղացիների մեջ» խորագրով, որտեղ հարց ու պատասխանի ձևով պարզաբանութուններ էին տրվում գյուղացիութայան դերի մասին:

1894-ի հունվարին լույս է տեսնում «Համայնք» թերթի առաջին համարը: Նրանց հավատո հանգանակը քաղաքական բացարձակ ինքնավարութայան, տնտեսական հավասարութայան և միջազգային համերաշխութայան հաստատումն էր: «Համայնքը» կազմված էր ութ փոքրադիր էջերից: Անդրանիկ համարը բացվում էր «Հեղափոխական պրոպագանդը և հեղափոխութունը» խորագրով առաջնորդող հոդվածով: Նրանում միջազգային անարխիստական գաղափարախոսութայան հանրահայտ դրույթների ոգով քարոզվում էին ժողովրդական ապստամբութուններ: Իսկ դրանց հաջողութունների երաշխիքը թերթը տեսնում էր մարդկանց կազմակերպվածութայան, զիտակցութունն ու աշխարհայացքը ձևավորելու, հայրենասիրութայամբ ու խիզախութայան ոգով դաստիարակելու մեջ:

«Համայնքը» խորագրով խմբագրականում թերթը հայ ժողովրդի երկու հատվածների արևելահայերի ու արևմտահայերի ազատագրութունը տեսնում էր զինված ապստամբական շարժումների մեջ: «Կառավարութայան կոչումը», «Հայկական խնդիրը» (№2, մարտ, 1894), «Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է», «Հեղափոխական կազմակերպութուն», «Ի՞նչ է ազատութունը» (№3, մայիս, 1894), «Անիշխանական գաղափարը և նրա զարգացումը» (№4, սեպտեմբեր, 1894), «Հայ ժողովրդի համայնական հակումները» (№5, դեկտեմբեր, 1894) և այլ հոդվածներում լուսաբանվել են հայկական ազատագրական շարժումների գաղափարախոսութայան հարցերը: «Բավական չէ միայն ցանել գաղափարական սերմեր, - գրում էր թերթը, -

ինչքան էլ այդ սերմերը լավ լինեն անելու և պտղավորելու համար հարկավոր է, որ նրանք նպաստավոր հող գտնեն: Իսկ այդ հողը հայ ժողովրդի հեղափոխական հակումներն են... Հողի համայնականացնելը միայն կարող է բավականություն տալ և ապահովացնել հեղափոխական կրակի մեջ ընկած թշվառ հայ գյուղացուն: Հայ հեղափոխական շարժման հիմքը հայ գյուղացին է»: Ա՛րդ, հողային ազրարային հարցը «Համայնքի» առաջադիր ծրագրային նյութերից էր: «Բանվոր վերցրու գործարանը, գյուղացի տիրել հողին», - այս էր թերթի նշանաբանը:

«Համայնքի» էջերում հողվածներ են տպագրվել 1848 թ. Ֆրանսիական հեղափոխության, իտալական քաղաքական ընդվզումների, Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումների և այլ իրադարձությունների մասին: Ապստամբությունը հեղափոխության անհրաժեշտ պայմանն է, պնդում էր թերթը:

«Համայնքը» և նրա խմբագիր Ա. Աթաբեկյանը սերտ կապեր ունեին Մոսկվայի հայ ուսանողական «ժողովի», ինչպես և Հայաստանի հեղափոխական կազմակերպությունների հետ:

1895-ին «Համայնք» թերթը դադարեց լույս տեսնելուց:

Ուշագրավ է «Աշխատանք» քաղաքական-գրական երկլեզու շաբաթաթերթը, որի առաջին համարը հայերեն և ռուսերեն լույս է տեսել 1879 թվականի գեկտեմբերի 15-ին, Թիֆլիսում, Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի խմբագրությամբ: «Աշխատանքը» շարունակում և խորացնում էր արևելահայ դեմոկրատական մամուլի ավանդույթները: Նրա առաջին համարի առաջին էջը բացվում էր հավատամքի մեկնաբանմամբ. «Լո՛ւյս, լո՛ւյս... թող շատ լինի լույսը» - ավետում էր առաջնորդող հողվածը: Աստվածաշնչյան «եղիցի լույս» և ապա՝ Գյոթեի մահից առաջ արտասանած «Լո՛ւյս, լո՛ւյս... թող շատ լինի լույսը» խոսքերը ծրագրային նշանակություն ունեցան թերթի համար: Խմբագիր-հրատարակիչը Գ. Տեր-Մելքիսեդեկյանը (Մելիքսեթյան), ժամանակի առաջավոր մտավորականներից էր, գյուղացիության դադափարախոս, նարոդնիկական հովերով տարված՝ դեմոկրատական աշխարհայացքի տեր գործիչ: Նա, ըստ էության, հայ դեմոկրատական հոսանքի առաջին ներկայացուցիչներից մեկն է, նախնադրյանական ուղեգծի հետևորդ: Աշխատավորների աշխատանքի իրավունքի պաշտպանությունը XIX դարի 80-ական թվականներին Գ. Տեր-Մելքիսեդեկյանի դեմոկրատական հայացքների հիմ-

քերից է: «Աշխատանքը» իր ծրագրային հոգվածներում գրել է, որ «պաշտպանելու է աշխատավոր մարդու շահերը»: Իրականում այդպես էլ վարվում էր: «Մտնելով Հասարակաց ասպարեզ, - գրել է թերթը, - «Աշխատանքը» Հայտնում է իրեն բարեկամ բոլոր մարդկութայն և այրված սրտով փափագում է կյանքի մեջ մի օր ավելի շուտ տեսնել մարմնացած արդար աշխատանքի սկզբունքը» (№1, 1879):

Թերթի առաջին Համարում լույս են տեսել «Աշխատանք» լրագրի խմբագրություն կողմից», «Դարձ դեպի Նազարյանի Հիշատակը» և այլ նյութեր: «Դարձ դեպի Նազարյանի Հիշատակը» մատենագիտական տեսութայունում, որը շարունակաբար հրատարակվել է թերթի Հաջորդ Համարներում, խմբագրությունը ջերմորեն է արտահայտվել «Հյուսիսափայլի», Ստեփանոս Նազարյանի և Միքայել Նալբանդյանի գործունեություն մասին: «Աշխատանքի» շատ հոգվածներ նվիրված են Հայկական Հարցին, Սան Ստեֆանոյի դաշնագրին և այլ առաջադիր խնդիրների: Քննադատված են արևմտյան դիվանագիտության խաղերն ու սուլթանական Թուրքիայի քաղաքականությունը. «Տասնիններորդ դարում ազգային Հարաբերություններում Հարկավոր է լինել անկիրք, դեն ձգել Հիմար դիմակները, Հեռանալ անհիմն մարդարեություններից և դրա փոխարեն աշխատել Հիմնավոր կերպով կշռել ազգերի փաստերը և ուրիշ քաղաքագիտական լծորությունները» (1880, №2): Մերկացնելով Թուրքիայի կառավարող շրջանների կողմից այլազգիների նկատմամբ վարած բռնություն և Հալածանքների բիրտ միջոցները, թերթը գրել է. «Թուրքիան բոլորովին չհասկացավ պատմական փաստերի միտքը և ժամանակի ոգին: Նա փոխանակ Հպատակ ժողովրդի բնական Հարստություն ավելացնելու, սկսեց խեղճ ժողովրդին էլած-չէլածն էլ կողոպտել և թալանել» (1880, №2):

Երկրամասի մշակութային կյանքը պատկերող նյութերում, թատերագիտական հոգվածներում և լրատվություններում «Աշխատանքը» շոշափել է թատրոնի խաղացանկի, թարգմանական և ինքնուրույն դրամատուրգիայի Հարցերը, արժեքավորել տաղանդաշատ դերասաններ Ադամյանի, Չմկչյանի, Դավթյանի և այլոց դերակատարումներն ու արվեստը, առաջադրել ժողովրդին մատչելի, լուսավորող և արդիական խաղացանկերի պահանջը:

Գ. Տեր-Մելքիսեդեկյանը լավ գիտեր իր ծննդավայր Շուլավերի և առհասարակ Բորչալուի գավառի գյուղացիության սոցիալ-տնտեսական և կրթական կյանքը: Նա մինչ այդ սուր ընդհարվել էր գյուղական մեծահարուստների և ծխական հետադեմ մտավորականության հետ: Նրա ժո-

գովրդական ուսուցչի Համբավը տարածվել էր ոչ միայն Ելիզավետպոլի նահանգում, ուր նա աշխատել էր 1870-1876 թթ. Հայրենի գյուղում, որտեղ իր դպրոցն էր բացել և աղքատների երեխաներին կրթել, այլև Լոռվա խուլ ու խավար անկյուններում: Պատմում են, որ նա վաստակածի մեծ մասը բաժանում էր գյուղացիներին, չնչին միջոցներով թերթ Հրատարակում, լուսավորութուն տարածում «խավարի թագավորութունում»: Նա քննադատում էր դպրոցական տերթոզիկյան բարքերը, տիրացուականութունը և ասիական խավարամտութունը: «Աշխատանքի» 1880 թվականի Հունվարյան Համարում Հրատարակված «Շուլավեր», «Ներքին լուրեր», «Նամակ Թիֆլիսից» և այլ թղթակցութունները խոսուն փաստեր են պարունակում այն ժամանակվա Հայկական գավառական իրականության կրթական գործի, գյուղացիության սոցիալ-տնտեսական դրուժյան մասին: Գ. Մելքիսեդեկյանն իր ատենախոսութուններում, գրքույկներում, գյուղական կյանքն արտացոլող պատումներում և Հատկապես «Աշխատանք» թերթում Հրատարակած հոդվածներում քննադատում էր դպրոցներում արմատավորված Հակամանկավարժական արատավոր մեթոդները, ձաղկում Հոգևորականության տգետ և ասամուլ ներկայացուցիչներին:

«Աշխատանքի» Հրատարակութունը զուգադիպեց երկրամասում կապիտալիստական Հարաբերութունների զարգացմանը: Գյուղում սկսվել էր դասակարգային շերտավորման գործընթացը, մուտք էր գործում վարձու աշխատանքը: Գյուղը քայքայվում էր, հողագուրկ գյուղացիութունը թողնում էր Հայրենի գյուղը և բռնում քաղաքի ճանապարհը: Արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման սոցիալական գլխավոր աղբյուրը գյուղացիական հողագուրկ գանգվածն էր, որը աշխատանք էր որոնում արդյունաբերական կենտրոններում:

«Աշխատանքը» ազբարային Հարցում աղերսներ ուներ Միքայել Նալբանդյանի գյուղացիական սոցիալիզմի գաղափարների հետ: Որոշ հոդվածներում կան ձևակերպումներ, որոնք հիշեցնում են Մ. Նալբանդյանի «Երկրագործութունը որպես ուղիղ ճանապարհի» և «Երկու տողի» տեսակետները և նրա հեղինակի ոճը: Կարելի է ցույց տալ նույնիսկ բառացի Համանմանութուններ: Դա արտահայտութուն է գտել նաև «Աշխատանքի» խմբագրի այլ գործերում, որը և հիմք է տալիս եզրակացնելու, որ նա արևելահայ ազգային դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ է, չքավոր գյուղացիության գաղափարխոս: «Նվեր քյասիր գյուղացիներին» աշխատու-

Թյունում և այլ գործերում Գ. Տեր-Մելքիսեդեկյանը, ընդօրինակելով Մ. Նալբանդյանին, գրել է. «Մենք քարոզեցինք, որ քյասիր գեղացին մեղք է, պետք է ցավենք նրա վրա ու չպետք է ծծենք նրա արյունը, ամա պետք է մեր կարողութան չափ օգնենք նրան, դարման լինենք նրա ցավերին: Ու էլ ոչ թե մենակ խոսքով ասացինք, ամա աշխատեցինք, ինչքան կարելի էր գործով էլ նշանց տալ»<sup>91</sup>: Ակնհայտ է այս հատվածի նմանությունը «Երկու տողի» Համապատասխան ձևակերպմանը:

«Աշխատանքը» թեև ոչ հետևողականորեն, այսուհանդերձ, անդրադարձել է նաև բանվորական Հարցին, լուսաբանել կապիտալիստների և բանվորների փոխհարաբերությունները: Թերթի 1889 թ. փետրվարի 25-ի Համարում տպագրված «Մշակների Հարցի առիթով» հոդվածում ցույց են տրված երկու ձևավորված դասակարգերի կապիտալիստների և բանվորների փոխհարաբերությունները, բանվորական միությունների ստեղծման անհրաժեշտությունը: Մի այլ հոդվածում (№7) Թերթը նշել է. «Մշակների Հարցը զարթնեցնելիս «Աշխատանքը» զգուշացրել է, որ նրանց թուլությունը ցրվածություն մեջ է, Հարկավոր է Համախմբվել, միավորվել և միասնական ուժ դառնալ»:

Գ. Տեր-Մելքիսեդեկյանը ջանում էր մամուլը «ժողովրդական կարիքներին ու պահանջմունքներին ծառայեցնել» իրականացնելով իր իսկ ընտրած ծրագիրը: Թերթն անբավականություն էր Հայտնում Ս. Գյուլամիրյանի, ինչպես և Ս. Էնֆիածյանի 1880 թ. Հրատարակած օրացույցների բովանդակությունից առթիվ նշելով. «Մի ազգի օրացույցը, ինչպես առօրյա Հասարակաց գործածական ձեռնարկ, Հարկավոր է, որ դյուրին ու հեշտամարս լեզվով ըմբռնի այդ ազգի ներկա կյանքի բոլոր գլխավոր երևույթները կրթող կերպով: Այսպես, ուրեմն, Հայ օրացույցը, ուրիշ բաների թվում, մեզ պիտի տա բավականացուցիչ տեղեկություններ, որտեղ ինչքան Հայեր կան և ինչպիսին են նրանց Հասարակական, վաճառականական, Հողագործական, քաղաքագիտական, տնտեսագիտական, մտավոր ու բարոյական զարգացման դրույթները» (№4, 1880):

Լրագրի դերին և նշանակությունն է նվիրված «Աշխատանքի» 1880 թ. մարտի 10-ի «Մամուլի գործունյա անգործունեությունը» խորագրով առաջնորդող հոդվածը: Նրանում քննադատվում են լրագրական արատավոր բար-

<sup>91</sup> Գ. Տեր-Մելքիսեդեկյան, Եվեր քյասիր գյուղացիներից, Թիֆլիս, 1879, էջ 17, հմմտ. Ս. Նալբանդյան, Երկրի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 30:

քերք, մամուլի անտարբերութիւնը ժողովրդի ցավերի նկատմամբ: Հրապարակախոսական աշխույժ ոճով և կրքոտութեամբ տոգորված հոգևածները շնչում են թարմութեամբ: Հաղթահարելով գրաքննութեան հարուցած դժվարութիւնները, «Աշխատանքը» ջանում էր բացել վարագույրը, աշխատավորութեանը հասցնել ճշմարտութիւնը: Նա բանավեճ էր վարում «Մշակ», «Մեղու Հայաստանի» և այլ պարբերականների հետ:

«Աշխատանքը» պարբերաբար քաղաքական լրատվութիւն էր տալիս, թերթերից ծաղկաքաղ անում: 1881 թ. ապրիլի 6-ի համարը լույս է տեսել Ռուսաստանում տեղի ունեցած մարտի 1-ի հայտնի իրադարձութիւնից հետո: «Հեռագրալուրեր» բաժնում հաղորդվում է «Նարոդնայա վոլյա» հեղափոխական կազմակերպութեան ղեկավար գործիչներ Ա. Ժեյլաբովի, Սոֆյա Պերովսկայայի, Ն. Կիրալչիչի և այլոց դատավարութեան, Ալեքսանդր երկրորդի սպանութեան մեջ մեղադրվածներից վեց հոգու կախաղանի միջոցով մահապատժի ենթարկելու մասին:

«Աշխատանքի» 1882 թ. առաջին համարում «Թիֆլիս, 6 մայիսի» վերնագրով առաջնորդող հոգևածում տրված է Կովկասի քաղաքական կյանքի համառոտ տեսութիւնը, խոսվում է Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովին Կովկասի գլխավոր կառավարչապետ նշանակելու, նրա վարելիք հնարավոր քաղաքականութեան և քաղաքական բնույթի այլևայլ հարցերի մասին: Թերթը քննադատել է Կովկասի փոխարքա իշխան Վորոնցովին հայերի, հատկապես լուսավորական գործի նկատմամբ անցանկալի քաղաքականութեան համար:

«Աշխատանքը» իր ուրույն տեղն ունի Հայ դեմոկրատական մամուլի պատմութեան մեջ: Դարասկզբին Հայ իրականութեան մեջ ուժեղանում են քաղաքական խմորումները, ծավալվում ազգային-ազատագրական շարժումները: Ստեղծվում են քաղաքական տարբեր կազմակերպութիւններ, բանվորական, արհեստավորական և աշակերտական խմբակներ, կանանց միութիւններ, փոխօգնութեան գանձարկղներ: 1891 թ. Թիֆլիսում գործող Հայ աշակերտական խմբակներից մեկի շուրջը համախմբվում են առանձին բանվորներ, արհեստավորներ, մտավորականներ, որոնք մեկ տարի անց, 1892 թվականի վերջերին, հիմք են դնում «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիային», որը գործեց մինչև 1895 թվականը: Նորաստեղծ «Ասոցիացիայի» միութեան շարքերը մտան Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Ա. Խաժակյանը, Պ. Մնացականյանը (Պիեր), Հ. Միրզոյանը,

Հ. Մուրադյանը, Ս. Մարտիրոսյանը, Գ. Սաղաթյանը, Տ. Պարոնիկյանը, Ա. Մեհ-  
բաբյանը, Հ. Այվազյանը և ուրիշներ: Նրանք ծանոթացան Ռուսաստանի նա-  
րոգնիկական խմբակների, ինչպես և Գ. Պլեխանովի «Աշխատանքի ա-  
զատագրութուն» խմբակի հրատարակութուններին և սոցիալիստական բո-  
վանդակութամբ այլ գրքերի, հիմնադրեցին իրենց ընդհատակյա տպարանը և  
տպագիր թերթը: Ստեղծեցին խմբագրական կոլեգիա Աշոտ Խուճարյան,  
Սարգիս Խանոյան, Ստեփան Տեր-Սիմոնյան, Արշալույս Խաժակյան, Պետրոս  
Մնացականյան: Թերթը, որը սկզբում կոչվում էր «Ազատ Հայաստան», իսկ  
հետո վերանվանեցին «Կոիվ», հրատարակվել է Թիֆլիսում (գրվել է Բյուր-  
սել): «Ազատ Հայաստանի» առաջին համարը լույս տեսավ 1893 թվականի  
հունիսի 23-ին, փակվել է 1894-ին: «Ասոցիացիայի» անդամներից Սերգո  
Մարտիրոսյանը իր փոքրաթիվ համախոհների հետ որոշել էր հրատարակել  
«Զայն» անունով, բայց հետո նրանք հրաժարվեցին այդ մտքից, և թերթը  
լույս տեսավ «Ազատ Հայաստան» վերտառութամբ: Ինչ խոսք, ամեն մի  
թերթի անվանակոչութուն մեծ խորհուրդ ունի, քանզի այն ամենից առաջ  
արտահայտում է նրա հրատարակիչների և քաղաքական խմբավորման հա-  
վատամբը: Արխիվային նյութերի, Աշոտ Խուճարյանի ինքնակենսագրական  
թերթիկների և «Ասոցիացիայի» գործով նրա անդամների հարցաքննութուն-  
ների վավերագրերից երևում է, որ հրատարակվել է «Ազատ Հայաստանի» ինը  
և «Կոլի» երկու համար (ըստ որոշ աղբյուրների՝ երեք): Թերթի «Ազատ  
Հայաստան» անվանումը պատահական չէր: Նրանք քարոզչական գոր-  
ծունեություն էին կատարում ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի  
պետականության վերականգնման ուղղությամբ: «Ազատ Հայաստանը» 200-  
300 օրինակ, իսկ առանձին համարներ մինչև 1000 օրինակ տպաքանակով  
հրատարակվում էր և տարածվում Կովկասում, Պարսկաստանում, Արևմտյան  
Հայաստանում և սփյուռքի հայկական առանձին համայնքներում: Ուշադրա-  
վ են թերթում հրատարակված Ա. Խաժակյանի «Հայաստանի ներկա դրությունը  
և հայ բանվորները» (1893, №1), Ա. Խուճարյանի և Ա. Խաժակյանի «Ի՞նչ բան  
է բանվորը» (№2), «Աբդուլ Համիդ 2-րդ» (№3), ինչպես նաև «Նամակ  
Կովկասից», «Բանվորական մարզ», «Մեր համոզմունքը» (№5), «Մեր  
համոզմունքը և ծրագիրը» (№6-7), «Հեղափոխական պատվիրան» (№9) և այլ  
հոդվածներն ու թղթակցությունները: Ա. Խաժակյանը գրում էր «Գ.  
Բեյլանց», իսկ Ա. Խուճարյանը՝ «Մանգուլի», «Ազատյան», «Նապոլեոն»:



«Լուսինյան», «Աերզո» և այլ ծածկանուններով: Թերթի տարածմանն օգնել են Տ. Պարոնիկյանը (Ալեքսանդրապոլ), Միրտիչ Գլտչյանը (Աղստաֆա), Ավետիս Ստեփանյանը (Ժնև), Կարապետ Սարգսրյանը (Պարսկաստան) և ուրիշներ: «Ազատ Հայաստան» թերթը թեև մասնակիորեն արձագանքում էր Հեղափոխական իրադարձություններին, քաղվածքներ էր բերում Կ. Մարքսի աշխատություններից, Գ. Պլեխանովի «Սոցալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարածայնությունները», «Նամակներ Ռուսաստանի սովի մասին» աշխատություններից, այսուհանդերձ, նրա գլխավոր ուղղվածությունը ոչ թե դասակարգային պայքարի պահանջն էր, այլ «Հայկական Հեղափոխություն միջոցով Հայրենիքի (Հայաստանի) ազատագրման» ձգտումը: Հիրավի, այդ նպատակին հասնելու քաղաքական և այլ միջոցների ընտրության գործում զգացվում է հայ ազգային կուսակցությունների, ամենից առաջ Ս.-դ. Հնչակյան կուսակցության, գաղափարախոսական ազդեցության դրոշմը: Ինչպես «Ասոցիացիայի» ծրագրային վավերագրերում, այնպես էլ թերթի հրատարակումներում նկատելի է «Նարոզնայա վոլյա» կազմակերպության ծրագրի ազդեցությունը: Ավելին, նույնիսկ առանձին Հիմնադրույթներ գրեթե նույնությամբ թարգմանաբար քաղված են նրանց ծրագրից՝ հարմարեցված տեղական պայմաններին և իրականությանը: «Ասոցիացիայի» ծրագրի նախագծի առաջին «Մեր պահանջները» բաժնում ասված է. «1. Բոլոր Հասարակական գործերում համաժողովրդական քվեարկություն: 2. Բոլոր գործարանները հանձնել բանվորներին: 3. Հողը դարձնել հանրային սեփականություն: 4. Որ չլինի օրենք ազգային խտրականության մասին: 5. Խոսքի, մամուլի, խղճի, ասոցիացիաների, ագիտացիայի և այլնի լիակատար ազատություն: 6. Բոլոր միջոցները ձեռք առնել ժողովրդի քաղաքակրթության համար և պարտադիր դարձնել բոլոր երեխաների տարրական կրթությունը: 7. Մարզերի լայն անկախություն, որն ապահովի ընդհանուր ձայնատվությամբ ընտրված կառավարությամբ և նրա դաշնակցային կապերով ուրիշ մարզերի հետ: 8. Ընդմիջող ոչնչացնել պարտադիր զինվորական ծառայությունը, նրա փոխարեն ունենալ ազգային միլիցիա տվյալ վայրի պահանջներին համապատասխան»:

Ինչպես «ՀԲՀԱ»-ն (Հայ բանվոր Հեղափոխականների ասոցիացիա), այնպես էլ նրա տպագիր թերթը, տողորված էին ժողովրդավարական հասարակարգի կառուցման, ազգային ազատագրության և ազատ Հայաստանի ստեղծման գաղափարախոսությամբ: Ի տարբերություն Ս.-դ. Հնչակյան կու-

սակցութեան, թեև նույն արգանդից չէին ծնվել, բայց շատ ազերսներ և նմանութուններ ունեին: Նրանց ծրագրում էլ սոցիալիզմը մտնում էր դռնից և վնդվում պատուհանից: Տասնամյակների հեռավորութունից այժմ ավելի հեշտ է արժեքավորել «Հայ ժողովրդի անագորույն կյանքը երջանիկ դարձնելու համար» մարտնչած Հայ երիտասարդների գործունեությունը, ավելի հստակ պատկերացնելու «Ասոցիացիայի» քայլերդի «Կեցցե Հայաստանը» առինքնող կոչի իմաստը:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, «Ասոցիացիան» և «Ազատ Հայաստան» թերթը իրենց առաջադիր խնդիրն էին համարում «... ազատել Հայ ժողովրդին ապստամբութեան միջոցով սուլթանական անարդ բռնակալ լծից, կատարել քաղաքական հեղափոխություն և անպայման իշխանությունը հանձնել ժողովրդին» (1894, №6-7):

«Ասոցիացիայի» անդամները ոգեշնչված էին Արևմտյան Հայաստանում Հայդուկային շարժման համարձակ գործողություններով, հնչակյանների կազմակերպած Գում Գափուի ցույցով: Ա. Խաժակյանը այդ ցույցը որակել է որպես «Հայկական ոսկե դարի սկիզբ»:

«Հնչակ» թերթը զորավիգ էր դարձել և՛ «Ասոցիացիային», և՛ նրա թերթին: «Հնչակը» 1893 թ. նոյեմբերյան համարում բարի մաղթանքներ է հղել «Ազատ Հայաստանին» այն համարելով իր «կրտսեր եղբայրը»:

«Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիայի» ղեգեղուններն իրենց արտացոլումն են գտել թերթի էջերում: Տարածայնությունները պառակտեցին միությունը: «Ասոցիացիայի» անդամների մի մասը Սիսակ Տեր-Սիմոնյանը, Սարգիս Խանոյանը և այլք, գրավում են ընդհատակյա տպարանը և «Ազատ Հայաստան» թերթը, հարում շճ դաշնակցություն կուսակցությանը: Իսկ մյուս մասը, որ կրում էր հնչակյանների ազդեցությունը, Աշոտ Խումբարյանի ղեկավարությամբ շարունակում է պահպանել «Ասոցիացիայի» բանվորական ուղղությունը ազգային գործունեության հետ զուգահեռ: Վերջիններս 1894 թ. ղեկտեմբերի 1-ին հրատարակում են միություննոր թերթը «Կռիվ» անունով, որ երկու համար լույս տեսնելուց հետո փակվում է: Երկրորդ համարը երկարատև ընդմիջումից հետո տպագրվեց 1895 թվականի աշնանը: «Կռիվ» առաջին համարի նյութերը նվիրված են Սասունի 1894 թվականի ապստամբությանը: «Ազատության արշալույսին» - այսպես է խորագրված «Կռիվ» անդրանիկ համարի առաջնորդող հոդվածը: Այն ավարտվում է «Կեցցե Հայկական հեղափոխությունը... Կեցցե Սասուն» մարտակոչերով: «Կռիվ»

երկրորդ Համարում լույս են տեսել «Կախազանի տակ Հեղափոխական պատգամ», «Կոչ Պետրոպավլովյան բերդից» խորագրով նյութերը: Անկախ պառակտումից, «Ասոցիացիան» և նրա թերթերը գտնվում էին ազգային գաղափարախոսության, հայկական Հեղափոխության հեռանկարի տիրական Հմայքի տակ: Իսկ դա չվրիպեց ցարական ինքնակալության և նրա տեղական գործակալների ոստիկանության տեսադաշտից: Ուժեղացվում են հսկողությունը և հարձակումները «Ասոցիացիայի» և թերթի նկատմամբ: Ձերբակալվում և բանտ են նետվում Ա. Խումարյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Ս. Մարտիկյանը, Կ. Սեպեյանը, Հ. Միրզոյանը և ուրիշներ: Վյատկայի նահանգի քաղաքական բանտարկյալների աքսորավայրում Աշոտ Խումարյանը շփվում է նույն աքսորավայրում գտնվող Ֆ. Չերժինսկու, Ի. Բաումանի, Պ. Ստուչկայի, լատիշ գրող Յան Ռայնիսի, Պետրբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» առանձին անդամների հետ, Հեղափոխական մկրտություն ստանում: Նա Յան Ռայնիսին պատմում է Հայ ժողովրդի պատմության, ազատագրական պայքարի դրվագներ: Ոգեշնչված այդ պատմումներով Յան Ռայնիսը 1900 թվականին գրում է Հայերին նվիրված իր «Աշխարհի ամենադժբախտ երկիրը և ամենադժբախտ ժողովուրդը» խորագրով հոդվածը:

Յարիզմը ջախջախեց «Հայ բանվոր Հեղափոխականների ասոցիացիան», փակեց նրա տպագիր օրգանը:

«Հայ բանվոր Հեղափոխականների ասոցիացիան» և նրա «Ազատ Հայաստան», «Կռիվ» թերթերը մի նոր ակոս ձգեցին Հայ պարբերական մամուլի անդաստանում, լծակ Հանդիսացան բանվորական, դեմոկրատական, մարքսիստական հոսանքների միջև. նշանակալի հետք թողնելով Հայ ժողովրդի ազատագրական պայքարի և ընդվզումների տարեգրության մեջ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....5

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը և զարգացումը XIX դարի առաջին կեսին

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հնդկահայ պարբերական մամուլը

«Ազդարար» (Մ. Մխիթարյան).....	20
«Շտեմարան» (Ա. Կարինյան, Լ. Գևորգյան).....	33
«Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» „__„ .....	36
«Ուսումնասեր» „__„ .....	49
«Եղբայրասեր» „__„ .....	50

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մխիթարյանների պարբերական հրատարակությունները .....	54
«Տարեգրություն» (Ա. Կարինյան) .....	55
«Եղանակ Բյուզանդյան» „__„ .....	58
«Դիտակ Բյուզանդյան» „__„ .....	60
«Բազմավեպ» (Ս. Շտիկյան) .....	62
«Եվրոպա» (Մ. Մխիթարյան) .....	71
«Հանդես ամսօրյա» (Գ. Աբգարյան) .....	77

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Արևելեհայ մամուլի սկզբնավորումը (Մ. Մխիթարյան)

«Արևելյան ծանուցմունք» .....	84
«Կովկաս» .....	91
«Արարատ» .....	100

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Պոլսահայ մամուլը (Վ. Ղուկասյան).....	108
«Լրո գիր» .....	110
«Ազդարար Բյուզանդյան» .....	119
«Հայաստան» .....	126

«Նոյյան աղավնի» .....	139
«Բանասեր».....	143
«Ընտանի իմաստասեր» .....	150
«Մուսայբ մասյաց» .....	152

**ԳԼՈՒԽ ԳԻՆԳԵՐՈՐԴ**

Զմյուռնահայ մամուլը (Մ. Գակոբյան, Ժ. Ծերունյան) .....	155
«Շտեմարան պիտանի գիտելյաց» .....	156
«Արշալույս Արարատյան» .....	158
«Դայրենասեր» .....	166
«Արփի Արարատյան».....	170

**ԵՐԿՐՈՐԴ Մ Ա Ս**

Հայ պարբերական մամուլը XIX դարի 50-60 - ական թվականներին

**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

Արևելահայ մամուլը (Մ. Մխիթարյան).....	172
«Գյուսիսափայլ» .....	179
«Մեղու Գայաստանի» .....	195
«Ծռաքաղ» .....	204
«Մասյաց աղավնի» .....	207
«Կռունկ հայոց աշխարհին» .....	214
«Հայկական աշխարհ».....	222

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**

**Արևմտահայ մամուլը**

«Մասիս» (Վ. Ղուկասյան) .....	231
«Մեղու» ,,__,, .....	252
«Միութուն» և «Միութուն սահմանադրական» (Մ. Գակոբյան, Ժ. Ծերունյան) .....	263
«Ծաղիկ» ,,__,, .....	277
«Արծուի Վասպուրականի» (Է. Կոստանդյան) .....	286
«Արծուիկ Տարոնո» ,,__,, .....	301

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**

Եվրոպայում լույս տեսած այլ պարբերականներ

«Արևելք» և «Արևմուտք» (Մ. Գակոբյան, Ժ. Ծերունյան) .....	308
---	-----

«Փարիզ» (Ա. Խառատյան) .....	326
«Երկրագունդ» (Կ. Աղամյան) .....	334

## Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս

Հայ պարբերական մամուլը XIX դարի վերջին երեսնամյակին

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Արևելահայ ազատամիտ մամուլը (Լ. Գևորգյան) .....	342
«Մշակ» .....	344
«Մուրճ» .....	373

### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ազգային-պահպանողական պարբերականները (Ս. Մխիթարյան).....	385
«Մեղու Հայաստանի» .....	388
«Փորձ» .....	402
«Արծազանք» .....	413
«Նոր-Դար» .....	428
«Արարատ» (Կ. Ավետյան) .....	442

### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Հայ մամուլը Երևանում (Ս. Նազարյան)

«Պսակ» .....	451
«Երևանի հայտարարություններ» .....	460
«Առողջապահական թերթ» .....	463

### ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Արևմտահայ մամուլը .....	468
«Արևելյան մամուլ» (Ա. Խառատյան).....	479
«Արևելք» (Է. Կոստանդյան) .....	503
«Հայրենիք» (Ա. Խառատյան) .....	525

### ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Արևմտահայ երգիծական մամուլը (Ա. Խառատյան) .....	536
«Մեղու» .....	548
«Թատրոն» .....	559
«Թատրոն բարեկամ մանկանք» .....	569

«Լույս» .....	576
«Ծիծաղ» .....	581
«Խիկար» .....	587

#### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Մանկավարժական մամուլը (Ս. Նազարյան).....	594
«Դպրոց» .....	596
«Մանկավարժական թերթ».....	600
«Վարժարան» .....	602
«Մանկավարժանոց» .....	605

#### ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Հայ մանկապատանեկան մամուլը (Ս. Նազարյան).....	609
«Բուրաստան ս. Սահակյան», «Թութակ Հայկազյան», «Երկասեր».....	610
«Երկրագունդ» .....	613
«Ավետաբեր տղայոց համար» .....	615
«Բուրաստան մանկանց», «Ծաղիկ մանկանց» .....	616
«Աղբյուր» .....	618

#### ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Հայատառ թուրքերեն մամուլը (Ա. Խառատյան).....	625
--	-----

#### ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Հայ ազգային կուսակցությունների մամուլի սկզբնավորումը (Ռ. Խուրշուդյան).....	644
«Արմենիա» .....	645
«Հնչակը» և հնչակյան մամուլը .....	655
Դաշնակցական մամուլը. «Դրոշակ» .....	669

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Դեմոկրատական այլ պարբերականներ (Խ. Բարսեղյան).....	684
«Ազատության ավետաբեր», «Համայնք», «Աշխատանք», «Ազատ Հայաստան».....	684

تاريخ الدوريات الصحفية الأرمنية فى القرنين ١٨ و ١٩  
الجزء الأول

أ. أ. خاراديان

م. هـ. مخيتاريان

ل. م. كيفوركيان

القاهرة

٢٠٠٦





[8000]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0224113

A. <sup>11</sup>98166